# Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆ

## Ուղեգրություններ
## Հոդվածներ
## Նամակներ
## Կանոնագրեր

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА
МУЗЕЙ ЛИТЕРАТУРЫ И ИСКУССТВА им. Е. ЧАРЕНЦА

# ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДСТВО

## 9

# МЕСРОП ТАГИАДЯН

## Путевые заметки
## Статьи
## Письма
## Документы

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

# ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## 9

# ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

*Ուղեգրություններ*
*Հոդվածներ*
*Նամակներ*
*Վավերագրեր*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

**ԱՐ 1**

**Թ 18**

*«Գրական ժառանգության» ներկա հատորն ընդգրկում է ականավոր գրող Մեսրոպ Թաղիադյանի հրապարակախոսական երկերը, հոդվածները, «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատությունը, օրագրեր, նամակներ, վավերագրեր և այլն։ Դրանք բացահայտում են հեղինակի ազգային-լուսավորական գործունեության նշանակալից դերը XIX դարի 20—40-ական թվականներին հայ մշակույթի անդաստանում։*

Առաջաբանը, տեքստը և ծանոթագրությունները՝

ՌՈՒԶԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆԻ

Հատորի խմբագիր՝

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Թ $\frac{0723}{703(02)-75}$ 48 – 73

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975

# ԱՌԱՋԱԲԱՆ

## 1

19-րդ դարի առաջին կեսի հայ նշանավոր լուսավորիչ, գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Դավթի Թաղիադյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի մի մասն է միայն հրատարակված։ Հայտնի է, որ անտիպ նյութերի մի զգալի քանակ պահվում է սփյուռքահայ դիվանատներում (Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանք, Անթիլիաս, Կալկաթա), որոնք դեռ ուսումնասիրված չեն։

Սույն ժողովածուն ամփոփում է հեղինակի օրով միայն հրատարակված և այժմ հազվագյուտ համարվող գործերից՝ «Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրությունը, Մ. Նալբանդյանի միջոցով մեզ հասած «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» կիսատ տպագրված գրքի մամուլները, նույն ժամանակ տպագրված մի շարք գրքերի առաջաբաններ։ Ժողովածուի կարևոր բաժիններից են՝ «Ազգասէրից», ու «Ազգասէր Արարատեանից» հանված հոդվածներ և նամակներ։ Ժողովածուն ունի հավելված բաժին։

1828 թ. նոյեմբերի 1-ին Կալկաթայից երևանցիներին գրած նամակում Թաղիադյանը առաջինը ողջունեց Արևելահայաստանի ազատագրումը Պարսից լծից և միակցումը Ռուսաստանին։ «Փառք բարերարին աստուծո, որ այսուհետև ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտիր անվանիք, ձեր ազգասիրության՝ իմաստության լուրն և արվեստից առաջադիմությունն բոլոր աշխարհ պիտիր տարածվին»։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել սույն ժողովածուում զետեղված մի անտիպ նամակ, ընդարձակ մի գրության հետ (1828, հոկտեմբերի 8), որտեղ Թաղիադյանը Ներսես Աշտարակեցուն առաջարկում է հայության ազգային-լուսավորության և կուլտուրական շինարարության մի ընդարձակ ծրագիր, ուր բացահայտվում են երիտասարդ լուսավորչի խորհրդածությունները ազա-

տագրված հայրենիքի հոգևոր զարթոնքի և վերածնության համար բացված նոր ուղիների մասին։

Դեռևս պատանեկան տարիներին էջմիածնի դպիր եղած ժամանակ, Թաղիադյանը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում հայրենիքի պատմական անցյալի և նրա ժամանակակից քաղաքական-հասարակական իրադարձությունների հանդեպ։ Հնդկաստանում նա հետևում է Հայաստանում վերսկսված ռուս-պարսկական պատերազմին, դրսևորում հայրենասիրական խոր զգացմունքներ, որոնք նպաստում են հնդկահայ հասարակության մեջ խմորվող հայրենաբաղձության և հայրենադարձության ձգտումների խորացմանը։

1826—1828 թթ. Հնդկաստանից գրած նամակներից պարզվում է, որ Թաղիադյանը անգլիական եպիսկոպոսական ճեմարանում մեծ ջանքեր է գործադրում եվրոպական լեզուներ սովորելու և հումանիտար գիտելիքներ ձեռք բերելու գործում։ Առանձին ուշադրություն դարձնելով ինչպես հայրենագիտության այնպես էլ արևելագիտության բնագավառներում իրեն հետաքրքրող հարցերի ուսումնասիրությանը, այդ ընթացքում նա գրել է Հնդկաստանի հին, միջին և նոր շրջանի պատմությունը, «Կալկաթա» վերնագրով ակնարկը, «Ընդհանուր դիցաբանությունը». կազմել է հին հունարեն լեզվի քերականություն՝ անտիկ փիլիսոփաների մասին եղած համառոտ տեղեկություններով, թարգմանել է պարսից բանաստեղծ Սաադիի «Վարդաստանը», անգլերեն է թարգմանել Եղիշեի պատմությունը, օյի բազում և ճոխ» ծանոթագրություններով։ Նույն նամակից պարզվում է, որ Թաղիադյանը դեռևս պատանեկության տարիներից գրի է առել իր տեսած ու լսած պատմական իրադարձությունները, ինչպես և ազգագրական ու հնագիտական նյութեր, ժողովրդական զրույցներ ու երգեր, առակներ ու ասացվածքներ. տպագրության է պատրաստել «Պսակ» խորագրով մի ժողովածու, ուր ամփոփված են եղել հայկական հարսանեկան երգեր, ծեսերի, սովորույթների նկարագրություններ։ Հավաքած նյութերի հիման վրա հետագայում նա կազմել է նաև «Ծիսարան» և «Մաշտոց» խորագրերով ժողովածուներ։

Թվարկած գործերից Թաղիադյանը 1830 թ. Կալկաթայում հրատարակել է «Դիցաբանութիւնը»։ Ընդհանուր դիցաբանության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը նպատակ է ունեցել հաստատելու նաև հայկական դիցաբանության ինքնուրույն հատկանիշները։ Դիցաբանական գիտությունը մեզ մոտ, գրում է

հեղինակը, դեռևս խոպան անդաստան է, մինչդեռ նա հանդիսանում է ոչ միայն իբրև «Նախաշաւիղ դպրոցական դասատութեանց, այլև դայեակ վերծանութեան նախնի խրթնութեանց, բացարան առասպելեալ հնութեանց և լուսարան պատմութեանց, քերթողութեանց...»[1]: Օգտագործելով եվրոպական պատմա-համեմատական մեթոդի նվաճումները բանասիրության բնագավառում, Թաղիադյանը փորձում է տարբերել հայոց աստվածներին օտարներից և որոնել նրանց ազգային հատկանիշները: Հայերի նախաջրհեղեղյան կյանքի ավանդական և ապա նույնից սերող «Հայկազյան» տոհմի ժամանակագրության մեջ նա տեսնում է պատմականության տարրերի գոյությունը:

Հայկական դիցաբանության հարցերին Թաղիադյանը անդրադառնում է նաև «Ազգասէր», «Ազգասէր Արարատեան» թերթերում, և «Ճանապարհորդութիւն ի Հայս», «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» աշխատությունների մեջ: «Անախտ, Անայիդ, Նայիդ ծագեալ ի նայ բառէս, որ է հայեցուած. ըստ որում, Հայելի երկնից: Մահ, Ամիս կամ Լուսին նկարէր կին հեծեալ ի ցուլ սպիտակ. յաջն շարան յակնթի և ի ձախն ոստ ոեհանի»[2]: Ինչպես Անահիտի այնպես էլ Արդիմետի հայկական ծագումները Թաղիադյանը որոնում է «աշտարակաշինությունից» առաջ կամ «Դուցե,—գրում է նա,—յառաջին արշաւանսն տիեզերակալին Արամայ»[3]: Հայոց հնագույն պաշտամունքների շուրջը մինչ այժմ եղած գիտական ուսումնասիրությունները հիմնականում հաստատում են Թաղիադյանի որոշ կռահումները, անկախ նրա թերի մեկնաբանություններից:

Թաղիադյանի վաղ շրջանի գործերից 1841 թ. Կալկաթայում հրատարակվում է «Պատմութիւն հին Հնդկաստանի» գրքի առաջին մասը. երկրորդ և երրորդ մասերի ձեռագրերը հրապարակի վրա չկան: Գրքի առաջաբանը ցույց է տալիս, որ Հնդկաստանում եղած առաջին տարիներին նա հետաքրքրվել է Հնդկաստանի պատմությամբ, «բազում նեղութեամբ» ուսումնասիրել է Հնդկաստանի նախապատմության և պատմության բնագիր սկզբնաղբյուրները, թարգմանել է բազմաթիվ էջեր, համեմատել անգլիական պատմաբանների ներկայացրած փաստերի հետ: Թաղիադյանը մերժել է

---

[1] «Դիցաբանութիւն արար Մեսրովպ Դաւթեան Թաղիադեանց», Կալկաթա, Եպիսկոպոսական ճեմարան, 1830, էջ Ե:

[2] «Ազգասէր», 1846, հ. Դ, № 70, էջ 145:

[3] Նույն տեղում:

Ջակոբ Միլլի «Հնդկաստանի պատմությունը» եռահատոր գիրքը այն պատճառով, որ այնտեղ օգտագործված չեն ժողովրդական աղբյուրները, չի հավանել նաև Մարշմենի «Հնդկաստանի համառոտ պատմությունը»։ Հնդկաստանի պատմությունն ուսումնասիրող հայ հեղինակին դուր է եկել իր գրածը, որը էր «առավել ճոխ և ճշմարտապատում, քան զոր գրեցան ցարդ պատմութիւնք Հնդկաց»։ Թաղիադյանին հետաքրքրել են ոչ միայն պատմական փաստերը, այլև «ճշմարտապատում» հայացքը այդ փաստերի մեկնաբանությունների ժամանակ։ Հեղինակը նկատի ունի պատմաքննական այն նոր մեթոդը, որը լայն հնարավորություններ է տալիս փաստը ներկայացնել համակողմանի կերպով, նկատի առնելով և լեզվաբանական և պատմագրական, ժողովրդական և հնագիտական նյութերի համադրական ուսումնասիրությունը։

1820-ական թվականներին երիտասարդ ուսանողի հետաքրքրությունը Հնդկաստանի պատմությամբ կապվում է առաջին հերթին սեփական հայրենիքի և նրա գաղթօջախների ուսումնասիրության նոր պահանջի հետ։ Խախտելով հայ պատմագրության ավանդական շարադրանքի ձևը, նա անհրաժեշտ է համարում ոչ միայն հայ եկեղեցու և հայ պատմիչների թողած փաստական նյութի ուսումնասիրությունը, այլև մեզ հասած բանավոր ստեղծագործությունները, ավանդությունները, հնագույն կոթողների վրա թողած արձանագրությունները, պատմության քառուղիներում հայերին առնչված ժողովուրդների մոտ պահպանված հիշատակումները Հայաստանի մասին և այլն։

1820-ական թվականներին ահա Թաղիադյանն առաջինն էր, որ անձամբ ծանոթ լինելով Հայաստանի պատմական կյանքին, նրա մի (արևելյան) հատվածի քաղաքական-հասարակական-տնտեսական կացությանը, պատմական ձգտումներին, անհրաժեշտ է համարում նորովի ճանաչել հայրենիքը, նրա պատմությունը կապելու համար ժամանակակից ժողովրդի կենսական պահանջների հետ։ Նա չգրեց Հայոց պատմություն, բայց «Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» թերթերի էջերում հրապարակեց հայոց և արևելյան ժողովուրդների պատմությանը վերաբերող բավական նյութեր, որոնք ժամանակի ընթացքում նա հավաքել և գրի էր առել իր տետրակներում։

Սույն ժողովածուում առանձին տեղ է գրավում «Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրությունը։ 1819—1823 թթ. պատանի դպիրը գրի է առնում Հայաստանի մի շարք գավառներում կատարած

շրջագայությունների տպավորությունները. գրառումները կարճ են: Թաղիադյանն այն շարադրել է հենվելով իր հիշողությունների վրա: Ակնատեսի հուշերին ավելանում է հայրենիքի պատմության նրա լայն իմացությունը:

Ուղեգրության մեջ ներկայացված են պատմական Հայաստանի հնագույն վայրերի ուսումնասիրության համար հետաքրքիր նյութեր, իրեն՝ հեղինակի նկատումները, եզրակացությունները, որոնք կապվում են հայրենագիտության նրա ունեցած մեծ պաշարի և պատմա-քննական, բանասիրական հետախուզումների մեջ հանդես բերած մեծ հմտության հետ: Առանձնապես հետաքրքիր են նրա քննական հայացքը և հնախոսական դիտողությունները հատկապես Վաղարշապատի, Դվինի, Երվանդաշատի, Արաքսի հոսյա հունի, Մեծամորի և Ռահ գետերի, Էջմիածնի Մայր տաճարի, Զվարթնոցի և այլ կոթողների մասին:

Արևելյան բռնապետության տակ քայքայված կյանքի խորքում Թաղիադյանը բացում է պատմական Հայաստանը, հին ժամանակներից արմատավորված ազգային ինքնությունը որոշող հատկանիշներով, արտահայտված զրույցների, երգերի, սովորույթների և այլ դրսևորումների մեջ: «Հին ժամանակների հայերն,—գրում է նա հետագայում,—իրենանց ազգակիցներին ազգասիրութիւն յորդորելէ համար քաջ բարերար մարդկանց քաջութեան գործքերն կըգովէին՝ տաղէր և պատմութիւններ շինելով... Վասնզի հաստատ գիտեմք, որ երգք, խաղեր և բանաստեղծական պատմութիւնք աւելի կը յորդորէն ժողովրդոց սիրտն, քան թէ սուրբ գրուածներ և մեծ բանն այն է, որ բանաստեղծնէրն իրենանց քնարովն (սազովն) յավելի գործ գործեցին, քան թէ աշխարհակալնէր իրենանց զենք ու աղեղովն»[4]:

Պատմական տարեգրությունները ու հուշարձանները հուշում են նրան, որ հայերի սկզբնավորման պատմությունն ունի դեռևս չբացահայտված և առեղծվածային էջեր, որոնք գիտական լուրջ քննության կարիքն ունեն: Երևան բառը մեկնաբանելիս նա գրում է, թե քանի որ չի գտել տվյալ բառի ճշգրիտ ստուգաբանությունը, ուստի և պահպանել է նրա ավանդական բացատրությունը. «զի ոչ ամենայն մասեանք ազգին ի ձեռս անցին, և ոչ գտնեայ ի սակաւուցն սակաւք»[5]: Նույն կերպ է վարվել նաև այլ անվանումներ ու

---

4 «Ազգասէր», 1845, № 3, էջ 20:

5 Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 123:

անձնանունններ ստուգաբանելիս, գրելով, թե գուցե ժամանակները կհաստատեն այս կարծիքի ստուգությունը, երբ մարդիկ հնարավորություն կունենան կարդալու Հայաստանի զանազան տեղերի և շրջակա երկրների անհամար գրվածքները:

Հայ ժողովրդի հայրենիքը այդ օրերին շարունակում էր մնալ օտարի լծի տակ: Նրա ազատագրման հարցը 18-րդ դարից դառնում է ոչ միայն բնաշխարհի, այլև ցրված հայության մտահոգության գլխավոր առարկան: «Հայրենասէր եկաց ազգ մեր և կայ,—գրում է Թաղիադյանը,—զի թէպէտև բազմիցս ընդ ոտերամբք խստասրտոր աշխարհ ծովացաւ արեամբ անմեղաց ազգին, սակայն դեռևս մեծագոյն մասն նորա ոչ մեկնեցաւ ի նմանէ...»: Պատմության բեմից անհետացան ոսոխները, մինչդեռ հայերը «տակաւին կան և մնան տառապանօք ի հողս Հայրենեաց իւրեանց»[6]:

«Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրության մեջ Թաղիադյանը ստեղծում է Երևանի պարսից բռնակալի բնորոշ պատկերը: Հուսեին խանը ոչ միայն օտար կեղեքիչ էր, այլև տիպիկ ավատատեր, անպատմելի դաժանությամբ սարդարը հափշտակում էր գյուղացու վերջին ունեցածը: Եթե այդ էլ չէր լրացնում իր հասանելիքը, քշում տանում էր կանանց և երեխաներին: «Նա շատ և այն էր՝ զի դերևեալ յայսցանէ զանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր, և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս ի Ղազբին և ճոխացուցանէր զգանձն»[7]:

«Հողային հարցը արևելյան Հայաստանում» արժեքավոր աշխատության մեջ Խ. Ավդալբեգյանը Թաղիադյանի այս նկարագրությունները վավերացնում է նոր փաստերով՝ բացահայտելով Երևանի սարդարի և խաների հատուկ ծրագրով հայ գյուղերը տեղահանելու և նրանց փոխարեն մահմեդական քոչվոր ցեղեր բնակեցնելու քաղաքականությունը: Արտադրողական ուժերի ամենացածր աստիճանի վրա մշակվող հողը դարերի ընթացքում կարծրացել, դարձել էր սակավաբեր, անտանելի կացություն ստեղծելով հողի աշխատավորի համար:

Միացնելով պատմական և ականատեսի փաստերը, Թաղիադյանը ստեղծել է 1820-ական թվականների Արևելյան Հայաստանի իրական պատկերը: Սակայն նրա նպատակը միայն այդ չէր, այն

[6] Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 83:

[7] Նույն տեղում, էջ 227:

ժամանակ, երբ նա շարադրում էր իր հիշողությունները, Հայաստանի այդ հատվածը ազատագրված էր պարսկական դարավոր լծից և բավականին փոփոխություններ էին տեղի ունեցել երկրի կյանքում։ Թաղիադյանը նշում է այդ փոփոխությունները, բայց և նշմարում է ցարական տիրապետությամբ՝ ճորտատիրական հարաբերությունների յուրահատուկ դրսևորման վտանգը, որը կասեցնում էր երկրի տնտեսական ուժերի զարգացման հնարավորությունը։ Թաղիադյանը վերդուվմունքով է խոսում այդ երևույթների մասին և մատնացույց անում այն իրագործելի ուղիները, որոնք, նրա կարծիքով, կարող են օգնել հայերի տնտեսական և հոգևոր ուժերի զարգացմանը սեփական հայրենիքում։ «Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» թերթերում տպագրած մի շարք հոդվածներ նվիրված են այդ հարցերի քննարկմանը։

«Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ Թաղիադյանը մանրամասն խոսում է Արևելյան Հայաստանի գետերը նավարկելի դարձնելու և առևտրական նպատակներին ծառայեցնելու, երկրի հարուստ ընդերքը օգտագործելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստների զարգացման բազմապիսի հնարավորությունների և այլ միջոցառումների մասին։ Դա մի ընդարձակ ծրագիր էր, որով նա, տնտեսագետի խորիմացությամբ, փորձում էր կռահել երկրի արտադրողական ուժերի կազմակերպման իրական հնարավորությունները, ճանապարհ բացել կապիտալիզմի զարգացման առջև։ Թաղիադյանն առաջարկում էր կազմակերպել ընկերությունների լայն ցանց Արևելյան Հայաստանում, ամրապնդել կապը ինչպես արևմտահայ հատվածի, այնպես էլ գաղութահայության հետ, նպաստել հայրենադարձության, հայ առևտրականների կապիտալները սեփական հողի վրա օգտագործելու և խոպանացած երկիրը շենացնելու համար։ Այս ամենը, Թաղիադյանի կարծիքով, պետք է նպաստեին ազգային կյանքի նյութական հիմքերի ամրապնդմանը, ժողովրդի հոգևոր զարգացմանը, երկրի լուսավորությանը։ Թեպետ, գրում է նա, հին ժամանակներում, յուրաքանչյուր դարում հանդես են եկել հռչակավոր մարդիկ, բայց նրանց գրածները չեն տպագրվել մեծ մասամբ նյութական միջոցներ չլինելու պատճառով և մնացել են «ժամանակի» ժանիքների տակ կամ «փոշեծածկ անկյուններում»։ Անհրաժեշտ էր պայքարել բոլոր խոչընդոտների դեմ, լուսավորությամբ և կրթությամբ մոտենալու եվրոպական ժողովուրդներին, նոր կյանքով ապրելու համար։

«Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության էջերում ներ-

կայացված պատմական իրադարձությունների կողքին երևան են գալիս հայկական կյանքի կոնկրետ պատկերներ, որոնք հնարավորություն են տալիս ճանաչելու ժամանակը բնորոշող երևույթներ, մարդկանց կերպարները բնութագրող հարաբերություններ և այլն։

Օգտագործելով ճամփորդական գրառումները, Թաղիադյանը նկարագրում է 1819, 1821—1823 թթ. Հայաստանի մի հատվածում շրջագայություններից ստացած տպավորությունները։ Սկզբում իր ուսուցիչ Պողոս Ղարադաղցու, ապա նվիրակներ Բարսեղ և Դանիել եպիսկոպոսների հետ նա շրջել է Արարատյան դաշտավայրում, ապա՝ Նախիջևանում և Սյունիքում, այնուհետև՝ Եփրեմ կաթողիկոսի հետ մի շարք ամիսներ անց է կացրել Շուշի քաղաքում, Գանձակում և Հաղբատում։ Նրա հուշերի մեջ վերակենդանանում են հայ բնաշխարհի մարդկանց բազմազան կերպարներն իրենց առօրյա հոգսերով, մտորումներով ու երազանքներով։ Պատմական իրադարձությունների ֆոնի վրա գծագրվում են պատանի Մեսրոպի կյանքում տարբեր ազդեցություններ ունեցած՝ խավարամոլության և կամայականության ծայրերն իրար կապող Հովհաննես Բագրևանդացին և Հովսեփ Մարուզեն, մեղմաբարո և արդարամիտ Եփրեմ կաթողիկոսը, «երանելի» Պողոս վարժապետը, պատկառազդու Ներսես Աշտարակեցին։ Այդ հակադրությունների միջոցով բացահայտվում են ոչ միայն վանական կյանքի ներքին, այլև այդ տարիների քաղաքական հարաբերությունները պարսիկների և ռուսների հետ։ Այդ հարաբերությունների մեջ կազմակերպվում և հասունանում են պատանի Թաղիադյանի հասարակական ձգտումները, որոնք նրան մղում են դեպի եվրոպական քաղաքակրթության ուղիները լուսավորության նոր ճանապարհների մեջ գտնելու իրեն հուզող հարցերի պատասխանները։

Առանձին ուշադրության է արժանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրության երկրորդ մասը՝ «Ճանպարհորդութիւն ի Պարսկաստան» վերնագրով։ Մ. Նալբանդյանի ձեռքով մեզ հասած այդ երկի տպարանական մամուլները (մանրամասն տե՛ս ծանոթագրություններում—Ռ. Ն.) որոշ գաղափար են տալիս նրա ընդհանուր բովանդակության և արծարծված հարցերի մասին։ Ինչպես այս երկի մեզ հասած հատվածներում, այնպես էլ պարսից պատմության առաջին մասերում Թաղիադյանը հանդես է բերում լայն իմացություն պարսից դիցաբանության, անում է բազմաթիվ հետաքրքիր դիտարկումներ, գիտական կռահումներ, հատկապես պարսից և հայ հնագույն առնչությունների շուրջ։

## 2

1840-ական թթ. առաջին կեսի հնդկահայ գաղթօջախի հոգևոր կյանքի աշխուժացման գործում մեծ դեր ունեցավ Թաղիադյանը: Երիտասարդ հայրենասեր Մանուկ Ջորաբյանի նախաձեռնությամբ Կալկաթայում կազմակերպվեց «Արարատյան ընկերությունը» և նրա առաջին պտուղը եղավ «Ազգասէր» շաբաթաթերթը՝ Թաղիադյանի վերատեսչությամբ: «Ազգասէրը» հրատարակվեց Կալկաթայում 1845 թ. օգոստոսի 16-ից «Ուսումն անէ զմարդն երջանիկ» նշանաբանով: Թերթի խորհրդանիշն էր արևի ճառագայթներով ողողված Մասիսը՝ գլխին Նոյան տապան և սարալանջին բացված գիրք: 1847 թ. վերջին մեռնում է Մանուկ Ջորաբյանը: Հաջորդ տարին «Արարատյան ընկերությունը» ենթարկվում է լուծարքի: «Ազգասէրը» կորցնում է իր նյութական հիմքը և 1848 թ. հուլիսի 14-ին ընդհատվում: Թաղիադյանն իր թերթը վերահրատարակում է նույն տարվա սեպտեմբերի 16-ից, «Ազգասէր Արարատեան» խորագրով իբրև հանրապատում օրագիր. «Մաքուր խղճմտանքն առնէ զմարդն երջանիկ» նշանաբանով: Որոշ ժամանակ հետո ճակատի վրա դնում է ռազմական փողեր, նիզակներ, դրոշակներ:

«Ի վերայ հայեցարուք,—գրում է վերատեսուչը,— և տեսէք զփառս պանծալի նախահարց ձերոց»[8]: Դրանով Թաղիադյանն արձագանքում էր եվրոպական ազգերի զարթոնքին, որի մեջ և վերակենդանանում էր Հայաստանի երբեմնի անկախության երազանքը: Սակայն 1849-ի սեպտեմբերի 15-ից նաստիպված է լինում թերթի ճակատից հանել փողերն ու վահանները և թողնել միայն Արարատն ու Նոյան տապանը, «Աստված և իշխանություն» նշանաբանով: 1851 թ. կարճ ժամանակյա ընդհատումից հետո, «Ազգասէր Արարատեանը» ստանում է նյութական օգնություն և շարունակում է տպագրվել: 1852 թ. Թաղիադյանը փոխադրվում է Կալկաթայի մոտ գտնվող Ջինսրա քաղաքը: Մայիսի 15-ին, այստեղ լույս է տեսնում «Ազգասէր Արարատեանի» հերթական համարը: Խոր տխրությամբ նա գրում է իր թերթի էջերում. «Իսկ մեք, որ յինն ամաց հասակէ և այսր վաստակեցաք հայրենի գրականութեան և ահա հինամենի ի ծերութեան լքեալ և տառապեալ պարտաւորեցաք առանձնանալ ի լռութիւն, անապատիս այսօրիկ ոչ այլ ընտրելագոյն համարիմք քան զփրկչին անհիշաչար ողորմութիւն հայի թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն. ձայն բարբառոյ անապատի»[9]:

---

8 «Ազգասէր Արարատեան», 1849, հ. Ա, № 12, էջ 89:

9 «Ազգասէր Արարատեան», 1852, հ. Դ, № 82, էջ 651:

1852 թ. հուլիսի 15-ին Թաղիադյանը հրատարակում է իր թերթի վերջին համարը։ «Ազգասէր Արարատեանը» դադարում է գոյություն ունենալուց։

«Ազգասէրն» առաջին տարիներին ուներ իր գործակալներն ու սակավաթիվ, բայց մշտական թղթակիցները։ 1848-ից հետո թերթի ոչ միայն նյութական միջոցների այլև նյութեր հայթայթելու պարտականությունները մնում են միայն վերատեսչի վրա։ Թաղիադյանը տպագրում էր ժամանակակից կյանքի պահանջներին արձագանքող հասարակական-քաղաքական բնույթի հոդվածներ, միջազգային լուրեր, պատմական, հնագիտական բնույթի ակնարկներ, որոնք անմիջապես կապվում են հայրենիքի և ժողովրդի պահանջների հետ։ Նա մեծ հմտությամբ միավորում է գաղութահայության ազգային-քաղաքական նկրտումները հայրենիքում ազգային զարթոնքի նորաբողբոջ գաղափարների հետ, առաջադրում եվրոպական լուսավորությամբ կուլտուրական շինարարության, կրթական գործի, տնտեսական-հասարակական կյանքի կազմակերպման և զարգացման իր ծրագիրը։ Նրա մոտ կարևոր նշանակություն են ստանում անձնաճանաչության, ազգային ինքնաճանաչության համազգային գործոնների խորացման, հասարակական ուժերի զարգացման, ազգային միաբանության և ցրված ազգի միավորման հարցերը։ «Ծաղկեսցի թող խաղաղութիւն յաշխարհի մերում,—գրում է Թաղիադյանը,—և յայնժամ Ազգն ինքնին բարգաւաճեալ ունճանալ ամենեւիւեան ծաղկօք ուսմանց և առաքինութեանց միանգամայն որ է ցանկութիւն եռանդագին սրտի մերոյ»[10]։

Սույն ժողովածուում տեղ գտած 30-ից ավելի հոդվածները ընդհանուր գաղափար են տալիս Թաղիադյանի հրապարակախոսական գործունեության հայրենասիրական ուղղության մասին, բացահայտում լայն գիտելիքներ ունեցող ազգային գործչի լուսավորական հայացքների բնույթը, քաղաքացիական մեծ կիրքը, խավարամոլ ուժերի դեմ պայքարելու՝ լուսավոր, ճշմարիտ, ազնիվ գաղափարները պաշտպանելու առաքելությունը։ Թաղիադյանի մոտ երևան են գալիս հասարակական նոր ուժերի կազմակերպչի, գաղութահայության և հայրենիքի կապի, հայրենադարձության գաղափարը մշակողի ցայտուն գծերը։ Բանականությամբ զինված մարդը ըստ Թաղիադյանի իր մեջ առաջին հերթին պետք է մշակի հայրենիքին և ժողովրդին ծառայելու նվիրական զգացումը, որը կօգնի հայրե-

10 «Ազգասէր», 1846, Հ. Բ, № 25, էջ 34։

նակիցներին հաղորդակից դառնալու դարի քաղաքակրթության նվաճումներին, բարձրացնելու անհատի բնական և քաղաքացիական իրավունքը, ճանաչելու սեփական ժողովրդի տեղը և դերը մարդկային հասարակության մեջ:

«Լի է աշխարհը սքանչելիոք»,—գրում է նա: Մարդը բնությունից ծնվում է ազատ: «Եւ թէ ազատ օրէնք և ազատ կեանք չիցեն նոցա, այդպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ և մեռանելիք ի բանդի»[11]: Քաղաքացին, ըստ նրա, առաջին հերթին պետք է ազատագրի իրեն «զարհուրիս նախապաշարութեան ի մտաց» և ապա զինվի գիտության նվաճումներով: Գիտության երկու աղբյուր կա, ասում է Թաղիադյանը, մեկը տեսությունն է, մյուսը՝ փորձը: Մեկը լրացնում է մյուսին: Տեխնիկան և գիտությունը կարևոր նվաճումներ են, որոնք առաջ են մղում կյանքը հօգուտ ժողովրդի բարօրության: Բայց մարդը չի կարողանում օգտագործել այդ նվաճումներն իր օգտին: Դրա պատճառը նրա իրավունքների կաշկանդվածությունն է: Ի՞նչ օգուտ մարդուն շոգուղին դեպի լուսին տարածել, գրում նա, երբ նա տառապում է ստրկության ճիրաններում, կեղեքվում օտարի լծի տակ, կորցնում ոչ միայն ազատությունը, այլև անձնական ապահովությունը:

Լուսավորությունը օգնում է ֆեոդալական կապանքների թոթափմանը, արտադրողական նոր ուժերի զարգացմանը, մարդու անհատականության ազատությանը և կյանքի բարօրությանը: Թաղիադյանը կրկնում է 18—19-րդ դարերի լուսավորիչների հատուկ թեզը՝ բուրժուական հարաբերությունների տիրապետության պայմաններում անհատի ազատության հնարավորության մասին: Առաջին գլխավոր հարցը հայերի քաղաքակրթության համար ազգային ինքնաճանաչումն է և ներկայի պահանջների իրականացման գիտակցումը: «Նախ մարդու առաջին պարտականությունն է ուսումն» առանց որի ոչ ցորենը հաց կդառնա, և ոչ «թուղթն՝ ապրշում»: Հայ անգլոֆիլները Հնդկաստանում Թաղիադյանին քննադատում են նոր դպրոց պահանջելու համար, այն պայմաններում, երբ հայ ժողովուրդը զրկված է ինքնուրույն պետականությունից և նրա ապագան անհայտ է: «Զի՞նչ է տէրութիւն, աղաչեմք, եթէ ոչ միաբանութիւն ազգի, իրէք ի հնազանդութիւն օրինաց երկրին, երբ կալար դու զայս կանոնք և ոչ տիրացար: Ճշմարիտ տէրութիւնն է յաղթելն տգիտութեանց... Գիտութեամբ կանգնի տէրութիւն, բայց տէրութեամբ

[11] «Ազգասէր», 1847, հ. Դ, № 92, էջ 153:

գիտութիւն ու բնաւ երբեք»[12]: «Ազգասէրի» և «Ազգասէր Արարատեանի» էջերում մենք հանդիպում ենք մի շարք հոդվածների, որոնցով Թաղիադյանը և նրա թղթակիցները առաջարկում են հայ վաճառականներին դառնալ արդյունաբերության կազմակերպիչներ, գործի դնել արհեստները կատարելագործող մեքենաներ: Թաղիադյանը առաջ է քաշում վաճառականական ընկերությունների կազմակերպման անհրաժեշտությունը, որոնք նրա կարծիքով կօգնեն ոչ միայն գաղութահայ վաճառականության անգլիական մրցմանը դիմանալու, այլև կնպաստեն հայրենիքում ներքին շուկաների ծավալմանը և տնտեսական կյանքի կազմակերպմանը:

1846 թ. Թաղիադյանը հիմնադրում է «Ս. Սանդխտյան» դպրոցը և «Ազգասէրի» էջերում մանրամասն տեղեկություններ հաղորդում կանոնադրության, ծրագրերի, ուսման ընթացքի, տարեվերջի քննությունների մասին: 1849 թ. դպրոցում կազմակերպվում է հասարակական-ինքնակրթական խմբակ «Սիրելեաց ընկերութիւն» անունով: 1850-ին հրատարակվում է աշակերտների շարադրությունների ժողովածուն՝ «Նրախտայրիք Ս. Սանդուխտ դպրոցի» վերնագրով:

1846 թ. Թաղիադյանը հրատարակում է «Ծառ դաստիարակութեան օրիորդաց» գրքույկը, ուր գրում է, թե հայ մայրերի սրբազան խնդիրն է երեխաներին սովորեցնել և սիրել տալ մայրենի լեզուն, «ծնանիլ սնուցանել և հասունացնել այդ քաջի պաշտպանութիւն հայրենեաց»: Դրա համար էլ, շարունակում է հեղինակը, մայրերը պետք է առաջին հերթին աղամարդուն հավասար կրթություն ըստանան, միաժամանակ ուսուցանելով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ընտանիքի և երեխայի համար:

Քննության առնելով Կալկաթայի և Նոր Ջուղայի ճեմարանների ուսումնական դրվածքը, Թաղիադյանը առաջարկում է կազմակերպել միանգամայն նոր հիմունքներով մի «կատարյալ» ազգային ուսումնարան Արարատյան Հայաստանում: Դատապարտելով օտարասեր հնդկահայերին, «Ուսումն և ազգ մեր ի Հնդիկս» հոդվածում նա հարց է տալիս, թե ինչու Միլտոնին և Գոլդսմիտին ուսումնասիրող աշակերտները չեն կարողանում կարդալ Խորենացուն կամ Ներսես Շնորհալուն և ինչու՞ հայ աշակերտները չեն կարող Պյութագորասին կամ Էվկլիդեսին ուսումնասիրել հայերեն և այլն:

Ազգային լեզվի և ազգային դրականության զարգացման հար-

---

[12] «Ազգասէր Արարատեան», 1848, հ. Գ, № 9, էջ 66:

ցերը դառնում են հայ լուսավորչի մտահոգության կարևոր խնդիրներից մեկը։ Առաջին մեծ հոգսը հայերի, գրում է նա, պետք է լինի ազգային լեզվի հարցը։ Լեզուն է ազգային գոյության հիմքը և հարատևության գլխավոր հատկանիշը։ Նա է որ «համազգաց սերմն կվառի ներկայիս ժամանակումն, եթէ միջից քառնանք էլ հայ չենք»։

1852 թ. «Եվրոպա» թերթը Թաղիադյանի լեզվի մասին գրում է, որ «ոճը» կենդանի է և խաղացկուն՝ ժողովրդական առակներով և ասացվածքներով պարզարված։ «Մեջը բանասեր մարդու մը մտածության արժանի զանազան խոսքի կամ բառի գյուտեր կըգտնվին, նույնպես նոր շինած կամ բարդած բառերուն մեծ մասին վրա լեզվագիտական աշխույժ կամ հաջողականություն մը կերևա»։ Այստեղ էլ կարելի է նշմարել Թաղիադյանի ժողովրդական մտածողության այն տարրերը, որոնք արտահայտվեցին նաև իմաստալից ասույթների, առակների, պատկերավոր համեմատությունների, արևելյան քառյակների, հատկապես չափածո և ինքնուրույն այն գործերի մեջ, ուր հեղինակի մոտ հստակ կերպով երևում են կյանքի ներքին հակասությունների ու մարդկային ապրումների պատկերավորման գեղագիտական նոր ընկալումները։

3

«Ազգասէր Արարատեանի» խմբագրի սուր հայացքը հայկական գաղթօջախների և հայրենիքում հրատարակվող թերթերի մեջ որոնում է ազգային այն կարևոր հարցերը, որոնք առաջ էր քաշում ժամանակը՝ պահանջելով նրանց հրատապ լուծումները։ «Ի վերջոյ զամենեսեան ալաչեմք խորհիլ զի յընդհանուր ազգի մէջում հազիւ երեքին հինգ կամ վեց լրագիրք, և ծաղք բոլորեցուն յԱզգէն երթայ։ Ափսոս չէ՞ ուրեմն թողուլ զազգային սառյց և պիտանի տեղեկութիւնս, փոխել յանկեան ուրեք և անազգի վայր ի վերոյ, քաղուածովք լնուլ զէջս նոցա, մինչ եղբայրք մեր ամենայն ուրեք ծարաւի ազգային լրոց»[13]։ Եվ Թաղիադյանը հարստացնում է իր պարբերականի էջերը ամենաբազմապիսի տեղեկություններով, նրանց հետ արտահայտում սեփական խոհերն ու եզրակացությունները հայ ժողովրդի ազգային լուսավորության ուղիների, ազգային մտավորականության առաջադիմական գործերի մասին։

Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում խմբագրի դատողությունները Պոլսահայ նորաստեղծ ընկերություն-

[13] «Ազգասէր Արարատեան», 1848, Հ. Ա., № 5, էջ 35։

ների մասին, ոգևորությունը ամիրայության դեմ «Ազգային ժողովի» տարած հաղթանակի կապակցությամբ, նրա հատուկ վերաբերմունքը Մ. Աղաթոնի տնօրինությամբ հրատարակվող «Հայաստան» թերթի նոր ուղղության հանդեպ և այլն։

Ազգային առաջադիմության համար մղվելիք պայքարի մեջ Թաղիադյանը ճաղկում է ոչ միայն ամիրաներին և կղերականությանը, այլև վերասերվող, անգլիականացող հնդկահայ դրամատերերին։

Թաղիադյանի թերթը հայրենիքում թեպետ արգելված էր, բայց նա եռանդուն կերպով արձագանքում էր Հայաստանի տնտեսական-հոգևոր կյանքում տեղի ունեցած փոփոխություններին։ Հենվելով «Արշալույս Արարատյան», «Հայաստան», «Կովկաս» թերթերի և անձնական նամակագրությամբ ստացված տեղեկությունների վրա, նա դրվատանքի տողեր էր ուղղում հայրենիքում բողբոջող ազգային նոր լուսավորիչներին, հույս հայտնում, որ երբևէ կթոթափվի «վնասակար իմը և քոնը», ստեղծելու համար շինարարական ընկերություններ, կուլտուրական-ուսումնական հաստատություններ, որոնք կամրապնդեն երկրի ազգային-հասարակական ուժերի զարգացումը հայրենական բաղձանքների իրականացման համար։

«Մեք տեղս արմատական ծառեր չեմք,—գրում է Թաղիադյանը, մեր արմատը մեր հայրենիքն այ»[14]։ Նա հիշեցնում է հնդկահայերին, որ մի տուն քանդելով, մյուսը շինելով երբեք գյուղ ու քաղաք չի շինվի։ Մի ծառ կտրելով, մյուսը տնկելով այգի չի դառնա։ Շատ ծառեր և անտառներ «տեսաք տնկեալս ի նախնեաց՝ զոր որդիքն չկարացին վայելել»։ Ուրեմն՝ պետք է մտածել հայրենիք վերադառնալու մասին, պետք է արգասավորել հայրենի հողը, ծաղկեցնել այն միասնական ուժերով, նոր կյանքի կոչելով նրան։

Ազատագրված հայրենիքում չիրականացված ծրագրերը Թաղիադյանը վերագրում է ոչ միայն ցարիզմի գաղութային քաղաքականությանը, որի մասին նա սուր քննադատական ակնարկներ է անում «Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրության մեջ, այլև հայ ազգային կյանքի վրա իշխող կղերա-ֆեոդալական ուժերի տիրակալությանը։

Հովհաննես Կարբեցուն վերաբերող հուշագրումներում Թաղիադյանը բացահայտում է հետադեմ ուժերի գլուխ կանգնած հոգևոր իշխանապետի բացասական ներգործությունը հայ ազգային-լուսավորական կյանքի վրա։ Նրան փոխարինող Ներսեսը, Թաղիադյանի

---

[14] «Ազգասէր», 1845, № 18, էջ 139։

համոզմունքով, ազգային-քաղաքական մեծ գործիչ էր. և ազգը երազում էր նրան տեսնել հայրապետական գահի վրա, համոզված, թե նրանով «համանգամայն ծաղկէր ազգն ամենայնատարիք գիտութեամբ և աշխարհն պայծառանայր արուեստիւք և քաղաքականութեամբ»[15]: Եկավ Ներսեսը. սակայն ի՞նչ տարբերություն նրա և նախորդի միջև: Թաղիադյանի կարծիքով՝ ծերացած հայրապետը, հազիվ թե կարողանար ազգն առաջ տանել լուսավորության նոր ուղիներով: Ներսեսը ոչ միայն չի արձագանքում հնդկահայ գաղթօջախի հայրենասիրական նկրտումներին, այլև պաշտպանության տակ է առնում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդին, մերժելով նրա կամայականությունների դեմ ըմբոստացած հնդկահայերի և Նոր Ջուղայի ժողովրդի արդարացի պահանջները: Երկու տարի անց Թաղիադյանը գրում է. «Բայց դեռ ակն ունիմք, բայց դեռ յորդոր ես կարդամք ի հեռաստանէ, սիրելի հայրենակցաց մերոց, ծաղկեցուցանել ինքեանց ըշնաշխարհիկ Արարատ և ցուցանել նովին, թէ բնութիւն օտարաց արար զայս ինքեանց անապատ անշքի և ոչ թէ անաշխատասէր բնաւորութիւն ազգի»[16]:

Թաղիադյանը մինչև վերջն էլ մնում է թշնամի ֆեոդալական կարգերի և կղերա-աղայական դոգմատիկ մտայնության: Հայ հայրենասերը ցանկանում էր տեսնել այն մարդկանց, որոնք իրենց նվիրաբերելով ժողովրդին, կարող են իրականացնել նրանց բաղձանքները: «Մեծեա զերկաթ մինչ ջերմ է: Արի միայն շարժեա Ազգ, սթափիր և զգեցիր ղազատութիւն: Ազատին մեծի ես ծնունդ և ով կարիցէ գերել զքեզ: Հսկայք ոք ես քան զՍամփսոն՝ և ով կապիցէ զքեզ, եթէ ոչ դու ի՛նքդ քեզ»[17]:

«Ազգասէրի» և «Ազգասէր Արարատեանի» էջերը լի են ժողովրդների ազգային ու քաղաքական ճնշումների և հալածանքների, սոցիալական ներհակությունների մասին տեղեկություններով ու խորհրդածություններով: Հնդկաստանում հրատարակվող անգլիական և տեղական թերթերում բերված փաստերից, Թաղիադյանը, իբրև քաղաքական մեկնաբան, անում է ժամանակը բնութագրող եզրակացություններ, որոնք բնորոշում են նաև հեղինակի անձնական վերաբերմունքը տվյալ երևույթի նկատմամբ: «Յամին դեօթն

15 «Ազգասէր Արարատեան», 1849, Հ. Ա, № 29, էջ 226:
16 «Ազգասէր Արարատեան», 1852, Հ. Դ, № 75, էջ 600:
17 «Ազգասէր Արարատեան», 1849, Հ. Բ, № 39, էջ 305:

հարիւր լիրայից միլիօնս քարշեն ի Հարկաց Հնդկաստանի և ոչ գոնէ զմիլիոն մի ծախսեն ի վճար ուսման, այնքան բազմութեան սուղայն զայն։ Եվ չիցէ՞ այդ բռնաբարութիւն ի ծայրագոյն աստիճանի, անտանելի ևս քան զմուժիկութիւնն Ռուսաստանի և զկեղեքանս Պարսից»[18]։ Եվ դրանք անգլիացիներն են, շարունակում է հեղինակը նույն տեղում, որոնք պարծենում են, թե մարդկության բարեկամներ են. «Ո՞ր բարբարոսութիւն իցէ դժնդակագոյն քան զայս»։

Կալկաթան համարվում է հարուստ քաղաքներից մեկը, գրում է «Ազգասէրի» խմբագիրը, բայց «բոլոր Ասիա, այնքան թշուառագոյն տեղի, ուր այնքան աղքատաց և ուրկաց և գերեաց անթիւ բազմութիւն լինեն, որքան աստ»։ Թաղիադյանը արձագանքել է հնդիկների ազգային-ազատագրական շարժումներին, բազմաթիվ էջեր նվիրելով Փանջաբի ապստամբությանը և կծու խոսքեր ուղղել ապստամբությունը ճնշողներին։

Քաղաքակրթության պատրվակով Արևելք մտած եվրոպացիները ամենուր հանդիպում են դիմադրության, գրում է Թաղիադյանը։ Ալժիրում ֆրանսիացիները 800 արաբ ապստամբների այրել են մի քարանձավում։ «Այս լուսաւորեալ ժամանակում այսպիսի գազանային անգթութիւն երբեք լսուած չէր»[19]։ Ուրեմն, եզրակացնում է նա, եթե նախորդ դարերում իշխում էին «արյունկզակ» աշխարհակալները և ինքնակալները, այժմ նրանց փոխարինելու եկան նորերը, որոնք իրենց գերիշխանությունը տարածում են ոչ միայն Արևելքում, այլև Եվրոպայի մեջ։

Հետևելով եվրոպական քաղաքական իրադարձություններին, Թաղիադյանը ջերմորեն արձագանքում է հունգար ժողովրդի և նրա ղեկավար հեղափոխական Կոշուտի մղած ազատագրական պայքարին։

1848 թ. Թաղիադյանը գրում էր, որ թնդանոթների ռմբյուններն այժմ արդեն չեն կարող սարսափեցնել բռնակալ ուժերի դեմ ելած ժողովուրդներին։ Այժմ «Կենագործ նորոգութիւն այլոս ունի աշխարհն գրեթէ յամենայն ուրեք»[20]։ Եվրոպական ժամանակակից քաղաքական իրադարձություններին նվիրած հոդվածները և այդ հաղորդումներից արված եզրակացությունները բացահայտում են «Ազգասէր Արարատեանի» խմբագրի սուր քննադատական վերա-

[18] «Ազգասէր Արարատեան», 1849, հ. Ա, № 27, էջ 215։

[19] «Ազգասէր», 1845, հ. Ա, № 5 էջ 36։

[20] «Ազգասէր Արարատեան», 1850, հ. Բ, № 53, էջ 424։

բերմունքը եվրոպական մեծ պետությունների ազգային քաղաքականության հանդեպ։ Դարերով ճնշված ժողովրդի զավակը շատ խորն էր զգում ժամանակակից բռնակալ պետությունների դիվանագիտության և մղած պատերազմների, ճնշումների իրական միտումները։ Իր պարբերականում տպագրված հոդվածներով և եզրակացություններով նա կանգնում է 1840-ական թվականներին բռնության կալանքների դեմ ծառացող եվրոպական առաջավոր մտավորականության շարքերում։ Այդ մտորումներով և ապրումներով Թաղիադյանը փակեց իր թերթը և ծանր տառապանքներով, անհայտության և անհուսության մատնված՝ 1858 թ. կնքեց իր մահկանացուն։

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
# ՄԵՍՐՈՎԲԱՅ Գ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Վ. Ա. ՍԱՐԿԱՒԱԳԻ
# ԱՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՀԱՅՍ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

*ճանապարհորդութիւն, մանաւանդ՝ որ կից ունիցի ընդ իւր վիշտս և կարիս՝ սրէ զմիտս, և ընդարձակելով զգիտութիւն՝ բարւոքէ զվարս մեր։ Ցանկալի էր արդարև թէ ծնեալք ի գաւառս՝ նախ քան զամբառնալ իւրեանց ի նոսա՝ ճանապարհ առնէին որպէս սոսկականք՝ առ ի փորձ թշուառութեան մարդկային կենաց։*

«Ինգլիշման լրագիր» (հոկտեմբերի 8), 1847։

## ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱԶԳԱՍԻՐԻ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ՀՕՐ ԵՒ ՏԵԱՌՆ Ի ՊԱՏԱՐԱԳ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՅՈՒՍՈՎ ԸՆԾԱՅԱԲԵՐԵԱԼ

*Հոգեւո՛ր Տէր*

*Առաջին կարգեալ յԱստուծոյ ի խնամակալս մանկական ուսմանց իմոց, և առաջին իսկ այժմ ի մատակարարութիւն Բանին՝ յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ առաջին հանդիսանայր յողորմութիւն արդարև՝ եթէ աստուածահայեաց աչօք քաղցրութեան ակնարկիցիք յայս դուզնաքեայ աղերս, իբր յառաջին ի տեսակս իւր, առաջնապտուղ նուիրեալ* Ձեր Ազգասէր Տէրութեան *ի պատարագ ակնածութեան:*

*Գիլ գլորեալ ի բարձանց յաստանդանս աջ և ահեակ պատահարաց աշխարհի՝ և տառապանաց ի տառապանս օտարութեան անտուն և անդրամ տուայտեալ՝ պատկառիմ պարծել՝ թէ ժողովեցի ինչ՝* Ձեզ *արժանի արմաղան:*

*Յաւետիս* Վեհիդ *զաղատութենէ Հայրենեաց առ Հասարակութիւն մեր ի Հնդիկս՝ ուրացայ անձին զայն ամենայն՝ զոր աշխարհ տալ կարէր օտարականի ուրուք, և որպէս մանուկ սարտուցեալ ի ստեանց մօր՝ անդրէն ի նոյն դիմեցի: Բայց ո՛չ գտեալ զոր խնդրէր անձն իմ, վանական մտեալ և վանական եղեալս ի Հնդկաց՝ յաշխարհական փոխեցայ ի Պարսկաստան, հասի ի ծոց Ծնողիս, սպաս հարի Հայրապետիս. այլ փոխանակ մխիթարութեան՝ յաղատութիւն անձին խուսել պարտաւորեցայ*[1]*:*

*Է՝ որ պիտան, և է՝ որ անպիտան վտարանդեալ՝ ո՛ր ի բեմբ, և ո՛ր ի բանդ, եկի առանց վրէժխնդրութեան, և խոյս ետու ի Հնդիկս վերստին: Ուրանօր մերթ գրաշար տպարանի, մերթ պատմաբան Հնդկաստանի, մերթ փերեզակ յերկրամիջի, և մերթ հիւանդ գետ-*

*նախշտի, զամս հինգ անդադար աշխատեցայ[2]. այլ շահեցայ և ո՛չ ինչ՝ մինչև եկաց Արարատեան Ընկերութիւն[3], սպաս հարկանել Ազգին գրագիտութեան: Որոց ի ծառայել իմում, ծառայից ազգի ծառայելով՝ զանձն երջանիկ համարիմ զարդիս՝ և բուն նպատակին հասեալ.*

*Եթէ բարիք իցեն ի շարժմանէ յայսմանէ՝ այն ամենայն իմաստութեան և մեծագործութեան Պատուելի Հասարակութեան Հայոց Հնդկաստանեայց են շնորհք. ապա թէ ո՛չ՝ ծառայս անպիտան նոյն եմ, որ ինչ և էի յամենայն ուրեք: Ուստի և այս դուզնաքեայ աղերս, թերևս առաջին՝ որ պարծի յանուն* Ազգասէր Տէրութեան Ձերոյ՝ *յայտնի ապացոյց է որդիական սիրոյ ջերմեռանդութեան նոցա՝ առ Վեհափառ* Տէրութիւն Ձեր:

*Խորին ակնածութեամբ բարեհաճ ընդունելութեան յուսացեալ՝ մնամ*

*Ազգասէր Տէ՛ր*
*Վեհափառ Տէրութեան Ձերոյ*
*Ամենախոնարհ Ծառայ*
Մեսրովբ Դ. Թաղիադեանց:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որպէս միում մարդկան, նոյն և մարմին յարաշարժ զգայարանօք պատշաճեալ *ի Բարերար Արարչէն, ոչ ինչ այնքան օգտակար և ախորժ համարին՝ որքան զպատմութիւն շարժական տեսանողականի. իցեն բանքն զուարթ՝ որքան և մարթ իցէ:*

*Ի մանուկ տիոց անտի սկսայ հաւաքել զերևելիս տանին և արտաքին անցից ժամանակաց, և զվայրաց վայրաց վայելչութիւնս՝ ստոյգ տեղագրութեամբ և ընդօրինակութեամբ հնութեանց. այլ ի պէսպէս ձախորդութեանց անտի՝ իրաւ կամ անիրաւ պատահելոց՝ և յաշխարհաց յաշխարհս վտարանդի և հալածական գնալոյս՝ կորեան նոքա մինչ իսպառ:*

Հանդիսարան փորձանաց *անուանեալ ձեռագիր իմ*, Երևան փրկեալ. Արային Գեղեցիկ. *հանդերձ օրինակօք նախնի արձանագրութեանց, և ցուցակօք մերաքարքրու գրեանց գտելոց ի տեղիս տեղիս՝ անհետացան յԱյրարատ: Բովանդակ գրութիւնք իմ գծիւից և կրօնից Հնդկաց՝ Բողան ի Կոստանդնուպօլիս. և այլք՝ աստ և անդ: Եւ եթէ չէր վերնախնամ գթութեան պաշտպանեալ զկեանս յանհամար և ի վերահաս արկածից՝ չմնայր ինձ զարդիս զոր ինչ իմ տալ կարենայի:*

*Բայց ի նիւթ անդր—ի վերայ առաջին հատորոյ զրոցս, ո՛չ յօժարեցայ պատուաստել զՊատմութիւն. մի՝ զի յայտնի է Ազգիս պատմութիւն նախահարցն. և երկրորդ՝ զի որք գտանին՝ ի ցանկալեացն թերի տեսանին: Երանի՛ թէ բովանդակ պատմութիւն մեր նոր ի նորոյ սկսանէր, ըստ օրինակի և ոճոյ բազմերախտ Հօր Մինասայ Բժշկեանց՝ ի մասս Լեհաստանին:*

*Ի հնութիւնս ազգի և Հայրենեաց ո՛չ ընկղմեցայ. մի՝ զի կարօտեալ էին հաւաքմունք իմ. և երկրորդ՝ զի ի հեռուստ և ո՛չ ի մօտոյ արժանացայ խօսել: Եւ ըստ որում այսպէս, կան՝ որ լաւագոյն ևս խօսին քան զիս:*

Զառանձին ծիսից և սովորութեանց գաւառաց և քաղաքաց կարի հարևանցիկ յիշեցի, քանզի ի մտի կայ իմ՝ եթէ կեցից Աստուծով, յօրինել՝ ոչ եթէ զՄաշտոց ինչ, այլ Ծիսարան մի, յորում նկարագրիցին առանձին սովորութիւնք, հանդէսք, կարգք և արարողութիւնք ազգայինք։ Եթէ չհասից այսր փափագանաց՝ վեհագունիցն ապաստան առնեմ զայն, մանաւանդ՝ որոց հին Պարսիկ բարբառոց տեղեկագոյնք իցեն։

Զճառն ի վերայ նախկնութեան լեզուիս՝ կամովին ի բաց հատի։ Որպէս և զբազմագոյնսն ի մանկական առից և ի կրիցս՝ որք թէպէտև անցք ոսկեղէն Դարու կենացս՝ և ըստ մեծի մասին թոթովանք անմեղութեան՝ այլ ոչ զերծք գլխովին յարտաքին բարբարոսութեանց և ի ներքին խորամանկութեանց որք հարկիւ յաջորդեն իրերաց։

Յուսամ յերկրորդ հատորին առաւել պարզախօս և ստուգապատում լինել. զի անդ՝ եթէ գովեստ ինչ՝ ամենեցուն վերաբերի, իսկ եթէ պարսաւ՝ անձին միայնոյ ևեթ։

Շատ լիցին՝ ո՛չ Բանասիրին ի տրիտուր աշխատանաց վերծանութեանն՝ քան թէ փանաքի գրչին յանոճ և յանպաճոյճ պատմութեան աստանդանացն յերևան նշողեցուցանել աստ և անդ զականս պատուականս ազգային անցից՝ իբրև զաստեղունս աղօտալոյս ընդ պատառուածս ամպոց համատարած գիշերոյ։

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

## Մ. Գ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

### ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### ԱՌՏՆԻՆ ԱՆՑՔ, ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Եթէ իցէ *որ ծնաւ ճանապարհորդ, զանձն զուգնաբեալ ընկալցի՛ հաղորդ վիճակի իւրում։ Վասն զի՝ հանի իմ Աննա յետ թաղելոյ զայր իւր զՄեսրովբ. թողեալ զորդիս իւր յԵրեւան քաղաքի, ի թաղն անուանեալ Կարբւոյ ի Ձորագիւղ, որ ի հիւսիսոյ* Հրաստան գետոյ՝ առնու զամենայն հարստութիւն զուգ դրամոց և զարդուց տանն, և չուէ գնայ բնակել ի Վաղարշապատ աւանի. փոքու իմն յառաջ քան զծնունդ իմ, յամի Տեառն 1803։ Վաղվաղակի յետ ծնանելոյ իմոյ անդրանիկ իմոյ ծնողաց, այլ կոյր աչօք և հաշմ անդամօք՝ որպէս պատմէր մայր իմ, յաւանդի եղեալ նորա զոր ինչ և ունէր առ Սահակայ վարդապետի ուրումն Ջօու կամ Հզօր անուանելոյ, ի սակս հսկայագիտակն ահագնութեան, վերադառնայ յԵրեւան, և զիս ինքն առնու տանի ի Սուրբ Սարգիս յեկեղեցի մեր. իսկոյն մկրտել տայ յաւուր ծննդեան Տեառն մերոյ[8]՝ ուստի անուն և կոչեն ինձ Աւետիք։ Ընդ որ զչարեալ հանւոյս՝ փոխէ զայն ի Մեսրովբ, յանուն հաւուն իմոյ, և յետոյ ի Պապիկ։ Ապա ուխտէ զիս՝ որպէս ասի**, ի ծառա-*

---

* *Այս Կարբի առ Հրաստան գետով՝ այլ է, յիսկ Կարբւոյն առ Քասախաւ յՈտանն Արագածոյ՝ ուր Յովհաննավանքն է. բայց որում յետ աւերածին՝ մասն ինչ ժողովրդեանն՝ այսր գաղթեցան։*

** *Այս եղանակ որդեգրութեան ո՛չ ուրեք ընթերցայ. սակայն կարի հին թուի ինձ, ընդ Հայաստանի, և նախնագոյն քան զնիկոդիմեայ* «յուրովայն մօր մտանել և անդրէն ծնանելն»[9]:

յութիւն Սրբոյ Էջմիածնի. և ընդ օձիս շապկին ի վայր հանեալ՝ որպէս թէ վերստին ծնեալ, և տաշտաքերանք իւր անուանեալ՝ հաստանէ զիս յստեանց մօր իմոյ, և տարեալ ընդ իւր ի Վաղարշապատ՝ սնուցանէ թառամ ցամաքեալ ստեամբք իւրովք՝ ընդ հարուստ ամանակս։ Որով մշտնջենաւոր նուազութիւն կաթին տուեալ մաքուր ստեանց մօր իմոյ, զոգի՛ մշտնջենաւոր անհոգութեան զկենացն հանդերձելոց դիեցոյց։ Բայց դու ե՛կ աղէ՛ և ընդ դութ խնամոց բարերարին զարմացի՛ր, որ զհին աւուրց պառաւու զստինս յորդորեաց կաթամբ՝ ի սնունդ ապիկար որդանս ինքեան։ Որ այն ինչ դեռ տղայ ի խանձարուրս պատեալ, երբեմն ի Վաղարշապատայ յԵրեւան, և երբեմն յԵրեւանայ ի Վաղարշապատ բարձեալ բերելով, յայն բնաւորեցայ ի շրջմոլիկ սովորոյթ, որ յապայս ժամանակաց ի հեռաւոր ծագս աշխարհաց վտարանդի թափառեցոյց զբովանդակ կեանս իմ։

Իբրև մեռաւ հանիս կորստեամբ ամենայն գոյից իւրոց՝ և զհետ չոգան նմա որդիք նորա[10] ի գերեզման մահու իւրեանց, յաւէրժայիշատակ մայր իմ Զարդար Թաղիադեանց, որ երկրորդ պսակաւ ամուսնացեալ ընդ Պետրոսի Ղօնջանգիւլեանց, ո՛չ ախորժէր ծանրանալ նմա որբուովք օտար հօր որդւոյ՝ կոչեաց առ ինքն զԲաբէլ Կարբեցի զարեան մերոյ ընտանի, և յանձն արար նմա զիս տանել յէջմիածին և հաւատալ ի խնամս պարոն Յովհաննիսի Ասկարեան հօրաքեռառն իմոյ, որ զայնու ժամանակաւ վարէր զտակառապետութիւն Ներսին, կամ Վեհարանին։

Սոյն այս այր աստուածասէր, որ թէպէտև յետ մահու հօրաքեռ իմոյ՝ ածեալ էր իւր կին զայլ, սակայն դեռ ևս արծարծուն պահէր ի սրտին զխնամոցն առ ընտանիս՝ հուր, սիրոյ, իսկ և իսկ առեալ կացոյց զիս առաջին Մեծին Ներսիսի Աշտարակեցւոյ, արքեպիսկոպոսի, որ յետոյ կարգեցաւ Առաջնորդ Հայոց Վրաստանեայց[11], և ապա Կաթուղիկոս ամենայն Հայոց, զառաջինն բան ի մէջ առեալ ասաց. «Գիտիցես՞, մանո՛ւկ, դու զընթեռնուլ գրոց»։ Յանդգնագոյն և համարձակապէս պատասխանի արարեալ նմա՝ ասացի. «Եթէ գիտէի, էրու՞մ դայի բա՞»։ «Զի՞նչ գիտես ապա»,—կրկնեաց տոնելին յազգի մերում։ Պատասխանի արարի. «Զոր ինչ միանգամ ուսուցանէ Երեւան անտերունչ որբոց՝ ցուցս, առակս, և առասպելս»։ Զծաղու հարեալ նորա յանիրկեան և ի համարձակախօս բանից աստի, հրամայեաց ինձ երգել զցուց իմն, այլ այնինչ դեռ բանք ի բերան, սկսայ ասաչել զայն, այնքան սաստիկ, ձախ, ծուռ, զիլ և անճոռնի ձայնիւ, մինչ պարտաւորեցաւ նա իսկոյն, յետս կոչել զը-

հրաման իւր, և ասել ցիս, թէ՝ «Լո՛ւ լե՛ր, քանզի և զվեհապետն ի վեհարան վրդովեցեր»։ «Գիտէիր թէ վրդովէր, ընդէ՞ր ապա հրամայեցեր»,—ասացի ցնա։ Եհարց ցիս, թէ զի՞նչ անուն իցէ քո։ Պատասխանիցի. մկրտութեամբ՝ Աւետիք, պապենական ժառանգութեամբ՝ Մեսրովբ, իսկ հասարակ կոչմամբ՝ Պապիկ։ Ուրեմն կա՛, ասէ, զոր ժառանգութեամբ կալար, և արի՛ Մեսրո՛վբ ա՛ջ առ։ Զորայ համբուրեցի զաջն սուրբ։ Իսկ նա հայեցեալ զամենեքումբ՝ որք շուրջն կային, ասաց. «Ափսո՜ս է զերեխայս ի դպրոցի սրբել, առեալ ածջի՛ք զդա առ գրագիր Յովհաննէս վարդապետ, և պատուէր յինէն զայս տաջի՛ք նմա, զի բարւոք հետևեսցի՛ դմա, մինչև ուսցուք»։

Յովհաննէս վարդապետ ի Բաղրևանդայ զոր հասարակօրէն «Քուրդ» անուանէր ուխտ միաբանից[12], էր այր երկայնահասակ, և բարակ, չնչին երեսով, քարձ մօրուօք, և դեղնաբիր աչօք. ամենեւին զուրկ յազատական արուեստից լեզուի մերոյ։ Վարք նորա հանդուստիպք զիտութեանն և խառնից երկրի իւրում, անզուք, խժական, խորամանկ և կասկածոտ միանգամայն։ Սակայն ունէր և ինչ ինչ յառաքինական բնաւորութեանց և արուեստական հմտութեանց՝ որք երևելի իմն առնէին զնա ի մէջ սրբազնամայր միաբանից Աթոռոյն մերոյ՝ զո՛րօրինակ, անվեհեր արութին սրտի, խորին հնարագիտութիւն առ ամենայն դէպս, նախանձ երևելոյ որպէսի ինչ ո՛չ էր, որպէս և ճարտար գրչութիւն և երաժշտութիւն, որք ի մեծի համարման էին յայնժամ յընդհանուր Ազգի մերում։ Առակ հանապազորդեան էր ի բերան նորա՝ թէ՝ «Շուն զերախտիս ճանաչէ». և ըստ վարդապետութեան այսորիկ՝ վարէր ո՛չ միայն ընդ հաւասարակիցս կարգի և հասակի իւրոյ, այլ նաև ընդ երիցագոյնս և ընդ բարերարս իւր անգամ, որպէս յայտնի երևեցաւ ի մերժելոյ նորա զտէր Եփրեմ Կաթողիկոս զիւր հոգևոր ծնող, և ի կողմն մատչելոյ տեառն Յովհաննու Կարբեցւոյ աւագ լուսարարի Սրբոյ Աթոռոյն՝ և ինքնին պատգամաւորելոյ ի Պոլիս վասն ընտրութեան նորա՝ ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց՝ առ կենդանութեամբ նախորդին։ Վիճա՜կ երջանիկ, ի գրկաց անտի խանդաղատ մօր զատուցեալ՝ ահա ու՞մ մատուցայ՝ որ այն զի ունէր աշակերտս բազումս գրչութեան և ձայնաւորաց՝ յանձն արար զիս միում ի նոցանէ, որոյ անուն էր Աւագ Տէր Մատթէոսեան Երևանցի։ Որոյ գթալով ի հողս իւր, ծանոյց ինձ զարթութայս լեզուի մերում, և ի միջոցս աւուրց ինչ՝ յաւել տալ ի ձեռս իմ և զգրիչ, ո՛րոց միահաղոյն ընդ ուսանել անուանցն, ուսայ և զձև սորոյն ի նոցանէ գրել ի թղթի[13]։

Զայսու ժամանակաւ 1813 եւ Ներսէս Արքեպիսկոպոս ի Տփխղիս[14], իսկ ես զամս երկուս տուայտեցայ ի բերան առնուլ ինձ զժամագիրք և զՍաղմոս, և զամս երկու՝ տուայտեցայ ուսանիլ ըղԾարական. որ առ անյարմար լինելոյ ձայնիս՝ եղև առ յապայս կորուստ մեծ ժամանակիս, և զրկումն ի պիտանի գիտութեանց։ Բայց այն զի՝ ո՛չ օգուտ ինչ է ասողիս, և ո՛չ շահ ինչ բերէ լսողաց՝ մանրանալ յառտնին անցս մանկականս, յաւէտ աւաղելիս քան թէ ծաղրալիս, կամովին զանց արարեալ զնոքօք՝ ի պայծառագոյնն անցանեմ հանդէս՝ ըստ Հոգւոյն դաստիարակութեան։

1816. Յայսմ ամի եկն յէջմիածին մեծանուն վարդապետն առաքինութեանց Պօղոս Ղարադաղցի[15], որոյ անմահ և հոգեբուղխ դաստիարակութեան յանձն եղեն բազումք ի դպրաց և ի սարկաւագաց ուխտին Սրբոյ էջմիածնի։ Այլ ինձ, այն զի անօրինեալ էր տեսուչ իմ, ի մէջ աղբերացն ծարաւի՛ պասքեցուցանել, առ ի թեկն տալոյ կուրութեամբ մտաց՝ ընդ օրինակութեան կոնդակացն և նթ, խնայեցաւ մուտ առ նա։ Յետ բազում աղերսանաց և խնդրուածոց, իբր ո՛չ կարացի զիջուցանել զանդամանդի սիրտ նորա, խոյս տուեալ փախեայ յԵրևան։ Զհետ եկին խնդրակք, վերադարձուցին, ի կախաղան սնդեցին, և ի հարուածս անողորմ գանից թափեցին զեղնգունս մատանց ոտից իմոց։ Բայց և այնու սաստկացուցեալ զիրն՝ հասուցին յականջս երանեալ Հայրապետին մերոյ Եփրեմայ, որոյ սիրտ իբրև սահան միշտ ի ձեռին Աստուծոյ՝ շարժեցաւ գոգչի՛ր ազդմամբ շնորհաց նորա ի գութ յանձն ցաւալից. և կոչեալ կացուցեալ զիս յանդիման պատկառելին երեսաց. «Զի՞նչ խընդրես»,—ասաց։ «Տէ՛ր, զուսումն գրոց»,—պատասխանի արարի հեկեկանօք սրտի իմոյ, և սկսայ լալ։ «Ընդէ՞ր ո՛չ ուսանիս զնարեկ, զոր վարդապետ քո կամի դաս տալ քեզ»,—«Գիտեմ ես զնարեկ, և եթէ Տէրութիւն ձեր հրամայիցէ, կարեմ տերամբ՝ զբազումս ի գըլխոց նորա համար տալ առանց գրոց»։ Ակնարկեաց նա առ Յովհաննէս վարդապետ՝ որ ընդ անկարելիս դատելով զայս՝ ասաց. «Իմ չիք բնաւ ուսուցեալ զմա, և թուի ինձ եթէ Կարբեցի խաբէութիւնք իցեն յօդուածոյք դորա»։ Իսկ սրբոյ Հայրապետիս մերոյ բարեգոյն ես կշռելով զյարդ պատկառելի յանդիմանութեան իւրոյ՝ քան զմեզ, հրամայեաց Ստեփաննոսի եպիսկոպոս Ենովքեան Տփղիսեցւոյ՝ ատենադպրի իւրում, քննել և տեսանել զիս։ Առաջի որոյ անսղալ արտասանելով զՁայն հառաչանաց, զնւ արդ ի վերայ այսմանեաց յուսահատութեանց, և զկէս Գումարին խմբից՝[16] վկայեցայ առաջի Հայրապետին գիտել ըստ արժանւոյն զնարեկ։ Ուստի կոչեալ զա-

ռաջեաւ զայրն աստուածառաք զՊօղոս վարդապետ Ղարադաղցի, յանձն արար նմա զիս, պատուէր հրամանի ի վերայ եդեալ՝ զի գուն գործեսցէ հրահանգել զիս յարհեստ քերականութեան, որքան փո՛յթ և հնարին ինչ իցէ՛: Յաւուր՝ յորում մտի ես ընդ աստուածաշնորհ դաստիարակութեամբ վարդապետին ճշմարտութեան, թիւ աշակերտաց նորա հասանէր ցութնետասն ոգիս ի սարկաւագաց և ի դպրաց անտի չափուհասից: Որոց ամենեցուն վերջին գտայ ես՝ ոչ միայն հասակաւ և ուսմամբ, այլ և վիճակաւ կենաց իմոց և հանգամանօք կարեաց և կարօտութեանց: Վասն զի նոքա լաւագոյն ես բաղտի վիճակեալք, կամ ի ծնողաց կողմանէ, և կամ ի մեծահարուստ տերանց իւրեանց, ի վարդապետաց ասեմ և յեպիսկոպոսաց՝ ստէպ ստէպ մեծարէին զերեսս վարժապետի իւրեանց պատուամատոյց նուիրանօք. իսկ ես՝ որ յերկոցունց ես վերջացեալ՝ աղօթիւք հոգւոյ զԱստուած ի վերուստ, և հլու հնազանդ սպասահարկութեամբ զվարժապետ իմ ի ներքուստ շարժեցի յողորմութիւն ի վերայ իմ:

Անաչառ ոք գոլով սորա՝ զերեսս ուրուք ո՛չ պաշտէր, և ո՛չ առ պատարագս ամբարտաւանութեանցն հոգի նորա զիջանէր: Նոր ումն եղեալ գոզջի՛ր Կրետիղայոս, առաւել արժանաւորագոյն համարէր զդոյզն ինչ առաքինութիւն յաշակերտս իւր, քան զամենայն ոսկի աշխարհիս: Վասն որոյ և յամենայն գնացս զարտուղիս նոցա՝ զուղղութիւն մուծանէր, և ի նժկահելն՝ սաստիկս կշտամբէր երկիւղիւ Տեառն: Այլ նոցա մի առ մի յոտն հարեալ զխրատ բարութեան նորա, որպէս և զկայծն պարարտութեան, որ հոգւոցն տայր սնունդ, հետ զհետէ թիկունս դարձուցին նմա. և սկսան զկծանել զայրն տօնելի. իբր թէ բիրտ ոք իցէ նա, անտեղեակ կարգաց քաղաքավարութեան: Նա՝ շատք այնք էին՝ որք ամաչիմ արդարև գրել, իմաստակ անտառային զնա կարդային, ունչս զնովաւ արարեալ ակն յանդիման աչաց նորա:

Իսկ ես, յետ զամենայն զհարկ դրութեան կոնդակացն ինձ պատկանելոց, և զառտնին սպասահարկութիւնս Յովհաննու վարդապետի անվթար կատարելոյ (որ զայսու ժամանակաւ և ես խըստէր և ծանրացուցանէր ինձ) կանխէի յորժամ և ձեռնահաս գտանէի, ի կամակար պաշտօն հրեշտակիս ի մարմնի, և ի պակասել կարեաց՝ անկեղծութեամբ յառաջ մատուցանէի նմա զյօժարութիւն կամաց: Այլ ո՛չ բնաւ փոշիմանեցայ. զի քանի որ յիս գամ զարդիս՝ առաւել ողբամ. զի ո՛չ կարացի պաշտել զայրն Աստուծոյ՝ որպէս արժանն էր:

Զերկուս և եթ արժան համարիմ պատմել զանցիցն՝ յօրինակ քրիստոնէական հեզութեան և ըստ հոգւոյն վարդապետութեան առնս տօնելւոյ։ Մի՝ զի յորժամ զառաջինն բնակութեամբ հաղորդեցայ ընդ նմա, և ո՛չ կարէի ննջել, ասաց ցիս՝ չննջե՞ս որդեա՛կ։ Պատասխանեցի՝ ո՛չ. և ապա ժպրհեցայ հարցանել ցնա, թէ գիտէ՞ր զպատմութիւն ինչ։ Յետ սակաւ մի խորհելոյ՝ ասաց՝ գիտեմ։ «Պատմեա՛ զի ննջեցից*»,—ասացի ցնա։ Եւ նա սկսաւ պատմել ինձ յԱբրահամէ մինչև ի վախճան Յովսեփայ, այնպիսի իմն պարզ ոճով, մինչ զի ի մի՛ ւսումն երեկոյի դարձեալ ես ինքնին պատմեցի նմա գրեթէ նովին բառիւք՝ անվթար և անմիջահատ։ Եւ այս էր սորա ոճ ուսուցանելոյ, որ այնքան խոր ազդեաց ի միտս իմ, մինչև անհընարին լինել մոռացութեան բառնալ զայն յուշոյ իմմէ։

Երկրորդ՝ զի տայր ինձ յերեկոյէ յերեկոյ ընթեռնուլ զԱստուածաշունչն ի ձայն, և ինքն ելանէր արտաքս՝ յայցելութիւն եղբարց, ստէպ գալով և ունկն դնելով ձայնի իմում։ Եթէ գտանէր զիս եռանդուն ի կարդալս՝ քաջալերէր, իսկ թէ թոյլ՝ խրատէր սիրով։ Յաւուր միում իբրև նա յապաղեցաւ ի գալն, և ես զլուխ եդեալ ի մէջ բաց Սուրբ Գրոցն զքնով անկայ՝ աշտանակն ընթերակայ խորտակեալ այրեաց զոգչիր զկէս Գրոցն՝ մինչև եհաս հուրն ի գլուխ իմ, և զարթոյց։ Յարուցեալ ահահար և դողահար շուարեցայ ո՛չ գիտելով զգլու՞խ իմ զաղել, եթէ զՍուրբ Գիրսն։ Իբրև եկն երանելին՝ ի խանձահոտոյն զգացեալ՝ հարց ցիս զիրաց իրացն պատահելոց, և ես սկսայ հեկեկանօք ասել ցնա զճշմարտութիւն անցիցն։ Անխռով պարզութեամբ ոգւոյ դարձոյց անդրէն երանելին։ «Այդ ինձ ուրախութիւն է որդեա՛կ, զի ի վերայ ճշմարտութեան նահատակեցար, թէպէտև փոքր մի զգուշութիւն և զքեզ փրկէր, և զԳիրքն Սուրբ։ Դու միայն կարդա՛. Սուրբ Գիրք ո՛չ պակասին քեզ»։ Զայս ասացեալ հան յարկեղէ իւրմէ զոսկետուփ Աստուածաշունչ մի՝ և մատոյց ինձ, ասելով. «Ա՛ռ, աղքատութիւն իմ ո՛րքան և իցէ, տակաւին բաւական է հոգալ վասն հոգևոր սննդեան քո»։ Երանի՜ որոց այսպիսի վարդապետի աշակերտեցան դաստիարակութեամբ, առաւել ինչ ո՛չ ասեմ։

Իբրև այսօրինակ աստուածային տեսչութեամբ հրահանգեալ ի նմանէ՝ ուսայ ըստ մասին զարուեստ քերականութեան հայ-

* Այս ախտ գրե՛թէ ի տղայական տիոց ախտացայ. յորժամ ի գիրկս աղջկանց հանւոյ իմոյ՝ կամ հաւասարաց նոցին, ընդունէի զննունդ. և այնքան ախնդ զհետ զակատեցայ՝ մինչ բազում անգամ հանել և տալ զհանդերձս իմ որոց պատմէին ինձ նորս և հրաշալիս։

*կական բարբառոյ՝ յանբարեխառնութենէ տօթագին օդոյ ամառանն էջմիածնի, ախտացեալ նորա յաղտս տենդի և ջերման. հրաման առ ի Հայրապետէն Սրբոյ մերմէ՝ գնալ բնակել ի վանս սրբոյն Յակովբայ՝ որ յԱրկուռի, առ ստորոտով Մասեաց լերին: Ժա՛մ հասանէր ինձ այնուհետև ի մի վայրկեան կորուսանել զամենայն պտուղ վաստակոց իմոց, և զկուրութիւն յաւիտենից կուրանալ եթէ չէր ազդեալ վերին խնամոց ի սիրտ Հայրապետին Ծիրեմայ, ճանապարհորդակից առնել նմա զիս, ի պատկ կատարածի կրթութեանց իմոց[17]:—Բայց նախ՝*

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### ԴԻՐՔ ԴԱՇՏԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԱՅ, ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՅԻՔ ՀԱՆԴԵՐՁ

*Դիրք դաշտին Վաղարշապատայ, ըստ արդի երևութից նորա, ազատ և յամենայն խրթնաբանութեանց նախնեաց, է ձուաձև իմն. տարածեալ ի գետոյն* յԱրփայ Վայոց ձորոց ցԱխուրեան Շիրակաւանից՝ ընդ երկայնութիւն յարևելից յարևմուտս: Եւ ի Մասեաց ցլերինս Արագածոյ՝ Արայի՝ յԱպարանքն անուանեալ տեղի, և յԵրևան՝ ընդ լայնութիւն: Տրամագիծ երկայնութեան նորա ձգի անդր քան զհրասախս 48, իսկ լայնութեան՝ իբրև 30: Յարևելից հիւսիսոյ՝ ճնշեն զնա լերինք Գառնոյ, Վայոց ձորոյ և Սազարակայ՝ որ ի հիւսիսոյ Շարուրայ, իսկ ի հարաւոյ՝ յայնկոյս գետոյն՝ Երասխայ՝ բազուկք ինչ մեծի լերինն Մասեաց: Յարևմտից հարաւոյ՝ նոյնպէս արևմտեան բազկունք Մասեաց, իսկ ի հիւսիսոյ՝ արևմտից Արագածածին բլուրք Թալին, Թալիշ և Մաստարա գիւղօրէից Կապուտաւն հանդերձ լերամբ: Այս դաշտ ընդարձակ, հանդիսարան մեծ աստուածեղէն շնորհաց առ ազգս մարդկան, թուէր իմն թէ, խորհրդով առ յինէն ձուաձևն անուն ընկալաւ, թէ և որորոցաձև ասել յարմարաւորագոյն ևս էր: Վասն զի՝ որպէս թռչունք ի ձուոց, նոյնպէս և նախահարք ազգի մարդկան ի տապանէ անտի ելեալ՝ յետ համաշխարհային ջուրցն հեղեղաց՝ լցին զաշխարհ ամենայն:*

** Այս երկու գետք, Ախուրեանն և Արփային՝ միանուն Արփաչայ կոչին ի բարբառ ժամանակիս, այլ ինձ ընտիր տեսանի՝ զՇիրակայն Ախուրեան պահել, որ անկանի ընդ արևմուտս ի Շիրակ. և զԱրփային՝ յարևելս Շարուրայ. որ առ Նորաշէն գիւղիւ, խառնի յԵրասխ՝ ուր կայ և աւերակ կամրջին Արտաշատու:*

Որորոց արդարև արժան է կոչել զսա հանուր ազգաց և լեզուաց, որք ի սմա նախ բնակեալ, իբրև տղայք յորորանի աճեցան յարբունս կատարելութեան հասակաց իւրեանց, և ելեալք ցրուեցան ընդ հեռաւոր ծագս աշխարհաց՝ հայթայթել զպարէն կենաց։ Աստ նախ յարոյց Հայաստան զսեղան սրբութեան իւրոյ, և աստ հաշտեաց զՏէր ի նուէր պատարագաց հաճութեան նորա։ Որով զերկիրն անիծեալ առ Ադամաւ նախահարբ ազգի մարդկան, առ Նոյիւ օրհնեցաւ՝ երկրորդաւ նոռուն։ Աստ եղաւ աղեղն յամպս ի նշան յաւիտենից հաշտութեան[18]։ Ո՞չ ակնարկիցէ թերևս նշանդ զգալի, իմանալի ծիածանին ծագելոյ ընդ ամպս երկնից՝ կենարարին մարդկութեան. որոյ մարմնաւորին տնօրինութեան և հրաշագործ աստուածութեան երևելոյ ի մարդկային բնութեան՝ անդրանիկ գտաւ Հայաստան ի հաւատացեալս ամենայն, և նախաձայն երանութեանց Քրիստոսի ժառանգորդ՝ պատարագօք մոգուց իւրոց, և հաւատովն Աբգարու թագաւորիս մերոյ[19]։ Որով ընդարձակեաց Տէր Յաբեթի, որդւոց ասեմ Հայկազանց, և բնակեցոյց ի տան Սեմայ՝ յեկեղեցի Աստուծոյ. կամ լաւ ևս ի նոր արքայութեան աստեղն Յակովբայ ծագելոյ ի տանէն Սեմայ, ակնկալութեան ամենայն հեթանոսաց։ Աստ նախ Արկ-ուռի նախահայր հերկոց աշխարհի, և գինւոյն անուշակ արբեալն՝ և զմայլեցաւ։ Մարտին քահանայ Անգղիացի, որ զԱւետարան փրկութեան մերոյ թարգմանեաց ի Պարսից լեզու՝ յանցանել իւրում ի Շիրազայ և Շարուր, և ի վսեմիցն զարթուցեալ տեսարանաց ահեղափառն Մասսեաց և դաշտիս առհասարակ՝ բարեպաշտօն իմն խորհրդածութեամբ ի մէջ բերէ զբան իւր՝ զայս իմն ձև օրինակի, յասել իւրում. «Այսորքիկ մեծամեծ պարարտութիւնք երկրի բեղմնարարք արմտեաց սորա, և այն ահեղափառ տեսարան հնոյ որորանի մարդկութեան յանդիման կացուցին, ասէ, մտաց իմոց զԱստուած խոնարհեալ ի պատարագս Նոյի, օրհնել զհերկ և զհունձ»[20]։ Վասն զի այս դաշտ ըստ արդի առման իմոյ, պարունակէ գետս մեծամեծս և փոքրկունս աւելի քան զքսան և չորս։ Որոց բնականաբար և արուեստահնար ոռոգեալ զնորա զիւրաքանչիւր մասնաչափ, առնեն զնա հանդիսարան բուսական բերոց։ Լերինք նորա մեծամեծք բաց ի հանքացն պիտանեաց ոսկւոյ, արծաթոյ, երկաթոյ, պղնձոյ, և աղի, ունին և զծծումբ ազնիւ, և զածուխ հանքային։ Իսկ ծաղկանց պիտանեաց նորա՝ չիք թիւ։

Այլ ճանապարհորդի վիճակեալ մասին քան զաշխարհագրի, ո՛չ մանրանամ ստանօր ի քնին իւրաքանչիւրոց նոցա, զլով

պատահեալսն ինձ՝ շատ համարելով ստորագրել կարգ ի կարգէ՝ ըստ դիպաց։

Էջմիածին. ի հնումն Հայաստանեայց անուանէր այս տեղի Արտիմէդ. գուցէ ի կռոց անտի յայդ անուն կոչեցելոյ, զոր ընդարձակող աշխարհապետական իշխանութեանս Հայաստանեայց՝ Արտաշէս, բերեալ ի Կապադովկիոյ կանգնեաց ի սմին[21]։ Վասն զի ի տաղաչափ բանսն Գրիգորի Մագիստրոսի, անուն այսորիկ կռոց նախադաս թուի քան զՎահագնին մերոյ, նախաստուածացուցեալ հնկային Հայաստանեայց։

«Զարտիմեդեայ և զՎահագնին»։

Ապաղօր իմն թուին ինձ ընդդիմութիւնք վարկածոյս, իբր այն թէ՝ Արտիմէդ, նոյն կուռք լեալ իցէ, զոր ապա պաշտեցին Հայք Անահիտ անուամբ, իբրև զտիկին երկնից, կամ դժխոյ Հայաստանեայց։ Վասն զի, նախ՝ որ Դէմէտրա կամ Դիցամայր որ առ Յոյնս՝ իգական անուամբ, առ նախնիս մեր արական սեռի ճանաչէր՝ Սպանդարամետ անուն, որոյ տօն ի սկզբան Նաւասարդի հռչակաւոր լինէր յոյժ՝ յաշխարհի մերում։ Եւ երկրորդ զի՝ զ՞ի կայր ընդ ընիկ կոչուածոյ նահապետական նախահարց մերոց, և ընդ այլազգական բառիդ Արտիմէդ։ Առ ի զրգիռ հնասիրաց յաւէտ՝ զայս այսպէս կարգել բարւոք դատեցայ. ապա թէ ո՞չ Արդ Մէդայ կամ Միդայ, իբր Մարաց նահապետի նախ քան զաշտարակն՝ յայտնի եւ անուն համարիմ նորա։

Ապա ըստ գրելոյ Խորենացւոյն, «Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն, ի Տուհաց գաւառէն՝ եկեալ նստաւ զՇրէշ[22] բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասախ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ Արքայի»[23]։ Սա նորոգեալ զայս քաղաք, կոչեաց յիւր Աւան Վարդգէսի, ուր բնակեցուցեալ յետոյ միջնոյն Տիգրանայ զգերիսն Հրէից՝ արար քաղաք վաճառաշահ։ Իսկ ի վերջոյ՝ Վաղարշ Արշակունի պատեալ պարսպօք, և պարկէն խրամօք շուրջանակի փորեալ՝ անուանեաց յիւր անուն՝ Վաղարշապատ։ Արքայանիստ մայրաքաղաք համօրէն Հայաստանեայց։

Թէպէտև զարդիս և ուրուական ստուերք նախնի շքոյ և մեծափառութեանց նորա անգամ չերևին, սակայն և այնպէս՝ միտ եդեալ ընիկ հանգամանաց արդի դրից նորա և գրութեան Ագաթանգեղայ և Խորենացւոյն՝ նշմարանս ինչ ի վեր հանել մարթասցո՞ւք։ Եկեալ ասէ Վարդգէսի նստաւ զՇրէշ բլրով, զՔասախ գետով։ Արդ Քասախ գետ եղեալ ի Բաշ* Ապարան կոչեցեալ մասանց

*Արագածոյ ընդ ձորն խոր Կարբւոյ, Աշտարակայ, Օշականայ և Օշւոյ՝ գայ ի դաշտ Արարատեան, և դէպ ուղիղ ընդ արևմուտս Նորա ընթացեալ՝ խառնի յԵրասխ գետ, իբրև երկուց ժամուց ճանապարհաւ ի պարսպէն Էջմիածնայ։*

*Իսկ Շրէշ անուն բլուր, կամ բերդ, ո՛չ ուրեք է տեսանել յայսոսիկ կողմանս, եթէ ո՛չ Կոնդն Օրանէից կոչեցեալ, որ անկանի ընդ մէջ Էջմիածնի և Մօլլադուրսուն գեղջ՝ ընդ ճանապարհն Օշականայ՝ իբրև փարսախաւ միով հեռի ի Վաղարշապատայ՝ ընդ յարևմուտս հիւսիսոյ Նորա*[24]*։ Ուղղակի հիւսիսային դիրք Նորա, եթէ ի վկայարանաց առցուք Հռիփսիմեայ, Շողակաթի, մատրան Մարիանեայ և այգեստանեայց՝ կարի անձկանայ, թէպէտև հարաւային տարածութիւն Նորա ձգեալ երևի անդր քան զքերան Սառն քանքանին, որ բղխեալ ի Ներքուստ մեծի Եկեղեցւոյն Էջմիածնի յառաջոյ սեղանոյ սրբոյն Ստեփանոսի, ստորերկրեայ ջրանցիւք երթայ ելանէ մերձ յարուտս Շորլուայ, համառակօրէն կոչեցեալ՝ Շորլուի չիման։ Զսոյն յայտ առնեն աստ և անդ մնացորդք աւերակա՛ց, և մերթ ընդ մերթ պատառուածք ստորերկրեայ շինուածոց, զանձի կալեալք յոռոգանելոյ հերկոզաց զանդորայ իւրեանց։ Թէպէտև վկայարան Սրբոյն Գայիանեայ ընդ մէջ անկեալ՝ դերևել թուի զայս անմոլար յայտնութիւն։*

*Իսկ յարևելից Էջմիածնի, ընդ գիծ կեդրոնի տարածութեան միջոցին՝ որ անկանի ընդ մէջ Հռիփսիմեայ և Առապարին Սրբոյն Գրիգորի՝ յայտնի երևին հետք պարսպաց նախնւոյն Վաղարշապատայ, զորովք քերէ միշտ առուակ աղօրեացն Հռիփսիմեայ, և թուի թէ յանցանել ժամանակաց իսպառ ողողեսցէ ի միջոյ զամենայն նշմարանս Նոցուն։ Մանաւանդ այսուհետև, յորում ամբոխ գիւղաւանին բազմանայ, և օր ըստ օրէ յաճախէ զհերկ և զայգեգործութիւն իւր։ Արդ՝ դիրք մայրաքաղաքին Վաղարշապատայ սկսեալ յեզերց անտի Քասախայ ցԱրեգ դուռն քաղաքին, երևի լեալ երկու հրասախաւ երկայն, իսկ լայնութիւն Նորա*

---

** Ապարան և Բաշապարան միով անուամբ Ապարաններ, սկսանի ի վերուստ Սաղմոսավանից՝ Արագածոտան, և ձգի մինչ ի Տաշիրս կամ ի Բամբակաձոր, և թուի գոլ Աշոցաց գաւառն հնոց*[25]*։ Նթէ իցեն ապարանք ի Նախչուան, ի Մոկս, և յայլուր, տակաւին այս սարադաշտ բարեխառն, ընդարձակ, սիգաւէտ և լի որսովք և էրէովք՝ ապարանք եղեալ թագաւորաց և հայրապետաց մերոց՝ նոյն իսկ աւերակք նոցին ցուցանեն մինչև ցայսօր ժամանակի։*

ի վկայարանէ սրբոյ կուսին Հռիփսիմեայ ցվկայարան Գայիանեայ՝ հազիւ կացուցանէ զմղոն մի և կէս. բայց թէ առցես ըզբլուրդ Շրէշ, այժմ Որանէից Կոնդ կոչեցեալ՝ և զբերան Սառն քանքանին՝ ստանայ քաղաքն զձև եռանկեան համեմատ դրից նախնի աւերակացն Արմաւրայ մերոյ, Նինուէի, Տիգրոնի և Բաբելովնի։ Եւ այս ձև եռանկիւնի շինուածոց զրեթէ յատուկ էր նախնեաց՝ որք պաշտէին զԱրարիչն ի հուր, և ամենայն ինչ ի նոյն ձև յօրինել ախորժելով ընտրէին։

Եւ ըստ այսմ, նախնի գիրք յայնութեան նորա երևի տարածեալ ի Շրէշ կամ յՈրանէից Կոնդէ մինչև անդր քան զվկայարան Սրբոյն Գայիանեայ։ Զի՛ք ապացոյց հզօրագոյն ի հաստատութիւն առման այսորիկ՝ քան եթէ աւանդութիւնն ի հարց և ի հաւուց յաջորդաբար ածանցեալ առ մեզ, իբր թէ տեղին, ուր յետոյ կառուցաւ թղթարան Սրբոյ Էջմիածնի, որ Քաղկիանոս ևս անուանի՝ լեալ իցէ տեղին ապարանից Տրդատայ և նախնեաց նորա։ Վասն ստուգագրութիւն Արկի, յարկի՝ կամ ապարանից արքայից մերոց՝ մի միայն Երուանդաշատին յիշատակի առ Խորենացւոյն[26], որ միահաղոյն ընդ Արկից կամ ապարանից արդի արքունեաց դրացի թագաւորացն համեմատելով՝ կամիմք զի տեղի նահատակութեան սրբոյն ո՛չ էր առ դրամբ քաղաքին Վաղարշապատայ՝ այլ մանաւանդ առ դրամբ ապարանիցն արքայի։ Քանզի ո՛չ եթէ սան սրբոյն ածաւ առ վարդապետուհին իւր, զի ընկալցի զյորդոր կամապաշտութեան արքայի, այլ վարդապետուհին առ սան իւր, որ տակաւին յապարանին էր ընդ արքային արբեցելոյ գեղով նորա[27]։ Իղձ նորա անզուսպ, ամբարտաւանութիւն նորա խոցոտեալ, «զօրութեամբ պերճացեալն արքայ ի մանուկ կուսէն պարտեալ[23]»՝ ո՛չ մանրանայր ի տեղին. շատ էր՝ զի հրաման տայր, և շատ էր՝ եթէ և ընդ ապարանաւ արտաքս հանէին զնա. Թէհրան մայրաքաղաք է Պարսից շուրջ պարսպեալ ամրոցօք՝ բայց Արկ կամ արքունիք շահին (ինչպէս հայ անուն), կայ ի միջի միջնաբերդին՝ որ ի նմա. և ամենայն սպանութիւնք ըստ մեծի մասին առ դրամբք այսր միջնաբերդի կատարին։

Զարդիս հինգ հարիւր տունք Հայք բնակին յաւանին՝ շէնջակոյտ իրար վերայ. անձուկ իմն խռնութեամբ, բայց և այնպէս զբաւական տեղի զրաւեն ի հիւսիսոյ Էջմիածնի։ Ո՞ր ապա բնակէին երբեմն հարիւր հազարաւոր զերդաստանք նախնեաց՝ եթէ այնքան անձուկ իմն էր նիստ նորա՝ որ մինչ ի Հռիփսիմեայ

ի Գայիանէ հաղիւ տարածէր։ Ժամանակն տակաւին յայտնելոց է զստուգութիւն վարկածոյս. այն է՝ թէ արևելեան դիրք նորա յԱռապարէ Սրբոյն Գրիգորի տարածեալ իցէ երբեմն մինչև ի Քասախ ընդ յարևմուտս, և ի Շրէշ բլրոյ մինչև ի ծիր Սառն քանքանին ի հիւսիսոյ ընդ հարաւ։ Եղեն այո՛ ոմանք ի մատենագրաց մերոց, որք զՍուրբն Գրիգոր ի քաղաքին Վաղարշապատայ եդին, բայց այս ո՛չ է ստոյգ, զի Առապար Սրբոյն Գրիգորի անկանի յարևելս, յայգեստանեայց անտի ցՇրէշ բլուրն՝ ի հիւսիս, Քասախ գետն յարևմուտս, իսկ Սառն քանքանն ընդ Արօտին Շորլուայ՝ ի հարաւ։

Բաց ի Քասախ գետոյ՝ որ անկանի յարևմուտս նորա, և ի կրկին քանքանացն էջմիածնի, որոց մին, այսինքն Սառն անուանեալ քանքանն՝ որ անպիտան եղեալ կարծի քաղաքին միանգամայն, ո՛չ ինչ այլ վտակ կամ առու երևի յայսոսիկ կողմանս. յարևելից՝ ցՀրազդան գետ, յարևմտից՝ ցՓարպւոյ գետ, ի հարաւոյ՝ ցԵրասխ մեծ, և ի հիւսիսոյ՝ ցԵղուարդ։ Ապա ո՞ր սուզաւ Թահ անուանեալն գետ յիշատակեալ ի գիրս նախահարց մերոց։ Քաղաք այնքան մեծ, որքան էր Վաղարշապատ, կամ դաշտ այնքան լի բնակչօք և բերրի, որպիսի էր այս ընդարձակ հանդիսարան բնութեան, զիա՞րդ կարէր բաւարարիլ դուզնաքեան վտակաւն Քասախայ, որ և ի ժամանակի իսկ մերում, բազմիցս ցամաքեալ գտանի՝ ի միջոցս ամառանւ։ Ա՛ռ եթէ կամիս նաև զայն՝ զի մեծ մասն Արագածոտան՝ ընդ որ անցանէ այս գետ՝ այժմ աւեր է, որ եթէ չէն լինէր՝ ո՛չ և արտօսր մի ջրոյ փրկէր դէզուլ ի խոնարհ, ուրեմն զհետ գա՛յ յարել, զի ամեներան նախնիք մեր յայլուստ փոյթ կալեալ լնուլ զայս պակասութիւն վըտակելով զԹահ յԱրագածոյ ոտանէն մինչև ցԵրասխ. զի սուրբն Մեսրովբ՝ որ ի Միջագետաց գայր ի Վաղարշապատ՝ անդր պատահեցաւ արքայի և աւագանւոյ նորա՝ ընդ յառաջ ինքեան[29]։ Իսկ այն՝ որ յիշէ թէ Ներսէս Շինողն ջուր ածեալ ի Քասախ գետոյ ցամենայն աւազախիր դաշտավայրն ի գործ արկանէր, իմանալի է վասն Հրազդան գետոյ, և ո՛չ վասն Քասախայ։ Նախ՝ զի Քասախ չունէր յայնժամ, և չունի այժմ իսկ՝ ջուր բաւական յընթացս իւր՝ յամառանւ։ Երկրորդ՝ զի չիք նշան առուից կամ ջրանցից[30]. այլ առուն գետ հանեալ ի Հրազդանայ՝ որ թէ և չոր զարդիս՝ երևի մինչև ցայսօր ժամանակ սկսեալ ի Ծակ քարէն՝ որ ի ներքոյ Ծիծառնաբերդին և ընդ Երեքբլուրն անցեալ՝ որ կոչին Իւչ Թափէ, առ

ի շեղ ճանապարհին՝ ընդ Փարաքար գիւղ կամ *«Փրփրաքար», գայր զեղոյր ի «լիճն Քահանայի» և արգաւանդէր զԱռապարն աւազախիր, յայտնի երևի յաւերածոյն մինչ ցայսօր ժամանակի։

Լուսաբանութիւն խնդրոյս պարտական է Յուսէյն խան բըդեշխին Երևանայ[31], յառաջ քան զյաղթութիւն Ռուսաց։ Ջի Աբբաս Միրզա[32], բազմութեան որդւոց Բաբախանի Ֆատալեայ արքայի Պարսից նախագահ և աթոռաժառանգ, գոլով իշխան աչալուրջ և խոհեմ, ընտրեաց իւր զվինուորական մարզս եւրոպական հրահանգաց, ուստի և ի սկսանել իւրում զայն յԱտրպատականս՝ հրաման արձակեաց և ի նահանգս ստորադրեալս ինքեան՝ զնոյն կրթութիւն կրթել զզօրս ազգին։ Եղբայր բդեշխիս մերոյ՝ Հասան խան, գոլով այր զօռ և պատերազմասէր, հաւաքեաց կրթեաց արս իբրև 15000, և ի վերայ հաւաքեալ նաև 15000 այր ի խժիցն այլազգեաց՝ առանց ռոճկաց և թոշակաց միանգամայն, խաղաց նոքօք ի վերայ** իշխանաց ումանց Մարաց՝ բռնացելոց ի սահմանագլուխ խանութեան եղբօրն, և ընդ բռամբ նուաճեաց զամենեսին մինչև նաև զփաշայն Կարնոյ, որովք բազմիցս և ընդդէմ Ռուսացն անհեղացաւ տէրութեան։ Իբրև պահ լինէր, յորում այս զօրք անտերունչ՝ պարապ ի պատերազմացն դտանէին, Յուսէյն խան Սարդար, դրացի և դիեցիկ ռուսային խժութեան, ըստ անգութ բարոյից նոցա սկսանէր տառապեցուցանել և՛ զսոսա ի ձեռնարկս տարժանելիս, թէպէտև յամենևին շահաբերս աշխարհին և անձին իւրում։

1814. Եւ ըստ այսմ ի դադարել զօրաց նորա յայսմ ամի[33], գտեալ ի հին դիւանաց տէրութեան Պարսից, թէ վտակք կրկին, ամբարձեալք ճարտարութեամբ արուեստից, ի Հրազդան գետոյ, մին առոգէր զբլուրն լայնանիստ ի Ծիծառնաբերդէ մինչև ի տափարակն Թալարայ, յանդիման ապարանից իւրոց. հաստարակօրէն

---

* Գիւղ պարսպաւոր ի մէջ ճանապարհին Վաղարշապատայ յԵրևան, զոր առողանէ առուն հանեալ ի Հրազդանայ։ Ունի ի վերուստ գերեզմանատանն յառապարին ըստ հիւսիս՝ հանք իմն կաւօճառի, զոր գիլ կոչեն Պարսկերէն, որ այն գի՝ որպէս օճառ փրփրայ, և ինքն որպէս քար է, վասնորոյ և ես ի Փրփրաքար ստուգաբանեցի, յոր և անուանակոչեալ իսկ համարիմ։

** Այս կռիվ ծագեցաւ ի մէջ Հասան խանի եղբօր բդեշխին Երևանայ, և Իբրահիմ փաշային Բայազիտոյ, մինչև եկն Բաբա փաշա սէրասկար, կալաւ զԻբրահիմ, եդ ի բանդի, և զքուրտ Արդօլլա աղա կարգեաց փոխանակ նորա իշխան Բայազիտոյ՝ ընտրանօք բդեշխին Երևանայ։ Իբրահիմ կաշառեաց զազատութիւն իւր, և քուրտ Յօսէյն աղա տուեալ զդուստր իւր ի կնութիւն սարդարին՝ յարեցաւ ի կողմն Պարսից։

Բոլոր Կոնդ կարդացեալ՝ ի հարաւոյ կողմանէ գետոյն և կամրջին Երևանայ, և միւս վտակն ընդ Ծակքարն անցեալ «Դալմա» կոչեցեալ, և ի հիւսիսային սնարից Երեք բլրոց անցեալ, որք Իւչ Թափէ անուանին, երթայր հասանէր ցՎաղարշապատ՝ ընդ ճանապարհ Երևանայ յէջմիածին, առաքեաց արս խորհրդականս առ Հայրապետն մեր տէր Եփրեմ։ «Մեք, ասէ, կարգեցաք յԱստուծոյ և ի թագաւորէն թագաւորաց Պարսից՝ շինել և կազդուրել զաշխարհս այս։ Արդ՝ կամք են մեր վերստին բանալ զԴալմայն Հրազդանայ յառատութիւն բերոց և ի մխիթարութիւն բնակչաց Երևանայ. եթէ և դուք զնոյն խորհեսջի՛ք առնել՝ վճարեցէք ինձ թումանս 2500, և ես բացեալ զԴալմայն՝ արձակեցից առ ձեզ ջուր առատ յաւելորդացն Հրազդանայ, և ծաղկեսջի՛ Իւչ Քիլիսա[34] սահմանօքն հանդերձ»։

Հրաւէր արդարև իշխանական, բայց էջմիածնին ըայսու ժամանակաւ հեծելով ընդ ծանր հարկապահանջութեամբք նոցին իսկ Պարսից, որպէս և ընդ պարտուք 40000 թումանաց նոցա՝ ո՛չ իշխէր առնել զայս մեծագործութիւն ի ձեռն այսպիսի Սարտարապետի, որոյ օրէնք էին կամք, և հանապազորդեան ջանք՝ կեղեքանք Հայոց։ Մանաւանդ զի՝ և գերութիւն Հայոց սկսեալ ի Կաղզուանայ, ի Բագրևանդայ, ի Կարնոյ և ի կողմանց նոցա՝ յաճախէր օր ըստ օրէ, նեղեալ և չարչարեալ ի Պարսից, զորս ո՛չ միայն անխնայաբար գնէր և թափէր երանելի Հայրապետս մեր՝ այլ և ընդ բազում ամիսս կերակրէր և զգեցուցանէր՝ զնոսա մեծաւ գթութեամբ, որով ո՛չ եթէ գանձք Աթոռոյն սպառէին, այլ և պարտք ի վերայ պարտուց շեղջակուտեալ դիզուին։ Վասնորոյ մեծաւ իմն զգուշութեամբ հրաժեշտ տուեալ յայնմանէ սրբոյ մերոյ Հայրապետին, յետս կասեցաւ։ Իսկ սարդար եբաց իւր զԴալմայն[35], և զհանուր Բոլոր Կոնդն, մինչև ցԵրեքբլուրսն ելից այգեօք որթոյ, և անտառօք պտղաբեր ծառոց։ Արդ Ռահ անուանեալն գետ, ո՛չ այլ իմն երևի լեալ՝ քան թէ զմեծ իմն առու, հանեալ յԱրագածոյ ոտանէն առ նախնեօք մերովք, կամ գետն Փարպւոյ, Բիւրականայ կամ Ամբերդայ՝ որք հոսին յԱրագածոյ ոտանէն յայս դաշտ։ Իսկ այն՝ որ ի վերնակողմանց ճանապարհին Երևանայ ի Վաղարշապատ, միշտ ընդ հիւսիս ընթանալով՝ գայր հասանէր անդր, և գործէր ի հնումն զլիճն ցամաքեալ, որ կայ այժմ ի մէջ Փարաքար գեղջ և էջմիածնի, հասարակօրէն անուանեալ Քէշիշ գէօլի, որ այն է՝ Լիճ քահանայի՝ էր առուն Հրազդանայ։

Արդի դիրք էջմիածնի, կայանայ ի բերդապարիսպ արտաքին և ի ներքին։ Արտաքին բերդապարիսպ նորա, որ նորոգեցաւ յա-

ուրս Սիմէոնի Կաթուղիկոսի Երևանցւոյ՝[36] է ի ձև քառակուսի, փոքր մի խոտորեալ արտաքս առ դարբասաւն Եղրի՝[37] ի հարաւակողմանէ նորա, որ անկանի դէպ ուղիղ ի թղթարան և ի լիճ Գոմշոց։ Ստուարութիւն պարսպիս այսորիկ, որ ի հիմանց քարաշէն, այլ ի վերուստ աղիւսակերտ՝ հասանէ ցերկու և կէս կանգունս, իսկ բարձրութիւն նորա՝ ցհինգ, ունելով բրգունս հաստակառոյցս յիւրաքանչիւր քառընկէցի, իսկ շրջապատ իւրև չորս մղոն։ Չորք մեծամեծ դարբասք են սորա, որ հանէ ընդ գիւղաքաղաքն Վաղարշապատայ՝ ընդ հիւսիս անուանի գիւղի դարբաս։ Որ ընդ Ղազարապատն հիւրանոց ի թղթարան անդր և ի լիճ գոմշոց՝ Ղազարապատի դարբաս, շինեալ ի Ղազար կաթուղիկոսէ Ջահկեցւոյ[38]։ Որ ի մարագաց բակէն հանէ ընդ կալն՝ ի հարաւոյ յարևելից, ասի կալի դարբաս. իսկ որ ի հիւսիսոյ յարևմտից՝ ի դուռն Ղազարապատայ, ի թղթարան անդր[39], և ի լիճ գոմշոց՝ անուանի դարբաս Եղրի. ի սակս լինելոյ անդ սեաւ մարմարիոնեայ դամբարանի մեծանուն Կաթուղիկոսին Հայոց տեառն Եղրի, որ ի սակս ընդունելոյ իւր զժողովն Քաղկեդոնի յարհամարհանս յիշատակի դիպուածոյս. աստ ամփոփեալ ասանգի, մակագրեալ ի վերայ զհակադարձ անունն ևեթ՝ Եղր, թէպէտև ոմանք ի վանս Գայիանէի զետեղել ախորժեցան։ Յարևելից կողմանէ պարապատ այս պարիսպ զգոմս երիվարաց և արջառոց էջմիածնի, մարագօք յարդից նոցա և ամենայն աղտեղութեամբք։ Յարևմտից՝ զներսն. անուանեալ և վեհարան կաթուղիկոսացն Հայաստանի. որ ի հիւսիսոյ կողմանէ ընդ մէջ արտաքին պարսպին՝ ունի զվաճառանոցն, իսկ ի հարաւոյ՝ զբակն մարագաց, զձիթահանքն մեծ, և Ղազարապատ՝ որ պարունակէ նախ զվեհարանն յարևելից, առ որով է աւազան ջրոյ և ծաղկոց զուարճալի, ի հիւսիսոյ՝ զՍինհոդոսարան էջմիածնի, և զտպարանն։ Առ սովաւ յարևմտից՝ անկանի և բաղանիքն, որ ունի և դռնակ ընդ արտաքին պարիսպ բերդին, ընդ որ բնակչիք այժմեան Վաղարշապատայ մտանեն ի լուանիլ։ Ունի և դռնակ առ ներսն ի վեհարանն։ Ի հիւսիսոյ նորա են միաշար և միայարկ պալատանի, յորս բնակին երևելիք եպիսկոպոսաց անընդմիջապէս կանխեալքն ի պաշտօն Հայրապետին։

Ներքին պարիսպ էջմիածնի է ամենևին քառակուսի. ունի դարբասս երիս, և դրունս երկու. ի դարբասից աստի արևմտեանն անուանի Տրդատայ դուռն՝ ի սակս չորից մեծամեծ սեաւ կճեայ վիմացն կացուցանողացն ասեմ զսեամս, զսեմակալ և զբարաւոր այնր դրան, աւանդութեամբ հնոց ընծայելոց ինքնակիր աշխա-

տանաց սրբոյ Թագաւորիս մերում Տրդատայ։ Երկրորդն՝ Ղազարապատի, ի հարաւոյ սորա բանի դարբաս մեծ՝ առ Թղթարանն, իսկ յարևմտից՝ փոքրիկ դարբաս, որ հանէ ի ներքինն կոչեցեալ Ղազարապատ, զոր կործանեալ Յովհաննու Կաթուղիկոսի Կարբեցւոյ՝ շինեաց ի տեղւոջն խորհրդարան Սինհոդոսին[40], և տպարան ընդարձակ։ Երրորդն՝ գոմի, չորրորդն՝ ներսի, իսկ հինգերորդն՝ լուացարանի։ Արևմտեան մասն այսր ներքին պարսպիս՝ ունի զվեհարան Կաթուղիկոսին՝ ներս անուանեալ. Տրդատայ դրան գլուխն, դրագրատունն և զտեղապահարան՝ այսինքն պալատ տեղապահին, զոր կառոյց տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, որ երկրորդ էր կաթուղիկոսին իշխանութեամբ և պատուով[41]։ Արևելեան՝ ըղփուռն, զձիթատունն, և զխուցսն աբեղայից՝ մինչև ի դուռն լուացարանին, որոց ի վերուստ շինեաց մեծանուն Ներսէս արքեպիսկոպոս զվարժատունն Էջմիածնի ի բազում սենեակս, ի պատշգամբս և ի դասատունս որոշեալ. այլ ակն յանդիման կուակուտակ գոմոց անասնոց և ախոռոց երիվարաց և ջորւոց։ Թերևս՝ վասն յուշ առնելոյ սրբասուն աշակերտաց նորուն, թէ միայն ուսումն էր՝ որ զանազանէր զնոսա յանասնոց անբանից[42] և ի նմանեաց նոցա, և ո՛չ թէ կերպարան դիմաց կամ տարազ զգեստուցն։ Լիցի՛ որ ինչ և իցէ դիտումն ազգասէր հիմնադրին, տակաւին տեսարանն ապաշուք, աղտեղութիւնն անտանելի, և հանապազորդեան ժահահոտութիւնք նոցա՝ խօթացուցանելով զմարմին և զմիտս աշակերտաց՝ զգաղափարս ցածս և ստորինս տպաւորէին ի միտս նոցա։ Ի հիւսիսոյ՝ միաշար կարգք խցից, մոմատունն հանդերձ մասնաւոր ցանկապատ պարտիզանով միաբանից, զորս ոռոգէ անձկագոյն առուակ քանքանին, որ ի կուսէ տեղապահարանին ոլորտեալ հասանի ցփուռն մեծ. յորոց յերկուսին ծայրս անկանին արտաքնոցք բազմաստիճանեայք ի բազում ճեմիս որոշեալք։ Իսկ ի հարաւոյ՝ ի գլուխ դարբասին Ղազարապատայ՝ է մեծակառոյց գրադարան աթոռոյն, լի ամենատեսակ հնագոյն գրչագիր մատենիւք ազգիս մերոյ։ Կից սմին անկանին կրկին սեղանատունք հասարակաց, յորոց մին է ամառան՝ քարաշէն, և միւսն ձմրան՝ փայտաշէն նստարանօք և սեղանովք, ի գլուխ իւրեանց ունելով տեղիս մատրանաձևս և գմբեթայարկս, սեղանք կաթուղիկոսի անուանեալ, ուր բազմի նա յաւուրս երևելիս՝ ճաշել ընդ միաբանիցն իւրոց։ Առ սովաւ անկանի խահարանն մեծ, ուր հանդերձի կերակուր միաբանից, սառնիչ, յոր պահի սառոյց, գինետունն՝ ուր ամանի և պահի գինի, և մածնատունն՝ ի թիկանց նորա։ Ապա գոմի դարբասն, և անտի և անդր՝

*դարէտունն, որ այն ինքն է՝ համբարանոց անասնոց, և բանդ անասնաբար անառակելոց։*

*Եկեղեցամայր համօրէն Հայաստանեայց, Շողակաթ ի շողոյն լուսոյ յերկնից կաթելոյ ի նա, և էջմիածին՝ յիջանելոյ անտի Միածին Բանին Հօր՝ ոսկի ուռամբ ի վերայ նորա, կառուցեալ է ի կեդրոնի ներքին պարսպին ի վերայ չորեսին սեանց։ Միջին գմբէթ նորա, յարուցեալ ի վերայ Իջման տեղւոյն՝ է բարձրագոյնն միւս այլ չորեցունց գմբէթաց կամ զանգակատանց, կառուցելոց ընդ չորեքծագեան մասունս աշխարհի։*

*Ունի դրունս երիս։ Արևմտեանն՝ կոչի Աւագ դուռն, հիւսիսայինն՝ Լուսաւորչի, իսկ հարաւայինն՝ սրբոյն Յովհաննու։ Սեղանք են ի նմա վեց. Իջմանն անուանեալ տեղի, որ կայ ի միջավայր եկեղեցւոյն, Աւագ սեղանն ընդ արևելս՝ է յանուն Աստուածածնի, որոյ ընդ հիւսիս՝ է սեղան Որդւոց Որոտման, և ընդ հարաւ՝ Լուսաւորչին։ Դարձեալ ի հիւսիսոյ է ննջատաճանեայ սեղան սրբոյ Նախավկային, և ի հարաւոյ՝ սրբոյն Յովհաննու Մկրտչի։ Գեղեցիկ քան զամենայն շինուածսն՝ է զանգակատունն առաջոյ Աւագ դրան, համակ քանդակագործ քարամբ, զոր կառոյց Փիլիպպոս Կաթուղիկոս[13], որոյ ի միջին յարկի է սեղան սրբոց Հրեշտակապետաց, ուր յամին երկիցս պատարագ մատուցանի, այսինքն՝ ի տօնի Համբարձման Տեառն յերկինս, և Հրեշտակապետաց։ Երկու են խորանք կամ աւանդատունք նորա, մին՝ ընդ հարաւ, ուր զգեստատուրի քահանայն, և միւս՝ ընդ հիւսիս, ուր պահին նշխարք սրբոց՝ և զարդք տաճարին։*

*Տանիք Եկեղեցւոյն շուրջ զմեծ կաթողիկէիւ՝ դէպ ի չորեսին զանգակատունսն, ոչ են հաւասար, այլ խոզակաձև, այսինքն՝ խոզի քամակի, կամ որորոցի ձև, զի մի՛ ձիւն կամ անձրև ներգործեսցէ ի ներքս։ Բայց որովհետև ի պատերազմին Պարսից ընդ Ռուսաց յամի Տեառն 1814[44], զունդ ինչ ի զօրաց Պարսից պահ կարգեալ Սրբոյ էջմիածնի զտանիս եկեղեցւոյն արարին պահակ իւրեանց, և ի ցրտոյն ստիպեալ՝ ոչ միայն թէ բազում խարոյկս կայծականց վառեցին աստ և անդ, այլ և ճանկօք երկաթեօք և աշտենիւք հրացանաց բրեցին, և ի բաց կորզեցին զկապարսն՝ որ իբրև շաղախ զսալ ընդ սալ աղխախէին. տեղի տուեալ անձրևաց՝ ապականէին գրեթէ զամենայն վայելչութիւն նկարուց առաստաղի եկեղեցւոյն ի ներքուստ։ Վասնորոյ հարկ եղև սրբոյ Հայրապետիս մերոյ Եփրեմայ գրել և բերել ճարտարապետս հայկազնեայս՝ զԳրիգոր Վան-*

ցի, ի Վասպուրականէ, և զԹովմաս Վաղարշակերտցի, զեղբայր կրագիր Յովհաննէս վարդապետիս, այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, և պատկեր անմեղութեան՝ ի Բագրևանդ գաւառէ, այլովքն հանդերձ և ի ձեռն նոցա կոփածոյ քարամբք ի քարահանից անտի, և շաղաղով կրոյ, աւազոյ, ձիթոյ, ձուոյ և բամբակի միանգամայն՝ նորոգեաց զբովանդակ տանիս սրբոյ եկեղեցւոյն, և զխրամատութիւնս այլ և այլ մասանց նորա։

Կան ինչ ինչ տեղեկութեան արժանաւորք, բայց ըստ որում նախնիք ո՛չ գրեցին, և արդիք իբրև խորհուրդ թաքուն պահեն ի մէջ իւրեանց՝ և այն որպէս թուի ինձ, կարի իմաստութեամբ և հանճարով վասնորոյ զանց առնեմ և ես։

Եղեն ճանապարհորդք, որ ունչս երկարեցին ընդ անուն և ընդ ձև շինուածոյ եկեղեցւոյս այսորիկ, բայց ես ո՛չ այնքան ընդ ընդարձակութիւն միջին կաթողիկէին զարմանամ, որքան ընդ կանխատես իմաստութիւն նախկին ճարտարապետաց նորուն, որ գիտելով՝ թէ երկիր այնքան ղանգեալ աղով և շփհրական բաղադրութեամբ, ո՛չ մնայր ազատ ի սաէպ յերկրաշարժէ, պեղեցին զերկիր անբաւ խորութեամբ, մինչև պարզել զջուրն անդնդային ի հողոյ անտի, և ընդ ստորերկրեայ անցս հանին ածել ի բաց՝ բազում մղոնաց հեռաւորութեամբ, որ այն ինքն է Սառն քանքանն. այլ և հաստակառոյց կամարանի կանգնեցին ի ներքոյ, սալայատակ յարկեցին զայն ի վերուստ և ապա ի վերայ կառուցին զեկեղեցին, որպէս զի՝ տեղի գտեալ ստորերկրեայ գոլորշեաց ի վեր ելցեն ընդ փորոք կամ միջոցս նոցա, և շինուածոյն մի՛ մեղիցեն։

Զարմանք մի ևս այս է, զի ի բարձրագոյն տեղիս, որպիսի է Ակոռի՝ ի լանջն Մասսեաց, և Ապարանքն՝ ի լանջ անդր Արագածոյն, այնքան խոր չունին զջուրն, որքան այս դաշտ, զի ի նոսա ջուր ելանէ ի չորս կամ ի հինգ կանգնոց, աստ՝ ի հնգետասան կամ ի քսան կանգնոց խորութեանց։

## ՇՐՋԱՊԱՏ ԷՋՄԻԱԾՆԻ

Արտաքոյ բերդապարսպին ընդ հիւսիս՝ է հրապարակ բաց, ընդ որ ամենայն երթևեկութիւնք յարևմտից յարևելս և փոխադարձ՝ կատարին։ Աստ՝ քանքան Յակոբայ Կաթուղիկոսի Ջահկեցւոյ[45] ունի աղբիւր քարաշէն, ուստի ելանէ վիժակ ինչ ջրոյն յարբումն գիւ-

ղականին։ Արդի սահման էջմիածնի ձգի ի Դնկի* առուէն մինչև ի կալս՝ յարևմտից յարևելս, և ի Հրապարակ Պողոսայէն՝ մինչև ցառուն, որ գետակ հանեալ ի Քասախայ՝ ի գլուխ Կաւահանից թաղին՝ յերկուս բաժանի։ Մին երթայ ուղիղ յարևմտից յարևելս ի Հիւսիսոյ սահմանին, և բաշխի ի պարտէզս և յանդորրս նորա. իսկ միւսն գայ ընդ հարաւ յարևմտից սահմանին՝ ի դինկն, հնարեալ և կառուցեալ ի Շէյթանն մականուանեալ Կարապետէ Հայկազնւոյ, և յետ շրջելոյ զայն՝ զեղու ի խոնարհ ի պէտս անդորրէից։ Բաժանի յերիս թաղս, որք են Կաւահանքին, Դնկին և Ժամին։ Ունի եկեղեցի փոքրիկ յանուն Սուրբ Աստուածածնի, ուր գիւղականն նուիրէ զաղօթս իւր առ Աստուած։ Այլ բաց յապարանից անտի Հաճի Միրզա Աղասւոյ, երբեմն Պարսիկ գրագրի Հայրապետանոցին սրբոյ, և այժմ մեծի նախարարի Դրանն Պարսից՝ ի Թեհրան՝ չունի ինչ արժանի յիշատակաց։ Յաջորդին սմա ի Հիւսիսոյ՝ անդորրայ ինչ, ապա աւերակ մատրանն Մարիանեայ կուսի, և հուպ առ նովին վանքն Շողակաթի՝ զոր նորոգեաց Աղամալ Շօսօթցի,[47] որ թէպէտև յայսոսիկ ժամանակս ամայացեալ կայր ընդ միւս համապատիւ Քերց իւրոց, ի պատճառս պատերազմաց Պարսից ընդ Ռուսս՝ սակայն յետոյ բարեջան փութով սրբոյ Հայրապետիս մերոյ՝ վերստին նորոգեալ՝ լցաւ միաբանիւք։ Ի մէջ սորա և վանիցն Հռիփսիմեայ՝ անկանին աղօրիքն՝ զոր կառոյց բարեջան Պետրոս վարդապետ Շուշտակն, և զվանսն նորոգեալ՝ ելից գործունեայ եղբարբք։ Ի թիկանց սոցա ընդ հիւսիս՝ են այգեստանեայք, և ապա յիշատակարան զօրաց

* Դինկ անուանի ի Հայաստան՝ գործատունն, ուր թեփահան եղեալ որիզ, յղկի և մաքրի ի կերակուր։ Դինկ՝ ի դնկելոյ ձայնին առեալ, թէպէտև ի կիր առնուն և Տաճիկք և Պարսիկք, սակայն ընդէր ո՞չ և ես, բառ որում նոյն հնչիւն է նորա. զոր լսեն նոքա. և նո՛յն՝ զոր և ես։ Նորօրինակ դինկ իմն հնարեաց յերևան և յէջմիածին, մեծանուն արուեստահնարն Կարապետ Հայկազն[46], զոր ի սակս անծանօթ գործեացն հնարելոյ, կոչեցին զնա Պարսիկք՝ շէյթան, կամ սատանայ Կարապետ։ Փառք մեծ ի ձև անւոյ սայլից տախտակամած յերկուց կողմանց, և ի ծայրս իւրաքանչիւր փառից տախտակ լայնածիր յատիճան յատիճանս տրոհեալ, դնի ի ցրգռնին, ուր ի Նաւն անուանեալ խողովակէ իջանէ ջուր ի բարձանց բուռն զօրութեամբ և դարձուցանէ զնա անհնարին արագութեամբ։ Ի միջոց փառիս այսորիկ՝ մտանէ գլուխ հաստահեղոյս գերանի, իբրև գլխեան կամ առանց ընդ անիւն ռինդ ադուցեալ, որպէս զի ի շրջել փառին, շրջի և այս մարմին անայգին։ Աստանօր վայտեայ հաստատեալ ի տեղիս տեղիս ի մակերևոյթի լխոան այսորիկ՝ հարկանին ի ծայր թևոց ձողոցն, որ յերկուս շարս դասաւորեալ առնթեր նորա, մին վերուստ ի վայր, և միւս՝ ընդերկար ընկողմանեալ՝ բարձրացուցանեն զնոսա զօրէն սանդիտոռանց, և ուժգնակի իջուցանեն ի սանդ անդր որիզալից, որով անաշխատ յղկի և մաքրի այն գերընտիր կերակուր մարդկային ազգի։

Ռուսաց անկելոց ի վերջին պատերազմի նոցա ընդ Պարսիկս՝ յամին 1827[48], որք կատարեցան վասն փրկութեան Էջմիածնի։ Ուստի ընդ անապատ անջրդի յառաջելով՝ գաս յստորոտս մեծի Քարադաշտին, ուստի ոտն Արագածոյ սկսանի, և հանէ ցՕշական և ցԵղուարդ։ Հուպ առ ճանապարհին Օշականայ յարևելս Տան Արդարն կոչեցեալ Դաւթի՝ անկանի լիճ Քարադաշտին, իսկ առ ճանապարհաւն Եղուարդայ՝ հանք կարմիր քավանկ քարանց, յորոց շինեցան և շինին գրեթէ ամենայն եկեղեցիք նահանգիս։

Յարևմտից կողմանէ ընթանայ Քասախ գետ, և խառնի յԵրասխ, և չունի ինչ երևելի ի մերձակայս իւր։ Այլ որ ինչ գիւղօրէք են՝ յարևմուտս կոյս գետոյն՝ անկանին։

Ի հարաւոյ Վաղարշապատայ անկանի թղթարանն, որ համբաւի գոլ տեղին ապարանից Տրդատայ և լիճ գոմշոց։ Յարևմուտս կոյս լճիս անկանի սեխանոց կամ բոստան վանից, և բերէ զընտիրս ի տեսակաց սեխի, ձմերկի, և այլ ցանելի արմտեաց և բանջարոց։ Յարևելից հարաւոյ թղթարանին՝ է Ղազարատունկն պարտէզ ամենաբեր ծառոց, զոր վայելէր Գրիգոր արքեպիսկոպոս՝ գանձապետ Էջմիածնի. որոյ յարևելից է պարսպաւոր գերեզմանատուն միաբանից աթոռոյն, և ի գլուխ դարբասին օթ բացահայեաց, տեղի ողորմաթաս ըմպելոյ կենդանեաց՝ ի յիշատակ ննջեցելոց։ Ուղիղ ընդ յարևելս սորա անկանի Տնտեսին պարտէզ, այսպէս անուանեալ, զի հասարակաց տնտես Աթոռոյն ունի զկառավարութիւն նորա. յորում բաց ի պէսպէս պտղոց՝ գոյանան և տարեկան թերք, բանջարք, և խաւարտք ի պէտս միաբանից։ Կից սմին է լիճ սառուցին ի հիւսիսոյ։ Ի հարաւոյ նոյն գերեզմանատան անկանի պարտէզ և վանքն Սրբոյն Գայիանեայ, որ նախ քան զտէր Եփրեմ Կաթուղիկոս մեր՝ ամայացեալ և քայքայեալ էր ի պատճառս պատերազմին Ռուսաց, ընդ Պարսիկս, բայց յետոյ նորոգեցաւ և առաջին առաջնորդ նորոգութեանն եկաց Խաչատուր վարդապետ ոմն. աստ թաղին ըստ մեծի մասին կաթուղիկոսունք մեր։

Իսկ յարևելից է կալն, ուր կասին արմտիք Աթոռոյն և ուանին միանգամայն։ Է աստ և օթարան վերնայարկ, ուր նստի վերակացուն կամ հարկահան կալորէից, յորմէ և անդր ընդ յարևելս՝ անցանէ առու աղօրեաց Սրբոյն Հռիփսիմեայ։ Ապա Առապարն Սրբոյն Գրիգորի։ Հանգուցեալ եկեղեցին, ցամաքեալ լճափորն, որ այժմ կոչի Քէշիշ գեօլի՝ այսինքն Լիճ քահանայի, որ ընդ Փարաքար տանի մինչև յԵրևան։ Բայց վասն առաւել ևս ճշդութեան ի տեղագրութիւն դրից Վաղարշապատայ՝ առաւել ախորժելի է ինձ և միւս շրջանակ

տողել ստանօր. այս է՝ զի յարևելից կուսէ անդր քան զՓարաքար, Քալարա, Կաւակերտ, Շինազաւիթ, և բերան Հրազդանայ՝ որ խառնի յԵրասխ, են Երևան, Դուին մինչև ի Գառնի, և Շարուր։ Ի հարաւոյ՝ Երասխ և ոտն Մասեաց, յորում է և՛ լիճ Գինայ, Ակոռի, և Սուրբ Յակոբ, Սարդարաբատ Բերդ*, Փառախոտ և Ցոլակերտ՝ մինչև ի Բայազիտ։ Յարևմտից՝ Արմաւիր, Ջէյվա, Սարդարաբատ բերդապարիսպ քաղաք, Բլուր, Սհաթափոս, Կողբ, որ ունի զաղեհանքն և Հաճի Բայրամլու, ուր խառնի Ախուրեանն յԵրասխ։ Իսկ յարևմտից դէպ յարևելս՝ կրկին Արշարունիք, Երուանդաշատ քաղաք, Թալին, Թալիշ, և Կօշ, որոց և ի թիկանց յոստ ինչ Արագածոյ՝ անկանի Մաստարա։ Այպա ի Թալիշայ ընդ յարևելս՝ հիւսիսոյ՝ Աղաւնատուն, Փարպի, Փռանկանոց, Դողս, Համիլար, և Մօլադուրսուն։ Ի հիւսիսոյ՝ Ուշի, Օշական, Աշտարակ, Մուղնի, Կարբի, Ապարանքն գաւառք ուր բաժանի Քասախ, և Արուճ։ Նա և ի լերին Արագածոյ՝ յարևելից կուսէ նորա՝ Բիւրական, Արդահաւասիկ, Ջրվշտիկ, Տեղեր, և Անբերդ։

ՕԴ

Օդ տեղւոյս ի պատճառս անհամար անդոց որիզոյ, և ճախնից Սեաւ ջրոյ կամ Մեծամօրի, Երասխայ և լճիցն շրջապատելոց բղնովաւ, կարի անառողջագոյն է յամառան անդ։ Յորում յառաւօտէ մինչև ցութներորդ ժամն, դուլ տան ամենայն հնչմունք օդոց, և յութներորդ ժամէ ցկէս գիշեր, շնչէ հողմն ինչ հիւսիսային, անուանեալ Լուսաւորչի քամի։ Այս հողմն, կցորդեալ ընդ անյագ կիրառութեան ամենատեսակ սեխոց, ձմերկաց և խաղապտղոց, զորս յառաջ ընծային ամենաբեր անդք երկրին՝ և հաղորդեալ ընդ զարշահոտութիւն ճախնաց և լճաց, և ընդ անբաւ զինուորութիւն չարախայթոց մոծակացն, մեծապէս վնասեն կենաց վաստակաբէկ մշակաց, և պատճառեն զաղտս ջերման և տենդի, բազում անգամ մահաբերս օտարաց և բնակաց միանգամայն։ Այլ այս յաւէտ՝ է ի սակս աններհամութեան դաշտին Վաղարշապատայ, ապա թէ ոչ՝ լեռնակողմանք նորա չորեքկուսի այնքան առողջարար և պատուական

---

* Այս Սարդարաբատ բերդ յարևմտից հիւսիսոյ Ակոռի գեղջ՝ ո՛չ է արժան շփոթել ընդ Սարդարապատ բերդապարիսպ քաղաքին՝ զոր կառոյց Յուսէյն խան սարդար յոստ ինչ լերինն Արագածոյ՝ յԱրշարունեաց գաւառի, և գետ հանեալ յԵրասխայ՝ վայելչացոյց զնա։



4—739

օդ ունին, մինչ արժանի լինել բնակութեան անմահից անգամ։ Եթէ՝ ի բարձուէ Մասեաց կամ Արագածոյ հայիցէ ոք ընդ դաշտն մեծ Վաղարշապատայ, մինչև ի սպառուածս Շարուրայ՝ նշմարէ օդ յանձր և շամանդաղապատ, իբրև զգոլորշի հնոցի փոքր ինչ բարձրութեամբ լցեալ տարածեալ ի նոսա, որոյ ի վերուստ մինչև յերկինս՝ տեսանի միօրինակ և անպղտոր պարզութիւն։ Ցուրտն ձմրան սաստիկ է յոյժ, որ ըստ երևելի ճանապարհորդաց՝ պատճառի յաւէտ ի բազմութենէ աղեհան լերանց նորա։

## ՋՈՒՐ

Թէպէտև վտակք հանեալք ի Քասախայ խոխոջին ընդ Վաղարշապատ, դարձուցանել զաղօրիս և զդինկս նորա, սակայն և այնպէս անցանելով նոցա ընդ աղտախտին և ընդ գիճին անդս որիզոյ և ընդ տղմուտս երկրին՝ կորուսանեն ընդ ականակիտ պարզութեան իւրեանց, և՛ զբարեհամութիւն և զառողջարար ներգործութիւնս իւրեանց։ Քանքանն հանեալ ի Յակովբայ Կաթուղիկոսէ Հայոց՝ յԱրագածոտնէ ընդ ստորերկրեայ ջրանցս մինչև յէջմիածին, բնակարան գոլով անհամար օձից և զեռնոց, որք յամառան ի տօթոյն խուսեալք, և ի ձմրան՝ ի ցրտոյն սառնամանեաց, գունդագունդ անդր զեղուն և աւելորդով բնութեան, և մահաբեր շնչովք իւրեանց կարի վատառողջարար յօրինեն զջուր նորա։ Անհամար ծակտիք են նորա ընդ միջոցս տարածութեան դաշտին՝ բացեալք աստ և անդ, յորոց մտանեն մշակք մաքրել զճանապարհ ընթացից նորա՝ միանգամ և երկիցս ի տարւոջ։ Յամսեան Յունվարի այսր ամի դիպուածով իմն պատահեալ միոյ ի ծակտեաց աստի՝ թուեցի ի նմա օձս հինգ հազար, մեծամեծս և մանրիկունս. որոց ելեալ յիւրաքանչիւր ի խորշոց իւրեանց յարեգունիս հեշտանային ի կողս նորա։ Բղխի և Սառնն անուանեալ քանքան ի Ներքուստ եկեղեցւոյն էջմիածնի, որպէս գրեցաք. բաց յայսցանէ՝ ունի և լճակս ի ներքոյ առապարին Օշականայ, դէպ ուղիղ ընդ հիւսիս Կոնդին Որանէից՝ իբրև կիսով մղոնի շրջապատաւ, այլ ջուր նորա՝ ձիոց և եթ ըմպելի։ Լիճ Մեծամօրի, որ այն ինքն է Սև ջուր, անկանի յարևմտից Վաղարշապատայ՝ առ Ջէյվա անուանեալ գիւղիւ, ձգեալ մինչև յԱրմաւիր՝ հին մայրաքաղաք մեր, և խառնեալ յԵրասխ։ Լիճ Կաղզուանայ կամ Գայլատուայ՝ մերձ ի Գաբէղէն գաւառ, Ջէնկլի կոչեցեալ. Քերթողք, ռամկաց համբաւել կամելով զերիվար Քորօղլւոյ՝ ի ծովէ աստի՝ ծովածին զնա առասպելեն։ Լիճ որ անկանի ի ցռուկ ինչ ոտանն Արագածոյ յարևմտից

*Աղամնատան, և ի հարաւոյ Փռանկանոց գեղջ։ Լիճ ընդարձակածաւալ ի կատար Արագածոյն ի վերուստ Բիւրականայ և Տեղերայ։ Լիճ Գինայ՝ ի հարաւոյ Երասխ գետոյ՝ որ նոյնպէս կոչի Սև ջուր անհնարին խորութեամբ, ուր անկաւ Արտաւազդ Երկրորդ՝ ըստ Խորենացւոյն*[49]*։ Լիճ ի խրամս Մասսեաց, ի վերուստ վանիցն՝ և յարևմտից աղբեր Սրբոյն Յակոբայ, այն՝ զորմէ յայլուր գրեցաք.*

*Լիճ ծովանայ ձիւնաթումբ,*
*Որ հալս հանոր ծծէ յումպ*[50]*։*

*Լիճ ի կատար Փոքուն Մասսեաց՝ առ որով մայաոք թեղեաց և գերեզմանք Հսկայից՝ հասարակօրէն օդուզի գերեզման կարդացեալ։ Այսոքիկ լիճք թուին ինձ լինել սկզբունք Մեծամօրին և Գինայ՝ ընդ ստորերկրեայ մուղս իւրեանց։ Զկնի առման Ռուսաց պայս նահանգ՝ օր ըստ օրէ նուազեն զմշակութիւն որիզոյ, թուելով օդոտ ինչ առնել օդոյն բարեխառնութեան։ Բայց այնմ ո՛չ է հնար լինել, եթէ ո՛չ զճախին և զաղտաղտինս նորա լնլով և հաւասարելով, և փոխանակ որիզոյ՝ շաքար տնկելով ասափ և անտի յԵրասխ գետոյն։*

### ԳԵՏՔ ԱՐԱՐԱՏԱՅ

Մայր *գետոց Արարատեան նահանգիս է Գեհոն կամ Երասխ։ Տարապարտ կարծիք են մատենագրաց առհասարակ՝ մերոց և օտարաց միանգամայն, զքառն գեհոն Եբրայեցի համարել, որով և բդատոյգ անցս աշխարհի և ազգաց աղաւաղելով՝ մտացածին կեղծիս փոխանակ ի ներքս մուծանել։ Վասն զի՝ գեհ, կամ գահ, ի բարձրութենէն առեալ, և գեհեան ի բազմաւորականէ նորա, որ է գեհեր կամ միջոց և ձորքն, զորս բնականաբար գործեն բազմութիւնք գեհից, են տիրապէս հայկական բառք, և նշանակեն զմեծամեծ ժայռ կամ զսեպուհս լերանց, որ կազմեն զձոր։ Արդ գեհոն կամ գահ-ուն, որ նշանակէ զունողն գահից ասափ և անտի՝ է տիրապէս Երասխ մեր ընդ Երասխաձոր։ Դարձեալ գեհոն ըստ Եբրայեցւոց՝ նշանակէ ձոր իջևանի, և Երասխն անցանէ ի մօտոյ Նախիջևան քաղաքի մերում, որ անկանի յարևելս Շարուրայ դաշտին։ Դարձեալ գեհոն նշանակէ ձոր շնորհաց, և ի ձորն Երասխայ եղեն առաջին շնորհք Աստուծոյ, այսինքն՝ օրհնութիւն երկրի և բերոց նորա՝ և նշանն հաշտութեան եղեալ յամպս։ Դարձեալ գեհոն է պղտոր. առեալ նոյնպէս ի գայռ և ի գեռ բառից մերոյ, յորոց մին ստուգաբանի առու ի գահէ, և միւս ուխ կամ յորձանք ի գահէ, որ հեղեղեալք ի*

խոնարհ՝ վարեն զառաջեաւ իւրեանց զամենայն պղտորութիւն։ Եւ ըստ այսմ, չի՞ք գետ պղտորագոյն ի Հայս՝ քան զԵրասխ մեր, մանաւանդ յետ զՄեծամօրն Արարատայ և զՏղմուտն Դարաշամբայ կամ Խրամի՝ յինքն ընդունելոյ, յարևմտից հիւսիս, Նախավկայի վանից և Հին Ջուղայ։ Դարձեալ գեհոն թարգմանի յորձանուտ, և այնպէս ևս գեհ-հունն. և ահա՛ այս յատկութիւն է նորա ի մեծ Քարավազն Կապանի. ըստ որում ի գեհէ հուն կազմէ, որ է ասել թէ՝ ի բարձանց գահից վեժելով կամ վազելով՝ հուն կազմէ։ Իսկ Երեմ., Բ. 18. «Զի՞նչ կայ քոյ և ճանապարհին Եգիպտացւոյ ըմպել զջուր Գեհովնայ», իմանալի է միայն վասն պղտորութեան Նեղոսի, որ զուրկ է միւս յամենայն յատկութեանց գեհոն նշանակութեան Երասխայ մերոյ։ Զի նա և ընդ ջուրն ի վեր նաւարկի, իսկ Երասխ մեր ամենևին ո՛չ, սկսեալ յԱնփայտ կամ ի Վերին Բասենէ, մինչև ի Կուր գետ։ Առնուլ զՋիհոն, որ և անուն Ոքսոն գետոյ՝ յԱրաբացւոց և եթ տուեալ, յապացոյց հնութեան նորա, չի՛ք ինչ։ Զի հնագոյն անուն նորա, ըստ հին աւուրց գրոց Հնդկաց՝ էր Քաշու՝ կամ գետ Քուշանաց։

Ապաքէն զբարբառ տիեզերաց Եբրայեցուցանել, ըստ որում հնագոյն ի նոցանէ հանդիսացաւ Մովսէս՝ որ գրով աւանդեաց, ըզտգիտութիւն զաշխարհէ, և զնախապաշարեալ իմն ջատագովութիւն Սուրբ Գրոցն յայտ առնէ։ Զի գուցէ և հնագոյնքն քան զՄովսէս գրեցին, որք կամ առ մեզ ո՛չ հասին, և կամ ի կրօնից և կռուոց ծագելոց ընդ մէջ ազգաց՝ կորեաւ անհետացաւ ուսումնն այն։ Գուցէ ժամանակն դեռ ևս յայտնեսցէ ապագայից զստուգութիւն վարկածոյս՝ յորժամ մարդիկ հնարիցեն ընթեռնուլ զանհամար գրուածս ի տեղիս տեղիս Հայաստանի և շրջակայ աշխարհաց։

Անուն այսր գետոյ՝ ըստ գրելոյ Խորենացւոյն, փոխեաց Արամայիս նահապետ մեր՝ յանուն թոռին իւրոյ Երաստայ՝ յԵրասխ, որ այժմ հասարակօրէն Արազ լսի[51]։

Յաղագս ականց Երասխայ բազումք բազմօրինակ գրեցին։ Բազմավաստակ Հ. Ղուկաս Ինճիճեան յէջ 82 Նոր Հայաստանին թերևս ուղիղ դնէ բղխել նորա ի լերանցն Թեքմանայ՝ որ անկանի յարևելից Կարնոյ, ի հարաւոյ Բասենոյ, յարևմտից Գեօզսուայ (կամ Հարքայ), և ի հիւսիսոյ Խնուսայ։ Բայց և այնպէս տանելով և տընկելով զՀարք ի Մանանաղի գաւառ Բարձր Հայոց։ Եւս ի Հին Հայաստանին՝ առեալ ի Լաստիվէրացւոյն, ընդ մէջ դնել նորա զՄանանաղի Եկեղեաց և Դերջանայ, այսինքն Երզնկանու և Դերջանայ՝ մեծապէս շփոթէ զտեղին. զի ըստ այսմ, պարտ էր Երասխայ բղխել յարևմտից հարաւոյ Կարնոյ, փոխանակ յարևելից հարաւոյ նորա՝ ուր ան-

կանի Թեքման, և ի սարէ ի վեր դիմելով ընդ Կարին՝ գայ անկանի ի Բասենս Այրարատոյ, որ է անբնական իմն։ Զի Եփրատ ի Բագրևանդայ ի Կարին խոնարհեալ՝ ընդ Դերջան, յԵկեղեաց, ընդ Դարանաղի և ընդ Մանանաղի, երթայ ի Ծոփս։ Ծփոթութիւնս պարզ երևի ի գրուածոց անտի Խորենացւոյն, զի Վանանդացիք, որ ապստամբեալք ի Խորխոռունեաց ասպատակէին զկալուածս արևելեան և արևմտական թագաւորաց մերոց՝ Խոսրովու և Արշակայ Արշակունեանց, մինչև ի Մանանաղի հալածական վարեցան յերեսաց Սահակայ Բագրատունւոյ։ «Զորոց ձիգ զհետ մտեալ Սահակայ,— ասէ Խորենացի,—վարէ յերկար մինչև ի սահմանս Մանանաղւոյ»[52]։ Որ ամենևին զուր լինէր, եթէ Թեքման, որ յերի կայ Բասենոյ գրեթէ իբր հարաւային սահման նորա ի Մանանաղի անկանէր, կամ որպէս նա դնէ ի մէջ Դերջանայ և Եկեղեաց։ Երկրորդ՝ բղ-ղանձս Արշակայ զհանեալն ի բերդէն Հանւոյ կամ Կամախայ՝ տանել առ Արշակ ի Ծոփս՝ յափշտակեցին Աշխարհազար և ընկերք իւր, և յորժամ կամէին փախչել առ Խոսրով արևելեայ մեր թագաւոր, Սամելի Մամիկոնէի պատահեալ՝ ամրացան յամուր այր խնչ Մանանաղւոյ, ուր բաղտիւ դիպեալ Սահակայ Բագրատունւոյ՝ հալածալական արար զՍամելի, և ազատեաց զԱշխարհազար գանձուք և ընկերօքն գնալ առ Խոսրով[53]։ Արդ՝ ո՞վ ոչ գիտէ՝ զի ճանապարհ ի Դարանաղեաց (յորում էր Հանի, Անի, կամ Կամախ) դէպ ի Ծոփս՝ յարևմուտս հարաւոյ նորա անկանէր և անկանի, ընդ Ձլբրոս լեառն, ընդ յԱլհամի, ընդ Հասանովա, ընդ Ղուռուչայ, ընդ Բենկան, և ընդ Ակն. և ո՛չ յարևելս՝ ուր է Եկեղեաց, ապա Դերջան, և ապա Կարին։ Դարձեալ յորժամ պատերազմ գրգռէր ի մէջ Խոսրովու և Արշակայ, Խոսրով ի Մուրսն կոչեցեալ տեղւոջէ առ եզերբ ծովուն Գեղամայ՝ աճապարէր ունել զառաջս Արշակայ, զի մի՛ մտցէ ի սահման իւր։ Բայց ո՛չ այնչափ ատակեաց, մինչև եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանս[54]։ Արդ՝ եթէ Բասէն սահման էր Խոսրովու, և Թեքման անկանէր ի հարաւոյ նորա, ուրեմն չէր Թեքման ի Մանանաղի, որ որպէս և գրելոց եմ, անկանի յարևմտից հիւսիսոյ Դարանաղեաց՝ ընդ որ ես անցի ի գալ իմում ի Պօլսոյ ընդ Կարին, ընդ Դերջան, ընդ Եկեղեաց, ընդ Դարանաղի, ընդ Մանանաղի, ընդ Ակն, ընդ Արաբկեր, ընդ Ծոփս, ընդ Աղձնիս, ընդ Մծբին, ընդ Նինուէ, ընդ Բաղդատ, և ընդ Բասրայ ի Հնդիկս։

Զակն Երասխայ դնէ Խորենացին ի Բասէն. բայց որ առաւել վճիտ տեղագրութեամբ յիշէ զայն, է Ստրաբոն Յոյն պատմիչ, զի դնէ ի նոյն լերանց բղխել՝ յորոց և Եփրատ, զոր կոչէ Աբոս կամ

Ապոս[5]։ Եւ ինձ թուի գոլ գօտի Նպատական լերին, կամ նոյն Ծաղկուտ լեառն Բիւրակնեայ, զի և Նապա լեառն, և Նապու ջուր յիշատակին յայս սահման. թէպէտև փոխանակ ի հարաւոյ դնելոյ, ի հիւսակողմն Բասենոյ եդեալ։ Բայց Աւնիկ կամ Աւընկայ լեառն և բերդ, որ անկանի ընդ հարաւակողմն Վերին Բասենոյ յարևմտից Բագրևանդայ, յարևելից հարաւոյ Ներքին Բասենոյ, և ի հիւսիսոյ Իւղվերան և Գոմեր գիւղից՝ և է քարալեառն ինչ նման Իլան կամ Ծլամ անուանեալ բարձրաբերձ սեպհուոյն Այրականեաց՝ առ երի Երնջակայ. որոյ ի գլուխն բղխի, ասեմ, աղբիւր յորդ, և ի ներքուստ ընդ կամուրջ բարձր՝ անցանէ Երասխ՝ դէպ յարևմուտս, և մօտ ի Դարոյնս աւան կամ Հասանղալէ՝ ընդունի զՄուրց գետ, և ընդ կամուրջ Չոպանաց անցեալ՝ հոսի ընդ հիւսիս, ապա ընդ հարաւ և ընդ հիւսիս մինչև յԵրասխաձոր մեր, ուր առ Կարուց քաղաքաւ ընդունի զՁանկլի վտակն ի ծովակէն Գայլատուայ, զԱխուրեանն ի Շիրակայ առ Համի Բայրամլու գիւղիւ, ի ներքոյ կարմրաքար լերին փոքու, զՍև ջուր, զգետն Անբերդայ, զՓարպւոյ, զՔասախ Կարբւոյ, զՀրազդան Երևանայ, զգետակն Նորայ կամ Նորգայ, զգետն Գառնոյ, զգետն Աւլայ ի Շարուր, զգետն Ջահուկայ՝ որ ի Բռնակոթէ ընդ Սիսիան և ընդ Նախչուան ի վայր հոսէ. զգետն Երնջակայ, զգետն Ագուլեաց կամ Գողթան, զՄեղրի, զՀալիձորին, զՈրոտնայն զԲարկուշատին և զՀաքարուն ի հիւսիսոյ։ Իսկ ի հարաւոյ, զԿարմիր, զգետն Արկուուոյ, զԳինայ վտակն, զԿոտայս և զՄակու յանդիման Աստապատու, զՏղմուտ Դարաշամբայ, զվտակն Գարգառայ ի Մարանդայ, զվտակն Ուրդուպատայ, զգետն Քիլեքբարայ, որ գայ յԻմլանդայ, զգետն Քրդաշտայ ի Հարվանայ, զԱհար, զէնտիրաբ և զՄիանէն ի Միանայ՝ որ յԱտրպատականս, և զՂզլօզան կամ Գոլզան գետ յայնմ կողմանէ Ղաբլանքու լերանց։ Եւ այսպէս անցեալ ընդ յԵրասխաձոր ի Շարուր, ի Նախչուան, ի Խրամ, ի Գողթն, ի Կապան, ի Մեղրի, ի Հալիձոր յանդիման Բիայ կամ Վինայ՝ իջանէ ի Մուղան, միշտ յարևելս ընթանալով։ Ապա ընդ յարևելս հիւսիսոյ թեքեալ՝ ընդունի յինքն զԿուր գետ ի մերձակայս Սալիանու յԱղուանս Հայոց, և նովաւ հանդերձ զեղանի ի ծովն Վրկանի՝ երեք բերանովք։

Ի Կարուց մինչև ի Նախչուան և ի Գողթն հնար է լաստել կամ նաւարկել։ Բայց ի Կապանէ մինչև ի Մուղան՝ ո՛չ բնաւ երբէք։ Զի թող զքարավաղն մեծ, որ ահագին դղրմամբ իջանէ ի վայր՝ նաև ձորափոր գետոյն լցեալ մեծամեծ ժայռիւք գլորելովք ի բարձանց կամ ի գետից ի խոնարհ՝ խոչընդակ լինի։

Նաւարկութիւն ի Վրկանէ մինչև ցԱհար, և ի Հաբանդ Սիւնեաց փոքու ծախուց պէտս ունի։ Որ առ աշխարհաշէն հայրենասիրի՝ գրեթէ ո՛չ ինչ է։ Նաւարկութիւն ի Բասենոյ և ի Կարուց մինչ ի Նախչուան, նոյնպէս գրեթէ չունի ծախս ինչ եթէ ո՛չ՝ ի տեղիս վտանգ ժայռից հասելոց ի վայր և խաղխաղից ասազոց։ Հայրենասէր ժողովրդեան երկոքին եւ դուզնաքեայ իմն են, համեմատեալ ընդ մեծամեծ շահուցն՝ զորս յառաջ բերէ այսօրինակ հաղորդութիւն բերոց և վաճառաց, ո՛չ թէ միոյ նահանգի Հայոց ընդ այլում. յորս յամենայնի գրեթէ նոյն առատութիւնք են, այլ մանաւանդ գրացի աշխարհաց ընդ աշխարհիս մերոյ։

Հայեցեալ յայժմեան ամուլ կացութիւն առևտրութեան Երասխական նահանգաց, և զանբաւութիւն ծախուց՝ որ ի վերայ բեռնակիր գրաստուց իշոց, ջորւոց, և ձիոց (որք մի միայն կարեն շարժել յայնոսիկ). եօթնամեայ և եթ հարկ կարգեալ ի վերայ այսր նաւարկութեան՝ վճարէ զբովանդակ ծախս մաքրելոյ և յարդարելոյ զնա յայն պաշտօն, ի Կաղանէ մինչև ցՄուղան։

Տայ Հայաստանի աւելի քան զհարիւր շահաստան քաղաքս. զբերս Հայաստանի զանազան և զընկեցիկս՝ արգոյ և պատուական ընծայէ կողմանցն Կասբից և Վրկանի, և անդր քան զԹաթարստան։ Զբերս նոցա՝ որոց եթէ կարօտիցի՝ դիւրագնի ընդունի, և թողեալ զհարկ նաւարկութեանն՝ զոր կալցէ արքայութիւն ի վերայ լաստից, նաւակաց, բեռանց, անձանց և անասնոց գետավարելոց, տակաւին մաքս ապրանաց աստի անդր, և անտի այսր ածելոց՝ զուտ շահ մնայ ի ձեռն խոհեմ և աշխատասէր արքայութեան՝ որպիսի էր Արտաշիսին մերոյ Առաջնոյ՝ որ գրեթէ ընդ ամենայն գետորայ աշխարհիս նաւս խաղացոյց՝ ըստ Խորենացւոյն[56]։

Արդէն իսկ հնար է լաստս և նաւակս թեթևակառոյցս վարել ընդ Երասխ ի Բասենոյ մինչ ի Գողթն՝ թեթևակի և եթ ծախիւք մաքրելով և յարդարելով զձորափոր նորա՝ ի Բասենոյ մինչ ի բերան Ախուրեանի, և յԱստապատայ մինչև ի գերեզմանս Հին Ջուղայ. զի յայսոսիկ միայն երևի ժայռից հոսեցելոց ի բարձանց աստի և անտի՝ վտանգաւոր առնել զընթացս նաւաց. ապա թէ ո՛չ՝ միւս այլ ամենայն տարածութիւն նորա դիւր և հաւասար գոլով՝ մեծամեծ ծախուց անկարօտ է։ Արդէն իսկ՝ ի դիւրել հարկին՝ նաւարկի այս միջոց. զի ուստի՞ արդեօք այն գեղեցիկ գերանանի ապարանից իշխանաց և մեծատանց յԵրևան, ի Նախչուան և ի Գողթն, եթէ ո՛չ մայր հատեալ յանտառէ Տայոց և ընդ Երասխ գետավարեալ ի խոնարհ։

ի հարթել այսր միջոցի, ծաղկի առ և տուր Հայաստանի ընդ Պարսս և ընդ Թուրքս միանգամայն: Աւան Դարունից կամ Հասանղալա ի Բասէն, Հաճի Բայրամլու գիւղ ի խառնուրդս Ախուրեանի, Սահաթափոս, Բլուր և Սարդարապատ, Նախչուան, Աստապատ, և Ուրդուպատ Գողթանն՝ լինին առաջիկայ շահաստան քաղաքանի: Բեռինք եկեալ ի Պօլսոյ և ընդ Կարնոյ քաղաք անցեալ՝ թօթափին ի Բասէնս, և ի լաստս կամ ի նաւս բարձեալ՝ առաւել փութով և անվաս հասանին ի Դավրէժ ընդ ճանապարհ Մարանդայ կամ Ուրդուպատայ՝ քան ո՛ և իցէ գրաստուք:

Լինի այս և պաշտպանութիւն հզօր յերեսաց եկամուտ թշնամեաց՝ ի վարել իւրում զօրս, զէնս և պաշարս՝ ուր և հարկ ժամանակին պահանջիցէ: Ձեռնտու ո՛չ լինի թշնամեաց՝ եթէ ո՛չ միայն ի փախչել իւրեանց. մի՝ զի ընդ ջուր ի վեր նաւարկել անհնարին է. և երկրորդ՝ զի ի միջոց աշխարհիս գոլով՝ տեղի չտայ թշնամւոյն երկար նստիլ և պատրաստել զիւրսն ի խոնարհ:

Նաւարկութիւն Երասխայ ընդ դաշտն Մուղան մինչև ի Կուր գետ, և ի Կուր գետոյ՝ ի Տփղեաց մինչև անդր, և ապա ընդ ծովն Վրկանի Հաշտարխան, ի Բահլ, յԱստարապատ, ի Մազանդարան, և ի Ռաշտ՝ որքան առաւել ընդարձակ՝ այնքան և առաւել շահաբեր լինի աշխարհի մերում: Զի Սիւնիք, Արձախ, Փայտակարան և Աղուան նահանգք Հայոց՝ զանբաւութիւն փայտից և երկաթոց կարեն տալ ի շինութիւն նաւաց. Երասխ՝ Կուր և մեծամեծ վտակք նոցա աստի և անտի՝ անաշխատ բարձեալ բերեն տախտակս ի նաւարան կամ ի նաւաշինարան անդր՝ ուր ուրեք և հաստատել ախորժիցին: Մի միայն բնակութիւն և շինութիւն ընդարձակածաւալ և սիզաւէտ դաշտին Մուղանայ, որ հարկիւ զհետ գայ բարեկարգութեան ընթացից գետոյս մերոյ, և որպէս հաւատամս, բերել բերէ և զամենայն բոյս և զպտուղ ցուրտ և ջերմին աշխարհաց՝ որպիսի է լեղակ, շաքար, շերամ, և այլն, հերիք լինի վճարել գործունեայ ձեռին զվարձս վաստակոց իւրոց: Ի մի բան՝ ճշմարիտ զօրութիւն տէրութեան, և ճշմարիտ հարստութիւն ժողովրդեան՝ յայսմ և եթ կայանայ:

Ի՞նչ օգուտ արդեօք հաստատել թէ այս մեր պատուական գետ ի Դրախտէն Ադամայ ելանէ, այն ինչ մերով անփութութեամբ զրեթէ ընդ անապատ ընթանայ, ամենևին անպիտան երկրի և բնակչաց նորա: Երկու և եթ վտականի ելանեն ի նմանէ, մին՝ ի Բլուրն Սահաթափոսի, և միւս՝ ի Սարդարապատ քաղաք. և երկոքին ևս կարի կարճ միջոցօք, և առանց առաւել աշխատութեան քան զառուն Հրազդանայ ի Բոլոր Կոնդ: Քանի՞ հազար երկու վտակաց

պէտս ունի այս դաշտ չնաշխարհիկ, մանաւանդ ի հարաւոյ գետոյն յստորոտս Մասսեաց լերին, ուր է ջրոց պակասութիւն մեծ: Քանի՜ քանի՜ գործարանաց և արուեստից յաջողուածս ո՛չ գործէ հզօր մղումն ընթացից նորա: Քանի՜ թաւս անտառաց և պտղաբեր ծառոց ո՛չ բուսուցանենն բարեբեր եզերք նորա ի նիւթ հրոյ և կենդանութեան բնակչացն:—Բայց գլուխ Քաջին Արմենակայ պիտի առ այս, և ձեռք՝ արի նախահարց մերոց[57]:

Կամուրջք Երասխայ են՝ ա. յանդիման Անիի բերդին՝ ի Թեքման. բ. Կամուրջ հովուաց կամ Չօպան քեօփրի յանդիման Հասանղալայի. գ. կամուրջ Վաղարշապատու, որոյ հետք հազիւ նշմարին. դ. կամուրջ Արտաշատու աւերակ՝ առ Նորաշէն գիւղիւ. ե. կամուրջ յարեւելից հարաւոյ Հին Ջուղայ՝ կիսաւերակ: Կամուրջ քառասնակամար Խօդափրինոյ՝ ընդ մէջ Քալակբարայ և Դիջալուայ առ Ահարաւ. է և կամուրջ փայտաշէն ի Սալիան:

Հուն Երասխայ եթէ իցէ՝ երկու է, և այնք ի բուն յԱրարատ, և յամառան միայն անցանելի. մին՝ առընթեր Խոր վիրապին՝ որ ի հնումն յանուն Արտաշատու ճանաչէր. և միւս՝ ի վերուստ Տորլուայ և Մեծամօրի, յանդիման Սուրմալի գեղջ կամ նախնոյն Արմաւրայ: Բաց յայսցանէ չիք ուրեք այլ հուն. եթէ հունն՝ զնաւի անցանելոյ տեղին նշանակիցէ[58]:

Զերնելի վտակաց գետոյս այսորիկ հարևանցիկ ծանօթաբանեալ ի վերագոյնդ՝ ճիշտ ստորագրեցից՝ որոց յայտս և պատահեցայց յաստանդանս իմ:

## ՁԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ երբէք կարծէր, եթէ սահման այսքան բարձր, մի միայն ունելով գետ հզօր զԵրասխ, որ սրընթացութեամբ իւրով զլերինս պատառէ, և ժայռս մեծամեծս գլէ յանդունդս ձորոց, կամ վտակք նորա, որք աստի և անտի բղխեալ յանսահման բարձրութեանց անտի լերանցն յաւիտենականաց, և ընդ սուղ ինչ միջոցս դաշտին և եթ սողացեալ՝ բերէին արդեօք զայն անբաւ առատութիւն ամենատեսակ և ամենահամ գեղեցիկ և պարարտ ձկանց, որովք զրեթէ առանց գնոց լիանայ միջոց աշխարհիս. թէպէտև ձկնորսութիւն իբր զբօսանք իմն է ոմանց, և ո՛չ բարուք մշակեալ: Ձկնաբանութիւնս աստէն առեալ՝ ստորագրէ զձկունս Երասխայ և վտակաց նորա, յորոց Զէնկլին անուանեալ գետ ի ծովակէն Գայլատուայ վտակելով, և Հրազդանն ի ծովակէն Գեղամայ կամ Սեւանայ՝ բնա-

կանաչար ի մէջ բերին և ձկունք սեպհականք նոցին, և միահաղոյն կոչին Արարատեան ձկունք: Կան և այլ ձկունք յայլ և այլ սահմանս Հայաստանի մինչև ի ծովն Կասբից՝ ընդ որ ընթանայ Երասխ, բայց արտաքոյ գոլով նահանգիս՝ այժմ զանց առնում զնոքօք:

Ձկանց Երասխայ խօսելով բազմերախտ աշխարհագրին մերոյ՝ Յուէ զոմանս ի նոցանէ, զոր օրինակ՝ «Ճանառ, լէօզ, դեղինպորտ կամ դեղիկ, մուրզ, ձուկն ընչաւոր, որ յԵփրատ կոչի ասէ մոխ. կարմրախէտ և Սաղան»: Իբրև առաջնածանօթ գրութիւն ի հեռուստ անտի՝ համբուրիւ երախտագիտութեան ընդունելի է, բայց եթէ մեք ականատես նոցա և բազմաց ևս անծանօթ մնացելոցն՝ հարևանցի բնագրեսցուք, ո՛չ մեծ ինչ առնեմք, և ո՛չ բնագտօնելին աշխատութիւն քամահելոյ աղագաւ:

**Ճանառ** է ձուկն ինչ, ո՛չ երկայն և նուրբ, այլ յոյր և տակառաձև, բնական լճից, յորոց ի ժամանակս ինչ տարւոյն՝ ելանեն ընդ վտակսն և դան յԵրասխ գետ: Ահագին է գլուխ նորա, և բերանն կարի մեծ, մինչ կլանել նորա զամբողջ կապոյտ մի և զկողակ: Զանհեթեթ բերանաբաց մարդն՝ Ճանառի նմանեցուցանեն Արարատեանք:

**Լոք՝** նովին անուամբ կոչի մինչ ցարդ է բնակչաց. և է միատեսակ լճային կիտի կամ ձկան մեծի, ծոյլ և տղմախիր, ուստի և ո՛չ այնքան որսացեալ: Գտանի երբեմն լոք ի Սևաւ ջրին և յԵրասխ, իբրև զմի ձիաքենոն:

**Դալ՝** է այս տեսակ լճային ձկան, որ գտանի առատ յԵրասխ և ի Հրազդան: Դալ կոչի սա վասն դեղնութեան գունոյ իւրոյ. և է դեղինպորտ կամ դեղիկ կոչեցեալ ձուկն, բարակ քան զկապոյտն և առաւել պարարտ քան զնա, այլ շողինքոտ կամ լորձնոտ, ուստի և ո՛չ այնքան համեղաճաշակ. սոսինձն լինի ազնիւ: Աղած սորա ընտիր է քան զթարմն: Երզնկացին ի Քերականութեան իւրում[59], զոմանս ի ձկանց Արարատայ յանուանէ յիշէ «դլփին, լոքն, դալն, բիլն և կապոյտն», զոր Նոր բառարան մեր մեկնէ յերանգս և եթ[60]:

**Խոզագիտի,** ծովախոզ, կամ վարազաձուկն՝ է թերևս մեծագոյն ի լուղակս Հայաստանի, որ է ձուկն ինչ յերկամորթ, ձևով նման խոզի, որ ելեալ յերեսս ջուրց և պոդ շնչեալ՝ կրկին ընկղմի անհնարին արագութեամբ: Որ կացեալ առ եզերբ մեծամեծ գետոց՝ և հայիցի յերիվար աշխոյժ լուղալով ընդ գետ խոր անցանել. իսկ և իսկ մակաբերել ունի՝ թէ առասպել ծովածին երիվարաց առեալ իցէ միայն ի յառնելոյ և յընկղմելոյ ծովախոզիս այսորիկ: Քանզի եթէ Թեսաղացւոց տեսեալ զառաջին այր հեծեալ ի ձի, զձիացուլն

յուշկապարիկ ստեղծին, զի՞նչ արգելոյր և ռամկին Այրարատայ զխոզ ծովուն ձիանման տեսանելով յառնել և յընկղմելն անհնարին արագութեամբ՝ բնականաբար ո՛չ զհետ բերել, թէ հնար էր ի ձիոց ի ծովէ ծնանել:

Բայց հայեցեալ ի հնութիւնս աշխարհի մերում, գտանեմ զՀրատն մոլորակ նկարեալ և պաշտեցեալ ի կերպարանս վարազու, որպէս անուանքդ Վարազդատ՝ տուրք վարազու, և Վարազդէն՝ հաստատեալ կամ կրօնական վարազու՝ յայտնի ցուցանեն: Թէպէտև ոմանք ի շամբամուտ խուզողութենէ ցամաքային խոզին անուն, այլ ինձ մանաւանդ հաւանական երևի ի ջրային զօղակէ յայամանէ զնել զնմանութիւնն, թէ ըստ խորամուտ հանճարոյ մտացն՝ որ զՀրատէն վարդապետեաց, և թէ ըստ անհնարին արագութեան ընթացից մոլորակին՝ շուրջ զարեգակամբ: Մանաւանդ զի՝ և բագին Վարազուն՝ ի կրծոց ի վայր՝ ի ձուկն վերջանայր՝ թեփաւոր իբրև զնա: Ա՛ռ զոր և հաճոյ իցէ քեզ, և մեղադիր մի՛ լինիր ակար վարկածոյս:

Կապոյտ՝ ձուկն բարեշէն, պարարտ և թեփաւոր, որոյ թեփք ի կապոյտն հարկանին երանգ ի նշուլից արեգականն, ուստի և անուն ընկալաւ: Է ըստ ամենայնի յար և նման ռուսի անուանեալ ձկանն Գանձակի՝ ի Բանգալա, այլ փափուկ մսով, և փշաւոր քան զնա:

Բեղ՝ որպէս և մինչ ցարդ կոչի, է ձուկն ինչ յաղթ, զալից. նուրբ քան զնա մարմնով, մանր յոյժ և պայծառ թեփօք, բեխս ընդ ծնօտն ունելով, ուստի և յօրանց Տաճիկ բարբառով անուանի բեյրզլի:

Կարմրախայտ՝ կոչի այժմ կարմրախէտ, վասն ունելոյ խայտս կարմիրս, ի վերայ ձիւնափայլ և աղուաթեփ մարմնոյ իւրոյ, միմիայն ողնփուշ և քանի մի ճրափուշս ունելով. գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն ձկունս աշխարհի, ամենայն բարեձևութեամբ յարմարեալ և պատշաճեալ: Յընթացս շրջագայութեան իմոյ ո՛չ ուրեք ճաշակեցի ձուկն համեղագոյն քան զսա: Կարմրախայտ հազիւ գտանի ի լիճս, կամ ի մարմանդս Երասխայ, զի սիրէ զքարուտս գետոց: Ուստի և այն վտակք Երասխայ, որք ի ժայռուտ լերանց վտակին ի վայր, որպիսի են գետքն Անբերդայ, Բիւրականայ, Քասախ, և մանաւանդ թէ Հրազդան՝ լի են սովին գրեթէ ընդ ամն ողջոյն:

Սեւախայտ՝ գտանի ի Հրազդան նաև ձուկն ինչ յայս անուն կոչեցեալ. յարևնման կարմրախայտի, այլ փոխանակ կարմիր խայտից, սեաւ խայտս ունի զմոխրագոյն մարթով իւրով: Սա տուեալ մեծանայ քան զկարմրախայտն, բայց որում ո՛չ այնքան համեղ է միս նորա, և ո՛չ այնքան զհետ լինի յումեքէ:

**Սեւածուկն**՝ *տեսակ ինչ կապուտի կամ կողակի, այլ սեւագոյն մորթով և թեփօք, ո՛չ այնքան ի համարի։*

**Ցոկածուկն** *կամ* **Երկարունչ**, *այլազգերէն ուզուն բուռնա կոչեցեալ, ունի մորթ սպիտակ և ցռուկ երկար՝ իբրև զբումլի ձուկն, պարարտ և համեղ մսով։*

**Մուրզ**՝ *է ձուկն ինչ սրակնճիթ յազգէ դալից, այլ միայն գի գոյն նորա խառն է ընդ դեղին և սեւու։ Ծերպամուտ և դժուարորս է սա, միսն թէպէտև ո՛չ այնքան պարարտ՝ սակայն համեղ է։ Մեծագոյն մուրզն հազիւ կշռէ 500 դրամ։*

**Կողակ**՝ *ձուկն իբրև զկապոյտն թէ քանակաւ թէ կերպարանաւ և թէ թեփօք. պարարտ քան զնա՝ այլ ո՛չ այնքան համեղ, որ ելանէ անբաւ առատութեամբ ի մէջն Մայիս ամսոյ, և անաշխատ որսացեալ՝ հազարաւոր բեռամբք կրի աստ և անդ, զոր խոտոցեալ և յաղաջուր եդեալ՝ ուտեն զամն բովանդակ։*

**Իշխանաձուկն**՝ *գլուխ ամենայն ձկանց, թէ ծովուց՝ և թէ գետոց աշխարհիս. ի գոյն բաց կարմիր պղնձոյ, խայտ ի խայտ զօրէն կարմրախայտի, այլ խայտքն բոլորովին նման պտղոյ աչաց ոչխարի համեղագոյն և պարարտամարմին յոյժ, իշխանաց և եթ ուտելի, այլ ափսո՜ս որ հազուագիւտ։ Ելանէ ընդ կողակին հազիւ մի կամ երկու ի մէջ հազարաւորաց նորա։ Անուն նորա, կամ իշխան ձկանց, և կամ յիշխանաց միայն ուտելի՝ յայտ առնէ զպատուականութիւն նորա։*

**Գեղարքունի**՝ *թէպէտև ամենայն ձկունք ելեալ ի ծովէ անտի Գեղարքունիք կոչին, սակայն առաւելապէս տեսակ մի կամ երկու յատուկ այսպէս կոչեցան, որք են յազգէ կարմրախայտ և սեւախայտ ձկանց, ընդ մէջ երկոցուն են՝ թէ քանակաւ, թէ գունով. և թէ համով։ Մորթ նոցա ի գոյն բաց կարմիր պղնձոյ՝ մանաւանդ յորժամ թարմ իցէ. թեփն մանր՝ ըստ կարմրախայտի, և ըստ նորա դրեթէ անփուշ։ Սառցակ արկեալ զսա ի ձմերան մեծաւ քանակութեամբ տանին աստ և անդ ի վաճառ։ Ընտիր լինի սորա խորովեալն ի փռան, փորալից կտաքն, և ձկնախաշուն։*

**Բախտակ**՝ *մեծ տեսակ պարարտամարմին և սեւախայտ գեղարքունւոյ։ Որպէս իշխանաձուկն ի մէջ կողակաց՝ նոյնպէս և բախտակս այս ի մէջ գեղարքունեաց հազուագիւտ է յոյժ, զի դրեթէ բախտովին անկանի ի ձեռս, ուստի և անուն կոչեցաւ նմա։*

**Օձաձուկն** *հազուագիւտ է, և եթէ գտանիցի ես՝ բնակիչք ո՛չ ուտեն զնա։*

Ծնաձուկն՝ սազմահի, կամ սաղան, ձուկն մեծ՝ սպիտակապորտ և սևաքամակ, այլ յԱրարատեան նահանգի ո՛չ ուտեն զնա։

Ծապալ կամ Ճապաղ ասին այն ամենատեսակ մանր ձկունք, որ յետ ցամաքեցուցանելոյ կամ շրջելոյ գետոց ի բնական ընթացից իւրեանց յայլ, ժողովին ի քարատակ խորշ ինչ ջուրց, և անաշխատ որսացեալ լինին ի մանկանց անտի։

Ջրշունն բազում գտանին յԵրասխ և ի վտակս նորա, որոց մորթ ազնիւ՝ կացուցանէ զերևելի իմն նիւթ առի և տրոյ ընդ Օսմանիս և Ռուսաստան։

Այս չափազանց առատութիւն ձկանց յԱյրարատ, և այն գրեթէ պարզ և անաշխատ որսորդութիւն նոցա, եթէ ընդ հոգածու և իմաստուն ժողովրդով լեալ, բաց ի պիտոյից անտի՝ մեծ նիւթ առևտրի ևս ընծայէր։ Բայց տարաբաղդապէս անծանօթ է նոցա ապուխտ ձկան, անծանօթ է նոցա խղել ձկան, և անծանօթ է նոցա ո՛չ և իւղ վասն ապագայից պահեստ. Թէպէտև առօրին պիտոյից ճարտարին կանայք մեր հնարել յաւէտ քան զերեսուն տեսակս խահից ի մի և նոյն ձկանէ։

## ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆՔ ԱՐԱՐԱՏԱՅ

Թարր՝ որ է քարակարկառ թումբ ինչ յարուցեալ ընդ մէջ գետոյն, հպելով ի մի կոյս ափանց նորա, իբրև ձոր եռանկիւնի իմն ձևով։ Ի միջոցին՝ յորում այս կարկառ մերձենայ ափին, պատնիշապատ վանդակի ձողովք ի միջի ունելով ծուղակ կամ որթ ուռեգործ, առ որ հրապուրին ձկունք և ի ներքս մտեալ՝ այլ ևս ոչ կարեն ելանել՝ մինչև զնայ Թարբադիրն և առնու զնոսա։

Ոռկան՝ ցանց, դամ, և որոց ի սոցա սակի են, գրեթէ նոյն են ամենայն ուրեք։

Գետկալ ասի այն մեծ տեսակ ուռկանի՝ որ ի միոյ կողմանէ հասեալ ցմիւս կողմն՝ ի մէջ գրաւէ զընթացս գետոյն, և ի ներս հաւաքէ զձկունս նորա։

Եղեգնոռս ասի այն՝ որ առեալ զբազում խուրձս եղեգանց ի մրթին գիշերի՝ վառեն յեզերս գետոյն, ձկունք առ լոյսն հրապուրեալ դէպ յափն զրոհին, և որսորդք կարթ հաստատեալ ի ծայր ցպոյ ի ձեռս՝ որսան զնոսա և արտաքս ձգեն։

Պատմի թէ Յովհաննէս հօրեղբայր իմ, որ միայնակ որսայր երբեմն զգիշերայն ի ներքոյ այգւոյն Քարաբաշի յանդիման Այրին աղբերաց, որ կոչի Սուլուղաղ, առ Ճանապարհաւն՝ որ տանի յԵրևանայ ի Վաղարշապատ, ի կարթել իւրում զձուկն ինչ ահագին

*մեծութեամբ՝ ճուաց ձուկն ի ձայն մեծ, և թափ տուեալ զկարթն ի ձեռաց նորա՝ նովին հանդերձ մղեցաւ ի ջուր անդր։ Յորմէ զարհուրեալ կորովւոյն հազիւ հաս ի տուն, և զկնի երից աւուրց ընկալաւ զվախճան կենաց։ Այս տեսակ ձկունք կամ անծանօթ իմն՝ կամ երևակայականք թուին զոլ, ապա թէ ոչ՝ զամենայն ծանօթ ձկանց ո՛չ լուայ թէ ճուան, ծուան կամ ձայն ինչ հանեն։*

Գետկապ *ասի այն՝ որ զկաւառ կամ զառաջ գետոյն կապեալ դարձուցանէ զընթացս նորա յայլ իմն կոյս ի բնականէն, և ի նուազիլ ջրոյն, է՝ որ կարթով, է՝ որ ուռկանաւ, և է՝ որ ձեռօք որսան զձկունս նորա։*

Ոսպզեղ *կամ Փռանդատ է բոյս իմն գորշկանաչ գունով, և իբր թէ թեփոտ կամ ալերոտ. զոր քաղեալ և ի խուրձս կապեալ ջրոտեն և հարկանեն զքարամբք. ուստի ելանէ փրփուր իմն օճառային, թմրացուցիչ ձկանց, որով անզգայացեալ լողակսն արարածոց, խուռնօրէն տատանին յերեսս ջրոյն և որսացեալ լինին։ Այլ զարմանք յիրաւի, զի կերակուր նոցա՝ ուտողացն ոչ վնասէ։*

## ԼԵՐԻՆՔ ԵՎ ԲԵՐՔ ԱՐԱՐԱՏԱՅ

Ի հարաւոյ *անկանի Մասիս, և գոտի նպատական լերին, յարևմտից՝ Սավանլու, կամ Սօղանլու, ի հիւսիսոյ*[61] *Արագածն, Արային, Գեղամին և Գառնին. յարևելից՝ Դուզտաղի, լեառն աղի կամ Աղեհանից՝ առ Նախչուան քաղաքաւ՝ Ծղկաց լերամբքն հանդերձ, զորոց ի հանդիպել իմում՝ գրեցից մի ըստ միոջէ։ Զարդիս արժան համարիմ հարևանցիկ ծանօթս տալ, զի գտանին յԱյրարատ ի գազանաց անտի՝ առիւծ, վագր, ինձ, արջ, բորենի, գայլ աղուէս, կատու վայրի, ոզնի, կուզ, աքիս, խլուրդ, ջրշուն, օձ շատ և մեծամեծ յոյժ, լորտու, մողէս և այլ բազում խառնուբնդոր արարածք։ Ի մէջ էրէոց նորա՝ կինճ, վարազ, խոզ, ցիռ, եղն, այծեամն, քաղ, քօշ, և նապաստակ։ Ի մէջ ընտանի անասնոց նորա՝ գոմէշ, կով, եզն, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, և ուղտ։ Հնախօս մեր*[62] *զԱյրարատեան իշանց յատկապէս խօսի, զանց արարեալ զնժոյգ երիվարօքն՝ որ թէ առ հնովք և թէ առ մեօք, սքանչելիք իմն համարեալ էին և են։ Ջիրաւ դաշտ ի Բագրևանդ Արարատայ, և առասպելք ծովածին երիվարին Քօրօղլւոյ՝ յայտ առնեն թէ այս նահանգ ո՛չ նուազ քան զԽնուս և զՏուս* սնուցանէր յինքեան զերևելիս ի ձիոց։*

*Ի թռչնոց՝ ունի զսագ, զպոր, զթանձր, և զաքար մացառաղօղ՝*

---

**Տուս գաւառ յԱղուանս Հայոց, ուստի գաղթական գնացեալ և ի Խորասան հաստատեցին քաղաք և գաւառ յայս անուն։ Տեսակ ինչ ձիոց դիլիբօզ անուանեալ՝*

ըստ Ղազարայ Փարպեցւոյն[63], զկաքաւ, զսալանչ կամ բաղրղարա, զլոր, զսալամբ, զտուլաշ, զսարեակ կամ թթի ղուշ, զժեռ, զծիծառն, զմանգաղաթն, զբադ, զարօս, զարտուտ, զաղաւնի, զտատրակ, զհօբալ, զարեգաձագ, զլորամ, զնեբիլար, զմարի վայրի, բզ-ռունկ, զկռունկ և զծիտ կամ զճնճղուկ։

Յօձից երեւելիք են նորա քարբ կամ արքայիկ, վիշապ օձ, և յորտոլ՝ որ մարդկան ո՛չ մեղանչէ։ Կուին ի մէջ օձից Մասեաց և քարալերին Ելանայ կամ Ելամայ՝ յԱպրակունիս, եթէ չիցէ պատմաբանական իմն այլաբանութիւն, հրա՛շս առնէ թէ պատմողաց և թէ լսողաց միանգամայն։

Ի հանքաց ծանուցելոց մինչ ցարդ՝ ունի ոսկի ընտիր* յԱպարան ի վերուստ Արուճայ, և յԱբասաձոր ի Նիգ գաւառի՝ առ Երի-Բջնոյ։ Աղ ընտիր ի Կողբ, ծծումբ ինքնածոր՝ յԱրագած լերին, կաւ-ճառ ի Փարաքար, և յայլ տեղիս. քարահանք կարմիր, սեաւ և սպիտակ փուխր քարանց ի հիւսիսոյ Վաղարշապատայ՝ քարահանք կճէից և ջրաղացքարանց՝ ի Մասիս։ Ունի և հանքային աղբիւր մերձ առ Սեւանայ ծովն, որ թթուուտ գոլով՝ առողջարար համարեալ է։ Աղբիւր Արծափու ի Կոգ գաւառի՝ ունի ջուր քարանալի, որ բիւրեղացեալ լինի ուլունք սպիտակ գունով առ ի զարդ դեղականաց։ Թուի ունել Մասիս մեր և զածուխ հանքային, բայց ո՛չ բացեալ մինչ ցայսօր։

Ի ծաղկանց Արարատայ հրաշալին և հաղուագիւտն է համափիւռ ծաղիկ, որ գտանի ի Գառնիս, անթառամ, ձնծաղիկ, նարկիզ, նարօտ, յօրօտ, սուս, հարսնէմատն, բրաբիոն, շուշան, աղբերայ արին, քնքրիփուկ, աղախինձոր, կակաչ, մեռոն, բազմենակ և վարդ ամենատեսակ և ամեներանգ։ Ի բանջարս նորա երեւելիք են խաշնդեղ կամ խաւրծիլ, իշխուն, երիցուկ, նունուկ, ուրց, մահմուդիկ, ջաղվար, ճարճատուկ, բոխ, ղոխ, բոլի, ողորմակոթ, սինձ, սիպեխ, զողի, կապար, կառ, կանգառ ընտանի և վայրենի, սպիտակա-

---

յատուկ է Տուսական նահանգի միրոյ, և տեսակ ինչ թուրմանի կոչեցեալ՝ յատուկ է Տուսականին խորասանայ։ Ընտիր քան զերկոսին ևս՝ է խնուսանն որ ի Հարաւոյ Բասենոյ՝ ի Տուրուբերան մեր անկանի նահանգ։

* Յաղագս հանից ոսկւոյ յԱպարան ծանօթութիւն տացայ՝ յորժամ գունդ զօրաց Ռուսաց ընդ Ղարա Մայօրաւ[64] մտեալ անդր՝ պեղեաց և բարձ անհամար ոսկեօք զխամ հող նորա ի Պղնձահանս Ուձունայ[65]։ Զոսկեհանքից Աբասաձորոյ՝ տեղին և յիշատակ միայն կայ։ Բայց զհանից երկաթոյ և պղնձոյ՝ ծանօթ չեմ։ Առ պակասութեան հանքային ածխոյ և բաւական փայտից՝ ամենայն հանք աշխարհին՝ անգործ կան։ Ուստի զլուխ ամենայն փարթամութեան և սատարիչ արուեստից համարի միայն զիտ այնր նիւթոյ, առ որ և աղաչի մտադրութիւն ազգին։

քանչար ալանկի, ճակնդեղ, գետնախնձոր, գազար, բողկ, շաղգամ, սունկ, երիժնակ աղինճ, դաղձ, աւելուկ, անանուխ, օղին, շրէզ, լոշտակ, և այլն։ Ի ներկոց նորա թո՛ղ զորդանն կարմիր՝ է նոյն, հացին և գխտոր՝ ի նիւթ սևութեան, ալաժահր՝ նիւթ կանաչի. ծըպեխի և տոնիր՝ նիւթ կարմրոյ։ Իսկ պտղոց պտուականաց և սեխից և ձմերկաց և վարնգոց, մէն մի մատենից պէտք են։

Յարմտեաց նորա՝ ընտիրք են զանազան տեսակք* ցորենոյ, որիզոյ և բամբակ անքաւ։ Բայց թողեալ զորս յիշատակին ի գիրս՝ ստորագրեմ միայն զայնս՝ որք նորոգ մուծան ի Վաղարշապատ. և են հետագայքդ։ Կաթուղիկոսն Հայոց տէր Եփրեմ, գոլով ի նախկնումն նուիրակ Հնդկաստանեայց[66] եբեր անտուստ զթուրինգի, զբամիա, և զքարթոֆիլ կամ ձուտակ, զոր ոմանք անուանեն գետնախնձոր Եփրեմայ։ Ներսէս Արքեպիսկոպոս եմոյծ անդ՝ զհացածառն Սանդուիչեան կղզեաց, որ բերէ զարմատ պարարտ հանգոյն կոօթկի, որ չորացուցեալ և լուսեալ՝ լինի ալիւր սննդարար և քաղցրահամ։ Արդուինցի Գրիգոր եպիսկոպոս Ծուկուլն կոչեցեալ[67], եբեր զլեմոնիս. զոր և մեծաւ զգուշութեամբ պահէր ի ձմրան։ Սահակ Եպիսկոպոս Կոնդիցի[68] (որ է թաղ Երևանայ) փոխադրեաց ի կողմանց հնոյն Արտաշատայ զսէզ որդանն կարմրոյ, և մշակեալ ընդարձակեաց յէջմիածնին։ Որով և զգիւտ առատացուցման և մեռուցման այնր չնաշխարհիկ երանգոյն հեղինակեալ՝ ընկալաւ պարգևի մասամբ ի Նիկողայոսէ Առաջնոյ կայսերէ Ռուսաց զանդամանդի մատանի և զթոշակ կենսապահ։ Ջգնտակաղամբն (ղումրիտ) եբեր անդ Կարապետ եպիսկոպոս Նոր Ջուղայ[69], և զալոճն վայրի ընտանեցոյց պատուաստելով՝ Սահակ վարդապետ Սահառունի։ Իսկ Ռուսք յանելին ի սոսա միայն զձիատակն՝ կծու համով, որ ի լեզուն Անգղիացւոց horse radish անուանի, համեմ արժանի քմաց։ Սկսան Երևանցիք մշակել ապա և զտոնիրն, որ մինչ ցայսվայր ինքնաբոյս էր։

Ում զիարդ և հաճոյ իցէ առնուլ զառատութիւն աշխարհիս մերոյ՝ առցէ, այլ ինձ թուի այսր միայն լեալ պատճառ անհմաստասիրութեան ի բարս առաջնոյ թագաւորաց մերոց, և անմիաբա-

---

* Ի Սովոյն Ռուսաստանի՝ որ եղև ի վերջնում ամի կայսերութեան Աղէքսանդրի Առաջնոյ՝ և շարունակեաց ցամն երրորդ կայսերութեան Նեկողայոսի Առաջնոյ՝ կարողացաւ Արարատ միլիոնս բեռանց ցորենոյ և այլ արմտեաց բառնալ անդանօր, և ոդէմ ունիլ վտանգի սովամահ կոտորեան բազմութեան նորա։ Ասի թէ և Կայսրն իբրև զկէս միլիոն ձիոց արտաքս եհան ի Ռուսաստանէ, զի փոխանակ նոցա մարդիկ կերակրեսցին։ Եւ քարի՛ արար։

նութեան հպատակաց նոցա։ Մարդ՝ որ յաշխարհի աստ առ մարդ մեղանչէ, ի դրախտին փափկութեան առ Աստուած մեղաւ։ Մեք՝ որ յետ կորստեանն Եդեմայ զեդեմատիպն ժառանգեցաք զՀայաստան՝ առատութեամբ բերոցն յղփացեալ անկուշեցաք զԱստուած ի վեր՝ և զԱրքայ մեր ի խոնարհ։ Շնորհք ի մեծաւորաց և հնազանդութիւն ի փոքրաւորաց կացուցանեն զքաղաքական առնչութիւն ընդ իշխան և ժողովուրդ։ Հայք շնորհաց իրիք կարօտ ո՛չ մնացին, և չու բազմութեան նոցա ի Բաբելոն՝ ոչ եթէ առ հարկի կարօտութեան ինչ այլ յաւետ վասն զաղտնի իմն ամբարշտութեան եղեալ համարիմ, որպէս եղեն և կատարեցաւ՝ ըստ գրոց սրբոց։ Քանզի ո՛չ նոյ միաբանեցաւ ընդ նոսա, և ո՛չ բարեպաշտագոյնք յորդւոց նորա։

Ստե՛ղծ մտօք զազատ իմն եղանակ կենաց, և զի՛ր թէ զուգնաքեայ աշխատութեամբ կարող ինչ իցես հանել զտարեկան ծախս քո՝ անկախ ղշնորհաց սորա կամ նորա՝ և կեալ։ Արդ եթէ դէպ լիցի ուրուք զրկել և զզուել զքեզ, տանի՞ս արդեօք հեզութեամբ. քա՛ւ լիցի. ուրեմն այդպիսի էին և նախնիք մեր։

Ջի՛ք սահման յԵւրոպիա՝ այնքան ծայրագոյն իմաստութեամբ բնակչացն մշակեալ, որ հաւասարել կարիցէ գէթ անիմաստ մշակելոցն ի Հայաստան։ Ինքնաբոյս բանջարք նորա սննդարար և համեղագոյնք են, քան զմիս այլոց աշխարհաց։ Արմտիք նորա գրեթէ ի կեբակուր հրեշտակաց արարեալ, պտուղքն պարարտ և պարարուն գրեթէ, երկնայինք են, որք նախ զՋրադեշտի՝ և ապա զՄահմետի վառեցին զերևակայութիւնս սոսկ ստուերօք իւրեանց նկարել զարքայութիւն հաւատոցն։ Ուստի նոքա ի հարկէ ստիպեալ կարօտացան արտաքստից ի գիւտ պարենիցն՝ զորս երկիր մեր ձրի տայր և տայ մեզ։

Այս ազատ ապրուստ ազգիս ընդ պէս պէս յոռութեանց անփութութեան, ծուլութեան և անիմաստասիրութեան, ծնանէր ի բարս նոցա և զազնուական առաքինութիւնս քաջասրտութեան, զվեհանձնութեան, և որոց ի կարգին։ Հայեա՛ց ի ճշմարիտ վեհանձնութիւն Հայկայ առ դիտապաստ անկեալն Բէլ։ Հայեա՛ց յողջախոհ ժուժկալութիւն Արայի, և անփառամոլ պերճութիւն նորա առ վարար այն Շամիրամ, գերօրինակ քան զՅովսեփեայն յԵգիպտոս։ Հայեա՛ց յանուշութիւն վարուց Անուշաւանայ, որով ընդ գերութեան՝ բդհայրենի իշխանութիւնն շահեցաւ։ Որք միահաղոյն ցուցանեն, թէ Հայք միայն եղեն միաբան և տիրասէրք յաշխարհի, քան զազգս բազումս։ Ըստ որում հնազանդութիւն և համաձայնութիւն նոցա՝ ոչ էր առ հարկի կարօտութեան և գերութեան, որպէս նախնի Յունաց և Հռովմայեցւոցն, այլ ազատ և ինքնակամ զինուորելոց։ Բանիս



5—739

ապացոյց լինի իշխանութիւն Հայկազանց, թէ հնութեամբ և թէ երկար տևողութեամբ իւրով:

Անիմաստասէր չէին և առաջին թագաւորք մեր. նախ՝ զի որ ինչ արհեստք ստեղծան յԱդամայ մինչև ի Նոյ, անդ ստեղծեալ և անդուստ տարածեցան: Օրինակ քեզ կազմութիւն տապանին, և շինութեան աշտարակին ի Բաբելովն, զի մարդիկն ի Հայս ուսեալ զարուեստսն ի Սենաարի վարեցին դէպ ի շարն կոյս:

Անիմաստասէր չէին առաջին թագաւորք մեր, որոց պատմութիւն յօտարոտի գրոց և օտարոտի ձեռօք հանեալ, շնչոյն Աստուծոյ հաւասար ընծայեցաւ և կայ:

Նա՝ անիմաստասէր չէին, որք կարացին զաշխարհ այսքան արգաւանդ և բերրի՝ ի ժառանգութիւն անձանց և զաւակաց իւրեանց պահել զամս յաւէտ քան զերկու հազար՝ յերեսաց շրջակայ և արենարբու թշնամեաց իւրեանց:

Ճշմարիտ իմաստութիւն է զցանկութիւն սրտին չափաւորել, և ըստ այսմ ո՛չ լսի, թէ Հայաստան երբէք պատերազմ մղեաց վասն ընդարձակելոյ զսահման իշխանութեան իւրոյ: Հազարք ի վերայ յարձակեցան վասն առատութեան նորա, և նա զէն զգեցաւ միայն ի պաշտպանութիւն իւրոց իրաւանց:

Քաղդէացիք, Ասորիք, Եգիպտացիք, Պարսք, Յոյնք, Հռովմայեցիք, որպէս նաև Արշակունին մեր Վաղարշակ՝ ո՛չ տանէին ճանաչել զԱզգ մեր, որպէս և էրն, զի մի՛ աղօտացուսցեն զիրաւունս բռնակալութեան իւրեանց: Եւ եթէ այս միայն չիցէ պատճառ, ընդէ՞ր ապա զքսութեանց, բանսարկութեանց և զզժտութեանց ծագելոց յաւուրս իւրեանց՝ զնշանախից անգամ ո՛չ տեսանեմք ի պատմութեան Հայկազանց՝ յինքեանց առ մեզ ածանցելոց:

Հայրենասէր եկաց ազգ մեր և կայ՝ զի թէպէտև բազմիցս ընդ տէրամբք խստասրտօք աշխարհ ծովացաւ արեամբ անմեղաց ազգին, սակայն դեռևս մեծագոյն մասն նորա ո՛չ մեկնեցաւ ի նմանէ: Հա՜ն յերկինս զԲէլ, զՇամիրամ, զՍեսոստրէս, զԱղէքսանդր, ըզՂուկուղէս, զԱրտաշիր Սասանեան, զՅազկերտ, զՏուղրիլ, ըզԱրփասլան, զՋենկիզ խան, զԹէմուրլանկ, զԱբբաս Մեծն, և ըզՆադիր Շահ խուժադուժ արենարբու զօրօք իւրեանց, և ահա՛ անմարմին հրեշտակք անգա՛մ զարհուրեալք յահէ նոցա յերկիր թօթափին, այն ինչ Հայք, այո՛, հայրենասէր Հայք տակաւին կան և մնան տառապանօք ի հողս Հայրենեաց իւրեանց:

Ամենալիր առատութեան Հայաստանի էին հաստատութիւն նաև անդադար արշաւանք ազգաց օտարաց, և անհնարին պատերազ-

*մունք ընդ դարս դարս, որք գրեթէ զարիւն հեղին փոխանակ ջրոյ նորա, և կեանս ետուն փոխանակ կենդանարար բերոց նորա։*

*Բայց չէ՝ որովհետև Հայաստան զարդիս զմեծ մասն երևակայական ծախուց իւրոց արտաքուստ ընդունի, և որովհետև ամենայն ծախք ժամանակիս գրեթէ երևակայականք՝ են ըստ ինքեանց անբաւ, այլ մինչ մտաց մարդկան, թէ հնարողացն, և թէ վայելողաց. պարտի խնայելով զոնէ ի փոխանակել զխնկութիւն իւր ընդ սնոտիս այլոց աշխարհաց, զարուեստից կարևորաց բուռն հարկանել, և ձեռակերտաց ձեռակերտս վճարելով՝ զճշմարիտ հարստութիւն իւր ի ներքս ինքեան համբարել պահել։ Զինչ մխիթարութիւն Միդասայ ի մէջ ոսկւոցն սովամահութիւն, և զինչ մխիթարութիւն մեզ ի մէջ այսքան առատութեան աշխարհիս՝ աւուրն պարենի կարօտ հեծութիւն։ Այս դար արուեստից դար է, և ո՞չ բնութեան. ընդէ՞ր և ի սոյն արդեօք գերազանցել չփութասցո՞ւք։ Այն ինչ այլք միայն արուեստ ունիլ կարեն և զնիւթ արուեստին յայլուստ հայթայթեն, մեք գրեթէ զամենայն պատրաստի ունիմք յաշխարհի և ի տան մերում։*

## ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԱՅ, ԵՒ ՆԱԽԱՊԱՏԻՒ ՅԱՃԽԱՐՀԻ ԿԵՐՊԱՐԱՆ ԲՆԱԿՉԱՑ ՆՈՐԱ

Յաղագս *գինւոյ Հայոց՝ տե՛ս ի Սօս և Սօնդիպի՝ յերես 215։*
*—Բայց ես ո՛չ այնքան զարմանամ ընդ ամենալիր առատութիւն բերոց նահանգիս՝ որոյ լերինք են մեղր, և դաշտք իւղ և գինիք, որքան ընդ բազմածնութիւն բնակչաց նորա։*

*Զկնի մեծի ջրհեղեղին՝ ոգիք իբրև ութն միայն իջին յայս դաշտ հրաշալի՝ յորմէ զշինութիւն աշտարակին ի Բաբելոն՝ հազիւ ձգեցան ամք երկերիւր ըստ ամենայն ժամանակագրաց՝ մերոց և օտարաց միանգամայն, սակայն և այնպէս՝ ի սուղ այսմ ժամանակի և յառաջ քան զչուն ամբարշտաց՝ Զրուանն (զոր ես Զրվան համարիմ), ո՛չ միայն շէն արարեալ և ելից բնակութեամբ և աշակերտօք զգաւառն Զարևանդ, ի հարաւոյ Մասսեաց լերին, այլ և զՍեմ լեառն յիւր անուն կոչեալ՝ ելից բնակութեամբ։ Կորճ՝ զԿորճէյսն ամենայն, Մոգք, զՄոկաց նահանգ, Սիլատ զեզերս Փիսովնի՝ և անուանեաց զայն երկիր Սիլատայ։ Աղխախեալ էին լերինք աշխարհին, վասն որոյ և համառօտութեամբ հայկական բառին՝ Խաղտիք կոչեցան։ Փիսովն գետ զկողիւք երևելի քաղաքին քսելով անցանէր, և առ՛ Կողքիսդ եւ անուն, միոյ ի հնագոյն քաղաքաց աշխարհի ի մեր իսկ բարբառ։*

Երեւան և գրեթէ ամենայն նահանգք Հայաստանի (զորոց առաջին գրութիւնք իմ կորեան ի Սուրբ էջմիածին*)՝ զնոյն յայտ առնեն։ Եւ յիրաւի եթէ նուրբ քննիցին՝ նաև անուանք ամենայն վայրաց Հայաստանի՝ յառաջ ընծայեն զմի մի ի նահապետաց անտի ազգացն առաջնոց՝ որք աճեցան և բազմացան ի Հայաստան, և յետոյ բաժանեցան՝ կէսք զնոյի՝ և կէսք՝ Նեբրովթայ զհետ։

Թուի թէ ընդդեմ պնդեսցեն ոմանք ասելով՝ թէ նախ և զկնի հեղեղաց բազմածնութիւն և երկարութիւն կենաց մարդկան յատուկ և ժամանակաւոր շնորհ իմն էր յԱստուծոյ. զայդ և ես ընդունիմ։ Բայց ո՛չ կարեմ ականատես փորձոցն հակառակել, որք իբրև մատամբացի ցուցանեն, թէ որպէս Հայաստան ամենալիր առատութեամբ բերոց՝ եդեմատիպ սահման ընկալեալ և խոստովանի ի մերոց և յօտարաց՝ նոյնպէս և ծնունդ և կեանք բնակչաց նորա եդեմական անմահութեան մերձաւորագոյն լինել ընդունիլիք են։ Ի հաստատութիւն այսր կարծեաց ա՛ռ դու զպատարագն Հայաստանի առ Աստուած, և զօրհնութիւն Աստուծոյ առ ազգ մարդկան, ըստ վկայութեան Սուրբ Գրոց։ Առ զհամաձայն վկայութիւն բանիբուն ճանապարհորդաց Եւրոպացւոց, զորովք զանց արարեալ առ այժմ, քաղեմ արդ զկարի հրաշալի պատմութիւն ինչ ի ճանապարհորդութենէ Հաթիմ Տայւոյ[70] օրինակ զայս։ «Սադի սիրով կապեցաւ, պնէ, ընդ պատանւոյ ուրումն ի Հայս՝ ուր մարդիկ բնականաբար ո՛չ մեռանէին, այլ միանգամ ի տարւոջն յաւուր նշանաւորի իրիք ժողովէին ի շրջակայս մեծամեծ քաղաքաց և զբօսնուին ի խաղս. յորում անձինք յամենայն հասակաց յանկարծ զկայ առնուին, երկրպագանէին ընդ յարևմուտս, և գտոի ընդ մէջ ածեալ արագութեամբ սրանային յանծանօթս անապատին աներև լինէին»։ Օտարոտի որպէս և կայ՝ տակաւին կամ քերթուած իմն է այս խորասոյզ կորստեան Արտաւազդայ Երկրորդի, և կամ պարսակոուին բարեկենդանի՝ որ մինչ յաւուրս մեր տևէր յԵրևան և ի Տփղիս, արատելով անդամոց և մահուամբ իսկ բազմաց ի պատանեաց մերոց, զոր օգնականութեամբ կոմսին Երմալովի եբարձ տէր Ներսէս Առաջնորդ Հայոց Վրաստանեայց։

---

*Առաջին գրութիւն իմ զայսցանէ՝ անուանեալ Փորձանարան Մեսրովբայ, յետ զարձի իմոյ ի Հնդկաց՝ արձակ թողի ամենեցուն ընթեռնուլ և զբօսնուլ։ Բայց աւա՜ղ, զի ի վերջոյ ով տարաւ զայն՝ ուրացաւ։ Յետ բազում ամաց կորստեան նորա հատուած ինչ ի նմանէ հրատարակեալ տեսի ի «Հայրենասիրին» Զմիւռնիոյ[71] և շատ զարմացայ, զի գրուածքն իմ են, այլ ես օրինակն չունիմ։ Վասն որոյ որ ինչ այսուհետև գրեսցին, և զանազան ի նմանէ գտցին, իմանալի է, զի յուշոյ միայն գրին։

Ա՛ռ ի կարգ բանիս և զայն, զի յորժամ ընդ սրբոյ Հայրապետին Եփրեմայ բնակէաք ի Սուրբ Նշանի վանս Հաղբատու՝ մեռաւ Մինաս վարդապետ, և դագաղ ո՛չ գտաւ թէ ի վանս անդ, և թէ ի գեղջն՝ ուր բնակէին Հայք առաւել քան երկերիւր տամբք։ Եւ ի հարցանել իմում զՏէր Ստեփաննոս ծերունի քահանայ տեղւոյն, թէ ապա դուք ո՞պէս բառնայք զննջեցեալս ձեր ի հող, ասաց. «Ահա քառասուն ամք են, զի ձեռնադրեցայ ի քահանայութիւն, և երբէք ո՛չ պատահեցաւ ինձ մեռեալ զոք թաղել»։ Անճարացեալ հատաք զմասն ինչ սանդխոց տաճարին, և ի նմա բարձաք զդի հանգուցելոյն։

Հզօրագոյն ապացոյց քան զսոսին համարիմ նա և զոտնակոխ դրութիւն Հայաստանի և զկատաղի արշաւանս խուժադուժ ազգաց, թէ ընդ մեզ, և թէ ըստ օտարս պատերազմողաց, որոց սրածութեամբ և գերութեամբ անհետանայր արդեօք անուն ազգիս, եթէ բազմածին և երկայնակեաց չլինէաք ազգովին։

Բաց ի բազմածնութենէ, հեշտածինք ևս են կանայք Հայաստանի, որպէս ունիմ յիշատակել յընթացս պատահարաց. և ահա միւս ևս նշան օրհնութեան Ամենակալին առ երկիր ժառանգութեան իւրոյ։

## ԿԵՐՊԱՐԱՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆՑ

Արդի իմաստասիրութիւն լուսաւոր ազգացն Եւրոպիոյ՝ զազգ մարդկան ի հինգ որոշ տեսակս վերածէ։ Ի սպիտակս, ի Հափշիկս, ի Չինացիս, ի Մալայիս, և ի Հակոտնեայս, որոց ամենեցուն գլուխ կարգէ, թէ բարեձևութեամբ անդամոց, թէ անարատ յստակութեամբ մորթոց, և թէ բոլորակութեամբ գլխոյ և առատութեամբ ըղեղան՝ զբնակիչս Կովկասական նահանգաց։ Բայց այն զի՝ Կովկաս ի հիւսիսոյ կողմանէ Արարատայ կայ, ընդ մէջ անկանելով Գուգարաց և Ուտեաց և եթ՝ ասելի է թէ այս դրութիւն նոցա հայի յաւէտ ի Հայաստան և յԱրարատ։ Քանզի ամենայն գեղեցկութեամբ նշանաւորք են հարաւակողման բնակիչք Կովկասու, որպիսի են Հայք, Վիրք, Եգերացիք, Լեզկիք, Ալանք, Աղուանք, Ուտիք, Սիւնիք, Գուգարք, և Արարատ, քան թէ հիւսիսակողմանիք նորա՝ որպիսի են Թաթարք, Ղազախք, Ղալմուխք և այլ խուժադուժ ազինք՝ որք ամենևին տարբերք են ի նոցանէ։

Գեղեցկութիւն կերպարանաց ազգի մերոյ յայտ իսկ է ի պատմութենէ անտի Մարիբասայ Կատինայ, ուր իբրև զմի ի գլխաւոր յատկութեանց յիշատակին կերպարանք իւրաքանչիւր նահապետաց

մերոց[72]։ Արայն մեր՝ գեղեցիկ վերաձայնեալ, որ զՇամիրամ շլացոյց զհետ, և Յովսէփ Գեղեցիկ՝ որ թէպէտև Հրէայ՝ այլ ի միջագետս մեր ծնեալ, Գեղ Նահապետ մեր, Կողթան երգոյն զարմանալի նկարագրութիւն կերպարանաց Վահագնի՝ և այլն, զարմանալի ապացոյց լինին հաստատութեան բանիս։ Եթէ այր մարդիկ այսպէս, ո՞ ապաքէն ժուժկալել կարիցէ գեղոյ կին մարդոց Հայաստանի, որոց լոկ անուանք ծնանին ի մեզ սէր և զարմացօն։ Աստղիկ՝ յաստեղափայլ կերպարանաց, Անահիտ կամ Նայիրէ՝ ի հայեցուած կամ ի նայեցուածոյ երեսաց իւրոց, Արուսեակ՝ ի քրքմնացան զուարթութենէ դիմաց, Նուարդ՝ ի յաւէրժահարսնիկ անթառամութենէ տիցն, Շուշան, Շահանդուխտ, և այլ հազար այսպիսի հրաշանի յատուկ սիրոյ և խնամոց Արարչին։

Շարդին երևելի ճանապարհորդ[73] ի խօսելն զարենէ Պարսից՝ ասէ. «Արիւն Պարսից բնականաբար խառնակ իմնէ, որպէս տեսանի ի Գաբրս, որք մնացորդք գոլով նախնի Պարսից՝ են անբարեձևք, տգեղունք, և խոժոռամորթք։ Բայց յայլ կողմանս Պարսից մաքուր է արիւն, ի սակս խառնելոյ նոցա ընդ Վիրս և Եգերացիս, ազգք՝ որ զանցանեն գեղեցկութեամբ քան զամենայն բնակիչս աշխարհի։ Համիւ գտանի իշխանաւոր ի Պարսկաստան, որ չունիցի զմի կամ զերկու Վրացի կամ Եգերացի կանայս։ Յայսմ հաղորդութենէ կանայք Պարսից զգեղ, և արք նոցա զանձնէութիւն ստացան»։ Զոր միանգամ Շարդին գրէ զՎրացւոցն և զԵգերացւոց՝ զնոյն իմանալ պարտիս և զազգէս Հայոց, զի որպէս կանայք, նոյնպէս և արք երևելիք ի նոսա՝ էին յաւէտ յազգէս մերմէ, որք Գուրջիք կամ Վրացիք կոչէին առ նոսա՝ ըստ որում այնր մասին Հայոց Վիրքն տիրէին, որպիսիք են զարդիս Մանուչար խան, Խոսրով խան Մեծն, Աղալար խան, Սուլէյման կամ Սողոմոն խան, Դաւիթ և Զալ խան Սակինեանք, և այլք[74]։

Եթէ շոպելով և գերելով աննշան ոմանք կարացին ազնուացուցանել զսերունդ ազգի ուրուք, ապա հարկիւ զհետ գայ, և ի մեզ սերել ի նոցանէ ժողովուրդ ընտիր, որ ի սկզբանէ հետէ իբրև մի ազգ և արիւն, թէ խնամութեամբ և թէ բնակութեամբ կապակցեալ էին ընդ մեզ՝ իբրև «ընդ հանուրց հիւսիսականաց իրաւամբ վեհազունից»։

Բայց ես համանեալս իմ վարկանել թէ Հայք էին յաւէտ՝ որ ազնուացուցին զարիւն մերձակայ ազգացն՝ Վրաց և Եգերացւոց՝ քան թէ նոքա զմերն։ Յաւուրց անտի Մեծին Միհրդատայ[75] ցմեր իսկ ժամանակ, Հայաստան շնորհեաց թագուհիս Վրաց։ Տիկինն

Աղեքսանդրի[76] որդւոյ Հերակլեայ[77] վերջնոյ թագաւորին Վրաց՝ է դուստր[78] Մելիք Սահակայ Հայկազուն իշխանին Երեւանայ[79], զոր որդւովն հանդերձ տարան Ռուսք ի Պետրբուրգ՝ և կայ՝ անդր տակաւին, վասն Աղեքսանդրի յամառելոյ ի Պարսս, անդր վճարելոյ զկեանս իւր վերջին աղքատութեամբ, և թաղելոյ յեկեղեցի Հայոց ի Թեհրան։ Հայաստան շնորհեաց կրօնի նոցա զհսկայս իւր ի պաշտօն. զի զՎահագն մեր նախ Վիրք աստուածացուցեալ պաշտեցին[80]. ի հարկէ՛ ընդ անօրինակ գեղ երեսաց նորա և ընդ քաջի արարան սքանչանալով։

Եւ եթէ այսպէս, ուրեմն Արարատեան նահանգ մեր, որ սկսեալ ի Նոյէ մինչև ի վերջին կործանումն Անւոյ՝ բազում քաղաքօք եկաց թագաւորանիստ մերոց և օտարաց՝ հարկի զարմէր զազգ քաջ, առաքինի և սիրուն։

Այլ զարմանամ իրաւ, զի Դանիէլ Բաբում Հայկազուն ումն, որ ամօք ինչ յառաջ եկն յէջմիածին և անտի գնաց ի Տփղիս, զի տարբեր աչօք, և գրեթէ ախտացեալ ախորժակօք հայեցեալ ի գեղուհիս աշխարհին բանդագուշանս գրէ առ բարեկամս իւր ի Մադրաս՝ օրինակ զայս։ «Տեղիս կանայքն և մարդիքն են լիբբք չափազանց և ոչ գեղեցիկք՝ որպէս անցաւորք պատմեալ են մեզ. միայն ծիծն տեսանելով՝ մարդ զարշի։ Վասն զի է բաց, և կախ այնչափ՝ որ նմանի տկի, և տեղաւորէ բաւականին ջուր առ ի շինել 10 թաս չայ։ Թէպէտ են առ հասարակ բարձր և ճերմակ՝ բայց մասնաւոր Ջնէզի դէմք մարդն է գեղեցիկ։ Առ և տուր ոչ կայ, միայն զոր հարկ է վասն երկրիս ուտելոյ, ըմպելոյ՝ և զգենլոյ։ Տգիտութիւնքն է չափազանց վասն զի մոլութիւնքն են յոյժ սիրեցեալ, և գիտութիւնն զարշեալ։ Ի հնոց ժամանակումն խաչ էր պատիժ՝ աւազակաց և մարդասպանից. և այլն, որ ի վերայ նորին բեռէին զնոսա, բայց տեղս տեսանեմ և լսեմ (թողեալ արժանաւոր անձինք), զի խաչն է բեռնեալ ի նոցանէ։ Ամենայն ինչ վասն ապրուստի յոյժ թանգագին է քան զտեղդ. միայն հացն՝ որ է աւելի սեաւ քան զտեղիդ սեաւ հացն։ Ջուրն պղտոր, բնակութիւնն սապաստան և խոզաբուն. և թողեալ, որպէս ասացի, մերձ 100 կամ 150 նոր կառուցեալս։ Յերկրումս ոչ գտանի հինգ ոգիք ունեցող 10000 հուն*։ Գինին (վասն ներկայիս և ոչ պահելոյ) շատ լաւ, որ ես երբեմնապէս 3—4 բօթլ** խմեմ, բայց է անզօր և զովեն։ Վերջապէսն առաւել յօժար եմ մեր ազնիւ մօլուքզար*** խօշկին, ընդ

* Ոսկի դրամ ինչ Մադրասայ, որ արժէ 6000 դեան Պարսից։

** Ապակի սրուակ գինւոյ, շիշ։ Բայց չորս կամ հի՛նգ ի միասին։

*** Սոսկ ջրով խարշեալ որիզ. «աղցան արժանի քմաց»։

մեր ազնուագոյն բալաշան*, չաթնիք**, շոր ձուկն, քան զտեղիս փլեալ և խորովածն, որ համ չունի։ Բողոք է ձեզ չգալ աստ. ես խաբեցայ, դուք մի՛ խաբիք. ափսոս իմ վաստակ, իմ կորուսեալ ժամանակ, իմ նեղութիւնք, և այլն։ Պատճառն սորին են խաբեբայք պատմագրողք և տեղդ թէ վարդապետ թէ աշխարհական գալոցողք. դոցա քարոզելն առ մեր տեղս գալն՝ այլ ոչ ինչ է, եթէ ոչ կամիլ մեզ աւերել»։ Զայրն ես աչօք տեսի ի Սուրբ Էջմիածին, որոյ վասն և օրինակեալ ի Գանձարան գրոց զպատմութիւն Գեղարդայ՝ մատուցի նմա. զի էր այր միջահասակ, դեղնած երեսօք, և փայծեղուտ փորով, ուստի և առաւելապէս փորձ գինւոյ՝ քան թէ գեղոյ։ Ոչ վրիպիմ համարել նաև՝ թէ յատկապէս դիտաւորեալ իցէ նորա յայսմ գրութեան, զի հանել հայթայթիցէ ի մտաց հայրենասիրացն Մադրասայ՝ զաշխարհ և զազգն գլխովին։ Վասն զի ի նմին թղթի պարսաւանս պարսաւէ միշտ յառարկայս սիրելիս նոցա, և յատկապէս ապսպարեալս։ Զոր օրինակ ի խօսելն զԼոռի գաւառէ յաշխարհին Գուգարաց՝ զոր, որպէս ասի, գնեաց իւր մեծանուն Աղայ Շամիր Սուլթանեան՝ զայնպիսի ինչ բարեհաճէ գրել. «Բոլորն աւերակ է և Լեզկեաց բնակարան, երևի թէ էրեկլա պարոնին էդ գիւղից բէզար էր, որ տվէց Աղա Շամրին, եթէ լաւ տեղ լինէր այսօր Ռուս ազգն փոխանակ յայլ տեղ գիւղ շինելոյ՝ տեղս կշինէին։ Դոցա ասէք. էդ գեղի քաղաքթանին լաւ կառեն տեղիս կուսակալին ընծայ ուղարկել, քան թէ պահել»։ Որ գրեթէ բոլորովին անհիմունք են և եռազածոյք։ Շատ է ուրեմն զհետ բերել աստանօր, թէ սա միայն է՝ որ այսպէս խօսի զգեղուհեաց աշխարհիս, և ի վարձ իւր ընդունի՝

Ա՜յ շի՛լ շի՛լ, քո ձեռքն չի ընկամանի։

Այլ զարդիս թողեալ զայլ և այլ գետելեաց, անցանեմ դարձեալ ի Սուրբ Էջմիածին խօսել ինչ և զարդեան վիճակէ նորա։

---

* Նեխեալ ձուկն, լոսեալ և յանբաւս կծուացուցեալ։

** Խարշեալ արմատ, լոսեալ և սոխ ու կծու խառնեալ, որոց ամենեքին ո՛չ արժեն գոնէ սեպեխի խարշելոյ, ո՞ր թէ մսոյ քրքմնարօտ զառանց երկրին, համբաւեալ ձկանց, և պարարտ բանջարոց նորա։ Մտափոխ կանայք ի Հայս՝ երբեմն զկերակուր ընտիր մերժեալ՝ զհող կամ զածուխ ընդ այնց ուտեն. և զի՞նչ զարմանք, թէ և Հնդիկ և հիւանդոտ պարոն մեր, որ ո՛չ ամաչէ գրել՝ «թէ ես ինձ Սմխեթեցի Օրբելեան ազնուական արարի, և համբաւեցի որպէս թէ տէր իցեմ 300000 ոսկւոյ՝ որով պատիւս շատ մեծացաւ», զախորժակս իւր յաւէտ ի նոյն յարմարեալ իցէ։

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

### ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ժամանակս բարգաւաճութեան հին Հայաստանի, յորժամ իրաւունք նախագահութեան յիրս հոգևորականս ազգին, սեպհական իմն էր նոցա, հազիւ կրէին անուն այսպիսի. այլ իբրև թագաւորութիւն բարձաւ ի միջոյ, հայրապետք ազգին ի շղթայս գերչացն կաշկանդեցան, և ազգն համօրէն ոտնկոխ եղեալ յազգաց օտարաց՝ սփռեցաւ յաշխարհ ամենայն, յայնժամ ծէս եղև զՅունականդ* ի կիր առնուլ ձայն, փոխանակ ընդհանրական Հայրապետի Ազգիս Հայոց, ցուցանել թէ՝ հոգևորական գլուխ իցէ նա համօրէն Ազգին՝ վտարանդելոյ ի հեռաւոր ծագս աշխարհաց։ Զորք էին կաթուղիկոսունք միոյ ազգի ի ժամանակի դառնութեան այսմիկ։ Սսոյն[81], Աղթամարայն[82], Աղուանիցն կամ Գանձասարայ՝[83] և Վաղարշապատանն[84]։ զԱղուանից կաթուղիկոսութիւն եբարձ մեծանուն Ներսէս Արքեպիսկոպոս՝ յառաջնորդել իւրում Հայոց բնակելոցն ի Վրաստան։ Սսոյն և Աղթամարայն գոլով մասնաւորք, թողումք և ստորագրեմք միայն զշուք և զարտօնութիւն կաթուղիկոսին Էջմիածնի, որոյ իրօք և արդեամբք գոլով յաջորդ Գրիգորի Լուսաւորչին մերոյ, տիրապէս կոչի Կաթուղիկոս Ազգիս։ Հոգևորական իշխանութիւնք նորա, թէ յաւուրս թագաւորութեան մերոյ, և թէ զկնի նորա՝ ընդ լծով ծառայութեան Պարսից, Սկիւթացւոց, Սարակինոսաց և Տաճկաց, թէպէտև յամենայնի հարստահարեալ, յամենայնի կեղեքեալ, և յամենայնի հարուածեալ և վտանգեալ, անխառն կացին և պարզ ի հայեցողութիւնս հոգևորական վիճակի ազգի մերում, մինչև ցհինգերորդ ամն տիրապետութեան Ռուսաց Այրարատեան աշխարհիս։ Յորում տետրակ ինչ. ընդ կեղծեօք բարեկարգութեան եկեղեցւոյ Հայաստանեայց՝ արձակեալ ի դրանէ կայսեր, և տպագրեալ յԷջմիածին[85], այնքան ճշդէ զհոգևորական իրաւունս ցայս վայր ի գործ եդեալս ի կաթուղիկոսացն Հայաստան աշխարհի, մինչ անյարմար լինելոյ նոցա այնուհետև անուանս կաթուղիկոսութեան, թէպէտև պիտակաբար թողանի նոցա։

Յորժամ արտաքս ելանէ կաթուղիկոսն ի վանացն Էջմիածնի, զառաջեաւ կրեն նորա երկու ի ծայրագոյն վարդապետաց հեծելոց զխաչվառ և զգաւազանն հայրապետական։ Զկնի զայ նորա տեղա-

---

* Զայս բառ առ Ագաթանգեղոսի ի յետնոց սպրդեալ համարիմ, զի եկեղեցական հովուաց անուն այդպիսի անծանօթ էր ի ժամանակին, թէ ի Հայս, թէ յԱնտիոք, և եթէ ի Հռովմ։ Խորենացին որ բազմօք յետոյ՝ ոչ ունի զայդ բառ։

պահն, որ երկրորդ է նորա պատուով, յաջորդ համարեալ Աթոռոյն։ Զկնի նորա աւագ լուսարար։ Եւ ապա արքեպիսկոպոսունք, և ի վարդապետացն՝ պատուականք։ Վաղարշապատ, Օշական, Եղվարդ Մաստարա գիւղօրէք, գոլով ի վաղնջուց պատկանեալք հայրապետանոցիս, վառեն ընդ յառաջ նորա զհեծեալս ի քաջարշաւ պատանեկաց, որք ի զանազան խաղս ձիավարժութեան իւրեանց սխրալի յօրինեն ոչ միայն զփառս Հայրապետին, այլ և զհին և զքաջարարս նախահա՛րց իւրեանց։

Յաւուրս կիւրակէից կամ հանդիսաւոր տօնախմբութեանց, յորս պարտ է ներկայ լինիլ Կաթուղիկոսին, երկոտասան եպիսկոպոսաց շուրջառ սփածեալ զանձամբք՝ գան կանգնին յանդիման Ներսի դրան, և յորժամ ելանէ, խոնարհեցուցեալ նմա զգլուխս իւրեանց, վեց աստի և վեց անտի առաջնորդեալ բերեն զնա յեկեղեցի։ Յամենայն արարս Կաթուղիկոսի շքեղագոյն գոլով կարգի ձեռնադրութեան եպիսկոպոսաց և օրհնութեան մեռոնի՝ արժան համարիմ մանրապատում ստորագրութեամբ շարայարել աստանօր որպէս զի մերազնեայ հեռաբնակացն տացից խեշերանս ինչ նախնի մեծափառութեանց Ազգին։

Իբրև ամենայն հանգամանօք պատրաստի նախընծայն եպիսկոպոսութեան, հարկանին զանգականին մեծահնչիւն, ժողովին եպիսկոպոսունք, և գնան ածեն յեկեղեցի զհայրապետն սուրբ ըստ վերոյ գրեալ ծիսին։ Ի կատարել երեկոյեան պաշտամանց, հաղորդին ամենեքեան հասարակաց սեղանոյ ընթրեաց։ Ապա հնչի զանգականին, և ամենեքեան յեկեղեցին փութացեալ՝ սկսանին զհըսկումնն, ուրանօր յետ հանգստեան աղօթից՝ Կաթուղիկոսն և ժամօրհնող եպիսկոպոսն, սկսանին սաղմոսել ցհարուստ ժամս, և ապա մեկնին։ Ի վաղիւ ընդ առաւօտն զկնի գիշերային պաշտամանց, յորում ի դիմաց Կաթուղիկոսին՝ բաժանին ողորմութիւնք իւրաքանչիւր վիճակի պաշտօնէից սրբութեանն անուանեալ «պաշտօնէից»։ Հարկանի Ա երրորդ, ուր գնայ Կաթուղիկոսն յեկեղեցի և խոստովանի զմեղս իւր։ Ապա հարկանի Բ երրորդ, ուրանօր ամենայն պաշտօնեայք եկեղեցւոյ խմբին անդանօր, և Կաթուղիկոսն գնայ յաւանդատուն անդր, զգեստաւորիլ։ Զգեստ Կաթուղիկոսին նոյն է ընդ եպիսկոպոսական զգեստուց, կոնքեռոյն և եթ յաւելմամբ, որ է ականակուռ և զառնանուխտ դիպակի աղիւսաձև, կախեալ զաջոյ ազդերբն նորա։ Ապա բազմի անդ յաթոռ, և ջերմեռանդագոյնք ի ժողովրդենէ մտանեն առ նա, և զժամոցս իւրեանց մատուցանելով՝ աղաչեն յիշել զանձինս իւրեանց և զննջեցելոցն, առաջի անմահ

զառինն Աստուծոյ։ Մինչ սոքա յայսմ, լուսարարք և լուսարարապետ նոցա զուն գործեն յարմարապէս և վայելչագեղ պաճուճել զերկոտասան ոգիս յեպիսկոպոսաց անտի, յաջակողման խորանի եկեղեցւոյն՝ որ յանուն Յովհաննու Կարապետի։ Եւ զի՞նչ չքնաղ տեսարան ո՛չ տայցէ արդեօք երկոտասան արանց սեազգեստից յանկարծ վերերևիլ այլափոխեալ զոգչի՛ր ի ծայրագոյն փառս մարդկութեան։ Որք շուրջառ, զեմիփորոն շուրջ զանձամբք, բազպանք ի բազուկս նոցա, վակաս յուսս, թագ ի գլուխս, և գաւազան երկագլխեան ականակուռ ի ձեռս, շառացից թէ և սրբազան հպարտութիւն ի դէմս, ահեղանման անդանօր։ Զկնի նոցա զոյգ քահանայից՝ քուչ զարդարեալ և զսկիհ քօղեալ ի ձեռս նոցա։ Զոյգ աւագ սարկաւագաց՝ սապանակ և բուրվառ ի ձեռս։ Զոյգ կիսասարկաւագաց զուրար զթեօք, և բուրվառ ի ձեռս։ Զոյգ երդմնեցուցչաց՝ զաւետարան ի գիրկս, զոյգ ջահընկալաց՝ ջահս լուցեալս ի ձեռս, զոյգ դռնապանաց՝ խուրձ բանալեաց ի ձեռս։ Զոյգ իշխանաց՝ և ապա զոյգ աղքատաց մոմ լուցեալ ի ձեռս իւրեանց, և հուսկ ուրեմն՝ նախընծայն եպիսկոպոսութեան միայն շապիկ և շուրջառ զիւրեաւ։ Ապա զգեցեալ և կղերիկոսացն զաս իւրաքանչիւր ըստ աստիճանի իւրում, երգեն առ դրան աւանդատան զերգն «Խորհուրդ խորին» կոչեցեալ[86]։ Իբրև ելանէ կաթուղիկոսն ի խորանէ անտի, քող իմն քառակուսի կալեալ ի չորից դպրաց զչորեցունց տոնոց՝ բերի ընդ յառաջ նորա, որում զհետ գայ ամենայն զարդ և շքեղութիւն խաչվառաց, կերոնացն լուցելոց, և բուրվառացն խնկարկողաց և համօրէն ուխտին, որ ամենայն զօրութեամբ սկսանի երգել յայնժամ. «Հրաշափա՛ռ Աստուած և միշտ բարեխնամող»։ Եւ թափօրական հանդիսիւ ածեն զնա ի ձախակողմեան խորան եկեղեցւոյն եօթնաստիճանեայ, որ յանուն սրբոյն Ստեփաննոսի կառուցեալ[87]։ Ուրանօր յետ դնելոյ յիշատակի մարմնոյ և արեան Տեառն, բանի վարագոյր, բազմի Հայրապետն յաթոռն առաքելական, զառաջեաւ որոյ սփռեալ կայ թափշ խորանարդ և ի կեդրոնի նորա դրօշեալ Արծուի ասղարուր[88], յօրինակ Աւետարանչին սրբոյ Յովհաննու։ Ապա սկսանի խրտուիլակն[89] ընթեռնուլ զթուղթ վկայութեան ընծայելոյն, որ լինի կամ ի թեմական ժողովրդոց նորա, և կամ յուխտէ միաբանութեան Էջմիածնի, և զհետ յարէ նմին, թէ այս ինչ եկեղեցի, խնդրէ զայս ինչ անուն վարդապետ, զի ձեռնադրեսցես զնա ի տեսուչ իւր, կամ իւրեանց։ Հարցանէ ապա Հայրապետն եթէ՝ 1. Ի Սուրբ ամուսնութինէ՞ իցէ ծնեալ։ 2. Զբարուք քաղաքավարութիւ՞ն քաղաքավարեալ։ 3. Ի Սուրբ Գի՞րս կրթեալ։ Որոց ամենայնի զայրն պատասխանելով ի

հաստատութիւն բանին՝ յանդիման կացուցանէ և զհամօրէն ուխտ եկեղեցւոյն, զորս և ըստ ակնարկելոյ նորա՝ յառեան վկայութեան կոչէ զոյգ զոյգ ի նոցանէ, յասելն. «Հրամայեցէ՛ք դռնապանք». ապա երկոքին սարկաւագունք հառեալք ընդ ձայնին՝ ընթանան ընդ յառաջ նոցա, և երգելով «զՍուրբ Աստուածն» և[90] բուրվառելով՝ բերեն կացուցանեն զառաջեաւ սեղանոյ նորա, և գոչեն. «Հրամայեա՛ Տէ՛ր, օրհնութեամբ ասել», և նա կրկնէ. «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ՝ խօսել»։ Եւ այսպէս մինչև ցեպիսկոպոսունսն՝ որք գան միահաղոյն, կան առաջի նորա և յետ օրհնութեանն, ելանեն ի սեղան անդր, և բազմին վեց յաջմէ, և վեց յահեկէ հայրապետին։ Զկնի նոցա կոչի և նախընծայն, զոր սարկաւագացն ի ծունկս յառաջ մատուցեալ սակաւիկ մի՝ ասեն. «Օրհնեա՛ տէր, և օրհնէ զնա հայրապետն, միանգամ և երկիցս ցեօթն՝ մինչև գայ նա առ աստիճանս սեղանոյն»։ Ապա սկսանի հարցանել զմասանց հաւատոյ և զխորհրդոցն և զկարգաց եկեղեցւոյ եթէ տեղեակ ինչ իցէ. և ի պատասխանել խրտուիլակին փոխանակ նորա՝ ասէ. «Որովհետև այդպէս է, ածէ՛ք զդա յառաջին կետն»։ Ապա հարցանէ. «Աշակերտի՞ս Առաքելոցն սրբոց և առաջին լուսաւորչաց մերոց Թադթէոսի և Բարդուղիմէոսի Առաքելոց»՝ և այլն (Թուելով զամենայն հարս եկեղեցւոյ սրբոյ). և զայո՛ն լուեալ, ասէ. «Որովհետև այդպէս է, ածէ՛ք զդա յերկրորդ կէտն։ 4. Ապա հարցանէ՝ նզովե՞ս զԱրիոս, և զայլ ամենայն հերձուածողս. և յընդունիլ նորին՝ ասէ. «Որովհետև այդպէս է, ածէ՛ք զդա ի հինգերորդ կէտն». և ի վերջոյ քան զամենայն՝ ածէ՛ք զդա ի վերայ արծուոյն. ուր տուեալ նորա զդաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ առնու զձեռնադրութիւն Հայրապետին և երկոտասան եպիսկոպոսաց, և սկսանի պատարագն յաւագ խորանին Աստուածածնի։ Ուրանոր մի ոմն յեպիսկոպոսաց անտի եկեալ թափօրական հանդիսիւ և ամենայն ուխտիւք տանի անդր զաղաւնի իւղոյն օրհնութեան, մատուցանէ հայրապետին, և նորա յետ երգոց և շարականաց յառաջ մատուցեալ՝ դնէ զձեռն առաքելական ի վերայ գլխոյ ընծայելոյն, և ասէ. «Ա՛ռ զՀոգի Սուրբ»։ Եւ ապա զիւղն թափեալ աջով իւրով յափն ձախոյ իւրում, առնու անտի բթան աջոյ, և օծանէ զճակատ նորա ասելով. «Օրհնեսցի՛, օծցի՛, և սրբեսցի՛ ճակատ այս անուն եպիսկոպոսիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Եւ յօծեալն անդր հարկանէ բամբակ և ապա խոյր հայրապետական դնի ի գլուխ նորա։ Նոյնպէս զաջ նորա, որ ընդ ծկոյթն ապա եդեալ և զմատանին տիրական, մածանէ զերկոսին ձեռսն, և տայ ի նոսա զգաւազանն իշխանական։ Ապա ողջունեալ զնա դառնայ ի խորհուրդ Մարմնոյ և Արեան Կե-

*նարարին, և եպիսկոպոսաց զնոյն արարեալ՝ զնան յաւանդատուն անդր, և մերկանան ի փառաց։*

### ՄԵՌՈՆ, ԵՒ ՕԾՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ

**Օրհնութիւն** *իւղոյն մեռոնի ընդհանուր Հայաստանեայց՝ սեպհական իրաւունք գոլով կաթուղիկոսին Էջմիածնի, յիւրաքանչիւր եօթնեակս ամաց, կամ յետ և յառաջ, ըստ հարկին պահանջելոյ, քանի մի ամսօք յառաջ հանել հրամայէ ի խորանէ մասանց զմեծ սանն արծաթի, և ի վերայ ականակուռ և ասղնէգործ թաւշի եդեալ զեռոտանին սանակալ կամ կասկարայ, զետեղել հրամայէ ի վերայ զսանն սրբարար իւղոյն, և սկսանի իսկոյն կոնդակօք ծանօթս տալ ամենայն Հայաստանեայց։ Ի Գուգարաց անտի գայ ձէթ ազնիւ, յայնմ վայրէ, որ և Նոյի մատուցաւ աղաւնեաւն ի տապանին փրկութեան. և ի լերանց լերանցն Հայաստանեայց ծաղկունս անուշահոտս և գոյնզգոյնս, զորս և հեղուն ի սան անդր։ Ի գալ հասանիլ աւուրս պայմանելոյ, և ի խռնիլ աշխարհախումբ բազմութեան յամենայն ի հեռաւոր և ի մերձաւոր կողմանց աշխարհին, սկսանի կարգն օրհնութեան։ Նախ Կաթուղիկոսին ընդ երկոտասան եպիսկոպոսացն զգեստաւորելով, և յետ աստուածային օրհնութեանցն՝ հեղլով ի նա շիթ մի ի մեռոնէն օրհնելոյ ի սրբոյ Լուսաւորչէ մերմէ, որպէս և զաջն պատուական յոսկեզօծեալ արծաթապատեան ի զատակի՝ մխեն ի նա, և անդէն և անդ սկսանի եռալ ամենայն նիւթն, որ ի սան անդր։*

*Իսկ կաթուղիկոսն ինքնին՝ ձեռնադրի, զօծութիւն սուրբ և զքօղ ընդունելով ի գագաթան, ի ձեռն չորից մայրաքաղաքական արքեպիսկոպոսացն Այրարատոյ, Բջնոյ, Սիւնեաց և Աղբակայ։*

**Տեղապահ.** *այս բառ հնարեալ է ի հայումս փոխանակ ղայմաղամ բառին Պարսից, որ առ նոսա նշանակէ զփոխանորդ կամ տեղապահ իշխանի։ Արդ և տեղապահն անուանեալն պիտակաբար և եթ կրէ զայդ անուն, ըստ որում ընտրութիւն կաթուղիկոսի ի մէջ մեր, պարտի լինիլ ազգային հաւանութեամբ։ Զի՞րդ և իցէ, ձայն նորա՝ և արտաքին շուք պատուոյն երկրորդ է հայրապետին, և յանդամս խորհրդարանի նորա՝ նախապատիւ և գահերէց։*

**Խորհրդարան** *կամ սինհոդոս հոգևորական կառավարութեան համօրէն Հայաստանեայց, ի հնումն կախէր միայն զընտրութենէ կաթուղիկոսին, ուստի և ո՛չ թիւ անդամոցն որոշեալ և ո՛չ գործ վաւերական ինչ յառաջ գայր անտի։ Բայց զկնի յաղթութեան Ռու-*

*սաց, որոշեցաւ թիւ անդամոցն կայանալ ի նա ինքն ի Կաթուղիկոսն իբրև յաթոռակալ, ի չորս եպիսկոպոսունս ի չորս վարդապետս, յատենադպիր, ի գանձապետ, և ի պրօկուրօր, և զհոգաբարձուն ատենի նշանակէ։ Ունի խորհրդարան էջմիածնի և զՋերծալ, այսինքն թագ և նշան կայսերութեան Ռուսաց՝ ընդ սրբոյ Աւետարանին եդեալ ի սեղանի ի ճակատ անդր խորհրդարանին, ուստի պարտաւորին մարմնաւոր իշխանք ի դիպել հարկին՝ անսալ ամենայն բանաւոր վճռոց սինհոդոսին և կատարել ըստ այնմ։*

Աթոռակալ. *այն է, որ զհոգ կառավարութեան գիւղօրէից, և կալուածոց էջմիածնի յանձն առնու։ Եւ դատէ զամենսեան ըստ հաճոյից կամացն իւրոց, գրաւորականին ոչ անսալով օրինաց։*

Գործակալ. *այն է, որ ընդ ակնարկութեամբ աթոռակալին իշխէ մշակաց, անդոց, սերմանելոյ, հնձելոյ, ախոռաց, գոմոց, մարագաց, և որոց ի կարգին։*

Զիթապանի *գործ էր պահել զամենայն վառելի և ուտելի ձէթ վանաց, զկաշի, զմորթ զամենայն գործիս վարելոյ և ցանելոյ, զպարան, զճոպան, զճամբար, զմաճ, զլուծ, զսամի, զսամոտէն, զցաքան, զտափան, զկամն, զհեղան, զհոսելի, և զամենայն ինչ։*

Գինէպան *ունէր զիշխանութիւն գինւոյ և ամենայն ըմպելեաց, ուստի և բարեկամք բազումք էին նորա։*

Տնտես *նա է՝ որ ունի զհոգ խահանոցաց վանացն և զներսի, զսառնատան, զմածնատան և ամենայն եփեցուն ընդեղինաց։*

Աւագ լուսարար *նա է, որ ունի զբանալիս մասանց խորանին, զպահարանաց և զգաղտից. սատիճանաւ միշտ երկրորդ է տեղապահին։ Բնակութիւն սորա լինի ի մոմատան անդր, և ունի ընդ իւրև բազմութիւն միջակ և ստորին սատիճանի լուսարարաց։*

Գանձապետ *նա է՝ որ ունի զհաշիւ ելից և մտից Աթոռոյն, և հոգայ զպէտս հանդերձից միաբանիցն ամենեցուն։ Յառաջին ժամանակս զանազանութիւն զգեստուց կախէր զարդեաց և զյառաջադիմութեանց զգենողացն, բայց այն բարի կարգ մեծապէս խանգարեալ էր առ մեօք։*

Հիւրընկալ *է՝ որ ունի զվերակացութիւն դրսի և ներսի Ղազարապատին, և ընդունի զուխտաւորս և զեկս յօտար աշխարհաց՝ որպէս և զհիւրս։*

Գրագիր *է շարադրիչ և գրիչ կոնդակաց և գրոց Հայրապետին և խորհրդարանին սրբոյ։*

Ծաղկարար *է ծաղկիչ կամ նկարիչ կոնդակաց Հայրապետին, յո՛յժ յարգի համարեալ ի ժամանակի մերում։*

Տպարանապետ է՝ որ ունի զհոգ տպագրատան Աթոռոյն, այլ արուեստին միանգամայն անտեղեակ։

Գրքապետ է՝ որ ունէր զբանալի գրատան Աթոռոյն, ուր յամին միանգամ հազիւ մտանէր, և այն՝ մանաւանդ վասն ցուցանելոյ զայն երևելի անցաւորաց։

Ժամօրհնող ասի նա՝ որ զառաջին տեղին ունի ի ձախակողմեան դասուն և օրհնէ զժամն։

Ժամասացք են ընտիր ձայնաւոր և երաժշտութեան տեղեակքն ի միաբանից, որք որոշեալ ի հասարակաց դասուէն՝ կարգեն ըզյատուկ իմն դաս աստի և անտի՝ ընդ դասագլխովք իւրեանց, որոց միայն է գործ երգել զերգս օրհնութեանց և շարականաց։ Հասարակութիւն միայն բամբ հետևէ նոցա։ Մի ի զարմանալեաց էր այն՝ զի և ես որոշեցայ յայս դաս, ո՛չ վասն ներդաշնակութեան ձայնիս, որ գլխովին ձախ էր և է, այլ վասն ի բերան գիտելոյ զժամագիրս և զշարական, և յիշեցուցանելոյ դասագլխի մերում զյաջորդութիւնս տանց նոցա, որ շահէր ինձ զամենայն արտօնութիւն ձայնաւոր եղբարց, զի զպաշտօնէից և նուիրակութեան հաւասար նոցա զտանէի, այն ինչ քան զիս գիտունքն յուսմունս գրոց՝ սակաւունքն շատանային։

## ՈՒՍՈՒՄՆ

Նահանգ ոտնկոխ գոլով այս սահման յազգաց օտարաց, ո՛չ երբէք կալաւ ինքեան զհիմնաւոր կարգ ուսման։ Եւ թէպէտև յիրաքանչիւր դարս ծաղկեցան ի նմա արք հոյակապք և երևելիք յիմաստըս գրոց, այլ կամ առ ի չգոյէ հիմնաւոր հաստատութեան տպարանաց, և կամ ի մեծածախն լինելոյ գործոյն, էր՝ որ ի ժանիս ժամանակին ծասքեցան արդիւնք նոցա, և էր՝ որ յանկեան ուրեք փոշեթաղեալ և անխնամ կացին մնացին։

Արդի եղանակ ուսման ի սուրբ Էջմիածին՝ էր կրկին. խցի և վարժատան։ Այն որ խցի էր աշակերտ՝ միանգամայն և սպասաւոր, ուսանէր զոր ինչ գիտէր վարդապետ իւր. ըստ մեծի մասին՝ ըզփիլխս, զերգս, զսաղմոս և շարական։ Սակայն և մարդասիրագոյնք ի նոցանէ, թէպէտ ինքեանք անտեղեակք, եթէ գտանէին զոք դասատու ազատական արուեստից, ո՛չ ինչ ի ծախսն խնայելով, առաքէին զմանկունս իւրեանց առ ոտս նոցա՝ ուսանիլ և զայն։ Եւ այսպէս՝ ուսումն ոմանց ի նոցանէ նախանձելի լինէր բազմաց, և տկարացն և աղքատաց իրաւացի պատճառ յուսահատութեան։

Իսկ վարժատանն ուսումն միջասահման իմն էր յայսմիկ ժամանակս։ Քանզի հարիւրաւոր մեծամեծ և փոքր մանկունք խառն և խուռն հաւաքեալք ի մի վայր, ընդ դաստիարակութեամբ ծերունի վարդապետի ուրուք, որ ո՛չ բաւականանայր զոնէ խօսել և բառս ինչ ընդ միոյ ի նոցանէ. սա ի նմանէ, և դա ի դմանէ քաղէր զոր ինչ և գտանէրն։ Ի հնգամինից անտի ցքսանամեանս պարտական էին զմի և նոյն պաշտօն պաշտել միշտ։ Վասն որոյ ընդ հարկանիլ գիշերային երրորդին, որ սովորաբար հնչէր զկնի հաւախօսին, յառնէին մեծամեծքն ի նոցանէ, և յետ միանգամ և երկիցս ազդարարութեանցն ի զարթուցումն, մական ի ձեռս հարկանէին զստնդիսն ի քուն յառնել յաղօթս առ Աստուած։ Բաց ի սովորական աղօթիցն, երկար ըստ ինքեանց, սովոր էին միաբանք ուխտիս ասել և զերիս կանոնս սաղմոսաց յիւրաքանչիւր աւուր ցտարին բոլոր։ Մանկունք դեռ աթութայից լեզուիս անծանօթ՝ պարտաւորէին յոտն կալ երբեմն ըստ ժամս երիս և չորս անդադար. և տոկայցե՞ն բա՞։ Աստի սա յաղթահարեալ ի քնոյ յորսայս անկանէր ի վայր՝ բուռն զօրութեամբ. անտի նա խոյս տայր ի խորշ ինչ սնատակի և սեղանոտանն, և խորդայր ի քուն մեռօրինակ՝ ի վերայ տամուկ և ցրտասառոյց սալայատակին։ Այն ինչ ի վերայ հասանէր յանկարծ վարժապետն բարեգութ, աքացւովք իւրովք հալածել զքուն նորա, և բռնցօքն վտարել ի բաց զսարսուռ սառնամանեաց։ Ուսանելիք էին նոցա առհասարակ, փոխք և շարականք եկեղեցւոյ, աղօթք Նարեկայ, մասնաւոր աղօթք առ սուրբ կոյսն Մարիամ, և առ այն սուրբ՝ զորոյ ոք զանունն կրէր։ Այլ ի վեր քան զամենայն խնդիր էր ազատական արուեստից, առ որ իբրև որոջք անարատք յաղն որբութեան դիմէր մանկտին՝ ուր և գտանէր։ Բայց մեծ և հասարակաց տուն, որպիսի էր Աթոռն սուրբ՝ պէտս մեծ ունելով այնպիսեաց՝ որքան աւելի գտանէր այնքան աւելի և կարօտ երևէր նոցա։

## ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

### ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԻՄ Ի ՄԱՍԻՍ

1816. Ի հնգետասաներորդ աւուր ամսեան մայիսի տէր Պօղոս վարդապետ, Թունի ուղեցոյց, զոր և Դալիվալի կոչէին, և ես՝ ընդ անագանելն տունչեան ելաք յէջմիածնայ[91], և վարեալ ի հիւսիսոյ՝ և ապա ուղիղ ընդ արևելս գնացեալ՝ զվկայարանօքն Շողակաթի և Հռիփսիմեայ՝ եկաք ի հանգուցեալն եկեղեցի Սրբոյն Գրիգորի, զոր

Ներսէս Շինող Հայրապետ Հայոց կառոյց յԱռապարին, և զոր յետինս արարին հակառակաթոռ կաթողիկոսարան համօրէն Ազգին: Քառածիր հիմունք պարսպաց նորա և քառաթիւ սիւնքն հաստակառոյցք, որք իբրև բրգունս ի միապաղաղ վիմաց ձուլեալս հզօր շաղաղօք կրոյ և ձուոյ՝ յանկման անդ իւրեանց անգամ՝ երևեցուցանեն զնախնի մեծափառութիւն տաճարին վայելչութեան: Զաւերմանէ սորուն չունիմ ինչ ստուգիւ ի գրոց մերոց, եթէ թողցուք զԱռաքել Դաւրիժեցի ի շփոթս գրոց իւրոց[92]: Այլ Պօղոս վարդապետ յետ ցուցանելոյ ինձ պարզողաբար զամենայն պղտորմունս հնութեանց յաւել ասել, թէ յաւուրս տիրապետութեան Սէֆաֆեանց յաշխարհին Պարսից[93], իբր 300 ամօք յառաջ՝ կուսակալ Երևանայ, ո՞ գիտէ յումմէ դրդեալ, առաքէ այսր զմի ի հաւատարիմ պալատականց իւրոց, հանդերձ բազմութեամբ Պարսիկ սպասաւորաց: Ընդունի զնոսա առաջնորդ սորա հիւրամեծար յարգանօք, ուտեն և ըմպեն առհասարակ. և յարուցեալ զկիսով գիշերոյն սպանանեն զմի ոմն յուղտապանաց խանին մեծի, և արկանեն ի դուբ ինչ վանացն: Եւ յառաւօտուն զարթուցեալ իբրև յանգէտս զչարեացն կատարելոց՝ որոնեն զայրն, և գտեալ զդէշ նորա ի դուբ անդր, իսկոյն աղաղակ բառնան, ի վանականս նորա արկանելով զվնասն բովանդակ: Զայս առիթ պատեհի առեալ, ասէ, հրամայէ իւրոց ածել դնել ի մէջ եկեղեցւոյն երկոտասան խորգս վառօդոյ, և ի խուսել բանակին հուր հարկանել ի նոսա, որոց բորբոքեալ բուռն զօրութեամբ պայթուցանեն զկազմութիւն շինուածոյն և յերկիր ի վայր տապալեն: «Այս այսպէս պատմի՝ ասաց երանելին, բայց նշանք հանգուցմանն, կրկնեաց, ո՛չ ցուցանեն զդոյն: Տե՛ս, զի եթէ վառօդով ցնդեալ լինէր շինուածն, պարտ էր մասանց նորա բացատ ի միմեանց՝ խառն ի խուռն անկանել, որք չեն այնպէս: Ուրեմն յաւէտ* յերկրաշարժէ եղեալ զպատահարն ճանաչեմ, քան թէ յո՛ր և իցէ արտաքին բռնութենէ»[94]:

Ճշդիւ որոնեցաք գտանել մեզ արձանագրութիւնս ինչ յաւերակացն միջի, այլ չեղև հնար: Զի՞նչ զարմանք, թէ այնպիսիք կամ ընդ հողով թաղեցան, և կամ ի նախանձաւորաց զեղծուցեալ անհետացան, զի մի՛ և յիշատակ նորա կացցէ՛ զկնեաց: Թերևս վերջինն ի վարկուածոյս խորհուրդ ի միտս արկցէ ընթերցողաց խորհել,

* Աւելորդ իմն համարիմ երկրորդել, զի և ես դարձ արարեալ ի Հնդկաց՝ բազմիցս պատահեցայ ի տեղւոյն, և ամենևին ճշմարիտ գտի զկարծիս վարդապետիս սրբոյ իմոյ, թէ և ինքն չէր անդ ի ժամանակին:

թէ ապառումն մտօք գրել ախորժեցայ, քանզի և ի վերայ ոք բերել հնարի, թէ ընդէ՞ր ապա ո՛չ և մեծամեծ այն մնացորդք աւերակացն եղծին։ Առ որ պատասխանեմ, զի ի ծախսն խնայեցին. մանաւանդ այնու՝ զի յորժամ զարթեաւ ոգի հնասիրութեան յէջմիածին, և ամենայն ոք անվրէպ ընթեռնոյր և գտանէր (մանաւանդ Յովհաննէս վարդապետ Շահխաթունեանց՝ այր ներհուն ի հնութիւնս աշխարհի և Ազգի մերոյ)[95], թէ ընդ որմովք սորա կային մասունք նշխարաց սրբոյ Լուսաւորչին Հայաստանեայց, և բերել հանելն խորհէին ո՛չ ոք առ ի վճար ծախուցն յառաջ ժամանէր. թէպէտև յայտնի՛ գիտէր, թէ յերևիլ նոցուն ի լոյս, առաւել քան զգումար ծախուցն՝ զանբաւութիւնս գանձուց շահէին։

Տիրապէս կոչի այս տեղի՝ Առապար, զի է աւազախիր խճակուռ դաշտ ինչ՝ ի վեր ելնդացեալ բարձրացեալ քան զշրջապատեալ տարածութիւն մեծի դաշտին ի Շարուրայ ցՇիրակ. զոր ի հնումն ոռոգէր առուն գետ հանեալ ի Հրազդանայ, այլ այժմ անջրդի է։ Անկանի յարևելս էջմիածնայ իբրև երկու մղոնօք հեռի ի նմանէ։

Յառաջ խաղացեալ աստի իբրև կիսով հրասախի, հասաք ի տեղին անուանեալ Քէշիշ գօլի, լիճ քահանայի թարգմանեալ ի մերս, որ լքեալ և ամայի որպէս և էրն, տակաւին երևեցուցանէր զկերպարանս ցամաքեալ լճի, զորով արկանէր ճանապարհն՝ որ հանէր յԵրևան քաղաք։ Բայց գետակ ինչ յայսոսիկ կողմանս Արարատեան դաշտի՝ չիք ուրեք տեսանելի. և ի գետոյն Քասաղայ այսր հանեալ ջուր, դուն ուրեք նշմարելի։ Այլ առընթեր սորա ի հիւսիսոյ կողմանց, ընդ ամենայն տարածութիւն Առապարին մինչև ցԵրեք բլուրսն Երևանայ, որք այժմ անուանեալ կոչին Իւչթափէ՝ ըստ պարսկաթուրք բարբառոյն, ձգէր առու վտակափոր և ցամաքեալ. և ի տեղիս տեղիս հզօր պարսպօք յառնէր ի խորոց և ի փորոց՝ ի հաւասարութիւն զուգակշիռ ընթացից ջրոյն, զոր որպէս ի վերագոյնդ յիշեցաք, կամեցաւ վերստին բանալ Սարդարն Երևանայ՝ ծախիւք էջմիածնի։ Զայս վտակ, զոր հանին հինք ի Հրազդան գետոյ, առ ոտամբ Ծիծառնաբերդն անուանեալ բլրոյն՝ յանդիման Կոնդայ. վէմս՝ կամ լաւ ևս ասելով ժայռս մեծամեծս ծակելով և ընդ մէջ հոսեցուցանելով զայս ջուր։

Յառաջ խաղացեալ միով ևս հրասախաւ հասաք ի Փարաքար գիւղ Հայոց բերդապարիսպ, և ագաք անդ զայն գիշեր։ Միջավայր է այս գիւղ ընդ էջմիածին և Երևան։ Ունի գետակ հանեալ ի Հրազդանայ առ ստորոտովք։ Երեք բլրոց, որք ոռոգելով զայգեստանս նորա պարարտապտուղ, և զանդորրայ արգաւանդ՝ երջանիկ ուրեմն

առնէին զբնակիչս նորա, եթէ չէր անյագ կեղեքումն Պարսից, և անդադար ծախք երթևեկացն խոշս մեծամեծս եղեալ նմին։ Ունի այս գիւղ ի հիւսիսոյ ճանապարհին և զհանք կաւօճառի, այսինքն օճառի կաւոյ, զոր աշխարհն գիլ անուանէ ըստ Պարսից։ Որ է կաւ իմն սերտացեալ իբրև զքար դեղնագոյն կանաչ, զոր բերեն անցաւորք ճանապարհին և սանին բեռամբք ի մերձակայ գիւղօրէս իբրև զվաճառ կանացի, զի կանայք երկրին յարգեն զսա քան զօճառ՝ ի մաքրութիւն հերաց իւրեանց և յաճեցութիւն նոցա։ Ի կաւոյ աստի թուի եղեալ անուան գեղջն՝ Փարաքար, որ ըստ զուտ հայկաբանութեան՝ փրփրաքար նշանակէ, թէպէտև այժմ կրճատմամբ հնչեն։ Ի մէջ բերդագեղջն է եկեղեցի իմն հողաշէն. այլ արտաքոյ պարսպին է մատուռն մի հնաշէն յո՜յժ և լքեալ՝ Միրանաւոր կոչեցեալ՝ ի մէջ այգւոյն։ Կամուրջն քարաշէն ի վերայ վտակին Փարաքարայ՝ փոքրիկ է և գեղեցիկ, այլ ի ձմերան միայն պիտանի։ Զի յամառան առ պակասութեան ջուրց վտակիս այսորիկ, անցորդք ոչ երկարեն զուղին, այլ ընդ մէջ անցանեն նորա։

Վաղայարոյց ընդ առաւօտն՝ հասաք ի գլուխ Երից բլրոց յանդիման Երևանայ, որք ի հարաւոյ կողմանէ նորա երկայնին դէպ ի ձորն Հրազդանայ։ Ի բարձանց աստի նորա, որպէս երբեմն Նոյեանց՝ յամպահամբոյր ի կատարէ լերինն մեծի Այրարատայ՝ յԵրևան հանդիսանայր անդրանիկն ի ծնունդս քաղաքաց երկրի՝ Երեւան. միշտ երևելին։ Ի հարաւոյ նորա անկանէր դաշտն ընդարձակ և լայնածաւալ մինչև ի կէտ հորիզոնի տեսութեան աչաց՝ ցՄեծն Մասիս, լի անհամար գիւղօրէիւք, բուրեբեր անդաստանօք, ծառալից այգեօք, և կարկաչահոսին հզօր վտակօքն Հրազդանայ, Մեծամօրի, Նորգայ գետոյ, Քառասնաղբեր, Մամռի, և այլոց անհամար առուաց և վտակաց՝ նոցուն ազգակցաց, որք արծաթափայլ ժապաւինէին զոգջի՛ր զյարադալար կանաչ պատմուճան դաշտին, հրաշալւոյն ի մէջ ամենայն երկրի։ Իսկ ի հիւսիսոյ՝ բարձրաբերձ լերինք Զագայ և Գառնոյ, նախերևան առարկայք նահապետական տեսութեանց, որպէս և ընթերակայ բլուրն Բոլոր Կոնդ կամ Ղըռ անուանեալ, երբեմն քարակարկառ արևակէզ, իսկ այժմ ի շնորհս շինութեան սարդարին Երևանայ՝ փոխեալ յայգի վայելուչ, զաշս տեսողացն խաղէին սքանչելի համակրութեամբ բնութեան ընդ արուեստին ճարտարութեան։ Նա և ամրոցն անմատոյց, և մասն քաղաքին՝ որ ի բարձանց երևին, զոգջի՛ր զգլուխս յարուցեալ և յԵրևան կոչէին զմեզ։ Այս*

* Ամենայն բլուրք կոնդ կոչին յԱրարատ, բայց այս տիրապէս կոչի Բոլոր Կոնդ։ Կոնդ թաղն Երևանայ ևս գոլով ի վերայ բլրոյ Կոնդ կոչի, զոր չէ արժան

Կոնդ թուի ինձ անուանեալն ի նախնեաց Բլուր Գինւոյ. ո՛չ միայն ի սակս արդեան այգէստ վայելչութեան իւրոյ, որ նոր իմն չէր, այլ ի հնուստ և խանգարեալ, և առ մեօք նորոգեալ միայն,—ո՛չ ի սակս բոլորակ Քարակարկառին՝ որ հայի ի բերդն Երևանայ և յաւերակս Դունայ՝ մինչև ցայսօր սրբազան իմն համարեալ վասն տեառն Եղիսէի կաթուղիկոսի Հայոց՝ մովսիսանման անդր կալոյ և զձեռս յաղօթս առ Աստուած ամբառնալոյ՝ վասն յաղթութեան զօրացն Հայոց, այլ և ի սակս դրից իւրոց. զի զօրք Հայոց ի Դարունից եկեալ ո՛չ պատահէին հարաւային եզերացն Երասխայ, որպէս դնէ հնախօս մեր, այլ արևմտեան եզերացն Հրազդանայ՝ ընդ որ անցանել պարտ էր ի դիմելն ի Դուին։ Նա մանաւանդ՝ զի ի հարաւոյ Երասխայ չիք բնաւ ինչ ջրարբի, յորում այգի կամ տունկ երազել կարիցէ ոք։ Այսպէս սղալի և հայրն Ջամչեան յասելն զԳեղամայ, թէ անց ընդ Երասխ, կառոյց զՓառախոտ և զՑոլակերտ, ապա եկն յԱրմաւիր, և կրկին անցեալ ընդ Երասխ՝ գնաց յեզր Սևան ծովու[96]։ Արմաւիր գոլով ի հիւսիսոյ Երասխայ և Սևան առաւել ևս ընդ հիւսիս նորա, տարադէպ շփոթութիւնս առնէ պատմութեան։ Խորենացին միայն գետ յիշէ, առանց որոշելոյ զանունն, և այն գետ նորա Հրազդան է՝ և ո՛չ Երասխ։

Ի խոնարհ խաղալով աստի՝ մտաք յայգեստանեայս Երևանայ յաջմէ և յահեկէ, մինչև ի Թալարն Սարդարապատ՝ յանդիման բերդին Երևանայ, և իջեալ ի ձորն Հրազդանայ՝ անցաք ընդ կամուրջ նորա երեքկամարեան և քարաշէն, ապա ամբարձեալ ընդ զառ ի վերն գերեզմանաց Պարսից՝ եկաք յԱնապատն Ջորագիւղայ[97], ուր իջուցեալ զվարդապետն՝ չոգայ իսկոյն ի տուն մօր իմոյ, և արժանացայ շնորհաց մայրենի օրհնութեան նորա։

Թուի թէ ծիծաղիցիս զինև՝ եթէ ասացից, թէ այն մեծ կիսագունտ երկրի, զոր Կոլոմբոսն եգիտ, և յանուն Ամերիկոսի՝ Ամերիկայ վերաձայնեցաւ, իցէ՝ ո՛չ համայաւիտեան վերնոյ մերոյս կիսագնտոյ, այլ նորաստեղծ իմն։ Որպէս և քո հայեցեալ ի գիրս նախնեաց՝ և ո՛չ յիշատակեալ ինչ գտեալ ի նոսա՝ զնախնութենէ քաղաքիս Երևանայ, զծաղու եկեսցես զինև՝ ի պնդել իմում, թէ այդ անուն եղաւ նմա ի Նոյէ անտի. յորժամ բացեալ զտապանն և տեսեալ զբարձրութիւն լերանց Կոտէիցն* և ասաց. «Ահա՛ երևան»։

---

շփոթել ընդ սմայ, զի նա անկանի յարևելից գետոյն յանդիման Ծիծառնաբերդ բլրոյն. Իսկ սա ի հարաւոյ գետոյն յանդիման Անապատին և բերդին։

* Կոտայք և Նգատուն գաւառք են Այրարատայ։ Կոտա և Նադ անուանք տանց, բնակութեանց և շինից են ի Հնդիկս. զո՛ր օրինակ Կալի-Կոտա, Դև կոտա,

Ա՛ռ դու որպէս և կամիս, գրեցից և ես որպէս և կամիմ. դու զինն ծիծաղեա՛, և ես զբաղտիւ իմով, զի ո՛չ ամենայն մատեանք ազգին ի ձեռս անցին, և ո՛չ գնեայ ի սակաւուցն սակաւք[98]։

Արձակաքաղաք է Երևան՝ լայնածաւալ դրութեամբ, զի յստորոտէ Կոզեռայ լերին, ընդ Կոնդն մինչև ի Զորագիւղ՝ յարևմտից և ի լանջակողմանցն Նորգայ, յիւրում փակէ զքաղաքն գոգացեալ լերամբք, և զանհնարին զառիվայրս ձորոյն Հրազդանայ՝ որ հայի ի Բոլոր Կոնդ։ Ա. Շհար, կամ առաջին թաղ քաղաքիս, ըստ մեծի մասին բնակեալ ի հայոց ազգէ, ունի զերկուս եկեղեցիս ըզՊետրոս և զՊօղոս։ Տունք նորա ունին զառաջեօք պարտէզս մեծամեծս, աւազանս և առուս ջրոյ, հանեալս ի վտակէն Նորգայ։ Բ. Ջօրաւր[99] առընթեր առաջնոյն ի հիւսիսոյ յարևմտից՝ ունի եկեղեցի յանուն Անանիա Առաքելոյն, և տունս և պարտէզս ջրարբիս։ Ի վերուստ սորա է լեառն գերեզմանաց, Կոզեռն անուանեալ, ի պատճառս Կոզեռ վարդապետի ուրումն[100] անդր թաղեալ լինելոյ։ Գ. Կոնդ՝ երրորդ թաղ քաղաքիս անկանի առ ստորոտով լերին Կոզեռայ. ինքնին գոլով լեառն փոքրիկ, ծայրածայր բնակեալ ի Հայոց, ունի եկեղեցիս երկուս։ Պարտէզք և այգիք նորա ոռոգանին ջրովն Քառասնաղբեր, որ և Ղրխբուլաղն անուանի, և Մամռով։ Դ. Զորագիւղ՝ չորրորդ թաղ, առ ստորոտով Կոնդայ կայ, և բաժանի յերիս կիսաթաղս, վերինն կամ Քարափի թաղ, որ սկսեալ յԱնապատէն Զորագեղայ՝ ձգի ի սպառուածս Կոնդայ, և աւարտի ի ծառատունկ զառ ի վայրին, բարձր յոյժ և ընդարձակ տեսարանօք և պարտիզօք բարգաւաճեալ։ Ստորինն, որ կոչի Ձորի թաղ, կառուցեալ է ի հիւսիսոյ Հրազդանայ խիտ առ խիտ տամբք, մի ի վերայ միոյ յարուցելովք, այլ ի զուարճալեացն ո՛չ թերի ամենևին յառարկայից, վասն զի ի ներքուստ Հրազդան գետ, և մեծ և փոքր անուանեալ առուք հարիւրաւոր աղօրեաց և դնկից նորա. որպէս և համօրէն Բոլոր Կոնդ պարտիզացեալ՝ յանդիման կացուցանեն բնակչաց նորա տեսարան հրաշալի։ Իսկ վերջին հիւսիսային և արևմտեայ թաղն կոչի Կարբւոյ թաղ, ըստ որում ի վերջին աւերածս Կարբւոյ Արագածոտանն՝ առ Քասաղ գետով՝ մասն ինչ բնակչաց նորա այսր գաղթեցան[101]։

**Անապատն Զորագիւղայ**՝ զոր ես Արամօնս համարիմ կայուած կաթուղիկոսարանին, ի վերայ մեծի սեպհոյն կառուցեալ, ապարանք

Եագոբ. Զանգնագոր և այլն։ Ինձ թուի թէ առաջին նահապետք Հնդկաց նախ յայտանիկ դաշտս Այրարատայ բնակեալ՝ և ապա ի Հնդիկս անցեալ, յանուն հին Հայրենեացն կառուցին բնակութիւնս իւրեանց։ Ապա թէ ո՛չ ընդէր այս նոյնութիւն բառից ի մէջ այսքան հեռաւորութեանց[102]։

իմն է համարելի, քան զհոգևորականդ, Անապատ։ Դիրք նորա, աւազանք, ջուրք, և պարտէզք զառաջեաւ, և ամենայն վայելչութիւն դաշտին ընթերակայ, և կեդրոն խոխոջիւն, բնակարան երջանկութեան սուլթանին Թուրքաստանի յօրինեն զնա, ու՞ր թէ աշխարհատեաց վանականին։ Երեք եկեղեցիք են ի սմա. մին յատկապէս անուանեալ սուրբ Սարգիս՝ պատկանի ժողովրդեան Ջորագիւղայ և Կարբւոյ. երկրորդն Անապատ՝ մատուռն փոքրիկ, ուր առաջնորդ Երևանայ՝ այսինքն կաթուղիկոսն Հայոց, կամ յաջորդ նորա կատարեն զառտնին աղօթս իւրեանց, իսկ երրորդն սուրբ Յակովբ, որ է ի միւս բակ Անապատին. առ որով էր ի հնումն աւերակ ինչ ապարանից, և ի միջի նոցա աշտարակ հզօր[103], զոր յետոյ զկնի յաղթութեան Ռուսաց կործանեցին և մաքրեցին զտեղին, յարմարելով զայն պարտէզ խաւարտից ի պէտս յաջորդին Երևանայ։ Ընդ մէջ Անապատիս այսօրիկ, Կոնդանն և Շհարի թաղին, անկանի Ե. Նոր թաղ, որ ի հնումն գոլով այգի մեծի խանին Երևանայ, անուանեալ կոչէր Խանլը բաղ, իսկ այժմ Նոր թաղ կոչի ի սակս գաղթականաց Հայոց Մարաղայ և Խոյայ անդր բնակելոյ, ուրանօր շինեցին նոքա եկեղեցի հոյակապ։ Մեծագոյն ի մզկիթս իսլամաց քաղաքիս՝ անկանի յարևելից այսր Նորոյ թաղի. շինուած գմբէթաւոր և փառացի, աշտարակս ունելով հում ինքեան։ Բակն քառակուսի, աւազան ջրոյ ի միջի նորա, և շրջապատն՝ խուց և ուսումնարան մոլլայից նոցա։ Ի հիւսիսոյ սորա է հրապարակ հզօր և քարաշէն՝ վաճառանոցին Երևանայ, որոյ յարևելեան դիմաց բանի վերնայարկ, և կրկնաշար համթիւք իւրովք՝ շուկայն պաստառավաճառից, որոյ երկայնածաւալ դրութիւն յանգի ի փոքրիկ ինչ քառակուսի հրապարակ յարկեալ հզօր գմբեթաւ, որոյ ի հարաւոյ՝ ընդ ճակատակողմն երկայնութեան վաճառանոցիս բանի դուռն բաղանեաց Հաճի Խանումայ, տիկնոջ Յուսէյն խան Սարդարին Երևանայ. յարևմտից դէպ ի Կոնդն կոյս՝ կրկնաշար կրպակք ճոնից և մաշկակարաց, ի հարաւոյ յարևելից կամ դէպ ի բերդն՝ հանութք մանրավաճառաց, իսկ յարևելեան կոյս մեծի հրապարակին՝ անկանի այլ իմն շուկայ գմբէթայարկ և գեղեցիկ քան զառաջինդ՝ որ աւարտի ի պանդուկ ինչ անուանեալ Գիւրջի քարվանսարա։ Արտաքոյ սոցա՝ որպէս երեք կողմանք մեծի հրապարակին, նա և արտաքոյ նորա ընդ հիւսիս՝ ձգին այլ ևս հինգ հարիւրաւոր հանութք ազգի ազգի վաճառաց, ըստ մեծի մասին ունելի իրաց, պղնձագործաց, դարբնոցաց, և որոց ի կարգի սոցա։ Ի կուսէ վաճառանոցիս կայ և հրապարակ մեծ յոյժ, որ քերեալ զՇհար թաղիւ՝ առ ստորոտով լերին Գառնւոյ՝ հասանէ

ցամուրն Երեւանայ՝ ընդ յարեւմուտս։ Սկսեալ ի վտակէն Նորգայ մինչեւ յափունս Հրազդան գետոյ եւ Մեծամօրի՝ է դաշտ լայնատարած եւ բերրի յոյժ յոյժ, զորոյ արմաւեացն նմանիս չբերեն երբէք տեղիք Արարատեան նահանգին առհասարակ, մանաւանդ զցորենոյն՝ որ ուղտատամն անուանեալ կոչի կամ դէվադիշի։ Զայս դաշտ՝ ջրովն եւ ամենայն պատկանելովք իւրովք գնեաց մեծանուն Գրիգոր Եղիազարեան՝ իշխան կարբեցւոցն Երեւանայ, եւ շնորհեաց ամենայն Հայազգի բնակչաց քաղաքին ի ժառանգութիւն՝ ազատ յամենայն հարկաց։ Զայս իրաւացի արտօնութիւն նոցա անվթար պահեցին Պարսիկք, այլ Ռուսք բռնաբարել կամէին։ Ունի մերձ ամրոցին անտառիկ ուռեաց, եւ ի նմա ջրհեղ ականակիտ ջրոյ, որ ընդ ստորերկրեայ անցս երթեալ ի միջնաբերդ անդր՝ ոռոգանէ զպարտէզս ապարանից բդեշխին, եւ հոսի ի Հրազդան։ Ամուրն Երեւանայ, որոյ շրջապատ վասն առ ձիաւորի տեւէ ցժամ մի եւ կէս, անկանի ի հարաւոյ արեւելից քաղաքին։ Երեքին կողմանք նորա յարուցեալք են ի հիմանց սրբատաշ քարամբք ցերիս կարգս բարձրութեան, ապա սկսանի հողաշէնն, շուրջ ունելով խրամս խորինս եւ ջրալիրս։ Իսկ հարաւային մասն նորա, յորում են ապարանք բդեշխին, կառուցեալ է ի վերայ բարձրաբերձ եւ հզօր քարաժայռի ձորոյն Հրազդան գետոյ։ Ունի դրունս երիս, եւ ստորերկրեայ գաղտակուղի ճանապարհ ստորիճանեալ մինչեւ ի գետն անդնդային, ուստի ի ժամանակս պաշարման առնուն ջուր բնակիչք բերդին։ Մեծանուն Հայ արուեստաւորն Կարապետ՝ կառոյց աստ ի հարաւային եզերս գետոյն զգինի վառօդոյ՝ կամ լաւ եւս ասել՝ զվառօդարան. եւ աստ հանեալ ի գետոյն դարձոյց զնա, ո՛չ ինչ ընդհատ ի շողեշուրջ գործարանաց։ Զնոյն կառոյց եւ ի հիւսիսոյ գետոյն՝ վասն որիզոյ։

Ի խաղաղութեան ո՛չ ոք ի քաղաքացւոցն բնակի յամրին. այլ ի խռովութեան իւրաքանչիւր թաղականք քաղաքին շինեալ ունին անդ առանձին թաղս՝ եւ անդր ամրանան։ Սարդարն կառուցեալ էր ի սմա մզկիթ փոքրիկ եւ գեղեցիկ յոյժ, զոր զկնի յաղթութեան փոխադրեցին Ռուսք յեկեղեցի, վայելչագոյն եւս քան զառաջինն, թէ՛ արտաքին պայծառութեամբ շինութեանն, եւ թէ՛ ներքին բարեպաշտութեամբ վախճանի նորուն։ Որում Սուրբ Նիկողայոս անուն կարդացին, յանուն կայսեր կամ պաշտպան սրբոյ իւրեանց։ Յանդիման բերդին յայնկոյս Հրազդանայ անկանի քարադաշտ ինչ բոլորակ, որ կոչէր Աստուծոյ սրտ, կամ Եօնջալըղ։ Աստ կառոյց Սարդարն՝ ամարանոց գեղեցիկ՝ Ռալար անուանեալ, եւ զառուայն բովանդակ փոխեաց յածս խաղողոյ եւ ի դարաստան տնկոց, զրախտ իմն յօրինելով զտեղին ի վայելս աչագեղ հուրեաց իւրոց։

Սկսեալ աստի ցՆրեք բլուրսն՝ գոգացեալ Հրազդան գետոյ՝ ծոցէ շուրջանակաւ վքարադաշտ իմն աղխախեալ բլրովք, յորս խաղան առուք ականակիտ ջրոց, և պարտիզեն պտղովք զսար և ըզձորսն ամենայն։

Կրկին ճանապարհ անկանի ի Թալարայ. մին ընդ Բոլոր Կոնդ՝ որ տանի յԱշտարակ և յԱպարան. և միւս՝ ընդ այգիս Նորագեղայ՝ որ տանի ի Փարաքար և յէջմիածին։

Մէլիք Աբրահամ Հայկազուն իշխան Երևանայ՝ հանդերձ Սահակաւ որդւով իւրով, հարիւրապետ Գաբրիէլ՝ տէր Սիսական գաւառին կամ Գեղարքունեաց, Բարսեղ աղա՝ Դաւիթ հօր եղբայր, և այլ բազմութիւն իշխանաց՝ յայցելութիւն եկին սրբոյ վարդապետիս մերոյ. և յետ բազում ասից և լսից՝ հրաւիրեաց զնա Սիսականն տէր ի տուն իւր, որ անկանէր առ ոտամբն Կոզեռայ՝ ի հիւսիսոյ Զօրաւորին։

Այս իշխան աստուածասէր, թէպէտև յԵրևան բնակէր, այլ ըզտարազ և զլեզու Սիւնի զգենոյր և խօսէր։ Յառաջադէմ էր առաջի բդեշխին, և ի կարիս ազգին ատենահաս օգնական։ Երթևեկութիւն իմ առ վարդապետն սուրբ՝ նորանոր շնորհաց արժանի արար զիս։ Վասն զի միանգամ և երկիցս խօսակից եղեալ ընդ ազատերամ գերդաստանի նորա, այնքան շարժեցի առ իս զգթութիւն իշխանիս, մանաւանդ թէ և բարեպաշտուհի տիկնոջ նորա, մինչ հարցափորձ արարեալ զազգէ և զտանէ իմմէ՝ կոչեաց առ ինքն զմայր իմ, և գրե՛թէ քեռացեալ ընդ նմա՝ խնդրեաց ընկալաւ զիս ի նմանէ յորդեգիր իւր։ Եւ յայնմհետէ գթութիւնք տան նորա ո՛չ միայն առ իս ինքն ամփոփեցան, այլ և սփռեալ ծաւալեցան առ ամենայն գերդաստան մեր, որոց մեծապէս կարօտէաք ի ժամանակին։

Տենդէր տակաւին վարդապետն սուրբ, ուստի և ո՛չ կամէր երկարել աստ, թէպէտև ես փոխանակ միոյ՝ երկուց մարց եղեալ որդի, և գերդաստանին գլա դրապատում. ի միոյ կողմանէ զսէր, և ի միւսոյ՝ զարմանս առատս քաղելով ինձ՝ ո՛չ բնաւ յօժարէի հեռանալ մեկուսանալ ի նոցանէ։

Կացաք աստ ց19 Յունիսի։ Եւ յայնժամ հարիւրապետն Գաբրիէլ հրաւիրեաց զվարդապետն սուրբ յայցելութիւն գիւղօրէից իւրոց։ Եւ իբրև պատրաստեցաք ի չուն՝ տեսեալ հայրագիր իշխանին թէ ի ձին բեռանն հեծանելոց էի՝ որ հազիւ հազ յոտին կայր, հրամայեաց սարել զմի յերիվարաց իւրոց և մատուցանել ինձ՝ հաւանութեամբ վարդապետիս, յոր իբրև հեծայ՝ մոռացայ թէ վանական եմ, և եղէ որպէս ժիպակ ի ջերման։

20. Ելաք բազմութեամբ առն և ձիոյ. և իբրև միով ժամու հասաք ի Նորգ գիւղ փոքրիկ յարևելից Երևանայ՝ կառուցեալ ըստ արդի անուանակոչութեանն ի թև ինչ համանուն լերին՝ որ ի հնումն* Ջրվէզ անուանէր։ Ունի եկեղեցի յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ առ որ խմբին ուխտաւորք յամենայն սահմանաց Արարատեան նահանգին ի Նոր կամ ի Կարմիր կիւրակէի՝ զկնի մեծի Զատկին։ Ունի կաւ աղնիւ և սպիտակ, ոչինչ ընդհատ ի կաւոյն Արծափայ, յորմէ կերտեն անօթս ազգի ազգիս և բերեն յԵրևան ի վաճառ։ Բնակիչք նորա առ հասարակ բրուտք են և այգեգործք, ուստի և յուխտաւորել աստ ժողովրդեանն՝ մեծապէս շահին. նախ վաճառելով նոցա զգինի իւրեանց, որով զեղխեալ ուխտաւորաց՝ պտօն ուխտին սրբութեան փոխեն ի զբօսանս և եթ, և երկրորդ՝ զպուլիկս ջրոյ բրտեալս ի կաւոյ իւրեանց, յորոց պարտական է գնել իւրաքանչիւր ուխտաւոր մերձ զհինգ կամ զվեց՝ ի խաղալիս տղայոց, և ի խաչալուայս մնացորդացն ի դարձին։

21. Ջրվէժ երիւք ժամուք հեռի ի Նորգայ ընդ արևելս՝ է գիւղ հին Հայոց, կառուցեալ ի լանջ ինչ լերին։ Դաշտավայրք և ծործորք սորա ընդ այլոց արգասեաց՝ բերեն և զկտաւատ աղնիւ յոյժ։ Բընակիչք սորա յատուկ հին ճարտարութեամբ հանեն զձէթ բուսոյս այսորիկ՝ և բերեն վաճառեն յԵրևան ի շրջակայս նորա։ Ուր ի յարգի է յոյժ, մանաւանդ յաւուրս պահոց, զի բազումք ի բնակչաց քաղաքին և գիւղօրէից նորա՝ զձէթ Ջրվէժայ նախապատիւ համարին՝ քան զշիրապաղտ Վաղարշապատայ, որ այն ինքնէ իւղ կնճթին։

22. Դարձեալ յարևելս կոյս գնացեալ ընդ հարս լերանց և ծերպս վիմաց՝ յել և էջ անհնարին, հասաք ի վանս Սուրբ Գեղարդայ, ի հիւսիսային արտեան ինչ լերինն Գառնոյ, որ յաղագս լինելոյ Սուրբ Գեղարդայ անդր՝ յաւուրց անտի Լուսաւորչին Հայաստանեաց. յայս անուն սովորեցաւ ազգն կարդալ զանուն հրաշալւոյն և հնագունին յարարս նախնեաց մերոց։

Վասն քաղաքին Գառնոյ՝ ունիմք առ Խորենացւոյն մերոյ, թէ՝ շինէ Գեղամ զայս ձեռակերտ, և կոչէ զանուն սուրբ Գեղամի։ Յետոյ ի թոռանէ նորա ի Գառնկայ նորոգեալ՝ անուանեցաւ Գառնի[104]։ Յանցանել ժամանակաց շինեաց աստ արքայ Տրդատ ամրոց հզօր որձաքար վիմօք և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք և բարձրաւանդակօք՝ ի համար քեռն իւրոյ Խոսրովիդխտոյ. գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլէն գրով[105]։ Սա ի յետին հեղինակաց

*Անկանի յեմակ ինչ Գառնոյ լերին, ուստի վիժէ ջուր յորդ ի խոնարհ, յորմէ և զանունն ընդունի։

ոմանց, նոյնպէս և ի ռամկէն Երևանայ՝ կոչի մինչ ցարդ Թախտ Տրդատայ։ Մնացորդք ինչ աւերակացն մինչ ցայսօր ժամանակի՝ յայտ առնեն զնա լինիլ արդարև գործ հզօր քաջի բազկաց հաւատացեալ արքայիս[106]։ Իսկ յաղագս շինութեան քարափոր եկեղեցւոյ Այրեվանից, այսինքն այր կոփեցեալ վանից՝ որ այժմ սուրբ Գեղարդն վերաձայնեալ, ո՛չ ինչ պակաս մեծութեամբ, ընդարձակութեամբ և բարձրութեամբ իւրով քան զՍաղմոսավանքն Արագածոտան, կոփեալ ի մեծէ իմն սեպհոյ ամբարձելոյ յարտևան լերին, որ ունի քառասուն խորանս բարձրուցածս, յորս մատչի պատարագ, ոչ ուրեք յիշատակի ինչ։ Ոմանք համարին զսա շինուած Լուսաւորչին մերոյ, այլ ամենայն աշխարհն տայ զայն Տրդատայ մեծի, յաւուրս կենդանութեան Լուսաւորչին կառուցեալ։ Եւ արդարև հայելով ի զարմանալի ճարտարութիւն կոփածոց, յանօրինակ նորութիւն ձևոց, և սքանչելի ճարտարութիւն քանդակացն, որով և ի մեծամեծ ծախուցն անբաւութիւն, ո՛չ ոք երկուանայ համարել ըզգործն յաւէտ ևս հնագոյն քան զժամանակն Տրդատայ, յառաջ կամ զկնի Շամիրամակերտին[107] մեծի, յորժամ աշխարհ՝ ամենայն պարապէր այսօրինակ կերտուածոց։ Այս եկեղեցի միայն անշարժ եկաց ընդդէմ բռնութեան մեծի շարժին դիպելոյ յամի Տեառն 1679, ուր Թախտն Տրդատայ և ամենայն շրջակայ վանորայք երկրին՝ հիմն յարևն տապալեցան։ Անխնամ եկաց սա ընդ յոլով ամս, մինչև յետ յաղթութեան Ռուսաց, տէր Յովհան Մանուկեան Նախջուանցի, որ երբեմն վիճակաւոր քահանայ Հայոց Մադրասայ՝ ի Հնդկաստան, առեալ իւր զկնկուղ վանականութեան ի Տէր Յովհաննէ Կարբեցւոյ՝ Հայրապետէ մերմէ, գնաց անդ և նորոգ պայծառացոյց զնա յամի Տեառն 1833։

Թէ ի շինութեան և թէ յամայութեան սորա, ուխտագնացութիւն ազգին յընթացս կիւրակէից Յինանց՝ ո՛չ պակասէր բնաւ։ Սկսեալ ի Տփղեաց, ի Գուգարաց, ի Սիւնեաց, և յամենայն գաւառաց, և ի գաւառացն Այրարատայ՝ գայր բազմութիւն արանց և կանանց, և մատուցանէր աստ զուխտս իւր Աստուծոյ։ Այլ ահ մեծ էր մեզ ի ժամանակին՝ յերեսաց խառնիճաղանճ վրանաբնակ աստանդականացն Շաղաղի, Սէյդլու և Ղարափափաղ ազգաց, որոց կանայք խաշնարածք էին, և արք՝ աւազակք։ Սոքա ի ձմերան՝ ի դաշտս բնակէին, յամառան՝ ի լերինս աստ և անդ։ Թէպէտ կրօնիւք մահմետականք են, այլ զուրկ յամենայն վայելչութեանց մարդավար կենաց։ Մշակութիւն նոցա և դուզնաքեայ՝ անարուեստ և տարժանելի։ Խաշնարածութիւն՝ ամփոփ և անշայեկան իսկ։ Ի ձմերան՝ տունք նոցա

չուառ գետնափորք, իսկ յամառան, վրանք նոցա քուրձ կամ մէզար մազագործ։ Արք ազանին փակեղ ի մորթոց ոչխարաց իւրեանց, կապայ, բաճկոն, շապիկ և վարտիս, այլ ճենճոտս և պատառատունս։ Կանայք նոցա ի գլուխ պատատեն օղանման՝ զսեաւ քօղ իմն՝ հազիւ ուրեմն շերամեայ, զոր և կոչեն Թուխ փուշի։ Իսկ շապիկ և բաճկոն այնքան կարճ և փորաբաց, և վարտիս այնքան լայն՝ ըստ ծիսի Պարսից, մինչև հազիւ թէ ծածկեն զմերկութիւնս նոցա։ Սոքա հազիւ թէ գիտեն կօշիկն՝ թէ զինչ է, իսկ մանկտին՝ և զզգեստ ո՛չ։ Ճաթ կամ գարէհաց ընդ բանջար և թան՝ է միայն կերակուր նոցա։ Ակնուագոյն կիթք խաշանցն զրեթէ հարկի՛ զնան։ Կանայք՝ յետ զամենայն պաշտօնս զտանց և զանդոց կատարելոյ՝ պարապին երբեմն և ի ման բրդոյ և յանկուած խորգոց և խարարից. իսկ արք կամ ծոյլ ննջեն, և կամ յաւազակութիւն երթան։

23. Դարձ արարեալ աստի՝ հրաւիրեցաք ի վայելս թթոցն *Քանաքեռայ՝ որ անկանի յարեմտից հիւսիսոյ Երևանայ, և ոչ յարենւս ճարաւոյ նորա։ Ուրանօր Պօղոս վարդապետ վանական Սևանայ վանից, որ ի ծովուն Գեղամայ, դարձ արարեալ ի Վաղարշապատայ՝ պատահեցաւ վարժապետիս, և հրաւիրեաց զնա գնալ ի վանս իւր ի Սևան։

27. Երկու ժամու ճանապարհաւ՝ հասաք յաւերակսն Զազայ՝ հնոյ Կոտէից. յորոյ ի թիկանց է Բարձապի, յորում էին խարխուլք ինչ քարաշէն եկեղեցւոյ։ Զայս տեղի զկնի յաղթութեան արարին Ռուսք ամարանոց զօրաց իւրեանց, որոց ի բրել հիքեանց զգետնափորս ի բնակութիւն՝ յամի Տեառն 1832, գտին զերկուս սափորս լիս հնագոյն ոսկի և արծաթի դրամովք՝ յունական դրովք[108], առ կուսակալութեամբ Երևանայ՝ կնիազ Վասիլի Բէհբուդեանց Հայկազնոյ[109], և յաջորդութեամբն Գրիգորի եպիսկոպոսի Արղութեցւոյ Ծուկույն կոչեցելոյ, որք համարեցան լինել դրամք Արշակունի թագաւորաց մերոց. և բարձեալ ամբողջ առաքեցան ի գանձարան կայսերական ի քաղաքն Պետրոսի։ Զազ անկանի ի լեռնադաշտին, որ ի պատճառս անբաւութեան բողից, բոլեաց, ողորմակոթից, և այլ բազում ուտելի և բարեհամ բանջարաց՝ անուանէին Բողի լերինք։ Ունի վտակ հոսեալ յայսոցիկ լերանց, որ ոռոգեալ զանդաստան սորա, երթայ խառնի ի Հրազդան։

Յառաջ խաղացեալ վեց ժամուք՝ ընդ հիւսիս, հասաք ի մեծ գիւղն Ղարաքէշիշ, յարեմտից վտակին Հրազդանայ, և ագաք ի տան

*Քանաքեռ կամ Քամաքեր համարիմ գիւղ կամ զառաջին բնակութիւն Քամայ, զորով քերեալ գնաց ելից զՈւտիս մեր նահանգ, զՏուն Սևորդեաց։

ճրիցու տեղւոյն։ Լերինք Ղարաքէշիշայ կուայինք ի ստորոտս, դոյզն ինչ բերեն բուսականաց բարութիւնս, այլ բարձունք նոցա կանաչագեղ զարդարին դալարաւէտ սիզովք և ծաղկամբ գեղափայլիւք։ Պատմեաց մեզ տէր Պետրոս քահանայ՝ թէ կայր անդ տեղի ոսկեհանից։ Որ եթէ ուղիղ իցէ, քանզի ո՛չ կարացաք ստուգել, ուրեմն այնինքն է ոսկէհանքն Աբասաձորոյ՝ յիշատակեալ ի նախնեաց։

28. Ի Ղարաքէշիշայ հասաք ի Դարաչիչակ, ուր է գիւղն Հայոց Կեչրոր, և առ երի նորա եկեղեցի քարաշէն՝ մեծ և զարմանալի[110]. ուրանօր և ի վերայ Հրազդանայ կամուրջ, և առ նովաւ պանդոկ քարաշէն։ Այս տեղի, որպէս անունն ցուցանէ, նշանակել ծաղկանց ձոր, եղև վայելչարան իշխանաց Երևանայ՝ թէ ի ժամանակս Պարսից, և թէ՝ Ռուսացն տիրապետութեան։ Աստի անկանի ճանապարհ, որ տանի ի Բջնի կամ ի Փշնի՝ աւան մեծ և բերդաւոր, որ այժմ աւեր կայ։

29. Ընդ խորաձոր գետոյն ճանապարհ արարեալ թողաք ի թիկանց զհռչակաւորն ի վանորայս աշխարհիս՝ զմենաստան Մաքենեաց[111]՝ լքեալ մինչ իսպառ, և եկաք ի գիւղն Գեղամ՝ ի Գեղամայ կառուցեալ, Գեղարքունի գաւառիս՝ որ նիստ իշխանացն եղեալ բընիկ Հայկազանց. և այժմ անշուք հեծէր ի ձեռս նեղչաց՝ անհնարին տառապանօք։

Լաստեալ* ընդ ծովակն իբրև մղոնաւ և կիսով, հասաք ի կղզին Սևանայ** որ է բլուր՝ ի գագաթան ունելով զվանքն Առաքելոց, և ի նմա գրադարան մեծ՝ ձեռագիր մատենից նախնեաց։ Ի ստորոտս բլրոյ այսորիկ է անապատն Սևանայ՝ յանուն Տիրամայր կուսին կառուցեալ, ուր ճգնէին անապատականք իբրև ութն, և անմարմնոց համբերութեամբ գեր ի վերոյ ամենեցուն համբաւէր Մխիթար վանահայրն խստակեաց։

Սա գոգցիր թէ բոլորովին բերանացեալ՝ աղօթիւք ընդ Աստուծոյ խօսէր զտիւ և զգիշեր։ Բայց ի հասարակաց պաշտամանց եկեղեցւոյ մերոյ սրբոյ սակաւ[?]ին առ օրին՝ և զութն կանովնս Սաղ-

---

* Լաստ է բանի մի ձողք յիրար կապեալք առասանօք, և ի ներքոյ փչեալ տիկս դասակարգեալ, զի տանիցին զծանրութիւն, և այնպէս թիավարեալ ի կուսէ ի կոյս։

** Զվճիտ պատմութիւն Սևանայ վանից հանդերձ լուսաւոր ծանօթութեամբ Գեղարքունեացն պայազատութեան՝ գրեաց ի նորումս մեծանուն Զաքարիա եպիսկոպոս Դիլասպեանց Տփղիզեցի՝ այրն բանիբուն, իմ վարժապետ սատուածայինն[112], զորմէ ի ստորև։

մոսաց Դաւթի, զՆարեկ ողջո՛յն ի բերան ասէին, և ընթերցուածոց Սուրբ Գրոց անդադար հետևէին։ Միաժամ միայն ճաշէին, և այն՝ յերեկոյէ յերեկոյ։ Ի շաբաթէ զշաբաթ կերակուր նոցա էր խարշած ընդեղինաց կամ բանջարաց և եթ, իսկ յաւուրս միաշաբաթուց լուծանէին զպահս իւրեանց ի սոսկ սպաս թանեաւ։ Մեզ ձկունս որսային, բայց ինքեանք և հուպ անգամ ո՛չ լինէին։ Եւ այս՝ ո՛չ եթէ կեղծաւորաբար կամ առ ի ցոյց ինչ մարդկան, քա՛ւ լիցի, այլ դոգչէր յայն բնաւորեալ՝ մեռուցմամբ մարմնոց։ Քանակութիւն կերակրոց միոյ միոյ ի նոցանէ, զոր ուտէին ի միում պահու, մեծ էր, և կարծեմ բաւական մասկերին զաւուրս չորս, զի կշտապինդ յաղենային. և այնքան առողջք լին մարմնով, կէծ կարմիր դիմօք, և առոյգ ոգւովք և զօրութեամբ՝ մինչ ամօթ առնել զամենայն մըսակերս աշխարհի։ Իսկ Մխիթար վարդապետ վանահայրն, թող զխոշրութիւն խարազն զգեստուց և անձնաչարչար կոշկոճանաց՝ խառն ընդ ուխտի իւրում, ունէր և պարան նուրբ ձգեալ յարմոյ ցորմն խցի իւրում, և զամենայն զգիշերն՝ պարանոց ի վերայ եդեալ ննջէր աղօթիւք. զի եթէ, դէպ լիցի ինքեան յաղթահարել ի քնոյ՝ սեղմեց պարանին ընդ ուղն հարեալ՝ զարթուցէ խիկոյն։ Զայս և ես իսկ աչօք տեսի, յորժամ մանկօրէն պահ կացի հսկման նորա։

Այս ծովակ յարևմտից յարևելս երկայնի իբրև 17 մղոնօք, իսկ ի հարաւոյ ի հիւսիս՝ չորիւք և եթ։ Առ խորութեան նորա ջուրք կապտագոյն երևին, ուստի և ի լեզուն Պարս ու Թուրքաց Գեօկչա լսի, որ է՝ երկնագոյն։ Երեքտասան գետք մտանեն ի նա, և մի միայն Հրազդան ելանէ ի նմանէ, որ ընկալեալ զայլ և այլ վտակս ի յերանց գաւառիս, Մազազայ՝ Նգատանն և Կոտէից՝ մեծանայ յոյժ յո՛յժ, և բաշխեալ յանհամար յառաջս, ոռոգանէ զդաշտորայ աշխարհին՝ յարևմտից մինչև ի Վաղարշապատ, և ի հարաւոյ, մինչև ցխառնումն իւր ի գետն Երասխ։ Բերք Հրազդանայ՝ որ կոչի Զանկիբասար, առ օրին հաշուին լինել վեց լտերք ոսկւոյ, որ առնեն տարեկան 2190, և բովանդակին ի 13.140,000 ոսկի դրամ։ Բերէ այս ծովակ երկոտասան ազգս ձկանց՝ ըստ իւրաքանչիւր ամսոց տարւոյն, յորոց ոմանք սակաւաթիւ գոլով, կամ յայնպիսի ժամանակս տարւոյն ելանելով ուր կամ հունձ և հերկ ժողովրդեանն արգելու ի յորսալոյ, և կա՛մ տօթ արեգականն ի տանելոյ ի հեռաւոր տեղիս՝ յանծանօթից սակի լինի։ Այլ զորոց որսան անբաւ առատութեամբ՝ գրեցի յերես 36—73[113]։

Իշխանութիւն ծովակիս և Գեղամայ՝ ժառանգութեամբ իջանէր մինչև ի հարիւրապետն Գաբրիէլ. առ Պարսից իշխանութեամբ. այլ

զկնի յաղթութեան Ռուսաց՝ իրաւունք նորա՝ որպէս և այլ ամենայն ժառանգաւորաց՝ ընդ օրինօք անկան, և դարուց պիտէր ակնկալութեան՝ զվճիռն տեսանել։ Այժմ ի պատճառս գաղթելոցն Պայազիտայ և Մակուայ, ընդարձակեցաւ այս քաղաք գրե՛թէ յիւր առաջին շուք, ի քաջացն Մակուեցւոց առնլով զհոտ նախնի զօրութեան հնկայից իւրոց։ Տունք են նորա 1000։

Ի շրջակայս ծովուն Գեղամայ մինչև ի Ծաղկանցն ձոր, անթիւ բազմութեամբ եռային Ղազախ և Բօրշալու ցեղք Տաճկաց, և համագոյն վերոյ գրեալ խառնաղանճիցն՝ ո՛չ խնայէին կեղեքել և ի կենաց անգամ հանել զանցաւորս ճանապարհաց՝ առ որս հասանէր զօրութիւն ուժոյ իւրեանց։

Երկու ի մեծամեծ գաւառաց աշխարհիս Հայոց՝ որք անկանին զհիւսիսոյ ծովակիս այսորիկ, այսինքն են մասն Տաշրաց և բերդին Գագայ՝ յանուն տոցա Ղազախ և Բորշալու կոչելով, կարծիս իմն ծնանին յիս՝ գոլ ժողովրդեան այսոցիկ՝ մնացորդք ինչ նախնի եկամուտ ազգաց։ Որք սակաւ առ սակաւ հզօրացեալ տիրեցին գաւառացս, և յանուն ազգացն անուանեցին զնոսա։ Յաղագս Բորշալուաց՝ չունիմ ինչ ի հնութեանց, իսկ Ղազախ, կամ ըստ բուն ազգին հընչման՝ Կասակ, նոյն համարիմ ես՝ զորս ոմանք ի նախնեաց Կայսիկ անուամբ յիշատակեն յաւուրս Սմբատայ արքայի մերոյ[IV]։ Յորոց՝ որք յայնկոյս ծովակի բնակին, որ այժմ անկանի ընդ տէրութեամբ Ռուսաց, փոքր ի շատէ զկերպարան մարդավարի կենաց յանձինս բերեն, իսկ որք ի մասն կրօնակից Պարսից՝ գրեթէ գլխովին անմարդացեալք քրէիքուր գազանաց անապատի վայրագասուն բարս երևեցուցանէին։

Շնորհ ունիմք արդարև պաշտպանութեան Հայկազուն Իշխանի գաւառիս, ապա թէ ո՛չ վաղու՞ց արդեօք լեալ էաք որս ատամանց տոցա, առ որս համբաւեալ էր ճոխութիւն վանականաց աշխարհիս։

Կացեալ ի Սևան զաւուրս ինչ՝ դարձաք յԵրևան ի 27 ամսեան Յուլիսի։

Զայսու ժամանակաւ սարդարն Երևանայ կախեաց զփայտէ՝ զայր մի անծանօթ ազգաւ, որ գիտէր զբազում լեզուս, և հրաշագործ որ համբաւէր ի բերանս ռամկին։ Ասի թէ՝ այր դիւթ եղեալ սորա՝ ոչ միայն զանազան առ աչօք տեսիլս ցուցանէր ռամկին, այլ և գործս վատթարս և աղտեղիս նիւթէր և գործէր միշտ։ Յաւուր միում, այնինչ յապարանս իշխանին գտեալ, և տեսանէ զբազմութիւն կանանւոյ ի քաղհանաց անդորրէիցն դառնալ՝ երևեցուցանէ նոցա հեղեղ անձրևաց լճացեալ զճանապարհայն, ընդ որ զհանդերձս ի

վեր կալեալ յանցանելն իւրեանց՝ զամօթալի տեսարանս ցուցանեն, հեշտալիս աչաց Պարսից՝ ի զբօսանս ևեթ։ Այսպիսի խաբեպատիր և հեշտախտական միջոցք՝ որք առաւել ազդէին ի մանկտին և կանանին, հռչակ հարեալ նորա՝ առ ինքն գրուհէր աւո՛ր աւո՛ր զբազմութիւն նոցա։ Մինչ այնքան՝ զի և գեղեցիկն ի կանայս սարգարին ո՛չ ամաչէր ի տես գնալ կախարդին։ Այսպիսի բացարձակ չարագործութիւն հանապազ անյայտ մնալ ո՛չ կարէր. ուստի յիրաւի լինել իշխանին և ի սաստել կանանց իւրոց, իբրև եգիտ զնոսա յետին անոտիապաշտութեամբ նախապաշարեալս, կամ զոսա բնազանցութիւն ճշմարիտ հեշտութեանց առազաստ միայն առեալս՝ կալաւ զայրն չարագործ և ի կախաղան եհան զնա։ Գէշ նորա կեր թռչնոց եղև, և նեխեալ ի բաց լուծաւ. այլ դեռ ևս հաւատային թէ չէր հնար մարդկային զօրութեան մեղանչել նմա։ Ասէին ևս, թէ նա աներևոյթ կայր տակաւին ի քաղաքի անդ, և ում կամէր յայտնէր զինքն։

Ճանապարհ արարեալ ընդ հարաւ՝ թողաք զբերդն ի թիկանց, անցաք ընդ քարաշէն կամուրջ Նորգայ գետոյ, և թողեալ յաջմէ զՆորաշէն* և զՆորագաւիթ գիւղօրէս՝ առ եզերբ Հրազդանայ եկաք յԱղբաշ գիւղ. առ որով անցանէ Գառնոյ գետ՝ ապա ընթացիք. ընդ ամենայն ճանապարհն՝ յաջմէ ընդ յարևմուտս տեսանելով զՍուրբ Էջմիածին, որ վեց կամ եօթն հրասախօք հեռի ի մէնջ անկանէր, և ի յետուստ ի հիւսիսոյ՝ զԵրևան, հեզիկ ի վեր ընդ բլուրն բարձրացեալ։

Ընդ գետն ի վեր յարուցեալ՝ զտաք զաւերակս բերդապարիսպ հզօր քաղաքին, զորմէ հաստատէր Պօղոս վարդապետ, լինել մնացորդ նախնւոյն Դվնայ՝ Ոստանին Հայոց, զոր շինեաց Խոսրով արքայ, և զարքունիս ի նմա հաստատեալ՝ տնկեաց առ եզր նորա անտառս երկուս՝ զԽոսրովակերտ և զՏաճար Մայրին, ի հիւսիսոյ Արտաշատայ[115] կամ Խոր վիրապին։ Կրկին նորոգեցաւ յաւուրս սրբոց Վարդանանց, և Աբդլազիզ ոստիկանի Հագարացւոց։ Այլ ի վերջոյ եղծաւ ի սաստիկ գետնաշարժէ, որպէս և դիրք աւերակացն ցուցանեն։ Բլուր իմն փոքրիկ անկանի ի մէջ աւերածոցն, զորով շրջապատեն աւերակք ապարանից և տանց լայնածիր նստիք։ Ապա յաջորդեն նոցա փլածոյք բերդապարսպին, որք երևին իբրև բլուրք արուեստակերտք պար առեալ զմեծ բլրովն, յորմէ՝ որպէս ինձ թուի,

* Նորաշէն անկանի ի հարաւոյ բերդին, բնակեալ համակ ի Հայոց, իսկ Նորագաւիթ իբրև մղոնաւ ի հարաւոյ Նորաշինայ ունի երկուս եկեղեցիս, և բաժանի ի չորս թաղս, որք կոչին՝ Թուխ Մանուկ՝ ի կողմն Քալարայի. Ղարիպական՝ ի կողմն Ոլուխանլուայ. Գետակ առուի՝ դէպ ի Գառնի, և Բերդին թաղ՝ դէպ յԵրևան։

և զանունն էառ։ Այլ զարմանք մեծ են, զի ոչ ոք ի մատենագրաց մինչ ցայսօր ժամանակի, որոշակի տեղագրել հաճեցաւ զդիրս քաղաքիս այսորիկ։ Ոմանք դնեն զսա ի դաշտին Շարուրայ. ոմանք՝ յՈստան գաւառի, և ոմանք ևս նոյնացուցանեն ընդ մեծին Արտաշատու[116]։ Պատճառ այսորիկ այլ և այլութեան կարծեաց՝ թուի ինձ խափանումն գործածութեան անուան Մեծամօրի, որ է՝ զի նշանակէ զՍև ջուրն, և է՝ զի զԳառնւոյ գետն[117]։ Արդ սկսեալ յԵրևվանայ մինչև ի Նախչուան քաղաք, ընդ դաշտն Շարուրայ, թէպէտև կան զանազան ջուրք և առուք, այլ ո՛չ ոք յայնցանէ տիրապէս գետ անուանի, բաց ի գետոյն Գառնոյ, և ի գետոյն Շարուրայ, որ այժմ Արփա-չայ կոչի ի Տաճկաց. ուրիշ յԱխուրեանէն Շիրակուանայ։ Արդ՝ եթէ տարեալ զետեղիցէ ոք զայս քաղաք յափն գետոյն Շարուրայ, պարտ էր լինել նորա առընթեր Նախչուանայ, ուղիղ ընդ յարևելս Արտաշատու, և ո՛չ թէ ի հիւսիսոյ նորա, որպէս ակնարկեն ամենայն վիպասանք Ազգիս։ Իսկ եթէ առ Գառնի գետով՝ որպէս և է իսկ, չի՛ք անդանօր Մեծամօր, և ո՛չ խառնուրդ ընդ Երասխայ, զի ի Հրազդան խառնի այս գետ, և նովաւ հանդերձ յԵրասխ ընթանայ չորս ժամու հեռի ի խառնարանէն։ Անունդ Գառնոյ գետ՝ ո՛չ յիշատակի առ նախնիս. ուրեմն կայ ինձ ասել ստանօր, թէ Մեծամօրիւ նշանակեն նոքա զայս գետ։ Մեծամօր՝ զի ընդ անհնարին տղմուտս Երևանայ անցեալ ի Դվին, առնու զանուն Մեծամօրի, որ այն ինքն է՝ տղմային։ Բայց այն զի ի գահիցն գայ արքունեաց Գառնոյ կոչի այժմ յայդ անուն։ Զկնի Ռուսաց գաղթականք ոմանք՝ իբրև տունք 30, բնակին յաւերակս նորա, և հոտ առեալ ի համբաւոց, կոչեն զսա Արտաշատ, թէպէտև վրիպակաւ։

Աստ անկանէր ի հնումն Երազընդհան Տրի դից, դպրի գիտութեան Որմզդի ճարտարութեանն՝ մեհեան, զոր կործանեաց սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց։ Զսոսկ ուղիղ ընթերցուած գրութեան Ագաթանգեղայ[118] թողեալ ոմանց՝ այլ ընդ այլոյ ընթերցան, վարկան և գրեցին ևս։ Բայց եթէ Տիր անուն դիք իմն պաշտէր ի հնոց՝ անուանքդ Տրդատ, Տիր, Տիրան և Դարի—թիր՝ յայտ առնեն։ Նոյն կոչէր և Վարազ, ուստի վարազագիր մատանեաւ աղ կնքել և մատուցանել համարէր առ մեօք և առ Պարսեօք՝ ահաւորագոյն նշան երդման։ Որպէս անուանքս Վարազդէն, Վարազատուր, Վարազվաղան և այլն՝ ցուցանեն։ Կոչէր Դպիր, և ահա՛ Գրող և Ճակատագիր ի մեր լեզու յայտ առնեն զնա։ Իբրև բարկանան կանայք Արարատայ՝ ասեն. «Գրողն տանի՜ զքեզ»։ Կոչէր և Երազընդհան, զի այսր կոոց էր տալ կամ մեկնել զերազս, որպէս Հերմէսի առ

Եգիպտացիս։ Յանուն սորա և Անի ի հնումն Երազգաւորս անուանէր[119]. իբր յերազ եկողի, կամ զերազ մեկնողի տեղի։ Եւ զամենայն միահաղոյն առեալ՝ նշանակէր ո՛չ զԱրամազդ՝ Զևս՝ Յուպիտէր կամ զԱրև, որպէս դնէ բազմաշխատ հնախօս մեր[120], այլ զՓայլածուն, կամ զԱյրն՝ որ նախ զնա եգիտ և ի վերայ խօսեցաւ։ Յայլուր ցուցեալ է մեր զյատկութեանց սորա՝ ընթե՛րց. և համեմատեալ ընդ Հերմեայ կամ Մերկուրեայ այլազգեաց՝ գտանես զմեծ իմն լուսաւորութիւն զնախնի մտութենէ աշխարհիս Հայոց, քան զոր ոք ոչ համարձակի ստուգագոյնս յառաջ բերել։ Հնար է զհանուր իմն բազմաստուածութիւն ի մի միայն բովանդակել՝ յԱրևն, կամ յԵհովայն. բայց այդ ո՛չ է ճիշդ հնախօսութիւն։ Զայսմանէ և զայսպիսեաց խօսեցայց ի հատորն՝ որ ի վերայ Պարսից[121]։

28. Եկաք ի Խոր Վիրապ, շուրջ զորով անկանէին աւերակք մեծի մայրաքաղաքին համօրէն Հայաստանեայց՝ զԱրտաշատայն ասեմ, որոյ այժմ հետք ևս ո՛չ նշմարին[122]։ Ի վերայ կրկնագագաթ գլխոց բլրոյն Արտաշատայ՝ ունէր յառաջն դղեակ. այժմ յարևելեան գագաթանն և եթ երևի վանքն Խոր Վիրապայ Լուսաւորչին Հայաստանեայց, զոր ի նորոյ վերանորոգեալ էր Ներսէս վարդապետ ոմն. Համատափոր կոչեցեալ, միաբան Սրբոյ Կաթուղիկէին։ Ունէր ամրոց վիմապարիսպ շուրջանակի, ի մէջ ունելով զմեծ իմն եկեղեցի յանուն Տիրամօր, և ի հիւսիսոյ նորա մատուռն ինչ կառուցեալ ի վերայ Վիրապին անդնդայնոյ, ուր ճգնեցաւ սուրբն Գրիգորիոս զամս հնգետասան՝ իբրև որդի վերնամարտին Անակայ, այլ եւ անտուստ և լուսաւորեալ պայծառացոյց զհամօրէն Հայաստանեայս՝ իբրև որդի հոգևոր՝ առաքելոյն Թադէոսի[123]։ Վիրապն՝ համարեա՛ թէ առ անբաւ խորութեան իւրոյ՝ զտօթ և սառութիւն շնչոյ աղօթկերացն խափանեալ, պատճառս եւ յետագայից կիսով չափ լնուլ զայն հողով, և ի նմին յարուցանել զանգան։

Իսկ յարևմտեան գագաթի բլրոյն, որ ի թիկանց սորա՝ է սեպուհ հզօր, յորոյ վերայ ցուցին ինձ ոմանք ի վանականաց Վիրապին՝ զդրոշմ ինչ խաչանիշ, գծեալ ըստ ասից իւրեանց՝ մատամբ առաքելոյն Թադէի։ Առ ստորոտով բլրոյս՝ էր գիւղ իմն փոքրիկ, բնակեալ ի Սէյդլու Թուրքաց, որոց բնիկ պաշտօն է հուզկահարութիւն, թէև ի զօրանալ իշխանութեան բդեշխին՝ նուազեցան սոքա, և զդիմակ անմեղութեան զերեսօք ծածկեալ՝ գործէին զերկիր ի սնունդ։ Հեռի անկանի Երասխ ի հարաւոյ բլրոյս՝ իբրև զկէս հրասախի, իսկ խառնուրդ Մեծամօրի ընդ յարևմուտս նորա՝ իբրև երկու հրասախօք։ Սկսեալ աստի մինչև ի ծիր եզերացն Վաղարշա-

պատայ ընդ յարևմուտս, և մինչև ի Դէվալու (որ ինձ թուի զոլ Մարակերտն Շարուրայ՝ ընդ յարևելս, ձգեալ յերկայնութիւն), հարուստ իմն և լայնութեամբ ընդ հիւսիս և ընդ հարաւ գետոյն Երասխայ՝ բուսանի տեսակ ինչ ծղօտաւոր միզոյ, որոյ բունն է սպիտակափայլ և խուղալից նման ելեկտրոնի, տերևքն նման սնձոյ, իսկ արմատն նրբաթել և ամփոփ։ Յարմատոց սստի սորա ծնանի որդն կարմիր, և մտեալ ի մէջ ցօղունից սորա՝ ուտելով երթայ և ելանէ ի ծայր նորա։ Ժամանակ ելանելոյ նորա սկսանի զմիջով ամսեան Յուլիսի, և տևէ մինչև ի վախճան Օգոստոսի։ Այս մեծագին բերք Արարատեան աշխարհիս, թուի թէ ի պատճառս սաստիկ բռնաբարութեան Պարսից ի վերայ ողորմելի շրջակայ գիւղականացն՝ խափանեալ կայր առ այժմ, թէպէտև յետոյ, զկնի յաղթութեանն Ռուսաց՝ Ծաղկաբար Սահակ եպիսկոպոս Կոնդեցի, վերստին երևելի հանդիսացոյց զայս վաճառ։ Քանզի յառաջնումն՝ օգնականութեամբ Սիմէօն վարդապետի՝ առաջնորդի վանաց Վիրապիս, և շրջակայ գիւղօրէից հաւաքեալ զմասնաւոր իմն քանակ ի սոցանէ, սպան գինւով և կրով, զմասն ինչ չորացուցեալ, և զմասն ինչ յիւղոյ քամեալ և լուսեալ, առ ի պէտս նկարուց ի վերայ թղթոյ՝ առաքեաց առ Նիկողայոս Ա. կայսրն Ռուսաց, և ընկալաւ ի նմանէ զանդամանդի մատանի առ ի տրիտուր մեծի երախտեաց իւրոց։ Եւ այս միայն չափեաց զնորա բովանդակ յոյս, վասն զի՝ այնուհետև հրաման եղև Ռուսաց դեհպետաց՝ աշխատ առնել առհասարակ զամենայն ժողովուրդս շրջակայ գիւղօրէից և հաւաքեալ զմիջատն՝ չորացուցանել և առաքել ի Պետրբուրգ։ Իւրաքանչիւր գիւղականի սահմանեալ է վարձ յարքունուստ 40 փարայ, կամ հինգերորդ մասն դրանւոյ Պարսից, այլ թէ դու, ընթերցո՛ղ, ընկալար ինչ, նոյնպէս և գիւղականքն ողորմելիք. զի իշխանք նոցա յափշտակեն զայն ի պէտս իւրեանց։

29. Ներսէս հայր վանացն ընկերեցաւ մեզ կիսով հրասախաւ ցափն Երասխայ, ուրանոր Սէյդլու գիւղականք նորա, որք էին միանգամայն վանացն պաշտօնատարք և լուսարարք, լցին փքովք բերանոց իւրեանց տիկս ութն մեծամեծս, կապեցին ի ներքոյ չորից մեծամեծ ձողոց, ձգելոց ի վերայ ընդ երկայնութիւն՝ զօրէն գերանաց ձեղուան, և ապա քաղեալ ի մացառացն մոշայի, որք անտառանման գրեա՛ թէ յեզերս Երասխայ, թաւանեցի պնդակազմ. և արարին մեզ քէլլէկ, որ այն ինքն է լաստ։ Իբրև կատարեցաւ բովանդակ գործ շինուածոյն, ողջունեալ զմիմեանս, ելաք մեք ի լաստ անդր և անցաք ի հարաւ առ ոտն Մասսեաց։

Իբրև ելաք ի ցամաք անդր, կալաք զերիվարս մեր, որք զերծեալ

ի սարուցն թողեալ էին ընդ լուղ անցանել զգետն։ Կացե՞ր արդեօք, ընթերցո՛ղ, առ ափն գետոյ մեծի՝ առ ի զնին անցի աշխուժագունին ի կենդանեաց ընդ ջուր, ուրեմն գրեալքն իմ ի գլուխ Տնկաբանութեան այսր գործոյ՝ ո՛չ ինչ տարադէպ երևին քեզ։ Իսկ թէ ո՛չ՝ ուրեմն ինձ իմա՛ իմա զվայելչութիւն և զվսեմ հետևանս նորուն։ Յուղի անկաք։ Ի հեռուստ ահաւորագոյնն բարձրութեամբ Մասիս, քանի գնայաք՝ խոնարհիլ սկսանէր, գոգցես հիրամեծար յատկութեամբ իւրով։ Ջէ՛ր դիւղ հաստատուն ուրեք, այլ օդայք, կամ վրանատեղիք ինչ Մարաց աստ և անդ։ Ի պատճառս անտառախիտ մացառացն մոշայի (իղունի), ամբաւութիւն չարախայթոց մոծակաց և մժեխաց շնչարգել առնէին զմեզ։ Իբրև երից ժամուց ճանապարհաւ հասաք ի զարհուրելի իմն վտակ Սևաջրոյ, որիշ անտի՝ որ բղխեալ յԱրագածոյ ստանէն ի հիւսիսոյ յարևմտից Վաղարշապատայ, խառնի յԵրասխ գետ։ Զայս համարիմ ես Ակն Գինայ, յիշատակեալ ի Խորենացւոյն, ուր անկաւ Արտաւազդ Երկրորդ[124]։ Պարզ է ջուր սորա, յորժամ յափն առնուցուս, այլ ի վտակին առ անբաւ խորութեանն այնքան սևանայ, մինչ ահ արկանել յոգիս հայեցողաց։ Ի վերայ ձգեալ գերանք երկու և եթ, յօրինէին ի կամուրջ, այլ այնքան վտանգաւոր՝ մինչ ձիով անցանել ընդ այն ո՛չ համարձակեցաք։ Պատմեաց մեզ Բունի, թէ երբեմն զերամակ մի զոմշոց բովանդակ եկուլ այս գետակ. և ընդ բան նորա ես ո՛չ զարմացայ, վասն զի թողլով զի եզերք նորա ճախնուտ անհնարին՝ պղպջան իբրև կաթսայ եռանդեան՝ կռիւ ուրեք չտալով ոտից, նաև անհնարին խորութիւն նորա կցորդեալ ընդ անձկութեանն, անելանելի անդունդ իմն առնեն զնա՝ որոց միանգամ անկանին ի ներքս։ Սա յԵրասխ խառնի։ Յառաջ խաղացեալ աստի յանջրդին արևակէզ, հասաք ի վտակ իմն որ հոսեալ ի Մասսեաց, զայ դադարկի յԵրասխ։ Յարևելից կուսէ վտակիս անկանէր ավերակ մեծի գիւղաքաղաքի, առ որով լայնածիր խարխլապարիսպ և փշաբեր տեղի այգւոյ իրիք, ուր նախ արկ ուռի նահապետ հերկոց աշխարհի, և ի գինւոյն ըղմայլեալ վճռեաց զապագայ վիճակ կենաց որդւոց իւրոց երեցունց, զուարճարան պարգևելով աշխարհի՝ զԱյրարատեան մեր աշխարհ. որպէս և մայր աստուածապաշտութեան զնա՝ և արուեստից կարևորաց մարդկան՝ դժխոյ մեծափառ։ Ա՛ռ քեզ յաստուածապատումն Սուրբ Գրոց զայգէգործութիւն, զհերկ, զհունձ, և զարմանալի այն ճարտարութիւն շինութեան Տապանին և Աշտարակին Բաբելովնի; զոր բնակիչք Հայաստանեաց ընդ չուելն ի Սենաար՝ իսկ և իսկ ձեռն արկին կառուցանել անդանօր։ Խոհակա՛ն ընթերցող,

Թուեա՛ թէ քանի՞ արուեստից կատարելութեան պէտք էին լայն շինուած, որոյ յետ աստուածասաստ կործանմանն՝ աւերակք ի չորեք հազար ամաց հետէ՝ կան և մնան տակաւին յապշութիւն մտաց ամենայն մարդկան։

Աստի ընդ արևելս անկանի քարահանքն մեծ կարծրագոյն գայլախազ քարանց, զոր հասարակօրէն ջրաղացաքար կոչեն։ Ուստի հատեալ զոյգ մի, և ընդ մէջ փորեալ, և լիսեռն անցուցեալ, լծկէին և մղէին դէպ ի Դավրէժ, առ ի պէտս գործատան Աբբաս Միրզայի։

Ընդ խոժոռ զառ ի վեր վտակին ընթացեալ մղոնօք երկու հասաք ի պարտէզ ծիրանեաց արդի Արկուռեցւոց։ Զի վասն անփութութեան ժողովրդեանն ո՛չ այլ ինչ բերէր տեղին, քան զծիրան և զայլ մասնաւոր համանման և դիւրահաս պտուղս. դրեա՛ թէ անտառայինս՝ համեմատութեամբ պտղոցն Երևանայ։ Ի հարաւային սպառուածս ծիրանեաց անկանի այժմեան Արկուռի, գիւղ մեծ Հայոց՝ իբրև 800 տանց, որ ունի իւր՝ և յատուկ եկեղեցի։ Եւ անդր ևս քան զայս իբրև մղոնաւ միով՝ անկանի վանքն Յակովբայ Մծբնայ Հայրապետին[125], բերդապարիսպ և քարաշէն՝ այլ անշուք։ Զհիւսիսակողմամբ պարսպին անկանին մարգք յարադալար սիզոյ, հովանացեալ ի ծիրանացն և յուռեննեաց՝ շուրջանակաւ, յորոց յարևելից կարկաչահոս անցանէր ձինահալ վտակ նորա։

Առաջնորդ վանացս Պետրոս վարդապետ ոմն, այր յաղթանդամ, խռուամօրուս, մրայօն և զարհուրելի. որ էր առաջնորդ միանգամայն և միաբան վանաց իւրոց։ Զի բաց յիւրմէ չունէր զայլ որ նթէ ո՛չ՝ զպառաւ մի մածնապան, զանդէորդ և զոբթարած։ Ի մէջ այլ և այլ պաշտամանց իւրոց, ընկալեալ էր և զաշալուրջ պահպանութիւն աքսորելոցն յէջմիածնայ, որում միայն պատշաճեալ։ Ծաղր տար էր յերեսաց նորա, և հիւրասիրութիւնն՝ դիմաց դժնդակութեանն համեմատ։ Որ յառաջին տեսութեան իւրում այնքան խոժոռս հայեցաւ ի մեզ, մինչև համարել մեզ թէ Երուանդն կենդանացաւ Արշակունի՝ հայեցիւք իւրովք սալացուցանել զմեզ[126]. գուցէ՛ վարկանելով զմեզ աքսորեալս յիւր սահման սառնամանեաց։ Բայց իբրև մատոյց նմա Թունի զկոնդակ Հայրապետին՝ զյանձնարարական՝ ընթերցաւ և ընկալաւ զմեզ ի ներքս, այլ դէմք նորա ո՛չ փոխեցին զբնականն ահեղութիւն։ Ճաշեալ էր սորա ի հարկէ՛, զի զկնի նախաճաշուն և նհարին յաջողեցաւ մեզ հասանել անդր. —բայց հրամայեաց զենուլ մեզ՝ ուլ մի, զոր ի սեղանն մատուցին եփեալ ամբողջ, հանդերձ անկանաւ միով լի մածնով, և ափսէիւ

մեծաւ պանրով, որք կացուցին զբովանդակ համադաս պարզութեան կենաց նորա։ Գինի ո՛չ պաշտէր անդանօր ի զեղխութիւն, թէպէտև առաջին գինարան երեւաց ամենայն երկրի։ Օղի և ցքի ամենևին ո՛չ, թո՛յնքն մահաբեր մարդկային կենաց։ Եղաւ սեղան. այլ մեկուսի եկաց հիւրամեծարն ասպնջական, և հրաւիրեաց ի նոյն զՊօղոս վարդապետ, որոյ գոլով հիւանդագին և խոնջեալ՝ և ձեռն մխել յայն դանդաղէր, թէ չէր յառաջ մատուցեալ առաջնորդիս. և հենգն ի նա արձակելով՝ մանրեալ զույն բովանդակ։ Զն էր Պօղոս վարդապետի ծիղ առ ծիղ ծաւքեալ զէթ զմին ի մասանց կենդանւոյն՝ մինչև ահա՛ քաղեցաւ յառաջնորդէս ամենայն միս յուղերաց նորա։ Յառաջ մատոյց ապա զմածունն՝ և ցկէսն վճարեաց. հաւատարմացուցանելով հիւրի խրոամ, թէ՝ «բարեխառնէր ըղչերմութիւն մսոյն»։ Եւ նոյնպէս զպանիրն՝ ասելով՝ թէ՝ «մարսեցուցիչ է»։ Եւ միա՛յն բարեխառնարար և մարսեցուցիչ, զի ո՛չ պայթեցին զախորժակ նորա. որ ծալեաց ի բերան և յօշս հինգ ընդ նոսա։

Յայս վայր յորին կացեալ պաշտէի զերանելիս, վասնզի՝ անարգութիւն մեծ էր յայսոսիկ ժամանակս աշակերտաց նստել ի սեղան ընդ վարդապետս իւրեանց։ Վասնորոյ իբրև տեսի զԾարայ ոգէփոխեալ յայս առաջնորդ՝ ջանացայ ճար առնել զխոյս, զի մի՛ սովամահ կորնչիցիմ։ Զմտաւ ածի, թէ դրդել և խունցուցանել ըղձեռահոգին Պօղոս վարդապետ ի սեղանակցութենէ նորա (որպէս բազումք առնէին) անհնարին էր ինձ վասն կրկին պատճառաց։ Մի՝ զի նա ո՛չ լսէր ինձ յայսպիսիս։ Եւ երկրորդ՝ զի սեղանն նորա էր՝ և ո՛չ թէ սորա։ Վասն որոյ հնարեցայ և զմայրագրութեան զանտեսի վանաց պատիւ ընկալայ, և այնուհետև կեանս վարեցի փափուկս ի կերակուր, և մաքուրս ի հանդերձ։

Ի տրիտուր բարերարութեանց բարեպաշտօն, այլ առ ժամանակեայ մայրագրի այսորիկ՝ ո՛չ ինչ ունէի ի ձեռին մատուցանել՝ քան ընթեռնուլ և բանալ նմա երբեմն զգլուխս ինչ Աստուածաշունչ Սուրբ Գրոց, զՊատմութիւն վարուց սրբոց, և երբեմն ես զհատուածս ինչ գրուածոց իմոց, այլ այս յաւէտ առ ի հրգեհ սնափառութեան իմոյ, և ի խայծ զարմանաց և սիրոյ նորա. որ զոգչիր զԱրիստոտէլն համարելով զիս մանկացեալ, առատութեամբ շնորհէր ինձ զսեր, զկաթն, և զամենայն ոգեպահուստ կերակրոց և պտղոց*։

* Թէպէտև երկուտակ կուզկացեալ յաւէտ ի վշտաց բուն յամաց, սակայն դեռ վառուն կայ յիս մանկութիւն, և ամենայն ինչ սիրելի նմին։ Յայց ո՛չ [illegible] ընոցանէ առ այժմ։

Արկուրի և վանքն Սրբոյն Յակոբայ միով և կիսով մղոնիւ հեռի ի միմեանց՝ յարևմտեան կողմն վտակին Արկուռոյ հոսեցելոյ ի Մասսեաց՝ անկանին ի լանջ անդ լերինն մեծի, ուր եզերի լայնաբաց բերան խորանդունդ վհին ամեհւոյ՝ կամ ձիւնաթումբ լճին: Սևութիւն շրթանց սորա, քարանցն խանձելոց, և անհնարին բռնութեամբ բացումն վհիս, յայտ առնէ զնա զոլ հրաբուղխ շիջեալ: Եւ իբրև այսպէս՝ նաև զհանք ածխոյ՝ եթէ փորձեսցի ի նմա հանճար բանիբուն տարրալուծի, և ո՛չ ձեռին արքունի: Աստի մինչև յաղբիւրին Սրբոյն Յակովբայ ձգի մղոն մի և կէս. զարդարեալ բոլանդակ անդորայիւք աստ և անդ, մշտադալար կանաչօք և ամենատեսակ բանջարօք: Անուանի է ի բերս լերին այսորիկ սունկն մեծ ասպարաչափ, պարարտ թարմ, և համեղ յոյժ: Ի վերայ աղբերկանն Սրբոյն Յակովբայ կառուցեալ է մատուռն փոքրիկ, որոյ ի հարաւակողմանէն բղխի կաթ առ կաթ ջուր յաւազան ինչ վիմափոր, զոր «Անհատական» անուանեն Ակոռեցիք, պնդելով՝ թէ առցէ՛ որչափ շատ և արագ և կամիցի ոք՝ ի ջրոյ աւազանին, դեռ կաթ առ կաթ հասումն նորա լնու իսկոյն զդատարկութիւն տեղւոյն, և ո՛չ պակասի:

Գերբնական հրաշից տո՛ւր դու, կամ բնական համակրութեան դեռ ևս զարմանալիս պատմեն զջրոյ աստի յայսմանէ՝ ամենայն ժողովուրդք երկրին: Ի գալ մարախոց ուրեք՝ գան ի բնակչաց նորա, և բառնան կժով նորով ի ջրոյ աստի, զոր և զգուշութեամբ մեծաւ տանին, չդնելով ի գետին: Զի թէ պէտ լիցի երեկօթս ուրեք առնել, արարեալ եռոտանի ի գաւազանաց ընդ միմեանս կապելոց, կախեն զկուժն զնմանէ, և իբրև հասանեն յերկիր իւրեանց՝ թափօրական հանդիսիւ ելանեն ի դաշտորայ, և կաթեցուցեալ զայս ջուր յառուանդոց և յակօս ցելից իւրեանց՝ աղաղակեն առ Աստուած: Եւ անտարմ ի տարմոց սարեկաց յանկարծ ի վեր երևեալ, որ յառաջն ոչ ուրեք տեսանելի՝ անհնարին արագութեամբ կոտորեն զանբաւութիւն մարախացն: Եւ եթէ դէպ լիցի ծանրանալ թևոց նոցա հիւթովք մարմնոց մարախացն կոտորելոց, գնան լուանին ի ջուր, և անդրէն դարձեալ սպառեն զմնացորդս նոցա: Վասն այսորիկ ուխտիւք և զոհիւք պատուի այս աղբիւր ի Հայոց և ի Տաճկաց միանգամայն:

Յաղբերէ աստի մարթիս ի վեր ելանել իբրև ասպարիզօք երկոքումբք, այլ ո՛չ առաւել, զի սկսանի ձիւնն թանձրամած: Եւ վասն այսորիկ՝ ո՛չ ոք իշխեաց ելանել ի կատար նորա: Իշխեցին, այո՛, սուրբն Յակովբ Մծբնայ, և Իբրահիմ փաշայն Բայազիտայ[127]. այլ մին վասն աղօթից և ճգնութեանց իւրոց՝ ընկալաւ ի հրեշտակէն

զփայտ փրկութեան աշխարհի: Իսկ միւս վասն յանդգնութեան և ձեռնիրութեան իւրոյ՝ ընկալաւ «զմահ», ըստ ականատես վկայութեան առաջնորդիս վանուց: «Այլ յանցանել ժամանակաց յանդրգնագոյն ևս գտաւ կայսերութիւն Ռուսաց,—ասէր մի ումն ի հարագատից սրբոյ Աթոռոյն,—որ առաքեաց ի Դուբլինայ[128] ոմս անհաւատս և Լուտերականս, որոց ո՛չ հաւատալով Սուրբ Գրոց, խմօրէն պատառել կամեցան զորովայն մօր համօրէն մարդկան, և ժպրհեցան ելանել ի կատար լերինն մեծի: Ա՜յ թէ ելին, հա՜, ո՛չ թէ ի կատար անգր, այլ ի կուզնորս: Տեսանե՞ս, եղբա՛յր, զզգունն արտաքս պալարացեալ յուս լերինն, անդր ելեալ անկեցին զխաչ, և առասպելաբանեցին թէ այն բարձրաբերձ և երկնանման լեառն Մասիս, էր միայն 9000 ոտն բարձր ի ծովէ: Կարելի՞ արդեօք»[129]:

Նռապատիկ է աստանօր օդ Մասեաց. ի վերոյ քան զաղբիւրն Յակովբայ՝ է ձմեռն մշտնջենաւոր, ի ներքոյ մինչև ցԱրկուրի՝ զարուն ծաղկաբեր, իսկ անտի ցԵրասխ՝ ամառն տօթագին: Եւ երբ աղբեր այսորիկ ընդ յարեմուտս՝ անկանի վիհն անդնդային, յոր ամօք ինչ յառաջ անկեալ մեծաքանակ լեռնաշեղջուած հատոր ձեան ի բարձրագագաթն Մասեաց՝ ելից զձորափոր նորա զամս ինչ. ուստի և ժողովեալ ջուրցն հալելոց՝ արար զնա լիճ անյատակ խորութեամբ: Զկնի ամաց միոյ ի յաջորդել ամառանն երկրորդի՝ բեկաւ ափ, մասն ինչ այսր ձինապաղաղ թմբոյ նորա, և յորդեաց արտաքս զայն սաստիկ և զահաւոր յորձանուտ, որ ի հիմանց սրբեաց զբովանդակ Արկուրի, և խարխլեաց զպարիսպ վանացն Յակովբայ[130]:

Բազում անգամ սառնապատի այս լիճ, և ի տապս ամառան: Ուստի քանի մի ուրբք յառաջ քան զգնալ մեր անտի՝ երկու ի Մարաց վրանաւ բնակելոց ի լանջակողմանս Փոքուն Մասեաց, անցանել կամելով յարևմտեան լանջակողմն Մեծին, և յուսանալով չափել ի քայլս ոտից զծանրատաղտուկ և զանհնարին խորաձորս Արկուրւոյ՝ ի վերայ երեսաց սառին սողալ սկսան: Այլ յանկարծ բեկանելով նորուն ի ներքուստ ի մի ումպ եկուլ զերկոսեան: Զկնի ժամանակաց գտին, ասեն, զհրացան միոյ ի նոցանէ՝ առ ի խէչ կառեալ ըղ-սառուցօքն, և ծանեան զկորուստ նոցա:

Երկու ևս այլ մարդիկ գազանաբեկ կորեան ի լերին այսմիկ, մինչ մեք անդր էաք: Կարծիք էին հայորերոյն, թէ առիւծ պատառեաց զնոսա, զի գտանի անդ:

Արարատեան բարձր Մասիս՝ որքան հռչակեալ ի Գիրս Աստուծոյ, նախահարց մերոց՝ և այլ և այլ ազգաց, այնքան տակաւին ևս

անձանօթ մնայ մինչ ցարդ ի մերոց և յօտարաց միանգամայն։ Եւ պատճառն՝ որպէս ես հասկանամ, ո՛չ անհոգութիւն թագաւորաց, ո՛չ ծուլութիւն ժողովրդեան, ո՛չ բարձրութիւն նորա, ո՛չ ձիւնապատութիւն, և ո՛չ անմատոյց կորդութիւնն եղև. քանզի բազում լերինք կան յաշխարհի՝ քան զՄասիս դժուարամատչելիք՝ ընդ որս ճանապարհ արարին մարդիկ և առնեն. մանաւանդ՝ Ազգ մեր։ Այս երևի, զի միայն պատկառելի խորհուրդ տապանին դադարելոյ ի գլուխ նորա, որով և արգանդ լինելոյ նորածին սերնդոց զարմիս մարդկութեան, յանյիշատակ հնութենէ և այսր պատկառանս իմն ածէր ազգի մարդկան չլրբանալ Քամօրէն և զառականս ծնողին բանալ[131]։ Մա՛րթ ինչ իցէ մարդոյ՝ ասաց Նիկոդիմոս ցօրինադիր վերստին ծննդեան մերոյ. անդրէն մտանել յարգանդ մօրն[132]։

## ԱՆՈՒՆ

Ի խաղալ տղայոց յԵրևան քաղաքի կոչեն զՄասիս «Մայր աշխարհ»։ Եւ այս նախնի աւանդութեանց խեշերանք իմն է՝ ի հաւուց և հարանց անցեալ. քանզի և երգիչք Գողթանն՝ առ Խորենացւոյն, յանէծս Արտաշիսի առ Արտաւազդ՝ յիշատակեն զայն ասելով. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս. զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս, անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես»[133]։

Այլ առաջին յանուանակոչութեանց սորա համարիմ ես անունդ «Առնոյ», որոյ յաւիտենագիր գոգցես յիշատակ գտանի ո՛չ միայն ի հնութիւնս աւանդութեանց աշխարհիս, որք զերգս եդեալ ի բերան Տապանին Նոյի դիմառնաբար ասել ետուն ցԳրգուռ լեառն մեր, թէ՝ «Գրգո՛ւռ, ա՛ռ զիս»։ Եւ նորա պատասխանի տուեալ՝ ասել թէ՝ «Գնա՛ ի Մասիս, որ բարձր է քան զիս», այլ և ի գաւառն Առնոյոտն կոչեցեալ։ Այս անուն զարդիս միայն ի վերայ գաւառին նշմարի, ուստի՝ թուի թէ հնագոյն և անգործածականն յանուանս լերին մերոյ է Առնոյ։

Երկրորդ անուն նորա և սեպհական համարիմ զԱզատն՝ նախագոյն քան զԱրամայիս՝ ուստի Մասիսն անուանեցաւ։ Հաստատէ զմեր կարծիս, կնոջ յղւոյ մեծ օրհնութիւն ի Հայաստան համարել և ասել. «Աստուած բարի ազատումն տայ քեզ», «Բարեաւ ազատիս» և այլն։ Կնոջ ծնելոյ ո՛չ ասեմք՝ ծնաւ, զի այդ կովուց և ոչխարաց է. այլ ասեմք՝ ազատեցաւ։ Այսպէս իրաւամբ կոչի Մասիս մեր Ազատ, այսինքն՝ մայր ազատեալ յերկանց ծննդեան իւրոյ։

Եւ եթէ ո՛չ այսպէս, ո՞ տայր համարձակութիւն պառաւանց Գողթանն զրուցել զԱրտաւազդայ, եթէ՝ «արգելեալ կայցէ յայրի միում, և երկու շունք հանապազ կրծեն շղթայս նորա»: Զկա՞ր ի Հայաստան ոք սիրող Արտաւազդայ. տրնա՛ կին, որդիք և եղբարք, որք ելեալ յայր անդր տեսանէին և ստէին զպառաւանցն առասպել: Չէ հնար ասել՝ թէ չէ: Ուրեմն յայտ է, զի նախնի նախապաշարութիւն, կամ լաւ ևս՝ որդիապարտ ակնածութիւն էր, որ արգել ժողովրդեան պատկառել ի վայրացն:

Զանազանութիւն կարծեաց միշտ ի տգիտութենէ յառաջ գայ, և եթէ մեծանուն մատենագիրն Մարշմէն[134] իմանայր զՀայ լեզուն, և աշակերտէր առմանց և աւանդութեանց մերոց՝ ոչ տանէր ըզԱրարատ տնկել ի Բակտրիա, պատճառ բերելով՝ որպէս թէ Սուրբ Գիրք յարևելից, ասեն, չուեալ մարդկանն ի Սենաար՝ որ ո՛չ համաձայնի, ասէ, դրից Հայաստանի, զի Սենաար Բաբելոն է, և Հայք ի հիւսիսոյ կայ նորա, և ո՛չ թէ յարևելից: Որով ո՛չ խորհի, զի Սուրբ Գիրք զամենայն երկիրն յայսկոյս Եփրատայ մերոյ՝ ուր Մասիսն կայ՝ Արևելք կոչեն: Եւ Կոստանդնուպօլսեցիք նաև զՓոքրն Ասիա՝ Արևելք կոչեն մինչև ցայսօր ժամանակի:

Կրկին է Մասիս, Մեծ և Փոքր: Մեծ Մասիս անուանի տիրապէս կոչեցեալն ի մէնջ Ազատ. այն անմատոյց ի մարդկանց, և ի ձիւնապատ գագաթ լերինն՝ ուր հանգեաւ տապան Նոյի: Եւ Փոքր կոչի ճիւղ նորա կամ գլուխն՝ որ ուղիղ ընդ արևելս դէպ ի Նախջուան անկանի. և ի բոլոր բնակչաց նահանգին անուանի Փոքր կամ Պստիկ Մասիս:

Թողեալ զաւանն Արկուռի՝ ուր բնակին մերձ 800 տունք Հայոց, և երկու մղոնօք ընդ դիր զառիվերն մղեալ՝ գաս ի վանս Սրբոյն Յակովբայ՝ առ վտակաւն Արկուռւոյ: Ապա ընդ ձորակն դէպ յարևելս հարաւոյ ելեալ ընդ սեպացեալ եմակն ի վեր՝ գաս յանդիման ահագին և սառնապատ վիրապին, ուր բնութիւն խառն ընդ պատմութեան անցից նորա ի զարմանս հնասիրաց:

Յարևելից վիրապին մեծի ընդ մատուռն՝ ուր բղխի աղբիւր Սրբոյն Յակովբայ՝ յարևելս շե՛ղ ի հարաւ դիմելով՝ յանքար և ի հաւասար հովիտս ծաղկածիծաղ դալարեաց՝ և հեզիկ ընդ զառիվերն բերելով, հասանես ի գլուխ Փոքուն Մասեաց, հրաշարան աչաց՝ շրջակայ և հեռաւոր առարկայիւքն: Յերևանայ կամ ի Նախջուանայ հայեցեալ՝ կարծէր ոք զկատար նորա այնքան սուր և տիգացեալ, մինչ անհնարին համարել և թռչնոց անգամ դադար գտանել ի նմին. բայց ելեալ ի վերայ՝ գտանես և զի՞նչ, ասա՞ղ յիշատակի վաղանցիկ

զուարճութեանց. սարաւա՜նդ ատփարակ իբրև վեց մղոնաւ շըր-ջապատի։ Ի կեդրոնին՝ ծով կամ լիճ ի ձեանց հալելոցն հաւաքեալ. սատի և անտի անտառ թեղօշի կամ թեղի ծառոց, յորմէ բնակիչք Արկուռեայ յամսեան Օգոստոսի հատաննեն ցախ ի վառոյթ և ի ցանկս պարտիզաց իւրեանց։ Ա՛յլ այս անտառ տիրապէս մացառ ասել պիտի. քանզի առ սաստիկ ցրտութեան տեղւոյն ո՛չ այնքան աճին և զարգանայ ծառք. տինա՛ պատահին ևս ամք, յորս ոչ բնաւ հալի ձիւն գագաթան Փոքու այսր Մասսեաց։

Արջու, ընձու, և առիւծու իսկ՝ երկիւղ շատ ցուցանէր ինձ առաջ-նորդ վանացն. կան և կատու, կուզ, և գրեա՛ թէ ամենայն տեսակք գազանաց և էրէոց։ Սունկ նորա մի մի վահան կամ ասպար. պա-րարտ, պարարուն, և բարեհամ։ Շուշան, օղին, բոլի, բոխ, զոխ և հազար այլ բանջարանի, որոց զանուանս անգամ ո՛չ գիտէի և ո՛չ գիտեմ, գտանին անդ։

Բայց որ առաւել վարձատրել կարեն զվաստակ ճանապարհ-որդին, և պատմութեան աշխարհի բանան զմեծ յայտնութիւն, են քանի մեծամեծ տապանք կճեայք, իբրև վեշտասան ոտնաչափ եր-կայնք և հինգ կամ վեց ոտնաչափ թանձր, որ ի ձև գերեզմանաց ընկողմանին զեզերօք լճին և կոչին գերեզմանք սկայից.—ռամկօրէն Օղուզի գերեզմաններ, քանզի թէև յատուկ անուն ևս իցէ, սակայն Արարատեանք օղուզ զհսկայն կոչեն այլազգերէն[135]։

Թերևս նորասիրաց պատճառս տաց և քերթողաց, ի մանաւորել իմում զոմանս ի հրաշալի տեսարանաց Փոքու, ընդ ևս հրաշալի ան-ցից Մեծի մերումս Մասսեաց։

ԵՐԵՒԱՆ

Գրի ի Սուրբ Գիրս, թէ յամսեան մետասաներորդի երևեցան գլուխք լերանց. և ահա՛ Երևան, որ անկանի ի Կոտայս գաւառ Արա-րատայ՝ նովին անուամբ և յայտնագոյն իսկ աւանդութեամբ կայ և մնայ մինչև ցայսօր՝ արձան յիշատակի անցից ջրհեղեղին։ Քանզի ասի, թէ իբրև բացաւ ձեղուն կամ լուսամուտ տապանին, Նոյ որ զա-ռաջինն ետես զկատարս լերանցն Գառնոյ և Գեղամայ միանգամայն. առ խնդին աղաղակեաց՝ Երևա՜ն, երևա՜ն։ Թէպէտև ի սրբոյն Յա-կովբայ ցԻբրահիմ փաշայ՝ ոչ ոք կարողացաւ ելանել ի գլուխ Մեծին Մասսեաց, սակայն ի գլուխ Փոքուն Մասսեաց ես երկիցս ելի (Երա-նի՜ թէ այժմիկ ևս յաջողէր ինձ դէպն. տղա՜յ հասակաւ, սակայն մինչև ցայսօր անջինջ դրոշմեցան գաղափարք յուշի իմում), և ընդ

հիւսիս հայեցեալ՝ տեսի զի երկնամբարձ ահեղանայր Կովկաս՝ իբրև զամպ մթին ի թիկանց ամենայն լերանց. բայց Արագածն, Արային, Գառնին, և Գեղամին ի մօտոյ ահեղագոյնք են, որք որպէս ինձ ի Փոքուէն՝ նոյն և Նոյեանց ի Մեծէն Մասսեաց երևեալ, բնականաբար յինքեանս ձգէին զուշադրութիւն նոցա։ Իսկ ընդ հակառակն լերինք Կորդուաց ի հարաւոյ՝ ընդ Կապան, Սհէնդ և Սաւալան յարևելից՝ բարձրաբերձք, որքան և են, ճնշին առաջի Մասսեաց. և երևին որպէս սեխս ի խանի շարեալք։

### ԵՂՈՒԱՐԴ

Ջրավարեալ նախահարք՝ անհամբեր սպասէին զիջանելոյ ջրոյ և երևելոյ երկրի. ապա զկնի աւուրց ինչ՝ իբրև տեսին զատորոտ լերին Արայի բացեալ, գոչեցին՝ «Եղև՜ արդ». այսինքն՝ արդ եղև դադարումն ջուրց։ Ոմանք զայս հին աւուրց աւանդութեամբ զանց արարեալ համարեցան անուան նորա ծագել ի գեղարդէն Քրիստոսի, որ առ ժամանակ մի պահեցաւ աստ՝ ի վանս նորա։ Բայց այս յերեկեան խօսք են, զի անուն Եղուարդայ՝ հայելով և ի պատմութիւն Ազգիս՝ հնագոյն է քան զԳեղարդ։

### ՕՇԱԿԱՆ

Թէպէտև Երևումն Եղուարդայ յոյս մեծ ծնանէր յոգի նախահարց, սակայն տակաւին զդաշտն մեծ ծովացեալ ջուրբք զառաջեաւ տեսեալ՝ ո՛չ ինչ կարէին համարձակել ի փոփոխումն վիճակի իւրեանց։ Բայց իբրև վերստին հայեցեալ տեսին զբլուրն ծիրանափայլ չեչաքարանց, որ մինչև ցայսօր բոսորափայլ երանգէ զաւանն Օշականայ՝ զուարճացեալ խրախուսանօք իմն ձայնեցին՝ Օ՜շական, Օ՜շական. այսինքն է՝ երանի աչաց մերոց՝ զի տեսաք և զայս բացեալ։ Ի բանիլ Օշականայ ի հիւսիսոյ՝ բանիւ արդեօք և Արկուռի՝ ի ստորոտս Մեծին Մասսեաց. այլ զուցէ ո՛չ երևէր Նոյեանց՝ վասն մերձաւորութեանն իւրոյ։ Յերևել Օշականայ թէպէտև հնար էր աշխարհին բնակել ի մարդկանէ, սակայն և այնպէս դեռ վերջին աստիճան բարձրութեան ջրոյն զամենայն դաշտ բռնէր և զպտղաւէտ ծածկեալ ունէր, մինչ երևեցաւ Ուշին աւան առ Քասաղ գետով։

### ՈՒՇԻ

Իբր թէ տեղին՝ զոր յՈւշի ունէին, իբրև զվերջին կիտանիշ զի-

ջանելոյ ջուրցն՝ բացա՛ւ, երևեցա՛ւ։ Ստուգաբանութիւնք անուանցս ոչ միայն անվրէպ հաստատութիւնք են տապանին Նոյի իջանելոյ ի Հայաստան, այլ մանաւանդ թէ՝ և՛ Դրախտին Եդիմայ անդր լինելոյ։ Զի արդարև զայնպիսի անուանս տալ վայրեաց՝ ծանօթից միայն է գործ, և ո՛չ անծանօթ աստանդականաց։ Անհամար աշխարհ, կղզիք և եզերք գտան դարուց ի դարս ժամանակաց, բայց ո՛չ հին անուանք նոցա, և ո՛չ նորոգ եղեալքն ի գտողաց անտի՝ զայսպիսի միշտ համաձայնութիւնս ընդ անցիցն ցուցանեն։

Սովին տեղի տամ և քաջ չափաբերին՝ առնուլ զամիսն մեատասան-երորդ, և չափելով զբարձրութիւն գագաթանց հիւսիսային լերանց մերոց՝ տեղ ի տեղի իջանել և գտանել զաստիճանս նուազութեան ջուրցն։ Ուր գուցէ և այլ անուանք տեղեաց՝ զորոց կամ տգէտ եմ, կամ մոռացեալ՝ առաւել ևս օգնեսցեն նմա։

### ԱՐԿՈՒՌԻ

Արկ ուռի, այսինքն՝ տնկեաց ուռ։ Խաղողի մատին՝ արգատ կամ ուռ ասեմք։ Արդ այս առաջին և հնագոյն բնակարան ազգի մարդ-կան յետ ջրհեղեղին, անկանի ի հիւսիսային կողմանէ ստանն Մասսեաց, ուր տնկեաց Նոյ զուռ որթոյ, առանց որոյ այգի ո՛չ լինի։ Ասացի առաջին բնակարան. նախ՝ զի բնականաբար Նոյ իջեալ ի լեռնէն աստ պատահել պիտէր, և վասն բնակութեան ուխտն ոգւոց միայն՝ երկար ճանապարհ երթալ բնական իմն չէր։ Երկիրն բավա-կան էր ո՛չ եթէ ութից՝ այլ՝ յաւէտ քան զութն հազարաց։ Մանաւանդ զի և դաշտավայրք դեռ տամուկք էին, և նրասխ անցանել պիտէր ամենայն արխիւքն, եթէ որ ուզենային գնալ ի Նախիջևան քաղաք՝ կամ յայլուր։ Անդ՝ ուր տնկեաց Նոյ զայգին, անդ արբ և ի գինւոյն։ Քանան կամ լաւ ևս՝ Խըն Հայերէն, իբր արմատ խընդ, խանդ, և ծաղր բառից՝ ծաղր արար զնա, և անէծս ընկալեալ մերժեցաւ յերե-սաց նորա. և որպէս թուի ինձ՝ բնակեցաւ ի Քանաքեր։

### ՔԱՆԱՔԵՐ ԿԱՄ ՔԱՄԱՔԵՐ

Անկանի ի հիւսիսոյ Կոնդին Երևանայ, և յարևմտից ուսոյ Կո-ղեռանն[136]՝ ուր գերեզմանոցն է Երևանայ։ Անարգեալն ի հօրէն Քամ կամ Քանան, զսովաւ քերեալ բնակութիւն արար յՈւտի մեր նահանգ.

### ԿՈՇ ԿԱՄ ՔՈՒՇ

Իսկ որդի նորա Քուշ անցեալ յարևմուտս կոյս յոստ ինչ Արա-գած լերին՝ ի տեղի շրջապատեալ լերամբք՝ բնակեցաւ անդ, և

անուանեաց զայն՝ Քուշ կամ Կոշ, զոր ոմանք աղաւաղելով Կուաշն կոչեցին զնա։ Ի հաստատութիւն բանիս առնում զաւանդութիւնն՝ որ կայ մինչև ցայսօր ի բերանս հասարակաց՝ որ զայր անարգ և արհամարհ՝ «Կոշայ ժամահար» կոչեն։ Եւ փոխանակ ասելոյ, թէ՝ այս ոք անարգ է, ասեն քան զԿոշայ ժամահարն է։ Եւ եթէ չիցէ պատճառ սորուն ի պատմութեան աշխարհի՝ ընդէ՞ր ապա այս կոչումն, այնինչ շատ գիւղք և աւանք ի նահանգին աղքատագոյն կան, և չիք ի նոսա յիշողութիւն այսպիսի։ Մանաւանդ թէ և Կոշն իսկ՝ թագաւորաց առանձնարան եղեալ է մեր. ունի զարդիս բերդ ի կարմիր քարանց ի լերինն կառուցեալ, և անդս, և այգիս պատուականս քան զԱրկուռոյն, որպէս և գետ կամ վտակ ստորերկրեայ՝ որ ահագին դնդջմամբ հոսի յայրին՝ ի հիւսիսոյ գեղջն։

ԽԱՆՏՈՒՏԻ ՁՈՐ

Իբր Քանանայ, Քամայ, և Խանդուտի, այսինքն ծիծաղողի ձոր՝ տակաւին կայ ի մէջ Կոշայ և Շիրակայ։ Առասպելքն զնմանէ ի ժողովրդեանն, եթէ ուղիղ մտօք պարզիցին, զստոյգ անցս Քամայ ի մէջ բերեն, քան զՏիգրանուհեայ մերում կամ զնմանոյն, որպէս դնէ Նոր Հայաստան։

ՆՊԱՏ

Նպատ լեառն հուպ առ Մասիս և կից ընդ Ծաղկուան, ուստի բղխեն ակունք եղեմաբուխ գետոց աշխարհիս՝ առաջին ամարանոց համարիմ Նահապետիս մերոյ սրբոյ։ Քանզի այր հինգհարիւրամեան նախ քան զհեղեղն եղեալ Նոյի՝ լսէր արդեօք կամ ընթեռնոյր զտեղւոյ դրախտին Ադամայ, և հուպ յայն տեղի փափագէր բնակել՝ գէթ զամիսս ինչ տարւոյն։ Արդի սովորութիւն բնակչաց խելամուտ առնէ ինձ զայս բան. որք ի տօթոյն Արարատայ խոյս տուեալք՝ անդր հարկանեն զվրան իւրեանց, և յարօտս խաշանց հրաշանեան և հարստանան։

ԱՂԱՒՆԱՏՈՒՆ

Այս գիւղ այժմ անկանի իբրև երեք մղոնօք հեռի ի Քասաղ գետոյ ընդ յարևմուտս նորա, և զարմանս բերէ ընդ այսպէս կոչել անուանն, այնինչ յիշատակ հնութեանց, լեառն, կամ բլուր ինչ ո՛չ գտանի անդանօր։ Արձակեաց Նոյ զաղաւնին՝ որ դադար ո՛չ գտեալ

դարձաւ. բայց զկնի աւուրց կրկին արձակեալ՝ այլ ո՛չ ևս դարձաւ։ Անուն սորա, բնաւորութիւն աղաւնւոյ, դրութիւն գեղջս (ակն յանդիման Արարատ լերին), և այս անցք, զարմանալի իմն եղանակաւ հաղորդին իրերաց։ Բայց ինքնին երևան լինի աստանօր ի միւս խնդիր. զի ո՛ր ինչ անուանի, սուրբ, և յիշատակաց արժանիք գործեցան, ի հիւսիսոյ Մասեաց լերինն յիշատակին. և որ ինչ անախորժ, ապերախտ և դժտմնելիք՝ ի հարաւոյ նորա։ Եւ եթէ չիցէ այս ծագեալ ի մտաց նախաշտարակեան նահապետաց՝ իբր յարհամարհութիւն աշտարակին՝ որ ի հարաւոյ Մասեաց և շինողացն՝ ուրեմն զարմանք իմն են։

## ԱԳՌԱԽՈՒՑ ՔԱՐ

Նոյ զագռաւն արձակեաց, և նա գնացեալ ո՛չ եկն վերստին ի տապան անդր։ Վասն զի ընդ հարաւ գնաց, և լեառն՝ ուր նստաւ և բոյն արար՝ կոչի մինչ ցարդ Ագռաւուց։ Քար։ Եւ է կրկին, մին որ բաժանէ զՋարևանդ ի հին Գաբեղենից գաւառէն, և յինքն ընկղմէ զՏիգրիս գետ՝ այժմ Աւաջուխ կոչեցեալ, ուր է Ղազի կեօլին կամ լիճն Արեթուսայ։

Եւ երկրորդ՝ ի Կարդուաց աշխարհին, ի հիւսիսոյ Կապուտակ ծովակին՝ որ տանի ի Դավրիժոյ, ի Խորովշահէ, ի Մամաղանայ, ի Գօգանայ, ի Խանայանայ՝ յԱջաբշիր, ի Շիշաւան, ի Շիրազ, ի Քուլթաբէ, յԱլկի, ի Բնաբ, ի Մարաղայ, ի Ջիլիկ, և ի Դուաբ։

## ՆԱԽԻՋԵՒԱՆ ԿԱՄ ՆԱԽՋՈՒԱՆ

Թէ հնութիւնք, թէ աւանդութիւնք և թէ պատմութիւնք ազգիս և օտարաց՝ ուր երբէք և յիշատակեն զսա՝ քաղաք անուամբ յիշատակեն։ Արդ և շինել քաղաքի պիտին նախ՝ ժողովուրդք բազումք, և ցբազմանալ ժողովրդեան թոռանց ի թոռունս՝ հարկիւ խնդրի ժամանակ երկու կամ երեք հարիւր ամաց։ Եւ ահա՛ յայնժամ ևեթ թուի ինձ կանգնել քաղաքիս։ Ի հաստատութիւն բանիս առնում զմիւս անուն նորա, ուստի նախ չուեցաւ աշտարակաշէն բազմութիւն մարդկան, և մահ Նոյի անդ, որպէս և գերեզման նորա. թէպէտև հայր Եփրեմ[137] ի Նպատ լերին փորէ նման զայն՝ ընդդէմ աւանդութեան և պատմութեան միանգամայն։ Այր հետևակ զաւուրս երիս հազիւ հասանէ յԱրկուռւոյ ի Նախիջևան. և այն՝ անցանելով ընդ Երասխ գետ, և ընդ արևելս ընթանալով։ Եթէ դիցուք թէ Նոյ զայգին յԱրկուռի տնկեաց, և ինքն ի Նախչուան բնակէր, արտաքոյ

բնականին խօսեցեալ լինիմք։ Իսկ եթէ դիցուք ըստ Հնախօսին մերոյ[138] թէ Եդեմ ընդ արևելս գոլով, բնականաբար ձգէր զժողովուրդն դէպ ի կողմն իւր՝ և զՆո՛յ ինքնին, ծաղու արժանի լինիմք։ Զի ընդէ՞ր մեք սոսկ ի նշանացն հասկացեալ և պնդեմք հաստատել այլոց զտեղի դրախտին, ու նա հինգ հարիւր ամօք նախ քան ըզհեղեղն կացեալ, և դեռ անծանօթ՝ տղայաբար յարեն կո՞յս կըղկաթէր։

## ՄԱՅՐ ԱՆԴ

Անկանի յարևելից հարաւոյ Նախչուանայ, և ուղիղ ընդ արևելս Զարուանդայ և Հեր կամ Խոյ գաւառի այսպէս կոչեցեալ՝ ի սակս Նոյեմզարայ կնոջ Նոյի, և մօր հանուր մարդկութեանս՝ անդր թաղեալ լինելոյ։

## ԶԱՐՈՒԱՆԴ

Զրուանն, թէպէտ Եզնիկ զուտ պարսկական համարելով թարգմանէ ի բախտ, կամ փառք[139]. որպէս թէ՝ Զառվան, սակայն ես բուն հայերէն համարիմ, ի Ջրվանն. զի ընդ ջուր վարեալ, կամ զջուր վանեալ՝ ապրեցաւ ի համակործան հեղեղաց։ Այս դէպք առաւել բախտ կամ փառք եղեն նմա, քան թէ ոսկի կապեալ ի պարանոց ընկղմէր, յանդունդս խորոց։ Նազի՝ ոսկւոյ լինել նախ քան զհեղեղն յիշատակութիւն իսկ չիք։ Եւ այս կարկատանք առասպելախօսից Պարսից են միայն։ Իսկ Ջրվանն, Զրուան կամ Սեմ էր՝ որ նախ բնակեցաւ ի Զարուանդ, և անդէն յանուն նորա կոչեցաւ Զրուանայ անդ։ Զայս այսպէս ստուգաբանելով՝ ի կամս նորա ապաստան առնեմ, ուսուցանել զԱրև անդ՝ կամ ո՛չ։

Ի մէջ երկուց Մասեաց անկանի ահագին և անմատոյց այն քարայր, յոր ապաստանեալ աւազակաց՝ և հուղկահարաց՝ քամահէին զօրինօք երկրին։

Սարդար յայն սակս կառոյց հզօր բերդին Սարդարաբատ՝ յարևմտից Արկուռեայ, ուր ինքնին իսկ ամառէ, և զօրք հսկեն հանապազ զանցուցարձ Մարաց։ Այս թուին ինձ գոլ նախնի Փառախոտն, զոր շինեաց Գեղամ ընդ յարևելս Ցոլակերտին՝ և ետ անուն Փառախայ։ Ահա՛ այսքան չքնաղ, վսեմ և հրաշազանս ընծայէ Մասիս տեսարանս աչաց և մտաց մարդկան։

Օգոստ[ոս]։ Փոքր ի շատէ առողջացեալ էր Պօղոս վարդապետ, և ես շրջագայութեամբ օդափոխեալ՝ մաքրեալ յարդարեալ էի զիմ

խելապատակ յընդունելութիւն դաստիարակութեան նորա։ Դեռավարժ որպէս և էի յսկզբունս քերականական գիտութեանց, տակաւին ոչ ախորժէի ընդ այն։ Ուստի մարդասէր և բարեբարոյ վարդապետ իմ, փոխանակ գաւազանաւ երկաթեաւ շարժելոյ զիմ ախորժակ, իսպառ թոյլ ետ յայնմ. և սկսաւ հրահանգել զիս ի նախակրթութիւնս արհեստին ճարտասանութեան, այլ այնու դաշամբ՝ զի վերլուծանիցեմ ի ներկայութեան իւրում առ օրին տասն տունս շարականաց։ Սիրով ընկալայ, դաս առի զճարտասանութիւն, և առօրին գրեալ զմտացածին իմն պատմութիւն, տարայ նախ ցուցի տնտեսի վանաց, ընդ որ կարի՛ հաւանեցաւ, որպէս և ես ընդ սեր նորա և մեղր։ Ապա տարայ առ վարդապետ իմ, որ այնքան սրբագրեաց, մինչ յիմոց գրուածոց հազիւ թողու բառս ինչ։ Զկնի դասառութեանս սկըսանէր լուծումն քերականական, որ առ ամենայն դարձուածս բանից պահանջէր յառաջբերութիւն կանոնաց նորա, որով կարի ճիշտ կրթեցայ յարուեստին։ Եւ այսպէս՝ ի շնորհս երախտեաց խոհական վարժապետիս, ի միջոցս չորից ամսոց անվթար ուսայ զքերականութիւն ընդ նմին և զնախակրթութիւնս արուեստին ճարտասանութեան։ Եղանակ ուսանելոյ իմոյ օտար իմն էր՝ և գլխովին ինքնահնար։ Շիշ իմն փոքրիկ լցեալ մելանաւ կախեալ զպարանոցէ՝ կրէի հանապազ ի ծոցի իմում. և գրիչ՝ փետուր սագի, և մատիտ ի գրպանի, իսկ գիրք և տետրակք թղթոց զանթուլք իմովք՝ գնայի ուր և հաճէի, և նստեալ կամ ընթեռնուի, և կամ գրէի։ Այլ ըստ մեծի մասին առանձին ուսումնարան յօրինեալ էր իմ ինձ՝ զմատուռն աղբեր սըրբոյն Յակովբայ, ուր ելանէի միայնակ զաւուրս բազումս՝ առանց ինչ յայտնելոյ վարդապետիս։ Յաւուր միում գուժկան պատառուածոյ արանց երկուց յառիւծոցն հասանէ ի լուր նորա, բազմիցս որոնէ զիս երանելին, այլ ո՛չ գտանէ, ուստի և կարծելով վնաս ինչ հանդիպեալ ինձ՝ խռովի յոգի իւր, և զայրանայ յոյժ յոյժ։ Իսկ ես յարուցեալ յանուշակ քնոյ, լուանիմ ի մատրան այնմիկ, և յանհոգս երգելով և վերծանելով զդաս իմ, գամ հասանեմ ի դուռն վանաց։ Ուր իբրև տեսանէ զիս նա, ասէ ցիս. «Կա՛ց աստանօր»։ Իսկ ես բարւոյ իմիք ակնկալու՝ կացի ըստ հրամանին. և ահա՛ վերադարձաւ մականն մեծ ի ձեռին իւրում, և սկսաւ հարկանել զիս, այո՛, և սաստիկս գանահար առնել, առանց ինչ զպատճառն յայտնելոյ։ Արձանացեալ կամ առաջի նորա իբրև զվէմ անմռունչ, մինչ գայ մայրագիր տնտես վանաց՝ և ընդ մէջ մտանէ իմ և գաւազանին բարկութեան։ Մեկնութեամբ պատճառին փութով հաշտեցաք։ Այլ դէպք ի վերայ ածին և այլ իմն պատահար նմին չարաչար։ Վասն զի հնազանդութեամբ

վարժապետիս լքեալ մինչ ի սպառ զմատուռն ինձ սիրական, ընտրեցի ինձ զմարմանդս ծառուէտ սարաւանդին, որ ի Թիկանց վանացն անկանէր: Որոշեցի ինձ անդ առանձին ապաւէն տեղի՝ շրջապատեալ և թաւացեալ ուռենեօք և ծիրանեօք, և յօրինեցի ինձ զայն տեղի սերտելոյ զիմ դաս: Յաւուր միում, որ օր քաններորդ էր օգոստոս ամսոյ, և ես նիրհեալ էի անդ ի քուն քաղցրութեան, յանկարծ զարթոյց զիս ցայտումն ինչ ջրոյ:

Զարթեայ, և զի՞նչ տեսանեմ. եթէ ո՛չ յաւէրժահարսանց դրախտին Ղուրանի՝ պար առնուլ զինև, այլ զո՞յն հարամ սարդարին: Ապշեցայ զառաջինն՝ երկիւղալից սասանմամբ, այլ ընտել և մարդասէր վարք նոցա, ըստ ակնարկելոյ երիցագունին ի նոսա՝ Հաճի խանումայ, վտարեաց ի սրտէ զամենայն երկիւղ: Հայ մատեան առ իս, և բացեալ զճարտասանութիւն կրկտեցին և գտին զպատկեր մեծանուն հեղինակաց լեզուիս մերոյ ի նմա, և հարցին ցիս ըզհանգամանաց նոցա: Յաւելին հարցանել ցիս եթէ թլպատեա՞լ իցեմ, եթէ զՂուրա՞ն գիտիցեմ, եթէ զՄահմէտ մարգարէ՞ ընդունիցիմ, և այլն: Ասացի՝ «ո՛չ»: Եւ ահա՛ բումբ ընկալայ ի գլուխ: Հարցին ցիս թէ ընդէ՞ր սևազգեաց էի. «Հայր քո ի նորո՞յ մեռաւ»,— ասեն, և այլ այսպիսի հարցմունք անտեղիք: Իսկ Հաճի խանում պարգևեալ ինձ ոսկի դահեկան մի, մեկնեցաւ անդրէն, և գնաց ի դղեակն Արկուռեաց, զոր կառոյց սարդար և անուանեաց Սարդարաբատ:

Սեպտ. 20. Կանխեցաւ ձիւն, և սաստկացաւ յոյժ ցուրտն. ուստի Պօղոս վարդապետ, այն զի ո՛չ աստ մնալն կամէր և ո՛չ վերադառնալ յէջմիածին, գրեաց խնդրեաց հրաման ի սրբոյ Հայրապետէն Եփրեմայ՝ այց ելանել ընտանեացն՝ ի Մուժումբար Ղարադաղայ:

Ի դառնալ Թունեայ և մեծ բազմութիւն ուխտաւորաց ի Վաղարշապատայ եկին ի վանս սրբոյն Յակոբայ, ընդ որս և հին աւուրց բարեկամ իմ, պարոն Մէլքում Ենոքեան՝ երիտասարդ առոյգ, այլ փոքր մի կարճ հասակաւ: Սա՝ որպէս և Խաչատուր անուն եղբայր սորա՝ էր մի ի գերելոց Բագրևանդայ, զորս գնեաց և ազատեաց տէր Եփրեմ Հայրապետ մեր, այլ ըստ որում սնոյց ինքեան և ուսոյց զնա՝ Ստեփաննոս եպիսկոպոս Ենոքեան Տփղիզեցի, վասնորոյ և յանուն նորա երկոքին ևս Ենոքեանք անուանեցան: Հասեալ Մէլքումայ յարբունս կատարելութեան իւրոյ՝ կարի վարժ հանդիսացաւ ի ձիավարութեան. զի զձևս ի բաւ վարդապետին ունելով՝ միշտ զերիվարս ընտիրս և ամեհիս բուծանէր: Որով հաճոյացեալ յաչս Մէլիք Ստեփաննոսի տանուտեառն Արկուռեաց՝ ամուսնացաւ ընդ արդա՛րև ամենագեղեցիկ դստեր նորա, և այժմ ընդ ուխտաւորացն



8—739

գայր հասանէր անդանօր՝ յուխտ Աստուծոյ՝ և յայցելութիւն աններոչ իւրում:

Զէր ցնծութիւն և վայելչութիւն, զորս ո՛չ հանդիսացոյց հասարակաց Մէլիք Ստեփաննոսի ի տես դստերն և փեսային: Ի տանն՝ զկոչունս խնջոյից ասա՛, յԱղբերն՝ զմատաղաց զենմունս, ի պարտիզին՝ զխրախճան խորովածի և գինւոյ, ի լերինն՝ զորսոց սպատրաստութիւն, տինա՛ թէ՝ և ի գագաթան Փոքուն Մասսեաց՝ զհամերևան զուարճարան ամենայն հրաշալեաց:

Եթէ հաւասարակից և սրտակից բարեկամաց անուշակ և անմեղ կենցաղավարութիւն յերկրի՝ չիցէ պատկեր ամեներան վայելչութեանց արքայութեան երկնից՝ ուրեմն այս աշխարհ Աստուծոյ չէ՛:

Այսօրինակ երջանկութեամբ կատարեցաք զաւուրս երիս՝ ի փառս ամեներան և ծայրագոյն բարւոյն, մինչև եհաս օրն բաժանելոյ բազմերախտ վարժապետիս ի գլխոյ իմմէ:

Կոչեաց զիս առաջեաւ այրն աստուածազգաց, խրատեաց զիս յերկիւղ Տեառն՝ և ի հնազանդութիւն սուրբ կամաց նորա, և յանձնաբարեալ նմա զիս և զբարեկամս իմ, հեծաւ ի ջու իւր: Կայլակունք յաչաց իմոց և հեկեկանք սրտիս՝ զամենեսեան յարտասուս շարժեցին: Ամենեքին, մինչև նաև ուխտաւոր տիկնայք ի ձի աշտանակեցան ուղեկորել զերանելին, այլ նա խստիւ արգել զնոսա:

Զհետ չոգայ համբուրելի հետոց զարշապարաց ձիոյ նորա, ն՛որ ի նորոյ հասկանալով թէ որպիսի՞ կիրք եռային յոգի մաքուր Եղեսէի՝ ի բանից անդ մարգարէահօր նորա՝ և վարժապետի: Բազմութիւնն մի առ մի դարձաւ. վարժապետն սուրբ հեռացաւ, մեկնեցա՜ւ յաչաց, և ես դեռ ընդարմացեալ կացի: Տասն անգամ սկսայ իմ ձախ ձայնիւ. «Գնա՜ս բա...», «Գնա՜ս բա...», այլ հեկեկանք ո՛չ թողին կատարել զբանն՝ օրինակ զայս՝

Գնա՜ս բարեաւ Վարժապետ՝ հանրասփիւռ գիտութեանց.
Գնա՜ս բարեաւ Ուսուցի՛չ Հաւատոյ՝ գերազանց.
Գնա՜ս բարեաւ, այլ կաթիլք իմ անմեղ արտասուաց
Լիցի՛ն քեզ փոխանակ քոց անմահ երախտեաց:

Այսպէ՛ս բաժանեցաւ գնաց նա, և ես ընդ ուխտաւորացն դարձայ ի Սուրբ Էջմիածին, անցանելով զերասխ ընդ հունն Արմաւրայ՝ առաջին թագաւորանիստ մայրաքաղաքի համօրէն Հայաստանեաց, յարևմտից հարաւոյ Վաղարշապատայ՝ ի գլուխ Մօրին Մեծի՝ կամ Սեաւ ջրոյ:

Դարձեալ վիճակեցաւ ինձ գրագրարան սրբոյ Աթոռոյն ընդ

ակնարկութեամբ Յովհաննու վարդապետի Բագրեւանդցւոյ, ուր զամիսս ինչ առանց ուսման և կրթութեան ընդօրինակէի ինձ ըզկոնդակս Հայրապետին և զքարոզագիրս Պետրոսի եպիսկոպոսի Բերթումեցւոյ[140] ընդ միւս գրուածոց նախահարց մերոց։

## ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԻՄ ԴԷՊ ՅՈՏՆ ԱՐԱԳԱԾՈՅ[141]։

Բարսեղ եպիսկոպոս Կեսարացի պատրաստութիւն տեսանէր ելանել յոտն Արագածոյ, զի վանորայք տեղւոյն, մանաւանդ Մուղնին, Սուրբ Գրիգորին՝ Յովհաննավանքն, Սաղմոսավանքն, և Կօշավանքն ի հոգս նորա էին։

Իսկ եղբօր որդի նորա Պօղոս Գրիգորեան աշակերտակից իմ, զուլ ի սերտողութեան, բայց և սուր յերաժշտականին ըստաստութեան՝ միջնորդեաց և ինձ ընկերել ինքեանց, յուխտ և ի զբօսանս վայրացն վայելչականաց։

Ելաք յէջմիածնայ ընդ ճանապարհ հիւսիսոյ՝ որ տանէր յՕշական աւան։ Քերեալ առ առուօքն աղօրեաց, որ հանեալ ի Քասախայ բերէր ի Վաղարշապատ՝ հասաք ի բլուրն Որյանէից կոչեցեալ, որ ի հնումն կոչէր Շրէշ, ուր հիմնեաց զառաջինն՝ Մանուկն Վարդգէս գիւղ աւան, զոր յետոյ ընդարձակեալ Վաղարշայ՝ անուանեաց Վաղարշապատ։ Իսկ զայս անուն արդիք տան նմա, ի սակս երգելոյ անդ ձայնաւոր վարդապետի ուրումն զերգն Հրեշտակապետաց՝ այդու սկսուածով։

Իբրև միով մղոնաւ հեռի ի բլրոյ աստի ընդ յարևմուտս հիւսիսոյ, ի ստորոտս քարաղաշտին Օշականայ՝ է գիւղն Մօլլագուրուն. բնակեալ համակ ի Պարսուտաճկաց՝ յեզր գետոյն Քասախայ, ուր յապայս յաւելան և քանի մի տունք Հայոց։

Առ երի գեղջս է աւերակ քարաշէն մեծի եկեղեցւոյ, որոյ որմունք դեռ կանգուն կան, ի ձախմէ ճանապարհին, որ թուի ինձ «Անապատն Սուրենայ» կոչեցեալ ի Փարպեցւոյն։

Յաջմէ նորա անկանին աւերակք ինչ քարակարկառ շինուածոց, անուանեալք Տուն Արդար Դաւթի։ Այդ Արդար Դաւիթ, ըստ պատմելոյ հինաւուրց եպիսկոպոսաց մերոց՝ էր այր սոսկալիթխարի, անձնեայ և ուժեղ քան զամենայն մարդիկ յուրումն ժամանակի։ Որ հրաժարեալ յամենայն մարդկային հաղորդակցութենէ, շինեաց աստ յանջրդի առապարիս զայս դաստակերտ մենաւոր, և առանձ-

նացաւ ի սմին՝ անհամեմատ ճգնութեամբ։ Յամենայն եղանակս տարւոյն՝ ընդ ցուրտ և ընդ տօթ, յառնէր յիւրմէ դաստակերտէ, և դիմէր, ասեն, յեկեղեցին Էջմիածնի ժամու և կիսոյ ճանապարհաւ՝ հաղորդիլ աղօթից սրբոցն։ Որ և ի սակս այսր սաստիկ ժամանասիրութեանն, կոչեցաւ՝ Արդար։

Յանցանել ժամանակաց երկու ի մոնթից՝ կամ ի ստորին աստիճանի դպրաց Աթոռոյն պակասեցան յանկարծ, որք այնգի ուսումնականք էին և յուսոյ բարւոյ ապահովարարք՝ բազմօք որոնեցան, և ո՛չ գտան։ Ի վաղիւ անդր որովհետև ձմեռն էր՝ գայ Արդարս անուանեալ Դաւիթ՝ ըստ սովորութեան իւրում, աղօթել յեկեղեցւոջն։ Ի լուսել առաւօտուն ոմանք ի մերձակայից նորա՝ ընթեռնուն ի թիկանց մուշտակի նորա «Յովհան Արդար Դաւթի տան է՛» ածխով նշանագրեալ։

Ազդ առնեն Հայրապետին. աշխարհս ամենայն պատկառի յառնն արդարութենէ, և ո՛չ համարձակի ձեռն մխել ի նա։ Իմաստութեամբ հնարին ի կոչունս պատաղեցուցանել զնա, մինչ արանց ննջելոց հասեալ ի դաստակերտ Արդարոյն, տեսանեն զողորմելին Յովհան կաշկանդեալ ի կապանս շղթայից։ Արձակեն զնա, և նա կալեալ զձեռաց նոցա տանի ի խահարան Արդարոյն, և ցուցանէ ի նմա զմարմին ողորմելի աշակերտակցին իւրոյ եռալ ի սանի։ Յապշութիւն կրթին նոքա ընդ տեսիլն սոսկալի. այլ յաւելու Յովհան ցուցանել և զկարկառ ոսկերաց բազմաց, զորս խաբէութեամբ որսացեալ մարդաբարբառ բորենւոյս՝ մատուցեալ էր ի խորտիկ ախորժանաց խանգարեալ ախորժակին։ Տանին կացուցանէն զնա յանդիման Հայրապետին դալկացեալ յերկիւղ մահու. կոչեն զԴաւիթ Արդար զառաջեաւ, որ այնինչ տեսանէ զմանուկն զերծուցեալ և զխորհուրդս գաղտնի մարդակերութեան իւրոյ առ ի լոյս յանդիմանեալ, զայրագնի կատաղին սրտմտութեամբ. և յոյժ իրանացն ձեղքել զամբոխն՝ և փախչել աճապարէ։ Ունին զնա երիտասարդք Վաղարշապատայ հրամանաւ Հայրապետին, և յայտնի ինչ ո՛չ կարացեալ առնել նմա յերկիւղէ Պարսից, առ որս տարածէր սնոտի համբաւ սրբութեան նորա, արկանեն զնա ի բուրգն ինչ հիւսիսակողման պարսպին Էջմիածնայ, որ ընդ մէջ լուացարանի նորա և ախոռոց, զի անդ սովամահ սատակեսցի՛, որպէս և սատակեցաւն իսկ։ Առ ոմանս ի հնագիտաց կոչի այս բուրգն յանուն նորա, «Արդար Դաւթի բուրճ»։ Ե՛կ հապա՜, գերամեծա՛ր ընթերցող, ի միտ առցուք յօրինակէս, թէ արտաքին երևոյթ սրբութեան ո՛չ մաքրէ զներքին հոգին, և միաբան աղաղակեսցուք առ հոգին ճշմարտու-

թեան, զի բարձցէ ի սրտից մերոց զկեղծաւորութիւն, և տնկեսցէ փոխանակ զհոգի ճշմարտութեան, որպէս զի հոգւով և ճշմարտութեամբ պաշտեսցուք զԱստուած[142]:

Աստի ընդ յարևելս իբրև ապարիզաւ երկոքումբք, անկանի ջրաշեղջ իմն, հասարակօրէն գեօլ կոչեցեալ, որոյ շրջապատն է մարգագետին խոտաւէտ, ուղղի արօտից երիվարաց Կաթուղիկոսարանին: Ի ջրշեղջէ ընդ յարևելս, հուպ առ ճանապարհն՝ որ հանէ յԵղուարդ գիւղ, է քարահանքն կարմրափայլ և սեաւ փուխր քարանց հասարակօրէն քաւանկ քար կոչելոց, յորոց շինեալ է Էջմիածին և գրեա՛ թէ ամենայն քարաշէն եկեղեցիք և վանորայք աշխարհին:

Առ տամբ Արդարոյն Դաւթի ընդ հիւսիս՝ ելաք ի Քարադաշտ տափարակ, յորմէ յարևմուտս՝ յայնկոյս Քասաղայ իբրև կիսով ժամու՝ անկանի Ուշի գիւղ աւերակ՝ յԱրագածոտան գաւառի, ուր է խարխլած եկեղեցւոյ, արձեթեր ունելով տապանաձև գերեզմանս: Յորոց ի միւս կողմն ցուցին ինձ զտնատեղի ժամահարի գեղջն, և ասացին թէ՝ «Առ անբաւ սիրոյն իւրոյ առ Աստուած՝ զքարինս անգամ հալէին սրունք սրբասունք նորա»:

Վտակ ի Քասաղայ ոռոգանէր տակաւին զքարեբեր սորուն դաշտորայս զորս մշակէին բնակիչք շրջակայ գիւղօրէիցն:

Միով ժամու հազիւ, ի մէջ ճանապարհին Օշականայ և Քասախ գետոյ՝ անկանի բլրաձև աւերակ ինչ, այլ թէ եկեղեցւո՞յ արդեօք, և թէ պատերազմական պատնշի՞՝ ո՛չ կարացի ստուգել[143]: Աստ նախ առաջինն եցոյց ինձ Բարսեղ եպիսկոպոս զեկեղեցի Սրբոյն Մեսրովբայ[144], զոր իբրև տեսի՝ իջի յերիվարէն, և անտեղեակ անհնարին ձորոյն՝ որ ընդ մէջ անկանէր Քարադաշտիս և աւանին՝ հետի ընթացայ ի պատիւ աստուածամերձ անուանակցիս: Բազում անգամ յորդոր մատուցանէր ինձ Բարսեղ եպիսկոպոս հեծանել ի ձի. մանաւանդ ընդ անհնարին զառիվերսն որ յերեքկամարեան և ի քարաշէն կամրջէն Քասաղայ հանէր ցաւանն Օշական, այլ զի իմ դիտաւորեալ էր հետի պատուել զՏօնելին՝ ո՛չ անսացի նմա:

Հասաք յՕշական աւան, և մտաք նախ՝ յեկեղեցին քարաշէն որմովք, այլ փայտաձեղուն յարկօք կառուցեալ ի վերայ նշխարաց գրաւորական Լուսաւորչին Հայաստանեայց սրբոյն Մեսրովբայ Թարգմանչի Աստուածաշունչ Սուրբ Գրոց, որոյ ի տրխտուր աստուածածանօթարար երախտեաց, պարտական էին արդարև ամենայն քաղաքանի Հայաստանեայց կանգնել նմա զհրաշակերտս ի շինուածոց իւրեանց: Իբրև մտի ի ներքս, և իջի ի տապան նշխարաց սրբոյն՝ որ անկանէր ի ներքոյ սեղանոյ, պատուեցի զայն արտա-

սուօք և համբուրիւք իբրև զյիշատակարան Հօր և Ծրախտաւորի ազգիս, և ասացի. «Տէ՛ր Ամենակալ Հայր, եթէ տաս ինձ՝ որպէս զանուան՝ նոյն և արդեանց սրբոյս զման, նորոգեցից զայս տաճար զմբէթակերտ ի փառս քոյ»։ Առընթեր եկեղեցւոյս յարնելեան հարաւոյ քունջ պարսպին էր բուրգն, և ի նմա դամբարան Վահանայ Ամատունւոյ, որ քաջութեամբ պարտեալ զթշնամին, պարգև ընկալաւ յԱրքայէն Խոսրովայ զայս աւան։ Բնակիչք նորա իբրև 500 տունք համակ յազգէս Հայոց, սեպհական ժառանգութիւն են կաթուղիկոսարանին։ Բերդապարիսպ դիրք նորա ի ձորափին Քասաղայ՝ նման է Անապատին Ձորագեղայ յԵրևան։ Քասաղ ի ներքուստ անցանէ ձորոյն, որոյ վերայ կառուցեալ է կամուրջ քարաշէն երեքկամարեան։ Բերէ այս գետ կարմրախայտ առատ և պատուական։ Ամօք ինչ յառաջ տանուտէր սորա Շահիջան անուն՝ այր զուարճախօս՝ բարձեալ ընդ իւր զքանի մի ի կարմրախայտից գետոյս՝ գայ յԷջմիածին, ակնկալութեամբ արժանաւոր ինչ փոխարինի։ Տանի առ սա. և տեսեալ թէ ո՛չ ինչ տայ, յետս կոչէ զընծայն իւր ասելով, թէ՝ «Դու զձուկն Շահիջանի չկերա՞ր»։ Մինչև մի ոմն փոխարինէ նմա զոսկի մի, և լսէ ի նմանէ. «Ահա՛ դու միայն կերար»։ Կրկին բանք նորա ևս յառակ հանեալ են մինչ ցայսօր ժամանակի։ Այգեւէտ է այս աւան, և բերէ գինի ազնիւ յոյժ։ Ի հիւսիսոյ պարսպին է բլուր իմն կարմիր և փուշ, այսինքն փչեալ կամ ծակոտկէն փուք քարանց, զոր կանայք աշխարհին տանին ընդ ինքեանս ի բաղանիս, և քերեն նովաւ զկեղտ ներբանաց իւրեանց։ Ուստի և ոմանք ոսկեպատ կամ արծաթապատ արարեալ՝ դնեն ի բաժնի դստերաց իւրեանց՝ և առաքեն ի տուն փեսային, իբրև զմի ի բաղնէսարուց նոցա։ Ի գլուխ բլրոյս է մատուռն փոքրիկ, որ երևէր լինել յաւէտ նախնի դիտանոց։ Ջորն Օշականայ լի է անմատչելի անձաւօք և քարայրիւք ընդ երկուս կողմունս գետոյն, ուր ամրանան բնակիչք նորա յաւուրս խռովութեանց։ Պատմի թէ ի հին աւուրս ինչ, կալեալ զօրաց նորա զմի ի գիւղականացն Օշականայ չարաչարս տանջէին մատնել զտեղի թաքստի նոցա։ Իսկ այրն առաքինի՝ փոխանակ մատնելոյ զնոսա, կամ խաբէութեամբ արտաքս յամուր տեղեացն հանելոյ բառ զայս առեալ ի բերան, և կեղծելով զհաճոյս կամաց թշնամեացն կատարել, ի ձայն բարձր աղաղակեաց առ նոսա։

«Օշակնա՛յ մարդիկ,
Անունս է Վարդիկ,
Ի՛նձ տեսէք,

Զե՛ղ լացէ՛ք,
Ուր որ կէք՝ ամու՛ր կացէք»։

Զոր թարգմանութեամբ հասկացեալ զօրավարի նոցա՝ եւ, ասեն, մահու սպանանել զայրն հայրենասէր։ Որ միով արեամբ իւրով գնեաց զարիւն և զգերութիւն բազմաց։ Ահա՛ սովին։ սիրեաց Վարդիկ զկեանս իւր և կորոյս՝ ըստ բանի Տեառն իւրում, և որ այսպէսն կորուսանէ՝ գտցէ՛։ Վասն զի սէր Աներևութին՝ յերևելոյն սկսանել հաւատա՞մ։

Խաղացեալ ապա երկու ժամուք՝ հասաք յԱշտարակ գիւղ, կառուցեալ ի նմին ձորաքաշի Քասաղայ. որ թէ ըստ դրից, և թէ ըստ առատութեան այգեաց և արմտեաց՝ ո՛չ ինչ նուազ իմն երևի քան զնոյն ինքն զԵրևան։ Երեքին հնակառոյց՝ քարաշէն և բարձրաբերձ եկեղեցիք ի սմին գեղջ՝ յայտ առնեն զսա լինիլ մի ի հնագոյն գիւղօրէից Արագածոտան գաւառի, թէև անուն սորա ըստ արդի հնչման ո՛չ ուրեք յիշատակի ի գիրս նախնեաց։ Եղիշէ ի թուել իւրում ըղկայանս կամ ձմերոցս զօրաց աւերեալս յուրացելոյն Վասակայ ի շարս նոցա կարգէ զԿուաշն աւան, զԱրուճն[146], զԱշնակն, և զամենայն ոտն Արագածու։ Բազմավաստակ Ստորագիր Հին և Նոր Հայաստանի, ո՛չ ի հինն և ո՛չ ի նորն յիշատակէ զԱշտարակ։ Յաւելուածս հնոյն ի կարգես անծանօթից կարգէ «զԱշնակն աւան», զոր ես զայս համարիմ Աշտարակ[147]։ Երեքին հնաշէն եկեղեցիք նորա, Սուրբ Մարիամն, Կարմրաւոր, և Սուրբ Վարդան անուանեալ՝ նշանք հզօրք են հնութեան սորա։ Ո՞ւր թողցուք, զի և գիրք նորա ի վերայ Քասաղ գետոյ զդոյն ցուցանեն, յարևմտից հիւսիսոյ ունելով զԱրուճ յիշատակեալն յԵղիշէայ (ուր այժմ բնակին Տաճիկք, և անուանին Օրուճլուք). յարևելից զձորն Քասաղայ և զԵղուարդ գիւղ։ Ի հարաւոյ զՕշական, իսկ ի հիւսիսոյ զՄուղնի, և զԿարբի։ Արդ եթէ Վաղարշակերտ փոխեցի յԱլաշկերտ, զարմանք ի՞մն են, եթէ և Աշնակն փոխեալ իցէ յԱշտարակ։

Ի վերայ գետոյն ընդ անցսն Երևանայ՝ ունի կամուրջ քարաշէն ձկունք նորա նոյնք են ընդ ձկանցն Օշականայ։ Քարատակք նորա լի են լօշտակօք, և այգիքն՝ խաղողովք. այլ գինի նորա ո՛չ այնքան յարգի քան զՕշականայն, զնորագեղայն, զԵրևանայ և զՎաղարշապատուն։

Մուղնի, կամ լաւ ևս ասել՝ Մղանի Սուրբ Գէորգ, է վանք իմն կառուցեալ մղոնաւ ընդ մէջ Աշտարակայ և Կարբւոյ[148]։ Եկեղեցին ի նորումս նորոգեալ՝ գեղեցիկ է, յոյժ և վայելչակերտ։ Ունի բերդապարիսպ շուրջանակի, այլ տկարաձեռն շինութեամբ։ Յառաջնումն

չէր գիւղ աստ, այլ այժմ իբրև երեսուն տունք յազգէ Հայոց բնակին անդանօր, նովին արտօնութեամբք՝ որովք և Վաղարշապատցիք յերի էջմիածնի։ Չիք վանք ինչ կամ սրբատեղի յաշխարհին Արարատայ (բաց յէջմիածնէ), այնքան խռնեալ ուխտաւորօք քան զայս Մողնւոյ Սուրբ Գէորգ։ Զի ոչ միայն Հայազգի ժողովուրդք ի հեռաւոր և ի մերձաւոր գաւառաց աշխարհին, այլ և Վիրք և Պարսիկք յիւրաքանչիւր աշխարհաց գան յուխտ առ ոտս Սրբոյն։ Ունի, ասեն, զանազան արտօնութիւնս, հրաշագործութեան սեպհականս ինքեան, ուստի կոյրք, կաղք, բորոտք, ուրուկք, գոդիք, մանաւանդ թէ և խելաժէտք գան բնակին ի նմա, ակնկալութեամբ առողջութեան ի նմանէ։ Յորս են և ազգ ինչ կանացի խելաժիտաց կոչեցեալ ընկնաւորս, զորոց ստորև։

ՄՈՂՆՈՒԽՏ

Կամ, տօն յիշատակի նահատակութեան սրբոյս, հանդիսանայ ի 18 ամսեան Սեպտեմբերի, և վասնզի ամենայն ժողովուրդք աշխարհին ո՛չ կարեն ի մի աւուր խմբել աստանօր, և եթէ խմբէին ևս՝ վնաս կենաց բազմաց լինէր փոխանակ շահու, վասնորոյ հոգացան խոհական առաջնորդքն միշտնջենաւորել զտօնն ցեօթն շաբաթս հետագայս։ Ըստ տեղեաց տեղեաց սահմանեալ են և աւուրք եկից. իւրաքանչիւր ուխտաւոր պատրաստէ իւր պաշար զազնիւ և զփափուկն ի կերակրոց և ըմպելեաց, թխէ զգաթայ, զթերթ, զկտաբ և զլօշ ի նաշհոյ, առնու ընդ իւր խաշածս մսոյ. գինի երկոքումբք տկօք, և զհամէս կամ զգինւոյ մաղալ յամենայն պտղոյ։ Զգենու եթէ ունի և կարէ, իսկ թէ ոչ՝ յանօթի առնու ի դրացւոյն զլաւն և ըզմեծագինն զգեստուց և զարդուց նորա։ Պճնի և հեծանէ ի ձի՝ յէշ՝ կամ ի ջորի իւր՝ թէ այր իցէ և թէ կին։ Առաջեաւ վարեն նորա և ըզոչխարն մատաղացու, գան և վրան հարկանեն արտաքոյ վանացն, ուտեն և ըմպեն զեղխութեամբ զգիշերն ողջոյն, զենուն զոչխարանին ի մատաղ, և զմորթ նոցա երեւուն հանդերձ տուեալ ողորմելի վանականացն, զմնացեալն ամենայն խորովեն կամ խաշեն, և ուտեն։

Իբրև օրն զգիշերն մերկանայ, շատ այնք են՝ որք և՛ զսեամս դրաց եկեղեցւոյն չկոխեն. բայց որք բարեպաշտք են՝ գնան յեկեղեցի, համբուրեն զտապան նշխարաց սրբոյն, և արկանեն ի գանձանակն եդեալ ի վերայ՝ զփող մի՝ կամ զերկուս։ Ծախք իւրաքանչիւր ուխտաւորի վասն իւր՝ ըստ սակաւագունին, հասանէ մինչև ց30 արծաթի դահեկանս, իսկ մատուցեալն սրբոյն, միայն դանկ մի կամ երկուս։

Ազգ ինչ յաղտաժետաց տեղւոյն՝ մանաւանդ կանայք ի խելաց անկեալ, թէ ինքնահնար դիտիւ և թէ խրատու՝ դժուարանամ որոշել, խորամանկեցին զայն ճարտար խաբէութիւն, որով ընդ հարուստ ժամանակս սասանեալ զահի հարան ժողովուրդք: Զորս յառաջն եղեն՝ թողում, զոր ես իսկ աչօք տեսի, զայն գրեմ: Կոյս ոմն Վաղարշապատցի՝ լուսնահար, հասարակօրէն Բռեմի աղջիկ կոչեցեալ՝ որոշեցաւ ի վանս Մողնւոյ, և յաւուրս տօնի նորա հանդիսանայր ընկնաւոր: Մեկնութիւն բառիդ պանկեալն ցուցանէ, այլ գործք աղջկանն Բռեմայ՝ առաւել ևս, վասնզի ի գնիլ ահաւոր խորհրդոյ կենարար մարմնոյ և արեան Տեառն, եկն այս աղջիկ՝ և գխախախ դիմօք և փրփրեալ կատաղութեամբ անկաւ ի մէջ եկեղեցւոյն անշշուկ ամենեցին՝ իբրև զկէս մի ժամու: Զահի հարան ժողովուրդք, ճիչ բարձին կանայք, խռովեցան կղերք սրբասացութեանն, և խափանեցաւ պատարագն: Գլուխ ամբարձ յեղակարծուստ, և մոլեգին կատաղութեամբ եհար զքարի: Ապա ի բերանոյն փրփրելոյ՝ եհան զայս պատգամ, իբր ի դիմաց սրբոյն. «Կողբայ Մէլիք Աբրահա՛մ, քու մատաղն շան միսայ. ես քոյ դաշխայ սև եզն կուզեմ»: Զայս սասցեալ, վերստին անշնչացաւ: Եւ ահա՛ ճիչ կանանւոյն ելից յեկեղեցին վերստին: Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, որ խնամ մեծ տանէր՝ որպէս արտաքին շինութեանցն՝ նոյնպէս և ներքին հոգևոր պայծառութեան վանիցն, յարուցեալ եկն առ աղջիկն, և չկարաց ազդել ինչ կամաւոր անզգայութեան նորա: Ուստի զայրացեալ ոգւով. հրամայեաց Գրիգորի Երևանցւոյ սարկաւագի իւրում, բերել իւր զկնքամոմ և զճրագ: Եւ հալեալ անտի կաթեցուցանէ ի սրունս ոտից ընկնաւորին, որում այլ ևս չկարացեալ ժուժալ, յառնէ և փախչի: Սկսանի ապա աստուածաբան վարդապետութեամբ բանալ զմիտս ժողովրդոց, և հրաժարեցուցանել զնոսա յայսպիսի ի դիւահնար և ի հոգեկորոյս ցնորից: Արդարև գործ արժանի տեղապահի Հայրապետութեան Հայոց, որ զայսպիսի հին և ցնորական ինչ աւելորդապաշտութիւն, և ի դիցն մնացեալ պատգամախօսութեանց խնչերանս, արմատաքի խլեալ եբարձ ի միջոյ*:

Ելաք ի գնին աւերակին Կարբւոյ առ երի Մուղնւոյ յափն Քասաղայ, յարեմտից հարաւոյ լերին Արայի՝ Ղառնիեառուղ կոչելոյ՝ ուր Վառվառէ կուսին աղբիւր, յաւուրս Վարդավառաց ուխտեղի: Զայս մեծ է անուանի աւան նախնեաց, որոյ յանուն երբեմն կոչէին եղիս-

* Բազումք կան ի Շրջան և յայլ գեղս Զաղայ յայսպիսի ընկնաւորաց. զորս ես եւ տեսեալ եմ, բայց նորա չերևին պատրողք և ոչ այդպէս լիրբք:

Մ. Չ.

կոպոսք Ամատունեաց կամ Արագածոտան՝ և այժմ բոլոր գաւառն և կցորդք նորա անուանին Կարբիբասար, նոյնացուցեալ Ստորագրին Հին և Նոր Հայաստանեայց՝[149] ընդ Թաղին Զորագիւղայ ի Կարբեցւոց բնակեալ՝ դնէ՛ առ Հրազդան վտակաւ։ Վերջին աւերած Կարբւոյ եղև յաւուրս Նադրայ արքայի Պարսից, յորոյ ի բնակչացն կէսք գնացին ի Զմիւռնիա, իսկ կէսք եկին յԵրևան և բնակեցան ի Թաղին Զորագեղայ, յորոց մի էր Նիկողայոս Թաղիադեանց նախահաւ իմ։ Յարևելից հիւսիսոյ սորա անկանի լեառն Արայի՝ և ձոր գետոյն Քասաղայ. ուղիղ ընդ յարևելս պատնէշ կամ սանգարն քարակարկուռ Նադիրայ, ուր ընդ Օսմանեանս պատերազմեալ և յաղթեաց, որպէս յիշէ Աբրահամ կաթուղիկոս[150]։ Առ որով անկանի Եղուարդ։ Ի հիւսիսոյ՝ Սաղմոսավանք[151] և Ապարանքն անուանեալ գաւառ, մինչև ի Բամբակաձոր կամ ի Տաշիրս։ Ի հարաւոյ Մուղնի, և յարևմտից լեառն մեծ Արագածու, և աւանն Ագարակ և Փարպի՝ ուր եկեղեցին է Սրբոյն Գրիգորի։ Զայսու ժամանակաւ աւեր էր Կարբի, այլ շէն կային ի նմա, թէպէտև լքեալք՝ հետագայ հինաւուրց և պատուական եկեղեցիք։ Առաջինն էր վանքն Սրբոյն Յովհաննու Կարապետի՝ կամ Յովհաննավանքն[152], կառուցեալ ի սրբոյ Լուսաւորչէս մերմէ. միագմբէթ, բարձրագագաթ, և անսիւն ի ներքուստ՝ վեցեքին խորանօք։ Իսկ գաւիթ նորա առաւել ևս հոյակապ քան զեկեղեցին՝ հաստատեալ է ի վերայ չորից միապաղաղ հաստակառոյց սեանց քարեայց, յորում էին գերեզմանք նախնեաց, այլ ի պատճառս արջառանոց ձմերանի յօրինելոյ զայն ինքեանց շրջակաբնակ գիւղականացն Տաճկաց, և առաւել ևս վասն անփութութեան իմոյ և որոց ընդ իս՝ ղանց արարի որոշել։ Համանման Զորագիւղեան Անապատին Երևանայ, կառուցեալ է և սա ի վերայ անդնդախոր ձորաբաշխին՝ ուստի և Քարփի կամ Քարափի անուն, որոյ ժայռք առհասարակ լի են անմատչելի այրիւք և քարանձաւօք, որք ըստ կարծեաց հինաւուրց մարդկան, պարունակեն շատ գանձ և գրեանս։ Պատանի ոմն հայ ազգաւ, անդէորդ Աշտարակայ, որ յանդս Կարբւոյ արածէր զխաշինս իւր՝ յամին անցելոյ, պարանաւ կախեցաւ ընդ զարհուրելի սեպուհն ի վայր յայր մի՝ որսալ իւր հաւս, և եբեր անտուստ զՅայսմաւուր մի գրչագիր, զՇարական և Ժամագիրք հի՛ն յոյժ։ Բայց զայսոսիկ տեսի, ասէր, առընթեր մտից այրին՝ ուր լոյս էր, և ի ներքսագոյնն չհամարձակեցայ մտանել։ Ի մէջ աւերակացն էր այլ եկեղեցի բայքայեալ, և արտաքոյ քան զնա յարևմտից կուսէ Կարբւոյ՝ վանքն Սուրբ Սարգիս կոչեցեալ, քարաշէն, գեղեցիկ, և նոր՝ թէ զոգցես։ Տարածութիւն աւերակաց սկսեալ ի Մուղնւոյ ձգի մինչ ի

Սաղմոսավանքն՝ ընդ երկայնութիւն ի Հարաւոյ ցՀիւսիս. իսկ լայնութիւն նորա ի ձորոյն Քասաղայ մինչև ի Սուրբն Սարգիս՝ յարևելից յարևմուտս: Որով երևի, զի ի հնումն էր արդարև աւան մեծ և հզօր, այցե։էտ: Ունէր և վաճառանոց գեղեցիկ՝ ըստ երգոյն.

«Դուքան բազար է Կարբի,
Գինի խմողն արբի»:

Յաղագս խորիմաց համճարոյ և հնարագիտութեան Կարբեցւոց՝ բազում ինչ լսի յասուլիս հասարակաց, իբր թէ սատանայ և Կարբեցին դաշնակուռ եղեն գործել զերկիր: Եւ դաշին զօրութիւն էր՝ զի որ ինչ միանգամ արդասիս նոցա բուսուցէ երկիր՝ զգլուխն Կարբեցին առցէ, և զտակն սատանայ: Եւ այսպէս ցանեցին և հնձեցին զցորեան, և շտեմարանեաց Կարբեցին զշեղջ ամենայն՝ և սատանայի մնաց միայն խոզանն յանդի: Յամին երկրորդի յեղաշրջեաց սատանայ զդաշնն, և Կարբեցին մշակեաց զբանջար արմատաբեր, որով շահեցաւ սա ի գլխանս նորա: Դարձեալ փոխեաց զդաշնն, և ցանեցին խառն զհասկաբերն և զարմատաւորն ի միասին, և ի ժամանակի հնձոցն վճռեցին. զի նա առցէ զամենայն, որ նախ զարեն տեսցէ: Սատանայ յարևելս կոյս ուղղեաց զաչսն, իսկ Կարբեցին յԱզատն ի վեր ի Մասիս, որոյ բարձրութիւն ձինափաղփին զագաթան յարեգական նշողեալ ճառագայթից՝ նախ փայլեաց քան զդիր հորիզոնի աչաց խաբողին: Ուստի Կարբեցւոյն վիճակեցան բերք, և սատանայ ամաչեցաւ: Ասսուստ ոճդ «Սատանախաբ Կարբեցի» հասարակ է ի բնակիչս Այրարատեան աշխարհի[153]:

Թէ յամառան հիւր որ գնայ, ասեն, ի տուն Կարբեցւոյն՝ նախ ի պարտէզ սալորոցն հրաւիրէ, զի խակակուտ ազոխուլք ատամունք առցին, և զհաց մի՛ կարասցէ ուտել: Իսկ եթէ ի ձմրան՝ զտանիսն նոր հողով շաղէ, և զհիւրն անդ ճեմեցուցանէ՝ զի պնդեսցին տանիք իւր, որ է ասել, թէ անգործին հաց ձրի ո՛չ տայ Կարբեցին:

Եկաք այսօր աստի ի զնին Սաղմոսավանից, որ է մի ի նախապայծառ վանորէից աշխարհիս՝ առաւել անխախտագոյն քան ըզՅովհաննավանքն: Զկնի Ռուսաց՝ մասն ինչ ի ճոխագոյն բնակչաց Բայազիտայ և սահմանացն զաղթեալ բնակեցան ի Կարբի, և ի Սաղմոսավանս, և օր ըստ օրէ շինութեան և պայծառութեան նորանոր միտ դնէին:

Քերելով զեզերբք վտակին Քասաղայ ի բարձանց՝ եկաք ի գաւառն, որ այժմ անուանեալ կոչի Ապարան: Եւ է կրկին Ապարան, որ ի լեռնէն Արայի սկսեալ ձգի ի մէջ Արագածուն յարևմտից՝ է

դաշտավայր լեռնապարփակ և վայելուչ, խոտաւէտ և մեծ գիւղօրէիւք, զորս նախ ելից բնակչօք Սարդարն Երևանայ ի գերելոց անտի Վաղարշապատի և Բասենոյ, և յետոյ՝ և ևս ճոխացուցին Ռուսք գաղթականօք օսմանաստանաբնակ Հայոց: Յայս գաւառ անկանի վանքն Հռոմոսի՝ կառուցեալ ի ձորամիջին Քասաղայ, ընդ որ անկանի ճանապարհ Երևանայ: Աստի սկսանի առանձնակ գաւառն անուանեալ Բաշ Ապարան, որ այնինքն է ըստ Հայ բարբառոյս՝ Բաշ, կամ ըստ Թուրքացն՝ Գլուխ Ապարանից: Օդ երկոցուն ի միասին առեալ ցուրտ է յոյժ և առողջարար, ուստի ամի ամի ելանէր սարդարն Երևանայ և Հայրապետն Հայոց, յայս տեղի զովանալ ի տօթոյն ամարայնոյ: Ունի Էջմիածին աւերակ իմն ամարանոցի նախնի կաթուղիկոսաց հուպ առ գիւղն Մէլիք Ներսէհի կոչեցեալ, զոր խորհէր նորոգել Մեծն Ներսէս արքեպիսկոպոս Վրաստանի՝ և կարգել ղայն համալսարան մեծ ուսումնականաց Ազգիս մերոյ: Այլ զի պատճառեցին թէ զկնի շինութեան նորա, ո՛չ ոք ի միաբանիցն մնայր յէջմիածին, և աթոռն Հայաստանեայց անշքանայր յաստուածային պաշտամանց, վասն որոյ արհամարհանօք իմն ի բաց եղին ղայս խորհուրդ:

Հուպ ի կիրճն Ապարանի, որ հանէ ի Տաշիրս՝ է եկեղեցի իմն քարաշէն ի փառաւոր յոյժ՝ յանկոյս Քասաղ գետոյ: Այս կիրճ ձիւնափակի գրեթէ զամիսս վեց, և արգելու զերթևեկ կարաւանաց Երևանայ ի Տփղիս, որք պարտաւորին կամ ընդ Գեղարքունիս ճանապարհորդել, և կամ ընդ Շիրակուան: Աստի խոնարհեալ զկողիւք Արագածոյ՝ եկաք ի Փարպի՝ գիւղ իմն առ ստորոտով լերին Արագածոյ, առ համանուն վտակաւ ի վերայ ճանապարհին, որ ի Կարբւոյ ի Բիւրական տանի: Իբրև չորս ժամաւ հեռի յէջմիածնայ յարևմտից հիւսիսոյ նորա, ունի եկեղեցի քարքարեալ՝ որ կոչի Սուրբ Գրիգոր: Ղազար մեծ ճարտասանն մեր էր ի գեղջէ յայսմանէ, ուստի և կոչի Փարպեցի: Շէն եկաց սա մինչև ի վերջին հարուածս Նադիր Ղուլի Շահին Պարսից, որ և զԴիլլի քաղաքն Հնդկաստանի էառ[54]: Բնակիչք նորա ցրուեցան ապա յայլ և յայլ տեղիս, գիւղն դարձաւ ի բնակութիւն Սէյդլու մահմէտականաց: Որոց թէպէտև հասարակեալ պաշտօն գողութիւն և աւազակութիւն է՝ այլ ի պատուոյ եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի ոչ պակասին իւիք: Զի սրբեն և յարդարեն օր ըստ օրէ, ճրագ մշտալոյս պահեն, ուխտս ուխտեն, և ի նմին իսկ կատարեն զառ Աստուած մաղթանս իւրեանց: Ընդէ՞ր: Վասն զի տեղին այն մեծարեալ է հանապազորդեան և զօրջի՛ր աստուածային իմն հրաշիւք: Եթէ հարցէ շուն կատաղի զո՛ք և իցէ ի բնակչաց շրջակայ քա-

ղաքաց և գիւղօրէից, և ախտ ջրավախութեան ընդ կոպար անցանիցէ բժշկական հմտութեան՝ կապեալ զնշառն սարեօք երկաթեօք՝ հեծուցանեն ի գրաստ, կամ զգլխով փաթթելով՝ առ ի նշան ճանապարհորդացի բաց հեռանալոյ ի նմանէ, զի մի՛ փոխադրեսցի ախտն առ ինքեանս. և այսպէս տանին ի Փարպի, և դնեն յեկեղեցւոջ օր մի: Խաղընկեր գրողիս Յովհաննէս Դաքաղեան Կարբեցի՝ ծնեալ յԵրևան քաղաքի՝ այսօրինակ տարեալ ի Սուրբ Գրիգոր և առողջացեալ ի խնամոցն Աստուծոյ, կեայ մինչև ցայսօր ժամանակի: Թողում և զայլ ոմանս, որոց չգիտեմ եթէ կենդանի իցեն մինչ ցարդ՝ թէ ո՛չ: Եթէ ոք նոր զգեստ ագանիցի, կամ նորոյ պարգևի արժանացէ՝ ուրախակից մտերիմն հանդիպեալ՝ ասէ ցնա. «Ի Փարպին գնացեր դու»: Կամ. «ե՞ս ի Փարպին գնաս դու»: Այսինքն թէ՝ որպէս ախտաւորեալքն ի Փարպի ձրի շնորհացն Աստուծոյ արժանացան, նոյնպէս և դու քոյոց, և այլն[155]:

Բերեալ զբազում աւերակօք գիւղօրէից և վանից, զվանչօք մեծի լերինն Արագածոյ, հասաք ի Բիւրական գիւղ Հայոց, իբրև քառասուն տանց: Յորմէ էջմիածին և լայնածաւալ դաշտն Արարատեան մինչև ի Շարուր և ի Բլուրն անուանեալ գիւղ, իբրև պտուղք ամարանի յակտեղ շարեալք ի պատարագ իշխանի՝ յանդիման երևէին: Եկեղեցի գեղջս խոնարհեալ էր, այլ ի մէջ ձործորոյն յարևելս հիւսիսոյ նորա էր այլ հին եկեղեցի քարաշէն և գեղեցիկ Արդավզիկ կոչեցեալ. այսինքն է՝ «Արդ ասասիկ Աստուածածին»: Առուն Շրվէշտիկ յարևմտից անցանէ և ոռոգանէ զդաշտորայ նորա:

Իջաք ի ձորն Տեղերայ, յոր անցանէ կարկաչահոս վտակն համանուն, և կալաք մեզ կարմրախայտս աւելի քան զքսան մի նոր օրինակ ձկնորսութեամբ: Մանկտին Բիւրականոյ հնձեալ ի շրջակայ լանջակողմանց լերինն մեծի զխոտ հին պարարտաքոյս, որոյ տերևք էին նման ձիթենւոյ կամ փշատւոյ, և ծաղկունք դեղին: Զոր ինքեանք փնդատ անուանէին, և ես՝ ձկնդեղ: Ապա կալեալ զառաջ մի ջրոյն դարձուցին ի վտակն մեծ, որպէս զի դադարեսցի ջուրն ի սաստիկ յուրոց ընթացից, և ապա առեալ ի խոտոյ սատի խրձունս ի ձեռս՝ մխեցին ի ջուրն և հարին վերևօք քարանց, մինչև փրփրեցաւ ջուրն, և ձկունք արբեալք որպէս ի գինւոյ՝ ելին կիսամեռ յերեսս ջրոյն, զորս անաշխատ կալան, խորովեցին և կերան, և ո՛չ ոք ի նոցանէ վնասեցաւ՝ կամ ի մէնջ:

Անցեալ ի վեր ընդ այս խորաձոր՝ տեսաք ի տեղիս տեղիս ամուրս անմատչելիս, և ի վեր ելեալ ի միւս կողմանէ գետոյն՝ եկաք ի Տեղեր, ուր էր վանք հրաշակերտ կառուցեալ յամպածայր բարձրաւանդակի

միոջ ձորոյն[156]։ Զև շինուածոց սորա, որպէս և տեսիլ դրիցն՝ ամենևին հանգունատիպ էր Յովհաննավանից Կարբւոյ, թէպէտև հարտարապետութիւնն առաւել ընտիր, և տեղին՝ ահեղագոյն ևս։ Դարձեալ ընդ ձորն՝ ուստի եկաք, յարևմուտս կոյս նորա ուղղեցաք զընթացս մեր՝ ընդ նեղսագոյն կիրճս, նեղուցս և կապանս անուր լերինն ճանապարհ արարեալ՝ երբեմն ընդ հիւսիս և երբեմն ընդ հարաւ՝ եկաք յԱմբերդն աւան, աւերակ և անխնամ՝ կառուցեալ ի ձորաբաշի առ համանուն վտակաւ։ Ի վերուստ որոյ խոյանայ եկեղեցի վայելչակերտ[157] և ամբողջ՝ ի սարաւանդակին բարձրութեան, այլ բերդն հզօր՝ որ շուրջ պատէր ի հնումն զսովաւ, աւերեալ է մինչ իսպառ. Թուիմ, ի բուռն իմիք գետնաշարժէ։ Վասն զի քարուկիր հաստահեղոյս և պնդակազմ բրգունք նորա երկուք՝ յանհնարին բարձրութենէ անտի պայթուցեալ անկեալք ի խոնարհ բուռն ճարճատմամբ, դեռ ըստ մեծի մասին ամբողջ կան ի խորութեան ձորամիջին։ Յանմատոյց բարձրութիւն վայրացս հայեցեալ՝ թուիմ թէ և առանց բերդի կարողք էին նախնի բնակիչք նորա պաշտպանել զանձինս ընդդէմ արշաւանաց թշնամեաց, ուստի և անուանեալ կոչեցին զնա՝ Անբերդ։ Իսկ ի միւս կողմանէ յամպահամբոյր բարձրութիւն դրից նորա ակնարկելով՝ թուիմ զնա կոչեցեալ Ամբերդ, այսինքն՝ Ամպ, կամ Ամպահամբոյր բերդ։

Այսօր կամք եղև մեզ ելանել ի բարձրագոյն գագաթն Արագած լերին, ուր է լիճ իմն ջուրց. մայր անհամար վտակաց և աղբերականց նորուն։ Պարապատեալ յերից կողմանց բարձրաբերձ ապառաժիւք, յորոց՝ ջերմութեամբ արեգականն ելեալ տեսակ ինչ ազնուագոյն ծծմբոյ, մաքուր իբրև զէլէկտրիոն՝ սառուցեալ կախի զբարձանց։ Անհաս գոլով ի ձեռաց հողեղինաց, գնան մարդիկ և հրացանաւ բեկանեն և ընկենուն ի վայր զծորս նորա. զոր և մեծագընի յոյժ վաճառեն ի պէտս դեղոց ևեթ։ Քանի՜ պատուականագոյն լինէր արդեօք ամբողջ ծոր նորա, եթէ հնարէին մարդիկ մի կամ միւս եղանակաւ ի ձեռս բերել։ Ունի Արագած և հանքս ոսկւոյ, պղնձոյ, և արծաթի, զոր հաւաստի առնեն վտտութիւնք անտառաց թեղւոյն և այլոց ծառոց բուսելոց ի ջրարբի ծործորս նորա։ Ստորագրութիւն բուսոց լերին այսորիկ՝ վարժարանի բնագիտաց պէտս ունի, քան թէ իմոյս մուրացիկ, դուզնաքեան, և հասևխած տեղեկութեան։

Իջաք այսօր ի Բիւրականայ և ագաք յԱգարակն գիւղ, կառուցեալ առ համանուն վտակաւ, ի ստորոտս լերինն մեծի։ Ի հնումն էր սա աւան մեծ, և որպէս ոմանք երազեցին՝ մայրաքաղաք իսկ, այլ

այժմ խպառ քայքայեալ և աւերակ է։ Բնակիչք նորա 15 տունք Տաճկաց։

Որովհետև յընթացս ուխտագնացութեան ի Մուղնի, պատուէր և եկեղեցին Կուաշայ կամ Կօշայ, թէպէտև ի ձեռս Թուրքաց՝ թեքեցաք և մեք անդր զերասանս երիվարաց մերոց։ Գտաք զնա իբրև ծերունի խոնչեալ ի կենաց, թիկն տալ զԱրագածով և հեալ ի մահ՝ ցվերջին շունչ իւր։ Լայնատարած այգեստանք նորա եղեն յանապատս փշաբերս, թաղք բնակութեանց նորա թաղեցան ընդ մացառովք մոլեխնոց, տունք աւերեցան, և եկեղեցի նորա՝ Կօշայ Սուրբ Սարգիս՝ մինչև ի սպառ անշքացաւ։

Ի վերուստ նորա ի սարաւանդակին կառուցեալ է բերդ հզօր ի կարմիր քարանց, որ համեմատութեամբ աւանին՝ ողջանդամ կայ և մնայ։ Յարևմտեան կողմանէ սորա՝ հոսի առուն Կուաշայ, ջո՜ւր ընտիր և պատուական, որ ոռոգանէ ի ներքոյ զդաշտն համատարած՝ մինչև ի նոր քաղաքն Սարդարապատ։ Ի ձախմէ առուոյս՝ է այլ խմնթև լերին, ուր են զարհուրելի քարանձաւք, և ի միջոյ միումն ի նոցանէ լսի խոխոջ ջրոյ բազմաց, որ թէ ուստի՞ գայ, և ու՞ր ելանէ, չկարացի տեղեկանալ։ Աստ մեռաւ կուրացեալն Տիրան արքայ Հայոց[138]։ Զի՞նչ զարմանք, թէ և աստ գտցին հնութիւնք Ազգիս։ Այժմ պայազատեն զայս գիւղ, ճոխացեալ իբրև 120 տամբք ի Հայոց և ի Տաճկաց՝ երկոքին Հայկազունքն Երևանայ՝ Յովսէփ Խաչատուրեան, և Մկրտիչ Քարտաշեան՝ ատենադպիր Խորհրդարանի Կաթուղիկոսարանին ամենայն Հայոց։

Վերադառնալ կամելով ի Սուրբ Էջմիածին՝ հրաման առի ի Բարսղայ եպիսկոպոսէ՝ գնալ ի Փանիկանոց* գիւղ, որ անկանի ի մէջ Արագածու լերին և Դողս գեղջ, հեռի ի Վաղարշապատայ՝ իբրև երեք ժամու ճանապարհի, զի անդ էր ի ժամանակին հօրու իմ Պետրոս Ղոնջագիւլեան-Էլիմիրզեանց։

Կացի առ նմա զաւուրս երիս, և բազմիցս զանգատ յարուցի զթերութենէ ուսման իմոյ, աղաչելով զնա հնարել և հանել զիս անտուստ։ Իսկ այրն դարբին գոլով արուեստի՝ յանպիտանեաց սակի դնէր զամենայն ուսմունս արտաքոյ նորա, և խստի յորդորէր զիս կալ և մնալ անդ, զի՝ «Մատաղ ես, ասէ, մատուցեալ Լուսաւորչին, որպէս պատմեաց ինձ մայր քոյ»[139]։ Եւ այսպէս բարւոք ի միտ առեալ իմ զվիճակն ճակատագրեալ ինձ ի ծնողաց իմոց՝ մեկնեցայ. և ընդ Աղաւնատուն և ընդ Դողս ճանապարհ արարեալ՝ եկի յԷջմիածին յամսեան Հոկտեմբերի ի 16։ Եւ եղէ անդ՝ դրագիր առանց գրոց։

* Չիցէ՞ այս Հոռոմոցն Մարգ. յիշատակեալ նախնեաց։

Այլ ա՜ղէ՜տ ինձ, որ իբր թէ մանուկ մտավարժ ձեւանալով՝ գրեալ էի զամենայն անցս այսր ճանապարհորդութեան իմոյ, յորում է մի առ մի նշանակագրեալ զխանդաղատանս դստեր Քուրդ իշխանին Ահմադայ՝ որ յԱպարան, զանցս Փոնձւոյ ծերունւոյ Եւրականցւոյ՝ որ կոնծէր զմեր ամենայն գինի[160]. զԹամթէոսի մոնքի՝ ընդ Մարտիրոսի եպիսկոպոսի Տաթևացւոյ, և այլ հազար պիտանի և անպիտան ասուլիս սորա և նորա։ Զոր իբրև դարձայ՝ խնդրեաց յինէն Յովսէփ Եւդոկիացի սարկաւագ սրբոյ Հայրապետին մերոյ որ ցարդ մտերիմ ինձ համարեալ, և տարաւ յանձնեաց զայն Մարտիրոսի եպիսկոպոսի, զորմէ միմիայն բառ ևեթ գրեալ էի «անյարմար»։ Որ եղև ինձ հազարիցս հազար անգամ չար, զի ի վաղիւ անդր կոչեալ զիս յատեան Տեղապահին՝ ինքնին եկաց իմ դատախազ և դատաւոր միանգամայն։ Հրամայեաց զոտս ի կախաղան արկանել, և այնքան գանակոծ առնել, մինչ արիւն յորդութեամբ հասել ի պրճեղաց ոտից իմոց, և գրեթէ կիսամահ արարեալ՝ ասաց. «Գնա՛ արդ, և ուսիր նոր եղանակ գիրք շինել»։ Սա յետոյ կարգեցաւ արքեպիսկոպոս Սիւնեաց, և իբրև քաջ ի վերայ հաս անմեղութեան դիտաւորութեան իմոյ՝ առաջինն ի բարերարս իմ հանդիսացաւ, և բերան բարեխօս առաջի Մեծին Ներսիսի արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանեայց ի Տուշի, որպէս յետոյ պատմելոց եմ։

Իսկ Յովսէփ սարկաւագ, որ թէպէտև հասակաւ և աստիճանաւ ի վեր քան զիս էր, և յեպիսկոպոսաց անգամ ակնածելի, ո՛չ կարաց զերծանել յարդար վրիժուց իմոց։ Գայր սա ստէպ ձայնաւորաց աշակերտ ի գրագրարան մեր, որ բարձր գոլով քան զվեհարանն ընդ մի և եթ նեղսագոյն քարեայ սանդուխտս ոլորունս ի վեր հանէր։ Վասնորոյ յաւուր միում ի սաստիկ ձմրան, մինչ նա զդասն գեղգեղէր, ես առեալ զկուռ կաղինս կարգ առ կարգ շարեցի ի վերայ աստիճանացն։ Եւ նա կարի զուարթացեալ ի միտս իւր, և իբրև ընդ մթին յանդունդն ի վայր զոտն կոխեաց յաստիճանն առաջին՝ գլորեցան կաղինքն ի ներքոյ ոտից նորա, և ինքն այնքան սաստիկ հոսեցաւ յաստիճանաց յաստիճանս ցյատակն ի վայր, մինչ զի բեկաւ ողն նորա, և դեռ ևս թեք մնայ։

—Կերա՛ր. թէ մարդ ես այդքանդ բաւական է քեզ,—ասացի ցնա։ Երկու ամսով հիւանդ մնաց, և յորժամ առողջացաւն՝ ի Զատկին ողջոյն տուաք իրերաց, և եղաք ողջունեղբարս։ Յորմէ մինչ ցարդ՝ շնորհիւ վերին խաղաղութեանն՝ այլ ևս չեմուտ ի մեզ խռովութիւն ինչ։

Զայսու ժամանակաւ մեծանուն գիտնականն Հայոց Զաքարիա

վարդապետ Գիւլասպեանց Տփղիզեցի, եկեալ ի Կոստանդնուպօլսոյ և ի միաբանից ոմանց էջմիածնի ախոյեան հզօր վարկուցեալ ընդդէմ Ներսիսի Մեծի, թէ ըստ գիտութեանն՝ և թէ ընտանեաց ազգութեանն ի քաղաքին, կարգեցաւ նուիրակ Վրաստանի։ Իսկ այրն գիտուն, այլ պատանի հասակաւ և փորձառութեամբ՝ փոխանակ արդարութեամբ զիւրն կշռելոյ, կաշառեաց ի կողմն իւր միայն զնենգութիւն խորհրդոց թշնամեացն Ներսիսի։ Ուստի նախ քան զհասանիլ իւր ի Տփղիս՝ սպառնացաւ գետամոյն կորուսանել զնա։ Այլ Մեծն Ներսէս զաղախօք վանեաց զնա յէջմիածին, ո՛չ ներելով նմա գոնէ և զստինս զմօրն համբուրել։ Սա որքան զիարդ և այլոց թուիցի գոլ՝ ինձ բարի մեծ եղև յոյժ. քանզի ի գալ նորա կորիզլուխ, ո՛չ այլ ունէր առնել, քան յուլանալ ի խցի՛ հոգեմաշ մտածութեամբ[161]։ Ուստի և սկսաւ յաշակերտութիւն ընդունել իւր նախ՝ զտիրացուս Գրիգորի եպիսկոպոսի զանձապետի Աթոռոյս, ապա և զոմանս յերևելի վարդապետաց։ Զայս տեսեալ տրտմեցայ ի խիղճս մտաց, զի Յովհաննէս վարդապետ ո՛չ միայն ատեայր զնա, այլ և զուսումն նորա ընդհանրապէս. ուստի և մեծապէս խափան լինէր իմում յառաջադիմութեան։

Ունէի ի դարակ գրասեղանի իմում, մերձ զերկհարիւր *«էկաւ հասաւ» թէ ծաղկեալս և թէ գրեալս յինէն, զանուանս տուողացն, և զորքանութիւն դրամոցն միայն ո՛չ յիշատակեալ։ Եւ ինձ յայնժամ գրագրապետ մեր գրել մերձ երեսուն ի նոցանէ՝ անտեղեակ զոլով առաջնոցն։ Զանուանս որոց և զգումար դրամոցն կամ զինչութիւն նուիրացն իսկոյն ներմուծեալ յառաջինսն՝ տարայ ետու նմա, զարմացաւ ընդ անհնարին արագութիւն և ընդ պարզընթերցանութիւն գրութեանն։ Եւ յաւել տալ ինձ և զերեսուն ի նորոյ «զաբալ մին շաբաթու», որպէս և ասացն։ Դարձուցի և զայն յառաւօտու վաղորդենին, և շահեցայ ինձ զմեծ բարեհաճութիւն նորա, որով տարեալ մատոյց զառաջեաւ Հայրապետին Եփրեմայ, և պատմեաց նմա զառիթ զարմանաց իւրոց։ Իսկ այրն տօնելի, որ ո՛չ երբէք անքաջալերս թողոյր զգուզնաքեայ նշմարանս ուսումնասիրութեան՝ կոչեաց զիս, արկ զինև վերարկու ի չուխայէ պատուականէ, եդ ի ծոց իմ զզմելին և կախեաց ղենչակ զգօտւոյ իմոյ՝ ասելով. «Բարի է գիր, բայց կարդա Եւս»: Պատասխանեցի. «Հոգևո՛ր Տէր, Զաքարիա վարդապետ ուսուցանէ, եթէ հրամայեսջի՛ք, երթայց առ նա ուսա-

* «էկաւ հասաւ» կոչին այն տեսակ կոնդակաց Հայրապետին՝ յորում խոստանայ զտուրս նուիրեալս ինքեան, և փոխարինէ առաքողին զաստուածային օրհնութիւն։

նիլ զճարտասանութիւն»։ Յայնժամ պատուիրեալ Յովհաննու վարդապետի հակառակ կամաց նորա՝ տանիլ զիս առ նա, ասաց. «Գնա՛ լաւ կարդա՛, դու իմ որդի ես»: Եւ այսպէս սկսայ ընդ հզօր դաստիարակութեամբ նորոյ վարժապետիս այսորիկ՝ ուսանիլ զճարտասանութիւն գրելով օրինակսն համաձայն ամենայն ձևոց, զամիս հինգ շարունակ[162]։ Զի կարգեցաւ վարժապետ մեր Նուիրակ Բայազիտայ, և ես մնացի անդաս զամ մի ողջոյն զորմէ չեն կամք ինձ ասել ինչ[163]։

## ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

## *ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԻՄ Ի ՍԻՒՆԻՍ։ 1819*[164]

Լուսարար *Դանիէլ եպիսկոպոս կարգեցաւ Նուիրակ Սիւնեաց, համբաւեալն ի յոյժ բազկաց, որք և զանուն իւր գրել խնայէին։ Ուստի և ի խնդիր ելանէր այնպիսւոյ ուրուք, որ զեկեղեցական սպասաւորութիւն, և զգրութիւնս իւր կատարելութեամբ ի գործ դրնիցէ։ Եկեղեցական պաշտամունք մեր, որովհետև յերգս և ի շարականս վճարէին, և բնութիւն առատաբաշխ զլանայր ինձ զայս արտունութիւն անհրաժեշտ ձայնիւ հագագի իմոյ, զանձն դուզնաքեայ յայն պատշաճեցուցանել ո՛չ համարձակէի։ Բայց և ի գրելն վստահացեալ՝ նախընծայ մատուցի նմա զիմովսանն ծառայութիւն։ Ելաք միանգամ ես ընդ ճանապարհ Փարաքարայ յԵրևան։ Ուրանօր մատուցեալ զողջոյն հրաժարանաց խանդակաթ ծնողիս իմոյ՝ պսակեցայ մարգարտակաթ մանեկաւ արտասուաց սրբոց նորա, և զօրացայ օրհնութեամբ ծնողական սրտի աստուածպաշտութեամբն վառելոյ։ Զաւուրս երիս կացաք աստանօր, տեսանել մեզ զկազմութիւն հանդերձեալ ճանապարհին։ Դանիէլ եպիսկոպոս, առ ահի աւազակաց զճանապարհայն՝ կապեաց յազդեր իւրում զսուսեր, զոր միայն կարող էր ի կիր արկանել ի մէջ ամենայն զինուց, ի կորովութիւն բազկացն ապաստան։ Յովհաննէս եղբօր որդի նորա պատանի առոյգ, և հասակաւ փոքր ինչ աւելի քան զիս՝ վառեցաւ ի սուր երկսայրի, ի հրացան և ի պարագայս նորա։ Մնաց ինձ իբրև պաշտօնէի սրբութեան, կրել զսրուակ իւղոյն օծութեան Սրբոյ Մեռոնի։ Զի խղճէր Դանիէլ եպիսկոպոս, և ի մեղս վարկանէր ծրարել զայն ի բեռան։ Եւ այսպէս թէև ի գալ վտանգին ամենևին անպատսպար, յանձին կրել հա՛մարէի զորս միանգամ ի վերայ ածէր խժութիւն աւազակացն, սակայն և յարգութիւն մեծ՝ զոր տայր Ազգն իւղոյն սրբութեան, սնափառութեան իմոյ բաժանորդ նմին զիս թուեցուցա-*

նելով՝ բառնայր ի մտաց զամենայն կասկած։ Պատրաստեցան բեռինքն, և յուղի անկեալ յԵրևանայ եկաք յԱղբաշ գիւղ, ի հարաւոյ յարևմտից աւերածոցն Դվնայ։ Անդաստանք սորա հռչակաւորք են ի բերս ընտիր և պատուական որիզոյ, որ իշխանաց և թագաւորաց միայն լինի կերակուր։ Զի թէպէտև առատ յոյժ, և յամն ողջոյն գտանելի, սակայն առ մեծի ազնուութեանն և աճեցուն բնութեան, կրկնապատիկ աւելի գնով վաճառէր քան զպատուականս այլ և այլ անդորէից գաւառիս։ Գիւղականք այսպիսի բարեբեր գեղջ, հարկաւ հարստանալ պիտէին, այլ ընդ հակառակն յանուրս չքաւորութեան կաշկանդեալ կային։ Վասնզի Յուսէին խան բդեշխն Երևանայ, որպէս ամենայն գիւղօրէից աշխարհին, նոյնպէս և ողորմելի բընակչաց սորուն բաժանորդ լինէր ամենայն հերկոց։ Տայր իւրաքանչիւր տան լուծն մի եզանց, և սերմանիս որիզոյ, բամբակի, և այլ ևս շահաբեր արդեանց և արգասեաց։ Ցանէին նոքա, և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ մէջ կիսէր զկալ նոցա ի բաժին, ապա ի մնացորդացն հատանէր և զհասսն արքունի, մինչ զի չմնայր ինչ նոցա և՛ ծախուցն բաւական։ Եթէ դէպ լինէր երբեմն երկնառաք պատուհասիւք ստերջանալ անդորէից, և զլանալ ի բերսն, սա զվնասն զանցառութեամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր զոր ինչ ի տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում։ Նա շատ և այն էր՝ զի դերևեալ, յայսցանէ զանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր, և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս ի Ղազբին, և ճոխացուցանէր զգանձն[165]։ Պիտէ՞ր արդա՞րև ժողովրդեան յուլի և ծուլի այսպիսւոյ՝ իշխան այսքան խըստասիրտ։ Վասնզի ապաւինեալ ի քաջաբեր երկրին արգասաւորութիւն և յիւրեանց սակաւապիտոյութիւնն, շատանան սակաւիկ ինչ մշակութեամբ ցորենւոյ, գարւոյ, կորկան և նմանեաց, և զանդորայ արգաւանդ անխնամ ամայի թողուն, յորոց մարթ էր յարուցանել անբաւ մթերս վաճառաց, և նախանձ աշխարհի յօրինել զաշխարհ և զանձինս իւրեանց։ Միայն լեռնակողմանք նահանգիս առատութեամբ մատակարարել կարեն զամենայն ազգս սննդարար կերակրոց բնակչաց համօրէն Երևանայ. և արօտս հօտից և խաշանց նորա։ Իսկ դաշտն լայնածաւալ և շատաջուր (թողեալ զլեզակ և ըզշաքար, որք օտարք են նորա՝ բայց կարեն ընդելանալ քաջաբերտն

վաստակօք), կարեն զընիկն իւրեանց քաշաբերել զորդնն կարմիր և զտոնիր յափունս Երասխայ ընդ երկայնութիւն, զանտառս մեծամեծս թթենեաց ի նիւթ շերամոյ, բամբակ, և զամենայն ազգս կտաւոյ և ձիթոյ գրե՛թէ յամենայն ուրեք։

Եկաք ի Դօխկուզ գիւղ, բնակեալ ի Հայոց իբրև 50 տանց և ի Տաճկաց 25-իցս։ Աստանօր պատահեցաւ մեզ Պարսիկ ոմն, որ կեղծէր զանձնէ պալատական գոլ Քալբալի խանին Նախչուանայ[166]։ Սա ընդ պատրուակաւ մարդասէր այցելութեան եկեալ առ Դանիէլ եպիսկոպոս, առ անգէտն բարբառոյ իւրոյ՝ զննէր մանր խուզողութեամբ զթեռ և զբեռն մեր։ Կասկած էառ Դանիէլ եպիսկոպոս զառնն նենգութենէ, և խորշեցաւ որչափ և կարացն ի նմանէ։

Վաղայարոյց ընդ առաւօտն, ընդ բուք և յանձրև յուղի անկաք դէպ ի Դէվալուն անուանեալ գիւղ, զոր Մարդակերտն համարիմ գոլ Շարուրայ, որոյ բնակիչք էին 200 տունք Տաճկաց։ Լռին էր ճանապարհն յերթևեկաց, մթին և երկիւղալից՝ ի պատճառս աւազակաց խմբովին շրջելոց անդ՝ ի խնդիր կողոպուտից։ Դեռ ո՛չ հատեալ մեր զկէս ուղւոյն այնորիկ՝ և ահա՛ եհաս ի թիկանց Պարսիկն երեկեան։ Ե՛ւ ողջունեալ զմեզ, զփորձ փորձել կամեցաւ զօրութեան մերոյ։ Վասնորոյ յառաջ խաղացեալ նորա ի բեռնն կոյս՝ շօշափեաց զայն ձեռօք, և հարց զԴանիէլ եպիսկոպոս, թէ՝ «զի՞նչ ինչք իցեն ի նմա»։ Պատասխանեաց ինև նմա. «Գանձ բաղում, այլ քեզ զի՞նչ»։ «Ինձ ի՞նչ,— ասաց,— ո՞չ գիտես զի ահա աւուրք երեք են, որ զհետ զամ հետոց ձերոց ի խնդիր բեռինս այսորիկ»։ Նախքան զթարգմանել իմ զայս ի լուր ապաժոյժ եպիսկոպոսի իմում, ասացի ցնա. «Յո՛ւշ, Տէ՛ր, յու՛շ, կորեա՛ք»։ Դեռ կայր Պարսիկ մեր ակնկալ պաղատական դարձի նորա, այնինչ հուպ առ նա մատուցեալ արհւոյն՝ կալաւ զաջոյ բազկաց նորա, և առանց օգնականութեան զինուց այնքան պինդ սեղմեաց, մինչ ուշաթափ ի ձիոյ ի վայր անկանել նորա։ Թողուլ զնա յայն ատիճան և գնալ, վտանգ մեծ բերէր, բայց և այնպէս ընկերել հուղկահարին ճահի չէր։ Վասնորոյ հրամայեաց եղբօր որդւոյ իւրում ապահովել նախ՝ զզէնս նորա, և ապա իջեալ ինքնին և կալեալ զականջացն ոլորեաց՝ և յուշ դարձոյց զնա՝ ասելով. «Գա՞ս արդ ի խնդիր բեռինս, տա՛ր՝ եթէ կարող ինչ իցես»։ «Ո՛չ, ո՛չ,—պատասխանեց նա,— զօլնզդա վար մարասա՛», այսինքն՝ կայ ի կռանդ օձագաւազա՛նդ դու։ Ի զո՛ւր խնդրեաց զզէնս իւր, սոսկ կատակի աղագաւ արարեալ զչարիսն՝ խոստովանելով,

* Կարէ՝ արդեօք պատահարս այս մեկնել զիմաստ բանի Փրկչին՝ «Ի ճանապարհի ողջոյն ումեք մի՛ տայցիք»[167]։

զի ո՛չ դարձոյց Դանիէլ եպիսկոպոս մինչև հասաք ի Դէվալու գիւղ, որ անկանի ի միջոցս դաշտին Շարուրայ յարևմտից կուսէ բլրակի միոյ։ Հեռի ի Վիրապէն եօթն փարսախօք, ի հարաւոյ լերանց Գառնւոյ՝ զորս այժմ Ալատաղ անուանեն, Ալա չիչէք, կամ Գառնւոյ սարեր, ի հնումն Զրվէժ։ Զկնի յաղթութեան Ռուսաց ելին Տաճիկք գեղջս այսորէկ ի Պարսկաստան, և փոխադրեցան ի տեղի նոցա Հայք ի քաջաց Մակուեցւոց։

Աստի չորիւք փարսախօք հասաք ի Սագարակ գիւղ, որ ունէր տունս Տաճկաց 80։ Սա անկանի յարևելից հիւսիսոյ Դէվալուայ, կառուցեալ ի սարագարակ ծործոր ինչ լերանցն Արփայ։ Աստանօր աղբիւր իմն ցամաքեալ յերեսուն ամաց հետէ՝ բանիւր յայսմ ամի, և ոռոգանէր զմեծ մասն սեխանոցաց և պարտիզաց նորա։

Ի խօզ գիւղ Տաճկաց՝ յաւարտ դաշտին Շարուրայ՝ հոսի գետ հզօր անուանեալ Շարուրայ գետ՝ և ի Տաճկաց՝ Առփայչայի, յոր անուն կարդան նոքա և զԱխուրեանն Շիրակայ։ Որոց կոյր զկուրայն հետևեալ և իմ, կոչեցի զսա Ախուրեան Շարուրայ, զի զհին անունն ո՛չ ուրեք գտի։ Այս գետ գոյանայ յԱլաշիչէկ լերանց Գառնւոյ, և յանհամար յառաջս հատեալ ոռոգանէ անդորայ Շարուրայ, և դատարկի յԵրասխ մերձ առ Նորաշէն գիւղիւ, ուր ունի կամուրջ աւերակ, որ հանէ ի Մակու։ Առ Պարսից, որ իշխանութեամբ Շարուր պարունակէր գիւղս հինգ ընդ ամենայնն, յորոց երևելիքն էին ստորագրեալքդ ի վերոյ. իսկ այժմ պարունակէ առաւել քան զ25։ Ըստ մեծի մասին բնակեալս ի Հայոց։ Ցայս գետ իբրև ի սահմանագլուխ այժմեան դրից նահանգին Երևանայ՝ կնքեմ և ես զբան իմ։

## ՍԻՒՆԻՔ

## կամ

Սիսական աշխարհ ձգի ըստ Խորենացւոյն ի ծովէն Գեղամայ մինչև ի դաշտ մի՝ ուր գետն Երասխ անցանէ՛ ընդ խոխոմս նեղս և ձիգս, այսինքն ի Մուղան՝ ընդ յարևելս, յարևմտից ունելով զնահանգն Այրարատայ, ի հարաւոյ զմասն Փայտակարանի և զԱտրպատականս, և ի հիւսիսոյ զԱրցախ և զԱղուանս Հայոց[168]։ Երկիր նորա լեռնային և ըստ մեծի մասին թաւացեալ անտառօք մայրեաց։ Ամուրք անառիկք նորա բազմաթիւք են յոյժ, վանք և եկեղեցիք նորա անհամարք, ժողովուրդք նոցա բիրդք, այլ բարեպաշտօնք և սէգ ի մրրցմունս պատերազմաց։ Իշխանութիւն Սիւնեաց բաժանեալ ի մեծ և ի

փոքր, յաւուրց անտի նահապետացն Հայկազունեաց մինչև ցյետին ժամանակս Սարակինոսաց՝ միշտ նախապատիւ հանդիսացաւ յԱզգի մերում: Մեծն ի նոցանէ՝ որ և տանուտէր Սիւնեաց, նստէր ի Ծղուկս և ի Բաղս, երբեմն և թագ կապեալ ի գլուխ: Յորոց Անդոկ այնքան զօրացաւ յաւուրս Շապհոյ արքայի Պարսից, մինչև զի և զքաղաքն Տիզբոն յաւարի եհար[169]: Իսկ փոքրն՝ ի բուն Հայկազանց սերեալ՝ ունէր զգահն ի Գեղարքունիս: Մինչ ցարդ կան անդանօր մեծամեծ իշխանք որք ընդ անուանակոչութեամբ Մէլիքաց ընդ բռամբ ունին զազգն, և ի կարևոր ժամանակի կարեն հանել հետևակ և հեծեալ զօրս կրթեալս ի բնութենէ ի մրցմունս պատերազմաց: Հոգևոր իշխանութիւն Սիւնեաց է մի ի չորից մայրաքաղաքական արքեպիսկոպոսացն Հայաստանի, որ կայ ի Տաթև, և վարէ զիւր իշխանութիւն բացարձակ հրամանաւ: Ի բաց առեալ զԱրևիք և զԲաղաձոր, որք բերեն զամենայն պտուղս Երևանայ՝ ամենայն մայրիք աշխարհին բերեն խաղող, տանձ, սալոր, հոն, զկեռ, մոշ, մորի, ցուրդ, կաղին առատ, և շագանակ: Որպէս տեսցի՛ ի ստորև:

Ելաք ի Խօգայ և 8 փարսախօք հասաք ի Նախչուան: Լեռինք Զանկայ՝ որ ի ձախմէ ճանապարհին՝ ունէին զաղահանս ընտիրս ո՛չ իւիք նուազունս քան զԿողբայն: Այս քաղաք նախամայր քաղաքացն աշխարհի, զարմանամ թէ ընդէ՞ր զանց արարեալ ի Քաղդէացւոց և յԱսորւոց մատենագրաց, առ Պտղոմէոսի[170] միայն գրի Նաքսուանայ, և առ Յովսեպոսի՝ թարգմանութեամբ Հայկականիս՝ Աբովադիրիոն[171], այս է՝ տեղի ելից կամ շուոց: Այլ այս անուանք արտաքին մատենագրաց երևին յայտ առնել միայն զերկրորդ պաշտօն նորա, այսինքն շուարանն լինել որդւոց մարդկան ի Սենաար: Եւ ո՛չ զնախիշխանել Նոյի որդւովք հանդերձ անդր՝ և նախկին իջևան կամ քաղաք բնութեան յօրինելն զսա: Ասացի քաղաք բնակութեան, ցուցանել թէ ի բազմանալ անդ որդւոցն Նոյի, նախ զայս շինեցին քաղաք. ապա թէ ո՛չ՝ նախկին տեղի իջևանի նորա ի տապանէն էր, ուր և Արկ ուռի, և ի գինւոյն ճաշակեաց ըստ Գրոց Սրբոց: Եթէ չէր ի սակս բազմամարդութեան նոցա և անձկութեան դրիցն Արկուռւոյ առ Ոտս Մասեաց՝ ընդէ՞ր սիրտէր նահապետին լքանել զայգին իւր ձեռատունկ, զզուարճարան ծերութեան իւրոյ, և գալ աստ շինել աւան: Իսկ եթէ ոք ի սակս գերեզմանի նորա, զոր մինչև ցայսօր ժամանակի ցուցանեն բնակիչք Նախչուանայ, առ երի պարսպաց նորա ի հարաւոյ՝ համարեսցի զիս հակառակութեան կարծիս ի մէջ մուծանել, ներողամիտ քաղցրութեամբ լսել աղաչի: Թէ չէ՞ր արդեօք հնար մնացորդացն Հայաստանի ածել զդին նախահօր իւրեանց և

պարծանաց՝ յԱրկուռոյ ի Նախչուան, քանի մի ևեթ փարսախօք, և ամփոփել անդանօր իբրև յառաջին բազմամարդ քաղաք իւրոց սերնդոց։

Սա էր ի հնումն մի ի պայծառագոյն և ի բազմամարդ քաղաքացն Հայաստանի, բերդապարիսպ և գեղեցիկ, ուր նստէր եպիսկոպոսն մարդպետական։ Այլ քանդեցաւ նախ յաւուրս Արշակայ Երկրորդի արքայի մերում՝ ի զօրաց Շապհոյ։ Յեօթներորդ դարուն ի հիմանց քանդեաց զսա կայսրն Հերակլ յարշաւել իւրում ի Պարս։ Կոշմ ոստիկան այրեաց յեկեղեցւոջ սորա ոգիս իբրև 800[172]։ Յետ անդ չորեքտասան դարուն առ Ղազան խանիւ[173], զորք Թաթարաց «քարշեցին զդրունս խորանաց, ընկեցին և զսեղանսն»[174]։ Ի պատերազմին սուլթան Մուրադայ ընդ Պարս՝ կարեւէր քայքայեցաւ, և հետ զհետէ անտես եղեալ անշքացաւ՝ մինչ խոպան[175]։ Զառաջին մեծափառութենէ քաղաքիս հնչէ և երգն Պարսից, թէ՝ Նախչուան Նախշըրչհան է։ Յորմէ վրիպեալ ոմանց ի ճանապարհորդաց օտարազգեաց, համարեցան զքաղաքդ Նագաշ ճիհան անուանիլ, և ասել թէ ի պատճառս բազմազան նկարուցն որ ի սմա՝ յայդ անուն անուանեցաւ ի Հայոց և ի Պարսից։ Որ անհիմն է, և առասպելածոյ կեղծեաց ի կարգի։

Դիրք սորա ցուցանէ կամ բուն քաղաք լինել Այրարատեան նահանգիս, և կամ Սիսականին սեպհականեալ աշխարհի, և ո՛չ բնաւ Վասպուրականին։ Քանզի եթէ Վասպուրականք երբեմն զօրացեալ տիրեցին մասանց այլևայլ նահանգաց, այդ ո՛չ կարէր խառնել զկարգ նախնի սահմանացն։ Նախչուան ի գլուխ դաշտին Շարուրայ, կամ առընթեր և յանդիման Ծղկանց գաւառի Սիւնեաց՝ միում կամ միւսումն ի նոցանէ յաւէտ յատկանայ՝ քան թէ Վասպուրականին։ Նախչուան յարևելից անկանի Պարսկահայոց, որ է միջին իմն նահանգ ընդ Սիւնիս և ընդ Վասպուրականս, և դնելն զնա քաղաք վերջնոյն, համեմատի ասելոյն, թէ՝ «Նախչուան քաղաք է Վասպուրականի՝ յայնկոյս Պարսկահայոց նահանգի»[176]։

Խորենացին քաղաք Վասպուրականի դնէ զայն, բայց դիրքն ո՛չ համաձայնի գրութեան նորա։ Ուստի թուի թէ այն մասն գրութեան նորա մատնամէջ իմն արարեալ իցէ ի յետնոց։

Արդի քաղաքն, քայքայեալ որպէս և է՝ կառուցեալ է ի պալար ինչ դաշտի մեծի, որ ի նախնումն Հացունեաց կոչէր, յարևելս հիւսիսոյ Երասխայ։ Իբրև երկու մղոնօք հեռի ի նմանէ՝ գետակն Նախչուանայ եկեալ ի լերանց Սիսիանայ՝ կամ յաւ ևս Սիսական գաւառին, և քերեալ զՋահուկաւ՝ անցանէ իբրև կիսով մղոնի հեռի ի

նմանէ և առ երի Աստապատայ հոսի յՆրասխ գետ։ Ունի բերդ քաջազէն, այլ քայքայեալ ի հիմանց ի հարաւակողմն իւր, ի վերայ բարձրաւանդակին, ուր բղխին ակունք ականակիտ և հզօր աղբերականց, և դարձուցանեն զաղօրիս նորա։ Ի մէջ բերդիս է պալատ կուրացելոյն Քալբալի խանի՝ դեհպետին Նախչուանայ։ Ի հիւսիսոյ բերդիս անկանի վառաճանոց քաղաքիս ամենևին անշուք։ Իւ առ երի նորա թաղ Հայոց իբրև 300 տանց և եկեղեցի նոցա՝ Երեքխորան կարգացեալ, ուր իջևան արարեալ կացաք զաւուրս հնգետասան։ Այլ որովհետև այս քաղաք լինէր առաջին տեղի նուիրակութեան և մեռոնաբաշխութեան եպիսկոպոսի մերում, պատշաճ համարիմ փոքր ի շատէ նկարագրել աստանօր զհանդէս մտից նորա այսր։

Իբրև երկու ժամուք յառաջ քան զմտանել մեր՝ առաքեաց անդր առաջի երեսացն իւրոց կարապետ՝ զեղբօր որդի իւր զՅովհաննէս, ապսպարեալ նմա ասել ի լուր եկեղեցւոյն զաստուածարար ներգործութենէ իւղոյն սրբութեան, զօրհնութիւնաբեր կոնդակէ Հայրապետին, ևս և զանդստին առաքինութեանց իւրոց, և «զոր ինչ միանգամ տուն տայ քեզ՝ ասէ հանճար քոյ, պատմեսցես նոցա»։ Իբրև յառաջ խաղացաք միոյ ժամու ճանապարհաւ, ահա ծերունի քահանայք թուով չորս, շուրջառ զգեցեալք, և ամենայն կղերք եկեղեցական զարդու, այսինքն՝ խաչվառով, խաչիւք, կերոնօք և երգօք հոգևորօք ընդ յառաջ եղեն մեզ հանդերձ ամենայն բազմութեամբ հայորերոյ քաղաքին՝ ընդ այր և ընդ կին։ Եպիսկոպոս մեր ի շնորհս նոցա միայն եդ ի գլուխ իւր զկնգուղն, և զառնաւուխտ թաշկինակաւ սքօղեաց զսրուակ մեռոնին ի գրկի իմում։ Անդ էր տեսանել ամենայն բազմութեան մարդկան բոկով ոտիւք դիմել առ մեռոնն սուրբ, և ջերմեռանդութեամբ համբուրել զայն, այո՛, և բարեպաշտադոյնք ի նոցանէ՝ համբուրէին նաև զդրօշակս հանդերձից իմոց՝ իբրև զսրբոյ ուրուք. և այսպէս առեալ ածէին զմեզ ի գաւիթ եկեղեցւոյն, նոցա հետի ընթանալով, իսկ մեք ի ձի։ Երգն՝ զոր զճանապարհայն երգէին՝ էր.

Յաւուրս վերջին ժամանակի շինեաց զիւր տուն եկեղեցի։

Իսկ ի մտանել եպիսկոպոսին յեկեղեցի անդր և յառնուլ ի գրկաց իմոց զմեռոնն սուրբ ի գիրկս իւր՝ փոխեցին զայն ի՝

Հրաշափա՛ռ Աստուած, և միշտ բարեխնամող։

Ապա՝ «Էջմիածինն ի Հօրէ»[177]։ Իբրև կատարեցան եկեղեցական արարողութիւնք, եդեալ զիւղն սրբութեան ի սեղանի, դարձան ի

խուց անդր՝ զոր պատրաստեալ էր վասն նուիրակիս մեծի։ Այր իւրաքանչիւր առօրին պատրաստէր սեղան հացալից վասն նորա, ընդ որում բազմէին դրեա՛ թէ ամենայն պատուականքն ի մարդկանէ։ Հոգային և զպէտս դարմանոյ երիվարացն մերոց՝ ամենայն յօժարութեամբ։ Այլ տարաբախտաբար շնորհաբաշխութիւն իւղոյն սրբութեան և ընթերցուած կոնդակի Հայրապետին՝ որ պարտն էր հանդիսանալ յառաջիկայ կիւրակէի, կամակար մտօք յետս ձգեցաւ, ի պատճառս անհամաձայնութեան իրիք պատահելոյ ի մէջ նուիրակին և ժողովրդեանն, թուի թէ՝ սակս հասից ինչ Աթոռոյն և գաւազանապտղոյ։ Մինչև յետոյ համաձայնեցան երկոքին կողմանք և յերկրորդ կիւրակէի գալստեան մերոյ՝ սկսաւ Մեռոն-թափէքն։ Զկնի սրբազան պատարագին առ եպիսկոպոսն զսրուակ իւղոյն, և թափեալ անտի ի սրուակ եկեղեցւոյն այսորիկ, որչափ ինչ և բաւական համարեցաւ սկսաւ յականէ և յանուանէ օրհնել զԹագաւորն Պարսից, և յանուն նորա կաթեցուցանել ի սրուակ անդր զկաթ մի յիւղոյն այնորիկ։ Ապա զՔալբալիխան, ապա և զիշխանս մերազնեայս, և հուսկ ապա զժողովուրդն ամենայն՝ ըստ առաջնոյ օրինակին։ Եւ բազմեցուցեալ զայն ի սեղանի, զանձանակ առընթեր եդ նմին, զի համբուրեսցեն և խաչահամբոյրս արկանիցեն ի զանձանակն։ Արդ զի մի՛ վերստին յեղեղեցից զայս նիւթ զգուշալի, ընդ ամենայն քաղաքս և գեօղս այսօրինակ ճանապարհորդութեան մերոյ՝ արժան համարիմ ի հարևանցի ծանօթս տալ ընթերցողաց, զի հասքն՝ զորս ընդունի ի ժողովրդոց մերոց նուիրակն էջմիածնի՝ կայանան ի հետագայսդ։

ա. Նուիրակութիւն. յերեք տարին միանգամ հաւաքի յիւրաքանչիւր շնչոյ մարդոյ 40 փարայ։

բ. Քառասնից. տեսակ իմն ողորմութեան վասն հոգւոյ ննջեցելոց, զոր սովորաբար տան յետ 40 աւուրց, որպէս և անունն ցուցանէ, այլ նուիրակն ընդունի և յետ 40 տարւոյ՝ եթէ տայցեն։

գ. Յիշատակի. արծաթի կամ ոսկի անօթք կամ դիպակիք և այլք, յորս գրին անուանք նուիրողացն և տանին դնին յէջմիածնի։

դ. Խոստմունք. տուրք՝ եթէ ոք խոստացեալ իցէ։

ե. Հոգեբաժին. այլ տուրք վասն ննջեցելոց։

զ. Խաչահամբոյր. զոր տան նուիրակաց՝ զի ի դառնալն համբուրեսցէ զԻջման տեղին ի դիմաց իւրեանց։

է. Աջահամբոյր, նոյնպէս տան վասն համբուրելոյ զաջ Հայրապետին, և ընդունելոյ ի նմանէ զէկաւ հասաւն։

ը. Մատաղ. ոչխար, եզն, կամ գինք նոցա ի կերակուր միաբանից Աթոռոյն։

թ. Գաւազանապտուղ. զի ի քարոզելն գաւազան առնու ի ձեռս։
Այս հաս յատուկ է նուիրակին։

ժ. Փոքրաւորէք. և այս յատուկ է սպասաւորաց նուիրակին։

ժա. Ժամուց. կրկին է, մի՝ վասն Հայրապետին, զոր տանի առ նա, և միւս՝ վասն նուիրակին՝ եթէ պատարագ ուրեք մատուցանէ։

ժբ. Պաշտօնէից. դրամ զոր բաժանեն նուիրակունք ամենայն պաշտօնէից սրբութեան։

Այսոքիկ ամենայն՝ թէպէտև դուզնաքեայք ըստ ինքեանց, կամաւորականք իմն են, և նուիրակն ո՛չ զոք կարէ բռնադատել, այլ միայն հեզութեամբ համոզէ։ Բայց արի՛ դու՝ անաչա՛ռ ընթերցող. դատաստան արա՛ յաստուածակոյս կողմանէ, թէ ընդէ՞ր արդեօք օտարազգի քահանայք, որք յետ իշխանական և մեծափառ կեանս վարելոյ առատ առատ թոշակօքն՝ զոր ստանան յամսոյ ամիս. և կանոնօք եկեղեցւոյ իւրեանց գտանելոյ առ մի պսակ թումանս տասն, և առ մի կնունք թումանս հինգ, դառնայցեն անգթաբար և դրապարտ բամբասանօք ստգտանիցեն զարարս այլոց հոգևորականաց մերոց, սիմոնականս[178] և շնորհավաճառս կոչելով զնոսա։ Փա՛ռք, որ ինքեանց առաւել պատկանին ասողացն՝ քան թէ զորոց ասիցենն։ Բա՛րձ դու զայսպիսի ողորմութիւնս ի քոց եկեղեցականաց, և ցո՛յց ինձ զայլ միջոցս, որով ապրել կարիցեն։ Ո՞ր թողցուք, զի թէ հոգևորականք չլինէին յազգի մերում, ո՛չ գիրս ունէաք և ո՛չ դպրեանս։ Կորուսեալ էաք մինչ ցարդ և զլեզուս մինչ իսպառ։ Արդ ո՛վ ի ժողովրդոց մերոց ի խստաբարոյիցն ասեմ, և յիմաստնատեցացն, հոգացաւ ստեղծեալ քեզ գիրս. ո՞վ թարգմանեաց քեզ զԱստուածաշունչն մատեան, ո՞վ գրեաց քեզ զայն անբաւ գրուցաց մատեանս, և որ մեծն է, ո՞վ պահեաց և հաստոյց ի ձեռս քոյ զնոսին՝ դիցուք թէ և ո՛չ շահեցուցանելովն ի վերայ, եթէ ոչ՝ վանորայք և վանականք Ազգի մերում։ Ապա եթէ այսպիսի աղբիւրք ազգային պարծանաց մերոց՝ առ պահեստի կենաց իւրեանց, խնդրեսցեն ի մէնջ զկամաւոր ողորմութիւնս ինչ՝ սիմոնակա՞նք անուանիցին, ուրեմն Աստուած մեզ խեղճմտանք տայ։

Ապրիլ 9։ Չոգաք յԱստաբատ հեռի ի Նախչուանայ երկու մղոնօք ընդ հարաւ, կառուցեալ ի խառնուրդ վտակի նորա ընդ գետն Երասխ։ Ո՛չինչ ի նախնի մեծափառութեանց սորա մնայր յերևան։ Վասնզի Աբաս Միրզա քակելով զամենայն տունս բնակչաց սորուն՝ կառոյց ամօք ինչ յառաջ զբերդ հզօր ի նիւթոց նոցին, կոչեցեալ Աբասաբատ։ Որոյ ի միջնաբերդին քարաշէն և մեծակառոյց եկեղեցի

սրբոյն Յովհաննու՝ դարձեալ ի նոցա ի զինարան անվկանդ։ Բը-նակչաց նորա, էր՝ որք ցրուեցան, և էր՝ որ եկեալ ամփոփեցան ի ներքոյ սեպհւոյ մեծի խրամին, յորոյ վերայ կառուցեալ հրաշակերտ և ամուր վանքն Ստեփաննոսի, կոչեցեալ Կարմիր վանք[179], ուր նստի այժմ խաչատուր եպիսկոպոս Գեօք-գեօզ կոչեցեալ առաջնորդ Նախչուանայ։ Բազում քարափոր անձաւք են ի ներքոյ և արտաքոյ եկեղեցւոյս, յորոց ժամանակ առ ժամանակ հնութիւնք բազումք ելին։ Այլ հնագոյնք ի բնակչաց նորա ասեն, թէ և ի մերձակայ ապառաժուտս լերանց են քարայրք, յորս թագուցեալ կան հինաւուրց մատեանք և գանձք։ Ի բարաւորի արտաքին դրան պարսպի վանացս քանդակեալ կայ բու խմն թեատարած. առ ի ցոյց անքուն հսկողութեան ուխտին՞ արդեօք։

Ընդ կապանս ապառաժից և բարձրաբերձ քարալերանց, յորս ուրե՛ք ուրե՛ք յաւելոյր ի բնութիւն՝ և արուեստին ամրութիւն՝ միշտ ընդ յարևելս հարաւոյ ընթանալով ի ձորն Երասխայ՝ հասաք յան-դիման Դարաշամբ անուանեալ գեղջ, որ է յայնկոյս Երասխայ, ի խառնուրդն Տղմուտ գետոյ։ Անցաք նաւակաւ յայս գետ, և զմիջով տուեալ գեղջն՝ ընդ զառիվեր Մաղտեաց լերին՝ հասաք ի մեծ վանքն Նախավկայի կոչեցեալ, ուր առաջնորդ էր Սարգիս վարդապետ, «քաղցրութիւն բարուց» կարդացեալ յամենայն ծանօթից իւրոց։ Քարաշէն է և բարձրակառոյց, որոյ սեամք, բարաւորք դրանց, և աղնթեր նոցա յատակն՝ երևեցուցին ինձ սեաւ կճեայ սալս մեծա-մեծս, որք թուէին արտադրեալս ի մերձակայ լեռնէ անտի։ Բազ-մատեսակ՝ անուշահոտ և համեղաճաշակ բանջարքն, որ ելանեն ի լեռնէ աստի, և անաշխատ հաւաքին ի վանականացս՝ հազիւ թողուն ի նոսա ախորժակս մսեղէն կերակրոց։ Ուստի և առողջունք են ան-ձամբ, առուգունք մարմնով, և ողջախոհունք մտօք։ Գրադարան վանացս առատ է հին ձեռագիր մատենիւք, այլ ի սակս ընդհանուր պակասութեան ուսմանց ի սոսա՝ ամենայն ընդ փոշւովք թաղին։ Արտաքոյ վանացն է աղբիւր, որոյ այն զի նուազ են ջուրք և ապա-զօր ի դարձուցանել զաղօրիս վանաց, փորեալ է զառաջեաւ նորա աւազան խորին, ուր հաւաքին ջուրք, և հոսեալ անտի ի խոնարհ բուռն յարձակմամբ՝ դարձուցանեն ի ներքոյ զաղօրիսն։ Վարմա-զիարք՝ ցեղ ինչ Տաճկաց Պարսկաստանի, բնակեալ շուրջ զլերամբք և ի դաշտավայրի գիւղօրէս՝ մինչև ի քաղաքն Խոյ, բռնանան միշտ վանաց այսմիկ, զանդս սորա հատանելով, զիրաւունս Դարաշամբայ խլելով, և զվանքն զոյաթափ առնելով և կեղեքելով։

Յիշատակաց արժանիս եցոյց մեզ Սարգիս վարդապետ, յիւր

*հանճար յարուեստին բժշկութեան։ Մի ումն ի պատանեաց իւրոց զհետ պնդելով վայրի ուլխարի՝ որով լի են մերձակայ լերինք, գահավիժեալ ի ժայռէ՝ խախտեալ էր զոլոգն աջոյ կռան։ Զոր բարձեալ ընկերակցացն ածին ի վանսն, Սարգիս վարդապետ իսկոյն հրամայեաց բերել ինքեան զտիկ գինւոյ, զոր դատարկեալ ի հեղանիւթոյն՝ եդ ընդ անթով պատանւոյն. և զձեռն նորա պարանեաց կապեաց պինդ զկողովն։ Յայնժամ հրամայեաց փչել զտիկն. որոյ ուռուցեալ հետ զհետէ հեզիկ և մեղմ միջոցաւ, աղեղնաձև ամբարձ զթևն, և ուժգին թափով ընկէց զոլոգն խախտեալ ի տեղի անդր։*

*Յառակս աշխարհին հանեալ է պարզմտութիւն Դարաշամբեցւոց, իբրև զԲոլորանցւոց ի սահմանս Փէրիոյ յաշխարհին Պարսից։ Իսկ դէմ ընդ դէմ հակառակութիւն նոցա ընդ հին Ջուղայեցւոց՝ թէ բանիւ և թէ գրով՝ առաւել ևս։*

*Առաջնորդութեամբ սորուն Սարգիս վարդապետի ելաք ի հին Ջուղայ, այլ չէ հասեալ անդանօր, պատահեցաք ի ձորամիջին առ Երասխաւ աւերածոյ հին և մեծ գեղջ իրիք։ Անցաք անտի, և թեքեալ զընթացս մեր դէպ ի զառ ի վեր ինչ հիւսիսակողման լերանց՝ եկաք առ եկեղեցի իմն փոքրիկ՝ քարաշէն և կանգուն, թէպէտև շրջակայ պարիսպք նորա քանդեալք՝ և գերեզմանքն մացառախիտ փշովք պատեալք, որ այնինքն էր հռչակաւորն Ջուղայեցւոց Ամենափրկիչ։ Դարձեալ աստի ընդ կրունկն ի խոնարհ, և անցեալ ընդ ցռուկ մի լերինն՝ յանկարծ յանդիման երևեցան մեզ՝ իբրև զհիծեալս հրոսակաց՝ գերեզմանք Ջուղայեցւոց, զորոց զնմանն դուն ուրեք էր տեսեալ իմ։ Տապանակք խւրաքանչիւր շիրմաց էին մեծամեծ սալք որձաքարանց, և ուրոյն ի սնարից և յանոտից նոցա կանգնեալ բարձրաբերձ և հզօր խաչաքարք, այնքան զարմանալի քանդակագործեալք՝ մինչ յամօթ առնել նոցա և զինքնապարծն ի ճարտարաց ժամանակիս։ Մեռեալք առաւել պատմեն զփառս նախահարց իւրեանց, քան կենդանիք Ջուղայեցւոց։ Մատենագրութեան արժանի է արդարև ստորագրութիւն ձևոց և քանդակաց նոցա, որպէս և ի բազումս վսեմ տապանագրութիւնքն. այլ ինձ անխայեա՞ց ժամանակն[180]։ Յառաջեալ աստի իբրև երկու վտաւանօք, հասաք յաւերակս Հին Ջուղայ, ցանցառակի բնակեալ ի քանի մի տանց Հայոց, և ագաք ի տան Թադթէոսի երիցու նոցա։ Ողո՞րմ մնացորդք վաղանցիկ երանութեան։ Բնակէին ի հիւղս յաւէտ քան ի տունս։ Եկեղեցին անձեղուն, սեպացեալ ժայռքն վերուստ ի վայր խոնարհեալք, լուին դնացք Երասխայ առ երի, և ամենայն առարկայ գոգչի՞ր լինէր մեզ Առաքել պատմիչ գուժել զաղէտս սորա[181]։ Ժողովուրդք առհասարակ*

քարահատք են, որ ի մերձակայ լերանց հատանեն և կոփեն քարինս ազորեաց՝ և տանին ի պէսպէս տեղիս մինչ յԵրևան և ի Դաւրէժ, որով և մեծապէս շահին։ Յանդիման Ջուղայ յայնկոյս գետոյն՝ երևի փոքրիկ մատուռն մի՝ Անդէորդի եկեղեցի կոչեցեալ, և պանդուկ քարաշէն և գեղեցիկ։ Առ որով դէպ յարևելս դարձի լերինն է կամուրջ քայքայեալ, զորմէ այսպէս պատմեաց Մէլիք Մկրտիչ տեղւոյս. «Շինօղ սորա ի Նախահարց անտի իւրեանց՝ բերէ ճարտարապետս հմուտս յայն գործ յամենայն կողմանց, և խորհրդով նոցա առաքէ զծառայս իւր գնել հաւկիթս ի նիւթ շաղաղոյ կրոյն։ Իբրև ածեն զառաջեաւ՝ կշռէ մի մի զամենայն, և զթեթևունս և զփոքրկունս մեկուսի եդեալ՝ զլանայ հատուցանել զվճար գնոց՝ հաւասարութեամբ պարարտացն։ Զայս տեսեալ գործաւորացն՝ ժլատութիւն խորհին զառնէն ի միտս իւրեանց, և խնդրեն պատճառս խափան և արգել տալոյ գործոյն։ Զգայ նա, և հեծեալ ի ձին գնայ ի ծանծաղս գետոյն, ուր հիմն դնել կամէր կամրջոյն, և հանեալ ի պայուսակէ փոքուէ բռամբ զոսկի դրամս՝ ամայ ի գետն ասելով. «Աս՞տ հիմն ո՛չ ընդունի, կամ ա՞նդ». և այսպէս չարաչար վատնելով զգանձն՝ գնէ նովին զընդունելութիւն նոցա, և ասէ. «Ես ո՛չ ի դրամն խնայեմ, այլ վաճառականութեան օրէնս ուսուցանեմ իմայոցն, ձեզ զի՞ փոյթ»։

Օտար իմն էր և բարբառ սոցա համեմատութեամբ լեզուացն լսելոց յինէն մինչ ցարդ։ Մէլիք Մկրտիչ՝ որ բերան լեալ էր փոքրիկ հասարակութեան իւրոյ, յառարկել եպիսկոպոսի իմում վասն նուիրակութեան, ասաց. «Օր կգոյ՝ ծա՛ռէդամ, որ Ջուղըցիք էլ աւլի Ջուղըցիք գնեն։ Ըլդայ մեր ղարն ամէն օր սաստկամանայ, արդի կտաս՝ լսելէց չեն, մո՛նչ ինչ բանում խղճման չեն, էլ մենք ղո՞ր պիտիլայ յանցկանք։ Շահաբասի տունն հախ միան Տէրն քանդի, զոր նա մեր գեղերն քանդէց։ Ասուման թէ տեղն լէվ երկիրան շինել, ու Հնդստան էլ գնալ գոլան առում. աղորդա՞յ՝ ծառէղա՛մ։ Արդարև իրաւ, զի ի բարձմանէ թագաւորութեան մերոյ, և ի դարս նուազութեան Հայաստանի, ո՛չ ինչ ժողովուրդ այնքան մեծանուն հանդիսացաւ յազգօգուտ ձեռնարկս իւր՝ որպիսի Ջուղայեցիքդ։ Օրինակի վասն. Պարոն Յովհանջանն՝ ի Սուրաթ, Շամիր ի Մադրաս, Խաչիկ Առաքել՝ ի Կալկաթա, Լազարեանք՝ ի Մոսկով, և այլն։

Միով ժամու ի խոնարհ ընդ յարևելս հարաւոյ Ջուղայ՝ կան անցք գետոյն Երասխայ, ուստի երթևեկք վաճառականացն Պարսկաստանի անցուցանին նաւակօք։ Եթէ այս գործ ամբողջ մնայր Ջուղայեցւոյց՝ կարող էր փութով հարստացուցանել զնոսա, բայց

արքունի գոլով՝ այնքան ծանր հարկ ունի, մինչ բազմիցս զեան քան թէ շահ բերէ նոցա։

Ունի Ջուղայ կարիճ անթիւ, սեաւ գունով՝ մեծ քանակաւ՝ և մահաբեր թունով, ընդդէմ որոց հանճար բնակչաց հնարեալ է դեղթափ ընտիր, զի սփռեալ զանկողինս ի տանիս, կամ ի բացօթեայ բակս իւրեանց, առնուն չուան մազագործ և շուրջ պատեն զնոքօք, քառակուսի կամ բոլորշի իմն ձեւով։ Կարիճն որ ի մարդահոտոյն յորդորեալ յառաջ մղի, ելանէ ի վերայ չուանին։ Լանջ և փոր նորա խոտի ի մազէն, յոր կռուեալ անշարժ մնայ մինչ ցառաւօտ և անաշխատ կալեալ ջախջախի ի մահ։ Ջորացուցեալ կարիճն մեծ դեղ է կարճահարին։ Զորոց հաւաքեաց Դանիէլ եպիսկոպոս բազումս և պահեաց առ իւր։

Բաժանեալ ի Սարգիս վարդապետէ, և ընդ *Վանանդ անծանօթ անցեալ՝ յաղագս չլինելոյ անդ Հայազգի բնակչաց, եկաք յԱգուլիս քաղաք մեծ Գողթան գաւառի։ Առաջին՝ որ շարժեաց զհորասիրութիւն իմ, էր անլուր և թիւր լեզու բնակչաց նորա։ Տիրացու Փիլիպպոս՝ Նորգեցի, աշակերտակից իմ յէջմիածին, ընդ Սիմէօն եպիսկոպոսի կարգելոյն առաջնորդ Գողթան՝ բնակէր ի վանս սրբոյ առաքելոյն Թովմայի[182]։ Մեք իջաք յեկեղեցւոջ Աստուածածնի ի ներքի թաղն։ Ապաժոյժ ի տեսանել զանձկալին, առաքեցի առ նա ըզմանուկ ոմն ազդ առնել նմա՝ թէ Մեսրովբ իւր եկեալ է (քանի մեք յռելեայն մտաք այսր)։ Գնաց, դարձաւ մանուկն, և ետ ինձ զայս պատասխանի. «Նահալամ, տեհալամ, ահալամ, ակա՛լ չի»։ Ն՛կ դու հասկացի՛ր թէ զի՛նչ։ «Զի՞նչ խօսիս, մանո՛ւկ»,—ասացի ցնա, և նա երկիցս և երիցս կրկնեաց զխուժադուժ և զանլուր զայն ասութիւն։ «Թուրքերէն գիտե՞ս, ասա՛»,—ասացի, և նա սկսաւ ասել զայն Թուրքերէն, որով իմացայ զի ասել կամէր թէ՝ «Գնացի, տեսի, ասացի. չեկն»։ Իբրև ինքնին ելի գնալ անդանօր, պատահեալ ի փողոցի առն միում, հարցի թէ ընդ ո՞ր գնացից ի վանսդ։ Պատասխանեաց «Զո՛մ զո՛մ նօլիս, զո՛մ զո՛մ գոլիս, կեռիս տօլ, վանքն առաջիդ տեհալաս»։ Որպէս թէ ասել կամիցի. «Այսպէս երթեալ, այնպէս դարձեալ՝ զվանքն առաջի տեսանես»։ Պատահեալ ուրեք Ագուլեցւոյն պառաւանւոյ ուրեմն՝ եհարց ցնա. «Դղօ դղացիրս»։ Տղայ ուստի՞ ես։ Պատասխանեաց՝ «Գլէցի», որպէս թէ՝ Ագուլեցի, ընդ որ կարի խընդամտեալ և հաւանեալ առաջնոյն՝ ասաց. «Անտոքայ լօզըդ պօրզ է՛յ»։ Այսինքն՝ «Յայն սակս է, զի պարզ է լեզուդ»։ Ի՛ւր արև՛։

* Այս Վանանդ այլ է ի Վանանդայ Կարուց, և առ այլ մատենագիրս՝ միջոցն ի Ջուղայոյ ցԳողթան՝ կոչի «Ազատ գաւառ»։

Ինքեանք զայս գաղտնի լեզու՝ որպէս և զանձինս իւրեանց՝ Ջոկս անուանեն, թէպէտ և Խորենացին հատուած ի Սիսականէն դնէ։ Եթէ այսպէս իցէ, ուրեմն զարմանք չեն եթէ նախնի Գողթնացւոց աշակերտեալ աղանդոցն Ջոհակայ մոգի, հետևողաբար և զանունն կրեցին։ Զի թէպէտ և լուսաւորութեամբ քարոզութեան առաքելոյն Բարթուղիմեայ պարծեցին, սակայն և այնպէս կռապաշտական աղանդոց յաւէտ հետամուտք եղեն։ Սուրբն Մեսրովպ ձեռնտուութեամբ Շաբիթայ իշխանի[183] սոցա և Աւետարանի Տեառն քարոզութեամբ՝ հազիւ փլուցանել կարաց ի սոցանէ զաղանդն մոլորութեան. այլ թէ զի՞նչ աղանդն լեալ իցէ՝ չկարացի հասկանալ։

Լիցին սոքա՝ որպէս և համարինն՝ ի Սիսականաց անտի սերեալք, բայց ինձ յաւէտ հաւանական թուի համարել զնոսա սերունդս ի նախնի Մարաց անտի՝ ի Ջոհակեանց՝ ասեմ, կամ յԱշդահակեանց, զորս գերի վարեալ մերոյն Տիգրանայ՝ բնակեցոյց յարևելից ուսոյ Մեծի լերինն Մասեաց՝ մինչև ի Գողթն գաւառ։ Անհակառակելի հաւաստիք են դրութեանս այսորիկ՝ կոչել նոցա զինքեանս՝ Ջոկս, որ այնինքն է Ջոհակեան կամ Աշդահակեանս, խժութիւն բարբառոյ նոցա՝ որ ո՛չ Հայ հնչէ և ո՛չ Մարացի, խորթ իմն և օտար ի բուն Հայոց բնաւորութիւնք նոցա, և ընդաբոյս հակամիտութիւն նոցա ի մոլորութիւնս Արևորդեաց՝ այլովքն հանդերձ։ Տե՛ս ի ծանօթ. Պատմ. Պարսից, երես 5—ց10։

Իբրև ութնհարիւր ամօք յառաջ եղև աս թաղս իշխանութեան Ապութալիփայ, որում ի դիմի հարկանելն կամեցեալ Ապլհաճայ՝ հարիւր հազար Պարսիկ զօրօք խաղաց ի վերայ[184]։ Շուրջ զԱգուլեօք պատեն Ալանկէզ լերինք, յորոց հոսեալ գետակն ինչ կարկաչահոս ոռոգանէ զամենաբեր այգիս և զանդս սորա։ Պատուականք են շինուած Ագուլեաց քան զորս տեսի մինչ ցարդ, և զարդարեալք ըսքանչելի նկարուք։ Թաղք սորա երկու՝ վերին և ներքին։ Վերնոյ թաղի եկեղեցին է սուրբ Յովհաննէս, իսկ ներքնոյն՝ Աստուածածին։ Առ որով ունի և մատուռն ի կուսանոց երկուց և եթ ծերունեաց, որոց մահ եղև կնիք կուսակրօն կենաց աշակերտ աղջկանց տեղւոյս։ Ընդ միջով երկոցուն սոցա անկանի վանքն Թովմայի առաքելոյ՝ կառուցեալ զօրէն էջմիածնի ի կեդրոնի շրջաշէն պարապարիսպ և պարտիզազարդ պարսպաց։ Ի բերս Ագուլեաց գովանի է նորա պահունի տանձն, որ մնայ ցտարին բոլոր, զորս ի բամբակի ծրարեալ և ի մէջ փոքրիկ արկեղաց եդեալ՝ առաքեն մինչև ի Մոսկով և ի Պօլիս։ Առ անբաւութեան թթոց գործեն օղի բարկ՝ և չերամ։ Այլ ամենայն պտուղք նորա հաւասարին պտղոցն Երևանայ, բաց ի սեխոց։ Ժո-

ղովուրդք տեղւոյս կարի գձուձս ազանին, այլ սեղանք նոցա ընդ չափ անցանեն ամենայն չափուց. զի միայն ի ձկանէ յօրինեն մերձ 30 տեսակս համադամ կերակրոց։ Առ հասարակ ոստայնանկք են, նաև՛ ճոխք ի նոցանէ։ Աստ կատարեալ զՁատիկ փրկութեան հոգւոց մերոց՝[185] եկաք ի Փառակայ գիւղ, ի Բուստ, և ի Ցղնայ կամ Ծղնայ։

Պարոն Յովհաննէս Աղամալեան՝ ազգակից մեծին Պետրոսի Բերթումեցւոյ մեծանուն հեղինակին յազգի մերում, խնդրեաց յեպիսկոպոսէ մերմէ պատարագ մատուցանել ի մեծակառոյց և ի թագաւորավայել յեկեղեցւոջ գեղջն, որ ըստ մեծութեան և ըստ ընդարձակութեանն, ո՛չ ինչ նուազ էր և քան զնոյն ինքն էջմիածին։ Վասնորոյ Դանիէլ եպիսկոպոս տուեալ ինձ զբանալիս արկեղ իւրոյ՝ առաքեաց վերստին ի վանս սրբոյն Թովմայի (ուր թողեալ էր ընդծանրութիւն աղխից իւրոց), բերել անտուստ զզգեստն եպիսկոպոսական։ Իբրև հասի անդր՝ խնդրեցի ի Սիմէօն արքեպիսկոպոսէ Բզնունւոյ՝ յառաջնորդէ տեղւոյն, զի հրաման տացէ և Փիլիպպեայ ընկերել ինձ ի հանդիսից սրբութեան։ Դարձաք, և պատարագն կատարեցաւ։ Եպիսկոպոսն զկնի ճաշուն՝ որ ի տան պարոն Յովհաննիսի, մեկնեցաւ ի սենեակ իւր յառանձինն, իսկ տէր Յովսէփ քահանայ տեղւոյն՝ այր բարեբարոյ՝ այլ պարծուտ, սկսաւ ի լեզուն Սպանդարամետի այնքան բարձրացուցանել զարարս քաջագործութեանց իւրոց՝ մանաւանդ զաննուաճելի սրտին արութիւն, մինչ հարկեցուցանել զմեզ ի միաբանութիւն չարութեան։ «Կա՛ց տեսից,— ասէ Փիլիպպոս,— զփորձ արութեան սորա», և խորամանկեաց, զի ես և ինքն կանխեսցուք յեկեղեցին ի գիշերի՝ յառաջ քան զնա, խրռուեսցո՛ւք զհերս գլխոց մերոց, զգեցցուք ժամաշապիկս սպիտակս, զերեսանիս երանգեսցուք ալերօք նշխարամանին, և գաղիցուք, մի՝ ի ներքոյ գրակալին, և միւս՝ աթոռոյ եպիսկոպոսին։ Արարաք այնպէս, եկն տէր Յովսէփ, և դեռ չէր ասացեալ «զՀրաժարիմքն ի սատանայէ»[186], մինչ նա անտի և ես աստի, այլանդակ աղաղակաւ ելեալ կացաք առաջի։ Զարհուրեցաւ, զգետնի հարաւ, և անշնչացաւ։ Ահա՛ քեզ յետին տգիտութեանցս պտու՜ղ, զոր ստուգապէս պատմել եպիսկոպոսին զարդար պատուհաս նորա շարժէր ի վերայ մեր, բայց և լռել և թաքուցանել զայնպիսի մեծ վտանգ, զառնն մահու կասկած ի սիրտս մեր արկանէր։ Զխաղուց սքեմ մերկացաք, և լրջացեալ ի կրկնապատիկ վնասուէն, լաւ իմն համարեցաք մեզ անձամբ զանձինս դատապարտել, քան զպաշտօնեայն սրբութեան թողուլ յայն վիճակ մեռօրինակ անշնչութեան։ Գնացի առ Դանիէլ եպիսկոպոս, պատմեցի նմա. այլ վա՜յ ինձ, թէ քանի՞ անհաւատարմութեամբ։

Փութացաւ նա յեկեղեցի անդր, սաստիկս ոլորեաց զականջս և ըզքներակս նորա, և ծխեալ զծծումբ ընդ ունգունս նորա՝ հազիւ հազ թէ յուշ դարձոյց։ Եհարց ցնա զպատահարացն, և նա որպէս թէ յուշ եկեալ՝ ասաց. «Քանի՛ցս ասացին ինձ՝ թէ դևք գոն յեկեղեցւոջ այսմիկ, և ես ո՛չ հաւատացի, այլ ահա՛ աչօք բացօք տեսի. «Հրաժարի՛մ ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա՝ և այլն»։ Սկսաւ ժամերգութիւնն և կատարեցաւ, և մեր կալեալ զնա մեկուսի պատմեցաք նմա՝ զոր ինչ միանգամ և արարաքն, պատճառ դնելով չարեացս՝ զիւր սնապարծութիւնն։ «Հա՛ քանդեսցին ձեր դժո՜խք, չկարէի՞ք այլով իւիք հնարիւք ի փորձ մտանել ճշմարտութեանն, քան այդու կերպարանօք»,—ասաց քահանայն, և թողեալ մեզ զմեղս մեր՝ գնաց։

Ցխնայ, Ցղնայ կամ Ծղնայ յաւէտ աւերակ իմն մեծի քաղաքի, քան թէ գիւղ աննշան, որպէս զարդիս տեսանի՝ անկանի յարևմտից հիւսիսոյ Ագուլեաց, յարևելից Շօռօթայ և Ղազանչի քաղաքաց, ի հարաւոյ Սիսիանայ, և ի հիւսիսոյ Փառակայ գեղջ։ Սա թուի ինձ գոլ Ծղկանց աւան ի համանուն գաւառի, ուր նստէր երբեմն նահապետ Սիւնեաց։ Եկեղեցի սորա կառուցեալ համակ ի սրբատաշ քարանց, այնքան բարձր է և ընդարձակ, և այնքան հզօր և յաղթ զմբէթ ունի ի վերայ՝ մինչ սուղ ինչ հնչիւն ի ներքոյ՝ լսելի լինի իբրև զորոտ ահագին՝ ի պատճառս հզօր արձագանգաց նորա։ Ուստի և ահաւոր երևի յոյժ՝ միայն և ի մթան մտանողին ի ներքս։

Դարձաք աստի ի Դաշտն աւան, ի ներքոյ Ագուլեաց ի գիւղաքաղաք իմն Հայոց երիւք մղոնօք հեռի յԵրասխայ՝ որ հայի յՈւրտուպատ քաղաք։ Շինուածք տանց նորա վայելչագոյնք են, և դրօշուածք և քանդակք գեր ի վերոյ քան զԱգուլեացն։

Տէր Աստուածատուր քահանայ տեղւոյն պնդէր, թէ ի ստորոտս արևմտեան բլրակին՝ որ հանէր ի ճանապարհ Վանանդայ՝ էր գուբ, ընդ որ մարթ է մտանել մարդոյ, և ստորերկրեայ անցիւք գնալ մինչ յափն Երասխայ։ Պնդէր ևս՝ թէ իցէ անդանօր ընդերկրեայ գաղուստ, որ տանի զամենայն բնակիչս Գողթան ի ժամանակս պատերազմի։ Իցէ, կամ ո՛չ, ես զոր լուայն գրեցի։

Ի հարաւոյ արձակատարած այգեստանեացն Դաշտայ՝ անկանէր եկեղեցի փոքրիկ, զորմէ այսպէս պատմեցին մեզ Աստուածատուր քահանայ և Մէլիք Գիլամպար՝ տանուտէր Դաշտայ, թէ՝ «Ամօք ինչ յառաջ պառաւ մի ի նմին աւանէ, միանգամ և երկիցս ելանէր ի փողոցս և քարոզէր, թէ կայ ի ներքս փոքրիկ եկեղեցւոյն վէմ, և ի ներքոյ վիմին նշխարք հրաշագործք՝ որք յերազի յայտ-

նեցան և խոստացան որոց ուխտիւք դիմիցենն՝ կատարել զամենայն հայցուածս նոցա։ Դիւրահաւան ժողովրդեան փութով ազդեաց քարոզութիւն պառաւոյն, և ահա՛ եղև այն ուխտատեղի մեծ։ Մինչև եկն առաջնորդ, և լուեալ զնորոգ յայտնութենէս ի կասկած տարակուսանաց անկաւ։ Առ զմեզ ընդ իւր հանդերձ քանի մի մշակօք, գնաց անդր և հրամայեաց բրել զգետինն շուրջ զվիմովն։ Բրեցին, և ահա՛ փոխանակ նշխարի՝ ել անտի Գո՛րտն մի՝ անօրինակ մեծութեամբ, զոր սատակեաց անդէն, և պատուիրեաց այլ ևս ո՛չ ամպարշտել ի պաշտօն, զի որոգայթ սատանայի էր Երազն և մեկնութիւն նորա։

Մղեալ յայսմանէ Դանիէլ եպիսկոպոս մեօք հանդերձ գնաց ի գնին, զվէմն ետես՝ որպէս և զփորուածն ի ներքոյ՝ և դարձաւ։

Թողաք յաջմէ զքաղաքն Որդուպատ, որ առ հնովք մերովք Որթվատն լսէր՝ յայնկոյս յափն Երասխայ, ուր նստէր երկրորդ բըդեշխին Նախչուանայ, և դատէր զԳողթն գաւառ, զԱրևիս կամ ըղՄեղրի, և զՍեաւ լեառն Ղարադաղ՝ մինչև ի սահմանագլուխ Ահար քաղաքի։ Եւ մտեալ ընդ Կապանն երկայն, ընդ մէջ Ալանկեայ և Սեաւ լերանց, որք և Կապանք անուանին՝ և հզօր խորխտանօք անցուցանեն զԵրասխ, և գործեն զքարավազն մեծ հռչակեալ առ Խորենացւոյն՝ եկաք ի Կենաւուզ գաւառ, և ագաք ի գիւղն Կրճիլան, ուր էր օրորոցաձև և քարաշէն եկեղեցի, կառուցեալ որպէս անունն ցուցանէ, յանձուկ կրճին այնմիկ՝ որ հանէր դէպ ի Մեղրի։ Փոխեցաւ և աստ բարբառ բնակչացն յօտարոտի իմն, գլխովին տարբեր ո՛չ միայն ի Գողթնցւոց և ի Ջուղայեցւոց, այլ նաև ի դրացեաց իւրեանց՝ ի Մեղրեցւոց անտի։

Ի Մեղրի։ Արդարև աւան մեղեր, յորում են երկու թաղք, մին շինեալ ի լանջս Գանձափարախ լերին ի հիւսիսոյ, իսկ միւս՝ Սեաւ լերին ի հարաւոյ։ Երկոցուն ևս բնակիչք էին յազգէս Հայոց, և ունէին առանձին եկեղեցիս, բերդս և մէյիքս՝ ըստ յատուկ բնաւորութեան Ազգիս մերոյ՝ հակառակս իրերաց։ Ի մէջ թաղիցս յարևմտից յարևելս կարկաչէր գետն մեծ Երասխ, գայր ի հիւսիսոյ և գետակն Մեղրի, զգրկօք խանդաղատիւք փարել Մեծին Երասխայ։ Այս գետակ ի Բաղաց ելանէ, ջուր պատուական և առողջարար յոյժ, իսկ ի ձորն Դաշտունեայ ելեալ աղբերականց ծծմբայնոց ի հանքացն պղնձոյ՝ ապականեն զջուրն ի վատառողջարար գործեն։ Ի թիկանց հիւսիսակողման թաղին Մեղրւոյ՝ անկանէր Անապատն Գանձափարախոյ[187] ընդ վերակացութեամբ Յովհաննու վարդապետի ուրումն Մեղրեցւոյ։ Այնքան է առատ պտուղ աւանիս այսորիկ և այնքան ազնիւ, մինչ զանուն նորա համարել ոմանց ի մեղրահամ պտղոցն

առեալ։ Մեղրեցիք թէ և յամենայն ազգ պտղոց հանեն պցքի, սակայն և այնպէս ոչ տանելով աշխատութեան կծոց նոցա՝ լքանեն ի բաց։ Արջք և աղուէսունք բազումք, թէպէտև մեծամեծ վնասս հասուցանեն այգեաց նոցա, այլ ո՛չ կարեն ի չափաւորութիւն ածել զնոսա։ Ջի բնութիւնն ամենաբաշխ որպէս թէ սիրելով զմարդկան բնակութիւն ի միջի այնպիսի ապառաժ լերանց՝ կրկին ձեռօք շնորհէ նոցա զառատութիւն պարգևաց իւրոց։ Օդն կարի՛ տօթագին է և վատառողջ, այլ առաւել ևս թունաւորեն զայն անչափ կիրառութիւնք բարկ օղեաց։

Կարգընկէց արար եպիսկոպոս մեր զՊօղոս ոմն նկամուտ երէց Մեղրւոյ, վասն պսակ դնելոյ կնոջ արամբւոյ ուրուք ի կենդանութեան առն նորա ընդ Գէորգայ ումեմն Մեղրեցւոյ, հրամանաւ փոխ բդեշխին Որդվատայ։

Ոճ խօսից Մեղրեցւոց օտար երևեցաւ ինձ յայնցանէ՝ զորս մինչ ցարդ լուայ, որ թուէր խառնուրդ և բաբելոն Գողթնցի և Սինի բարբառոց միանգամայն։ Օրինակի վասն. «Ատա՜ բէնայի՞ք բէնայի՞ք, հօկ մօտը մորտայ մորթալ»։ Հարց. «Հի՞ւ այ մօրթալ»։ «Քօ ծըռայ սընամա՞ր՝ սընամա՞ր»։ Այսինքն՝ կալարո՛ւք, կալարո՛ւք. մարդ այդ զմարդ սպան։ Հարց. «Զո՞վ սպան»։ Պատասխանի՝ «Ջծառայ քո, սանամա՛յր»։

Խժդժական որպէս և են ասուլիսք վայրացս, տակաւին իւրաքանչիւր գիւղ զիւր գերամեծար համարի, և միշտ տնազ առնէ զլեզուօք դրացեաց իւրոց։

Ընդ առաւել ևս դժուարանց Կապանս ձորոյն Երասխայ՝ եկաք ի Շուանաձոր, երևելին ի գիւղօրէս Զավնդուրայ, թէ պտղոցն պատուականաց առատութեամբ՝ և թէ օդոց մաքրութեամբ։

Յանդիման Կոմանեցայ հին շահաստանի մերոյ՝ որոյ չնաշխարհիկ են նուռն, թուզ և ընկոյզ, անցաք լաստիւք ընդ Երասխ ի կողմն Ղարատաղայ։ Տիրապէս աշխարհ Փայտակարան է այս Ղարատաղ, սկսեալ յԱսլանդուզայ մինչև ի ծովն Կասպից, մայրաքաղաք ունելով իւր զԱհար։ Յաննշան գիւղօրէս բազումս անցանելով, ուր ո՛չ կարգ կայր՝ ոչ կանոն, ընդ Աղթափէ, ընդ Մշկինաձոր, և յիմլանկ՝ եկաք ի մեծ գիւղն ի Վինայ, ուր էր եկեղեցի մի քարաշէն և պայծառ, այլ բնակիչք նորա ըստ բնակչաց այլ ամենայն գիւղօրէից նահանգիս, էր՝ զի ծառոց ծունր ածէին, էր՝ զի կարկառաց քարանց մատաղս մատուցանէին, էր՝ զի զաղբիւր պաշտէին, և էր՝ զի դիւթից և հմայից անսային։ Երկկնութիւն, կնաթողութիւն, և այլ այսպիսի չարիք, արդասիք էին անուղղապաշտութեանց սոցա։ Ի

Վինայ կացաք ամսօրեայ ժամանակաւ, և Դանիէլ եպիսկոպոս բազմօք ջանացաւ ուղղութիւն վարուց մուծանել ի ներքս՝ այլ ո՛չ կարաց։ Զի Տեառն Աստուծոյ ամենակալի բարձեալ էր զհոգի իւր ի նոցանէ, վասն գոլոյ նոցա մարմինս և եթ։

Զարմանալիս պատմեաց մեզ Մէլիք Յովհաննէս գեղջս, իբր թէ ի բանիլ գարնան՝ և ի չուել մարդկանն խաշամբք իւրեանց և արջառօք ի գլուխս լերանց՝ բերեն կուտեն ի տան իւրում զամենայն ծանրոցս կահուց և կարասեաց իւրեանց։ Եւ իբրև մեկնին անտուստ՝ բազմութիւն օձից գան և զեռան ի մէջ նոցա. յահէ որոց ո՛չ ոք իշխէ ի ներքս մտանել և գողանալ ինչ։ Եթէ դէպ լինիցի ումեք բանալ զթեռ իւր կամ զբեռ, գան աղաչեն զմի ումն ի գերդաստանականաց իւրոց՝ որում միայն տեղի տան, ասէ, օձքն, և նա հանեալ բերէ արտաքս զոր ինչ և պիտանի իցէ տեառն իւրում. զմնացեալսն կրկին տանի և զետեղէ ի ներքս։ Զարմանալին այն է՝ զի ո՛չ միայն քահանայ տեղւոյն և ժողովուրդք կրկնեցին զամէնն ի հաստատութիւն բանիցս, այլ և Ահմադ խան կոյր, տէր Ահմադբէգլու գաւառին, այր քրիստոնէասէր և լաւաբարոյ՝ վկայեաց ճշմարտութեան Մէլիքիս մերոյ, և ասաց՝ թէ և ինքն առաքէր անդր զաւելորդս մթերից իւրոց ի գնալն ուրեք։

Ահմադ խան բազմօք ձեռնտու եղև մեզ յամենայն ի կարիս մեր, և որովհետև չորեքտասան գիւղք Ահմադբեգլու գաւառին բընակեալ էին յազգէն Հայոց՝ աղաչեաց զեպիսկոպոս մեր գնալ անձամբ անդր, և մխիթարել զնոսա։ Ճանապարհն քարակոշկոճ էր, տարժանելի յերկիւղէ աւազակաց, և ինքն կարի՛ զբաղեալ գոլով ի խնդիրս եկեղեցականս ժողովրդեան աշխարհին՝ զիս ինքն կոնդակաւ իւրով և մեռոնաւ կարգեաց երեսփոխան իւր, և գրեաց առ քահանայս գաւառին ի մի խմբել և զմեռոնթափէսն առնել։ Ուղղեալ ի Վինայ ընդ Իմլանկ և ընդ Իրիս՝ եկաք ի Շհարէկ, ուր ի ժողովս քահանայից քարոզեցի ես. և յետ հանդիսի մեռոնաբաշխութեան պատուեցայ ի ժողովրդենէն և ի տէրանց՝ իբրև զգերմարդկային ոք։

Երկիրս լի է երկաթի հանօք, և գրեթէ ամենայն գիւղականք դարբինք են, վասնորոյ և նուիրակութիւն իմ եղեն ըստ մեծի մասին յուսնունք, այսինքն պայտք ձիոց (նալ). գուլպայք՝ և այլ խոշոր մազագործ մթերք։

Դարձաք աստի վերստին ի Շուանաձոր, և անցեալ ընդ լեառն նորա ի հիւսիսոյ՝ ի գիւղօրէս Աբանդայ, ի Հալիձոր՝ առ համանուն վտակաւ, ի Մանլև, ի Բեխ, յԱրչաձոր կամ յԱռաջնաձոր, ի Խոչան, ի Ղալաթաղ, ի Փքնի և եկաք ի Տաթև, որ էր այժմ միջոց աշխարհին

Սիւնեաց, ի բաց հատանելով ի նմանէ զԳեղամ։ Ճանապարհ մեր ի Հարաւոյ յեզերաց Երասխայ ուղիղ ընդ հիւսիս։ Բաղաբերդ յարևմտից հարաւոյ կամ Տաթևայ. ուղիղ ընդ յարևմուտս նորա անկանի Սիսիան գաւառ, յորում գիւղ մեծ՝ Բռնակոթ։ Յարևելից նորա է երկիրն Բարկուշատայ, և անտի ի խոնարհ դաշտն Մուղանայ։ Իսկ ի հիւսիսոյ Կորէս՝ զօրանիստ Ռուսաց, Կորիս, Խնձորէսկ և Կռաձոր՝ որք են ձորք աստի և անտի ունելով զկեհս սեպացեալս՝ ողջ փորեալ ցանհամար ականս մարդկան և ի գոմս արջառոց՝ յորս ամրանան ի լինել նեղութեան, և ընդդէմ կան արշաւանաց թշնամեաց։ Շրջեալ ընդ Տող կամ Տեղեր, մինչև ի գետն՝ Հաքարու և ի Շուշի քաղաքաբերդ յԱրձախ աշխարհի՝ ո՛չ ինչ յիշատակաց արժանի գտի ես յաշխարհին Սիւնեաց, քան զԲաղաբերդն յԱճանան՝ որ և Բաղակայ քար ասէր, կառուցեալ ի վերայ բարձրաբերձ և սեպացեալ ժայռի, յամուր և հզօր ապաստանի աշխարհին ընդդէմ արշաւանաց թշնամեաց՝ մինչև ցայսօր ժամանակի։ Լքեալ և ամայի էր թէպէտ, այլ շինուածք նորա տակաւին կանգունք և պայծառք՝ որք զարմանս առաւելուին զտեսողացն ամենեցուն, ծածկեալ էին կապարաւ և կպրով, ըստ ասից բնակչաց գեղջն՝ որ յստորոտս նորա, զի առ անբաւ բարձրութեանն, որպէս և հողմոցն և անձրևացն յաճախութեան՝ հողք ի փուշիս ցնդէին։

Երկրորդ տեղի երևելի զկնի Բաղաց գաւառի՝ է Տաթև[168] ի պատճառս Հայրապետանոցին Սիւնեաց՝ աթոռոյ ասեմ, Ստաթէի առաքելոյն, կառուցեալ գոլով ի գլուխ զարհուրելի սեպհւոյն, որ հայի յանդունդս ձորոյն Որոտնայ՝ ուր Մեծ անապատն է՝ առ համանուն գետով՝ ի հիւսիսոյ լերինն։ Եկեղեցին է քարաշէն, այլ այնքան խրճողեալ աստուստ և անտուստ աւելորդօք կցորդաց՝ մինչ խանգարել զնորա բովանդակ գեղեցկութիւն։ Ունի գրատուն յաջակողմեան խորանի յարևմտից հարաւոյ եկեղեցւոյն, այլ գրեանքն ո՛չ այնքան ի համարի հնագունից։ Ի ժամանակի այսմիկ անկանէր սա ընդ տէրութեամբ Ռուսաց, և չինիկ մի ի զօրաց նոցա բնակէր յարտաքին պարսպամիջի վանացն։ Մայրաքաղաքական առաջնորդ նորա տէր Մարտիրոս Տաթևացի՝ արքեպիսկոպոս, ի գեղջէն՝ որ կիսով մղոնի հեռի էր ի վանաց ստորև ընդ յարևմուտս նորա, ունէր ընդ իւր զՍիմէօն եպիսկոպոս, և զքանի մի աբեղայս, յորս Գրիգոր վարդապետ անուանի էր յոյժ ի ձիավարժութեան և ի զինաշարժութեան, մինչ այնքան՝ զի և շրջաբնակ խուժք ազգաց զարհուրէին միայն յանուանէ նորա։ Շատ էր հարիւրաւոր հրոսակացն ի նոցանէ լսել միայն զանուն Գրիգոր վարդապետի, և ահա՛ կամ զաւարն թողեալ փախնուին, և կամ զինաթափ պաղատաւոր առաջի անկանէին։

Բնական ճարտարութիւն մտաց նորա չէր ի խոնարհ արուեստն սրտին, զի միայն դանակ ի ձեռին՝ հատանէր փայտ յանտառէ, և տաշեալ արուեստէր զայն ի շղթայս և յայլ պէսպէս զարմանալի ձեռակերտս։ Բազումք ընդ խաղս հեթ հնարեալ քանդակաց նորա՝ զաղափար առան ի ճամկագործաց և յոստայնանկաց։ Բայց ափսո՜ս, զի ի գրականութենէ ազգիս զուրկ էր, և այն՝ յանցանք իւր չէին, եթէ ո՛չ խաթարելոյ դպրութեան Սիւնեաց աշխարհի։

Հաց առօրին թարմ թխէր սա. և յաւուր միում առեալ ըզպանիր նստաք առ թոնրին, և որքան հացթուխն հանէր՝ մեք ի ներքս ծալէաք մինչև կշտապինդ յագեցեալ յետս կացի ես։ Զարմացմամբ իմն առ իս հայեցեալ Գրիգոր վարդապետի, ասաց. «Ստա լհա խի՞ ուտէիս չըս»։ Իբրև թէ՝ Տղա՛յ, ընդէ՞ր ո՛չ ուտես։ Ասացի. «Յագեցեալ եմ, տէր»։ Պատասխանեաց. «Ստա լհա դէ վա՜ղ ըսիր, թէ հագօտ վէրա ըս է՜յ. մըն մարդ հաց ու պէնրից կկօշտընայ հարկի՞զ»։ Իբրու թէ՝ Ուրեմն վա՜ղ ասա՛ զի հոգեվարիս, ապա թէ ո՛չ մարդ՝ յագենա՞յ երբէք ի թարմ հացէ և պանրոյ։

Բովանդակ զամիսս քան շրջեցաք[183] յայսոսիկ կողմանս՝ մինչև ի Շուշի. այս ըստ մեծի մասին անցուցաք զաւուրս մեր ի Տաթև։ Ուրանօր յերեկոյի միում, այնինչ անագան ուրեմն ննջեալ էաք իւրաքանչիւր ի տանիս խցի միում, եկն անդ գրագիր Յովհաննէս, եպիսկոպոս, պատմեաց մեզ զյետին թշուառութենէ սրբոյ Աթոռոյն Հայաստանեայց՝ ի սաստիկ հարկապահանջութենէ Պարսից և պարտուցն։ Ու անց գնաց ի Շուշի, ի դիմաց Հայրապետին և ժողովոյն էջմիածնի՝ փոխ առնուլ մուրհակաւ ի Ջոհրաբայ և ի Մարկոսէ Թառումեանց 4000 ոսկիս, և տանել յէջմիածին։

Այլ այս նիւթ մեծի գրականութեան ազգի մերոյ՝ և Մեկնարան Սուրբ Գրոց, արդարև այնքան խաթարեալ և անշքացեալ էր՝ մինչ եթէ հարկ լինէր մայրաքաղաքական առաջնորդին նամակ ինչ կամ գիր օրհնութեան առնել ուրեք, ինքնին նստեալ գրէր, կամ նախարտակ առնէր և տայր Մարտիրոսի Աշտարակցւոյ սարկաւագի իւրում, հազիւ օրինակէր զմին յաւուրս երիս։

Մարտիրոս արքեպիսկոպոս, այր սպարթևահասակ, անձնեայ և գեղեցիկ կերպարանօք, դեռ ի վեհ մտին պահէր զանձն փանաքի և զփծուն գրուածս իմ, յիշատակեալս ի հատուածն վեցերորդ։

Ուստի և ընդ ակամբ հայէր յիս։ Խի՛ստ էր նմա վանել ի վանաց իւրոց զտիրացու նորիրակին էջմիածնի, բայց և այնպէս երևումնս առաջի նորա՝ ժխորէր զախորժակն, մինչև անագան ուրեմն հարկ եղև նմա հնչալ ընդ մեծի պարտեօք գրութեան, յոգւոց հանել, և գրեթէ լալ

խսկ՝ յաղագս չունելոյ իւր օգնական ի մեծի պաշտաման իւրում։ Գտանիէլ եպիսկոպոս՝ որ քաջ հասու լեալ տղայական վրիպանաց իմոց և անոխակալութեան սրտիս՝ անմեղադիր եղև զինէն առաջի նորա. «Կոչեա՛ մի՛, և տե՛ս,—ասէ,—թէ քանի՞ առաւելութեամբ յետ վճարել կարէ Մեսրովբ պաղայութեանն, և արժանի լինի գթոյ և շնորհաց հայրութեան քոյ»։ Թէ այսպէս՝ և թէ այնպէս՝ յանդիման եղէ պատկառելի երեսացն։ Արտասուեա՛ց ընդ առաջին տեսն, և կոչեալ զիս առինքն՝ որպէս Հայր զանառակ որդին, համբուրեաց, և ասէ. «Անցցի՛ն, որ ինչ և անցին. տակաւին որդի ես դու սրբոյ Աթոռոյն՝ և մեր»[190]։ Եւ արդարև, որպէս ասաց, նոյն և եկաց առ յապայս ինձ ի հայր հոգևոր և ի պաշտպան հզօր, և ես յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ չանացայ զանձել ինձ զօրհնութիւն նորա։

Եւ այսպէս յամսեան Օգոստոսի 1821, ընդ Որոտն, ընդ Ծաղատ, և ընդ Բռնակոթ Սիսիանայ գաւառին՝ եկաք ի Ջահուկ գիւղ առ եզերբ գետոյն Նախչուանայ, որ ի Բռնակոթայ և այսր՝ քաղցրութեամբ ընկերակից եղև մեզ։ Անտի ուղղեցաք ի կողմանս Աղալերանց (որոյ հանք աղիցն պատուականք են յոյժ), և անտի դարձեալ եկաք ի Ծահկերան աւան, որ այժմ Ղազանչի կոչի, և անտի յՕրինջակ գաւառ։ Այս անուն ընկալաւ սա՝ յՕրինջիկ տիկնոջէն Սիւնեաց, որ շինեաց զամուր բերդն, որ կայ մինչև ցայսօր ժամանակի[191], ընդ մէջ Ծահկերտայ, Ապրակունեաց, և Նախչուանայ՝ ի վերայ քարալերին միոյ լեռնացելոյ ի դաշտին, ուր պահէր զանձն արքունի, և ապաստանի լինէր Սմբատայ Բագրատունւոյ արքայի մերոյ և նահատակի՝ վասն ի Քրիստոս հաւատոց[192]։ Ընդ յարևելս հարաւոյ սորա անկանի Օձալեառն կամ Իլանտաղի անուանեալ քարալեառն Ապրակունեաց՝ բարձր յոյժ, զորմէ ասի ունիլ անթիւ բազմութիւն չարաթոյն օձից, յորոց և զանունն ընկալաւ։ Ապրակունիք գիւղ առ երի կայ սմին, և վանքն Որնջակայ Սուրբ Կարապետի՝ յարևմտից նորա, առ ձորակաւ գետակին՝ ուստի բղխին աղբերք անուշակ ջրոյ։ Լի են շրջակայ դաշտորայքն օձիւք, զորոց պէսպէս առասպելս յօդեն բնակիչք Ապրակունեաց, որպէս թէ յեօթն տարին միանգամ զօրաժողով լինել նոցա, ընդ վարչութեամբ արքայի իւրեանց, և գնալ պատերազմել ընդ օձից Մասեաց, որով և ի վերին խնամոց պակասել զիրեարս սատակելով, ապա թէ ո՛չ՝ անբնակ լինէր աշխարհս յերեսաց նոցա։ Ասէին նաև՝ թէ մարդիկ հարեալք յօձից այսոցիկ, փութային որքան կանուխ և մարթ էր, և գային ի վանսն անդ, և առեալ ի հողոյ խորանին ձգէին ի բերանս իւրեանց, և թոյն օձիցն չազդէր ինչ նոցա։ Այլ որ առաւել հիանալի՝ պնդէին թէ՝ և օձքն դիմեալ գային անդա-

նօր, և որ ի հարկանողէն և ի հարաւածելոյն շուտ հասանէր անդր՝ ազատէր, և որ յետոյ՝ մեռանէր։ Այս հաւատ առիթ տայ ժողովրդեան տեղւոյն յաւուրս ամարանի, կրել ընդ ինքեանս ի հողոյ աստի մասն՝ իբրև զանդեղեայ սրբազան ընդդէմ հարուածոց մահաբերին։

Վերադարձաք ի Նախչուան, յամսեան Սեպտ. ի 25, 1821, և լուաք թէ Հայրապետն ամենայն Հայոց, քանի մի եպիսկոպոսօք ելանէր հրամանաւ բդեշխին Երևանայ՝ գալ անցանել ի Շուշի[193]։

Եկն եհաս նա[194], ընդ որում էին տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, Անտոն Մուղնեցի արքեպիսկոպոս[195], Գրիգոր Ծուկուլն արքեպիսկոպոս[196], Յովհաննէս եպիսկոպոս գրագիր[197], և ի վարդապետաց անտի Յովսէփ Կարբեցի՝ գանձապետ, Գրիգոր Աշտարակցի՝ շարադիր կոնդակաց, Մինաս վարդապետ բժիշկ, Յովհաննէս վարդապետ Ղրիմեցի[198]՝ ատենադպիր. իսկ ի սարկաւագացն՝ Յովսէփ Եւդոկիացի, Շահօն Երևանցի, Գրիգոր Երևանցի՝ տեղապահի՝ և Առաքել Անտոնի՝ ժամասացք։ Ընդ յառաջ ելին նմա[199], ոչ միայն ժողովուրդք Հայոց, այլ և խանն Նախչուանայ ամենայն կազմութեամբ այրուձիոյ և ազատագունդ հեծելոց։ Եկն էջ նա ի տան պարոն Սարգսի Հայկազուն իշխանի տեղւոյս. և որ նախ մատոյց նմա թեթևութիւն հոգւոց ի պատճառս ծանրութեան պարտուց, էր Դանիէլ եպիսկոպոս, որ հաւատարմութեամբ մեծաւ ետ ո՛չ միայն զամենայն հասս նուիրակութեան, այլև յաւել ի վերայ յառանձին հասից իւրոց թումանս հարիւր, օգնութիւն ի նեղութեան հօգևոր ծնողիս իւրոյ, որով և ընկալաւ զառաջնորդութիւն անապատին Ամարասայ յԱղուանս Հայոց, և գնաց անդր։ Իսկ ինձ ի տեղւոջն խնդրանօք նորա տուեալ զչորս ատիճանս դպրութեան և զուրար հրամանաւ, առ ընդ իւր վերստին ի գրութիւն կոնդակացն։ Ուրանօր կացեալ նորա մինչև ի սկիզբն Հոկտեմբերի, այց ելեալ յամենայն ի վանահարց շրջակայ վանօրէից, յառաջնորդաց, յիշխանաց, և զրեթ՛ թէ յամենայն ժողովրդոց, որք որպէս զհօտ դալարարօտ դիմէին յաղ օրհնութեան նորա, և յունկնդրութիւն հոգեպարարն խրատուց։

Հոկտ. 2. Զհամբաւի հարաւ լուրն, թէ բդեշխ Երևանայ զապաշաւ մեծ կրելով ի միտս իւր յաղագս ելից Հայրապետին՝ գունդ կազմէր առաքել զկնի նորա և յաթոռն դարձուցանել էջմիածնի։ Վասն որոյ աճապարեալ նորա շուեաց այնօր ի Ջահուկ ընդ հիւսիսակողմն քաղաքին Նախչուանայ, ամենայն բազմութեամբ աղխիցն և պաբագայից։ Օրն կարի ամպային, և տեղային ամպք ձիւն սաստիկ յոյժ փրթուածովք, մինչև թզաչափ ստուարութեամբ ծածկել զերեսս երկրին։ Այլ զի Ջահուկ չէր հեռի իմն ի քաղաքէն, և ընդ իշխանու-

թեամբ անկանէր Պարսից տէրութեան, խորհեցաւ ծերունին հայրենասէր, զի եթէ զդիրութիւն անձին և եթ խորհելով, մնայցէ անդ զգիշերեայն՝ յայնմ վայրի դադարեալ, գուցէ հասանիցեն խնդրակք բդեշխին, և բռնի տարցին զինքն. ի նահանջ մեծ ամենայն հասարակօգուտ խորհրդոց իւրոց։ Վասնորոյ աճապարեալ ընդ ձորն ի վեր, անցեալ ի սահման Սիսիանայ՝ որ էր յայնժամ ընդ տէրութեամբ Ռուսաց, այլ ևս յառաջել չկարաց ի յոգնութենէ ձեանցն՝ որ էր ուրեք՝ զի գազաչափ բարձրացեալ, և էր ուրեք՝ որ երկուք և երիւք ևս, ծածկէր զմակերևոյթ խորդուբորդ կրճոցն և դժուարանց ելևիջից տարտարոսական ձորոյն։

Այլ ևս յառաջել ո՛չ կարելով, ագաւ զայն գիշեր ի քարայրի ուրեք՝ յաջակողմեան եզր գետոյն, ուր յետ գիշերային պաշտամանցն, պատուէր ետ իւրոցն զայր մի հետիոտս առաքել ի Բռնակոթ, զի հանցեն ի վաղուէ կապերտս և սփռեսցեն զերեսօք ձեանն, ընդ որ հնար իցէ անցանել կարաւանին սրբութեան։ Քանզի բազմափորձ էր նա ամենայն ճանապարհորդական հնարից, ի հեռաւոր ծագաց անտի Հնդկաստանեայց մինչև ի սառնամանիս Սիբերիոյ, առաքելական քարոզութեամբ շրջելովն և կազդուրելով զցրուեալսն մերազանց ի հաւատս Քրիստոսի։

## ՇԱՐԺԱԿԱՆ ՍԿԵՂՆՑԻ

Այլ նոր և վսեմ երևեցաւ բովանդակ կարաւանին երեկոյեան ժամերգութիւն հեծելոցն զճանապարհայն, զի Կաթուղիկոսն ի կեդրոնի կացեալ, յաջմէ նորա Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, և ի ձախմէ՝ Անտոն եպիսկոպոս Մուղնեցի՝ որ զժամօրհնողի ունէր բդ-պաշտօն, և ապա վարդապետք և սարկաւագունք աստի և անտի՝ որոշ որոշ և դաս առ դաս սկսան զաղօթսն առ Աստուած։ Համարէր որ զկարաւանն փոխեալ ի քաւարան շարժական ի ստորին հովտաց անտի ընդ զառ ի վեր ձիւնափաղփիւն՝ յերկինս ի վեր խիզախել, և օրհնութեամբ աստուածայնով ամրափակել զանդորայ ի բերս առատ պարգևաց բարերարին։ Հայք ընդ նորութիւն տեսարանին հրաշալին, և Պարսիկք զահի հարեալ քստմնէին։ Զի աղօթքն ի ձի՝ ընդունակ արարչին լեալ ո՛չ երբէք հաւատային։

Նախքան զլոյս առաւօտուն՝ ծագեցան առ մեզ զթութիւնք Բռնակոթայ. զեղաւ անդանօր ամենայն արու, այլ թէ ո՞րպիսի կամակար ջերմեռանդութեամբ այր զարամբ ել համբուրել զաջ Հայրապետի իւրոյ, և շնորհաց օրհնութեանն լինել արժանի՝ անմարթ է

յինձ ստորագրել գուցումեալ մատամբք։ Իբրև կատարեցին զամենայն՝ զարմացեալ ընդ համբերութիւն նորա՝ որ ի ցրտոյ, և երկուցեալ ևս՝ թէ ի ծագել արեգականն ջեռուցեալ ձեանց խիմէին չտալ մեզ անցս ամենևին, ստիպեցին զկարաւանն ի չու իւր։ Սփռեցին զկապերտանին ի վերայ ձեանց, այլ յանցանել առաջնոյ թևին, ծանրութիւն սմբակաց երիվարաց նոցա ի խորս ձեանց իջուցանէր զնոսա, և զհետ եկողացն չտայր անցս ազատ ի վտանգից։ Վասնորոյ և յերկուս բաժանեցին զառաջս ճանապարհին. մի՝ վասն բեռնակիր անասնոց մերոց, և միւս՝ վասն հեծելոց. և անհնարին արագութեամբ փոփոխելով զկապերտանին յետուստ ընդ յառաջ՝

Եկն անդ մայրաքաղաքական արքեպիսկոպոս Սիւնեաց՝ Մարտիրոս, քանի մի պատուական երիցամբք և երևելի երևելի իշխանօք. յորս նախապատիւք էին և հզօրք ի ժամանակիս՝ Մէլիք Փօղոս Տաթևոյ, Մուսի հարիւրապետ եղբայր նորա, և Յովսէփ որդի Մուսեայ՝ հնկայից ժամանակին ահաւոր։

Յետ երկուց աւուրցն հանգստութեան, նովին տաժանմամբ յառաջ խաղացեալ՝ հասաք ի Շնհեր գիւղ Հայոց, առ եզերբ գետոյն Որոտնայ՝ և ագաք անդ։

Հասաք ի վանս Ստաթէի[200], ուր կացաք ամսօրեայ ժամանակաւ, գոհացեալ ի շրջակայ գիւղօրէից՝ որք ինքնայօժար ջերմեռանդութեամբք մի զմիով ելանէին նախընծայ մատուցանել մեզ զհացալից սեղան իւրեանց, և զօրհնութիւնս ընդունել։ Մէհդի խան՝ որ ի կողմանէ կայսերութեան Ռուսաց իշխէր Շուշւոյ և Սիւնեաց, այսինքն Արցախայ՝ Սիւնեաց և Աղուանից միանգամայն, պատգամաւորս առաքեաց առ Հայրապետն աստանօր, և խնդրեաց մի՛ յառաջել յամուրն Շուշի, մինչև ծանուսցէ կուսակալին Տփղեաց և յայսկոյս Կովկասու եղեալ նահանգացն՝ զգալստենէ նորուն։ Ահա՛ քեզ արուգայք մեծ, և առիթ անհնարին տագնապի[201]։ Կուսակալ ժամանակիս էր կոմս Երմալով, որ առ մեծ շնորհս ունելով զմեծն Ներսէս արքեպիսկոպոս, թախանձանօք նորա հրաման գրեաց առ Մէհդի խան հրաւիրել զնա ի Շուշի, այլ թոյլ չտալ նմա առնելոյ ինչ՝ մինչև ինքն գրեսցէ առ կայսրն՝ Աղէքսանդր Առաջին, և ընկալցի զհաճոյս նորա։ Կալ և կա՛պք անհնարինք, այլ ճար ինՙչ։

Նոյեմ. 3[202]։ Մեծաւ բազմութեամբ արքեպիսկոպոսաց՝ մէլիքաց՝ հոգևորականաց և աշխարհայնոց ելաք ի Տաթևոյ, և ընդ ձորն անդրնդային գետոյն Որոտնոյ, ուր անապատն էր անուանեալ Մեծ, ընդ վերատեսչութեամբ Մկրտիչ վարդապետի Ալէքն կոչեցելոյ[203]. ելաք

ընդ զառ ի վեր նորա ի դաշտ ինչ. ուր էին բլուրք երեքին Ուչթափէք կոչեցեալ, յորում առ երի ընդ յարեմուտս հիւսիսոյ փոխելով զգլուխ կարաւանին՝ եկաք ի Կորէս գիւղ մեծ Հայոց, իբրև 200 տանց, ուր էր և ամրոց հզօր յարևելից գեղջն, ընդ պահպանութեամբ գնդապետի ուրուք Ռուսաց, որ հսկէր անդ 500 զօրօք: Սա սաստկութեան սառնամանեաց ցրտահար եղեն ոտք և ձեռք բազմաց, և իմ իսկ առանձինն, զորս շփելով գիւղականացն ի ձեռսն՝ սաստիկ ուժգնութեամբ, բացին ի նոսա պշրջան արեան, և խանձարրեալ ի բամբակի՝ պատուիրեցին հեռի պահել ի կրակէն, ապա թէ ոչ՝ խիմեալք ի բաց թօթափէին: Զաւուրս ութն կացաք աստանօր համբուրեալք յամենեցունց: Եւ գնդապետ զօրուն առաւել շուք գնէր ելից մերոց՝ քան մտից: Վասն զի յետ ի կարգի դնելոյ զզօրս իւր ըստ դրօշու դրօշու, յաջմէ և յահեկէ կարաւանին մերոյ, շուեալ հրամայեաց ընդ մեզ, մինչև ի գիւղն մեծ Խնձորեսկ: Այս գիւղ յարևելից հիւսիսոյ անկանի Կորիսայ, ի խորշին ձորամիջի, որ ըստ ձորոյն Ոշականայ և Կարբւոյ, լի է անմատչելի անձաւօք և քարայրօք ընդ կրկին կողմանս իւր: Ընդ ամենայն աջ և ահեակ հոլովմունս վիճակին Սիւնեաց աշխարհի, և այսպէս առմունս և աւերմունս տինա՛ և Քարին Բաղակայ՝ այս գիւղ եկաց մնաց անաւրին: Վասն զի ո՛չ միայն արք նորա են կորովիք և քաջաւէնք ի մրցմունս պատերազմաց, այլ և կանայք իսկ նորա, յորոց չիք օտար գործածութիւն հրացանաց. վասն զի յանցեալ ամառան[234], յորժամ ընդ Դանիէլի եպիսկոպոսի նուիրակէաքն յայսմ գեղջ, կանայք նորուն ո՛չ միայն հրացանօք և սուսերօք ելանէին ի հունձս, այլ և ի հանդիպել աւազակաց և ի վարել անդ զարջառս նոցա, արիաբար զհետ պնդեալ և առնապէս պատերազմելով՝ կորզեցին զաւարն ի ձեռաց նոցա:

Զոհրաբ հայ՝ ի հաւատոց ուրացեալ, և ընդ կուրացեալ քեռ ամուսնացեալ խանին՝ եկն անկաւ յոտս Հայրապետին, և զղջայր մեծաւ ապաշաւանօք ընդ կորուստ մեծադին: Հայրապետն մխիթարական բանիւք և աւետարանական վարդապետութեամբ կազդուրեաց զլոյս դարձի նորա առ Տէր. իսկ տէրութիւն Ռուսաց արգել զնա ի դառնալոյ անտի ի լոյս փրկութեան, ասելով, «թէ որ միանգամ հաւատոց ի հաւատս փոփոխի, պարտ է մկրտիլ յեկեղեցւոյ Ռուսաց, ապա թէ ո՛չ՝ կալ և մնալ ուր էն»:

Եկաք ի Կոնաձոր, որ ի թիկանց Խնձորեսկայ ի հիւսիսոյ, գրիւք և ամրութեամբ համանման առաջնոյն: Նոյնպէս և եկեղեցի սորա է քարակերտ, որոգաձև կամ սաղաշէն, այլ աղբիւր ջրոյն՝ յորմէ ըմպէին ամենայն գիւղականք իբրև 75 տունք, ունէր զհանքային

քաղաքրութիւն իմն թթու, անախորժ եկամտից, այլ ախորժրնկալ և առողջարար համարեալ ի բնակչաց։ Գրիգոր Մէլիք գեղջ այսորիկ սպանաւ ի Մէհղի խանէն, երկոքին կանայք նորա ի միում տան՝ սնուցանէին ուրոյն զորբս նորա, և զարմանք այն էր՝ զի սիրով կէին ընդ իրեարս։ Աստի էր և քերթողուհին Սիւնեաց[205], որ արար տաղս բազումս յաշխարհիկ լեզու երկրին, յորոց հետազայդ՝ յանէծս անհաւատարմութեան առն իւրում Գրիգորի, սկսանի այսպէս.

«Ես Մըրան ըմ մըլորած,
Հօսերըս չար հըլօրած։
Էսօր Գիւգիւն մըռա՛ծ պըտէր
Պըտարազըն բըլորած»։

Ելաք աստի ի Տող՝ կամ Տեղեր, որ ի վերայ բարձրաւանդակի սարուղաշտին կայանայր, ի հարաւոյ ձորոյն Հաքարու, մղոնաւ միով և աւելեօք ևս՝ հեռի ի Նիմանէ։ Ուրանօր ողջոյն հրաժարանաց տուեալ Հայրապետին եպիսկոպոսի և իշխանացն Սիւնեաց, արձակեաց զնալ իւրաքանչիւր ի տունս իւրեանց, և առեալ ընդ իւր միայն զՅովսէփ որդի Մուսեայ հարիւրապետի՝ քանի մի ձիաւորօք, չուեաց անց ընդ գետն Հաքարու, և անտի ընդ անհնարին ելևէջս լերանց Արձախայ անցեալ եկն յամուրն Շուշի[206]։ Այլ ծանի՛ր, զի Արձախ, Փայտակարան և Ուտիք միահաղոյն առեալք, կոչէին Աղուանք, կամ Աղուանից տուն (տե՛ս զքննութիւն իմ ի վերայ բուն Փայտակարան աշխարհի և ծանօթութիւնսն)։ Ջճանապարհայն զարմանալիս եցոյց մեր արդարև պատանին Յովսէփ։ Հայրապետ մեր բազմեալ յանդրուար գնայր, զոր բարձեալ տանէին ջորիք երկու ամեհիք՝ յառաջոյ և յետուստ լծեալք։ Եզերք ձորոյն սաստիկ զառիթափ, ձորն խորին յոյժ, և գետն որ ի նմա սաստիկ յորձանուտ։ Ջիւնն պարապատեալ ծածկէր զամենայն հետս և զշաւիղս անցից, և չէր ինչ ակնկալել, մեզ եթէ ո՛չ վտանգ յամենայն կողմանց։ Յանցանել կարաւանին ընդ կիրճ մի ի կրճիցն անմատչելեաց, խրտնեցան ջորիք անդրուարի Հայրապետին. և ահա բուռն ուժգնութեամբ ի ձորն զահավիժեալ խորտակէին, եթէ չէր քաջին Յովսէփայ զուսն անպարտելի ի ներքոյ մատուցեալ անդրուարին, և զսաստիկ ծանրութիւն նորա՝ և ջորեացն երկոցունց, ի վեր կալեալ պահեալ վայրկեանս բազումս, մինչև ապուշացեալ կարաւանին հասեալ կորզեցին ի միջոյ զՀայրապետն զահիհարեալ, և ապա լուծին զգործին, և անվնաս զերծուցին զջորիս նորա։ Ահա՛ այսպիսիս ունի իւր քաջս աշխարհն Սիւնեաց։

*Իսկ Հայրապետն այնուհետև ի ձի հեծեալ առանձին, եկաք հասաք ի Շուշի, ուր խանն և ամենայն բազմութիւն հեծելոց և հետևակացն ընդ յառաջ ելին նորա, և տարեալ հանգուցին զնա ի տունն Հայրումեանց կոչեցեալ՝ որ ունէր սենեակս կրկին, մի՝ վասն Հայրապետին և սպասաւորաց նորա, իսկ միւս՝ վասն Անտոն եպիսկոպոսի և գրագրացն առ հասարակ, ի միւս բակին բնակէր տեղապահ, և այլք աստ և անդ։*

*Շուշի անառիկն համարեալ ամրոց՝ կղզի իմն էր գոգցիր ամբարձեալ ի վերայ քարալերին, որոյ յարևելից կողմանէ պարապատէր գետն ընդ որ մեք եկաք, իսկ յարևմտից գետքն բխեալ յարևմտեան լերանց, և եկեալ համբուրէին զերևարս ի հիւսիսոյ ստորոտս նորա։ Բնութիւն յամենայն կողմանց ահագին քարապարսպօք պատեաց զայն, բաց ի հիւսիսակողման մասնէն, ուր ելից զթերին բնութեան արուեստն՝ հզօր պատնիշօք ընդ դուռնն՝ որ հանէր յԱւետարանոցն գիւղ։ Բնակիչք նորա Հայք և Թուրք։ Հայքն հաշուէին լինել 500 տունք, և ունէին եկեղեցիս երիս։ զԱգուլեցւոց, զՂարաբաղցւոց և զՂազանչւոց, այլ զքարակերտ և զմեծ եկեղեցին ի նորոյ շինէին յայնժամ երկոքին եղբարքն Թառումեանք՝ Ջոհրաբ և Մարկոս։ Շուշի զամենայն կերպարանս բերէր յինքեան զմիջնաբերդի, շրջակայ լերինք յերից կողմանց նորա երևէին բերել զձև արտաքին պարսպաց բերդին. գետորայք յորդեալք զնովաւ գործ խրամոց կատարէին ջրալեաց, և ինքնին ի կեդրոնի ամբարձեալ, արդարև անառիկ լինէր, եթէ ի մերձակայ լերանց անտի չհասանէին առ նա զնդակք թնդանօթոց։*

*Հիւսիսակողման քարաժայռն է առաւել բարձր, և ահաւորագոյն ևս ձոր նորա։ Պատմէին, թէ «Ահմէդ խան, հայր Մէհդի խանին ցասուցեալ երբեմն ի վերայ քեռ եղբարց Թառումեանց, հրամայեաց դահավէժ առնել զնա ի ժայռից աստի ի խորախորս ձորոյն, այլ առ անհնարին բարձրութեան միջոցին, ասեն, հողմոց ի ներքս մտեալ երկայն և յոյժ ծաւալ հանդերձիցն մեղմեցին զուժգնութիւն ծանրանաց նորա, և հեզիկ ի վայր բերեալ՝ կենդանւոյն իջուցին զնա ի ձորամիջին։ Զոր հրաշից ի սակի եղեալ բռնաւորին, հրամայեաց այնուհետև ազատ շնչել նմա զօդ հասարակաց»։*

*Օդ տեղոյս կարի խոնաւ և երկիր կաւուտ, ուստի և յանձրևային եղանակս կարի տղմուտ։ Յաւուր միում ի գնալ իմում յեկեղեցի քաղաքիս, գտի զպատու ոմն կրկտել ի մէջ տղմոց զպայտիկ կօշկացն իւրոց, զոր ի բաց կորզեալ էր ցեխն։ Բնակիչք նորա ընդ այր և ընդ կին առոյգ են և աշխոյժք։ Ձև զգեստուց նոցա կոչեցեալ Ղարա-*

քաղի՝ խառնուրդ իմն է Վրացի և Պարսիկ ձևոց։ Կանայքն նոցա ունին և զգոգնոց յառաջոյ իւրեանց ի պահպանութիւն զգեստուցն ի կեղտոյ։ Պառաւունք զգենուն և զմխաշապիկ ի վերայ ամենայն ըզգեստուց իւրեանց զի մի՛ մխոտեսցեն զնոսա։ Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամօթխածութեան ի դէմս կրեն, գեղեցիկք են յոյժ և ախորժատեսիլք։ Ո՛չ սքօղեն զգլուխս իւրեանց, այլ գուտակ ի մորթոյ գառանց Ղալմուղաց դնեն ի գլուխս՝ զօրէն պատանեաց, ձիւնափայլ փողքն ընդ կարմրութեան այտուցն զուգակշռեալ, յօրինեն զնոսա խնձորս ճերմակ ու կարմիր. իսկ գիսակք հոլոպեացն շուրջ զուսովքն ի թիկանց ցներբանս նոցին ծաւալեալ՝ հաւասարեն զնոսա (եթէ չգերազանցեսցեն) գեղեցկուհեացն Վրաց. սովին և եթ տարբերութեամբ, զի սոցա՝ իշխէ ամօթ, իսկ նոցա՝ աշխոյժ։

Գինի Շուշույ՝ սոխի ջու՛ր։ Այլ Պարտաւայն, Աւետարանոցին, Շաքոյն, Շամախոյ, և Գանձակայն՝ ազնիւք յոյժ, որովք լի է քաղաքն։ Պտուղք համեմատ օդոյն, այլ հունն, զկեռն, մորն, և մոշն, մամուխն, մասուր, կաղինն, շագանակն, տանձ և սալորք անտառաց նորա պարարտ են և համեղք յոյժ։ Շերամ առատ է աստ՝ որպէս յամենայն Սիւնիս. մի ի գերագոյն բերոց նորա է ձին՝ Դիլիբօզ անուանեալ, որ երկրորդ դասի յամենայն ուրեք՝ նժուգին Արաբացւոց, և հաւասար Թորգոմեան օդապարկաց, ուստի և մեծագնի վաճառի յոյժ։ Կանայք երկրիս առհասարակ արուեստաւորք են, և գործեն պէսպէս ձեռակերտս մետաքսիս, իսկ արք նոցա առհասարակ վաճառականք և երկրագործք։

Երկոքին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց, բազմութիւնք գործավարաց, և պատիւք ի մէջ Ռուսաց՝ մեծանային յո՛յժ յոյժ։ Տունն Հախումեանց՝ ամենահարուստ, որ և ի գանձարանի կայսերութեանն Ռուսաց ունէր մինչև միլիոնս ռուբլեաց, և ի քաղաքացն Պարսից մինչև ի քաղաքս Սիբերիոյ և Եւրոպայ՝ ձգէր առևտուր։ Բայց ի վերայ այսորիկ ամենայնի՝ տակաւին ճիշդս կարդայր զնոսա ազգն և ոփշտս, զի առ անբաւ գանձուցն յոլովութեան զարարս մեծագործութեան յանձինս ո՛չ բերէին, տինա՛ և ի դուզնաքեայ ողորմութենէ կարօտեալ և տառապեալ համազգւոյն զինքեանս ի բաց որոշէին։ Բայց ես ո՛չ համարձակիմ մակագրել ի բարաւորի տան սոցա զանուն անողորմ, վասն զի՝ թերևս ո՛չ զհամբաւի հարկանի զնոցանէ այն ի ցոյցս մարդկան արարեալ ողորմութիւն, որով այլք ոսկւով դնեն զպա՛րծանս ի մարդկանէ՝ քան թէ վարձս յԱստուծոյ. սակայն և այնպէս, գեղեցիկ իմն մոլութեամբ մոլեալ ընդարձակէին յոյժ ձեռն տալ աչալրջաց մերաղանց, գործավարս կարգելով

զնոսա ի վերայ վաճառաց իւրեանց ի տեղիս տեղիս, և ջանալով հարստացուցանել զնոսա, և ի տունս հաստատունս կազդուրել, զորս և Ջրաղս իւրեանց անուանէին, այսինքն է՝ ճրագունս փայլեցուցանել յարտաքս զանուն և զերախտիս իւրեանց։ Սէր բազում ճրագս ունելոյ ընիկ իմն էր քաղաքիս, վասնորոյ և այր զարամբք ելանէր ճոխացուցանել զհամազգիս իւր՝ զի ի պարծանաց սակի էր յոյժ ի տեղւոջն համբաւեալ գործն։

Երկրորդ տունն էր Ջոհրապայ և Մարկոսի Թառումեանց՝ յամենայնի վերագոյն։ Վասն զի՝ սոքա ընդ իւրեամբք ունելով զամենայն արտունութիւնս ծովուն Կասպից, թէ զձկնորսական իրաւունս, և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին գործավարաց յայն պաշտօն։ Ո՞ր մնայ, զի և վաճառականութեանցն առևտուր ո՛չ ինչ նուազ քան զշախումեանցն՝ ձգէր ի հեռաւոր ծագս աշխարհաց։ Ճրագունք տան Թառումեանց գոլ մի մի շահապք շահաստանի, այնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ զգեստու, թէ տամբ, թէ հարստութեամբ, մինչ յառաջին տեսութեան իմում, համարել զնոսա տեարս տերանցն իւրեանց Ջոհրապայ և Մարկոսի։ Առօրէական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելուլ քան զռուբլիս 500, թո՛ղ զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց։ Եկեղեցին կառուցեալ համակ ի սպիտակ վիմաց գեղեցկագոյն քան զբազումս ի հռչակաւոր եկեղեցեաց աշխարհին՝ յայտնի արձան էր մեծագործութեան սոցուն։

Թառումեանք ընիկք էին ատանին Շահկերտոյ, այլ ի վերջին ատեն նորա եկին բնակեցան յԵրևան։ Իսկ բդեաշխ նորա՝ որ զամենայն ինչս հպատակաց տէրութեան յիւր սեպհական ի ստացուած համարէր, և չարաչարս տանջէր զնոսա՝ տուժել ինքեան զգոյս իւրեանց (կենդանի էր յայնժամ և Բաբա եղբայր սոցա կրտսեր, որ յետոյ մեռաւ ի Դարբանդ)։ Բաբա առեալ զամենայն զուգ՝ փախչի յաշխարհ Փայտակարան, և գրաւէ, զերեսս ծովուն Կասբից ի Ռուսաց դրանէն, որով սակաւ առ սակաւ հարստացեալ անդանօր՝ կոչէ և զեղբարս իւր, և հիմն դնէ այնորիկ հարստութեան, յոր վայելէին այսօր եղբարք իւր և ազգն։

Ընդ հարուստ ժամանակս կացի ինքնին՝ անծանօթ ի քաղաքի այսմիկ. այն ինչ աստիճանակից եղբարք իմ ներդաշնակ տաղասացութեամբք իւրեանց՝ զոր խնայէր ինձ բնութիւն, հանրածանօթ հանդիսացան ի քաղաքին, և շահեցան ոսկիս բազումս՝ պարգևի մասամբ, այն ինչ Թուղթ և Թանաք յառանձին սենեկի՝ չշահէր ինչ ամենևին։

Ողորմութեամբն Աստուծոյ վերստին աստ պատահէր Պօղոս վարդապետ Ղարադաղցի՝ նախկին վարդապետ իմ, և Յովսէփ վարդապետ՝ իմաստասէր վերաձայնեալ, ուսուցիչ ուսուցչի իմոյ[97], զորս հրաւիրեալ էին երևելի գերդաստանք քաղաքիս՝ ի դաստիարակութիւն ուստերաց և դստերաց իւրեանց։ Յորս կարի երևելի հանդիսանային Յովհաննէս և Կարապետ Մարկոսեան Թառումեանց, Աղա Բաբա Հախումեանց, Մնացական Ջալալեանց և այլք, ուստի և ես սպրդեցայ ի նոսա՝ ուսանիլ զնորոգ և զպայծառ տրամաբանութիւն հօր Յովսեփայ վարդապետի։

Ուսանէի, այո՛, բայց այն զի միշտ զուրկ և թափուր ի մխիթարութեանց, և ո՛չ որպէս կրօնակից եղբարք իմ,—յուսահատութեամբ ծալեցի զգիրք և գրիչ, և նստայ ծոյլ ի սենեկին։ Եկն վարդապետն աստուածային, զոր իբրև տեսի՝ զեղան արտասուք և լուռ միայն կացի։ Բազմեցաւ առընթեր երանելին, և ընդ հարուստ վայրկեանս ո՛չ խօսեցաւ ամենևին, մինչև բացի նմա զառիթ տառապանաց իմոց։ Սկսաւ նա զառաջին թողուլ զամենայն, և յիմ կոյս յենուլ, որպէս թէ արդար ոք համարելով զիս յանիրաւի արարս իմ։ Բայց իբրև եգիտ զիս կսկղացեալ առ սակաւիկ մի՝ մեղմով իմն ասաց ցիս. «Որդեա՛կ իմ, գիտե՞ս որքանոյ արժէ նժոյգն օղապարիկ»։ «Հինգ հարիւր կամ հազար ոսկի», ասացի ցնա։ «Եւ գիտե՞ս,— ասէ,— զի ի գնել և վաճառել նժոյգին պարտի գոլ յետկար վաճառական և կնքել մատանեաւ դատաւորի քաղաքին ի հաստատութիւն իսկութեան սերի նորա»։ «Դիցուք թէ»։ «Ի հարկէ՛, դու ո՛չ գնեցեր զայն, և ո՛չ վաճառեցեր. բայց լուա՞ր երբէք թէ գնեաց ոք զայն վասն առօրին զբօսանաց իւրոց, կամ կրելոյ զբեռինս աղօնից ի ջրաղաց անդր»։ «Ոչ բնաւ, զի ափսո՛ս է երիվար այնքան ազնիւ ի հասարակ գրաստու կարգի վարել»։ «Արդա՞ր ես, որդեա՛կ, որքան արժէք իցեն օղապարիկ երիվարին, քառապատիկ այնքան և ծախքն լինին և այս ամենայն վասն մի միայն աւուր վտանգի կենաց հեծանողին»։ «Ա՛խ մի այդպիսի ձի, Հա՛յր սուրբ, և յայնժամ տեսանէիր թէ մինչև ու՞ր փախուցեալ հեռանայի»։ «Յայդ իսկ եկեալ է իմ»,— պատասխանեաց երանելին, և ինձ թուեցաւ թէ արդարև ունէր նա զնժոյգ այդպիսի։ «Յայդ իսկ եկեալ է իմ», կրկնեաց. «Օղապարիկ նժոյգ քոյ է ուսումն, որ որքան և մեծագին և բազմահոգ իցէ քեզ այժմ, տակաւին օր մի ապրեցուցանէ զհեծեալն, և փրկէ ի վտանգէ զկեանս նորա։—Մի՛ նախանձիր ձայնի եղբարց քոց, նոցա ձայն հազիւ հասանէ ի տանէ ի տուն. ուսի՛ր, և համբաւ քո հարցէ յաշխարհէ յաշխարհ»։ Զայսպիսիս խօսեցաւ նա, բայց յանկարծ շարժիւն

աշխուժանաց ի գտանել ինձ զնժոյգն խոստացեալ՝ գրեթէ առ ո՛չ ինչ գրեաց ինձ զխրատ և զվարդապետութիւն նորա։

Թողեալ զիս յայս մտածութիւն՝ չոգաւ ի տուն իւր, զի արտաքոյ խմբի մերոյ բնակէր։ Եւ ի վաղիւ առաւօտուն եկեալ առ իս՝ ասաց. «Մի պատմութիւն գիտեմ, Մեսրո՛վբ.— Թագաւոր զորդի իւր յուսումն գրոց առաքեաց ի վանս ուրեք, և յետ կատարելապէս ուսանելոյն՝ հան զնա ի կրթութիւն աշխարհական իրողութեանց։ Գիրք կարդալն մի ինչ է, իսկ աշխարհն կարդալն՝ միւս։ Համբակն ի հանդէս եմուտ, և ըստ նախատես տնօրէնութեան հօր իւրոյ՝ շուրջ պատեցին զնովաւ աղքատ հպարտ ազատորդիք։ Պատահեցաւ, ասի, յաւուր միում, զի թագաւորացուն մեր զամենեսին ի բաղանիս հրաւիրեաց. և յելանել իւրում անտի՝ չունէր ինչ ի վճար վարձուն։ Բաղանէպանն անծանօթ նմա և ընկերաց միանգամայն՝ պահանջէր զվարձ վաստակոցն, և նա ասէր. «Չունիմ արծաթ կամ ոսկի, այլ գիտութիւն բազում. ա՛ռ քեզ ճառ մի ի ներբող քոց մեծարանաց»։ «Ճառ ինձ ոճառ ո՛չ շինէ,— ասաց ցնա բաղնէպանն,— լուացա՞ր, լումայ ցնծա՛»։

Զայրացեալ պատանւոյն զրաւէ առ նմա զվերարկուն իշխանական, և գայ տրտում և տարակոյս ի տուն իւր, տժգոհելով զերախտեաց ծնողին և զվարժապետին, իբր թէ ընդունայն կորուսին ըզժամանակ իւր։ Իրազեկ եղեալ հօր նորա՝ տայ նմա զակն ինչ պատուական, և ասէ զնել զկանաչի ի պարտիզաց քաղաքին։ Պարտիզպանն ո՛չ զյարգ ականն ճանաչէ, և ո՛չ կանաչիս քաղէ նմա։ Ամօթալից դառնայ պատանին, և վերստին տրտունջ բառնայ զծնողէն։ Ի վաղիւ անդր առաքէ զնա նովին ակամբ հանդերձ առ ակնավաճառ արքունեացն, որ ի զարմացումն համբակին՝ տայ նմա զմեծ գումար գանձուց փոխանակ ականն՝ և գնէ զայն։ Ուրախ դառնայ պատանին և պարծի ընդ յաջողուած իւր, և հայր նորա մեկնէ նմա զիմաստ մրտաց իւրոց, թէ «ակն պատուական ուսումնդ քո է, զոր պարտիս յարաժամ ի գործ դնել, և առաջի այնոցիկ՝ որոց գիտիցեն զյարգ նորա։ Ապա թէ ո՛չ՝ որպէս բաղնէպանին ճառ, նոյնպէս և պարտիզպանին դոհար՝ միօրինակ անարգքն են»։ Դու միայն ուսանել ջանա՛,— ասաց,— և ոչ բնաւ փոշիմանիս»։ Իբրև որ այնպէս եղև, զի յաւուր միում, իբրև սեղանն զուարճանայր, և Զոհրապ առ ամենայն աւաչին տաղից հնչեցուցանէր զքսակ ոսկւոյ՝ յառաջ կոչեալ և զիս ինքն ասաց. «Խօսա՛, մոյն տաղ ասա՛»։ «Զայն չունիմ»,— պատասխանի ետու նմա լալագնեալ աչօք։ Դարձուցեալ նորա զբան իւր առ Հայրապետն սուրբ՝ ասաց. «Աստա՛ լ՛ա յեախայրդ շօռ օնեմ, հա՛յր սուրբ. խի՞ բէրևլաս էս խօսէս բա՛»։ Պատասխանեաց նա, թէ անպիտան

զոք չունէր ընդ իւր, այլ զգալի իմն թուացողութեամբ։ Եւ ի վաղուի առաւօտուն կոչեալ զիս զառաջեաւ, ասաց. «Գնա՛, գրեա՛ զքարոզ մի ի վերայ դատաւորի կիւրակէին, և բե՛ր այսր»։ Աւուրք քառասնորդական պահոցն էին[208], և ես յօժարակամ յանձն առեալ՝ օգնականութեամբ Աստուածաշունչ Սուրբ Գրոց միայն՝ յօրինեցի զայն։ Յայ՛սմ իսկ երեկոյի,—ասէ,—պարտիս ասել զայդ ի բեմին եկեղեցւոյ, այլ չվախիս»։ Օտար իմն էր այս հրաման ի հասարակ սովորութենէ Ազգիս մերոյ, այլ զի հրաման Հայրապետի էր, պարտ էր ինձ հնազանդել։ Յերեկոյեան ժամուն տարան զիս յաւանդատուն եկեղեցւոյն, զգեցուցին շապիկ պայծառ յոյժ, զուրար զուսովք իմովք արկին, և քօղ զլանջօք իմովք ձգեալ, զԱւետարանն սուրբ ի գիրկս եդին։ Յաւարտել աղօթիցն առեալ ածին զիս առաջեաւ աթոռոյ Հայրապետին, զորոյ զաջն համբուրեցի, առ ի նշան թողութեան նորա։ Այս նորաձև երևոյթ իմ, հարկիւ մղէր զնորասիրութիւն ժողովրդեանն տեսանել թէ յի՞նչ ելք իրացն վճարիցին։ Ելի ի սեղան անդր, և սկսայ քարոզել։ Ջկնի ժամուն հրաւիրեցայ ի տուն Թառումեանց, ուր յետ յարգանաց և պատուական ընծայից նոցա՝ որ առաւելույր յոյժ քան զտարեկան շահ ձայնից եղբարց իմոց՝ հարց ցիս Ջոհրապ, եթէ ուստի՞ իցեմ ես, կամ որո՞յ որդի։ Պատասխանեցի՝ Երևանցի Թաղիդեանց Դաւթի որդի։ «Արդարև Թաղիդեանց Դաւթի որդի՞ իցես դու»,—կրկնեաց Ջոհրապ զարմանօք. և յետ զայո՛ն լսելոյ, սկսաւ պատմել թէ՝ «յաւուրս հալածանաց Մահմադ խան սարդարին Երևանայ[209], այն ինչ աշխարհ ամենայն յերկիւղէ բռնաւորին թշնամիք ինձ երևեցուցանէին զանձինս, երես թեքեցի ի տուն Դաւթի Թաղիդեանց. և Աննա մայր նո՛րա զաւուրս երիս բովանդակ յարկեղ իւրում զաղեալ պահեաց զիս, մինչև դադարեցան խնդրակքն անձին իմոյ, և ապա տուեալ ինձ և զծախս ճանապարհի՝ արձակեաց ի բաց՝ զանխուլ ի մարդկանէ։ Բարերարութիւն ո՛չ կորնչի երբէք։ Ե՛կ օն սիրելիդ իմ», —ասաց, և կալեալ համբուրեաց զիս։ Այնուհետև եղէ ես իբրև մի յորդւոց նոցա, և սաստկացաւ սնափառութիւն իմ անդր քան զարժանն։

Ամօթ է ինձ զանցելոց խօսել, ուր հասակ՝ աստիճան և բաղտ՝ թև ի թև տուեալ, առարկայ առնէին զիս ո՛չ միայն խնամոց և զըթութեան մեծաւորաց իմոց, այլ և յատուկ իմն սիրոյ և խանդաղատանաց սիրուն հայուհեաց տեղւոյն։ Սիրապատում առասպելաց զտեղի ունէին անցք հրաշալւոյն,—եթէ սոսկ անցք կոչել արժան իցէ զանանցանելին ի մտաց իմոց՝ զառաջին հանդիպումնն, ըղձալի գրաւորական համապատասխանութիւն, զանմեղ կաթողնութիւն,

զաղի արտասուս, ընդ ուխտ և երդմունս սիրոյ, որ փոխադարձ հաւանութեամբ իրար տուաք և առաք: Փոքր մի ևս, և ահա՛ փոխէր բովանդակ վիճակ կենաց իմոց յայլ իմն եղանակ՝ եթէ չէր հարկին բռնացեալ ի վերայ մեր, և բաժանեալ մինչ ի սպառ:

Կալ և կայ՝ որպէս և էին, կացին հանգամանք Հայրապետիս մերոյ ընդ ձմեռն ողջոյն: Վասն զի, որպէս և գրեցաքն, արգելեալ էր տէրութիւն Ռուսաց առնել նորա ինչ յիրում սահմանի[210]: Առ այս գրեան բազում արար նա առ Ներսէս արքեպիսկոպոս Հայոց Վըրաստանի, ջանալ հորդել զճանապարհ, այլ ի դերև ելանել և ամենայն ջանից նորա, գրեաց մի անգամ և երկիցս ինքնին դիմել գալ ի Շուշի, զի խորհեսցեն թէ զի՞նչ առնել արժան իցէ վասն ազատութեան Աթոռոյն Հայաստանեայց ի ծանր՝ լծոյ անտի պարսից և հարկապահանջութեանց: Գիր ի գիր առաւելեալ երթայր և գայր հանապազօր, այլ գալուստ նորա ո՛չ ժամանէր ցվախճան ամսեան Փետրվարի 1822: Անճարացեալ Հայրապետին գրեաց զհրաժարական իւր առ Աղէքսանդր Առաջին՝ կայսրն Ռուսաց, ի 15 նմին ամսոյ[211]՝ և ընտրեաց զԱնտոն եպիսկոպոս Մուղնեցի[212], և զՅովհաննէս վարդապետ Ղրիմեցի, գնալ ի Տփղիս, և յորդորել զարհին Ներսէս ի հնազանդութիւն հրաւիրանաց Հայրապետին: Ի պատրաստել նոցա յերթալ, Առաքեալ սարկաւագ Անտոնի եպիսկոպոսի՝ որոյ գրեթէ յատուկ էր ոգի տրտնջանաց և տժգոհութեան, սկսաւ յայտնի դժկամակ լինել ամենայն ակնարկութեանց եպիսկոպոսի իւրում: Այր անհամբեր Անտոն եպիսկոպոս՝ հրամայեաց նմա դադարել և կալ որպէս և կամէր, և զիս ինքն փոխանակ առեալ նորա՝ ել ի Շուշւոյ, և եկեալ ի Խնածախ գիւղ Հայոց՝ ի ներքոյ լերանցն Գանձասարայ՝ ագաւ անդ զայն գիշեր:

Ընդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողին ունելով՝ զի զարուն էր, հասաք ի Ծիրանաքար, զոր հասարակօրէն Մէլիք Վանւոյ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորուն իսկ մէլիք Վանւոյ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծոյ, բայց և հզօրին ի պատերազմի[213]: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայս ազգս, մինչև անգամ և զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ և մեղեօք. երիվարք նորա ընտիրք, և բնակիչք ամենայն Հայք հզօրք և տիրասէրք յո՛յժ: Աստի էր մեծանուն հայ ասողն Ալավերտի, կոյր երկոքումբք աչօք, այլ լուսաւոր յոյժ երևակայութեամբն, որ ի հանդիսի ուրեք Թուրքաց ի վէճ մտեալ ընդ մեծի հայ քերթողին Քէչիչ օղլի կոչեցելոյ[214], և ըղձիւ յաղթանակ կանգնելոյ ի վերայ անպարտելի ախոյեանին՝ յետին ամբարշտու-

թեամբ զկողմն Լառ զդենի նոցա, որով ի հարկէ ըստ քմաց բազմականին գեր ի վերոյ հանդիսացաւ Որդւոյն երիցու, որ ըստ արժանի անուանակոչութեան իւրում նուագեաց զՆհովահ ի փառս սքանչելւոյն։ Այս գիւղ ընդ մէջ անկանի Գանձասարայ և Գետկայ վանից. ունի աւերակ ամրոցի մեծի ի գլուխ հիւսիսակողման լերին, բերէ երիվարս ազնիւս և ցորեան առատ։

Անցաք ընդ Թարթառ գետ ի Դիզա, գիւղ մեծ մելիք Յովսէփայ մելիք Փրիդոնեան մելիք Բեկլարեանց[215], որոյ մի եղբայրն Շամիր[216] անուն թարգման էր դեսպանութեան Ռուսաց ի Պարս, և յետոյ տեղակալ կայսերութեան և հազարապետ եղեալ՝ պսակեցաւ պէսպէս կայսերական նշանօք. և միւսն՝ Դաւիթ[217], որ ընդ Վրթանիսի եպիսկոպոսի Նուիրակին[218] Էջմիածնի գնացեալ ի Հնդիկս՝ քաղցրութեամբ հագագին ազգի ազգի կատարելութեամբ մսացն, որպէս և ազնուութեամբ արեան՝ մեծանուն հանդիսացաւ, և ամուսնացեալ ընդ այրւոյ ուրումն հարուստի՝ առանձնացեալ բնակեցաւ ի Դաքա։ Իսկ Թալին և Թալիշ եղբարք նորա՝ դեռ մանկունք էին հասակաւ։ Այս գիւղ իբրև չորիւք հրասախօք յարևմտից անկանի գետոյն Թարթառայ. որ բուռն ընթանալով ընդ զառ ի վայր դաշտին Խաչենոյ՝ անկանի ի Կուր։ Դիզա է գիւղ դաշտային, օդ նորա ջերմ, բերէ զամենայն ազգս ազգս արմտեաց, և զորիզ և զբամբակ, ուստի և լի է մոծակօք։

Ի գեղջէ աստի Դիզափայտ անուն կոչի և մեծի հարաւակողման լերինն՝ որ երկայնեալ յԱրձախայ միագոտի ընթանայ յարևելից յարևմուտս՝ և միանայ ընդ Արմաղ լերին, ի ծոցս և ի ծորակս իւր ունելով հովասուն գիւղօրէս Հայոց։ Երևելին յամենայնի է Գուլստան, իբրև ինն մղոնօք ի վերուստ Դիզայ, ուրանոր յամի տեառն 1813 փակեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ Ռուսաց և Պարսից։ Գաւառն բովանդակ կալուած էր անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսեփայ Փրիդոնեան և եղբարց, որ կարէր հանել ըստ հարկին՝ ձիաւորս հինգ հազար ի պատերազմ, ողջ Հայս՝ արիս և քաջամարտիկս։

Դիզայ անկանի ի հիւսիսոյ Դիզափայտի՝ ի տափարակ դաշտավայրի, զմիջով անցանելով գետակին՝ որ խոխոջուն գայ իջանէ ի Գուլստանայ։ Թարթառ յարևելից անցանէ, և Կուր գետ ի հիւսիսոյ, որոց ամենահամ և պատուական ձկունք հանապազորդեան զարդք են սեղանւոյ մեծամեծաց և փոքրկանց։ Այս ընտիր և գետառատ դաշտավայր մացառացեալ մոշայիւք և այլ և այլ խառնուբնդոր բուսականօք՝ ո՛չ յայլ պէտս մշակէր՝ քան թէ յարօտ հօտից և հօրանաց նոցա։ Տոնիր նորա՝ մի միայն, բայց և զորիզ՝ ցորեան և զայլ արմտիս բերէ։ Աշխարհ ջերմոց լինէր, և արուեստարան մեծ լեղակի և շաքարի՝ եթէ միտ եդեալ էր բնակչաց։

*Տուն Մէլիք Յովսէփեայ անկանէր ի միջավայր քաղաքաց ճանապարհին, ընդ որ երթեւեկս առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, և ի Հայոց յԱղուանս։ Անմարթ էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եզինք և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ի կերակուր անցաւորաց, բաց ի ձկանց և յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս։*

*Աստ կացաք զաւուրս երիս, և աստ ուրեմն ծանուցայ արժանապատիւ տիկնոջ Փրիդոնի Բեկլարեանց, որ թէպէտև անկարօտ յամենայնի՝ և չորեքին ծառացեալ պայծառացեալ որդիք իւր շուրջ զիւրեաւ՝ տակաւին առաջին տիրացու զիս տեսանելով ի տարազ վանականութեան՝ կոչեաց առ ինքն, և ընդ առաջին տեսոյն՝ «որքա՞ն նման է որդւոյ իմոյ, ա՛հ, Դաւիթ՝ Դաւի՛թ, որդեա՛կ»,— ասաց, և արտասուեաց։ Անծանօթ մայրենի խանդաղատանաց նորա՝ և որդւոյն իսկ գլխովին, ասացի. «Նանի՛, իմ անուն Դաւիթ չէ, այլ Մեսրովբ՝ Դաւթի՛ որդի»։ Որք շուրջն կային՝ գծաղու հարան, ժպտաց և տիկինն ծանրամեստ և խնդրեաց յԱնտօնէ եպիսկոպոսէ թողուլ զիս անդր՝ ցվերադարձ իւր ի Տփղեաց։ Բայց արհին՝ որ զիս միայնակ ունէր զտիրացու, զգրագիր զսպասաւոր, զձիապան, և զբեռնարարձ անվարձ, հարկի՞ւ ո՛չ զիջանէր ի պաղատանս նորա։*

*Աստի եկաք ի Գանջայ, որ ի հնումն Գանձակ, երբեմն Հայոց՝ և երբեմն Աղուանից. կարդացեալ շահաստան. սակս սովոր փոփոխելոյ դարձադարձ իշխանութեանն ի նմա։ Պուղան յամի Տեառն 1088 էառ զայս քաղաք, որ եկաց ի ձեռս նոցա ց1200։ Կործանեցաւ յերկրաշարժէ ի 1140, և յաւուրս Էլիսաւէտ կայսերուհւոյ՝ առին Ռուսք, և անուն կարդացին նմա Էլիսաւէտուպօլ[219]։ Ոչ ուրեք այնքան դժնեայ գտան Պարսիկք առ Հայս՝ ի քան ի քաղաքի այսմիկ, որ կառուցեալ է ի վերայ Բերբե՛ր գետոյ, բուն քաղաքն Քիլխաբեանից կոչեցեալ՝ յարեւելից անկանի գետոյս. ունի եկեղեցի մի, պարապատեալ պարտիզօք և գեղեցիկ մենարանօք, ուր նստէր յաջորդ քաղաքիս։ Իսկ նոր թաղն Նորաշէն անուանեալ՝ յարեւմտից անկանի գետոյն, որոյ բնակիչք են ըստ մեծի մասին գաղթեալքն ի Գեղամայ և ի Սոտայից. ունին եկեղեցի և սոքա, վաճառանոց պատշաճեալ ինքեան, և բերդ ի հիւսիսոյ յարեւմտից կողմանէ՝ բայց խարխուլ։ Շրջապատք բերդիս են աւերակք հնոյ իրիք քաղաքի, լի խորախոր գբօք և խորափիտօք. զորս փորեցին Ռուսք և այլք ի խնդիր գանձուցն զաղելոց ի նոսա։ Օդ քաղաքիս ջերմ է յոյժ և վնասակար արանց, այլ օգտակար կանանց նոցա, զի արք ի հասարակի խօսելով՝ վախուք են և անդեղեայք,*

*իսկ կանայք ընդ հակառակն՝ առոյգ են գեղեցիկք, որք և երկրորդ դասին գեղուհեացն Վրաստանի առ քնրթողս աշխարհին։*

*«Գուռջիստան գիւզելի,*
*Գանջայ մարալի»,*

*որ է ասել՝*

*Վրաստանեաց աչագեղն,*
*Եւ Գանձակայ գովեմ զեղն։*

*Առատ է Գանձակ ի բերս, այլ նուռն ընտիր, և տորոնն մի միայն։ Ջկունք Կուրայ և Բերբերայ հանապազորդեան կերակուր բնակչաց նորա։ Ի բազմաթիւ հաւուց վայրենեաց նորա անուանի է Դուրաջ՝ որ է թռչուն ըստ մեծութեան կաքաւու, սրաթռիչ. գոյն փետրոց նորա խայտաբղէտ ի հրագոյն, դեղնագոյն և գորշ, ձայն նորա համեղ, որ նստեալ յոստս ծառոց ողորմագին կարկաչէ որ լըսողաց ասել թուի.*

*Հա՜յ մանի՝ Թութտիլար,*
*Շի՜շ, քաբաբ՝ էթտիլար.*

*որ է ասել՝*

*Վա՜յ վա՜յ, դի՜ս ո՜րսացին,*
*Խո՜րովու՜ շա՜մփրե՜ցին,*

*վասն զի բաց ի խորովածոյ, որ համեղագոյնն է, յոչ ինչ այլ համդերձի միս սորա։ Խաշածն անպիտան է։*

*Գտի աստ զՄարգարիտ հօրաքոյր իմ, կին հսկայիրան, որ ամուսնացեալ ընդ Ալաւերտւոյ ուրումն Առնչեցւոյ՝ ի Կոտայից Այրարատեան նահանգին՝ ընդ գաղթականս աշխարհին եկեալ բնակէր ի Նորաշէն Գանձակայ։ Սա երեքտասաներորդ ծնունդ ի մի միայն դուստր հանւոյ իմոյ՝ ապրէր տակաւին ի տալ ինձ զանուանս և զարարս երկոտասանեսին եղբարց իւրոց։ Ելաց յոյժ ընդ առաջին տեսն, և համբուրիւք սրբովք ընկալաւ ընդ յարկաւ իւրով։ Ծերունի այր նորա ճշմարիտ պատկեր հեզութեան և բարեպաշտութեան ունէր միայն դստրիկ, ամենեւին գեղեցիկ՝ Մարիամ անուն, նորոգ խօսեցեալ առն, որ ընդ ծնողաց միահաղոյն, և ընդ վաղեմի ծանօթից նախնեաց իմոց, մաքուր ընտանութեամբ և ճշմարիտ բարեկամութեամբ մխիթարեցին զիս անդր քան զոր ինձ գրել հնարին։*

*Աստ կացեալ զաւուրս ինչ, խորհրդով Խաչատրոյ վարդապետի Քարծն կոչեցելոյ (որ յետոյ արքեպիսկոպոս և նուիրակ Սրբոյ Էջ-*

միածնի ի Հնդիկս), զրեաց Անտոն եպիսկոպոս թուղթ աղաչանաց առ Ներսէս արքեպիսկոպոս, և ինքն ելեալ անտի՝ խաղաց գնաց ի Ճամքոր: Որ ի հնումն քաղաք շինեալ ի Ճաբիթայ որդւոյ Ջաքուխայ[220], իսկ այժմ գեօղ ինչ Հայոց՝ յարևմտից կողմանէ գետոյն: Ի մէջ աւերակացն կառուցեալ, յորոց միջի ամպածայր տնկի աշտարակ իմն, իբր 189 կանգնոց բարձրութեամբ՝ զոր Վիրք Անգում երկրի անուանեն: Ընդ ոլորտապտոյտ սանդուղս նորա ի ներքուստ ի վեր ելեալ՝ յանդիման աչաց տեսի զԿուր գետ ի հիւսիսոյ, զԳանձակ յարևելից՝ Տ փարսախօք տարակաց ի նմանէ, զՃամշադին ի հարաւոյ, և զամենայն Տաշրատափն մինչև ի կամուրջն Սողանլուայ:

Աստ նստէր Գէորգ ամն յայսկէս Հայոց, պաշտօնատար սուրհարանի թղթատարութեան տէրութեան Ռուսաց, առ որում և մեք գիշերօթս արարաք:

Յարուցեալ ընդ առաւօտն՝ փոխեցաք զընթացս մեր դէպ ի Հարաւ յարևմտից, փոխանակ ուղիղ ընդ արևմուտս ընթանալոյ, և եկաք ի Ճամշադին, որ այն ինքն է Ճամշողդէ նախնեաց՝ ի Տաշիրն գաւառի, որ ի հարաւոյ ունի զԳեղամ գաւառ. Սիւնեաց, ի հիւսիսոյ զՃամքոր, յարևելից զԱրցախ և զՈւտիս, իսկ յարևմտից զդաշտն Գագայ, որ այժմ Ղազախ ասի: Ճամշուղէ՝ երբեմն կոչի ի լեզուն Վրաց. ի հնումն կոչէր Օրբէթ[221]. անառիկ ամրոց շինեալ ի Քարթլոսէ եղբօրէն Հայկայ[222] նախահօր Ազգի մերում, ի վերայ Արմազ լերին: Այժմ նստէր անդ Գրիգոր անթեմ եպիսկոպոս ի նմին գեղջէ[223], որ ի սակս կերակրելոյ զզօրս Ռուսաց, և վասն պէսպէս օգնականութեանցն մատուցելոց նոցա յառման Գանձակայ և այլոց՝ ասպետացեալ շքով ի կայսերէ նոցա, թոշակաւն որ յարքունուստ՝ շատանայր: Կացաք առ սմա զաւուրս հնգետասան ակնկալեալ զալստեան անձին, կամ պատասխանւոյ զրութեան Ներսիսի: Այլ ո՛չ զայս գտեալ և ո՛չ զայն՝ ելաք և ընդ ճանապարհ Սողանլուայ և եկաք ի Տփղիս, քաղաք կառուցեալ ի ձորամիջի, ընդ որ Կուր գետ անցանէ ի հիւսիսոյ ընդ Հարաւ: Յարևմտից է լեառն Ծմինդայ, իսկ յարևելից՝ Հալուաբաղու լերինք: Ունի բերդս երկու, մի ի Հալուաբաղ վիմաշէն և գեղեցիկ, յորում է եկեղեցին Վարդանուշայ՝ դստեր մեծին Վարդանայ մերոյ, որ վասն զգաստութեանն՝ կոչեցաւ Շուշան, և բանտն: Իսկ միւսն է ի Տափիթաղ՝ մերձ ի ջերմուկս նորա: Եկեղեցիք ազգիս մերոյ՝ 13. յորոց ի մին՝ վանք անուանեալ՝ ի վերայ գետոյն, նստէր Ներսէս առաջնորդ: Եկեղեցիք Վրաց և Ռուսաց ութն, և պապականացն՝ մի: Տափէթաղ յարևմտից կամ Կուր գետոյ, ուր են ապարանք կառավարչին, դատարանք Ռուսաց, վաճառանոցն, և բազմութիւն տանց

Հայոց, զի և անունն հայերէն ցուցանէ զբնակչաց զինչութիւն: 1200 տունք Հայոց են աստ, իսկ Վրացն՝ 400: Մերձ առ վանքն մեր կառոյց Ներսէս արքեպիսկոպոս զՆերսիսեանն անուանեալ ուսումնարան՝ քառալեզու դպրութեանց, և ծաղկեցոյց ի նմա զուսումնականութիւնն յոյժ յոյժ: Յառաջ քան Ներսէս, Հայք առհասարակ խօսէին վրացերէն. և չէր՝ որ գիտէր զլեզու Ազգին, իսկ յետ գնալոյ նորա անդր, և ծաղկեցուցանելոյ զուսումն Ազգին՝ նաև Վիրք ուսան խօսել հայերէն: Հալուաբար յարևելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերդ և վաճառանոց ի բարձրաւանդակին. տունք Հայոց են անդ 175, ըստ մեծի մասին գաղթականք յԱյրարատեան նահանգէ: Արտաքոյ սորա է գերեզմանատուն Հայոց, և ի նմա եկեղեցի քարաշէն:

Ի ներքոյ Հալուաբարայ առ եզերբ Կուրայ՝ է Կուկիա, որոյ բնակիչք են Վիրք և Գերմանացիք, որք և ունին զեկեղեցի գեղեցիկ:

Ռուսք յաւէտ նենգութեամբ և ուխտազանցութեամբք առին զայս քաղաք՝ ապաստանեալն ի պաշտպանութիւն իւրեանց, քան զինուորութեամբ իւրեանց: Ուստի և հետ զհետէ ջանացան անհետ առնել զազգատոհմ նախնի իշխանութեան նորա: Կալան զամենայն արքայազունս Վրաց, և առեալ տարան զնոսա ի խորին Ռուսաստան, ուր հոգեմաշ կորեան նոքա[24]: Աղէքսանդրոս որդի Հերակլեայ փախուցեալ անկաւ ի Պարս, ամուսնացաւ ընդ դստեր Մէլիք Սահակայ Հայկազունւոյ յԵրևան, և ծնաւ ի նմանէ զորդի մի՝ զոր յետ առնլոյ Ռուսաց զԵրևան, անագորոյն խժութեամբ կորզեալ ի գրկաց անտի մօրն՝ տարան յԵւրոպա Ռուսիոյ: Իսկ Աղէքսանդրոս հայր նորա երթեալ յԱտրպատականս, և յարքայէն Պարսից ընկալեալ զխոսրովա՝ աւան մեծ ի Սաղամաս, բնակի անդանօր՝ ապրեալ եկամտօք գեղջն: Բարձին մինչ ի սպառ և զկաթուղիկոսութիւն Վրաց, և այժմ հովուէ զեկեղեցի նոցա էքսարխն առաքեալ ի սինհոդոսէն Ռուսաց:

Պատուականագոյնք են ջերմուկք քաղաքի, երկոքին ևս ստացուածք Հայոց. յորոց մին երևելի և հոյակապ բաղանիք, խմբեալ յամենայն աւուր յամենայն բազմութենէ՝ մանաւանդ ի գեղուհեաց քաղաքին. առ ի մեծագոյն օգուտ դիմացն գեղեցկութեան՝ անուանի Մէլիքէնց համամ, զի պատկանի տան Մինիշկարեանց, որ և ըզմէլիքութեան քաղաքիս զպատիւ ունին ի հնուստ հետէ:

Ի վերջին ժամանակս նուազութեան թագաւորութեանն Վրաստանի՝ փոխանակ զոգի ազգասիրութեան բորբոքելոյ ի միջի իւրեանց որով և յուսին կանգնելոյ զկործանեալ տէրութիւնն, սկսան իշխանք նոցա՝ որպէս նաև ի մերոցն իսկ ոմանք, գնոց գնել ի Թագաւորէ իւրեանց զգիւղօրէս աշխարհին բնակչօք նոցա, և հետ

զՀետէ խանգարելով զօրէնս և զիրաւունս քրիստոնէաբար առի և տրոյ, վատթարեցան վարել զնոսա առ հասարակ ի գերութիւն ստրկութեան հաճոյից իւրեանց: Այս ազգ գերեաց գնելոց համարիմ զամենայն գիւղօրէս Վրաց, և որ առաւել ցաւելին է, նաև ոմանք ի հայաբնակացն, որոց տեարքն՝ պարնիք անուանին, և տիրուհիք՝ աղջիկ պարոնք: Պարոնք կամ աղջիկ պարոնք իրաւունս համարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զըստացուածս գիւղականաց իւրեանց՝ իբրև սեպհական ժառանգութիւնս անձանց: Հանեն զհարսն ի ծոցոյ փեսային, և վաճառեն ում և կամիցին: Նոյնպէս զորդիս ի ծնողաց հատանեն: Գերին՝ զոր ինքեանք ճորտ անուանեն, ո՛չ կարէ քահանայ կամ վանական լինել, եթէ ո՛չ նախ ազատեսցի դրամովք: Եթէ պարոն ոք սիրիցէ զկոյս ոք, կամ աղջիկ պարոնն, զպատանի ոք ի ճորտից անտի, չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն: Եթէ ոք զնոյն ցանկութիւն ցանկացեալ, և կամիցի գնել կամ վարձել՝ կարէ, եթէ յղփացեալ իցեն կողմանքն, զի չիք ամօթ ազնուականաց աշխարհին՝ կաւատանալ դրամոց: Իսկ տէրութիւն Ռուսաց, որ առաւել անմտադիր քան զսոսա, և ստրկութեան ազգի իւրեանց ջատագով, ի հարկէ՝ փոյթ անգամ չառնու այսպիսի անկարգութեան, ուստի և երկիրն հեծէ անողորմ, փառս մատուցանելով յաւէտ տէրութեան Պարսից՝ քան քրիստոնէից այսոցիկ գերչաց:

Օդ տեղւոյն լեռնային է, ուստի մաքուր և առողջարար: Բնակիչք նորա Հայք և Վիրք առ այլազգիս միահաղոյն Գուրջիս անուանեալ, հռչակաւոր են ի գեղեցկութիւնս մարմնոց իւրեանց. իրանք նոցա նոճօրէն աճեալք, հերքն թուխ, աչկունքն արեգակունք, մորթք ըսպիտակուկարմիր, միջկունքն բարակ, և լեզուք անուշախօսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն ազգաց, մանաւանդ Պարսից և Օսմանեան մեծամեծաց, ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա, թէ յառաջ քան՝ և թէ զկնի տէրութեան Ռուսաց: Վասն զի Լէզկիք, որք առ ոչինչ գրեն զամենայն երկիւղ՝ յափշտակեալ ամի ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ՝ կայտառս, տանին վաճառեն մեծագնի ի Թէհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա: Գողտըրականք են յոյժ, և նազաբնոյթք կանայք նոցա, որք թէպէտև ճարտարք յուսմունս գրոց և ի պէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպէս՝ անձնասէրք են յոյժ, և գեղոյ իւրեանց անխնայ խնամատարք: Գրեա՛ թէ յամենայն աւուր ի ջերմուկսն լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմաց: Վարշամակ ի գլուխ դնեն և ճակատանոց ասղարուր, զոր աստ

կոտ կամ քամբարա կապեն բասպնդաւ. քող ի վերուստ ծաւալ ցծունկ արկանելով՝ երեսանին բաց։ Պատմուճան՝ փորանկեալ, և գօտի խնձորակապ զմիջովքն՝ ծայրակախ։

Անապարծք են յոյժ, և զարարս դուզնաքեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառնան, զո՛րօրինակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քէրիմ խանին՝ Գօգւոյ ուրումն Շաշեանց ասել ցմի ի զօրաց նորա՝ նա՛ դուր, նա՛ դուր, այսինքն՝ ի՞նչ է, ի՞նչ է, զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն ի լուր ամենայն մարդկան, յասելն. «Բարաքալլա՛, Շաշունց Գօգի, քրտին ասից՝ նա՛ դուր, նա՛ դուր»։

Բայց առաւել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա, միանգամայն, և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց։ Իցէ՛ ոք ի նոցանէ ի վերջին կէտ տնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով և հնարին ինքեան՝ ունիլ պատրաստի զսար մի ազնիւ զգեստուց, որով պճնին յաւուրս կիւրակէից կամ արքունի պրազնիկաց, որ այնինքն է՝ տօնից և տարեգլխոց յաղթութեանց նոցա. յերամակս յերամակս բաժանին, և առեալ ինքեանց գինի, գաւաթ, թմբուկս, և զորս միանգամ գըտանեն ազգս ազգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց, ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, անզգայ յամենայն հոգոց։ Ո՛չ տեսի ես քաղաք ուրախ քան զայս։ Այնքան զուարճաբանք են բընակիչք սորա մինչ ի խնդիր հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց։ Փոխանակ ի կիր առնելոյ զերգս շարականացն աստուածայնոց ի մարմնաւոր խրախճանս՝ յօրինեալ են առ այն պէսպէս նուագս ծաղրալիս, յորոց մին առ տիկ գինւոյն այսպէս սկսանի.

Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան չարչարվիցար.
Հալվարրի դարի դուսին.
Տուինք մշակի ուսին։
Ո՛վ ո՛վ սուրբ տկճուր,
Լուլէդ բաց մեզ ուղուրմիա։

Երգմունք նոցա հասարակօրէն անմեղագոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և գաւառացն Հայաստանի. զի են՝ «Քու դէդին ումր», «Ապրի քոյ մայր», «Իս ապրիմ» և այլ այսպիսիք։

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող ազնիւ, և միրգս ազգի ազգիս, այլ ի Կախէթայ օր ըստ օրէ մտանեն այսր մեծ հարիւրաւոր սայլք գինւոյ՝

բարձեալք ի տիկս գոմշոց։ Ի Սալիանայ՝ նոյնչափ թուով սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ։ Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակս համեղ ձկանց։ Առակաւ ասի, թէ Գալիանոս բժիշկն մտեալ երբեմն և ի Տփղիս, և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շայեկան արուեստի իմում»։ Բայց իբրև ետես և զմեծ եկամուտ գինւոյ՝ ասաց, թէ՝ «Սոքա ինքնին դառնին զդեղ հիւանդաց», և մեկնեցաւ[225]։ Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան այնքան ձկնկեր և գինեխում, որքան սոքա են։ Շիրակուան մատուցանէ զիւր ցորեան, Երևան՝ զաղ, բրինձ, բամբակ, և չորապտուղս ամենատեսակս, իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր և զամենայն ձեռակերտ վաճառս իւր։ Արուեստն սկսանէր ծաղկել աստ, այլ դեռ աղայ գոլով ի խանձարուր կայր, և ես հազիւ թէ կարացի տեսանել զերեսս նորա։

Սովորութիւն իմն կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց տէր Ներսէս. զի յաւուրս կիւրակէից կանանց ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին՝ մարտնչէին ընդ միմեանս, փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոյին նման գործեօք՝ ուստի թո՛ղ թէ կէս քաղաքին միականի՝ սնչատ և գոնչատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղւոջն պատահէին։ Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ո՛չ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ։

Ներսէս արքեպիսկոպոս սիրէր յոյժ զԱնտոն եպիսկոպոս, ուստի և մտերմաբար վարէր ընդ նմա, այն ինչ այլք ամենայն զդողանի հարկանէին ի նմանէ։ Անդ յառաջին տեսութեան նորա յառաջ մատոյց և զիս ինքն ի համբոյր աջոյն սրբոյ։ «Ով է սա»,—եհարց զնա, և Անտոն եպիսկոպոս պատասխանեաց. «Ծառայ և որդի տէրութեան Ձերոյ՝ Մեսրովբ, Գրագրին հաւատացեալ»։ Տէր Ներսէս ընդ անուն Գրագրին քստմնեցաւ, զի ո՛չ սիրէր զնա, բայց յաւելուլ Անտոնի հօր զինէն բանս բարիս՝ կոչեաց զիս վերստին, և ասէ. «Հա՛, Մեսրո՛վբ, լուեալ է իմ զքէն, այլ տարաբաղդ գտար մինչ ցարդ, զի ամենայն աշակերտակիցք քո արժանացան շնորհաց մերոց, իսկ դու ո՛չ»։ Պատասխանի արարի. «Կեցցէ՛ միշտ տէրութիւն Ձեր, և ես վաշխիւ հանդերձ առից զիմն»։ «Դեռ նոյն ես՝ Մեսրո՛վբ, որ ինչպէս և տեսի զքեզ, և ո՛չ փոխեցար ի բնութեան քում։ Սիրեմ զանմեղ համարձակախօսութիւն քո զայդ, և յաւէտ զվաշխեղդ. ջանա՛ դու»։ Կրկին դիմեցի ի համբոյր աջոյ նորա՝ և մեկնեցայ ի խուց մեր։

Անազան ուրեմն պատրաստեցաւ Ներսէս արքեպիսկոպոս ծանր կարաւանաւ, յորում էին Տէր Ստեփաննոս Վիճօ՝ այր ծերունի և

զուարթախօս, Տէր Յարութիւն Ալամդարեան, Տէր Եսայի[226], Յովակիմ Կարապետեան՝ եղբօրորդի իւր, Ասպետ, և Գէորգ քեռորդի, Գաբրիէլ, երկոտասան կայսիկ ձիաւորօք, չորեպանօք և ստորին ծառայիւք: Ինքն ընդ արհւոյն Անտոնի եւ ի կառս քառաձիգ երիվարաց, և մեք ի ձի աշտանակեալ՝ ելաք ընդ նմա մինչև ի Շուշի, արքայավայել իմն մեծափառութեամբ զուղին ի դարձ հատանելով[227]:

Այլ զճանապարհայն անխոհեմ ինչ արարի ես, որով ի մի հարուած յերկիր ի վայր տապալեցի մինչ ի սպառ՝ ո՛չ եթէ զշահ, այլ և զմայր գումար շնորհաց ազգային Բարերարին: Իբրև հասաք ի Շամքոր, և վաստակաբեկ կարաւանն ի քուն քաղցրութեան լինէր, եմուտ յիս զիկասն անանդորրութեան: Խորհելով նորօրինակ պաշտօն ինչ հարկանել օրինակի խոնարհութեան և հեզութեան Քրիստոսի հետևողին, յիս յանկուցի նախ զմիտս Գէորգայ սուրհարանապետի՝ պատրաստել ինձ ձիս երկու, և ապա գնացեալ առ տասնապետ կայսիկ ձիաւորացն՝ ասացի ընկերել ինձ զմի յիւրոցն ի Գանձակ, զի կարի ստիպաւ հասանել պարտ էր ինձ անդր: Ժամն անագանեալ էր, և արհիք մեր ննջեալ էին, վասն որոյ ո՛չ համարձակեցաւ տասնապետն ստուգել զիսկութիւն բանին, ուստի և քան զիս յիմարաբար՝ զիջաւ յիմար խնդրանաց իմոց: Ելաք զմիով ժամով գիշերոյն ընդ ճանապարհն՝ միանգամ և եթ գնացեալ, և կէս քուն՝ կէս արթուն՝ յառաջ վարեցեալ, հազար և մի տուայտանօք հազիւ հասաք ի քաղաքն ընդ լուսանալ առաւօտուն: Գնամ կամ առաջի Խաչատուր վարդապետի, և զանազան երեսանի շինելով՝ ծանր և լուրջ բարբառիմ: «Դեռ անհո՞գ կաս, հա՛յր, այնինչ յերեկ զօրն բոլոր և սերկեան գիշերս բովանդակ ի ձի աշտանակեալ գամ»: «Բարի գաս,—ասաց նա,—բայց ընդէ՞ր»: Ընդէ՞ր. Ներսէս առաջնորդ գայ,—ասացի,—և ես յառաջագոյն առաքեցայ աւետիս տալ քաղաքիս, և քեզ՝ զի թափօրիւ ելցիք ընդ յառաջ նորա»:

Փորձանք այն եղև, զի և սա հաւատացեալ ինձ՝ գրեաց առ Ռուս քաղաքապետ Գանձակայ, և հրամայեաց հնչեցուցանել զզանգակսն: Եւ ահա ամենայն բազմութիւն քաղաքին, զինուորութիւն բերդին, և ուխտ եկեղեցւոյն ի թափօր բոլորեցան, և ելին բազում մղոնօք ընդ յառաջ նորա: Մեծագոյն տարաբաղդութիւն այն էր, զի և արհին Ներսէս ի մտի եղեալ էր բոլորովին լռելեայն մտանել ի քաղաքս այս, և ընդ տեսանել բազմութեան առաջաւորաց վշտացաւ յոյժ յոյժ: Յանդիմանեաց զԽաչատուր վարդապետ, և նա զինև արկ զվնասն արքունի: Իսկ ես՝ որ խոնջեալ ի վաստակեալ յոյժ, այլ դեռ ևս իբրև բարւոյ իմն ակնկալ՝ փոխեցի զձին, և ելի անձին վայելել զվարձն

յիմարաց: Բարեացապարտ արհին Անտոն՝ որ հեծեալ յերիվար գայր, նշմարեալ զիս ի հեռուստ՝ արշաւեաց առ իս, և ասէ. «Փախի՛ր, Մեսրովբ, փախի՛ր, յափտեա՞ն կորեար: Զի հոգևոր տէր բարկացեալ է յոյժ ընդ արարս քո»: Ո՞չ կարեմ ճիշդ ստորագրել աստանօր, թէ ո՞րպէս փախուցեալ՝ թողի զձին ի կամս իւր, և թաքուցեալ ղօղեցայ ընդ մացառովք թզենեաց Նորաշինին: Երկեայ գնալ ի տուն հօրաքեռ իմոյ, զի մի՛ անդր գտցեն զիս խնդրակք, և զօր մի և գիշեր բովանդակ աճահար և դողահար մնացի, մինչև անագան ուրեմն քաղցն նեղեաց զիս, և ասացի ի միտս իմ. «Եթէ իմ խառնեալ իցէ զքաղաքս, ո՛չ երբէք պատեհ տայ վեհին զինէն խորհելոյ, ընդէ՞ր ապա սովամահ կորնչիցիմ: Բայց և այնպէս՝ դեռ ևս վարդապետ է նա, և ո՛ գիտէ՝ և խիստ ոմն: Կա՛ց ու կաս»,—ասացի, և խորհելով զանիրաւսէր բնութենէ նորա՝ ննջեցայ: Զերկուս տիւս անսուաղ կացի ի փախստի և ի թաքստի իմում, և յաւուրն երրորդի՝ այնինչ բարեացապարտ Անտոն եպիսկոպոս նախաճաշէր ընդ նմա՝ յանկարծ յանդիման ելի, և ասացի. «Մեղա՛յ, այլ ևս ո՛չ արարից այնպէս»: Գթութեամբ բազմաւ ընկալաւ զիս՝ և ասաց. «Ի մէջ Պարսից և պարսկաշունչ փառասիրաց ելով, մանո՛ւկ դու, խաբիս և զիս զոք ի նոցանէ համարել, այլ փառք վանականաց խոնարհութիւն է»: «Բարի է»,—ասելով ի միտս իմ, գլուխ իջուցի նմա՝ և մեկնեցայ յուտել:

Իբրև հասաք ի մերձակայս Շուշւոյ, խորհելով թէ մի՛ գուցէ խելագարիցիմ վերստին զխելագարութիւն Գանձակայ՝ կամովին մղոնաւ միով հեռևակս կարաւանին գնացի, և իբրև հասի անդր՝ դեռ նոր զդրունս ասպնջականացն բաղխէին ի մուտ, և սկսայ մըռմըռալ ի քիմս իմ, թէ՝ «Եւ այդ քեզ բաւական է»:

Էջ ի տան Թառումեանց, յորժամ մեծանուն բարեկարգիչ նորա՝ Մարկոս, ի վերջին կէտ կենացն խոնարհեալ հեծէր ի պատճառս ընդերկար և ցաւագին հիւանդութեան ոտնուռուցի: Վերջինք իշխանիս այսորիկ՝ բարի, առ ի խրատ զկնեաց արդարև պատմեալք: Վասն զի ի ծանրանալ հիւանդութեան նորա՝ թեթևանայր ոգին սրբասուն ի վերելս երկնից: Կոչէր կացուցանէր առ և մահճօք իւրովք զարս դրագէտս, թախանձէր ի նոցանէ ընթեռնուլ ի լուր ըզԱւետարան փրկութեան իւրոյ: Ստէպ զաչս ի վեր ամբարձեալ՝ աղաղակէր. «Տէ՛ր Յիսուս». ստէպ աղօթս առնէր, ստէպ և զանձն յանձն առնոյր ի կամս Արարչի նորա: Իբրև յայտնի եղեն նմա հաճոյքն Աստուծոյ ի բառնալ զնա յերկրէն կենդանեաց, հրամայեաց իւրոցն ածել զառաջնաւ զմուրհակ պարտուց Էջմիածնի՝ իբրև 4000

*ոսկւոց, կրկնապատիկ քան զայն՝ և մուրհականի այլևայլ մարդկան, և զուտ ոսկիս կրկին պարկօք մեծամեծօք։ Ամբարձ զոտն ուռուցեալ, և եդ ի վերայ նոցա, և ասէ. «Անպիտա՛ն դիրդ, ապաքինեա՞ց եթէ կարող ինչ իցես, դու չաստուա՞ծ մոլորութեան աշխարհի. ո՛չ, ո՛չ. այս ամենայն արտաքոյ է մտացածին զօրութեան քոյ, և Աստուծոյ իմոյ օրհնեալ եղիցին կամք՝ և ի հարկանելն և ի բժշկելն զիս»․ Ապա առեալ դնէ իւրով ձեռօք զմուրհակ էջմիածնի ի սկտեղ, և հրամայէ տանել նուիրել Հայրապետին. այնպէս առնէ և ընդ մուրհակացն միահողոյն բերելոց, և երկուս պարկս ոսկւոցն հրամայէ ողորմութիւն բաժանել աղքատաց։ Զարհուրի Զոհրապ եղբայր նորա՝ յարարս նորա, այլ յանդիմանի ի նմանէ քաղցրութեամբ խրատուց նորա։ Եւ այսպէս Յիսուս Քրիստոսի աւանդեալ զինքն և զտուն իւր՝ շնչէ զվերջին զիւր շունչ։*

*Չև էր տեսեալ իմ հանդէս յուղարկաւորութեան փառաւորագոյն քան զիշխանիս այսորիկ։ Ծայրագոյն Կաթուղիկոսն Հայոց՝ գրեթէ ամենայն մայրաքաղաքացի արքեպիսկոպոսօք, եպիսկոպոսօք, առաջնորդօք, վարդապետօք, քահանայիւք, սարկաւագօք, դպրօք և ամենայն ուխտիւք եկեղեցւոյն՝ ի միոյ կողմանէ, իշխանք Աղուանից և բովանդակ զինուորութիւնք Ռուսաց սևազգեացք, սևադրօշք, սևանշանք, սևաձիք, շրջուն զինու, և զարդու իւրեանց՝ ի միւսոյ կողմանէ։ Ամբոխ հասարակութեան յամենայն ազգաց զիրերօք խռնեալք, այլ ո՛չ առանց կարգի. և ո՞ արդեօք ստորագրել կարէ յայսքան ամաց հետէ զարարս և զարտասուս ընտանեաց և ճրագաց նորա։ Թուէր իմն թէ Արտաշէս մեռանէր՝ Մեծն Արշակունի, և միայն հաւատն անարատ զդէմ ունէր համօրինակ հետևանացն։ Ես Աստուծոյ խնամոց տամ զօրհաս նորա ի ժամանակին, ուր ամենայն ազգային մխիթարութիւնք ներկայ գտան անդ, ապա թէ ո՛չ՝ ո՞ գիտէ թէ զի՞նչ ինչ զհետ գային կսկծանաց և կրից սիրելեաց և սիրողաց նորա։*

*Հոգեսէր որքան և էին բնակիչք աշխարհին, և հոգևոր Տեառն իւրեանց սրտի մտօք մեծարուք, տակաւին քառապատիկ աւելի պատուեցին Մեծին Ներսիսի։ Մի՝ զի համբաւ ազգասիրութեան նորա և մեծամեծ գործոցն՝ մղէր զամենայն ազգ իւր յայցելութիւն և յօրհնութիւնն ի նմանէ, և երկրորդ՝ զի պսակեալ էր ի կայսերէ, և բարեկամ Երմալովի կուսակալին յայսկոյս Կովկասու եղեալ նահանգաց։ Թո՛ղ զհոգևորականս ամենայն քաղաքաց և գաւառաց աշխարհին, և մարմնաւոր իշխանք նոցա և զօրութիւնք խոնարհեցան առաջի նորա, մինչև իշխան Մատաթով՝ Հայ, և Մէհդի խան՝ փոխ կուսակալ Աղուանից ևս։*

Մարտիրոս արքեպիսկոպոս Սիւնեաց եկն դարձեալ ի Շուշի՝
երևելեօք հանդերձ։ Մեծ էր սէր և մտերմութիւն նորա ընդ տեառն
Ներսիսի. և յաւուր միում այնինչ ի տան Թառումեանց յառաջ մա-
տեալ ի համբոյր աջոյ նորա՝ ակն յանդիման արհւոյն Հայոց Վը-
րաստանեայց, կարի՝ պժգանօք իմն ասաց նա ցՄարտիրոս հոգևոր
տէր Սիւնեաց. «Էրու՞մ ժողովեաց կուտեաց հոգևոր տէր մեր զայս-
քան անպիտան որեար, յորոց և ո՛չ մին երևի դոլ օգտակար մեզ»։
Ձարմանօք իմն դարձոյց առ նա Մարտիրոս արքեպիսկոպոս. «Տե-
սանե՞ս զմանուկդ զայդ»,—մատամբացի ցուցանելով նմա զիս։
Ցուցցան իսկոյն թաւ յօնքն, և խրոխտ յիս ակնել սկսաւ, որպէս
թէ զմտաւ ածելով զանկատարութիւն իմ ի Գանձակ, և ընդ տեսուչն
ի վեր հծծեաց՝ «Ը՛հ»։ «Ը՛հ ինչ, տէր. փորձեցե՞ր զդա երբէք.
քննեա՛ և տե՛ս թէ քանի՞ պիտանի լինի դա տէրութեան քում»։ Հա-
զիւ իմն պարզեալ զխոժոռութիւն հայեցուածոցն կոչեաց զիս առ
ինքն՝ և առանց անոյշ ինչ յառաջաբանի կամ առարկութեան յանձ-
նեաց ինձ զկոնդակն զոր գրէր, և ասաց. «Գնա՛ գրեա՛, տեսից»։

Թէպէտ հազար անգամ աւելի հաճութեամբ ընդունէի զհրաւէր
նախաճաշուն, և բիւր անգամ ախորժանօք ուտէի քան զծղծամ և
զկացկամ ճաշակումն իւր, սակայն և այնպէս՝ առի, նստայ յան-
դիման, զաչս յաւէտ ի սեղանն կրթելով՝ քան ի թղթին՝ օրինակեցի
և մատուցի իսկոյն, զի մի՛ զուցէ անմասն ելից ի սեղանոյն. ընկա-
լաւ՝ եառե՞ս, և փառք բարերար շնորհացն Աստուծոյ, զի հաւանեցա՞ւ
ևս։

Ներսիսի՞ հաւան գործն մեծ իմն համարէր Ազգ մեր, և մարգա-
րէութիւնս բազումս մարգարէանայր ինձ, ուստի և ես քանի կարացի՝
ջանացայ, և շահեցայ միայն զնախանձ եղբարց և զմախանս Յով-
սէփայ վարդապետի Կատէպանեան, որ յետոյ՝ կոչեցաւ «Վեհա-
պետեան»։

Սա որդի էր Մաթէոսի Տէր Մարուքեան՝ Կարբեցւոյ, որ ի
Զօրագիւղ Երևանայ. հայր նորա՝ կատէպան, այսինքն այգեպան,
դրծթէ բովանդակ տամբ իւրով՝ կեայր ի ներքոյ շնորհաց տան հօր
իմոյ։ Թէպէտ զուրկ էր ի գիտութենէ զրոց՝ այլ հմուտ գոլով ամեն-
այն հնարից և հայթայթանաց՝ վերացաւ ի ստորին սպասաւորութենէ
ի զանձապետութիւն Աթոռոյն, և իբրօք յինքն կորզեաց զամենայն
իշխանութիւն, մինչև տեղապահին զանուն ևեթ թողուլ։

Սա՝ յաւէտ ի սակս գժտութեան իւրք եղելոյ ընդ մէջ իւր և
զրադիր Յովհաննու եպիսկոպոսի (Թէպէտև հազար անգամ խռո-
վեալք և հաշտեալք ընդ միմեանս)՝ տակաւին ընդ ակամբ հայէր

առ իս, և որքան կարէր՝ ի կարևորացն ստէպ գրկէր զիս։ Այլ թո՛ղ բարիք առն միայն յիշեցին, չարեաց օրինակ շատ կան։

Իսկ Հայրապետն ամենայն Հայոց և Տէր Ներսէս եպիսկոպոս, յետ կալոյ անդ զամիսս ինչ, և բազմիցս խորհելոյ և խօսելոյ ընդ իշխանս աշխարհին՝ ի վերայ անկեալ վիճակի Աթոռոյն Հայաստանեայց[228], ելին ի Շուշւոյ յամի Տեառն 1822, և գնացին ի Գանձասար[229], որ էր ի ժամանակին մայրաքաղաքական աթոռ առաջնորդին Աղուանից։ Սարգիս արքեպիսկոպոս[230], երբեմն կաթուղիկոս անուանեալ, իսկ այժմ մայրաքաղաքացի՝ սիրով ընկալաւ զնոսա, և պահեաց զաւուրս հնգետասան։ Հայրապետն իւրովք հանդարձ էջ ի վանսն, իսկ Ներսէս արքեպիսկոպոս իւրովք հանդերձ՝ վրան եհար ի ձորաբաշին արտաքոյ վանացն։

Իբրև պատրաստէր կարաւան մեր, և կաթուղիկոսն բազմութեամբ այրուձիոյ ընդ ամրոցն ի վայր իջանէր, Ներսէս արքեպիսկոպոս և ես տակաւին գրէաք։ Ժամ պատեհ առեալ գանձապետին՝ առնու զերիվար իմ, և տայ այլում։ Իբրև ելաք, արհին Հայոց Վրաստանեայց պատրաստ եգիտ զերիվար իւր՝ և հեծաւ, իսկ ես մնացի անձի։ Միանգամ և երկիցս զմտաւ ածի չհետևել կարաւանին, բայց յետոյ ընդ տիղմն հետևակ ընթացեալ՝ հասի. իբրև ետես զիս արհին մեծ, այսր անդր հայեցեալ՝ կոչեաց զեղբօրորդի իւր զՅովակիմ ասպետ, հրամայեաց իջանել յերիվարէն, հեծուցանել զիս յայն, և ինքեան հետի գնալ։ Զայն տեսեալ գանձապետին՝ գալարեցան աղիքն. մատոյց առաջի նորա զմի յետակաց հայրապետին՝ այլ նա ո՛չ հեծաւ՝ վասնորոյ բազում աղաչանօք հաճեցոյց զիս ինքն հեծանել ի նա, և տալ Յովակիմայ զձի իւր։ Երիվարս ոսկեսար՝ ընծայ էր Սարգիս արքեպիսկոպոսի Աղուանից առ ծայրագոյն Հայրապետ ամենայն Հայոց. Քուռակ երեքամեան հրաշէկ նարնջի գունով գեղապատշաճ, բարձրահասակ, և անարատ գլխովին։ Աշխոյժք՝ սերին և սննդեանն համեմատ։ Ես միայն համարձակեցայ հեծանել ի նա, բայց և ի հեծանելս իմում, ո՛չ պակաս քան զԴատաքէն Արծրունի յօդապարկին Տիրանայ՝ երջանիկ զանձն համարեցայ քան զամենայն հեծեալս սրբազումար կարաւանին։ Զո՛րս յառաջուստ՝ խածանէր, զորս ի յետուստ՝ աքացէր, ի սանձելս՝ ոստնոյր և յարշաւանսն՝ զկայ առնուլ ո՛չ գիտէր վասնորոյ հրամայեցայ մեկուսի վարել, և ես զայդ իսկ կամէի՞, զի և ի ձիավարժութեան փորձ հանդիսացայց։ Ուր և հասանէի՝ զգոյշ լինէի աւետաւոր չլինել զգալստենէ կարաւանին սրբոյ, բայց և այնպէս զառաջին աւետչեայ ի մեղր և մածուն, կամ ի սեր և կոգի՝ սիրով ընդունէի, և յաղ ապրէի՝ այնինչ դանդաղք

*եղբարց իմոց սովալլուկ ձգտային ի վերայ ձիոց։ Համեմատութեամբ նոցա՝ ես աշխարհ տեսեալ ոք էի, և հանդամանաց բնութեան և բարուց բնակչացն ծանօթ։ Առանձնաշնորհութի՞ւնք արդարև, որ եթէ խորհրդով և հանճարով ի գործ եդեալ՝ շահէին ինձ զճշմարիտ մեծութիւնս։ Բայց աւա՜ղ. որ միշտ յումպէտս և ի խաղս տղայականս վարեցի։*

*Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս, և ի վէմս ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, զորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ որք յետոյ կորեան։*

*Աստի եկաք ի Ծառաքար, կամ լաւ ևս՝ Ծիրանաքար՝ կոչուած Մէլիք Վանւոյ, կացաք անդ զաւուրս ութն, զորոյ և զընծայս պատարագացն ընկալեալ՝ երիվարս գեղեցիկս և զոսկիս՝ ընդ Եղիշէ առաքեալն, և ընդ Գետավանքն, որ ի հնումն Գետկայ վանք (զորոյ զտեղին բազմօք շփոթէ Ստորագիր Հայաստանին), եկաք ի Գիւլըստան, կոչուած իշխանութեան Մէլիք Յովսէփայ տեառն Դիզայ։ Աստի դարձեալ գրեան արարին հարք մեր առ դուռն կայսրութեան Ռուսաց, վասն թոյլ տալոյ ինքեանց, զի ժողովեսցեն զկամաւոր նուէրս Ազգին՝ յազատութիւն պարտուց հասարակաց Աթոռոյ սրբութեան նոցա։ Կացին ամսօրեայ ժամանակաւ[231], և զի ձմեռն ի վերայ հասանէր, յուղի անկեալ եկին ի վանս Հաղբատայ[232], զի ի Տփղիս մտանել ո՛չ ներեցան։*

*Հաղբատ անկանէր յաշխարհին Սևորդեաց կամ Ուտէացւոց, սահմանակից Լոռոյ՝ յարևելից հարաւոյ նորա շինեալ յաւուրս Ողորմածին Աշոտայ[233]։ Եկեղեցին մեծ Սուրբ Խաչ կոչեցեալ՝ ունի կաթուղիկէս երկուս, իսկ Համազասպն՝ ի հիւսիսոյ նորա, բերէ զձև դահլըճի մեծի՝ քան եկեղեցւոյ։ Պարիսպ վանացս էր քայքայեալ, և բնակութիւնք ի նմա անբաւականք բազմութեան մերոյ։ Վասնորոյ մի զմիով խճողեալ ձմերեցաք անդանօր, որպէս և կարացաքն։*

*Խորհրդով Ներսիսի արքեպիսկոպոսի ածան յէջմիածնէ բեռինք երեքինք՝ թղթոց, յորոց թէպէտև հաւաքել մարթ էր ազգի ազգի ծանօթութիւնս հնութեանց, սակայն տարաբախտայէս յայլ իմն զբաղեալ գոլով ի ժամանակին՝ անտես արարաւ։ Ընթեռնուաք ըզնոսա, որքան հարևանցի և կարևոր լինէր ի մէնջ. յորս գտանէաք ըզթիւ և զհնչիւն դրամոց՝ պահեաք, և յորս ո՛չ՝ ժողովեալ ի հուր՝ յաճիւն դատէաք։ Յանցանել աւուրց ինչ և ի տաղտկանալ գործոյն ի վերայ պարապասէր որենոյս՝ բազում այն էր, զի և առանց ինչ ի նմա*

նշմարելոյ յանպիտանիս դատէաք։ Եւ այսպէս զսակաւս ի սակաւուցն ընտրելով, զվերաբերեալս դրամական մտից Աթոռոյ, զայլովքն բոլորեքումբք զաչս կափուցանէաք։ Ոչ կարեմ զսպել աստանօր զմտածութիւնն, թէ դիցուք թէ մեք մանկունք կամ մանկամիտք ամենեքին՝ անփոյթ արարաք զայնքան հինաւուրց թղթովք, ուստի մարթ էր հաւաքել վճիտ անցս ժամանակացն և փարթամացուցանել զպատմութիւն և զգիտութիւնս Ազգին, տեառն Ներսիսի իմաստնոյ և ազգասիրի զի՞ եղև արդեօք, որ թոյլ ետ այնմ։ Յապահովի նստեալ, խորհել և խօսել կարեմք՝ զոր ինչ միտք տուն տան, բայց եթէ այր մի միայն, և ի հազար վարանս տարակուսանաց զբաղիցուք, որպէս նոյն էր յայնժամ, բարւոք ևս առնեմք՝ եթէ լռեսցուք։

Զայսու ժամանակաւ մեռաւ մի ի մերոցն՝ Մինաս վարդապետ Կարճիկ կոչեցեալ, և ի խնդիր լինել մեր զդազաղէ՝ թէ ի վանսն, և թէ ի գեղջ՝ որ պարունակէր տունս իբրև 150, ո՛չ գտաք։ Եւ ի հարցանել մերում ցերէց տեղւոյն Ստեփաննոս, թէ՝ «Ապա զիա՞րդ թաղէր նա զմեռեալս իւր», պատասխանեաց, թէ՝ «Ահա քառասուն ամք են, զի քահանայեմ աստ, և ո՛չ զոք թաղեցի ի մեծամեծաց մինչև ի փոքրկունս»։ Եթէ իրաւ իցէ այս, ցուցանէ քեզ զպատուականութիւն օդոյ տեղւոյն։

Խստիւ արգելեալ էր Հայոց բնակելոց ի Վրաստան, ելանել գալ ի տեսութիւն Հայրապետի իւրեանց։ Ուստի դատարկ և միայնակ կեանս վարեալ անդանօր, մոռացաք գրեա՛ թէ զաշխարհ ամենայն, և սկսաք զիրեարս բանրասել։

Յովսէփ վարդապետ Վեհապետեան՝ գանձապետ, եկեալ ի սենեակ մեր՝ ուր էին Անտօն և դրագիր Յովհաննէս եպիսկոպոսունք, Առաքել սարկաւագաւ հանդերձ՝ սկսաւ բանս առնուլ ի բերան զարհւոյն Ներսիսէ, յօդս ի վեր ամբառնալ զարարս հաւատարմութեան իւրոյ՝ որով լոկ զտուն հօր իւրոյ փարթամացուցեալ, և ախ և աւաղ կարդալ ի վերայ բաղտի իւրոյ։ Արհիք մեր ունկն դնէին միայն, իսկ ես ի ծունկն յարուցեալ՝ բացի և եդի առաջի նորա՝ զոր ինչ և գիտէի զառն թերութեանց։ Լուաւ և գլուխ կորացոյց առ ամօթոյ, և յելանել իւրում յոգւոց եհան և հառաչեաց։ Սենեակ արհւոյն Ներսիսի հուպ անկանէր բնակութեան մերում, ուստի լուեալ զասութիւն երկուց ի մէնջ՝ կոչեաց առաջեաւ, յանդիմանեաց, և ասէ՝ «Խաղա՛ղ կացէք»։ Ի վաղուի առաւօտուն եկն Գէորգ առ իս մինչ աղօթէի յեկեղեցւոջն, և ասէ. «Հայր սուրբն կոչէ զքեզ»։ Իբրև յանդիման եղի, լուռ ևեթ տուեալ նորա ինձ զթուղթ մի, և ասաց դնել կայ ի դրան եկեղեցւոյն, և ի թղթին գրեալ էր. «Որ միանգամ տե-

սանէք՝ աղօթս արարէք առ Աստուած տալ ինձ զհոգի խոնարհութեան և հնազանդութեան»։ Արի, գնացի, կացի, և կատարեցի ըզպատուէր նորա։ Բայց իբրև ելին ժամաւորքն, ծալեցի զթուղթ ի գտակածալի, և ընդ վանսն արտաքս ելեալ ձիւնակոխ ընթացայ զճանապարհն ի փախուստ։ Հասին զկնի Յովակիմ, Գէորգ և Գաբրիէլ Ներսիսեանք և գրեթէ բռնի յետս դարձուցին, և կացուցին առաջի զիս արհւոյն։ Աստ զառաջին ժպիտ տեսի ես ի դէմս նորա, որով առ իս դարձուցեալ զերեսն՝ ասաց. «Որ անարգէ զխրատ՝ անմիտ է»։ Եւ ես անդրէն դարձուցի. «Որ այսուհետև առանց վարձուց ծառայէ քեզ, և առանց քննութեան պատժի՝ անմիտ է»։

Ներսէս արքեպիսկոպոս վերադառնայր ի Տփղիս[234], և կամէր տանել զիս ընդ իւր՝ որպէս զէշ ի հարսանիս. ի հարկէ՛, ձրի գրել վասն իւր։ Այլ չգիտեմ բաղտաւորապէս իմն՝ թէ տարաբաղտութեամբ պատահեալ, ի խաղալ իմում ուրագաւ հիւսանց՝ որք տաշէին զտախտակս վասն շինութեան իւիք՝ հարի ուժգին ի կոճ ձախոյ ոտին իմոյ, և անկայ ոգեսպառ։ Եկին եղբարք և յանձանձեցին, և վէրն մնաց ցամիսս երկուս։ Ներսէս արքեպիսկոպոս գնաց, և պատուէր թո՛ղ զկնի՝ զի երբ առողջացայց, առաքեսցեն զիս ի Տփղիս։ Ա՞յ թէ գնացի։

Աշուն էր, և քանիք ի սարկաւագաց հրաման առին գնալ յԵրևան ի տեսութիւն ընտանեաց։ Ոչ կարացի հանդուրժել վայլից ինքնիշխան ճանապարհորդութեան, մանաւանդ թէ և տեսութեան խանդակաթ և կարօտ ընտանեացս. իմ իսկ եռացին խանդաղանք, ուստի ընդդէմ ամենայն ամոք համոզանաց հարց և եղբարցն ի Հաղբատ, որպէս և ընդդէմ ամենայն խոստմանց և ակնկալութեանց արհւոյն Ներսիսի, ժտի առեալ զհրաման և ընկերացայ նոցա։ Գրիգոր սարկաւագ տեղապահի, Առաքել սարկաւագ Անտօնի, Գրիգոր Շահուն մականուանեալ՝ սարկաւագ դանձապետ Գրիգոր արքեպիսկոպոսի, և ես ընդ նոսա հանդերձ ոմամբք յաշխարհական եղբարց՝ ելաք ի Հաղբատայ յամսեան Սեպտեմբերի ութն[235]. և ընդ ձորն ահադին մղեալ՝ անցաք ընդ կամուրջ գետոյն յՕձուն գիւղ, յանդիման Սանահընւոյ վանաց, ուստի էր Իմաստասէրն մեր[236], և անդ ագաք զայն գիշեր։

Օձուն ի հիւսիսոյ անկանի Սանահնւոյ[237]՝ յայնկոյս ձորոյն մեծի ի տափարակ քարուղաշտի շրջապատեալ ծնիւք լերանց և բլրոց։ Պղնձահանքն Երկայնաբազուկ Արղութեանց[238]՝ անկանի առ երի սորա, զոր կոփւ գործեն բնակիչք մերձակայ գիւղօրէից՝ առ ի պէտս կայսերութեան Ռուսաց՝ հաս իմն որոշելով զերապանծ զերդաստա-

նին Արղութեանց։ Երկիրն լեռնային է, զի բազում ինչ Արագածոյն աղխաղխեալ ընդ կցորդս Գեղամական լերանց յարեմտից յարևելս ընթանայ, կատարս անուանիս ամբառնալով ի տեղիս տեղիս, ըզԱրմազ, զԴիզափայտ, զԿայծն, զԳանձասար, զՇուշի, ցդաշտն Մուղանայ և ի Ծովն Աղուանից։ Լի է այս գօտի անհամար պտղատու և անպտուղ ծառօք։ Լինի ի նմա տանձ, խաղող, կաղին, շաղդանակ, և այլն։ Օդ նորա պարզ, առողջարար և պահեցողական իսկ է, զի գտանին յայրս և յանձաւս երկրին մարմինք բազմօրեայ մեռելոց՝ անփուտ և անապական մնացեալք՝ որպէս զմոմեայ, զորոց պատմեցից յետ դարձիս ի Հնդկաց ի Հայս։

Որպէս Թռչունք ի վանդակէ զերծուցեալ, ո՛չ ոք իմանայր թէ զի՞նչ իցէ ճշմարիտ ազատութիւն։ Մին ասէր. «Քա՜ւ լիցի եթէ վերստին դարձ արարից ի Հաղբատ, կամ յեղբայրութիւն նորա»։ Այլ ոմն ասէր. «Ունիմ արդ դրամս բաւական անդոյ միոյ և տան, երթեալ կին ածից և զկենցաղ վարեցից աշխատութեամբ և սիրով»։ Այլ ոմն թէ՝ «Ես ի Սևան դիմեցից», և այլ ոմն թէ՝ «Երուսաղէմ, կամ յայլուր»։ Պատկառելի տարազուք սրբութեանց մտեալ յՕձուն, յամենեցունց պատիւ և մեծարանս ընկալաք, բայց իբրև տիրեաց աղայութիւնն ի վերայ՝ Գրիգոր տեղապահի առաջին եղև, որ սափրեաց զմօրուս իւր, և զգեցաւ զձև աշխարհիկ։ Նոյնպէս Առաքել Անտոնի սափրեաց զպատկառանս երեսաց իւրոց, և զի չունէր զգեստ նորաձև, արձակեաց զգօտի իւր, և շուրջ զգլխովն պատատեաց՝ ասելով. «Աբեղայ լինելոց էի, ամիրայ եղայ»։ Գրիգոր Շահում նոյն եկաց յոր ինչ էրն, իսկ ես՝ թէպէտև զսքեմ վանականութեանս հանի և յաշխարհիկ զգեցայ, այլ բարեբախտապէս դեռ ալիք չև էին ինձ զի գերձուի։

Ուրախ և ցնծում յարուցեալ յառաւօտուց ճանապարհ արարաք ընդ Լոռէ ի Բամբակաձոր՝ ընդ խիստ և խոշոր ելևէջս լերանց և անտառաց նոցա, և ի մթան գիշերոյ հազիւ հասաք ի Ղարաքիլիսա։ «Օ՜ն ի տուն աւագերիցուն»,—գոչեաց Ամիրայ մեր, կարծելով թէ որպէս աւագերէցն Օձունայ գթութեամբ ընկալաւ զմեզ ընդ հիւրասէր յարկաւ իւրով, նոյն առնէր և Սիմոն Բամբակաձորայ. բայց ո՛չ այնպէս. իբրև ել պաշտօնեայն խաչապսակ՝ ետես զկարաւան մեր խառնուրդ իմն խօլականաց, եհարց. «Ո՞վ իցէք»։ Պատասխանեաց Գրիգոր՝ «Միաբանք սրբոյ Էջմիածնի, վեհապետեանք, կաթողիկոսանք», և այլ հազար այսպիսի մեծանշան բառեր։ Իսկ նորա քաղցրութեամբ ասացեալ, թէ՝ «Ես զայսպիսի խառնակ միաբանութիւն ո՛չ բնաւ տեսի»,—հրամայեաց հօտաղի իւրում վանատուր լինել մեզ ի գոմ անդր անասնոց իւրոց։

Մինչ նոքա այսպէս մեծաբանէին, և նա այնքան յարգ դնէր բարբանջանացն, վարեալ զձին իմ առ Գրիգոր գանձապետին՝ մատամբացի ազդ արարի մեկուսի կալ, և իսկոյն հանեալ զվերարկուն վանականութեան իմոյ և զգտակն՝ զգեցայ զինն ի վերայ ձիոյն, և գոչելով առ ընկերն. «Տիրացու Գրիգոր ա՛յսրէն, ա՛յսրէն». Հուպ մատեայ առ սրբազան քահանայն, և որքան կարևոր էր՝ քաղաքականութեամբ՝ ասա վանականութեամբ՝ ողջունեցի զնա, զնոյն արար և Գրիգոր առ լուսով ընդաղօտ ճրագին, որ զարդիս արտաքս եբեր աղախին տանուտեառնն։ Իբրև յաւ նշմարեաց զմեզ, «Ահա նոքա են տիրացուք», ասաց. մեծաւ պատուով առ տարաւ զմեզ ի տուն, և հրամայեաց ընթրիս առնել մեզ՝ աւելի քան զոր ակն ունէաք։

Գրիգոր տեղապահի և Առաքել Անտօնի զօրէն չաստուածաբարձ իշոյն Հռովմայ՝ քաջ ծանեան զկարգ իւրեանց, բայց իբրև ընթրիքն պատրաստեցան, և մեր զինի հիւրասիրին չեռոյց զստանութիւն սիրոյ՝ պատմեցաք նմա զոր ինչ միանգամ անցք անցեալ էին։ Առաքեաց տէր Սիմոն կոչեալ զնոսա, որք թէպէտև զհանդերձ վանականութեանցն լման ունէին, բայց այնզի զմորուաց ծիլ ընդ ծնօտս պատուաստել ոչ կարէին՝ զամօթի հարան հրէշանի հանդիսանալ ի տես գերդաստանին, և ի ծաղր կանանւոյն։ Փոքր մի խոժոռեալ ես էին, ուստի և զհացն առաքեալ ի գոմ անդր՝ ո՛չ կերին։ Ո՛չ ոք ես հոգացաւ ինչ ընդ այն, և զքաղց ի քսակաց կրեցին։

Այնզի աղաղեցաւ յոյժ քիթ Գրիգորի տեղապահեան, որ գանձու փարթամագոյն էր, միանգամ և երկիցս գրգիռ ի մէջ մատուցանէր, զի թերևս կոռևացուք փոքր ինչ զաւազանաշարժութեամբ հանդերձ։ Բայց որովհետև աշխարհական եղբարք, մեօք վայելեալ ի սեղան տէր Սիմոնի, և ակնունէին նոյնպէս վայելել և ի սեղան քահանային Համամլուայ՝ ամենեքին ի մեր կողմ էին։ «Աւասիկ ոսկի մի՝ առ երեկոյս,—ասաց նա,—գնեցից ինձ ոչխարս և մարխս, և զճենճեր խորովածին յերկինս ի վեր զալարեցուցից այսօր՝ ի հեճուկս ձեր»։ «Մեք և առանց ոսկւոյ արարաք, և արասցուք»,—պատասխանեաց Շահուն։ «Առաքել ընդ քեզ լինի՞, չէ՞»,—հարցի զնա։ «Ի հարկէ՛»,—պատասխանեցին երկոքին ի միասին։ Յայնժամ դարձուցեալ զդէմս իմ դէպ յողջոյն կարաւանին՝ և ասացի. «Բարուք ես, զի համարին Համամլուք, եթէ դոքա երկոքեան յանցաւորք իցեն, և վասն այնորիկ գերծեալ ի մօրուաց՝ ի բաց հալածեալք. և այդ մեզ մանաւանդ պատիւ է՝ եղբա՛րք»։—«Ա՛ չար, եթէ նոքա չհամարիցեն ես՝ տակաւին դու բաւական ես. ուրեմն ի միասին լիցուք, ուր և կալ հասանիցէ մեզ»—ասաց Գրիգոր։ «Ո՛չ ընաւ, զի դու հարուստ ես, և ոսկւով

պարծիս. եթէ տաս զոսկիդ առ ի գին հասարակաց պիտոյիցն՝ բարի է, իսկ թէ ո՛չ՝ ուր և երթամք՝ զդոյն քարոզեմք։ Զի՞նչ ասէք առ այս՝ եղբա՛րք»։ Ամենեքին զամէնն ասացին, և Գրիգոր հան զոսկին. հաւատաց Մկրտչի Կիւրղեան, և ապա ընկերեցաւ մեզ։ Եւ այսպէս յօթեւանէ յօթեւան, մանաւանդ ի մերձակայս Հայրենեաց, որքան առաւել հասանէաք ծանօթից՝ այնքան և շատ կեղեքէաք մեզ կաշառս ի մօրուաթափ եղբօրէն։

Հասեալ ի Համամլու գիւղ մեծ, ի ստորոտս հիւսիսային ինչ բաշկի Արագած լերին՝ հուպ ի կիրճ նորա՝ որ հանէ յԱպարան, այլ ևս ո՛չ ծանրացաք քահանային, թէպէտև ընդ լուր հասանելոյ մերոյ անդր՝ եկն հեզահոգին ի տեսութիւն մեր, և շատ ևս զարմացաւ, զի Թողեալ զտուն իւր՝ օթս արարեալ էաք ի տան Պարոն Մուսւոյ Գէորգեան։ Ոսկին Գրիգորի առաւել պատրաստեաց մեզ խորոված, խարշած, և այլ համադամս կերակրոց՝ քան զոր մեք ծախել կարէաք. ուստի և քահանայն հանդերձ բազմութեամբ գեղականաց հրաւիրեցան անդանօր, և զրեթէ զգիշերն բովանդակ կերին, արբին, երգեցին և խնդացին։

Յարուցեալ, տխնա՛ թէ յոյն ելեալ, զի հազիւ թէ ննջեցաք, հեծաք յերիվարս մեր, որ պարզակեացք քան զմեզ՝ բանաւորագոյնս քան զմեզ ցուցան՝ ի հանել զխոնջ յանձանց իւրեանց, այնինչ մեք սնոտեաց և խնդկատակութեանց ծախեցաք զգիշերն ողջոյն։ Եւ ընդ ահագին ընդ կիրճն ի վեր մղեալ ընդ ձիւն և յեղուրջ՝ հազիւ հազ շրջեցաք յԱպարանսն Այրարատայ, ուր ի գոլորշուտ և ի ձիւնաբաց մարմանդս ինչ եղերաց Քասաղ գետոյ էջս արարեալ՝ կերաք զնախաճաշ մեր ի պախ մսոյ և պանրոյ, և հանգեաք ի քուն։ Հազիւ ուրեմն կարացին աշխարհական, այո՛, և աշխարհատես և առաւել քան զմեզ փորձառու և իմաստուն եղբարք մեր զարթուցանել զմեզ ի քնոյ, զի շէն մերձաւոր չէր ուրեք ընդ ձիւնապատ ամային, և վրանք խաշնարածաց վաղու իսկ ի ձմերոց անդր իւրեանց ծալէին։ Վասնորոյ զարժանին մեզ պատուհաս զանմիտ անասնովք մերովք արկեալ՝ անագորոյն խժութեամբ արշաւեցաք մինչ յԱշտարակ, իւրաքանչիւր ոք ի տունս ծանօթից մերոց և ազգականաց։ Մարթ էր մեզ՝ զէթ մղոնաւ միով դուլ տալ անասնոց մերոց՝ եթէ էջս արարեալ էաք ի Մուղնի. բայց այնզի այն վանք էր, և մեք հրէշանի ոմանք, կէս վանականք և կէս աշխարհականք, մանաւանդ թէ և յերկուց իսկ արտաքոյ՝ երկեաք թէ մի գուցէ զԲամբակաձորոյն Նորոգեսցուք մեզ դիպուած, և փոխանակ յարգանաց՝ անարգութիւն յանձինս մեր բերիցուք։

ժամ զկիսով գիշերոյն անցեալ, զլխովին ցրտատար և վտանգա-
կեալ՝ հազիւ թէ կարացաք զարթուցանել զընտանիս և զբարեկամս
մեր ի կամայ և յակամայ ընդունելութիւն մեր, որոց ապաստան
թողեալ զանասունս և զոր ինչ մեր ունել կարէաք, հազիւ թէ կարա-
ցաք ունել զծերպ ինչ քառակուսոյն, զոր հասարակօրէն Քուսի
անուանեն (եղեալ ի վերայ թոնրի և ստուար վերմակաւ պարապա-
տեալ, ի վերուստ ձգելով սփռոց պատուական, և ի վերայ կապերտ
կեղտակալ), և հալել լուծանել ի քուն:

Մեզ նոր առաւօտ լինէր ի վաղուէ՝ միջօրէն Աշտարակայ,
այնինչ նոր զարթուցեալ տեսաք արս, կանայս և մանկտի՝ տանց ի
տունս գրոհել ի զնին ինքնակամ անկեալ հրեշտակացս մեզ: Ամե-
նեքին զարմանային ընդ Գրիգոր և Աւաքել, զի թողին զկարգն
փառաւորիչ անձանց իւրեանց, և զգեցան զանկարգութիւն: «Փող
փոխէ,—ասէին,—զվիճակ մարդկան, բայց ո՛չ երբէք ի փառաց
յանարգութիւն, որոց նախ քան զստացութիւն՝ զբարւոք կիրառու-
թիւնն ուսանէին»: Ամօթ և խայտառակութիւն մեր մեծ էր յոյժ,
բայց ես ծալեալ ծրարեցի զիմ տարազ աշխարհական և խո՛ր ի
պահեստի եդեալ առ պարոն Կարապետի Մէլիք Մկրտչեան՝ բնաւ
իմոյ՝ զգեցայ զփառաւորագոյն սար վանական զգեստուց իմոց, և
նստայ որպէս զԹուրք ի դատաստան՝ ծանր և յուրջ: Եկն առ իս և
տիրացու Գրիգոր Շահունն կոչեցեալ, և այնինչ խորհէաք և խօսէաք
զելից մերոց ի սուրբ Էջմիածին՝ բազմութիւն նորասիրաց ասանին
վեղան անդանօր, և իբրև տեսին զմեզ յայն տարազ զուսպ և պար-
կեշտ կրօնաւորութեան՝ ասացին. «Մի Գրիգոր էր՝ և մի Գրիգոր պի-
տի մեզ. մի Մեսրովբ էր՝ և մի Մեսրովբ պիտի մեզ. ա՞յր եղիցի
ձեզ հաց Էջմիածնայ՝ որպէս զձեր մարց կաթնն»: Գրիգոր պարզ և ան-
խառն դիմօք ընկալաւ զյաղթանակ մարտի անփոփոխ ճգնութեանն,
իսկ ես շառագունեցայ, զի խիղճ նեղէր զիս: Վասնորոյ ո՛չ կարացի
բանալ զբերան իմ, այն ինչ Գրիգոր աստուածաբանել սկսաւ առաջի
նոցա զզօրութիւն աղի և հացի Աթոռոյն մեծի, մեր զանմոռաց ճա-
նաչումն յարգանաց նոցա, և զոր կոչեցաքն կալ՝ անփոփոխ մտօք
և անզրդուելի հաւատովք: Մարգարէացաւ, այո՛, և վասն այլակերպելոյ
եղբարց մերոց. զղջա՜յր անափառութիւն իմ առաջի ճարպիկ լեզուի
նորա, թէ մի՛ գուցէ և զիս ի նոսա խառնեսցէ, բայց զմնութիւն
եղբայրական սիրոյն՝ որ ծածկեաց զբազմութիւն մեղացս:

Իսկ Գրիգոր սափրեալ, որ ամենայն ուխտով իւրով, որպէս և
անուամբ տեղապահին՝ ո՛չ կարաց մազ մի ի ծնօտին ցուցա-
նել, և ո՛չ զառողիս հասարակաց լսելացուցանել՝ ասէր զամենեսին

ի չու յայն իսկ օր, բայց եղբարքն արդարապէս ողորմելով անասնոցն՝ ո՛չ հաւանեցան։ Եւ նա զգիշերայն, և խոյս ետ ամօթահար յերևան ի տուն հօր իւրոյ։ Առաքել սարկաւագ ի բաց եդ զամիրայութիւն իւր, զգեցաւ զթուխ զզջութեան իւրոյ, և ուխտեաց տանել ամենայն անարգանացն՝ զոր աշխարհ մատուցանէր ինքեան վասն մեղաց տղայութեան և անգիտութեանն։

Ի Ղարաքիլիսա անուանեալ հանգուցեալ եկեղեցւոյն՝ յԱպարան, զխոնարհ չէր ուրեք ձիւն ընդ դաշտն մեծ, և կուտք այգեաց լին յամենայն ուրեք։ Ընդ Օշական ւան ճանապարհ արարեալ՝ հասաք յէջմիածին յաւուր վեցերորդում ի Հաղբատայ։ Գոյժ ուգիտութեանց մերոց կարապետեալ անդանօր պատրաստեալ էր մեզ զտեղի վայելուչ այերախտ գնացից մերոց։ Հիւրընկալ Յովհաննէս վարդապետ հազիւ թէ հայեցաւ յերեսս մեր, և փոխանակ ի ներքս անդ եղբայրանոցին հրաւիրելոյ զմեզ, կիսաբերան ասաց վանատուր սպասաւորին՝ որոշել մեզ սենեակս ի Ղազարապատին. եթէ և զնոսա սենեակս անուանել հնար ինչ իցէ՛. ո՛չ սփռոց, ո՛չ վառարան, և ո՛չ մահիճ կամ անկողին ունելով։ Ամիրայ մեր՝ արդար և հաստատ եկաց յուխտի իւրում, և գերօրինակ հեզութեամբ տարաւ անարգանացն (ուստի և Աստուած արժանապէս կոչեաց զնա ի վարդապետութիւն բանին՝ փոխելով ապա զանուն նորա՝ Յովհաննէս)։ Իսկ Գրիգոր սարկաւագ և ես առաքեցաք զծառայս մեր առ հիւրընկալն, հարցանել թէ զի՞նչ դիտումն իւր իցէ առնել ընդ մեզ։ Պատասխանեաց նա. «Զի ունիցիք աշխարհասէրք և աշխարհականացեալքդ ընդ սըրբազումար հրաժարելոցն յաշխարհէ։ Աշխարհակա՞ն էք՝ կացէ՛ք ուր և կայք»։

Կարի ի խոր խոցեալ ի բանից աստի, գրեցաք առ ոմանս յեղբարց մերոց ի ներքս։ Մարգար սարկաւագ, որ յետոյ Դիոնէսիոս վարդապետ, և Սիմոն սարկաւագ՝ որ յետոյ առաջնորդ Վիրապին՝ ի կողմանէ Գրիգորի. իսկ տիրացու Պօղոս Կեսարացի, և Եզնակ Կողբացի՝ սարկաւագունք ի կողմանէ իմ՝ եկին, փարեցան զմեօք՝ և առեալ տարան ի ներքս. զնա՝ ի դիտարան գանձապետ Գրիգոր արքեպիսկոպոսի Վաղարշապատցւոյ, և զիս՝ ի տաճար Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարացւոյ։

Կացաք անդ զաւուրս ինչ, և դառնութեամբ սրտի ընթերցաք ի դէմս ամենեցուն զտխրութիւն ի մահ հարց ոմանց, մանաւանդ թէ՝ և Փիլիպպոսի արքեպիսկոպոսի Մողնեցւոյ՝ Մեծափորն կոչեցելոյ և ձոխի. ի հարստահարութիւն Պարսից՝ անգրելի բարբարոսութեամբ Ջաֆար խանի ընդ անձն Ստեփանոս վարդապետի ուրումն Կաշ-

*ույ[239]. վասն մաշկելոյ ի նմանէ զգաղուստ գանձուց վարդապետին՝ և որ մեծ քան զամենայն՝ զգերութիւն ազգիս ի Ղարսայ, ի Վաղարշակերտայ և ի կողմանց կողմանցն Կարնոյ. զորս էր՝ զի վաճառէին. և էր՝ զի բդեաշխն Երևանայ վարէր ի Ղազբին և բնակեցուցանէր ի գիւղօրէս իւր: Թողի զձի իմ յախոռ անդր, և փոխանակ առեալ զմի ի պատուական երիվարաց սրբազան հիւրասիրիս՝ հեծայ յԵրևան: Եւ զի՞նչ զճանապարհայն արդեօք, եթէ ո՛չ երամ երամս գրեթէ ամենայն վաստակաւոր քաղաքուհեաց Երևանայ՝ դառնալ յիւրաքանչիւր այգեաց և ի հնձանաց իւրեանց, է՝ որ հեծեալ, և է՝ որ հետի, տանելով ընդ ինքեանց տառաղանս տառաղանս խաղողոյ և այլոց պտղոց աշնայնոց ի պահեստ ձմերանի, և կամ յուտեստ առօրի՝ բարեվաստակ անդամոց գերդաստանաց իւրեանց, որք յայլ և յայլ արարս չորուցամաք պարապեալք: Եւ անդ ի մէջ յառաջաւորացն տեսի զմայր իմ Զարդար Թաղիդեանց, կողով խաղողոյ յուս իւր, յաջմէ նորա Աննա քոյր իմ, կուսան երկոտասամեայ՝ ոգեպէս կերպարանեալ ի սխրանս հանդերձից՝ որ ձիւնափայլ ձեռօք իւրովք կարկառէր զողկոյզ ինչ խաղողոյ եղբօր մերում Յովհաննու՝ մանկանն հասակաւ՝ հեծելոյ յէշ իւր[240]:*

*Դասն առաջին տեսեալ զիս, որ գրեթէ մայրացեալ և քնացեալք զլխովին՝ ամենեքին իբրև ի միոջէ բերանոյ գոչեցին. «Բարեա՛ւ, տիրացո՛ւ Պապիկ, բարեա՛ւ. քա՛, մին չկայ որ գնայ Զարդարին աւետիս տայ»: Ընդ բանիս բազումք ի մանկանց և պատանեաց ոտս առին, բայց ես կամեցեալ նոցա չթողուլ զաւետչեայն՝ ձի արշաւեալ ինքնին հասի, իջի, և փարեցայ զնովաւ: Չկարեմ մարմրնացուցանել աստանօր զգութ ծնողական խանդաղատանաց սրտին և զարտասուս կարօտահար աչացն՝ որովք հառաչեաց. «Փա՜ռք քեզ Աստուած, փառք քեզ, որ ո՛չ ամօթ Ազգի արարեր զիս, և ո՛չ յայպն դրացեաց իմոց»: Յետ բազում ողջունից և համբուրից, գրգանաց, և փայփայմանց, լուայ թէ՝ առ սա հասեալ համբաւոյ այլակերպութեանցս յօձուն՝ վշտացուցեալ էր յոյժ յո՛յժ:—Ո՞վ եթէ գիտէին մանկունք՝ թէ խաղքն համարեալ չարիք իւրեանց՝ ո՞րքան մեծ վիշտս հասուցանեն ծնողա՜ց:*

*Կացի աստ զաւուրս հնգետասան, և իբրև ելանէի՝ բարեպաշտօն մայր իմ մատոյց զԱստուածաշունչ միահատոր տիպ Յովհաննու վարդապետի Զոհրապեան[241]՝ զոր գերի վարեալ զօրացն բդեշխին Երևանայ ի կողմանց Վաղարշակերտի և Կարնոյ՝ վաճառեալ էին յԵրևան. գրելով ի վերայ իւրով իսկ ձեռամբ խրատս պիտանիս ինձ՝ առ ամենայն դէպս կենցաղոյս այսորիկ: Այս առաջին օրինակն էր*

ի համօրէն նահանգին, և ինձ ինքեան վիճակեցաւ մայրենի օրհնութեամբ հանդերձ:

Ո՞վ կարծէր, թէ այս վերջին լինելոց էր տեսութեան ամեներան ծնողիս, և այս վերջին՝ անմահ և անմահարար ի պարգևաց նորա առ իս: Այպառնի՞ք, ապառնի՞ք, Աստուծո՞յ միայն տեսանելիք, և ի մէնջ անտեսք. ո՞ ասել կարիցէ թէ, զինչ վաղիւն ծնանիցի: Թողի զնա, և զսիրելի զաւակունս նորա՝ գիտեմ, բայց թէ յո՞ր արտասուս, յո՞րպիսի հառաչանս, և յո՞րպիսի աղօթս առ Աստուած, ոչ կարեմ ասել: Դեռ բարբառ մարդոյ կրից անուանս չունի, մանաւանդ թէ՝ սրբոց, անարատից և երկնայնոցն:

Յելելոցն ի Հաղբատայ միայն ես դարձայ[242], բայց ընդ Ահարոն վարդապետի[243] և նորոց այլ ճանապարհորդաց՝ և ի միջոցս ամսոյն Հոկտեմբերի հասի անդր ընդ նոյն ճանապարհ, յոր եկեալն էաք:

Ահարոն վարդապետս այս՝ էր հինաւուրց և բազմարդիւն ծերունի որ, զարմանալի թէ ի միտս, և թէ ի վարս: Ուշ նորա անկորուստ պատգամարան էր Սուրբ Գրոց, մինչ այնքան՝ զի եթէ անհետանայր Աստուածաշունչն ի միջոյ, Տարական, և Նարեկ, նա կարող էր զամենայն ծայրածայր ասել կամ գրել: Չէր մոնթ անուանի՝ որ կարէր զՀամբարձին ճիշդ ասել, քան նա զո՛ և իցէ գլուխս զԳրոց Սրբոց: Քերականութիւն, ճարտասանութիւն և ըղտրամաբանութիւն անգիր ասէր, բայց որովհետև առ վարժապետի ո՛չ ուսեալ՝ տող մի անսղալ գրել ոչ կարէր: Քերթող էր և զանազան տաղս յօրինեաց, այլ միշտ սրբագրութեամբ Ենօքեան Ստեփաննոսի և Գիլասպեանց Զաքարիայ եպիսկոպոսաց: Ձայն նորա կամ Տաղալ՝ համեմատ ուշոյն, ներդաշնակ՝ եղանակաւոր և հրապուրիչ: Վարք նորա յաւէտ հրեշտակայինք էին, քան թէ մարդկային: Ճըշմարիտ մեռեալ աշխարհի էր, զի ո՛չ իմիք փափագէր, և եթէ էր՝ զի անկանէր ի ձեռս ինչ՝ իւր ո՛չ համարէր: Բազում անգամ տեսի զնա այսօր ի ծիրանիս, և վաղիւ՝ ի ցնցոտիս: Այլ աշխարհ զնա աղուաշ և թեթևահանեար դնէր, զի գրեթէ ծանակ եղեալ կամովին՝ ծաղր առնէր զամենեսին. մինչև անգամ բդեշխն Երևանայ գիտէր զնա, և շնորհ առնէր նմա: Սա եղև մեզ հայր բարեկենդանութեան թէ ի ճանապարհին՝ և թէ ի Հաղբատ:

Եկն անդ Թովմաս վարդապետ աբեղայ՝ Վրթանիսի արհւոյ Նուիրակին Հնդկաց, և մատոյց հայրապետին զդուզնաքեայ խեշերանս մեծագանձ հարստութեան այնորիկ՝ զոր մեծաւ առատաբաշխութեամբ նուիրեալ էր ժողովուրդ մերազանց կողմանցն այնոցիկ, և զորս յետին անյաջողութեամբ վասն Պօղոսի եպիսկո-

պոսի Նախչուանցւոյ[244]՝ ի կորուստ յափտենից մատնեալ՝ եղեալ էր սկզբնապատճառ այսքան պարտուց էջմիածնի։

Այս Պօղոս եպիսկոպոս աբեղայ էր մեծին Փիլիպպոսի արքեպիսկոպոսի, որ յետ վախճանի նորա ի Հնդիկս, յաջորդելոյ նմա Վրթանիսի արքեպիսկոպոսի, վերադարձաւ յէջմիածին, և ձեռնադրեալ եպիսկոպոս՝ ընկալաւ զգլխաւորս ի պարսիկ պարտատերանց անտի Աթոռոյն՝ և գնաց ի Հնդիկս, ուր զայնու ժամանակաւ մեռեալ գտանելով զպարոն Յովսէփ Յարութիւնեան, զպարոն Մարտիրոս Տէր Ստեփանոսեան անանկացեալ մինչ ի սպառ, և զխօզաբաշխ ոմն Պարսիկ զմնացորդս գոյից հանգուցելոյն գրաւեալ սուտ յօգածոյ մուրհակօք, դարձոյց զնոսա դատարկաձեռն ի Սուրբ էջմիածին։ Որոց եկեալ հրամանաւ բդեշխին յանկլին վաշխս սաստիկս ի վերայ մայր դրամոց. զամենայն ծախս անհուն ճանապարհորդութեան իւրեանց թէ ի գնալ և թէ ի գալն, ևս և զմնացածին շահ վաճառացն՝ զորս յուսայինն գտանել, եթէ ընկալեալ էին զդրամս իւրեանց ի Հնդկաստան, վնաս և ո՛չ մի կարծելով թէ հանդիպէր ամենևին, բարդեցին ի վերայ՝ և ահա՛ 5000 թումանն վեցպատկեալ աճեցուցին ց30.000 թուման։

Այս եկն անդանօր և մեծանուն Դաւիթ խան Մատուրեան[245] դեսպան ի կողմանէ Պարսից ի Գաղղիա գնացեալ, և առ յապայն զիրաւունս տանուտիրական իշխանութեան իւրոյ ի վերայ Գեղարքունեաց հաստատեալ ի դիւանի կայսերութեան Ռուսաց, վասն շառաւիղ գոլոյն իւրոյ սերնդոց Սուփանայ հինաւուրց տեառն երկրին։ Այս հօյակապ պայազատ, ի սակս սակաւութեան սենեկաց՝ հիւր տուաւ դրագրատան տեղւոյն, յորում ես բնակէի։ Քաղցր և իշխանավայելուչ բարք նորա, հանրածանօթ տեղեկութիւնք աշխարհաշուրջ մտացն, և ուսումնասիրութեանն սովորոյթ, բազմօք բացին զմիտս իմ։ Ի մասնաւորի պատմեաց ինձ սա զվարս Ռօբինսոնի Քրուզոյ՝ զոր դեռ չէի տեսեալ[246], և յաւել ի նա զհրաշակերտս և զզովանիս ի գիտութեանց մեծի մայրաքաղաքին Պարիսայ, և զարուեստիցն զիտս յեղուլ ի լսելիս իմ։ Մանուկ անլուր այնպիսեաց՝ այնքան սաստիկ հարայ ի սէր երթալոյ անդր, և վտանգաց ի վտանգս անկանելոյ՝ մինչև աղերս ի վերայ աղերսանաց դրեալ մատուցի ամենեքան Հայրապետին Եփրեմայ, թողուլ զիս ազատ ի շուրջ աշխարհի։ Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս՝ որ զայլ ինչ ո՛չ ճանաչէր, եթէ ո՛չ՝ զխոյր և զանուն իշխանութեանն, հակառակ կայր խնդրանացս։ Երբեմն ասէր՝ «Մի՛ բնաւ թոյլ տալ». երբեմն թէ՝ «Զինն ամ կացի յէջմիածին, նախ տարեկան տասն և

երկու թուման հացագին պարտ էի վճարել՝ և ապա ելանել ազատ»: Եւ երբեմն, թէ՝ «Տղայ անփորձ տուայտանաց աշխարհի, թո՛ղ գընայ,—ասէր,—փոշիմանի, դառնայ, և յայնժամ անարգաբար ես վարեսցուք ի գործ»: Բայց տէր Եփրեմ մեծ Հայրապետ՝ գոլով այր հեզ, և աշխարհատեսութեան զճաշակ առեալ, անակնունելի գըթութեամբ զիջաւ ի խնդիր, կոչեաց առ ինքն և ասէ. «Որդեակ, այս ես այսպէս ո՛չ մնայ. գայ ժամանակ՝ յորում ես ինքնին հրաման տաց քեզ ելանել և զաշխարհ տեսանել՝ փառօք, բայց զարդիս ո՛չ: Կամիս վերստին գնայ յէջմիածին և յԵրևան ի տես ընտանեաց քոց. մինչև զիջանիցի սիրտ քո, և ապա դարձի՛ր այսրէն առ մեզ»:

Ո՛չ այնքան սքանչելիք համարէր ամենի հեղեղաց դարեան կամ բուռն ծփանաց ծովու դադարել առաջի նորա՝ քան զիմ է ժամանակին ունկնդրութեան: Ասացի. «Տէր յարուցեալ սրտի իմում, այլ ո՛չ ևս յօժարի կալ մնալ աստ՝ առանց ուսման. և եթէ որպէս խնդրեմս, չգտից զողորմութիւն՝ կամ փախեայց, կամ ջանացայց չարիս առնել արժանիս առ ի ձէնջ հալածանաց. և յայնժամ հոգւոյ և մարմնոյ իմոյ պարտական մնայ Տէրութիւն Ձեր»: «Բարի է»,—ասաց բարեհոգին, և ես զաջն համբուրեալ՝ ելի արտաքս, և հրամայեցի իսկոյն կազմել զերիվար իմ: «Քոյ հօր տան մատաղ ծնա՞ւ քեզ զայն,—ասաց Յովսէփ վարդապետ,—զոր այդպէս հրամայես սարել քեզ. ձին Վեհապետին պատկանի, և միայն հաւատարիմ որդւոց աթոռոյ է ժառանգութիւն. որպէս մտեր, այնպէս ե՛լ»: «Երանի՜ թէ և սրբութիւն ձեր արասցէ ըստ հրամանիդ ըստ այդմիկ»,—պատասխանի արարի ցնա, երիցս երեք անգամ արհամարհանօք: Այնինչ զհակս շերամի պայուսեկին ծանրութեամբ առնէի, զի յուս բառնալ կարացից, հաս առ իս արժանապատիւ Աբրահամ սարկաւագ Աստուածատրեան Վաղարշապատեցի, Հայ և Ռուս բերականութեանն[247] և այլ և այլ գրոց հեղինակ, և մատոյց մանէթս հինգ ի դիմաց Հայրապետին: Զայրացեալ գոլով ընդ բանս Յովսեփայ վարդապետի, ընկալայ զպարգև Հայրապետին, և այսր անդր հայեցեալ՝ տեսի զորթարած վանացն՝ տղայ աղքատիկ և մերկ. զառաջեաւ կոչեցի, ետու նմա զբովանդակ զայն հինգ մանէթ. և ասացի սարկաւագին, թէ՝ «այնքան միայն արժէր ինձ պարգևն, որ և ի ձիոյ միոյ զրկեցայ յետ այսչափ զաչացս լոյս թափելոյ»:

Ելի ի Հաղբատայ[248] սարկաւագ՝ սարօք սրբութեան, բայց իբրև յուսահատ մտօք: Բաժանեցի որ ինչ և ունէի ծանրոցս, միայն ըզԱստուածաշունչն՝ զպարգև խանդակաթ մօր իմում, և զԱստուածանըմանութիւն Պետրոսի՝ իմով ձեռամբ օրինակեալ՝ ի պայուսեկին,

ընդ նօթնուտասան Պարսիկ ռեալաց ի ծոցի՝ և հետի ընթացեալ՝ հասի ի գիւղն Քարաբաշին, ուր ժողովուրդք սիրով ընկալան, և ի վաղուի վարձելով ինձ գերիվար՝ տարան ի Ղազախ՝ առ տէր Յովհաննէս, որոյ եղբօրորդի՝ իւրոյ ինքեան համանուն, աշակերտէր ինձ ի վանս անդ Հաղբատայ[249]:

Գարուն էր, գետ ձիւնք լեռնակողմանցն անհալ, ուստի և ձեռք և ոտք իմ միանգամայն գուցումնեալք: Առաջին՝ որ ետես զիս՝ Յովհաննիկ էր՝ իմ աշակերտ, և ճխալով վազս առեալ ազդ արար ծնողաց իւրոց: Տէր Յովհաննէս ընդ յառաջ եկեալ ընկալաւ զիս իբր զհրեշտակ լուսոյ, նու նորա՝ որ մայրն էր աշակերտիս՝ լուաց նախ զոտս իմ, և տիրուհին հանդերձեաց զկերակուր: Ի սեղանոյ հացին ցչորրորդ ժամ գիշերոյն՝ խնդրեաց տէր Յովհաննէս գտանել զատոյց պատճառ ելիցս ի Հաղբատայ, այլ ես ո՛չ կամեցայ ասել: Ի վաղուի յարուցեալ հասաք ի գետն, ընդ որ յանցանելն՝ սկսեցայ ընդ յորձանսն երիվարաւ իմով, և հեղձանէի արդեօք՝ եթէ չէր պարոն Մկրտչի հզօր երիվարան ի թիկունս հասեալ և ձիւան հանեալ զիս արտաքս: Տամկացեալ յոտից ցգլուխ՝ և պաղեալ յարձան սառնորակ՝ բերայ վերստին ի գիւղ անդր, ուր և ագայ զայն գիշեր: Տէր Յովհաննէս հազարիցս հազար անգամ ստիպեաց զիս ունել զձի իւր պարգևի մասամբ, այլ ես յանձն ո՛չ առի, զի չունէի ինչ առձեռն ի փոխարէն շնորհացն: Հազիւ ուրեմն զիջաւ նա ընդունել զնօթնուտասան Պարսիկ ռեալս՝ որ կացուցանէր զբովանդակ հարստութիւն իմ, և ես ապա ընկալայ զձին, և անուն կարդացի նմա՝ Աշխոյժ, զի հընդամենից էր, բարձր յոյժ, և ի կայսիկ յարենէ, որով բազմիցս ի մահուանէ փրկեցայ: Առաջնորդ կալեալ ինձ ապա զմի ի գիւղականացն՝ Սուքի անուն, պատանի առոյգ և զուարճաբան, հասի ի Գանձակ, և ագայ առ Մարգարտի հօրաքեռ իմում, յորմէ փոխ ընկալայ ինձ ոսկիս երկերիւր: Ի վաղիւ անդր չոգայ առ Խաչատուր վարդապետ. և ի հարցանել նորա ցիս, թէ՝ զի՞ դաս, պատասխանեցի. «Ի փրկութիւն քոյ՝ եթէ միայն ողջոյն դարձայց ի Շուշւոյ»: «Զիա՞րդ, զիա՞րդ»,—կրկնեաց հատկլեալ, և ես ասացի. «Այնու՝ զի զկնի դարձին իմոյ՝ հոգևոր տէր մեր ձեռնադրելոց էր զեպիսկոպոսունս, յորոց մի անուանեցայ դու ինքդ»: Ընդ այս լուր՝ աչք նորա պայծառացան, և երեսքն կարմրեցան. հրամայեաց ծառայի իւրում գինի մատուցանել, և ասաց. «Այդ բերան չէ, բարեկա՛մ, այլ տաճար Աստուծոյ է»: Առաք անձնիւր բաժակ մի կամ զերկուս, և իբրև սակաւիկ մի գինեցաք, ասացի ցնա. «Իսկ աւետչեաց իմ ո՞ր է»: «Հազա՞ր ոսկի քեզ մատաղ»,—ասաց նա, եբաց զարկղն ապա-

նոսի, և համարեաց ի բունս՝ ոսկիս իբրև երեսուն։ Զաջն համբուրելով առի, և ընդ Դիզա, ընդ Խաչէն և Խնածախ՝ եկի հասի ի Շուշի։

Առաջնորդ իմ Սուքի յամեցաւ ի վաճառանոցին հետևել ինձ, և ես միայնակ յառաջեցի ի տուն անդր Թառումեանց. և այնինչ բաղխէի զդուռնն, Աւետիք որդի Ջոհրապայ ընդ պատուհանն հայեցեալ՝ ետես զիս և ճչաց։ «Մեսրո՛վք, Մեսրո՛վք»։ Ամենայն գերդաստանն ստարոտի իմն կրիւք անդր գրոհեցան. մին վայէր. «Մի՛ բանար, մի՛ բանար»։ Մին ասէր. «Արդարև Մեսրո՛վք է դա». և միւս, թէ՝ «Ո՛չ, ո՛չ. այլ ընդ կրունկն հայեցարուք»։ Լսելի լինէր և ձայն, թէ՝ «Ածէ՛ք այսր զատրճանակ իմ, ածէ՛ք այսր»։ Զայսու ժամանակաւ եհաս անդր Սուքի. և ես կարի յոյժ զայրացեալ և ի խոր խոցեալ յարհամարհանաց սատի՝ զերես թեքեցի դէպ ի տուն եղբայրացելոյն ինձ Մնացականայ։ Դուռնն բաց էր, իբրև ի ներքս մտաք՝ յարեան Մնացական և զառամեալ մայր նորա, և շտապաւ փախուցեալ ի սենեակ մի տանն՝ ընդդէմ փակեցին երեսաց զդուռնն։ Տագնապ և տարակոյս պաշարեցին զիս. փոքր մի լուռ եւեթ ընդարմացայ, և ասելով ցՍուքի. «Ահա՛ քեզ Արցախային բարեկամութեան հանգամանք». սկսայ մի ըստ միոջէ պատմել նմա զանցեալ սիրոյ և զվայելից մերոց։ «Ե՛կ, ասէ նա, երթիցուք ի պանդոկ անդր վաճառանոցին. միթէ՞ տեղւոյ պակասութիւն կայ մեզ»։ Եւ իբրև այր իւրաքանչիւր զերասանակ երիվարաց կալեալ արտաքս ելանէաք, ել Մնացական, և ահահար և դողահար հեռի հեռի զհետ գայր։ Անագան ուրեմն սրտապնդեալ առ սակաւիկ մի՝ եհարց ցՍուքի. «Ատա ափի՛ լհա՛ տրացօդ հու ա՞»։—«Քնա, քնծահա՛ր, քուացեյա՞ս»,—պատասխանեաց նմա Սուքի, և նա իսկոյն եկեալ փարեցաւ զինև, արտասուեաց և ասաց. «Ատա քը մատաղ՝ Մսրո՛բ, դու դըռմըռէլ չը՞ս. խի՛բա ըսէյիսըն». և սկսաւ պատմել մեզ, թէ ո՛րպէս գոյժ մահու ի հարուածոյ կոճին իմոյ՝ հաս առնոսա ի Հաղբատայ, և թէ ո՛րպէս տուն Թառումեանց սուգ արար վասն իմ, և պատարագ վասն հոգւոյ իմոյ ի Նորաշէն յեկեղեցւոջ։ Եւ թէ զարդիս յանկարծ երևել իմ աչաց իւրեանց՝ զիա՞րդ ահաբեկս արար, զոգի ինչ ի գերեզմանաց յարուցեալ համարելով, և այլն»։

Այսպէս արդարացուցեալ նորա զփախուստն յերեսաց իմոց՝ բազում թախանձանօք հաւանեցոյց զիս ընդ յարկաւ իւրով մտանել վերստին, բայց յառաջոյ կազրապետելով և նախ զմայրն համոզելով, որպէս և առ աղայ Ջոհրաբ գնալով և սուգելով նմա ըզճըշմարտութիւն կենաց իմոց։

Երիվար ընտիր առընթեր, երկերիւր ոսկի զուտ ի ծոցի, և սարս

զգեստուց ի պատրաստի ունելով՝ որքան կարացի՝ ծանր ծախեցի. Վասնորոյ և ընդ հրաւէր աղայ Ջոհրապայ ամենևին ո՛չ զիջայ՝ մինչև առաքեաց զորդիս եղբօր իւրոյ զՅովհաննէս և Կարապետ, և տարաւ զիս ի տուն իւր: Կացի առ նմա զաւուրս երիս, պատմեցի նմա զպատճառ, զեղանակ և զվախճան ելից իմոց. բազմօք յորդորեցայ դառնալ առ տէր Ներսէս ի Տփղիս՝ կամ առ Հայրապետն սուրբ՝ ի Հաղբատ, այլ չեղև հնար: «Կա՛ց ուրեմն,— ասաց,— և պսակեցից զքեզ»: Պատասխանեցի. «Պսակ ուսումն է ինձ. որ ինչ ծախք երթան պսակին՝ ուսման շնորհեա՛, զի յաւիտեան օրհնեցից զկեանս քոյ»: «Քանի՞ բէսի օնըս, խօխա՛»,— ասաց, այսինքն՝ աքասի: Ասացի. «Երկերիւր ոսկիս ի Մարգարտայ՝ և երեսուն ի Խաչատուր վարդապետէ»: Եւ պատմեցի ճշմարտութեամբ զմիջոցսն՝ որով ստացայ ինձ զնոսին: Վասն աւետչէի Խաչատուր վարդապետին շատ ծիծաղելով՝ ասաց. «Սուրբ է քեզ այդ փող»: Զգումար հօրաքեռ իմում դարձոյց յիւրմէ, զի և զնա սիրէր յոյժ, և յաւել ինձ ոսկիս հարիւր և եօթանասուն, տալով և ի տեղիս տեղիս գիր յանձնարարական ի վերայ ճրագանց իւրոց:

Եկի հասի ի Տաթև, ուր Մարտիրոս արքեպիսկոպոս իբրև եգիտ զիս անյուսև յորդորանաց իւրոց ի դարձ, համոզեաց մնալ առ իւր. «Եւ ի միջոցի երկուց ամսոց ժողովեցից առ քեզ,— ասէ,— մանկունս աւելի քան զհինգ հարիւր, և զԱնապատն Մեծ կարգեցից քեզ ի վարժարան. որքան կարես ուսո՛ նոցա զընթեռնուլ և զգրել»: Ես ինքնին պէտս ունիմ ուսանելոյ, որում և զոհ արարի զամենայն ակնկալութիւն հանգերձելոյն. «Ո՛չ մնամ»,— պատասխանի արարի, և ի վաղիւ անդր դեռ ննջէր նա, մինչ ես հեծայ ի Բռնակոթ Սիսիանայ, զի երկնչէի՝ թէ մի գուցէ բռնաբարիցէ զիս ի կալն կամ ի դառնալն անդրէն: Անտի եկի ի Նախչուան առ պարոն Սարգիս վանատուր հայրապետին, յորժամ անդ էր, և մատուցի նմա զգիր աղայ Ջոհրապայ: Սիրով ընկալաւ զիս, և առ ի չգոյէ երթևեկութեան՝ ծանրացայ նմա զաւուրս հնգետասան: Որովհետև զօրք Աբբաս Միրզայի՝ որ իշխէր Ատրպատականի, և Հասան խանի եղբօր բղեշխին Երևանայ դեռ կռուէին ընդ Մարաց բնակելոց ի Վաղարշակերտ գաւառի՝ երթևեկ կարաւանաց լռեալք էին: Ճանապարհ առ ի Կոստանդնուպօլիս ընդ այն անկանէր, և բաց ի վտանգաց անտի գերութեան և տարադրութեան՝ նաև զմօտալուտ զմահուն վտանգ սպառնայր ինձ: Վասնորոյ խորհրդով բարերար ասպնջականիս, փոխեցի զերասանակ մտաց իմոց դէպ ի Պարսկաստան, զի անտի

ի Հնդիկս անցից գնացից, զորոյ սքանչելի նորութեանց ո՛չ սակաւ տեղեկութիւնս տուեալ էր ինձ Թովմասայ վարդապետի։ Պարտաւորեցայ փոխել զձև վանականութեան իմոյ, և զգենուլ զաշխարհական վրացին կոչեցեալ տարազ, բայց զերկարութիւն հերաց իմոց, որ ձգէր զուսովք ի խոնարհ, ըստ կարկանալոյ իմոյ հոգևորականացն Ռուսաց՝ նոյն թողի մնալ։ Կալայ ինձ ծառայ զՅովիկ ոմն ի ջերե-լոցն Բասենոյ, գնեցի նմա զձի, և ընկերացայ Մաղսուդ խանի Նախչուանցւոյ ընդ ճանապարհ գետեզերացն Երասխայ, ընդ Ազատ գաւառ։ Սոյն այս Մաղսուդ խան Քանգեարլու կոչեցեալ (որպէս կոչին և ամենայն մահմէտականք ի սահմանս Նախչուանու բնակեալք) էր ի տանուտիրական տոհմէ Մաղսուդեանց, որք յառաջ քան զմեծն Շահաբաս տիրէին կողմանց այսոցիկ։ Այր լիահասակ էր սա ըստ արտաքին երևութիւն, աղուակն, կցայօն և արծռունգն. վարուք ընտելագոյն, և եթէ համարձակեցայց ասել, մարդասիրագոյն և ազատախորհուրդ ոմն ի մէջ համօրէն ազգին, որոց եսն պատահեցայ։ Իբրև անցաք նաւով ընդ Երասխ գետ՝ յամի 1823 յամսեան Մայիսի ինն, և յուղի անկաք դէպ ի հարաւ ընդ կապանն Կարկառոյ՝ Մաղսուդ խան խօսս ի մէջ առեալ ասաց ցիս, թէ՝

«Գիտիցե՞ս, մանո՛ւկ, զուսումն գրոց», և յընդունել իմում, եհարց ապա, թէ՝ «Ով էր Իսա». պատասխանեցի.

«Հրեշտակ մեծի ուխտին, Փրկիչ աշխարհի, և Բան Աստուծոյ»։

«Քանի՞ առաքեալս (հավարիուն) ունէր նա». ասացի.

«Երկոտասան և աշակերտս եւթանասուն. որք հրաման ընկալան ի նմանէ քարոզել զարքայութիւն Աստուծոյ ամենայն մարդկան, զի որ հաւատասցի բանիւ նոցա՝ կեցցէ, և որ ո՛չն հաւատասցէ՝ դատապարտեսցի՛»։

«Դոյնպէս էր,—ասէ,—և մերս պատգամաբեր, որ առաքեալ յԱստուծոյ քարոզ կենաց աշխարհի՝ արար իւր իմամս երկոտասան, և դարձոյց զաշխարհն կռոցն ի պաշտելութենէ, զոր դուքդ արհամարհէք անխիղճ իմն թերահաւատութեամբ»։

«Զիա՞րդ «դոյնպէս», խա՛ն. թուիցի՞ ձեզ, եթէ Մահումէդ ըստ օրինակին Քրիստոսի եկն յաշխարհ, և առաքեաց զքարոզս փրկութեան հոգւոց մարդկան»։

«Եւ ընդէ՞ր ո՛չ»։

«Գիտցե՞ս արդեօք զի՛ ես քրիստոնեայ եմ»։

«Գիտեմ»,—ասէ։

«Ուրեմն ո՛չ կարեմ հաւատալ նմանաբանութեան այդմիկ»։

«Ո՞չ ասաց ձեզ Իսա, թէ գալոց իցէ Մահումէդ, այսինքն

*մխիթարիչն, և ուսուցանելոց ձեզ զամենայն ճշմարտութեամբ»:*

*«Այո՛, ասաց նա թէ գայ մխիթարիչն՝ Հոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, սակայն ո՛չ ասաց, թէ գայ Մահմէդ»:*

*«Մահմէդ մխիթարիչ ասել է», կրկնեաց իշխանն:*

*«Իրաւ իցէ թերևս, բայց ուստի՞ ուսայք դուք թէ Իսայի հրամայեալ իցէ մեզ մխիթարիչդ հաւատալ»: Ասաց.*

*«Ձեր իսկ Աւետարանք յայտ առնեն, որք յերկնից իջին»: Պատասխանեցի.*

*«Հաւատա՞ս Աւետարանի մերում»: Պատասխանեաց.*

*«Ըստ մասին ևեթ»:*

*«Ընդէ՞ր»:*

*«Վասն զի փոփոխեցիք զտեղիս տեղիս ի Սուրբ Գրոց. որք գուշակէին զմարգարէն մեծ՝ Մահմեդէ, և այն՝ որ էջն յերկնից՝ վերացաւ կրկին, և մնաց ձեզ միայն մրուրն ի պարզութեանց նորա»:*

*«Ո՛վ պատմեաց ձեզ զայդ, խա՛ն»:*

*«Աստուած յԱլղուրանի մերում»,—ասաց:*

*«Ուրեմն»՝ կրկնեցի և լռեցի, ցուցեալ նմա թէ երկնչէի յառաջ վարել զընթացս վիճին. իսկ նա ստիպաւ իմն հրամայեաց ինձ ազատաբար մատուցանել զառաջեաւ զփաստս իմոց կասկածանաց: «Եթէ ասացից, խա՛ն, թէ Աստուած երբէք ո՛չ խօսեցաւ ի Ղուրանի. քարկոծել հրամայիցե՞ս զիս»:*

*«Իրաւունք են զենպետաց և խստակրօն իսլամաց մերոց զայդ առնել, հրամանաւ Ղուրանին, բայց ես ինքն Քանգեառլու ո՛ք եմ,— ասէ,—և շատ ծանօթ Մսեհեաց, այսինքն քրիստոնէից, վասնորոյ և մեղմով իւիք խնայեմ տղայական հասակիդ»:*

*«Ուրեմն Աստուած ո՛չ երբէք խօսեցաւ ի Ղուրանի»:*

*«Ի հարկէ,—ասէ,—դու այդպէս կարես արդարացուցանել զբան քո, և մեք այսպէս: Միշտ գիրք գրոց հակառակ խօսին»:*

*«Բայց ո՛չ այն գիրք, որք ի հոգւոյն Աստուծոյ շնչեցան առ մեզ»:*

*«Դու զքո Աւետարանդ համարիս շնչեալ ի հոգւոյն Աստուծոյ. և մեք՝ զմեր Ղուրանն. բայց ե՛կ զանց արասցուք զերկոքումբք ևս, և հաւաստեօք բանին յայտնեսցուք իրեաց զգերազանցութիւն երկաքանչիւր հաւատոցս: Եւ յայնժամ տեսանելով տեսանիցես, զի դէն Մահմեդի է գերագոյնն ամենայն կրօնից մարդկան: Եւ զի՞ն: առ այդ ասել կամիցիս ի պաշտպանութիւն դենի քում»,—ասէ խան.*

*«Եթէ անդստին իցէ մարդոյ, որ տեսանէ արարածս ի ներքոյ քան զինքն՝ մակաբերել և զէակս նոյնպէս ի վերոյ քան զինքն: Բոլ պարտ է զմտաւ ածել, զի որովհետև ո՛չ ինքն զինքն արար, և ո՛չ*

ծնողք նորա աշխատք ինչ եղեն կազմութեան զարմանալի դիից մարմնոյ նորա, պիտանութեան զգայարանացն, և զօրութեան վեհագունին ի նոսա՝ մտաց նորա, որպէս և ո՛չ անձամբ տիրելոյ ստորագոյն էակաց, այլ գոգցիր ի վերագոյն իմն հրամանէ՝ ճանաչել զհրամայողդ՝ արարիչ ամենայնի, և գերագոյն կառավար, ուստի և երկիւղածութեամբ պաշտօն հարկանել նմա՝ որ անուանեալ կոչիցի Աստուած։ Բայց ո՛չ կարէ՞ բնութիւն առանց սղալանաց առաջնորդել զմարդն առ նախկին էակն գոյացուցիչ ամենայնի»։

«Կարէ՛,—ասէ,—բայց ո՛չ միշտ առանց սղալանաց»։

«Ուրեմն ո՞ւր մարթ իցէ մեզ գտանել զճշմարտութիւն յայսքան կրօնից միջի»։

«Ի համեմատութեան մտաց քոց՝ ընդ պատգամաց կրօնի ուրուք»։

«Եւ այսպէս միտք ձեր համեմատին ընդ պատգամաց Ղուրանին, և միտք իմ ընդ պատուիրանաց Աւետարանին Յիսուսի. ուստի և ո՛չ ինչ փաստ վախճանական ելանէ աստուստ, ապահովել մեզ զգերազանցութիւն բաղդատութեանցն, որ են ի նոսա»։

«Ե՛կ ուրեմն,—ասաց,—ես և դու լիցուք անկրօնք, ի կղզի ինչ անծանօթ ընկեցիկք, և անտուստ նո՛ր եկեալ յաշխարհ, քննեսցուք զգիրս, և տեսցուք թէ ո՞ր մտաց մօտ, զայն կալցուք մեզ ի վարդապետ հաւատոյ»։

«Բայց չէ՞ կարելի, խա՛ն, եթէ որպէս տարբերերիմքս դիմօք, նոյնպէս և տարբեր եղեալ մտօք, մին զայս, և միւս՝ զայն նախամեծար համարիցիմք, և մնայցէ ճշմարտութիւն տակաւին անծանօթ ի մէնջ ի խորս գաղտնեաց։ Մանաւանդ՝ զի մի և նոյն ոք, երբեմն զայս և երբեմն զայն ընտրելով՝ փոփոխի. և որ փոփոխականն է, զիա՞րդ կարէ զանփոփոխն գտանել ճշմարտութիւն»։

«Զի՞նչ, ուրեմն անհաւատ մեռցուք բա՞»։

«Ո՛չ խա՛ն. այլ աղօթս մատուսցուք առ էակն անծանօթ, զի վասն փառաց իւրոց և բարութեանց՝ բացցէ զկափարանս մտաց մերոց, և յայտնեսցէ մեզ վճիտ պարզութեամբ զհաճութիւն կամաց իւրոց. որպէս զի ընտրել կարասցուք զբարին՝ և հետևել նմին»։

«Ալհամդուլիլա՞հ, արդ՝ ո՞ր իցէ հետևելին ըստ մտաց քոց. ահա՝ քեզ Ղուրան և Աւետարան»։

Յայնժամ բերեալ իմ օրինակս ինչ ի սրբոյ Աւետարանէն, և դժակառակս նոցին մուծեալ ի Ղուրանէ՝ և եղծեալ, հարցի ցնա, թէ ո՞ր ի նոցունց երևէր արժանի փառացն Աստուծոյ, փրկութեան և ապառնոյ մարդոյն, և համաշխարհական կառավարութեան աստի և հանդերձելոցն միանգամայն։

*«Մարտա՜ն քեզ, մարտա՜ն քեզ, մանո՛ւկ, և ու՞ր ընթերցար դու զՂուրան»։ Ապա թողեալ զխնդիրն կարևորագոյն՝ որ հուպ յամբոկն հասանէր, սկսաւ կեղծապատիր բանիւք ցուցանել բազմութեան այրուձի հետևակաց խրոց զգերազանցութիւն Մահմեաց՝ քան զՅուննեացն (զորս չարաչարս սատեան պարսիկք), և յաւելուլ թէ՝ ինքն ո՛չ խտրէր ինչ այնուհետև ուտել ի ձեռաց իմոց։ Քանզի ասէր, թէ սուրբ է նա՝ որ միայն զԱստուած՝ մեծ ասէ, «Ալլահ ու ակպար». թէպէտև զմարգարէ նորա՝ ոչ ընկալնուցու. և ահա՛ սա ըստ որում ո՛չ անհաւատ Աստուծոյ՝ սուրբ է մեզ։*

*«Բալի՝ բալի՝ խան»,—հնչեաց այրուձին յամենայն կողմանց, և ես խառնեալ ի հաղորդակցութիւն նոցա՝ զուարճալի իմն ճանապարհորդութեամբ ընդ հեզիկ առապար ձորոյն ի վեր մատուցեալ՝ հասաք փարախաւ և կիսով ի գիւղ մի Տաճկաց՝ Սուչա անուն, որ ունէր տունս իբրև 40, կառուցեալ ի ստորոտս ոստոյ իւիք մեծի լերինն՝ զոր իրաւունս համարէի կոչել մասն մեր Մասեաց, որ սկսեալ ի Հնդկաց և անցեալ ընդ Պարսկաստան և ընդ Մեծ և Փոքրն Հայս, երկայնի մինչև յեզերս Միջերկրական ծովուն, որոյ են Դրմբաւանդ, Էլբուրզ, Շմրու, Ալատաղ, Սաւալան, Սհէնդ, Սանատրուկ, Մասիս՝ և այլք՝ բարձրագոյն և մշտաձիւն կատարք նորա։ Այս լեառն դուն ուրեք երևեցուցանէ ինչ յաշխարհին Պարսից՝ քան ժայռ և առապարս սևանիշ որձաքարանց անջրդի և անպտուղ կուտակութիւնս խճից և աւազոց կոշտացելոց, և սոսկալի ամայութիւնս սկզբնական ոչնչութեան բնութեանն։ Ուրեք ուրեք ի ծործորս նորա ընթացեալ աղբերականց՝ հրաշալի իմն տեսարան ընծայեն բնակչաց երկրին։ Այլ մեք զանց արարեալ զհեռաւորօքն, զմերձակայն, զոր տեսաքն՝ ստորագրեսցո՛ւք՝ զասրասփելի քարալերինս Սուչայ, և զորս ի հարաւոյ ձգեալ ընթանան դէպ ի լերինս Կորդուաց։ Չի՛ք բոյս ի վերայ՝ որ պիտանի մարդկան և անասնոց, բաց ի գազից, յակքանացն և ի համասեռից նոցուն՝ փշոց։ Քարակոշկոճ են յոյժ, և ժայռք ի ժայռս կուտակեալ դժուարանցք ի մարդկեղէն արարածոց։ Ունի կիրճ իմն նեղ, երկայն և խոտորընթաց, Կարկառ կոչեցեալ, ընդ որ միայն է հնար անցանել կարաւանին։ Գտանին ի լերին այսմիկ էրէք և այծեմունք ազգի ազգիք, թռչունք որսոց՝ տեսակ տեսակ, և ի գազանաց մինչև ի վագր և առիւծ։ Վտակ ականակիտ ջրոյ անցանէ ընդ այն և թափի յԵրասխ, եկեալ ի դաշտէն Մարանդայ՝ Մեծին Հայոց։ Առ մեծ դիւրութիւն ճանապարհորդաց՝ ի տեղիս տեղիս կառուցեալ կան աշտարակք, բրգունք և մարտկոցք, որք եթէ հրազինուք վառիցին, և ի քաջակիրթ զօրաց պաշտպանի-*

ցին, արդարև անմատչելի մնան յամենայն եկամուտ թշնամեաց անտի. այլ՝ չիք ի նոսա՝ ո՛չ պահ մի, և ո՛չ հրացան, ուստի զօրք Ռուսաց անկասկած գրոհ տուեալ ընդ այն՝ երբ և կամիցինն՝ ունել կարեն զաշխարհն Պարսից։ Երկու կամ երեք ջրաղացք են ի ձորամիջի անդ կրճոյն՝ յորս մերձակայ գիւղօրայք աղան զնիւթս հացի։ Երկայնութիւն ոլորապտոյտ ընթացից նորա մինչև ի դաշտն Ջուլա, որ այն է աղաւաղութիւն Կարկառիս մեկոյ՝ է ինն հրասախ։ Յորժամ արտաքս ի զարհուրելի գեհիցն գաս՝ ծաղկածին ծածանի առաջի քոյ դաշտն սիզաւէտ, ընդ որ՝ դէպ յարևելս ընթացեալ կոյս՝ վեց հրասախաւ՝ հասանես ի վտակ ինչ անապական ջրոյ, առ որով կայ ջրաղաց, և կոչի Ջուլա. թերևս ի համանուն ի գեղջէն՝ ի հիւսիսոյ կառուցելոյ։ Աստ ի վայելուչ դաշտավայրի խառան արկեալ յոտս երիվարաց մերոց՝ թողաք ազատ ի վայելս փափկութեան դաշտին դալարւոյ, և մեք ըստ սովորականին՝ զրուցիւք ձանձրացուցաք ըզձերունին ապաժոյժ՝ ի փախուստ յաւիտենից. մինչև պատրաստեցաւ նեղան Մաղսուդայ, յեղինձն Պարսից և յարգանակն չրալից, ի խորովածէ, և ի զանազան տեսակս օշարակաց։ Տեղեակ ծիսի խրատութեան Պարսից՝ քանի մի վայրկենիւք յառաջ քան զայն՝ մեկնեցայ անտի. և այնինչ հանեալ ի մախաղէ իմմէ զհաց աստուծ ընթրէի՝ մին ի ծառայից անտի նորա բերեալ սկտեղբ անօթ եղնձոյ, խաշած մսոյ, և օշարակ, դրգալաւ միով անճոռնեաւ կկոցաձևով, մատոյց առաջի՝ ողջունիւ խանին իւրոյ, և ստիպաւ իմն պատուիրեաց, մի ինչ ունիլ, առանձինն, ցորչափ ուղեկիցն լինելոց իցեմ չնորհապարտ իշխանին։ «Վասնզի պատուիրեալ է նորա ինձ,— ասէ,—որոշել քեզ զայդ խան, անօթ, գաւաթ և դրգալ, բայց ջուր՝ ըմպիցես դու քոյով բաժակաւ, մինչև ի Դավրէժ»։ Վասն զի անհրնարին է Պարսից՝ որք զիսլամութիւն աշխարհին ճիշդ կանոնօք վարել կամիցին յանօթոյն հպելոյ ի քրիստոնէից՝ ուտել ինչ կամ ըմպել, մինչև ո՛չ մաքրեսցի՛ վերստին օծութեամբ անագին։ Այլ ես, որ պիղծ և պատուեալ միանգամայն՝ գոհութեամբ ընկալայ զերկոսին ևս։ Պիղծն՝ իբրև անհիմն վարկուած նոցա, զի ես յայնժամ ամենևին սուրբ համարէի զիս ինքն, և զպատիւն՝ ո՛չ իբրև ողորմութիւն այնորիկ՝ որ ի ձեռին ունի զսիրտս հզօրաց, իբրև սահան դիւրաշրջուն, այլ իբրև արդիւնք իմոց ճառատանաց՝ որով գնալով գնաց և բարձրացաւ եղջիւր ամբարտաւանութեան իմոյ։ Իբրև կերի և յագեցայ, փոխանակ փառս մատուցանելոյ խնամողին տիեզերաց՝ անկուշեալ զնա, սկսայ խօսել ի սրտի իմում, օրինակ զայս.

«Ահա՛ Տաճիկ. և տե՛ս զի՞րդ մեծարէ զիս. ով ո՛չ այնպէսն

արասցէ, յորժամ զչափ առնուցու զպատուականութեան իմոյ։ Եւ այս կարծիք՝ այնքան ամբարձին զմիտս ամբարշտութեան իմոյ մինչ ամօթ համարել ինձ խնամ տանել վաստակաբեկ անասնոյն, զոր յանչափս սիրէի, և ապաստան թողուլ զնա խնամոց Յովկայ։

Յարուցեալ ընդ արեգական առանց աղօթից՝ յինէն կողմանէ, ճանապարհ արարաք յեւս դալարաւէտ և ի ծաղկածին մարմանդս դաշտին ի Մարանդ գիւղաքաղաք։ Աստանօր մեծահանդէս շքով իջեւանեցաւ խանն, և զիս ինքն հիւր արար միում ի տաճիկ գիւղականացն, ըստ որում հայ որ ո՛չ էր անդ. և ըստ սովորականին՝ առաքեաց ընծիւս, որով և աղգոյ յոյժ ընծայեաց զիս յաչս տանուտեառնն։ 800 տունք են ի նմա. ունի վաճառանոց փոքրիկ շուրջ պատեալ դքառակուսի հրապարակաւ։ Ականակիտ առու իմն եկեալ ի Համզայ-չիման լերանց՝ անցանէ ի հարաւոյ ընդ հիւսիս։ Տունք բնակչացն են հողաշէնք, և են որք յարեւաթուրծ աղիւսոյ և ի կաւոյ կառուցեալք։ Տանիք առ հասարակ տափարակք են, որպէս և ամենայն Հայոց. յորս նոյչեն յամարանի բնակիչք նոցա, և ի ձմրան ստիպին քերել օր ըստ օրէ զձիւն նոցա, զի մի հալեալ կաթիլս կամ քանդմունս պատճառիցէ։ Մարանդ միանգամայն առեալ՝ է դաշտ իմն երկայնաձև յարևմտից յարևելս, ի հիւսիսոյ ունելով զլեռինսն Սուջայ, որ է մասն Ալանկէզ և Կապան լերանց, և ի հարաւոյ ըզ-Համզայ-չիման։ Սահմանակից է Հեր և Զարևանդ գաւառայ՝ եթէ մարթ ինչ իցէ ասել՝ Վասպուրականի. ունի այգիս խաղողոյ և պարտէզս ծառոց։ Բերէ զարի և ցորեան նոքաւ առատութեամբ. և զսեխ, զվարունկ, և զձմերուկ. այլ հարստահարութիւն Պարսից այնքան սաստկանայ ի վերայ ողորմելեացն՝ մինչ բաց ի կորկանէ և ի գարւոյ, չառնուլ ինչ զճաշակ քաղցրութեան աշխատանացն։ Յարևմտից ճանապարհին՝ որ հանէ ի վեր ընդ Համզայ-չիման՝ դէպ ի Սովիան գիւղ՝ է շիրիմ զմբեթաշէն, յոր աւանդութիւն բնակչաց ամփոփեալ դնէ զնոյեմզարայ կին Նոյի նահապետի, որ ի բազմաց ուխտիւք և խնկօք պատուեալ։ Վրիպական գրեն Վարդան[250]՝ Մատթէոս[251]՝ միանգամայն և հետևողք նոցա, թէ Ալփասլան առաջին[252] թաղեալ իցէ աստանօր. ընդ որում և բազումք ի սուլդանացն Պարսից. զի նա ըստ Ոքսոն գետ անցեալ ի Բերզէն՝ և ի նորիզմայ նետահարեալ մեռաւ և թաղեցաւ ի Մերու կամ ի Մէրվրնդ՝ ի Խորասան աշխարհի։

Եհաս այսօր կարավան յԱղուանից՝ յորում էին կարմրափաթեթ Հնդիկք երկու, կարի վտիտք մարմնով, նիհար, և նուրբ դիմօք, և բարակ բոլորեալ միջօք. որք եկեալք ի Գուջրաթայ՝ որպէս ասէինն՝

ուխտեցին Հրաքոտին ի Բաքու՝ և դառնային ուրախութեամբ ի հայրենիս իւրեանց։ Սոքա զնոր իմն եղանակ խօսից ի կիր առնուին՝ զոր ես ո՛չ հասկանայի, այլ զո՛ր բառ ի Թուրք և ի Պարսիկն արտասանէին՝ գրեթէ զամենայն զխ՝ զղ՝ և զք՝ կէ հնչէին։

Ի վաղիւ անդր խաղացաք ի Սովիան, որ էր գիւղ բնակեալ ի Տաճկաց՝ իբրև հարիւր յիսուն տանց։ Ունի այս գիւղ զգետն Սարդաւ՝ եկեալ ի Մարանդայ, որ ոռոգանէ զայգիս և զանդաստան նորա։ Ընդարձակածաւալ դաշտն, որ անկանի առաջոյ նորա յարևմտից յարևելս՝ մինչև ի Դավրէժ քաղաք՝ և անտի ցստորոտս մեծի լերին Սհէնդայ. ի հիւսիսոյ՝ յԱլադաղ լերանց մինչև ի լերինսն Սալաւանայ, և ի հարաւոյ՝ ցծովակն Որմեայ և ի լերինս Սլդուզաց։ Մատակարարէ նիւթ մեղեր անհամար փեթակաց գեղջս այսորիկ։ Առնրի սորուն՝ ի հիւսիսոյ ճանապարհին, երևէր աւերակ ինչ նախնի և հաստակառոյց իմն պանդոկի, որ լքեալ և ամայի։

Յայս դաշտ ընդարձակածաւալ խաղան գետորայքդ Սարտաւ, Սարդարակ, Աղի՝ Աճի՝ կամ Շոր, յորոյ վերայ է կամուրջ գեղեցիկ երեքկամարեան՝ մերձ ի քաղաքն Դավրէժ և սև գետակն Ուջան։ Ի հնումն կոչէր դաշտ Վարաժնունի։ Բաց ի մասնաւոր ինչ մարգաց ի ստորոտս լերանցն Ալադաղայ, և Սհէնդայ՝ սկսեալ ի Սովիանայ մինչև ցեզերսն Կապուտանի՝ երկիրն՝ զանգեալ գոլով ի ծծմբոյ, ի կպրոյ, յաղէ և ի բորակէ, ո՛չ միայն աղտաղտինս առնէ զնա և անբեր՝ այլև ենթակայ ահագին շարժմանց, և հանապազորդեան կործանմանց։ Յեղանակս ինչ ամառանն՝ յորժամ տօթանայ և ցամաքի այս դաշտ՝ օդերևոյթ իմն պատճառեալ ի զանազան ագից ցնդելոց ի վեր՝ պատկերանայ աչաց ամենազան կերպարանօք, զոր ես հիմն համարիմ բազմաց յանալի առասպելացն ի մէջ Հայոց և Պարսից։

Այնինչ դեռ ի Սովիան բացօթեայ գիշերէաք, տեղաց անձրև անհնարին յորդութեամբ՝ մինչև զգետորայ աշխարհին ընդ թումբս արտաքս զեղուլ, և զդաշտն գլխովին ի ծով ինչ համատարած փոխարկել։ Ի Սովիանայ ցԴավրէժ ճանապարհ հարթ ընթանայ. ընդ որ իբրև յուղի անկանէաք չուել՝ դադարեցան սահանք ջուրց, և թողին զկնի ձկունս այնքան առատութեամբ՝ մինչ մէն մի ի մէնջ անաշխատ հաւաքեաց զհարիւրս ի նոցանէ։ Քանզի սկսեալ զնոսա գետոց յանդորայ ցորենւոյ՝ և ի ցամաքելն չկարացեալ ընդ իւրեանս վարել, թուի, ի խուղելոյ ոստղիցն զկողս նոցա՝ մնային ապաստան ի խնամս ցամաքայնոց։ Ձկունք Աղւոյ կամ Շորին պատուականք են յոյժ։

Սատանօր արտաքս ընդ Հայաստան ելեալ՝ խորհեցայ թէպէտ զայլ և այլ սահմանս նորա ի վերադարձ շրջագայութեան իմում զննելս՝ յառաջ մատուցանել յամբողջութիւն մասանց մերոյ աշխարհիս, սակայն՝ այն զի ճանապարհ՝ որպէս և գրեմս՝ ուղղեցաւ, քարուք իմն վարկայ ըստ բուն յատկութեան ճանապարհորդի զընթացս անսայթաք պահել, և զպատահեալս անվրէպ շարադրել, քան եթէ պատ ի պատ պտուտմամբ զկարգ բանին աղաւաղել: Վասն որոյ ահա՛ քեզ Պարսկաստան ընդարձակագոյն ևս[253]:

Վերջ Ա. Ճառորոյն

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Մ. Դ. ԹԱՂԻԴԵԱՆՑ
# Ի
# ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՀԱՏՈՐ Բ

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

## ԱՆՈՒՆ

Զայս անուն ընկալաւ ընդարձակ տէրութիւն Պարսից ի Ֆարս* կամ ի Ֆարսիստան նահանգէ, որ ի հնումն Բերսապօլսաւն բարգաւաճէր քաղաքամարբ, և ի նորումս Շիրազաւ: Նախկին անուն սորա, ըստ ակնարկելոյ Աստուածաշունչ գրոց, է Եղամ, զորով գետն պատէր հզօր՝ Եփրատէս, և ի նմա լեռնադաւառք Խուժաստանի, և Լօռաստանի. յորոց ելեալ Եղիմացւոց՝ ընդարձակեցին զսահման տէրութեան իւրեանց ընդ հարաւ յարևելից ի վերայ Շօշաստանի և Պարսայ. և ընդ յարևմուտս՝ մինչև ի սահմանս գաւառացն Կրմանայ: Քսենոփոն յանդիման կացուցանէ զնոսա իբրև զբնակիչս լեռնակողմանց. յորմէ և հետագայ հեղինակք նոցա՝ ապականելով՝ որպէս միշտ, զՊարսիկ անուանակոչութիւնս Քուսի. որ այնինքն է նահանգ, գաւառ, կամ լեռնային՝ տառադարձուցին ի Քուսի, կամ ի Քիչ, սի. և ո՛չ թէ ի Գօսեայն տիրապետելոյ զայն սահման՝ որպէս Վէնկէնտ համարի: Նշանախեց նախնի անուան այսորիկ՝ պահի տակաւին, ասէ Դա՛նվէլ?, ի գաւառն Արդիլան. որ է** Արդ կամ Արզ Ելամայ, այսինքն երկիր Եղամայ, որ ի մէջ Քուրդըստանայ անկանի և Իրաղն Աճէմի. և կայ ի հիւսիսոյ հին Պարս նահանգի. յիւրում պարունակելով գաշխարհ Մարաց զհին, և ի

---

* Բազումք ի ֆարէս բառէ Եբրայեցւոց ստուգաբանեն զայս նշանակել զաշխարհ ձիոց կամ ձիաստան. բայց ի ձեռագիր մատեան ինչ Պարսից՝ որ կոչի Շիրազնամա, ընթեռնումք օրինակ զայս. «Գիտե՛ա, զի Պարս որդի Պահլաւայ որդւոյ Սեմայ որդւոյ Նոյի Աստուածախաղաղի հաստատեաց զինքն ի Պարս. ուստի և աշխարհն ընկալաւ զանուն. և ի հօրէ նորա ի Պահլաւայ՝ եկաց լեզուն Պահլաւիկ: Տե՛ս երես 200, ձան. «Սօս և Սօնդիպի» գրոց[1]:

** Եթէ գիտէր Դանվէլ Հայերէն՝ դնէր զաս ԱՐԴ ԵԼԱՄԱՅ՝ առանց տաճկացուցանելոյ զբանն:

հարաւային սահմանագլխի խրում, զարդի քաղաքն Ասպահան: Յորմէ սկսեալ խորենացւոյն մերոյ՝ մինչև Բալհ և յՅեբունայ՝ Քուստի Նիմրուզս անուանէ: Աստի անկանի մեծ աւազուտն անջրդի և աղտաղտին՝ մինչև յաշխարհ Պարթևեաց, զոր և անուանէ Քուստի Խորասան: Յարևելից հիւսիսոյ Խորասանայ՝ անկանէր նախնին Բակտրիա. որ այժմ Քաբուլաստան անուանի՝ բաժանեալ Քաշու, Ջիհոն, կամ Ոքսոս գետով՝ ի հնոյն Սողդոնիոյ՝ կամ Մավրուլնահրրայ. որ թարգմանի երկիր յայնկոյս գետոյն, և ընդ Բալխայ ի միասին կացուցանէ զմասն միապետութեան ինքնակալին Բուխարայ: Ի հարաւոյ սորա է Քաբուլ, որ ընդ Սագաստանի, Զաբուլաստանի, և Բիլուչստանի՝ կացուցանէ զնորն Աղուանաստան: Աշխարհ Պարսից ի բնակչաց իւրոց անուանի Իրան ու Թուրան: Իրանաւ իմանան նոքա զբովանդակ սահմանսն՝ որք անկանին յարևմտից և ի հարաւոյ Ջիհուն գետոյ. իսկ Թուրանաւ՝ զամենայն երկիրն յայնկոյս Ջիհունի: Միհր Ներսէհ գրէ զանձնէ վզրուկ զոլ Երան և Տաներան՝ առ Եղիշայի մերում[3]. թերևս յԱրեաց անտի՝ որք սկսեալ ի Մարաց և ի Պարսից, տիրէին մինչև ի Հնդիկս և ի ծովն Վրկանի:

ԴԻՐՔ ԵՒ ԼԵՐԻՆՔ

Պարսկաստան ըստ արդի մակերևութի իւրում, յանդիման կացուցանէ զահագին իմն և զընդարձակ անապատ անջրդի. շառաւիղեալ զօտեաւք լերանց կախելոց և անկախիցն ի Պարսկային Տորոսէ: Վտակք բղխեալք յայսցանէ ոռոգանեն զձորավայրս աշխարհին, որք բերովք պատուականօք իւրեանց՝ համարին յարազուարճ դրախտանի, որպէս և բազմամարդ մասն տէրութեան Պարսից: Ի հասարակի խօսելով, Պարսկաստան զուրկ է ի ջուրց: Միջոց նորա է դաշտ բարձրավանդակ. զոր ապացուցանեն քեզ մշտնջենաւոր ձիւնք ի կատարս լերանց նորա՝ որք չեն այնքան բարձրաբերձք: է երկիր իմն լեռնային, թէպէտև լերինք նորա ո՛չ երևեցուցանիցեն զուգաշար գօտիս. այլ մի զմիով դիզեալս յամենայն ուրեք՝ անկարգ և խառն կուտակութեամբ՝ որք սկսեալ յարևելից յարևմուտս՝ ձգին մինչև ի Փոքրն Ասիաստան: Ի մերձասահման դրից Մասսեաց ընդ իւրև գրկէ զԿորճայս մեր, և ըզԱտրրպատականն նահանգ, և անտի ընդ յարևելս ձգեալ զգօտի ինչ կրաքար լերանց՝ խոտորի դէպ ի հարաւային ծովեզերայս Կասբից. և փակէ ի մէջ իւր և ծովուն այնորիկ՝ զդաշտ արգաւանդ և բերրի:

Այս գոտիք՝ լերինք Հիւրկանիոյ անուանէին առ Նախնիս, և սահմանք նոցա դէպ ի ծովն կոյս՝ ըստ տեղագրութեան Ստրաբոնի, այնքան ի ծովն կոյս ցցուէին զօրէն քուոց՝ մինչ գործել զդահավէժ անհնարին. յորոց սակի էր և մերն Երասխ, որ ի բարձրաւանդակ քարանձաւաց ի վայր հոսելով՝ գործէ զահագին ջրակամարն ի Կասպան, ընդ որով անցանեն և մեծամեծ կարաւանք։ Յայս գոտի՝ որ այժմ էլբուրզ կամ Ալպօն կոչի, անկանէր այն հռչակաւոր կիրճ՝ որ ասիւր Դուռն Կասպից. և այժմ Կավվար, իբրև մետասան փարսախօք ի հիւսիսոյ յարևելից Տահրատանին Թէհրանայ։ Որ է անցք իմն փորեալ յապառաժի 200 գաղ երկայնութեամբ, այլ 28 գազաչափ ճանապարհին այնքան նեղ է՝ մինչ հազիւ տեղի տալ բեռնաբարձ գրաստու՝ առանց վտանգի։ Ընդ այս կիրճ թուի Աղէքսանդրին մեծի զհետ պնդել Դարեհի յաշխարհն Պարթևաց։ Տարածանեալ շար գօտվոյս ընդ յարևելս՝ պատէ զհիւսիսիւ Խորասանայ, ի բազում առաջս շառաւիղեալ ընդ հարաւ. ապա անցեալ ընդ Մաշադ, և ճապաղեալ ի սարադաշտին Հազարայ՝ ձգի ընդ հարաւ Բալհայ և խառնի ի Պարոպամեսեան գօտիս՝ ի հիւսիսոյ Քաբուլայ։

Գօտիք լերանց Քուրդստանայ էյվանդ՝ առ Եկբատանաւ, Սհէնդ՝ ի հիւսիսոյ Կապոտան ծովու, կամ Որմեան լճի, որ այժմ Տահի կոչի, անհամար շառաւիղօք լնուն զբովանդակ զայն սահման աշխարհին Մարաց՝ որ տարածեալ ձգէր մինչև յԱսպահան քաղաք։ Լերինք Բախտիարի կցորդք իմն համարեալ սմին՝ շարունակեն զերկայնութիւնս սորուն. սկսեալ ի ձորոյն Կարունայ մինչև ի Շիրազ ո՛չ այնքան հեռի ի ծոցոյն Պարսից։ Ապա թեքեալ ընդ արևելս, և ընդ մէջ հատեալ զԿրման՝ միանան ընդ գօտեացն, որք զՍադաստան ի Մակրանայ բաժանեն. և ապա ի միասին ընթացեալ՝ միանան ընդ լերանց Սուլիմանայ և Վոլիայ՝ որ ի գլուխ սահմանացն կայ Պարսից և Հնդկաց։ Մասնաւոր անուանս լերանց ի սորև ունիս տեսանել։

ՕԴ

«Աշխարհ տէրութեան հօր իմոյ,—ասաց Կիւրոս Կրսեր զՔսենոփոն,—է այնքան լայնատարած, մինչև ի բնակչաց անտի նորա՝ կէսք ի սառնամանեացն սառուցեալ սատակին, և կէսք՝ ի ջերմանէ արեգականն տօթախարշ այրին»։ Արդ թէպէտև Պարսկաստան ուրուական իմն է ինքնակալութեան Մեծին Կիւրոսի[4], սակայն դեռ ևս դէրք եզերացն անփոփոխ մնան։ Վասնզի ծովեզերայք Կաս-

պիականին վաթսուն ոտիւք ի խոնարհ գոլով քան զծովուն մակերեւոյթ՝ տօթագինք են յամառան, և ի ձմրան՝ մեղմագինք յոյժ, և խոնաւք։ Երկաթ փութով ժանկոտի, և դեղին գոյն բնակչացն յայտ առնէ զօդոցն անմաքրութիւն։ Բոյսք երկրին պարարտք, մանաւանդ՝ ուգ կամ քաղցրեղէգն շաքարի՝ որք զարդարեն զդաշտորայ Գիլանայ և զՄազանդարանի։ Ջլերինս նորա անտառախիտ զովացուցանեն ծառք ակակիայ, տալիայի, կաղնւոյ, շագանակի, մայրւոյ, նոճւոյ, և այլևայլ տեսակաց բարտւոյ։ Միջոց աշխարհին Պարսից՝ ունի օդ, յամառանն՝ սաստիկ ջերմ. և ի ձմրան՝ սաստիկ ցուրտ։ Սկսեալ ի Մարտ ամսոյ ցՄայիս՝ հնչեն անդ ուժգին հողմունք և մրրիկք կարկտաբերք ի վնաս բուսականացն առհասարակ։ Ի Մայիսէ ցՍեպտեմբեր՝ պարզին վերնոլորտք, ամպ երբէք չերևին յերկինս, ուստի և ցօղ չիք անդանօր, այլ ի գիշերի հնչէ սիգ հեզիկ։ Ի Սեպտեմբերէ մինչև ի Նոյեմբեր՝ յառնեն հողմունք վերստին, այլ օդ նորա չոր է յոյժ։ Ջինաբեր փոթորիկք յաջորդեն այնուհետև, այլ փայլատակունք դուն ուրեք։ Բարձրաբերձ լերինք նորա մեծապէս օգտեն օդոցն բարեխառնութեան, յամառան՝ խոնաւութիւն ցօղելով ի տօթ նորա, և ի ձմրան՝ պաշտպան կալով մրրկաց։ Նահանգն Պարս, մանաւանդ թէ և ձորն Շիրազայ է կարի բարեխառն ընդ տարին բոլոր։ Բայց յիջանել քում յեզերս Պարսկային ծոցոյն՝ նըշմարել կարես մեծամեծ փոփոխութիւնս բնութեան։ Ի բերանոցն Ինդոսի մինչև ի բերանս Կարուն գետոյ և Եփրատայ՝ անձկագոյն միջոցք դաշտացն՝ որ ընդ մէջ երիթացեալ լերանցն և ծովուն՝ անտարբեր նոյնանան օդով և հողով իւրեանց՝ Արաբիոյ, քան Պարսից. գի ընդ տարածութիւն իբրև քսան աստիճանաց՝ չունի իւր գետ նաւարկելի, այլ յամենայն ուրեք աւազուտս, և ի տեղիս տեղիս, անտառս արմաւենեաց, որք զօրէն կղզեաց և եթ՝ ամոքեն զաչս արևակէզ ճանապարհորդին։ Ջերմութիւն ամառան սաստիկ է յոյժ, և օդ երկրին վատառողջ և մահաբեր եկամտիցն անդանօր։ Խորշակն Սամելի կոչեցեալ. երբեմն զքաղաք մի ողջոյն կործանէ. և շատ անգամ զողորմելին կարավան։

ԱՒԱԶՈՒՏՔ ՊԱՐՍԻՑ

Մեծագոյն պակասութիւն բարեբեր աշխարհիս Պարսից, որպէս և օդոցն սաստիկ ջերմութեան պատճառք, են ընդարձակատարած և աղտաղտին աւազուտք նորա՝ որոց հինգ են գլխաւորք։ ա. Անապատն Ղարաղում, կամ Սև աւազ կոչեցեալ, ի հիւսիսոյ Խորասանայ։

բ. Շօրաքաթի Բզուրկ կամ Մեծ աղտաղտին՝ ընդ մէջ Խորասանայ և Իրաղն աճեմի 300 մղոն երկայնութեամբ, և 190 լայնութեամբ. որ կցի ընդ աւազուտին Կրմանայ և տարածանի ց400.000ս քառակուսի մղոնաց։ Յորոյ երեսս նստի աղ բիւրեղային՝ իբրև մատնաչափ ստուարութեամբ։ գ. Աւազուտն ձգեալ յեզերց անտի Հերմոնդայ գետոյն մինչև ի գօտիս լերանցն, որ զՍագաստան ի Մակրանայ բաժանեն, 450 մղոնօք երկայն, և ի Մուսկիայ, որ է գիւղ իմն ի գաւառին Սարաւանաց ի Մակուրան նահանգի՝ մինչև ի Յալկն Վերին Մակուրանայ, 200 մղոնօք լայն։ ե. Աւազուտն Կիաբայ, որ յարևելից Տիգրիթայ ձգի մինչև ի Շօշթէր, կամ ի Շօշն Շուշաստանի։ Այսոքիկ միահաղոյն առեալք, գրաւեն զերրորդ մասն աշխարհին Պարսից, և ի մասն համարին մեծի զօտոյն աւազուտ անապատին, որ ի ծովածաւալ անապատէն Կուբենայ կամ Չինաց՝ ձգի ի հիւսիսոյ, և ծաւալեալ ընդ համօրէն Արիա՝ ընդ մէջ փակէ զԲիլուջաստան, Գեդրոսիա և զնէժդ, և միանայ ընդ Ովկիանին Աւազուտացն Արաբիոյ՝ հողմունք զերեսօք քերելով սոցուն պատճառեն զտօթ աշխարհին Պարսից, և զՍամելի խորշակ։

ԼԻՃՔ

ԼիՃՔՆ Զարայ և Դուրայ յԱրիս աշխարհի Պարսից, որք ի հնումն Արիապաղոս՝ կոչէին, գրաւեն ընդ ինքեամբք զտարածութիւն 1100 քառակուսի մղոնաց։ Կապոտան Որմեայ. կամ Շահի Լիճն յԱտրպատական Նահանգի՝ զորոյ շրջապատն ինքնին չափեցի, 80 հրասախօք երկայն, և 30 լայն։ —Բապտիգան առ երի Շիրազայ. որ յինքն ընդունի զԲէնդամիր և զԿարուն գետոյս, և ունի զօրութիւն բիւրեղացուցանելոյ կամ աղապատելոյ զմարմինս ընկեցեալս ի խորս իւր։ Արևմուտք Սկիւթիոյ ունին լիճս մեծամեծս և աղիս. և ծովն Կասբից մեծագոյն ի լիճս համօրէն աշխարհի, համարիմ իբրև զմի ի նոցանէ. որ պարունակէ յինքեան մերձ 120.000 քառակուսի մղոնս։ ԼիճՆ Արալայ կամ Խորազմայ՝ Ղարաբօղազ, որ զՋիհուն ընդունի և զԱքսարդէս կամ զՔոիկան՝ մղոնս 9609, որք միահաղոյն առեալք՝ ընդունին գետս մեծամեծս և բազումս՝ առանց երևելի իմն անցս տալոյ ջուրց իւրեանց։

ԳԵՏՔ

Ի բաց առեալ զԵփրատ, զՏիգրիս և զԵրասխ՝ զմեծամեծ գետրայ աշխարհին Հայոց որք երբեմն պարապատէին զաշխարհա

Պարսից. իսկ այժմ ի սահմանս անկանին թագաւորութեան Թուրքաց և Ռուսաց, մնացեալ գետքն սեպհական աշխարհին Պարսից՝ սակաւաթիւք են յոյժ, և կարի խմն ղուզնաքեայք։ Ի գետս Ատրպատականի՝ որք անկանին ի լիճն Որմեայ՝ է Աճի առ Դավրէժաւ. հեռի ի Նմանէ իբրև միով փարսախաւ. Սոֆեան, Ուչան, Սարդարակ, Սարտապ, Ջաւ կամ Սավի, Գօզան, Բնաբ, Ջղաթի, Թաթաւու, Նազլուչայ Որմեայ, և Սաղամաս, հանդերձ այլևայլ վտակօք իւրեանց։ Ի սահմանս Զանկանայ. յայնկոյս և յայսկոյս լերին Ընձու կամ Ղաբլանքուհի՝ են գետն Միանայ. որ ունի ի վերայ կամուրջ քառասնակամար . Ղզլօղան՝ որ թուի ինձ Գովզանն Սուրբ Գրոց. որ հոսի ի ծովն Կասբից։ Ի սահմանս Ղազբինայ է մի միայն գետ՝ Փարսայուն, որ ի հնումն Կիւրոս անուանէր. ի սահմանին Թէհրանայ՝ Քարաջ. և ի սահմանին Ղումայ՝ Ապիշօր կամ Դալլաքի. յԱսպահան՝ Զանդարուտ միայն. և ի Շիրազ՝ Բենդամիր և Կարէն։ Ի դաշտին Բուշեռայ՝ Դալլաքի։ Իսկ որք խառնին ի Տիգրիս՝ ի Նարաւոյ են, Կերա կամ Հաւիզա՝ որ գայ ի Քրմանշահէ բազում վտակս յինքն ընկալեալ։ Աբդալ զՇուշաստան ոռոգանէ՝ համարեալ Եւլէոսն կամ Ուլաի Դանիէլի, որ ընդ Կարուն գետոյ խառնեալ՝ բազում բերանօք հոսի ի ծոցն Պարսից։ Ջաբ կամ հնոցն՝ Որոատէս զՇուշթէր ի Պարսայ հատանէ, և ի ծոցն հոսի իւր։ Սէլդէն կամ Ոդոս Խորասանայ՝ անհամար վտականի ընդունելով ի լերանց Մազանդարանայ, գայ խառնի ի Կասբից ծով՝ ընդ Բաղկանի։ Էլմունդ՝ որ Եդիմարդէրն կոչէր առ Նախնեօք, գայ ի լերանցն Հազարայ ի հիւսիսոյ Քաբօլայ, երթայ ընդ Սէյիստան և զանջրդիս նորա ոռոգանելով՝ խառնի ի Լիճն Զարայ։ Միւս այլ ամենայն գետորայ միջոց աշխարհին՝ ընդ աւազովք անհետանան։ Բայց յայսցանէ ունի Պարսկաստան և անհամար ջրանցս կամ քարհիզս հանեալս աստ և անդ՝ ի զովութիւն անդաստանաց իւրոց. վորոց ստորև փոքր ի շատէ ծանօթս տացուք։

## ԲԵՐՔ

Թէ ի պատճառս մեծամեծ աղտաղտին անապատաց, ընդհանուր պակասութեանց, և թէ քաղաքական պատերազմաց, անկանոն կառավարութեանց՝ բարբարոս տերանց նորա, նա և մեծամեծ և ջրարբին դաշտք աշխարհին Պարսից՝ խոպան և անգործ մնան ի հերկոց անտի։ Խորասան, որ ի հնումն խիտ առ խիտ լցեալ բազմամարդ և ծաղկածին քաղաքօք և գիւղօրէիւք նոցին ստնտուօք՝ առ այժմ

ամայացեալ կայ ի պատճառս խուժադուժ նախարարաց աշխարհին մարտնչելոյ ընդ միմեանս, և նշկահելոյ տէրութեան Պարսից։ Հարաւակողմն Խուժաստանի, ջրարբի և արգաւանդահող երկիր՝ ընդ որ եմն շրջեցայ՝ ո՛չ ինչ ընդհատ երևի ներկա յաղտաղտին աւազուտացն աշխարհին։ Գաւառքն հարաւակողմանք ծովուն Կասբից՝ որոց զնմանիս յառատութեան բերոց՝ չիք ուրեք տեսանելի ի համօրէն Պարսկաստան, հարստահարութեամբ բռնաւոր իշխողաց իւրեանց՝ օրըստօրէ անշքանան։ Այսպէս՝ քաններորդ մասն Պարսից հազիւ մշակեալ՝ բերէ ցորեան առատ, գարի, կորեակ, վարսակ, բամբակ, բրինձ, կտաւատ, կնճիթ, և զամենայն ազգս պտղոց պատուականաց։ Թուզ, նուռն, թութ, նուշ, սանձ և ծիրան՝ ի Պարսից ածան յԵւրոպա։ Նարինջ և լիմոն առ Կասբից ծոցովն։ Սեխ, ձմերուկ, և մեղրապտուղք Պարսից. մանաւանդ Խորասանայն և Ասպահանան՝ հանդերձ սերկևլաւ վերջնոյն՝ աննմանք են ի համօրէն աշխարհի։ Գինի Շիրազայ, Նաջաֆաբադայ և Եզդայ՝ ազնիւք։ Բերէ նաև զկանեփ, զխաշնդեղ, զծխախոտ, ընտիրն ի Շիրազ. զմեղր, զգազպէ, զքրքում, զռետին, մաղտաքէ, զանազան տեսակս խիժից, զալաժահր, և զգխտոր։ Իսկ շերամն որ ի Ռաշտ՝ ամի ամի կալոցս 20000. որ և է մեծագոյն վաճառ նորա։ —Ի կենդանեաց նորա պատուականագոյն է ձին, յորմէ և անուն ընկալաւ աշխարհն՝ Ձիաստան. գեղեցիկ են կերպարանօք քան զձիս Արաբացւոց. թէև ստորին քան զնոսա արագութեամբ. բազում տեսակք են ձիոց, այլ զօրական Պարսիկ գեր ի վերոյ համարի զերիվարն Թուրքմանաց։ Ուղտք Խորասանայ ոչինչ իւիք նուազունք են քան զԱրաբացւոցն. ջորիք նոցա մեծագինք, տեսակ ինչ սպիտակ իշոյ մուծաւ անդր յԱրաբիոյ, և աճի ի Բուշեռ, ի Քաշան և ի ջերմին գաւառս նոցա։ Արջառք, ոչխարք մեծադմակք, ցիռք և այծեմունք բազումք։ Իսկ հաւուց որսականաց բազմազոյն տեսակ, և ի գազանաց անտի առիւծ, վագր, յոզ, գայլ, բորենի, աղուէս և ճագար։ —Ի մանաւորի ազնիւ է մորթ կատուին Արդաւելայ, և շանջրոյ։

## ՀԱՆՔ

Թէպէտ և աշխարհ լեռնային իցէ Պարսկաստան, տակաւին առ յետին պակասութեան նիւթոյ կրակի՝ որպէս ինձ թուի, ո՛չ ինչ ի հանքաց նորա փոխարինեցին անբաւութեան ծախուց փորձառուաց իւրեանց։ Աղն, հասարակեալ գոլով յաշխարհի այսմիկ, չկացուցանէ ինչ զնիւթ վաճառաց, եթէ ո՛չ զուն ուրեք և նթ։ Պղնձահանքն՝ որ ի

լերինս Մազանդարանայ և Քրմանայ՝ արտադրեն պղինձ ըստ բաւականին։ Իսկ յԱտրպատական աշխարհի, առ մերով ժամանակաւ մեծագանձ ծախուք եբաց հանքս պղնձոյ մեծանուն Սէթ խան Ծատուրեան Նոր Ջուղայեցի՝ մեծափառ իշխան Հայկազնեայ։ Սա ի մանկութենէ անտի երթեալ յԱնգղիա, ուսանի անդ զսկզբունս հանքաբանական արուեստին. և գանձ բազում առեալ ընդ իւր՝ առ Ֆատալեաւն արքայիւ Պարսից՝ գայ յաշխարհն Պարսից. և նախ բանայ իւր զհանք պղնձոյ ի Շխէնդարայ անուանեալ գեղջ, ի լերին Ղաբլանքուհայ. յարևելից հարաւոյ աւանին Միայնոյ. բայց յետ մեծամեծ ծախուցն և պակասութեան նիւթոյ կրակի՝ գայ ապա ի կողմանս Ղարադաղի, ի հիւսիսոյ Դավրէժոյ՝ ութն փարսախօք հեռի ի նմանէ, և բանայ անդ ի միջոցի անտառախիտ լերանց զմեծ հանքն պղնձոյ. յորոյ վերայ ծախեալ նորա զիւր բովանդակ հարստութիւն՝ եգիտ ի նմա և զարծաթ և զոսկի եւ։ Բայց ի ըսպառել գանձուցն, և ի պակասել թոշակաց վարձկանաց նորա՝ գրեա՛ թէ խափանեալ եկաց այս մեծ աղբիւր հարստութեան համօրէն աշխարհին Պարսից, մինչև յետ մեռանելոյ Ֆատալեայ՝ և յաջորդելոյ նմին թոռին նորա Մահմադ Միրզայի, գնացեալ սորա ի Թէհրան՝ մատոյց նմա զոսկի կոնք մի՝ և սրուակ յոսկւոյն Ատրրպատականի. և ընկալաւ ի նմանէ զհրովարտակ ի վերայ հարկացն Ատրպատականի գոյացուցանել անտուստ 200000 թումանս. և նովին ի գործ դնել զհանքն և ձուլել տէրութեան Պարսից 70 թընդանօթս։ Այր կակուղ երեսօք գոլով սա՝ և շռայլ ձեռօք, ցնցղեաց պարգևի մասամբ զմեծ մասն այնր մեծի գումարոյ. զմնացելոց նորա զմասն եկուլ Պարսիկ խաբէութիւն. իսկ մնացելովքն ջանացեալ՝ ձուլեաց 57 թնդանօթս, այնքան հրաշակերտս՝ մինչ զնմանիս նոցա չտեսանել իմ յաշխարհին Պարսից. թէպէտև որք էինն անդ՝ բերեալք էին յԱնգղիոյ՝ ի Նոր բովուցն Հեփեստեանց։

Ի սակս երկպառակութեան ի մէջ արքային Պարսից և դեսպանին Անգղիոյ, յաղագս կռուոյն Հէրաթայ՝ և հանքն երկաթոյ, զոր բազում ծախիւք բացեալ էր սպարապետ զօրացն Պարսից՝ Սր Հէնրի Բիթուն Անգղիացի, ի դառնալ իւրում յետս ի պաշտօնատարութենէ Պարսից, և զայն կորզեալ արքայի ի ձեռաց սպարապետին. յանձնէ կառավարութեան Սէթ խանի մերոյ. որով և պատիւ նորա՝ որպէս և շուք իշխանութեան զնալով գնայ և մեծանայ Աստուծով։ Արդ ի հանքաց անտի՝ որք են ի ձեռս սորուն արտադրին պղինձ, քարմարցանկ, արճիճ, արծաթ, և ոսկի սակաւ....

Պատուական հանք արծաթոյ ելանեն ի Բուխարայ. ծծումբ և բո-

րակ ի Դմբաւընդ. Գոճազմ, Ֆիրօզայ՝ այն ինչ կապոյտ սեպհական Պարսկաստանի, ելանէ ի լերանցն Խորասանայ, ի Նիւշապուրհ քաղաքի: Հիւսիսային լերինք լի են մարմարենեօք: Եւ մի ի մեծածախ հանքաց նորա է նաւթն և կուպր, որոց երկու են տեսակք՝ սպիտակ և սեաւ: Ի կպրոյ սատի բազում են հանք յԻրաղն Արաբի կարգացեալ բաժնին. այլ առատագոյն առ երի Քերկուկայ, զոր աչօք իսկ տեսի, որ ի վար արկանէր ի բնակչաց այնոցիկ կողմանց իբրև զճիւթ և իբրև զնիւթ ճրագի: Սպիտակն անուանեալ նաւթ, որ իրօք այնպէս, զտանի իբրև զիւղ յերեսս ջուրց ծաւալեալ. այլ է թանձր նման ճրագուի՝ առաւել քան կպրոյ. որոյ լոյս պայծառ է, և հոտ ո՛չ այնքան զզուելի, որպէս զճիւթոյն: Երկու աղբերք են այսր նիւթոյ յաշխարհին Պարսայ մերձ ի Դալաքի, այլ բազմաթիւ և բազմօք առաւելեալ քան զնոսին, աղբերքն Բաքուայ յարևմտից Կասպիական ծովուն: Տեսակ ինչ ազնիւ քարաձիւթոյ կամ մոմայի ելանէ ի լերանց անտի Քրմանայ և Զարմհալայ մերձ յԱհմադաբատն գիւղ. որք են մենավաճառ արքունականք, և հանք նոցա կնքին մատանեաւ և պահին զգուշութեամբ ի զօրաց նորա: Ի լերինս Ղարադաղայ ելանէ երկաթ բազում. ես և՝ հանքային աղբիւրք յամենայն ուրեք. մանաւանդ մարմարոնին ի Խանագահ, ցնդաղաջրոյն՝ ի Շիշաւան, Անախաթունն՝ և ի Մարաղա. զորոց ստորև:

## ՏԷՐՈՒԹԻՒՆ

Տէրութիւն Պարսից ի Փիշդադաղեանց անտի՝ մինչև ի Ղաճարեանց հարստութիւն՝ եղև միշտ, և է միահեծան ինքնակալութիւն, զոր վարէ շահ նոցա բացարձակ իշխանութեամբ: Կամք իւր օրէնք են երկրի, և կեանք ժողովրդեան իւրոյ՝ կամաց իւրոց խաղալիկ: Թէպէտև յամենայն կողմանց յապաւիցի սահման տէրութեան նորա, թէպէտև յամենայնի յաղթեալ և նկուն լիցի յազգաց օտարաց, տակաւին շահնշահ է նա՝ և աղօթարան, կամ լաւ ևս ասել նպատակ երկրպագութեան ամենայն ազգաց: Յիրս աշխարհականս և ի հոգեւորականս միանգամայն՝ է բացարձակ միապետ: Զի գումարէ զզօրս, կարգէ նոցա զօրագլուխս, իշխանացուցանէ զո՛ և կամի, և տայ նոցա զհրամանատարութիւն նահանգաց, բայց և յանկարծ փոխէ զիւր միտս, զբարձրացուցեալս իւր խոնարհեցուցանէ, ի տանջանս կախաղանաց քաղէ զկեանս նոցա, զկանայս և զորդիսն գրաւէ փոխանակ իրական և դրական պահանջիցն իւրոց, և ընդ

մեռեալս՝ կամ ընդ կարի անարգս դնէ զբաժին նոցա։ Կարգէ սա և անկարգէ զդենպետս ի վերայ հոգևորական մասին ժողովրդեան իւրոյ՝ ըստ քաղաքացի քաղաքաց, զորս և մուշտահիդս անուանէ. և տայ նոցա բացարձակ իշխանութիւն դատելոյ զհպատակս իւր ըստ պատգամաց Ղուրանին։ Բայց այս անուն իմն է. զի և նոցա կամք են օրէնք՝ առ վերջին թերութեամբ բանի Ղուրանին։

Իշխանք նոցա խանք անուանին. որոյ նոյն է նշանակութիւն որպէս և ի մերումս՝ իշխանին։ Թէ ինքնին ինքնակալն, և թէ մարզպանք նորա առ հասարակք, և զօրավարք, ըստ մեծի մասին տգէտք գոլով ի գրոց՝ կառավարեն զգործս զայնոսիկ մեծամեծս ի ձեռն դպրաց. զորս և միրզայս անուանեն. որոց գոլով արք թիւրք և նենգժուտք, զո՛ր կամին՝ արդարացուցանեն ի հաշուի իւրեանց, և զորս կամին, դատապարտեն։ Աստի է, զի այնքան սաստիկ բարբարոսութիւն ինքնակալաց ոմանց Պարսից, տեղի ետ այնքան մեծամեծ ապստամբութեանց՝ որով և քաղաքային պատերազմաց՝ յեղծութիւն դատողացն ասեմ, զաշխարհն Պարսից։ Իսկ ի մասնաւորի՝ դենպետք նոցա յարուցին ժամանակ առ ժամանակ զընդհանուր կործանումն աշխարհի իւրեանց... Եթէ դէպ լիցի արքայի ընդունիլ զդեսպանս դաշնակից և դրացի տէրութեանց, կամ զհանդէս կատարել զՆովրուզի կամ զՄուհարրամին, այսօրինակ ճոխանայ ի փառսն իւրում։ Թագ ի գլուխ եդեալ զականակուռ, և պասմուճան մարգարտահիւս և ականազարդ զիւրեաւ զգեցեալ՝ կապէ բազպան և լանջապանակ գոհարախիտ ի բազուկս և ի կուրծ, գօտի մարգարտեայ ընդ մէջ ածէ, և սուսեր ոսկեպատեան ընդելուզեալ ակամբք պատուականօք յազդեր իւրում, բազմի յաթոռն Սիրամարգեան, զոր ի Դիլլի մայրաքաղաքէն Հնդկաց՝ եբեր ասեն Նադրշահ. համակ ականակապ և ի վերջաւորս ճառագայթարձակ սփիւռ ճաճանչեալ ազնուագին գոհարօք, ի ձև տտան սիրամարգի։ Առաջեաւ դնի նորա սկուտղ մեծ, և ի նմին գունտ ոսկի. առ ի ցոյց աշխարհակալութեան նորա ի վերայ համօրէն հողագնտոյս։ Ապա դնի խորխոռակ արքայի գալարածոյ և զարմանակերտ ծխեղեգամբ՝ յորմէ զծուխն ծծէ զմահաթոյն ծխախոտին։ Եւ զկնի այնր դասադաս և կարգ ի կարգ յարին մեծամեծ ոսկի և արծաթի սկուտեղք, ի միջի ունելով ինքեանց անօթս ոսկիս և արծաթիս՝ ընդելուզեալս ակամբք պատուականօք, և լիս օշարակօք և քաղցրաւենեօք։ Իբրև կիսով քարընկեցի միոյ հեռի ի նոցանէ դան որդիք արքայի, մեծամեծք և փոքունք, յիւրաքանչիւր ի մարզից իւրեանց՝ ի գաւառաց և յաշխարհաց՝ համախմբին անդանօր. և յետ զընծայս արժանաւորս մատուցանելոյ՝

կապեն թագ ի գլուխս իւրեանց և արքայակերպ զարդու պայծառացեալք կանգնին առաջի նորա իւրաքանչիւր ըստ պատուոյ և հասակի իւրեանց։ Գան նոյնպէս և նախարարք նորա, քաղաքապետք, գիւղականք, դենպետք, և մոլլայք երևելիք յամենայն կողմանց՝ մատուցանեն նմա զընծայս հպատակութեանց իւրեանց, և խիլայեալք ի նմանէ կան առաջի նորա իբրև քարընկէց մի հեռի ի թիկանց որդւոց արքային։ Ի կուսէ արքային կան երեքհազար արք ի թիկնապահ զօրաց նորա. զորս լեզու Պարսկաստանեայց Ղուլամ թֆանկչիս կոչէ։ Սոքա երեքհարիւրաւոր չաուշք՝ ամենեքին այլակերպ գլխարկ խոյրաձև ի գլուխ իւրեանց։ Զկնի նոցա կարապետք արքունի, դահիճք, դահճապետք, միրզայք, և ամենայն պաշտօնատարք տէրութեան։ Հուսկ ապա մանկտի գեղեցիկ պատանդեալք ի տանց ազատաց կամ գերի վարեալք ի տեղեաց տեղեաց և անուանեալք ի հաւարծիս արքային. որք ըստ նոցա անուանին բոխշք՝ այսինքն Անմօրուք։ Յետ ընծայսն ընդունելոյ, որ կարի համառօտութեամբ վճարի, յառաջ մատչին ըմբշամարտութիւնք, զազանամարտութիւնք, աղեղնաձգութիւնք և հրացանահարութիւնք։ Այլ որ մեծ քան զամենայն համարեալ և Պարսկական հանդիսից սեպհական զբօսանք են վարկուցեալ, յառաջ մատչին խեղկատակք նոցա՝ լութիք անուանեալք. և արձակերասան լեզուօք և խենէշ արարողութեամբ իւրեանց, մնչկատակելով ի խնդիրս ծաղու հեշձուցանեն զամենեսեան։ Նոյն ինքն արքայ և հարամ կամ կանանոց նորա յառարկայից սակի են անառակ և ցոփ հանդիսից սոցա։ Յաւուրս Յատալեայ արքայի եօթնհարիւրք ի սոցանէ, հանդերձ Ալեաւն խեղկատակապետաւ, զոր խան կարգեաց արքայ, արքունի ռոճկօք անցուցանէին զանամօթութիւնս իւրեանց։ Մեծ ի հանդէսս Պարսից է Նովրուզն, ուրանօր ամենայն բազմութիւն աշխարհին գան առ արքայ, ըստ վերոյ գրեալ օրինակիդ, և նորա առընթեր նստեալ ոսկի սկտեղբ զրամս արծաթիս հատեալս յատուկ ի պատիւ տօնիս՝ Շահինովրուզիս, բաժանէ առաջանւոյն և ամենայն բազմութեան։ Յորժամ դէպ լինի արքային ելանել յորս էրէոց, ո՛չ սակաւ քան վաթսուն հազար ի հեծելոց անտի Պարսից՝ հետևին նմա։ Բայց Յաթալեայ ընկերէին և երկերիւր կամ աւելի ևս թիւ կանանց, ծածկեալ ի զգեստս առնացիս և հեծեալ յերամակս ներքինեաց և տից հարամածիցն արքային։ Աս երբ անբրակին Սուլթանիոյ, զոր կառոյց շահ Խուդաբանդահ, ի վերայ փոքու բլրակի միոյ կառոյց Յաթալի շահ ամարանոց գեղեցիկ, ուրանօր առ անբաւ առատութեան յարադալար արօտից և առջառաշատ գառ-

նաւէտ գիւղօրէից շրջապատելոց, ո՛չ միայն գիրանան երամակ ձիոց նորա և զօրուն, այլ և տիկնայքն փափկասունք՝ առանց ծախուց ամենևին։ Վասնզի արքայ Պարսից իբրև միահեծան տէր իւրոյ աշխարհի՝ իրաւունս ունի ո՛չ միայն ի վերայ կայից՝ այլ նաև կենաց ողորմելի հպատակացն իւրոց։ Յորժամ ի պատերազմ ուրեք ելանիցէ արքայ՝ առնու ընդ իւր զօր հրացանամարտիկ՝ ոչ սակաւ քան ըզհարիւր հազար. նոյնչափ ևս վրանահար և բնակավաճառ խուժանաց յամենայն ազգաց տէրութեան իւրոյ։

## ՍԱԴՐ ԵՒ ՍԱՐԴԱՐ

Թերևս այս պարսկական բառք իցեն՝ որք մկրտեալք ի յոյն լեզու՝ փոխեցան ի սետրապս. որով մինչ ցարդ ապահովեալ արևմտեաց՝ զկնի այսքան լուսաւոր երթևեկութեանց իւրեանց՝ տակաւին ի վրիպանս հնութեանց յամառեալ մնան։ Սադր ի լեզու Պարսից նշանակէ զգահակալ իշխանն, իսկ սարդարդ՝ զմարզպան նահանգին, կամ զհրամանատար զօրուն։ Սոքա անընդմիջապէս ընտրին յարքայէ, և կարգին ի վերայ մեծամեծ կողմանց աշխարհին. Պարսայ, Ասպահանայ, Կրմանայ, Խորասանայ, Ատրպատականի և այլոց։ Սարդարք են՝ որ կարգին ի վերայ մեծամեծ նահանգացն պարունակելոց ի կողմունսն, յորս իշխեն Սադրք. զոր օրինակ՝ Երեւան իւր գաւառօքն աթոռ գոլով Սարդարի, էր ի ներքոյ մեծի սադրին Ատրպատականի՝ Աբբաս Միրզայի. որ յետոյ ժառանգ եղեալ արքայութեան հօր իւրոյ՝ անուանեցաւ Վալի Ահթ։ Ըստ անհաստատ կարգի տէրութեան Պարսից, և ըստ ընչաքաղց ագահութեան արքայի նոցա (զանցելոցն ո՛չ ինչ փոյթ արարեալ), դուն ուրեք երբեմն ընտրին մարզպանք կամ կուսակալք՝ որդիք հարց յաջորդելով։ Կամ որ յաւէտ ևս վտանգաւոր աշխարհին՝ կարի սակաւք են՝ որ զընկալեալ իշխանութիւնս իւրեանց վարեն ցամն բովանդակ, բայց եթէ միջոցօքն՝ որք անիրաւք ըստ ինքեանց՝ ապականեալ եղծանեն զերջանկութիւն ողորմելի բնակչաց երկրին։ Ուստի շատ այնք են, որ գնոց գնելով զաշխարհն կաշառեն զարքայ մեծամեծ գանձուք. անվթար խոստանալով զտարեկան հարկն, և զգեցեալ զծիրանին և ընկալեալ զհրովարտակն արքունի՝ վարձեն իւրեանց բիւր մի զօրաց, կամ աւելի և պակաս՝ ըստ հանգամանաց վիճակի աշխարհին՝ որում իշխելն գնան։ Հասեալ անդանօր թագաւորական իմն շքով՝ մտանեն ի քաղաք անդր. և յոր յառաջն ձեռն արկանեն կատարել, այս է. զի ջանան երկպառակել կամ իշխանսն ի ժողովրդոց. կամ զժողովուրդս յիշխանաց անտի. որպէս զի նորա-

նոր քսութեանց ծնունդս յարուցանելով՝ մարթասցին ի ձեռն նոցա պատճառս գտանել պատժելոյ և տուժելոյ յորոց միանգամ ակնունին հարստութեան. որպէս զի հնարեսցին զյառաջագոյն տուեալ կաշառացն, զծախուց, զտարեկան հարկաց, զհետագայ ծախուց և նորանոր կաշառաց զվճարսն անթերի բովանդակել։ Եթէ իշխան որ զմահ և զկեանս ժողովրդեան ի ձեռին ունելով՝ այսպիսի զօշաքաղ դիտաւորութեամբ մտցէ ի սահման ուրեք՝ զի՞նչ արդեօք հետևանքն իցեն մեծամեծ արարութեանցն՝ ամենայն որ հեշտեաւ կարէ իմաստասիրել։ Զի անտեղի պատերազմունք ընդ մերձակայ գաւառաց, անպարտ արենհեղութիւնք, գաղտնի ելուզակահանութիւնք, ընդհանուր վաճառականութեանց երկրի խափանմունք, և անդոյ անպտղաբերութիւնք, ընդ անբաւ կոտորածոյ խուժանին զհետ գան միշտ այսպիսի կեղաքարշ ագահութեան իշխանաց։ Ես ո՛չ կամիմ սոյին անիրաւել ամենայն մարզպանաց աշխարհին միահաղոյն. զի գտանին ի նոսա արք երկիւղածք յԱստուծոյ և հայրենասէրք, որք խնամով և գթութեամբ վարին ընդ ժողովրդեան, որպէս հարք հայրենեաց իւրեանց. սակայն և այնպիսիք՝ կամ պարտին զիշխանութիւնս իւրեանց անվկանդ ունել՝ որպէս էր Աբբաս Միրզայ՝ յԱտրպատականս, և կամ ի կեղաքարշ շահախնդրութեանց անտի իսպառ մեկուսի մնալ՝ որպիսի էր Մահամմադ Յուսէյն խան Հալլաճ՝ սադր ազիմ Ասպահանայ։ Սոքա թագաւորակերպ կեանս վարեն յիւրաքանչիւր ոք յիւրում իշխանութեան. այլ ազատ չեն ի քսութեանց յաշաղկոտաց և յաղաղակաց զրկելոց։ Պարտական են պահելոյ բիւր մի կամ աւելի թիւ զօրաց, և օրըստօրէ զուն գործելոյ և կրթելոյ ըզնոսա եւրոպական հրահանգօք։ Յաճախէ այր զհրաձէնս երկրի իւրոյ, և եթէ հաւասար կշռիցէ զինքն զինու և զօրութեան արքայի՝ ո՛չ ինչ ի մեղս համարի զդիմի հարկանել նմին. իսկ թէ ո՛չ՝ միշտ պատրաստական ծառայ է նորա՝ և օրինաւոր հպատակ։ Ուստի և ի լինել ուրեք խռովութեանց, և յակնարկել թագաւորին՝ ելանէ զիջուցանել զնոսին. և եթէ դէպ լիցի արքայի ուրեք ի պատերազմ ելանել՝ թիկնակից լինի նմին յամենայն յաջողուածս. իսկ ի ձախող դիպուածս թողու զնա և փախչի. և ստութիւն կաշառօք փրկեն զնա ի պատժոց։ Բազումք ի նոցանէ անկախաբար բռնի շոպեն ի բաց աղջկունս յամենայն ազգաց. և լնուն նոքօք զկանանոց իւրեանց և զարքայի՝ եթէ կամիցի։ Որ ընդդիմանայ այսմ, մահու մեռանի· Եւ բազումք այնք են՝ որք զնեխեալ և զփթեալ արմտիս շտեմարանացն փոխանակ արտաքս թօթափելոյ՝ բաժանեն ի վերայ հպատակաց. և ապա հարկահան կարգեալ ի վերայ նոցա՝ քառապատիկ գնովք

պահանջեն զարժէս նոցա։ Աղքատք ի ժողովրդոց թանգագին գընելով զայս մահաբեր կերակուր՝ ուտեն. և ի պէսպէս աղտս հիւանդութեան ախտացեալ՝ մեռանին։ —Յիւրաքանչիւր Նովրուզի երթան սոքա պատարագօք յարքայանիստ թագաւորին, և համարս տան զաշխարհաց իւրեանց. ուր է՝ զի վերստին կարգին, և է՝ զի ի բանտ արգելանին՝ ըստ պէսպէս հանդամանաց քաղաքային օրինաց երկրին, և բնաւորութեան արքային նոցա։ Եթէ ուրեք յիշխանութեան մարզպանացս ծագիցի խռովութիւն, և ինքեանք անբաւական լիցին խաղաղելոյ զնոսա՝ գայ արքայ բազմութեամբ զօրաց, ծանրանայ ժողովրդոց բազմօրեայ ժամանակաւ, և կեղեքեալ կապտեալ զաշխարհն բովանդակ՝ դառնայ յաթոռ իւր։

### ԴԵՆՊԵՏՔ

Ամենայն քաղաքք Պարսկաստանի մեծամեծք և փոքունք՝ ունին իւրեանց զմի մի գլխաւոր մուշտահիդս կամ փիշնամազս. որ այնինքն են հոգևորական առաջնորդք նոցա կամ քահանայապետք իսլամաց։ Բազումք ի նոցանէ ի սէյիդացն կարգին. որք անընդմիջապէս երանացն սերելով Ֆաթմեայ դստեր Մահմէտի, և Ալեայ որդւոյ Աբութալիբայ՝ իրաւունս անձանց համարին ո՛չ միայն ըղմատակարարութիւն պատգամաց Ղուրանին և զսին սրբութիւն սերնդոց իւրեանց, այլ և զտէրութիւն աշխարհին Պարսից։ Վստահ ի դիւրահաւան սնապաշտութիւն խուժանին Պարսից՝ բուռն երևեցուցանեն նոցա զՂաճարեան հարստութիւն. և յայտնի քարոզեն թէ ինքեանց միայն էր ակն աթոռն այն՝ որում նոքա բռնանան։ Բայց ի մերում ժամանակի յանհոգութենէ Ղաճարաց՝ միոյ քաղաքի բազում ելով դենպետաց՝ յինքեանս դրաւեցին զսիրտ, զհաւատ և զգանձս ժողովրդեան իսլամաց. զի որ մահացուաց խոստանայ զերկինս՝ դիւրաւ զերկիր ի նոցանէ դրաւէ։ Նենգութիւն և սնոտիապաշտութիւն սակաւ առ սակաւ պեղեն զհիմունս օրինաւոր տէրութեան, մինչ անկանիլ նորա՝ ընդ ծանրանօք խրովք ի փշուրս՝ հերձոտել զնեցուկս ամրութեանն՝ դարդարութիւն ասեմ ի զհաւատարմութիւն։ Յայտնագոյն նշան կործանելոյ տէրութեան է՝ հոգևորականաց մխիլ յիրս աշխարհականս։ Սոքա թէպէտև յարքայէ կարգին ի գործ հոգևորական պաշտամանց իւրեանց՝ սակայն ի սնոտիս սրբութեանցն յանկուցանելով զբազմութիւն ժողովրդեան, թև ածեն զիշխանութեամբ թագաւորին, գրգռեն զնա ի պատերազմ ընդ որս և համոյք իցեն ինքեանց. յանսալն՝ քարոզեն ժողովրդեան զաջակցու-

թիւն արքայի և զպսակ մարտիրոսութեան ի դրախտին Ղուրանի: Իսկ յոչ անսալն՝ զրգռեն զեկեղեցին իսլամաց ընդդէմ արքայի. և յարուցանեն առնին պատերազմունս և անհնարին կոտորածս յաշխարհին Պարսից: Յորժամ յայսպիսի յանդուգն և ի ձեռներէց բռնաւորութեանց վերջանան, զառիւծն ի քուն զարթուցանելով ի վերայ ինքեանց, սկսանին այնուհետև մանրանալ յիւր կրօնի. և ուսուցանել ժողովրդոց զպատգամս մարգարէի իւրեանց, վերաբերեալս Շիայ աղանդոց. զհակառակսն՝ բառ համոյից և քմաց մեկնելով նոցա: Յաւելուն այլ ևս հազարանիս անլուր և աղանդի առասպելաց՝ ի պաշտպանութիւն այսր աղանդոյ զորոց չկարելով առանց վտանգի անպատկառութեան օրինակս ի մէջ բերել աստանօր՝ լեզուագէտ ընթերցասիրաց թողում տեսանել զնոսին ի Ռասալահն անուանեալ գիրսն. զոր ի մօտոյ յօրինեաց Սէիդ Մահմադ Բաղր Ռաշտին՝ յԱսպահան. և տպագրութեամբ ի լոյս ընծայեաց:

Այնինչ հալածանքն յաւուրս Շահաբասայ առաջնոյ՝ և երկրորդի. անպարտ սպանմունք հարիւրաւորացն Հայոց, անօրէն զրկանք և հարստահարութիւնք յաւուրս բռնակալութեանցն Աղուանից՝ Ջանդից և Ղաճարաց՝ չկարացին սասանել ընդդէմ աւետարանական հիման հաւատոյ մերազնեայ ժողովրդոց, թշնամին արգեանց խաչի փրկութեան մերոյ՝ նորանոր հնարս եդ առաջի դենպետաց նոցա. որով հետ զհետէ կարող լինիցին քակել զոմանս ի հաւատոցն Քրիստոսի, և յաւելուլ յԱլին իւրեանց և ի կրօնն: Վասնորոյ և իբրև աստուածային օրէնք ի Ղուրանէ ապսպարեալ՝ հրատարակեցին, զի եթէ Հայք ոք սպանցէ զիսլամ, զարիւնն ընդ արեան տուժեսցէ. և ինչք և մնացորդք իւր՝ մնացորդաց իսլամին մատնեսցին ի ծառայութիւն: Եւ ընդ հակառակն՝ եթէ իսլամ զՀայ սպանցէ, փրկանս արեան տացէ ժառանգաց նորա՝ դէշ ի Բուշեռայ, կամ զերեսուն թումանս: Երկրորդ՝ եթէ դէպ լիցի ուրուք ուրանալ զհաւատն Քրիստոսի, և նորոգել ի Մահմէդ՝ զոր ինքեանք Ջադիդ, այսինքն նորահաւատ անուանեն, իրաւունս ունիցի յետ մեռանելոյ յո՛ և իցէ հեռաւոր կամ մերձաւոր գծի արեան ընտանեաց իւրոյ, զալ նստել ի տան նորա. և յինքն գրաւելով զամենայն զանշարժ և զշարժական ստացուածս նորա՝ վտարել արտաքս զողորմելի որբսն հանդերձ այրեաւ հանգուցելոյն. և տիրել ամենայն հայրենի ժառանգութեանց նոցա:

Այս օրէնք՝ անօրինագոյն ևս քան զամենայն անկարգութիւնս աշխարհին, առիթ ետ բազմաց ի ցոփակեաց և դատարկաձեռնեայ պատանեաց՝ ո՛չ միայն զփրկիչ հոգւոց իւրեանց ուրանալ և յարել

ի խոհերս մարմնապարիշտ դաւանութեան մարգարէին ստութեանց, այլ և սատանայական իմն խաբէութեամբ պատուաստել զարիւն ցածութեան իւրեանց յարիւն այսր կամ այնր ուրուք հարստի. և յետ մեռանելոյ նորա գալ և բռնանալ ի վերայ տան նորա և կալուածոց միանգամայն: Ահաւասիկ քեզ իրաւունք ստուծոյն Մահմէտի՞: Երրորդ՝ պիղծս համարելով նոցա զամենայն որ ո՛չ խոստովանեսցի զՄահմէդ առաքեալ յԱստուծոյ՝ բարձին յազգէ մերմէ զամենայն հաղորդակցութիւն. որով ո՛չ միայն չհամարձակի ոք նստել մանրավաճառ ի շուկայի, այլ և զարհեստն արտաքին արուեստագործել ո՛չ իշխէ: Քարահատք, կամ ճարտարապետք ի Հայոց՝ ո՛չ կարեն շինել տունս մահմէտականաց. ըստ որում աղօթք ի նոսին ընդունակ չեն Աստուծո՞յ: Ձոնք և դերձակք և մուշտակակարք, որ ի հարուստ ժամանակաց հետէ ձևեցին և կարեցին վասն արքայից Պարսից և մեծամեծացն՝ այժմ խափանեալ կան. զի զդերձան ի ծակ ասղան յանցուցանելն՝ պահանջի ատամամբք յարդարել զծայրն, և այս պղծէ զծէս նոցա, և նանրացուցանէ զաղօթս մատուցեալս յաւէտ ի փառս մարդկան: Եթէ Հայ ոք ունիցի պտուղս պատուականս ի պարտիզէ իւրմէ՝ չկարէ վաճառել ի հասարակաց հրապարակին. վասնզի ըստ դենի նոցա՝ պիղծ են ինքն և բերք պարտիզաց իւրոց: Վասնորոյ որոնէ գտանէ զհաւատարիմն կարծեցեալ ոք ի Պարսից անտի (եթէ ոք գտանիցի այնպիսի), և տայ ի ձեռս նորա վաճառել կիսով: Այլ՝ գիւտ իմն համարի, եթէ և կիսոյ գնոցն արժանի լիցի: Օրինօք ո՛չ կարէ պահանջել, զի մահ բերէ ինքեան պղծել պտղովք իւրովք զսրբութիւն իսլամին, և առանց օրինաց ևս՝ Պարսիկք արդարագոյն համարին վաստակոց իւրեանց, կորզել ո՞ և իցէ միջոցօք զստացուածս քրիստոնէից. և առ վերագոյն վախճան դենին ի վար արկանել: Ձե՞ն ուրեմն սքանչելիք իմն մեծ յարատևել քրիստոնէութեան յայսպիսի թշուառութեանց և զրկանաց ի միջի: Եթէ դէպ լիցի սոցա ելանել ուրեք, յաւէտ ի ջորի հեծանեն՝ քան ի ձի. որպէս թէ առ ի ցոյց հեզութեան իւրեանց: Ի ներքուստ զգեստ հասարակաց ազանին, այլ վարտիք նոցա ըստ մեծի մասին սպիտակ գունով: Կապա նոցա ունի զօձիս կրկինս, իբրև զփեղկս ի վերայ իրերաց եկեալս. որ յանթոց անտի սկսեալ կռնակին մինչև ցկամարս միջաց նոցա: Գօտի նոցա սպիտակ ու դեղին, կամ սոսկ սպիտակ բեհեզ, երբեմն տասն գազեայ երկայնութեամբ փաթութեալ շուրջ զմիջովք անճոռնիս իմն երևեցուցանեն զնոսա: Լօդիկ կանանչագոյն բազմաճարմանդ ի վերայ, և ի գլուխ նոցա, եթէ յազգէ մարգարէին՝ փաթեթ կանաչ. իսկ եթէ ի հասարա-

կաց արենէ՝ փաթեթ սպիտակ գունով, ի ձև կաղամբոյ մեծի։ Ի ձեռս իւրեանց կրեն զաւազան կարճիկ կրկնածագեան ճնճղագլուխ. ի մզկթի՝ նախաթոռ կացեալ, սկսանին ղաղօթսն. և ժողովուրդն զհետ նոցա ծնրելով՝ գրեթէ բառ առ բառ երկրորդէ նոցա։ Ի լինել Հարկին, զորօրինակ ի Նովրուզի, ի տօնի զոհից ի Մուհարրէմի և այլն. ելանեն սոքա յամբիոն մզկթին և քարոզեն անտուստ ըզպատգամս Ղուրանին, զպատմութիւն նահատակութեանց իմամաց իւրեանց, զկարևորութիւն խտրանաց, մկրտութեանց, թլպատութեան, առ տեսս մարդկան աղօթից, և որոց ի կարգին։ Յիրս դատաստանի ընդունին սոքա զվկայութիւն միոյ իսլամի, զուգակշիռ տասին քրիստոնէից։ Մի բերան աստ ասէ, թէ «սուտն թշնամի է Աստուծոյ». միւս անդ՝ թէ «Պարսիկք հանապազասուտք են. իսկ Հայքն՝ ճշմարտախօսք»։ Վկայք ի Պարսից դիւրագնի վարձին, նաև յիրս վերաբերեալս հաւատոց իւրեանց։

## ԱԶԳ ՊԱՐՍԻՑ

ԶՊարսից՝ իբրև զազգ խօսելով՝ արժան համարիմ ըստ իմոյ փծուն վերահասութեան վճիտ իսկութեամբ անաչառաբար պատկերացուցանել զնոսա ընթերցողաց առաջի։ Ճանապարհորդք Եւրոպացւոց համարին զնոսա Գաղղիացիս Ասիոյ. ըստ քաղցրութեան բարբառոյ նոցա՝ և ըստ աշխոյժ բնաւորութեանցն. բայց այս հանգամանք պատկանին ըստ մեծի մասին բնակչացն Շիրազայ. և արքունեաց Շահաստանին։ Վասն զի ի բազում ցեղից բաղադրեալ այսր հասարակութեան՝ բազմատեսակ դէմս ի մէջ բերեն վարուց, բնաւորութեանց, ծիսից, և զգեստուց. այլովք հանդերձ։

Պալատականք նոցա և նախարարք՝ ըստ մեծի մասին են արք քաղաքավարիք յարարս իւրեանց, հաճոյականք ի խօսս, սանձահարեալք ի կիրս, և նուրբք ի նկատմունս իւրեանց. և այսոքիկ միայնք են առաքինութիւնքն, զորս մարթ է ումեք ակնունել ի նոցանէ. վասն զի միշտ ծիսից և կրօնից զհետ եղեալ, յազատականացն վերջանան. ի գեղեցիկն արուեստից. և խիղճք մտացն կուրանան ի հայթհայթանաց ապրստիցն՝ յառաջ եկելոց յաղբերաց անտի ապականութեան և բռնութեան միանգամայն։ Առարկայ հանապազորդեան խորհրդոց նոցա է, զիա՞րդ առ կանդուն պահելոյ զանձինս՝ կործանել զընկերս իւրեանց։ Պարագայք այսօրինակ կենցաղավարութեանց հարկիւ լինին պիտի կեղծաւորութիւն և սուտ։

Նախարարաց նահանգաց աշխարհին Պարսից՝ որոց միայն կամք թագաւորին է կացուցիչ իշխանութեան, առաջնորդ լինի կասկած յարարուն յեղծութիւն ժողովրդեան.... Սըր Ջան Մալքոմ Անգղիացի՛, դեսպան Ընկերութեան Արեւելեան Հնդկաստանի ի Պարսկաստան, աչօք աւագութեան միայն հայեցեալ՝ նշմարէ ըզտեարս Պարսից հեզս գոլ և խնամածուս. և զծառայս նոցա ի մասին կամակարութեան՝ լաւագոյնս ի պաշտօնէից։ Բայց որ ըստ իս շրջեցաւ և հպատակօրէն կեանս վարեաց, այլազգ նսես զնոսա։ Ի տեարս ո՛չ ուրեք գտանի խնամ, մինչև ցյետին ընիոնն. բաց ի մասնաւորաց ումանց. իսկ հաւատարմութիւն ի ծառայս՝ ո՛չ բնաւ։ Վասնզի այն առ երես ժրութիւն ծառայիցն ո՛չ կայանայ յօգուտ տեարց, այլ ի շահ անձանց իւրեանց։ Վասն զի եթէ դէպ լիցի գնալ ուրեք ի պահանջ արքունի հարկաց կամ պարտուց՝ ընդ պայմանսն անցելոց, իրաւի գործունեայք հանդիսանան. զի թէ նախ՝ և թէ զկնի բովանդակելոյ նոցա զայն հարկ պաշտամանն. նովին չափ կաշառս նախ՝ կամ տուժանս զկնի, բարդեն ի վերայ. զորս և զուլլուղս անուանեն, որ այն է պաշտաման դրամ։ Եւ զայս յայտնի գիտեն տեարք նոցա. և բազումք այսպիսի եկամտից ծառայեն՝ քան բուն վարձուցն իւրեանց, զորս հազիւ թէ գտանեն....

....Բազմակամայք են Պարսիկք. զի Ղուրան՝ և նախ քան զայն Զանդաւիստա՝ զքէշսն կրից ազգին համեմատելով՝ սրբեցին նոյա զծէսն ուստի օրինաւոր համարին նոցա չորք, զորս քաբինլուս կամ ապահարզանականս կոչեն։ Իւրաքանչիւր այր ըստ կարողութեան իւրում որոշէ նշանածին զգումար իմն դրամոց, զոր քաբին-փուլի կամ պսակդրամ անուանեն. որ ո՛չ այլ ինչ է՝ եթէ ո՛չ արժէք կուսութեան նորա։ Յորչափ միաբան էան և մնան, չունի ոք իրաւունս պահանջելոյ. բայց իբրև դոյզն ինչ զգիւ բարկութեան, կամ այլ ինչ նոր շարժառիթ տեղի տայ նոցա բաժանիլ ի միմեանց յայնժամ կինն իրաւունս ունի պահանջել զառնէ իւրմէ զարժէս կուսութեան իւրոյ, որքան և դաշնաւորեալ իցէ ի պսակագրին։ Արտաքոյ քաբինլու ամուսնոց, առնուն Պարսիկք և սիղայս. զի հաւանեցուցեալ զկանս կնոջ, կամ աղջկան ուրուք՝ կոչեն կամ երթան առ մոլլայ ոք. սրբել աղօթիւք զփոխադարձ հաւանութիւնս իւրեանց. և այնուհետև կինն սուրբ համարի առն այնորիկ, թէ և բազմակին ոք իցէ։ Սիղայն ժամանակաւոր է. զոր օրինակ, վասն վայրկենի և եթ, ժամու, աւուր, ամսոյ և տարւոյ. ուստի և ճանապարհորդք նոցա՝ մանաւանդ թէ և ուխտաւորքն ի Մաքքա և ի Մաշադ՝ պարտաւորեալ ի պատգամաց Կուրանին՝ գրեթէ յամենայն էջս. ի գիւղս և քաղաքս, սիղայս առնեն։ Ուստի

բազմիցս պատահի, զի սերկեան սիզա՝ ծնանի առն իւրում զայլ ումն սիզա յերանաց անտի նորա։ Պարզ ես կամեցեալ խօսիլ, դըստերք այսօրինակ ծնեալք՝ պատահին երբեմն կին լինել հարանցն՝ յորժամ ի չափ հասանեն։ Զի՞նչ քան զայս աղտեղի և արտաքոյ բնութեան գործ, արդարև ընդայ ոգի մարդկեղէն և գարշի ի խորհել անգամ զայսպիսեաց։

Այլ այս ախտ գրեթէ բնիկ է ազգին. զի Արտաշէս Մնեմոն[8] էառ ի կնութիւն զերկուս ի դստերաց իւրոց՝ զորս խօսեցեալ էր Տարբազանայ նախարարի. Բահման Վեցերորդ ի Կայանեանց՝ զՀօմա զիւր դուստրն էառ ի կնութիւն իւր. վասնորոյ զորդի իւր զՍոքան հանեալ ի ժառանգութենէ՝ զսա ինքն զդուստր և զկին իւր՝ ընդ որդւոյն կարգէ ի փոխանորդս իւր. որ առ ամօթոյ զորդին ընկեցիկ առնէ յեզերս Քուշան կամ Ոքսոն գետոյ. այր ումն գտանէ զնա և մեծամեծ գանձարօքն որ ի նմա՝ հասկացեալ զնա մեծորդի ոք գոլ՝ պահէ, զօր ժողովէ, դառնայ առ մայրն, թագաւորէ, յաղթէ Փիլիպպեայ, ի հարկի կացուցանէ զնա ոսկի ձուոցն և առնու զդուստրն ի կին։ Ի մայրենի և ի քեռական անկողնոյ յարուցին որդիս խառնակութեան և աստուածքն իսկ. որպէս գրեն Եղիշէ մեր և Եզնիկ։

Դժնդակագոյն և արտաքոյ մարդկային խղճի մտաց և իրաւանց է, և այն, զի կանայք ողորմելի յետ բազմամեան տառապանաց տընտեսութեան, և որոց ի կարգին՝ յանկարծ ի շարժառիթ իմեքէ դրդեալ, անգթաբար զրկեսցին ի զաւակաց և արտաքսեսցին ձեռնունայն ի տանց անտի՝ զորս ինքեանք կազդուրեցին։ Միայն անագորոյն դէն նոցա է, որ իրաւունս Աստուծոյ համարի զայսպիսի եղեռն անաստուածութեան։ Այր վատթար է՝ որ անգոսնէ զկին իւր. վասնզի իմ բնաւ չիք տեսեալ ուրեք, թէ առն հաւատարմի և կատարելոյ իցէ կին անհաւատարիմ և անկատար։ Կանայք Պարսից աշխարհին, մանաւանդ մեծամեծ քաղաքաց նորա, որ չոկք ի չոկս հաւաքին ի մի տուն՝ ի տասանց մինչև ցհազարս, բանդարկեալք գրեթէ ընդ կեանս իւրեանց՝ պահպանեալ ներքինեօք և մարդպետօք՝ առ ի զկամս պաշտելոյ լոկ զառն միոյ, որ ո՛չ օրէնս գիտիցէ և ո՛չ զպարտիս ամուսնութեան, այլ իբրև կամիցի՝ գան հարկանիցէ, տանջիցէ և արտաքս վարիցէ ի տանէ իւրմէ, զի՞նչ այլ ունիցին առնել՝ քան զամենայն անամօթութիւնս, երբ ի դէպ եկեսցեն առթիցն։ Եւ ահա կասկած չար. և ի կասկածանաց անտի խռովութիւն, ահագին տնքանդութիւն, և բարձումն տնտեսական երջանկութեան։

Յայսոցիկ սկզբանց յառաջ գան և այն բիրտ և ցուրտ եղանակք ընկերակցութեան կենաց ի Պարսկաստան, ուր կանայք նոցա

տարամերժին ո՛չ միայն յամենայն ի հաղորդակցութենէ օտարաց՝ այլ նաև ի մերձաւոր ընտանեաց անտի իւրեանց՝ և արանցն միանգամայն։ Եղբօր ի տուն եղբօր երթալն կասկածելի է։ Եւ այս պէս՝ կանանին ընդ կանանւոյ կալով միշտ, և արանցն ընդ արանց, միշտ տխմար մնան. անծանօթ ի գեղեցիկ ուսմանց անտի՝ զորս քաղեն տիկնայք քաղաքավարիք յարանց անտի ուսելոց՝ և յաշխարհատես ճանապարհորդաց։

Ո՛չ ուսանին զգիրս, բայց եթէ սակաւք յազնուականաց անտի։ Ի շողոքորթութիւնս ի հրապուրանս և ի կեղծիս՝ յաջողակք են յոյժ. ո՛չ անուշակ ինչ վարուք կամ հանճարաւոր զրուցիւք, այլ սկընդկորէն քծնելովն՝ և անպարկեշտ ցոփութեամբք։ Զարաչար խտրեն ընդ քրիստոնեայս՝ մինչ չև իցեն ի ձեռս բերեալ. բայց յորժամ դէպ լիցի նոցա խօսակից լինիլ ընդ ումեք ի նոցանէ, բանան նոցա զերեսս իւրեանց, և բազում անգամ ի շղարշից զերծեալ առաջի նոցա, առնեն՝ զոր առնեն, և խօսին՝ զոր կամին. պատճառս ի վերայ ածեալ թէ Հայն ի կարգի մարդկան չէ, զի ամօթ կրեսցեն։ Եթէ դէպ լիցի յայսպիսի պատահարս ի վերայ գալ Պարսկի ուրուք, իսկոյն քօղ զանձամբք առեալ պարկեշտանան առաջի նոցա. բայց յորժամ մեկնեսցի՝ դարձեալ բանին առաջի, և զծնունդն իսկ ի նմանէ՝ համարին ի մեծ փրկութիւն ոգւոց. որպէս թէ յանհաւատէն զհաւատացեալ ոք սրբելով աստուծոյ և մարգարէին։

Կանայք լեռնականաց Պարսից՝ զորօրինակ, Բաղտիարաց, Լօռաց, Մամասանեաց և ամենայն վրանաբնակ էլիաթից, ազատագոյնք են. ուստի և պարկեշտագոյնք քան զկանանին քաղաքաց։

Ընդհանրապէս առեալ՝ Պարսիկք գեղեցկադիրք են մարմնով, առուգահասակք, բարակամէջք, և գոյն մորթոյ նոցա՝ ըստ զանազան դրից և խառնուածոց օդոցն, յորս բնակին, և ձիթագունէ իջեալ մինչև ի նազելին սպիտակութիւն հիւսիսակողման բնակչաց մերոյ աշխարհիս։ Դէմք նոցա ախորժք, եթէ ո՛չ խանգարիցէ զնոսա խըժութիւն բարուց։ Աչք նոցա ծաւիք, յօնք և հեր գլխոցն սաթեայք. որ համարեալ է առ նոսա՝ կատարելութիւն գեղոյ։ Ուստի և ծերունիք ի նոսա կամ պառաւունք՝ որոց վարսք սպիտակացեալ իցեն, ստէպ գնան ի բաղանիս, ներկեն զնոսա հինայիւ և սևակաւ։ Արք ո՛չ սափրեն զմօրուս, և որքան երկայն մօրուս ոք ունիցի, թէ և առ տխմարս համարիցի ընդ կատակս, սակայն դեռ յարգոյ է յոյժ յաչս նոցա։ Վասնզի զմօրուսն համարին նոքա կնիք կամ նշան Ալեայ պաշտպանի իւրեանց. և նովին պանծան գտանել շնորհս առաջի նորա։ Կանայք, ևս և արք բազում անգամ հինայեն զձեռս

և զոտս իւրեանց. համարելով թէ այն խանդարումն բնութեան՝ վերադիր գեղեցկութիւն ածէ յանձինս իւրեանց։ Արք յորժամ զեղինձն ուտիցեն ձեռօք՝ շփեն զնոսա մօրուօք իւրեանց, զի առաւել պսպղուն երևեսցեն։ Կանայք միշտ մրեն զյօնս իւրեանց, և սնգուրեն զերեսանին։

Ընդ արտաքին գեղոյ նոցա են և կատարելութիւնք մտաց, եթէ քաջ մշակեսցին։ Պարսիկք ի բնէ աչալուրջք են, զգաստ, թափանցիկք ի խորս խորհրդոց մարդկան, և երկայնամիտք յոյժ՝ բայց վասն միայն զվրէժն պահանջելոյ ի թշնամեաց։ Լեզու նոցա քաղցրահնչիւն է բարբառս համօրէն Ասիաստանի՝ և փոխաբերական, անուշութիւն մեծ տայր ընկերական վարուց նոցա, եթէ կրթութիւն և հրահանգ բանական զկասկած յարանց, և կղկաթս ի կանանց անտի։ Թէպէտև նախնի և արդի թագաւորք Պարսից, ըստ մերոցն առաջնոց՝ միշտ ի պատերազմունս և յառտնին զբաղմունս մրխրուած՝ ո՛չ կարացին խնամ տանել գիտութեան, սակայն և այնպես՝ ժամանակ առ ժամանակ ծաղկեցան ի նոսա արք երևելիք յամենայն մակացութիւնս. և ի քերթողականին անզուգակշիռք։ Ֆիրդուսի գիւցազներգակ բանաստեղծ, Հաֆիզ՝ սիրայրեաց, և Սադի բարուց բարեաց նուագիչ, արձանք միանգամայն և պարծանք են հանճարոյ Պարսից. բայց եթէ գեղ և գիտութիւն կանանւոյ նոցա բարբէր մերթ ընդ մերթ զպաղութիւն մտացն՝ կարծեմ և անմահք իսկ փափագէին ուսանել զպարսկերէն։

ՁԵՒՔ

Շիրազ՝ որպէս վասն վճիտ պարզութեան և քաղցրութեան լեզուին, նոյնպէս և նորանոր գիւտի ձևոց և զգեստուց՝ իրաւամբ համարեալ ի Պարիս Պարսկաստանի, վաղու յառաջ սեպհականեաց ինքեան զայս արտօնութիւն։ Գրեա՛ թէ յիւրաքանչիւր ամի փոփոխեն, մանաւանդ կանայք տեղւոյն զտարազ զգեստուց իւրեանց. այլ քանի գնան անպարկեշտանան, ըստ անկարգ հաճոյից և բնաբոյս բարուց զեղխութեան երկրին։

Արք նոցա զգենուն զշապիկ կարի կարճ, զոր և քեօհնեակ անուանեն. ապա վարտիս՝ կարի լայն։ Մեծամեծացն է առհասարակ կերպաս կարմիր երանգաւ, իսկ հասարակացն՝ կապոյտ կտաւ։ Մուշտահիդաց կամ դենպետաց, և ապաշխարողաց՝ թողանի բսպիտակն։ Ի վերայ շապկին զգենուն զբաճկոն, կամ արխալուղ. որ է երկայն մինչև ի սրունս, լայնաքղանց և ծոցաւոր։ Ի փեղկս ծոցից

*կամ կրծապանացն են կոճակք երիզանման առ կախեալք, որոց պըն-դեն զնոսա միշտ յանթատակն ձախոյ։ Ի վերայ բաճկոնի՝ զգենուն զպատմուճան կամ զկապայ. որոց պէսպէս են ձեք. ղասումի, հա-սանի, և այլն, յանուանց անտի հնարողաց այնց ձևոց. զորս կարեն ի պէսպէս մետաքսեայ, կտաւի և ի բամբակի նիւթոց. և մանաւանդ՝ ի ղատաքէ, զոր յԱսպահան, յեզդ և ի Խոյ գործեն։ Կապեն ապա գօտի մեծ ի շալէ Քիշմիրայ մինչև ի հասարակ կտաւ՝ շուրջ ըզ-պատմուճանաւն։ Խանք նոցա խրեն ի նա զդաշոյն, միրզայք նոցա զգալարս թղթոց գրելեաց, և այլք զձեռս իւրեանց, և այնպէս շըր-ջին. որպէս թէ ցուցանել կամելով թէ իցեն ոմանք։ Մեծամեծք առհասարակ արկանեն զանձամբք և զլօդիկ՝ կամ վերարկու (ջուբ-բայ), հասարակօրէն ի չուխայէ ծիրանւոյ. իսկ դենպետք ի կանաչէ կամ ի սպիտակէ։ Աղքատք չունին զջուբբայ։ Են՝ որք զգենուն նաև մուշտակս ի մազից սամուրի՝ և այլոց նմանեաց. այլ ի վերջնումս՝ սամուրն անսուրբ քարոզեցաւ նոցա. և մորթ գառանց Բուխարայ և Շիրազայ կալաւ զտեղին։ Գլխարկ ի մորթոյ գառանց ի ձև ղա-ճարի, և լեռնականաց՝ կաճեայ, քուլա նամադի կոչեցեալ։*

*Իսկ կանայք նոցա զգենուն շապիկ ծոցաբաց, կարճագոյն քան զարանցն, որ հազիւ իջանէ ցպորտս նոցա. ապա զիրջումայ, վար-տիս, կամ ծնկնաշոր ընդ արձոյլսն, մերկ և ցանկաշարժ միջոցօք, այնքան լայն՝ մինչև ի միոյ փողկէ նորա հանել զկապայ մի ողջոյն՝ և աւելի ևս։ Երգ իմն ի Պարսկաստան զմեծուհւոյ Շիրազեցւոյ լսէր թէ .*

*«Հինգ պուրակ ղանաւուզիս*
*Ոչ բաւեցին քեզ ի վարտիս»։*

*Ջամաշին սիրուհիք Պարսից լսել, տինա՛ թէ և երգել իսկ, թէ՝*

*Շալվար բը ին գօշատի*
*Դիգեար քանդան նամիխադ*[9]*։*

*Ղանաւուզ է գեղեցիկ կերպասի ձեռակերտուած, զոր գործեն ի զանազան քաղաքս աշխարհին Պարսից, և ազնուագոյնն ի Դավրէժ։ Իւրաքանչիւր պուրակ ունի գազս քառասուն, և լայնութիւն նորա գազ և կէս. —200 գա՞զ։ Ի վերայ զգենուն բաճկոն և ջամմէ՝ այսինքն պատմուճան, այլ կարճ իբրև զշապիկն. ուստի և ցուցանեն արտաքս գրեա՛ թէ զամենայն անպարկեշտութիւն։ Ի գլուխ կապեն խոյր կամ փաթեթ, կամ ի շալէ մեծագնոյ, և կամ ի կերպասէ թխոյ, զոր «փու-շի» անուանեն։ Իսկ յելանել նոցա արտաքս՝ զգենուն զչաշխուր՝*

*որ է զանկապան մեծ և լայն, հաւաքեալ առ կոճով ոտիցն ի դուլպայաձև իմն ոտնաման: Իսկ ի վերուստ ունի կարթ, զոր հարեալ ընդ վարտիսն ի վերուստ՝ յօրինեն զսրունանին իբրև զերկոսին ուռուցիկ պարկս՝ առ ի սխուն կազմուածոյ իւրեանց: Ագանին և զօղս բարձրակրունկս, սաւան մետաքսեայ սփածեալ զանձամբք շուրջանակի. ծածկեն զերեսանին ռուբանդով՝ դիմառակաւ կամ երեսակալաւ, և այնպէս ելանեն արտաքս. ինքեանք զամենեսին տեսանեն ընդ ծակտիս դիմառակին, բայց ո՛չ ոք կարէ տեսանել զնոսա: Շրջին իբրև զարձան կաւաեղէն: Կանայք լեռնականաց զձև պարկեշտ զգենուն. շապիկք նոցա երկայնք, և վարտիքք՝ ո՛չ այնքան լայնք: Հագիւ երբեմն ագանին նոքա զբաճկոն, կամ զջամմա. և եթէ ագանիցին՝ երկայնաձևք են. գլուխք նոցա ըստ ամենայնի համանման արդի Մարուհեաց, որք ի սահմանս Հայաստանի բընակին: Իսկ կանայք Բանդարաբասայ և Բիլուչստանի՝ զգենուն վարտիս անձուկ՝ զօրէն կանանւոյ Հայոց յԵրևանի, և շապիկ զօրէն մխաշապկի պառաւանց մերոց. այլ դիմառակք նոցա նմանք են դիմառակաց կանանցն Եգիպտացւոց:*

## ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ

Բազմամարդութիւն *աշխարհին Պարսից, ըստ երևելի ճանապարհորդաց՝ կայանայ ի հետագայ ցեղաբաժանութիւնս ազգաց. զոր օրինակ*

### Ա

| | |
|---|---|
| *Արդի Պարսիկք՝ որք են խառնուածք նախնի Պարսից, Հայոց, Վրաց, Թաթարաց և Արաբացւոց* | *10000000* |
| *Հայք* | *5000* |
| *Գաբրիք յԵզդ, ի Կրման և ի Մեկրան* | *100000* |
| *Աղուանք ի Քաբօլ* | *500000* |
| *Գիլանք՝ նախնի բնակիչք Գիլանայ* | *50000* |
| *Հրէայք. ընդ ամենայն տեղիս* | *35000* |
| *Զաբիանք ի Խորասան* | *10000* |

### Բ. ՇՐՋՈՂՔ ՈՐՔ ԽՕՍԻՆ ԹՈՒՐՔԵՐԷՆ

| | |
|---|---|
| *Աւշարք յԱտրպատականս* | *88000* |
| *Դաշարք ի Մազանդարան* | *40000* |
| *Մուղադամք ի Մարաղա* | *5000* |

| | |
|---|---|
| Դոմբելուք ի Հայս | 12000 |
| Թորգոմք յԱտրպատականս, յԱհմադան, ի Քազւին | 120000 |
| Թալիշք ի Մազանդարան և Գիլան | 15000 |
| Թաթք ի Ղազբին, ի Սուլտանիա | 10000 |
| Ղարագեօզլուք ի Համադան ցՍուլթանիա | 12000 |
| Բայաթք ի Պարս և ի Խորասան | 20000 |
| Շահսևանք յԱրտաւիլ և ի Ռէ | 14000 |
| Ջիվանշիրք ի Շիրվան | 7000 |
| Ջէզայիրք ի Խորասան | 8000 |
| Մուղանլուք ի Հայս | 4000 |
| Մուղանլուք ի Պարս | 10000 |
| Խոշաւանք ի Գիլան և ի Մազանդարան | 4500 |
| 24 փոքր ցեղք. դի՛ր թէ իցեն | 81000 |

## Գ. ՈՐՔ ԽՕՍԻՆ ԱՐԱԲԵՐԷՆ

| | |
|---|---|
| Արաբացի խաշնարածք գնրեալք ի Թամուրայ կանկէ, յԱհուազ, ի Խորասան և յայլս | 95000 |
| Արաբ ձկնորսանի ի Խուժաստան և ի Պարս | 10000 |

## Դ. ԽԱՌՆԱԽՕՍՔ

| | |
|---|---|
| Լոռք ի Լոռաստան | 20000 |
| Զանդք ի Պարս և յԱսպահան | 10000 |
| Լաքք ի Պարս | 20000 |
| Խոջիլուք ի Պարս | 15000 |

## Ե. ՔՐՄԱՆՇԱՀ

| | |
|---|---|
| Զինկանա կամ Մթրուբք | 6000 |

## Զ. ԼՕՌԱՍՏԱՆ

| | |
|---|---|
| Բախտիարիք | 30000 |
| Կերրուք ի Խամսա | 30000 |
| Ֆէլիք ի Լոռաստան | 40000 |
| Ղարագինջիրիք ի Քրմանշահ | 7000 |

## Է. ՈՐՔ ԽՕՍԻՆ ՔՐԴԵՐԷՆ

| | | |
|---|---|---|
| Մեկրիք 30000<br>Բլբասք 10500 նոյն | ձիաւորք | 40500 |
| Ջիաւք | | 15000 |
| Գուրասք ի Սինա | | 8000 |
| Բարասք | | 500 |
| Սնսուրք | | 7000 |
| Լաքէյիք | | 5000 |
| Ղօշանլուք,<br>Շազաղիք, | | 15000 |

## Ը. ԽԱՌՆ

| | |
|---|---|
| Ռէշվէնդք ի Տարոն | 10000 |
| Փազէքիք յՌէ և ի Թեհրան | 5000 |
| Ջավրանլուք ի Խորասան | 8000 |
| Բոյնուրդք նոյն | 4000 |
| Էրդիլանիք նոյն | 10000 |
| Ամպարլուք նոյն | |
| Մամասանիք ի Պարս | 10000 |
| Բոռշալուք ի Տաշիրս | 3000 |
| Ղարափափախք յԵրևան | 2500 |
| Սէյդլլուք նոյն | 1500 |
| Բօշայք յամենայն ուրեք | 8000 |
| Բիլուչք | 3000 |

## ԶՕՐՔ ՊԱՐՍԻՑ

Կրթեալ զօրք Պարսից հազիւ հասանեն ցյիսուն հազար. որք և անուանին սարվազք, այսինքն՝ «գլխաբացք». իսկ անկիրթք՝ եթէ կամիս, բովանդակ ազգն քո առաջի կան. որ ի դիպել հարկին վառին ի պատերազմ, մանրավաճառ ի մօլլայ՝ միանգամայն։ Զօրք գուն ուրեք ստանան զռճիկ. բայց ի մասնաւոր թոշակաց անտի և յափշտակութեանց. ուստի և ըստ այնր կռուին ի լինել հարկին։

## ԵԿԱՄՈՒՏՔ ՀԱՐԿԱՑ

Ամենայն եկամուտ գանձարանի տէրութեան յառաջ գայ ի հարկաց անտի՝ և ի չարաչար կեղեքանացն, որով յոգիս ապաստան

առնեն զողորմելի բնակիչս աշխարհին։ Առաջին ի սոցանէ՝ է Թուլչին՝ կամ գլխահարկն։ Երկրորդն՝ միրի, մալիաթ կամ գետնահարկն, որ յանդս ջրարբիս է հինգերորդն ի բերոց, և յանձրևայինսն՝ տասանորդ նոցա։ Բայց այս կարգ գուն ուրեք պահի. և կլսոյ անգամ յօժարին երկրագործք լինել ի բաժանորդս, եթէ թողցի նոցա ի հարկահանաց տէրութեանն։ Երրորդն է մուսադարաթ, որք են ընծայք ազգի ազգիք, տոյժք, և յարքունիս գրաւմունք աղխից և դանձուց պատժապարտից, զորս եթէ ո՛չ դատիցին օրէնք, դատին կամք թագաւորին։ Յիւրաքանչիւր Նովրուզի ընծայք մատուցեալք նմա հասանին ց120000ս թումանաց։ Միրահի, որ է հարկ իմն ի վերայ ուղտուց, ձիոց, ջորեաց և իշոց։ Մավաշիր՝ հաս իմն յոչխարաց, այծից, արջառոց, և այլն։ Մաքս քաղաքաց, և վարձք վաճառանոցաց և հանթից, այլովքն հանդերձ։ Զորս միահաղոյն առեալ՝ ըստ իւրաքանչիւր նահանգաց աշխարհին Պարսից՝ գլխակարգեմ աստանօր։

| | Եկամուտ | Ծախս | |
|---|---|---|---|
| ի Պարս նահանգէ . . . | 300000 . . . | 150000 | |
| ի Կրմանայ . . . | 150000 . . . | | |
| ի Մեկրանայ . . . . . . | | | Պտղաբերութիւն կողմանցս կարօտի ծախուց։ |
| ի Խորասանայ . . . . . . | | | |
| ՅԱրդիլանայ, ի Սեննայ . . | 30000 | | |
| Քաշանայ, ի Ղազբինայ և Զանգանայ . . . . . | 30000 | | |
| Յեզդայ . . . . . . | 54000 | | |
| ՅԱտրպատականէ . . . . | 500000 . . | 50000 | Զօրաց |
| ի Մազանդարանէ . . . . | 500000 . . | 50000 | իշխանաց։ |
| ի Գիլանայ . . . . . | 180000 . . . | 200000 | |
| | | 40000 | |
| Արազաստանայ . . . . | 500000 | | |
| Քրմանշահէ . . . . | 200000 | | |
| Գուլպէյքանայ . . . . | 50000 | | |
| Թագաւորական ընծայք . . | 1200000 | | |
| Ծախք մեծի գերդաստանի տան արքայի . . . | | 1300000 | |
| Տարեկան երթայ ի գանձն արքունի զուտ դրամ - | | 2489000 | |

ՑՈՒՑԱԿ

Արդի և նախնի նահանգաց Պարսից. և երևելի քաղաքացն՝ պարունակելոց ի նոսին

| Արդիք | Նախնիք | Երևելի քաղաք |
|---|---|---|
| Ադրբէյջան | *Ատրպատական այսինքն սեղան հրոյ կամ հուր Բայգանայ։* | Դավրէժ, Մարաղա, Արդաւել, աւեր Շամղաղանայ։ |
| Գիլան | *Գեղի կամ Կադուսիք, Դաբրաստան,* | Ռաշտ։ |
| Մազանդարան | *մասն Հիրկանիոյ։* | Բալուրուշ. Սարի Աշրաւ։ |
| Աստարաբադ | *Հիրկանիա յատուկ* | Աստարաբատ։ |
| Իրաղաջէմի | *Աշխարհ Մարաց։* | Հռէ, Կազբին։ |
| Արդիլան, կամ Քուրդստան Պարսից | *Եղամ։* | Սինէ, Քրմանշահ։ |
| Լօրստան | *Քուստի* | |
| Խուժաստան | *Շօշաստան* | Շուշտար. Դէզփուլ։ |
| Ֆարսիստան | *Պարս.* | Շիրազ, Փէրուզապատ, Աւեր Թախտի Ջմշիդայ կամ Պերսօպօլսոյ։ |
| Լարիստան | *Մեսեմբրիա* | Լար, Կոմբրուն *կամ* Բանդարաբաս։ |
| Կրման | *Կրման, Կարամանիա* | Քրման |
| Մասն Խորասանայ | *Պարթեւք* | Նիշապուր, Մաշադ. Եզդ։ |
| Միւս մասն Խորասանայ | *Արիք* | Հէրաթ, Միրքի. Քաբօլ, Ղանդահար. Ղիզնի, Ֆեռահ։ |
| Սղուանաստան | *Պարոպամիսադ* | Ջալալաբադ. Դըրզասպ։ |
| Մէկրստան | *Սագաստան* | Գուշակ. Նասիրաբադ։ |
| | *Արանկիանա* | |
| Բէլուջստան | *Գեդրոսիա, Մեկրան* | Դուր, Փանջգուր. Թիզ. Ղուսր. Քարդ. Պուրեկ. Քիջ։ |

Ո՛չ ինչ օգտակարագոյն գտեալ ինձ քան զանուշակ լեզու Պարսից (իմա՛ որպէս և կամիս, թէ ըստ բնական քաղցրութեան նորա՝ և թէ ըստ հաճոյական և շողոմաբարոյ կիրառութեան բնակչաց երկրին), արժան համարիմ առանձին հատուածով փոքր ի շատէ ծանօթս տալ ընթերցանելեաց: Վաղնջական յիշատակութիւնք Մարաց խառն գոլոյ ընդ ազգին Պարսից, որպէս և մերձաւորութեան հնչման հագագաց նոցա՝ կարծիս ետուն բազմաց երևելի հեղինակաց. մի և նոյն համարել զնոսա: Այլ զի ընդ բովանդակ Քուրդաստան անցեալ, ո՛չ նոքա և ո՛չ ես ինքն պատահեցաք գրաւորական յիշատակաց հին աւուրց անցից. նա զի՝ և Մարքդ ցանեալք և ցնդեալք ի լերինս և ի խորշս՝ գրեա՛ թէ առհասարակ այլաբարբառ խօսին և աղխատրոյզս զարդիս զանց արարեալ զնոքօք՝ մասնաւորիմ ի լեզուն Պարսից. որոյ գրաւորական հանդիսից ջատագով հանդիսանայ Հայր պատմաբանից մերոյ աշխարհիս: Յովհաննէս Ճառդին երևելի ճանապարհորդ յԱսիա՝ իսպառ խափանեալ դնէ զհին լեզու Պարսկաստանի. և զաղաւաղեալն Բիլուջստանի համարեալս յարգի մոգուցն Գաբրեաց՝ կամ կրակապաշտ մնացորդաց Պարսից: Վասնզի տարբերք են սալ նաև յարմատս իւրեանց՝ ի նշանագրոց անտի գտելոց ի Պերսեպօլիս քաղաքի: Եղեալ ըստ Հիւգնէի վարդապետի, եթէ Ջանդավեստայն Զրադեշտի, յիւրում պարունակիցէ զնախնական ոճ լեզուին՝ անհա յառաջ գայ անտուստ Ռիչարդսոն Անգղիացի հեղինակ Պարսից և Արաբ բառագրոցն՝ հակառակել հետագայ փաստիւք: Նախ՝ զի ի Ջանդավեստայն և ի Պալհաւիկն գտանին բառք Արաբացւոց՝ զորս և ոչ ընդունի ներմուծեալս յայն յառաջ քան զյաղթութիւնն Արաբացւոց յեօթներորդ դարուն: Երկրորդ՝ զի տառք նայք և թաւք հակառակք հագագաց ազգին՝ գտանին ի նմա. զորօրինակ թ. թհ: Երրորդ՝ թէ չիք բնաւ համեմատութիւն ընդ արդի լեզուին: Եւ չորրորդ՝ ազեղութիւն ոճոյ դրոցն Ջանդավեստայ: Փաստքս այսոքիկ միահաղոյն առեալք՝ եթէ ախորժեցիս, չեն բաւական ի մերժել զայսպիսի ընդհանուր կամ հիմնաւոր իմն վարկ: Եթէ Արաբացի բառք գտանիցին ի լեզու Հայոց որ ամենևին անկարօտ նոցա, և հեռաւորագոյն ևս միջոցօք, յիշատակեալ յառաջ քան զծնունդն Մահմէտի, զորօրինակ. «անօրրպետելն». յառաջնում գլխոյ Աստուածաշունչ գրոցն, էրու՞մ ոչ յուսալի՝ թէ և ի Պարս սպրդեալ մտեալ իցեն բառք, որ բազում անգամ սահմանակից եղեն նոցա. և տեարք դաւառաց և գաւառաց. կամ, ո՞ այնքան ճիշդ որոշեաց թէ այն կոկորդային և թաւ հնչմունք

Արաբացւոց միայն սեպհական^ն թէ յայլմէ առեալք իցեն: Գուցէ լեզու իմն նախնագոյն քան զԱրաբացին՝ հաղորդեաց նմա և դրացւոյն՝ զբառսդ. կամ գուցէ զանարատ հնչմունս այսր գաւառի աղաւաղեաց այն գաւառ՝ կամ ժողովուրդ: Ո՞վ երբէք ունկնդիր եղեալ Ջոկ լեզուի Ագուլեցւոց Գողթան գաւառի մերոյ, և համարիցի զայն ծագեալ ի Հայկական բարբառոյ: Ասպաքէն հասկացի՛ր եթէ Հայ ոք իցես. «Օյզի մոյն հօծ ուր», «մոյն ծօթ տօր» և այլն: —Բայց և այնպէս՝ աղաւաղութիւնք են սոքա վճիտ Հայկական լեզուիս. օյզի՝ հարսն. Մոյն՝ մի, կամ մու. հօծ՝ հաց. ուր՝ բե՛ր: Մոյն՝ մի. ծօթ՝ արծաթ. տօր՝ տո՛ւր: Տգեղութիւն ոճոյ կամ մասայց հեգինակին ո՛չ է փաստ բաւական մերժելոյ զբարբառ ազգին: Չիք պատմութիւն տգեղ քան զԿիրակոսին[10], սակայն դեռ ևս հայաբարբառ է: Չի՛ք դրութիւն աղաւաղ քան զՅովհաննէս վարդապետի Ջուղայեցւոյ[11], սակայն և այնպէս դեռ «տիեզերալոյս» կոչի նա. Թողում զՄխիթար Աբբայ[12] և զխաչատուր ոմն[13]՝ զոտանաւորագիր սնավաստակ:

Թողեալ այսպէս զանտեղի պատաղումն զիրօք զարուց առաջնոց՝ հաստատել համարիմ աստանօր թէ լեզուն յայտնի ի Պարսկաստան լեալ իցէ Պարսիկն և Պալհաւիկն միանգամայն. Թէպէտև Եզնիկ[14] մեր և Անկետիլ[15] զԶանդիկն դնիցեն նախամայր երկոցունց ևս՝ յառաջ քան զնոյն իսկ Զրադէշտ: Պարսիկ ոճ (ի Զանդկանո՞յն ծագեալ) յատուկ բարբառ էր Պարսայ նահանգի, որ յետոյ ծաւալեցաւ ընդ համօրէն աշխարհն: Իսկ Պալհաւիկն՝ Մազանդարանայ և կողմանցն: Քանզի հնագոյն ևս քան զսոսա՝ համարիմ զոյլ եկիմացին բարբառ: Բահման[16] ի Կայանեան հարստութենէ՝ արգել ըզՊալհաւիկն բարբառ. բայց Բահման Գուր ի հինգերորդ դարուն՝ հրավարտակաւ խափանեաց զայն մինչ իսպառ, և բաժանեաց զնա երկրին ի Պարսի՝ կամ յընդհանուր Պարսից բարբառ՝ և ի Դարի՝ դրան, կամ յատենականն և զիւանի ոճ: Զդիւանականն մեծապէս շքեղացոյց հարստութիւն Սասանեանց: Արտաշիր Սասանեան[17] յօրինեաց զիր Քարնամա՝ Դարիկ բարբառով. որ այնինքն է՝ Գործարան բարոյական և քաղաքական կարգաց, կամ խրատուց շտեմարան. զոր վերստին հրատարակեաց արդարակորովն Նուշիրուան[18]՝ իբրև անփոփոխ կանոն զնացից մարդկան: Տե՛ս ի Պատմ. Պարսից[19]: Ի նոյն բարբառ շարադրեաց և իմաստուն նախարար Նուշիրուանայ՝ Բզուրկ, զիր Ջեփիրնամէ: Արդ եթէ սոքին համարիցին միջոցք հնագոյն բարբառոյ Պարսից՝ ուրեմն ո՛չ երբէք՝ կամ կարի սակաւ փոփոխեցաւ լեզու նոցա. զի զոր ի նոսին ընթեռնումք, զնոյն և ի Հաֆիզ և ի Սադին տեսանեմք զբառս և զոճ:

Ի սկզբանէ եօթներորդ դարուն, առ զենպետութեամբ Օմարայ

Յորդան տուեալ Արաբացւոց ի Պարսկաստան, ո՛չ միայն բարբառ ի բարբառս խառնեցին նոցա, այլ զհաւատ ի հաւատ, զազգ՝ յազգ, և զարիւն՝ յարիւն։ Մի ինչ արժան է յիշատակել աստանօր. զի զամենայն գրեանս՝ որ հակառակ Ղուրանին՝ դատապարտեաց ի կրակ և անհետ արար։ Արդ եթէ Զանդավիստայն յետ կորստեան առաջնոյն՝ իցէ հին, ուրեմն այլ ևս բանակռիւ լինել չպահանջէ յումեքէ. իսկ թէ հնարեալ՝ յայտ է թէ վաղվաղակի յետ սփռելոյ նախահաւատիցն Պարսից ի զանազան հեռաւորս Պարսից և Հնդկաց, յեօթներորդ դարուն. ուրեմն՝ եթէ ո՛չ հնագոյնն, գէթ զհպաւոր հնագունին լեզու Պարսից ի մէջ բերել կարէ։

Քաղցրութիւն լեզուի Պարսից ո՛չ միայն ի ներդաշնակութիւնս հնչմանցն կայանայ, յորում անզուգական հանդիսանայ ի լեզուս Ասիացւոց, այլ և ի զանազան շեշտմունս, բթմունս, ի յանդմունս, և յայլ պէսպէս քերթողական յատկութիւնս իւր։ Անուանք նոցա ո՛չ հոլովին զօրէն անուոյ ի յարադալար մարգաց անտի ի ճահիճս խրթութեանց. այլ յանուանական և ի սեռականն միայն իմանալի առնեն զիմաստս մտաց։ Այն ամենայն հոլովմունք, յորս մերն պատաղիմք ի լեզուի մերում, կապկանալով ստարաց, ի նոսա՝ նախադրութեամբք աւարտին. զոր օրինակ էշխ՝ անուանականն՝ ի հայցական, տրական, և կոչականն լինի էշխրա. զորս ի բաց առեալ, միւս ամենայն հոլովմունք նորա կատարին նախադրութեամբքս՝ բ. բր. ազ. թօ. թա. բրայի և դար. զոր օրինակ՝ տրակ. Բդէ բէշխ։ Բաց. զէշխ։ Պատմ. բրայի կամ զէշխ։ Գործ. բէշխ։ Ներգ. դար էշխ։ Կոչ. ա՜յ էշխ, կամ էշխրա՛, այսինքն՝ սէր։ Ածականք միշտ նախադաս գոյականաց զբարդութեան իմաստ տան. զորօրինակ՝ «խուբռուի»՝ գեղեցիկ. «գօլբուի»՝ վարդահոտ։ Յետադաս՝ զածականի զպաշտօն. զորօրինակ՝ «ռուի խուբ»՝ գեղեցիկ երես, «բուի գօլ»՝ հոտ վարդի. և ի հոլովիլն միշտ նախադասն փոփոխի, թէ ածական իցէ, և թէ յատկացուցիչ, զորօրինակ. «Շահի Իրան» արքայ Իրանայ. «Մալի մարդում» ստացուած մարդկան։ Ածականքն թեքին միայն յինի, իսկ գոյականքն նոյն կան և մնան. զորօրինակ. «բզուրկի փադշահան» մեծն թագաւորաց, «խուշմադայի անառան» համեղագոյն նռանց, և այլն։ Երկու գոյականաց ի միասին եկելոց՝ հոլովի նախադասն միայն. զորօրինակ. «Թաղտի Ռոստամ» աթոռ Ռոստամայ։ Բայք նոցա ի ժամանակս ինչ իւրեանց խոնարհին պէսպէս փոփոխմամբք, բայց ըստ մեծի մասին օժանդակօքն վարին. զորօրինակ. «խահէմ ռաֆտ» կամիմ գնալ։ Եթէ այս և եթէ այն՝ ամենայն հնասիրաց ազգի մերում, ո՛չ միայն պարտականութիւն, զարդ և օգուտ է ուսանել զլեզուն Պարսից, այլ

նաև զնախնի նշանագիրս նոցա. զի ի նոսա կարէ գտանել զհնութիւն աշխարհի իւրում, և զփառս նախահարց։ Ամենայն նախնի յիշատակագրութիւնք ի քարաժայռս Հայաստանի և Պարսից, յաւերակս ապարանից, և ի կոթողս քաղաքաց լի են բևեռագիր նշանօք։

## ՔԷՇ ՊԱՐՍԻՑ

Որոց յօժարութիւն իցէ գտանել զսկիզբն, զմէջ, և զկատարած քէշի Պարսից՝ ուսանիցե՛ն թող զնշանագիրս հնութեանց Հայաստանի, և զընտիր մատենագրութիւն ամեներան հարց նոցա։ Մի՛ ոք առաւել պարծեսցի ընդ Հերոդոտոս իւր՝ և ընդ Ստրաբոն, քան Հայ ոք յիւր Մովսէս, յիւր Եղիշէ, և յիւր Եզնիկ. որոց ի քաջարօրն արտորայ երկնաւոր արդասեաց՝ ցան և ցիր մացառացեալ ցցին կրօնից և կրից նոցա դառն դժնկունք։ Ընթերցասէրս զոլ աղաչեմ ժողովածոյ բանիցս հետևելոց. որ խառն որպէս և են, տակաւին ո՛չ թերանան ի բանածին տեղեկութեանց։

Շեյխ Մահամմադ Մուհսին Ֆանի՝ ծնունդ Քաշմիրայ իբրև դարու յառաջ ճանապարհորդեալ ի Պարս՝ գտանէ մատեան Պալհաւիկ «Դուսատիր» անուն, որ բազմաւորականն է Դաստուր բառիս։ Այն մատեան ապա ժամանակաւ անկանի ի ձեռս Մոլլայ Փիրուզայ Պարսկի ի Բոմբայի, և յառաջ քան զնա ևս քաղեալ տեսանի ի «Բուրհան Քուտահ» անուանեալ գիրսն։ Այս «Դուսատիր» գրուած ասի հնգետասան մարգարէից, որոց առաջին համարի Մահաբադ կամ Մովպետ, այն է՝ Մոգպետ. և վերջին՝ Սասան, հինգերորդն ի համանուն մարգարէս։ Այս Սասան՝ որ ժամանակակից էր Խոսրովու Պերոզի թարգմանեալ «զԴուսատիրն» ի Պարսկական բարբառ՝ յաւել ի նա և զգուշակութիւնս և զկարծիս իւր. և անուանեաց Մատեան Սուրբ. լցեալ օրհներգութեամբ արարողին Աստուծոյ, Արեգական, Լուսնի, Մոլորակաց, և Երկնային Զօրութեանց. յորմէ քաղելով Ֆանեայ՝ ստեղծանէ «զԴաբիստան» իւր։

Անաչառութեամբ ասեմ, իբրև յօդածոյ առասպելք համարէին գիւտ և գունք Ֆանեայ, եթէ չէր հարանց Հայոց հնգետասան դարուք հնագոյնք քան զնա, սփռեալ աստ և անդ ի գիրս իւրեանց՝ խնշեբանս ճշմարտութեան աւանդելոցն ի նմանէ։ Ապաքէն ըստ որում կան ի հնութեանց՝ զորս նոքա զանց առնեն. և «Դուսատիր» յառաջ բերէ. և կան՝ զորս հնգետասան մարգարէքն զանց արարին, և մեր հարքն գրեցին. մնայ ինձ ուրեմն միով զմին լուսաւորել, և իմոց վերծանելեաց զառաջեաւ մատուցանել վճիտ հայելի՝ ըստ տկար կարեաց։

## ՄԱՀԱԲԱԴԵԱՆՔ ԵՒ ՓԻՇԴԱԴԵԱՆՔ

Ֆանի գրիչ «Դաբիստան» գրոց, գուցէ առեալ ի «Դուսատիր» մատենէն՝ յաւելու զՄահաբադեան կամ Մովպետեան հարստութիւն երեսուն թագաւորաց՝ մինչև ցԱզերաբադ. որ զազգն եհան, ասէ, ի խժական բարոյից, ուսոյց հերկ և զայգեգործութիւն ընդ զինուորութեան: Ապա Ջիափրամ որդի Ազերաբադայ հիմն եդ Ջիանեան հարստութեան, մինչև ցՇահ Կուլին և Մահաբուլ, որ հրաժարեցաւ ասի յաթոռոյ՝ վասն տգիտութեան և վատթարութեան ազգին. և յետ նորա Յեսսան Աճամ, որդի նորա. առ որ շարժեցաւ բարկութիւն Աստուծոյ և սատակեաց զնա: Ապա յարեաւ Քէումարս, որ կոչեցաւ Գիլ Շահ:

Փիշդադեան հարստութիւն ըստ ոմանց՝ ութ հարիւր, և ըստ այլոց՝ հարիւր միայն ամաց՝ անդադար պատերազմի ընդ դիւաց. որ այն ինքեանք են խուժադուժ ազինք: Զի և նախնի վէպք Հնդկաց՝ զոչ քաղաքականացեալ բնակիչս Դաքանայ՝ Ռակշայս կոչեն. որ համազօր գիան Պարսկական դիւաց:

Թէպէտև յանաւօտ առասպելաց սակի թուիցին ոմանց քաղուածքն Ֆանեայ, դեռ ևս եթէ սուր հնախուզութեամբ բաղդատեսցուք ընդ Խորենացւոյն մերոյ, գտանեմք խեշերանս ճշմարտութեան ի նոսին: Գործ իւրաքանչիւր հարստութեանցդ վերաբերի ուղիղ ի դար անխարդախ մոգութեան աշխարհիս Հայոց: Իսկ Մահաբուլ ո՛վ իցէ, եթէ ո՛չ մեծն Բէլ. հրաժարեալ և հեռացեալ յիւրմէ աթոռոյ, և կենախուզ լեալ ի Հայկայ. զի արդարև վատթար և տգիտական համարելի էր ժողովուրդն՝ որ մահացուին ընդ անմահին գլուխ խոնարհեցուցեալ, դեռևս այնպէս՝ թողին զնա դի տապաստ առ ոտիւքն Հայկայ՝ և փախեան:

## ՍԿԻԶԲՆ ՄՈԳՈՒԹԵԱՆ

Խորենացին մեր առեալ ի հնութեանց Սաբիլլայ՝ գրէ օրինակ զայս. «Յառաջ քան զբուրգն և զբազմաբարբառն լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկելոյ Քսիսութրեայ ի Հայս՝ Զրուանն և Տիտանն և Յաբեթոստէ լինէին իշխանք երկրի»[20]: Մի յայսցանէ կամ զկնեաց ոչ իցէ և՛ Քէյումարսդ, որ Գիլ շահն կոչեցաւ, իշխան կամ թագաւոր երկրի:

Թէ զնոցա, և թէ սորա իշխանութիւն ո՛չ է մարթ այլազգ առնուլ, քան զտանուտիրականն կամ զտոհմեսական. որ միով անուամբ նահապետական կոչի. յորում հոգ իւրաքանչիւր գերդաստանի կամ անձնատուր ժողովրդեանն՝ հարկիւ մղէ՛ր զնոսա ի գիտ ազգի ազգի արուեստիցն պիտանեաց:

Եթէ բանն իցէ գերագոյն մասն մարդոյ, ապա և առաջին փոյթ նորա վառի միշտ յորոն և ի գիւտ արարող և անսահման էութեանն։ Երկինք և երկիր ամենայն վայելչութեամբք զարդուցն յորդորեն զերախտագիտութիւն նորա, որով մղի մարդ ի զարմանս և ի գոհութիւն բարերարութեան նորա։ Եւ այս կոչի բնական բարեպաշտութիւն կամ կրօն։ Բնական պիտոյք մարմնոյն կարօտ կարևոր արգասեաց երկրի՝ հարկեցուցանէին զնա ի հերկ և ի հուն՝ այլովքն հանդերձ. և սոքա մատամբացի ցուցանէին նմա զգիտութիւն փոփոխման եղանակաց, շրջանի արեգական, անդադար հոլովման մոլորակաց, զտարերաց եղանակ, բնութեան և զբուսականացն ընտրութիւն, որ միով անուամբ կոչի այժմ բնական իմաստասիրութիւն։ Այս եղև առաջին և ճշմարիտ մոգութիւն. զոր նախ ուսոյց Հայաստան ի Զարեանդ և ի Մոգաց անուանեալ դաւառս իւր։ Եւ ընդ Փիշդադեան և ընդ Մահաբադեան կամ Մոգպետական հարստութիւնս անխախտ եկաց մնաց ի Պարսկաստան։

## ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՄՈԳՈՒԹԵԱՆ

Եւ ըստ այսմ նախկին հաւատ մոգութեան որպէս ի Հայս, նոյն և ի Պարս՝ հաւանի գոլ պաշտօն գերագոյն էակին. որ յոչնչէ արար զաշխարհ և խնամէ տեսչութեամբ։ Որում մատուցանէին երկիւղ սուրբ, սէր և երկրպագութիւն։ Յետ նորա մեծարէին զծերս և զծնողս, եղբայրօրէն սիրէին և զազգ մարդկան, գութ և խնամ ածէին նաև ընտանի անասնոց։ Ապա գեղեցկութիւն և կենդանարար զօրութիւն երկնային մարմնոց ամենայն մասամբ կարևոր կենաց մարդկան՝ մղեցին զանհասկացուս արուեստին ի մեծարանս դիտնոց և ի պաշտօն լուսաւորաց։ Հազիւ թէ հաւանելի ընծայի թէ՛ համաշխարհական երես ընդ արևելս աղօթել արևապաշտից՝ ծագեալ իցէ ի դրութենէ անտի դրախտին տնկեցելոյ ընդ արևելս, զի լոկ Ադամայ և կնոջ նորա տխրագին վկայութիւն ո՛չ ազդէր զկնեաց յայնքան երկար դարուց հետէ անխախտ պահել զայն աւանդութիւն։ Մանաւանդ զի հաւանական եւ է, թէ ի բազմանալ ազգի մարդկան և հատուած յամբոխէ անցեալ բնակեալ իցէ յաջ և յահեակ տեղւոյն այնորիկ։ Ո՛չ զարմանամ ես՝ եթէ ընդ է՞ր վերջինս այս՝ սակաւ առ սակաւ արմատացեալ բարձ ի միջոյ սպառ սպուռ զԱստուծոյ անեղծանելւոյ անուն, և զաշխարհ բովանդակ ընդ իւրև կալեալ կորացոյց. քանզի շահ անձանց մոգացն առաւելոյր սովաւ։ Ի վերջին եղծութիւն ճշմարիտ մոգութեան մտանել թուի և պաշտօն Հրոյ. որ եթէ հաւա-

տասցուք Ֆրդովսեայ, որ զթագաւորացն չափեաց վիպասանութիւն, մուծաւ ի Հուշանկայ թոռնէ մեծին Քէյումարսայ։ Յօր մի,—ասէ,— արքայ Հուշանկ հաւատարմօք ումամբք պաշտօնէիւք՝ ի լերինս կոյս միջամուխ գնայ, ուրուական կերպարան ինչ խաւարային և անհեդեդ յանդիման լինի, աչք նորա աղբերակունք արեան, և ծուխ ընդ ռնգունսն ցելեալ՝ միգապատէր զարեգակնն։ Իսկ Հուշանկայ քաջ զերկոյթն կշռեալ, առ քար և հար զվիրագն ահագին։ Այլ քարին և օն անդր ոստուցեալ՝ հարաւ զերեսօք վիմին, և ի փշուրս ճարճատեցաւ, ուստի ել հուր. Հուշանկ յերկիր անկաւ, ի վերայ երեսաց իւրոց պաշտեաց զԱստուած, և սեղան տեղւոյն հաստատեալ՝ ասաց. «Այս հուր է աստուածութիւն յամենեցունց պաշտելի»։

Թէ Հուշանկ, թէ Նիփիստէս և թէ Պրոմեթեւս՝ գտակք կրակի ազգաց համբաւեալք, ամենեքին առասպելք են։ Քանզի ես Հայ եմ, և զիմոյ ազգի պատմութիւն համաձայն ճշմարտութեան գտանեմ։

Նոյ, Քսիսութրէս, Դեւկալիոն, Մնու, և որ այլ խառնափնթոր և խժական անուանք իցեն, զնոյն և զմի նահապետ ազգի մարդկան նշանակեն. որ էջ տապանաւ ի Հայս, յարոյց սեղան, եդ ի նմա զփայտ, վառեաց հրով, և մատոյց ի նմա զողջակէզ իւր հաշտարար։ Աստուած խոնարհեցաւ ի պատարագ նորա, օրհնեաց զերկիր անիծապարտ, և եդ զաղեղն իւր յամպս ի նշանակ յաւիտենական հաշտութեան իւրոյ։ Ջերեքհարիւր ամ եկաց Նոյ ի Հայաստան. և յետ նորա որպէս Հայկ մեր, նոյն և բազմութիւն որդւոց նորա աստ և անդ, ո՛չ դիւրաւ մոռանային զաստուածագործ նշանն։ Ապա զի՞նչ այս նոր կրակի գիւտ, որ ամենեին պիտոյ չէր, զի և ո՛չ աշտարակին շինողք անկրակ զգործ զայնքան հրաշալի առնէին և մեծ։ Այլ զի հեստեալք ի Հայոց զյիշատակ սքանչելեաց հանցեն ի մտաց առաջին ժողովրդոց, և մոռանալ տայցեն նոցա զբուն իւրեանց հայրենիս (զՀայաստան), զի զիւրեանց կալուածս բազմամարդացուցանիցեն, այր իւրաքանչիւր ստեղծին իւրեանց նոր հուր, և նորանոր գտակս հրոյ։

ԼՈՒՍԱՒՈՐՔ

Ի թուլանալ իշխանաց ի փառաց անտի անեղծանելւոյն Աստուծոյ, քաղաքական իրաւունք իմն վարկան թուլացուցանել և ըզժողովուրդ իւրեանց, և ձգել զհետ մոլար և մեռելոտի պաշտամանց՝ թէ լուսաւորաց իցեն, և թէ այլոց սնոտեաց։ Ախտ իշխանական է միշտ զԻշխան փառաց ուրանալ։

Ցանի յիւրումն «Դաբիստանի»՝ Մահաբադեան կամ Մոլայե-

տական հարստութեան ընծայելով զայս պաշտօն, յաւելու. թէ՝ կարի այլանդակ և անհեդեդս նկարէին զնոսա նախնիք Ելիմայ: Սըր Ջան Մալքում, որ՝ յընթացս դեսպանութեան իւրոյ ի Պարս, բազմօք աշխատ եղև ի գիւտ հնութեանց երկրին. զՖանի բնակիչ Քաշմիրայ՝ համարի՝ թէ զՀնդիկն ի Պարսիկն զօղեաց կեշտ. ի նորաձևս և յայլանդակս առնել զդրօշածս բագնաց աստուածոց նոցա: Երկուս մեծամեծ ընդդիմութիւնս յառաջ բերէ սա. մի՝ զի նշան նկարուցդ ո՛չ երևին՝ ասէ ի քանդակսն Պերսեպօլսոյ կամ Թախտը Ջմշիդայ. միւս՝ զի Հերոդոտոս՝ որ բազմօք զկնի գրեաց 444 ամօք, ո՛չ ըղմեհենից շինութիւն յիշէ, ո՛չ կռոց կոփումն, և ո՛չ զբագնաց տեղիս. այլ միայն, զի ի բարձունս զոհէին լուսնթագին, և երկիր պագանէին արեգական, լուսնի, երկրի, հրոյ, ջրոյ և օդոյ: Երկոքին փաստքդ ևս բանաւոր և անվկանդունք են. բայց և այնպէս՝ կան աստ և անդ նշմարանք ստուգութեանց գրութեան Ֆանեայ, զորոյ յետ ի կարգի դնելոյ ստանօր զդրօշուած մոլորակացդ՝ ըստ «Դաբիստանի»՝ ջանասցուք յայլուստ հաստատել:

ԴՐՕՇՈՒԱԾ ԼՈՒՍԱՒՈՐԱՑ

«Դաբիստան» զՄոլորակս բոլորակ գունդս լուսաւորաց համարի, բայց այլանդակ և յանհեդեդ կերպարանօք յայն սակս դրօշեցան՝ ասէ՝ զի հոգիք նոցա կամ պահապանքն անուանեալ հրեշտակք՝ այնպէս երևեցան սրբոց դարուցն երևակայանաց: Այս ոգիքն անուանեալ աստեղաց կամ մոլորակաց՝ պէսպէս կերպարանօք կերպարանէին, ասէ: Եւ ինձ ո՛չ իւիք անհաւանական բանքս երևին. քանզի ուստի՞ այն անհամար ծագումն քաջաց, պարկաց, պայից, այկաց խօլից և դիւաց՝ յերկոսին սեռս մարդկան. յաւէրժ հարսանցն հարսանիք, և որ այսպիսի մթին առասպելք՝ որ յառաջին դարուց հետէ աշխարհիս և յաւիտեան՝ կալեալ գրաւեալ ունին զմիտս մարդկան. զորս իմաստունք ազգաց երկեղի ծնունդս ասացին. բայց ուստի՞ երկիւղ, եթէ նախապաշարեալ չիցեն միտք մօտալուտ վտանգօք: Տղայն տգէտ վտանգի իւրոյ՝ զերկիւղ չզգայ ամենևին. ապա յաւէտ ասել պարտ է՝ թէ խորամանկութիւն քրմաց արար զնոսա այլանդակս, զի ահ արկանելով ռամկին՝ զիւրեանց ընդ նոսա հաղորդութիւն՝ աստուածամերձութիւն ինչ համբաւիցեն:

1 Երևակն՝ Կռոնոս՝ Զոհալ՝ Քէյվան՝ ի սեաւ կճէ դրօշէր, զգլխով կապկի, մարմնով մարդոյ և գաւակօքն խոզի. թագ զմբեթեալ ի գլուխ բոլորակ խեմ յաջոյ, և օձ գալար՝ ի ձախոյ իւրում:

2 Լուսնթագն, Արամազդ, Որմիզդ, Զեւս, Մուշթէրի, Զաւաշ՝ հո-

ղագոյն դրօշէր, չիրանի մարդոյ և ի գլուխ ցնոյ կամ ուրուրի. ի վերայ որոյ՝ թագ եռանկիւնի, և ի նմին գլուխ աքաղաղի և վիշապի. յաջ նորա փաթեթ կտաւոյ. իսկ ի ձախն՝ սրուակ ջրոյ։

3 Հրատ, Արէս, Մարեխ՝ կոփէր յարձան մարդակերպ՝ մերկ, և թագ ի գլուխ. աջ նորա կախ զկողէ ի վերայ սակեր մեծի յազդեր. և ձախովն ամբառնալով զքուք ինչ երկաթեղէն։

4 Արեգակն, Հիլիոս, Միհր, Խօռ, Խուռշիդ՝ ձուլեալ յոսկւոյ սրբոյ. դրօշէր այր երկագլուխ. ուրոյն ունելով թագ եօթնաշառաւիղեան, ընդելուզեալ յակնթօք՝ որոյ թէև դէմք մարդկային՝ այլ ունի զտուտ վիշապի. ի պարանոցի նորա քայռ ականակուռ, և ի ձեռին՝ գաւազան նուրբ, հեծեալ ի նժոյգ աՀիպարանոց։

5 Աստղիկ, Արուսեակ, Արօրա, Զոհրայ, է անդրի մերկ և իգակերպարան. ունի թագ եօթնաշառաւիղեան ի գլուխ իւրում. յաջոյ կրէ ստոման խղոյ, և ի ձախոյ զսանտր։

6 Փայլածու, Հերմէս, Ուղարիտ, Թիր, Դպիր, դրօշի ի կրծոցն ի խոնարհ՝ ձկնակերպ. և ի գլուխ Վարազու, յոր եդեալ կայ թագ. յաջոյ կրէ զգրիչ, և ի ձախոյ՝ զկաղամար։

7 Լուսին, Անահիտ, Մահ, նկարի ի ձև կուսի հեծեալ ի ցուլ սպիտակ, յաջոյ կրէ զհամրիչ կամ զշարան յակնթաց, և ի ձախոյ՝ զշիւղ ռեհանի կամ շահասպրամի։

Յաւելու «Դաբիստան» պատմել ուրոյն ուրոյն և զտաճարս ի տաճարաց սոցա, և զխրաքանչիւր ջոկիրս ի պաշտօնէից. եւ և ըզժամանակ և զկարգս պաշտամանց։ Ցուցանէ, զի մոլորակք բոլորաձևք էին. և այլանդակ կերպարանքն, յորս նկարեցան՝ էին ոգիք նոցա երևեալք սրբոց դարուցն երևակայականաց։ Այսոքիկ ոգիքն անուանեալ աստեղաց կամ մոլորակաց՝ պէսպէս կերպարանօք կերպարանին՝ ասէ, զորոց և յաւելու դրօշածոյս և կոփածոյս անհամարս։

ՆՇԱՆՔ ԳՐԵԼՈՑՍ Ի ՊԱՐՍ ԵՒ Ի ՀԱՅՍ

Եթէ ոք զԱրարատայ, զՏապանէ և զՆոյէ գրել ինչ ախորժիցի՝ մեծապէս ի փաստ առնու դրութեանն՝ զաւանդութիւն հնութեանց Հայոց՝ յարդի բնակչաց նորա։ Ապաքէն՝ որ ի վերայ Պարսից խօսել կամիցի՝ շատ է նմա գտանել զնշան ինչ հնութեանց ի բերանոց այժմեան բընակչաց նորա։ Զայս եդեալ անսայթաք կանովն իմոց ընթացից, ասել համարձակիմ. զի թէպէտև ազգ ազգի վերայ յարեան՝ և աղանդք աղանդոց՝ ի Պարսկաստան, սակայն այսօրինակ տեսութիւն մոլորակաց և ոյժ ազդեցութեանց նոցա ի ստորինս, կայ և

*մնայ տակաւին անդ յիմաստնոց ցամփիկս նորա։ Արքայական եղեալ դաստիարակ շատ տարի, զգիտաց և զաղթարաց նոցա ընկալայ զընկերութիւն. բայց այնզի՝ հաւաքածոյք իմոց գրութեանց ո՛չ այնքան զօրեն, ի վկայութիւն յապացոյց առնում բանիս, զայլոց ուրումն գրուած։*

*Յամի Տեառն 1800. ի ճանապարհորդել Սըր Ջան Մալքոմայ Անգղիացւոյ յաշխարհ Պարսից՝ արքունի աղթար ազգին ի Շիրազ, գուշակեաց զբաղտ նորա՝ հետազայ օրինակաւ. «Օրհնութիւն այնմ մեծի Արարչի՝ որ արար վերկիր՝ զերկինս՝ և զամենայն զօրութիւնս նոցա, յորոյ ի մէջ պարարածոց երևի մարդ իբրև զյուլտ աննշան։ Խաւարային Երևակ՝ որ իբրև պահ հսկէ եօթներորդ երկնից՝ զամագիտ է կամաց սորա։ Փառաւորեալն Լուսնթագ, իբրև դատաւոր արդար զահաւորեալ ի վեցերորդն երկնից՝ տեսուչ է խորհրդոց սորա։ Արիւնային Մարեխ՝ բոցավառ սակերբ ի հինգերորդ երկինս՝ կամակատար բարկութեան Արարչի իւրոյ՝ օգնական է սորա, Արեգակն շրջապատեալ բոցեղէն պսակօք, որ ճառագայթարձակ փայլէ ի չորրորդ երկինս՝ լուսովն Ամենակալին՝ օգնական է սորա։ Գեղեցիկն Զոհրա՝ որ իբրև հարսնիկ նուագածու՝ զուարթ բազմի յապարանս իւրում յերրորդն երկնից՝ հեշտութիւն է սորա։ Թեփուտեալն Փայլածու, դպիր արագագիր պատգամաց Ամենակալին, որ նստի յերկրորդ յերկինս. նշանաւոր է սորա։ Լուսին անաղօտ՝ յառաջնում երկնի՝ նշան սքանչելի զօրութեան Արարողին զօրաւիգ է սմա»[21]։*

*Յամենայն ճանապարհաց բարեաց մոլորի մարդ, բայց ի ճանապարհէն մարմնական շահուց՝ դուն ուրեք երբէք։ Կոյրք անգամ որոնեն և գտանեն զայս ճանապարհ. ուր լուսաւորեալքն աչօք մարմնոյ՝ միշտ վրիպին ի հոգևոր բարեաց անտի։ Արդ այս մասն ախտարութեան մարմնաւոր շահուց է արարող. ուստի և անմոռաց հնութիւն զօշաքաղ ազգին։*

*Եթէ կայր և ի Հայս այս պաշտօն, և հնագոյն քան զայս՝ գիտութիւն մոլորակաց՝ յայտնի առնէ քեզ անուն «Եօթնփորակեան Բագինք» անուանեալ գաւառի Փայտակարան նահանգի Մեծին Հայոց, որպէս և այլք՝ աստ և անդ՝ ի Տիքոն, ի Ծօշ, և այլն։*

*Խոսրով Մեծն Արշակունի՝ յետ մեծի յաղթութեանն ի վերայ Շապհոյ Պարսից արքայի՝ ցուլս սպիտակս արարէ առ Եօթն Բագինս կռոց՝ ըստ Ագաթանգեղայ մերոյ. որով երևի, զի առաջին փառք յաղթանակաց նախնեաց մերոց՝ էր ձօնումն դից աստեղաց[22]։*

*Ձեօթնալոյս Արեգակնէ և զհրաշակերտ կրակարանաց զեօթնադուռն տաճարաց, որպէս և զԵօթն Թույ Աստեղաց և զահաւորա-*

գոյն խորհրդոց նոցա՝ բազումք ի քրմաց և ի քահանայից երկարօրէն գրեցին։

### ԵՐԵՒԱԿ

Դրօշի ի սեաւ կճոյ, գլխով կապկի, իրանաւ մարդոյ, և գաւակաւ խոզի։ Թագ կամարեան ի գլուխ. խեմ յաջն, և օձ գալար ի ձախ իւրում։

Սեւութիւն կճոյ, յորմէ դրօշէր բագին Երեւակին ակնարկելով ի գիշերն նախարար՝ նշանակէ զյաւիտենականութիւն. խեմ մազին և օձ գալարեալ՝ նշանակ է տարւոյ. կամ երկուց լուսաւոր շրջանակաց իւրոց. ուստի և Երեւակն համարէր աստուածութիւն ժամանակի։ Գլխով կապկի ի մարդ ձեւանայ. ցուցեալ՝ թէ նմանողականն բազմիցս ի կատարեալն արմատանայ գիտութիւն։ Բայց առաւել ևս հաւանական լինի ասել. թէ որպէս կապիկն սեղմելով ի ծոց ըսպանանէ զձագ իւր, նոյնպէս և ժամանակն նախ գոկէ և ապա ընկրկէ զկեանս ամենայն ծննդոց իւրոց։

Գաւակն խոզենի՝ բարոյականապէս զտգիտաց ժամանակին վիճակ յայտ առնէ։ Բայց առաւելապէս՝ թէ որպէս խոզ ուտէ ըզնորածին գոջակս իւր, նոյնպէս և ժամանակն ծախէ զամենայն հասակ։ Կամ՝ խոզանման ապականութիւն վարուց մարդկան՝ եղելոց ընդ ժամանակաւ, զի խոզ ինքնին քանդիչ և ապականիչ է։ Հնդիկք զՍիպ և զՍանի ի սեաւ կճոյ դրօշեն, որ իբրև աստուած ժամանակի՝ ապականարար եղանութեանց համարին։ Որում և զճայն Նուիրական դնեն, որ ի մէջ թռչնոց կարի հազուագիւտ, ըստ որում և սա ծուատէ և ուտէ զձագս իւր՝ յօրինակ եղծութեան ժամանակին։ Տե՛ս ծան. «Սօս և Սօնդիպի» գրոց։

Բահաղ անուամբ պաշտէին զսա Փիւնիկեցիք և Մովաբացիք, զոր և կոչէին աստուած շրջանակաւոր. եթէ ուղիղ իցէ այս՝ զոր քաղէ Հնախօսն Հայաստանի[23]՝ վասն արևոյ՝ ես առաւելագոյն ևս յարմարութեամբ առնում ի վերայ Երեւակին, ի պատճառս երկուց լուսաւոր շրջանակաց նորա՝ մի զմիով ագուցելոց՝ որով լուսաւորի մակերևոյթ հազարիցս քան զերկիր մեծագոյն սկաւառակի նորա։

Մնայ ինձ ասել, թէ որպէս ազինք աշխարհի իւրաքանչիւր հաճոյական անուամբ որոշեցին զԱրամազդ նովին և իւրաքանչիւր ի նոցանէ կերպարանափոխ արարեալ զՆոյ՝ անուն կարդացին նմա Քիսուլթրոս, Կրոն՝ Սատուռն, Դիոնիսիոս, Բաքոս և Սպանդարամետ, և հանին յԵրեւակն ի վեր, յառաջինն ի մոլորակաց. ուստի որ ինչ երախտիք նահապետին յազգ մարդկան, և որ ինչ ազդեցմունք

մոլորակին ի ստորինս՝ յարադրեալ և զօդեալ իրերաց՝ ձուլեցին զայն տեսակ արարածապաշտութեան՝ որ կոչէր սապայութիւն, կամ պաշտօն զօրութեանց երկնից։

Ռեմփայ անուամբ պաշտէր. և աստղն Ռեմփայ ի Հայ թարգմանութեան Աստուածաշնչին՝ կոչի Հայկ, իսկ ի Յոյնն Օրիոն։ Կանխաւ յառաջ ցուցեալ է իմ յայլուր, թէ Հայկ նահապետ Հայկազանց ի յետնոց աստուածացուցեալ հանեալ իցէ յերկինս անդր. և պաշտեալ իբրև զկրօն Հայոց[24]։ Բայց զարդիս առաւել քան զառաւելն հաստատին յիս այս կարծիք. ո՛չ այնքան վասն աստուածութեան Հայկայ՝ մերոյս նախահօր, որ աստուածային փառացն նախանձախնդիր, որքան վասն ուսուցանելոյ նորա զմոլորակէն։ Նախ զի՝ Հայկ, այսինքն՝ Հայիկ, հայեցուած կամ նկատողութիւն, մի և նոյն է՝ որ ինչ և Երևակն, երևեալ, կամ երևարար՝ ի մեր լեզու։ Երկրորդ՝ զի միւս անուն նորա յԱրաբացին և ի Պարսկականն՝ Քիլվան. որ նշանակէ զարքայավան կամ զթագաւորավանն։ Զի Քիլ՝ զարքայ նշանակէ, և վանն՝ վանող. և է սեփհական յատկութիւն մերոյս Հայկայ՝ որ զառաջին զբռնակալն և զտիրողն ի վերայ ազգաց՝ վանեաց զԲէլ՝ և սատակեաց։ Երևակին ընծայի լինել հայր ամսոց և աւուրց. Հայկ՝ ըստ հնախօսութեան աշխարհի մերում, որպէս գրէ Անանիա Շիրակացին՝ եղբայր էր երկոտասան ամսոց. և հայր քսան և չորից ժամուց[25]։ Կեղծիք՝ կամ ո՛չ կեղծիք, փո՞յթ չիք։—Այս կարծիք էր իմ քսան և ինն ամօք յառաջ՝ այս հաւաստիք ի հաստատութիւն, թէպէտև զկնիք և օրինակողք նոցին ո՛չ սիրեցին հետևել. զմտաւ ածեալ թէ՝ մի՛ գուցէ զհայր ազգին կապաշտեցուցանիցեն։ Այդ իմ յառաջագոյն մերժեալ է բաւիբս՝ «յետինք և զկնիք»։ Բայց ե՞կ Հա՞յդ, որ զաշխարհ քո գնես սանդարան մարդոյ, և փրկարան մնացելոցն ի մարդկանէ. զԱրարատ՝ Նոյի կայան, և Աստուծոյ հաշտարան. Զարևանդ՝ զԱրևոյ ուսումնարան. և զՄոզաց քո նահանգ՝ սկզբնարան մոգութեան. և աստ աղէ՞ թէ նախահայր քո տգէ՞տ ումն էր աստեղաց՝ թէ որպէս հաւանիմս՝ գտակ իսկ և վարդապետ Երևակին, որով և արժանապէս համարեալ իբրև զոգի իմն վերածեալ յայն գունտ, և հայրացեալ ամաց, ամսոց, աւուրց և ժամուց։

Եթէ սովին զրութեամբք չծանեայց ես զՀայկ՝ գտակ և վարդապետ աստեղաբաշխութեան. մանաւանդ՝ բարձրագունին ի նոցանէ, և պատճառս չտաց զկնեաց և կատարելոց՝ նոյնպէս համարել զնա, անխրախիմ բազմարդիւն աշխատանաց ազգասիրագոյն գրչի Հ. Ղուկասու Ինճիճեան՝ և այլոց, որով Հայք և Հայաստան շքեղացեալ և պարծին։

**Դրօշէր** *հողագոյն՝ չիրան մարդոյ, ի գլուխ ցնոյ, թագ եռանկիւնի ի վերայ՝ ի կատար աքաղաղի կամ գլուխ վիշապի՝ զարդ. յաջն փայթեթ կտաւոյ՝ և ի ձախն դորակ ջրոյ։*

*Նախ՝ Լուսնթագ անուն՝ որ զլուսաւորն թագազարդեալ նշանակէ, ցուցանէ զհնութիւն դիտութեանն՝ զնմանէ՝ առ նախնիս մեր։ Երկրորդ՝ այլ և այլ անուանք նորա ի մեզ, որպէս՝ Արամազդ անուն. և երիզատեսակ բիծք մակերևութին՝ անուանեալք գօտի կամ հիր Արամազդայ՝ յատկացուցանեն զայս մոլորակ՝ ըստ բուն և ստոյգ մոգութեան աշխարհիս մերոյ, զայն՝ զոր ի չորեքհազար ամաց հետէ ծանեան և ստորագրեն նրբազնինք ազգաց՝ այլ ո՛չ ինչ առաւելուն։*

*Ախթարք Պարսից ձևացուցանեն զԼուսնթագն իբրև դատաւոր արդար. և հսկող խորհրդոց։ Եւ ըստ այսմ, առասպելք ազգին՝ ըստ յառաջ բերելոյ Եզնկայ մերում, կարդէ զնա դատաւոր ի մէջ վիճիցն Որմզդի և Արհիման*[26]*։*

*Անունդ Արամազդ, որ այնինքն է Արամաստուած՝ ցուցանէ, թէ զկնիք Հայոց զԱրամ զՔաջն ի նահապետաց ի նա հանեալ պաշտէին։ Որում և ազգի ազգի կատարելութիւնս ընծայէին, որպէս թուէ Երզնկացին մեր։ Երկոքին յատկութիւնքն ևս՝ առեալ ի հին դրօշուածոյ սորուն, գլխով ցնոյ՝ զնրբութիւն տեսութեան յայտ արարեալ՝ և կատարաւն աքաղաղի զանքուն հսկողութիւնն, համաձայն գնայ պատմութեան Մեծին Արամայ՝ որ ցնօրէն զհոտ էառ, և հսկողօրէն ի վերայ յարձակեցաւ թշնամեաց Ազգի մերում, նախքան զծագել արևուն։*

*«Եւ Լուսնթագ՝ որ ի յորդւոցն Հայկական»։*

*Եթէ ընդունիմք, թէ ամէն ազգ ստեղծին իւրեանց յատուկ յատուկ Արամազդս. ընդէ՞ր չընդունիցիմք, թէ և Հայք՝ զԱրամազդ իւրեանց։*

*Կոչի Լուսահայր, զի լոյս տայ ամենայն մոլորակաց Արևակարգութեան իւրոյ. գուցէ և այլոց իսկ։*

*Վանատուր՝ յոր անուն բազում վանք կամ կարաւանսարահք կառուցան ի Հայս և ի Պարս՝ յընդունելութիւն օտարաց. որպիսի է և այն՝ որ կառուցաւ ի վերայ գերեզմանին Մաժանայ։*

*Հուր մշտավառ պահէր սմա ի տաճարի, և անունդ Որմիզդ՝ յոմանց Պարսկական համարեալ բառ, է բուն Հայ, և նշանակէ Հուրմիշտ։*

Դրօշի յայր մերկ՝ թագ ի գլուխ. աջն կախ ի վերայ սակերն յազդեր. և ի ձախ իւրում քուք երկաթի կամ կարիճ ամբարձեալ:

Մերկ նկարի, ըստ բնականին՝ զի համարեալ է ողջոյն հուր կիզողական. իսկ ըստ որում աստուածութիւն պատերազմի՝ մեր- կացուցանէ զաշխարհ ի կենաց: Թագ ի գլուխ նորա՝ նշանակէ զպարծանս յաղթութեան. աջն կախ ի վերայ սակերն յազդեր, զսպառնալիս անագան պատուհասին յայտ առնէ, իսկ ձախովն բարձրացուցանել զքուք՝ զմասնաւոր և զապազօր պատուհաս ասափ կենաց գուշակէ: Սա կոչի կամարար արդարահաս բարկութեան Արարողին, զորմէ գեղեցիկ նուագէ մերս Եզնկային:

## ՄԻՀՐ, ԽՈՌ, ԽՈՐՇԻԴ

Զոյլ ոսկի երկագլուխ մարդոյ, կրկին թագ եօթնաշառաւիղեան ի գլուխս իւր, քայռ ի պարանոյին, գաւազան նուրբ՝ ի ձեռին. այլ ի կրծոցն խոնարհ՝ աւարտեալ ի սուտ վիշապի. հեծեալ ի նժոյգ: Երբեմն դրօշեալն արևու ձևացեալ էր ի կերպարանս մարդոյ, այլ եղջիւր ցլու ի գլուխն ունելով ի նշան ճառագայթիցն, և երբեմն գլուխ քառադիմեան մարդոյ (Հն. Հայ. 157)[27]:

«Յուլ արարիչ աշխարհի է» (Ալիշան, բ. 545):

Այս դրօշ Արեգական գրեթէ ասեղաբաշխական է. եօթնա- շառաւիղեան թագիւ յայտ արարեալ զեօթնափայլ որակս լուսոյն. նուրբ գաւազանաւն՝ զցոլմունս ճաճանչիցն. խոյանման եղջերօքն՝ զփառս ճառագայթից իւրոց, կրկնադէմ կամ քառադէմ երեսօքն՝ զհամատարած լոյս իւր. իսկ ի կրծոցն ի վայր աւարտելն ի վիշապ՝ զհին կարծիս մոգաց մերոց ի մէջ բերէ՝ որք զատուեր երկրի, կամ զայլոց մոլորակացն ձգեալ զերեսօք նորա՝ համարէին զոլ վիշապ ինչ ահագին՝ որ կլանէր զարեգակն, կամ ընդ տատամբ արկանէր:

Ինձ թուի, թէ հինք ազգիս զԱրայ եդին յարև Հայոց, զի զոր ինչ Յոյնք զԱպողոնէ և զՊառնասայ իւրեանց՝ առաւել քան զնոյն գտանէմ առ Մխիթարայ բժշկի Սեբաստացւոյ[28] վասն Արայի մերոյ՝ և լերին նորա: Ուր գրի վասն իմաստասիրութեան: «Ա՛ռ երեք սուրբ դաստառակ. և երեք շիշ. և երեք կրօնաւորք. և դնա՛ ի լեառն Արայի՝ ի Վարդավառին գիշերն, և արա՛ մատաղ ընդ առաւօտն: Կապէ զդաստառակներն ի յոտն կրօնաւորաց. և ա՛ծ շուրջ սաղմոսելով և աղօթելով, որ դաստառակներն շաղ առնուն: Քամէ և լի՛ց ի շիշայն՝ և թաղէ ի շուր տեղեիտէն: Թո՛ղ քառասուն օր, և հա՛ն ի տեղւոյն: Առաջինն լեալ է զերդ մարդ. և միւսն՝ որպէս

ձագ հաւպատկեր, և միւն՝ ձկան պատկեր։ Զայն՝ որ զինչ մարդո՛ պատկեր է, եփեա՛, զքաֆն ի վերա լեզուիդ դի՛ր, և քուն լե՛ր, զինչ լեզու կենա՝ զրուցեա։ Եւ զայն որ հաւու՝ պատկեր է՝ զքաֆն ի լսելիդ դի՛ր, զինչ հաւք և ծաղկունք զրուցեն՝ հասկանաս։ Եւ այն՝ որ ձկան պատկերն է, եփեա՛ և զքաֆն ի ներբանքդ օծէ. ի վերայ ծովուն գնաս՝ որպէս ի վերայ ցամաքի։ Բայց մարդն սուրբ պիտի յամենայն մեղաց»։

Ասիցես՝ տի՛ր են առասպելքս, և ես պատասխանեմ թէ՝ ո՞ր հին դիցաբանութիւն չիցէ առասպել։ Եթէ այլք վայրագ երևակայութեամբ զիւրեանցն փաստի փոխանակ առնուն, ընդէ՞ր ո՛չ և ես զիմ ընտել և զհաւանականն։

Ծագումն և մուտք Արեգական սքանչելի նմանութեամբ օրինակին ի մահ և յարութիւն մերոյս Արայի. տե՛ս ի Դիցաբանութեան իմում, յէջ 10—11։

Անուանքս Միհր, Միհրան, Միհրդատ, խռ. և այլն՝ չգտանին առ Հայկազունս մեր. որով իմանամ՝ զի յաւուրս Արշակունեաց, ուր ըստ գրելոյն Վաղարշակայ՝ «Ո՛չ կարգս ինչ յայտնի նշեալ. և ո՛չ մեհենից պաշտամունս», զնահապետս ի մոլորակս հանին մտօք՝ զի զրաւեսցեն զնախնիս մեր։ Յայտնի ապացոյց է բանիս՝ զի որք յայդ անուն փայլեցան յաշխարհի մերում, գրեթէ օտարքն էին։ Եզնիկ և Եղիշա՝ նուրբ ընթերցողաց առաջի՝ բանան զերևելիս հնութեանց ի մասին այսորիկ։

### ԼՈՒՍԱԲԵՐ, ԱՐՈՒՍԵԱԿ, ԱՍՏՂԻԿ

Անգղի կնոջ մերկոյ, թագ ճաճանչաւոր ի գլուխ յաջն՝ ստոմանխիզոյ, և ի ձախոյ՝ սանտր։

Մերկութիւն Արուսեկին և ճաճանչաւոր թագ նորա, զպայծառութիւն լուսոյն յայտ առնեն՝ մոգական բնաբանութեամբ։ Իսկ ստոմանխիզոյն՝ որ յաջ նորա՝ զփափկութիւն. և սանտրն՝ զպէսպէս փորձութիւնս կանանց՝ դիցապաշտութեամբ յաւելեալ ի նա։

Արուսեակ է բառ պարսկական և նշանակէ հարսնիկ։ Իսկ ի մեզ տիրապէս ևս՝ Աստղիկ, Այգաստղ կամ Աստղ Այգու։ Եթէ ընդվայրաբար վաստակիլ չկամիցիմք, շատ է մեզ հանել զսա ի հնութիւնս Հայկազունեացն՝ բանիւ և եթ Շիրակացւոյն. որ տայ Նոյի դուստր ունել Աստղիկ անուն, և Աստղնբերդ նախ ի Տարօն շինել. և Ջրուանայ և Տիտանայ խռովութեանցն խաղաղարար՝ որ կատարեալպէս յարմարի ժամանակի Արուսեկին ծագելոյ[29]։

Առ Խորենացւոյն մերոյ՝ ոչ յիշի որոշ ժամանակ պաշտաման սորա,

քայց թէ Հիւրկանու երդումն խնդրեալ ի Բարզափրանայ և նա երդնու՝ սուտ, նմա՝ յարեգակն և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս:

Վրէպ իմն է շփոթել զԱստղիկ ընդ Անահտական դից, զի չիք ընաւ յարմարութիւն ընդ Մօրն ամենայն զգաստութեանց. և ընդ Աստղկան՝ «որ զբղջութիւն առեալ փախչէր առ Հոմանիս իւր»[30]:

Երկրորդ՝ զի ըստ Հին դիցաբանից. «Յորժամ մարդիկ առ ոտն հարին զխորհուրդս երկնից. և զնա որդւովն հանդերձ ընկեցին ի ծով՝ սա (Աստղիկ) ի փրփրոյ անտի ծնեալ՝ եղաւ ի խեցեղէն տապանի, և բերեալ Զեփիւռոյ՝ յանձնեցաւ դայեկութեան Ժամուց և Եղանակաց»[31]:

Ճշմարիտ հնախօսից և տեղեկագունից Ազգիս թաղում համեմատել զայս առած՝ ընդ անվրէպ պատմութեան Սուրբ Գրոց. թէ, ո՞րպէս առ ոտն հարին մարդիկ զխորհուրդս երկնից, թէ ո՞րպէս Նոյ, որ Քսիսութրոս կամ Սատուռնոս, և ժամանակ՝ ընկեցաւ ի ծով, այսինքն ի վերայ համատարած հեղեղաց, և թէ որպէ՞ս դուստր նորա, գուցէ ծնեալ ի նմին իսկ տապանի՝ որ ի հարկէ բերէր թևօք Զեփիւռոյ. իբրև զմոլորակն, ապա յանձնեցաւ դայեկութեան ժամուց և եղանակաց: Ասացի իբրև մոլորակ, զի Արուսեակ ճըշգութեամբ ժամանակի ծագման իւրոյ՝ առաւել քան զարև և զլուսին՝ չափ դնէ ժամուց: Արեգակն ըստ Սուրբ Գրոց չափէ զտիւ. լուսին՝ զգիշեր. բայց Աստղիկ միայն է ժամացոյց երկոցուն միանգամայն Կոչի և Ծովածին, անուն գերայարմար դստեր Նոյի, քան թէ յերեկեան Յունական առասպելացն, որք ասեն, թէ այնգի արձան Վինուսայ նաւու բերաւ յարևելից ի Կիպրոս, համբաւեցին զնա ի փրփրոյ ծնեալ: Ծնո՜ւնդ, արդարև Նիկոդիմեայ զարմանացն արժանաւոր. այս է, վերստին յորովայն մօր մտանել և ծնանել: Թէ մարդ Աստղիկ, թէ մոլորակ. և՛ յառաջ ծանուցեալ, և՛ յարձան հանեալ իսկ էր. յորժամ բերէր ի Կիպրոս. բայց Արիստոտէլ, որ գրեթէ միշտ նուրբ նկատելով խօսի զրդութեանն այսպէս կոչեցեալ դնէ զնա, յարմարական մեկնութեամբ:

Պարսից աղթարք իբրև նուագածու զուարթ ձևացուցանեն զնա. թերևս առեալ ի վարդապետութեանց Ասկուրանին, բայց և Ասկուրան առնու զայն ի Զրադեշտական քէշիցն կարկատողաց, որք դնէին զնա նուագածու զուարթ. և ասէին թէ՝ զՀարութ զՄարութ ըզմայլեցուցեալ երգովք՝ ուսաւ ի նոցանէ զհմայս. և սլացաւ վերացաւ յերկինս. պայծառագոյն արշալուսել զփաղփիւն գեղոյ երևացն ի գրգիռ տարփածուաց իւրոց:

Վկայութիւն Ագաթանգեղայ կարծեմ բաւական իցէ ի չքումն ընդունայն կարծեաց, որոց զԱստղիկ ընդ Անահտայ շփոթեն։ «Երկրորդ մեհեանն անուանեալ Աստղկան դիցն, Սենեակ Վահագնի կարդացեալ՝ որ ինքն Ափրոդիտէս»[32]։

## ՓԱՅԼԱԾՈՒ. ՏԻՐ. ԴՊԻՐ, ՎԱՐԱԶ

Ի կրծոց ի վեր՝ վարազ, իսկ ի խոնարհ՝ ձուկն. յաջն՝ գրիչ, իսկ ի ձախն՝ զկաղամար։

Վարազ անհեղագոյն ի կենդանեաց՝ յորժամ գրգռիցի ի կատաղութիւն. և ձուկն սրաւար լուղակ ջրոյ՝ իմաստասիրաբար յայտ առնեն զանհնարին արագութիւն մոլորակիս շուրջ զարեգակամբ։ Իսկ գրիչ և կաղամար՝ ի վարդապետութենէ աւելորդապաշտից տուան նմա, իբրև գիտութեան դից Դպրի։

Անունս Թիր կամ Տիր յայտնապէս յիշատակի առ Ագաթանգեղոսի. «Երազընդհան պաշտաման Տիր Դից, Դպրի գիտութեան քրմացն, անուանեալ Դիւան դպրի Որմզդի ուսմանն ճարտարութեան»։ Զմեհեան սորա յԱրտաշատ կործանեաց սուրբն Գրիգոր[30]։

Իսկ առ Եղիշէի Մոգպետն ամոքել կամելով զզարհոյր զօրականացն՝ որք պահպանէին զնշխարս սրբոց Ղեւոնդեանց քահանայից, ասէ. «Վաղիւ ի Դուռն Թիր նկա՛յք (այսինքն ի դուռն Թիր Դից), զի մովպետան մովպետ ռատ առնէ»։

Անունս Տրդատ և Տիրան նշանակ են հնութեան պաշտաման սորա, զի Տրդատ ո՛չ այլ է՝ քան Տուրք Տիր Դից, զոր ոմանք տէրդատ ստուգաբանեցին։

Նոյնպէս և անուանքդ Վարազդէն և Վարազդատ ո՛չ այլ ինչ նշանակեն, քան զտուրք և զհաստատեալն Վարազու։

Երազընդհան լսի, և ըստ դիւցաբանութեան՝ զոր ինչ Հերմեայ Եգիպտացիք. զայն ամենայն Թիր Դից տային Հայք և Պարսք։

Ամենայն մեղք և վարձք կախեալ կային զգրչէ սորուն։

Ահաւորագոյն երդումն էր ի մէջ Պարսից և Հայոց՝ աղ կնքել վարազագիր մատանեաւ, որպէս գրէ Բուզանդ. «Ըստ օրինաց հաւատարիմ երդմանց թագաւորացն Պարսից՝ աղ կնքեալ վարազ նըկարագիր մատանեաւ»[34]։ Ստեփաննոս Օրբելեան ի թուել զարտօնութիւնս իշխանին Սիւնեաց՝ «Հրամայեցաւ,—ասէ,—նոցա՝ գահոյս ունել արծաթի, և վարսակալ ածել մարգարտեայ, և մատանի ունել վարազագիր» (Օրբ. գլ. դ)[35]։ Դարձեալ յաղագս Շապհոյ՝ «Վճիռ կնքեալ վարազագիր մատանեաւ»։ Արդ չէ պարտ ըստ հնախօսին մերոյ՝ առնուլ զայս ի խոր կամ յաւէտ բարձր փորագրութենէ

տառից, որպէս համարի նա. այլ վասն պատկերի վարագու, և այն Փայլածու մոլորակին կամ Թիր Դից՝ փոխադրեալ լինելոյ ի նմա։ Այս թէ ո՛չ ընդե՞ր հաստատարմացուցանէք զերդմունս նոցա՝ խոր կամ բարձր փոխադրութիւն տառից։

Գտանեմք առ Խորենացւոյն, առեալ ի հնութեանց Բաղմալիոյին՝ զի թոռն Յաբեթի կոչէր Թիրաս, հայր Թորգոմայ՝ հօր Հայկայ մերոյ։ Ուստի՝ որով օրինօք Զրուանն՝ Սեմ, Տիտանն՝ Քամ, և Յապետոստէ՝ Յաբեթ, նովին և ես զԹիրասն համարիմ զոյ այր վեհ ելեալ ի գիտութիւնս աստեղաց և հզօր. զոր և նախնին զպիր նշանագրացն Հայոց, զորոյ որպէս զանունն՝ նոյնպէս և զգիրն և զկաղամար միանգամայն հանեալ ի փայլածուն՝ պաշտեցին։

Վրիպին, որք զբառդ Դպիր՝ Պարսկական ասեն. զի առ նոսա առմամբ և եթ ի կիր արկանի՝ որպէս զհիւր եկամուտ, իսկ ի Հայումս իբրև յիւր սեպհական զարատանի՝ բաղդատեալ ածանցմամբ և բարդութեամբք։

«Եւ լեզուին և ատամանց տանուտէր զՕտարիտն արար. և զուռե՛ս, որ երբ մարդն յՕտարիտն՝ լինի՝ կակղատ լինի. և կարկամ խօսի և սուրբ չկարէ խօսիլ» (Մխ. Բժ.)։

«Յաղագս որկորամոլութեան զիւաց կատակերգակն Հերմէս ասի մսախոյզ. իբր մսոց ոմանց ցուցանօղ, զոր և յեղջերան ունի կառուցեալ» (Նոննոս)։

Արգել զօրէնս խոզակերութեան առ Եգիպտացիս՝ յահաւորութենէ Դպրին, և յԻսրայէլի՝ ի պաշտամանէ նորա։

«Կատուն ի տունն կալոյն, խոզ՝ ի խուզողութենէ» (Վարդ. Ծն.)։

«Ի շաւիղս խոզագնաց ամբարշտութեան» (Ագաթ.), «Ի խոզագնաց շաւղէ կամոլութեան»։ Աստեղասիրաց վիշապ մի անգին և մեծ, խոզաձև և մեծ յոյժ բաշիւ (մարմնով)։

«Դագոն չաստուածն ի ձև Կիտի», «Խորտակեսցի Դագոյ վիշապաձուկն ի տիրատիպ տապանակէն»։

«Արագընթաց քան զդլփին սրացեալ ի ծով» (Երզ.)։ Տիր ասին գիւղ, որ այժմ Առիճ կամ Առինչ կոչի, ուստի էր Քրիստափոր Հայրապետ[36] սմա նուիրեալ Թուի։ Որպէս և Երէզն ասեն, յԵկեղեաց գաւառի, և Յերազգաւորսն՝ կամ Անի, յԱյրարատ։

Բառս Վարազաթէ՝ մեկնի մեծ թև։ Վարազու թևս ունել օտար է ի բնականէն. բայց Վարազակիտին կամ Վիշապաձկան ունել թևս՝ յարմարի։ Ուշո՛վ ընթերցիր զԴանիէլ Մարգարէ՝ և փաստս շատ գտանես[37]։

# ԼՈՒՍԻՆ, ՄԱՀ

Դրօշէր կին հեծեալ ի ցուլ սպիտակ. յաջն՝ շարան յակնթի, և ի ձախն՝ ոստ ռեհանի:

Հայեցեալ յԱգաթանգեղոս և ի ժամանակ կռապաշտութեան Տրդատայ և աշխարհիս Հայոց՝ թերևս յապշութիւն կրթի ոք ի փառացի պատուանուանց անտի՝ զորս տային սմա հինքն: Ի մի բան արքային կոչի սա «Տիկին. Երկնից՝ Մայր ամենայն զգաստութեանց. Բարերար բնութեան ամենայն մարդկան, և Ծնունդ մեծին արին Արամազդայ: Զօր և Թագաւորք պատուեն, ասէ, մանաւանդ թագաւորն Յունաց»: Կոչի նաև Խնամակալու ի հրովարտակին Տրդատայ առ Հայս. «Խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ հասցէ»: Վկայէ Ստրաբոն, թէ՝ «Քան զայլսն առաւել Հայք պաշտեն զԱնահիտն, որում և յայլուր և յԱգիլիսինի կանգնեցին մեհեան»: Ապա և ըզդրացեաց մերոց՝ զԱղուանից՝ «Աստուածս պաշտեն զԱրև, զՈրմիզդ, և զԼուսինն. որոյ տաճար մօտ է առ Վիրս»[38]: Ի թուել նորա նաև գանձիս տէրութեան Մեծին Միհրդատայ՝ յիշէ զԳամիրս ի Կապադովկիա. «Ունի,—ասէ,—նաև տաճար Ամսոյ, որ Ֆարնակիս ասի»: Պլինիոս վկայէ և վասն անդադարկ կամ ձոյլ ոսկի պատկերի սորա՝ որ յԵրէզն աւանի յԵկեղեաց գաւառի մերում. զոր յարշաւել զօրաց Անտոնինոսի ի Հայս՝ յաւարի հարին և զպատկերն ոսկէձոյլ խորտակեցին. «Ճշմարի՞տ իցէ,—ասաց Օգոստոս Կեսար,— զոր ասեն թէ «որ նախ զձեռն ձգեաց ի պատկեր Անահտայ՝ կուրացեալ և անդամալոյծ նստաւ»: Ծիծաղեցաւ զօրականն: Եւ ասաց. թէ՝ այս խնջոյ պատրաստեցի Կայսեր՝ ծախիւք նորին Անահտայ[39]»: Ձուլեցին Հայք և զայլ նոր պատկեր ոսկի, զոր ըստ վկայութեան Ագաթանգեղոսի, փշրէին զոսկի պատկերն Անահտական դից[40]»: Ի նութիւնս Պարսից ոսկի պատկեր միայն Ա[41] . . . . . . .

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՊԱՐՍ[12]

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

*Ատր՝ նշանակէ հուր, և պատ՝ կամ բէջան՝ երկիր. իսկ ըստ Արաբացւոց՝ Վալաթըլ Ջէպել, որ է երկիր լեռնային. ունի և այս սահման. երկիր հրոյ կարգացեալ ի հնումն՝ անկանէր յաշխարհին Մարաց. կարի անձկագոյն սահմանօք քան զոր այժմ ունանի։ Վասնզի ի հնումն յարևմտից սահմանէր Պարսկահայօք և Կորճէիւք. յարևմտից հիւսիսոյ՝ Մարանդաւ. յարևելից հիւսիսոյ՝ Փայտակարան աշխարհաւ, որ այժմ Ղարադաղ կոչի՝ ի հարաւոյ Երասխայ ցծովն Կասբից, ընդ մէջ փակելով զդաշտն Մուղան։ Յարևելից՝ Ղաբլանքու լերամբք, որ բաժանէ զԱտրպատականն ի Հռէ աշխարհէն Մարաց. և ի հարաւոյ՝ լերամբն Սահէնդաւ։ Իսկ արդ ընդարձակագոյն են տարածեալ՝ յարևմտից ընդ մէջ փակէ իւր՝ զՎեր և Զարեւանդ գաւառս Հայաստանեայց, և սահմանի Ղազիզեօլ անուանեալ լերամբ՝ որ է մասն Կարդուաց, և սահմանագլուխ Պարսից ընդ Օսմանեան Տէրութեան. զՊարսկահայս և զԿորճէս համօրէն յիւրում փակելով. ի յարևմտից հիւսիսոյ՝ զՄարանդ և զՄակու բովանդակ. ի հիւսիսոյ զՓայտակարան՝ ըստ մեծագոյն մասին, մինչև ի ծովն Կասբից. կամ բացայայտ ես կամեցեալ խօսել, զբովանդակ հարաւակողմն գետոյն Երասխայ։ Արևելեան սահման նոյն կայ և մնայ, իսկ ի հարաւոյ ընդարձակեալ և ես՝ յինքն եկուլ զՄարաղա յայնկոյս Սահէնդայ մինչև ի հարաւային ծիր սահմանին Միանդուաբայ, զհամօրէն նահանգն Սլդուզ հանդերձ լեռնակողմամբք Ռէվանդուզայ և ցՈրմի քաղաք ոլորտիւք նորուն։ Այս նահանգ՝ եթէ արդարև Պարսից սեպհական համարեսցուք, է միմիայն ակն Պարսկաստանի. թէ լայնածաւալ ընդարձակութեամբ իւրով, թէ բազմամարդութեամբ յաջողակաձեռն և քաջազօր բնակչաց իւրոց, թէ*

*հարուստ հանքօք, թէ բերօք, և արմտեօք, և թէ արգաւանդութեամբ հողոյն:*

*Լերինք մեծամեծք են նորա. ի հիւսիսոյ կողմանէ Պարսկայինն Տօրոս որ այնգի ապառաժուտ է առ Երի Դավրէժայ և արիւներանգ՝ անուանի Ալադաղ, այսինքն՝ կարմիր լեառն. յարևմտից լերինք Կորդուաց, կամ այն մասն նոցա, որ անուանի Ղազիզեօլ, զոր ես համարիմ լիճ Արեթուսայ՝ ընդ որ ընկղմի Տիգրիս՝ ի սահմանագլուխ իւրում. լերինք Ռուսթաւայ ընդ մէջ բաժանեն զծովակն Որմեայ ի ծովակէն Աղթամարայ: Նա և Թաքալթի և Աբլաղ ի Ջըլդրան գաւառի: Շահին՝ մերձ ի ծովակն Որմեայ, որ ի հնումն իբրև կղզի անկանէր ի նա, և Ալկի: Ի հարաւոյ նորա լերինք Սլդուզայ և Ռէվանդայ: Իսկ յարևելից՝ զՍաւալան, որ է Ալեան խորենացւոյն՝ մինչև գաս ի Ղաբլանքուհ: Ունի և զայլ լերինս միագոտիս, և բլուրս աղբերաբուխս. այլ գերապանծ շքեղութեամբ հոկայանան ի միջի Սահէնդն և Սաւալան անուանեալ լերինք, մշտնջենաձիւնք և հարք զանազան գետոց: Որոց ի գագաթունսն տեսի ես ջրաշեղջս մեծամեծս ականակիտ ձնջրոց:*

*Ի գետոց Հայաստանի ունի ի հիւսիսոյ զԵրասխ և Ահար՝ առ համանուն քաղաքաւ, զԻրիս, և զԿորդաշտ ի Փայտակարան աշխարհի, ի հիւսիսոյ յարևմտից՝ զՋուջու գետ՝ կամ Գարգառ, ի գաւառին Մարանդայ՝ որ խառնի յԵրասխ. յԱրդազ գաւառի՝ զգետն Տղմուտ, որ նոյնպէս խառնի յԵրասխ յանդիման Դարաշամբայ, ի Ջարևանդ գաւառի՝ յարևմտից զԱբջուղ և զայլ փոքրիկ վտակս. զգետն մեծ Հարքառու՝ որ հուպ Խոյայ անցանէ յԵրասխ. զգետն Ռասու, զՋալօրայ Սաղամասայ, և ի դաշտին Վարաժնունի՝ զգետն Սուփեան, զՄարգաբ, զՇօր կամ զԱճի, զՄուրխաբ. ի հարաւոյ արևմտից՝ զայ Նազլու վտակն Որմեայ, և այլ փոքրիկ առուք աստի և անտի. ի հարաւոյ յարևելից՝ երկոքին մեծամեծ գետքն Ջղաթի և Թաթաւու, գետն Սաւի ի Մարաղայ, և գետն Գօզան, որ միահաղոյն թափին ի ծովն Որմեայ: Իսկ յարևելից ունի զՈւզան և զգետն Միանէճ՝ երեսնակամարեան կամրջօք ի վերայ: Ունի քաղաքս մեծամեծս զԱրտաւիլ՝ զԱհար՝ զՄարաղա՝ զԲնաբ՝ զՄիանդուար՝ զՈրմի՝ զՍաղամաստ՝ զԽոյ՝ և մայրաքաղաք զԴավրէժ:*

*Ի բերոց անտի նահանգիս՝ առատ և բազմավաճառ է նորա գխտորն եկեալ ի լերանց Ռէվանդուզայ՝ ի հարաւոյ: Ալամահրն՝ որ է պտուղ համանուն փշոյ, ի լեզու աշխարհին Ղարաչալու կոչեցելոյ, որոյ կիսահասն առաւել մեծագին է յԵւրոպա՝ քան եթէ հասունացեալն, զոր ի կիր առնուն ի ներկս իւրեանց, և պատառք ներկեալք*

սովին ո՛չ տժգունին լուացմամբ ջրոյ կամ աղգմամբն արևոյ։ Առատ է նորա և գաղխէժն բուսեալ որբեթէ յամենայն ուրեք ի սահմանս նորա։ Գաղ է բոյս իմն փշուտ, կաղամբաձև զօրէն ողնւոյ կծկելոյ՝ բուսեալ և ճապաղեալ շուրջ զբնովն. ի գարնանի արտադրէ ծաղկունս ծիրանիս խիտախիտս մինչև երևիլ նմա փունջ իմն ծաղկանց հիւսեալ ի ձեռանէ շնորհաշուք բնութեան՝ և եդեալ ի զարդ ամայութեան առապարաց աշխարհին։ Զայսր բուսոյ բուն հերձեալ ծորեցուցանեն բնակիչք զխէժ իմն մաքուր, զոր բառնան ի մեծագոյն վաճառս համօրէն Եւրոպիոյ։ Իսկ ի պտղոց մասին՝ և արմտեաց ոչինչ դուզնաքեայ նուաղ այս նահանգ քան զհամօրէն Հայաստանեայս, զի ունի զայն ամենայն՝ զոր և նա, և այնքան ևս առատութեամբ։

Ի հնումն չէր հանք ի նահանգիս, այլ մեծանուն իշխանն Հայկազուն Սէթ խան Աստուածատրեան Նոր Ջուղայեցի՝ եբաց ի հիւսիսոյ Ատրպատականի զհանքն պղնձոյ և արծաթոյ։ Յորմէ շարժեալ և Արթուրայ Անգղիացւոյ, զոր Լէնզի կոչէին՝ բաց զհանքն երկաթոյ. յորոց այժմ արտադրին մեծամեծ ճոխութիւնք աշխարհին Պարսից։ Ըէպէտև անկարգութիւն տէրութեան մեծապէս խոչնդակն երթայ այսպիսեաց մեծարարութեանց։

Ունի Ատրպատական և ջերմուկ մի յՈւչան գաւառի իւրում, մերձ յապարանսն՝ զոր կառոյց Աբբաս Միրզա ի վայելուչ և ի յարադրական դաշտավայրին, առ որով ձգի ճանապարհն դէպ ի Թիրմատաշ գաւառ։ Ջուր այսր ջերմուկի առողջարար համարեալ ի բնակչաց աշխարհին՝ ժամանակ առ ժամանակ հանդիսադիր լինի խրնդալից խմբի արանց և կանանց նոցա, որք միահաղոյն հաւաքեալ անդանօր՝ վրան հարկանեն ի շրջակայս նորա, և զաւուրս բազումս գեղով և գինւով այնքան զակատին, մինչև փոխանակ առողջութեան խօթացեալ հիւանդութեամբք, դատարկ քսակօք և տկօք դառնան ի տունս իւրեանց։

Երկիր Ատրպատականի ըստ մեծի մասին յոյր գոլով հանքային բաղադրութեամբք՝ ոչ միայն օդերևոյթս զարմանալիս պատկերէ, աչաց ճանապարհորդին, տե՛ս Հատ. Ա. յերես 381. այլ և բղխէ ի տեղիս տեղիս աղբիւրս սքանչելիս, այլահամս և այլորակս։ Աղբիւր իմն այսօրինակ յորդահոս առատութեամբ պղպջակի ի դաշտին Գօգանայ ի հարաւոյ Խանայանայ. ի ձախմէ ճանապարհին, որ տանի ի Շիշուան։ Այս աղբիւր է ջուր պարզ ապակեղէն, որ բղխեալ ընթանայ ի խոնարհ և թափի յաւազան ինչ, յորում և բիւրեղացեալ փոխադրի ի մարմարիոն ընտիր, յորմէ հատանեն սալս մեծա-

մեծս առ ի զարդ շինուածոց աշխարհին։ Տեղի իշման Միածնին կառուցեալ է համակ յայս մարմարիոնէ։ Բայց ինձ թուի եթէ կարելի իցէ ի պէսպէս ձոյլս առնուլ զայն ջուր, և արձանս զարմանալիս կաղապարել անտաշ ի մարդկային հնարից։ Երկրորդ աղբիւր այսօրինակ լի հանքային թթուօք և թուշաղական աղիւք՝ բղխի ի դաշտին Մարաղայ, յաջմէ ճանապարհին, որ տանի յԱնախաթուն. այլ վեհ ամենեցուն սոցա՝ սքանչելի ի տեսլեան, և առասպելաբանութեանց աշխարհին իրաւացի առարկայ՝ բազմակնեան աղբիւրք են Անախաթուն կոչեցեալք։ Զորոց դունաբէկիւքն զանց արարեալ. որ է՝ զի կարմիր բղխին, է՝ զի սպիտակ, է՝ զի դեղնագոյն, և է՝ զի կանաչ, զերկոսին մեծամեծսն՝ իբրև սկզբնամարս ամենեցուն նոցա նկարագրեցից ստանօր։ Զորակ իմն փոքրիկ յարևելից հարաւոյ Մարաղա, իբրև երկու փարսախօք հեռի ի նմանէ՝ սկսանի ի տեղւոջն յորում բղխին աղբերքս այնորիկ ի հիւսիսոյ գեղջ իմն Տաճկաց, որ այգէւէտ և բարելից, ուստի գայ վտակն իմն ականակիտ ջրոյ և անցանէ ընդ այս ձորակ։ Յաջմէ և յահեկէ գետակիս բղխին աղբիւրքն յորդառատ կաթնանման սպիտակ ջրոյ, այնպիսի պղպջանօք, որպիսի եռայ ցնդաղաջուր. ունի զհամ թթու խառն ընդ կծուոյ։ Յորս աւելորդապաշտ իմն յարգանօք լուանին բնակիչք երկրին. զերբնական իմն տալով զօրութիւն՝ բնականին անծանօթք։ Եթէ տարրալուծական և բժշկութեան արուեստքն ոգի առնուցուն ի Պարսկաստան, ինձ այնպէս թուի, թէ ջուր աղբեր այսորիկ վերագոյն համդիսանայ ի համօրէն վաճառս երկրին և շահաբեր տէրութեան։

Զի ինչ ցնդաղաջուր կամ փոշեջուրն իցէ անուանեալ սոցա՝ առ համօրէն Եւրոպացիս, եթէ ո՛չ բազմածախ և մեծավաճառ իմն բաղադրութիւն այսպիսի, զոր աստ բնութիւն ձրի առատածենէ։ Գոյն այսր աղբեր ո՛չ ի բղխելն փոփոխի և ո՛չ յընթացս իւր։

Իսկ երկրորդն, որ ի ձախմէ գետակին, բղխի կռչանման բառաչմամբ և ողալական մնչիւն սաէպ հանելով։ Զորմէ զեղեցիկս առասպելին բնակիչք, թէ՝ «Անախաթուն ոմն ի մեծ տանէն Հուլաքու խանի, յետ ընդերկար սիրահարութեանց՝ խօսեցեալ ընդ հովուի ուրուք (պաշտօն սեպհական Թաթար սերնդոց), գայ համօրէն հարսնածուօք սանել զնա ի Մարաղա. այլ յեղակարծ շարժ սաստիկ բացեալ զերկիր կլանէ զնոսա, և զպատառուած մեծի լերին ընկենու ի վերայ, և ահա տակաւին եզինք ի կառս՝ ողորմ բառաչեն ընդ արկածն աղետալի, և ողայք ի ճնշմանց ապառաժին՝ ողբաձայն մնչեն»։ Թողեալ զմեծ համաձայնութիւն մասանց առասպելիս

ընդ բնիկ սովորութեան ազգին Թաթարաց, զորօրինակ՝ մեծամեծ իշխանացն հովուութեամբ վարել զկեանս իւրեանց,—եղնավար կառօք, որ է նոցա բուն և բնակութիւն, շրջել ի տեղւոջէ ի տեղի, և հարսնացուին բազմութեամբ հարսնաւորացն յուղի անկանել, նաև շարժն համայնակործան բնիկ է աշխարհիս այսմիկ։ Ուստի և որ միտ դիցէ զգուշութեամբ բազմազան ձայնարձակութեանց աղբեր այսորիկ՝ ո՛չ այլում իմիք քան թէ շարժի տայ զնոսա, որով ճնշեալ ջրոցն ընդ ազուգայ քարաժայռին՝ պէսպէս խոխոջմամբ բղխին ի խոնարհ։ Այս աղբիւր ունի և զքարանալի զօրութիւն, որ սակաւ առ սակաւ պնդանայ, և զշրթունս վիմաձուլ անկեանցն կարի հեղձուցանելով՝ պատճառէ խոխոջ այնպիսի։ Այս աղբիւր՝ որպէս և աղբիւրն յանդիման խօյդանայ, արտադրեն հանքս գերընտիր մարմարիոնաց. սպիտակի, և զխայտի։ Սպիտակ մարմարիոն նահանգիս գեր ի վերոյ է քան զամենայն մարմարիոնս զտեալս յայլ և յայլ հանքս աշխարհին Պարսից, և մի ի մեծագոյն վաճառաց լինէր՝ եթէ տէրութիւն փոխանակ զմահապարտսն սրով զատելոյ՝ յայս աշխատանէր։

Ի բնական վայելչութիւնս Արարատականի մեծապէս շքեղանայ ծովակն Որմոյ Կապուտան, թերևս առաջինն համարելի Սեւանայ ծով։ Ձուաձև իմն տարածեալ ընդ երկայնութիւն յարևելից յարևմուտս, շրջապատ նորա՝ ընդ որ ևս պարայածեալ՝ է հարիւր քսան և հինգ փարսախ։ Ունի կղզիս երիս ի միջի իւրում։ Հասարակօրէն խօսելով՝ ծանծաղ է այս ծով. զի խորագոյն անդունդ նորա ո՛չ ձգի ի խոնարհ քան զվեց իսկ կանգունս։ Ջուր նորա սաստիկ աղի և բորակային, մինչև սատակել նորա զամենայն ձկունս զեղեալս ի գետոց անտի։ Հնգետասան և աւելի ևս մեծամեծ և մանր գետորայք մտանեն ի սա, այլ ջուրն ի գարնանի գուն ուրեք յորդեալ արտաքս գեղանի։ Եթէ չիցէ սորա սառերկրեայ անց, ո՞ր արդ հաւաքիցին այն ամենայն գետորայք՝ որք ո՛չ քաղցրացուցանեն զորակութիւն նորա, և ո՛չ աւելուն ինչ զքանակութիւնն։ Երևի թէ ներքին բաղադրութիւն ծովուս առաւել թեթևք և արևատենչիկք իցեն, քան զայլոց ծովուց. որով փոյթ գոլորշացեալ վերանան յօդս. իսկ թէ ո՛չ՝ ջուր սորա է՞ր մահաբեր է ո՛չ միայն կենդանեաց առ հասարակ, այլ և բուսոց և գալարեաց։ Ընդ բովանդակ եզերս նորա եթէ չիցեն ուրեք ուրեք լերինք կամ թումբք բարձրաբերձք՝ ո՛չ բուսանի գալարի կամ ծառ։ Ուր ուրեք խաղան ջուրք՝ թողուն զկնի իւրեանց զմրուր աղի քլաշափ ստուարութեամբ. յորմէ դիւրագնի լինան ամենայն բնակիչք երկրին։ Առ անբաւ առատութեան աղի յայս սահման, չէ տէրութեան

հարկ եղեալ ի վերայ, և ո՛չ իսկ նիւթ վաճառի արարեալ։ Մարմինք մարդկան և կենդանեաց արկեալ յայս ծովակ ո՛չ ապականին. այլ կան և մնան ընդ երկար։ Պատմի թէ գտաւ մարմին մարդոյ առ երի կղզւոյն Իշոյ, բոլորովին մոմէացեալ։ —Վրիպակաւ դնէ Ստորագիր Նորոյ Հայաստանի զգետն Աճի պատճառ մահարար զօրութեան ծովակիս այսմիկ. զի ո՛չ միայն ձկնավաճառք Դավրիժու առ օրին կալեալ ի նմանէ ձկունս պատուականս ածեն ի վաճառ, պանծանօք իմն զովելով զնոսա՝ յասելն,

«Աճի պալըղի,
Սու բլբուլի»։

Այսինքն՝

Աճւոյ ձկունք,
Ջրսոխակունք։

այլ և տե՛ս հատ. Ա. երես 381 այսր գրոց։

Լիճն մեծ յանդիման Թասու աւանի՝ ի Զարևանդ. որ ի հնումն կոչէր Լիճն Արեան յաղագս զօրաց Սմբատայ Բագրատունւոյ՝ կոտորելոյ անդանօր։ Լիճն Արեթուսայ կամ Ղազիգեօլ՝ ի Կորդուս՝ յԱբջուղ գաւառի. և մասնաւորք ոմանք աստ և անդ։

Բնակիչք նահանգիս ութներորդ մասն համարին բազմամարդութեան բովանդակ աշխարհին Պարսից. և են բաղադրութիւն իմն ի Հայոց, ի Մարաց, ի Պարսից, ի Տաճկաց, ի Թաթարաց և ի Վրաց. ուստի և քաջութեան նախահարցն հարազատ ժառանգապահք։ Սըրտեայք են յոյժ և յաջողք ի մրցմունս պատերազմաց։ Խաբեբայք՝ ըստ Պարսից. միամիտք՝ ըստ Մարաց. գոռոզք՝ ըստ Տաճկաց. և կռուասէրք՝ ըստ Թաթարաց։ Բարեձևք մարմնով՝ ըստ Հայոց, և գոյն մորթոց նոցա ցորեներանգք։ Կատարելութիւնք մտացն չեն այնքան նուազունք, և եթէ տէրութիւնն փոյթ տարցի, սոքին վեհ հանդիսանան ի վերանորոգութիւն աշխարհին յարուեստս և ի մակացութիւնս։ Զարդիս իսկ մեծ վաճառատեղի է Դավրէժ ի համօրէն աշխարհին, և ի ձեռն սոցա լինի անբաւ առևտուր։ Ըստ արհեստի մասին ևս Ատրպատական, թէ և ստորին քան զՔիշմիր՝ ի ձեռակերտուածս շալին, այլ ճոխ քան զամենայն հանդիսանայ ի գործածս շերամեաց։ Գեր ի վերոյ է գոգջիր յաշխարհ՝ ղանաւուզ նորա, և այլ պէսպէս դիպականի։ Գուլպայք Խոյայ և Խալխալայ վաճառին երբեմն մի զոյգն երկուց ոսկւոյ։

Նախքան զդառնալն մեծանուն Սէթ խանի Աստուածատրեան

ամենաքեր վաճառօք յԱնգղիոյ ի Պարսկաստան ընդ ճանապարհ Միջերկրականին և Պոնդոսի առ խաղտեօք՝ վաճառականութիւն Ատրպատականի կարի ամփոփ էր և համառօտ։ Զի Եւրոպացի ազինք բարձեալ զվաճառս իւրեանց ընդ Ատլանտեան Ովկիանոս ի Հնդիկս և ի ծոցն Պարսից՝ սփռէին անտուստ ի Պարսկաստան և յՕսմանիա։ Բայց յետ բանալոյ նորա զայս դիւրագին և յաջողակ ճանապարհ, մանաւանդ երկոքին եղբարքն Բրջիսեանք Անգղիացիք՝ ծառայք նորա, օրինակին հետեւելով, լցին զաշխարհն Պարսից վաճառօք իւրեանց ընդ այս ճանապարհ. ուստի տնանկացաւ Ասպահան, և ձոխացաւ Դաւրէժ, դժխոյ վաճառաց եղեալ համօրէն Պարսից։

Կառավարութիւն նահանգիս, որպէս և Երեւանայն, Նախջուանուն, զՍւրդուպատան և այլոց էր ի ձեռն Աբբաս Միրզայի որդւոյ Ֆաթալեայ արքայի Պարսից՝ Ղաճար ազգաւ։ Որքան արտաքին կերպարանօք երեւելի և գեղեցիկ՝ բիւր անգամ բնատուր հանճարովն վեհ գտաւ սա ի մէջ հարիւրաւոր եղբարց իւրոց։ Նորոգ կարգաց և կանոնաց Եւրոպացւոց զհետ եղեալ՝ աճեցոյց զարուեստս պիտանիս յիւրում տէրութեան, և նորանոր մարզութեամբ ծաղկեցոյց զզօրս իւր։ Առ սովաւ հանքն բացան, հրացէնքն թափեցան, չուխայք զօրաց գործեցան, և վառօդն հուր սպառնայր շրջակայից ի Պոնդոսէ մինչև ի Տուս։ Ափսո՜ս, որ թուրք էր։ — Ու հազա՜ր ափսո՜ս, զի յայնժամ կալաւ զիշխանութիւն իւր՝ յորում Դաւիթ զԴանիէլ հալածէր, և Դանիէլ զԴաւիթ բանդ արկանէր[13], վասն կաթուղիկոսութեան ազգիս համօրէն։ Երկոքին ևս՝ մի քան զմի սիրեցողք արտաքին փառաց, բացին և եդին առ ոտս նորա՝ ո՛չ միայն զփառս եկեղեցւոյ, այլ նաև զներքին սրբութիւնս խորհրդոց նորա. զորս էր՝ զի այպանէր հեթանոսն, և էր՝ զի իսկ և իսկ ըմբռնէր՝ զորս պիտանիս վարկանէր խորհմաց խորհրդոցն։ Ծա՜ս չասել։—Մեծապէս հաւանէր սա կարգի խոստովանութեան եկեղեցւոյ մերոյ՝ առաջի քահանայից, և ո՛չ միայն առակ արարեալ ասէր՝ թէ «Ամենահարկաւոր իմն էր այն ի պահել զտէրութիւն», այլ և ի վարձու իսկ ունէր ինքեան զմի ի քահանայից Դաւրիժու՝ վասն զա՛ռն ա՛ռն գիտելոյ զխորհուրդ և գործ։

Զօրավարժք Եւրոպացւոց՝ որք մեղմօրէն իմն վարէին ընդ համբակս ի զօրուէն, հեգնելով իմն ասէր. «Բանն Աստուծոյ Յիսուս խոնարհաբար շրջեցաւ յարեւմուտս, վասն զի գիտէր զկնամարդութիւն բնակչացն. բայց յորժամ էջ յարեւելս՝ ոսկի ուռամբ էջ. յայս արարեալ զկամակոր յամառութիւն արեւելականացս»։

Եթէ դարձելոյ ուրուք դէպ լինէր բողոքել առ սա վասն ժառան-

գութեանց քրիստոնէայ ազգատոհմին, զոր անօրէն օրինադրութեամբ դենպետաց փոխեալ էր յիւրաւունս կրօնի, պատասխանէր թէ՝ «Եթէ վասն հաւատոյ դարձար, այդ բաւական է քեզ, իսկ թէ վասն ընչից՝ ուրեմն հաւատացեր ո՛չ, կորի՛ր»: Զայլոց մեծարարութեանց սորա խօսեցեալ է իմ ի Պատմութեան Պարսից. տե՛ս անդ:

## ԴԱՎՐԷԺ

Ի Հնումն երկրորդ Եկպատան, քաղաք եօթնպարսպեան յԱտրպատականի, զոր առին Պարսիկք ընդ Թագին Մարաց: Էառ զայն ապա Մեծն Խոսրով արքայ մեր՝ յԱրտաշրէ Սասանեան: Բայց եթէ սա նորոգեալ կոչեաց զնա Դավրէժ ի քէն արեան Արտաւանայ Արշակունւոյ. և թէ որդի նորուն Մեծն Տրդատ առ ի վրէժ արեան Խոսրովու հօրն իւրոյ, չկարեմ ստուգիւ ասել: Այս քաղաք եկաց մնաց Պարսից՝ ցիշխանութիւն մահմէտականաց. յորում ժամանակի նստան ոստիկանք դենպետաց նոցա: Ապա անկաւ ընդ իշխանութեամբ աթաբեկաց, յորոց էառ Հուլաքու խան: Զկնի նորա նստան ինքնագլուխ իշխանապետք, մինչև ի Մեծն Շահաբբաս Առաջին. զկնի նորա մարզպանք յաջորդաց նորա ինքնագլուխ նստան անդ. ապա օսմանեանք տիրեցին նմա, յորոց էառ Նադիր Շահ: Յետ նորա ի մէջ օսմանեանց և Պարսից կռուածաղիկ եկաց՝ մինչև ցՄահմադ խան Ղաճար, որ զամենեսին յաղթահարեալ եթող ի ժառանգութիւն եղբօրորդւոյ իւրում Ֆատալեայ արքայի Պարսից, որ կառավարէր ի ձեռն Աբբաս Միրզայ որդւոյ իւրում:

Գանձակ շահաստան ասէր սա առ հինսն, բայց Պարսիկք չունին ինչ յիշատակութիւնս այդր անուան ո՛չ ի բերանս և ո՛չ ի գիրս իւրեանց: Խոտեն և զհայացի ստուգաբանութիւն անուանս Դավրէժ, և զորս ինքեանք փոխանակ կացուցանեն՝ այնքան անտեղիք են և անյարմարք վայելչաբանութեան պարսկերէնախօս բարբառոյն, մինչև անալիս իմն առնել զայն՝ մեկնելով Թաբրիզ. թաբ՝ է ջերմն. ռիզ՝ հեղուլ, վիժել. որով ըստ նոցա՝ Թաբրիզն նշանակէ քաղաք ջերմաթող յաշխարհի՞ն հրոյ. և՛ տղայոց անգամ արժանի ծաղու:

Որոց կամք իցեն տեսանել զհինն Դավրէժ կամ Գանձակ շահաստան՝ պարտին ունել զշաւիղ նախնի ճանապարհորդացն առ նա ի հետս ծովուց: Վասն զի որպէս մակերևոյթք նոցա ի հողմոց անտի՝ սոյնպէս և քաղաքիս և գաւառիս այսորիկ և հանապազորդեան երկրաշարժից ստէպ ստէպ յեղյեղեալ փոխեցին զդիրս. և զձև բղշինութեանց իւրեանց: Արդի քաղաքն Դավրէժ կառուցեալ ի ստորոտս Ալադաղ լերին յարևելից Աճի գետոյ, բերդապարիսպ է, շուրջ

նորա կիսով չափ խորտակեալ ի բաց՝ համակ յաղիւսոյ թրծելոյ և ի կրոյ շաղախելոյ: Կրկին ելանելի կամ աստիճանք են ի նմա. մին ի ներքուստ՝ ընդ որ ոչ ումեք թոյլ տրի գնալ, իսկ միւսն՝ արտաքուստ՝ յոր ելեալ նորասիրաց յանդիման աչաց տեսանեն ո՛չ միայն զքաղաքին վճիտ յատկութիւն, այլև զլայնատարած դաշտին ձգելոյ ցԳունէի և ցԿապոտան ծովակ: Եւ երի սորա է ձուլարան թնդանօթաց և գործարան հզօր ծակելոյ զնոսա՝ պատկանեալք մեծանուն իշխանին Սէյթ խանի: Վտակ իմն հանեալ այսր ի ձորոյն Խալաթփուշունայ՝ բաժանի ի հազարաւոր յառաջս, և բաշխի տանց ի տունս քաղաքին յարբումն և ի սրբութիւն նոցա:

Յայսմ ժամանակի մերազինք ի քաղաքիս կային ի մեծի ստրկութեան. զեկեղեցի նորոգ շինել ո՛չ կարէին, և ո՛չ զխաղտեալն նորոգել: Ըստ տաճկական զոռոզութեան բնակչաց նորա՝ յամենայն յընկերակցութիւնս՝ նաջիսս համարէին, որ է՝ պիղծ, և առաւել ևս՝ զի յաւուրս անձրևոց ո՛չ ներէին նոցա արտաքս ընդ փողոցսն ելանել, զի մի՛ տամուկ զգեստուքն հուպ մատուցեալ՝ պղծեսցեն զինքեանս:

Իբրև հասաք ի քաղաք այսր՝ բարեացապարտ Մաղսուդ խան, որ լաւապէս ևս ճանաչէր զբարս և զբնաւորութիւն ազգին իւրոյ, յանձն արարեալ զիս միում ի հաւատարմաց իւրոց տանել առ Տէր Յովհաննէս՝ ինքն չոգաւ յապարանս իւր:

Միրզա Ալի բէգ կոչէր անուն հաւատարմին. բայց յորժամ հասաք ի տուն Տեառն Յովհաննու՝ վա՜յ, եթէ հաւատարմութեամբ կատարեաց նա զպատուէր խանին. «Քեշի՛շ», ասէ նա ցքահանայն ահահար. «Մաղսուդ խան առաքեաց զսա ի հիւր քեզ, պատանի յամենաբարձր արենէ Հայոց, ճգնաւոր դարուս, հանճարեղ ի Մսեհեաց, խալիֆային մեծի աջ բազուկ, և այլն, և այլն, զի պատուեսցես զդա իբրև զերես իւրոյ ինքեան»:

Խանն միայն ասաց ցնա՝ «Տա՛ր յանձն արա՛»: Ճարպիկ էր Տէր Յովհաննէս, և սկսաւ հազարիցս հազար անգամ ասել. «Խա՜ն՝ բարեաւ գայ, խա՛ն ողորմած է, խան՝ ամենամեծ է, որ զնուաստութիւն մեր արժանի արար մտածութեան իւրոյ, և զայս (մերձ վեշտասան վերտառութեամբ դրուատեալ) հիւր՝ առ իս առաքեաց: Բարեաւ եկայք, օ՛ն ի ներքս ախոռի ձերում, Տեա՛րք»: Բարւոք գիտէր Տէր Յովհաննէս, զի Թուրքն ընդ յարկաւ ո՛չ մտանէր իւր. այնինչ թէ նա և թէ ես՝ բոլորովին թացեալ էաք յանձրևոյ: Աստի և սովին հիւրասէր հրաւիրանօքն ասել կամեցաւ միայն, թէ՝ «Զոր բերեր ընդունիմ.—գնա՛, կորի՛ր դու»: Չոգաւ Միրզայ Ալին, և ես

առեալ ի տուն հիւրասիրին, ուր կացի զաւուրս հնգետասան, զի կարաւան ո՛չ ելանէր. և համարեցայ անվճար ծանրանալ սրբազան վաստակոց նորա, վասնորոյ աճապարեաց յուղի արկանել զիս որքան յառաջ՝ այնքան քաջ:

## ԵԼՔ Ի ԴԱՎՐԻԺՈՅ

Հանի աղա Մազանդարանի՝ դայեակ որդւոց ժառանգին արքայութեան Պարսից, որ ունէր կանայս վեց ի Դավրէժ, և նոյնաթիւ ի Թեհրան, առեալ ընդ իւր զերկուս ի կանանւոյն Դավրիժոյ և ըզդուստր մի գեղեցիկ՝ հանդերձ բազմութեամբ այրուձիոց և գրաստուց՝ ելանէր մեծահանդէս շքով ի Թեհրան քաղաք: Էր սա այր վտիտ մարմնով և տկար ուժով, քարձ մօրուօք և թուխ դիմօք, կարի դակատեալ զհետ ծխոյ խորխոռակին, հիւծադէմ և ժանտ: Տարբեր գլխովին յարդարակորով իշխանէն Մաղսուդ խանէ: Ուստի և մի ումն ի ծառայից նորա՝ յատկացեալ էր սոսկ ի պաշտօն ծխախոտւոյն: Հեծանէր ի ձի՝ յորոյ յաջմէ, ի կախ գնայր կաշեայ խորխոռականն, յորում խորխոռակն էր՝ ամենայն պարագայիւք և ունելիքն երկաթի: Իսկ ի ձախմէ երկաթի կրակարան կամփսակաձև, ծակտիս ունելով շուրջ զիւրեաւ ի մուտս օդոյ՝ յարծարծումն հրոյն: Եթէ գլայ լինէր իշխանին ձգել զումպն ծխային, խորխոռակապետ նորա փոխէր իսկոյն զջուրն զարշահոտեալ. ապա թրէր զխոտն մանրեալ յառաջագոյն, տինա թէ և լուանայր իսկ. երկիցս փոխելով զջուրն և սեղմելով ի գրնդին: Ապա բարձեալ կայծակունս հրոյ ի վերայ՝ ազուցանէր ի ծխարան խորխոռակին, և իջեալ յերիվարէ՝ մատուցանէր նմա զերկայն և զգալարածոյ ծխաձիգն, և գնայր հետի ըզհետոց նորա՝ մինչև թմրէր իշխան իւր ի ծխոյ անտի, և ապա մեկնէր ի բաց:

Տէր Յովհաննէս, անժուժկալ կարաւանին պատահելոյ՝ յառաջագիր եղև ինձ ընկերել ահաւորիս այսորիկ: Ի ցուցանել զակնածութիւն ընդ կեղծ՝ յերեսաց նորա, գնաց նա առ Աբբաս Միրզա և նորանոր առեղծաբանութեամբ եգիտ ինձ ի նմանէ զհրամանագիր անցից, յանուանէ յիշելով ի նմին՝ թէ պաշտօնատար լեալ իցեմ դեսպանութեան Ռուսաց ի Պարսկաստան, և առաքեալ յԵրմալովայ[17] ի խնդիր մեծի իրիք պատեհութեան: Առ ի պարտակել զսուտ այսքան անամօթ՝ պարտաւորեցաք կրկտել ուրոյն զհանճարս մեր, և այնքան սուտ յօրինել մինչ դիւրահաւանութեան Պարսից հաւատարիմ ընծայեցաք զառաջինն: Վասնորոյ ծպտեալ վերստին ի ձև Վրացի

(դիւականի գլխոյս անվթար թողեալ տակաւին), ծալեցի զանազան թղթեան ի ձև պահարանի գրոց. և կնքեալ մեծամեծ կնքովք գրանելովքս Տեառն Յովհաննու, որ փարագիրն էր արուեստին, եդի ի մաղախ. և կեղծեալ որպէս թէ իցեմ ոմն, հեծայ ի չուն ընդ Հաճի աղայի։

Այն զի տարաժամեալ էր օրն, և ժամն բարեբախտ գուշակեալ ելից նորա յաղթարաց Պարսից, բերեալ զԳեօք մէջիթաւ. և անցեալ ընդ երկարաձիգ խեբեվան կամ պողոտայ Այգեստանեացն թողաք յաջմէ զաւերակս քաղաքի ի ստորոտս Սհէնդայ, և եկաք ի Բարութխանէ, որ այն ինքն էր վառօդարան Աբբաս Միրզայի, կառուցեալ սքանչելի գործարանօք և ջրադարձ անուօք երկաթեօք՝ ուղիղ յարևելս հարաւոյ այգեստանեաց Դավրիժոյ, զոր հոլովէ վտակ ինչ ստորերկրեայ գնացիւք բերեալ անդանօր ի խալաթփուշուն ապարտիզէ արքայորդւոյն։ Ի կուսէ վառօդարանիս խաղայ ի Դավրէժ և գետակն Միհրանրուտ կոչեցեալ, բղխեալ ի լեռնէն Սհէնդայ։ Աստի ուղիղ ընդ յարևելս՝ ճանապարհն է կարի խորդուբորդ ի պատճառս անհամար բլրոց մի զկնի միոյ յարուցելոց անդանօր։ Ժամու և կիսոյ խաղաղ ընթացիւք հասաք ի խալաթփուշուն, որ է ծործորեան վայելուչ ի մէջ Ալատաղ լերին և բլրոցս ստորագրելոց, և ագաք անդանօր։ Յայսմ վայրի տնկեաց ծառաստան ընտիր և կառոյց իւր ապարանս վայելուչս Աբբաս Միրզա, և անուանեաց խալաթփուշուն կամ տեղի խիլայ զգենլոյ։ Ուր ի գալ խիլայից յարքայէն Պարսից, ելանէր նա ինքն ամենայն պատուական աւագանեօք քաղաքին, և զգեցեալ՝ ի մեծահանդէս շքով ընդունէր զընդյառաջ նուէրս իւր ի շնորհաւորութիւն և ի խնդակցութիւն։ Ամենայն Հայ բնակիչք Դավրիժոյ մանաւանդ թէ եկք յօտարաց՝ առնէին զայս հասարակաց զբօսարան և զեղխէին անդ գրեա՛ թէ յամենայն կիւրակէս ամառնային։

Աստի ընդ առապարան զառ ի վեր չորս փարսախօք՝ հասաք ի Հաճի աղայ գեօղ Տաճկաց՝ 100 տանց՝ ի գաւառին Ուջանայ, որ ուղիղ ընդ արևելս անկանի Դավրիժոյ, ունի զնոյն լերինս զոր և նա։ Ունի գետակ յոմանց՝ համանուն գաւառին իւրոյ, և յոմանց՝ ընթերակայ գեղջս Ուջան Սույի կամ Հաճի աղայ չայի կարդացեալ, որ բղխեալ ի Սհէնդայ, և յինքն ընկալեալ այլ ևս անհամար աղբերակունս բղխեալս յարօտն Հաճի աղայ գեղջ՝ ընթանայ ի հարաւոյ ի հիւսիս, և անցեալ ընդ կամուրջ երկկամարեան՝ մտանէ ի զարհուրելի քարաձորն Կուլուչի. խառնի յԱճին գետ, որ ո՛չ թէ ի Սհէնդայ բղխի որպէս դնէ Ինճիճեան, այլ ի լերանց աշխարհիս Հայոց։ Առ կամրջաւ գետոյս ընդ արևելս են աւերակք ինչ, ուր ի ժամանակս

ժամանակս գարնանի գաղին հողկահարք, և յանկարծ ի վերայ յար-
ձակելով որոց զոյժն կշռեն հաւասար ինքեանց՝ կողոպտեն զնոսա։
Դիպուածով և ես մտեալ ի նոսա՝ զափ զարիւն նոր եզհետ ընթացեալ
չաւղացն տեսի զդի ընկեցիկ անդանօր և քարակոյտ մեծ ի վերայ
նորա։ Գետն ի հարաւոյ ընդ հիւսիս, և ճանապարհ մեր յարևմտից
յարևելս ուղղակի, հատանեն զմիջոց դաշտին ի ձև իմն քառակուսի,
որոյ ընդ հարկաւ անկանի գիւղն Հաճի աղայ, և հայի յարօտն խո-
տաւէտ՝ յորում ամի ամի ի բանիլ գարնան՝ արածեն երամակք ձիոց
Աբբաս Միրզայի և խանից նորա։ Աստ հասին կանայք Հաճի
աղայի հեծեալք յանդրուարս և ի պաղպաջունս։ Ջանդրուարդ
անուն փոխանակ Թահտրաւանի, որ է դեսպակաձև գահաւորակ իմն
բարձեալ ի չորից լծակաց, երկուց առաջուստ և երկուց՝ յետուստ։
Երկոքին ջորիք բառնան զայն. մի յառաջոյ լծակացն ընթանալով ի
միջի, և միւս յետոցն։ Ունի աստի և անտի դրունս և լուսամուտս.
այլ Պարսիկք հասարակօրէն ծածկեն զայն ազնուագին բալափուշաւ
կամ անդրուարակալաւ։ Որով իբրև զկոյրս շրջեցուցանեն զկանայս
իւրեանց ի տեղւոջէ ի տեղի, և զրկեն զնոսա ի հասարակածանօթ
և ի պիտանի տեսարանաց։ Իսկ պաղպաջուն բառիւ կամիմ յայտ
առնել զՔէջավայն, որք են երկու կամարակապ արկեղանիստ և
փայտակերտ բառնալիք. հակ առ հակ բարձեալք ի վերայ միոյ
ջորւոյ. և ծածկեալք նոյնպէս ազնուագին պաղպաջունակալաւ։ Տա-
նին սոքա մի զմի ոգի, և այս հաւասարակաց է գրեա՛ թէ կանանւոյ
Պարսից։ Գնան նաև հեծեալ ի ձի, յէշ, և ի գոմէշ։ Այլ ինձ զի՞ փոյթ
զնոցանէ՝ որոց ոչն ընկերեցի։ ...Փախեայ յերեսաց նոցա. բայց
զմտաւ ածեալ, թէ տակաւին մօտ գոլով Դավրիժոյ կարէի, որով
եղանակաւ և մարթէի, ածել զնոսա ի չափ իմն ընկերութեան. տի՛նա
և կսկիծն առաւելեալ ի հարուածոց անտի քարին՝ գրգիռ շատ մա-
տոյց, ուստի մատուցեալ առ Նազիր դայեկին, որ էր նորա իբրև
տնտես, ասացի. «Վասն որո՞յ չարի հարկանիցէ ինձ ծառայ նորա.
ահա երթամ ի Դավրէժ, տամ Աբբաս Միրզայի զթղթեան դեսպանիս
ինքնին առաքել. ըստ որում այսքան անկանոն երկիր ունի՝ յորում
մարդիկ զմարդիկ անպատճառ հարստահարեն»։ «Ո՛չ, ո՛չ բնաւ
երթիցես դու դժկամակ ի մէնջ», — ասաց նա, և կոչեալ զծառայն
սաստեաց. և յաւել ասել ցիս, թէ՝ «Սուրբ է ի Պարսկաստան երես
կանանւոյ, և ո՛չ ոք կարէ հայել ի նոսա առանց վտանգի կենաց։
Վասնորոյ զգոյշ լե՛ր և մի՛ հուպ գնասցես նոցա»։

Ի Հաճի աղայ գեղջէ ընթացեալ նախ յարևելս հիւսիսի եկաք ի
պանդուկ ինչ հին քարաշէն և բայքայուն՝ առ ստորոտով դժուարա-

մնաց կրճիցն՝ որ հանէ ի մեծ դաշտն Ուջանայ։ Ի հնումն էր աստ քաղաք, բայց այժմ աւերակք նորա հարթեալ յարօտս ընծայեցան անասնոց Պարսից։ Աստ կառոյց իւր Աբբաս Միրզայ ամարանոց վայելուչ. աստ բղխի ջերմուկ առատ ծծմբահոտ ջուրց. յոր լուանին յամառան բազմութիւն ազգաց։ Սա խառնեալ ի գետն Հաշթրուտ՝ երթայ ի Միանայ, և ընթացեալ ընդ հիւսիս՝ խառնի յԵրասխ գետ ի Հաճի աղայէ 7 փարսախօք հասաք ի Թիքմատաշ գիւղ, այլ թողեալ զնա՝ եկաք իջաք ի պանդոկին՝ որ ի խոնարհ քան զնա երկու մղոնօք, ուր անսուաղ անցուցի զգիշերն բովանդակ, զի ո՛չ ին՛չ վաճառէր գնոց ի պանդոկին բայց միայն յարդ և գարի։

Միով փարսախաւ հեռի ի պանդոկէն Թիքմատաշայ՝ է Իշդարխա, երեք անկիւնի ձորակ իմն կանաչաբեր, առ երի Սոմմայ գեղջ՝ յարևելս հարաւոյ նորա, ուստի խաղայ վտակն որ խառնի ի Հաշթրուտ, և ի վերայ նորա կամուրջ փոքրիկ և քարաշէն։

Աստի եօթն փարսախօք հասաք ի Թորգման գիւղ գեղեցիկ ի ստորոտս միաշար զօտեաց պարսկային Տորոսի, միով և կիսով փարսախի ընդ հարաւ նորա, ուստի ելեալ վտակ խոխոջուն՝ կարկաչէ ի Միանայ, և խառնեալ ի Հաշթրուտ՝ ընթանայ զհիւսիսաւ։ Այս գեօղ է սուրհարան տէրութեան. ունի պարտէզս ամենաբեր ծառոց. բերէ սեխ և ձմերուկ առատ, այլ խաղող նորա թթու՜։ Որսոց անբաւ առատութիւն ի լերինս նորա։ Աստանօր անձրև սաստիկ ուր ես բացօթեայ չկարելով անցուցանել զգիշերն՝ և մեծապէս պարշելով ի զարշողաց անտի խմոց՝ եկի ի խնդիր օթի իրիք։ Եւ ահա պատահի ոմն Սաֆարալի անուն, որ էր տէր սուրհարանին Թորգմանայ՝ հրաւիրեաց զիս ի զամ անդր իւր, ցամաքեցոյց զհանդերձս իմ ի տամկութենէ անձրևոցն, մատոյց գեղ Յովկանն՝ և կերակուր առատ ինձ, և հրամայեաց քեռ իւրում խարշել ինձ զմարի վասն վաղուին, մեծապէս արհամարհելով զխարանս Հաճի աղայի և որոց ընդ նոսա։ Կարի՛ յոյժ մխիթարեալ ի գեղեցիկ առնն հիւրընկալութենէ՝ ի մեկնիլ իմում մատուցի նմա ռեալս երկուս, այլ նա ո՛չ բնաւ ընկալաւ զնոսա. «Ճանապարհորդ ես՝ ասէ, և պէտս բազում ունիս դացուն՝ քան թէ ես. հիւր Աստուծոյ եղեր ինձ՝ բարի՛ եկիր»։

Է և այլ ճանապարհ ի Թիքմատաշայ դէպ ի Միանայ, որ հանէ ի Մէհմանդօստ և ի Մէհմանքուշ գիւղօրէս Տաճկաց։ Մեհմանդօստ զհիւրասէրն յայտ առնէ. իսկ Մէհմանքուշ՝ զհիւրասպանն։ Եւ հաստա՞տ արդեօք. զի բնաւորութեան բնակչաց յատուկք են անուանքդ և հանգամանք նոցա։ Չէ միջոց զանազանութեանն առաւել քան ցմի մղոն. այլ դեռ ևս մին զհիւրն սիրելով և միւս սպանելովն իւրով

յայտ առնեն զտարբեր խառնուածս արեանց, յորոց և զանգնեցանն. Տեսեալ Յովկան զյարադալար զուարթութիւնս բլրոցն և զանջուր անդորրայ նոցա՝ ասաց. «Հա՞նց գիտես այսպիսի երկիր իցէ այս, որպէս և հայրենիք իմ»։ Պատասխանեցի. «Այո՛. եթէ այդ ոչ իցէ».— մատամբացի ցուցանելով զՄէհմանքուշ, և պատմելով նմա զանգթութենէ բնակողացն ի նմա՝ ընդ որ կարի զարմացաւ։

Ի վաղիւ անդր թողեալ զԹորգման, և զտուն Սաֆարալեայ անմոռաց երախտագիտութեամբ՝ յուղի անկաք դէպ յաւան Միանայ։ Ճանապարհ՝ ընդ փարսախս չորս՝ կարի առապար. զարհուրնլի քարաժայռիւք և սեպացեալ բլրովք աղխաղեալ, ընդ որս հզօր անցանէ հեղեղատ ի միաշար զօտեաց Տորոսի։ Ի գարնանի այնքան սաստիկ ընթանայ այս գետակ մինչ վէմս մեծամեծս և զջորիս բեռամբն հանդերձ առնու զեղու ի գետն մեծ Միանէհ։ Երեք փարսախօք ի Թորգմանայ հասաք ի Զէմբրշուր, որ է աղբիւր աղի բղխեալ ի ձորակ ինչ եռանկիւնի՝ յանդիման լերին մեծի ի հարաւոյ. յորմէ այլ ևս երեք փարսախօք հասաք ի Միանա. կառուցեալ ի մէջ խորին դաշտավայրի շրջապատելոյ մեծամեծ լերամբք յարեվելից հիսիսոյ համանուն գետոյն, և յաջմէ ճանապարհին։ Զանգանայ։ Թէպէտև ի գիրս ուրեք ո՛չ պատահեցայ, սակայն աւանդապահք ի ծերունեաց էջմիածնի ուսուցին ինձ այսպէս ստուգաբանել զանուանս երևելի վայրաց Ատրպատական աշխարհիս։ Իբրու այն թէ՝ յետ դառնալոյ Մեծին Տրդատայ յունական զօրօք ի Հայս, տիրելոյ Երկրորդն Եկբատանի, և ի վրէժ արեան Մեծին Խոսրովու անուանելոյ զքաղաքն Դավրէժ, խաղայ ապա ի վերայ աւանիս այսորիկ, որ ի ժամանակի այնմիկ քաղաք բազմամարդ. և տիրեալ նմին՝ կարդայ զանուն նորա Միանայ. այսինքն թէ՝ թո՛ղ և այս քաղաք ընդ Հայաստան միասցի՛։ Ապա աստի յԱրդաւէլ. և կոչեաց զնա Արդ յաւել. այսինքն թէ՝ այժմ յաւելաւ սա ի սահման ճոխութեան Հայաստանեայց աշխարհի։ Իսկ ի բարբառս Պարսից նշանակէ միանայդ կամ լաւ ևս միունէ՝ զմիջոցն. և այս արդի աւան, կեդրոնացեալ ի միջոց դաշտավայրին շրջապատելոյ լերամբք՝ գեղեցիկ ևս յարադրութեամբ ի դրից և՛ զանուանն ընկալնու։ Որպէս Մեղրի Կոճիվանայ, նոյնպէս և զՄիանա Թորգմանայ համարիմ գոլ ձրմերոց։ Վասնզի այն ինչ ի Թորգման նար ի նորոյ բանիւր գարուն, և ծաղկունք ի ծառոց պտկիլ սկսանէին, ի Միանայ վեց փարսախօք նեթ հեռի ի նմանէ նախախայծ պթուղն կերեաք. յորմէ յայտ է անտանելի ջերմութիւն ամառան նորա։ Տունք Միանայ անշուք հողակերտք. և գեղջուկք բնակին ի նոսին։ Հարցեալ ցսուրհարանապետ

տեղւոյս՝ թէ քանի՞ տունք իցեն ի Միանա. պատասխանեց՝ «Երկու՜ Հազար»։ Եւ եթէ ոք ըստ Պարսից տեսանիցէ զՀաշիւ բազմամարդութեան երկրին, ընդ չափ անցանէ թուոց։ Երկերիւր գերդաստանք Տաճկաց Հազիւ գտանին. վարուք կարի անընդելք և խուժադուժք. Հաղորդեալ վարու բնակչացն Մեհմանքուշայ։ Օտարատեացք են, և գրեթէ ոխերիմ թշնամիք քրիստոնէից։ Ունի վաճառանոց անշուք. ուր է ներկատուն մի, գարբնոց երկու, պայտառանոց ութն, և մանրավաճառաց Հանութս՝ իբրև տասն և հինգ։ Ունի մզկիթ մի և բաղանիք, իսկ յարեմտեան կողմն իւր նաև զղեակ ինչ ի վերայ բլրակի միում, կառուցեալ եկեղեցակ պարսպօք։ Առ երի զղեկիս անցանէ գետն, և իբրև ասպարիզաւ հեռի ի նմանէ՝ անկանի պարտէզ Աբբաս Միրզայի, ամենաբեր ծառովք զարդարեալ, և որթովք խաղողոյ ուռճացեալ ընդ ամեն բոլոր։ Ի գլուխ բարաւորի ցանկապատի պարսպացն լին սենեկանի երկդատիկոնեան, և ի կեդրոնի պարտիզին շինուած փակեղաձև, քոլա Քանիլի կոչեցեալ. յօթ յերթի և եկի ժառանգին արքայութեան Պարսից՝ և ատագանուոյ նորա[53]։.....

# ՃԱՌ
# ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ
## ԸՍՏ ԽՆԴՐՈՅ ՊԱՐՈՆ ՅՈՎՍԷՓԱՅ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Գրեաց

Մ. Դ. ԹԱՂԻԴԵԱՆՑ, Վ. Ե.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱԶԳԱՍԻՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ Յ. ՍԱՐԳՍԵԱՆՑ

### ՆԱԽԱՄԱՅՐ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆՑ

*Գերապատի՛ւ տիկին*

*Պսպղուն պատմութեան Հռովմայ թողումք հրաշանալ յիւր Կոռնելիա, կամ հրաշացուցանել զնա յիւր տաշուն տապարուն որդիս, այնինչ բովանդակ իմաստութիւն ժամանակին՝ յիմարութիւն էր առ Աստուած։ Եւ մեք յատուկ մեզ սեպհական պարծանօք՝ Ձեօք նոր գլուխ հատանեմք պատմութեան Ազգիս՝ զկնուհեաւ անկեան երկուց մեծահամբաւ գերդաստանաց Ազգի մերոյ՝ ի Կալկաթա. որոց որպէս արեամբ՝ նոյն և արդեամբք հանդիսացայր ժառանգուհի առաքինութեանցն և փառաց։ Որթ ողկուզաբեր անկեալ յայգի սիրելւոյն՝ բարունակս ձգեցեր ի ծովէ մինչև ի ծով, և աստուածային օրհնութեամբ նոր Սառայ[2] եղեալ Հայաստանի՝ ողջոյն հասարակութեանս մայրացար։*

*Ձեօք և Ձերովք սկսաւ դպրութիւն Ազգիս, կառուցան դպրոցք, հաստատեցան տպարանք, հրատարակեցան գրեանք, և պայծառացաւ եկեղեցի Աստուծոյ. տի՞նա թէ և մեծ մասն երկրական Հայ քրիստոնեայ հաւատացելոց ի Ձէնջ սնուցեալ և զարգացան ի շնորհս Աստուծոյ. Ձեօք նախ սկիզբն արար դաստիարակութիւն օրիորդաց՝ և ի Ձէնջ արդ՝ այցելուհի կուսական կրթարանի Ազգիս մերոյ։*

*Այլաքէն եթէ զբարին դիտաւորութեան մարդկան կշռել արժան իցէ համընթացութեամբ կամացն Աստուծոյ, ուրեմն արձակութիւն խնդրեմք շնորհաւորել* Ձեզ, տիկի՛ն մայր, *իբրև մաքուր դիտաւորութեամբ յորդորողի Ծառիս՝ միանգամայն և ճանապարհին դաստի-*

*արակութեան օրհորդաց՝ ի սուրբն Սանդուխտ, որ գոգչի՛ր զոյգ սկսեալ և զոյգ կատարեցան Տէրամբ։*

*Վասնորոյ սակաւաթերթ և գուզնաքեայ որքան և է Ճառս, տակաւին առաջին գոլով ի գրուածս ծառայի Ձերում, որ նախ արարն՝ և ուսոյց՝ Ձեզ յաւէտ պատկան դատի մատուցանել ի պատարագ պարտեաց և մեծարանաց իւրոց։*

ամենախոնարհ Ձեր
Արարատեան ընկերութիւն

# ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՕՐԻՈՐԴԱՑ

## ԳԼՈՒԽ Ա

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՒՐ ՍԿՍԱՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՕՐԻՈՐԴԱՑ

Մանրանալ *աստանօր ի գովեստ զինչութեան և արդասեաց դաստիարակութեան, կամ որ լաւ ևս՝ դպրոցական կրթութեան գող-տըրական սերին՝ կամ օրիորդաց Ազգի մերում՝ այնպէս է, որպէս թէ նստեալ ի նորոյ երազս կարկառէաք կամ զաւելորդաց, և բդ-յայտնեաց գայաք ընդ վայրապար ճարճատող։ Քանզի՝ եթէ ընդ յետս հայել հայեցի որ ի հնութիւնս ժամանակաց՝ տեսանելով տե-սանէ ո՛չ միայն զնախկին աստուածպաշտութեանն կառուցեալ սեղան ի Հայս հաշտել զորէն ի նուէր, և զառաջին դարուն դպրոց ուսման ճարտարութեան և արուեստից հարանց համատարած ազ-գաց աշխարհի, այլ և՝ որպէս հաւանեալ իսկ եմք՝ վճիռ տեսանել նա զառաջին ուսումնարան նահապետական մարց նոցա, այսինքն օրիորդաց Հայաստանեայց՝ հսկայուհեացն առաջնոց, որք ընդ հըս-կայից մեծագործացն աջակցեալ՝ սփռեցին զարհեստ և զգիտութիւն յորդիս և ի թոռունս իւրեանց, և ի զկնեացն ընդ արանց միա-հաղոյն և եղբարց՝ յաստուածութիւն վերադասեալ՝ արժանացան ակնածականն երախտագիտութեան հանուրց ազգաց աշխարհի։ Ո՞վ այն Աստղիկ, կամ Արուսեակ, կամ Անահիտ, Իսիս, և բիր այլ այսպիսի անուանք, եթէ ո՛չ ճարտար և հանճարեղ Հայուհեացն ակումբ, որ իմաստութեամբ իւրեանց բարբարր ազգի մարդկան հանդիսացեալ՝ նախ զմայրական, և ապա զաստուածականն ըն-կալան ի մարդկանէ զպատիւ։ Ոմն զհանդերձին անկուած և ձև*

հնարելով, ոմն զդեղոց և զարմատոց զօրութիւնս փորձելով և բժշկութեանն նախամայր լինելով, այլ ոմն զտնարարութեան կերպ և կանոն հաստատելով, այլովքն հանդերձ:

Ո՛չ վայրապար ինչ է դրութիւնս. լիցի Հայաստան՝ ո՛վ որպէս և համարիլ յօժարիցի, տակաւին ոչ կարէ ուրանալ թէ յերկու հազար ամաց հետէ, այսինքն յԱդամայ մինչև ի ջրհեղեղն, հանդիսարան և ստնտու գոլով ամենայն մարդկան, որք զմի և եթ լեզու խօսէին, չիցէ հնարեալ իւր արուեստս պիտանացուս ի դիւրութիւն կենաց այնքան բազմութեան: Յայսց արուեստից, որպէս յամենայն դարս՝ նոյն և այժմ իսկ ի մերում դարու, ոչ ոք իշխէ մերժել ըզկանացին ճարտարութիւն: Եւ եթէ այսպէս՝ ուրեմն առաջին ուսումն գողտրական սերին էր՝ որ գտաւ ի Հայաստան, և սփռեցաւ ընդ դստերաց իւրոց յաշխարհ ամենայն:

Չհնոց զա՛նց արարեալ՝ խոնարհեսցուք (թո՛ղ) յարգի անտերունջ վիճակ մերոյ Հայրենեաց, ուր քաջ տեսանէ նրբազնին բանասէրն, զի եթէ գէթ քան ամօք ի խաղաղութեան կայցէ աշխարհն՝ չի՛ք արուեստ որ ոչ ծաղկէ անդանօր, առաւել ևս արագ՝ քան թէ յայլուր հնար է: Կա՛, կացե՛ դու՝ եթէ կամիս, զերթևեկ կարավանաց յամենայն կուսէ, և արգել զվաճառ յօտար աշխարհաց. տակաւին երկիր մեր առատութեամբ զնիւթն՝ և հանճար բնակչաց զարուեստն մեծ արարեալ՝ ո՛չ ինչ իմիք կարօտ մնան: Տիկնայք մեր՝ անտեսք են մեր՝ ժրազլուխք յամենայն ի գործս իւրեանց, դիւրաթեկ և դիւրառուք ամենայն ուսմանց: Տիկնայք մեր ոստայն արկեալ նիւթեն մեզ ի կայծէ՝ այսինքն ի թաղեաց մինչև ի նրբաթել կերպասին: Տիկնայք մեր են մեզ բժիշկք ինքնուսոյցք, և հազիւ ուրեք վրիպին ի ճարտար գեղասաուութեան իւրեանց:

Աստեղաբաշխութեան առաջին գիւտ լինել ի Հայս, և մշակել այնր առաւելապէս ի տիկնաց մերոյ աշխարհի՝ յայտնի ցուցանեն անուանք ամսոց մերոց զհետ երկոտասան որդւոցն Հայկայ, և անուանք քանևչորից ժամուց՝ զհետ սկայուհի դստերաց նորա: Չիք ազգ յաշխարհի, որ կարիցէ յառաջ բերել այսքան հին, և այսքան հզօր ապացոյցս ի հաստատութիւն գիւտիս այսորիկ: Եւ զի՞ մի մի թուել մեզ միահաղոյն զամենայն. ասղունք նոցա առնեն հրաշս ի նկարչութեան, և հրաշալիք ի վարագուրաց տաճարաց Տեառն յանդիման կացուցանեն զպարծանս գեղապատար կուսանաց մերոց:

Կենդանական մագնիսութեանն գիտութիւն, որ այժմ գրաւէ զուշադրութիւն համօրէն Եւրոպիոյ, այն զի Կեսներ ոմն Գերմանացի ի 1778 թուականի Տեառն ընդ աղօտ իմն հրատարակեաց անդ,

յատուկ է պառաւանց մերոց յանյիշատակ դարուց անտի, զոր և կոչեն «Աղօթել»: Յորժամ դէպ լինի հիւանդին դիմել առ նոսա, նստուցանէ աղօթողն զնա յանդիման, առեալ զասեղն մի կամ քորոց ի պտղունցն, կծկէ զամենայն մատունս իւր, և սաէպ շուրջ բոլորեալ զգլխով, զծոծրակաւ, և զերեսօք հիւանդին՝ զրզռէ ի նա և յինքն զայն աՀագին յօրաշտումն և ճօճումն մարմնոյ՝ մինչև յորդորել զնա ի քուն, ապա խրէ զասեղն կամ զքորոցն ի զատակ նորա և արձակէ ի բաց:

Երկրորդ՝ եթէ ոք ի նորութիւն լուսաւորեալ ազգացն ակնարկիցէ, արդարև բարի նախանձու ջեռուցեալ եռայ տեսանելով՝ թէ յոր- չա՞փ կարելութեան Հասեալ իցեն տիկնայք նոցա. որ ո՛չ միայն ձեռակերտ արուեստիւն պայծառութեամբ ճոխանան, այլ և իմա- ցական մակացութեամբ մատեանս շարադրեն յօգուտ ընկերակցու- թեան ազգի մարդկան: Քաղաքականութիւն և բարոյք խուժադուժ և յերեկեան ազգացն Եւրոպիոյ յայնժամ եՀաս ի ծայր արդի կա- տարելութեան իւրոյ՝ յորժամ Հասարակախնամ տեսչութիւն օրէնս- դրաց նորա սաՀմանեաց զՀարկ դաստիարակութեան զաղտրական սեռի նոցա:

Այլաքէն եթէ նոքա՝ որ առ մերով տխեղերակալ թագաւորու- թեամբ և անուն ազգի ո՛չ ունէին՝ որով ճանաչէինն, սովին յայն զերակշռ ժամանեցան ի կատար քաղաքական կրթութեանց, մեզ՝ որպէս սկզբան և նախաՀօր ազգաց աշխարՀի, առաւել արժան և Հարկ է կրթել զօրիորդս մեր յուսմունս պէսպէս և պիտանի գիտու- թեանց: Զի որպէս զոՀարն ի զարդ մարմնոյ, նոյնպէս և գիտու- թիւնն է պերճութիւն Հոգւոյ:

ԳԼՈՒԽ Բ

## ՅԱՂԱԳՍ ՀԱՐԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ԲԱՆԱԿԱՆ

Ծրհորդ կամ լաւ ես ասել իգական սեռ ազգաց՝ զաղտրական մասն զոլով մարդկային կենաց, սիրունագոյն անդամք ընկերակցու- թեան, և ի չարիս և ի բարիս անբաժան վիճակակիցք՝ առաւելա- պէս կարօտին ամենատեսակ վայելչական, առանին և քաղաքական ընդերձանզաց, քան զարուս նոցա: Պատճառ, նախ՝ զի տկար գոլով ոժով մարմնոյ և անդամոց՝ պարտին զթերին բնութեան արուես-

տականաւն լնուլ և կատարելագործել: Երկրորդ՝ զի նազելի մասն գոլով կենաց և կենցաղավարութեանց՝ պարտին հրահանգօք կըրթել զանձինս իւրեանց ի պիտանութիւն և ի հաճոյականութիւն, և ամենայն ընկերակցութեան կարգ և կանոնս սահմանել քնքուշ բարոյիւք իւրեանց: Զի արանց օգնական և գործակից ստեղծեալք՝ ո՛չ ինչ իւիք զպայման նախատես արարչութեանն կատարէին, եթէ զուրկ և ունայն մնային ի սխրալի հրահանգաց կենցաղական գիտութեանց: Զորդեակս ո՛չ սնուցանէին յերկիւղն Աստուծոյ՝ ըզտուն բարուք ո՛չ խնամէին, զվաստակս արանցն շռայլաբար վատնէին, և յայսցանէ յառաջ գային բազմատեսակ չարիք և վնասք ազգի մարդկան: Ա՛ռ լոկ սոխ ու հաց, դի՛ր ի սեղան քո, և հրաւիրեա՛ ի նա, եթէ կամիս զիշխան ոք կամ զթագաւոր. եթէ կին քո, քոյր, կամ դուստր՝ որ մատակարարէն զնոսա, քաղաքավարեալ իցէ և հաճոյական, անշուշտ հաւատա՛, զի ամենապարզ սեղան քո ձգեաց գրաւեաց առ քեզ զերախտագիտութիւն հիւրոցդ. իսկ թէ ընդ հակառակն՝ լո՛յծ ի քացախ զամենագին մարգարիտ, ըստ անբարտաւանին Կղէոպատրայ դժխոյին Եգիպտոսի, կազմեա՛ սեղան համադամ, բայց անհրահանգութեամբ գերդաստանի քում, ո՛չ համ տաս, ո՛չ հաճութիւն: Ուստի և ամենայն մեծածախութիւնք յումպէտս գնան, և դու ծաղրալի լինիս, քան թէ գովելի:

Տան,—բարեկարգեալ և կառավար տան ասել կամիմ,—հոգին որ կայ՝ կինն է, և այն՝ ուսեալ և ժրագլուխն: Արդ որպէս մարմին կարօտի հոգւոյ զի կեցցէ, նոյնպէս հոգին կարօտի գիտութեան, զի բարուք կեցցէ: Ուրեմն որ զրկէ զդստերս իւր յայսպիսի իմն էական և ի գերաւլրական ամբողջութենէ կենաց, կամովին մեռուցանէ զնա բազմապիսի չարաչար մահուամբ:

Բնականաւ: Վասն զի՝ որպէս կոյրն ո՛չ զգայ յանձին զուարճութիւն ի լուսաւոր գունաւորացն գեղեցկութենէ, նոյնպէս և անհրահանգեալն ո՛չ զմայլի հրաշակերտութեամբ ամենազան արարածոցն Աստուծոյ. ո՛չ հասկանայ զինչութիւն և զպիտանութիւն նոցա, ո՛չ վայելէ որպէս արժանն է զբարիս ամենառատ բնութեան՝ իբրև ըզբարի. ուստի ինքնին աշխարհի մեռեալ՝ և աշխարհ մեռեալ երևի նմա:

Բարոյականաւ: Վասն զի՝ անհրահանգ և անկիրթ միտք ըստ ինքեան չէ այնքան կարողութիւն, որով զտել և ընտրել կարիցէ ընդ մոլար և ճշմարիտ: Ուստի և անգիտութեամբ կամ փոփոխ ի կիր արկանէ զառաքինութիւն ընդ մոլութեան՝ առանց խտրանաց, և կամ ընդաբոյս հակամիտութեամբ բնութեանն դէպ ի չարն կոյս՝ յաւէտ

*զվատթարագունին ընդելանալ՝ քան թէ լաւին և ազնուագունին։ Ո՛չ խորշի ի գարշելի և ի Գարգոն դիմաց մոլութեան, ո՛չ փարի փափագանօք զաստուածարարն գարշապարօք սիրալի առաքինութեանն, այլ յերկոսին հետս միշտ կաղ՝ ո՛չ ճանաչէ, եթէ տէր իցէ իւր Աստուած՝ թէ Ճանճիկն Ակկարոնի։*

Աստուածաբանական: *Վասն զի՝ անհրահանգ և անկիրթ հոգի ո՛չ զգիրս քննել կարէ, յորոց կեանս ընդունիցի, և ո՛չ զինչութիւն և զեղանակ աղօթիցն. ուստի և ո՛չ օրինաւոր ոգւով աղօթել կարէ։ Ո՞վ թէ որպէս արժանն էր՝ գիտէաք զյարգ աղօթիցն։ Մարդիկ ի մարդկանէ ինչ յուզելն՝ հազար գիտս որոնեն, հազարիցս յստակեն զգտեալսն, զորս և իբրև զդասս սերտեն, և այնպէս յառաջանան երկիւղիւ և պատկառանօք. ապա ո՞րքան ևս առաւել արժան իցէ այսպիսի փութոյ և եռանդեան՝ յորժամ հանդերձիցի ոք ընդ Աստուծոյ խօսել, Թագաւորին Թագաւորաց, և Տեառն տերանց։*

*Հայոց Ազգի պատուելի՛ ծնողք, զամենեսին աղաչեմք սիրովն Քրիստոսի միտ դնել այսր խոնարհ առաջարկութեանս։ Եթէ ուսումն և դաստիարակութիւն մատաղորեար դստերաց ձերոց աւելորդ և անպիտան համարիցի առ ի նպաստ աշխարհական կենցաղավարութեան և առնին կառավարութեան ձերոյ, տակաւին եռապատիկ հարկաւ պահանջի առ ի նպաստ աղօթից և ընդ Աստուծոյ մաղթանաց և պաղատանաց ձերոց։ Տակաւին քառապատիկ հարկաւ պահանջի յամբողջութիւն եկեղեցւոյ ձերոյ սրբոյ, տակաւին բիւրապատիկ հարկաւ պահանջի ի փրկութիւն անմահ հոգւոց ձերոց և հոգւոց գողտրական զաւակաց ձերոց։ Բնութիւնն ստիպէ զծնողական զթութիւնս ձեր նախախնամ հոգողութեամբ ջանալ և բարւոքել զապագայ երջանկութիւն զաւակաց ձերոց, և զո՞ր երջանկութիւն կարիցեն տալ մահացուք, եթէ անհրահանգ պահելով զզաւակունս իւրեանց ի գիտութենէ Սուրբ Գրոց՝ զրկիցեն զնոսա ի փառաւոր աստուածախօսութեանց յաստի կեանս, և յԱստուծոյ միանգամայն ի հանդերձեալսն։ Ապաքէն արի՛ք ծնո՛ղք Ազգի մերում, զժամանակս մինչ ցարդ անփութութեամբ կորուսեալ ի վնաս մեծ համարելով անձանց և քաղցրիկ զերմականացդ, բո՛ւռնն հարէք զդրօշակէ մօրն լուսոյ՝ գիտութեան, և ահա՛ աչօք ձերովք իսկ տեսանէք զպտուղ վաստակոց ձերոց։ Տնկեցէ՛ք դպրոցս օրիորդաց ի տեղիս տեղիս, և ահա՛ ծաղկեսցեն ձեզ նոքին դստերս գիտունս, առաքինիս և աստուածապաշտս։ Եթէ ո՛չ ինչ այլ օգուտ արասցեն նոցա դպրոցք գիտութեանց տակաւին հրաժարեցուցանեն զնոսա ի դատարկութեանց և ի ծուլութեանց, կրթեն զնոսա յիմաստս գրոց, մաքրեն զհանճարս նոցա ի*



18—739

դիտաս արուեստից, կանայս ժրագլուխս և պսակս առնեն զնոսա նրանց իւրեանց, և ահա՛ այսոքիկ միայն. այսոքիկ միա՛յն ասեմք. վճարեն ձեզ զամենայն զծախս ձեր, քանզի դատարկութիւն է մայր ամենայն չարեաց։ Երանի՜ թէ ականջք լսելոյ իցեն, քան թէ ունչք քամահելոյ։

ԳԼՈՒԽ Գ

## ՅԱՂԱԳՍ ՀԱՐԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Իբրև ակն կառուցեալ հայիցի ոք միայն յարտաքին շուք կերպարանաց օրիորդաց մերոց՝ յոտից մինչ ի գլուխ, ի գեղապատար յայն արարած ճարտարութեանն Աստուծոյ, ի հրաշալին զօրութիւն Յգողութեանց Անահտական դիզականց, անբաւ զմայլանօք հիացեալ ի միտս իւր ցանկայ նոցա զամենայն որ ինչ սիրուն, որ ինչ վայելուչ, և որ ինչ երանարարն իցէ վիճակի նոցա։ Զդոյն և մեք ցանկամք, քաղաքավարեալք ցանկան, և խուժն վայրագ ցանկայ։ Իսկ դու՞ ապա ծնո՛ղ, զի՞նչ խորհիցիս ի միտս քո՝ ասա՛. ո՞չ ցանկանալով ցանկանայցես գողտրական և ազնուահի զաւակի քում զայն ամենայն, որք առնել կարասցեն զնա բովանդակօրէն հրեշտակ մարմնի։ Եթէ արդա՜րև ցանկանայցես, չիք քեզ այլ միջոց՝ քան զդպրոցս։

Եթէ արտաքին կերպարանօք մարմնոյ, որքան և սիրուն իցէ՝ կարօտի տակաւին գիտութեան յուղղութիւն վարուց և գնացից իւրոց ի կատարելութիւն հոգւոյն և հանճարոյ, և յարմարութիւն անձին առ ամենայն բարեկարգ ընկերակցութիւնս մարդկան, ապա ո՞րքան առաւել ևս, եթէ առնուցուս զնա իբրև զքեզ ի հոգի բանական, արարեալ յատուկ ի կերպարանս քաղցրագոյն կատարելութեանց Արարչի իւրոյ և քո, և առաւել ի դալար և ի գողտրական նիւթոց քան զքեզ. զի դու արարար ի հողոյ, իսկ նա՝ ի կողից քոց. ո՛չ միայն վիճակակից և օգնական քեզ յամենայն ել և էջս պատահարաց աշխարհիս այսորիկ՝ այլև ժառանգակից և հաղորդ արքայութեան կուսածին Թագաւորին։

Վասն անձնական օգտի ունեալ օրիորդի՝ փոքր ի շատէ խօսեցաք ի նախընթացսն. այժմ արձակութիւն հայցեմք խօսել փոքր ի շատէ ընդհանուր օգտից վերայ՝ որք անշուշտ զհետ քան քրիստոնէական հրահանգաց և կրթութեանց։

*Եթէ ի մէջ ընդհանուր աշխարհի, յանցեալն, ի ներկայս և յապառնիս միանգամայն հայեսցուք, միմիայն քրիստոնէական հաւատն է ծաղկեցուցիչ և տարածող քաղաքական կենաց և առանին երջանկութեանց՝ ի ձեռն ծայրագոյն և աստուածային բարոյականութեանցն՝ զոր ո՛չ ոք ուրանալ կարէ: Ուրեմն կոյս փոքրիկ՝ որ ընդ հասակին զարգանայցէ և յուսումն աստուածային վարդապետութեանս այսորիկ՝ լինի հարսն աստուածասէր, կին այրասէր, մայր որդեսէր, տիկին տնարար, օրինակ քաղաքավարութեան, զարդ ընկերութեան, տնտես հաւասարատես, գթութիւն անկոպար, դժխոյ հասարակախնամ, հաւատացեալ բարեպաշտօն, պարկեշտ դայեակ դստերաց, բարեպաշտ դաստիարակ մանկանց, ամրութիւն եկեղեցւոյ, պարծանք աշխարհի:*

*Վասն այսպիսի իմաստուն կանանց ասէր Սողոմոն՝ շինել զտունս իւրեանց և կանգնել սիւնս եօթն ի նոսա: Վասն այսպիսի իմաստուն և ժրագլուխ կանանց քարոզէր նա լինել ի պսակս արանց իւրեանց: Բայց Հայաստան առաւել ևս չնաշխարհիկ կանայս կարաց և կարէ յառաջ բերել, որ եղեալ են և լինին գիտութեամբ և իմաստութեամբ իւրեանց սիւն և հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ մերոյ:*

*Յազկերտ Պարսից թագաւոր՝ գիր անզգայ արեգակն առեալ՝ մարտնչէր ընդ երկրպագուս Արեգականն Արդարութեան, և զիւրոյ շիջանիւթ կրակին մոխիր ի գլուխս ցանել իշխէր մեր խաչակիր նահատակաց: Վարդան իւրովք պսակաւորօքն ընդդէմ զինէր կամաց նորա. բայց որո՞վ զինու և զօրութեամբ, այն ինչ աշխարհն բովանդակ երկպառակեալ էր, և կայսրն կանացի՝ վեհերոտեալ զանձին և եթ խնդրէր զհեշտութիւն պառօրեայ: Ասա՛. որո՞վ: —Մայրենի և բարեպաշտ ուսմամբ իւրով: Քանզի մայր նորա դուստր Մեծին Սահակայ Պարթևական Հայրապետի մերոյ՝ ուսեալ ի հրմտութիւնս Գրոց Սրբոց ի հօրէն իւրմէ, ընդ կաթին հաւասար զոգջիր մատակարարեալ զայն և որդւոց իւրոց: Վարդանայ, Համազասպայ և Հմայեկանն, քաջացոյց բարեպաշտութեամբ և արիութեամբ սխրալին առաքինութեանց: Նոյնպէս առնէին յայնմ երջանիկ դարու՝ և ամենայն տիրուհիք նախարարութեանց Հայոց աշխարհին:*

*Բայց անկա՞ւ Վարդան ի սուրբ պատերազմին վասն հաւատոցն որ ի Քրիստոս, և կարծէր ոք յայնժամ, թէ աշխարհն ոտնկոխ եղեալ կործանէր, և քրիստոնէութիւնն յարևապաշտութիւն ընկղմեալ անհետանայր յաշխարհէն: Այդպէս և լինէր իսկ, եթէ չէր հոգ տարեալ սրբուհեաց, այո՛, և առաքելուհեաց իսկ աշխարհիս Հայոց՝ կրթել և*

դաստիարակել զորդիս իւրեանց զուստերս և զդստերսն միանգամայն ի հրահանգս ներքին և արտաքին գիտութեանց։

Մեծ մասն գրեթէ և բոլոր ուխտապահ նախարարք մեր կալեալք էին ի դրան արքային Պարսից. ուրեմն ո՞ր այլ խոչ արգել լինէր Յազկերտի և յաջորդաց նորա զկամս ամբարշտութեանցն կատարել։ Պատասխանեմք. ընդհանուր ուսումն արանց և կանանց ժամանակին։ Գրէ մերս Ղազար Փարպեցի. «Կանայք նահատակելոցն արանց, և կանայք կալելոց ի դրանն՝ թէպէտև ի նեղութեան էին, սակայն ուսուցեալ, և ո՛չ իբրև զանփոյթ և զանպիտան կանայս, այլ իբրև զքաջայրս՝ զառաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին։ Եւ մանաւանդ (Զուիկ) կին նահատակին Հմայեկայ եղբօր սրբոյն Վարդանայ, որ եղև կին անուանի և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհիս, որ սնոյց և խրատեաց զորդիսն իւր յաշխարհին Վրաց ի տան Աշուշայի Վրաց բդեշխի, վասն զի զքոյրն Զուկայ ունէր բդեշխն Վրաց Աշուշայ»[3]։ Եթէ յօժարութիւն իցէ ումեք և զկատարած այսր կանացի, բայց և հոգածու դաստիարակութեանն տեսանել, աւա՛նիկ նոյն հեղինակ լիով մատակարարէ. «Եւ սնուցեալ անդ մանկունքն և ուսեալ՝ յառաջադէմք էին յամենայնի և հնչակաւորք. որք դեռ ևս ի տիս մանկութեան՝ ամենայն տեսանող մտաց երևէին յաջողակք և զարմանալիք»[4]։ Այսպէս և քեզ ըղձամբ, ծնո՛ղ Հայկազուն, տեսանել զուստերս և զդստերսդ՝ ամենայն ուսմամբ յաջողակս և զարմանալիս։ Տե՛ս ահա՛ այս է վախճան դաստիարակութեան օրիորդաց. եթէ կանայք կալելոց ի դրանն, և եթէ Զուիկ կին Հմայեկայ չէին աշակերտեալ ուսման ի տիս մանկութեան իւրեանց՝ ո՛չ կարէին հասուցանել զորդեակս իւրեանց յադատութիւն եկեղեցւոյ և աշխարհիս մերոյ։ Մայրենի ուսումն կարէ արդարև փոխել զամենայն պատանի ի Վահան Մամիկոնեան[5], և զամենայն օրիորդ՝ ի Սահակադուխտ[6]. սքանչելի օրիորդ Հայկազունի՝ քոյր Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի[7]՝ զորմէ այսպէս գրէ Ստեփաննոս Օրբելեան. «Սա յոյժ հմուտ էր, ասէ, երաժշտական արուեստին, որ և ի ներքոյ վարագուրի նստեալ՝ ուսուցանէր ըզբազումս։ Եւ արար (այսինքն շարադրեաց) կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մի Սրբունի Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ»[8], այսինքն՝ որոյ գլխատառքն յօդէին զանունն Սահակադուխտ։

Զի՞նչ յաւելից գրել և զՄարիամայ դստեր Աշոտայ Առաջնոյ[9]՝ արքայի մերոյ, և զՇուշանայ տիկնոջէն Գրիգորի Պահլաւունւոյ[10], և

զայլոց հնազանդից՝ մայր և դայեակ անուանելոց կրթութեան և հրահանգաց։

Տեսի՞ր զընդհանուր օգուտ դաստիարակութեանն օրիորդաց, թէ ո՞րպէս սիւն հաստատութեան եկաց եկեղեցւոյ յայնպիսի ալէկոծեալ և ի սասանեալ դարու. ապա ուրեմն հետևեա՛ օրինակին՝ թէ սէր ունիս եկեղեցւոյ, որպէս զի և դստերք քո մայրացեալ բարեանունդ զաւակաց՝ կարասցեն ընծայել Ազգին զՎարդան և զՎահան որք. կամ գոնէ զՍահակադուխտ երամիշտ, և զՇուշան հրաշաբան։

## ԳԼՈՒԽ Գ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ՏՆՏԵՍ ԵՒ ՄԱՐՔ

**Անհատն,** այսինքն մի անձն՝ ո՛չ կացուցանէ զմի տուն, այլ ըստ հասարակ առման աշխարհագրական կանոնին՝ պահանջէ գոնեայ ոգիս վեց ի կացուցանել զտուն, առա՛՝ սկեսայր մի և սկեսուր, այր և ի կին, յորդիս, ի ծառայս և յաղախնեայս։ Արդ ի թուոյ անձանցս այսոցիկ զանազան պաշտամունք և արժանիք յառաջ բղխին, որոց ամենեցուն ուսեալ և հրահանգեալ հարսնացուն գիտէ, ըստ տեղւոյն սպաս հարկանել, պատուել, սիրել, սնուցանել, հրամայել և խնամել միանգամայն. և այն՝ այնպիսի իմն անուշակ և բարւոք եղանակաւ, մինչ երևեսցի՛ գործն՝ ո՛չ ի հարկէ՝ այլ ի հաճոյից յառաջ շարժեալ։ Այս տիրապէս հաճոյական եղանակ հարսնութեանն մեծապէս կարօտի տեղեկութեան ընդհանուր պատմութեանց, բնաւորութեան և բարոյից ազգի մարդկան առհասարակ, և որ մեծ է՝ ստէպ ընթերցուածոց Սուրբ Գրոց։

Երկրորդ մասն դրութեանս մերոյ է տնտեսութիւն, որ շատ հեշտ բան թուի յորժամ ի լի տանէ ի լի տուն անկանիցի դուստր քոյ, բայց ո՛չ է այնպէս։ Քանզի շատ լի տունք դատարկացան անխոհեմ կառավարութեամբ տնտեսացն։ Ապաքէն հարկաւոր է նմա նախ առաջին՝ տնտեսական գիտութեան հմուտ լինել, զհմտացեալն իրօք ի գործ դնել, ո՛չ ճշդել ի սա, և ո՛չ շռայլել ի նա, այլ զմիջին ճանապարհ ունել զչափաւորութեան։ Պարտ է նմա և թուաբանականին հմտանալ գիտութեան, որով զեկամուտ ընդ ծախուցն կշռելով՝ զէտակն ունիցի յաւէտ դէպ ի խնայութիւն անդր, և յառօրէական թոշակէն զտեսցէ գոնէ չնչինս ինչ և զուգնարեալս ընդդէմ աւուր նե-

դութեան։ Տնտես և տնարար տիկնաց պարտ և արժան է նաև գիտութիւն չափուց և կշռոց, որպէս և արժէից և գինչութեան տոհմականաց, իրաց պիտանեաց և մսեղինաց, որպէս զի ծառայից տեղի չտայցէ խաբել զինքն։ (Եւ եթէ այսպէս՝ բարւոք ես առնեն ծնողք եթէ գծախս սեղանոյ որպէս և զզգեստուցն գնելեաց՝ կամ յանձն արասցեն օրիորդաց, և կամ զտումար հաշուոյն տայցեն նոցա՝ զի գրեսցեն և վարժեսցին)։ Առաւել քան զամենայն պարտ է նոցա ունիլ զչափաւորութիւն ի զգեստս և ի զարդս իւրեանց. քանզի աւելորդութիւն զարդուց անգա՛մ ծաղրալի կացուցանէ զնոսա յաչս ամենայն հրահանգեալ ընկերակցաց։ Եւ այս թէպէտև յանկարելեաց սակի համարի կարծել ի նոցանէ, բայց դեռ ևս ճար կայ։ Գիտութիւն,—ճշմարիտ գիտութիւնն ասեմք,—յորժամ ի խոր արմատասցի ի միտս նոցա՝ մինչ տալ զստոյգ ճաշակ քաղցրութեան ի քիմս նոցին, յայնժամ ինքեանք իսկ արհամարհեն զպսպղուն դիրգս երկրի, և զգիտութիւն համարին իւրեանց զարդ ամենագին, զոր ո՛չ դողն դողանայ, և ո՛չ ցեցն ապականէ։

Ծանուէրունչ վիճակի Ազգիս մերոյ դուն ուրեք գերդաստան ինչ մի օրինակ ընթանայ. այլ է՝ զի յաջող, և է՝ զի ձախող ելևէջք պատահարաց փոփոխեն զբովանդակ մակերևոյթ նորա յայլ իմն տարազ կացութեան։ Բայց գիտութիւնն, որ առաջնորդ լինի տնարար տիկնաց կառավարել զմիլիոն ի յաջողութեան, նոյն և չափաւորէ ըզեղանակ կացութեան նորա ի ձախորդութեան՝ դուզնաքէիքն շատանալ. և փոխանակ հարստութեան՝ ինքն կայ առն իւրում ի մխիթարութիւն, ի զուարճութիւն և ի կատարելութիւն միանգամայն։ Տղէտ սնանկն արհամարհանաց արժանի լինի, բայց գիտուն և կատարեալ սնանկն՝ ափսոսանաց աշխարհի։

Մատիցուք այսուհետև տեսանել և զպաշտօն տնարարին ի միւս դիմաց նորա։ Այժմ դիցո՛ւք թէ նա մայր է, մանկունք շուրջ թոթովեն զնովաւ, դու ասա՛ թէ հայերէն աստուածախօս բարբառով. քանզի ազգասէր ծնողանին ո՛չ երբէք թոյլ ետուն այլազգի աղախնեաց և ծառայից հեղուլ ի մատաղ միտս նոցա զխուժադուժ բարբառս և բարս իւրեանց։ Եւ զի՞նչ յայսմիկ համարիս վայելուչ դատեր զում՝ ծնո՛ղ Հայկազուն, ի մասին դաստիարակութեան թոռին կամ թոռանցդ։ Տակաւին դպրոցի հասուն չեն հասականին, բայց կարեն յայտնել բարբառով իւրեանց զամենայն զպէտս իւրեանց, ուսանին հազար անուանս բարեաց. չուսանիցի՞ն ապա և զանուն գերագոյն բարերարին՝ որ արար զնոսա, չգիտիցե՞ն ապա թէ զի՞նչ տրիտուր պիտին փոխարինել վասն առօրէական շնորհացն. չուսանիցի՞ն

ապա սիրել զնա, և զընկերս իւրեանց վասն նորա։ Եւ այս ամենայն ի՞ լինի, եթէ մայր ինքնին ագէտ իցէ ի գրոց ներքնոց ասեմք, և արտաքնոց։ Միայն զանգիտութիւն ծնողաց ի դաստիարակութիւն տղայոց յառաջին տիս մատաղութեան նոցա՝ պատճառ կացուցանէ զնոսա պատասխանատու լինել առ յապայս գնացից նոցա՝ առաջի ահեղ դատաստանին Աստուծոյ. ու՞ր մնայ՝ ապա եթէ ոմանք՝ ի դառն ագիտութենէ շարժեալք մանաւանդ թէ և ի դառնագոյն ամբարշտութենէ՝ փոխանակ սերմանելոյ յառաջ և ի յագաւանդ մարմանդս դալար մտաց մատաղորեար մանկտւոյն բղխառողջարար սերմանս ազնիւ սննդեան և աստուածային ամենաքաղցր և անուշակ վարդապետութեանց՝ ուսուցանիցեն նոցա կատակս անտեղիս և հայհոյութիւնս անլուրս և աններելիս. զմտաւ ածեալ՝ թէ տղայն դեռ փոքրիկ է, և ո՛չ ներգործեն ինչ ի նոսա ուսմունքն չարեաց։ Ուստի և փոխանակ ողբալոյ և կարճելոյ զայնպիսիս՝ առաւել քան զառաւելն յորդորեն զնա, և ինքեանք անզգայօրէն նստեալ ծիծաղին։ Ո՜վ զուարճութիւն, որոյ վախճանն է կորուստ անհնարին զաւակաց և ծնողաց միանգամայն։ Այսօրինակ չարասոյց ծնողաց էին և չար զաւակունք Բաթուղվայ, որք տեսեալ զԵղիսէէ անցանել ընդ այն՝ աղաղակեցին զհետ նորա և ասացին՝ «Ե՛լ կնտակ, ե՛լ կնտակ»։ Սուրբ Գիրք կոչեն զնոսա մանկտի մանրիկ, և ինչ՞ մեղք սոցա եթէ աղաղակէին առ մարգարէն Աստուծոյ՝ թէ ել կնտակ, ել կնտակ։ Բայց և այնպէս՝ որոշակի ստորագրեն Սուրբ Գիրք զահագին հետեւանսն։ Դարձաւ, ասէ, մարգարէն ի թիկունս, ետես զնոսա (ի հարկէ՛ ետես, զի մանրիկ մանկտի էին. սակայն անէծ զնոսա յանուն Տեառն) և ասէ, «Որդի՛ք յանցանաց և դատարկութեան։ Եւ ելին երկու արջք յանտառէ, և պատառեցին ի նոցանէ քառասուն և երկուս մանկունս»[11]։ Տե՛ս զի մանրութիւն մանկտւոյն, կամ փոքրկութիւն հասակի նոցա ո՛չ ինչ ազդել կարաց ընդդէմ արդարահաս պատժի պատուհասին Աստուծոյ, և դեռ դու ծնո՛ղ, համարձակիցի՞ս ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ, ընդդէմ օրինաց եկեղեցւոյ, և ընդդէմ կարգաց բարի սննդեան ամենայն ընկերութեան՝ սերմանել չարիս ի մատաղ միտս նոցա. և ակնունել բարի հնձոց։ Օ՜ն անդր ի բաց առ՛ր այդ մտածի կարծիս քոյ, ո՛վ որ երբէք քաղեաց ի տատասկէ՝ թուզ, կամ ի փշոց՝ խաղող։

Մի ի մեծագոյն յանցանաց անփոյթ ծնողաց այն է, զի առ ժամէական անզգուշութիւն անձանց սկսանին անուամբք սոսկալեօք և աներեւոյթ էակօք և խրտուիլօք ահացուցանել զմատաղ զաւակունս իւրեանց. ասելով՝ դրօգն տանի, դեն տանի, և որ այսպիսի

խառնուրդոր էակքն իցեն։ Որովք ո՛չ միայն թէ շատ անգամ յանկարծամահ առնեն զնոսա՝ այլ նա և միշտ երկչոտ, վեհերոտ, վախկոտ և անպիտան գրեթէ՛ ատենի և ընկերակցութեան մարդկան։

Չեն կամք մեզ մի մի ի թիւ արկանել զտգեղութիւն այսր սովորութեան և զչարաչար և զաղէտալի հետևանս նոցա. շատ է ասել, թէ դուն ուրեք օրինաւոր հօր կամ մօր անուն ժառանգեաց, որ անհրահանգ և անկիրթ եղև ի տիս տղայութեանն իւրոյ։ Յետ Աստուծոյ ծնողք են պատճառ զաւակաց իւրեանց. և որպէս Աստուած ի վերուստ ցողէ ի նոսա զշնորհս առատ ողորմութեան և խնամոցն, նոյն և ծնողք պարտին յամենայնի զուն գործել և ընդ կաթին արբուցանել նոցա զաստուածսիրութիւն, զբարեպաշտութիւն և զազգասիրութիւն՝ ամենայն քաղցրութեամբ և խնամով։ Միանգամա՜յն ասել, եթէ օրիորդք ուսեալք ո՛չ մայրասցին հանդերձեալ անհատից Ազգի մերոյ. ո՛չ հարստութիւն Ճենաց, և ո՛չ իսկ արուեստք Եւրոպայ բաւական լինին ի փոխել զբնաւորութիւն մերոցն ի վատթարէ՛ առ լաւն կոյս։ Այնքան անջինջ և խոր տպաւորին յունակութեան մանկանց մայրենի ուսումն և դաստիարակութիւն ի տղայական տիս նոցա մինչև զարտասանութիւն տառից անգամ չկարողանալ յետոյ կանոնաւոր կրթութեամբք փոփոխել յուղիղն կոյս։

Պատահեալ երբեմն ի Կոստանդնուպօլսի հարանց ոմանց Մխիթարեանց, զի խօսէին ընդ միմեանս՝ մատուցեալ առ մի ոմն ձերադոյն ի միջի նոցա՝ հարցի, եթէ՝ «Հայաստանցի՞ իցես, հա՛յր»։ Պատասխանեաց՝ «Այո՛»։ Իսկ հայր Գէորգ վարդապետ Հորմիւզեան[12] զարմանալով եհարց զիս, թէ՝ «Ո՞րպէս ծանեար զնա»։ Պատասխանեցի՝ յարտասանելոյ նորա զտառսդ ձ, չ և ջ։ Կրկնեաց. «Այդ մեք ո՞րպէս արտասանեմք»։ Ասացի. «Դուք յայլ իմն ձայն հնչելով, որպէս սովորութիւն է տեղւոյս»։ «Այդ յառաջ գայ,— ասաց,— ի մայրենի դաստիարակութեանց անտի մերոց, զի միանգամ այդպէս ուսեալ, ո՛չ կարեմք առ յապայ փոփոխել զնոյն»։ Աստանօր Հ. Գէորգ վարդապետ մեծ ասելովն՝ և զդամարճակ միւս գիտնականաց՝ որ անդ, ի մէջ փակէր։ Արդ՝ եթէ այնպիսի երևելի և հոյակապ որեար Ազգիս, որոց անդուլ աշխատանաց պարտական է գրագիտութիւն Ազգիս, չկարիցեն փոփոխել զուսեալսն ընդ մայրենի դաստիարակութեամբ, դիւրին ի՞մն իցէ այլոց փոփոխել զբարին ի չար, կամ զչարն ի բարի, զորս ուսանն ի մանկութեան ընդ մայրենի դաստիարակութեամբ։ Քա՛ւ լիցի, մտեալն ընդ կաթին՝ ելանէ ընդ կենաց։ Հապա՜ ջանասցո՛ւք, Ա՛զգ ընտիր, մինչ դեռ ժամանակ ի

ձեռս կայ՝ զուն գործել, և զպրոցական հրահանգօք կրթել զհանդերձեալ ծնողանի Ազգիս մերոյ, որպէս զի՝ կարասցուք ապահովել զմիտս յարհաւրաց անտի տգիտութեանն, և ամենայն չար հետևանաց նորա:

## ԴԼՈՒԽ Ե

## ՅԱՂԱԳՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՄԵՐՈՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ՀԱՅ

Թերևս ի վերայ բաժանմանց մերոց բազումք զծաղու գայցեն ասելով՝ թէ ուսումն և հրահանգ ո՞ր քաղաքավարեալ ազգի օրիորդաց չէ հարկաւոր, զի դուք իբրև սեպհական յատկութիւն միայն Ազգիս օրիորդաց համարելով՝ զլուխ կարգէք՝ թէ պէտք են դաստիարակութեան նոցա՝ ըստ որում Հայք են:

Պատասխանեմք, ամենեցուն է հարկաւոր օրիորդաց դաստիարակութիւն, բայց ոչ այնքան՝ որքան անուշակ Հայուհեաց մերոց: Եւ ջանամբ ըստ կարևորին ձեռնարկութեանս՝ ապացուցութեամբ հաստատել զայս մեր նորաձև զրոցս զլխակարգութիւն:

Նախ՝ զիրք երկրի մերոյ պահանջէ զայս: Դրախտ աստուածատունկ Հայաստան, թէպէտև օրհնութեամբ Ամենակալին և արտաքուստ ձևացուցանէ մեզ զդրախտին փափկութեան Եդեմայ ըզվայելչութիւն, ամենապատարուն պտղովք և բերօքն առհասարակ՝ սակայն պատեալ զոլով շուրջանակի ի վայրագասուն և յանազորոյն ազգաց արինակերաց՝ ի սկզբանց յաւիտենից հետէ՝ թշնամեաց խաղաղութեան, ամենահնար հանճարոյ և կենցաղական գիտութեան բնակչաց պէտս ունի առ ի պաշտպանութիւն ապահովութեան իւրոյ՝ յերեսաց հանապազորդեան հրոսակութեանց նոցա: Եւ յայսմ, որպէս և յայլ ամենայն մասին, կանայք իմաստունք պիտին յօգնութիւն և ի խրախոյս կորովի բնակչաց արանցն իւրեանց ի վանել և վտարել զնոսա: Շուրջ պատէ զԲետիղուա զօրողացեալն Հողիփեռնէս, և արք Հրէաստանեայք ահահարք և վեհերոտք՝ դրօք փակելովք ծակամուտ ի տունս սասանեալք՝ անարի խորհրդով ըզքաղաքն յանձնել խորհէին: Եւ ո՞վ էր, որ վառեալ հայրենասիրութեամբ զթշնամի Ամենակալին սատակեաց, և աշխարհի հայրենեաց եղև ազատիչ. եթէ ո՛չ բարեպաշտօն և իմաստուն այրին Մանասէի դուստրն Մերարեայ[13]:

*Ո՛չ զարմանամք, եթէ ոմանք ընդ հենգն եկեալ կատակ հանցեն և ասիցեն, ուրեմն պարտ է զինուորել ձեզ զդստերս Հայկազանց յապահովութիւն Հայրենեաց ձերոց, և արանց կնամարդի նստել ի տան։*

*Պատասխանեմք, թէ ողորմութեամբ Տեառն զինուորելիք բազումք են յԱզգի մերում։ Օրիորդաց մերոց չպիտին արտաքին զէնք. այլ ներքին ոգւոց արիութիւն, որով կարող լինիցին ծնանել, սնուցանել և հասուցանել արս քաջս ի պաշտպանութիւն Հայրենեաց, որով կարասցեն ի խռովութիւնս պատերազմաց՝ անխռով և անվրդով զտունս կառավարել, արանց և ազգականաց իւրեանց առաւել կարևորօքն նպաստ հասուցանել, պահպանաց և պաշարաց նախատես և զգոյշ լինել, և որ մեծն է, հանգարտ և լուրջ կալ ի տան և աղօթել առ Աստուած վասն յաջողութեան պատերազմին, քան թէ շփոթել և աղմկել զոգիս քաջաց անտեղի աղաղակօքն իւրեանց։ Եւ ահա այս ամենայն պէտս ունի հրահանգաց և կրթութեանցն՝ որոյ մի միայն միջոց է ազգային և հրապարակականն դպրոց։ Առաւել դաստիարակութիւնք թէպէտև բարիք իցեն, բայց այնքան՝ որքան ի դատարկութենէ զոք ի զբաղմունս և ի գործունէութիւն յորդորիցեն, և ո՛չ աւելի։*

*Ասացաք թէ կանոնաւոր կրթութիւն կարօտի ազգային դպրոցի։ Քանզի դպրոց, և այն ազգայինն է միայն, որ ուսուցանէ որդւոց քոց ուստերաց և դստերաց միանգամայն՝ զբարս, զբնաւորութիւն և ընդհանրական յատկութիւնս Ազգին։ Ոչ ոք կարէ սիրել զայն՝ զոր ոչ ետես երբէք և ո՛չ լուաւ. ազգային դպրոցն է՝ որ ուսուցանէ որդւոց քոց զվճիտ պատմութիւն Ազգին, և վառէ զնոսա ի սէր Հայրենեաց իւրեանց։ Ազգութիւնն կերպասի պատմուճան, կամ անկուածոյ քօղ չէ՝ զոր երբ կամի ազնուահիգ ագանի, և երբ կամի մերկանայ, այլ ընդ արեան և ընդ կենաց նորա ունի զանբաժան հաղորդութիւն. և որ չուսանիցի սիրել զազգ իւր, նախատինս ածէ ի վերայ անձին իւրում, և անարգութիւն ի վերայ բազմավաստակ և բազմերախտ ծնողաց իւրոց։ Ազգային դպրոցն է միայն, որ ուսուցանէ նմա զուղղափառ դաւանութիւն եկեղեցւոյ Հայրենեաց. և ո՞վ այն Հայ ի ներքոյ արեգական, որ զզաւակունս իւր օձտեալ և քեցեալ յազգային դպրոցաց և յայլազգականս սպրդեալ՝ ակնունիցի զնոսա սերտ յազգութեան մէջ պահել, հայրենասէր յօրինել, և եկեղեցւոյ սրբոյ հնազանդեցուցանել։ Աւա՜ղ օտարասէր բնաւորութեանս մերոյ, և հազա՜ր աւաղ։*

*Օրինակի վասն, դու դստեր քում բարի համարիս ուսանիլ ի դպրոց Անգղիացի, նա՝ ի Գաղղիացին, միւս՝ յԻտալական. [illegible]՝ ի*

Պարսկականն, նա՝ ի Թուրքաստանին, և միւս մին՝ ի Ռուսին։ Արդ՝ գիցուք թէ ես (այնքան խելագարեալ ոք իցեմ՝ որ առ ի փառս ընդունայնութեան իմոյ), հանդէս կազմեալ ի տան իմում, հրաւիրիցեմ զդոսա յընկերակցութիւն։ Գիտես, ընթերցո՛ղ, զի ես Հայ եմ, և կարգաց աշխարհի և Ազգի իմում ոգւով չափ նախանձախնդիր. բայց ե՛կ օն, ցո՛յց ինձ, թէ ո՞ր սէր, ո՞ր հաճութիւն, և ո՞ր զուարճութիւնքն են, զորս փոխարինիցեն ինձ այս պատուական ազնուհիք ի պէսպէս ուսմունս իւրեանց։ Դաստիարակեալն Անգղիական կրթութեամբքն զԱնգղիացին չափազանցէ ի գովեստ, և փոխանակ Հայկայ և Արամայ՝ զԱլբիոն և զՎէլէնկտոն քարոզէ. անուանք, որք ո՛չ երբէք լուան ի Հայս։ Գաղղիացին, այսինքս Հայն ուսեալ ի մէջ Գաղղիացւոց՝ կապկօրէն սատասատալով յամենայն ի սնոտիս խաւսել, զարմացումն է զծիծաղ։ Իտալականն՝ ապաստան ի քաղցրութիւն բարբառոյն՝ գրեթէ ճպռօրէն մնչէ զգիշերն բովանդակ։ Պարսկականն՝ զերես բողէ ի ծածկոյթ, և մեկուսի նստեալ զամենեսեան տեսանել, անտես կացեալ յամենեցունց, Թուրքաստանին՝ ծանր և լուրջ նստի՝ որպէս թէ զՎճիռ դատապարտութեանն կարդայցէ ոք յունկն նորա։ Իսկ Ռուսականն՝ զամոյր ի վերայ սամուրի զանձամբ արկեալ (յաւէտ բէշկ մշկոյ քան բամբիշ, խրտուիլակ կնոջ՝ քան տիկին քաղաքավարի), միշտ զաչս կասկածողութեան այսր անդր յածեցուցանէ։ Սոքա ամենեքին Հայոց դստերք են, բայց իւրաքանչիւր ոք ի նոցանէ, ջատագով ուսման և բարոյից աշխարհին և ազգին՝ յորում ուսանն՝ հազիւ հազ գիտեն թէ Հայք իցեն, և որ ինչ սմա հաճոյական՝ միշտ նմա զզուելիք են։ Արդ առ քեզ ամբաստան զամ, Հայկազուն ծնո՛ղ. ասա՛ ինձ, ո՞ր է զուարճութիւն է՝ զոր ես քաղել կարեմ յայսպիսի ազգային ընկերակցութենէ քաղաքավարեալ և քաջուսեալ տիկնայս։

Ասիցե՞ս—«Զի՞նչ ապա, ուրեմն որդիք մեր յայդպիսի լուսաւորեալ ազգաց դպրութենէ և յընկերակցութենէ ի բաց զրկիցե՞մք»։

Պատասխանեմք՝ ո՛չ։ Այլ փոխանակ զորդիս ձեր ի դպրոցս նոցա առաքելոյ առ ի կորուստ ազգութեան և կրօնի իւրեանց՝ ածէ՛ք ուսուցիչս լեզուաց նոցա ի դպրոցս ձեր, և այնպէս կրթեցէ՛ք զուստերս և զդստերս ձեր՝ յուսումն լեզուաց, ծխից և սովորութեանցն, առանց զբուն զիւրեանցն մոռացուցանելոյ։

Ասացաք և հրապարակական։ Քանզի որդիք քո ի տան ուսանելով՝ միայն զանձինս իւրեանց տեսանեն և զվարժապետի իւրեանց, որ շատ անգամ զանց առնէ, կամ ակն ածէ ի ծնողաց խրատել, յանդիմանել և սաստել զնոսա, որպէս և հարկն է։ Ուստի և բնական խեռութիւն նոցա գնալով գնայ և զարգանայ ընդ հասակացն յան-

տանելի ցաւ և յողմաշութիւն ծնողաց իւրեանց։ Իսկ ի հրապարակական դպրոցի, եթէ իցէ վարժապետուհին կատարեալ ի կոչման իւրում, օրինակաւ յառաջադէմ և ուսումնասէր պատանուհեաց խրախուսեալ ի նախանձ շնորհացն նահատակին, և ի վատթարաց և յուլից և ծուլիցն խորշելով՝ միշտ յազնիւն նկրտին կոյս։ Զուր և տարապարտ է կարծիքն՝ զորս ոմանք ունին, իբր թէ որդիք իւրեանց առաւել վատ օրինակօք ի դպրոցին վատթարին՝ քան թէ լաւագունիւքն ազնուանալ կարիցեն։ Զի թէ նախ յառաջուստ չիցէ ապականեալ բնութեանն զնոսա, թէ ծնողք չիցեն ցուցեալ նմա զվատ օրինակ անձանց, և թէ անառակ ոք յազգականաց և ընտանեաց չիցէ սերմանեալ ի մատաղ միտս նորա զուսմունս մոլորութեանց՝ հաւանելի չիք ամենևին՝ թէ ի հրապարակական դպրոցի, ուր չարն միշտ պատժի, և բարիքն միշտ պսակին՝ յանդիման աչաց իւրոց. ապականեսցին վարք նորա կամ բարք։ Նաև՝ եթէ վարժապետ կամ վարժապետուհին չիցէ նուաճեալ ի հաճոյս ճոխաց, և չիցէ վարձուն՝ որպէս ողորմութեան՝ ակնկալ, այլ անկախ և ազատաբար վարեսցէ ըստ կանոնի զիշխանութիւն իւր ի պատժել զխեռ և զստահակս, և ի պսակել զհեզն և զուսումնասէր, անկարելի է՝ եթէ բարեգոյն վախճանի չժամանեսցի որդի քո։

Հարկաւոր է մանաւանդ դաստիարակութիւն օրիորդաց մերում, ըստ որում Հայ. առ այն՝ զի ի հնոց սկզբանց յաւիտենից վաճառական գոլով Ազգիս՝ թէ ի խաղաղութեան, և թէ ի խռովութեան աշխարհիս մերոյ՝ պարտաւորին վաճառականութեամբ յածիլ յաշխարհ ամենայն. Լիցի տրամադրութիւն այսր գործառնութեան յորում աստիճանի և կամք իցեն ընթերցողին երևակայել, տակաւին հեռացեալքն անյագ ցանկութեամբ փափագին տեղեկութեան առ տնին հանգամանաց ընտանեացն, և ընտանիք նովին չափով կարօտին տեղեկութեան անձին և հանգամանաց վիճակի և գործառնութեան հեռաւոր ընտանւոյ իւրեանց։ Եւ ահա ծնանի աստուստ հարկ ըզնամակագրութեան գիտութիւն, և այն հարկ մեծապէս ի վերայ հակէ ընդհանուր Ազգի մերում յերկոսին սերսն ևս։

Վաճառականին գործ այնքան խորհրդոց և շրջահայեցութեանց կարօտի, որքան և թագաւորին, և ընտանիք նորա են խորհրդակալ և ներքին ծերակոյտ իւր։ Արդ՝ եթէ նոքա գիտութիւն չունիցին որով ի ժամուն հաղորդել կարիցեն իւրեանց զխորհուրդս, զվիճակ. և ըզհանգամանս անցից տան, քաղաքին աշխարհին՝ յորում և բնակին, տե՛ս թէ քանի՞ անկարգութիւնք և զեանք յառաջ գայցեն։

Օրինակի աղագաւ բերից աստանօր զմի կամ զերկուս ի ճըշմարտապատում անցից, որք անցին ի Ջուղա ժամանակաւ ինչ յա-

ռաչ։ Այր մի թողեալ զկին իւր առ մօր իւրում, գայ ի Հնդիկս շահել զարուեստ իւր, և զկնի ժամանակաց ընդունի ուրոյն ուրոյն զգիր մօր և կնոջ իւրոյ՝ զի մի զմիւսոյն գանգատէր։ Պանդխտացեալն մոռանալով զամենայն հոգս աջ և ահեակ պատահարաց օտարութեանն՝ ջանադիր լինի ուրոյն պատասխանել և զերկոսին ևս ի խաղաղութիւն համոզել։ Տարաբախտաբար և ո՛չ մին ի նոցանէ գիր գիտելով՝ տանին զթղթեանն առ ումն գրագէտ էրէց թաղի իւրեանց, զի ընթերցցի։ Որ ընթեռնու և հաղորդէ զիմաստ նոցա երկոցունց ևս։ Ահա՛ տե՛ս զիա՛րդ ի յայտ եկին ծածուկ խորհուրդք երկաքանչիւրոցն։ Յայնժամ սկեսուրն առաւել ևս զայրանայ հարսին իւրում, և հարսնն առաւել ևս ատահակի սկեսրի իւրում, որ նստեալ յայնքան հեռաւոր հասուցին զիրերաց գանգատ։ Յորմէ ծագի հանապազորդեան խռովութիւն և զժտութիւն տանն։

Բայց դեռ այս ամենայն սկիզբն է երկանց, քանզի՝ և գրագէտն այն կամ սրբակրօն քահանայն՝ որ ընթերցաւ զթղթեանն, ելեալ ի հրապարակ կամ ի փողոցս քաղաքին, որում և պատահին՝ պատմէ. «Գիտի՞ցէք, ասէ. զի՞նչ այս նիշ հարսն և սկեսուր գրեալ իցեն առ»։ Եւ ահա ելանէ բրթմնջիւն բերանոց ի բերանս ժողովրդոց, և առաւել քան զառաւելն արծարծեալ կրակին՝ արձակէ զայն հրդեհ ամենածախ, որ զտուն և տիրուհիս միանգամայն տոչորէ։ Ահա՛ քեզ առաջին աստիճան տգիտութեան կանանւոյ Ազգիս։

Դարձեալ եթէ ոք հարուստ ընտանի ունիցի յօտարութեան, և կամիցի փոխանակագիր առնել, առեալ նախ ընծայ վայելուչ և եդեալ ի վերայ նաև զուգ արծաթի դահեկանս՝ գնայ, կամ կոչէ առ ինքն զգրագէտ ումն կամ զգրող քահանայ։ Մերկանայ նմա զամենայն զծածուկս առտնին խորհրդոց իւրոց, հրապարակաբարող առնէ զաղբիւր և զորքանութիւն ապրստին՝ զոր և քարշէն ի հեռուստ, և յայնժամ գրել տայ զգիրն՝ հազար և մի թոնթորանօք. և յայսմ բաց ի յընծայիցն՝ հատանէ գրողին իբրև գրոշէ՝ զհինգ առ հարիւր գումարոյն։

Իսկ թէ փոխանակագիր իւր առ ժամայն վաճառելի լիցի, աղաչէ և պաղատէ զգրագիր զքահանայն վաճառել զայն զուգ դրամոյ։ Իսկ նա եթէ յանձն առնուցու առնել զայս՝ բաց ի վերայ գրեալ հնգէն առ հարիւրն, յաւելու այլա և տասանորդել, այսինքն հատանել վասն իւր զմին ի տասանց գումարոյն։ Ահա գնաց հարիւրին տասն և հինգ առ ի զոհ տգիտութեան փոխանակագիր գրել տուողին։ Եւ երանի՜ թէ այս միայն լինէր և ո՛չ աւելի։ Բայց կան նաև խղճմտանաց տէր գրագիրք և սրբակրօն հոլիք, որք վաճառեալ զփոխանա-

կագիրն, և զամբողջ գումարն ստացեալ՝ տան մասն ինչ գրել տուողին, և զմնացեալն յօգուտ անձանց վարեն, ասելով թէ՝ «Թուղթն բովանդակօրէն ո՛չ վճարեաց դեռ, կամ թէ զոր ինչ խնդրես արի՛ տա՛ր, և վասն դրամոց մի՛ այդքան զզուեցուցաներ զիս»։ Եւ այսպէս, որ հարիւրոյ արժէիք փոխանակագիր գրեաց, դուն ուրեք տեսանէ զերեսուն և քառասուն ի նոցանէ, մնացեալն հող ու մոխիր դառնայ բովանդակ առ ի հաճոյս գրողին միայն։ Ահա քեզ երկրորդ պատճառ տգիտութեան կանանւոյ Ազգիս։

Եթէ զայսպիսին անցսն ի շար առնուցումք փաստի, կարծեմք բանի որ կամք աշխատիլ պարտիմք—բայց հարկ է միանգամ դէթ հայել և ի միւս դէմս վախճանի և հետևանաց տգիտութեանս այսորիկ, ի բարոյականն ասել կամիմք, և ո՛վ ի կենցաղագէտ և յաշխարհաւոր ծնողաց ո՛չ իսկոյն համաձայնեսցի ընդ մեզ, թէ այս ոճ դրչութեան կամ լաւ ևս գրողութեան, բաց յարտաքին վնասուց և ի կեղեքմանացն՝ և ի ներքին համբաւ անդր տարածիցէ զխոհերս ապականութեանն, և վնաս հոգևոր պատճառիցէ երկաքանչիւրոցն ևս, թէ գրողին և թէ գրել տուողին։

Բացաբերան աղաղակեմք ամենեքեան թէ մեր Ազգն իրար մատնիչ է, և ո՛չ երբէք խորհիմք կամ ի միտ առնումք թէ ուստի՞ այն մատնութիւնն յառաջ գայ, որպէս զի կարասցուք զաղբիւր առ ականն ցամաքեցուցանել։ Մատնութիւն Ազգիս ահաւասիկ տեսանի, զի յառաջ գայ ի տգիտութենէ մեծագոյն մասին նորա մեծ մասն Ազգիս, մանաւանդ թէ և կանանին զուրկ են գլխովին ի գրոց գիտութենէ, ուստի և պարտաւորին, որպէս և ցուցաք, յայտնել օտարաց զծածուկս խորհրդոց իւրեանց։ Յանկութիւն մարդոյ յագումն չունի, և յորժամ միանգամ տիրանայ խորհրդոց ընկերի իւրում, ջանայ տզրկօրէն քամել զարիւն նորա ցսպառումն շնչոյ։ Զոր ինչ կամի, պահանջէ, այո՛, և զպատկառելիսն անգամ։ Ո՞չ տաս՝ երթայ մատնէ զքեզ օտարին, և լինի վերջինն չար քան զառաջինն. ժողովեցարո՛ւք ուրեմն՝ դուն գործեցէ՛ք բառնալ զսկզբնապատճառ մատնութեան՝ զտգիտութիւն, և ահա տեսանիցէք զԱզգ ձեր առաւելագոյն սիրով շաղկապեալ ընդ իրեարս՝ քան ընդ օտարոտիս և այլակդենս։

Չիք անդէորդ կամ պարտիզպան ի Ջուղա, որ ոչ գիտիցէ, թէ քանի՞ տունք են՝ ուր ձգեն զապրուստ իւրեանց ի Հնդկաց։ Եւ ո՛չ այսչափ միայն, այլ թուել կարէ նա եթէ կամիցիս և զամենայն միահաղոյն և ասել, թէ տարեկան այսքան մուտք են Ջուղայ ի Հնդկաց անտի։ Եւ այս ընդ այնպիսի իշխանութեամբ, ուրանօր ո՛վ շոյտ զայլթնուցու յառաւօտուց՝ համարի զինքն իշխան և թագաւոր,

և զկամքն՝ իւր օրէնք, կարի՛ յոյժ վտանգաւոր է, և բազմիցս զԱզգն ողջոյն վտանգեաց, որ հազիւ երբէք պատահէր, եթէ իւրաքանչիւր տան տիկնայք ունեալ էին, և զգործ և զգրութիւն անձամբ անձին կատարէին:

Աւելորդ համարիմ երկրորդել աստանօր, թէ հարկ է դաստիարակութեան օրիորդաց մերոց՝ ըստ որում Հայ՝ առեալ ի՛ յառաջնութենէ Ազգիս մերոյ յընկերութիւն քաղաքավարի կենաց, որպէս և ի պէսպէս շնորհաց Աստուծոյ սեպհականելոց աշխարհի մերում առ Նոյան նահապետաւ, և առ որդւովք և թոռամբք նորա՝ յընթացս չորեքհարիւր լիսուն ամաց, զորս եկաց Նոյ ի Հայաստան յետ ջրհեղեղին: Ի՞նչ երանութիւն էր մեզ, եթէ ամենայն մեր ծնողանի, գիտէին և դաստիարակէին զմեզ յայսոսիկ զերաշնորհ արտանութիւնս Ազգիս Հայոց: Եթէ մեր պատուոյն մեք անծանօթ մնայցեմք, զի՞նչ մեղադրութիւն արդ և այլոց ազգաց. բայց ո՛չ այդպէս, ժամանակն առ դուրս եկեալ հասեալ կայ, յորում օրիորդք մեր ուսեալք այսուհետև մայրացին որդւոց՝ ո՛չ միայն ծննդեամբ, այլև սննդեամբ. ընդ կաթին արբուցանելով նոցա և զաստուածատուր պատիւ Հայաստանի և Ազգիս մերոյ՝ սկզբան և նախահօր ազգաց աշխարհի:

ԳԼՈՒԽ Զ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ՋԱՐԴՔ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Վայրագասուն խժութիւն ազգաց, որ ո՛չ ինչ առաւել ճանաչէր քան զգազանային ոյժ մարմնոյ, և արուեստ հանճարաւոր՝ զիւր որսորդութիւն, միշտ քամահեալ ընդ ակամբ հայեցաւ ի կին մարդ՝ իբրև ի տկար և անպիտան անդամ ընտանեաց իւրոց: Եւ ստուգ է, զի յանյիշատակ դարուց հետէ կանայք իբրև ստրուկս և աղախնեայս համարեալ՝ մերժեցան յամենայն կենցաղավար առանձնաշնորհութեանց և ուսումնական հրահանգաց: Բայց իբրև սկսան մարդիկ առաւել քան զառաւելն քաղաքավարել, և ազգ ընդ ազգի կալաւ զերթեւեկ, սակաւ առ սակաւ ծաղկեցաւ ի նոսա գիտութիւն, և կանայք մեծագործ և հանճարեղք ընդ դարս դարս՝ առնացի ոգւով և խորհրդով ծանուցեալ՝ հորդեցին շաւիղ ընդարձակ համօրէն սեռին յընկերութիւն և ի հաւասարութիւն արանցն:

Նաև անդադար պատերազմունք առաջին դարուց՝ նուազութիւն արարեալ ի համար արուաց, բազմացոյց զհօրան իգաց, որով բազմակնութեան սկիզբն արարեալ ի մարդկային ընկերութիւն՝ ցածոյց յոյժ զյարգ գողտրական սերին, և զերամ երամս ի նոցա խռնեալ ի մի կանանոց, ցուական նախանձու և կասկածանաց արուացն արար պատարագ. և փակեաց մեկուսացոյց զնոսա յամենայն ընկերակցութենէ, որպիսիք այժմ տեսանին յՕսմանիա, ի Պարսկաստան, և յայլուր։ Ընդ այսպիսի ազգաւ անկեալ և վիճակի գերութեան մերոյ՝ ի հինգհարիւր ամաց հետէ՝ պարտաւորեցաք և մեք նոցա պէս, ո՛չ եթէ զմերսն երամել ի մի գրոհ ստրկութեան, այլ՝ ընդ որմովք և վարագուրօք պահել զնոսա, զրկելով յամենայն կենցաղօգուտ և ի պիտանի գիտութեանց անտի, որով երբեմն ծաղկեալ տիկնաց Հայոց աշխարհիս՝ պտղաբերեցին մեզ զճշմարիտ պարծանս։

Տեսե՞ր, ընթերցո՛ղ, զի զրկումն օրիորդաց մերոց ի պիտանի հրահանգաց և կրթութեանց անտի՝ ո՛չ է Ազգիս ընդաբոյս այլ թէ գերութեանն մահաբեր հետևանաց են անիծապարտ փուշքն և տատասկք։ Գերութիւն վա՜ղ անց, ընդէ՞ր ապա շղթայք ստրկութեան ո՛չ խորտակիցին։ Տգիտութեամբ անկաք, գիտութեամբ առնու գործեսցո՛ւք կանգնել վերստին։

Նախախնամ արարչութիւնն կազմեաց զնոսա յընկերութիւն, այո՛. և ի զարդ իսկ ընկերութեան մերոյ, և մեք՝ եթէ ըստ վայրենաբարոյ խժութեան ազգաց ի բաց մերժիցեմք զնոսա, յանցաւոր գտանիմք աստուածեղէն գերաբուն իմաստութեանն, որ արար զմարդն։ Լոկ անունդ մարդ ամօթ առնէ զամենայն մարդ, իբրև կիսարարած և պակասաւոր, զի ծայրն մարդկութեան՝ որ եդ անուանս ամենայն իրաց՝ չեգիտ որ ընդ իւր ի միասին լինէր Մի արդ՝ այսինքն մի ահա, կամ միանման. զի արդ՝ զահա և զնմանն ցուցանէ, մինչ ո՛չ ետես զկին իւր, զկեանս իւր, և նովաւ հանդերձ եղև մի արդ կամ մարդ։ «Եւ եղիցին երկոքին ի մարմին մի»։

Բնութիւնն հոգածու մայրութեամբ խնամ կալաւ յեղուլ ի նոսա զամենայն որ ինչ նազելի, գողտր և վայելչական, որպէս զի լինիցին նոքա մեզ ի կանայս, այսինքն կեանս՝ օգնութիւն և մխիթարութիւն յամենայն ի կեանս մեր, և մեք զլանայցե՞մք նոցա վասն մեր զկրթութիւն, որ յաւէտ տաշեալ և տապարեալ զխորդութիւն բնութեանցն՝ յօրինիցէ զնոսա ատենահաս օգնականս յամենայն ի կարիս մեր։

«Ա՜հ, ի՞նչ պիտին ուսմունք դստերաց մերոց, որ ո՛չ կոյս դառնալոց են, ո՛չ ապաշխարող»,—ասեն ոմանք։

Պատասխանեմք. խաբի՛ք, պարոնայք. կուսից և ապաշխարողաց չպիտին այնքան հրահանգ և կրթութիւնք ի պահպանել զչոր ու ցամաք զլուխս իւրեանց՝ որքան դստերաց ձերոց, որք յարբունս հասակացն՝ և արդէն իսկ պարտաւորին ո՛չ եթէ անձանց միայն, այլ ձեզ ծնողացդ սպաս հարկանել և հաճոյանալ. մեծամեծ եղբարց իւրեանց քուրանալ ամենայն հնազանդութեամբ և ընտանեկան սիրով, փոքրիկ եղբարց կամ քերց՝ ի կուսութեան մայրանալ, ծերոց պատկառ կալ, պառաւանցն՝ պարկեշտ, դրացեաց զսէր շահել, հիւրոց պատիւ դնել. առ անծանօթս համեստօրէն կալ, և ծանօթից ընդելանալ, օր աւուր զհոգս տան տնտեսել, ամենայն ակնարկութեան մօր կամ հօր զանձն պատրաստական ընծայել, վասն հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ աղօթիւք առ Աստուած դիմել, և որ հազար այսպիսի տնական հարկիք իցեն՝ անթերի լնուլ։ Եւ որո՞ց այսքանեաց կամ այսպիսեաց պէտս ունի կոյս կամ ապաշխարողն։ Ապա ուրեմն ի բաց յանձանց թօթափեցէ՛ք զնոտի զայդ կարծիս, և զոր մինչ ցարդ կոյր զկուրայն, ջանացարո՛ւք այսուհետև օրինաւոր հրահանգօք ուսուցանել նոցա զբարեգոյն եղանակ տնտեսական և ընկերական կենաց։ Արդարև յայբբենարանի կամ ի քերականութեան չի՛ք կանոն, որ ուսուցանիցէ դստեր քում զիա՞րդ կարել զպատմուճան եղբօր իւրոյ, կամ անկանել զուլպայս հօր, սակայն և այնպէս կանոնքն՝ զորս նոքին աւանդեն, այնպիսի իմն նրբութիւն և լոյս տան մտաց նոցա, մինչ զտարևոր արտաքին ուսանելիս, ըմբռնել բոլորովիմբ յընթացս երից ամսոց։ Թուաբանութիւնն դանկ և դահեկան չէ, բայց քաջ պահէ զհամար երկոցուն ևս։ Արուեստք միմեանց են առաջնորդք, այլ գրագիտութիւն՝ ամենայնի։ Եւ զի՞նչ այժմ ծնո՛ղ, տակաւին կուսի՞ց և ապաշխարողաց համարիցիս պիտանի զգիտութիւն այսոցիկ պարտեաց և պաշտամանց, և դստեր քում՝ ո՛չ։

«Իրաւ է, ասեն, բայց եթէ աղջիկ կարդացող լինի, փոյթ այրիանայ»։

Կարի՛ իմաստու՛ն առած. ուրեմն յընդհանուր Եւրոպէ կենտ մին արու ևս չպարտի գտանիլ, ըստ որում հազիւ ուրեք գտանի անդ ի մէջ լուսաւորեալ ազգացն՝ կին որ չգիտիցէ զկարդալ և զգրել։

«Աղջկանց հարկ չէ, ասեն, դաստիարակութիւն, զի սիրահարացն գրեանս գրեն»։

Ֆրանկլին մեծն Ամերիկացի[14] ասաց երբեմն. «Եթէ մարդիկ այսքան չարք իցեն հաւատով, զի՞նչ լինէին ապա առանց հաւա-



19—739

տոց։ Եւ մեք ասեմք. եթէ օրիորդք ուսմամբ և հրահանգօք արտաքոյ կարգի վարեցին, զորպիսի՞ կեանս վարէին ապա՝ առանց ուսման և կրթութեան։ Բայց յաւէտ հաւանեալս եմք, թէ՝

Պարծանք Հայուհեաց
Հիմնի յաւէտ յայս,
Զանել ինչ ընդդէմ
Պատուոյ և փառաց։
Ո՞ երբէք մղեաց
Պատերազմ ի Հայս,
Առ պաշտպանութիւն
Սրբութեան կանանց։

## Վերջաբան

### ՅԱՂԱԳՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՍՏ ՈՐՈՒՄ ՆՈՐ ԲԱՆ ՉԻՔ

Ցուցաք յառաջին գլուխսն՝ թէ ո՛րպէս սկզբնաւորութիւն նախնեաց դպրոցաց արուաց և իգաց միանգամայն՝ բացեալ ի Հայաստան, սփռեցաւ ընդ որդւոց և դստերաց նորա յաշխարհ ամենայն։

Ցուցաք և՝ թէ ո՞րպէս կանայք կիրթ դաստիարակեալք յաշխարհի մերում, ո՛չ միայն նախկին հեղինակք հանդիսացան աստուածօրհներգ գրուածոց, այլ և սիւն և հաստատութիւն կացին եկեղեցւոյ սրբոյ մերում, ընդդէմ կատաղի կամաց կրակապաշտ Թագաւորացն Պարսից։

Ցուցցո՛ւք այսուհետև նաև զշարունակութիւն ուսման յայսորիկ յերանելեաց անտի հետէ անընդհատ ցաւուրս մեր. և զարդի արծարծումն նորա ողորմութեամբ ամենակալին ընդ ամենայն տեղիս, ուր կան Ազգ մեր, թէ ի բնիկն մեր Հայաստան, և թէ ի գաղթականս նորա։

Թէպէտև երկիր ստնատակ եղև Հայաստան յերեսաց ամեհի և վայրագ բարբարոսաց, բայց որքան պակասեցաւ նա յարտաքին փառաց և ի մխիթարութեանց աշխարհիս այսորիկ, այնքան և առաւելեալ հաւատովք ի փառս երկնաւորս։ Որքան առաւել քանդեցան աւանք և շէնք, այնքան վանորայք և կուսանոցք բազմացան, որոց հանապազորդեան մրմունջք էին սաղմոսք ի բերանս նոցա։ Այս սրբազան և աստուածագումար միաբանութիւնք էին Հայոց աշխարհիս՝ որ յանհունս սասանութեանց և յարեան ծփանաց անտի հանին և հասուցին առ մեզ զաստուածախօս լեզու և զդպրութիւն

աշխարհիս մերոյ։ Այս սրբազան եղբայրութիւնք և քուրութիւնք էին, որ անշէջ պահեցին զհուր ջերմեռանդութեան բարեպաշտօն Ազգին մերոյ՝ առ հաւատ երկնաւոր վարդապետին։ Այս առաքելաշնորհ մենաստանք էին, որ իբրև աղբերակունք զովութեանց վտակեալք յանհուն ամայութեան անապատացեալ աշխարհիս՝ շիջուցին սաստ և անդ զծարաւ մենաւոր ճանապարհորդաց քրիստոնէից և քրիստոնէուհեաց ասեմք, Հայոց աշխարհիս։ Ո՛չ երբէք ուրեք ի գլխաւոր վիճակս մեր դաղարեցաւ կուսանոց, և՝ որպէս ականատես և փորձառու ի մանկութեան, ո՛չ ումեք ի տղայոց կասեցոյց երբէք զկաթն թարմ աստուածային գիտութեան։ Յիշե՞մ,—չիշե՛մ, այո՛,—բայց երանի՜ թէ նովին անմեղութեամբ՝ որով և սկսայ, յորժամ յԱռուլիս, ի Գողթն անուանեալ աւանի մերում, աշակերտելս դաստիարակութեան աթոռամօր Հայաստանեայց՝ վերատին աշակերտեցայ մայրաբար հրահանգութեանն Շողանայ ի նուագս օրհներգութեան Աստուծոյ իմոյ։ Եւ եթէ ճմլել և մրզել կարիցեմ զուշ ի պղտորեալ ըջբաղանաց հեռաւոր օտարութեան, զբազումս յառաջ բերել կարեմ ի հոյակապ և յանուանի արանց աշխարհիս՝ որ նախ մարց և կուսանաց աշակերտեալք՝ հասին ի ծայրագոյն չափ կատարելութեան գիտութեան իւրեանց։ Երանի՜, հազար երանի՜ աշխարհի մերում, որ այսպիսի աստուածերամ սրբուհեօք է լի։

Մօտ ի վախճան անցեալ դարու, յորժամ դպրոցօք և տպարանօք փայլէին Կալկաթա և Մադրաս քաղաքք Հնդկաստանի, և հրահանգօք և կրթութեամբք բարգաւաճէին պատանիք և կուսանք Ազգիս. եթէ ոք գնացեալ յՕսմանաստան քարոզէր զհարկ դաստիարակութեան օրիորդաց աշխարհին, եթէ չքարկոծէին՝ անշուշտ ընդ այր հերձուածող համարեալ զնա՝ ի բաց մերժէին։ Իսկ արդ թո՛ղ ի մեծն Պօլիս՝ ուր բարձր ի գլուխ պայծառանայ Մեսրովպեան մայր ուսումնարան սոսկ օրիորդաց հանդերձ բազում այլ փոքրիկ և մեծամեծ դպրոցօք, որպէս և անհամար առտնին դաստիարականոցօք. այլ և զրեթէ յամենայն քաղաքս Մեծին և Փոքուն Հայաստանեայց, ուրանօր գտանին տունք յիսուն՝ անդ գտանին ամենայն իրաւամբ և դպրոցք վասն դստերաց Հայոց։

Ո՛վ երբէք հաւատայր, թէ Բէնգան՝ գիւղ փոքրիկ կառուցեալ ի խորին խորշ ինչ Տաւրիկայ լերին՝ առ եզերբ Եփրատայ, յառաջ ընծայիցէ աստանդական ճանապարհորդին զհրաշակերտ զիր դպրոց յերկուս սրահս բաժանեալ. մի՝ վասն ուստերաց, և մի՝ վասն դստերաց Ազգիս. սակայն և այնպէս տեսի ես անդ զդպրոցսն՝ զորս հանգանակութեամբ Հայկազանց տեղւոյն կառոյց մեծանուն Գէորգ

ամիրայ. և անդուլ աշխատէր վասն օր աւուր յառաջադիմութեան և պայծառութեան նորա։

Կարբի, թէպէտև յառաջագոյն աւան անուանի յԱյրարատեան նահանգի Հայոց Մեծաց՝ առ ստորոտով լերին Արայի, սակայն ի Թահմազ ղուլի Նատր շահէ և այսր՝ բու յաւերակին կայր։ Իսկ արդ՝ կրկնայարկ դպրոցօք պայծառանայ հրաշացեալ հրահանգօք ուստերաց և դստերաց Ազգի մերոյ՝ որպէս և յայլ գաւառսն[15]։

Տե՛ս, ընթերցո՛ղ, զերկուս միայն ի փոքրկանց և գրեթէ յաննշմարելեաց ածի այսրէն յօրինակ՝ որով ո՛չ թէ ասել կամիմ, թէ մին միայն էր ի Տաւրիկէ և միւս յԱյրարատեան գաւառի, այլ այն թէ՝ ողորմութեամբ բարձրելոյն այժմ ծաղկեալ է աշխարհն դպրոցօք ընդ ամենայն տեղիս, ոչ ի հրահանգս ուստերաց միայն, այլ և դստերաց Հայոց։

Զի արդէն հռչակեալ ծանուցեալ են գրեթէ ամենայն ուրեք համբաւաւոր դպրոցք Այրարատայ, Սիւնեաց, Աղուանից, Տփղեաց, Աշտարխանայ, Նոր Նախիջևանայ, Մոսկովայ, Պօլսոյ, Զմիւռնիոյ և այլոց տեղեաց և աշխարհաց, զորոց թէ մանրապատում լինել յօժարէաք՝ երկարեալ ելանէաք ըստ չափ յառաջադրեալ բանասութեանս։

Եւ զի՞ ինձ զուշադրութիւն ընթերցողիդ առ հեռաւորս և յանծանօթս յածեցուցանել. ո՞չ զայն և ամենեցուն նախահարք և հիմնադիրք Մարդասիրական ճեմարանիս մերոյ՝ խորհեցան և հաստատեցին, և ընդ յոլով ամս շարունակ հրահանգեցին ի նմա ո՛չ միայն զպատանիս, այլ և զօրիորդս մեր՝ յուսմունս մերազգի և այլազգի դպրութեանց։ Արարին, այո՛,—և փառս տամ անմահ յիշատակաց նոցա, որով հաստատի խոնարհ այն գրութիւն իմ թէ՝ դաստիարակութիւն օրիորդաց հարկ է, ըստ որում նոր բան չիք. այլ ի սկզբանէ յաւիտենից սկսեալ և առ մեզ եհաս անընդհատ շարունակութեամբ։

Այժմ հերիք է, ընթերցո՛ղ։ Թէ իմանաս յորո՞ւմ աստիճանի դառն կսկծանաց բազմօրեայ հարուածոց իմոց ընկղմանեալ՝ գրեցի զայս դուզնաքեայ հատուկտուր անուանեալ ճառ՝ յողորմ և ի գութ շարժիս իսկոյն. և եթէ սէր սիրասնունդ զաւակացդ ոչ ըստիպիցէ զքեզ, տակաւին զիջանելով քո ի փափագ ցաւագար գրչիս, աստուածասիրաբար և ազգասիրաբար խոնարհիս ի հայցուած պաղատանաց սրտի միոյ, և ամենայն պարոնութեամբ քով՝ ջանաս որ յառաջ հաստատել ինձ զդպրոց վասն դաստիարակութեան օրիորդաց մերոց, որով՝ որպէս հաստատ հաւատամ, շահիս անձին և Ազգի քում զանսպառ երանութիւն յաստուածախօս բերանոյն. որ ասաց.
«Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի՛ արգելուցուք»։

# ՀՈԴՎԱԾՆԵՐ

## I. ԱՌ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ

Պատուելի՛ք

*Մին ժամանակ էր, որ թէ Մադրաս և թէ այլուր մեր ազգային օրագրութիւնք էր հրատարակման[1], այլ աւա՜ղ. որ փոխանակ օր աւուր ծաղկելոյ և ազգաօգուտ պտղովք զարդարվելոյ, ձիգ ժամանակ է որ միանգամայն խափանվել է, մինչդեռ այլ քրիստոնէից մէջ հարիւրապատիկ յաւելանալով գնաման է։ Թողունք զԵւրոպ և Ամերիկայ, և միայն աստ մեր քաղաքի մէջ մին վերահասութիւն տանք. կտեսնեմք որքան օրական, շաբաթական, և ամսական գրութիւնքան հրատարակման Ինկլիզի մէջ, զորս եթէ ոք ցանկանայ կարդալ, ողջոյն օրն չի կարողանալ ամենայն հրատարակութիւնքն վերջ տալ։ Նոյն իսկ Բանգալցիք և Պարսիկք (մզուլմանին), իւրաքանչիւր իւրեանց լեզուաւն տեսակ տեսակ օրագրեր ունին։ Քանզի յայտնի տեսանեմ, որ օրագիրն պիտանի գործ է վասն Ազգի, տեսակ տեսակ ուսումնական և բարոյական գիտութեամբք և առևտրական ծանօթութեամբք ընդ լայնելով և ծաղկեցուցանելով, զուարճացուցանելով և կրթելով մարդոյս միտքն առ բարին։ Այսպիսի ազգաօգուտ բարութեան Հնդստանայ կողմարէնքի մեր պատվելի Ազգի կարօտութիւնն լցուցանելոյ աղագաւ, ուրախ եմք ծանուցանել որ՝ տեղւոյս մեր փոքրիկ հասարակութեանումն ընկերութիւն հաստատվէց «Արարատեան Ընկերութիւն» անուամբ, որոյ նպատակն է, այն գրասիրութիւնն՝ որ մեր միջումն կայ՝ աւելի ևս արծարծել, քաջ գիտելով ըստ առածին որ՝ «Ուսումն առնէ զմարդ երջանիկ»[2]։*

*Այս նպատակն յառաջացուցանելոյ համար, շատ հարկաւոր էր մին տպագրատուն, որոյ միջոցաւ կարողանիցին զիւրին եղանակաւ այս մեր ցանկութիւնն ի կատար հասուցանել, որ նոյնպէս ուրախ եմք ծանուցանել՝ հաստատվել է։ Այս տպարանումն կհրատարակվի շաբաթական օրագիր մի քառածալ, որ է մերս* Ազգասէր. *յորում*

բարոյական, բանասիրական և այլ պիտանի և ազգօգուտ գրութիւնք և թարգմանութիւնք կտպվէն այնպիսի ոճի՝ որ դիւրահասկանալի լինի ամենեցուն, որոյ գինն՝ ըստ բաւականին էժան է հաստատվել որ ամենեքեան կարողանան առնուլ։ Այս տպարանի մասին Արարատեան Ընկերութիւնն յաւակացեալ մի կանովնան դրել իւրեանց դաշնագրի միջումն, որ ամենայն տպագրելի բանէր առանց վերահասութեան և հրամանի անդամոց ընկերութեանն չտպվեն։ Այս կանոնն հանդերձ մին յատուկ կանոնաւ այս խորհրդնամբ ան դրվել որ ոչինչ Առանձին գրութիւնք այս տպարանի միջոցաւն դուս չգոն, որ անսիրութիւն ծագեն մեր փոքրիկ հասարակութեան միջումն։ Քանզի՝ որպէս վերն ասացաք, նպատակն է միայն գրասիրութիւն արծարծել մերայնոց միջումն ուսումնական և զուարճալի գրութեամբք, յորդոր լինելով մերազգի ուսումնասէր Պարոնաց՝ որ իւրեանց պարապ ժամանակն այսպիսի զուարճալի բաներով անցուցանել. կամ կարդալով այլոց գրածն, և կամ իւրեանք՝ իւրեանց կարողութեան համեմատ գրելով վասն այլոց կարդալոյ, և ի քաջալերութիւն այսր՝ հաստատվելայ որ ամենայն բանասիրական Հայերէն գրութիւնք կամ թարգմանութիւնք զոր մեր ուսումնասէր Պարոնիկքն հաճենան աղարկել, ձրիապէս տպվեն սոյն օրագրումն։

Արտաքոյ այս օրագրոյն՝ նաև զանազան պիտանի գրքեր պիտի տպվեն սոյն տպարանումն յիշեալս ընկերութեան ծախիւքն. որ հաստատվէլայ ըստ մարթելոյն էժան գնով վաճառել, որ ամենեցուն կարևոր լինի գնելն. և այս գրքերից մասն ձրի կբաժանվի՝ թէ տեղւոյս և թէ այլ տեղարէնքի կարօտաւոր մանկանց։

Էստոնք թողած՝ եթէ որոք բանասէր ցանկանայ որոք գիրք կամ գրութիւն տպել սոյն տպարանումն իւր առանձին ծախիւքն, յանձն կառնի Ընկերութիւնն Արարատեան կատարել զգործն էժան ծախիւք ըստ կարգեալ կանոնաց ծախուց տպագրատան, եթէ գրութիւն չիցէ ընդ դէմ կանովնաց Անդամոցն։

Այսոքիկ լինելով ընկերութեան նպատակ և խորհուրդն, հաւատամք որ ամենայն Ազգասէր հարկաւոր կհամարի սորին հաստատութիւն, և կջանայ ամենայն իւրօք իւրնէ կարևոր օգնութիւնն մատուցանել վասն յառաջադիմութեան սորին։ Քանզի ին՞չ Ազգասէր չի ցանկանալ իւր Ազգին՝ յայլոց ազգաց, եթէ ո՛չ վերադոյն, գէթ համեմատ տեսնել։ Ո՞ր ծնող չի ուրախանալ տեսնել իւր խիղանին գրասիրութեան և ուսումի հետևել։ Ո՞ր ուսումնական պարծանք անձին չի համարելէց իւր գիտութիւնն հաղորդել այլում, և

կամ միանգամայն ասելով՝ ինչ տիկին կամ պարոն չեն յօժարելէց մին մասն յիւրեանց պարապ ժամանակիցն զուարճալի պատմութեամբ զբօսեցուցանել: Հաւատամք ամենայն ոք կընդունի, որ յայսպիսի բանասիրական պարապմանց օգուտ ունի ծագել պատուելի մերայնոց, որում սրտեռանդն ըղձիւ փափագիմք: Եւ մի և նոյն ժամանակումն Թո՛յլ տուք մեզ խոնարհաբար յայտ առնել, զի այսպիսի ծանր լուծ թէ և յուսալով ի խնամս Արարչին յանձն առեալ եղև, սակայն ձեր Ազգասէր օգնականութիւնն ևս պիտի, որով լիցուք «Եղբայր յեղբօրէ օգնեալ որպէս զքաղաք ամուր»:

Գործն ազգային է. արդէն միաբանեալ անդամքն ջանացան միայն իւրեանց ծառայութիւնն ցուցանել. ապա միաբան խորհրդով Ազգասէր օգնականաց արժանն տնօրինեն և կարգեն:

Ով քաջեհաճի Արարատեան Ընկերութեան Անդամ գրվիլ, որ և՛ իցէ նպաստ տալ, իւր ծախիւքն Հայերէն և Անգղէարէն գրեանք տպել, կամ օրագրիս գրաւորական հանդամանք մատուցանել, և ցանկայ տեղեկանալ՝ իւր հարցն ուղարկի առ Մ. Դ. Թաղիադեանց Վ. Տ. Ա. Ընկերութեան՝ թիւ 16. Օլդ Չինա բազար Գլի:

## 2. <ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Ոչ թէ միայն արքունի գործակալ կարգածներն յԵգիպտոս, այլ և Միաբանեալ Տէրութիւն Մեծին Բրիտանիոյ պարտականայ կիսօրեայ արեգական ճառագայթում՝ տակաւին ճրագ վառի, որոնէ գտանէ. և արդարութեան մատնէ այս չարագործաց ինչ ազգէ որ լինին: Ապա թէ ո՛չ՝ Անգղիոյ մեծափառութիւն՝ փոյթ, և նորա բարի և մարդասէր նախանձն՝ կեղծաւորութիւն և պատրանք կհամարվի ամենայն արդարակշիռ ազգաց մօտ: Ինչ օգուտ մին կողմից թըղթեր շրջեցուցանել և մեծամեծ տէրութեանց հաւանութիւնն պաղատել, որ էլ գերեաց առևտուր չլինի, և միւս կողմից թոյլ տալ իւրեանց նշանի տակում՝ բոնի մարդիկ գերեն և ծախեն: Եթէ Պարսկաստանու, Բախտիարի և Մամասանի խաների պէս Անգղիա ծածուկ ձեռօք թոյլայ առում էս բանս, և յայտնի միւս տէրութեանց աչք կապելոյ համար կեղծումայ իւր մարդասէր բարեբարոյութիւնն, վա՜յ իւրն: Ապա թէ ոչ արինախանձ և անագորոյն մարդկանց թոյլայ առում, որ իւր պատուական անունն և խաչադրոշ նշանն այսպիսի եղեռնութեան մէջ գործ տան, էն ժամանակում՝ որ Աստուծոյ ողորմութեամբ կարող է ի խորին խորշոց աշխարհի իւր վնասակարացն գտանել և վրէժխնդիր լինել. ուրեմն լաւ կառի Անգղիայ

իւր անուն փոխել։ Դեռ փոքր օրայ որ հրատարակեցինք թէ ի մէջ Անգղիոյ և Գաղղիոյ դաշինայ եղել, որ ամէն տէրութիւն 16 նաւ և շոգենաւ ղարկի Ափրիկէի ծովեզերքն վասն գերեաց առևտրի զգուշութեան, և եթէ 32 նաւ բաւական չլինի, Անգղիոյ մարդասիրութիւնն կարողայ հինգ անգամ այնքան նաւեր ղարկել. յատկապէս սոյն չարագործաց բռնելոյ, և իւր նշանի վրէժն խնդրելոյ համար։ Եթէ չի առելէց, ուրեմն կկարծվի որ իւր մասն ևս մէջայ։

## 3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

.....Ինչպէս աֆիոն և ամենայն արբեցուցիչ նիւթ, նոյնպէս և աղն Արևելեան Հնդկաց մենավաճառութեան (մօնօպօլու) մինայ։ Ի՞նչ երանութիւն կլինէր ուրեմն վասն բիւրաւոր ժողովրդոց, եթէ նոյն ընկերութեան կառավարութիւնն ինչպէս այսքան աչալուրջ փոյթ որ նոյն մահաբեր նիւթոց վերայ ունի, գոնէ կիսով չափ ևս աղի վերայ ունենայ։ Այսինքն կամ գինն պակասացանի. վաճառականք կարողանան բանալով մին շահ գտանել, և կիսից աւելի հող և աւազ չխառնել խոռւր, կամ գոնէ ամէն քաղաք ինքն ղարկի, որ իւր ակպարի ասացեալ պաշտօնատարքն ծախեն, և զգուշանան որ դուքանդարերն վնասակար բան չխառնեն։ Որով մեծ շնորհ կառնի բոլոր հասարակութեան, և մեծ շահ իւրոց գանձուց։

Կալկաթա ամենահարուստ քաղաքայ հռչակվում,—և ի՞նչ երկբայութիւն։ Բայց չկայ բոլոր Ասիա այնքան թշուառագոյն տեղի, ուր այնքան աղքատաց, և ուրկաց և գողեաց անթիւ բազմութիւն լինեն, որքան աստ։ Առաւօտեան չորրորդ ժամէն սկսեալ մինչև երեկոյեան մետասան և երկոտասաներորդ ժամն փողոցանքն նոքօք, և օդն նոցա ողորմ աղաղակօքայ լի։ Որոց առաւելագոյն մասն առոյգ, և պիրկ տարերօք անձինք են, որք յայտնի մուրան և ի ծածուկ գողանան։ Եթէ Հայաստան սկսեալ ի Կասբից ծովէ մինչև ի Պոնդոս, էսքան աղքատ ունենայ՝ բոլոր իւր անասունքն դրացի ազգաց կծախի, որ անբանից կերակրով բանականաց կեանքն փրկէ։ Բայց զարմանք իրաւի որ տեղւոյս տէրութիւնն ամենևին փոյթ չունի իւր աղքատ հպատակաց կամ գոնէ կեղծելոցն՝ որոք մին դարման դնելոյ մասին։

## 4. ԱՆԳՂԻԱ

Կարծեմ եթէ գնաս յԱնգղիա և պատմես թէ մեր Մելիք Աբրահամն տարին մի անգամ բուն բարեկենդանին, ուղտ գոմէշ. խոյ և

ձի կռուացնել կտա, վասն Ազգին զբօսանաց, բայց շատ զգուշանալով, որ իրար վնաս չտան, հարյուրավոր բերանից կլսես, ՈՒ անողորմ. բիրտ և վայրագ սովորություն: Բայց ընդհակառակն տեսմանանք, իրեանց շատ ունեալ գողտրական և քաղաքականության, որպես խղճմտանանց ծայր հասյալ Վիկտորիա Թագուհին ի Գերմանիոյ, Սակսի Գոթա անուանյալ տեղվոջ՝ մին 50 հատ անմեղ եղնիկ (մարալանի) մին ցանկապատի մեջայ փակել տվել և յուր արքայազուն ամուսնու Հերքուլեսյան քաջության վերայս խընդացել, ըստ որում կարողացելայ նա օգնականությամբ այլևս քանի մի արյունասեր անձանց և իզուր տեղն այնքան կյանք բառնալն։ Վա՜յ քեզ լուսավորություն, որ պիտի ծիրանիդ արյունով ներկված լինի։

## 5. ԱՂԱՂԱԿ ՍՐՏԻ

Կա՞յ որ ոք մին աստուածասէր անձն, որ մեզ, ի Հնդկաստան բնակեալ Հայոց ազգիս ասի, թէ այսքան հեռաւորութենում ընչո՞վ պիտի մխիթարվեմք։ Մեք մեզէ՞ն եկած՝ տեղս ինքնաբոյս թուփերի պէս շատացա՞նք, թէ որոք մայրենի ծառ կամ արմատ ունինք։ Աղաչեմ. Նախ քան զբանիս միտքն հասկանալ, ապտակ չածէ՛ք բերանիս. գիտեմ հայրենասիրաբար կբարկանէք ինձ վերայ և կասէք՝ ին՞չ աշխարհից անծանօթ տխմարաս, որ չես գիտում, որ մեք հայամք, Հայաստան մեր հայրենիքնայ, Էջմիածին մեր մայր Աթոռնայ, սրբազնասուրբ կաթուղիկոսն մեր հոգևոր հայրնայ. որպէս յետ Նորա Ջուղու մեր Ամենափրկչի սուրբ վանքն, և տեղն նստած բարձր սրբազան առաջնորդն։ Մեր Ազգն, մեր եղբարքն, եթէ մեր մայրենի ծառ չլինին մեզ, ասա էլ ինչ պիտի՞ լինին։ Իրաւիայ, սոյնն բոլորովին ես էս ամ հասկանում, միայն տխուրա՜մ, և այն հոգուս չափ, որ այնպիսի տարաբախտ վիճակի ամ պատահել, որ այսպիսի առատ մայրենի ծառոց կամ արմատոց՝ շատ օրայ որոք կենսարար հիւթ, կամ սնունդ չեմ առել, որ գոնէ՛ սրտիս զօսանալն՝ այսինքն չորանալն, ի դալար աճեցութիւն փոխարկէ։

Ին՞չ հրաշալիք կամ յէջմիածին, որոց գոնէ՛ լուրն չունիմք։ Ին՞չ դպրոցաց պայծառութիւն, ի՞նչ եղբարց յառաջադիմութիւն, ին՞չ քաղաքական տնօրէնութիւն, ին՞չ զինուորական նախադրաւութիւն, ին՞չ նոր շինութիւն, ին՞չ նորոգութիւն, ին՞չ բարեկենդանութեան ազգի յոյս։ Քաղաքից քաղաք գրեր գրենք, իրարից հարցմունք առենք. տեսնենք այս երբեմն սիրելի հասարակութեան ո՞ր մին

անհատնայ արժանացել այսպիսի մին հայրախնամ և որդեսէր շնորհաց, որ գոնէ՛ նորա միջնորդութեամբ այս օտարազգի մէջ բնակեալքս՝ կարողանանք որոք մեր Հայրենեաց մասին արարեալ հարցմանցն պատասխանի տալն, և ոչ թէ կոր ի գլուխ ամօթահար ասենք Հայաստանուց գիր չունենք, Ջուղուց գիր չունենք։

## 6. ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒ ՋՈՒՂԱ

Մերազգի փոքրիկ հասարակութիւնն ի Հնդկաստան, իւր ծաղկեալ և բարգաւաճ ժամանակումն ինչ ազգային պիտոյից ծանրութիւն որ ունեցել այ, ներկայ թերևս առաւելագոյն ունի։

Հաստատի, հինք եկեղեցի՞ք են շինել, նորքն պահեն և զարդարեն զնոսա գոյիւ չափ իւրեանց։ Հինք աղքատաց համար արկեղանի՞ հաստատեցին, նորքն ըստ կարևորին լնուն զնոսա ողորմութեամբ և սիրեն աղքատաց իւրեանց։ Թէպէտև ներկայ տարաբախտապէս այս ծանրութիւն միոյն հարիւրապատիկ առաւել է վասն մեր մեղաց։ Հինքն եկամուտ գոլով, քրիստոնէավայելուչ բարեպաշտութեամբ իւրեանց բուն երկրումն իւրեանց ընտանեաց և հայրենեաց խնամք են՞ արարել, նորքն՝ աւելի ևս։ Նուիրակ և նպաստահաւաք և որ այսպիսի անուանք գրե՛թէ անղանազանք են, եթէ աւելին թողցուք։

Բայց եկա՛յք մի՝ տեսցուք ուստի՞։ Ազգն ի պայծառութեան իւրում արար զոր կամէր, իսկ արդ՝ կան տեղեր, յոր իսպառ բարձուեալ Ազգն, որպէս յԱկպարաբադ, ի Լահօռ, և ի Սուրաթ։ Կան տեղեր՝ յոր մի քանի աղքատիկ անձինք առկայծեալ ճրագի պէս ցուցանեն թէ երբեմն տեղն Ազգի հաստատութիւն է էլել, որպէս ի Սիրամփուռ, Չիչրայ, Սէյդաբադ, Փաթանա, Գուալիէռ և այլն։ Դաքա, Պինանկ, Սինկափուռ, Բթաւիա, Մադրաս, և Բումբայի իւրեանց առաջին վիճակի հետ համեմատութիւն չունին. իսկ Կալկաթա, ներելով քերթողաց՝ մին 60 տուն Հայ ունելով՝ համարման այ որպէս թէ առաջին տեղին, և միւս քաղաքաց մերազգի հասարակութեան խտուր՝ օր ըստ օրէ ճնշմանայ ներքոյ ազգային պիտոյից և կարեաց։

Կալկաթու եկեղեցին որքան ստացուածք որ ունի, բայց դեռ և այնպէս՝ հազիւ հազ այ կարողաման իւր և Չիչրայ Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ պիտոյք և ծախքն հոգալ, և ազգային աղքատաց խնամ տանել. և այն ևս ճշդելով։ Եւ եթէ Տէր մի՛ արասցէ, որոք մին վտանգի դայ և չքաւորութեան պատահի՝ որպէս այլ տեղարէնքն, ինչ՞ պիտի առի, չգիտեմ։

Զարմանք չէ, որ դեռ խօսքս աւարտ չհասուցած, ոմանք աչք կոխեն մեր տեղս կամ յայլուր եղեալ քանի մի հարուստ տանց, և ասեն՝ Նոքա կառեն:

Նոքա կառեն իրաւ այ, որպէս արարեր, և առում իսկ են: Բայց մտածելի այ թէ որքա՞ն: Մանաւանդ զի՝ տեսմանեամք ազգային պակասութիւն այսինքն կարօտութիւնքն այնքան են, մինչ ոչ թէ մինի կամ երկուքի, այլ թէ բոլոր ներկայէս Հնդկաստանայ մերազգի հարստութիւնն մի տեղ՝ ժողովեա՝ տակաւին ազգի բազում կարօտութեանց մինն ևս իսպառ բառնալ չէ՛ կարող:

Ապա ինչ՞ պիտի առնել, որ թէ այսքան ծանրութիւն չբարձիլի միանգամայն, գոնէ՛ թեթևութիւն ևս տալ կարողանայ:

Մեր խոնարհ և օգտակար կարծիքն այ, որ այսուհետև համանութեամբ բոլոր ազգին՝ ազգային տուրքն սահմանի մէջ գայ, մին տեղ ժողովիլի, մին տեղից խարջիլի, որ իմացվիլի, թէ ինչ բանի համար որքա՞ն գումար այ դուրս դրվել, և ինչ՞ շահ կամ վնաս այ յառաջ եկել:

Այս առաջադրութիւն գլուխ կերթայ նախ՝ եթէ տեղւոյս հասարակութիւնն եկեղեցպանին և կոմիտարաց, այսինքն գործակալաց կարողութիւն տայ տարէց տարի շրջաբերական շինեն, և ամեն մեր նուիրակաւան Աթոռոց տուրքն իւրեանց յատուկ յատուկ շրջաբերականաւ ժողովեն, և նոյն գումարն աւանդ դնեն տեղւոյս նազարեթայ սուրբ եկեղեցւոյ արկեղում, որոց մին օրինաւոր վաշխիւ, և այս ժողովեալ գումարն՝ անուանի Ազգային մայր գումար:

Սրբազան գլխաւորաց Ազգիս գրել աղաչանօք, թէ ի Սուրբ Էջմիածին, և թէ ի Սուրբ Երուսաղէմ, որ ճանապարհի և այլ հազար պատճառաց վտանգանին և մեծ ծախսն մտածելով՝ գոնէ՛ յառաջ քան զգրել և իմացում տալն, Հնդկաստանայ հասարակութեան իւրեանց նուիրակ չաղարկեն: Այլ օրհնութեան սուրբ կոնդակ աղարկեն. և ըստ ժամանակին և ըստ չափու արդեանցն նուիրակութեան՝ զգումարն հասուցանել իւրաքանչիւրոցն աւելի հեշտ կլինի, և այն ահագին ծախսն ճանապարհի նուիրակին՝ կմնայ Ազգին զուտ շահ:

Այլ այս կարևոր արտունութիւնն իբրև սեպհական թողուն թեմական աթոռոյս մերոյ, որ տեղւոյս եղեալ ժողովրդոց չզրկելով ի մատակարարութենէ աստուածային շնորհաց՝ մին քարոզիչ վարդապետ կամ քահանայ աղարկի ժամանակաւոր թեմով, որ գայ Կալկաթա նստի, և անտի ժամանակ առ ժամանակ այց ելանէ եկեղեցեաց մերոց եղելոց յայլ և այլ քաղաքս: —Ով փոքր ի շատէ տեղեակ լինի եկեղեցական կանոնաց՝ անշո՛ւշտ պիտի հասկանայ,

որ քան զայս աւելի կարգին բան չի կարող լինել: Քանզի կան շատ վիճակաւոր պաշտամունք, յոր եթէ էջմիածնայ, կամ Երուսաղէմայ նուիրակունքն ձեռնամուխ լինին, օրինաց դուրս բան արարած կլինին: Որպէս մին քահանայ մի տեղից միւս տեղ փոխել, և այլն: Բայց մեր Ջուղու սրբազան առաջնորդի երես փոխան կամ յաջորդն, եթէ ուսեալ անձն լինի, բոլորն ևս կարող այ առել օրինօք եկեղեց-ւոյ մերոյ սրբոյ:

Երրորդ մեք տեղս արմատական ծառեր չեմք, մեր արմատն մեր Հայրենիքն այ, և եթէ չջանամք մի կամ միւս եղանակաւ մեր Հայրենեաց երջանկութիւնն հաստատել, կարելի չէ՛ որ մենք եր-ջանիկ ապրիմք: Եթէ ինձ չորս ձիանցի կառօք տանեն մի գեղեցիկ պալատ, հարիւրաւոր ծառայք իմ հրամանիս հնազանդ կանգնա-ցանեն, և ասեն որքան կուզես կե՛ր, խմի՛ր, և ո՛ւրախ կաց, և մի և և նոյն ժամանակում, իմ խեղճ մօրից կամ ընտանեաց գիր գը-տանեմ, որ շատ դառն նեղութեան մէջ ան, կարծումաս բոլոր այն քաղցրութիւն ի դառնութիւն, ի թոյն, և ի մահ չի՞ թուալ ինձ. կթուայ: Ուրեմն ո՛վ կամի երջանիկ կալ, նախ պիտի իր Հայրենեաց երջանկութեան միտ դնի:

Տկա՛ր միջոց այ, և կարի՛ տկար, մտածել թէ տարեկան այս-քան ռուփի որ ղարկեմ իմ խեղճ մօրս՝ Ջուղու նման տեղում շատ երջանիկ կապրի նա: Մի վարդով գարուն չի լինել: Մին հարուստ բազում աղքատաց մէջ աղքատից աղքատ կհամարվի: Քանզի երբ իւրն հաւասար չկայ, ու՞մ հետ պիտի վայելէ: Կխաբեն, կխլեն, ձեռ-նից, կգողանան, կյափշտակեն, կարելիայ իւրն ևս սպանեն, և կլինի վերջինն չար քան զառաջինն: Տեղս դու փողից կզրկվես, տեղն նա կեանքից: Անհիմն երջանկութիւն կփոխվի միշտ ի հիմ-նաւոր թշուառութիւն:

Ապա ին՞չ պիտի առել:

Այս—որ նախ Ջուղու սուրբ աթոռն, ինչպէս մեր նախնեաց բարի կարգադրութիւն և հոգսն այ էլէլ, Ազգից ընտրած անդամոց խորհրդարան ունենայ ի ներքոյ մեր սրբազան առաջնորդին, և ներկայ որովհետև շնորհիւ ողորմած թագաւորին՝ բաւականին նկա-մուտ ունի իւր շրջակայ վիճակից, որպէս և ի տեղւոյս, ջանայ ազգային օգտի և յառաջադիմութեան վերայ ի գործ դնել նոյնն, աշխատասէր միաբանք ունենայ առանց խտրութեան, հոգ տանել իւր վիճակի ժողովրդեան բարեկարգութեան, յառաջադիմութեան, ուսման, անդորրութեան և երջանկութեանն. քանզի այսպիսի բա-րիքս պիտի գլխիցն յառաջանան՝ ազգի համակամութեամբն:

Երկրորդ՝ Պողոսեան կամ Ապողոսեան չլինեն[1], տեղւոյ դպրոցքն օրինաւոր կարգի տակ գձեն։ Ո՛վ տեղից երեխայ այ բերել, և տեղս ի Հնդկաստան ուսում այ տալ տուել, կարող է հասկանալ, թէ տեղի ուսումնարանքն որ օրինաւոր կարգի տակում լինեն, ո՜րքան մեծ օգուտ կտան Ազգին։ Երկար խօսել չեմ ուզում, միայն օրինակի համար գրեմ։ Տեղս մին աշակերտ գիշեր ցերեկին համար պիտի տայ ճեմարանին ամսէն 30 ռուփիք, Ջուղայ ամսէն միայն տեղւոյս 28 ռուփովն 280 մեծ ու պստիկ աշակերտք ուսում են գտել, և կգտանեն։

Երրորդ՝ եթէ տպարանն Ջուղայ ի գործ դրվի օրինաւոր և անկախ վերատեսչութեամբ՝ մերձ երեսուն ո՛չ անձն այլ տուն Հայոց կպահի Ջուղու միջում պատուաւոր արհեստաւորի պէս։

Բոլոր մեր ասութեան վախճանն այ, որ եթէ տեղս, և եթէ տեղն, պիտի Ազգն հոգս առի ուսում և արհեստ պայծառացնելոյ համար. որով միայն կարելի կլինի երջանիկ ապրելն։ Քանզի ո՛չ գողն կարող այ գողանալ, և ո՛չ հզօրն՝ յափշտակել։ Եւ որովհետև այս՝ առանց մայր գումարոյ, գլուխ չի գնայ, վասնորոյ այս օրից իսկ խորհրդատրումանք մեր Գերապատիւ Ազգի հասարակութեանն, որ օր յառաջ փոյթ տանեն։ Թելն բարակելայ, բայց ողորմութեամբն Աստուծոյ դեռ չի կտրվել։ Ջանալ պիտի շուտով երկուտակել, ապա թէ ո՛չ կտրվելէն՝ էլ ճար չկայ։

## 7. Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Ի Բոմբայոյ

Բանաստեղծութիւնն է կարգումն պէսպէս վանկից այնպէս համեմատ՝ որ տայ քաղցրաձայնութիւն յունկն և ի լսելիս մեր։ Այնչափ զուարճալի է այս զգացումն քաղցրաձայնութեան, երբ բարւոք կատարիցի, մինչ զի՝ սկզբնաւորութիւն սորա համարեցաւ երկնային. ուստի ամենայն բանաստեղծ՝ թէ ի հնումն և թէ ի նորումս, ի սկսանելն իւր ոտ կամ տաղ, մաղթէ առ Մուզայն կամ ազդեցող կարողութիւնն, առ ի ներշնչել ի ձեռնարկեալ իւր այն քերթողութիւն։ Այս ասացաւ լինել երևակայական սկզբնաւորութիւն բանաստեղծութեան. բայց նա և փիլիսոփայք, որք ո՛չ այնչափ խոյանան ի վեր ի հետազօտելն զծագումն նորին, տակաւին ի կարծիս են՝ թէ կայ աշխոյժ և եռանդ ինչ ի բանաստեղծն, որ ազդէ ի նա՝ և առանց որոյ չէ հնար ումեք լինել կատարեալ բանաստեղծ։ Որոյ նշխարք և կտորք գրուածոց որք մնացեալ են մեզ ի կարի հին ժամանակաց հետէ առաջնոց՝ են ի ձև ոտանաւորաց որպէս թէ՝ մարդիկ այն ինչ

ի խօսելն սկսեալ էին անդէն և ի ճանաչել զքաղցրութիւն և ըզ-
ներդաշնակութիւնն՝ խօսելոյ չափով և թուով։ Առաջին փորձքն սո-
րին եղեն՝ իրաւի, ո՛չ այնչափ ըստ արհեստին, և այս արհեստ նման
այլոցն չկալաւ զայն չափ կատարելութեան, մինչև մարդիկ ըստ
չափու ընկալան զքաղաքականութիւն, կակղութիւն, և զբարակութիւն։
Ճաշակն բանաստեղծութեան այնչափ ընդհանրական է, մինչ զի
ամենահեռաւոր և անկիրթ ազինք տեսանեմք, զի ունին զոտանաւոր
տաղս և բնիկ քերթուածս ի մէջ իւրեանց, և բարբարոսք և վայրենիք՝
իւրեանց պատերազմական երգս, որով երգեն զարարս և զքաջու-
թիւնս նախնեաց իւրեանց։ Ոմանք ի փիլիսոփայից կարծեցին, թէ
բանաստեղծութիւն՝ որպէս այլ գեղեցիկ արհեստք, է միայն գը-
տանելի ի չափ կատարելութեան ի բարեխառն օդս և ի կլիմայս.
հին պատմութիւնք նպաստեն այսմ կարծեաց, որպէս Հոմերոս և
Վիրգիլիոս էին բնիկք Յունաստանի և Իտալիոյ, Մագիստրոս,
Շնորհալին, Լամբրոնացին ի Հայս։ Բայց արդի բանաստեղծք որպէս
Շէքսպիեր, Միլտոն, Պօպ, Ռասին, Վօլդէյր, են քաղաքացիք առաւել
ցրդային նահանգաց աշխարհի և որք նախանձելի արարին զին-
քեանս ընդ հնոց, ի տեսակս ամենայն բանաստեղծական չարա-
դրութեան։ Օգուտն զոր ստանամք ի քերթուածոց՝ են այնչափ
անհամար, մինչ զի, չէ՛ զարմանք. զի այնչափ հասարակօրէն
խնամեալ իցեն զայն՝ ազինք ամենայն։ Բանաստեղծութիւն ըստ ար-
ձացուցանէ զլսելիս՝ օգնէ յիշատակութեան, ազդէ հանճարոյ. տայ
զգեղ և զազդութիւն բարեպաշտական, երկիւղածական առաքի-
նական և դիւցազնական խորհրդոց և մտածմանց մարդոյ. ուստի՝
ի կիր առեալ եղև այն ի պաշտօն աստուծոյ, և ի գովս քաջաց։
Սաղմոսք Դաւթի մարգարէին են բանաստեղծական երգք առ Ամե-
նակալն, և տաղք Որփէոսի են նուիրականք առ չաստուածս կամ
դիս հեթանոսաց։ Այսպէս՝ ի սկզբանէ գործարկեալ եղև այս ար-
հեստ աստուածային. բայց քանզի մարդիկ հակամէտ չարին միշտ,
արկին զբարին ի չար սովորութիւն, և փոխանակ խրախուսելոյ
զառաքինութիւն, փոխեցին զայն ի ծառայութիւն մոլորութեան։
Ապաքէն գիտելի է՝ զի յամենայն լեզուս ընդրելագոյն քերթուածն
այն է համարեալ, որ հակամիտէ՛ առ առաքինութիւն, և այն բա-
նաստեղծք որ խնամեն առ չարն, չեն երբէք յառաջին կարգի քեր-
թողք։ Չկարեմք լինել առաւել զգուշաւոր, քան ի պատրողական
կարողութիւն արհեստիս այսմիկ, զի ճշմարիտ է առածն թէ՝
ամենավտանգաւոր ձորձն՝ զոր ստութիւն կարէ շուրջ զանձամբ ըզ-
գենուլ, է ճարտարն բանաստեղծութիւն։

## 8. ԱՐԱՐԱՏ

Մերձ 29 ամօք յառաջ մի միայն ուսումնարան էր ի դաշտին Վաղարշապատայ, և այն՝ վասն հոգևորականաց ի Սուրբ Էջմիածին։ Իսկ յամին 1832 ո՛չ միայն Էջմիածնին պայծառացաւ բազմալեզու կրթութեամբ, այլ և ողորմութեամբ Տեառն ծաղկեցաւ երկիրս բոլոր՝ դպրութեամբ բազմալեզու կրթութեանց։ Զորս յայնժամ տեսարն, ի թիւ առնումք աստանօր, կեդրոն շարայարութեանց ունելով բո-մայր ուսումնարան սրբոյ աթոռոյն մերոյ։ Ի հիւսիսոյ նորա են դպրոցք աւանին Վաղարշապատայ, Շողակաթին, Հոփսիմեայ, Օշականին, Աշտարակայ, Մուղնւոյ, Կարբւոյ, Յովհաննու վանից, Սաղմոսավանից՝ որ յԱպարան, և Բիւրականն՝ որ ի լերին Արագածոյ։ Ի հարաւոյ են՝ դպրոցք Սրբոյն Գայիանեայ վանից, Խորվիրապայն և զԱրկուռոյն, զոր կառոյց մեծանուն Ստեփանոս տանուտէր գեղջն։ Յարևելից՝ այսինքն յԵրևան քաղաքի՝ էր նախ կայսերահաստատ դպրոց քառալեզու կրթութեանց ի բերդին Երևանայ՛, իսկ ազգային և հոգևորական Զարագիւղին ի գաւիթ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մերում, Շհարին, Կոնդին, Զօրաւորին, Նորաթաղին՝ որ անուանէր Խանլըղ Բաղ, Գեղարդայ վանից, Կեչառուսայ՝ Գեղարքունեաց կամ Գեօգչեայ, և Սևանայ վանիցն՝ հոգևորական։ Իսկ յարևմտից՝ Սարդարապատ Նոր քաղաքին, Բլրոյ և Կողբանն. մինչև ցՇիրակ։

Այս ամենայն սկսան ի յաղթութենէն Ռուսաց, այսինքն ի 1827 ամէն մինչ ի 1832, և եթէ ի միջոցս հինգ ամաց այսքան բազմացան դպրոցք Հայոց յաշխարհին, ո՞րքան ևս առաւել մինչ ցարդ յընթացս չորեքտասան ամաց։ Ո՞ր է այժմ այն նրբաքնին ճանապարհորդ կամ վիպագիր, որ զԱզգ մեր՝ անիմաստասէր կոչել համարձակիցի։ Ծաղկեսցի՝ թող խաղաղութիւն յաշխարհի մերում, և յայնժամ Ազգն ինքնին բարգաւաճեալ ուռճանայ ամենևրիեան ծաղկօք ուսմանց և առաքինութեանց միանգամայն, որ է ցանկութիւն եռանդագին սրտի մերոյ։ Ապա Նոր Ջուղա՜, որ երեք ճեմարան ունի։ —Փա՜ռք Քեզ Հոգի՛ Սուրբ՝ Հայոց վարժապետ։

## 9. ՈԳԻ ՏՊԱՐԱՆԻ

Սիբիրիա՝ երկիր սառնամանեաց և աքսորանաց Ռուսաստանի հազիւ զամիսս երիս ընդ ամն ողջոյն՝ տեսանէ զարև։ Մինչև բնութիւն զարթուցեալ ի բուսուցանել որ ինչ պարէնք մարդկան և

անասնոց են. մինչ ահա՛ կրկին վերահասանի նմա խորշակ ցրտաշունչ, և ընդ ձեամբ թաղէ զարգասիս նորա:

Ի՞նչ հարկ անձամբ զանձինս խաբել: Ազգ մեր բնութեամբ ճարտար և աչալուրջ յամենայն իրողութիւնս աշխարհի, բայց անտերունչ ցիր և ցան սփռեալ ընդ երեսս երկրի, հեռացեալ ի Հայրենեաց, զրկեալ ի Հայրենի ժառանգութեանց, և գոգչիր իսպառ մոռացեալ զՀայրենիս, նմանի սառնամանեաց Սիբիրիոյ. ճիգն առնէ բնական ուժգնութեամբ հանճարոյն հաւասար այլոց ազգաց պայծառանալ յարուեստս և ի գիտութիւն, զո՛ր գործէ բազում անգամ գերազանցել, և գերազանցէ իսկ. բայց աւա՜ղ, զի վերահաս խորշակք ձախորդութեանց աշխարհի՝ փութով շուրջ պատեալ ի խորս մոռացութեան թաղեն զլաւ արարս հանճարոյ և իմաստութեան նորա. և հետևապէս սրտակտուր արարեալ զձեռնարկուն սկզբնահայր ազգային պայծառութեան՝ յարձան պաղի ընդարմացուցանեն, որով մեռօրինակ անզգայութիւն իմն թագաւորէ յամենեսին: Այս ընդհանուր սրտակտուր թմրութիւն առ ազգային ինչ բարի, առաւել վնասակար, առաւել վհատեցուցիչ, և առաւել չարագոյն վտանգ բերէ Ազգին, քան զսուր և զհուր արտաքին թշնամեաց մերոց:

Զի ի միոյ կողմանէ սա՝ իբրև թէ մեծ երախտիս արարեալ՝ տրտնջայ զայլոց անփութութենէ, և այլք անփոյթ զարարածոյքն և անտանելի զտրտունջն համարեալ՝ սկսանին, գէթ ի պաշտպանութիւն անփութութեան իւրեանց՝ արհամարհել զսա և զգործ իւր, մինչև կթուցեալ ի կարեաց խափանութիւն տայ նմին: Եւ ահա՛ յերկուց կողմանց հակառակութեան ծնեալ՝ մեծի թշնամութեան և ատելութեան առիթ լինի, և փոխանակ շինութեան՝ կործանումն բերէ ի վերայ ո՛ և իցէ հասարակութեան: Գեղեցիկ օրինակ է բանիս անդամոց ընդդէմ զինիլ որկորոյ և կասուլ յիւրաքանչիւր պաշտամանէ, թէ ընդէ՞ր մեք աշխատ եղեալ զապագործ անդամն կերակրեսցուք. բայց յորժամ ի սննդենէ նորա վրիպեցան, ասեն, արդարև արժան է վաստակել, զի և մեք նովին կենդանի կացցուք:

Զայլ և այլ կարևոր միջոցօք կանգնելոյ Ազգին բուռն հարկանելն թողեալ՝ գամք այժմ ի դրագիտութիւն մեր, ի միջնորդ բաւական ամենայն իրողութեանց: Եւ հարցանեմք, թէ ո՞ր արդեօք սկսեալ և շարունակ ընթացաւ այն յԱզգի մերում, առանց ընդհանուր Ազգին ձեռնտուութեան:

Յորժամ ոգի ազատամիտ նախահարց մերոց ի սէր վառեցաւ

գրականութեան, պայծառացան ճարտասանք և տրամաբանք ի Ջուղա։

Մադրաս Ազգարարուն փայլէր։ «Մինչ յուայ ասել Ափսո՜ս իմ մի Հուն»։ Ժամանակ անցանէ թռուցիկ թևօք։ Ամք յանհունութիւնս յաւիտենից ընկղմին։ Այս ազգ երթայ, և միւս գայ՝ բայց ամենայն միահաղո՛յն առեալ՝ ո՛չ կարեն բառնալ ի նողկալի յիշատակաց օտարասիրին՝ զաղտ ազգատեաց ընչասիրութեանն։

«Ափսո՜ս իմ մի Հուն»։ —Եւ այն՝ վասն ազգային մի միա՞յն օրագրութեան ի համօրէն Հնդկաստան։ Եւ դեռ տակա՞ւին սա Հայ։ —Հուղկահար խաչեալ՝ տակաւին տեղիք ունի խղճալոյ, քան զազգատեացն ապիրատ՝ որ ափսոսաց յիւր մի Հուն վասն պայծառութեան Ազգին։

Դժուարութիւնք տարածութեան ումանց ի մէջ ազգի մարդկան՝ այնքան ծանր են, որ զբազկօք հսկայից և զուժովք թագաւորաց թէպէտև քամահեցին բազում անգամ, այլ ձեռին միաբանութեան, կամ լաւ ևս ասել միաբանեալ ջանից հասարակութեան՝ ո՛չ կարացին ընդդէմ կալ։ Քանզի միշտ ճշմարիտ է, թէ՝ «դեղ կանգնէ, դերան կոտրէ»։

Հզօրք և թագաւորք մարդիկ են, և զօրութիւն նոցա սնէ և անցանէ ընդ կենաց. բայց յորժամ հասարակութիւն միանայ ի գործ ինչ իւրաքանչիւր անձն ըստ չափու կարեաց ձեռն տալով՝ և յառտնին կարևորացն ո՛չ վրիպելով՝ զհասարակացն կազդուրէ զօգուտ՝ լոկ ընդ խաղս ևեթ։ Իւրաքանչիւր անձն իբրև ի վերայ սեպհական գործոց ուրախանայ ընդ այն։ Ջատագով լինի նմին, կտակաւ աւանդէ զայն նաև որդւոց և թոռանց. և ահա աստի է, զի ծնանի ներքին իմն սէր և համակրութիւն առ գործն՝ որ առանձնական ումեք գրեցէ՛ք թէ անհնարին իմն լինէր։

Հայեսցի՛ թող պատուելի Ազգ մեր ընդ բազում ելևէջս գրագիտութեան նոր Ջուղայ, որոյ վիճակ է Հնդկաստան բոլոր, և տեսանէ, թէ զիարդ ծաղկեցաւ այն, յորժամ Ազգն բարեշնորհ եղև գործադրաց, և կամ ո՞րպէս թառամեցաւ, յորժամ օգնականութիւն Ազգին դերևեցաւ ի նմանէ։

## ԽՂՃՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏԱՑ

Չի՛ք ինչ այնքան հասարակապէս խօսեցեալ՝ որքան գրագիտութիւն Ազգիս. և չի՛ք այնքան բարձի թողի արարեալ ի մէնջ՝ առանց խնամոց, քան զնա։ Եւ չար այն է, զի բախտն կոյր կամ ճոխութիւն,

որ հազար կերպ մուտ գտանէ զրեա՛ թէ առ ամենայն ազգս մարդկան, միայն ի գիտնոց խորգացեալ և ի բաց գարշի։ Հասարակօրէն ասանգի, թէ մեծանուն պատմաբան և քերթողահայր մեր՝ Մովսէս Խորենացի, չքաղացպան ոք էր։ Մխիթար Աբբայ՝ այր հալածեալ ի քաղաքէ ի քաղաք։ Պետրոս վարդապետ Աղամալեան՝ մեծանուն մատենագիր, աւուրն պարենի կարօտ։ Յովհաննէս տիեզերալոյս Ջուղայեցի՝ բեռն ծանրատար իւրոց ծնողաց։ Յովհաննէս Բերիացի գրիչ պատմութեան Քարկենդոնի՝ սովալլուկ հիւծեալ ի Սուրբ Էջմիածին։ Նաև ի մէջ օտար ազգաց՝ որքան գիտունք աղքատացան, այնքան և գիտութիւն կաղացեալ յամբաքայլ յառաջացաւ։ Քսիլանդր յութևտասան ամի հասակին փառաց վաստակէր, այլ ի քսան և հինգ ամին՝ հարկեցաւ ի գիւտ հացին նկրտիլ։ Սերվանտէս անմահ ողին Սպանիոյ՝ ողբալի կարօտ. և Կամովէն առանձնական պարծանքն Լուսիտանացւոց՝ ի կարևորացն անգամ վրիպեալ՝ մեռան ի հիւանդանոցին Լիսբոնայ։ Վոնդէլ Թուչացւոց Վիրգիլ, թէպէտև զթատերս ազգին պայծառացոյց, այլ ինքն հեծութեամբ էջ ի գերեզման. նաշ որոյ՝ բարձեալ բերէր յերկոտասան քերթողաց՝ որք թէպէտև զուրկ ի հանճարոյ մտացն, անճարութեան կենաց նորա գտան կցորդք թշուառագոյնք։ Մեծին Թասոնի ընթերցի՛ր զտաղ ի կատու իւր, և գտանես՝ զի կարօտէր պայծառութեան աչացն՝ գրել ի գիշերի լուսով նորա զքերթուած իւր։ Կարդինալն Բէնգիվոգլիոն զարդ Իտալիոյ և գոհար գրագիտաց. որ վտուն իւր պարտատերանց կտակեալ՝ մեռաւ հեծութեամբ, թողեալ զկնի միայն զգատարկ համբաւ։ Ալդրովանդոս ծախելով զմեծ հարստութիւն իւր ի վերայ բնական պատմութեան իւրոյ, և առատ ձեռամբ վարձատրելով զհմուտս յարհեստաւորաց Եւրոպայ՝ վերջին տնանկութեամբ հիւծեցաւ ի մահ՝ յաղքատանոցին՝ զոր կազդուրեցին տուրք իւր։ Վազեղաս գրիչ Գաղղիացի, զամս երեսուն աշխատեալ ի թարգմանութիւն Կուինտոսի Կուրտիոսի՝ կտակեաց զդի իւր անդամազննչաց առ ի վճար պարտուց իւրոց։ Պուրքաս առ Յակովբաւ Առաջնով՝ ծախեալ զհայրենի մեծ ժառանգութիւն առ ի գիւտ դրից աշխարհի, և մատուցեալ հայրենեաց՝ արժանացաւ բանդի։ Եւ ըստ այսմ, չըգիտեմք իմաստո՞ւնք անիրաւեցին հարստաց, եթէ հարուստքն՝ իմաստնոց։

ԶՐՈՅՑՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Դիցո՞ւք թէ համահայր և համամայր եղբարք երկու, սա՛ Սահակ և Սուրէն, ի տղայական հասակի իւրեանց որոշեալք իցեն,

մին՝ յարհեստ դարբնութեան, և միւսն յուսումն գրոց: Հարկիւ զհետ գայ՝ զի ի կատարելանալ երկոցուն՝ Սահակ բանայ զիւր հանութ. և սկսանի թախկութրիխկ առնել զօրն բովանդակ. բայց ո՛չ զօգէ զխոփ քոյ, և ո՛չ շինէ քեզ շեղբ մի՝ մինչև ո՛չ առնուցու զվարձ իւր: Եւ ահա՛ այս ապրուստ է նորա:

Իսկ Սուրէն ի դրագիտութեան կատարեալ, թուղթ և թանաք ի ձեռին յածի աստ և անդ, եթէ որ հարցանիցէ զնա զառարակուսելի ինչ, և զլուծումն ընկալցի, շա՛տ է՝ եթէ խոստովան եւ լինիցի: Իսկ եթէ որ խնդրիցէ զգիր իմն գրել կամ զմոնթ աշակերտել, է՝ որ ոչ բնա՛ւ, և է՝ զի ի Ջրօրհնէս և ի Զատկի ընծայ առնի առ նա ափսէ մի պղառց, և ուտէ ի նմանէ զերկուս՝ և դառնայ: Եւ այսպէս դարբինն առաւել մխիթար ապրի քան զգրագէտն:

Պիտի ասել՝ թո՛ղ նա եւ դարբին դառնայր: Բարիոք է, զի որ կարաց ուսանիլ զմտաւորն՝ կարէր արդեօք և հեշտութեամբ ուսանել նաև զմարմնաւորն արուեստ: Բայց և այնպէս՝ եթէ աշխարհ ամենայն դարբին լինէր՝ պիտոյ մարդիկ երկաթով սնանէին. կամ նոքին իսկ դարբինքն ի կիտուածս երկաթի զործեաց իւրեանց սովալլուկ հիւծէին, քանզի ո՛չ եթէ որ շինէ զսուր՝ ի գործ ածել գիտէ զայն, այլ ձեռին հզօրի կարօտի վարել զայն ընդդէմ թշնամեաց հայրենեաց իւրոց: Որովհետև յայսմ նիւթոյ սկիզբն արարաք խօսիլ, արժան համարիմք նովին կատարել զբան մեր: Ի՞նչ օգուտ դարբնին զօր հանապազ երկաթ ծեծել, եթէ ստեղծող իմաստութիւն կամ հանճար իմաստնոյ նորախոհ իմացութեամբ որոնեալ ո՛չ գտանէին զպէսպէս յարդարութիւն նիւթոյն առ պէտս կարիս մարդկան. ո՛վ գիտէր խոփ առ ինչ պիտի, եթէ չէր իմաստնոյ գրտեալ զհերկն, սուսերաց՝ եթէ ոչ զպատերազմն, երկաթի տախտակաց՝ եթէ ոչ զշոգենաւն. երկաթաձիգ ուղից՝ եթէ ո՛չ զշոգուղին, և այլն: Կամ ո՛վ արդեօք յայն յարգութիւն հանէր զչնչին երկաթ ի ճամբար ժամացուցին, եթէ ոչ իմաստասէրն՝ որ եգիտ զծառայական զօրութիւն առաձգութեան նորա:

Արդ՝ եթէ դարբինն և ժամացուցակերան ճախացեալք զիտով հանճարոյն և նստեալ ի տան ապահով՝ այպանիցեն զիմաստասէրն սկզբնահայր արուեստից իւրեանց, զձեզ հարցանեմք, ընթերցո՛ղք, անիրաւ՞են նոցա, թէ ո՛չ անիրաւեն...

## 10. <ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>

Նախանձելով լաւագունին շնորհաց ըստ Առաքելոյն, հրատարակեմք աստանօր, զի Encyclopeadia Bengalensis (Հանրագա-

տում բանգալցերէն) երկրաբառ ի լոյս ընծայեցաւ ի մոտոյ։ Այս գիրք է բառարան ամենատեսակ բնական և արուեստական գիտութեանց ցայս վայր ի լոյս ընծայելոց։

Քանի՞ երանութիւն ո՛չ առնէր Ազգի մերում, եթէ մի նոր և ճոխ ընկերութիւն համախմբէր յատուկ ի մասին այսօրիկ, և զԱզգն ողջոյն հրաւիրէր ի թիկունս իւր ընդ ամենայն տեղիս, թէ գրով և թէ դրամով։

Զիք լեզու ծանուցեալ և լուսաւոր, զորս ո՛չ գիտիցէ Ազգ մեր ի պատճառս ցան ու ցիր տարածութեան իւրոյ՝ յաշխարհ ընդհանուր։ Եթէ ի բազմամարդ քաղաքի ուրեք միաբանութիւն բանասիրաց հիմնաւորեալ իմաց առնիցէ համազգայնոց ի տեղիս տեղիս՝ անտարակոյս հաւատամք՝ զի ի մի կամ յերկուս ամս զայն ցանկալին ի գլուխ հանցէ գործ՝ զոր ի ձեռս սակաւուց գրեթէ անհնարին իմն լինէր։

Ներսիսեան ուսումնարանի շնորհալից աշակերտք, որոց արդէն իսկ ողորմութեամբն Աստուծո բազումք էք, ի հոգևոր և ի մարմնաւոր կողման ձերում պայծառացեալք աստիճանօք յազգի մերում, ահա առաջիկայ ձեր Այրարատեանն այն նահանգ՝ առաջին ուսումնարան Ազգաց աշխարհի։

Որոց մայրաբար՝
Կաթնասուն եղեալ
Կրօնից և կենաց
Ցուոց ըզճանապարհ

Ահա՛ ձեր առաջիկայ դպրոց Թարգմանութեան Սուրբ Գրոց. և ահա ի ձեզ խրախոյս բառնայ ակնկալութիւն Ազգին։ Միայն միաբանութեան և սիրո ապաստան կայ և մնայ գործն այսքան համապայծառ և օգտակար։ Սկիզբն արարէք, և ահա՛ տեսջիք թէ որպէ՞ս ընդ գրուածոց որդեկաց ձորա և սիրտք կարօտակէզք նոցա զեղանին առ ձեզ։ Արիք իմ քաջ հայեր, որ ի շնորհաց Աստուծոյ ունիք ըզկայսրն ի թագաւոր և զՆերսէս ձեզ հայրապետ։ Որ կրէ զանունն՝ պարտի օրինակին հետևել։ Ով թէ ո՞րքան զուարճանայ սիրտ Ազգասիրին այսօրինակ պտղեալ տեսանելովն զիւրատունկ Այգին։

## 11. ՄԻԱԲԱՆԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԱՄԵՐԻԿԱՅ

Զանազան հատուկտուր բանիւք լրագրեցաք յընթացս «Ազգասիրիս» զպատերազմէ Միաբանեալ Նահանգաց Ամերիկայ՝ ընդ

տէրութեան Մեքսիքոնի. բայց ըստ Բրիտանիա կոչեցեալ օրագրին, այս առաջին անգամ է, թէպէտև կարի՛ անագան, յորում օրագրութիւնք Ամերիկայ յօժարեցան ընդդէմ գրել պատահածին։ Ուրախակի՞ց լինիմք ընդ այս գանգատ դարձ նոցա ի շաւիղս առաքինութեան, քանզի Մեքսիքոն, բաց ի վերջին ակարութենէ զօրաց իւրոց՝ զայլ առիթ զրգռութեան չունէր ընդդէմ ամերիկացւոց, և Ամերիկայ բաց ի բռնանալոյն ընդդէմ տկար դաշնակցին՝ զայլ իրաւունս ո՛չ կարէր յառաջ բերել առ ի կատարած այնքան բազմութեան համատարած ոճերոյ։

Աշխարհ աշկեար գիտէր՝ զի ամերիկացիք կարէին յաղթահարել զՄեքսիքոն, ըստ որում զօրք նորա գլխովին անկիրթք, և ցաքուցրիւ ժողովածոյք ի հասարակաց ժողովրդոց Հնդկաց ասեմ, և սերնդոց ի նախնի Սպանիացւոց։ Խռովութեամբ կառավարութեան նոցա ի քսան ամաց հետէ՝ գանձք սպառեալ էին, և հարկ և հասք աշխարհին լռեալ մինչ խոպան։ Երկիր նոցա թէպէտև հզօր և բարեբեր յոյժ, այլ ընդ երկար ունակութիւն ծուլութեան և պղերգութեան թագաւորեալ գրեթէ յամենեսին, անգործ և ապարդիւն թողեալ զնա։

Այսքէն յանդիման երկնից և երկրի չունէր Ամերիկայ իրաւունս բռնութեամբ յառաջ վարելոյ զմարտ իւր։ Բայց հազարապետ Տէյլոր վարէ զզօրութիւնս իւր ի վերջին յերևակայական և եթ սահմանագլուխ Տէքսասայ, լարէ զթնդանօթս իւր ընդդէմ քաղաքի ուրեմն մեքսիքոնացւոց, անցանէ ընդ գետ նոցա, և արշաւէ ի սիրտս երկրին, քարոզ կարդալով՝ թէ այս ամենայն ո՛չ խռովէր զխաղաղութիւն աշխարհին։ Անձանց ոչ կորզեմք զպատիւ մարգարէութեան, բայց և զայս հաւաստի գիտեմք. թէ վրէժ հեղման այսքան արեանց անմեղաց խնդրի՛ տակաւին, խնդրի՛, այո՛. և՛ բորբոքեալ սրտմտութեամբ։

Բայց թո՛ղ Անգղիա զարթնուցու ի քնոյ՝ յինքն դէպ հայել։ Ամերիկա զմի կամ զերկուս պատերազմունս յառաջ մղելով ի վերայ տկար թշնամւոյ, զերկիր նոցա բռնի յափշտակելով, աւարօք ընչից փարթամանալով՝ ո՛չ դառնայ և զորմոց ապարանից կախէ զիւր մահաձիգն հրացան, այնինչ Կանադա բացարձակ կայ առաջի իւր։

## 12. ԱՆԱՀԻՏ

Անահիտ Անայիդ կամ Նայիդ ծագեալ ի Նայ բառէս, որ է հայեցուած. ըստ որում Հայելի երկնից՝ Մահ, Ամիս կամ Լուսին նկարէր

կին հեծեալ ի ցուլ սպիտակ, յաջն՝ շարան յակնթի և ի ձախն՝ ոստ ռեհանի։

Հայեցեալ յԱգաթանգեղոս և ի ժամանակս կռապաշտութեան Տրդատայ և աշխարհիս Հայոց, թերևս յապշութիւն կրթի ոք ի փառացի պատուանուանց անտի, զորս տային սմա հինք։ Ի մի բան արքային կոչի սա Տիկին փառք Ազգիս և կեցուցիչ։ Մայր ամենայն զգաստութեանց, Բարերար բնութեան ամենայն մարդկան և Ծնունդ մեծին արին Արամազդայ, «զոր և թագաւորք պատուեն, ասէ, մանաւանդ թագաւորն Յունաց»։ Կոչի նաև խնամակալու ի հրովարտակին Տրդատայ առ Հայս. «խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ» (հասցէ)[1]։ Վկայէ Ստրաբոն, թէ քան զայլսն առաւել Հայք պաշտէին զԱնահիտ, որում և յայլուր և յԱգելիսինի կանգնեցին մեհեան[2]։ Ապա և զդրացեաց մերոց՝ զԱղուանից խօսելով ասէ. աստուածս պաշտեն զԱրև, զՈրմիզդ և զԼուսինն, որոյ զտեղին աւերութեան մեծին Միհրդատայ՝ յիշէ զԳամիրս ի Կապադովկիա։ Ունին, ասէ, նաև տաճար Ամսոյ, որ ֆարնագիս ասի։ Պլինիոս վկայէ և վասն անդատարկ ոսկի պատկերին սորա, որ յԵրեզն աւանի՝ յԵկեղեաց գաւառի մերում, զոր ըստ վկայութեան Ագաթանգեղոսի՝ «փշրէին զոսկի պատկերն Անահտական դից»[3]։ Ի հնութիւնս Պարսից ոսկի պատկեր միայն արեգականն ձուլէր, իսկ ի մերումն՝ լուսնի, որով երևի՝ զի որպէս արև առ նոսա լեալ էր ի մեծի յարգի, նոյնպէս և լուսինն՝ առ մեզ։ Ոչ օտար ի հաւանական կարծեաց տեսանեմ, թէ որովհետև Պարսկաստան և Հայաստան փոփոխակի տարան զառաջին և զերկրորդական գահն այսպէս իմն համաձայնեալ իցեն, զի մին՝ զարև, և միւս՝ լուսին ունիցի յիւր աստուածն նախամեծար։ Եւ ոչ իսկ զարմանալի համարիմ, թէ որպէս արեգակն և առիւծ կան և մնան մինչ ցարդ նշանք տէրութեան Պարսից, նոյնպէս և լուսինն և յամոյր լեալ իցեն նշանք տէրութեան Հայոց նախ քան զՔրիստոնէութիւն։ Քանզի դեռ կանայք մեր ի Հայաստան մի ի զարդուց կամ ի բժժանաց ծամակալացն ունին զլուսին ոսկի կամ արծաթի։

Բայց հայեցեալ ի հնութիւն պաշտաման սորա ի Հայս՝ սոսկում ազատանայ ի կարծիս, քանզի Խորենացին ի գրել իւրում ըղձնութենէ Վաղարշապատ քաղաքին մերոյ՝ վկայութիւն բերէ զբանս հնախօս երգոց աշխարհիս, յասելն վասն Վարդգիսի, թէ՝ «Վարդգէս մանուկն եկեալ ի Տուհաց գաւառէն, եկեալ նստաւ զՇրէշ բլրով և զԱրտիմէդ քաղաքաւ»[4]։ Հաւաստի իմն է, զի Խորենացին յայնց երգոց առնու զբանն, որ յետոյ Աղեքսանդրի երգէին Հայք. և ահա

յայնմ ժամանակի, ըստ վկայելոյ Հնախօսից, զոր գործեցին Յոյնք զանուանս աստուածոց օտար ազգաց յիւրեանց աստուածոց ածանցեալս կարծեցուցանել։ Նա բնագաւառին իսկ զամենայն ժողովուրդս փոխել զանուանս աստուածոց իւրեանց՝ և յունական անուամբ յորջորջել։ Այս այսպէս իմացեալ մեր՝ հետեւացուցանեմք ապա, թէ քաղաքն յառաջ Անահիտ կոչէր, կամ յանուն նահապետական անձինն. որ զլուանէ ուստի և կամ մօրին և մօրաքին միանգամայն իբրև գից աւան։ Նշանն՝ դրօշի վասն Կէյ Քաւուզայ էր արեգակ և լուսին ի վերայ նորա, որ ցուցանէ, զայնու ժամանակաւ նախաձայնութիւն Ազգիս ի վերայ Մարաց և Պարսից։ Բայց յաղագս Արգիշտոյ քաղաքի երկու այլես վարկմունք յանդիման լինին ինձ. մի՝ զի որպէս յանուն նահապետաց այլոց ազգաց դտանին անգիր ի Հայս. նոյնպէս և սա կոչեցեալ իցէ Արդ, Արտ կամ Երկիր Մեդայ Նահապետի Մեդացւոց։ Եւ երկրորդ՝ թէ գուցէ յառաջին արշաւանսն անդ աշխարհակալին Արամայ և յաջորդաց գերի կամ գաղթական հարեալ ի Մարաց և այսր ածեալ բնակեցուցեալ իցեն։ Այսպէս թէ ոչ՝ պաշտօնեայ լուսնի կամ անուն և այն յունական հնչմամբ հազիւ թէ, ճանաչէր որ ի Հայս նախքան զաստուածացուցումն Վահագնի, որ թէ և կառուցել զայն ի վերայ այնքան աշխար քաղաքի հնոյ ուր Արմաւիր։

## 13. <ՀԻՄՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ>

Շնորհաւոր նոր դար, նոր ամ փրկութեան,
Շնորհօք զարդարեալ՝ սեռիս Արամեան։

Պողոս վարդապետ[1]

Գոհանալ արժան է մեզ յիրաւի զանբաւ բարերարութենէ ամենակալին զթութեան, վասն պատուականին ի պարգեւս նորա՝ հոգւոյ և մարմնաւոր կենդանութեան, որով կեամք ի Տէր, այնինչ բիւրաւոր բազմութիւն մարդկան, գուցէ լաւագոյն քան զմեզ, անցեալ մեկնեցան յերկրէ կենդանեաց՝ և ո՛չ արժանացան գոնէ ընդաղօտ տեսանել, զորս մեք և տեսանեմք՝ և վայելեմք իսկ։ Զի՞նչ։ Յոյս առ աստուած կենդանի, հաւատ յԱւետարան սուրբ նորա՝ և Սէր սուրբ ի սիրտս մեր՝ թէ առ Աստուած, և թէ առ Ազգ մեր, որո՞վ արդեօք մանաւանդ՝ եթէ ո՛չ ազգաշահ սպարանօք և մամլօք, որ ի Սուրբ Էջմիածին, ի Տփղիս, ի Շուշի, ի Հաշթարխան, ի Նոր Նախչուան, ի

Մոսկով, ի Զմիւռնիա, ի Պօլիս, ի Վենետիկ, ի Վիեննայ, ի Կալկաթա, և ի Նոր Ջուղայ յորմէ յուսամք ցկատարած տարւոյս զծաղիկ գարնանի քաղելով, խնդալ ի վերայ վերստին յարութեան նորա:

Քանի՞ պարգև աստուածատուր ո՛չ լինէր այս աստուածախօս լեզուի մերում, և հրաշիցն Աստուծոյ ի Հայաստան, թէ նախաբաց գրոցք դաստիարակութեանց աշխարհի մերոյ՝ ունէին զէթ զմին միայն տպարան՝ ազատել զմիտս ազգի մարդկան յանեղանելի չփոթութեանց անտի, յորս իբր ընդ ծով համատարած անկեալ լողան: Քանի՞ պիտանի ո՛չ լինէր Կադմեայ մերում նահապետի՝ ունել զայս ընդ իւր, և հրատարակել խոկոյն զյարձակումն Բելայ ի սահման իւր, քան զայս փութանակի առաքել, և ինքն զհետ խուճապել նոցա՝ առ արին մեր Հայկ: Քանի՞ յաջող ո՛չ լինէր և մերումս Վաղարշակայ, ի մի մամուլ հազարածին արկանել զկարգ և զկանոնս թագաւորութեան իւրոյ՝ քան յարձան և ի կոթողս քարեայս փորագրել անհուն աժանմամբ: Դար աստուածեան թարգմանչաց մերոց իբրև զօր Աստուծոյ ամենակալի անգիշեր պայծառութեամբ մշանջենանայր: Վարդան, մեծն այն Մամիկոնեան, ո՛չ միայն նահատակէր, և Վասակ ո՛չ այնքան ամբարշտէր, եթէ լեալ ինչ էր ի Հայաստան մամուլ և հրապարագրութիւն ինչ: Մեզ պահեցաւ երանութիւնս այս, եղբա՛րք, մեզ՝ ցանելոց և ցնդելոց ի հեռաւոր ծագս աշխարհի՝ յոսկեղէն շաղկապ միաւորութեան, յօդ սիրոյ, և ի հանգոյց ազգութեան: Օրինակի վասն, ո՛վ երբէք ի հեռաւորաց իմանայր զառատ և զկանոնաւոր տուրս Նազարէթայ սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ սփռեալս առ կարօտաւորս զաւկաց իւրոց: Ո՛վ հասու լինէր բուն վիճակի երկրական Հայ քրիստոնեայ եղբարց մերոց, և ի փոյթն յառաջէր: Ով զգրագիտութեան Նոր Ջուղայ նշխարս ի մի հաւաքէր՝ նորօրինակ ոճ կամ տարազ պատմութեան նուիրել Ազգին: Ո՞վ, ասա՛, ո՛վ ի հեռաւորաց իմանայր արդեօ՞ք, թէ բարերարք Ազգիս մահարձանօք յաւէրժացան, այնինչ հազիւ թէ ումանք. այո՛, և սակաւ ումանք ի մէնջ՝ հաճեցան ընդ մահիճս աշակերտաց ճեմարանին ելանել մինչ ցարդ ի զնին նոցա՝ և զուարճութիւն: Ուսումնարանք Նոր Ջուղայ, հրկիզեալն Զմիւռնիա, և Սփիւռք Հնդկաստանի թո՛ղ վկայ լիցին բանիս այսորիկ:

Ո՛չ վայրագանամք յաշխոյժ երևակայութեան մերոյ, ամենայն անաչառ և անկողմնասէր Հայ՝ իւրօք համաձայնի մեզ: Հայեա՛ց յեռանդն պատուելի հասարակութեան մերոյ ի Հնդիկս, որով կեայ և շնչէ ընկերութիւն մեր: Հայեա՛ց ի պատուելի ընկերութիւն Սիւնեաց[2], որ ի միջոյ կարօտութեանց և կարեաց՝ տակաւին զձեռն

շնորհաց պարգևաց համազգային գործառնութեան այսորիկ։ Հայեա՛ց ի պատուելի ուխտ Հարանց Մխիթարեանց ի Վէնէտիկ, որ անկարօտ որպէս և են, տակաւին ազգասիրաբար զաչ քաջալերական կարկառեաց առ մեզ, իսկ Հայաստան[3] լրագիր զո՛գ թէ ծնաւ յօգնութիւն մեզ, որ ընդ անուան իւրոյ և զապացոյց ազգասիրութեանն մատոյց։ Աստ զկայ ո՛չ առնումք։ Զի օ՛ն և անդր մխի յոյս մեր, թէ՝ և էջք Միածնին զիջանիցին մայրաբար խրախոյս բառնալ մեզ, թէ՝ և Պօլիս և Տփղիս յօժարիցին զէթ շնորհս փոխանակ շնորհացն տալ (եթէ ո՛ զառաւելուսն թողցուք). թէ՝ Սիւնիք և Ուտիք ընդ Աղուանս եկեսցեն. և թէ՝ փառացի Վերատեսութիւնք Պարսկաստանի յորդորեսցին յայս հանդէս։

Շնորհակալս կարօղ եմք լինել վասն այսքանեաց բարերարութեանց Ազգին, բայց և ո՛չ զմի յայնցանէ անձանց և եթ սեպհականեմք։ Ընկերութիւնս է Հայ, և վասն Ազգիս Հայոց, մեք միայն ծառայքս անպիտանք՝ գործադիր բարւոյն հաւատամք լինել։ Այս էր հիմն միաբանութեան մերոյ, և այսպէս եւ ի հրատարակելն փութացաք. յայտ արարեալ թէ՝ ո՛չ ի սակի մասնաւոր շահուց անկեացեալք. և առ անձնաւոր օգտի ինչ մերում շողոքորթիցեմք շնորհս Ազգին։ Եւ թէպէտ ողորմութեամբ բարերարին ցայս վայր յաջող ընթացեալ՝ տակաւին շարունակէ ընկերութիւնս մեր, սակայն ցաւիմք, զի թիւ անդամոց նորա նոյն կայ և մնայ, որ և ի սկզբանն իւրում։ Կարօտութիւն մեր առաւելութեան թուոյ անդամոց՝ ո՛չ է յաւէտ վասն իւրաքանչիւր հինգ հարիւր ռուփեաց, զոր պարտական է նորոգ յօդեալ անդամն յաւելուլ ի հաշիւ ընկերութեանս՝ այլ մանաւանդ վասն քաջալերութեան նոցա. զի որպէս ջուր բազում արագ ընթանայ, այնպէս և միաբանութիւն խորհրդոց բազմաց՝ զգործ ուժեղ ընծայէ։ Եթէ Արարատեան Ընկերութիւն մեր լինէր վասն առանձինն ինչ օգտի՝ վնաս բերէր մեզ ընդունել զոք միայն հինգ հարիւր ռուփւոյ։ Բայց ըստ որում չէ այնպէս, և փոքրկութիւն թուոյ մերոյ, է՝ որ զբաղանօք, և է՝ որ ակարութեամբ կամ պէսպէս աթօք ո՛չ ժամանէ բաւական անդամոց ժամանակ առ ժամանակ ժողով գումարել, և զբարին հասարակաց խորհել և առնել, վասնորոյ սովին վերստին հրաւէր կարդամք եղբարց մերոց, զի ազգասիրաբար յօժարեսցին գործակից լինել մեզ ի փառս Ազգի մերոյ, անշուշտ հաւատացեալ՝ թէ զուգնաքեայ իմն լինի ծանրութիւն բաժանորդեալ գումարոյն առ մեծի և ընդհանուր օգտին՝ որ յառաջ գայ յայսմանէ։ Ըստ որում նպատակ մեր ո՛չ է միայն լրագիր տպել, այլ ամենայն մասամբ Հայրենեաց օգնական լինել, եթէ տերամբ

յաջողեսցի մեզ այն. և այսպէս շնորհաւորել նոցա և մեզ զնոր դար Սիրոյ, Նոր ամ փրկութեան։

## 14. <ԱՅԼԵՒԱՅԼՔ>

Վերստին սկսանէաք զուղեղ հալել ի հարցս և ի հմայս ժաման յամենալոյ թղթաբերին Լոնդոնայ, այն ինչ յանկարծ եկն հասս յեօթներորդում այսր ամսոյ, և առաջին լուրն զոր մատոյց մեզ՝ էր թէ պղերգութիւն Իռլանդայ ծնանէր որպէս հակառակութեան. հատանելով զամենայն ձեռն ի գործոց, յարդարէր միայն զլեզուս նոցա ի դադարկ հակաճառութիւն։ Երկիր ապագործ թողանէր, և մարդիկ մուրացկանութեան սովորեալք՝ զաշխատութիւն արհամարհէին։

—Ամերիկացիք տակաւին կռուին, և Մեկսիկոնացիք տակաւին յամառին. —Զարմանք և զզուանք Ամերիկացւոց յերկինս ամբարձան, ըստ որում կին մի սպիտակ՝ ընդ սևոյ ամուսնացաւ։

—Որպէս գրէ պարոն Վայզ դեսպան Ամերիկացւոց ի Բրազիլ՝ մերձ 64000 գերիք բարձան յԱփրիկէէ յԱմերիկա՝ յանցեալ տարի, և մերձ 5000 սկսեալ յՕգոստոսէ անցելոյ բոլորեքեան եւս Ամերիկացի նաւովք։

—Գործի մարդախօս։ Պարոն Ցաքերս ումն ի Վատրլու հնարեաց զգործի իմն մարդակերպ, որ ի ձեռն պէսպէս փքսոց՝ էրկաթի օժանդակօք ընդ իրեարս հաղորդելոց՝ խօսի զԱնգղիականն բարբառ, շարժելով զմօրուսն բարդ, ծիծաղի և երգէ եւս, այլ ինչն ո՛չ ինչ իմանայ։ Բայց եթէ աշխարհ կարօտիցի՞ այսօրինակ անհասկացող խօսողի՝ թէ ոչ, տարակոյս է մեզ։

## 15. <«ԿՈՎԿԱՍ» ԼՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ>

Ի թիւ 86 «Ազգասիրիս» հարևանցիկ իմն հրատարակեցաք ի մասին «Կովկաս» անուն լրագրին[1], և զարդիս պատիւ անձանց համարիմք յիշատակել, զի առանձին գրութեամբ ի Տփղեաց իմացեալ եղաք, զի շարադրիչ և հրատարակիչ այնր լրագրի՝ են երկոքին եղբարք ուսումնականք, բարեծնունդ Յակովբ և Դաւիթ Արզանեանք[2], կարգաւորք ազգային դպրոցաց յայս կոյս Կովկասու եղեալ նահանգաց։ Որոց հայենասէր և ազգասէր եռանդեան էր շնորհ անշէջ պահել զհուր ազգային դրագիտութեան, յետ մեկնելոյ անտի

ազգասէր Հայրապետին մերոյ՝ տեառն Ներսիսի՝ մինչև ցայսօր ժամանակի:

Ի լսել մեր զհրատարակութիւնէ այսր լրագրոյ, ի սիրտ անդր Հայրենեաց մերոց՝ ակն ունէաք իսկ և իսկ տարածել օրինակաց նորա յանհամար ձեռս գիտուն իշխանաց և սոսկականաց, որով և խրախուսել զբազումս եղբարց մերոց յայնոսիկ՝ ի քաղաքս երևելիս աշխարհին: Բայց ցաւեցաք տեղեկանալ յայլոց սկզբանց, թէ «Կովկաս» հազիւ հանէ զծախս իւր, ըստ որում ժողովուրդքն չեն ընթերցասէր:

Որ միանգամ օրինակաւ լուսաւոր ազգացն Եւրոպիոյ ընդատուցեալ՝ ի Հայրենիս իւր մուծանել կամիցի զբարիս և զվայելուչս յարարածոց նոցա, պարտի առ սակաւիկ իմ համբերող լինել, նախատունկ պարտիզպանի նմանեալ՝ մինչև ծառք ի պտուղս հասանիցին, և յայնժամ միայն կարէ ընդ որթովք և թզենեօք յապահովի ընկողմանել և ճաշակել զքաղցրութիւն արդար վաստակոց իւրոց:

Հազիւ անց երեսուն ամ, յորս դպրութիւն և լեզու Հայոց՝ գլխովին բարձեալ անհետանայր ի միջոյս Մասսեաց լերին և Կովկասու. իսկ արդ գոհութիւն շնորհաց ամենակալին, զի ո՛չ միայն դպրոցք հաստատեցան ի տեղիս տեղիս, այլ և ապարանք և արուեստարանք ազատական և գործնական արուեստից, ուստի դեռ նոր ած է Հայաստան, դեռ նորատունկ են որթք և ուռք նոցա, և եթէ յայժմ իսկ մատաղութեան՝ կարիցէ պտղաբերել աշխատողին զծախս տպագրութեան և հրատարակութեան լրագրաց՝ ակնկալին մեծ է և յոյս շատ մեծ վառէ ի մեզ ակնունել ապագայ առատութեան զրաւոր բերոց իւրոց:

Մտաւոր գիտութիւնք նման են աշխարհատես և բանիբուն ծերունւոյ, որ կարէ ասել, և ո՛չ առնել: Գործնական գիտութիւնք նման են առոյգ պատանւոյ, որ կարէ առնել, բայց ո՛չ գիտէ զինչ: Ջանք լիցին ուրեմն հայրենասէր մատենագրաց զերկոսին ի մի կցորդել, և յայնժամ կարեն լի վայելել զպտուղս վաստակոց իւրեանց:

Ո՛չ ոք կարէ յարգ դնել գիտութեան, ո՛ր չգիտիցէ զխարդ յարգել զվաստակ իւր: Եթէ կարիցէ ոք դարբնել առ օրին հինգ շամփուր, կամ զօդել զխուփս հինգ, անխափան որոշէ զմին վասն այսպիսի իրաց: Բայց մեք ո՛չ կարեմք զարդիս երկար դրել զայսցանէ:

«Կովկաս» հանէ զծախս իւր, և թուի մեզ թէ երջանիկ իցէ քան զամենայն եղբարս իւր: Բայց առաւել երջանիկ լինէր եթէ ազգասէր և հայրենասէր պարոնայք մեր շնորհ առնէին քանի մի թերթից նորա բաժանորդ լինել, եթէ ո՛չ առ ի վարձ, գոնէ առ մրցանակ

*փառաբանչաց Հայրենեաց իւրեանց. Եւ այս լինէր նոցա և մեզ խրախոյս և քաջալեր առ բարին հասարակաց:*

*Մեք ձրի արժանացեալ քանի մի թերթից նորուն, հաճորդեմք պատուելի ընթերցողաց մերոց՝ թէպէտև անձուկ թուղթ մեր ո՛չ ներէ մեզ միշտ զմերն մոռանալ և «զԿովկաս» օրինակել:*

## 16. ՀԱՅԱՍՏԱՆ

*Ի մանկական հասակի գրականութեան ի կողմանս Կովկասու անհնարին է չուրախանալ մեզ ընդ նորանոր աշխատութիւնս ոմանց ուսումնասիրաց ազգի և ընդ աշխոյժ եռանդ նոցա նպաստամատոյց լինել ընդարձակութեան արևելեան գրականութեան ի միջի մերում: Եւ յիրաւի ոչ այլ ոք եթէ ոչ մեք ծնեալք և սնեալք յարևելս դիւրագոյն քան զօտարականս ձեռնհաս եմք ծանօթ առնել զայլս ընդ պատմաբանական, աշխարհագրական և այլ նիւթաւոր գրուածոց արևելեան հեղինակաց. միայն թէ պահանջողութիւն գիտնոց ի մէնջ մի լիցին չափազանց. վասն զի յայտնէ զի բնակիչք կողմանս թէ և բաւականին կրթեալք չև ևս են յաստիճանի լուսաւորութեան Եւրոպացի ազգաց. և անհրաժեշտ պետք են նոցա միջոց մի ևս ժամանակի, է անընդհատ հաղորդակցութիւն ընդ լուսաւորեալ ազգացն Եւրոպիոյ: Ապա ուրեմն իւրաքանչիւր արդարախիղճ աշխատասիրութիւն մեր, որոյ նպատակ իցէ ուսանիլ և ուսուցանել, արժանաւոր է բարեմիտ ընդունելութեան և քաղցր ներողամտութեան թերութեանցն:*

*Հայազգի գիտնական ոմն բնակեալ ի Տփխիս և քաջ գիտակ արևելեան լեզուաց Կոլեժսկիյ սեկրետար Միքայէլ Յովհաննիսեան մականուանեալն Սարաճեանց ահա 16 ամք են, յորմէ հետէ նուիրեալ ունի զանձն իւր ի պատրաստութիւն Նորոյ Բառարանի ի Պարսկական, յԱրաբ., ի ռուս և ի Հայ լեզուս յորում ընդ ամենայն պարունակին բառք 40 հազար եդեալք այբբենական կարգաւ և նորակարգ ոճով: Աներկբայ եմք թէ այս նոր աշխատասիրութիւն պատուելի գիտնականի մերոյ Սարաճեանց, բարձցէ ի միջոյ զդժուարութիւնն՝ զոր կրեն ուսանողք մեր զարևելեան լեզուս. բացի բառարանէս են հեղինակի նորա և այլ ուսումնական աշխատասիրութիւնք որպիսիք են այբբենարան Տաճկերեն և Դուրաստան հատուկտէր գրուածոց յառաջագաս հեղինակաց նոյն լեզուի. որք արդէն հաւանեալք են ի նախարարութենէ ազգային լուսաւորութեան և պատրաստ ի տպագրութիւն:*

Յետ տպագրութեան գրենոյս մտադիր եմք ընդարձակագոյն խօսել ի վերայ նոցա, որք արդարև են քեզ նորագոյն ընծայաբերութիւն մեզ և որոց զկնի մեր։

## 17. <ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ>

Ազատութիւն առանց գիտութեան միշտ վտանգաւոր է։ Թէպէտև պարզ աչօք հայել անգա՛մ ոչ իշխեմք ընդ ազատութիւնն, զոր ամանք ի տէրութեանց Եւրոպիոյ շնորհեցին ժողովրդեան, և երջանիկ արարին զկեանս նոցա, սակայն և այնպէս ընդհանուր լուսաւորութեան Եւրոպիոյ վայելուչ հիմն էր և է այն ազատութիւն։ Ազգի, որ ծնաւ ի ներքոյ անհամար քաղաքական ծխից, ասմանց, սովորութեանց և այլոց, բնականաբար արժան էր ժամանակաւոր ազատութիւն, զի դեռ մանկունք զխօսելն ո՛չ ուսեալ՝ պարտաւորին ընտրել զվայելուչն։ Քանաւոր ամօք ի դպրոցս տարեալ՝ ապա յարուեստարան յիւրաքանչիւր սաանեն, ո՛ր ընդ ծով, և ո՛ր ընդ ցամաք։ Եւ թէ ազատ օրէնք և ազատ կեանք չիցեն նոցա, այնպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ՝ և մեռանելիք ի բանդի։ Բայց ընդ հակառակն ե՛կ դու յաշխարհ բարբարոսաց, ուր մանկունք ըստ կամի ենթ զարգացեալ՝ խօսին զինչ և կամին, և կեան որպէս և կամին։ Դեռ լեզու ո՛չ բացեալ հայհոյանս պարսաւեն ընդդէմ հօր և մօր, խորխոտակս ծխեն, յամենայն մոլութիւնս անխտիր անառակին, և տե՛ս նոցա զազատութիւն Եւրոպիոյ, և ահա՛ փոխանակ բարեբարելոյ նոցա՝ ամբողջ կորուսի զկեանս նոցա՝ բնականաբար և բարոյականապէս։ Հայեա՛ց ի դարս բարբարոսութեան աշխարհի, և տե՛ս թէ ո՞ր ազէտ և անպիտան ժողովուրդ ո՛չ ունէին կամ ունին զայսպիսի ազատութիւն, ուր ամենայն ոք յայժ մարմնոյ և յաղեղն իւր ապաստան՝ կեայ որպէս և կամի, այլ ո՛չ երբէք կատարելանայ։

Այսպիսի հիմն է զարգիս ազատութիւն շնորհեալ երկրականաց աշխարհիս։ Ո՛չ ասել կամիմք, թէ ի մէջ նոցա չիցեն անհատք արժանիք նաև գերագոյն ազատութեան. են, այլ տարաբախտաբար կարի սակաւ թուով։ Հասարակութիւնն՝ որ միայն ծառայութեամբ կեայ, զուրկ գոլով ի կարևոր հմտութեանց, և պարտեալ յանսահման ազատութեանց իւրոց, ախմարաբար յինքն կորզէ զիրաւունս հաւասարութեան, ո՛չ ի գործելն՝ այլ միայն ի գոռալն ամբարտաւանութեամբ։ Ո՛չ ճգնի ուսանել և իրաւամբ հաւասարել նմին, այլ

միայն կարծէ զինքն օրինօք հաւասարեալ նմին։ Եւ հաւասար ևս կարծէ, որ անհնարին է՝ եթէ անողական լիցի։ Եւ զի՞նչ վնասանք իցեն, եթէ ո՛չ տածումն տգիտութեան, ատեցումն ուսման. ողի ամբարտաւանութեան, ողի անհնազանդութեան, կորուստ ապրանաց, և այլն։ Ուրեմն յայտ է, զի ազատութիւն առանց գիտութեան վտանգաւոր է ժողովրդեան աշխարհիս այսորիկ։

Օրինակի վասն։ Հասարակ ձիադարման ումն ի մօտոյ, ո՛չ միայն առանց իմաց տալոյ եթող զծառայութիւն իւր, այլ և յանդգնեցաւ պահանջել ի տեառնէ իւրմէ զվարձ անցեալ քանի մի աւուրց պաշտօնին, որ օրինօք ո՛չ կարէր պահանջել։ Եւ ի չտալ տեառնն՝ ըսպառնացաւ նմա քարահալած առնել զնա ի կառսն իւրում ի մեծի հրապարակին, ուր երբ և դէպ գտանիցէ զնա։ Բայց դատեալ յատենի՝ ի բանդ արկաւ։

Արդ թուեա՛ դու զվնասանսն, որ զհետ եկին սոսկ յանդգնութեան սորա, և որովհետև սա միայն չէ, հետևեցո՛ և զընդհանուր վնասն ի վերայ ամենայն ժողովրդեան. և տե՛ս, թէ այսօրինակ ազատութիւնք տառապա՞նս ածեն ի վերայ ժողովրդեանն արդեօք, թէ զմխիթարութիւնս։

Որդիք Հեղիայ քահանայապետի, և մանկունք Բաթուղայ այսպիսի ազատութեամբ կորեան. սոյնպէս և Աստուած տայ ազատութիւն կորստականացն ի մարդկանէ։

Այր գիտուն և առաքինի է ճշմարիտ ազատն։ Եւ եթէ ոք պարծի ազատութիւն առնել ժողովրդեան ուրուք՝ պարտի կատարելութեան մտաց, վաստակոց ձեռաց, և մաքրութեան վարուցն միտ դնել։

## 18. <ԱՌ Ի ԳԻՏ ՆՈՐՈՅ ԻՆՉ Ի ՀՆՈՒԹԵԱՆՑ>

Ի ցուցակին ձեռագրոց առաքելոց առ մեզ ի հարազատացն Ջնֆիէճեանց ընթեռնումք. Արհեստ գրչութեան Գէորգ և Արիստակէս վարդապետաց, յորում պարունակին «նշանագիրք իբրև 300»[1]։

Արդ՝ լուսաւորութիւն Եւրոպայ խուզէ իւր զխորշս բրգանցն Եգիպտոսի, և զփլատակս աւերածոց Ասիոյ առ ի գիտ նորոյ ինչ ի հնութեանց։ Իսկ մեք որ հազիւ ուրեմն գիտեմք, թէ ու՞ր արդեօք անկանին Արմաւիր, Գառնի, Շամիրամակերտ, Կամախ, և Խարբերդ, յորսայս անկեալ անհոգանամք. այնինչ Եւրոպացիք, ո՛չ միայն թէ տեսին զնոսա, օրինակեցին զարձանագրութիւնս նոցա,

այլ և անհուն տաժանութեամբ և ծախուք հնարեցին վերծանել, գուցէ ստոյգ, գուցէ ո՛չ ստոյգ։ Այլ դեռ փառաւորին նոքօք, օգտին, շահին և պարծին, այնինչ մեք բերանաբաց ականեմք և հիանամք յարարս նոցա։

Եթէ նախնիք մեր նշանագրով վարէին, և թէ նոյն նշանագրութիւն նախ ի Հայս հնարեցաւ, յայտնի իսկ է ի վկայութենէ սրբազան առաքելոյն Յուդայ։ Յայտնի իսկ է ի գրուածոց Մարիբասայ Կատինայ և Ագանթագեղայ մերոյ, որով Անբաւ զրուցաց մատեանք կացին ի Հայս, և դպիրք նշանագրացն այնքան արագ գրէին, մինչ զամենայն բանս լուսաւորչին հոգւոց մերոց ի կախաղանին ասացեալ՝ անվթար առ մեզ հասուցեալ։

Վերոյ գրեալ քաղաքդ որպէս և ամենայն քար և ժայռ ի Հայաստան, յանդիման կացուցանէ մեզ զնշանագիրս հնութեանց։ Որոց եթէ մասն գոնեա՛ զերծուցեալ ի ժանեաց ժամանակին առ մեզ հասուցեալ իցեն նախնիք, յայտնի է ի քանի մի հատ նշանագրոց ցանելոց յէջս ձեռագիր մատենից մերոց, մանաւանդ թէ և ի վերոյ գրեալ Արուեստէն գրչութեան Գէորգ և Արիստակէս վարդապետաց մերոց։

Մեք զարդիս չունիմք նշանագիրս հասարակաց՝ աւելի քան զերեսուն կամ քառասուն։ Եւ եթէ Երեք հարիւր ի նոցանէ միանգամայն յայտնեցին, ո՞ գիտէ զինչ մեծամեծ հնութեանց ո՛չ բանան մեզ առ յապայն ի հարթել մեզ զճանապարհ վերծանութեան անհամար արձանագրութեանց մերոյ աշխարհի։ Ո՞ գիտէ թէ այն վերծանութիւն ո՛չ իբրև ձեռամբ կալեալ առաջնորդեսցէ զմեզ առ ի գիտ նշանակութեան և բազմաց այլոց, որոց գուցէ և ո՛չ միոյն իսկապէս հմտացան Եւրոպացիք։ Գուցէ Հայաստանի պահեաց Աստուած և զայս մեծագոյն շնորհ, զի ի ցրուել զաւակաց ի մատաղ տիոց հետէ, և ի դառնալ և ճանաչել զհայրենիս, յումմէ՞ արդեօք ակնունիցին գտանել նշխարս նախնեաց՝ եթէ ո՛չ ի կենդանի մօրէն իւրեանց։ Այս կենդանի մայր աշխարհի՝ Հայաստան է:

Երեք հարիւ՞ր նշանագիրք, և զհնութիւն երախտեաց բարերարին Աստուծոյ, զի ապաստան կամ պատուելի հասարակութեան Ազգի մերոյ ի Հնդիկս, որոց առաւել՝ քան թէ այլոց հրաւիրին վաճառել դիւրավճար գնով։ Գովե՛մք զընտրութիւն յարգոյ հարազատացն էնֆիէճեանց, զի ո՞վ հայեցեալ ի ծաղկել գրագիտութեան ի Նոր Ջուղա, էջմիածին, ի Վենետիկ, ի Մոսկով, ի Հնդիկս և յայլ տեղիս շնորհիւ Ջուղայեցւոց՝ և վրէպ նստիցի յուսոյ անտի։ Յայսմ բանի, ո՛չ ոք համարձակեսցի զընդդէմն ասել։



21—739

*Բայց և այնպէս զամննցուն մեր, և իւրաքանչիւրումեք ըղձանրութիւն բարւոք կշռելով՝ տակաւին աղերս արկանեմք առաջի պատուելի Հասարակութեան Ազգի մերոյ, զի ընդ բազմաց և երեք հարիւր Նշանագիրքս այսոքիկ՝ հրատարակեսցին առ ի լոյս մերոյ Ազգի, արդեամբք ազգասիրութեան նոցա։ Էնֆիէճեանք գրեն առ մեզ վաճառել զայն մեզ։ Բայց յայսմ ընդ երկարութիւն ճանապարհին հայելով, և ի վտանգն նախատես՝ ո՛չ կարեմք զայսպիսի մեծ գանձ այսպիսի տկար միջոցաւ՝ որպիսի է երթևեկութիւն ընդ այս և ընդ Հայս՝ ապահովել նոցա կամ մեզ։ Վասնորոյ առաջադիր լինիմք պատուելի Ազգի մերոյ ի փառս Հայրենեաց միայն՝ հանգանակել զո՞ և իցէ գումար դրամոց այնպէս, զի փորագրեսցին նոյն Նշանագիրք ի Տփղիս, ձուլեսցին ի տիպ, տպագրեսցին ի գիրք, և նախ Հայրենեաց բաժանեսցին, ուր իսկ հարկաւոր է, և ապա մեզ բաժին հանցին առ ի լոյս և ի բերկրութիւն։*

*Արարատեան Ընկերութիւն նկատմամբ հեռաւորութեան տեղւոյն, պատուականութեան գիւտին, և մեծութեան ծախուցն՝ եթէ օգնականութիւն գտանիցէ, անշուշտ խոստանայ Ազգի իւրում սովին միջոցաւ ո՛չ միայն զմատեան Նշանագրացն ի լոյս ընծայել, այլ ծաղկեցուցանել նա և զտպարան Հայրենեացն. զի տպագրութիւնք և արուեստք որքան շատ ծաղկին անդ, այնքան և շատ բարձրացուցանեն զփառս մեր յոտարութեան այսմիկ[2]։*

## 19. ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆ

*Եթէ հանգանակութիւն ազգասիրութեան նախնեաց մերոց էր վասն լեզուի և ուսման Անգղիացւոց, թուի մեզ՝ թէ ընդունայն աշխատ եղեն, այն ինչ երկիրս լի է անգղիացի դպրոցօք, ճեմարանօք և այլն։ Բայց եթէ դիտումն ջանք և ազգասիրութիւն նոցա լեալ իցէ զիւրեանց Հայրենիս, Հայ կամ Խայլ լեզուն անարատ պահել, անտարակոյս իրաւունք են մեզ քարոզել թէ առաջին և մեծ հոգ ազգին պարտի լինել ի վերայ ազգին լեզուին, ապա թէ ոչ ընդէ՞ր վատնումն այսքան ազգային հանգանակութեանց՝ երբ այդ իւրաքանչիւր կարէ առաւել ևս դիւրին վարձու զորդեակս իւր ի վարժարանս ազգաց այլոց կրթել քան թէ յիւրն։*

*Եթէ ընդունայն է ազգին լեզու ազգին՝ աւանիկ անհամար դպրոցք ազգաց կան, իսկ եթէ պիտանի, ուրեմն նախ Հայերէնին միտ դնել պարտ է։*

*Ապա թէ ո՛չ հասարակութեան Հայոց շաւիղ բանի նախապատիւ*

ընտրելոյ իւր զանգղեաբան քարոզիչ ոք առաւե՛լ, քան զՀայ քահանայ և զի՞նչ յանժամ, ուրեմն և եկեղեցի և լեզու և ազգ զոհ գնա՞լ պիտին։

Եթէ ի վարժարան Ազգի մերում անգղիացի ուսումն որ յամէն պատահակի քաղաքիս ուսանել կարէ ոք այնքան յարգի ընծայիցի, ապաքէն և լեզու Ազգին ի վերայ ազգային տրոց առաւել ևս իրաւունս ունի, վասն որոյ և նախ ազգային վարժապետաց՝ իբրև ընտանեաց արեան մերոյ և հաւատոյ՝ խնամ տանել պիտի. ապա թէ ոչ՝ ընդ վճռով մնամք Առաքելոյն։

## 20. <ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Յունիս 22 թուով գրէ ի Բթաւիոյ բարեկամ առ բարեկամ՝ յաղագս վարկածոց ինչ բարեկամի միոյ՝ օրինակ զայս։

«Իղձ և նպատակ—ի ըստ այնմ և յորդոր նորա առ Ազգն, զի ամենայն գործ և գրուած նոցա ազգայնոց միայն նուիրեսցին, և զԱզգէն միայն խօսեսցեն, շատ ազգասիրական թուին, կամ յաւէտ հնչին։ Ներեսցէ՛ համարձակութեանս՝ թէ ըստ խոնարհ կարծեաց իմոց ասացից, զի նպատակ ամենայն գործոյ պարտի նայիլ ի վախճանն՝ եթէ որով ծագեսցին արդիւնքն ակնկալեալ կամ ո՞չ, և արդեօ՞ք այլ իմն միջոցօք չիցէ՞ հնար զկարևորագոյն և զճոխագոյն հանել զարդիւնս, որ եթէ այնպէս, ուրեմն թողեալ զսովորականն՝ թերևս պատուական ըստ երևութին, զայնու մատուսցին զբուռն հարկանել՝ զորոյ հաստատ են առատ զարգասանաց։

Այժմ ե՛կ նկատեսցուք, բարեկա՛մ, թէ զի՞նչ ինչ յԱզգէն յարգի աղքատ և յամենայնի կարօտաւոր հանդամանս նորա, մարթ իցէ ի կիր արկանել իբրև զմիջոց կամ գործի և ևս պայծառացուցման նորա։ Եթէ Ազգ մեր ո՛չ կարօտիւր փոխ առնուլ յօտարաց՝ ասեմ, ի լուսաւորեալ և սքանչելի ազանցն արևմտականաց առ ի զկիրսն հասուցանել աստիճանաւ ի շարս նոցա, այն ինչ նոյն արևմտականք իսկ կարօտ համարեն զինքեանս միմեանց սատարութեան, և փոխանակի օրինակեն միմեանց. ուրեմն ամենապայծառ և ամենաբարեբախտ գրիւր յազինս մարդկան Ազգ Արամեանս, և ամենեքեան գուն գործէին զմեզ օրինակել։ Եթէ Անգղիացիք և Գաղղիացիք՝ այդ երկու պայծառագոյն ազգք ի մէջ արդի Եւրոպականաց, ո՛չ էին խոնարհեալ . մինչ ի մանկութեան գրականութեան և արհեստից իւրեանց՝ մուրանալ ի գրուածս Հռովմայեցւոց և Յունաց, այլ շատացեալ իւրայնովք կամ «ամփոփեալ» զամենայն գիտութիւնս և

գործս իւրեանց յազգ և յազգայինս՝ ո՛չ հաւանէին աւուրս գերազանցել իսկ քան զնոսա՝ քան զդաստիարակիչս իւրեանց, և յամենայն ծագս աշխարհի հռչակիլ իբրև մարդիկ գերմարդկայինք։ Ո՛չ, ո՛չ. թէպէտև բարի իցեն դիտմունք այդպիսի քարոզչաց, այլ ի հաւանեցուցանել զիս յարդիւնսն ելից, ապստամբին միտքս՝ որպէս և բազմաց ումեմն։

Մեք չեմք այլադենք, փա՛ռք Աստուծոյ, ընդ լուսաւորեալ ազգաց և այլադենք անգամ երևին զարդիս ի ջանս չունելոյ զհետ նոցա, —յորմէ ձախողապէս տիրեալ նախապաշարմանց զմտօք մերովք՝ խոշընդոտ լինիւր ըստ ժանտ բնութեան իւրում միշտ՝ յընթացս ո՛ և իցէ յառաջադիմութեան։ Քրիստոնեայ եմք ըստ նոցա, և չիցէ՞ մեզ անվայել՝ զլաւն ընտրել և զբարին յեղբարանց մերոց, յօգուտ անձանց։ Թերևս մեք բախտաւորագոյն համարիցիմք, այն ինչ ի ձեռս մեր է յաջողակութիւն իբրև հետևողք կամ օրինակողք՝ ընտրողութեամբ վարիլ, այն է՝ զբարի և վայելուչսն նոցա ընդունելով՝ զխոտանն արհամարհել խորշել ի մէնջ։ Այլ ո՞ր քաղաքավարութիւն, ո՞ր բարք, ո՞ր օրէնք, ո՞ր գրականութիւն, ո՞ր արհեստ ըստ բուն և բարոյական զօրութեան բառիցդ,—քան զպատկանեալսն ի վեր յիշատակեալ գերահռչակ երկուց ազանցդ՝ կարէ՞ Ազգ մեր առնուլ ինքեան գաղափար, որով մա՛րթ իցէ նմա յուսալ պայծառանալոյ, այո՛, և երջանկանալոյ, և գուցէ ևս երբեմն շարժելոյ յանձանց զայս լուծ գերութեան, փոխելոյ զայս վիճակ նուաստութեան, եթէ նախանձախնդիր և եռանդուն ջանիւք մատուցի ի գործածութիւն այնոցիկ։ Զայս ասելով, ո՛չ կամիմ՝ եթէ պարտիմք լքանել իսպառ զազգայինսն, և միանգամայն օտարանմանիլ, այլ ընդ հակառակն՝ որ ինչ ընտիրն է ի մեզ և սեփհական առաքինութիւն Ազգի՝ թո՛ղ զառաջին տեղի ունիցին ի սիրտս մեր և գործ, և զնոցունց խօսել և ճառել միշտ արժա՛ն է, ոչ միայն վասն հասարակաց մեր ծանօթութեան, այլ և առ ի արծարծել ի մեզ զսէր և զեռանդն ազգասիրութեան և հայրենասիրութեան։ Սակայն առ ի բաւուք ճանաչել ըզբարիսն և զընտիրսն օտարայնոց և որդեգրել զնոսա, մանաւանդ և հաւասարիլ (ջանիւք և համբերութեամբ), նոցին ուսմանց և դիտութեանց, որոց՝ չիք և ի մէջ ոք՝ հաւատամ, ժխտիչ գերազանցութեան և հարազատութեան։ Այլ որո՞վ եղանակաւ մարթ է մեզ կատարել քան թարգմանութեամբ պատուական մատենից նոցա՝ թէ արհեստականաց, թէ քաղաքականաց կամ պատմականաց, և թէ՝ մանաւանդ որում շատ կարօտիմք—բանաստեղծականաց (բայց կրկին ասեմ ընտրողութեամբ). յորոց երիւք առաջնեօքն զօգուտ ընդհան-

րական քաղել՝ յաւէտ առ առնուն և պայծառութիւն, և վերջնումն զշահ անհատական յաւէտ առ բարոյականութիւն և երջանկութիւն։ Եւ ըստ որում, մեք այսքան զուրկ և թափուր գտանիմք ի քերթողականէն՝ որ նկարէ զաշխարհ և զմարդիկ, և որոց զսովորութիւն, բարս և բնաւորութիւնս ուրոյն, զչարսն ի նոցանէ երևեցուցանելով իբրև զհրէշս այլանդակ՝ զզուելի, զարհուրելի և խորշելի, իսկ ըզբարիսն՝ իբրև զհրեշտակ գեղեցիկ՝ ցանկալի, նախանձելի և հրապուրիչ. որոյ վասն կարի հարկաւոր է մեզ նախ փոխ առնուլ առ ժամանակ ինչ յորոց ունինն, առ ի դաստիարակիչ լինել մեզ ի նոյն արհեստ, և եկեսցէ ապա ժամանակ յոր յաջողութեամբ բարձրելոյն՝ յետ վճարեսցուք տոկոսիւք, իբրև օտարազինք արժան վարկցեն պարապոյ, և զմերսն յեղուլ ի լեզու իւրեանց։

Ասիցե՞ս թէ գիտունքն ի մէնջ, յորոց կախի յառաջադիմութիւն ամենայն՝ քաջ հմուտ գոլով օտարազանցդ լեզուաց, ընդէ՞ր ոչ ուսցին ի բուն քերթուածոց նոցա՝ զաշխատանս թարգմանութեան՝ նուիրել հեղինակութեան։ Այդ այժմ ըստ կարճ տեսութեան իմոյ (յորում կարծիս գուցէ և դու միաբան գտցիս), չէ՛ կարևոր ընդ ամենայն գիտութեամբ և յառաջադիմութեամբ իւրեանց ցայս աստիճան (և այդ՝ բաղդատութեամբ չէ՛ նուազ կամ անշուք)։ Չկարծեմ ներկայ հասեալ իցէ Ազգ մեր ի չափ բաւականին ընդունակութեան վասն այդմիկ։ Չերկբայիմ թէ ոգիք յամենայն ազգ և ազինս գտանին, քանզի բնութիւն՝ ըստ համեմատ հանգամանաց ազգի և կլիմայի բաւականին առատաբաշխ է ի ձիրս իւր առ մարդիկ՝ յամենայն ուրեք. սակայն միայն այն չէ՛, զի հող և գետին լիցին բերրի, այլ մշակութեան պէտք են։ Զի յո՞ր ճեմարանի, ո՞ր լուցկեօք մատենից կարէին վառել և վարժել զոգիս իւրեանց՝ Բայրն ումն կամ այլ Վալտր Սկատ ումն՝ ի մերս աշխարհի, այո՛, և յԱսիա ողջոյն։ Սմին իրի՝ թուի ինձ եթէ յաւէտ առ արդիւնս քան թէ յանուն նկատեսցեն՝ թարգմանութիւնք յարդի մանկական մակացութեան մերոյ, պարտի ի վեր քան զամենայն քաջալերիլ և գործել։ Վտանգաւոր է ըստ իմ խոնարհ դատմանց՝ հեղինակութիւն, որ չև իցէ ի կատարեալ աստիճանի, զի պտուղք քաղեալ անտի՝ հետևապէս տհաս եղիցին, և չկարծե՞ս ամենայն պտուղ տհաս վնասելոց և զճաշակողն։ Տե՛ս դու ի գիտնականսն մեր որ ի Վէնէտիկ, հազիւ տակաւին համարձակեցան ի հեղինակութիւն։ Աշխատանք նոցա ցարդ գըլխաւորապէս թարգմանութիւն են, և իրաւ խոհականք են գիտունք նոցա. բայց և յուսամ ո՛չ անյայտ առ յապայն հեղինակութեան։ Այլ ըստ որում կոչումն նոցա ո՛չ թոյլ տացէ յաշխարհային երբէք

մատչիլ ի ստեղծաբանութիւն (և այս, հաւատամ, յաւէտ ծագի ի նախապաշարեալ կրօնէ պապականին), ուստի չպարտիմք յայդ ճանապարհ ականել վասն զբօսացուցիչ և ուսումնական քերթուածոց։ Այլ եթէ կամիմք զայդ կարևոր և պատուական գիտութիւն— զայդ ճրագ ամենայն ազնուութեանց մարդկային զգացութեանց և ոգւոց՝ բուսուցանել և ի մէջ մեր, նախ (ներեսցես նմանութեան) թո՛ղ խոնարհիցիմք ի մէմունութիւն. ապա բարձրասցուք ի Մարդութիւն: Սովին վարուք՝ թէև չերևեսցին գործք մեր ի սկզբան գլխովին ի ձորձս ազգայնոց, այլ մի՞թէ մեղք իցեն քեզ ծառայել օտարին, ուստի ակնունիս բազում արդեանց. որով կարես երջանիկ պահել զընտանիս քո, քան ժլատի ուրուք թէպէտև համազգի։ Լաւ՛ է սիրել զԱզգ քան զազգային։

Նշմարեմք զսիրելին՝ ընդ հեռաւոր զլուխ ուղւոյն դէպ ի նոյն նպատակ ազգային յառաջադիմութեան նկրտիլ. և յոյս մեր լի է անմահութեամբ թէ իրար հանդիպեսցուք ի վերջակէտ նպատակին։

Ջանազանութիւն միայն է, զի մեք ընտրեցաք մեզ զուղին հարթ՝ ախորժ զբօսանօք ի ծանօթից յանծանօթս վերանալ, իսկ նա՝ յանծանօթից ի ծանօթս իջանել։ Մեզ յօժարութիւն եղև օրինակօք քաջի գործոց նախահարց մերոց ընդաբոյս ազնուութիւն իմն սերմանել ի միտս ազգին, և ապա թողուլ նմա ինքնին յորդորիլ ի հաւասարութիւն անդր, եթէ չգերազանցիցէ ևս, քան հրաշալեօք օտարաց շլացուցանել զաչս մերոցն։ Զոր ինչ Բայրն ոմն և սըր Վալտր Սկատ ոմն կարեն ազդել Հայոց, նոյնչափ գոնէ՝ կարեն ազդել Սահակ Պարթև և Մեսրովբ։ Թէպէտև բարին յամենայն ուրեք համբուրելի համարիմք, զբարին առնելն է գործ։ Արա՛, թէ սմա՝ և թէ նմա հետևելով։ Մինչև Բայրն և Սկատ ոչ հայանայցեն՝ Հայոց օրինակ ո՛չ կարեն լինել. մեծ՝ որքան և իցեն. ուրեմն զի՞նչ ստգիտ, եթէ օրինակ տացուք նոցա ո՛չ միայն զարս ծանօթս՝ այլ նաև զՀարս գծածս ազգին՝ ասէ հին աւուրց բարեկամն։

## 21. ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Կամելով զուսումն Քերականութեան մուծանել ի մէջ օրիորդաց Ազգիս և տեսանելով, որ արդէն իսկ հրատարակեալ Քերականութիւնքն ծանր են նոցա՝ յօրինեցի զնոր Քերականութիւն յատուկ վասն օրիորդաց։ Եթէ օգնութիւն գտից՝ տպագրեցից զայն, և թերթ առ թերթ կազմելով՝ սկսայց ուսուցանել։ Ակնունիմ, զի մինչև ցաւարտ տպագրութեանն՝ զամբողջ գիտութիւն նորա ի միտս և զօրինակ ի ձեռս իւրեանց ունելոց և դստերք ազգիս ի Կալկաթա։

Գիտեմ ու հաստատեմ, զի Քերականութիւն շինելն՝ հեշտ բան չէ, և ո՛չ իսկ սովին հարստանալ յուսամ. եթէ իւրաքանչիւր գիրք շահէր ինձ արտաքոյ տպագրութեան միայն ռուբլիս հարիւր, այժմ մեծ փողոյ տէր պիտի լինէի, որ չեմ։ Վասնորոյ երբ խնդիր այսպիսի լինի՝ պարտ չէ համարել, թէ անձնական շահուց է, այլ ընդհակառակն է ի մեծ փրկութիւն ժամանակի աշակերտաց և ի խնայութիւն քսակաց ծնողաց է։ Եթէ գտից օժանդակութիւն, որպէս միշտ գտեալ և շնորհակալ եմ, ուրեմն սկսանի տպագրութիւնն[1]։

պատուելի ազգի իմոյ խոնարհ ծառայ

Մ. Դ. Թ.

## 22. <ԱՓՍՈՍ ՔՈ ԽԵՂՃ ԱԶԳԱՍԷՐ>

Պայման վերատեսչական դիտողութեանց մերոց՝ մերձենայ, որ ի մասին ուղղելոյ զԱզգասէր, կամ ի բուն շաբաթական ընթացս հրատարակութեան իւրոյ, և կամ իսպառ խափանելոյ[1]։ Բայց ո՛ր և իցէ եղանակաւ դեռ ո՛չ իրանայ յոյս մեր ի բաւականութիւն ծախուցն։ Վասնորոյ այս մի անգամ ևս իմաց առնեմք պատուելի հասարակութեան մերոյ, զի եթէ պարծանք իցէ շարունակութիւն նորա զերահամբաւ խմբի մերում, ուրեմն ազգաբար ի թիկունս հասանիցեն. իսկ թէ ո՛չ՝ ուրեմն խափանեսցի գործն, յետ այսքան ծաղաց ի ծագս աշխարհի տարածելոյ զհամբաւ լաւաց՝ և զպարսաւ վատա՛ցն։

Արարատեան Ընկերութիւն բաղկացեալ ի վեց ոգւոց միայն, սկսաւ ի 16 Յուլիսի 1845 ամի, և առանց ծանրանալոյ ումեք ի պատուելի հասարակութեան Ազգիս՝ լոկ հանգանակութեամբ իւրով ձեռնտուութեամբ բարեկամաց՝ կառոյց զտպարան Հայ և Անգղիարէն, հաստատեաց զգրադարան, և հրատարակեաց զԱզգասէր իւր՝ յընթացս ամսոյ միո՜յ։ Բախեաց լրագիրն զդրունս ողորմածաց յօգնութիւն իւր, և խրախոյս եբարձ ընդ խրոխտ գրոհումն նոցա ի սկզբան անդ՝ որպէս սովորութիւն է Ազգիս։

Բայց աւա՜ղ. քանի՜ ոմանք եղեն՝ որ յառաջին ճակատուն անդ դժուարութեանց՝ թիկունս դարձուցին նմա, և քանի՛ք ոմանք ասե՛մք, որ բովանդակ սպառազինութեամբք իւրեանց ծակամուտ թաքեան յահէ ամսական երկու՛ց ռուբլեաց։ Եղեն, այո՛, որ բարեբար մտօք մարգարէութիւնս մարգարէացան ի վերայ՝ և շրթամբք իւրեանց շնորհ արարին ասել. «Այդ բան ի գլուխ ո՛չ երթայ»։— «Ա՜յդ՝ բանի բաւական ոք չէ»։—«Զո՛ւր է փող յայդպիսիս ծախել»

և այլն։ Բայց և այնպէս՝ զամս երիս անդադար շարունակեաց Արարատեան Ընկերութիւն զարուեստն աստուածային զտպարան իւր, մեծամեծ ծախիւք փարթամացոյց զգրադարան իւր, և յընդհանուրս սփռեաց զԱզգասէր, թէպէտև հազիւ կարաց գտանել ստորագիրս 66 յաշխարհ ամենայն, որոց մուտք, եթէ բովանդակօրէն ևս ի ձեռս եկեալ՝ բաւոնք բաւական լինէին վարձու տան միոյ։ Վերատեսուչ և գործավարք նորա, տպարան ի պարագայք նորա, գրադարան և ամենայն մատեանք նորա՝ հոգացան մինչ ցարդ ի հայթայթանաց անտի ընկերութեանն, որ փոխանակ վհատելոյ՝ յաւել զաշխատութիւն իւր, և մաքուր տպագրութեամբք իւրովք ելից զհամօրէն Հնդկաստան։ Ո՛ւր վաճառէր մի Սաղմոս ութն ռուփեաց՝ նա կամ ձրի շնորհեաց զայն, և կամ գնով միոյ ռուփո՛յ միայն։ Ընդարձակեա՛ց, տարածեաց զարդար վաստակս իւր յեզերց Գանգիսի ցեզերս Վոլգայ և Դոն գետոց։ Անձրև գրոց տեղաց ի համօրէն Պարսկաստան, և զուխս հատորոց խաղացոյց յԵգիպտոսէ մինչ յԵրուսաղէմ, և ի Պոլսոյ ցՏփղիս։ Ջհովիւս Ազգին յարոյց յօրհնութիւն Ազգին, և զսրբութիւնս նորա՝ ի սրբասացութիւն սրբոյն սրբութեանց։ Հայրապատիւ եղբայրն Արշալուսոյ Արարատեան քա՛ջ ճանաչէ զյարգ նորա, և վարդամատն արշալուսէ զայն ի տեսութիւն համօրէն Ազգիս[2]։ Վէնէտիկ վսեմանայ ի վկայս աշխատանաց այսօրիկ, և Լոնդոն ընդ Վիեննայ հրաշանայ Հայ դպրութեամբ փառաւոր։ Եւ ո՞յր իցեն պարծանքս այսօրիկ, պատուելի՛ Ազգ, կամ որո՞յ արդեօք, եթէ ո՛չ՝ ձեր՝ որդւոց մեծահամբաւն Ջուղայ, կամ ըստ քերթողին ասել. «Հնդկային ջերմ ազգասիրացդ», ձե՛ր։

Բայց և այնպէս ճշմարիտ ևս լինէին այս պարծանք՝ եթէ ի շարունակ ընթացս երից ամաց՝ գէ՛թ մի կամ երկուք յընկերութիւն մտեալ էին։ Գիտէ տէր, զի կաղաղ ապստամբից ո՛չ կացուցաք մեզ, և ո՛չ կացուրդ կաքաւողաց, որպէս զի ամաչիցին համազգիք մեր կարեկից լինել։ Լինէին՝ եթէ նման Ռանգունայ կամ Բթաւիոյ և միւս քաղաքանի «ինքնայօժար» դիմէին ի կարիս մեր։ Լինէին՝ թէ հեռաւոր կամ մերձաւոր իշխանք մեր զաջ շնորհաց կարկառէին։ Լինէին՝ եթէ գոնեայ հաւասար ընթանայր բաժանորդութիւնն, բայց տուն կայ՝ որ վեց անգամ աւելի տայ, և տուն կայ՝ որ ամենևին չտայ, թէպէտև կարողութեամբն անպակաս։ Եւ տարաբախտապէս առաջին խօսողքն ի վերջնոց աստի են, քան թէ յառաջնոց՝ և բարեբարաց։

Ո՛չ բնաւ յառնէր աղաղակ ի մէնջ՝ եթէ մեծամեծ տնանկութիւնք այլազգի վաճառատանց ի Կալկաթա, չէին բարձեալ ի մէնջ զգործ

շահեկան։ Եթէ գոնեայ և մեր Ազգի վաճառատունք չէին ընտրեալ զԲանգալցի և զԱնգղիացին քան զմեզ։

Իսկ արդ՝ ստաքանց յընկերաց եղեալ որպէս զարմաւենիս, և պտղակրոյս յընտանեաց՝ որպէս ձիթենիս, առ անոխակալն և առ քեզ՝ Ա՛զգ, ապաստան դիմեմք. և եթէ դու չշարժիցիս դեռ ի գթութիւն, ուրեմն Աստուած սիրտ մարմնեղէ՛ն տայ քեզ։

Մի՛ ասեր, թէ խամ և անզգամ ոմանք իցեմք, որ զբան ո՛չ հասկանամք.—խո՛ր զգամք յոգիս մեր զանտանելի ծանրութիւն ծախուց և տրոց քոց՝ համեմատեալ թուոց և գործո՛ցդ, որք զրեթէ զարմանալիք են, մանաւանդ յանյաջող և ի ձախող տարւոջ այսմիկ։ Բայց և այնպէս՝ է՛կ և դու զաչ ի վերայ սրտից դի՛ր, և հոգւո՛վ սաս՛. թէ զի՞նչ արդեօք իցեն դուզնաքեայ պիտոյք Ազգասիրիս՝ առ անհուն և անհամար ծախիւք, կամ առ հարուստ համբաւովք քովք։

Լիցի՛ տարփս, որպէս դու գիտես, Ա՛զգ. բայց մեք ապաստան դիմեմք առ քեզ՝ որպէս մեք գիտեմք։—Երեք հազար հատոր զանազան տեսակ գրեանս առաջի մատուցանեմք քո, և միայն զերիս հազար ռուփիս միատեսակ պահանջեմք։ Ո՛չ ոք կարէ ասել, թէ երբէք վաճառեցան սոյն գրեանք այսքան դիւրագին. բայց մեք ի վերայ յաւելումք և զաշխատութիւն վիճակարկութեանցն, զի մի՛ ուրուք քան զշափն ծանրասցուք։ Եթէ և քո շնորհք շարժեսցին ազգաբար ստորագիր վիճակացն լինել, ուրեմն մեր տպարանի տարեկան թղթոյ ծախքն գոյանայ, և մեք ուրախ և ցնծում շարունակեսցուք Ազգասէր ի փառս քո և ի պատիւ։ Իսկ թէ ո՛չ՝ ուրեմն ափսո՜ս քո խեղճ Ազգասէր:

Վեց հազար Արարատեան Ընկերութիւն ո՛չ արժէ անմահական հոգւոյ միում, բայց և այնպէս՝ եթէ վեց հազար ոգիս ունէր Ազգասէր՝ այսպէս որ ինչ և կաս, Ա՛զգ, տակաւին ո՛չ խնայէր մատուցանել քեզ և պատուոյ քում։ Կեցցե՜ս յաւիտեան.—բայց ծանի՛ր զքո ճշմարիտ բարին։

## 23. <ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ>

Հինգերորդ թիւ Ազգասիրիս Արարատեան յուշ եբեր պատուելի Ազգիս զանհրաժեշտ կարեւորութենէ կատարեալ ուսումնարանի ազատական արուեստից, զամենադիւրին միջոցացն՝ որովք հնար էր յառաջ տանել զայն։ Որ էր «նախ՝ չզբաղեցուցանել զուշադրութիւն Ազգիս՝ ի պէսպէս կարիս. այլ ամփոփել միայն ի գիտն և ի կատարելագործութիւն արհեստիցն»,—զոր այժմ պատիւ անձին հա-

*մարի այսօրինակ բացատրել։ Կարևոր է Ազգին՝ ուր և իցէ, ցուցանել զազգային պայծառութիւնս ի կերակուր և ի հանդերձս իւր (եթէ ունիցիմք ինչ յատուկ մեր, և յերկուցն ևս). բայց առաւել կարևոր է նմա դիտութիւն հնարից և պարագայից նոցա։ Կարևոր է նմա ազգային վայելչութիւն ի կենցաղավար ընկերութիւնս, որպիսիք են հացկերոյթք, պարք, խաղք և որ սոցին նմանք. բայց առաւել կարևոր է տեղեկութիւն ներքին և արտաքին հանգամանաց իւրաքանչիւրոցն։ Ներքին անուանէ զատաշուն տապարուն հաճոյականութիւնս վարուց՝ կցորդեալ ընդ համեստութեան և ճշմարտութեան, իսկ արտաքին անուանէ՝ զգիտութիւն կազմածոյ արտաքին գործեաց վայելչութեանց այնոցիկ։ Որով ո՛չ կամիմ ասել, թէ որ ի սեղանին ճաշակէ՝ պարտի գոլ հմուտ խահարար, և կամ որ դահլճին պարէ քաջ նուագածու (որք եթէ իցեն ևս՝ ո՛չ ինչ իւիք վնասին), այլ զայն միայն՝ թէ գոնէ տեսականապէս բաւականութիւն ունիցին հասկանալոյ՝ յարդարելոյ՝ և ի կարգի դնելոյ զծռութիւնս նոցա։ Կարևորք են Ազգին և կրօնական պաշտամունք, շինուածք, ուխտք, և որք համեմատք սոցին. սակայն և այնպէս նախ առաջին պիտոյ է նոցա նոյն ինքն կրօն, վասնզի եթէ ոք չունիցի զկատարեալ ուսումն կրօնի, նսեմացուցանէ զամենայն կրօնական մեծարարութիւնս իւր անկրօն տգիտութեամբն։ Եւ ըստ այսմ, նախ առաջին պարտականութիւն մարդոյ է՛* ուսումն. *առանց որոյ ո՛չ ցորեանն հաց դառնայ, և ո՛չ թուղթն՝ ապրշում։ Թէ երկրաւոր մտօք առնուցուս, և թէ երկնաւոր։ Եթէ Հայաստան աշխարհ, մանաւանդ՝ ի վերջին տկարութեան թւրում առ Բագրատունի։ Թագաւորօք մերովք, փոխանակ յաճախելոյ զտաճարանի պաշտամանցն՝ կանգնէր գոնէ զմի կամ զերկու ուսումնարանս կրօնին, և արհեստից՝ զերկոսին ևս միանգամայն պայծառացուցանէր՝ օգտակար և տևողական վախճանօք՝ քան զոր եկեղեցիքն արարին։ Նոր Ջուղա՝ եթէ ընդ քսան և չորս եկեղեցեաց հաստատ պահէր և զմի այսպիսի ուսումնարան, ո՛չ ժողովուրդքն ցրուէին, և ո՛չ կիսով չափ եկեղեցեացն ի հանգիստ իջանէին։ Պինանկ կղզին՝ այժմ երկու և կէս տուն բնակչօք, և ո՛չ երբէք աւելի քան զհնգօք՝ ունի զհոյակապ եկեղեցի։ Ունիցի՛.—չունիցի ո՛չ ասէ նմին* Ազգասէր Արարատեան. *այլ միայն ցաւի՛, զի բոլոր Արևելք զմի կատարեալ ուսումնարան արուեստից չունի, որով և՛ շինիցին, և՛ պահիցին ազգային պայծառութիւնք։ Ուրեմն եթէ ուշադրութիւն Ազգիս առ ժամանակ մի պահեալ յայսպիսեաց՝ ամփոփիցի ի գիտ և ի կատարելութիւն արուեստից՝ անտարակոյս յառնէ Ազգն, և չէն մնան եկեղեցիք։*

Բայց խնդրի, թէ ու՞ր արդեօք պատշաճ իցէ հիմնարկութիւն այսպիսի իմն ուսումնարանի։

Պատասխանի։—Ազատական արուեստք որ ինչ և լինիցին, յետ ազգային ձեռնտուութեամբ կանգնելոյն, վասն ընդհանուր Ազգին պարտին լինել և փորձովք կատարելագործիլ։

Ի մէջ համօրէն Հնդկաստանեայց՝ ուր բնակէ բան ամենայն լուսաւորութեամբ՝ չիք տեղի ինչ՝ զոր անուանեալ կարէ ոք վասն այսպիսի մեծածախ հաստատութեան, քան զԿալկաթա. ըստ որում տէրութիւնն խաղաղ, երկիրն՝ արգաւանդ, ծովային հաղորդակցութիւնքն՝ արագ, առ և տուրն ծաղկեալ, և ամենայն իրօք գերազանց քան զայլ ամենայն տէրութիւնս. մանաւանդ՝ զՊարսկաստանին, ուր ո՛չ կարգ կայ, ո՛չ կանոն։ Թէ արուեստք են վասն աշակերտաց՝ թէպէտև Կալկաթա համեմատեալ Պարսից և բուն մերոց Հայրենեաց՝ գերագոյն իցէ ամենայն իրօք, սակայն պակասաւոր է յոյժ ի մասին աշակերտաց, որ կախի զբազմութենէ Ազգիս։ Բոլոր Կալկաթա՝ որ է հայաշատն ի համօրէն Հնդկաստան, հազիւ ունի տունս յիսուն, յորոց ամենեքին միահաւասար արտօնութիւն չունին այսպիսի յառաջադիմութեանց, և դիցուք թէ զայլ ամենայն հայաբնակ քաղաքս Հնդկաստանի ի մի խմբեալ գտանիցէ ոք յիսուն աշակերտս. դեռ ևս կարի ամփոփ լինի այն համեմատելով ընդհանրութեան ծախուցն։ Ուրեմն յայտ է թէ հաստատել ի Հնդկաստան այսպիսի ինչ՝ զուր ջանք և անօգուտ վաստակ և Ազգին։ Զայս ասեմք նախադէպ լինելով առարկութեանցն՝ որք զհետ գան, թէ և ի Պարսից և յօսմանեան տէրութեանց մարթ է գալ ուսանողաց։ Դիցուք թէ եկեսցեն ևս, նախ՝ որ չունիմք աստ զթիզ մի գետնի, զոր մեր ասել կարեմք. չունիմք զհոսանս ջուրց ի շարժումն. և չունիմք զհուր բաւական ի շոգի. և եթէ զնով արասցուք զամենայն՝ երկու Հայաստան ծախելով հազիւ զմի այսպիսի դպրոց պահպանել կարեմք։ Երկրորդ՝ եղանակն մշտամառնային, խոնաւ, մեղկ և թոյլ՝ ո՛չ բաւէ Հայ մտաց աշխատութեան. և ո՛չ իսկ Անգղիացւոցն՝ որք յերկերիւր ամաց հետէ չունին ի Հնդկաստան զդպրոց մի այսպիսի, և խոհեմապէս լնուն զայս կարօտութիւն ի հայրենեաց իւրեանց։

Երկրորդ՝ և մեծագոյն քան զամենայն՝ ամենաշռայլ կեցութիւն երկրիս՝ մեծապէս խոչընդակն լինի յառաջադիմութեան նորին։ Օրինակի վասն, հարիւր ռուփի առ ամիսն գտանողն աստ՝ այնքան աղքատ և ապիկար է, մինչ եթէ կարող ընտանիք ո՛չ օգնիցեն սովամահ կորնչի։ Հարիւր տեսլոյս ռուփի գտանողն ի Նոր Ջուղա կամ Հայաստան՝ ո՛չ միայն ինքնին ի ջորի և ձի հեծեալ պերճանայ,

այլ և զբազումս ի յարևլոց և ի ծառայից իւրոց նոքօք փառաւորէ, և ինքն ի նոցանէ փառաւորի։ Աշակերտք որ հազիւ ընկալեալ լինի աստ ի հասարակ դպրոցս՝ երեսուն ռուփի ամսականաւ, և այն՝ վասն ուսման, սննդեան և բնակութեան միայն, զմիւս պիտոյս իւր յայլուստ հոգալով։ Ամսոյ երեսուն ռուփին անդ՝ ընդունի և պահէ յառաջին կարգի՝ զվեց աշակերտս, լի ամենայն բարութեամբ։ Ասել կամի, թէ մեծ թշնամի երջանկութեան է շռայլութիւնն։

Անկարգութիւն տէրութեան ո՛չ կարէ չար ինչ առնել դպրոցին, ըստ որում ինքնին շատ կարօտի արուեստիցն ծագելոց ի նմանէ՝ քան կեցութիւն ամենայն ուսանողաց միանգամայն առեալ։ Խուժադուժ վայրագութիւն ժողովրդոցն ևս վնաս առնել ո՛չ կարէ հաստատութեանն։ Ա՛ռ, տա՛ր, մատո՛ Մամասանցւոյն, Լօռին, կամ Բախտիարւոյն զամենայն մաթէմաթէգական գործիս քո, զգունտս երկրի և երկնից, զբուլ և զլուծարանս քիմէական արուեստին, և զոր ինչ մեծ և պատուական համարիս. և ահա՛ ի բաց ընկենու զայն իբրև զաւելորդս ինչ, և զանպիտանիս։ Բայց ի վերայ այսր ամենայնի՝ թո՛ղ միայն խուժադուժքն այնոքիկ տեսանիցեն զօգուտ ինչ յայսպիսի հաստատութենէ. այսինքն՝ բնակողն յանջրդիս՝ թո՛ղ տեսցէ զանդնդահան ջուրն, ջերմեալն ի տապոյ՝ զբժշկութիւն, դժուարածինն՝ զդիւրիչ մանկաբարձութիւն, բեռնաբարձն՝ զշոգուղի և զգետագնաց մեքենայս՝ այլովքն հանդերձ, և յայնժամ տե՛ս թէ զի՛արդ իբրև զհրաշարան և՛ տեսանէ զայն, և՛ օգնական կայ։ Իսկ վասն օդոց մաքրութեան, բուսոց և պտղոց առողջարար զօրութեան, եղանակացն փոփոխութեան, որով և զարմանալի ուշիմութեան աշակերտելեացն չիք բնա՛ւ համեմատութիւն ինչ։—Նա, որ աւելի քան զինն դպրոցաց հիմն եդ, կամ զդաստիարակութիւն յանձն էառ ի տեղիս տեղիս, ո՛չ ետես ուրեք մանկունս ուշիմագոյն քան զՆոր Ջուղայն, զԱրարատայն, զԴավրիժուն, և հուսկ ապա՝ զԿոստանդնուպօլսին։ Ուսումնականութիւնն ի Հնդիկս անտանելի բեռն է, ուստի և անքաջալերելի ի ծնողաց և վհատելի ի վարժապետաց։ Ուրեմն յայտ է՝ թէ յորժամ համազգային հանգանակութեամբ հաստատի ուսումնարանն՝ պարտի յայնմ տեղւոջ լինել, ուր ուսանողք բազումք, փորձելիք ուսմանցն՝ պատրաստք, մշակութիւնքն դիւրահասք, ծախքն փոքր, և շահքն շատք լինիցին, ապա թէ ո՛չ՝ ընդունայն յորդոր եղև Ազգասէր Արարատեան. և ընդունայն ընդունի զայն Ազգն։ Վերջին եզրակացութիւն նորա է, զի այսպիսի հաստատութիւն կամ ի Նոր Ջուղա և կամ ի Հայս հաստատեսցի, քանզի՝ ուսումն արհեստից փորձոց է կարօտ, և փորձքն միջոցացն՝ զօրս

*աստ չունիմք։ Զգանձուցն ուրքանութիւն՝ մասամբ մարթ է պահել աստ ի վերայ տէրութեան մուրհակաց տեղւոյս և մասամբ՝ ի գան-ձարանի կայսերութեան Ռուսաց, և զվաշխսն միայն վարել ի պէտս ասացեալ հաստատութեան՝ ո՛ւր և իցէ։*

*Միայն գաղափար ստանալոյ ուսումնարանին զծախս իւր ի տէրութեանց անտի՝ բաւական պաշտպանութիւն լինի իւր ընդդէմ ամենայն անկարգութեանց աշխարհին, ո՞ր մնայ թէ՝ և վարժա-պետք լեզուաց և արուեստից, գալով յիւրաքանչիւր յեւրոպէական տէրութեանց, և բնակելով անդր տամբք իւրեանց, պաշտպանեալք՝ և պաշտպան կան հաստատութեանն։ Թագաւորք իշխեն յուլից և ծուլից անպիտանեաց, իսկ արհեստաւորքն և՛ կայսերաց հզօրաց։ Ի բոլոր Պարսկաստան չիք չափաբեր կամ հանքաբան որ։ Թո՛ղ բազմացին այնպիսիք, և յայնժամ տեսցուք։*

*Յիշատակութիւն մեր ի մասին թուոյ Հայ բնակչաց՝ յարևելս արտաքոյ Հայաստանի՝ և հանգանակութեան նոցա ի հաստատու-թիւն ուսումնարանի ազատական արուեստից՝ նպատակեալ էր՝ ո՛չ միայն յընդհանրութիւն վախճանին, այլ և սկզբան նորա։*

*Թէ ցայս վայր ուսումն ընդհանրութիւն ո՛չ ստացաւ յԱզգի մե-րում, ամենայն անձն ամօթով խոստովանի, և եթէ զպատճառսն որոնիցէ ոք, գտանէ, զի սկզբունք նորա կարի մանաւոր ոմանք եղեն,—ո՛չ ամէն ծառ խաղող բերէ, և ո՛չ ամենայն դար զՍահակ Պարթև, կամ զՄեսրովպ Թարգմանիչ, զի եղիցին ազգի միում արեգակունք լուսաւորութեան մտաց։ Ամենայն դար Օգոստոս կայսր, Մեկենաս իշխան, կամ Վռամշապուհ Արշակունի ո՛չ ծնանի քաջա-լերել զարս իմաստունս յիւրաքանչիւր ժամանակի. ուրեմն ի ստու-երս մահու դանդաչել հազարաւոր ամօք, և կալ մնալ ի խաւարի անգիտութեան, մինչ մի կամ միւս յայսօրինակ աստուածային շնորհաց ազգի մարդկան՝ ի վեր երևեսցին, կատարեալ յիմարու-թիւն է և աններողելի կործանումն։ Աղաղակէ՞ր մեծատունն ի դժոխս՝ առ Աբրահամ, առաքել զՂազարոս առ եղբարս իւր. և պատասխանի լինէր նմա, թէ՝ «ունին նոքա զՄովսէս և մարգարէս, նոցա լուիցեն»։ —Փա՛ռք արդեանց խաչի կենարարին, մեք զարդիս ի դժոխս չե՛մք, խնդիր մեր յանկարևորաց սակի չէ, ունիմք ըզ-Մովսէս և զմարգարէս, ունիմք զՍահակ Պարթև և զՄեսրովպ մեզ յօրինակս, կարո՞ղ եմք յԱստուած յուսացեալ զազգն ի հրեշտակս փոխանակել ի ձեռն կատարեալ և բարեպաշտ ուսմանց, որով և զաշխարհ մեր յարքայութիւն երկրաւոր՝ առ ի ցոյց փափագանաց երկնաւորին։*

*Կարո՞ղ եմք, ասեմք, և այն՝ կարի հեշտ եղանակաւ. այսինքն՝ սիրով և միաբանութեամբ։ Թող յոտն կացցէ այր իմաստուն ոք և ասիցէ, թէ ի՞նչ դժուարութիւն կայ հօր սիրելոյ զորդիս իւր, հարսին՝ զփեսայ իւր, եղբօր՝ զեղբայր իւր։ Մեք՝ Ազգ Հայոց համահայր և համամայր՝ բոլորովին այնպիսիք եմք։ Բա՛րձ զանտանելի եսեսութիւնդ, մա՛րդ համարեաց զանձն քոյ՝ հաւասար միւս եղբարց քոց, մի ցանկար նախ-անձն լինել ի նոսա, և ահա՛ սիրեցեր և սիրեցար ի նոցանէ. բայց եթէ ապախտ արարեր զբարին, ապախտ արարեր զկենդանի օրինակս սրբազան նախնեաց, և մերժեցեր զհետ գնալ վարուց աստուածսիրութեան և ազգասիրութեան նոցա, անտարակոյս հաւատա՛, որ քո և քո Ազգի տգիտութեամբն զայս աշխարհ դժոխք յօրինեցեր քեզ, և անդ՝ ի տանջանսդ տարապարտ խնդրես զքաղցրութիւն մեռեալ աղքատի ուրուք, և ո՛չ գտանես։ Քանզի յայնժամ և քեզ ասէ Հայր Աբրահամ թէ՝ ունէիր զՄահակ Պարթև և զՄեսրովպ, թո՛ղ նոցա լսէիր, նոցա վարուց հետևէիր։*

*Ուսումնականութիւն Ազգիս ներկա կախեալ կայ զբարեհաճութենէ հարստաց ոմանց, և բարեաց։ Որոց շնորհք, որպէս շուշանք ի գարուն գրագիտութեան մերոյ, փոյթ ծաղկին, և փոյթ թառամին։ Պարտ է գուն գործել և անցուցանել զայն առ ընդհանրութիւն Ազգին, և յայնժամ մշտամառն ջերմեռանդութեամբ ծաղկունք առաջինութեանց, և անվրէպ կենցաղավարութեանց մի զկնի միոյ ծաղկեալ ծածանին։ Զլինի յայնժամ ոք, որ զուսումն օտար յիւրմէ համարելով՝ հարստի ուրուք, կամ աղքատ բարւոյ զանձն պարտաւոր դիցէ, կամ բարձրամտութեանն ստրկանալ հարկիցի, աստուածանման փառացն ժուժել չկարիցէ, կամ պարծուտ մեծաբանութեանցն տանել, կամ ըստ հաճոյից նոցուն պարաւանդիլ, և կամ ոչ։ Ինքն երախտաւորեաց, և իւր յասուկ ստացուած ճանաչէ զայն։ Առատն խրախոյս բառնայ աճեցուցանել և ևս զյառաջադիմութիւն նոցա, ժլատն ափսոսայ հանգանակեալ տրոցն ի կորուստ մատուցանել, ուստի, «փո՛ղ ետու, պիտի՛ ուտեմ» ասողի նման՝ կամայ ակամայ կամ զորդի իւր՝ կամ զընտանւոյն անդր առաքէ, շահեցուցանել զդահեկանն՝ զոր բազում քրտամբ վաստակեալ և մատոյց ի պէտս նորա։*

*Յատկութիւնք անուանց վերանան սոքիւ, և Ազգն կարէ պարծել յայնժամ, թէ ունի իւր զուսումնարան մի։*

*Տարապարտ կարծիք են, թէ որովհետև տէրութիւն չունիմք, այսպիսի ինչ առնել ոչ կարեմք։ Զի՞նչ է տէրութիւն աղաչեմք, եթէ ո՛չ միաբանութիւն ազգի իրիք ի հնազանդութիւն օրինաց երկրին։*

Երբ՞ կայար դու զայս կանոն, և ո՛չ տիրացար։ Ճշմարիտ տէրութիւնն է յաղթելն տգիտութեանց. յարո՛ զազգ քո ի բնաւոր հանճար իւր, և ահա՛ միահեծան տիրեցեր։ Գիտութեամբ կանգնի տէրութիւն, բայց տէրութեամբ գիտութիւն՝ ո՛չ բնաւ երբէք։

## 24. ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՇՈՒՇԵՑԻ

Ի քանի ամսոց հետէ առընթեր կացին աչաց մերոց հատորք Օրագրութեան և ոտանաւոր հաւաքմանց տէր Բաղդասարայ Գասպարեան Շուշեցւոյ[1]։ Որ սկսեալ յեզերաց Կասպիականին և ընդ միջերկրեայս Հայոց և Պարսից անցեալ՝ շրջի ընդ համօրէն Հնդկաստան և տեղագրէ զերևելի երևելի քաղաքսն։ Ընդ ոճ գրութեանն՝ ո՛չ զարմանամք, ընդ նրբութիւն հեռազօտութեանն ո՛չ ապշիմք, այլ ընդ փոյթ և եռանդն ազգօրէն զմայլեցեալ՝ Օրինակեմք աստնօր զկարի սուրբ և զօգտակար դիտումն՝ որ էջ 63—64 օրագրին։

«Յաւուրս շրջման իմոյ թէ ի ճանապարհի և թէ ի քաղաքի՝ զոր ինչ նոր ի տեսի ծաղկաքաղ ժողովի ի...... առ իմոյ յիշատակի զոր խնդրեմ ընթերցողացդ սիրով ընդունել իբրև զնոր իմն և անմեղադիր լինիլ ինձ. զի շրջելով վաստակեցայ և ի ծերութեանն ժամանակիս հազիւ ի գլուխ բերի վասն ապագայ մանկանց մերոց։

Քանզի սովորութիւն է ամենայն ազգաց քրիստոնէից՝ Ինգլիզի, Ֆրանսիզի և Ռուսի, զոր ինչ տեսանեն թէ ի ծովու և թէ ի ցամաքի՝ գրել վասն մանկանց իւրեանց։ Ոչ կամիմ երկարել, մեծ ամօթ և նախատինք է մեզ, որ նոքա այնքան իմաստնացան կարդալով և գրելով, և մեք ամենեքին նոցին շաւղացն ոչ նախանձեցաք, և ոչ մի։ Միայն այս չափս աղաչեմ զգօնամիտ ընթերցողացդ, զի զտետրակս զոր Ծաղկաքաղ կոչեցի և ընկալջիք իբրև զլումայն այրի կնոջ, ինձ անմեղադիր լիջիք։ Եվ դուք լաւագոյն ի լոյս ածջիք. որ և խնդրեմ ի տուողէն տացէ ձեզ իմաստութիւն. Ամէն»[2]։

Մեք որում զրեթէ բնութիւն իմն եղև ի գրագիտութիւն յորդորել զազգն, խօսեցեալք եմք զկարևորութենէ այսպիսեաց ի յառաջաբանին Պատմութեան հին Հնդկաստանի և զարդիս իսկ օրինակաւ հայրենակից երիցուն երկրորդեմք զնոյն, մինչև տեղի տացուք զինչ ինչ ի կարևորայն՝ հաղորդել ի գրօսանս սիրելի ընթերցողաց մերոց[3]։

Ի կանգնել խորանի գրագիտութեան ազգիս չպիտի ամէն ումեք **Բէրսէլիէլ** ճարտարապետ գոլ մազմանք, ասրանիւթք և ոստայնանկ ևս խնդրին։ Կամեցեալ ճաշակ իմն տալ ընթերցողաց՝ տպագրեմք

աստանօր զանուարուեստ, բայց հոգելից տաղն, որ ասէ՝ «Թէ սէր չունիս ոչինչ ես[4]»:

## 25. <ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԻ ՄԱՐԴԿԱՆ...>

*Նորօրինակ աշխարհավարութեամբ լուսաւոր կարծեցեալ ատեան առաջնորդաց Անգղիական Հնդկաստանի՝ ի Լոնդոն, արգել ասի՝ հարիւրին վեց վաշխ հատուցանել ի վերայ այնց պարգևաց՝ զոր բարերարք ազգի մարդկան և լուսաւորութեան աշխարհիս՝ առատ ձեռամբ կուտեցին ի գանձարան իւրեանց առ ի պէտս և քաջալերութիւն ընդհանուր ուսմանց։ Բարւոք ստգտանէ բարեկամն Հնդկաց զայս գեղջկական ժլատութիւն ի ծայրագոյն կառավարս ընդարձակ տէրութեան այսորիկ, որոյ իւր էր պարտականութիւն համալսարանս հաստատել յամենայն ուրեք վասն հոգևոր և մարմնաւոր կրթութեան այսքան մեծ բազմութեան ազգաց և լեզուաց։ Անձնասիրութիւն առաջնորդացն՝ առ ի միայն փարթամացուցանելոյ զանձինս իւրեանց, և թագաւորակերպ կեանս վարելոյ՝ անփո՛յթ գլխովին զօգտից հպատակացն ամօթ և նախատինս բերէ ոչ միայն ատենին և իւրաքանչիւր անդամոց նորա, այլ և երկրին, և սնապարծ տերութեանն։ Յամին զեօթնհարիւր միլիոնս լիրայից քարշեն ի հարկաց Հնդկաստանի, և ո՛չ գոնէ զմիլիոն մի ծախսեն ի վճար ուսման այնքան բազմութեան տուողացն զայն։ Եւ չիցէ՞ այս բռնաբարութիւն ի ծայրագոյն աստիճանի, անտանելի ևս քան զմուժիկութիւնն Ռուսաստանի, և զկեղեքանս Պարսից։ Եւ դեռ սոքա՞ անգղիացիք, որք անամօթ երեսօք սպարծին միշտ ի բարերարս ազգի մարդկան լինել։ Չիցէ՞ այս և ապերախտութիւն մեծ ծծել ցամաքեցուցանել զստինս հպատակաց ի վերջին շթէ կաթին, և զկենսարարն նոցա խնայել նոցա զսնունդ։ Աշխարհ զաչս բացցէ՛ այսուհետև, և տեսցէ՛ թէ ո՞ր բարբարոսութիւն իցէ դժնդակագոյն քան զայս, և աղօթս արասցէ՛ վասն փոփոխութեան նորուն դէպ ի բարին կոյս, այսինքն՝ յօգուտն հասարակաց՝ որում միայն հաստատուն կայ տէրութիւն[1]։*

## 26. <ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՄԱՍԻՆ>

*Թղթակից ոմն գրէ, թէ[1] «ի կէս դարուց և այսր բովանդակ Ազգ Հայոց դ՛գ ծերունին Սիմէօնանայր սիրայրեաց փափագանօք տեսանել զՆերսէս իւր յաթոռ սրբոյ Լուսաւորչին, հաւատացեալ՝ թէ նովին համանգամայն ծաղկէր Ազգն ամենաշատաւիղ գիտութեամբ՝*

ի աշխարհն պայծառանայր արուեստիւք և քաղաքականութեամբ։ Ծկն նա, եհաս փափագանաց իւրոց, բայց դեռ Ազգն փափագի հասանել իւրոցն, և դեռ ո՛չ եհաս։ Տինա թէ՝ և բազումք դերևացեալք ի յուսոյ՝ համարձակախօս լինին խորհիլ և խօսել, թէ զի՞նչ զանազանութիւն ի մէջ Ներսիսի՝ Նոր Հայոց մեսիայի, և Յովհաննու Կարբեցւոյ, որ ո՛չ ինչ պակաս արար քան զսա ի պէսպէս նորոգութիւն և շինութիւնս Էջմիածնի. ի յորդոր հաստատութեան դպրոցաց, ի խաղաղութիւն ապստամբութեան արհեացն և արհիացուաց, և որ մեծագոյն քան զամենայն՝ ի բնաջինջ բարձումն մեռելոտի կըմախին՝ զոր ի լերանցն Օձունայ բերին նոքա, և առանց հրամանի իւրում եդին ի խորանի Սրբոյն Գայիանեայ՝ յերկրպագութիւն խուժանին Վաղարշապատայ։ Նա՝ դեռ աւելի ևս ժողովրդասէր ցուցանէր զինքն, լիցին դիտաւորութիւնքն որպէս և էինն, քան զսորին սրբութիւն, գրելով յամենայն ուրեք և ամենայն ումեք զդամ պահելով։ Բայց ահա ամք անցին, և Հնդկաստան ո՛չ արժանացաւ դեռ կոնդակի նորա միում, և անհատից սորա թէ գրութիւնք և թէ խնդիրք՝ անկատար կացին մնացին՝ և կան։

«Վսեմ» որքան և իցեն անցքն, կամ «սխրալիք» որպէս աւանդէ հայրենասէր գրիչ հատուածոյն տպելոյ յանցեալ թիւ լրագրիդ[2] տակաւին՝ եկեղեցւոյ ծուխ կարգադրելն և նմանիք, որքան նախատինս բերեն յանփութութիւն հոգևոր առաջնորդաց Հայոց Վրաստանի, այնքան պատիւ ո՛չ դնեն ընդհանրական հայրապետին»։

Մի միայն Ներսիսի արժան, և ակնկալութեան Ազգիս պատասխանող գործ երևի կարգադրել նորա զուսումնարան իւր՝ նորանոր ձագուձուգովքն. բայց և այն՝ այնքան շատ տատմէրանիւ՝ մինչ երկնչիմք, թէ մի՛ գուցէ զգլուխ ծնեցելոյն ծուռ արտաքս հանիցեն։

Այո՛, գեղաշուք անուանք պատիւ դնեն արարից, բայց յայսպիսիս միտ դնել է հարկաւոր, և ո՛չ թէ պատիւ։ Ո՞վ երբէք երազել կարէ թէ այս կամ այն անուն ազնուական ճողեալ զազգի ազգի զառտնին և զարտաքին պատաղմունս իւր՝ հանապազորդելոց իցէ յուսումնարան անդր՝ ուսանել թէ վարժապետն զերես յարևե՞լս արդեօք՝ թէ յարևմուտս կոյս ուսուցանիցէ, կամ այս և կամ այն աշակերտ բարւոք զդաս իւր սերտիցէ՞՝ թէ ոչ։

Գրիչն բուռն հարկանէ միայնակ զհնարից հաստատութեան և յարատևութեան ուսումնարանացն. «Գուցէ՛ հասակն բաւական չիցէ դեռ հնագոյն անցից, կամ գուցէ շքեղութիւն հանդիսի բացման ուսումնարանին ի մոռացօնս արկեալ իցէ նորա, թէ այսպիսի կայկայուռուն բան՝ երկար ո՛չ տևէ։ Աւանիկ քեզ օրինակն, ինքն դեռ

կենդանի ի Քիշնև էր, մինչ երկրորդ խափանեցաւ ուսումնարանն։ Գուցէ այս երկրորդ նորոգութիւն նորա ևս՝ ձգիցի ցկեանս նորին սրբութեան»։

«Ամէն ոք և առանց Ներսէս լինելոյ՝ կարէ հաստատել զուսումնարան ինչ. գործ է յարատևելոյն զնոյն փոյթ տանել։ Յարատևութիւն այսպիսի ընդհանուր և Ազգային հաստատութեան պէտս ունի կամ բաւական դրամոց ի գանձարան կայսերութեան Ռուսաց, և կամ եկամտի իրիք կայսերական հրովարտակաւ վաւերացուցեալ կալուածոց, և այն՝ ընդ կառավարութեամբ անմահ և անկախ ժողովոյ իրիք։ Բայց գրիչն, փոխանակ տալոյ աշխարհի զտեղեկութիւն զայս յօրինակ և յուրախութիւն ամենայն լսողաց, հարևանցի և եթ անցանէ յասելն, «և կարգելոյ զլխոյի թոշակս նմին»: Արդ արի՛ դու պատուելի Վերատեսուչ և հասկացի՛ր. թէ ուստի՞ և զիա՞րդ այն լխոյի թոշակ. այն ինչ շամպանեան գինին և բարեմաղթութիւնքն՝ որք միանգամայն աւելորդք են յայսպիսիս և յանցաւորագոյնք իսկ՝ պսակեն զբովանդակ պատմութիւնն»։

«Որքան խիստ և դաժան ումեք թուիցին դիտողութիւնք մեր այնքան սուր և ջերմք են ակնկալութիւնք մեր զտօնելոյն։ Իղձ և փափաք մեր է ծաղկել Հայրենեաց մերոց, և ծաղկանցն պտղանալ ի վայելս յաջորդեալ ազգականաց մերոց։ Ներսէս կարէ առնել զերկոսին ևս՝ և մեք պահանջեմք ի նմանէ։

Եռանդ սիրտք հայրենասիրաց վասն համբաւոց բարեաց ըզՀայրապետէ և զՀայրենեաց. և եթէ յետ երկար կարօտանաց արժանասցին լսել զաւետիս յառաջադիմութեանցն, և այն՝ այսքան անկատար, թո՛ղ նոքա՝ որք զօտարութիւն կրեցին և կարօտ ի Հայրենեաց մնացին՝ դատապարտեսցեն զմեզ»։

«Թերևս ասիցէ՞ ոք զմէնջ, թէ «Տուտէորդին ի Ձորոյ դետ նստեալ, զիս ի Կիլիկիա յաճախէ՞». բայց բազում խոնարհութեամբ յիշեցուցանեմք նմա, թէ մեք ի մեր կողմանէ զայդ վաղու՜ց ի բաց քերեցաք յանձանց. Նուիրելով Ներսիսի՝ ո՛չ միայն զդուզնաքեայ ծառայութիւն մեր, այլև զանձն և զարիւն միանգամայն՝ վասն Հայրենեաց։ Այլ տխու՜ր, զի մեք միայն չեմք, որ զրկիմք ի շնորհաց տեսչութեանն, բոլոր Հնդկահայք զդոյն տրտունջ տրտնջան»[3]։

«Եւ կարի՛ քաջ իրաւամբ,—Հնդկաստան կարաց բազում անգամ միով և եթ անհատիւ հաստատել դպրոցս և տպարանս ի Հայաստան և յայլուր.—միայն թողածոյ փշրանք առատաձեռնութեան Հնդկաստանի արդ իսկ կարող է պահել զերկուս Ներսիսեան ուսումնարանս, եթէ միտ դիցի ստանալոյ զայն։ Կարէ Հնդկաստան և արդ

*իսկ ո՞չ ինչ իւիք պակասել՝ եթէ Քաբօլայ նման բարձի թողի չլինիցի ի հոգևոր տէրանց անտի՝ որք Բոլորանցի տանուտէրին պէս՝ միշտ «յառաջ ղոտանաւորն» խնդրեն»։*

*Արդար և իրաւ խօսի Թղթակից մեր՝ որքան առ ակնկալութիւն համօրէն Ազգիս զՆերսիսէ Հինգերորդէ. բայց այնգի՝ բախտ Ազգիս ձախող, զի՞նչ առնել կարիցէ ոք ընդդէմ ընդհանուր տառապանացն։ նա պիտէր քան կամ երեսուն ամօք յառաջ հայրապետել Հայոց, որ կարողանայր առնել զոր խորհէրն յօգուտ Հայրենեաց։ Իսկ այժմ, որ զութսունամենիւքն անցեալ, արտօնութիւնքն յամէն ուստեք կուտէ խուզեալք, և Ազգն անսիրունք յառաջադիմութեան իւրեանց, ո՞րքան ազդել կարիցէ քան զորս ազդեն կոշտ ու կոփիշտ մտացն։ Եղանէ այս հոգևոր սերմանահան սերմանել յանդս մտաց սիրասուն մատաղանւոյ մերում զսերմն բարի, աղաչեսցուք զԱստուած արդաւանդել զերկիրն ի պտղաբերութիւն շնորհաց ի շնորհս, ջանասցո՛ւք մանաւանդ ձեռն տալ վերջին հայթհայթանաց խորին ծերութեան նորա, փառս տալով Աստուծոյ՝ որ տակաւին անշէջ պահէ յոգի սրբութեան նորա զեռանդն ազգասիրութեան յօգուտ Հայրենեաց մերոց։ Այս հուր ողջակիզի Տեառն է, որ թէպէտև զազախացեալ ի դբի ընդ երկար ամս հալածանացն՝ վերստին բորբոքել սկսանի, եթէ բորբեսցեն որդիք, եթէ զոնէ ծագիւ մատանցն բառնայցեն զծանրութիւն։—Ա՛յս՝ մի միայն միջոց է վերանորոգութեան Ազգիս՝ զորմէ բուռն հարկանէ նա։ Դատարկ խօսելով ի՞նչ շահ։ Երանի՜ թէ թղթակցիս՝ համեմատ փափագանացն խղճմտանք ևս լինէր, ի հաւասարել անդ իւրում զհանդուցեալ Հայրապետն ընդ ներկայիս։*

*Համաձայնի՞մք ընդ թղթակցիս՝ միայն ի բարձի թողի առնել սորա զորդեակս իւր ի Հնդիկս՝ առանց յաւելի ծպտուն հանելո՞յ։*

## 27. <ԵԹԷ ԱԿԱՆՋՔ ԼՍԵԼՈՅ ՉԻՑԵՆ, ԹՈՂ ԱՉՔ ԻՑԵՆ ՏԵՍԱՆԵԼՈՅ>

*Աւասի՜կ վերջին ամիս տարեկան վաստակոց մերոց և մարմնաւոր ակնկալութեանցս՝ անցանէ, զնա՛յ խառնի ընդ անհուն և անսահման յաւիտենականութեանն, որ միշտ ներկայ գոլով՝ անցեալ և ապառնի ո՛չ ունի առաջի ամենակալ էութեանն. և յանդիման կացուցանէ արարածասէր մեծութեան նորա զկատարած տարեկան տառապանաց մերոց. որ եթէ բարի՝ անշուշտ ընդունի ի նմանէ զբազում ողորմութիւնս նորա ի յաջողութիւն և՛ վասն առաջիկայ տարւոյս, քաղցրացուցանելով զսիրտս պատուելի հասարակութեան մերոյ յայս վերջին ծիգն ծերունի հայթհայթանաց՝ ի վառ պահելս մերում սատ՝ զազգային գրագիտութիւն։*

*Օտար և ապիկար աշխատութիւն այս՝ օրինակ լիցի թո՛ղ ամենայն իմաստնոց յԱզգի մերում, թէ յորժամ առ Աստուած հաւատով ոք, և կամակար սկսանիցի զգործ ինչ յօգուտ Ազգի և ի հաճոյս Աստուծոյ՝ անկարելի է, եթէ ո՛չ յաջողեսցի։ Օրինակ օտար և ապիկար աշխատանացս թո՛ղ ի բաց բառնայցէ զվեհեր և զվհատութիւնս ի սրտից նոցա. զի եթէ մի միայնակ կարող եղաք գէթ ընդ աղօտ լուցանել զշիջեալն ի վեցեցունց, քանի՞ ևս առաւել՝ եթէ երկու և աւելի ևս միաբանէին ի սոյն։ Ամենայն ինչ ընդ արեգակամբ կախի զյօժարութենէ գործողին, և զ՞որ բարի զոր սկսանի մարդ յանուն բարերարին՝ և ո՛չ կատարեսցի։ Արտաքին օգնականութիւնքն, թէպէտև պատահական բարիք են, և էութիւն գործոյն մնայ միայն յօժարութեան գործողին՝ սակայն և այնպէս՝ որպէս շունչ է կենաց մերոց, նոյն և շնորհք Ազգի պիտին ի պահպանութիւն սորուն։ Սովին յուսով սկսաք, սովին և շարունակելն բաղձամք, զի հեշտութիւնք՝ գործ նորահասից են, այնինչ գործքն հեշտութիւնք են ծերոց։ Աղք հատան յաչաց մերոց ի յաճախ աղաչելոյ, և ամացաւ ամօթն ի բաց՝ ի յանդադար աղերսանաց։ Եթէ ականջք լսելոյ չիցեն, թո՛ղ գոնէ աչք իցեն տեսանելոյ զաշխատութիւն այս, կամ սիրտ ողորմելոյ մեզ, որ զմատունս ի մաճ արկեալ՝ հազիւ ընդ յառաջս նկրտիմք ի գործ անդր, ժամանակ չունելով զայլոցն միտ դնել կարևորաց։*

*Ո՛չ յամառիմք ի դատաստանի մերում, ո՛չ յանդգնիմք ի զօրութիւնս մեր, ո՛չ մեծ օգնականութեամբ քաջալերիմք, և ո՛չ իսկ յանձանց ի փառս պնդիմք։ Գիտեմք զի լրագրութիւն մի հարկաւոր է Ազգի մերում, և աշխատիմք. զԱստուած ի վերուստ՝ և զաշխատութիւն ի մէնջ՝ ունելով մեզ ապաւէն ի նեղութեան։ Զայս ասացեալ ապերախտ ո՛չ գտանիմք առ ողորմածութիւն սակաւաթիւ բաժանորդաց մերոց. խոստովանիմք, այո՛ զի առանց ձեռին նոցա մեզ միայնոյ հնարին չէր ամենևին յառաջ տանել զայն. բայց և այնպէս՝ համարձակիմք բացաբարբառ քարոզել, թէ գործն առաւել էր քան միջոցքն՝ զորս ընկալաք մինչ ցարդ։*

*Մին* յԱզգասէր *զաւակաց մերոց սովու հիւծեցաւ ի մահ. և միւս այս՝ որ տաշտաքերանք համարելի է մտաւոր ծննդեան, կամ վերջին կիտի ծերունի հայթհայթանաց մերոց՝ քաղցր քաջալերութեան Ազգին ակնունի։ Եթէ ի մարդ ոք ապաստան սկսեալ էաք զգործն, արդեն իսկ երկրորդ անգամ մեռուցեալ մերժեալ էաք. բայց չէ՛. յԱստուած և յԱզգ անմահ խրախուսեալ՝ ընկալաք ի վերայ և զփորձն՝ թէ շարունակել կարեմք, եթէ կամք իցեն մեզ։*

*Մանաւանդ՝ փա՜ռք ողորմութեանն Աստուծոյ, զի և բազումք ի սիրասուն աշակերտաց դպրոցիս՝ ոչ միայն ուսան գրել ու թարգմանել, այլ և ուսան զարուեստն տպագրութեան, յորոց հերու զուրկ էաք։ Վասնորոյ դիտաւորեալս եմք Աստուծով ո՛չ միայն շարունակել զլրագրութիւնս զայս, այլ և ամսէն միանգամ տպագրել զհեղինակութիւն և զթարգմանութիւնս աշակերտաց և աշակերտուհեաց մերոց՝ ի տետրակ ինչ, և մատուցանել պատուելի Ազգիս մերոյ իբրև զնախախայծ երեխայրիս դպրոցի մերում։ Եւ որ՝ եթէ չգտանիցեմք զառատալիր և զգորովաշարժ օգնականութիւնս, ուրեմն առա՜, որ այլ ևս ծնողութիւն չկայ յաշխարհի, և գու՞թ միանգամայն վերացաւ ի մարդկանէ։*

*Եթէ այս դիտաւորութիւն մեր փոխանակ յօգտի հասարակաց հաստատուն կալոյս մերոյ՝ կամակորութիւն համարիցի մեզ, շնորհ արասցեն ուրախանալ չկամեցողք. պատճառ որ՝ վնասն մեզ ինքեան է, և ո՛չ այլում ումեք։ Յորդորեսցե՛ն որքան և կարեն ըզպարզամիտս ի մարդկանէ՝ խորշել ի լուսոյ, և խաղալ ընդ խաւար. զի մի՛ ի լոյս եկեսցեն գործք իւրեանց։*

*Բայց եթէ և լուսաւորեալ հասարակութիւնն նոցա մտօք իցէ, զնոցա վրիպանս վերագոյն համարիցի քան զամենայն ճշմարտութիւն, թո՛ղ ընթերցցի զոր միանգամ այլք գրեն վասն Ազգիս, և զաչս բանայցէ իւր՝ մինչ չև այլք բացեալ իցեն...*[1]

## 28. ԱՄ ՏԵԱՌՆ 1850

*Զանթիւ բարիս յիմ հոգի*
*Գութ անեղին ներհեղեաց,*
*Մինչ չև զգաց խագ այս տի*
*Թէ ո՞ւստ համոնք այնց բարեաց.*
*Երբ յուղին սահ մանկութեան*
*Յանհոգ արշաւ վազ ի վազ,*
*Աչն աներև յանքոյթ հան.*
*Եւ յառն արբունս կատարեաց։*

Յիսո՜ւն *ամ. և ահա՛ չափ ծայրագոյն կատարելութեան մարդկային հասակի, յորում արդիւնք և արգութիւնք հասունացեալք՝ զանհամար արգասիս արիութեան, զօրութեան, հաստատութեան, խոհականութեան և հանճարոյ շտեմարանեն՝ զսեպհական յատկութիւնս մարդկութեան։*

Թող զդարն ադամական, զհսկայից, զնահապետաց և զմարգարէիցն, ի ծագմանէ շնորհաց և այսր՝ հազար ութնհարիւր և յիսուն տարեկան եմք ամենեքին մեք ի ծերոյ ցողայն այսօրածին։ Եւ ամին այսմ վիճակիս՝ առաջինքն նախապատրաստականք իմն էին։ Ծաղկունք ահա՛ վառել սկսանին ի գոյն իւրեանց և ի գեղ՝ բուրմամբք անուշիցն զմայլարարք։ Պտուղք ահա՛ հասունանան ի ճաշակս և տեսակ։ Ծառք ահա՛ ծաւալեալ սփռեն յեթերս ի վեր զվարսագեղ սաղարթիս՝ և յերկիր ի խոնարհ զհովանիս զովարար։ Եւ թէպէտ բողբոջք նոցա, աճեցութիւնք և ծաղկունքն՝ գեղեցիկք, դեռ ևս ծիլք էին գերազանցութեանցս՝ յորս յայժմիկ գան հասանին։ Այսպէս, թէպէտև տարիալի իմն իցէ վիճակ տղայութեանն, դեռ կարապետ ընթանայ այն գերակատար գեղեցկութեան և ծայրագոյն կատարելութեան հասակի մարդկան։ Ի մարդկութեան է, զի ստանայ մարմին զծայրագոյն կէտ շարժման իւրոյ և շնորհաց, սիրտ՝ զբարուք չափաւորեալ կիրս զգաստան և ցանկութեան, և միտք՝ զզուտ զուլալ զտութիւն և զընդարձակութիւն։

Յայսմ հասակի կատարելութեան է, յորում կարգեցաւ մարդն միահեծան ենթալուսնեայ արարածոց, արքայ և քահանայ բնութեան։ Յայսմ հասակի վարէ նա զբացարձակ տէրութիւն մտաց իւրոց ի վերայ նիւթոց. խորհի, վասնորոյ և անխոնարհելի ունի զտէրութիւն իւր ի վերայ ամենայն հողանիւթեայ բնութեանց։ Կակուղք և կարծունք միօրինակ կորանան առաջի վեհ մտաց նորա. և թէպէտև երբեմնապէս ստահակիցեն՝ դեռ ևս ոլորին խոնարհին և գործեն հակառակս իւրեանց, այլ ո՛չ եթէ կամաց նորա։ Բղեաշխ է նա բուսականաց, զորս ջանիւք և աշխատութեամբ է՝ որ աճեցուցանէ, և է՝ որ նուազեցուցանէ և բառնայ իսկ զխովին։ Կայսր է նա կենդանեաց առհասարակ, որք թէպէտ զգան, որ թէպէտ զդնան, այլ բատրում ո՛չ մտմտան, ստրուկք իջանեն խորհրդոց նորա, որով որոշէ զվախճան ի միջոցէ. տնօրինէ զգործ առ վախճան ինչ յաղթէ ուժոյ հանճարով, և գերագութիւն համբերութեամբ կատարէ։

Ազնիւն ի գործոց Աստուծոյ է մարդն յերկրի, բայց և ազնուագոյն նա՝ ի յիսուն ամի հասակին իւրոյ, յորժամ քաջայարմար և վայելուչ ի կիր արկանէ զպարմանագործութիւնսն՝ որով բարերար արարիչն զարդարեաց զնա։ Յո՞ր բարձրութիւն ո՛չ հասանեն միտք նորա, զո՞ր չափ ո՛չ ժամանէ հանճարն. զո՞ր մեծ, խորին, կամ բարձրագոյն խորհուրդք իցեն, զորս չկարիցէն հնարել և հինել ի գործ։ Ի՞նչ յաշխարհի, որ տար իցէ կամ օտար ի նմանէ։ Ո՞ր զօրութիւն ի վերայ բարեաց կամ բարուց ազգի մարդկան, և համօրէն

բնութեան իսկ, զորս ո՛չ կարիցէ ստեղծանել, հետազօտել և հասանել ի վերջոյ։ Քանի՞ զուարճութիւնք իցեն՝ զորս ո՛չ կարիցէ յանձին վայելել կամ այլոց պարգևել նա։ Որդի՜ յաւիտենականութեան՝ և առ յաւիտենականութիւն ճակատագրեալ. և ո՞ր նմա մեծ կամ փոքր հեռի կամ դժուարին, բարձր կամ վսեմ, առ որ ո՛չ նկրտիցէ։ Պատկեր Աստուծոյ է մարդս. ի յաւիտենական հօրէն ձգէ զսերունդն. բնութեամբ արարած նորա, և շնորհօք՝ որդի, որ յիւրում պատկերացուցանէ զերևելի հետս կերպարանաց աստուածութեան։ Իմացականութիւն նորա նշոյլ իմն է աստուածեղէն իմաստութեան. զօրութիւն նորա՝ բազուկ ամենակալին. գործունէութիւն նորա՝ մասն ինչ ամենակար արարչութեան. միտք նորա օր ատր կատարելագործեալ՝ նմանութիւն իմն, որ զամ քան զզամ նոյնանայ անմահն և ամենազօր Եհովայ։ Բայց որ առաւել քան զարարչութիւն՝ մարդկութիւն յաստուածութիւն վերամբարձեալ գթութեամբ՝ եղբայրանայ Բանին կենաց և փրկեալ ի մեղաց՝ աստուածանայ ի փառս. Քրիստոսի՛ թագակից։

Թէպէտ յանձուկ վայրի աստ՝ ընդարձակ բերկրութեանցն Պլատոսայ հետևելով ընթերցող, զառանցեալ մոլորիցիմք ի նպատակէս։ Յիսո՜ն ամ դարուս մերոյ, և յիսուն ամ կատարելութեան հասակիս այնքան զուարճութիւնս և բարիս մատակարարեն՝ քան զոր կարեմք յառաջ բերել աստանօր։ Զուարճութիւնք մարդկութեանն են՝ քան զոր անձուկ և անձնասէր միտք վայելել կարեն։ Նա բարեպէս վայելէ, որ խնդրէ և խրախուսէ զօտարին վայելչութիւն։ Համարակալ երջանկութիւնն է կատարեալ երջանկութիւն։ Եւ այս լինի։

Եթէ իւրաքանչիւր անձն ի հպատակութեան կայցէ վիճակի իւրում, յորում եդ զնա ամենիմաստ նախախնամութիւնն երկնից, և ի նմին գուն գործիցէ կարևորօքն օգնել ազգի մարդկան առ հասարակ։ Մշակն թո՛ղ հերկիցէ զերկիր իւր, և հանցէ անտի զայն առատութիւն զոր անդուլ աշխատանք կարեն։ Թո՛ղ քաղաքացիքն, գործնականք և գիտնականք յարմարեսցեն զգիտս և զարհեստս իւրեանց կարևորագունիցն ի պիտոյից մարդկութեան, այնինչ վաճառականքն զաւելորդս այսր երկրի ընդ աւելորդաց այն երկրի փոխանորդելով՝ զաշխարհ ընդարձակ ի մի դրախտ յեղանակեն. լի անկարօտ վայելչութեամբքն եդեմայ։ Ծնողք ուսուսցեն զատակաց իւրեանց զնախկին սկզբունս հաւատոց և զխորին ակնածութիւն առաքինութեանցն։ Քահանայք մեկնեսցեն և ի գործ իսկ դիցեն զայսոսիկ սկզբունս հրապարակական և առանձին վարդապետութեամբք իւրեանց։ Հրահանգեալք հերքեսցեն զզօնդակ նախապա-

շարութիւնս, համբակին, հասարակաց առնելով զօգտակար հնարս-
նին։ Համբակք հետևեսցեն օգտակարացն, զորս հանճարեղք բանան
դնեն առաջի, և փորձիցեն յանձինս իւրեանց եթէ բարի՞ արդեօք,
թէ ո՛չ։ Թող մեծամեծք և իշխանք ըստ պարտուց և պատշաճեաց
կատարեսցեն զպարտիս պաշտամանցն, և հպատակեալքն հլու
հնազանդութեամբք իւրեանց՝ հորդեսցեն ի կատարածն։ Աղքատն
աշխատասէր լիցի, և հարուստն՝ ողորմած, դատաւորն՝ անաչառ, և
ոստիկանն՝ զգաստ։ Թագաւորն խնամով մատակարարեսցէ զբարձ
և պատիւ տէրութեանն, ցորչափ արժանաւորագոյնք յանհատիցն
քաջալերիցին։ Ամենայն օգտակար հաստատութիւնս ընդ քաղցր
հովանեաւն ընդունելով, հասարակահայեաց աչօքն այնպէս պնդես-
ցէ զմիաբանութիւն մասանց բոլորին, որպէս զի դարձուսցէ զա-
մենայն ի մշտնջենաւոր երջանկութիւն։ Եւ յորժամ այսօրինակ
վճարեսցէ մեծաւորն զպարտիս իւր, հասարակութիւնն ծաղկի, և
յաջողի օր ըստ օրէ ի շինութիւն։

Ազնիւ է բնութիւն քո, ո՛վ մարդ, և բազմօք վերագոյն անբանիցն
յանապատի։ Բան՝ առանձնաշնորհութիւն է քո։ Առաքինութիւն՝
արժանիք, և աստուածանմանութիւնն՝ փառք։ Ընդունակութիւն քո
մեծ, միտք անհուն, սիրտ քո զգայուն մեծամեծ վայելչութեանց.
զօրութիւնքս բաւական առ ամենայն ինչ։ Յիշեա՛, որ եթէ կեանս
վարիցես անքրիստոնէականս անարգես զբնութիւն քո. Մի՛ զբան
քո ստորև արկաներ այնց կրից՝ որք հաւասար առնեն զքեզ անաս-
նոց անբանից և նմանող նոցուն։ Մի՛ զիմացականութիւնդ հակեր ի
բազմահոգ ծառայութիւն մոլորութեանց և մեղաց։ Մի՛ հեշտասցի
սիրտ քո յընդունայն և յանցաւոր փափկութիւնս, որք միշտ դա-
տարկ թողուն զքեզ՝ և դատապարտ թշուառութեանց։ Մի՛ փորձեր
զզօրութիւն քո յանպատեհ նանրութիւնս, ի ծուլութեան և չարու-
թեան, այլ պահեա՛ զքեզ յառաքինի և ի գովանի վարս, որպէս զի
ճշմարտապէս վայելել կարիցես զբերկրութիւն հասակի քոյ, ըզ-
դարուս և զտարւոյս՝ զոր այսօրինակ շնորհաւորէ Ազգին և քեզ
Ազգասէր Արարատեան։

Եւ զայս ո՛չ ձրի, քանզի ըստ ի 25-երորդին անցեալ ամսոյ
հրաւիրանաց յարգոյ պարոն և տիկին Պօղոսի Կարապետեան այն
ինչ ազգովին ի վայելս բերկրանաց և բարեկենդանութեանց ծայրա-
նայաք ի տան նոցա՝ հրազինութիւնք Բերդին եռացեալ գոգչիր ընդ
եռանդն Հայոց և հայուհեաց ի դաբուղրիբ կայթուն կաքաւուց
թեթևաշարժ գարշապարացն ի պար և պօլկա՝ դըմբ, դըր՛մբ, ի դը՛մբ
որոտացին զանցանել ամին 1849 լիոյ յուզմամբ Եւրոպայ, փախըս-

տեամբ թագաւորացն, պարտութեամբ Պապին, սնանկութեամբ սի-քաց, մատնութեամբ Մաճառաց, խորխտանօք Ռուսաց, և չնաշխար-հիկ քան զամենայն քրիստոնեայ տէրութեանցն հաւատարմու-թեամբ հունքարին յօրէնս հիւրենկալութեան սատարութեամբ Անգղիայ և Գաղղիայ,[1]—և զյաջորդել 1850 ամիս լի յուսով խաղա-ղութեան աշխարհի։ Անտարակո՞յս որ այնպէս, վասնզի նախ Հայքս հարեալք ի գինի և գեղ՝ յերկոսին գլխաւոր գրգռիչս մարդկային կատաղութեան՝ իբրև ազգ և ընտանիք հաճ և զուարճ կատարեցաք զայն հանդէս ի պատիւ յարգոյ և յարգուհի կոչնատերանց, զօրի-նակ սիրոյ և միաբանութեան տալով աշխարհի՝ ո՛չ միայն թէ ի կեր ու խում սեղանոյ, այլ նաև ի գերութիւն սիրանւոյ, որոց հազիւ հանդուրժէին և որդիքն Աստուծոյ։

## 29. ՀԱՅԱՍՏԱՆ, ԿՈՎԿԱՍ ԵՒ ԱՐԱՐԱՏ

Գտանեմք ի 403 թուոջ 1849 ամի Շտեմարանին Բլակվուդայ[1] զերևելին Մորից Վագներ Գերմանացի՝ ճանապարհորդ ի Հայս,[2] որ իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ ոչ ումեք ողորմի՝ բայց եթէ երկուց* դուխառաց իւրոց, զորմէ կամովին զանց առնէաք, եթէ միայն զլոելն ազգասիրութիւն համարէաք, եթէ միջոցաց բարւոքու-թեանն անծանօթք՝ և կամ ողորմութեանց յաջողին Աստուծոյ՝ անհաւանք։ Այլ կայ՝ որ միանգամայն սուտ խօսի Վագներ, որպէս տեսանէ Շտեմարանագիրն և ամենայն արդարասէր մարդ։ Կայ՝ որ առ ի չգոյէ բաւական նիւթոյ՝ հնարէ միայն՝ առ ի նորութիւն տալոյ ցնորից իւրոց. զորս մեք ջանասցուք ցուցանել, զի օտարական ոք հազիւ տեսանէր։ Եւ կայ որ՝ կարի ճշմարիտ. զորս նոյնպէս ջա-նասցուք ընդունել, թերևս ընդունելութիւնս մեր ծնանիցի զզջումն ի մեզ, և զզջումնս՝ վերանորոգութիւն ուման ի պարծանս Ազգի մերոյ, որ է միմիայն նպատակ մեր։ Ի՛նչ հարկ ծածկել զզազրութիւն վիրացն, եթէ և ունիցիմք, որոյ նեխութիւն զաշխարհ բոլոր մի՝ ժանտախտէ։

Եւ նախ՝ գրէ զնմանէ Շտեմարանագիրն՝ թէ մղեալ յանհրաժեշտ հարկէ՝ լիք անկատար զհամալսարանական ուսումն իւր յԱզս-բուրգ, և մանաւանդ ի ծառայութիւն վաճառատան ուրեմն ի Մարսէյլ Պաշտօնն պարտաւորեաց զնա դիմել յԱլջիրս, զոր ի նորոյ ունէին Գաղղիացիք. և ծարաւ շրջագայութեանն և ուսման բորբոքեցին զո-

* Եւ զայն վասն տեսութեան նշխարաց սրբոց. տե՛ս ի ներքոյ յէջ 484[3],

*գի Նորա։ Ուստի լքեալ զաւետուրն, դարձ արար ի Գերմանիա, և պարապեցաւ բնական պատմութեան, մանաւանդ՝ կենդանաբանականին, զոր ի մանկութենէ հետէ սիրով մշակեալ էր։ Յամին 1836 քսան և իննամեայ գոլով՝ եկն ի Պարիս, անտի վերստին չոգաւ յԱլչերս, և բաժանորդ գտաւ կարավանին երկրորդ և յաջող Հետազօտայն ի Կոնստանտիա, զորս հրատարակեաց յամին 1848։ Զամս երիս անցոյց ապա ի Թուրքաստան, յԵգերս և ի Ռուսաստան, ուստի ընկերութեամբ պարոն Աբովեանի հայկազնւոյ էջ ի Հայաստան*, զոր համարի գեր ի վերոյ ամենեցուն։ Ստորագրէ զերևելի դիրս երկուց մեծամեծ լերանց աշխարհի, Արայրատայ և Կովկասուն, տալ զերևելի տարբերութիւնս ի մէջ նոցա՝ բայց ծածկէ զհետևանսն, որք տեղեաւ մօտ իրերաց, այլ վարուք բնակչաց այնքան տարբերք են՝ ասէ, որքան հակնոտնէքն են ի պատմութենէ և յընկերահաշտ կենաց։ Զիմոյ աւանդութիւնք են սրբազանք, զմիւսոյ հեթանոսականք և առասպելականք։ Ի՞ ժայռ՞ ինչ Կովկասու Պրոմեթես ունայ, և Մեդիա թոյն նիւթէ յատորոտին։ Ի կատարն Արարատայ տապանն հանգչի, և Նոյ յառաջ խաղացեալ ի ցամաք երկրի հիմնէ զԱրկուռի, և տնկէ զառաջին որթն ի հովտի նորուն։ Զարդիս իսկ չէ աննշան տարբերութիւնն ի մէջ երկուցուն։ Ի բարձունս Կովկասու թնդիւնք հրացանաց և աղմուկք ցնորելոց. շողիւն մահմեդական զրահից, և դոփիւն սմբակաց հեծելոցն, ծփանք հարուստ զգեստուց, և ծածանք մեծագին զինուց դնեյելոց արեամբ և գերութեամբ սիրուն շոպեայն Եգերայ, անէծք ի վերայ ի Մոսկովաց, և ազատութիւն կամ մահ՝ լսելի լինին։ Իսկ յեմակս Արարատայ քանի՜ զանազանք։ Վանորայք և եկեղեցիք, միանձունք և եպիսկոպոսունք, պատուական նշխարք, և սրբազան տեղիք, մի-եղանակ երգեցմունք, և զանկաց հնչիւնք, լուսաղբիւրն Յակոբայ, և հետք լուղական կարավանին Նոյի։*

*«Արարատ հզօր սահմանագլուխ երից մեծամեծ կայսերութեանց Ռուսաց, Թուրքաց և Պարսից՝ հաւասար հեռաւորութեամբ ի միջի կալով Ծենաց և Թերակղզւոյն Հեբերիացւոց, սառնապատ Լենայ ի խորս Սիբերիոյ ընդ հիւսիս, որպէս և պղտոր ընթացիցն Գանգիսի ի հարաւ ընդ Հնդկաստան՝ միշտ յինքն ձգեաց (ասէ) զուշադրութիւն աշխարհագրաց։ Յամաց հետէ փափագէի այց ելանել*

---

* *Որքան ճշմարիտ՝ այնքան և շքեղ է նկարագրութիւնս. այլ առաւել բերթողի՝ քան ճանապարհորդի վայելուչ։*

*խորհրդաւոր լերին այսմիկ, բրդացելոյ ի միջավայր հնոյ ցամաքին՝ իբրև զպատկեր հրոյ, որոյ հզօր մնացորդք հասանեն մինչև ի սահմանս յաւիտենական սառնամանեաց։ Արարատ ի Հրէայ և ի Հայ աւանդութեանց հաստատի լեալ գլուխ ապաւինին՝ շուրջ զորով. ընդչաց հեղեղն՝ ապիկար յողողել զնա։ Ի գագաթանէ հսկային լլին զոյգ զոյգ ամենայն արարածոց, որոց սերունդքն ժողովրդեն զաշխարհս»։*

*Ընդ Թիֆլիս, ընդ Պէյլիս*[5], *ընդ Աղէքսանդրուպօլ կամ Շիրակուան՝ իջեալ յԵրևան, և ընթերցեալ զոր ինչ միանգամ գրեալ էին պատմիչք և ճանապարհորդք զնմանէ՝ դերևի ի յուսոյն։ Ուստի ի նկարագրել անդ զդաշտն Արարատայ, որ ընդ մէջ Երևանայ և Վաղարշապատու**, *էրէզ անբեր և անջրդի է, ասէ, հատ և անտաշ գմբէթ վանիցն, հողակերտ որմունք, աղտեղի արուարձանք, թշուառական գիւղ, սև սև խողեր տղմաթաւալք, և ժողովուրդքն այլժանիք տեղւոյն, յորոց ոչ յուսայր զբարի ինչ։ Շատ եւեւ, ասէ, զհոգևորականաց Հայոց ի Տփղիս և ի Կոստանդնուպօլիս արգահատել զնոսա (զվանականս էջմիածնի) ըստ արժանեացն։ Ոմանք ի տգէտ և յաղտեղի հոգևորականացն յարեգունիս նստեալ առ մուտք վանիցն՝ քթուէին ոջիլս»։ Ուստի և բացագանչէ խորին նողկանօք.*

*«Երկինք բարութեանց. քանի՛ սակաւ համաձայնին վառուն տորագրութիւնքն՝ յորոց տրդս տեսանին։ Այսօր դրախտ ուխտին փոքրիկ ապականեալ և խոպանացեալ է։ Փոխանակ շահոքրամայ և անթառամաց՝ որք ուրախ արարին զզգայութիւնս բարեբախտին*

---

* *Եթէ հրդուեալ էր Վագներ յոգի անդր Զոյիլոսի՝ միայն գլար խօսել զաշխարհէ և զազգէս մերմէ, թո՛ղ խղճայր գոնէ գիտութեամբ համբաւաւոր ազգի իւրում, զի չարախօսութիւն եթէ յանցանք իմն իցէ, չարալրութիւն յանցաւորագոյն ևս է։ Դիցուք թէ՝ էրէզ անպտուղ իցէ այն աշխարհ, զոր հինք և նորք ամենայն ազգաց վկայեն բարեբեր լինել, դիցուք թէ և գիւղն թշուառական իմն իցէ (որ աւելի ամօթ տիրողին է՝ քան բնակողացն), դեռ ևս՝ ո՞ր ոգի ուսումնասիրութեան կամ քրիստոնէութեան մղեաց զնա համարել զժողովուրդն արժանի տեղւոյն, ապաքէն յամենայն բարւոյ։ Բայց զի ցուցցուք, թէ ամենևին արտաքոյ ճշմարտութեան է գրութիւնս՝ առաջնորդեմք զընթերցօղ մեր ի վերջին հատուած նորա՝ ի քաղուածսս՝ ուր ամենամեծ պիտանութիւնս պարգևէ այսմ* բշուառ և ոչիլ Բրուող ժողովրդեան։

*Յայլուր գտանէ Վագներ զպատճառ ռակուածեոն թուշակօք գիշխանական կեանս վարելոյ Ռուս պաշտօնատարացն ի Հայս. և ամփոփէ զայն ի տեղաշարժութիւն գիւղօրէից և ի կաշառս։ Իսկ աստ՝ ուր մեծ մասն ժողովրդոց գաղթականք են ի Պարսից և ի Թուրքաց. և գրեթէ միշտ տեղափոխին ի Թուրք կամ ի Թուրքաշունչ գործավարացն, որպէս ականատես վկայել կարեմք, լոէ. զի ասել կարիցէ թէ առաջին ճանապարհորդք սուտ խօսեցան, և ինքն միայն ճշմարիտ։*

Տուրնուփորտայ՝ նշմարեմ յայսմ Հայ դրախտի ոչ ինչ առաւել քան զշողգամբ և զկաղամբ, հանդերձ հաստ և անդ մացառապատ՝ գօսահայեաց խառ թթեննեօք, ծիրանեօք, և վայելի և վայրենի ձիթենեօք* անհամ պտղովքն իւրովք։ Ո՛չ հովանի յարեգակնէ, ո՛չ ինչ հաճելի աչաց։ Ո՛չ արտաքին եկեղեցւոյ վանիցն, և ո՛չ ներքին նորա երևեցուցանեն հետս այնց պայծառութեանց, զորոց** երազեցին հին ճանապարհորդք։ Լուսամուտք ընդունարան սենեկի պատրիարքին գեղեցկապէս ներկեալք են ըստ ծիսի Պարսից, բայց ի զուր սպասէր առաջնորդ իմ աստ*** զարմանալոյ իմոյ ընդ այն կամ զմայլելոյ։ Կայ յայսմ արձան կայսեր Նիկողայոսի, կառուցեալ անդր՝ գուցէ ի սկզբնաւորութենէ**** թագաւորութեանն, զի բեխեր չունի, և կուրծք նորա զլայնութիւն։ Ի միւս սենեկին՝ ուր պատրիարքն ընդունի օր ըստ օրէ զբարձրագոյնս յեկեղեցականաց իւրոց՝ է Տիրուհի իմն ըստ Ռափայելի այնքան ճիշտ կիտուածեալ ասղամբ ի վերայ շերամոյ, մինչ ի հեռուստ երևել նկար։ Այս հատոր ասղնէ-

---

* Ջիթենի չիք յԱրարատ, գուցէ հմուտ բնաբանն զփշատին մեր առնու փոխանակ այնր, կամ ճաշակն՝ գիտութեան պէս՝ դալկացեալ էր առ ամենայն ինչ համեղ և գունեղ։ Եթէ իշանն Արարատայ քան զսա ճաշակաւորք չիցեն. հատանեմք զլեզու մեր։

Բայց չկարէ՞ արդեօք սղալումնս Վագների օգնել մեզ ի մեկնութիւն Սուրբ Գրոց՝ թէ «Աղաւնին դարձաւ անդրէն ի տապանն՝ ունելով տերև ծիրենւոյ շիղ ի բերան իւրում»։ Եթէ ուսեալ բնաբանն ի 19 դարու՝ նոյն համարի զփշատին ընդ ծիրենւոյ, գուցէ այնպէս իմացաւ և Նոյ։ Կամ գուցէ յայնժամ կամ ձիթենին՝ փշատի, և կամ փշատին ձիթենի կոչէր. վասն անտարբեր նմանութեանց տերևոց և պտղոցն՝ ըստ արտաքին երևութից։ Փշատին կարճ ծառ է, և միջոց առաջին և երկրորդ անգամ արձակմանն՝ էին միայն ափն աւուրք, յորս հնար էր ջրոյն ցածնուլ։ Եթէ ասասցուք բամ թէ դաշտն Արարատայ ծովացեալ էր ի վեր քան զգլուխս փշատի ծառոց, և աղաւնին յայլուստ եբեր զտերևն, ուրեմն ութն աւուրքն բաւական չէին ցածնլոյ ջրոցն այնքան՝ մինչ կոխս տալ ոտից մարդկան և անասնոցն։ Քանզի և Երասխ մեր տակաւին դժուարաւ ելս գտանէ անտուստ։ —Որ ինչ խորհուրդ յարմարի ձիթոյն, նոյն և փշատի մերում, որ ունի զիւղ և շաքար միանգամայն։

** Զորս ջրել ո՛չ իշխէ, և զի կամակորեալ է ընդ վայր հարկանել, զաշխարհ մի նոր ստեղծանէ երևակայութեան իւրում, զի միայն զչար խօսիցի։

*** Եթէ Վագներ զարմանս կամ զմայլումն չունեցաւ ընդ արքատին վեհարան Հայոց, մեք զերկոսին ևս ունիմք զնմանէ, որ գխող և զոջիլս կենդանի նկարեաց՝ բան զԿաթողիկոս մի, սինհոդոս մի, և դազգ մի։ Խոզից և ոջլոց կարօտ է՞ր Գերմանիա, զորս սա այսքան ճիշդ ստորագրէ։

**** Բարաբալլա Շաշունց Գօզի. «Քրդին ասից Նադուր Նադուր»։ Եթէ ցարն ամէն օր մի պէս սափրիցէ զերեսն, ուրեմն բնաբան մեր՝ ծեր ու մանուկ Վերտումնոս համարել զնա։

*գործութեան առաքեցաւ առ պատրիարքն ի Հնդկաց, ի բարեպաշտ Հայ կնոջէ*։ Է անդ և փղոսկրեայ փորուած պատարագին Աբրահամու, և ընդ որմունս նկարին զարհուրելի տեսարանք նահատակութեանց. մանաւանդ՝ չարչարանաց սրբոյն Գրիգորի կենդանւոյն թաղելոյ ի վիրապին։ Արուեստիւ քանդակեալ աթոռ մի՝ յոր բազմի պատրիարքն ի հանդիսաւոր աւուրս՝ նոյնպէս առաքեալ ի Հնդկաց միայն քանի մի ամօք յառաջ, ուստի՝ որպէս և յայլ օտար աշխարհաց՝ առաւել ընծայք հասանին յաթոռն քան ի Տփղեաց և ի մերձաւոր աշխարհաց բնակելոց ի հարուստ Հայոց։ Յաթոռոյ աստի և անդր արձանք են ցարիցն Ռուսիոյ. զորոց հայրապետքն ո՛չ երբէք խօսին, բայց եթէ ջերմեռանդն խոնարհութեամբ»։*

*Առաջնորդի ապա ի սենեակ իմն (զոր մեք համիմք կոչել խորհրդական կամ սինոդարան), ուր արքեպիսկոպոսունք ունին, ասէ, զժողով իւրեանց։ Հինգ յարժանաւորաց աստի բազմէին ընդ երկայնութիւն սեղանոյ իրիք, զգեցեալք զերկայն կապուտակ՝ լայն թեօք և զթասակ ի գլուխս։ Մին ի ծերանի և թաւշազարդ յաթոռի, ի գլուխ նորա (սեղանւոյն), յանդիման կացուցանէր զաններկայ Հայրապետն։ Գեղեցիկ ոք էր նա, հրապուրիչ մօրուօքն, զորով և խանդաղատէրն իսկ. որ ձեռն ի կուրծ տալով, և մեծաւ վեհանձնութեամբ ասաց, թէ՝ «ազդեալ ի Ռուսաց հազարապետէն Նէյդարթայ[6], վա՛ղ սպասէաք քեզ։ Բոլոր միաբանք մեր խնդան տեսանել ի մէջ պարսպացս զայր ոք ըստ քոյ արդեանց և համբաւոյ»։ Վադներ՝ որ ըստ Բլաքվուդայ՝ ո՛չ համարէր զսրբութիւն Արարատայ, կամ զապատակութիւն Քուրտ աւազակաց առաւել մեծարելի քան զեկն իւր, ասէ համառօտ և անհաւատարիմ ոգւով. «Բարուք** գիտէին, զի ոչ ոք գրէր բարի զինքեանց, զի Եւրոպացի գիտութիւն գարշութիւն էր ի քիմս նոցա, մանաւանդ թէ և բնաբանքն ի նոցանէ՝ համարէին երևութականք և անհաւատք, և դատապարտեալք ի կորուստ յաւիտենից։ Որովհետև ինքն (չին) կամ նշան չունէր, ոչ յարգեցաւ. և յորժամ կամեցաւ տեսանել զեկեղեցին*** Բարսեղ եպիսկոպոս*

---

** Առաքեցաւ ի Տփղեաց՝ յազնուահի տիկնոջէն Մենիշկարեանց. ուստի ընդունայնս խօսի Վադներ։*

*** Ուստի՞ գիտաց Վադներ. «եթէ գիտէին զի ոչ ոք գրէր բարի զինքեանց», որ եթէ ճշմարիտ են՝ տակաւին պարծանք քրիստոնէութեան նոցա՝ որ և ոչ գիտացեալ չարախօսն իբրև զհիւր ընկալան և կերակրեցին։*

**** Ինքնամեծար սինլքորիս ականի՞ր, որ յուսայ, զի անզապահ կաթուղիկոսին առաջնորդիցէ զինքն ի տեսութիւն եկեղեցւոյն։ Շատ չհամարի ապաշնորհն և զարքիմանդրիտին շնորհ։*

տեղապահ Կաթուղիկոսին առաջնորդեաց զնա առ սակաւիկ մի, և ապա յետս եկաց. ուստի միայն մի աբեղայիւ և Ապովենիւն՝ առաջնորդեցաւ ի տեղին, զոր կրկնակի բարեբախտութիւն իւր համարեցաւ, զի կարէր բազում հարցմունս առնել և պատասխանիս գտանել, զոր հարկիւ տեղապահ Հայրապետին ո՛չ առնէր»։

Զներքին եկեղեցւոյ Շողակաթին էջմիածնի կարի ճիշդ ստորագրէ, զիջման տեղին դնէ վայրն՝ ուր երևեցաւ Լուսաւորչին Տէրն մեր ոսկի ուռամբ հալածել զդևս ի սանդարամետս անդնոց. ուստի և մուտս ասէ զոլ ի ստորին բաւիղս նորա։ Եւ խօսելով զմասանց սրբոց յիշատակէ զաջ Լուսաւորչին, զգագաթն Հռիփսիմեայ, զմասն Նոյեան տապանին, և զգեղարդն՝ որով խոցեցաւ կող կենարարին, և ասէ.

«Ցանկացայ տեսանել զնշխարսն, որում պատասխանեաց արքիմանդրիտն թէ հանէին միայն մեծաւ հանդիսիւ աղօթից և երգոց առ որ պիտէին ծախք ինչ։ «Երկու* դուքատք» փսփսաց յունկն իմ։ Նորասէր որքան և էի տեսութեան գեղարդին և մասին փայտի տապանին, վասն քննելոյ թէ** զինչ ներգործութիւնս արարին դարք յայսքան ժամանակաց հետէ ի վերայ նոցա, սակայն գինն շատ բարձր էր։ Եւ ըստ որում արժանաւոր արքիմանդրիտն հայէր հարցանողաբար, չոր ու ցամաք ասացի ցնա՝ թէ վասն տեսութեան մասին ինչ փայտի, թէպէտև հին և սրբազան՝ աղքատ Գերմանացի բնաբանն չունէր Դուկատս ի ծախս»։

Գնայ աստի յայցելութիւն գրատան աթոռոյն, զորոյ Ճառեմաբանագիրն բազում իրաւամբ ասէ, թէ «զամս բազումս դիզեալ կացին գրեանքն ի խորշ ուրեք խաւարային յերեսաց վանդալական

---

* Եթէ յետ այսքան ստոց և չարախօսութեանց, հաւատալ արժան իցէ Վագների, առեամք զշնորհավաճառութիւն վարդապետին մերոյ։ Որոյ զանունն խորամանկութեամբ դաղէ առ ի ծածկոյթ ստութեանցն։

** Ի ծանօթութեանն ի ներքոյ՝ յիշատակէ թէ «պարզամիտ և տգէտ Հայք հաւատան մնալ մասին փայտի տապանին յայսքան ժամանակաց հետէ»։ Թողեալ զի փայտ տապանին անփուտ յիշատակի ի Սուրբ Գիրս, դամք այժմ հարցանել չիմաստուն բնաբան մեր, որ եթէ փայտ, փուտ կամ անփուտ, վերացեալ քան բղսահման փտութեան ի մէջ յաւիտենական ձեանց, ուր օդ ոչ իշխէ մտանել. ապականիցի, ուրեմն զիա՞րդ ինքեանք ասեն, թէ «Իւղ վարդի յեգիպտոսէ 2 կամ 3000 ամաց հետէ, դեռ տայ զանուշահոտութիւն իւր։ Կամ զիա՞րդ Կաղնին և երկաթի դամքն ի կաղնւոջ Կարնըվալիս նաւուն՝ որ սուզաւ յանդիման Բոմբայի կղզւոյն, անապական մնացին։ Ընդէ՞ր իւրեանք զամենայն ինչ Եգիպտացի կլանեն, և զիւրեանցն ամենեցուն կլուցանեն, բայց զմերն՝ որ յազգաց և յաւիտեանց շարունակեալ՝ իբր զանհաւատալիս մերժեն։ Ա՞յս իցէ պտուղ արդի լուսաւորութեանն Եւրոպայ, ցաւի՛մք։

ասպատակութեանց Պարսից, Մարաց, և Թուրքաց, բայց յորժամ Երևան առաւ, և օրէնքն հաստատեցան, սեննակ իմն սրբեցաւ նոցա, և բազում գրեանք դասեցան ի գզրոցս»: Բայց Վագներ ասէ օրինակ զայս.

«Ո՛չ բնաւ կարեմ, որպէս ականատես ասել, թէ՝ և գրատուն հարուստ Քօրուղլւոյ ի Կոնստանդիա (յԱփրիկէ), որ յաւարի հարաւ ի յաղթողացն, երևեցուցանէր զպատկեր չարաչար ևս եղծութեան՝ քան զոր գրատուն աթոռոյ պատրիարգին Հայոց: Հարցի ցգրատան վերակացու վարդապետն՝ որ ընկերէր ինձ, ցուցանել ի մէջ պատմութեանց զգիրս Մովսիսի Խորենացւոյ: Պատասխանին եղև, թէ Ոչ կարէր գտանել*: Ուսեալ վերակացուն գրատան ո՛, գիտէր ու՞ր գտանել նաև զայս քաջ ծանուցեալ և հասարակեալ պատմութիւն: Հարցի ապա զԹուոյ ձեռագրացն, և վարդապետն կարճ պատասխանեաց, թէ ո՛չ գիտէր»:

Գնայ աստի ի վարժարան աթոռոյն.

«Այժմ խնդրեցի, ասէ Վագնէր, ի պարոն Ապովենէ հարցանել տղայոց զըստ կարևորին պարզ և հեշտ բառս, զոր օրինակ թէ «Տարին քանի՞ օր ունի»:** Ոչ ոք ի նոցանէ ասել կարաց, թէպէտև

---

* Եթէ հաւատասցուք Վագների, ուրեմն պիտի ենթադրեմք թէ կամ գիրք ըն-թեռնուլ բնաւ չկայր յԷջմիածին, և կամ թէ ի լինել հարկին՝ ամսօրեայ ժամանակի, կամ ամենայն բազմութեանն պէտք լինէր ժողովել ի գտանել զգիրք իմն, որք անհնարինք էին նա և ընդդէմ ասարկեալ ծոյլութեանցն իսկ: Ի սմին յայսմիկ՝ երևի միայն արհամարհութիւն վարդապետին առ Վագներ, որ ի մարդոյ տեղի ո՛չ եդ զնա, քան եթէ յիմարութիւնն: Բայց և զարհամարհելն իսկ՝ ո՛չ յաստգամեմք: Պիտի չընդունել զոք ի հիր. բայց երբ ընդունիցիմք, պարտաւան եմք հիւրասիրել, եթէ ո՛չ վասն արժանեաց իւրոց՝ գէթ վասն փառացն Աստուծոյ:

** Բայց Բլաքվուդ այսպէս գրէ ասա.

«Հաւ կարէին տեղապահ Պապին Հայոց (որպէս կաթուղիկոսն իւօք է, թէպէտև մականուն նոր պատմամբ փոխի յօտարաց ի պատրիարք և էթ), և եպրայր սրբ-ակիսկոպոսունքն զպալ զպատրանս իւրեանց ի տեսոյ հեզահայեաց Գերմանացւոյն, որ պատասխանեաց այգորանաց իւրեանց ծանր հեզնութեամբ զբաղում ասաքինու-թեանց և զյայտնի համբաւոց նոցա: Եւ որ զարդիս ի գիր համեալ զնոսա, քարշէ, միջատէ, և յօշոտէ իսկ զնոսա անողորմն կարօցաւ: Որքան ինչ միանգամ առաջին փորձառութիւնք նոցա՝ լեալ իցեն զբանահաւաք ճանապարհորդաց՝ թուի թէ ան-բաւականք եղեն ի զգուշացուցանելոյ զնոսա յանխոհեմութենէն, որով թողին Վագների համդէս առնել հարցաքննութեան աշակերտաց եկեղեցական սեմինարանի իւրեանց: Իսկոյն յայտնի եղև յանհաւատալին՝ յիմարութիւն ուսանողաց և ուսուց-չացն: Երիցագոյնն ի դպրոցին ո՛չ կարաց հոլովել զԲառս անուանս Մաշ (մայր), թէպէտև զանս բազումս վարդապետ ոմն ուսուցիչ էր այնր լեզուի, որ որպէս ասէ Վագնէր, ինքնին եկն յօգնութիւն շփոթեալ աշակերտին և փորձելով Ապովենին կառավարեաց ցուցանել, թէ և ինքնին չգիտէր զհոլովմունս Բուսաց»:

բազումք մօրուաւոր մարդիկ* և յիշո՞ց յայսցանէ ընտրին արքեպիսկոպոսունք Հայո՛ց։ Ուսումն ի վանական դպրոցի այսմիկ որոշի ի մեքենական կրթումն ձայնաւորաց, յանփոյթ և յաննշանակ կըրկընութիւնս աղօթից և հատուածոց Սուրբ Գրոց։ Քաջավարժք են ի պահս, և դոյզն յանցանք արտաքին կարգաց, և անմտադրութիւն ի պատարագին՝ պատուհասին անդուլ հարուածովք։ Եւ չեն զարմանք, եթէ այսպիսի վարմունք շիջուցանիցեն զամենայն կենդանութիւնս մտաց։ Կարօտի միայն հայելոյ ի դեղնած թխնած և ի նիհար դէմս տղայոցն. և ահա յայտնի լինին զարհուրելի հետևանք սորկական և հոգեկործան եղանակին դաստիարակութեան։ Խորին զզուանօք թողի զդպրոցն»։

Բլաքվուդ քաղելով ի Վագներայ և յայլոց՝ ասէ. «Տարապայման ժամքն պահեալք ի վանսն՝ մեծապէս վտանգեն զկեանս հոգևորականաց. Չիք ինչ այնքան ծաղրալի, անդաստան, կամ յայտարար բարբարոսական տգիտութեան և նախապաշարութեան, քան ըզկարգն ընկալեալ յէջմիածին։ Ի մին ժամու առաւօտուն պաշտօն եկեղեցւոյն սկսանի, ուր պարտին ամենեքին ներկայ լինել բաց ի պատրիարքէն**։ Արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք, կարդան զաղօթս և հատուածս ի Սուրբ Գրոց. վարդապետք, սարկաւագունք և մոնթքն երգեն։ Այս պաշտօն տևէ յերից մինչև ի չորս ժամս, և ըստ որում ամենեքին յոտն կան ընդ բովանդակ ժամանակն՝ ո՛չ սակաւ վաստակին։ Ի դառնալ անդրէն ի խցակս իւրեանց՝ երիցունքն՝ որք կարողութիւն ունին՝ առնուն նորոգարարս ինչ՝ նախ քան զքունս իւրեանց, կրսերքն ի նոցանէ՝ որք առաւելագոյն պէտս ունին սննդեան՝ կարողութիւն չունին. ուստի և պիտի սպասեն ցտասներորդ ժամն յառաջ քան զմիջօրէն, զի ընդունիցին զսակաւամասնեայ կերակուր ջրապրոյ և կաթին, հետևելոց երբեմն ձկամբ և բրնձով։ Յընթացս երկար պահոց նաև ձուկն պակասի։ Լուծանել զպահս ի Հայաստան՝ ամենաչար յանցանք է, անցեալ զանցեալ զգողութեամբ ի մեծութեանն։ Ի տունջեան պարապին դպրութեան.

---

* «Անհաւատալի» որքան և արդարութեամբ վարկանի զայս Բլաքվուդ, օրինակաւ ազգին և աշխարհին յորդորեալ, ցաւիմք, զի եթէ և զչափազանցութիւնն Վագների ի բաց խուզեսցուք, դեռ տակաւին մնայ անդ անուսումնասիրութիւն բաւական յամօթ և ի նախատինս մեր։ Եթէ օրինակ այլոց ազգաց ոչ ինչ ազդէն սրբակրօնիցն Էջմիածնի՝ թող գոնէ օրինակի աշխարհականաց ազգի իւրեանց հետևիցեն։ Ո՞ր հին կամ նոր հայ հեղինակ չասաց ըստ Վագներայ. «Այս աշխարհ իշոց է՝ քան թէ մարդկան»։

** Զի հայրապետն ունի զիւր առանձինն աղօթարան ի վեհարանին։

ընդ նրեկս և երեկոյս՝ երգոց և աղօթից. ապա յանկողինս՝ զի վերստին զարթնուցուն զկէս գիշերով։ Այսպիսիք են անուրախ և ձանձրալի կեանք միաբանից Էջմիածնի։ Չիք անդ ուսումն մակացութեանց կամ պատմութեանց. և ո՛չ մշակութիւն բարսկաբանից զբօսեցանէ զմիօրինակութիւն տառապեալ կացութեանցն։ Գործիքական երաժշտութիւն անծանօթ է առ նոսա. և որ ինչ միանգամ զուարթացուցանեն և վայելչացուցանեն զմիանձնութիւնն՝ խստիւ արգելեալք են նոցա։

«Ունեալ Եւրոպացին, ասէ Վագներ, ոչ ուրեք գտանէ զկեանս իւր այնքան ծանրատաղտուկ՝* որքան ի մէջ Հայ աբեղայից, համեմատութեամբ որոց նաև իտալական մոնախութիւն երևի զուարթ և հաճոյական»։

Խօսելով զընտրութենէ կաթուղիկոսին՝ որ յապրիլի 1843 ամին՝ ասէ, թէ գոլով իւր յայնժամ ի Տփղիս՝ թէպէտև կամեցաւ ականատես վկայել հանդիսին, այլ որովհետև ժանտախտն բռնացեալ էր ի սահմանին Երևանայ, անագանեցաւ. քանզի չէին կամք իւր զաւուրս քառասուն ի քաւարանի կալ ի դառնալ իւրում անդրէն ի Վիրս։ Այլ գրէ երկրորդաբար օրինակ զայս.

«Առ պատերազմաւն ի մէջ Ռուսաց և Պարսից՝ յորժամ կեռ սուսերք Ատրպատական Թաթարաց վարեցին զտիգաւորս Կայսակաց յայսկոյս Երասխայ՝ միջոց իմն պարապոյ տուաւ գործոց բանակին։ Կոմս Պեսկովիչ մնայր դեռ օգնութեան ի ներքին Ռուսաց նախքան զխաղալն ի Դավրէժ, մինչ գունդ ինչ Պարսից խառն ի Մարաց և Թաթարաց յարձակեցան յափշտակել զԷջմիածին։ Բայց սրբակրօն բնակիչքն զգուշացան անձանց՝ ամրանալով ի միջի բարձրաբերձ և հողակերտ պարսպացն։ Պաշարեալ և ցաւագինս մղեալ ի վայրենի ասպատակաց աստի՝ Ներսէս (յայնժամ արքեպիսկոպոս տեղւոյն) փայեակ արձակեաց առ հազարապետն Ռուսաց՝ որ սակաւաձեռն գնդօք բանակէր աւուրց ինչ ճանապարհաւ հեռի (յԱպարան) որ հայ գոլով ծննդեամբ՝ իբրև որդի հայրամեծար պատուէր զՆերսէս։ Ոչ համդուրժեալ ջերմեռանդն աղաչանաց նորա յօգնութիւն, խաղաց խուճապաւ ի վերայ վանիցն, թէպէտև խստիւ արգելեալ ի զօրապետէն չթողուլ զտեղի իւր առանց յայտնի հրամանի իւրոյ։ Ի նմին ժամանակի և գունդն Պարսից ստուարացաւ կանոնաւոր զօրօք Աբբաս Միրզայի, և** հնգիցս առաւելաւ քան զզօրութիւն դիմաւոր

* Կարի ճիշդ և ճշմարիտ է։

**Համաձայն գրէ Վագներ աւետարեր կոնդակին՝ զոր գրեաց տէր Ներսէս առ Հայս Հնդկաց՝ յԱպրիլի 18—28։ Տե՛ս յօրացոյց 1829 ամի ի Կալկաթա՝ էջ 42—6[illegible]։

ճակատու թշնամւոյն։ Յանդիման էջմիածնի ռուսք յաղթեցան, և յանցանքն եդան ի վերայ արքեպիսկոպոսին Ներսիսի, որոյ քահանայական արտունութիւն մղեալ էր զհազարապետեան խոստել զպատգամս զօրապետին։ Կայսերական հրամանաւ փոխադրեցաւ Ներսէս և առաքեցաւ ի Քիշնև, իբրև արքեպիսկոպոս, բայց յամին 1843 նաև ընդդէմ նախատանացն ի կայսերէն վերապատուելի Հայրապետն ընկալաւ զհամաձայն քուէ ընտրողացն գումարելոց յէջմիածին։ Նիկողայոս ո՛չ կամեցաւ հակառակել յայտնի կամաց հոգևորականաց և աշխարհականացն, այլ հաստատեաց զընտրութիւնն։ Միանգամ դարձեալ արեգակն կայսերական շնորհաց և պատուոյ ծագեցաւ ի վերայ Ներսիսի, կոչեցաւ ի Սուրբն Պետրոսբուրգ. և վաղվաղակի Աստղն առաջին աստիճանի Աննայ պսպղաց ի կապուտակ վեղարին։ Յաշնան 1844 անց այսր ընդ Կովկաս, ուրախ ընդունելութիւն ընկալաւ իւր ի Տփղիս, և ի ձայն զանգադաց և երգոց քահանայից եմուտ, իբրև հոգևորական գլուխ Հայ քրիստոնէութեան ի հին աթոռն առ Երասխաւ, զոր վեշտասան ամօք յառաջ թողեալն էր գրեթէ որպէս աքսոր ոք։ Ներսէս է ութսունամեայ. և կատարելութիւնք նորա, որք երկար պահեցին զառողջ եղանակս իւրեանց՝ ի վերջոյ ասին՝ թէ տկարացեալք իցեն»։

Եւ այսքան իսկ ի Վագներայ շատ է մեզ, քան բաւական։ Բայց Բլաքվուդայ խօսելով զընտրութենէ յայսմանէ՝ ասէ. «Մեծ էր յոյժ և նշանաւոր։ Զի ոչ պակաս եղեն հերձուածք յեկեղեցւոջ Հայկազնէից. ամպարտաւան երիցունք և սուտ պատրիարգունք երբեմնապէս ի վեր յարեան և գտին կուսակիցս։ Ի բազում դարուց հետէ մի ի պիտակ կաթողիկոսաց աստի՝ ունի զաթոռն ի կղզի ինչ ծովուն Վանայ. և կայ անկախ ի խորհրդարանէն էջմիածնի։ Այլ այս Հայոց հակապապք (կամ հակառակաթոռ հայրապետք) ո՛չ երբէք ընդհանրացան, և ի վերջին ժամանակս դղրդեցան և յորոց ունէինն իսկ։ Մայր եկեղեցի Արարատայ սակաւ առ սակաւ ընկալաւ զմիահեծան իշխանութիւն և զառանձնաշնորհութիւնս իւր, և ի 1843 ամին ետես ի մէջ պարսպաց իւրոց՝ զոր ի բազմաց հետէ չէր տեսեալ, զբոլոր գումար Գրիգորական ժողովրդեան Արևելից, հաւաքեալ ի կեդրոն պատմութեան իւրեանց՝ յընտրութիւն հոգևոր հովուի»։

Հուսկ ապա գնայ Վագներ, և սովորական խորամանկութեամբ իւրով ընդ մէջ լուսայ գաղտնեաց կառավարութեան Ռուսաց յապագայ յաղթութիւնս դրացի կայսերութեանց։ Գովէ զիմաստութիւն կայսերն ի վարելն քաղցրութեամբ ընդ Հայ հպատակաց իւրոց, և ցուցանէ զօգուտն զոր քաղեաց և քաղելոց է ի նոցանէ։

«Իսլամ ազգք և տէրութիւնք յԱսիա խոնարհին օր ըստ օրէ, այն ինչ քրիստոնեայ սկզբունք օր աւուր կշիռ առնուն. որք թէպէտև չեն դեռ զօրաւորք ըստ բաւականին հաստատալոյ զտէրութիւն գիւրեանցն, բայց իբրև օգնականք եւրոպական զօրութեանց կարի մեծագոյնք են։ Յորժամ, յետ յաղթական զօրաց Պասկեւիչի մտանելոյ ի մայրաքաղաքն Ատրպատականի, Ֆաթալի շահ զկողանի Հարկանէր յաթոռ իւրում (ի Թեհրան) և հպատակաբար ձեռնագրէր զդաշինս խաղաղութեան ըստ հաճոյից զօրավարին Ռուսաց, բազումք համարեցան թէ Ռուսաստան կարի առատաձեռն գտանէր խոնարհեալ թշնամւոյ իւրում։ Զի դիւրաւ պահել կարէր ընդ պարտեալն Ատրպատական, կամ պարտաւորել զարքայն Պարսից փոխանակել զայն ընդ գեղեցիկ նահանգացն Գիլանայ և Մազանդարանայ։ Բաժինն Հայոց, որով շատացաւ, չէ հրապուրիչ ստացումն ինչ, թէ ըստ չափուն և թէ ըստ պտղաբերութեանն, բայց ունի յինքեան զԳրիգորեան մայր եկեղեցին և աշխարհական տիրապետ նորա յինքն գրաւէ զհոգևոր զէնս Կաթուղիկոսի և սինհոդոսի նորա, որք ձգին ուր ուրեք և Հայք բնակին։ Վերջին դաշնադրութեամբ ընդ Պարսից և Թուրքաց, Ռուսաստան լռելեայն՝ այլ լի խոստովանեցաւ զարժէս այսր սահմանի, որ այսքան սրբազան Հայոց։ Խոհեմութիւն էր յաւելուլ ի վերայ ահեկին Երասխայ, ուր Էջմիածինն է, և զմասն ինչ յաջմէ նորա՝ ապահովել և զմասն լերինն Արարատայ, զի հիւսիսային կողմն լերին առաւել պատուէր ի Հայոց վասն վանից և աղբեր Սրբոյն Յակոբայ՝ նախ քան զկործանումն նոցա յերկրաշարժէն եղելոյ յամին 1840։ Այս սահման պարունակէ ընդ ստոյգ դասական պատմութիւն Գրիգորական եկեղեցւոյ Հայոց։ Զիք տեղի ինչ յարևելս այնքան սուրբ և ձգողական բարեպաշտութեանց Հայոց, այո՛, ոչ և Գերեզման Փրկչին յԵրուսաղէմ, կամ հռչակաւորն Սուրբ Կարապետ առ արևելեան Եփրատաւ։ Թիւ տարեկան ուխտաւորաց թէպէտև այժմ չէ այնքան, որքան Տավերնէր և Շարդին գրեն, սակայն դեռ կարի մեծ է։ Եւ յաւուրս Զատկաց մեծ բազմութիւն ուխտաւորաց գան անդր ի Գանձեայ և յԻնդոսէ, ի Դոնէ, Յորդանանէ, և ի Նեղոսէ։ Թէ շահ և սուլթանն քաջ ճանաչեն զյարգ այսր սահմանի՝ առ որ համահաւաքին համակրութիւնք ամենայն Հայոց։ Աբբաս Միրզա՝ յորժամ մարզպան Ատրպատականի* մեծ իմն համարէր զԿաթողիկոս և զսինհոդոս նորա, և շողոքորթէր միշտ ի

* Յոր ամենայն արդարութեամբ մակաբերեմք թէ Ղաճար իշխան մեր չէր այնքան անմիտ յընդրութեանն, որքան եղև քրիստոնեայ Գերմանացին ի գիրս իւր։

կողմն Պա.րսից։ Երկար ջանացաւ այս պատերազմասէր իշխան մղել զԹագաւոր Հայր իւր վերստին փորձել զբախտ իւր ի զէն՝ քան Թողուլ զկալուածն ի ձեռաց, ոչ այնքան արժանի ըստ սակի հարկացն՝ զոր տայր, քան վասն հոգևորական իշխանուԹեանն զոր տարածէր առ քրիստոնեայ հպատակս Պարսկաստանի»։

## 30. <ՊԱՏԻԺ ՄԵՂԱՑ ՀԱՍԵԱԼ Է>

Լուիս Նապոլիոն ընտրեցաւ զառաջինն մի յազգային երեսփոխանաց Գաղղիոյ, յետոյ գահակալ երեսփոխանացն ատենի, և հուսկ յետոյ՝ միահեծան աշխարհին ընդ արիւն և մահ ընտրողաց իւրոց։ Իսկ զարդիս՝ Թուի Թէ զպանրոյ տիկն ի յուղ տեսեալ կամ զԱնգղիա մունչ ընդ արարս արեան իւրոյ՝ մերկանայ ի ջուր անդր, զի զպանիրն պարարտ յափիցէ ի գիրկս իւր տկովն հանդերձ։ Եւ ով կարէ ասել, Թէ մի գուցէ արջ փոխանակ ունիցի զինքն, որպէս երբեմն զնախնին իւր։ Բայց չէ, շփհրական ազդեցուԹիւնն ասէ, Թէ Լուիս Նապոլիոն, ցարն Ռուսաց, կայսրն Աւստրիոյ, Պապն Հռովմայ, և արքայն Նէապոլիտաց միաբանին խոնարհեցուցանել զԱնգղիա, զոր քարոզելոց են նախ՝ ապաւէն հինից, և ապաստանարան ամենայն խռովարար փախստէից։ Ապա Գաղղիա առաքելոց է ի վերայ Լոնդոնայ 80000 և ի վերայ Իռլանդայ՝ 200000ս զօրաց։ Եգիպտոս շուրջ պաշարի հատանել զհաղորդուԹիւն Հնդկաստանի ընդ Անգղիոյ. առտնին խռովուԹիւնս յարուցանելով անդր ծախիւք Գաղղիոյ և Ռուսաստանի. և կայսրն Նիկողայոս ինքնին յարձակելոց է ի վերայ Կոստանդնուպօլսի։ Շատ լաւ։ Բայց և ԿասուԹ Հունգարացին՝՝ Կոստանդնուպօլսոյ տնօրինող քահանայի պէս՝ ո՛չ տուն Թողու յԱմերիկա՝ ո՛չ կրպակ, ո՛չ դեօղ, ո՛չ աւան, ո՛չ քաղաք, ո՛չ վիճակ, ո՛չ գաւառ, և ո՛չ նահանգ, յորս ոչ մտանիցէ, և հաւաքիցէ ի նոցանէ խաչահամբոյրս զինուց և զօրուԹեանց՝ յօգնուԹիւն հայրենեաց իւրոց՝ ընդդէմ բռնակալուԹեանցն Աւստրիոյ և Ռուսաստանի միանգամայն։

Ռայլիֆ փաշա, արդարև բարեկամ է ընդ Ռուսաց, որ կարգեցաւ ի տեղի Ռէշիդ փաշային՝ նախարար մեծ դրանն մեծի, բայց և այնպէս՝ ոչ հաւատամք, եԹէ բարեկամուԹիւն նորա առ Ռուսս եզերիցի ի մատնուԹիւն հայրենեաց։ Եգիպտոսի փող ընդունել յօտարաց և փողոցել զեղբարս և զընտանիս՝ ընդ բանացի կառավարուԹեամբ Աբբաս փաշային՝ տղայական կարծիք են։ Բայց Թէ այսպէս և Թէ այնպէս, հզօրք զհզօրաց բան և լեզու հասկանան, և

*ինքեանք լաւ գիտեն զգործս իւրեանց։ Մեք՝ որ մինչ օրս հինգ ուլից հրամայել չունեցաք, զի՞րդ գիտիցեմք թէ սոքա զինչ առնիցեն, և նոքա զինչ։ Միայն տեսանեմք, զի երկոքին ևս հսկայք՝ բազկունս կորովիս ունին, զոր եթէ փոխանակ իմաստութեամբ ի շինութիւն աշխարհի գործ դնելոյ՝ զիւահարեցին ի թշուառութիւն անձանց և հայրենեաց գործ դնել. ուրեմն պիտի ասել, թէ պատիժ մեղաց հասեալ է։*

## 31. <ՌԻՋԻՆԱԼԴ ՀԵԲՐԻ «ՊԱՂԵՍՏԻՆ» ՊՈԵՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ>

*1825. Իսկ ամեներան հարք մեր[1] որ տակաւին դեգերէին ի Դաքայ պատճառաւ յօղածոյ կտակին Յարութիւնի Միքայէլեան[2], տեսեալ թէ չեկաց այլևս յոյս ակնկալութեան կթելոյ ի քարանց բուրդ, ուխտ եդին անբաժան ընկերութեամբ ելանել յԵրուսաղէմ։ Այլ իբրև պատրաստեցան կազմեցան կացին հանդերձանք նաւարկութեանն՝ դիպաւ իմն զարթուցեալ արհւոյն Պօղոսի յետս ընդ կրունկն դառնալ յուխտէն միաբանութեանն. իսկ Աբրահամու ինև հանդերձ ժամանեալ ի Կալկաթա՝ թողու զիս անդ ի գործ դաստիարակութեան Մարդասիրական ճեմարանի հայոց[3] և ինքն նաւէ գնայ ի Մադրաս։ Ուրանոր բարւոք տնտեսութեամբ զառաքելութեանն իւր պսակեալ զգործ, եօթնից ամսոց զկնի վերադառնայ ի Կալկաթայ՝ դէմ եդեալ ելանել յԵրուսաղէմ։*

*Առ սովին ժամանակաւ, որ օր չորրորդ էր ամսեան դեկտեմբերի, դարձ արարեալ և ելանելւոյն Ռիջինալդայ գայ ի նիստ եպիսկոպոսեանն ի Կալկաթայ։ Գրէ առ նա հայր Աբրահամ ձեռամբ պարոն Կարապետի Յակոբեան ցուցանել զանձուկ փափագանաց տեսութեան նորա. ժամ եդեալ երանելւոյն ընկալաւ զնա և եցոյց նմա զամենայն պարտուպատշաճ մեծարանս ըստ արժանի կարգին սրբութեան»[4]։*

*1826. Յամսեան յունուարի, այն ինչ հանդերձեալ էր տեառն Աբրահամու ելանել ինև հանդերձ Երուսաղէմ, հնգետասան աւուրբք յառաջ մատուցեալ առ նա խնդրեցի աւանդել զիս ի խնամս Ռիջինալդայ, զի ընկալցի զիս յեպիսկոպոսական ճեմարան իւրեանց յուսումն անգղիակա՛ն բարբառոյ։ Գրեցի և զերկուս եռանդատն աղերսագիրս առ այս գլուխ և իբրև ըստ ամենայնի հաւան և հաճ գտի զնա յայսմ, ելի իսկոյն առ ոմանս ի ներսին մտերմաց իմոց և հարցեալ զմիտս նոցա, խրախոյս կալայ չծախել ունայնութեան*

զժամանակն յաջողեալ տերամբ, վասնորոյ վեց աւուրբք յառաջ քան զելսն իւր, առեալ միջնորդի մշտնջենաւոր բարութեան իմոյ ըղ-պարոն Կարապետ Յակոբեան և զիս, գնաց յողջոյն հրաժարանաց սիրականին իւրոյ ի տէր, ուր ի կատարիլ նախաճաշուն առանձնացեալ ի դիւան անդր, յոտն եկաց նա և խօսեցաւ ցերանելին, այսպէս. «Տէր իմ, ծանուանս խնդրեմ, այլ սէր Ձեր թեթևացուցանէ ինձ զնոյն։ Բազմիցս պատահի Անգղիացի ճանապարհորդաց հիւրիլ մեզ այլ առ ի չգոյէ լեզուագիտութեան՝ օտար մտեալ և օտար ելանեն։ Մշտնջենաւորել կամելով ապա բարեկամութեանն ընդ մեզ և ընդ ձեզ աւանդեմ ահա՛ ի խնամս ձեր զորդի իմ զՄեսրովպ Դաւթեան, ընդունել իմոյին ծախիւք յեպիսկոպոսական ճեմարան ձեր յուսումն անգղիական բարբառոյ»։

Յայս բան սակաւիկ մի զկայ առաւել երանելւոյն, եհան ըղ-կանովնս ճեմարանին, հայեցաւ ի նոսա ընդ հարուստ ժամս մտախոհ յափշտակութեամբ, և երևէր դժուարել խնդրոյն. բայց ի վերջոյ չփեալ նորա զճակատ իւր պարզեաց գոդ դու, յամպածին մռայլութեանց անտի հոգոցն տարտամականաց և ծաւալեալ ի դէմս իւր զծիածան զթութեան, ասէ. «Սահմանք ճեմարանին չներեն ինձ ընդունիլ զոք չափահաս՝ յաշակերտութիւն տեղւոյն, այլ ես ընկալայց զսա ոչ իբրև զաշակերտ, այլ իբրև զմտերիմ, և կամիմ դմա ուսանիլ զանգղիական և լատին և զհելլեն դպրութիւնս միանգամայն, ոչ ձեր՝ այլ իմով ծախիւք»[5]։

Իսկ հայր Աբրահամ յետ այսօրինակ աստուածանման բարեբարութեան և երախտեաց, խնամոց Տեառն յանձին եղեալ դառնայ գնայ յԵրուսաղէմ։

«Կարի իմաստուն առած է նախնեաց,
Թ՚է մարդս մարդով միայն լինի մարդ.
Քանզի և գոհար ու մետաղ հանքաց,
Անփորձ ի մարդոյ ոչ շողան ի զարդ»։

## 32. ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐ ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ ՍԱՐԿԱՒԱԳ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

### < Առաջաբան >

Գիտութիւն դիցաբանութեան թէև առ ի չգոյէ քերթողաց յԱզգի մերում խոտան գտաւ առ ի մէնջ, սակայն այնքան արգոյ ընծայեցաւ յաչս լուսաւոր ազգացն Եւրոպայի, մինչ զի գրել զսա ո՛չ միայն

իբրև նախաշաւիղ դպրոցական դասառութեանց, այլ և դայեակ վերծանութեան նախնի խրթնութեանց, բացարան առասպելեալ հնութեանց, և լուսարան պատմութեանց՝ քերթողութեանց և զրուածոց. և սկզբնադարան՝ ուստի ստեղծաբանք զերևակայականս, և պատկերահանք զընդօրինակսն հանեալ զառարկայս՝ գեղերեսեն ուրոյն նոքօք զարուեստս իւրեանց։

Վասն այսորիկ և ես՝ որ յանձին կալայ իմովսանն նպաստել ազգային գրագիտութեան, ձեռն արկի ի շարայարութիւն կրկին հատորոց դիցաբանութեան ի բարբառս մեր՝ զՀնդկայցւոցն ասեմ և զԵւրոպացւոցն առհասարակ։ Այլ քանզի հնարին չէր Հայ լսելեաց հաւանել անծանօթ խրթնաբանութեանց, առասպելեալ աստուածաբանութեան մերկիմաստակացն Հնդկաց՝ առանց ճշգիւ համեմատութեան դից սոցա ընդ դիս հնոյն Յունաստանի, վասնորոյ արժան դատեցայ նախ զայս հատոր համառօտել նոցա ի վերծանութիւն, զի յերևիլ մեծահատոր Հնդկացւոյն նպաստեալ ի սմանէ հասկանայցեն զգրեալսն և շահիցին անձանց զհնութիւնս յափտեանց։

Ո՛չ շատ ասացից։ Սրբեցի որքան և կարևոր եղև զիմ գրուած յանպարկեշտ բառից և ի բանից, որ յարարս դից. զի անարժան համարեցայ բանալ թերահաս մտաց զոր ինչ միանգամ կատարելութիւն հասակին չառնէր անվտանգս լսելեաց։

Ի վարձ երկանցս համարեալ զօգուտն հասարակաց,

մնամ հնասիրաց Ազգի մերում
խոնարհ ծառայ՝ հեղինակ։

## 33. ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԱՌ Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

### <Առաջաբան>

Մանկունք խաղուց յաւէտ հակամէտք քան եթէ գրոց, բազում անգամ ժուատեն զտետրակս իւրեանց՝ յառաջ քան ուսանել զաթութայս նոցա։ Իսկ հեղինակք այբբենարանաց զցոյց գիտութեանցն յաւէտ սիրելով՝ քան զսոսկ պիտոյս, խնուն զնախաշաւիղ ուսանելեացն խորդուբորդ կոշկոճանօք, և տարտամեցուցանեն բազմամեայ ժամանակաւ և ծախիւք զաշակերտս, զծնողս նոցա և զանձինս իսկ իւրեանց։ Բայց ես հորդել կամելով նոցա զայս շաւիղ, ըստ բուն զօրութեան այբբենականիդ, արժան դատեցայ կարգել նոցա զվանկս, զբառս և զբան։ Ճանաչել, հեգել և հասկանալ։ Կարգեցի ևս կանոնս ինչ պիտանիս ստուգաբանութեան և յարմարա-

*գրութեան լեզուիս։ Յաւելի նաև ընթերցուածս ի Սուրբ Գրոց, թէպէտև ընդդէմ յօժարութեան իմոյ, վասն զի ինձ կամք էին զանց առնել իսպառ զայնպիսեօք և յատուկ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յօրինել իբրև երկրորդ հատոր սորա՝ մի՝ զի համառօտութեամբ գործոյս մանաւանդ թէ և փոյթ ընդ փոյթ փոփոխութեամբ գրոցն՝ զորս յոյժ սիրեն նոքա, խրախոյս տացից տղայոց. և երկրորդ՝ զի զծնողս զերծ արարից յընդունայն ծախուց անտի զորս ի վերայ ածեն նախ քան զուսուցանելն ինչ ծուատեալ այբբենարանք։ Եթէ ազգասէր հասարակութեան հաճոյ լիցի այս ոճ, սովին և ի հետագայս նկրտեալ հեղինակին, հորդեսցէ դպրոցաց ազգին շաւիղ հեշտին և զուարճ։*

## 34. ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ՇԱՐԱԴՐԻՉ ՀԱՅ ԵՒ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԱՑ ԱՌ Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

### <Առաջաբան>

*Յայս դար ծաղկեցան վարժեակք քերականութեանց յԱզգի մերում և ջանացան հաւատացուցանել, թէ կանոնք իւրեանց իցեն լոկ միջո՛ցք Հայկական շարադրութեանց։ Իսկ աշակերտք չոր ու ցամաք կանոնացն ջան եդեալ՝ ընդ անհմուտ դաստիարակութեամբ նոցա, առանց ճիշդ կիրառութեան օրինակացն եղելոց, ուսան բառս ի բերան, և ոչ իմացան, թէ առ ո՛ր վախճան։ Իսկ որք ուսան ինչ կամ փրեցին ի ձև շարադրութեան՝ յաւէտ կապկանալով արարին, քան ունակութեամբ. մինչ զի՝ թողեալ զդպրոց՝ գտան Շաւառ Պանդոռայ ոչինչ ի խելապատակս իւրեանց ունելով՝ քան զսոսկ* սեռական և տրական։

*Անմոլար շաւղաց բնութեան զհետ ընթանալով քան թէ արուեստի՝ հարցանեմ. զի՞նչ արդեօք շարադրելն իցէ, եթէ ոչ՝* կարգաւ շարել զբառս՝ ի յայտնութիւն խորհրդոց։ *Եւ ըստ այսմ, տղայն ի թոթովելն շարադրէ։ Այս է կարգէ զբառս իւր համեմատ ցանկութեանց իւրոց՝ առ ի խնդիր պիտոյիցն։ Արդ՝ եթէ յուսման խօսելոյ թէ ի կանոն ապաստան, եթէ քերականութիւն ո՛չ խնդրի յառաջնորդ նմա ի հայցուած կարևորաց, եթէ միայն հարկն մղէ, նմանողութիւնն ուսուցանէ. ի վարժութիւնն հաստատէ։ Կամ եթէ ըստ Լոքայ՝* Մանկունք չպիտին ինչ կանոնօք ուսանիլ. զի միշտ ի մոռացօնս արկանին, *ընդէ՞ր ոչ ապա և ի գրելն. ուր մին զլեզուն, և միւս ըզգրիչ ունի գործի յայտնութեան խորհրդոց մարդկան։*

*Կանոնք եզրակացութիւնք են, և բառք՝ գաղափարք առարկա-*

յից. իսկ արուեստ այն է՝ որ աստիճան առ աստիճան յառաջ տանի ի գիտ այնց եզրակացութեանց և բառից, որով ոչ միայն ընդ ուսանելն խնդայ, այլ և յետ ուսմանն յարգ դնէ արգասեացն։ Յայս վախճան հայելով իմ, յերկուս մասունս տրոհեցի զայն գլուխ իմացական արուեստին, որ ուսուցանէ զլեզուն հայրենի։

1. Ի գիտ գաղափարաց, և 2. Ի բառիւք յայտնութիւն նոցա։ Զառաջնոյն չէ ինչ խօսել աստանօր։ Իսկ զերկրորդէն յայտ է՝ զի պա՛րտ է աշակերտին ըստ չափու հմուտ ծանօթութեան նախագաղափարացն գոլ։ Զի հմտութիւնք բառից և ծանօթութիւնք առարկայից թև ի թև տուեալ ճեմեն։ Յայս վայր բանացի ուսաւ՝ զոր ուսաւ մանուկն։ Արդ համարելով զնա տասնամենից՝ և նախակիրթ ի գրչութեան արուեստին՝ իբրև երկրորդ միջոցի յայտնութեան խորհրդոց իւրոց, աւանդեմ նմա ոճ հեշտընկալ, համաձայն բնութեան իւրոյ։

Նախկին փորձ մանկան ի խօսելն՝ է թոթովել զանունս, վասն որոյ և ես նախ զանուանս կարգեցի ի գրչութիւն։ Ամենայն մանուկ մարզեալ յԱյբբենարան իմում, յուշի ունիլ կարէ բառս բազմաց անուանել նոքօք զբազումս ի բնական և յարուեստական նիւթոց, որ ի նոցա առաջին աստիճանի։ Ապա հարկ իրացն մղէ զնա յայտնել զուգխոսութիւնս այնց անուանց, և յարմար ածականս դնել ի վերայ գոյականի, որ լինի նմա յերկրորդ աստիճանի։ Զհետ զայ գործողութիւն՝ որ բայիւ բացատրի. ճիշտ պահելով զյարադրութիւն բնական ունակութեան՝ ընդ արուեստականին հմտութիւն։ Եւ այսպէս՝ ընդ ախորժ այս զառ ի վեր՝ ի ծանօթից յանծանօթս վերանալով նորա՝ լինի շարադրիչ քաջ, առանց իմանալոյ թէ զի՛րդ. և ի փորձոյ տեղեկանայ իսկական օրինաց լեզուին, առաւել հիմնաւոր և անսայթաք միջոցօք՝ քան զոր ուսոյց երբէք քերականութիւնն։

Ապա առ բարիոք կիրառութիւնն երկբարբառ շարադրչիս պահանջին հետազայքդ։

1. Պարտ է նախ քան զձեռնամուխ լինիլ ի սոյն՝ զանեայ ամսօրեայ ժամանակաւ պարապիլ յօրինակումն ընտիր ընտիր գրուածոց, որ ունակացու ցանիցէ զնա ի ստուգութիւն և ի վայելչութիւն ձեռին։

2. Եղիցին նմա կրկին տետրակք. մի՝ վասն նախարտակաց, և միւս՝ վասն զսրբագրեալսն օրինակելոյ։

3. Նշանակեսցին ի նմա առարկայք բազմաւորականք, առնել ցուցակս ուրոյն, ըստ առաջին կարգի գրոցս այսմիկ։

4. Յանձնեսցէ այր մերձաւորի իւրում զշարադրեալսն առ ի սրբագրութիւն սղալանացն. ապա առցէ զննել անձամբ, և եթէ գտցէ տակաւին վրիպակս ինչ, արժանի քաջալերութեան դատիցի։

5. Վարժապետն ի սրբագրել իւրում թո՛ղ հարցանիցէ աշակերտին զպատճառ իւրաքանչիւր փոփոխութեանցն։

6. Պատուիրեսցէ համաձայն օրինակաց որոնել գիտս, և յեղուլ ի գիր։

7. Յիւրաքանչիւր դասագլխի հարցանիցէ զմասունս բանի, զնշանակութիւն և զհոլովս բառից, և զխոնարհմունս բայից։

8. Տեար օրինակին տարցէ այլ ի տուն, և ի նախարտակէն վճիտ օրինակեալ՝ մատուսցէ վարժապետին։

9. Յերկիցս յեօթնեկի ի Հայկական մասին կրթեսցին, և յերկիցս՝ յԱնգղիականին։

10. Բառարանք երկաքանչիւր բարբառոց միշտ առ ընթեր կայցեն նմա՝ որով դիւրաւ կարիցէ գտանել բայս յարմարս և յեռուլ ի նոսին. յաւաւել ամբողջութիւն նախադասութեանցն կամ բանից։

## 35. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՅԱՆՅԻՇԱՏԱԿ ԴԱՐՈՒՑ ԱՆՏԻ ՅՅԱՐՁԱԿՈՒՄՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑ ԸՍՏ ԱՒԱՆԴԵԼՈՑ ՄԱՏԵՆԱԳՐԱՑՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԳԱՑ

### <Առաջաբան>

*Աշխարհ Հնդկաց՝ Ճամբուդիպ, կամ Բհրաթ-վարսա կոչեցեալ յիւրոց բնակչաց*[1], *սահմանի յարևմտից Պարսիւք, յարևելից՝ զօտեօք լերանցն՝ որ սկսեալ ի Բրմհուպուտրայ՝ հասանին ցսպառուածս գլխոյն Նիգրայի։ Ի հիւսիսոյ Սկիւթօք, իսկ ի հարաւոյ՝ Ովկիանոսիւ Եւ յինքն զրաւէ զտարածութիւն երկրի՝ համաչափ համօրէն Եւրոպիայ՝ ի բաց առեալ զՌուսաստան։*

*Պատմութիւն այսր լայնատարած մասին Ասիոյ վերածի յերիս միջոցս ի* Հին. *ի* Միջին, *և ի* Նոր: *Հին կամ Հնդկային միջոց պատմութեան, զորմէ են բանքս, սկսանի յանյիշատակ հնութենէ դարուց, ուր սկայքն պայազատեցին և հրէշքն ոգուականք։ Ուստի և ըստ չափ անցեալ հաւատարիմ պատմութեան յառասպելս քերթողութեան խարխափի, ցերևիլ խսլամաց յեզերս Ինդոսի։ Միջին կամ Մահմետական միջոց՝ սկսանի ի յաղթութեանց անտի Մահմուդայ Ղիզնացւոյ. և յինքն ճառագայթեալ զփառս Մողալ միապետութեան երկարատև հարստութեամբ՝ իջանէ ցպատերազմն Պալասեայ ի Քաթուա գաւառի Բանկալայ, յամի Տեառն 1757։ Իսկ Նոր կամ Քրիստոնէականն անուանեալ միջոց, որ հիմն եդ միահեծան ամէրու-*

*թեան Անգղիացւոց յարևելեան Հնդկաստան՝ սկսեալ ի պատերազմէն Պալասեայ՝ իջանէ ցաւուրս այս։*

*Իւրաքանչիւրոց սատի ուրոյն հատոր յօրինեցաւ ի Հայ լեզու։ Այլ որովհետև նիւթ առաջիկայ հատորոյս յառասպելս դիցաբանութեան և ի կեղծիս բանաստեղծիցն և եթ ապաստան, շատ աշխատ արար զբազմութիւն բանիբուն և ներհուն հեղինակաց. և չև յեղաւ յոճ ի պայման հաւատարիմ պատմութեան, բազմօք տառապեցոյց զհեղինակն յընդերկար դեգերանս գրոց այլ և այլ ազգաց։ Յորս կարծիք հակառակք կարծեաց, և անցք հակառակ անցից յոգիս ապաստան արարին զնա։*

*Զառաջինն է ձեռս առ իւր* զԽլսքուր Թաւարիզի Հինդ[2]. *զոր և թարգմանեաց ի Հայ բազում նեղութեամբ։ Բայց այնպի ո՛չ անուանք թագաւորացն յիշատակելոց ի նմանէ համաձայնէին անուանց Պուրանաց Հնդկաց և ո՛չ անցք անցից, վասնորոյ թողեալ զայն ի ձեռս առ իւր զթարգմանութիւն Մահաբհարաթ գրոց, և զնա ևս հայացուցեալ՝ եգիտ զի քերթողական շռայլաբանութիւնք նորա, և աստուածոցն անմահից յարարս մահկացուաց միջամուխ՝ անդր քան զբնական կարգն շահատակութիւնք վրիպեցուցանէին զնա ի նպատակէ անտի իւրոյ դրութեան, ելիք և զայն կիսակատար։ Տեսեալ ապա զերիս քառածալ հատորս Յակոբայ Միլլայ՝ խնդացաւ յանձն իւր, անտուստ յուսացեալ քաղել զստոյգ պատմութիւն Հրնդկաց։ Բայց և նա զանց արարեալ զբուն հնոց գրուցաց՝ առնոյր զարդեան զծէս, զկրօն, զսովորոյթ, զձև, զատրազ, զբարս, և զվարս, և հանէր զնոսա մտօք ի հնութիւնս յաւիտեանց, կարծիքական վերադիտողութեամբ իւրով լնլով զբովանդակ էջս առաջին հատորոյն՝ առանց ո՛չ ինչ պատմելոյ։ Ի վերջոյ հասանէ նմա վերծանել զհամառօտ պատմութիւն Հնդկաստանի, Մարշմենայ Անգղիացւոյ*[3] *ի լոյս ընծայեալ։ Սա թէպէտև զառաջինն ի ձև պատմութեան ձուլեաց զարարս նախահարց Հնդկաց, բայց և այնպէս պուրանական գրուածոց միայն ուշ եդեալ՝ բազմօք պղտորեաց զանցս և զժամանակ նոցա։ Զոր յանճարակի և եթ կալեալ առաջնորդ ինքեան ի սրբագրութիւն առաջին աշխատանաց՝ դիպաւ իմն ի ձեռս երեր և* զՄահանվանսին *թարգմանեալ ի լեզու Անգղիական, և կրկտեալ ի նմա եգիտ ինչ ինչ այնքան կարևորագոյն և պիտանի իւրումն ձեռնարկութեան, մինչ համարձակի ուրախութեամբ սրտի զհայերէնս այս առաւել ճոխ և ճշմարտապատում համարել, քան զոր գրեցան մինչ ցարդ պատմութիւնք Հնդկաց։*

*Հայերէն առընթեր կայր նմա ժողովածոյ ձեռագիր Թովմասայ*

*Խօջամալեան Նոր Ջուղայեցւոյ, որ ունի յիշատակագիր օրինակ զայս. «Որպ՞էս կամ ուստի՞ց գիրքս թարգմանվեց։ Թիվն 1768, Դամայ 15, ի թագաւորանիստ քաղաքս էլաբաղ, ի ժամանակի Շահ Ալէմին, որ և էր թագաւորիս մեծ Դիւանն խալսու էր անդ։ Որոյ անուն էր ռաջա Սէիդրար, և միւսնն ռաջա Դրիրան, որք էին ինձ բարեկամք։ Մեծի աղաչանօք և փափագանօք խնդրեցի սոցանէ, ընկալայ, և ի միջի 12 աւուրց թարգմանեցի մի ըստ միոջէ ի Փարսիացւոց գրեանցէ արքունուստ ի բարբառս մեր։ Որ եղև աւարտ Դամայ 26 ումն»։ Բաց ի թարգմանութենէ աստի ժամանակակից գոլով սա և Գօրգին խանին և քաջացն Հայկազունեաց՝ ստուգութեամբ վիպագրէ զանցս ժամանակին։ Հաւաքեալ և բազում ինչ ի լրոց՝ առնէ զձեռագիր իւր կրպակ իմն մանրավաճառի, լի՛ զանազան տեղեկութեամբ ի պարծանս Հայրենեաց իւրոց։*

*Արդարև արտօնութիւն Նուիրակահան Աթոռոյ Հայաստանեայց ի հաւաքել իւրեանց համաշխարհական ծանօթութիւնս ազգաց և լեզուաց, առաւել է քան զոր պանծալ կարեն թէ ունիցին, մեծամեծ թագաւորութիւնք աշխարհի։ Յան և ցիր սփռումն Ազգին ընդ երեսս համատարած հողագնտոյս, և հոգևորական պիտոյիցն խնամ, զոր տանին նոքա նուիրակունս արձակելով յամենայն ուրեք, բառնայ ի նոցանէ զամենայն զխուլթ և զխոչ այսր դրութեան։ Այն ինչ դեռ չև ոտք Եւրոպականաց կոխեալ ի Հնդիկս, կարէին նուիրակունք նոցա տանել յօրագրութիւնս իւրեանց զվճիտ հանգամանս դրից սորա, ծիսից, կրօնից, կենցաղավարութեանց, և որոց ի կարգին։ Այլ տարաբաղդապէս ոչ ինչ արժանի յիշատակաց քաղեցին և բարձին ի զօվութիւն բանասիրաց։ Ո՛չ. ո՛չ իւիք բնաւ յանդգնիմ մեղադրել զնոսա վասն այսորիկ, այլ խոնարհութեամբ աղերս արկանէ, զի այսուհետև գուն գործեսցեն ազգասիրաբար յօրագրութիւնս իւրեանց յեղուլ զպատահարս ճանապարհաց իւրեանց, ըզհանգամանս աշխարհին, զբերս, զբարս և զբնաւորութիւնս այլ և այլ ժողովրդոց, որոց դէպ լիցին յընթացս շրջագայութեան իւրեանց։ Որով շաւիղ ընդարձակ բանան ամենայն հեղինակաց յասպարէզ համաշխարհական ծանօթութեանց։*

*Երկոքին հատորք գործոյս առաւել հաւաստապատումք և ընտրելագոյնք պահեցան յաջողութեան առ ի վերուստ. իսկ առաջիկայս, սոսկ քաղուած առասպելաց և խրթնութեանց՝ զառաջինն առ ի լոյս վերծանելեաց ընծայեցաւ։ Թէպէտև շարունակ հիւանդութիւն հեղինակին ոչ համարձակեցուցանէ զնա ասել՝ թէ որպէս յուսայր՝ գործն կատարեցաւ։*

*Ստորագրութեամբ եղև տպագրութիւնն, և յայսմ վայրի գոհութիւն մատուցանէ իւրագնեայ ազգասիրաց բնակելոց ի Կալկաթա, և մանաւանդ Պարոն Գրիգորի Մ. Յովսեփեանց ի Բոմբայի, որ արդարև ազգային ջերմեռանդութեամբ ջանացաւ պսակել զաորագրութիւն տեղւոյն՝ անդր քան պակնկալութիւն հեղինակին։ Բայց այնզի՝ միւս քաղաքք Հնդկաստանի ոչ ժամանեցին հանգանակել զտուրս իւրեանց. այո, և գտան որք փոխանակ տրոց տարապարտ տրտունջ մատուցին նմա՝ հարկեցաւ նախատես հոգողութեամբ խուզել ի վաստակաբեկ քաղուածոց անտի զայնպիսի նկատողութիւնս կարծեաց առ կարծիս, որ զարդքն համարէին պատմութեան ի մէջ ամենայն լեզուաց։ Եբարձ իբրև աւելորդ և զսուկ անուանս թագաւորաց այս կամ այն հարստութեան, որք առանց գործոց և թուոց գրաւէին զտեղին։ Յապաւեաց զբազումս ի ծանօթութեանց. և բզբազմագոյնս ի նոցանէ ելից մինչ ի սպառ։ Իսկ արդ՝ յոչ ինչ այնքան ցաւեցեալ նորա, քան ընդ սաստիկ համառօտումն գործոյն՝ մատուցանէ Բանասիրաց ազգի իւրում զիւր դուզնաքեայ աշխատութիւն, որ թէ և խակակուռ և անտառային, սակայն երեխայրիք գոլով յիւրում տեսակի՝ խրախոյս բառնայ յընդունելութիւն նորասէր քմաց։*

## 36. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ
## ՅՕՐԱԳՐԷ ՄԵՍՐՈՎԲԱՅ Մ. Դ. ԹԱՂԻԴԵԱՆ

<Ընծայական>

Յարգոյ պարոն Յովհաննէս Սարգսեան Սալմաստացի

*իմ քա՛ղցր հայրենակից*

*Քանի ամօք յառաջ տպագրութեամբ հրատարակեցի զառաջարկութիւն ինչ ի մասին բաժանորդութեամբ տպագրութեան հանուր օրագրութեանցս, որոյ մասունք ինչ էին ո՛չ միայն Պատմութիւն Հին Հնդկաստանի, այլև սա, ա՛յս գործ։*

*Երկրորդ հատոր գործոյս, որ ի լոյս բերէ զտոյգ տեղագրութիւնս Ատրպատականի, Եկպատանայ, Պարսք նահանգի, և կզզեաց Պարսկային ծոցոյ, զլերինս, զդաշտս, զանապատս, մեծամեծս, բզբերս, զհանքս, զգետորայ, և զջրանցս, զծով, զբարս և զբաժանումն ժողովրդեան, զլեզու, զկրօն հին և նոր, զծէս, զտարազ, քաղաքա-*

*կանութիւն, զինուորութիւն, և այլն հանդերձ առտնին և առանձինն հանգամանօք անձին և պատահարաց՝ մնաց այլում ժամանակի ապաստան*[1]*։*

*Յումպէտս լինէին արդեօք բազմամեան թափառանք ընդ աշխատանացս, եթէ չէր Ազգասիրիդ զաջ շնորհաց կարկառեալ, և ի հին աւուրց փթութենէ ի լոյս ընծայեալ զսա՝ ի փառս անուան քում, յազգաց յազգս յաջորդութեանց աշխարհի։*

*Թող ի պարծանս հողոյ Հայրենեաց գրեսցի՛ մեր երկուց վտարանդեաց ինքնայօժար այս ծառայութիւն։ Իմ՝ ի հաւաքելն, և Քոյ՝ ի սփռել սոյն յԱզգի մերում։ Որ եթէ բարի ինչ՝ փառք Աստուծոյ և Ազգիս Հայոց համարեսցի՛, իսկ թէ ո՛չ՝ վնաս և ո՛չ ումեք արարեալ, քարոզ կենդանի գոնեայ եղիցի յօժարութեան սրտի քոյ առ տարածութիւն գրագիտութեան Հայրենեաց, որում այսչափ ազգասիրաբար երախտաւորել յօժարութեամբ հաճեցար։*

*Թո՛ղ Սաղամաստ ի քէն սկիզբն արասցէ՛ պարծիլ, որ ո՛չ միայն գրաւորական յառաջադիմութեան Ազգին քոյովսանն հանդիսադիր, այլ և ճշմարիտ Ազգասիրութեամբ, և ճշմարիտ ևս բարեպաշտութեամբ՝ բազում Հայ անտերունջ որբոց եղեր հայր բարեխնամ, և առ ի լոյս գիտութեանն Առաջնորդ։*

*Եթէ միշտ այսպէս՝ հայպա և ես ի պարծանս անձին համարեսցայց, մնալ իմ քաղցր Հայրենակից, խոնարհ ծառայ Քոյ՝*

Մ. Դ. Թաղիդեանց

## 37. ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ

### < Առաջաբան >

*Որոց միանգամ ոգիք եռանդունք իցեն վարժելոյ զմատաղորեար աշակերտս իւրեանց յուսումն պիտանի՝ տարակուսին արդարև ըստ իս՝ թէ յետ աւարտելոյ Հեգարանին զի՞նչ ունիցին տալ ի ձեռ նոցա։ Քերականութիւնք Ազգի մերոյ մինչ ցարդ երևեալ՝ բազահմուտ և նուրբ որքան և են, ահաբեկ առնեն զմանուկս լոկ ահագնութեամբ դրիցն. միւս դպրոցական գրեանք, այո՛, պատուականագոյնք ըստ ինքեանց՝ որպիսիք են Քաղաքավարականին հատորք, տպեալք ի Կոստանդնուպօլիս*[1]*, և Վարժութիւն մանկանց ի Վէնէտիկ*[2]*, սակայն յոճ դասառական դոլով՝ դրէթէ անհասկանալի մնան ի մերոցս՝ նաև օգնականութեամբ բառարանաց։ Վասնորոյ թէպէտև նախքան զայս յօրինեցի զՀեգարան մի և զՇարադրիչ առ*

ի պէտս մատաղ հասակաց[3], բայց այն զի երկոքին ևս գրեթէ ծայրք էին ըստ ուղիղ կարգի դաստիարակութեան մանկանց, հարկեցայ զարգիս հաւաքել և զայս տեսակ գիտելիս, զի վայելուչ խառնութեամբ բնականացն ընդ արուեստականաց և գերարուեստականացն կամ աստուածայնոց՝ առաջնորդեսցիս նոցա ի գիտաճշմարիտ գիտութեան և ի ծանօթութիւն կամաց Արարչին։

Յայս գործ առաջնորդ կալայ ինձ զԱնգղիարէն և զհամանուն գրքոյկ իմն, բայց տեսեալ թէ և առանձին ծանօթութիւն իմ, մանաւանդ ի մասին Հայրենեաց մերոց՝ բազմօք առաւելուլ կարէր յայն՝ ոչ բնաւ խնայեցի. քանզի ի՞նչ օգուտ գիտել մանկանց մերոց զօտարին՝ և իւրեանց բնիկ Հայրենեաց անծանօթ մնալ։

Եպերանս յայս իմ վաստակ ո՛չ ընդունիմ, որոց կարծիք իցեն թէ միութիւն և հարթութիւն չունիցի իմ Առաջնորդ, այլ նիւթոց ի նիւթ ոստոստայ և խորշոց ի խորշս զօղէ և ելանէ։ Արդա՜ր է. բայց նախ՝ եթէ ո՛չ ոք ի չափահասից յիշել ախորժիցի զիւր մանկութիւն, ես ախորժիմ։ Մանկունք զանազանօքն զուարճանան։ Եւ երկրորդ՝ զի հարթ ուղի կարաւանաց է և անկարօտ առաջնորդի։ Ակպատաց և կորովեաց չիք առապար։ Քաջաց են պէտք առաջնորդաց։

Եթէ այս ոճ դպրոցական ուսանելեաց հաճ և հաւան լիցի պատուելի ծնողաց և վարժապետաց Ազգի մերոյ, և շնորհ արասցեն ձեռն տալ տկարութեանս՝ յանձն առնում իւրաքանչիւր մակացութեանց զմի մի գրքոյկ յօրինել, մինչ որքան և կենդանիս իցեմ. իսկ թէ ո՛չ՝ ուրեմն բարեաւ մնան։

Մ. Դ. Թ.

## 38. ԹՈՎՄԱՍԱՅ ԽՕՋԱՄԱԼԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՑ, ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ, ՄԱՍՆԱՒՈՐ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՋԱՆԻՒՔ Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵ Մ. Դ. ԹԱՂԻԴԵԱՆՑ Վ. Ա.: Ի ՏՊԱՐԱՆԻ ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ, Ի ԿԱԼԿԱԹԱ, 1849

### Առաջաբան տպագրի՛ն

Եթէ նա, որում շնորհեաց Աստուած զճոխութիւն ստացուածոց և զմեծութիւն մարմնաւոր՝ կերպարանել յերկրի զհասարակախնամ տեսչութիւն իւր՝ մատակարարելով կարօտաւորաց զապրուստ առօրեայ, իրաւունս ունիցի կոչելոյ «Նախախնամութիւն մարմնացեալ», ապա որքա՞ն ևս առաւել նա՝ որ աննախանձ ոգւով ազգասիրութեան բորբոքեալ՝ անմահացուցանիցէ զմահացուսն զկնեաց

և դարուց ի դարս կացուցանիցէ զնոսա ի խօսուն խրատս բարեաց է ի վարդապետութիւն բարուց՝ արժանի ոչ տեսանիցի փառաւոր վերադրութեանս՝ «Իմաստութիւն մարմնացեալ»։ Երանի՜ թէ այսպէս հասկանային և կողմանքն, ոչ Իմաստութիւն զնախախնամութիւնն և ոչ նա զսա արհամարհելով, այլ աջակցեալ իրերաց, որպէս և կամք Աստուծոյ և հաճոյք՝ յառաջ տանէին միշտ զօգուտն հասարակաց և զփառս մարդկութեան։

Յաւէրժական յիշատակաց արժանի Հեղինակ գրոցս[1], զոր արդարև արժան է կոչել Իմաստութիւն Աստուծոյ մարմնացեալ՝ ժամանակակից թուի գոլ մեծահամբաւ աղայ Պետրոսի Յարութիւնեան հին Երևանցւոյ[2], եղբօր նորա՝ Գորգին խանի[3] և քաջացն Հայկազունեաց՝ շուրջ զնոքօք։ Որ ընթեռնու զդիտմունս Բօլտսի ուրումն Անգղիացւոյ գիրօք կառավարութեան աշխարհիս Հնդկաց, գտանելով գտանէ զնա՝ նախ նաւապետ ի ծովու և ապա՝ երևելի վաճառական ի ցամաքի, որ և յԱնգղիա շոքաւ ամբաստան զբռնակալութեանց Վէնստադայ փոխարքայի Հնդկաց և զամս բազումս տուայտեալ յատենի ծերակուտին։ Անդր անց քան զամենայն աշառանս և ըդկողմնապաշտութիւն ազգին և պարտաւորեաց օրինօք զապօրէն իշխանն տուժել իրաւանց իւրոց մերձ զհինգ հարիւր հազարս դահեկանաց։

Մեք ընդ այս ո՛չ զարմանամք, ըստ որում բուն Հայոց բնութիւն է քանդել և քանդիլ ի վէճս՝ բազում անգամ ի սնոտիս։ Այլ երախտագէտ լինիմք, մանաւանդ որ ի միջոյ այնքան զբաղանացն և պատաղմանց որոշեաց դեռ զմասն աշխատանաց իւրոց վասն ազգին և զկնեաց։ Նոր ումն այս Մարիբաս Կատինացի, տեղեակ բուն պարսիկ, հնդիկ և անգղիական բարբառոց, յամին 1768 մուտ նախ ի դիւան մեծազօր ինքնակալութեան Հնդկաց և հան անտի մեզ ըդհամառօտ, բայց և զհարազատ պատմութիւն հարստութեան Աղուանից, սկսեալ ի Փիրուզայ ցԱլիգոհար Շահալէմ։ Յինքն արծարծելով գոգչիր և զազգասէր եռանդն անմահացեալ նախահօր մերոյ պատմութեան՝ զՄովսիսի Խորենացւոյ, հաւաքեաց աստի և անտի նիւթս և եթող մեզ զանբաւութիւն ծանօթութեանց զպէսպէս գաղտնեաց աշխարհին, նամանաւանդ՝ զարիական հանդիսից մերոց քաջարանց, որ առանց սորա ի խորս մոռացութեան անհետացեալ գնային արդեօք։

Բուն ձեռագիր սորա գտաւ առ պարոն Ծատուրի Յարութիւնեան՝ յԱգրա, որ գոլով ի վերայ շինացի թղթոյ՝ ցեցոտեալ էր անդի քան զվերծանութիւն, զոր տեսեալ երանելւոյն Պօղոսի Նախչուանցւոյ

եպիսկոպոսին էջմիածնի՝ ի գնալն դէպի ի Գուալիէր բազում թախանձանօք խնդրեաց, առ ի նմանէ և ի ձեռն պարոն Գաբրիելի Տէր Անդրէասեան օրինակեաց շղագիր՝ նոյնպէս ի վերայ չինացի թղթոյ։ Զոր բերեալ ընդ իւր ի Կալկաթա յամի Տեառն 1822, մատոյց ի վերծանութիւն տիրացու Մարտիրոսի Մկրտչեան Դաւթեանց[4], որ յայնմ ժամանակի հրատարակէր զամսագիրն «Շտեմարան» կոչեցեալ։ Որ թէպէտև յօժարեցաւ սրբագրել և տպագրութեամբ ի լոյս ընծայել. սակայն ձեռքն կարճ յօգնականութենէ կարօղաց ազգիւ՝ լքան և լքին զգործս տարժանաւոր (տե՛ս յէջ 763—ց767 Շտեմարանի նորա)։

Մնաց գիրքն առ երանելւոյն Պօղոսի Նախչուանցւոյ եպիսկոպոսի էջմիածնի, մինչև հասի նուաստս ի Հնդկաստան յամի տեառն 1823 և արժանացայ շնորհ ընդունել զայն ի ձեռանէ նորա[5]։ Անգէտ միւս այլ ամենայն լեզուաց աշխարհիս՝ սկսայ յեղուլ զգործն բովանդակ ի բարբառ հայրենի. բայց խառն ի խուռն կուտակութիւնք բանից, անյարիր տրամադրութիւնք, նորանոր ոճք բանից և այլն (զորոց մեծապէս գանգատէ և նախորդ մեր տիրացու) շփոթեցին զմիտս, քան թէ շիջուցին զծարաւ նորասիրութեան իմոյ։

Կամեցեալ ծովանալ պատմութեամբ Հնդկաց՝ ջանադիր եղէ ուսանել զանգղիացին բարբառ և նախ առաջին ի ձեռս բերի ոչ միայն զհեղինակութիւնս ազգին յայն նիւթ, այլ և զթարգմանութիւնս նոցա, զորս քանի շատ քննեցի, այնքան և սակաւ ինչ գտի յաղագս քաջութեան ազգիս մերոյ։ Զի նոքա հազիւ ուրեք թէ յիշէին զանուն ազգիս ի Հնդկաստան։

Այժմ երկու ինչ առիթ եղեն ինձ ի տպագրութիւն սորուն։ Մի՝ զի ի ծնանիլ «Ազգասիրին» իբրև երեք ամօք յառաջ՝ սկսայ կրկտել և ի լոյս հանել զպատմութիւն գրագիտութեան Նոր Ջուղայ՝ հուսալով, զի պատուելի գրագիտունք նորա օգնելոց էին տկարութեան և հեռաւորութեան մերում պէսպէս նշխարօք հնութեանց առ ի լոյս ձեռնարկութեանս իմոյ։ Բայց մինչ ցարդ՝ և ո՛չ տող մի ի նոցանէ։ —Երկրորդ՝ զի տարապարտ տրտունջ յառնէր աստանօր, թէ Ջուղայեցի փող մուրալով՝ տպէի զոր ինչ միայն իմ, Դրսեցւո՛յ, ի պարծանս անձին ենթ։ Վասն որոյ ջանացայ զ՚ի դարուց զանց արարեալն անփութութեամբ Ջուղայեցւոց ի լոյս ընծայել զարդիս, որպէսզի ծանիցեն իմ սիրելիք, թե ո՛չ առ երեսս ինչ կեղծաւորիմ, այլ ճշմարտապէս և ի սրտէ սիրեմ զանուն և զյիշատակս ամենայն Ջուղայեցի ազգասիրաց։

Պատճառ Յակոբօրէն առնելոյս, ասինքն՝ զերէցն ի քեռոյ

դստերաց աստի՝ զառաջին հատորն Թողլոյս՝ և վասն կրտսերոյ՝ երկրորդ հատորոյս՝ զծառայութիւն զայս ծառայելոյս, ասեմ. նախ՝ զի բաւական միջոց առ ձեռն պատրաստ չունէի ի ծախս երկոցուն միանգամայն. և երկրորդ՝ զի սա առաւել լուսէր զազգային պատմութիւն մեր, քան զառաջինն, թէպէտ անդ ևս ո՛չ պակասին արժանի յիշատակաց՝ նշխարք ազգային անցից:

Յայսմ աշխատութեան՝ սրբագրեցաք միայն զտառս ինչ և զբառս, և ուր ուրեք պակասէր՝ եդաք զազգային ոճն, ջանացեալ ամենևին անփոփոխ պահել զմիտս Հեղինակին ի բարբառ իւր և ի տրամադրութիւնս, յաւէտ ուշադիր զանուն և զանմահութիւն եղբօրն յարուցանելոյ, քան զանձին շահ և համբաւ:

Պարունակութիւնք առաջնոյ հատորոյն են՝ պատմութիւն Աղուան թագաւորացն Հնդկաց ի Փիրուզայ ցԱլիգոհար Շահալէմ 455 ամօք. չափ տարածութեան Հնդկաց աշխարհի. թագաւորանիստ մայրաքաղաքաց. լեզուաց. երկոտասան պաշտելի գետոց. տօնից կամ ջաթրայից և քրիստոնէութեան ազգին Մալուարաց, ուր և յաղագս հոլովելոյ հայոց զեկեղեցին Սաորւոց, որ ի Քօչին, և սքանչելեաց Ստեփանոս վարդապետի յիշատակութիւնք բանից: Զորոց այսպէս գրէ թարգմանիչն:

Ոպե՞ս կամ ուստի՞ց գիրս թարգմանուեց: «Թւին 1768, Դամայ 15. ի թագաւորանիստ քաղաքն Էլաբազ ժամանակին Շահալէմին, ուր էր թագաւորիս մեծ Դիւանն խալսու (էր) անդ, որոյ անուն էր ռաջա Սէիգրար և միւսոյն՝ ռաջա Դրիրան, որք էին ինձ բարեկամք: Մեծաւ աղաչանօք և փափագանօք ի սոցանէ ընկալայ ի միջի 12 աւուրց թարգմանեցի մի ըստ միոջէ ի Փարսիացւոց գրեանցէ արքունուստ ի բարբառ մեր, որ եղև աւար Դամայ 26-ումն: Որ և աղաչեմ (ի) հանդիպողաց կամ կարդացողաց և թէ օրինակողացդ՝ յիշէք զիս ի յաղօթս ձեր ի Տէր և դուք յիշեալ լիջիք նմանէ, որ է Աստուած և Տէր ամենեցուն:

Նուաստ ամենեցուն և ծառայ Թ'ովմաս Խօջամալեան Նոր Ջուղայեցի»:

Իսկ պարունակութիւնք երկրորդ հատորոյս են՝ թէ որպէ՞ս տիրապետեցին Գաղղիացիք երկրին Դաքանայ. թէ զիա՛րդ բռնացան Անգղիացիք ի վերայ նոցա. և ապա ընդ ձեռամբ գրաւեցին զմեծ մասն Հնդկաստանի. թէ Հայք որպէ՞ս զօրացան և ապա նուազեցան, և թէ Ակպար շահ որպէ՞ս որդեգրեաց իւր զորդի Ջուղայեցի պարոն Յակոբջանին:

Հաւատարմութիւն հեղինակիս մերոյ յայտնի երևի, որոց գի-

*տիցեն զպարսիկ և զանգղիական բարբառս, յորոց իբր ի բուն աղբերաց հեղահոսան վտակ հանեալ զայս իւր պատմութիւն՝ ոչ միայն անպղտոր պահէ զպարզութիւն և զսառնութիւն նոցա՝ զճըշմարտութիւնն ասեմ և զանաչառութիւն, այլև ընդ երկիր բարի անցուցանելով զայն՝ յաւելու ի վերայ և զախորժ իմն քաղցրութիւն՝ զլիապատում անցս մեծամեծ առաքինութեանց նախկին գաղթականացն մերազնէից և զմարդկօրէն մոլութիւնս նոցա։*

*Նրբամիտ հեղինակն ոչ զանց առնու աւաղել զազգային պակասութիւնսն յնթացս պատմութեան իւրոյ։ Իրաւամբ դսրովէ զնոսա և պարոն Մնացական Վարդանեան ի Յորդորակի իւրում առ Ազգն՝ վասն հաստատութեան ուսումնարանին ի Կալկաթա, և աչալուրջ ընթերցօղն ոչ կարէ զսպել զարտասուս իւր ընդ աղէտալի օտարասիրութիւն և անմիաբանութիւնն, որով որպէս առարկայք պատմութեանս, նոյնպէս և արդի հասարակութիւն մեր ի Հնդիկս, արհամարհեն զիւրեանցն, սրտակտուր առնին, իբր ընդ ՙսնոտիանս մերժեն։ Բայց ընդհակառակն՝ երբ զօտար ոք տեսանեն՝ ծնրին զառաջի. որպէս թէ հրեշտակի յերկնից իջելոյ, որ ոտներն ամպաթաթա՞խ։ Ո՞վ ո՛չ զարմանայ և ընդ աձնասիրութիւնս նոցա որք այնքան մեծութեան և իշխանութեանց հասեալ՝ ոչ զմտաւ ածին ազգ իւրեանց և զապագայս՝ թողուլ զկնեաց գոնէ զօրհնութիւն յիշատակացն։ Սոսկ անձա՞նց ծնեալք գոգցիր, անձանց ապրեցան և ունայնացան։ Ո՞վ երանի թէ այժմ իսկ ի միտ առնուցուն ամենայն անհատք ազգիս առհասարակ, թէ մարդ ինչ և քաղաք ինչ թէ ընդէ՞ր գազանաբար յամայիս անդր ոչ բնակիմք, հայթհայթել զապրուստ սակաւապէտ։ Ընդէ՞ր քաղաքս կառուցանեմք և ի կողս իրերաց խըցկիմք, եթէ վասն անձանց միայն ծնեալք և ո՛չ ազգի և աշխարհի։ Խորհեսցի՛ ամենայն ոք, որ եթէ իւր իցէ անկանել զագանելիսն, հանդերձել զկերակուր, շինել զտուն բնակութեան և հոգալ զամենայն պիտոյիցն՝ զորս առօրին պահանջէ, ո՞ր զանազանութիւն մնայր ընդ մեջ իւր և աղքատիկ մշակին։ Տե՛ս որ հարուստ պէտս ունի ծառայութեան աղքատին և աղքատն՝ խնամոց և բարերարութեան հարստին։ Եւ այս կամօքն Աստուծոյ ապա թէ ո՛չ՝ կարգ աշխարհիս աղաւաղէր, մեծ-ու պստիկ ո՛չ որոշէր, և Բաբելոն խառնակութեան տիրէր ի վերայ ամենեցուն։ Դո՛ւ որ այսօր ունիս և կծծանաս առ Ազգն, գուցէ վաղիւ ոչ ունիցիս. ընդէ՞ր ապա չվարիցիս այսպէս, որպէս կամիս թէ և այլք վարիցին ընդ քեզ։ Աշխարհս փոխ է։ Ո՛չ ոք ի փարթամաց տարաւ զգանձ իւր ի գերեզման, և դու ևս ո՛չ տանիս. ապա ուրեմն զերկուս յայտնի երևեցուցանես ի*

կծծութեան քում. մի՝ զի յարծաթ քո առաւել յուսաս, քան յԱստուած, որ ետ քեզ զայն։ Եւ միւս՝ զի անձին և եթ ծնեալ՝ ո՛չ գիտես, թէ զի՞նչ Ազգն իցէ, և զի՛նչ պարտականութիւն քոյ առ նա։ Արդ թէ առաջինն՝ արծաթապաշտ ես, քան աստուածապաշտ, իսկ թէ երկրորդն՝ լաւ ևս էր քեզ բնաւին ո՛չ ծնանել յաշխարհի։

Եւ զի՞նչ արդեօք ճար կամ ճանապարհ ընդդէմ այսց և այսօրինակ մոլութեանց ազգիս յամենայն ուրեք, եթէ ոչ Գիտութիւն և Գործունէութիւն՝ սիրով և միաբանութեամբ յաջողեալ։ Ուր սէր և միաբանութիւն լիցի ի բարին, անդ և Աստուած է ամենայն փառօք իւրովք, և ուր Աստուած ներկայ լիցի ամենայն փառօք, չգիտեմ՝ զի՞նչ այլ պակաս լինիցի։

Ճշմարիտ որքան և իցեն գրեալքս ցայս վայր՝ հետևելով Հեղինակիս և ամենայն ազգային պատմաբանից, դեռևս կան նկատելիք ինչ, որք ոչ միայն մեզմեն զկշտամբանս, այլ նաև բարձրացուցանեն զպարծանս ամեներան նախահարցս։

«Գազով կտաւ չափողանին, որպէս գրեն Մարշմէն և այլք ի պատմչաց Անգղիացւոց, առանց ուրուք կատարեալ կրթութեան և հրահանգաց, միայն բնական հանճարովք իւրեանց կարացին և հրացանս և թնդանօթս թափել ոչ ինչ ընդհատ յարուեստելոցն ի Լոնդոն»։ Եթէ ազգն, անմտադիր արուեստից, չգիտիցէ զյարգ արարածոց նոցա՝ տակաւին կայ Մունկէր, երբեմն մայրաքաղաք իշխանութեան Կասումալեայ[6]՝ որ իբրև զպաշտպան սրբոյ ուրուք, կամ զպահապան հրեշտակի առնու զանուն Գորգին խանի մերոյ՝ որ ուսոյց նոցա զարուեստ հրազինագործութեան։ Ի դառնալ իմում ի հայրենիս իմ գնեցի զհրացան մի մունկերացի և բարձի անդր։ Ոչ միայն գիտունք արուեստին զինագործութեան, այլ նաև զօրութիւնք Ռուսաց, որ անդ, և գլխաւորքն է նոցանէ՝ ո՛չ կարացին որոշել, եթէ անգղիագո՞րծ արդեօք, թէ օտարագործ։

Այն մեծ պատիւ զոր տայ Ազգիս Անգղիացին՝ իբրև վարժապետի իւրում յարարս և ի յաջողուածս աշխարհիս նոցա խոհեմ և ամենահնար հանճարոց է արգասիք։ Հայեա՛ց ի մեծն Սահրադ, ի բնակիչ Սուրաթայ, որ դեսպանութեամբ յաւէտ, քան՝ ընկերութեամբ դեսպանին Անգղիացւոց չոքաւ առ ինքնակալն Մողոլաց և եգիտ նոցա զմեծ արտօնութիւնն ազատ առի և տրոյ յաշխարհիս այսմիկ։ Իմաստութեամբ և աչալրջութեամբ Հայոց առաջնորդեալ Անգղիացւոց՝ գտին զմեծ զայս տէրութիւն։ Եւ եթէ ուրանան զայն, ո՞ր այլ երախտիք է, զորս ճանաչեն նոքա կամ փոխարէն հատուցանեն։

*Ասիցե՞ն իմաստունք յաշխարհագիտաց, թէ՝ եթէ կարացին Հայք պարգևել այլոց զայնքան մեծութիւն, ընդէ՞ր անձանց և զաւակացն չպահեցին զայն։*

*Պատասխանեմ. վասնզի հատեալք էին գլխովին ի բուն արմատոց իւրեանց։ Համարեա՛ց, թէ ի վերայ Հայոց յարձակէր Շիրազգովլա անհուն բազմութեամբ և խնոյր զամենեսին ի բանս խաւարային, որպէս արար Անգղիացւոց. ո՞ր նաւք Հայաստանի պատրաստ կային փրկութեան նոցա. կամ ո՞ր զօրք՝ յարգար վրէժխնդրութիւն զրկանաց նոցա։ Շառաւի՛ղք անարմատք, եթէ այսքան ևս աճեցան, մեծ պարծանք են մեր, ու՞ր մնաց զի պտղաբերեցին մեզ նաև զանուն իմաստութեան և քաջութեան իւրեանց և արեամբք իւրեանց գրեցին զմեզ Ազգ ճարտար և ամենահնար յաշխարհ ամենայն*։* Որք անգոսնեն զնոքօք, թող զլաւ ևս անուն ինքեանք վաստակիցեն անձանց և զկնեացն՝ բովանդակ ուսմամբ և լուսովք իւրեանց, թո՛ղ։*

*Երանի՜ թէ ամենայն ոք հասկանայր, զի միտք մարդկան ի խնամս չարին հաստատեալ՝ յօժարամիտ առնէ զնոսա առ չարն, քան թէ առ բարին։ Թէ որք ի միջոյ չարեացն անգամ կարիցեն արտաքս ցոլացուցանել զբարեգործութիւն ինչ, որպէս արփի համապայծառ ընդ պատառուածս թխպայորդ ամպոց՝ դեռևս սիրելիք են, դեռևս պատուելիք են, դեռևս երախտաւորք են։ Անողորմն Պետրոսի մի ճաթն աղքատաց տուեալ՝ ծանր գտաւ ի կշիռս երկնաւոր Արդարութեան, քան զամենայն կարծրութիւն քարասրտութեան նորա։ Իսկ մերոց ամենազովելի նախահարց դեռևս բարիք անբաւք մեզ, որք մինչ ցայսօր յարատևեն։ Ապերախտք ապա ընդէ՞ր գտանիցիմք երախտեացն. զի՞նչ զոր ունիմք՝ նոցայն չեն. զի՞նչ զորս վայելեմք՝ ի նոցանէ չեն, անուն Ազգի սա, պատիւ, եկեղեցի, ուսումնարան և զոր ինչ է ի կարգին։ Ո՞ր ի մէնջ իւրով կապկանալովն օտարոտի ճզանաց և ճարճատանաց արժանացաւ տէրունական տօնից և հանդիսից մայրաքաղաքիս։ Քաջ և իմաստուն նախնիք մեր թողին մեզ զայս ամենայն։ Վասնորոյ և ես պարտ անձին համարեցայ զայս դուղնաքեայ Շիրիմ յարուցանել արժանեաց անմահ Յիշատակի նոցա և մնալ ամենասիրելի Ազգիս։*

*Խոնարհ ծառայ* Մ. Գ. Թաղիղեանց

*Յօգոստ. 1, 1849։*

# ՆԱՄԱԿՆԵՐ, ՃԱՌԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ

## 1. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—էջմիածին*

Բարձր Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոս,
ողորմածագոյն Տէր իմ

*Ոչ զարմանամ, եթէ ի ընկալնուլ Սրբազնութեանդ զիմ այս խոնարհ գրութիւնն, զարմանայցես, քանզի ընդ այսչափ երկար ժամանակ մեռեալ այժմ ըստ Ղազարու յարուցեալ[1] ի կեանս ընդ կենդանիս բանագնաց լինի, և արդարև. քանզի անհնարին տառապանք իմ, զոր կրեցի յարատարբեր օտարութեանս իմում ընդ ծով և ցամաք, ո՛չ անգամ մի և եթ յուսադիր ինձ լինէին, զոնէ առ ծնողս իմ և եթ գրել գիր մինչ ցայսօր, բայց այժմ զարթուցեալ խնամոց արարչին ի վերայ իմ ի մեռելութենէ տարաբաղդութեան ի կեանս ցանկալիս մշտնջենաւորեաց ի ձեռն Ռիջինալ Հիբր սրբազան եպիսկոպոսին[2] և այլք, որպէս երկարօրէն ծանօթութիւնք անցից ներփակելոց ի սմա ծանուցանիլ գիտեն[3]։ Վասնորոյ և ահա գտեալ իմ ըղգանձարանս շնորհաց, որում ցանկայի, գրեմ առ Ձերդ Սրբազնութիւն ուրախ լինիլ ըստ հօրն, որ ասաց. «Որդիս իմ մեռեալ էր և եկաց»[4]։*

*Արդ յուսամ չորս ամեայ բարկութիւն Սրբազնութեանդ, զոր վասն իմոյ տղայութեանս ասացեր առ ներկայութեամբ սրբազան Անտոնի եպիսկոպոսի հօր Մողնեցւոյ ի Գանձակ թէ՝ «Չորս տարի քէն եմ»[5], լցեալ համարեսցի առ այժմ ի լրանալ ամացն, որով և ես արժանի եղէց այնոցիկ հայրենի գթութեանց Ձերոց, զոր ամենայն միաբանակից եղբարք իմ և հարք վայելեցին, և մնաց միայն իմ բաժին, որպէս բերան Սրբազնութեանդ խօսեցաւ և զայս ի Շուշի քաղաք առ ներկայութեամբ մեծարու աղայ Ջոհրային. և յորժամ այս կատարեսցի, ապա և ես ինքն յոյս կալայց ի վերայ գուշակութեան*

*Սրբազնութեանդ վասն իմ. որ առաջի նոյն մեծարու աղայ Ջոհրապին թէ՝ «Միայն սա (տիրացու Մեսրովբ) ունի իմ տեղս բռնել»[6]. Ես և զոր ինչ խօսեցաւ ձեր Սրբազնութիւն ընդ Կաթուղիկոսին Եփրեմայ, անդ ի Ջեյվա՞, ի վրանին, թէ «միայն մին ի միջի սոցա է պիտանի, բայց փոքր մի բարձրապարանոց»։ Արդ այն նշան ամբարտաւանութեան յաւետ ի տգիտութենէ, քան թէ ի գիտութենէ յառաջ եկին, զոր գլխովին տաշեաց ի բաց ուրագ ձախող փորձանացս, և յարակցութիւն իմ ընդ երևելի ազգիս Անգղիացւոց և բնակակցութիւն խսպառ զայն խաւար սրտի հալածեաց։ Վասնորոյ և որ երբեմն մի լեզուով, այժմ երիւք և չորիւք կարէ ծառայել ի դրուածս, բայց ի խօսս բազմօք ևս, ուրեմն կատարեսցին, աղաչեմ, գուշակութիւնք Ձեր, և ես արժանի եղէց ի ձեռն Սրբազնութեանդ ծնանիլ վարդապետ առ որ իբրև կոյս խօսեցեալ ընդ այսչափ ձախող փոփոխութիւնս աշխարհի, անփոփոխ կացի։ Արդ եթէ վխորին ջերմեռանդութիւն իմ առ ոտս Ձեր և զհամբաւ բարեաց Ձերոց, ինև հնչեալ ո՛չ միայն ի մէջ մերազնեայ յարգելեաց, այլ և ազգացս Անգղիացւոց, ես ինձէն պատմեցից, դուցէ կեղծաւորութեան առիթ տաց, զոր քա՜ւ լինէն, վասնորոյ մնայ մինչև ժամանակն ինքնին յայտնեսցէ։*

*Ո՛չ առ պարծանս անձին, բայց առ հաւաստի տեղեկութիւն տալոյ Ձերին Բարձր Սրբազնութեան, համարձակիմ գրել, զի թէ աշխատութիւն ինչ չլիցի, հարցանել ընդ ամենայն քաղաքս և գեօղս գլխարուց իմոց, ընդ որ եսս ճանապարհորդեցայ. Նամանաւանդ աստ ի Հնդիկս կացի, ի Դաքայ տարի մի, և ահա ի Կալկաթա աւել քան երկու, ի մէջ Հայոց և Անգղիացւոց, որք ունին պատմել զամենայն զոր տեսին։ Ջիարդ և իցէ, ահա այս էր լրումն ապաշխարանաց, և յուսամ այս լիցի կատարումն Ձերումդ գուշակութեանց։*

*Բարեսէր Անգղիացիք ցանկան թղթակցութիւն ունել ընդ Ձեզ. մանաւանդ երանելի Ուիչինալ Հեբր հանգուցեալն ի Տէր, արդ եթէ ի դիմաց Կաթուղիկոսին գրեսցի թուղթ առ հաջորդ եպիսկոպոսն, որ ունի դալ ի յԱնգղիոյ, անուն տեղւոյն բաց թողլով, ես համարեմ բարւոք լինի յո՛յժ։ Մանաւանդ եթէ պատկեր իւր, և Ձեր Սրբազնութեան ևս, զոր ցանկալին է սոցա, առաքել իբր ընծայ,—ո՛չ ծանր համարեմ գրել, զի եթէ կամիցիք ընդունել զիս որդի, ուրեմն գթացէք դոնէ շնորհակալութիւն իմն գրել առ այսպիսի դերազանց բարեկամս և բարերարս իմ, և ազգի մերում. և եթէ այս լիցի, ուրեմն վերադառնալ իմ առ ոտս Ձեր, լիցի ըստ Յակոբայ Նահապետի «եօթն բանակաւ»։ Թողում ասել և վասն առաւել բարեյաջո-*

ղութեանց հանդերձեալ նուիրակացդ մերոց, և հաստատութեան նորոգ դպրոցաց յաշխարհիդ Հայոց սոցա ձեռնտուութեամբ։

Համարձակիմ յանձն առնել ի շնորհս գթութեան Ձերոյ ըզ-Յովհաննէս եպիսկոպոսն իմ[8], զսրբազան Պօղոս վարդապետ Ղարատաղցի զբազմերախտ վարդապետն իմ[9] ի Տէր։ Վստահանամ աղաչել զՁեր անյիշաչար գթութեան և վասն դաստիարակին իմոյ Զաքարիա վարդապետի Գուլասպեանց Տփխիզեցւոյ[10], որոց միանգամայն սրբոց ձեռաց համբոյր մատուցանեմ իմով երախտագիտութեամբ. տացէ ինձ Տէր, երախտահատոյց լինել դոցա որպէս ես ցանկամ։

Յանձն առնել, համարձակեցուցանել աղաչեմ ինձ, ի շնորհս գթութեան Ձերոյ զմայր իմ և զեղբայր, որք յԵրևան, մինչև ես հասից առ ոտս Ձեր, և ի շնորհս Ձեր, եղէց մխիթարիչ նախ հոգևոր ծնողացս, և երկրորդ մարմնաւորին։

Որպէս յայտնի երևի ի պատմութենէ անտի[11], Աբրահամ վարդապետ Նուիրակն Երուսաղէմ հայրօրէն խնամարկեաց զիս, և ի բազում ժամանակս ստիպէր գնալ յԵրուսաղէմ, մինչև ի վերջոյ առաջադրութիւնս այս ցուցի նմա հանդերձ եղանակօք յանձնաբարութեան, որ և արարն իսկ, և ինքն զկնի այսր ամենայնի թէպէտ ցուցանէր, թէ Սուրբ Էջմիածին և Սուրբ Երուսաղէմ մի են յաչս իմ, բայց գրէ ինձ. «Սէ՜ր իմ, սէ՜ր իմ, սէ՜ր իմ, սէ՜ր իմ. երթամ յԵրուսաղէմ պատրաստել քեզ անդ տեղի» և այլն[12]։ Վասնորոյ և ես գրեցի առ նա, ցուցանելով, թէ ցանկամ կարգին ուր և իցէ։ Նա խոստանայ կատարել զամենայն—այսինքն առնուլ գիր և պատկեր ի պատրիարգէն և առաքել աստ հանդերձ հնագոյն դրչեայ գրեամբք, զորս և խոստացեալ էր, վասն տպագրութեան։ Բայց այն թէ և լիցի, համարին սոքա իբրև փոխանակ ընծայի եպիսկոպոսին իւրեանց, որ առ պատրիարգն Երուսաղէմի։ Եւ այլն և այլն։

Պատիւ անձին համարիմ, Բարձր Սրբազան Տէր իմ, մնալ բոլորովին Ձեր և ի խորին սրտի ջերմեռանդ առ Ձեզ խոնարհ ծառայ

Մեսրովբ Դաւթեան

Ի Կալկաթայ
Bishop's College
(Բիշոպս կոլէջ)
1826, Յունիս 18

<Ն. Գ.> Մատուցանեմ նաև զաղօթս իմ վասն նոցա ամենեցուն, որք գիտեն կեալ հանապազօր ըստ գրեցելումդ. Սաղմոս ՃԺԹ,

*Յ համար, զի տացէ նոցա ընդ արժանի կոչմանցն ճանաչել զփառս Քրիստոսի։*

**Մ. Դ.**

## 2. ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—Էջմիածին*

Բարձր Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոս,
ողորմած Տէր իմ

*Պատահարօք յամեցան գրութիւնք իմ այսօրիկ, վասն այսորիկ արժան համարիմ միայարել և որ զկնի գիտելիք իցեն. հաւանութիւն Սրբազնութեան Ձերոյ կամ անհաւանութիւն, ի Ձեր իսկ կամս։*

*Ա. Նախ առաջին թէ որպէս ելի ի վանիցն Հաղբատայ, և ո՞րպիսի վշտօք դիմեցի ի պսակ լեզուագիտութեանց ամենայնի, որոց յայս ուղիս եկեալ իցեն, է քաջայայտ, թէպէտ ծանրագոյն ևս եղեն ինձ վասն աղքատութեանս և անտերութեանս. բայց գոհանամ զՏեառնէ, զի ի վիշտս յաւելան ինձ շնորհքն, և առաքինութիւնք աճեցին ի տառապանս համբերատար երկայնմտութեանց իմոց, որոց զարդիւնսն աւասիկ։*

*Բ. Նթէ բարեհաճոյ երևեսցի Սրբազնութեան Ձերոյ, տեսանել զիս առ ոտս Ձեր, և քաղել զպտուղ գեղեցիկ վշտակրութեանց յոգուստ մանկանց հասարակութեան մերոյ, արժան համարեաց հրամայել Պօղոսի եպիսկոպոսի[1], զի ձեռնադրեալ ինձ վարդապետ առաքեսցէ առ Ձեզ (որ թէպէտ քանիցս հրաւիրեալն է իւրովի, սակայն իմ չէ յանձն առեալ տակաւին)։*

*Գ. Եթէ ցանկալի երևեսցի Ձեզ, ամենապատի՛ւ Հայր, զարդարել զգրատուն Ձեր ազգի ազգի Եւրոպացի մատենիւք, կարող է ծառայ Ձեր դիւրագին գնել, եթէ թողուք զիս յայս աստիճան, իսկ եթէ շնորհ արասջիք ընդ հրամանիդ ձեռնադրութեան յանձն առնել ինձ և զգործ նուիրակութեան աշխարհիս, անշուշտ հաւատասջիք, զի յայնժամ յաջողեալ տեսանիցիք ի ձեռս իմ զմեծամեծ օգտութիւնս Աթոռոյս Սրբոյ։ Քանզի մեծաւոր ատենակալք Անգղիոյ, ևս և եկեղեցական արքեպիսկոպոսութիւնք, ունին զիս ի մեծագոյն սէր և ի խնամս իւրեանց. իսկ Ազգ մեր աստ, չկարեմ դիւրաւ բացատրել թէ*

*որպիսի մարդասիրութիւն և յարգանս կալան, և ունեցին առ իս յայսմ հետէ։*

*Դ. եթէ ունիցիք երկբայութիւն ինչ, կարող էք գրել ընդ ամենայն քաղաքս Հնդկաց՝ ի Կալկաթայ, ի Դաքայ, ի Մատրաս և ի Բոմբայի, ընդ որ իմ ճանապարհորդութիւն յաջողեաց, թէ արդեօք հաճեցին ունել զիս յիւրեանց ի նուիրակ, և թէ ո՛չ։*

*Ե. եթէ Ազգիս ժամանակեան նուազութիւն արգել լիցի նուիրակութեան, ծանի՛ք զի մի մեծագոյն արդիւնք լիցին ի յԱնգղիացի բարեկամաց անտի, զորոց զլեզուն և զբարս քաջ գիտեմ. նա զի և փառք լիցի այս Ազգիս որ աստ, զի իւրեանց վարդապետ կարէ միշտ սէր և յարակցութիւն պահել ընդ Ազգիս ընդ այսմիկ, որ ցարդ ո՛չ ոք եղև*[2]*։*

*Զ. Բայց եթէ ի վերայ այսր ամենայնի, հաճութիւն Բարձր Սրբազնութեանց Ձերոց ո՛չ հասանիցի ի խնդիրս այս, հաւատա՛ բանիս, զի տխրութիւն ո՛չ ներգործեն ի սիրտ իմ. մի՛ զի իմ վաղու ես ջանացեալ է, որքան տանի կար հողեղէն բնութեանս՝ զանձն արժանի կացուցանել շնորհաց. ուստի եթէ շնորհքն ընտրեսցէ բնակեալ յիւր շնորհարան, և թէ ո՛չ, ինձ չեն մեղք, և եթէ ո՛չ մեղք, ապա և ո՛չ տխրութիւն։*

*Է. Մնամ Ձերում ընտրանաց, խորհել զայն, զոր ինչ համարիցիք ի բարիս Աթոռոյն և իմում առ Ձեզ եկից, եթէ կամիցիք, քանզի ոտք ոչ հասանեն խոհեմութեան գլխոյն, թողլով զպիտանագոյնսն ասից և լսից, երես առ երես տեսութեան, քանզի լաւ են դստերք բանից, քան զդստերս գրչութեան, ըստ վաղեմնի առակին։*

*Այլ ինձ կնքել բանիս համարձակեցո, ողորմած Տէր, յայս գլուխ, թէ՝* Nulla unguam oblivio delebet memoriam meam meritorum tuorum erga me (that is) No forgetfulness will ever blot out, my remembrance of your favoirs to me *(որ է)* ոչ ինչ մոռացօնք ջնջել կարասցեն զյիշատակս բարեաց Ձոց, որ առ իս:

*Մնամ ամենայն ջերմեռանդութեամբ Բարձր Սրբազնութեան Ձերոյ խոնարհ ծառայ*

Մեսրովբ Դաւթեան

*ի միաբանութենէ Սրբոյ Էջմիածնի*

Bishop's College
*(Բիշոփ կոլեջ)*
*1826, Դեկտեմ. 5*

<Ե. Գ.> *Եթէ մարդասիրեսջիք ինձ, որպէս գրեալ եմ ի միւս*

*գրութեան իմում, անդ գրել թուղթ սիրոյ և բարեկամութեան առ Անգղիացի արքեպիսկոպոս Կալկաթու, զանուն տեղւոյն ի բաց թողլով, ևս և կոնդակ Նուիրակութեանն առիս, ուրեմն արժան Համարեսջիք առաքել աստ ընդ թղթոյն նաև զերկու ուշիմ և իմաստասէր մանկունս, որ տեղեակք իցեն Հայրենի լեզուիս, և ես կարող եմ յայնժամ, միմիայն խնդրանօք իմովք, տալ զնոսա յուսումն Եւրոպացի լեզուաց, Եպիսկոպոսական Համալսարանի այսմիկ, զի գոնէ քաջիմաստ անուն Ազգիս դոքօք անջնջելի մնասցէ. նա զի՝ և գրատունս մեր բարեբաղտ լիցին յընդունել յինքեանս զծաղիկս ազգի ազգի թարգմանութեանց նոցուն. և այլն, և այլն, և այլն։*

**Մ. Դ.**

## 3. <ՃԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՌԹԻՎ>

*<1828, փետրվարի 7>, Կալկաթա*

*Ա՛րք եղբարք, որդիք Ասքանազեան սերնդոց, զի՞ է, զի տեսանեմ զձեզ այսօր գումարեալս աստանօր ի մի շունչ և ի մի հոգի: Զի՞ է, զի տեսանեմ այսօր զդէմս ձեր իբրև զդրախտական մշտադալարս, որ զերծեալ ի կապանաց խստութեան սառնամանեացն ձմերայնոյ վտարանդին թափառանաց՝ բուսուցանեն յինքեանց ծաղկունս բազմաբուրեանս ուրախութեան և զուարթարարս զօրութեան աչաց հայեցկաց: Կա՛մ, զի՞ է, զի տեսանեմ զսիրտս ձեր բղխել այսօր ի խորին շտեմարանաց անտի իւրեանց նշոյլս յարադուարճ բերկրութեանց, զոր ընդ այսքան հեռաւոր դարս ժամանակաց ընդամոլէ՛ր, սքօղէ՛ր, և նսեմացուցանէր մառախուղ դառն դերութեանց: Ո՞ր վերին իմն զօրութիւն Ազգ ազնիւ, ո՞ր աստուածահրաշ սքանչելիք. կամ ո՞ր ներքին մղումն երանութեան շարժեաց զձեզ առհասարակ ի հանդէս հասարակաց խնդութեանս, բայց եթէ՝ անակնկալ աւետիք ազատութեան և փրկութեան Արարատեան աշխարհի բնիկ հայրենեաց ձերոց, զոր աւետարանեաց հեռաւորաց և մերձաւորաց Աւետարանիչն խաղաղութեան, Աստուածապսակ և Կայսերանշան Արհին Հայոց Վրաստանեայց՝* Տէր ՆԵՐՍԷՍ:

*Եւ զի՞նչ: Ո՞վ մեծի բարերարութեանն, բա՛բէ անբաւ երախտեաց խնամողին տիեզերաց Աստուծոյ. այնմ որ երբեմն ցրուեաց զմեզ ի հեթանոսս վասն բազում մեղաց մերոց, և այսօր՝ զթացեալ վերստին ի թշուառութիւնս մեր, հաճեցաւ հաւաքել զմեզ ի ծագաց երկրի: Այնմ՝ որ մատնեաց զմեզ երբեմն ի ձեռս տերանց խստասրտաց՝ արար զերկիր բնակութեան մերոյ մեզ ի տեղի տրտմու-*

*թեանց, վայր թշուառութեանց, բանտ արգելանաց, հանապազորդեան սպանդարան մարտիրոսաց, և միանգամայն ասել, դժոխք իսկ արժանի մեղաց մերոց։ Եւ այս ընդ է՞ր արդեօք ծնո՛ւնդք Թորգոմայ. մի՞ թէ Հայք միայն ամբարշտագոյն գտան առաջի անաչառ դատաստանին Աստուծոյ քան զՀագարացիս, զՊարս և զայլ խժդժիկ ազգս հեռաւոր և մօտաւոր աշխարհաց։ Այնք՝ որ ի տէր սպրծէին միշտ և ի տաճարն կենդանի, այնք՝ որ Աւետարանին էին ժառանգորդք, և աստուածդրոշմ տառիցն մարգարէականաց ընթերցուք. այնք՝ որ զՔրիստոս ա՛ստուած դաւանէին, և ի հաւատն սրբութեան արիաբար մրցէին։ Եւ ընդ է՞ր արդեօք Աստուծոյ արդարութիւնն զսոսա յաւէտ՝ քան զնոսա կացոյց պատիժ պատուհասիս արժանի։ Մի՞թէ անիրաւեաց մեզ Տէր, կամ ոխ քինու պահէր ընդ Հայս Հայրն գթութեանց. ո՛չ։ Այլ զի բարձաւ սէր և արդարութիւն յամենայն մարդոց։ Այլ զի՝ ստութեամբ և ո՛չ ստուգութեամբ կարծեցուցանէին զանձինս սիրո՛ղս և պատուիրանապահս։ Այլ զի իշխանք մեր աստուածապարիշտք թափուր ի գործոց հաւատոց, փո՛յթք եղեն ի պատերազմ, և յամրունք ի խաղաղութիւն։ Ընդ վարագուրաւ բարեպաշտութեան համարձակ ամբարշտէին, ըստ պռնկելոյն Իսրայէլի պարծելով ի տաճարն նիւթեղէն, յարտաքին ցուցանսն ասեմ երևութական կրօնից*[1]*։ Այս ախտ փոխադրական ժանտախտից յաւագաց հաւեալ և յանաւագս պսակեալ ապականեաց զխովին զընդհանուր երջանկութիւն աշխարհի և Ազգիս մերոյ։ Արք կնամարդիկ, աղազունք, տիրատեացք, տիրադրուժք, մեռեալք փառաց, և կենդանիք անարգութեանց, ժողովեցան ի միասին վասն Տեառն և վասն Օծելոյ նորա. այսմ՝ որ թագաւորեցուցանէր զայր կեղծաւոր վասն խստութեան ժողովրդեանն։ Ոչ պատկառեցին ի պատուական երեսաց թագաւորին, լաւ համարեցան զՊարսիկ կռապարիշտ քան զՀայկազն աստուածապաշտ*[2]*. կամ ըստ սրբոյն Սահակայ պարթևական տեսանողին՝ «Զոչխար ախտացեալ ընդ առողջ գազանին փոխանակեցին»*[3]*։ Վասն այսորիկ և Աստուած իրաւամբք մատնեաց զնոսա ի ժանիս այլազգի գայլոց, որք կերին զժողովուրդ տեառն, որպէս կերակուր հացի, և առ Աստուած ո՛չ կարդացին։ Այս է, ո՛չ ծանեան, և ո՛չ ի միտ առին, թէ տէր էր՝ որ մատնեաց զմեզ ի ձեռս իւրեանց իբրև զՅոբ*[4]*՝ ի ձեռս սատանային, տանջել, այլ ո՛չ սպառել. սաստել, այլ ո՛չ բառնալ յերկրէ միանգամայն զյիշատակս մեր։ Խորհեցան թէ սուր իւրեանց միայն գերի վարեաց զգերիչս աշխարհի, զքաջազուն որդիս ասեմ քաջին Հայկայ դիւցազանց, և անցուցին ընդ մեզ չարիս անդր քան զոր ներէր նոցա ամենողորմ*

գթութիւնն։ Բայց տակաւին թոյլ ետ այժմ տէր. Նախ զի՝ ծառայն, որ գիտաց զկամս տեառն իւրոյ, և ո՛չ պատրաստեաց ըստ կամաց նորա՝ արժանի՛ էր բազմագոյն գանից՝ և բաժակի բարկութեան նորա։ Եւ երկրորդ՝ զի Ազգ մեր ի փորձոյ չարաչար տառապանաց ուսցին կշռել զյարգ ազատութեան, և գիտասցեն սիրել զիւրեանց Թագաւորս, մի՛ զոք դատելով, զի դատաստան տեառն է. այլ յաւէտ հնազանդելով, զի թէ բարի և թէ ո՛չ՝ Աստուած ժողովրդեան է, կամ լաւ ևս ասել, երկրորդ Աստուած՝ յետ ամենամեծն Աստուծոյն աստուածաց, և Տեառն տերանց։

Այլ զի՞նչ, մի՞թէ յաւիտեան մոռացաւ մեզ Տէր, կամ մինչ ի սպառ բորբոքեաց զբարկութիւն իւր. ո՛չ։ Վասն զի իբրև սկսան Հայք մերկանալ յինքեանց զքէն չարավախճան նախանձու, խլել ի միջոյ զկնճիռն անիրաւութեան, ի բաց հանել յանձանց յերկոսին իշխանսն դիւաց՝ «զիմն և քոյն», և ամենայն հաւատարմութեամբ և անկեղծութեամբ պաշտել զՏէր և զօծեալ նորա զմեծ կայսրն Ռուսաց, գթացաւ ի նոսա, ջնջեաց զդատակնիք մեղանացն. վառեցաւ ի պատերազմ տէր պատերազմաց, եւ հզօրն ի զօրութիւն, շարժեաց իբրև զսահան ջրոյ զսիրտ օծելոյն իւրոյ օգոստափառի, աշխարհակալի՛, հզօր կայսերն ամենայն Ռուսաց տեառն Նիկողայոսի Պաւլովիչի, առ զնա ի ձեռս իբրև զսուսեր, ագաւ զնա իբրև զզրահ աջ տեառն արար զօրութիւն աջ Տեառն մեծ վայելչութիւն։ Ետ նմա զամենաբաւական բազուկ յաղթութեան իւրոյ, և կացոյց զնա առաջնորդ գերեդարձն լինելոյ մեզ. ոչ միայն ի Բաբելովնէ խառնակութեան ըստ հնոյն Իսրայէլի ի խաղաղութեանն Երուսաղէմ[5], այլ ի դառն տառապանաց ի մշտերանն ազատութիւն. ի հանրասփիւռ գերանաց՝ ի փրկեալն Հայաստան։ Եւ այս՝ ոչ միայն ի կանգնումն օրինակի Սողոմոնեան տաճարին՝ յոյր ընդ դնել հիման ծերք արտասուէին և պատանիք կայտռէին. մին՝ զմեծ վայելչութիւն առաջնոյն յիշելով, և ի նուաստափառութիւն վերջնոյն մղձկելով, և միւսն զուխս անպտուղս Բաբելովնեան գերանացն ի միտ բերելով, և անդէն ի բուն իւրեանց հայրենիս զտաճար Աստուծոյ կառուցեալ տեսանելով։ Այլ ի նորոգումն և ի բարձր ի գլուխ պարծանս քրիստոնէական հաւատոց, ի վերակենդացաղումն հինգերորդ և անմահ Թագաւորութեանն Հայաստանի[6], ի յարազուարճ երջանկութիւն, յառոյգ ճոխութիւն, և ի հաստադրական բարեկարգութիւն աշխարհի, զոր և երանագոյնն ի դարուց անտի բնիկ թագաւորացն մերոց չկարաց՝ կա՛մ տեսանել, կա՛մ վայելել։ Ընդ այս ապա՛քէն մեծամեծ հրաշս՝ ծերք ի ծերութենէ պատմութեանց Ազգիս չգտեալ զնմանիս՝ ծա՛փս հարկանեն.

և մանկունք յստրկութենէ զերծեալք՝ և փոխանակ անարգանացն զթագ ընդգրկեալ՝ խնդա՛ն, ցնծա՛ն, և փա՛ռս տան Աստուծոյ։ Ընդ այս երիտասարդք մեր ի սուսեր խրախուսին, և կուսանք յիմաստս գիտութեանց կրթին։ Ընդ այս հեռաւորք և մերձաւորք առհասարակ խնդութեամբ ամբառնան զհիացական զայն բան մարգարէին, և ասեն. «Մե՛ծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, մե՛ծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալ»[7]։

Աստուածային է այցելութիւնս, եղբա՛րք, եթէ իրաւամբ կշռեսցուք զմեծութիւն նիւթոյն ի մեծութենէ անտի հետևեալ հանգամանացն։ Զի որպէս նախ զմեզ կուրացոյցն և կորոյս արդարութիւնն երկնային, այսօր՝ ըստ նմին օրինակի և զՊարսիցն խաւարեցուցեալ մտաց աչացն տեսութիւն՝ հորդան ետ նոցա ի կորուստն անկանգնելի։ Զի իբրև գայր հասանէր աւետաւոր ժամանակ փրկութեան Հայոց աշխարհին, Աբբաս՝ ժառանգ արքայութեանն և խաբէութեանն Պարսից, ի միջի խաղաղութեան զբոց խռովութեանն արծարծէր, հատանէ՛ր, մանրէր և խզանէր զսրբազան զայն հանգոյց ուխտին հաշտութեան, որով աղխախեալ յօդէին ընդ միմեանս հաւատք արքային, հանգիստք աշխարհաց, և անդորրութիւնք երկրի։ Հարցո՛ւկս առնէր, հմա՛յս հրամայէր. դիւթս արձակէր, որպէս երբեմն Կրիսոս ի Պիւթեան պատգամախօսէն։ Դիմէր բռ՛ւռն զօրութեամբ յաշխարհն խաղաղական, և յանակնկա՛լս հրոսակեալ ապականէր, քանդէր, եղծանէր զքաղաքս ի քաղաքացն Հայաստանի, և իւրով անօրէն խարդաւանութեամբ զանօրէնութիւն զդենին իւրոյ հրատարակել ժպրհէր օրէն ընդհանուր ամենայն ազգաց երկրի։ Ի մտի եդեալ՝ թէ որքան շատ հեղուցու զարիւն անպարտ, այնքան և բազում. գտանիցի՛ գրկանս առասպելեալ յաւէրժահարսանց դըրախտին ի զովացումն բոցոյ չարաչար պազշտութեանցն իւրոց։ Քակել կամէր զօտարին՝ բայց քակեաց զիւրն թագաւորութիւն, զաշխարհ զայլոց տիրել կամէր, այլ նա և զիւրոցն զրկեցաւ։ Վասն զի՝ այն ինչ փայլատակեցան ի նոսա հայախառն զօրութիւնք անխոնարհելի տէրութեան կայսեր, գոգցես իբրև շանթս հրաբորբոք կայծականց ճայթուցեալ յամպոց թանձրութեան, ցրեցին, ցնդեցին, եղծին, ապականեցին զհամայն սևագունդ կաճառս զՊարսից զընտին, և այնքան խուռն տեղացին ի նոսա հրացայտ ռմբունս թընդանօթաց, մինչ ո՛չ միայն անարին Աբբաս, զորջս մկանց ի գնոց որոնէր ինքեան տեղի թաքստեան ի թագաւորեալ քաղաքի անդ իւր, այլ և առասպելեալն նոցա Հերքուլէս քաջարանցն Ռոստամ, զահի հարեալ յերկիւղէ Մոսկովացի զօրավարին[8], և դուզնաքեայ նմին

վարկուցեալ զանշիջանիւթ տոչորմունս գեհենին, յորում էրն, աղերսէր փոխադրիլ ի խորագոյն ծործորսն սանդարամետից, թերևս անդանօր ազատ զինքն կացուսցէ յահեղ ահե՛ղ շանթարձակութեանց քաջազօր գնտին։ Տե՛ս ինձ. թէ զի՞նչ ի միումն անմիաբանութիւն, և զի՞նչ ի միւսումն միաբանութիւն հրաշացուցին աշխարհի զհամերկաքանչիւրն ասեմ զիւրեանց ներգործութիւնս։ Ո՞վ զարմանալեացս. Ազգ՝ որ երբեմն անմիաբանութեամբ իւրով հիմն ի վեր տապալեաց զիւր իսկ թագաւորութիւնն, այսօր միաբան հաւատարմութեամբ իւրով նեցուկ ամրութեան լինի և զէն զինուորութեան մեծազօր կայսերութեանն Ռուսաց։ Եւ այս՝ այնքան ա՛րք եղբարք, մինչ առ ինքն բռնաբարել և զկայսերականն երախտագիտութիւն, զմեծն ասեմ ի պարծանս Հայաստանի, և զանքուն խնամս նորա զներջանիկարարն Տանս Թորգոմայ։

Իբր այն զի՝ պա՛րտ է Արարատայ անդրանկին տիեզերաց՝ ըղփրկութիւն զգենուլ ի ձեռն անդրանիկ թագաւորի տիեզերաց օգոստափառն ասեմ Նիկողայոսի կայսեր Ռուսաց։ Պարտ էր արդարև աշխարհամօրն գաւառաց մերկանալ զքօղ բազմաժամանակեան այրութեան իւրոյ, և հարսնանալ վերստին ընիկ իւրումն փեսայի Արշակունեան թագաւորութեան, ի ձեռն աշխարհակալին մեծի և բարեպաշտ կայսեր Ռուսաց։ Պա՛րտ էր այսպիսի մեծ թագաւորութեան յայնմ մեծէ թագաւորէ ընդունել զգունտն ոսկի, զոր ետես մարգարէն Հայաստանեաց Սահակ Պարթև Մեծ Հայրապետ, և աստուածեղէն յայտնութեամբ գուշակեաց զանկումն, և զանդրէն կանգնումն նորա։ Զոր առեալ գրչաց մերոց երբեմն ի Բագրատունեաց և երբեմն ի Ռուբինեանցն պատուաստեցին թագաւորութիւնս բռնի մեկնութեամբ։ Այլ ինչ զիա՞րդ հաւատալի այս, որ վասն Արշակունեացն էր, և ո՛չ վասն այլոց տեսիլն՝ և մեկնութիւն նորա միանգամայն։ «Ծանի՛ր, ասէ հրեշտակն ցառաքելաժառանգ մարգարէն Հայաստանեայց, զի մերձ երևումն պղծոյն յանապատի. դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց»[9]։ Որպէս ահա՛ ի մեզ լցեալ կատարի. վասն զի յոյս իմ լի է անմահութեամբ, զի ընդ յառնել միագլխի Արշակունեան Արծուոյն, գոգջի՛ք, որպէս Փիւնիկն Եգիպտոսի ի մոխրոց անտի բազմաժամանակեայն մեռելութեանց իւրոց, և ի հովանաւորիլ նորա ընդ համասփիւռ թևօք հզօր երկգլխեան Արծուոյն Մոսկովացին կայսերութեան, համասեռ առ իւրն գթալով համասեռ. տածեսցէ՛, սնուսցէ, և բարձրացուսցէ զնա ի ժամանակի այցելութեան իւրում։ Վասն զի սէր՝ ասէր իմաստասէր, ի նմանեաց ծնանի։ Ո՞վ երանի՛ ժամուն յորում այս ամենայն լինիցի՛։

*Նա՝ աստուածային է այցելութիւնս, զի որ միանգամ և նթ խօսեցաւ որդւովն ի վախճան ժամանակացն ի փրկութիւն մեզ, այլ ո՛չ ևս երևի խօսիլ առաւելեօք քան զհրեշտակս։ Իսկ արդ՝ զմատակարարութիւն մեծի և հասարակաց խնդութեանս, և զի վաղուց հետէ ակնկալեալ աւետիս ազատութեան Հայրենեաց մերոց աւետարանէ ձեզ ի ձեռն օծելոյ իւրում տեառն Ներսիսի Կայսերապսակ Արքեպիսկոպոսին մերոյ. որ այնքան մե՛ծ է քան զհրեշտակս, որքան և մեծի մատակարարութեանց է քան զնոցայն կատարիչ, ըստ որում նա դաստիարակ և այցելու եկեղեցւոյ և եկեղեցի դաստիարակ հրեշտակաց ի խորհուրդ մարմնաւորն տնօրէնութեանց բանին Աստուծոյ։ Ինձ չեն կամք երկարել աստանօր ի գով Տօնելւոյն այնմիկ, որոյն գործք առաւելուն քան զանուն։ Բայց միայն զայս թէ՝ ի ծագմանէ անտի լուսոյ Աւետարանին Քրիստոսի յԱզգս մեր, կարի՛ և կարի՛ սակաւք ի Հայրապետաց գտան ազգասիրագոյն քան զնա։ —Օրէն էր ստուեր քահանայութեան մովսիսաւանդն օրինաց, կրել ի վակաս լանջացն զերկոտասան ականս ի թիւ երկոտասան որդւոցն Իսրայէլի, և մատչիլ ի դաբիրայն քաւութեան։ Այլ մերս այս Քահանայապետ ո՛չ միայն զյայտնութիւն և զճշմարտութիւն քրիստոսական հաւատոյս արկեալ զիւրեաւ մատչի հանապազ միջնորդել ընդ Աստուած իւր և ընդ Ազգ, այլ և զվակասն կայսերական զնշան դերազանց Ասպետութեան, յորում մարգարտաշար վայելչահիւս յեռեալ և ընդելուզեալ կան Ազգիս Հայոց անկեղծ հաւատարմութիւն և անուն բարի, զանգինն ի գնոց պսպղուն երակաց երկրի՝ կամ ականց պատուականաց, հանդերձի՛ մատչիլ այսօր յաթոռ շնորհաց օգոստափառ և ինքնակալ կայսերն Մոսկովաստանեայց, և աղերսել զաստուածանման գթութիւն նորա ի շինութիւն աշխարհի և Ազգիս մերոյ։ Վասն այսորիկ երանի՛ է մեզ Իսրայէլ նոր, զի հաճոյս Աստուծոյ և կայսեր ծանօթ մեր է, հայր մեր է, և տէր իսկ մեր է։*

*Հապա՛յ, առ ձեզ են աւետիքս այս մեծ, հեռաւո՛րքդ, առ ձեզ, և առ որդիս ձեր։ Խորհեցարո՛ւք այսուհետև այր ընդ ընկերի իւրում ընդ ազատութեան Հայրենեաց ձերոց ազատել զսիրտս ձեր ի կրից ներհականաց։ Վառեցարո՛ւք ազգասիրութեամբ և հայրենասիրութեամբ ընդ քաջ նահատակս Հայոց աշխարհին, որ գանձեցին ձեզ ի ջանս իւրեանց զմեծ զայս պարծանս։ Նոքա վաստակեցին եղբարք, եկա՛յք և մեք ի վաստակս նոցա հաւասար վայելիցո՛ւք։ Մի՛ ևս քաղցրասցին ի քիմս մեր, աղաչեմ, սոխ և խստորք Եգիպտոսի, որպէս երբեմն պորտապարար ազգին Հրէից։ Մի՛ ևս խաբեսցեն զմեզ անպտուղ ուռիքն Բաբելովնի, անանուն յղփութիւնք ընչից։*

*Մի՛ ես առասպելեալ ոսկէծաւք դժոխասարաս երկրիս Հնդկաց. որոյն ապականարար տապ տօթագին խորշակաց՝ զոսկիս իւր և զատացիչս նոցա զրեթէ ի մի քրայս հալոցաց համանգամայն խարշատէ։ Վասն զի՝ Աստուած բերանով մարգարէին առ ձեզ կարդայ հրաւէրս. «Ելէ՛ք, ապրեա՛լք, յերկրէդ. յիշեցէ՛ք զՏէր, հեռաւո՛րքդ, և Երուսաղէմ՝[10] խաղաղութեանն Հայաստան անկցի ի սիրտս ձեր»։ Եթէ ծանրացի՛ մեզ մարմին ծանրատաղտուկ, եկայք տակաւին Ա՛զգ փրկեալ. ելցո՛ւք ի Հայաստան հոգւով, մտօք, և կամովք. թողլով օտարութեանս միայն զառեցեալս ի սմանէ զմարմին։ Եկա՛յք, ժողովուրդք սեպհական, ելցո՛ւք ի Հայաստան ի հոյակապն ասեմ և ի հռչակաւորն յամենալին և յամենաբոյսն յերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր։ Եկա՛յք ելցուք ի Հայաստան, ա՛րք եղբարք, ուրանօր պատճառս պատրաստեաց ձեզ Նախախնամ տեսչութիւնն, ազնուացուցանել զանձինս, ասպետացուցանել զզաւակունս, և պայազատեալ տեսանել զերբեմն կորուսեալ՝ և զայժմ գտեալ զազգ և զընտանիս ձեր։ Եկա՛յք ելցուք ի Հայաստան, համբուրեսցո՛ւք զուարճախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց։ Երկի՛ր պագցուք աշխարհասասան Դրօշակին Արշակունեաց՝ որ ննջեացն և յարեաւ, և այլ ես ո՛չ մեռանի։ Պսա՛կս հիւսեսցուք ի մշտասաղարթ դաբնեաց անդուլ աղօթից, և ձիւնափայլ բրաբիոնաց անկեղծ հաւատարմութեան. պսակեսցո՛ւք նորօք զքաջ զինուորսն Հայոց աշխարհին, և զերեքհարիւրսն ասեմ. որ թէպէտև թուով սակաւաւորք, այլ արութեամբ բիւրաւորք, սասանիչ եղեն որպէս երբեմն Գեդէհոնեանք աշխարհակուլ բանակին Մովաբացւոցն Պարսից, և կարապետք Արքայութեանն Այրարատայ։ Եւ դարձուցեալ զաղերս մշտանուէր մաղթանաց առ Աստուած, ըստ փրկելոյն Իսրայէլի.*

## Երգեսցո՛ւք և ասասցո՛ւք.

*Գոհանամք զքէն բոլորով սրտիւ, Ամենակա՛լ Հայր, որ ըստ առատ գթութեան քում անտես արարեր զմեղս հարցն մերոց, և ո՛չ յիշեցեր զանօրէնութիւնս որդւոցս մեղուցելոց առաջի քո։ Այլ ի բառնիլ մարդկային հայթայթանաց զամենահնարդ հրաշագործեցեր զքո զօրութիւն, և մեծութեամբ փառաց քոց յայց ելե՛ր քակեալ և կործանեալ տանս Թորգոմայ։ Լո՛ւր աղաչանաց մերոց, մարդասէ՛ր. և հայեա՛ց ի բարձրութենէ Աթոռոյ փառաց սրբութեան քոյ ի միահեծան տէր մեր և յօղոստափառ կայսր Ռուսաց Նիկողայոս Պաւլովիչ. պսակեա՛ զնա ամենայն երկնային և երկրաւոր բարութեամբ.*

*Տո՛ւր նմա և ամենայն քաջ զօրաց և զօրավարաց նորա զյաղթութիւն ի վերայ ամենայն թշնամեաց նորա։ Շարժեա՛ տէր զգութ բարերար խնամոց նորա ի վերայ Ազգիս մերոյ և աշխարհի զորս և փրկեցեր ամենազօր զօրութեամբ քով։ Պարգևեա՛ և մեզ զհոգի աստուածային շնորհաց քոց. սիրել զքեզ ի վեր քան զամենայն, և զ՚ի քէն կարգեալ մեզ թագաւորս՝ առաւել քան զանձինս մեր։ Տո՛ւր Ազգիս Հայոց զշինութիւն և զբարեկարգութիւն յայսմ հետէ մինչև յաւիտեան։ Մի՛ ևս լինիցի մեզ տէր ատելութեամբն առ թագաւորս մեր՝ ոտնհար լինիլ ամենիմաստ նախախնամութեան աստուածեղէն քո մեծութեանդ, և շարժել զբարերարութիւն քո ի պատիժ ամբարհաւաճ ձեռնիրիցութեանց մերոց որպէս արարաքս՝ և կորեաք։ Առատացո՛ Ազգիս մերում. մանաւանդ և առաջիկայ ժողովրդեանս ըզմիաբանութիւն, զազգասիրութիւն, և զհայրենասիրութիւն, և քեզ փառք Որդւովդ միածնիւ. և Հոգւովդ Սրբով. յաւիտեանս՝ ամէն։*

## 4. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—էջմիածին*
Spe Vivimus
*Յուսով կեամք*

### Առաջին դպրոցական գիտելիք[1]

*Անտարակո՛յս յուսայ հոգիս, Արհի՛ Գերապանծ, թէ լրումն մարգարէահրաշ գուշակութեանց Պարթևական տեսանողին եկեալ հասեալ է յԱզգ մեր[2], վասն զի Հոգին Աստուծոյ՝ որ երբեմն փչեաց Աստուած ի վերայ ամբարհաւաճելոցն յԱզգի մերում, իբրև ի վերայ յանդուգն գոռոզութեամբ փքացեալ աշտարակաշէնն ասեմ հըսկայից, զԲաբելովնացին ցրօն և խառնակութիւն[3]. այսօր ո՛չ ըստ արդարութեանս, այլ ըստ անհուն գթութեան և ողորմութեան իւրոյ վերստին ցօղէ ի մեզ զհոգի միաբանութեան, զմայր երկնային և երկրային երջանկութեանց։ Որոյ հաւաստին այս է ապացոյց, զի ի լուր ընդ երկար ակնկալեալ ազատութեանն Հայաստանի, զարթուցեալ որպէս ի քնոյ բազմաց ի յայտնի պարոնաց տեղւոյս, ընդ որս յարգոյ պարոն Պօղոս Յորդանանեան մեծանուն վաճառական և մտերիմ իմ[4], ո՛չ միայն խորհին միշտ և խօսին մասնաւորել ընդ*

համազգիս իւրեանց աստուածառաք մեծի այցելութեանդ, այլ և ցանկան օր յառաջ պտղեամբք զնոյն կատարել։

Տեսեալ նոցա, զի գնալով գնայ ազգ մեր, և նուազի աստ, քարւոք ևս դատին յաւելուլ յազգատոհմ իւրեանց և ի Հայրենիս, առ որոյ յաջողագոյն կատարած, զոգցե՛ս, աստուածազդեցիկ իմն տնօրէնութեամբ, և օրըստօրէական յորդորանօք իմուք, հաւանական ընտրեցին փոխանակ առաքելոյ զմանկունս իւրեանց յԱնգղիա, ի Փարէզ կամ յայլո՛ւր յուսումն Ասիական և Եւրոպական լեզուաց, հաւատալովն զնոսա ի հոգս ազգացն օտարաց և խթելով զմեծամեծս հարստութիւնս իւրեանց ի նոցայն փոր առաքել միանգամայն ի հոգս բարերար խնամոց Ձերոց, որպէս զի մարզելով նոցին ի հրահանգս ձեռնակառոյց ճեմարանին ի Տփխիս[5], պիտանի լիցին յաւէտ հայրենեաց իւրեանց քան անձանց, և փոխանակ շահելոյ նոքօք այլազգի ճեմարանաց, շահեսցի Ձերդ, և պայծառասցի առ յապայն ի սրամիտ յառաջադիմութիւն նոցին։

Թիւ նախառաք մանկանց ո՛չ լինի, որպէս հաւատամ, պակասագոյն քան 20, և ծնողք իւրաքանչիւրոցն սրտի մտօք վճարեն վասն ամսական ծախուց միոյ միոյ ի նոցանէ սիքա ռուփիս 32, կամ 16 մարչիլս, գումար ամսական արդեանց քանիցն ի մասին առեալ, լինի 640 սիքայ ռուփի, կամ 320 մարչիլս։ Իսկ տարեկան գումար արդեանց քանիցն առնէ սիքայ ռուփիս 7.200 կամ 3.600 մարչիլս։ Այլ զայս ամենայն ըստ հետագայ դաշնադրութեանցս։

Նախ՝ զի մանկունք առաքեալք ի Հնդկաց, ունիցին արտօնութիւնս ընթեռնուլ զորքան լեզուս ազգաց և կամիցին և կարիցեն, կամ արհեստս ծառայականս և մեքենականս։

Երկրորդ՝ զի որոշեսցին ի յատուկ դասս, և ունիցին իւրեանց յատուկ ժամադրութիւնս դասառութեան ըստ պէսպէս լեզուաց, և զխնամ վարժապետաց նոցին։

Երրորդ՝ զի ունիցին իւրեանց, դէթ երկուքն զմի միայն սենեակ առանձինն բնակութեան, և կերակուր և հանդերձ նոցա լիցի սուրբ և ստակ։

Արդ թէև ըստ երեսին խնդրոցս այսոցիկ առաւելուն ծախք ճեմարանի Ձերում, սակայն և այնպէս, հայելով յառատութիւն աշխարհիդ, ի բարեխառնութիւն, և ի սակաւապետութիւն, տակաւին ևս յաւելու վճարն քան՝ զծախս, զորօրինակ դիցուք թէ կան ներկայ չորեսին լեզուաց դասախարակք ի ճեմարանի Ձերում, այսինքն Հայոց, Ռուսաց, Պարսից և Վրաց, յաւելուած 20 աշակերտաց ո՛չ ինչ զանազանութիւն գործէ ի նոսա։ Միայն թէ եթէ յաւելուցուք ի

վարժապետսն, այլ ևս երկու, այսինքն է Յունացն և Լատինացւոց, վճարելով իւրաքանչիւրոց ամսական յիսուն կամ հարիւր մարչիլս, դեռ ևս ո՛չ ինչ վնասիք (որպէս ի ներքոյ լիագոյն ևս ցուցցուք),— վասն բնակութեան, ո՛չ լինի ծախսն առաւել քան զերկուս մարչիլս ամսոյ ամիս, պաքէն երկուց տղայոց զմի սենեակ տուեալ՝ ի բաց հանցուք յամսական 32 մառչիլաց զերկուսն վասն վարձու սենեկին մնայ 30 հանեալ և զտասն մառչիլս՝ վասն կերակրոց, և զհինգ՝ վասն զգեստուց նոցա, մնայ յարդեանց երկուց աշակերտաց միայն ըստ ամսոյ մառչիլս 15, տասնապատկեալ անցանէ անդր քան զ150 մառչիլս ըստ ամսոյ, ուստի և տարեկան մնացորդ արդեանց քսանիցն, լինի 1.800 մառչիլս, հանեալ աստի և 200՝ վասն բժըշկացն են, զուտ մնացորդ լինի 1.600 մառչիլս ընդ հինգ ամս, առնէ 8.000։ Բայց այսր մեծի յառաջածութեանն այս միայն չէ շահ, եթէ երկարահայեաց լիցուք ի հետագայ պարագայս, որք են։

Նախ՝ հաւատալով բանի Փրկչին. թէ՝ «ուր գանձն ձեր է, անդ և սիրտ ձեր եղիցի»[6], հաւատամ, զի սոքօք, իբրև բնաւորական իմն կարթիւք, մարթ է Հայաստանի. տակաւ առ տակաւ որսալ յինքն և զծնողս նոցին իսկ մանկանց։ Եւ եթէ այսպէս, ապա և փոյթ Ձեր ի մասին այսորիկ, բերէ ի Ձեզ զկենդանագիր օրինակ Փրկչին աշխարհի, զի որպէս նայն՝ տարածելով Ձեր զբազուկս համատարած հայրութեան իբրև ի վերայ խաչաբարձ չարչարանաց, ժողովէք ընդ թեւօք ձերովք զցրուեալ որդիսն Հայկայ, գերեդարձ լինելով նոցա ո՛չ այնքան յաղթութեամբ սրոյ քան սիրոյ ի փափագելին իւրեանց հայրենիս։

Երկրորդ՝ զի այսու պարտաւոր կացուցանէք Ձեզ, ոչ միայն զհամօրէն հասարակութիւնս Հայաստանեայց, այլ և զմիահեծան տիրապետ նոցա զկայսրն ամենածապսակ, ածելով հետզհետէ ի սահման նոցա զխումբ իմն բազմահանճար և ունեղ վաճառականաց, որով և առաւել քան զառաւելն ծաղկեցուցանել զօրէք զվաճառականութիւն և զպիտանի արհեստս աշխարհիդ, յորոց՝ եթէ ոչ անիրաւեցայց, զո՛րկ էր մինչ ցարդ գերութիւն Հայաստանեայց։

Երրորդ՝ զի ի գալ աշակերտաց տեղւոյս այսպիսի դիտաւորութեամբ, և ի յատկանալ նոցա ի խնամս Ձեր ըստ վերոգրեալ գլխոց, բազումք ի մերազգի և յայլազգի ազնուականաց տեղւոյդ, փափագին նմանեցուցանել նոցին և զորդիս իւրեանց, և ապա յայնմ հետէ որոշի ճեմարան Ձեր յերկուս վեհագոյն յառաջս, յազնուականութիւն և ի հասարակութիւն, որով ո՛չ միայն շահուց առաւելութիւն ծնանի, այլ և նախանձ բարի ի համազգիս մեր, և սէր գիտութեան, որով և

նախնի փառք հայրենասիրութեանն ծաղկեալ արծարծի։ Քանզի գիտեմք թէ ընդ քանիս առաքեալս ատուստ, ընտրեսցին և քառասուն ևս այլք ի Տփխիսոյ, ի Փայտակարանէ, և յայլոց մերձակայ սահմանաց ի նոյն կարգ, ամսական ծախս նոցին հաշուելով ըստ վերոյգրեալ եղանակիդ, տարեկան մնացորդ արդեանցն վաթսնիցն ի մասին առեալ՝ առնէ 4.800 մառչիլս։ Եւ այսու կարի՛ դիւրին լինի ո՛չ միայն պահել ձեզ վարժապետս Յոյն և Լատին բարբառոյ, այլ գանձել ի կայսերական գանձարանի յաւելուածս ինչ դրամոց, ի պէտս ապագայ հաստատութեան ճեմարանի ձերում, զանց արարեալ աստանօր և զայլ և այլ առաջարկութեամբ։

Գամ ահաւասիկ ի մասնաւոր խնդիրս, որք անընդմիջապէս հային յառաջիկայ նիւթ բանիս, այսոքիկ են։

Նախ՝ գրել և ցուցանել մեզ, թէ քանի՞ լեզուս ընթեռնուն աշակերտք ձերենահաստ ճեմարանին ի Տփխիս, և թէ կրթի՞ն յատկապէս յերկոսին մայր լեզուս Արևմտից՝ ի Յոյնն ասեմ և ի Լատինն։

Երկրորդ՝ թէ որոշեա՞լ է աշակերտաց տեղւոյդ ի դա՛սս դա՛սս, թէ ո՛չ, և եթէ որոշեալ՝ որո՞վ կարգաւ կամ սահմանաւ. և թէ որդիք ազատա՞ց խառն ընդ գեղջուկս ընթեռնուն, թէ որի՛շ որի՛շ։

Երրորդ՝ թէ զի՛նչ զանազանութիւնք իցեն ի մէջ վարձուորաց առաջին աստիճանի մանկանց, և որոց ի խոնարհ քան զնոսա. զի՞նչ և ի մէջ վարձուորաց և ձրի կարդացողաց միանգամայն. զի՞նչ և ի մէջ տնաւորաց և անտնից (այսինքն նոցա, որք ի քաղաքի այդր կան, և օր յօրէ առաւօտանան ի ճեմարան Ձեր և գնան. և նոցա, որք օտարքն են, և միշտ կան բնակութեամբ ի ճեմարանի ձերում), և ո՞ր տարբերութիւն վարձուց երկաքանչիւրոցն. և թէ ցո՞րքան ձգի ժամանակ նոցա։

Չորրորդ՝ եթէ յետ կատարելապէս հմտանալոյ աշակերտաց տեղւոյդ կամիցին մտանել ի քաղաքական, ի զինուորական և ի հոգևորական սպասահարկութիւնս կայսեր, ընդունելի լինի՞ն, թէ ո՛չ, և թէ լինիցին, որո՞վ կամ զիա՞րդ։

Զայսոսիկ չորեսին խնդիրս, հանդերձ այլ հարկաւոր պարագայիւք խնդրեմ օր յառաջ գրել և ծանուցանել մեզ։ Եւ որ մեծն է քան զամենայն, կարգել Ձեզ գործակալս արս հաւատարիմս և խոհականս, ի Բասրայ, ի Բաղդատ, ի Քրմանշահ և ի Թէհրան, ի միոյ կողմանէ, և ի միւսոյ կողմանէ ի Բուշեռ, ի Շիրազ, յՍպահան, ի Թէհրան և ի Դաւրէժ. զի ընդ որ ուղի և յաջողակ համարեսցեն ծնօղք մանկանց առաքելոյ, հաւատասցեն նոցա զորդեակս իւրեանց, զի ծախուք իւրեանց ամբողջ հասուսցեն նոքա առ Տէրութիւն Ձեր մանկունս Հայոց Հնդկաստանեայց։

Ո՛չ զարմանամ եթէ և նոքին իսկ բանակատարք Տէրութեան Ձերոյ յայդոսիկ կողմանս, յորդորեալ յօրինակէ սոցին առաքեսցեն և զիւրեանց որդեակս յուսումնարան Ձեր ըստ վերոյգրեալ պարագայիցն։

Պիտոյ է նաև՝ որպէս հաւանիմս իսկ, կարգել Ձեզ աստանօր զմի կամ զերկուս յերևելեացն Հայոց բանակատարս Տէրութեան Ձերոյ կամ ճեմարանի, այսպիսի իմն եղանակաւ, զի ընդ առաքել մանկանցն պարտաւորեսցի, կամ պարտաւորեսցին, հաւաքել նաև զտարեկան արդիւնս իւրաքանչիւրոցն ի ծնողաց անտի նոցա, և առաքել առ Ձեզ նախաձեռն. և այսպէս յիւրաքանչիւր տարեգլխի հատուսցէ, կամ հատուսցեն անարատ ձեռամբ զարդիւնս Հնդկաց։

Յաջողակ ևս լիցի, եթէ հնարեսցի Տէրութիւն Ձեր, բանալ զայնպիսի դուռն, ընդ որ կարեսցեն մերազինք տեղւոյս անվնաս հասուցանել, և դնել ի վարձու ի գանձարանի կայսեր Ռուսաց, զայնչափ գումարս դրամոց, որոյն շահ բաւական լիցի մշտնջենապէս լնուլ զծախս մանկանցն իւրեանց, եկողացն այդր։ Եւ այս՝ եթէ արդարև կարելի լիցի հնարել Ձեզ, թուի ինձ դիւրին ևս և անսասան եղանակ ստացութեան դրամոցն, քան զոր մարթն է զմտաւ ածել։ Շփոթ և անճոռնի կառավարութիւն Պարսից աշխարհի, կամ Թուրքաստանի, յայտ իսկ է Տէրութեան Ձերոյ, ընդ որ չէ հեշտին անգամ առ անգամ անվնաս անցուցանել զդրամս։

Այլ զայս ոճ, վասն զի ընդ երկար ժամանակի պէտս ունի. և զի մա՛րթ է Տէրութեան Ձերում ընդունել հետզհետէ ի կարգեալ բանակատարաց Ձերոց որ ի Բասրայ կամ ի Բուշեռ, զառաջին, զերկրորդ, և զերրորդ ամաց արդիւնս, աղաչեմ, մի՛ զանց առնել ի սակս խնդրոյս այսորիկ, զփութով ընդունելութիւն և զայլ և այլ հանգամանս մանկանցն տեղւոյս, զի յետ ընկալնլոյ զնոսին ևս, կարող էք եթէ կամիք, հաստատել զնոյն. և յաւէտ հաւատարմացուցանեմ Տէրութեան Ձերոյ, զի յետ ընդունելոյ Ձեր զմանկունս մերազանց տեղւոյս ի ճեմարան Ձեր, և բանալոյ զվերոյգրեալ դուռն տեղափոխութեան դրամոց, ոմանք յերևելի վաճառականաց տեղւոյս, գանձել կամին ի կայսերական գանձարանի անդ, ո՛չ միայն զայնչափ դրամս, որոց շահ բաւական լինիցի ի ծախս մանկանցն իւրեանց և ե՛թ, այլ և ի նշան ապադայ դարձին իւրեանց ի սահման կայսեր, և այլ ևս մեծագոյն գումարս։

Զայս գիր, աղաչեմ անշո՛ւշտ հաւատալ ինձ, ո՛չ են կամք ինձ ուղղել առ Տէրութիւն Ձեր, միայն ի շողոքորթել առ իս գրութիւն ձեր ի պատասխանատրութիւն սորին, այլ յորդորեալ ի բնատուր

*սիրոյս, որ առ ազգային հաստատութիւն Ձեր, և ես ի բազմաց, մանաւանդ թէ ի յարգոյ պարոն Պօղոս Յորդանանեանէ*[7] *գրեցի, և խնդրեմ եթէ անպատշաճ թուիցի Բարձր Սրբազնութեան Ձերոյ զիջանել ի թղթակցութիւն ընդ իս ընդ նուաստին տարագրիս, թերևս մի՛ անտես արասջիք գրել յաղագս կարևոր հանգամանաց յատկապէս խնդրեցելոց ի Ձէնջ յայսմ, ի բաւարարութիւն ազգայնոց մերոց որ աստ, գոնէ՛ առ նոյն ինքն յարգոյ պարոն Պօղոս Յորդանանեան, առ յարգոյ պարոն Աւետ Աղաբէգեան, և առ այլս, որքան փոյթ և կարևոր լիցի։ Մնամ, լքեալս և բարձի թողի՛ արարեալս ի Ձէնջ ի սպա՛ռ, սակայն և հաւատարիմս միշտ, և բարեկամս ազգային հաստատութեան Ձերոյ.*

Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց

Bishop's College
*1828, հոկտեմբեր 8*

## Երկրորդ դպրոցական գիտելիք[8]

*Թէպէտև չազդէ ինչ լոյս ճրագի ընդ երևել Արեգական, և ո՛չ աղքատին խորհուրդ իմ գերագոյն կատարելութեանց Բարձր Սրբազնութեան Ձերոյ, սակայն տեսեալ՝ զի կատարելութեան մտաց պիտեն նաև տեղական և ժամէական հանգամանք, վստահանամ որդիապարտ սիրով յանդիման կացուցանել Տէրութեան Ձերոյ ըզհետագայ կշռադատութիւնս, և խնդրեմ ընտրել Ձեզ աստի զբարի բարին։*

*Նախ՝ հեշտին եղանակ թեթևացուցանելոյ Ձեր զծանրաբեռնութիւն ազգային հաստատութեան Ձերոյ է՝ կարգել զփոքրիկ մանկավարժարանս յամենայն աւագերեցական եկեղեցիս թեմի Ձերոյ, և առաքել անդանօր դաստիարակս ի կատարեալ աշակերտաց անտի ճեմարանի Ձերում, որպէս զի նախակրթեսցեն նոքա զայնոսիկ մանկունս, որոց հանդերձեալ իցէ մտանել յաշակերտութիւն մայր ուսումնարանի Ձերոյ ի Տփղիս։ Որով ո՛չ միայն ցնծայ ուսումնարան Ձեր յընդունել իւրում զաշակերտս իսկոյն սկիզբն առնել բարձրագոյն ընթանլեաց և անդրէն թևակոխել զօրութեամբ Հայկականիս ի լեզուս ազգաց, այլ և օր ըստ օրէ յորդորեալ խուսան վայրացն այնոցիկ, կակղին և գան ի սէր դրոց և արուեստից, և այլն։ Ընդ որ՝ ընդ այսքան դարս, մի օրինակ վշտանան, և զոր՝ դիւրիչ դժուարութեանցն է, գտանել չկարեն։*

*Երկրորդ՝ և հարկաւորագոյն ևս առ ընդհանուր պայծառութիւն*

*աշխարհի և ուսումնարանիդ է, ճոխ իմն և լի՛ մատենարան կառուցանել, և հաւաքել գրեանս գրե՛թէ յամենայն ծանուցեալ ազգացն Եւրոպիոյ և Ասիոյ։ Ո՛չ զարմանամ, եթէ զՀայն, զՄոսկով, զՎիր և զՊարսիկ գրեանս արդէն իսկ հաւաքեալ իցէ Տէրութեան Ձերոյ, յորոց եթէ ի բաց առցուք զՀայն, առ որս ծագեաց գրագիտութիւն յառաջ քան զելուստն Մոսկովաց, և գիր ի վերոյ հանդիսացաւ քան զՎիրս և զՊարս, ո՛չ ինչ այլ որպէս հաւատամս, իմաստուն կամ գիտուն ակնկալցի ի միւսոցն։ Ապաքէն արժա՛ն է, որքան և կարելի՛ լիցի, հաւաքել Ձեզ գրեանս Յունաց, Լատինացւոց, Անգղիացւոց, Գաղղիացւոց, Ասորւոց, Հրէից և Քաղդէացւոց, և ջանալ ի հրահանգել զմանկունս Ձեր յայսոսիկ լեզուս ըստ կարևորագունին, կամ յերևելիսն ի սոսա. կանոնել ևս, զի եթէ այս ոք, ո՛չ թարգմանեսցէ այս գիրք յայս ինչ բարբառոյ, ո՛չ կարէ ընդունել զնշան գրագիտութեան իւրոյ։ Որով, որպէս անշուշտ հաւատամ, ի փոքու իմն ժամանակի արժանի կացուցանէք զՏփղիս, նորոյ անուանակոչութեանս,* «Նոր Աթէնս»։

*Երրորդ՝ պիտին նաև տպագրութիւնք ամենայն վերոյ գրեալ ազգաց մանաւանդ Յունաց և Լատինացւոցն։ Քանզի Լատինացին, թէպէտև զմի ձև ունի, այլ տպագրէ իւրև միանգամայն զբարբառս գրեթէ ամենայն եւրոպական ազանց, այսինքն զԼատինացւոցն, զԻտալացւոց, զԱնգղիացւոց, զԳաղղիացւոց, զՓորթուգալաց, ըզԴանեաց, և այլոց բազմաց, ուստի և դիւրագինն է ի մէջ համօրէն տպագրաց։*

*Յայսց երից վերոյ գրեալ խնդրոց, առաջինն է բովանդակապէս ի բաւականութեան ձեռում և ի կամս։ Իսկ վասն երկրորդին և երրորդին գիտելի է, զի գնել զայսքան ազգաց պիտանի գրեանս, և ձուլածոյս տպագրեաց ի գնոց արծաթոյ, յաւէտ ծանրանայ Սրբազնութեան Ձերոյ, բայց և առանց դրամոց իսպա՛ռ. յաւէտ ծանրագին։ Ապա՛քէն առ զբռամբ ածելոյ զայսոսիկ հեշտեաւ, պիտին նախ հնարք, և ապա դրամք։ Այսպէ՛ս.*

*Նախ՝ վասն Հայկականիս նամականի առնել առ ամենայն առաջնորդս քաղաքաց կամ վանօրէից, զի զմի յամենայն երկու միօրինակ գրոց առաքեսցեն առ ձեզ (կամ լաւ ևս ի մատենադարանն էջմիածնի)։ Իսկ եզակ գրոց առցեն զհաւատարիմ և զճի՛շդ օրինակս վասն իւրեանց, և զհին զնախագա[զա]փարսն, կամ ըզձեռագիրսն առ Ձեզ ուղարկեսցեն։ Ապա՝ առաքել բանիբուն վարդապետ ոմն, հրեշտակութեամբ և թղթով Հայրապետին յԱթոռն Սսոյ (զի անդ, որպէս լսեմս, են համախմբութիւնք ամենայն*

նախնի գրոց մերոց) և խնդրել յարքեպիսկոպոսէ տեղւոյն, կամ որպէս սովորաբար ասի, ի Կաթուղիկոսէ նոցա, առաքել առ Տէրութիւն Ձեր, որչափ անծանօթ գրեանս և կարելի լիցի։

Երկրորդ՝ վասն Մոսկովացի և Վիր գրեանց, դուք բարւոք ևս գիտէք։

Երրորդ՝ Վասն Ասորւոց գրեանց, գրել զթուղթ իմն սիրոյ և հայցուածոց, առ տիեզերական ծանուցեալ արքեպիսկոպոսն, կամ առ ծայրագոյն կաթուղիկոս Ասորւոց առ տէր Գէորգ պատրիարգ Անտիոքայ, և խնդրել ի նմանէ զհաւաքմունս Ասորի գրոց։ Սոյնպէս նաև առ եպիսկոպոսուն Միջագետացն Ասորւոց։ Բայց եթէ խաղացուսջիք առ այս և մասնաւոր իմն գումար դրամոց, բարւոք ևս լիցի։

Չորրորդ՝ վասն Անգղիացի, Գաղղիացի, Լատին և Յոյն գրեանց. գրեսջիք առ որս և կամք իցեն Ձեր, ի տէրութիւնս Ռուսաց կամ Ֆռանկաց։ Բայց որ յաւէտ յուսալին է ինձ, և յաւէտ հեշտ. գրեսջի՛ք, եթէ հաճեսջիք, զթուղթ իմն առ եպիսկոպոսն Անգղիացւոց Կալկաթայ (զանուան տեղն բաց թողլով). կամ բարւոք ևս առ արքեպիսկոպոսն Կանդէբրիկայ (նոյնպէս և սորա անուան տեղն բաց թողլով)։ Ընտրական ոճ այսր գրութեան, պարտ է լինիլ նախնի և առաքելական (և եթէ ի Հայրապետէն սրբոյ, նախ իւր անուն կարգեսցի և ապա «Նորին Շնորհաց Արքեպիսկոպոսին Կանդէբրիկայ և Ծայրագոյն Մետրապօլտին ամենայն Անգղիոյ»։ Իսկ եթէ ի Ձեր Տէրութենէ, նախ՝ անուն նորա, և ապա զՁերն կարգեսջիք)։ Սրբազան եպիսկոպոսն Կալկաթայ, որով և նորին շնորհ արքեպիսկոպոսն Կանդէբրիկայ (որպէս ի վեր անդր գրեցի), բացեալ է, եթէ անաշառ մտօք դատեսցուք զգուռն և զառիթ թղթակցութեան Ձերոյ, բարիս առնելով ինձ, և ինև համօրէն Ազգիս մերոյ և եկեղեցւոյ Ասպաքէն, եթէ մարդասիրեսջիք ինձ, և երկարահայեաց աչալրջութեամբ քննեսջիք զպարագայս բանից իմոց, ո՛չ զարմանամ, եթէ առաւել ընտրելի դատիք, գրել առ արքեպիսկոպոսն Կանդէբրիկայ, և առ եպիսկոպոսն Կալկաթայ միանգամայն, զթուղթ իմն շնորհակալութեան և սիրոյ, վասն բարերարութեանց նոցա առատաձեռնելոց առ վարդապետս Ձեր, առ իս առ նուաստ որդի Ձեր, և առ համօրէն Ազգ Ձեր։ Յորում և իբրև ընդ քօղարկութեամբ ցուցանել, թէ՝ «վասն պիտանի գրեանց Անգղիացւոց, Լատինացւոց, Յունաց, և Գաղղիացւոց, ևս և տպագրաց նոցին, պատուէր առաքեցաք գործակալաց մերոց, որք ի յԱրևելեան Հնդիկս, գնել մեզ զպիտանագոյնսն ի նոցանէ, և խնդրեմք, զի ընդ այնոցիկ գրեանց շնորհ արասջիք առաքել առ մեզ և բարերարեալն ի Ձէնջ զորդի մեր զՄ. Դ. Թ՟. և այլն»։ Եւ զայս գիր երկու միօրինակ արարեալ հաւատարիմ ձեռամբ

առաքեսջիք աստ, կամ առ իս, և կամ առ գործակալս սուրբ Նազարէթ եկեղեցւոյն մերոյ ի Կալկաթայ, պատուիրելով նոցա, զի եթէ նշան արժանաւորութեան տեսանեն, և վկայեն ես, յանձնեսցեն, ապա թէ ո՛չ վերստին կնքեալ առ Ձեզ դարձուսցեն։ Զիա՛րդ և իցէ, յուսամ. և հաւատարմացուցանեմ ես Տէրութեան Ձերոյ, զի ի գալ զ20.000 սիքաց ռուփեաց արժանեօք գրեանս, և եւրոպական ի Ձէնջ այսպիսի թղթոց, մասամբ պարգևի ստանալ Ձեզ յաւէտ քան տպագրութիւնս, հանդերձ լիուլի արտունութեամբք և ծախիւք ճանապարհի։ Եւ այս, թէ զիա՞րդ, կամ որո՞վ համեստ առաջարկութեամբ կարացից ի գլուխ հանել, յանձնեցէ՛ք, և տեսջի՛ք։

Վասն այսորիկ եթէ հաճոյ թուիցի յաչս Բարերար Սրբազնութեան Ձերոյ ժողովել զայսոսիկ գրեանս, և գնել Ձեզ զվերոյ գրեալ տպագրութիւնս ազգաց, մի՛ անշահ թողուք, աղաչեմ, զժամանակն յաջողեալ Տերամբ, այլ գրեսջիք առ գանձապետս սրբոյ Աթոռոյն, կամ առ բանակատար ուսումնարանի Ձերոյ որ վասն վերոյ գրեալ առաքելի մանկանց տեղւոյս, զի իմով խորհրդով և ընտրութեամբ (ըստ որում անտեղեակք են ինքեանք պիտանութեան Յոյն և Լատին գրեանց) գնեսցեն ձեզ զայնոսիկ. և թուի, զի աստուստ դիւրագին ես, քան յայլուստ, մա՛րթ է ձեզ ի ձեռս բերել։

Եւ եթէ ընդ այսր գրոց, ընկերեսցին և երկոքին գրեանք մի առ արքեպիսկոպոս Կանդէբրիկայ, և միւս առ եպիսկոպոս Կալկաթայ, և միւս ես առ վերոյ գրեալն՝ Գուլիէլմոս Հաճ Միլ աստուածաբան վարդապետն, և բազմաշխատ դաստիարակն իմ[10], ո՛չ միայն պանծալի յօրինէք զդարձ տարագրեալ որդւոյս Ձերոց և ծառայի, այլ և ի պիտանեաց անտի, որով շահի Ազգ մեր ողջոյն ոչ զրկէք զուսումնարան Ձեր, և զԱզգ։ Քանի զոր մնամ ամենայն պակասանօք

խոնարհագոյն ծառայ Ձեր և որդի Ձեր

**Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց**

Bishop's College
*8 հոկտեմբեր, 1828*

## Առաջին զրաւորական գիտելիք[11]

*Որքան լեզուս գիտէ ոք խօսիլ,*
*այնքանի՛ցս և մարդ է նա։*

Անգղիա, նախանձաւորն, բայց և կատարելագործիչն Գաղղիոյ, ծաղր առնէ այսօր զնախնի Աթէնական գիտութեամբք, ընդ երազս

դնէ զիմաստս քրմաց հնոյն Եգիպտոսի, ի դահ ի գլուխ դժխոյանայ Քաղդէական և Փիւնիկ մակածութեանց՝ աստուածազարմն ասեմ գիտնոց ծերունին դարուց։ Զի եթէ զթագուհին իմաստութեանց ասես զաստուածաբանութիւն, անդանօր յաւէտ քան ընդ համօրէն տիեզերս ծնանի որդիս, փիլիսոփայութիւն ծառայէ նմին իբրև զգերի, մաթէմաթիգայն, եռանկիւնաչափութիւն, թուաբանութիւն աստղաբաշխութիւն, երկրաչափութիւն, նաւավարութիւն, բժշկականութիւն, բնախօսութիւն, և որ այլ իմաստասիրութեան մասունքն, եթէ ներեսցիք լեզուի իմում, յաւէտ կատարելագործին յԱնգղիացւոց անտի, քան կատարելագործեննն զնոսա։ Իսկ մեքենական արուեստից զնոսին յաւէտ մարթ է համարել արարիչ և Աստուած։ Սոքա՝ սկսեալ ի ծայրագոյն իմաստութենէն, մինչև ցյետին արուեստն ցխահակերութիւն ուսանին գրովք, առ որ և տպագրեալ են մեծամեծ հատորս գրեանց։

Գրեանք Յունաց, և նախնի լեզու նոցա կորուսեալ էին մինչ ցարդ, եթէ Եւրոպիա առհասարակ, և մանաւանդ Անգղիա, ո՛չ փոյթ տանէր ուսանելոյ զնոսա, և ծաղկեցուցանելոյ օր ըստ օրէն։ Պղատոն, Արիստոտէլ, և որ այլ փիլիսոփայից կեղտք են, եթէ լեզուս ունէին, պա՛րտ էր Անգղիոյ քան թէ Աթէնայ երախտապարտ լինքեանս խոստովանիլ, զի նա ծնաւ, այլ սա սնուցանէ, տածէ և կատարելագործէ։ Յունագիր Աւետարան, կամ գերապանծն այն Եօթանասնից Աստուածաշունչ ի Յունաստան հազիւ ուրեք գտանի, բայց դրավաճառք Անգղիոյ ընդ փողոցս անգամ շրջեցուցանեն։ Սոյնպէս գրեթէ Լատին, Ասորի, Քաղդէացի, Փիւնիկ, Եգիպտացի, Գերմանացի, Պարսիկ, Ջանդիկ, Հնդիկ, Սանսկրիտ, Ճեն և Գաղղիացի լեզուք և գրեանք։ Միանգամայն ասել, չի՛ք ազգ, որոց չունի Անգղիա երկլեզու բառարան և թարգմանած գրեանս և այլն։ Այլ համեմատութեամբ այսոցիկ գերապանծ կատարելութեանց նորա, բարբառ նորա է աղքատին յոյժ և պարունակէ յինքեան ո՛չ շատ քան 6000 բառս։ Ուստի և բաղդատեալ ընդ աստուածատուր լեզուիս Հայոց այնքան թերի գտանի, որպէս Սեւան կղզին բաղդատութեամբ համօրէն Հայաստանի։ Դիւրին է յոյժ ուսանիլ զայս բարբառ, թէ և արտաբերութիւն նորա, որպէս և Գաղղիականին՝ թուի օտարաց դժուարին իմն, բայց առ կատարելութեան գիտութեանն, զի՞նչ է արտաբերութիւնդ, թող մանկունք Հայոց ուսանիցին միայն փոխել ի լեզուս իւրեանց զգերապա[ն]ծ իմաստս նորա, և փոխանակ արտասանելոյ զբառդ Nation նէ՛շն, արտասանեսցեն՝ նատիօն ու չի՛ք փոյթ։

Դարձեալ՝ ըստ որում Անգղիականդ բարբառ ծնունդ է Յունական, Լատին Գաղղիական և Սաքսոն լեզուաց, յուսանիլ սորին՝ Հեշտանան նոքին, և յուսանիլ նոցին կատարելագործի սա։ Ապաքէն աղաչեմ փոքր մի երկայնամիտ լինիլ յընթերցմունս այսր գլխոյ, ի փառս մեծին Աստուծոյ, և ուշով քնել զոր ինչ միանգամ զհետ գան։

Ա. Զգիտեմ, որո՞վ աստուածահրաշ սքանչելեօք, մղեցաւ երբեմն և երբեմն Աթոռն Արարատեան հետևիլ օրինակի գրաւորական լուսաւորչացն Հայաստանի սրբոցն Սահակայ և Մեսրովբայ վարդապետի, և առաքել մանկունս իւր յԵւրոպեայ յուսումն գրոց, այլ թէ զիա՞րդ արգելաւ յամենայն ժամ, չգիտեմ և զայն։ Օրինակ իմն, յամին 1815, այնինչ Դաւիթ Աստուածատրեան ուղևորեալ դեսպանութեամբ ի Փարէս եհաս յէջմիածին, ընտրեցին զԿարապետ Աշտարակցի, զՇզնակ Կողբացի, զՄարգար Երևանցի և զիս ինքն առաքել ընդ նմա ի Գաղղիա յուսումն գրոց և այլ մեքենական արուեստից։ Արգելեցաք երեքինս մեք, և գնաց միայն Կարապետ, բայց ի դարձին իւրում յայնքան ընդ հարուստ ճանապարհորդութեանց, ունեալ էր միայն զկիրառութիւն ծխախոտի, և թերևս ի շնորհս այսր նորագիւտ մոլուն վերացոյց զնա բաղտ իւր ի սարկաւագութիւն Հայրապետին։ Այլ թողում զայս։

Բ. Ներկայական կացութիւն մանկանցն Հայաստանի, ու՞մ ո՞չ է յայտնի։ Եթէ ունի՞ն ընդունակութիւնս սուրս և բնատուր ճարպկութիւն լեզուագիտութեանց, և արուեստից, ընդունիմ, բայց որովհետև զճաշակ լեզուագիտութեան, քաղաքական կենաց և արուեստից չեն առաւել տակաւին, ընդունայն է փորձել զնոսա յայսպիսի փորձս, վճարել բազում, և շահել սակաւ։ Վասն զի դիցուք թէ կամիցի Հայաստան առաքել ներկայ հնգետասան մանկունս ի զանազան տէրութիւնս Եւրոպիոյ, նախ վասն գլխովին անտեղեկութեանն լեզուաց ամօթ առնեն զաշխարհ և զազգ մեր ողջոյն։ Երկրորդ՝ եթէ ըզկարի՛ մանկահասակս առաքեսցէ, ազատութիւն վարժարանացն Եւրոպիոյ գրեթէ ի խաղս մոլորեցուցանէ զնոսա, և զոր պարտն է ուսուցանել յերկուս և յերիս տարիս՝ ուսուցանէ ի տասն կամ ի յերկոտասան ամս։ Իսկ եթէ զչափահասս, պարտին յաւէտ քան զչորս և հինգ տարիս ճգնիլ վասն լեզուագիտութեան, և եթ, իսկ վասն արուեստից չմնայ նոցա բաւական իմն ժամանակ։ Բայց եթէ երկաբեսցին յաւէտ քան զչափն, յայնժամ հեշտութիւնք տեղեացն, որպէս լուտասն Ափրիկոյ զԱրգոնաւորդսն մոռացուցանէ նոցա զՀայրենիս իսկ իւրեանց[12]։ Թողում աստանօր նաև զանբաւ մեծութիւնս ծախուցն։

Գ. Այլ որ մեծապէս բարձրացուցանէ զփառս Հայաստանի, զանուն Ազգիս մերոյ, և դիւրացուցանէ զայս ամենայն դժուարինս, է, որպէս ինձ թուի, զուն գործել և մուծանել ի Հայաստան զչորեսին գերահռչակ լեզուս Եւրոպիոյ՝ զՅոյն, զԼատին, զԱնգղիացին, և զԳաղղիականն։ Առաջին օգուտ այսոցիկ լեզուացս է, զի որովհետև ամենայն արհեստք Եւրոպիոյ գրով ուսանին, ի գիտել անդ մանկանց մերոց զգիրս նոցա, ինքնիւրեանց ընթեռնուն և տեղեկանան զամենայն սկզբունս իւրաքանչիւր արուեստից, և մնայ նոցա միայն առ ամիս մի և երկուս տեսանել զփորձառութիւնս նոցին և կատարելանալ։

Երկրորդն է ազգի ազգի պիտանի գրոց և ազատական արուեստից թարգմանութիւնք ի մերս լեզու, յորոց ո՛չ միայն Հայաստան, այլ և Ռուսիա անգամ, որպէս ընթեռնումս, զո՛րկ է տակաւին։

Երրորդ՝ զի նախակրթեալ մանկանց մերոց առ սակաւ մի յայսոսիկ լեզուս ի Հայրենի վարժարանս իւրեանց, եթէ յուղարկեսցին յԵւրոպիա, ո՛չ միայն զի փութով կատարելագործին ի վերագոյն իմաստս, այլ պարծանք և փառք լինին Հայրենեաց իւրեանց, որ մանկունս առաքէ ո՛չ համերս, խուլս, լո՛ւռս և անլեզուս, որպէս արդ, այլ լսունս, խօսունս, տեսունս և կատարեալս, որպէս առ յապայն, և այլն, և այլն և, այլն։

Չորրորդ՝ օգուտ է փոքրութիւն ծախուցն։

Ապաքէն ըստ այսոցիկ վերոյ գրեալ հանդամանաց, աղաչեմ և կրկին երես անկեալ աղաչեմ համբուրիւ գարշապարաց Տէրութեանն Ձերոյ, մուծանել ի Հայաստան զչորեսին վերոյ գրեալ երևելի լեզուսն Եւրոպիոյ, յորոց ընդ դիւրին ստացութիւն գրեալ եմ սակաւուք յերկրորդ դպրոցական գիտելիս[13]։ Բայց այժմ խնդրեմ կարողացուցանել զտկարութիւն իմ, գնել վասն այսր խնդրոյ նախ զՅունաց և զԼատինացւոց դասառական գրեանս, և այլ պիտանի մատեանս հարցն առաջնոց, արևելեան և արևմտեան եկեղեցեաց առ հասարակ, որքան և կարևոր լիցի։

Երկրորդ՝ զպիտանագոյն գրեանս Անգղիացւոց, թէ զդասառականս և թէ զթարգմանելիս, և մանաւանդ զերևելի երևելի արուեստից մատեանս և աստուածաբանական գրեանս, զի որպէս ասացի, ամենայն գիտութեանց վեհ՝ սոքայս են։

Երրորդ՝ զդասառական և զայլ պիտանի գրեանս Գաղղիացւոց, զի ի մասին ամենայն կատարելութեանց հանապազորդեան կռիւ է ընդ մէջ Անգղիոյ, և Գաղղիոյ, բայց թէ ո՛վ յաղթէ և ո՛վ յաղթին, մեզ չի՛ք հնար գիտել այժմ։



26—739

*Չորրորդ՝ զՊարսիկ դասառական գրեանս, այլ զպիտանութենէ այլոց գրոց նոցա, բաց ի կենդանի ճարճատանաց լեզուին, չունիմ ասել ինչ, զի զի՞նչ ի Պարսիկ կուրութենէ լուսաւորութիւն. չի՛ք։*

*Հինգերորդ զտպարանս ամենայն վերոյ գրեալ լեզուաց, յորոց եթէ ունիցիք զՊարսկականն, մնան միայն երկու, այսինքն Յունացն և Լատինացւոցն, զի Լատինացին, ուպէս յայլուր ասացի, տպագրէ և զմիւս երկուսն, զԱնգղիականն ասեմ, և զԳաղղիականն։*

*Առաջին ընտրութիւն մանկանց յայսոսիկ լեզուս բաժանեսցին յերկուս դասս, վեշտասանք ի միոյ կողմանէ ուսանիցին զՅոյն, զԼատին և զԱնգղիացին, և վեշտասանք ի միւսոյ կողմանէ նոյնպէս զՅոյն, զԼատին զԳաղղիացին։*

*Յայսոսիկ երկուց դասակարգութեանց երկու երկու ի կատարելոց անտի կարգեսցին մանկավարժս, և հինգ հինգ ի թարգմանութիւնս նախասացեալ երկուց լեզուացն Գաղղիացւոց և Անգղիացւոց։ Իսկ մնացեալքն, եթէ Տէր յաջողեսցէ, առաքեսցին յԵւրոպիա ի լաւ անդր կատարելութիւն իմաստից և արուեստից, իսկ թէ ո՛չ՝ մնասցեն կամ ի ծառայութիւնս տէրութեան, կամ ի թարգմանութիւնս գրոց, և կամ յայլ գործս, բայց առ քաջալերութիւն ուսմանց նոցին, ընդ այլ կարևոր արտօնութեանց, տպագրեսցէ վարժարանն իւրովք ծախիւք զպիտանի և զազգաշահ թարգմանութիւնս նոցա, և յետ տպագրութեանն ընդմիջեսցէ զհատորս գրոցն, զկէսն ինքն վարժարանն առցէ ի հաստատութիւն իւր, և զմիւս կէս տացէ թարգմանողի կամ յօրինողի գրոցն ի պէտս նոցա, և վաճառեսցեն իւրաքանչիւրքն ըստ կամս իւրեանց։ Եւ եթէ այս այսպէս լիցի, երանի՜ և հազար երանի՜ աշխարհի մերում յայնժամ։ Բայց այժմ՝ ո՛չ։*

*Բայց ի վերայ այսր ամենայնի, գիտուք թէ ես ինքն առաքեալ էի ի Չէնչ ի Գաղղիա, կամ յԱնգղիա ուսանիլ զլեզուս Եւրոպիոյ ծախիւք Ձերովք, թողեալ զամենայն ծախս ճանապարհորդութեանց, ուսմանց և դարձին, ընդ ամս հինգ, որ առնէր անդր քան զ6000 մառչիլս, տակաւին ես պարտական լինէիք գնել բաւական գրեանս, թէ վասն առանձին ընթեր[ց]ման և թարգմանութեանս իմոյ, և թէ վասն հաստատութեան վարժարանաց։ Բայց արդ՝ որովհետև յաջողեաց ինձ տէր չծանրանալ Տէրութեան Ձերոյ վասն իմոյ առանձին կարդացի գրեանց, աղաչեմ ուրեմն վասն ազգի և պայծառութեան ճեմարանի ձերում ծախսել ի ներկայս ոչ աւելի քան զ6000 մառչիլս, համարելով, թէ այնու առաքեցիք զիս յու-*

*սումն գրոց յԱնգղիա, և այնու լուսաւորել զազգ և զաշխարհս մեր։ Թերևս ի շնորհս ամենառատ գթութեան Ձերոյ, կարացից և ես տկարս ի մարդկանէ և անպիտանս ի կենդանեաց, մատուցանել աշխարհի իմում զայն պիտանութիւն, առ որ ճգնեցի մինչ ցարդ յանհուն օտարութեան աստ իմում։*

*Ամոլացեալ տեսեալ զմրջիւնս ընդ լծովք եզանց, ո՛չ այնքան գովեն զզօրութիւն մրջնոց տեսանողք նոցին, որքան զծայրագոյն կատարելութիւնս այնմ, որ հնարեաց նոցա տանել զայն մեծ լուծ, սոյնպէս, տեսեալ Հայրենեաց իմոց զՁերին ողորմածութիւն, զի զտարագրեալ և զբարձի թողի արարեալ ոք, որպէս եսս ճանաչիմ, ի գործ ազգասիրութեան պիտանացուցանէք աստուածատուր հանճարով ձերով, ո՛չ այնքան զիս ինքն, որպէս զաստուածանման զՁեր կատարելութիւն գովեն յարգանօք, և մշտնջենաւորին յապագայս յաւիտենից և և՛ս։*

*Թոյլ տուք ինձ ուրեմն սպասել աններկբայ ապաւինութեամբ կատարածի գրութեանս, և փոխել ի Հայաստան զլեզուս Անգղիացւոյ, Յունաց, Լատինացւոց, Պարսից, ըստ տկար կարեացս իմոց, թերևս այսու և ապառնեօքն ևս, արժանի կացուցէ զիս տէրն կենաց, յանձին բերել զկենդանի օրինակ աստուածսիրութեան, ազգասիրութեան և իմաստասիրութեան Ձերոյ, և անուանիլ այդպիսի՛ Հօր և այդպիսի՛ Տեառն*

*ա՛յսպիսի որդի և ա՛յսպիսի ծառայ*

Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց

Πειρῶ τὸ μεν εἶναι φιλόπονος, τῇ δε ψυχὴν φιλοσφος

*Ջանա՛ լինել մարմնով աշխատասէր և մտօք իմաստասէր։*

## Երկրորդ գրատրական գիտելիք[14]

Σοφία μόνη ἀθάνατος παραμένει

*Իմաստությունը միայն անմահ կմնա*

*Շնորհ ունիմ պարպչախնամ բարերարութեանն Աստուծոյ, որ ո՛չ միայն ի տկարութեան և յանայցելու օտարութեան աստ իմում հրաշագործեաց զիւր աստուածահրաշն զօրութիւն, կոչելով զիս զյետինս ի մարդկանէ. զլքեալս ի հայրենեաց, և զմոռացեալս յեղբարց և յազգականաց իմոց ի շարս, կամ լա՛ւ ևս ասել ի սպասարկութիւնս համաստեղեալ գրագիտացն Հայաստան աշխարհի, այլև՛ ընտրութեամբ ամենազօր Սրբոյ Հոգւոյն, կարգելովն զՁեզ հայր համատարած, մերու դարուս մեկենաս, յարգիչ և յորդոր*

*իմաստասիրութեան, ետ ինձ յանյոյս օտարութեան այսմիկ յուսով նկրտիլ ի լոյս գիտութեան, և ուստ՛յց, մի՛ ըստ ողբերգութեանն Մովսիսի Քերթողի մեծի հնչել յաղիս յուսահատութեան, թէ՝ «Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն։ Ո՛վ ուրախասցի ընդ յառաջադիմութեան աշակերտիս» և այլն, այլ ի Ձեզ՝ ում պարտական է և նոյն ինքն իմաստասիրութիւն, ապաւինիլ, և ասել, ահա գայ ժամանակ, յորում տէրն քանքարաց եկեալ, զշահարար զիւր ծառայն հրաւիրեսցէ ի տէրունին ուրախութեան, ասելով. «Ազնիւ ծառայ բարի ես»[15]։*

*Չէ՛ յաւէտ քան զտարիս երկու և ամիսս տասն, յորմէ հետէ մտի յեպիսկոպոսական ճեմարանս Անգղիացւոց[16] և եթէ արժա՞ն ինչ իցէ յիշել, իբր զհամր ոք և անլեզու, մինչ ընդ առաջին երկու և երիս ամիսս նշանացի խօսիլ ինձ ընդ որս խօսէիսն։ Այլ փառս հոգւոյն Աստուծոյ, և շնորհ բազմերախտ դաստիարակին իմոյ Գուլիէլմոսի Հաճ Միլ, գլխաւորի ճեմարանիս, որ այնքան աշխատ եղև ի հրահանգելն զիս, մինչ ի միջոցս սակաւամեան ժամանակիս ուսոյց ինձ զԱնգղիացի, զԼատին, զՀելլեն, զԵբրայական, զՊարսիկ և զՀնդիկ բարբառսն։ Է՝ որ բովանդակ, և է՝ որ կիսոյ կիսով։ Մա՛րթ էր ինձ զամենայն բան ընդունել աստուծով, եթէ չէր իմ յանչափս մոլեալ զհետ թարգմանութեանց։*

*Թո՛յլ տուք ինձ ուրեմն, Արհի ամենապատիւ, ընդ պտուղս աշխատութեանց իմոց, Ձեզ անսխորժընկալ, կարգել աստանօր և զյարգոյ ծնող նոցին զվիճակս անհնարին դառնութեանց. թէև լեզու բանաստեղծութեամբ ո՛չ բաւէ, զորքան կրեցիսն, անվթար ծանուցանել։*

## Թարգմանութիւնք

*Ի Լատինականէ ի Հայս*

1. Hugo grotius de veritate Religionis Christianae, *այսինքըն, Հուգոնի Գրովտիոսի[17], Ճշմարտութիւն քրիստոնէութեան։ Զանհամեմատ գերազանցութենէ այսր գրոց ցուցանէ ձեզ սակաւուք տպագրեալ շրջաբերական թուղթն իմ, զորոյ ներփակեմ ի սմա զօրինակ մի։ Զայս գիրք յուսամ ի մօտոյ իսկ տպագրել։*

2. Lactantii Firmini Epitome Divinarum Institutionum *այսինքն՝ Համառօտութիւն աստուածաբանական կրթութեանց Լակտանտիոսի Փրմինեցւոյ[18]. որ եկաց ի վախճան երրորդ դարուն, առ Կոստանդիանոսիւ մեծաւ, և գրեաց բազում հատորս գրոց։ Յորոց*

*հասին ցմերս դար միայն «Աստուածաբանական կրթութիւնք» նորա. գիրք միջակադիր, որ վերընծայէ առ նոյն ինքն Կոստանդիանոս Մեծ. և առաջիկայ համառօտութիւնս առ Պէնտատոս եղբայր։ Ոճ շարադրութեան սորա այնքան վսեմ է, մինչ կոչիլ հեղինակի սորուն քրիստոնէից Կիկերոն։ Բայց առաւելութեամբ իմաստիցն՝ վեհ սմին տեսանի Հոգոն Գրովտիոս։*

3. Cornelii Nepotis Excellentium Imperatorum vitae. *այս է Կոռնէլիոսի Նիպոտայ*[19] *վարք քաջ զօրավարացն Մեղտիադեայ, Թեմիստոկղեայ, Արիստիդեայ, Պաւսանիայ, Կիմոնի, Լիւսանդրի, Աղկիբիադայ, Թրասիբիւլոսի, Կոնոնի, Դիովնի, Իփիկրատայ, Քաբրեայ, Տիմոթեայ, Դատամէսի, Եպիմինոնդայ, Պեղոպիդայ, Աքեսիլաւսայ, Եւմինեայ, Փոկիովնի, Տիմոլէօնի, Համիլքարայ, Աննիբաղայ են։ Հեղինակն եկաց առ Օգոստոս կայսերաւ, գրեաց բազում հատորս, այլ յայնց այս միայն եհաս ցմեր ժամանակ։ Ոճ դրութեան սորա, ասեն (Անգղիացի և Գաղղիացի լատինագէտք) է յաւէրժ զարմանալի։ Զսոյն՝ յընթացս դասառութեան իմում թարգմանեցի։*

*Երեքին սոքա արդէն իսկ աւարտեալ են։*

### *Յանգղիականէն ի Հայս*

1. Isaac Barrow, D. Ds. Treatise on the Pope's Supremacy. *Իսահակայ Բարովնեան աստուածաբան վարդապետի, ճառ ընդդէմ գերակայութեան պապին Հռովմայ։ Գիրք մեծադիր։ Պարունակութիւնք ի նմա են. 1. Ներածութիւն։ 2. Ենթադրութիւն, յոր կայանայ պապականն իշխանութիւն։ 3. Թէ՝ սուրբն Պետրոս ունէ՞ր զգերակայութիւն ի վերայ առաքելակցացն։ 4. Թէ՝ գերակայութիւն սրբոյն Պետրոսի անձնական է՞ր, թէ յաջորդական։ 5. Թէ՝ սուրբն Պետրոս եկա՞ց արդեօք եպիսկոպոս ի Հռովմ, թէ ո՛չ։ 6. Թէ՝ սուրբն Պետրոս տեսեա՞ց եպիսկոպոս Հռովմայ ի տեղափոխելն և յետ մահուն։ 7. Թէ՝ եպիսկոպոսն Հռովմայ որո՞վ օրինօք ունի ընդհանուր իշխանութիւն յեկեղեցի աստուծոյ։ 8. Թէ՝ եպիսկոպոսք Հռովմայ և անընդմիջաբար ի սրբոյն Պետրոսէ հետէ կալա՞ն զմիահեծան զայս իշխանութիւն, թէ ո՛չ։ 9. Թէ՝ իշխանութիւնս անխոնարհելի և անփոփոխելի՞ իցէ, թէ ո՛չ։ Զայս ամենայն խնդիրս այնքան քաջ հերքէ վկայութեամբ Լատին և Յոյն սրբոց հարանց, մինչ ո՛չ միայն Հռովմ, այլ և եթէ աշխարհ ևս համախմբիցի, ո՛չ կարէ դիմաբանել։ Զայս գիրք, յուսալով ի շնորհս տեառն, յատկապէս թարգմանեցի ի շահել զ՛ ի մէնջ հերձեալ անդամս մեր։*

Palestine, այսինքն Պաղեստին, բանաստեղծութիւն ի վերայ Երուսաղէմի. արարեալ Հօր Ռիչինալդայ Հեբբեան եպիսկոպոսի և թարգմանեալ չափաբերութեամբ ի Հայս։ Ըստ այսու ակնարկութեամբ, Sie juxta posita recens filii veterem Patris revocavit memoriam. «Այսպէս մերձ հօրն կալով արձանի յաղթանակ որդւոյն, զնախնին զհօր վերակոչէ զյիշատակ»։

Common Prayer Booke, այս է, Գիրք հասարակաց աղօթից եկեղեցւոյն անգղիացւոց։ Զսա նախ՝ թարգմանեաց ի Հայս Յովհաննէս Ավգալեան, և ի ժողովոյ ճեմարանիս յանձնեցաւ ինձ քննել, տեսեալ զի ոճ թարգմանութեան նորա օտար էր ի հարազատ ոճոյ մերմէ, և ի տեղիս տեղիս աղաւաղեալ զմիտս բնագրին, վկայեցի թէ չէ՛ լաւ։— Գուլիէլմոս Հաճ Միլ վարդապետ մեր խնդրեաց յինէն թարգմանել վերստին։ Յետ վճարմանն, զերկոսին թարգմանութիւնս ևս առաքեաց առ Պօղոս եպիսկոպոսն մեր յամին 1826 քննել և տեսանել, թէ ո՞րն իցէ լաւ։ Սա թէպէտև զիմն նախապատիւ վարկաւ թարգմանութիւն, այլ ի կողմանէ բղխման Հոգւոյն Սրբոյ և ի յՈրդւոյ, և այլոց խնդրոց, զորոց լիագոյնս գրեալ եմք ի կարգս կրօնիցն Անգղիացւոց, (ի համարն 3) առ երկիւղին իւրոյ. փոքր ի կաղաց ի վկայութեան իւր։ Ուստի կասկածեալ սոցա, թէ գուցէ ներհակ իցէ եկեղեցւոյ մերում, արգելեցին զառժամայն տպագրութիւն նորուն, և մնան հրամանք ձերոյ։ Բայց թուի լաւագոյն ևս, տեսանել սրբազնութեան ձերոյ զգիրքն, և ապա վճռել զարժանն։

Ի Յունաց ի Հայս

1. Ἡ Γραμματικὴ τῆς Ἑλληνίδος Քերականութիւն հելլենաբանութեան, հանդերձ յաւելմամբ գեղեցիկ և վճռական բանից փիլիսոփայից, և նոցին թարգմանութեանց, ի պէտս հելլենասէր համբակաց, են, են։

Ի Պարսից ի Հայս

1. گلستان կամ Վարդաստան Սադեայ, հատընտիր առականի ի խրատ մանկանց, յաւելմամբ նորանոր ծանօթութեանց ի տեղիս տեղիս։ Թարգմանեալ յընթացս պարսիկ դասատութեանս իմոյ։— Բայց տակաւին ևս կիսատ[21]։

### Ի Հայոց յԱնգղիականն

1. «Էր ընդ եղբարսն», այն է՝ Հանգիստ սրբոյն Յովհաննու աւետարանչին։—Յոյն բնագիրն սորա կորուսեալ գոլով, մեծ տարածայնութիւն ծագեալ տեսանի առ արդի գրագէտս Եւրոպացւոց վասն ննջման սրբոյն վասնորոյ կարի ի դէպ համարեցայ թարգմանել զայն ի լեզու Անգղիական և հաւաքեցի ի հաւատարմութիւն նորա լի ծանօթութիւնս ի գրոց սուրբ հարանցն մերոց, զորս նոյնպէս յեղի յԱնգղիականն։ Այլ ցա՛ւ մեծ է ինձ պակասութիւն հայ գրոց, ապա թէ ո՛չ, միանգամայն հաւաքեալ էի զամենայն զվկայութիւնս սրբոց յայս վախճման։ Իմ ներկայական հաւաքածոյք են ի սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ և այլս, բայց և այն՝ յայնց գրոց, զորս մարթացայ ի ձեռս բերել։ Զայս թարգմանութիւն իմ հանդերձ բնագրովն առաքեցաւ յԱնգղիա իբրև նշխար նորագիւտ, բայց յոյս ունիմ յեղուլ զնոյն ի մօտոյ նաև ի Լատին լեզու։

2. Եղիշայ պատմագիր, այս է Նահատակութիւն սրբոցն Վարդանանց, լի բազում և ճոխ ծանօթութեամբք։ Արդէն իսկ անցեալ է իմ ցկէսն։ Բայց գլ. Գ պրակ Ե ի պատճէն գրոցն Հայոց առ Թէոդոս Փոքր, ուր գրի վասն Տրդատայ արքայի մերոյ, թէ՝ «Սոյնպէս և զհաւատն որ ի Քրիստոս ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն ի Հռովմէ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ են»[22]։ Թուին ինձ յայտնի աղաւաղանք, որոց չիք նշանախեց ինչ յԱգաթանգեղոս, ի Մովսէս Խորենացի, յԵզնիկ Կողբացի, և ի Ղազար Փարպեցի, ևս և ի գիրս Լատին և Յոյն հեղինակաց։ Ապաքէն պարտ ինձ վարկանիմ գրել ո՛չ միայն զայս տեղի յԵղիշէ, այլ և զանուանեալ «Թուղթն դաշանց»[23], զի որով ստիպքն ստապոյն ևս երևի միւսն. և ի երկոքին ևս հնարք են Լատինացի ապականչաց։ Զգիտեմ, զիա՞րդ տպագրողք Եղիշայի ի Մոսկով[24], անքննին թողին զայս նիւթ։ Կամ յո՞ր հիման վերայ հրամայեաց Սրբազնակատար Աղէքսանդր կաթողիկոս զ«Գիրք դաշանց» ի Կոստանդինուպօլիս տպել ի վնաս անկախ Հայրապետութեանն իւրոյ[25]։ Որպէս և իցէ—ևս ջնջեցից զերկոսինն ևս։

### Շարադրածոյ գրեանք

1. Պատմութիւն Հնդկաստանի[26] ըստ աւանդելոց մատենագրաց այլ և այլ ազգաց, սկսեալ յարարչութենէ աշխարհի ցմերս

դար։ Յորում աւանդին նախ զդից և ուրուականաց և նախնի թագաւորութեանցն Հնդկաց. և և՛ս, զծէսից, զկրօնից և որ ի կարգին։ Երկրորդ՝ զյարձակմանէ Պարսից և Մակեդովնացւոց, և Արաբացւոց։ Երրորդ՝ զՄուղալ կամ Պատան թագաւորութեանց։ Հուսկ ապա զյարձակմանէն Եւրոպացւոց յաշխարհս այս և ընդ բռամբ գրաւելոյ զմիահեծան զայս տէրութիւն։ Բաժանեալ յերիս մեծադիր հատորս թէև ներկայ ո՛չ որպէս կամիմս, աւարտեցաւ։ Այս գիրք գլխովին անծանօթ աշխարհի մերում։

2. Կալկաթա. գիրք յորում ստորագրին վաճառականութիւն, բազմամարդութիւն, կառավարութիւն, ձևք երևելի երևելի շինուածոց, գետոց, բերոց և այլն։

3. Պսակ. այս է նորափորձ բանաստեղծութիւն իմ ի վերայ ուրախ հարսանեաց. առարկայ յիրաւի, որ քննեալ ընդ մէջ վիճակի գրողին և կարդալեաց՝ յաւէտ զարմանս մատուցանէ։

4. Մարան. այսինքն հատուածական ոտանաւորք իմ յօրինեալք ի վերայ զանազան նիւթոյ ի ժամանակս, և հաւաքեալք ի մի։

5. Փորձանարան Մեսրովբայ, կամ գիրք պատահարացն իմոց ի կեանս[27]։

Յեբրայականէն թէպէտ առանձինն գիրք ո՛չ կարացի թարգմանել մինչ ցարդ, վասն անբաջավարժութեանս ի նմա, սակայն, ուրախ եմ գրել, զի Զառաջնափորձ թարգմանութեան յամենայն վերոյ գրեալ լեզուաց, երևեցուցի ուրեք ուրեք ի ծանօթաբանութեան իմում, ի գիրս Աստուածանմանութեան երանելւոյն Պետրոսի Բերթումեցւոյ, զոր և բազում վշտօք տպագրեցի ի նորակերտ տպարանի եպիսկոպոսական ճեմարանիս, արդեամբք բարեպաշտօն մերազանցն ի Հնդիկս։

Այլ որ նոր իմն է և յաւէտ պիտանի ներկայական վիճակի աշխարհի մերում, է արհեստն Lithography անուանեալ։ Այս է՝ եղանակ «Քարագրութեան», կամ քիմիական տպագրութեան։ Զայս արուեստ որպէս ուսայ ես ի Տաւնզէնտայ Անգղիացւոյ վերակացուէ բազմաբարբառ տպագրատան եպիսկոպոսական ճեմարանիս, և զորոյ զփորձն իսկ փորձեցի ի Հանգիստն սրբոյն Յովհաննու, ի գիր առնում այսպէս։

Նախ՝ կազմեն թանաք քիմիական, ի մոմոյ մեղուաց, ի ճարպոյ, ի սապոնէ, և ի մրոյ։ Ապա կազմեն զթուղթ, և օծանեն զնա, խառնուրդիւ իւիք, շաղախելով ի ձեթոյ կտաւատի, ի ռետնոյ բեվեկնոյ, ի ճարպոյ, և ի մոմոյ։ Այն թանաքաւ գրեն ի վերայ այսպիսի թղթոց, և թողուն մինչև լաւ չորասցի գրածն։ Ապա բերեն

զքարն լիթոգրաֆեայ (այս է դորշատեսակ իմն, կամ սպիտակ ամպագոյն քար, զոր բերեն ի Գերմանիոյ, զտեսակն որոյ մարթ է գտանել նաև աշխարհի մերում), լուանան ջրով և սապոնով։ Ապա եդեալ զգրեալ թուղթն ի վերայ, դնեն ի մամուլ անդր, և սեղմեն յուժգինս մինչև կպչիլ թղթոյն ի քար անդր։ Ապա հանեալ զքարն, ցնցըղկեն ի վերայ թղթոյն ժանտաջուր (կամ քափուռ) և նովաւ ներգործեն տառքն, ի քար անդր, և ինքնին լուծանի թուղթն։ Կրկին դնեն զքարն, ի մամուլ անդր, և հարկանեն քիմիական մելանաւ մինչև սև[ան]այ բոլոր քարն։ Ապա առեալ սպունգ ջրաթաց, անխտիր ջնջեն սրբեն զերես քարին, բայց որ զարմանալին է այլ տեղեաց թանաքն ողջոյն ելանէ, բայց տառից վերայ եղեալն անապական մնայ։ Յետ այսորիկ դնեն հասարակ թուղթ թրջեալ ի վերայ քարին, և սեղմեն, ուստի ելանէ անարատ օրինակ ձեռագիր թղթոց։ Այս արհեստ եթէ դէպ լիցի ողջունել ի Հայաստան, բառնայ, որպէս ինձ թուի, նախ առաջին զտրտունջ գրագրաց աթոռոյն, զի ի միում աւուր, ոչ ինչ ընդհատ ի ձեռագրաց ի լոյս ածէ յաւէտ քան զ1000, կամ 1500 օրինակս Նկաւ ճասաւացեն։ Զայս արհեստ ուսայ ես ձրիւք 500 սիքայ ռուփեայ, ետու և 60 սիքայ ռուփիս գնել ինձ զգիրքն նորա։ Եւ ի մտքի եդեալ եմ, ո՛չ թարգմանել զայս գիրք, և ո՛չ ուսուցանել զայս արուեստ, եթէ ոչ մարդասիրեսջիք Դուք առատագոյն ևս ձրիւք սպասկել զիմն գիտ։ Նաև զընտիր եղանակ հասարակ տպագրութեանցն։

Մի միայն փափագ, որպէս միշտ մինչ առ ոտս տէրութեան Ձերոյ էիս բողոքէի, և այժմ իսկ երկրորդեմ, է միայն ուսանել ինձ զբարբառս Մոսկովացւոց և խոստանամ, զի եթէ միայն վեց ամիս, առանց այլ և այլ հարկաց, ներեսջիք, տկարութեան իմում յայն լեզու կրթիլ, ի մէջ նոցին իսկ Մոսկովացւոց, յուսամ ընդ բաւականին ուսանիլ։ Քանզի միայն Մոսկովացին ալբափետիքն՝ զորս ուսեալն էի ի հարևա[ն]ցի ի սրբոյ Յովհաննու վարդապետէ Ղրիմեցւոյ ի Գուլիստան[28], և զբազումս ի նոցանէ մինչ ցարդ մոռացեալ զօրութեամբ եւրոպական դպրութեանցս, ի գալ այսր Կայսերական հրովարտակին շնորհակալութեան առ Ձեզ և առ ձերսն, համարեա թէ զկէսն կարդացի և հասկացայ, ըստ որում մեծ մասն բառիցն էր Լատին և Յոյն։

Զիարդ և իցէ յանձնարարեալ զվերջնոյս այսր հոգ ի խնամս բարերար հայրութեան Ձերոց, մնամ բազում ակնածութեամբ

խոնարհ ծառայ Ձեր
Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց[29]

## 5. <ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԻՆ>

*Կալկաթայից—Երևան*

Աստվածասէր և ազգասէր ճասարակության Հայոց
փրկյալ քաղաքին Երևանա
Սրբակրօն քաճանայից
բարեծնունդ իշխանաց և ճամայն բարեպաշտօն ժողովրդոց
Ողջիապարտ սիրօ ճվէր

*Աչքներդ հազար լույս, որ մեր քաղցր Աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, Քրիստոնի տերության ներքո ընկավ։ Փառք բարերարին Աստուծո, որ այսուհետև ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտիր անվանիք, ձեր Ազգասիրության, իմաստասիրության լուրն, և Արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտիր տարածվին։*

*Իմ լա՛վ քաղաքացիք, էնպես երջանիկ բախտի որ դուք եք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագավորության ժամանակումն էլ չէին պատահել, զերա՛ թեպետև թագավորությունն յուրյանցն էր, սակայն բարեքարոսություն և զուլումն պակաս չէր։ Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղոթս առնեք որ Աստված ամենաողորմած կայսերն Նիկողայոսի Աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուկ, և ամեն թշնամյաց վերա հաղթո՛ղ։ Ապա՝ աղաչեցե՛ք, որ նույն Աստվածն մեր ազգին սեր, միաբանություն տա, երկար կյանք և բարի հաջողություն, որ կարենան ճանաչել թե ի՞նչ է լավն՝ և հետևիլ նմին։*

*Մնաց որ, ես ծառաս ձեր, թիվն 1823-ումն, Սրբազնակատար Կաթուղիկոսի հրամանավն Հաղպատիցն ելա, շատ չարչարանքով հասի Հնդստուն, մին տարի պարապ դես ու դեն ընկա, երկրորդ տարումն Կալկաթու Հայոց վարժարանումն վարպետություն արի, հետո սուրբ Երուսաղեմի նվիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանոթացա ինգլիզի եպիսկոպոսին, որո անունն էր Ռեջինալդ Հեբըր․ մին խի՛ստ լավ և ողորմած կարդավոր, որ յուր խարճովն տվեց ինձ յուրյանց մեծ վարժատունն, և ես ներկա Աստուծո ողորմությամբն սովորում եմ լատինի, ինգլիզի, հունաց և պարսից լեզուն, և այլ զանազան արհեստանի։ Վերջապես երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունն, սիրտս ուրախությամբ վառվեց, ֆռանգ ազգաց լուսավորությունն տեսնելով և մեր ազգի անլուսավորությունն, նախանձ մեծ ընկավ հոգիս, և թեպետ ես ո՛չ շատ*

փողատեր վարդապետ եմ, ո՛չ վաճառական, ո՛չ կարգ ունիմ, ո՛չ աստիճան, սակայն Աստված՝ որ միշտ տկարաց ձեռքովն մեծ մեծ բաներս կարող կատարել, վստահացնումա ինձ իմ կարյաց գյորա իմ Ազգիս, ի՛մ քաղաքիս և ի՛մ ծնող Աշխարհիս պիտանի լինիմ ձեր շնորհքովն։ Բայց այս իմ պիտանությունս ուրիշ կերպով չէ լինելեց, եթե ոչ վարժատուն հաստատեք և մեր երեխայից միտքն լուսավորեք։

Ես մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսես արքեպիսկոպոսին թէ՝ որովհետև Զորագեղի մոտի Անապատն քաղաքի մեջ տեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի և Զորագեղի միջումն, հեշտ կը լինի մանկանց համար համեն տեղաց հավաքվիլ անդ վասն կարդալու, և որովհետև բերդին, բաղարին ու գետին մոտա, շատ հարմար եմ համարում, որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատվի մեր Ազգի լուսավորության համար, և Նրևանա առաջնորդի աթոռն փոխվի տանվի Կողեռի մոտի Սուրբ Զորավոր եկեղեցին։ Նաև գրել եմ, որ եթե սրբազանն հաճենա շնորհել մեզ էն տեղն, ուրեմն գրի ինձ՝ որ ես տեղիցս զանազան ազգի կարդալու գրքեր և տպարան որքան իմ աղքատ զորություն կը խոստանա՝ բերեմ և գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդվոց և իմ եղբարց լուսավորությանն[1]։

Արդ, իմ ազնի՛վ քաղաքացիք, խնդրեմ, որ գիրս ձեզ հասնելեն ի բաց շնորհ առնեք Շհարցի՛քդ, Կոդեցի՛քդ (կոնդեցիքդ), Կարբեցի՛քդ և Զորագեղցի՛քդ հավաքվիլ նույն Անապատումն, հառաջ սուրբ քահանայիցն խնդրեալ, որ աղոթք առնեն առ Աստված վասն բարի հաջողության գործույն. ապա իմ էս աղքատ զորությունս կարդացե՛ք, խորհեցե՛ք, եթե ձեզ ընդունելի լինի իմ առաջադրությունս, ուրեմն միաբանությամբ երկու ազգի գրեցե՛ք, մինն սրբազնակատար Կաթուղիկոսին, և մյուսն սրբազան Ներսես Արքեպիսկոպոսին Վրաստանու։ Եվ խնդրեցե՛ք, որ էդ տեղն Ազգին ընծա շնորհեն ձեռագրով, մոհրով և ղալալայով։ Եվ երբ Աստված կատարի ձեր խնդիրքն ի բարին, շուտ ինձ մին գիր գրեցե՛ք. և ???[2] Կաթուղիկոսի և Ներսես առաջնորդի թղթերի օրինակք նորանում փակեցեք, ուղարկեցե՛ք Թավրիզու Ինգլիզի դեսպան Մեկդոնալդ հազարապետի ձեռքն[3], նա շուտով Կալկաթա կը հասցնի։ Երբ ես ձեր գիրն ստանեմ, կը գամ Աստուծով, և էնպես կը գամ որ ուրախանաք։

Իմ ազնի՛վ քաղաքացիք. գիտեմ, որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերության տակ մնալն գիտության հարգն ոչ կարե ներկա լավապես ցուցանել ձեզ, բայց հուսամ, որ շուտով կարողանեք ճանաչել։

Գիտությունն՝ էն ազնիվ թագուհին ա, որ հախա՝ աղքատ հագուստով բախտավորաց դռանն կը դեգերի, ամմա՝ թագավորաց թագին պարծանք ու փառքա։ Տերություն չկա, որ էս անտեր գիտությամբս կանգնած և պահվում չը լինի. Ռուսաց էդ մեծ կայսերությունն, թե հառաջ քան զսուրբն Պետրոս[4] յուրյանց իմաստասեր թագավորն ի՞նչ էր, և ներկա ի՞նչա, հայտ է ձեզ։ Մին երեխա եթե գրել կարդալ գիտենա, էն Արվեստանին, որ բազում չարչարանքով վեց կամ յոթն տարումնա սովորում, մին երկու տարումն կարև հեշտ ու հանգիստ սովորիլ. էն սովորած արվեստն հնարքով հեշտացնիլ, և նոր նոր արվեստանի ևս հնարել։

Իրավի՛ արվեստից անունն հիշելով այնքան եմ ամաչում, որ կարող չեմ ասելս, զերա՛, մեր խեղճ աշխարհքն ի՞նչ մին լավ արվեստ ունի. ո՛չինչ։ Էն արվեստանին, որ չորս հազար տարով հառաջ աշխարհումն կային, ներկա էլ էտոնք են մեր Հայաստանու արվեստանին. և ինչպես կոպիտ սովրում են, էնպես էլ կոպիտ սովորցնելով գնում են։ Արվեստ պայծառացնիլ չեմ գիտում, նոր արվեստ գտնիլ չեն կարում. եթէ լսում են, որ մին տեղ աղջիկ գրել կարդալա սովորում, զարմանում են. երբ ինգլիզ կամ փռանգ են տեսնում, կարծում են Աստված է հերկնից իջել ոտներն ամպաթաթախ։ Եվ ինչ՞ է պատճառն, աղաչեմ, եթե ոչ գիտությունից զուրկ մնալն։ Կարծեմ ինձ վերա կը ծիծաղիք, եթե ասեմ, որ ինգլիզի ու փռանգի կնանիք և դստերքն վեց և յոթն լեզվի կարդալ գրիլ գիտեն, մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում, ասղարարություն, ձև, կար, վաճառականություն, լավ սազ ածել, պար գալ և այլն։ Բայց հուսամ, երբ որ ազնվության հոգին կը նորոգվի ձեր միջումն, և դա՛ռն գերության քաշությունն կը մոռանաք, էն վախտըն կիմանաք, թե ի՞նչ է իմ լացս։ Ախ իմ լա՛վ քաղաքացիք, ա՛խ, հոգիս հարա՛յա կանչում. հին խմորն թողէք, նոր Ազգի լուսավորության և պայծառության հետևեցեք։

Ամոթ չի՞ ձեր իշխանազուն որդվոց համար դատարկ քուչեքումն ման գալ, կամ մինակ անտաշ դարբնություն, խառատություն, կատեպանություն (այգեպանություն) և թթի ղուշ քշել սովորի՞լ։ Ամոթ չի՞ ձեր խաթուն դստերաց համար մինակ տուն սրբիլ սովորիլ, և մին գնձոտ մինթանա (շրջազգեստ) ձևելու համար ղատաքր կռնատակին դռնե դուռն ընկնի՞լ։ Ո՞ր է ձեր վեհ հոգին, ու՞ր է ձեր ազնիվ փառքն, ու՞ր է ձեր աշխարհի ծանոթած անունն, կորյա՞ն արդյոք. ո՛չ։ Աստուծո հատուկ ողորմությունն բացվել է ձեզ վերա, իմ ա՛զնիվ քաղաքացիք, մի՛ ասեր

թե ջանք անենք, փող ժողովենք լա՛վ ապրինք. մոխի՛ր է մեր փողըն, փո՛ւչ է մեր կյանքն, սնոտի՛ է մեր հույսն, եթե չենք ջանալեց որ մեր Ազգի երեխայքիցն էն լուսավորության դուռն բանալ, որ վաղն և մյուս օրն կարողանան մարդի միջում մարդ երևիլ։

Պա՛րտ է ուրեմն Աստուծո ողորմությունն ոտնատակ չտալ, նորա ձեզ տված ազատությունն անմահ փրկություն համարել, ջանալ որ ձեր խանզատա որդիքն կարողանան իմաստությամբ թո՛ւր բռնել ընդդեմ թշնամյաց Աստուծո և բարերար կայսեր ձերո, և ձեր աղջկերքն՝ գրիչ, նոքա, քաջություն առնեն, և սոքա նորանց քաջությունն գրեն. նոքա դառնան քաջ զորք և զորականք, և սոքա՝ քաջ իմաստուն և լավ տանտիկնայք. և թե կարենա մեր աշխարհն մին անգամ յուր որդիք և դստերքն էսպես կատարելությամբ ծաղկած տեսնել, չգիտեմ, ո՞ր մին ֆռանգի աշխարհիցն պակաս կմնա թե լուսավորությամբ, թե արվեստով, թե ազնվությամբ, և թե երջանկությամբ, և ոչ թե մինիցն։

Ահա էսա իմ ցանկությունս իմ քաղցր Աշխարհիս համար. եթե որ հաճելի կը լինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կդնենք, և Աստված կշինի. և ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար՝ և մեռնիլ ձեզ համար։ Ապա թե ոչ՝ էլ ուրիշ չեմ ու չուի պատճառ չունեք, և եթե ղանց կառնեք գլխից բռադ անելու համար, առաջի ահեղ ատենին Քրիստոսի պարտականն դուք եք, և դուք պիտի լինեք։ Ողջ լերուք[5]։

Մնամ

ազնվության ձերո խոնարհ ծառա

Մեսրովբ Դավթյան Թաղիադյանց

ի Կալկաթա, նոյեմբերի 1, 1828.
Ինգլիզի եպիսկոպոսի ճեմարանում

## 6. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

*Երևանից—էջմիածին*

Աստուածընտիր Վեհապետ,
Ողորմածափայլ Տէր իմ

*Աղաչեմ հրամայել՝ զի ի վաղիւ հասցին այսր գրաստքն՝ վասն երկուց և եթ բեռանց, զի եկեալ սպասաւորեցից Ձեզ ի Նոր աւուր Նոր տարւոյ զնորն բանալով զուսումնարան ի համօրէն նորոգութիւն*[1]*։*

*Փառս անձին մեծ համարեալ լինիլ Աստուածընտիր Վեհապետութեան Ձերոյ*

*միշտ խ<ոնարհ> ծառայ՝*

Մ. Դ. Թաղիադեանց

*ՅԵրևան, ի Թաղն Կարբի,*
*1831, դեկտ. 29*

# 1 8 3 2

## 7. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

*Վաղարշապատից—Թիֆլիս*

**Բարձր բարեծնունդ Խաչատուր բեկ Շահնազարեանց,**
**Իմ ողորմած տէր**

*Ոչ երբէք ակնունէի, եթէ սէր այնքան սերտ, որպիսի մերս ճանաչիւր ընդ ամենայն Երևան, կամ սիրտ այնքան համակիր և համախնամ, այսքան փոյթ լքանել վիւրն սիրելի, որպէս Դուք, կամ Ձերն զձերն Մեսրովպ։ Լքիք, այո, բայց որպէս ես հաւատամ, ո՛չ մինչ ի սպառ։ Վասնորոյ և ես, կամ ո՛չ բնաւ գանգատիմ, կամ եթէ գանգատեցից ես՝ Ձեզ միայնոյ և սիրելոյ գանգատիմ, ասացէք, արժա՞ն էր արդեօք յետ բազում անգամ բանիւ և գրով յուսադրելոյդ Ձեզ ինձ, առանց տեսանելոյ կամ գրոյ չմեկնիլ, և մեկնիլ այնպէս։ Կամ դիցուք թէ ելեր, յանարգի իմն տեղ դնելով զիս և զսէր իմ, դուք վասն ձեր սիրոյն զինչ՞ ասէք։ Եթէ գրեցից, զեղումն սրտիս համառօտիլ չկարէ։ Վասնորոյ աղաչեմ հասկանալ Ձեզ սոյին, զի ի մեծի տրտմութեան թողիք զիս յանկարծ չուանելովդ Ձերով, և եթէ հաճեսցի բարձր բարեծնունդութիւն Ձեր, կարէ փութով փարատել յինէն զնոյն սիրանիշ գրով իւրով։*

*Վասն ամենայն աղճատանաց ծերացեալ տղային այնորիկ[2], գրեմ Ձեզ ըստ ամենայնի ամենայն կերպիւ միամիտ լինիլ, վասնզի ստութիւն ինքնին անհիմն գոլով՝ կործանի ինքն ըստ ինքեան, և խոստովանի ճշմարտութիւն յամենայն լեզուս թէ կանուխ թէ անագան։ Ես այնպէս լռեցուցի զնա, պատգամաւորելով առ նա ի ձեռն բարեկամի ուրուք, մինչ այլևս չկարել բանալ նորա զբերան իւր[3].....*

*Իսկ վասն միւս սանդարամետական ստութեանց ապերախտ[ին] որպէս թէ ես ինքն ասացեալ իցեմ թէ զամենայն անառակութիւնս վարուց նոցա, Դուք կամ Հոգևոր քոյր իմ պատմեալ իցէք ինձ, առաջի Աստուծոյ ամենակալի երդնում, զի սուտ է, եթէ ոչ միայն այնպիսւոյ, այլ և իշխանի կենաց իմոց ի կախաղանի անգամ չունէի ասել ինչ զձէնջ, եթէ Ձէնջ իսկ լուալ էի. ուր մնայ զի ի ձէնջ, ո՛չ ինչ այսպիսի լուայ երբէք զնոցանէ։*

*Ապաքէն աղաչեմ վասն այսպիսի սնոտեաց, զսէրն մի՛ շիջուցանել, ապա թէ ոչ՝ իբրև մեռեալ համարեցայց ես վասն Ձեր[4]։*

*Համարձակիմ սովաւ ակնունիլ, զի ընթերցայց ի Ձէնջ մոտուստ զպատասխանի գրութեանս այսորիկ; մանաւանդ և ըղմիամտութիւն վասն երկոքին գրոցդ, զոր Ձեզ յանձն արարի մի յանուն կուսակալին, և միւս՝ յանուն Բանգրատիաֆ ղենարալին։ Խնդրեմ որն ի նոցանէ և կարելի իցէ, փութով յանձնել հաճեսջիք և զգիարդն գրեսջիք մեզ[5]։ Վասն զի ի մօտոյ յառաջադրեալ եմ Աստուծով և շնորհիւ նորին աստուածընտիր վեհապետութեան գործ մի երևելի յառաջ հանել, և մնամ միայն հասանելոյ գրութեանս և առ դոսա և պատասխանւոյն։*

*Ես յերեկի զեղբայր իմ զՅովհաննէս առաքեալ յԵրևան, ստուգեցի զողջունէ համեստակենցաղ տիկնւոյ Ձերում, և ամենայն մերայնոցն անդ. ողջ են և առողջ, միամի՛տ լերուք։*

*Որպես երանելին .....[6] արժանացուցէ զիս տեսանել զՁեզ վերադարձ այսր յաւուր տօնի Ձերոյ[7], զի որպես խոստացայք ինձ, ի մասին խմբեսցուք աստ և կատարեսցուք ուրախութիւն այնպիսի, ընդ որ երեքտակք զարմանայցեն։ Այ՞ Քեզ տեսնեմ, որ ինձ տխուր թողացեր։*

*Պարոն Յովհաննես հաւատարմին Ձերոյ յինէն կողմանէ ողջոյն տուր և ասա՛ Աղէքսանդր որդին իւր ներկայ շատ լաւ է և ես լաւ ես պահպանեցից զնա, միամիտ լինի։ Ձեռագիրն փոքր միջոցումս բաւականին լաւացուցեալ է. յետ քանի օրէն նորա ես մին գիր գրել կտամ, որ տեսնի և ուրախանայ։*

*Ո՛ղջ լեր ի պարծանս իմ, իմ միա՛կ սէր, միա՛կ մտերիմ և միա՛կ հոգի։ Իսկ ես եմ և մնամ իսկական վերապատուութեամբ և խորին ջերմեռանդութեամբ։*

*Բարձր Բարեծննդութիւն Ձերոյ*
*Խոնարհ ծառայ*
Մ. Դ. Թաղիադեանց *վարժապետ արուեստից և այլն։*

*Ի Վաղարշապատ,*
*Օգոստոսի 12. 12/32*

## 8. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

*Վաղարշապատից—Թիֆլիս*

Միակ մտերիմ ու Ողորմած տէր

*Երկոքին գրութիւնք Ձեր ի պատասխանի երիցուն գրութեանցս, մին թուեալ ի 13 սեպտեմբերի, և միւս ի 20 նմին ամսոյ, հասին առ իս հետզհետէ, բերելով ինձ զյաւէտ փափագելին սրտի և հոգւոյ իմոյ զաւետիս ողջութեան և յաջողութեան ողջեկոյդ ի տէր[1] Առ որ բերկրապատար խնդութեամբ պաղատանս մատուցանեմ խնամողին տիեզերաց Աստուծոյ պահել անվնաս յամենայն ձախորդութեանց, և ամբողջ անարատ հաստատանել առ մեզ ի վերստին տեսութիւն և ի սէրն, զոր ցարդ ունէաքն և ունիցիմք առ միմեանս։*

*Ձերկոսին գրութիւնս յանձնեալս յինէն Ձեզ առ բարձր գերազանց նոցին մակագիր. եթէ մինչ ցարդ չիցէք հաստատեալ, խնդրեմ այլ ևս չյանձնել որոց հարկն է, վասն զի նոր իմն արտօնութիւն և ազգաշահ յաջողութիւն ստիպէ զիս փոխել զդոսա։ Վասնորոյ խնդրեմ յետս դարձուցանել զդոսա առ իս, որքան փոյթ և հնար իցէ[2]։*

*Ուրախ եմ գրել, զի համեստակենցաղ տիկին Ձեր, հանդերձ ամենայն գերդաստանօք իւրովք վայելէ ի կատարեալ առողջութիւն անձին, ամենայն երջանկութեամբ։*

*Իսկ մերայնոցն, որպէս յառաջագոյն ես գրեցի չկարելով տանիլ օդոյ տեղւոյն, և չգտանելով առողջութիւն հիւանդութեան իւրեանց, որպէս նաև տնային ասից և լսից, ժամանակ առ ժամանակ զզուեցին զիմ լսելիս վասն ելանելոյ անտուստ։ Շատ ջանացի մնալ նոցա անդր ցգալուստ ձեր, այլ չեղև հնար, ուստի և ելին գնացին ի տուն անդր իւրեանց։ Զայսու ժամանակաւ և ես հիւանդացեալ հիւանդութիւն մեծ, հրամանաւ Սրբազնագոյն Օծութեան ելի յօդափոխութիւն մինչև յարքայն լերանց ի Մասիս, ուր զճանապարհայն ստիպեցի հոգևորական մայրին[3] գնալ առ վայր իւր, և նա կամաւ յանձն էառ։ Շրջագայեցայ կիսամսեան ժամանակաւ և ըստ բաւականին առողջացեալ եկի ի սուրբ էջմիածին[4]։ Ուրանոր գտեալ զականաւոր Հայրն Սալլանթեան, թիկնակից եղէ, և լինեմ նմա ի յօրինուածս ազգաշահ մատենից։ Եւ այժմ ո՛չ իմիք այնքան կարօտիմ, քան եթէ ժամանակի և առողջութեան։ Ես,*

*հանդերձ գերդաստանաւ իմով, ի տօնի ձերում առի զբաժակ կենաց ի կեանս աններկայ բարեկամիդ մերոյ, և ցորչափ մինչ ցարդ ուրախանամք, անմոռաց ունիմք զյիշատակս Ձեր ի խնդութեան մերում։ Հաճեսջիք ուրեմն և Դուք յառաջիկայ աւուր շաբաթու զնոյն առնել մեզ, ընդ որում տօն է յիշատակի երախտեաց սրբոյն Մեսրովպայ*[5]*, որով ի հեռուստ որպէս ի մօտոյ խօսակից լինիմք իրերաց, և հետևաբար այնորիկ, որ մնայ իսկական վերապատուութեամբ և անկեղծ մտերմութեամբ*

*Բարձր Բարեծննդութեան Ձերոյ*
*խանդակաթ, կաթոգին և խոնարհ ծառայ*
Մ. Դ. Թաղիադեանց

*Ի Վաղարշապատ*
*1832, հոկտ. 3*

## 9. ՍՐԲԱԶԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի Մ. Դ. Թաղիադեանց

ամենախոնարհ խնդիր

*Ողորմած տեա՛րք իմ*

*Հովանաւորեալս տամբ իմով ընդ հայրենի խնամակալութեամբ ձերով, ենթադրիմ ազգի ազգի ծանրութեանց ի մասին կառավարութեան գերդաստանի և հիւրոցս միանգամայն։ Վասնորոյ թէթև եւ զիմ ծանրութիւն կամելով և զՁեր յինէն ժամանակ առ ժամանակ զլխացաւութիւն, խնդրեմ ամենախոնարհաբար, զի թէրև նոր գաղթելոց, տաջիք ինձ զայն առանձնաշնորհութիւն, որով պընդիւ մարթասցուք ուր եմքս՝ այս է զի շնորհեսջիք ինձ վտեղ կամ արտ երեք, կամ չորս օրաւար, սերմանել զսերմն ի կերակուր ինձ և անասնոցս միանգամայն։ Որով քան զառաւելն պարտաւորեալ զիս ինքն հայրախնամ գթութեանց ձերոց՝ առնէք, որպէս միշտ, ջերմեռանդագոյն ի սպաս իմոց պաշտամանց։*

*Ողորմած Տեարք իմ,*
*ամենախոնարհ ծառայ Ձեր*
Մ. Դ. Թաղիադեանց

*Դեկտեմբ. 1, 1832*
*ի Վաղարշապատ*

## 10. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԼԻԲՅԱՆԻՆ

*Վաղարշապատից—Նոր-Նախիջևան*

Ողորմած տէր իմ

*Մեսրովպ Դաւթեան Թաղիադեանց, վկայեալ վարժապետ արուեստից և աստուածաբանութեան, փոքր ի շատէ ուսեալ զՀայ, ըզլատին, զՅոյն, զՊարսիկ, զՀնդիկ, զՍանսկրիտ և զՏաճիկ դպրութիւնս, ես և զԱնգղիականն, դրաքննիչ եպիսկոպոսական ճեմարանին Կալկաթայ, անդամ Ասիական ընկերութեան գիտութեանց, և այլն. ի լրոյ արժանահաւատից ոմանց՝ ծանուցեալ բարեկաւ համբաւոյ ազգասիրութեան և իմաստասիրութեան նորին բարեծննդութեան աղնուազնեայ պարոն Յարութիւնի Պօղոսեան[1], խնդրէ յարգանօք բազմօք զհամապատասխանութիւն և զգրաւորական մտերմութիւն նորին։ Վստահանայ սովին յայտնել ես, զի եթէ կամք իցեն մերազանց տեղւոյդ, և պէտս ունիցին վարժապետի և գրեսցեն առ ինքն, խոստանայ գալ այդր բաւական պիտանի գրովք, և ծառայել ազգային լուսաւորութեան։*

*ի Վաղարշապատ*
*1832, Դեկտ. 20*

## 11. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

*Վաղարշապատից—Թիֆլիս*

Ձերդ բարեծննդութիւն,
ողորմած տէ՛ր իմ

*Թերևս ամօթ համարիցիք ինձ ընդերկար լռութիւն պատասխանւոյ գրութեան Ձերոյ, տալով զնոյն ծուլութեան իմոյ։ Հաւատայի արդարև յայդ կարծիս անկանիլ Ձեզ, և արդարացուցանէի զՁեզ՝ ի նոյն, եթէ միայն գիտակամբ նշմարեալ էիք ի հեռուստ զիմն բնաւորութիւն և ո՛չ ի մօտուստ մտօք և զգայութեամբ փորձեալ և քննեալ։ Եթէ տեսցէ ոք ի կզզի ինչ սառուցեալն ովկիանոսի*

հուր վառեալ, և չկարիցէ հպիլ առ այն ի պատճառս շրջապատ սառուցացն, միթէ՞ համարիցի զհուրն անկիզանուտ գոլ։ Ո՛չ ապա և Ձերդ բարեծննդութիւն յիս տեսեալ ամենայնի սթափութիւն և ծուլութենէն միշտ փախուստ, մի՛ համարիջիք, աղաչեմ, ծուլութեան գործ երկարութիւն լռութեանս, այլ չարախտավատ հիւանդութեան, յոր անկեալ դեգերիմ ահա ամիս և կէս ժամանակի[1]։ Աւա՜ղ սանդարամետական օդոյ տեղւոյս, որ շուայտուն ածայրացն Բաքոսի տայ կեանս, և յորդւոցն Միներվայ բառնայ զնոյն։ Այժմ ողջ եմ միայն շնչել զօդ։

Անցեալ յերեկոյի, քնահատեալ գլխովին, որոճացի սակաւիկ մի զգլուխթիւնս Ձեր առ իս (և ի վերջնումն գտեալ զգանգատ ձեր զուսումնասիրաց տեղւոյդ կարի զարմացայ ի չհասկանալ նոցա զհատուած)[2] քերթուածոյ Եփրեմի Սեծեան[3], որ ունի օրինակ զայս։

Իսկ պարսկայնոյն կեշտ հնգդիմեան,
Ի Դմբաւընդ որջացեալ,
Ընդ Հազարու յերկեղ մահու՝
Բազմապատիկ սասանեալ»[4],

Թովմաս Ստանլի ի խօսիլ իւրում զկրօնից Պարսից՝ ասէ. „Adeo exiguum et mutilum est, ut haud facile... disponi possil“.

«Այնքան դժուարին և ցրիւ է, մինչ ո՛չ հեշտեաւ կարգադրի կարել»։ Արդարև այնպէս, զի եթէ «զկեշտդ հնգդիմեան» առցուք ի զանազան աղանդս նախնի Պարսից թիւդ «հինգ», ոչ հաւասարի ընդ իրին, վասն զի որպէս այժմ մահմետականութիւն ի նոսա, նոյնպէս և ի հնումն կռապաշտութիւն յամենայն դար ի նորանոր հերձիս ճեղքեալ բազմացաւ։

Ոչ հայի թիւդ «հինգ» և ի հաշիւ աստուծոց Պարսից, զի միայն կռապաշտութիւն ի նոսա պարունակէր բիւրս բնական և գերբնական էակաց։ Ապաքէն մնայ ըստ տկար վարկման իմոյ լուսել ըղմիտս հեղինակին, կամ բանալ զխրթնութիւն գրուածոց նորա՝ այսպէս։

1. Մահաբադ ումն սերեալ յՆւիլայ, ըստ վկայելոյ Մոհսանի Ֆանեայ, լեալ առաջին թագաւոր և օրէնսդիր Իրանայ, բաժանեաց զժողովուրդ Պարսից ի չորս արձակ ցեղապետութիւնս, այսինքն ի կրօնականս, ի զինուորականս, ի վաճառականս և ի ծառայականս, առեալ ի Հնդկաց որպէս և զանունն իսկ։ Սա երևեցոյց և գրքոյկ իմն, զոր կեղծէր տուեալ ինքեան յԱստուծոյ, յորում և ուսուցանէր Պարսից զմի միայն պաշտօն գերաբուն էակին, իբրև ներհեղուն հոգւոյ աշխարհի։

Այս քո առաջին դէմ կեշտիդ։

2. Յետ նորա եկաց Թագաւոր և օրէնսդիր Պարսից Կէյումարս[5], այսինքն՝ Կիւրոս Մար, որ փոփոխելով ինչ ինչ ի կարգացն Մահաբատայ, և զՔաղդէականն կամ զԲաբելոնացին մուծանելով ի նոսա զկեշտ, փոխեաց զկրօնն ի տարրապաշտութիւն՝ հրոյ, ջրոյ, հողոյ և օդոյ մեհեան կանգնելով, և այլն։

3. Հուսհանգ[6], պահելով զՄահաբադեանն և զԿիւրոսին, յաւել և զպաշտօն երկնային զօրութեանց, կամ լաւ ես ասել կամեցեալ, զաւել ի պարսկականն և զՍաբէականն աղանդ, զի Սաբա, զօրութիւն լսի, և իմանի սոլաւ զօրութիւնք երկնից, այն է արև, լուսին, աստեղք և այլն։ Այս աղանդ յերկուս հերձաւ, ի սուրւոյս կաս յարևայինս, և ի Սակնիկաս կամ զօրութենականս, յորոց զերկոսին ես տեսի անձամբ ի Հնդիկս, այլ երկարել չկամիմ։

4. Ապա Զարդուստ, կամ Զրադաշտ մոգ[7], որ օրինաց մոգութեան եղև վարդապետ, զկրկին ինքնաբուն էակս բնութեամբ հակառակս միմեանց եդ, զմին արարիչ բարւոյ, և զմիւսն՝ չարի։ Իսկ միջին՝ զարեգակն։ Սա զոգիս կամ հրեշտակս պահապան աւուրց, ամսոց և ամաց կարգեաց, զփառս կրակին յաւէտացոյց և այլն։ Սորա վարդապետութիւն եղև մի միայն կրօն Պարսից, և տևեաց ընդ երկար, զորմէ տես ի մերն Եղիշայ և յԵզնիկ յԵղծն աղանդոց։

5. Բիւրասպ[8], որ ըստ Ամմիանոսի Մարկեղիանոսի[9], գոլով «Vir prudentissi mus», այր ամենախոհեմ», գնաց ի Հնդիկս և ի Բրահմանաց ուսեալ զիմաստասիրութիւն և զամենայն զծէս կռապաշտութեանցն, եմոյծ ի Պարսկաստան։ Զմանէ արհամարհանօք իմն գրէ և մերս Քերթողահայր.... «Վասն անբանութեան առնես աշխատ, և անբարի առաջնոյ նորա բարերարութեան և դիւաց նմա սպասաւորութեան, և ո՛չ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և զսուտն. և ուսոցն համբուրումն, և անդուստ վիշապացն ծնունդ... Իսկ ապա և Հրոդանայ ումեմն զնա կապել սարեօք պղնձօք, և ի լեառն տանել, որ կոչի Դմբաւընդ»[10]։

Արդ Դմբաւընդ համարիմ լինիլ նախնի անուն բարձրաբերձ լերանցն Պարսկաստանի, որ անկանի ընդ մէջ Քազիռնի և Շիրազայ, անուանեալ Քօթալի, Փերիղան, յորոյ հարաւային ստորոտս անկանի նախնի քաղաքն Շապուր, լի անհամար քարայրիւք, որք բերեն յինքեանս կոփածոյ և քանդակս չաստուծոց, քաջաց և ուրուականացն Պարսից, իսկ ի հիւսիսային դագաթան նորա հռչակեալ քաղաքն Թախտը Ջմշիդ, որ նոյնպէս լի է հին քանդակօք չաստուածոց և այլն[11]։ Յորս որջացեալ վերոդրեալ հնդիմեանդ կրօն «ընդ Հագարու», այսինքն կամ օսմանցւոց, և կամ ընդ հաւատոյն

Մահմետի հազարածնի, «յերկեղ մահու սասանեցաւ» յերեսաց մեծ զօրավարին Ռուսաց։

Այլ արդ՝ թոյլ տուր ինձ, աղաչեմ, անցանել սակաւու և զոճոյ գրութեան Եփրեմեան Քերթածոյդ, զի կարի իմն խորդ երևի ինձ, և կաղ միանգամայն յերկոսին հետս իւր։ Թէպէտև չիք առ իս օրինակ դորուն մանրամասնաբար քննել զորքանութիւն դորա, սակայն և այնպէս երբեմն ընթերցեալ զդոյն ընդ Ձեզ, յիշեմ ուրոյն ըզթերութիւնսն։ Գիտ քերթողութեան բնաւ չիք ի դմա, և ո՛չ իսկ վսեմութիւն ոճոյ։ Ոչ ոք կարէ հասկանալ, թէ յի՞նչ միտս խոսի դա յառաջին պարբերութեան իւրում, զի ըստ ամենայնի մթին է և խրթին. բառք շարեալք ընդ միմեանս առանց իրիք, կամ կարի աղօտ նշանակութեամբ։ Ոչ ոք կարէ հասկանալ, թէ ո՞ր է յատուկ հսկայ կամ դիւցազն դորա, զի խառնէ զՊասկևիչ, զԲանկրատև և զկայսրն ի մի զանգուած։ Չիք նկարագրութիւն ինչ, չիք եռանդ բանաստեղծութեան, և ո՛չ քաղցրութիւն լեզուի, այլ ընդ հակառակն, կոշտութիւն և կոպտութիւն յամենայն ուրեք ի տալ դորա զկանացի գորովանս սրտին Բանկրատևի՝ առանց քաջութեան, տալ Պասկևչի զքաջութիւն առանց գթութեան։ «Սալիմ փաշայ ընդ Սալէհի ի կառս քո լծեցան»,—ասէ, որով զքաղցր և զքաղաքավարեալ Զօրավար դարուս, որում Արդարութիւն միայն սպառազինեաց և ո՛չ սահմանացն ընդարձակութիւն, հաւասարեցուցանէ ընդ նախնի խուժադուժ արիւնակեր բռնակալաց, և այլն։ Ոչինչ նիւթ այնքան գերապանծ յօրինէր զքերդածն, եթէ ո՛չ ներկայութիւն երկուց փաշայից, և փոխ առ փոխ ասութիւնք նոցա, և դարձ քաղցրութեան Զօրավարին առ նոսա[12]։

Ի վախճան բանիս, «ա՛յ քեզ տեսնեմ», մինչ ե՞րբ սպասեցից պատասխանւոյ թղթոյն՝ զորս յանձնեցի Ձեզ։ Ա՜հ, յո՜յս, յո՜յս։ Թուի թէ վայելուչ ընկերակցութիւն լուսաւորեալ մերազանց տեղւոյդ մոռացուցանէ զմեզ և բառնայ ի Ձէնջ զյիշատակ նախնի սիրոյ։ Եթէ առաջիկայ պատեհութեամբ ո՛չ ընկալայց ի Ձէնջ ըզմիամտութիւն ինչ, հաւատա՛, զի ես ինքն յիմում առաջին պատեհութեամբ ներկայացայց որոց հարկն իցէ։

Մնամ միշտ անկեղծութեամբ՝
ողորմած Տէր իմ,
խոնարհ ծառայ Ձեր

**Մ. Դ. Թաղիադեանց**

Վաղարշապատ
[1832], Դեկտեմբ. 22

*Ցուրտ երկրիս այնքան սաստիկ է յայսմ ձմեռան, մինչ հինաւուրց մարդկան տեղւոյս խոստովանիլ երբեք ո՛չ լեալ այսպիսւոյ ի կեանս իւրեանց։ Թէպէտև ձիւն թղաւ թանձր՝ պատէ զերեսս համատարած երկրի մերոյ. այլ տակաւին ցրտահարութիւն ամենայն բերոց լինի, եթէ տևեսցէ սաստկութիւն նորա դէթ շաբաթու ժամանակաւ։ Այգեգործք տեղւոյս, տեսեալ թէ յանցեալ ամի ցրտահար եղեն այգիք թաղունք ընդ հողով, յայսմ ամի խոպառ բարձի թողի արարին, յուսալով քաղցրութեան օդոյն բարիս առնել ինքեանց. այլ տխրիմ զի ընդհակառակն, և մնացորդք անցելոյն, խորշակահար չորանան զարդիս։ Իսկ ի մասնաւորի մեծ վնաս տայ կենաց իմոց անբարեխառնութիւն օդոյս, վասն զի մերձ տասն ամ կացեալ ի Հնդիկս յ85 կամ 90 աստիճանի ջերմութեան, այժմ ո՛չ դիմանամ նոյնչափ աստիճանի ցրտութեան։ Ո՞հ թէ որքան կարօտիմ զարնան։*

*Գրեթէ իսպառ զուրկ եմ յընկերակցութենէ մարդկան, զորս Դիոգինէս ճրագաւ փնտրէր ի լոյս միջօրէացեալն Արեգական։ Խուժական բրտութիւն եղնաւարաց տեղւոյս ոչ ինչ մխիթարել կարէ զիս, ուստի ի կարծեցեալ ապահովութեան կենաց իմոց՝ թուիմ լինիլ ի բանտի։ Ապաքէն երանիմ զՁեզ, զի կայք ի լուսաւոր ազգամիջի, և երանէի ես, եթէ տամբ հանդերձ ելեալ բնակէիք այդր, ոչ փողոտելով զսիրտ Ձեր, կէս մի առ Ձեզ պահելով, և կէս մի յԵրևան։*

*Տուն Ձեր, որպէս և մերն յԵրևան, ըստ ասելոյ ինձ այցելուաց իմոց, կան ի բարւոք ողջութեան։ Նոցա և Ձեզ խնդրեմ կեանս յԱստուծոյ՝ պահել ողջանարատ կենօք ցվերստին տեսութիւն։*

*Գրութիւնք Ձեր ո՛չ բերեն ինչ լուր ի զբօսանս մեր. վասնորոյ խնդրեմ ուրախ առնել զմեզ այսուհետև պիտանի լրովք, մանաւանդ ի խօսիլ ձերում ընդ երևելիս տեղւոյդ, առարկայել յիմ վերայ, և տեսանել եթէ որպէ՞ս խօսին զինէն այդր, և գրով ծանուցանել ինձ։*

*13 Աղէր դուխտէրը ավիմղատէհ ու նէքմահսար ու խուբրույ փէյտայ միշատ դար մինիր Թիֆլիզ, ու փուլը փսխար դաշտաբաշատ, հարֆը աղբրայի ման բզան բփէտէրշ, յեա բշըխսի բի հօքմը ու դաշտա բաշատ։ Աղէր ղաբըլշուն միայէնդ հարֆանի շումայ, բման բնըվիս, ման խօդմ միայէմ ունչահ վէ արուսի միքունամ, դըրշէ, բխահիշի խուդայ ումիտվարի հաստիմ, քի դար ին*

*բհար, պաս միրուվիմ Հինդ, յեա ջայի դիգար։ էյ դօսթը ավիզթարի ման, քեար ուն աստ քի խուդա բէսազատ,—ագար չէթովր նվիշտամ, ունթովր, միշատ, բխուդա ղասամ, քի զովղուսաֆայի քի համդու միքունամ, հուրանի բհեշտրա համ քրդան նամիթուանանդ։*

*Բիթմաթի շումա ղուլամի քուշութը**։

*Մ. Դ. Թ.* داود مسروب

---

* *Եթե Թիֆլիսում մի աղնվատոհմ, վայելչատես և գեղեցկադեմ աղջիկ գտնվի և շատ փող ունենա, ինձ համար բարեխոսիր՝ նրա հոր առաջ, կամ այն անձնավորության առաջ. որը իրավունքներ ունի նրա վրա, և եթե Ձեր խոսքը նրանք ընդունեն, ինձ գրիր՝ անձամբ կը գամ այդտեղ և կամուսնանամ և, եթե աստված կամենա, հուսով եմ այս գարնան վերադառնալ Հնդկաստան կամ այլուր։*

*Ով իմ ամենասիրելի բարեկամ «գործն այն գործն է, որ աստված է հաջողացնում», այլապես եթե [ուզենանք] այնպես լինի, ինչպես ես վերը գրեցի, երդվում եմ աստծո անունով, որ այն ճաշակը, որ ես ունեմ, դրախտի հուրիներն անգամ չեն կարող դրան գոհացում տալ։*

*Ձեր նվաստագույն բարեկամ՝*

*Մ. Դ. Թ. Դավթի որդի* Մեսրոպ

# 1 8 3 3

## 12 ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՀՈԴՈՍԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենախոնարհաբար խնդիր

*Սովաւ ամենախոնարհաբար խնդրեմ զի յառաջ քան վերահաստատութիւն պաշտամանցս այսր, շնորհ արասջիք աւարտել զիմ անցեալ ամի զհաշիւ*[1]*։*

*Ձերում սրբազնութեան ամենախոնարհ ծառայ*
Մ. Թաղիադեանց

*Ի Սուրբ Էջմիածին*
*1833, Յունիսի 1*

## 13. ՄԿՐՏԻՉ ՔԱՐՏԱՇՅԱՆԻՆ

*Իսպահանից—էջմիածին*

Սիրելի՛ Մկրտիչ Քարտաշեան[1],
Ճշմարիտ Պիթիաս Իո ճշմարիտ Դամոնեայ[2]

*Գրութիւն սիրելութեան քո ի 25 Յունւարի այսր ամի ժամանեալ առ իս՝ փոխանակ զուրախարարն մատուցանելոյ ինձ ընդ նորութեան տարւոյն և զնորոգութիւն սրտից և վարուց ոմանց, առ մատոյց զկարի արտասուելին նոցա և զախտակցութեան արժանին. զյամառոյթ ի չարիս. մարդ արարեալ յընկերութիւն, մարթ է, եթէ նախանձաւոր լիցի. ճշմարիտ և անկեղծ բարեկամութեան այլոց յանձին բերել զշքնաղագոյն նոցայն օրինակ, կամ զանցանել զնոքօք, բայց թշնամանալ բարեկամութեան, թշնամանալ սիրոյ և թշնամանալ մարդկային ընկերութեան ի խախտել և խանգարել մինչ իսպառ է մոլութիւն ամենաչար. ո՛չ մարդկային, այլ դիւական. միտք մարդկան ի խնամս չարին հաստատեալ գոլով, հնար է եթէ մեղանչիցէ մարդկօրէն՝ զբարութիւն այլոց չարութեան իմն երևակայացուցանելով ինքեան. բայց և այնպէս այն ինչ յետ ընդ երկար փորձոյ և ստոյգ հաւաստեաց բարութեան դեռ ևս յամառեսցի. ի նմին անզեղջ հոգւոյ սանդարամետացն ընկեր և գործակից յամենայն ժամ. բայց այդ թողեալ զխուժան չարասիրացդ ի բաց, զամ աւասիկ ի գլխաւորն նոցունց Ստեփաննոս վարդապետ, ըստ ամենայն յատկութեանց բնաւորութեան «կաշի վերաձայնեալ» ըստ գրեցելումդ. և զարմանամ, զի դուք զնա ի շարս մարդկան բանաւորաց համարելով, գրէք ի համար թշնամութեան զներքին և զանդստին բնաւորութեան չարամէտ հոգւոյ նորա, վասն զի եթէ իցէ ի նմա հոգի մարդկեղէն ըստ նմանութեան պատկերի Աստուծոյ՝ ուրանամ։ Եւ եթէ կամք իցեն ձեզ հարցանել, թէ ապա զի՞նչ է ի նմա, որ հոգևորէ զնորա անհոգի մարմին, պատասխա-*

նեմ. լեզէօն ամբարտաւանութեան, սնափառութեան, ամբարհաւանութեան, կոյր ապերախտութեան, չարաչար երդմնազանցութեան, ընչաքաղց ագահութեան, և որոց ի նոյա են սակի, զորս և հաւաստել ստուգագոյն փաստիւք ո՛չ դանդաղեցայց։

Ա. Զկարգ ընդունելով զհեզոյն և զխոնարհին Քրիստոսի և պիտակաբար զանձն վարդապետաց անուանելով, ո՛չ միայն ըզհեզութեան և զխոնարհութեան չբերէ յանձին զօրինակ, այլ և ամենաթշուառ ամբարտաւանութեամբ իւրով նախատիպ այլոց հանդիսանայ ի նմին։ Զմարդկայնովք անցեալ բնութեամբ, ըզմարդիկ ամենայն և զվեհս անգամ քան զինքն առ ոչինչ գրէ. հաւասարից ակն ո՛չ ածէ, և զանհաւասարսն ընդ ստրկունս եդեալ գոռոզութեամբ եղջիւր ամբառնայ՝ դից իմն ծնունդ անմահ քան մահացու զանձն համարելով։ Հա՛րց զայսր կարծեաց հանուր սրբազումար միաբանութեան Աթոռոյս, և զրեա՛ թէ ամենեքին զնոյն վկայեն զամբարտաւան կամաց նորա։

Բ. Սնափառութիւն նորա վառելով, բորբոքելով միշտ զեռանդն երիտասարդական հասակին, մղէ զնա կոյր զկուրայն յամենայն դէպս միջամուխ լինել ո՛ և իցէ միջոցիւք զանձն ի պատիւ վերացուցանել. ապացոյց ձեզ առ այս լիցի չնչին կաղամար և գրիչ նորա հանեալ յայսմ ամառան յերեսս նորին վեհափառութեան. իբր զի եթէ զձեռնադրեսցի եպիսկոպոս ինքն, չունիցի բնաւ գիր գրել. ինքնահալած օձասումն ի սինհոդոսական անդամակցութենէ, և այլն[3]։

Գ. Անձնահաճութիւն նորա թելադրէ զնա, որպէս զիարդ և իցեն հանդամանք անձին և բնաւորութեան իւրոյ, այլոց ամենևին չըհաւանիլ։ Հա՛րց զնա, եթէ գտանիցի՞ արդեօք ի խաղախորդանոցի կաշի իբրև զքեզ. պատասխանեսցէ՝ ո՛չ բնաւ երբէք։ Հա՛րց զնա, եթէ գտանիցի՞ մարդ հաւասարապատիւ քեզ. ասասցէ՝ ո՛չ բնավ երբէք։ Ինքն գոլով գլխովին մուր, ոչ տայ համարձակութիւն այլոց հպիլ ի քղանցս հանդերձի իւրոյ, զի մի՛, ասէ, մրջոտեսցես։ Եւ եթէ ոք յանդէտս հպեսցէ, նա բիւրիցս բիւր անգամ թօթափէ և թարթափէ զնոսա, որպէս թէ ի փոշւոյ անտի ձեռին հպելոյ։

Դ. Զկոյր ապերախտութիւն նորա ընդդէմ երախտեաց բարերարացն իւրոց յայտնի ցուցանեն ի խորոց սրտից ելեալ հառաչանք նոցին իսկ երախտաւորացն։ Զի՞նչ բարիս ո՛չ արար նմա Արհին Ներսէս, որ իբրև Քրիստոս յաւազակութենէ, ի գողութենէ և ի չարաչար երդմնազանցութենէ բուժել կամելով զնա, ընկալաւ յիւր շնորհ, աւելի քան զտասն ամ պահեաց ընդ իւրովք խնամովք[4]. պսակեաց ականակուռ խաչիւ և վիճակացն կացոյց յաջորդ. բայց

զի՞նչ դորա ապերախտութիւն արիտուր հատոյց նորայն շնորհաց։ Բայց զայն, զի եկեալ այսր սանդարամետական հոգւով բանս զրպարտութեան խօսեցաւ զնմանէ յականջս մեծի և զիւրքու. պոռնիկ քարոզեաց զնա ընդ կնոջ քահանայի ուրուք և արհամարհ ամենեցուն հանդիսացոյց զիւրն բարերար։ Զի՞նչ պակաս հին շնորհք, զոր եցոյց ապերախտիդ ծայրագոյն քահանայապետ տէրս մեր՝ յանարգութենէ յառաջ կոչելով զնա կացոյց անդամ սրբազան սինհոդոսի և դիւանի խրում վերակացու. այլ դա փոխանակ շնորհաց հղացեալ զմոլութիւն՝ ծնաւ զչարիս. ինքնահրաժար օձտեալ ի սուրբ ընկերաց, հեղինակեցաւ ապստամբութեան և ըզգլուխ հոգևորականութեան մերոյ անպատուեաց չարախորհուրդ գժտութեամբ ևս, որ բարերարեալ զմա չեգիտ զորիտուր զչարիս։

Ե. Ընչաքաղց ագահութիւն դորա և ստրուկ բնաւորութիւն մոռացոյց զմա զկարգ վարդապետութեան զկարծեցեալ զայն և զերևութական միայն հրաժարումն յաշխարհէ և ի վայելչութեանց նորա, և մղեաց ի գողութիւն կայից հոգևոր ծնողի իւրոյ Փիլիպպոս արքեպիսկոպոսի, հանգուցելոյն ի լոյս անմատոյց յամին 1822։ Սրբազումար միաբանութեան Սրբոյ Էջմիածնի այն ինչ ակն ունէին մեծի հարստութեանց հանգուցելոյն և վրէպ գտանէին ի նոցանէ. յետ ընդ երկար զարմացման և ապշութեան, կարծիս անկեալ զդմանէ, հանին բազմեցուցին զամենայն սրբութիւնս հաւատոյս մերոյ, յորս անխիղճ և դիւական հոգւով երդուեաց դա և ուրացաւ զգողութիւն. ապա յուդայօրէն պատարագեալ զկենսաբեր և զահաւոր խորհուրդ մարմնոյ և արեան կենարարին, դարձեալ երդուեաց չարաչար չգիտել զկայից տեառն իւրոյ. բայց Աստուած, արդարադատն ամենեցուն, ոչ եթող լրբին աղարտել զփառս իւր. վասնորոյ զարթոյց զհոգի վրէժխնդրութեան իւրոյ ի վերայ Ջաֆար խանին, որպէս երբեմն ի վերայ Կիւրոսի, զի զանսաստութիւն դորա առ ինքն և առ պատուիրանս իւր սուրբ սանձեսցէ մարմնաւոր արհաւրօք։

Հանդէս հաստատեալ Ջաֆարայ առաջին բազմութեան հոգևորականաց և մարմնաւորականաց մերոց հանէ ի կախաղան ըզվարդապետն վասն գողութեան, զնա, որոյ պարտ էր այսն այր լինիլ, և ոչն՝ ոչ, և հրամայէ դահճաց հարկանել զնա։ Լուր հասանէ մօրն, որում աւանդ տուեալ էր զգողօնն, թէ ահա զառնդ անմեղ Ստեփաննոս վարդապետ, որդեակն քո քաղցրագին, անկեալ ի ձեռս անօրինաց, տանջի չարաչար։ Իսկ նա գիտելով թէ սովորութիւն էր Պարսից և զամենայն խորշս տանն որոնել, որոց ի խնդիրն լինէին, և տարակուսեալ, թէ ուր գտանիցէ զանխաբ տեղի պահեստի նորա,

ի վայր թողու զիւր վարտիք և զհարիւր թուման կարեալ ի նմին ագանի վերատին, կարծելով թէ ուր և որոնել հասանիցի, տակաւին զիւր վարտիք կանացի ամաչեն բանալ։ Գայ առ որդին կողկողագին և, տեսեալ զնա ի տանջանս մարմնոյ (ըստ որում գիտէր, թէ հոգի չունի, որպէս ասացի), սուգ առնու ի վերայ նորա և ասէ. «Ա՜յ իմ սրբազան որդեակ, զիա՞րդ այդպէս մատնեցար։ Ա՜յ իմ էջմիածնայ չորս սիւն որդեակ (որպէս թէ մին չէ բաւական), զիա՞րդ այդպէս շարժեցար։ Ա՜յ իմ կաթուղիկոսացու որդեակ, զիա՞րդ այդպէս անպատուեցար»։ Այլ կսկիծ կաթուղիկոսացու որդւոյն ստիպէ զնա ակամայ կամօք խոստովանիլ զգողութիւն, դահիճք խսկոյն ըմբըռնեն զմայրն և մերկացուցեալ զնա յամօթանաց անտի նորա հանեն զամօթալի զգողօնն հազար* թումնոց, և այնպէս յոտնակոխ առնել վարդապետին զպատիւն Աստուծոյ, Ջաֆար խան փառաւոր հանդիսացոյց[5]։

Ապաքէն կաթոգին Պիթիաս իմ, զայս ամենայն ուշով կշռեալ, տե՛ս, թէ յորմէ զրպարտիմք. նոյն և պարանոցաթաղ կործանեալ է տիղմս մեղաց, ո՛չ մարդկայնոց, այլ սանդարամետականաց։ Այլ որպէս ես առնեմ, նոյնպէս է ձեզ յորդորեմ, սիրելի, չհատուցանել զչար փոխանակ չարի, այլ յաւէտ աղաչեմ զԱստուած վասն նորա, զի հանցէ ի նմանէ զսիրտ ապստամբութեան և տնկեսցէ փոխանակ զսիրտ հեզութեան, խոնարհութեան և կատարեալ զղջման ի փառս և ի պատիւ անուան իւրոյ։

Անձկալիդ Պիթիասայ, միշտ կաթոգին Դիմոնէս՝

М. Դ. Թաղիադեանց

## 14. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

*Իսպահանից—էջմիածին*

Աստուածարեալ եպիսկոպոսապետի ամենայն
հայոց ողորմածագոյն և տեառն և բարերարի

Երկնաչու սուրբ գարշապարացն համբոյր որդիապատ
ջերմեռանդութեամբ

*Համար 340 կոնդակ սրբազնասրբութեան Ձերոյ, հասեալ այսր զկնի երից ամսոց հասանելոյն իմ այսր,[1] խնդութիւն շատ արար*

* *Ձեռագրում նշված է հազար։*

կաթողնեալ հոգւոյս. վասն աստուածանման գթութեամբ զիջանելոյ Տէրութեան Ձերոյ յիմ խնդիր, և գրելոյ զյանձնարարութիւն վասն իմ առ լիակատար դեսպան ամենողորմ կայսերութեան Ռուսաց ի Դավրէժ։ Այլ ցաւիմ յոյժ, զի ի սակս աններկայութեան իմում ի Դավրիժոյ բարձր սրբազան Նիկողայոս արքեպիսկոպոս[2] ըստ բարձրագոյն հրամանի տէրութեան Ձերոյ, յետս դարձուցեալ է զայն թուղթ։ Ցաւիմ, վասնզի կարօտիմ յոյժ պաշտպանութեան ամենողորմ տէրութեան, մինչ ցարդ Հայք անտէրունջ անարգ շրջէին յամենայն ուրեք. բայց այժմ, ըստ որում ողորմութեամբ բարձրելոյն բաղդաւորեցաք ունիլ մեզ թագաւոր զկայսրն, պարտ է մեզ յամենայն ուրեք պաշտպանութեան նորա ապաստան լինիլ. Ես ի մասին այսորիկ գրեան արարի յԵրևանայ ի Տփղիզ, առ նոյն ինքն բարձր գերազանց կուսակալն Վրաստանի և առ գերապատիւ Յակոբ Շահան Ջրպետեան[3] և յանձնեցի եղբօր իմոյ Յովհաննու տանիլ անձամբ ի Տփղիզ, բայց անկրթութիւն նորա յիրս զգուշալիս՝ բազմօք անյոյս կացուցանէ զիս։ Յոյր սակս աղերս արկեալ առաջին քահանայապետական գթութեան Ձերոյ, ամենախոնարհաբար խնդրեմ, գրել նորին բարձր գերազանցութեան յաղագս բանիս այսորիկ, զի որովհետև խօսեցեալ և պատրաստեալ է յառաջագոյն, չունի նեղութիւն շատ պատճառել սրբազանսրբութեան Ձերոյ այլ բաւական է միմիայն յայտարարութիւն Ձեր ի պսակել զիմն յոյս։ Այս պաշտպանութիւն տէրութեան, որում այսչափ կաթողնի եմ ի խնդիր, թէ ո՛րքան օգուտ բերէ անձին իմոյ և տէրութեանն ևս կարէք լաւապէս իմանալ ի հաւատարիմ զաւակէն Ձերմէ ի Մկրտչէ Քարտաշեանց, և առնել ողորմածաբար։

Գրէ սրբազնասրբութիւն Ձեր. «Հետևելով Ձերոյդ երխտասարդական կրից, չկարացիք իմանալ զգին շնորհաց և աշխատանաց Ձերոց. միանգամայն և զարժողութիւն մերոց հայրական առ Ձեզ գթոց»։—Գիտէ Աստուած, գիտացէք և դուք, ողորմածագո՛յն տէր, զի իմ ջերմեռանդութիւն առ սուրբ Աթոռն ամենայն Հայոց և առ տէրութիւն Ձեր անխարդախ էր, և է, և եղիցի միշտ։ Բայց այնզի զանազան հանգամանք տեղւոյդ և անձին իմոյ չկարացին համեմատիլ իրերաց, ըստ արժանեաց անուան և փառաց Ձերոց և իմ, ի վեր երևեցուցանել զարդիւնս աշխատանաց իմոց, լաւ համարեցայ ինձ զայս տարագիր օտարութիւն, ցուցանել, թէ արդեօք կարիցե՞մ վերստին առնել, որպէս արարեալս էի, թէ ո՛չ։ Ողորմածագոյն տէր իմ, ո՛ և վատ, ո՛ և ամենայն բամբասանաց արժանի, իսկ Դուք գլուխ եկեղեցւոյ և Ազգի մի ողջոյն, ունի՞ք արդեօք զարժանին Ձեզ զերջանկութիւն և զանդորրութիւն.—ո՛չ։ Ազգ՝ որ

*տեսայ զիր զլուխ. տանելի է Աստուծոյ և մարդկան, ցանկայ, այլ ո՛չ տեսանէ զյաջողութիւն։*

*Երեքամսեան ծանր, վայելուչ և իշխանական ճանապարհորդութեամբ հասի ի Նոր Ջուղայ,[4] ուր բարձր սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոս, հոգևոր հայր իմ, և ամենայն հասարակութիւն մերազանց, ի պատիւ աստուածարեալ տէրութեան Ձերոյ, սիրով մեծաւ ընկալեալ՝ յանձնեցին ինձ զիւրեանց Ամենափրկչեան ճեմարան, որոյ թիւ աշակերտաց հասանի այժմ ցհարիւր վաթսուն, որք բաժանեալ ի մետասան դասակարգութիւնս՝ ընթեռնուն զՀայ, զՊարսիկ և զԱնգղիացի արհեստս ազատականս։ Ես ինքնին ուսանիմ զՊարսիկ և զԱրաբացի լեզուս, յամենայնի մխիթարեալ։*

*Նամականի արար սրբազան առաջնորդ տեղւոյս, առ մերազնեայս Հնդկաստանի, ծանուցանել նոցա զհասանիլ իմ այսր և զվերահաստատութիւն ճեմարանին. յուսամք ի մօտոյ ընդունիլ պատասխանիս ի նոցանէ և երևեցուցանել պտուղս Հայ տպարանի հաստատելոյ ի Ջուղայ։*

*Երկոքին աղտարմայ վարդապետք, Յովհաննէս և Ստեփաննոս որջացեալ ի Ջուղայ, որպէս գրեալ է տէրութեան Ձերում առաջնորդ տեղւոյս, բազմօք գայթակղեցուցանեն յԱզգ մեր։*

*Եթէ շնորհ արասջիք գրել առ Սուլթան Մահամադ Միրզայ արքայորդի տեղւոյս, և առ Սէիդ Մահամադ Բաղր՝ մուշտահիդ, թէ մեք առաքեցաք այդր ուսուցիչ զՄեսրովպ, որ բաւական է ուսուցանել, և նոքա չեն հարկաւոր մնալ յԱզգի մերում,—անխափան խլեսցին նոքա։*

*Աստուածարեալ քահանայապետի իմոյ և Տեառն ամենախոնարհ և ամենաջերմեռանդ ծառայ՝*

Մ. Դ. Թաղիադեանց։

*Յասպահան*
*Ի Նոր Ջուղայ*
*1834, Սեպտեմբեր 14*

## 15. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

*Նոր Ջուղայից—էջմիածին*

### Գերագոյն քահանայապետի ամենայն Հայոց ողորմածագոյն Տեառն եւ բարերարի ամենախոնարհ յայտարարութիւն

*Բարձրագոյն կոնդակ յորդորանաց համատարած սուրբ Հայրութեան Ձերոյ, թուեալ ի 26 Նոյեմբ. 1835[1], այլովն հանդերձ, շնորհեցաւ ինձ ի ձեռն առաջնորդի տեղւոյս ի 10 մարտի։ Զոր ընկալեալ իբրև որդի հարազատ ի հնազանդութիւն պատուիրանացն պարունակելոցն ի նմին, մեծահանդէս տօն ուրախութեան կատարեցի ի տան իմում, որպէս երբեմն Զաքքէոս, ընդունելով զՏէրն մեր ի տուն իւր[2]։ Մոռացայ զանցեալ զրկանս իմ, և զանտանելի զրպարտութիւնսն եղեալս ի վերայ իմ, ի բաց եդի զամենայն կրճիմն անիրաւութեան և մասնաւոր վարձու ոչ միայն զգործ ճեմարանին յանձն առի, այլ և զատենադպրութեան և այլն։*

*Բայց արդ տխրութեամբ գրեմ, զի սրբազան Առաջնորդն առաւել հետևելով կրից և երեխայից, որոց խիստ է կաթոգին, վհատեցաւ ի յաջողութեան անդ իւրում, զի այն ինչ սկսավ լուր պայծառութեան ճեմարանին տարածիլ, և ի տեղեաց տեղեաց քաղել զարդիւնս օգնականութեան Ազգին, նա ի շնորհս մանկահասակ սպասաւորի իւրում, որ ճեմարանի անուամբ ելեալ ի վանաց, գնայր ուր կամէր, և զոր ինքն զսպել չկարէր, և ես խոստացայ դանակոծ զնա առնել, երկնչելով եպիսկոպոսին, թէ մի գուցէ ի գանել իմ զնա ի վեր ելցեն իւր ամօթանք, առաքեաց հան զնա ի ճեմարանէ և զկնի տասն աւուրց, ի տօնի մեծի զատկին,[3] կոչեալ զիս առ ինքն, փոխան վարժապետական պարգևաց, ասաց, թէ «Այլևս ոչ կարէ պահել զճեմարան իւր»։*

*Առ այս՝ իբրև մտաբերեցի ելանել աստուստ տամբ Հանդերձ առ ոտս Ձեր, և սրբազան առաջնորդն ամենևին անմասն ցուցանէր զինքն յօգնականութենէ ծախուց վերադարձի իմոյ. յաստուածուստ իմն գտջի՛ք, եկն Հաս աստ պարոն Տուրնով, ատենադպիր և երրորդ լիակատար դեսպանութեան Ռուսաց ի Պարս։ Սա Հարց ինձ, թէ զի՞նչ գործ ունիս, ասացի, յետ 9 ամիս յանցեալ տայի անգործ կալոյս և յետ չորս ամիս վերստին վարժապետելոյս և այլն, ներկա կրկին անգործ կամ[4]։ Ապա եՀան զթուղթ մի ի սրբազան եպիսկոպոսէն[5] գրեալ առ բարոն Բօդէ, երկրորդն դեսպանութեան, որ պարունակէր զ՚ի ներքոյ Հնգեակ եպիսկոպոսավայել ճշմարտութիւնս.*

*ա) թէ ինքն պաՀեալ իցէ զիս յէջմիածին ինն ամ, իւր յատուկ ծախիւք.*

*բ) թէ ինքն, ո՛չ միայն զծախս ճանապարՀի անդուստ ի Հինդ, այլ և զտասնամեան ուսման լեզուաց վճարեալ իցէ զծախս.*

*գ) թէ Մեսրովպ անգործ գոլով յէջմիածին, ինքն իբր ողորմութիւն բերեալ իցէ զնա այսր, վասն ապրուստի.*

*դ) թէ ի միջոցս 8 ամսոց Հասուցեալ իցէ մերձ 202 թուման.*

*ե) թէ «անարժան և անպատիւ անձն է, չունիցի ոք ընդ նա գրութիւն»։*

*Զայսոսիկ եպիսկոպոսավայել ճշմարտագրութիւնս նորա եղծի օրինաւոր ապացուցութեամբ, և ինքն ի վերջոյ պարտաւորեցայ ի քննութեան պարոն Տուրնովի ասել, թէ «ինքն ամենևին չէ պատասխանել զիս ի ճեմարանէ». պատասխանեաց պարոն Տուրնով՝ Ուրեմն, եթէ չես պատասխանեալ և կամիս պաՀել, ուրեմն գրեա՛ գիր կապակցութեան և ես ձեռագրի ձերց ի նմա յաւելել Հաստատութիւն եպիսկոպոսն կարի յօժարութեամբ խոստացաւ։ Այլ ի վաղուի ժողովեալ զիւր վարձեալ անձինս, զԵղիա ՅովՀաննիսեան, զՂեոնդ Յ. Սւագեան[6], զԳորգին Մանուկեան և զԿարապետ Գիւլզադեան, որք ո՛չ այլ ինչ են, եթէ ո՛չ սոսկ զինեվաճառք, ուսոյց նոցա ասել, թէ Ազգն ո՛չ ընդունի զլինիլ Մեսրովպայ ի վարժապետ։ Զոր և ինքն ապա գրով ետ պարոն Տուրնովի։ Ըստ որ զայրացեալ նորա գրեաց առ ինքն առաքել զայնոսիկ, որք զայն ասացին։ Եպիսկոպոսն մոլորեցաւ. մինչ օրինաւոր պատասխանւոյ ևս անբաւական լինիլ։ Երկիցս գրեաց պարոն Տուրնով, և զդարձն չընկալեալ՝ գրեաց առ Խոսրով խան[7] և Հանեալ ի նմանէ զմուՀասիլ, բուռն իշխանութեամբ պաՀանջեաց 40 թուման զծախս վերադարձի իմոյ ի Հասարակութենէ տեղւոյս,*

*զոր ամենայն օրինօք պարտ էին, զոր ընկալայ և նլանեմ այսօր աստի առ ոտս Ձեր. կամիք պահեցէք, կամիք զմեզս մանկութեան իմոյ յերես հանելով մի՛ պահէք. այլ ես զամ տամբ հանդերձ մնալ յաւիտեանս յաւիտենից։*

*Զայսոսիկ միայն նորա ընդ իս արարք, այլ առաւել քան զայն ընդ այլոց. կամ լուալ եք, կամ լսելոց էք, ի գրութեանց անտի լիակատար դեսպանութեան Ռուսաց ի Պարս։ Եւ ես վկայեմ առաջի Աստուծոյ և մարդկան, զի այսքան ընդդէմ ճշմարտութեան և զակատեալ և մանկտւոյ երբեք ոչ տեսի։*

*Մնամ ամենայն հաւատարմութեամբ*

*Ձերդ Սրբազասրբութեան, ողորմա՛ծ Տէր,*

*ամենախոնարհ ծառայ*

*[վարժապետ]* Մ. Դ. Թաղիադեանց

*Ի Ջուղա, 1836*
*մայիսի 5։ ԾլԻ՛*

## 16. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*Շիշավանից—Նոր Ջուղա*

Սիրելի Հակոբ[1]

*Ես ներկա Մալիք Ղասիմ Միրզա Շահզադի (արքայազնի) շը-նորհիվ ինգլիզեվար, հայեվար և ֆարսեվար լեզվաց շկոլ եմ բացել տեղս[2]։ Ամեն կողմից հայ և Թուրք աշակերտներ են գալման, ուսում առնում, և իմ պատիվը աստուծո ողորմությամբ օրեցօր ավելա-նում է։ Իրավի դուք շատ լավ կանեք հասկանալ, որ պարոն Հով-հաննեսն հատուկ իմ ուսում տալու համար էլ չուզեց Հակոբին, ապա թե ոչ կտաներ և ինքն էլ չէր գալ[3]։ Ուրեմն, լավ կանեք Հա-կոբին աղարկելն, որ ես կարողանամ պարզ երես նորան գիր գրեմ դո Ջուղա, և ես էլ գամ, ի միասին ուրախ անձկանք։ Եթե չեք ուղարկել, ուրեմն էլ ինչպես կարողանամ վկայել նորան, թե Ջու-ղա լավ տեղ է, վեր կաց արի։*

Մ. Դ. Թաղիադյանց

*1837, հունիսի 23*

## 17. ԱՆՆԱ, ԱԶԱՏԼՈՒ ԵՎ ՎԱՐԴ ԽԱԹՈՒՆ ՔՈՒՅՐԵՐԻՆ

*Թավրիզից—Նոր Ջուղա*

Պատվելուհի, Քուրք Աննախաթուն Տեր-Դավթյան, Ազատլու Կարապետյան և Վարդխաթուն Շահնազարյան[1]

*Իմ տխուր քուրեր*

*Սևավոր փեսայիցդ Թուղթ է եկել, իրար խապար արարեք, իմ տխուր քուրեր, մին տեղ ժողովեցեք, տեսեք, Ձեր սիրուն, կարոտ, անտեր անտիրական Թանգխաթունից ինչ մին նոր լուր կա, Քը-*

*րիստոսի ավետարանն անհավատից աշկյարահ անելու համար, յուր ընկեր դրացիներիցն բաժանված, մին ղարիպ երկրում, պյուլպուլի նման վարդի փշի վրա կանգնած, կարոտած Թանգումի համար, տեսեք ի՞նչ ա գրել։ Արդյո՞ք մին նոր բախտի ա հանդիպել— արդյո՞ք արու զավակի ծննդական ա նստել, արդյո՞ք մին հանդիսավոր կնունք ա արե՞լ, ո՜հ, վա՜յ իմ սև գլխիս. վայ իմ օրերս խավարած տարաբախտ խղճիս, որ դեռ հեր չդառած զավակն էլ, մայրն էլ ի միասին թաղեցի. հիմա լաց ելեք իմ վերա, քուրեր, որ իմ Թանգումս մեռա՜վ, հիմա լաց ելեք իմ վերա, որ իմ արևս խավարեցա՜վ, հիմա սև կապեցեք իմ վերա, որ իմ սերն գերեզմանում թաղեցա՜վ, ախ վա՜յ ինձ, ախ վա՜յ։*

*Հերու էս վախտ, երբ որ օդափոխության համար* Աշան *կերթայինք, իմ թախումս կար միայն հինգ ձի և տասն ջորի յուրյանց մարդ և կին սպասավորներով... հինգ ամիս տեղն կացանք, Թանգումիս հետ ծնկեծունկ նստած, անգին Թանգումիս հետ միասին կռնեկուռ գցած, ինչ կանաչ դալար խոտերու վերա, ո՜հ սեր օրեր, շուտ անցկացան։ Սիրելի Թանգումս ուզեց գալ Թաբրիզ, որ քրիստոնեից մոտ ժամ ծննդական նստի և ժամ պատարագով հանդիսավոր կնունք անի։ Աստված էլ գիտի, որ Թանգումիս մեկ խոսքն երկու չէր եղած ինձ մոտ......*[2] *Ո՛չ կերա, ո՛չ խմեցի. ուզեցա քնել, քունս չտարավ։ Վեր կացա, ձիս դուրս քաշեցի, իմ ձեռքովս թամքեցի և ճանապարհ ընկա։ Ամբողջ գիշերն էլ մթնած կանձրևեր. քանի անգամ ճանապարհս կորցրի.....Հինգ անգամ Ուրմիո ծովի քանարիցն սարերի գլուխն վեր ելա... Լուսացավ։ Երեկնապահին հասա Թավրիզ և հիսապ արի, որ քսան և հինգ փարսախ ճամբա մեկ օրի մեջն ձի էի քշել։ Սուս ու փուս դուռն տվի, մահտեսի Ավետիքն դուռն բացավ. տեսա խեղճ մարդն այլանդակված, մին գինովի կերպարանքում։ Կամաց ներս գնացի, տեսի մին դաստա կնանիք խեղճ Թանգումիս շորերն մեյդան գցեցին և սկսան լալ։ Ընկա շորերի վերա, որ ինձ լան նորա տեղակ։ Վեր կացա, գնացի եկեղեցին տեսնել խեղճ Թանգումիս, որ իմ գալուց հասանելուց գրեթե հինգ րոպե առաջ ժամն տարածան ելել... Յուր կանաչ ու կարմիր լաչիկ մանտիլովն զարդարեցի, որ հողն խոշ ուտի... Ժամիցն եկա տուն։ Էն գիշերն ինձ ափիոն տվին, որ հեչ առած չէի. թմբրեցա։ Լուսացավ, նոր հող ու մոխիր գլխիս տալով իմացա, որ Թանգումս մեռավ...*

*Տխուր* Մեսրովբ Դ. Թաղիադյանց

*Ի Թաբրիզ*
*1837*

## 18. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*Թավրիզից—Նոր Ջուղա*

Սիրելի Հակոբ

*Նախ գրեմ, սիրելի եղբայր, երկար ժամանակ անցավ, ձեզանից գիր չունեմ[1]։ Իմ տխրությունն գնալով կերթա և կավելանա, իմ ամենասիրելի Թանգխաթունիս կորցնելէն հետ ձեզմէ ևս զուրկ մնացի։ Պարոն Գևորգ Վրթանեսից գիր գտա[2], թե դու ուզեցել ես գարնանս գալ Թաբրիզ՝ Թանգխաթունիս գերեզմանն համբուրելու. ի՞նչ ասեմ, սիրելի, ինչ խորհուրդ տամ քեզ. ոչ արի կարող եմ ասելս և ոչ մի գար, քանզի սրտի կսկծանքեն ի բաց ոչինչ չես գտանել։ Բայց եթե եղև, որ եկար, ուրեմն ինձ շուտով գիր գրիր, որ իմանամ քո գալդ, և ժամանակ ունենամ՝ կամ իրար երես տեսնելու և կամ ի միասին Հնդստան երթալու և կամ իմ խորհուրդս քեզ հայտնելու, որ գրով ասելն չեմ կարող. եթե գալդ ևս չլինի, ուրեմն քո և աղնիվ քուրերիս կամքն ստուգապես ինձ հայտնիր, ինձանից կարդա և ասա, տեր ընդ քեզ, որպես հաջողակ համարես՝ արա։*

*Խոնարհ ծառա տխուր*

Մ. Դ. Թաղիադյանց

*1838, նոյեմբերի 20*

## 19. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*Պոլսից—Նոր Ջուղա*

Սիրելի Հակոբ

*Քո ցավագին գիրդ գտնելուց.... առաջ ես 3 անգամ քեզ և իմ տխուր քուրերիս գիր եմ գրած, և հետզհետե ուղարկած, որ ձեզ հասանի: Բայց մինչ ի հետս ոչ մինին պատասխան չունիմ: Ներկա սույն գիրդ հասավ, կարդացի, վերքերս նորոգվեց, շատ լացի, բայց ի՞նչ ճար, եղբայր, իմ գլխիս եկածը իմ դուշմանիս գլուխն չգա: Մահդեսի Ավետիքն, պարոն Գևորգն և շատ ուրիշանք ներկա էին, որ ամենեն առաջ ես ուզեցա նորա բոլոր բողչեքն կապեմ ուղարկեմ ձեզ, որ դուք ինձ ոգակից լինեիք: Պարնիքն արգիլեցին ասելով, թե առաջ նորանք պիտի քեզ մխիթարք գրեն, և էսպես մնաց: Սիրելի աստված հեռու անի էնպես մարդիցն, ինչպես ես եղա, ինչ պահանջողություն պիտի ունենաս: Տարի և կեսն անցավ, դեռևս խելքս գլուխս չի եկել: Գրում ես, թե Թանգումի գերեզմանի խաթրու յուր անվամբն մին գիր շինեմ. ոչ թե մին գիր ոտանավոր, այլ էսա, տարի ու կեսա, ամեն օր իմ աշխատանքսա նորա վերա ոտանավորով գրքեր շինելս: Պատճառ մինչև հիմա ձեզ չուղարկելս նորանց օրինակն է նա, որ պիտի տպագրեմ և այնպես ուղարկեմ[1]:*

*Ես ձմեռս շատ նեղությամբ անցկացրի. անգործ, ծախսս շատ և անձամբ հիվանդ. էնքան որ պարտավորվեցի անցյալ ամսու 15-ին, ամեն ունեցած բաներս լեյլամ արարի և պատրաստվեցի, որ գնամ մյուս անգամ Հնդստան, սիրելի Հովհաննեսին կարդալ տամ յուր ջվոր լալու արժանավոր գրքերս, բայց տեղվույս անգլիացի բարեկամներս, իմ հիվանդության պատճառով և եղանակի ցրտության, թույլ չտվին. յուրենք ինձ գործ տվեցին, որ կամ տեղս, և տպարանի հետ էլ կապակցություն ունեմ[2]: Նոր մին գիրք էլ շինեցի ատեղաբաշխության վերա և հիմա կտպվի[3], աստուծով 4 կամ 5 ամսեն հետ դուրս կուգա և քեզ կուղարկեմ քանի հատ:*

*Կարելի է միջոցումս Թարվիզեցիք գիր գրեն ինձ խնդրեն, որ հետ գնամ տեղս. եթե գրեցին էլ, սույն ինգլիզի բանովն կերթամ, եթե ոչ տեղս կմնամ մինչև ձեզանից գիր կարդալ։*

*1839, ապրիլ 11*

## 20. ՌՈԲԵՐՏ ՀԱՄԼԻՆԻՆ

*Պոլիս*

Սիրե՛լի միստր Համլին

*Տաժանելի կացության մեջ եմ։ Տաճկական նավ եմ դրվել Տրապիզոն տարվելու համար։ Ռուսական դեսպանի հրամանով ուղարկվում եմ Սիբիր[1]։ Գրաբերիս հանձնեցեք իմ հագուստները, և պահեք ձեռագրերս։ Գրքերս նվիրում եմ միսիոներական դրադարանին։ Թող իմ բոլոր քույրերը և եղբայրները աղոթեն ինձ համար, որովհետև ես շատ տխուր եմ։*

Մ. Թաղիադյան

*1839, մայիս*

## 21. ԱՆԴՐԵԱՍ ՌՈՒԹՓԵՆՅԱՆԻՆ

*Տրապիզոնից—Նոր Ջուղա*

Գերազնիւ աղայ Անդրէաս Ռուփէնեանց[1] ցանկալի եղբայր

*Յետ ճանապարհորդելոյ զՁեզ ի ցանկալի աշխարհ Հայրենեաց, վերադարձայ ի սենեակ անդր իմ ի փարթամ Փաշա-խան, և ննջեցայ զքուն հոգոց և տրտմութեան միանգամայն։ Ի մէջ թանձր թմրութեան իմոյ լուայ զբախիւն դրան սենեկի իմոյ, բացի, և ահա Մարգար ժամահար պատրիարգի եմուտ ի ներքս, և բանիւ փոխանորդին[2] հրաւիրեաց զիս ի պատրիարգարանն Պօլսոյ։*

*Ժամ էր մեռասաներորդ՝ այլ ես հնազանդեցայ նմա իբրև իմ Ազգի պատրիարգի և հօր. յարեայ ամենայն միամտութեամբ և չոքայ անդր։ Իբրև յանդիման եղէ փոխանորդին, յարտաքին երեսս մեծ սէր և ընդունելութիւն կեղծաւորեալ՝ հրամայեաց ածել*

*մեզ սուրճ. և յաւել ևս յասել, թէ՝ «Յառաջիկայ աւուր հինգշաբթի ժողով լինի վարժապետաց, յորոց և դու մի, խնդրանօք Ազգին պարտիս ներկայ գտանիլ, և ընդունիլ զբաւականութիւն քոյ»։*

*Առ այս շնորհակալ մեծ եղէ զնմանէ, և համբուրեալ զաջն իջի յեկեղեցի Աստուածածնի, և մատուցի Աստուծոյ զիմ ամենաջերմեռանդ և զմիամիտ գոհութիւն։ Այլ այն ինչ աղօթք ի բերան էին, եկին ութն ժամակոչք և հրաւիրեցին զիս տեսանել զմի ոմն ի վարդապետաց, կեղծելով թէ ունիցի բանս ինչ խօսելոյ ընդ իս։ Իբրև մերձ հասուցին ի դուռն խաւարային բանտին՝ բացեալ զայն ընկեցին զիս ի ներքս, և աղխեցին զայն նգօք հզօրօք և կղբօք անլուծանելեօք, ուրանօր զգիշերն ողջոյն անցուցի անսուաղ և ցրտահար, մերձ ի մահ։*

*Ունելով առ ձեռն պատրաստ կապարեաց գրիչ և թուղթ, ութն տոմսակս գրեցի զանազան լեզուօք առ զանազան կարծեցեալ բարեկամս։ Այլ պահք պատրիարգին կալեալ զայն՝ զոր գիտացին ընթերցան, և զոր ոչն գիտացին, առաքեցին կոչեցին զմարդիկն առ որ և գրեալքն էին, և ի նոցանէ իմացան զմիտս գրելոցն ամենեցուն, որ էր. թէ ով ոք ընթեռնուցու՝ դիւանի դեսպանութեան ամենողորմած կայսեր մերոյ ազդ արասցէ, թէ Մեսրովպ բանտարկեալ իցէ ի պատրիարգէ Հայոց։*

*Ընդ լուսանալ առաւօտուն, հանին զիս ի բանտէ անտի, և մեծաւ աղերսանօք ի բաց արձակեցին զիս։*

*Անցագիր տէրութեանն, կայսերական կնքով էր ի ձեռին իմում, ի ժամ բանտարկութեան իմոյ, և հնար էր տանել զնոյն և արկանել ի դիւան անդր, սաստիկս բողոքելով զպատրիարգէն, այլ աղայք* Քերոփ, Մկրտիչ և Գէորգ մեր, *կարի և կարի խնդրանօք աղաչեցին զիս ներողամիտ լինել, զի մի Ազգն տուժեսցէ՝ և անուն պատրիարգին չարիս ինչ յինքեան կրեսցէ։ Լաւայ և սոցա։*

*Վրէժխնդիր չեղէ, սէր, և զգիրս ամերիկացւոց վաճառելն արգելայ[3]. և ի պնդել նոցա զիս առ այն միանգամայն թողեալ ըզգործ նոցա, և զանուն, և զԿոստանդնուպօլիս միանգամայն, յերեկ իջի ի Տրապիզոն և գտեալ զի Իսմայէլ բէկ Ջափար, գայր յանկարծ այդր, զայս թուղթ ծանօթութեան հապճեպով գրեցի առ Ձեզ։*

*Յուսացեալ առ ի Ձէնջ մխիթարական ինչ պատասխանւոյ, զոր յուսամ գտանել ի ժամանել իմում յԷրզրում։*

*Աստղաբաշխութիւնն սկսաւ տպագրիլ։*

*Խոնարհ ծառայ*

*1839, մայիսի 16*
*ի Տրապիզոն,*

**Մ. Դ. Թաղիադեանց**

## 22. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*Բաղդադից—Նոր Ջուղա*

Սիրելի <Հակովբ>

*Ես Ստամբոլուց վեր կացա, եկա Էրզրում էն մտքովն, որ պետք է գնի Երևան, բայց որովհետև տեղն պետք էր ձեռքս ոտքս կապած մներ, առանց ազատորեն մին տեղս դուրս գալու, վասնորո մասլահաթ տեսա իմ տեղն գտնված բարեկամներիս հետ, որ կրկին Հնդստան վերադառնամ։ Ուստի ճանապարհս թեքեցի, Դիարբեքիրա վերնովն հուլիս 24-ումն հասա ի Բաղդադ։ Տեղիցս 6 օրեն հետ, թե սաղ մնացի, վերկալեցամ ի Բասրա[1], և անտուստ դեպի Կալկաթա։*

*Տխուր եմ գրելս, որ իմ լուսահոգի Թանգումիս զարդերիցն մին պատվական խաչ շինելուց հետ և նրա հիշատակն վերեն գրելուց և եկեղեցվույն ընծայելուց պահել էի քամարն և մի քանի հնուց եղած արծաթեղեններիցն, որ հետս տանեի Հնդստան և միշտ իմ մոտ պահի և նրանով մխիթարվի։ Բայց Արղնի հասանելով շատ վաստակած էի. քարվանսրումն քնեցի, որ փոքր ինչ հանգստանամ, բայց քնած ժամանակս գողերն մտերին ներս և թամբալիթիցս գողացելին թե թանկագին բաներ և թե արծաթեղեններ, որոնցմեր էր և սիրելի Թանգումիս քամարն և մնացեալ զարդերըն։ Շատ ջանացա տեղումն, որ գողն գտանեմ, բայց չկարողացա։ Թողի Արղնի, եկա Դիարբեքիր, տեղն Ալի փաշային արզ արարի, հատուկ գիր գրեց և մարդ ուղարկեց, որ գտնի մեր կորուստն և բերի։ Գրեցի նաև այս մասին Էրզրում նստող Մողու Բրանդ ինգլիզի Պալեօղին, որ գտնի ուղարկի Բաղդադ նստող միսթր Թելլերի ձեռքն, որ նա ինձ հասացնի։ Տեսնենք վերջն ինչպես կլինի։*

*Շատ բան ունեմ գրելէ, բայց ժամանակն չէ ներում։ Աստուծով Բոմբայի կամ Կալկաթա հասանելն կգրեմ։*

*Հուլիսի 24, 1839, Բաղդադ*

## 23. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*Բուշերից—Նոր Ջուղա*

Սիրելի Հակոբ

*....Ես Ստամբոլուց վեր կացա, ճանապարհին Արղնի հասացած քաղաքումն գողերն մտան մեր բնակութիւնն, խղճալույս քամարն,*

*արծաթե ամեն մանր բաներն, հանդերձ մի քանի մատանիքով և մերձ 36 թումնի արժաղությամբ, տարան։*

*Բասրա 20 օր կացա, մեծ հիվանդությամբ հիվանդացա մերձ ի մահ, այլ աստված վերստին կենդանացույց[1]։ Երեք օրից հետ Բուշերուց վեր կալեց ենք դեպ ի Կալկաթա[2]։ Խնդրեմ համենայն ժամանակ գրությունդ անպակաս առնես, հաստատ հավատաս, որ իմ սիրո մասին Թանգխաթունն չէ մեռած։ Ձեռքիցս որքան որ գա, պատրաստ կլինեմ քեզ եղբայրություն անելու։*

*1839, հոկտեմբերի 9*
*Բուշեր*

## 24. ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆՆԵՐԻՆ

*Կալկաթայից—Թավրիզ*

Սիրելի պարոնայք Անդրէաս և Ստեփանոս Ներսիսեան

*Խնդրեմ ի մէջ ամենայն աշխարհային զբաղմանց Ձերոց, շնորհ արասջիք դարձուցանել զոննայ զհայեցուածս Ձեր յօգուտ ընդհանուր Ազգին, և կատարել զոր խնդրեմս.*

*1. Գտանել հնադոյն և անծանօթ մատենագրութիւնս զորբոց մերոց նախնեաց, և առաքել այսր ի հրատարակումն նոցա յԱզգի մերում։*

*2. Ժողովել նորանոր գրուածս, թէ ի ձէնջ յօրինեալս, և թէ յայլոց աշակերտաց Ներսիսեան ուսումնարանին, և առաքել առ իս հանդերձ դուզնաքեան դրամովք հեղինակացն ի ծախս տպագրութեանց նոցա։*

*3. Առնել ամի ամի շրջաբերական մի ի մէջ բնակացն և եկաց Դաւրիժոյ, և նոքօք ձեռն օգնականութեան նպաստել ինձ առ գործս բազումս, որ առաջի կայ ինձ, սոսկ յԱզգին օգուտ։*

*4. Գրել ծանուցանել ամենայն բարեկամաց՝ որք ունիցին գրեանս կամ գրուածս ի տպագրութիւն, զի առաքեսցեն առ մեզ ընդ նոսա, զորս մեք յանձն առնումք տպել (ո՛ և իցէ գործ), զէջն մեծագիր, որ է Աստուածաշնչմանութեան տիպն, 6 ղրան առ 1000 օրինակն, փոքրագիր՝ որ է Դիցաբանութեան՝ 12 ղրան առ 1000 օրինակն, այսինքն է ասել, մին երես 1000 հատ կտպին, մեծն 6-ովն, իսկ փոքրն 12-ովն։ Մին գիրք որ ունենայ 100 երես, հազար օրինակ մեծագիրն լինի 600 ղրան, նոյն փոքրագիրն 1200 ղրանն, և մի գրքի գինն կլինի մեծագիրն՝ 550 դեան, փոքրագիրն՝ 1200 դեան։*

*Խ<ոնարհ> ծառայ*

Մ. Դ. Թաղիադեանց

*Կալկաթա*
Bishop's College
*Տիզէմբր 30, 1840*

## 25. ՍԵԹ ԽԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԴՐԵԱՍ ՈՒՌՊԵԼՅԱՆԻՆ

*Կալկաթայից—Թավրիզ*

Բարձրաստիճան Սէթ խան և պարոն Անդրէաս Ուռպելով,
Ողորմած Տե՛արք

*Գայ առ ձեզ թուղթ իմ ի ծագաց Հնդկաստանի, ցուցանել ձեզ զփրկութիւն նախախնամութեանն, որ ընդ վտանգս, ընդ մահ և ընդ կորուստ, անվրդով պաշտպանեաւ հասոյց աստանօր ամբողջ անվնաս, զազգին յարուցանել վերստին զփառս։ Ամաչեսցեն, որք ի նանիր հալածեցին զանձն իմ։*

*Նուազութիւն ազգի մերոյ ի Հնդկաստան, պարտաւոր առնէ զիս ապաստան անկանիլ ի շնորհս հեռաւոր բարեկամաց։ Վասն որոյ համարձակիմ պահարանել ի սմին, զօրինակ շրջաբերականի իմում յաղագս տպագրութեան Պատմութեան հին Հնդկաստանի[1], զորոյ նմանն չիք բնաւ յազգի մերում։ Եթէ տեղեակ լինէիք տարապարտ հալածանացն իմոց ի Պոլիս—Յովհաննու ճարտարապետի անմահ գժտութեանն[2], երկու հարիւր քսակաց կաշառոյն, և դաւաճանութեանն, զի լռելեայն կալեալ զիս առաքեսցին ի Սիբիր, իբրև զմահապարտ։ Զենկուցումն իմ, զփախուստն ի Կարնոյ դէպ ի Հընդիկս, բանակի Օսմանցւոց բեկանիլ ի Պիրէճիկ, և զխռովութիւն աշխարհին, և չարեաց հեղմունս, զկողոպտիլ յԱրղընի, և զգերի վարումն իմ յԱրաբաց յանապատին Սուրիայ, և այլն և այլն, ոչ զարմանայիք ատտի զձեզ ի նպաստ օգնականութեան կոչելն զձեզ, և զգերապատիւ հասարակութիւն Դավրիժոյ։ Տակաւին ի մէջ այսքան զրկանաց՝ ես բարւոյ ազգին հետևիմ, և եթէ դուք զօգնելն խնայիցէք, կամք ձեր։ Տասն և ութ հատոր գրեանք՝[3] միայն յինէն շարադրեալք պատրաստի կայ ի լոյս տպագրութեան, և կարօտի օժանդակութեան ազգասիրաց մերոց ընդ ամենայն տեղիս։ Եթէ շնորհ արասջիք գոնեայ դուզնաքէիւք օգնել ինձ, ուրեմն նուիրեալ զկեանս իմ բովանդակ ազգային օգտի, պարապեցայց ի սմին, առանց ակնկալութեան աշխարհիկ շահուց։*

*Սկսեալ 1827 էն մինչև 1840 մեծահռչակ Աթոռն Հայաստա-*

նեայց ս. Էջմիածին, իւր հինգ հարիւրաւոր միաբանիւքն, և համօրէն ազգիս եկամտովն, չտպեաց այնքան գրեանս, որքան նուաստս միայնակ[4]։ Գրեանքն զորս նոքա տպեն, չեն այլ ինչ, քան ժամագիրք, և շարական, զորս ինքեանք ոչ շարադրեցին. բայց իմայինքն բոլորք են նոր, և առաւել ես պիտանիք։ Արդ եթէ նոքա ձերոց ողորմութեանցն կարօտին, և զան և առատապէս վարձատրին, ընդէ՞ր ո՛չ և նուաստս, որ քան զամենեսին զնոսա առաւել վաստակեցի։

Ո՞չ շատ խօսեցայց. աղաչեմ յընդունիլ ձերում զայս, առանց ժամանակ կորուսանելոյ՝ շնորհ արասջիք նախ՝ զանձինս օրինակ կացուցանել ստորագրութեամբ անուանս ձերոց, և ապա զայլս, ի նոյն յորդորելով, հաւաքել զգումարն, և հանդերձ անուամբք ազգասէր օժանդակացն, փութով հասուցանել ատ առ իս, անդղիացի, կամ հաստատուն պարսիկ փոխանորդագրով, զի տպագրեցից ընդ տրոց՝ և զանուանս նոցա ի գրի այդմիկ, առ յաւիտենական և յանջնջելի յիշատակ նոցա, քան զոր չիք բարի, հաստատուն և անսասան յաշխարհի։

Սիրելի Անդրէաս իմ. թէպէտ և ընդ այլ մթերս իմ աւազակակուր եղև և սիրելին ինձ ժամացոյց՝ նուիրեալն ի ձէնջ, այլ յիշատակ նորա անջինջ կայ ի սրտի իմում, և դիտումն ազգասիրութեան ձերոյ, որ էր «չափել նովին զթանկագին ժամանակն առ օգուտ ազգիս», անմոռաց արձարձանի ի հոգիս։ Ահա ժամանակ եհաս սիրելիդ, ահա տպարան մի ի ներքոյ, և գրիչ սուր ի ձեռին, հռչակել զառաքինութիւնս իմոց սիրելեաց։ Մի՛ դանդաղիր, մի՛ վհատիր ի հեռաւորութենէս իմմէ, զի սիրտ իմ միշտ մօտ է ձեզ, և երիկամունք իմ դողան առ անձուկ կարօտանացս վասն ձեր։ Ջանա սերմանել յերկիր արգաւանդ, և քաղեսցես անտի քեզ զհունձ բազում։

Բարեկամք մեր ի Պոլիս, տակաւին անտեղեակք են կենդանութեան իմոյ, ոմանք համարին ի մահ, և ոմանք ի Սիբիրիա վտարեալ զիս, ուստի և վասն Աստեղաբաշխութեան իմոյ լուր չունիմ։ Խնդրեմ տեղեկանալ ի Մօրրիկայ՝ որ այդր թուի լինել, և գրել ինձ։

Ամենայն ամենայն վերապատուութեամբ բարձրաստիճան խան,

և սիրելի պարոն իմ ձեր որպէս միշտ

ամենախոնարհ ծառայ

Մ. Դ. Թաղիադեանց

Կալկաթա
Bishop's College
փետրվար 20, 1841

## 26. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—Էջմիածին*

Ներսեսի սատուածարեալ և ազգասէր քահանայապետի
ամենայն հայոց տեառն տեառն Սրբազնասուրբ կաթուղիկոսի՝
աջոյն սրբութեան
Համբոյր խոնարհական

*Ողորմած տէր*

*Թէպէտ օրհնութենապարգև կոնդակ Սրբազնասուրբ Տէրութեան Ձերոյ հասեալ այսր ելից զսիրտս ամենայն հոգևոր զաւակաց Ձերոց անպատում ուրախութեամբ, սակայն և այնպէս տակաւին ակընկալութիւն շնորհաբեր ձեռոյ ի գահն Արարատեան տագնապէ զմեզ անդր քան զոր գրել կարեմք աստանօր։ Բայց ի մօտոյ բերկրապատար ուրախութեամբ վկայեալ մեծափառ հանդիսի մտից ձերոց ի Տփղիս*[11] *և անշուշտ կշռադատեալ թէ մինչ ցարդ և անձուկ փափագանաց մերոց պսակեալ իսկ է քահանայապետական օծութեամբ Ձերով, ընկերովին դիմեմք ի շնորհաւորութիւն գերմարդկային աստիճանիդ սրբութեան և իրերաց աչաց լոյս բարեմաղթելով ընդ այսպիսի ընդհանուր և ազգային բարեպաշտութիւն, ընդ խակակութ երեխայրեաց մասնաւոր աշխատութեան մերոյ և ըղսիրտ ամենեցուն մեր զեղումք զԱթոռով շնորհաց և գթութեան Ձերոյ։ Անտարակոյս հաւատալով՝ եթէ հաս օրն երջանիկ, յորում Հայր որդեսէր հովլի հօտասէր Հայրապետն ազգասէր ոչ հարէ ոչ քաջալերիլ զամփոփիւն խիւ որդւոց, որք խորին ակնածութեամբ և*

*որդիական պատկառանօք ուխտեցին զանձինս իւրեանց Հայրենեաց, իւրեանց Հայրապետի*

*Ձերդ Աստուածարեալ սրբազնութեան ամենախոնարհ ծառայք*

Ն. Տ. Սարգսեան, Յովսէփ Աղաբեկեան
Մանուկ Զօրաբեան, Թադէոս Խ.
Մ. Թաղիադեան, Ս. Գալստեան

*Կալկաթա*
*ի 27 Մայիսի, 1846*

## 27. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—էջմիածին*

Առաքելապատիւ Տեառն Տեառն Ազգասիրի Կաթողիկոսի ամենայն Հայոց

*Աղերս Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց*

*Ողորմած Տէր*

*Գոհանամ զանբաւ շնորհաց մարդասիրին Աստուծոյ՝ որ այսպէս արժանացայ ուղերձել զայս աղերս առ ողորմած Տէրութիւն Ձեր, անմահացեալ ի յոյսն՝ թէ առ տէր ծառայամեծար, առ վարդապետ աշակերտասէր և առ հայր որդեգորով դիմիցեմ։ Անբաւ զրուցաց պէտք էին՝ եթէ յօրէ անտի բաժանելոյ ողորմած Տէրութեան Ձերոյ ի վանիցն Հաղբատայ և իմ ըստ ո՛չ շատ լաւ յորդորանաց յայնմ ժամանակի հոգաբարձուաց՝ վտարանդի գնալոյս յաշխարհ ամենայն, դառնալոյ ի հայրենիս յանուն Ձեր, և ծառայելոյ այնց* որք *արդարև* ո՛չ իմացան, *մինչև ցայսօր նստեալ գրէի մի ըստ միոջէ։ Անցեալն էանց.—թող զկնիք վկայեսցեն. բայց արդ զուարճանամ Աստուծով, զի ճառագայթարձակ Արևոյդ Հայաստանի՝ նորոյ Արևակարգութեան ակն ունի Ազգ մեր։ Եւ եթէ ընդաբոյս խմն յօժարութեամբ՝ մոլորակք, կամ մոլորեալք, և վարսամք բարենշանք՝ կամ ո՛չ, շուրջ զնովաւ պարաբերիլ փափագելով դիմեսցին ոչինչ աւելի առնեն՝ քան զոր պարտն էր նոցա առնել վասն Ազգի և Հայրենեաց։ Համարեցայց յորում կարգի և կամք իցեն մարդկան համարել զիս, տակաւին թողեալ զվկայութիւն աշխարհի՝ փափագիմ դէթ իբրև զմթնոլորտ մին շուրջ փարել ըղլուսով սքանչելեաւ Ձերով, և այնպէս հրաշանալ ընդ մնացուած կենաց իմոց։ Այս ամենայն չեն նորաստեղծ կեղծիք, զի և նախքան զայս՝ ո՛չ ոք մղեաց զիս ի դարձն առ Հայրենիս՝ եթէ ո՛չ*

*Անուն ճշմարիտ Ազգասիրիդ։ Զնոյն և զարդիս առնէի, այո՛, եթէ նոյն լինէր վիճակ կացութեան իմոյ, որպէս յառաջն էր։ Այլ աւա՜ղ. զի ընդ կենաց և ստացուածք մաշեցան։ Ապաքէ՞ն եթէ ծերացեալն Տուբիթայ օգնեաց յիշատակ աւանդիցն՝ առ Հռաքուելի[1] յԵկբատանս՝ ապա ինձ առաւել ևս. զի աւանդ իմ առ Նմա կայ՝ որում Հոգին Սուրբ աւանդեաց զհազարապետութիւն խորոցն Աստուծոյ։ Սովին ես ո՛չ քերթողանամ. այլ միայն յուշ առնեմ Ձեզ զբանն՝ զոր խոստացայք ինձ, յամի 1820, ի վեհարանի Արքեպիսկոպոսութեան Ձերոյ ի Տփղիս՝ յորժամ ընդ Արհւոյն Անտոնի Մողնեցւոյ արժանացայ համբուրել զգարշապար Առաքելապատիւ Տէրութեան Ձերոյ[2]։ Զայն՝ թէ «ամենայն աշակերտակիցք իմ վայելեցին ըզշնորհս քաջալերութեան Ձերոյ, և ես միայն զուրկ մնացի»։ Ուրեմն ահա՛ օր. վասնորոյ որդիաբար աղաչեմ տարածեալ առ իս զթևս գթութեան՝ ժողովեսջիք և զիս... ըստ միւս եղբարց՝ գոնէ փշրանաց սեղանւոյ հասարակաց... հաղորդ առնել ընդ ծառայս Ձեր։ Աչք մեր...... հայրենեաց հայելւոյն և տակաւին ճշտիւ ինչ ոչ աւետարանեցաւ մեզ, թէ զԱռաքելապատիւ Տէրութենէ Ձերմէ և (թէ) զյառաջադիմութենէ Հայրենեաց մերոց, որում փափագիմք յո՛յժ յո՛յժ։ Ծառայ Ձեր ունիմ զարդիս զիմ սեպհական գերդաստան, կամիմ ասել, կին և տուն, և զվերատեսչութիւն որպէս և զանդամակցութիւն Արարատեան ընկերութեան հաստատելոյ այսրէն յամի 1845, յամսեան յուլիսի, որպէս յառաջ քան զայս ընկերովին գրութիւն մեր ի շնորհաւորութիւն ամենասուրբ օծութեան Հոգւոյն Սրբոյ ի Ձեզ՝ արդեն իսկ ցուցեալ է. մնամ*

*Ձերդ Առաքելապատիւ Տէրութեան*
*ամենախոնարհ ծառայ և որդի*

**Մ. Դ. Թաղիադեանց**

*Ի Կալկաթա*
*Հոկտ. 25, 1846*

## 28. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ

*Կալկաթա*

Ազնիւ պարոն Յովհաննէս Աւդալեան գլխաւոր վարժապետ
Հայկաբանութեան և կարգադիր Մ<արդասիրական>
ճեմարանին:

*Ազնիւ պարոն իմ*

*Թոյլ տուր ինձ մատուցանել ի դատաստան ընտանեաց Ձերոց զգրքոյկն Առաջնորդ մանկանց կոչեցեալ, և աղաչել զպիտանութիւն նորա դպրոցաց մերոց՝ կամ ո՛չ*[1]*։*

*Եթէ հաւանական իմն երևեսցի ազգասէր կամաց Ձերոց այսոճ, խնայելով պատուական ժամանակի Ձերոյ ինքեան՝ աղաչեմ որոշել զքանի մի յուսումնասէր աշակերտաց ձերոց ի հայացումն այսօրինակ գրուելեաց, յորս արդէն սկիզբն արարեալ տեսի զնոսա յանցեալ հանդիսի հարցաքննութեան, յօգուտ ընդհանուր Ազգիս և ի ցնծութիւն իմոյ մասնաւոր և նուաստ անձին*[2]*։*

*Ազնիւ Պարոն իմ*

*Ձեզ որպէս միշտ՝*

Մ. Դ. Թաղիադեանց[3]

*Փետրուարի 17, 1847*

## 29. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*Կալկաթայից—էջմիածին*

Տեառն, տեառն Ներսիսի ազգասիրի առաքելայատի
կաթուղիկոսի ամենայն Հայոց
Ամենախոնարհ աղերս

*Ողորմած տէ՛ր*

*Թէ գերապատիւ Արարատեան ընկերութիւն ի Կալկաթայ, թէ բովանդակ հասարակութիւն տեղւոյս և թէ ամենախոնարհ ծառայս Ձեր, գրեանս արարաք, ըստ պէսպէս խնդրոց, բայց այնզի կամ ծայրագոյն վեհութեան կամ զբաղանք և կամ բոլոքեցուն մեր անարժանութիւն մինչ ցարդ ակընկալ դիւեցան և յուսոյ շնորհաց պատասխանւոյ՝ երկրորդելս ձանձրութիւն լինի Ձերդ ազգասիրութեան։*

*Ջառաջին հատոր Ճանապարհորդութեան իմոյ հանգանակեալ օգնականութեամբ մերազանց տեղւոյս հրատարակեալ՝ յուսով ընծայաբերեցի ազգասէր տերութեան Ձերոց՝ իբրև դոյզն նշանակ երախտեաց ձերոց՝ ի վերայ մանկութեանս։ Զքանի հատորս ի նոցանէ յանձնեցի պարոն Անտոնի Կէսսալւոյ՝ որ գնայր ի Կոստանդնուպոլիս, և զքանի պարոն Անդրեասայ Գալստեան՝ որ էլ ի Ջուղա, աղաչելով զերկոսին միանգամայն զի մի մի, կամ հինգ, հինգ, յիւրաքանչիւր գրոց իմոց՝ առաջին յաջողականութեամբ առաքեսցէն առ Ազգասէր տերութիւն Ձեր։ Եթէ բարիք ինչ յայնցանէ՝ օրհնեսջիք զԱստուած ի վեր և զազգ մեր ի խոնարհ, իսկ թէ ոչ ողորմութեամբ ներեսջիք իմումս համարձակութեան։ Մնամք Ձերդ ողորմած տերութեան*

*Ամենախոնարհ ծառա՝* Մեսրովբ Դավթեան Թաղիադեանց

*ի Կալկաթայ, 10 մարտի 1848*

## 30. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱԶԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*Ջիւղայից—Կալկաթա*

Իմ ճաշտ և խռով ճա՛յր[1], միշտ զբած և այժմ շփոթած

*Եթէ առաջին սէր քո առ իս նկատես (որ ի կերշէ և ի ցեցոյ ապականեալ), չունիս զայրանալ յիմս աննման վստահութիւն. զի պատուական մասն անձին իմոյ՝ թօշնեալ նուաղեալ Շուշանիս ասեմ, յաւիտենական հրաժեշտի համբուրիւ՝ առաքեմ առ քեզ ի լրութիւն մնացուածոյն՝ զոր ես անբաւական ի վճար[2]։ Ընկալեալ սորա երեկ զվերջին թոշակ. դա ժողովուրդ քոյ է՝ կարօտ և վերջին աղօթից քոց. այր և կին աղօթիւք քահանայի լծորդին, և աղօթիւք նորին լուծանին։ Այո՛ ասեմ զայս և կրկնեմ, զի եթէ թօնթորաս, մեղանչես ընդդէմ հիւրասիրութեան Տովբիթայ կուրացելոյն աչօք, և լուսաւորեցելոյն հոգւով։*

*Ես ազգի կռոն շատ եմ կրեալ՝ ի վեր քան զքոյն, և ոչ վշտացեալ ձանձրացեալ. ըստ որում Աստուած ոչ ուրեք ինձ սահմանեալ վիճակ ընտիր, որպէս թէ իմ եղեալ անիծապարտն Ադամ։ Տայն ջերման քաղէ զոգի իմ, երկարել զբանս չկարեմ. անիծեա՛լ աշխարհ, անիծեա՛լ և սնոտի յոյս կենցաղոյս. հող Շուշանայ քեզ, և քոյն՝ Արարչին տիեզերաց։*

Քոյդ կիսամահ Մեսրովպ

*Ջիւղա, 1855, Մէյի 4*

## 31. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*Չիչրայից—Կալկաթա*

Իմ անճիշաշար տէր տէր

*Ես կենդանի եմ. նոյն և քեզ ցանկամ ի բովանդակ մտաց, բայց ոչ իմովս չարաչար բաղդիւ*[1]*: Մեսրովպից սիրով՝ յանձն առեր զմեծն, արա և զմին վերջինս. տուր յօրինել տապանաքար մի վասն գերեզմանի Շուշանին «Ջունար ստօն» և տուր փորագրել այսպէս.*

*ՀԱՆԳԻՍՏ*

Տիկին Շուշանայ Մեսրովպ Դ. Թաղիադեան, հիմնադրի և առաջին վարժապետի Հայոց դպրոցի Սանդխտոյ որ ի տարիսն 43 հանգեաւ առ Տէր, ի Կալկաթա. յամի Տեառն 1855 մայիս 7:

*Որբէ սգով զայս տապան վշտալից այր իւր:*

*Գրաւեալ եմ ես ի հոգ անփոփման տպարանիս և կարասեաց տընային, առ բերելոյ այդր ի վաճառ. գիտես արդէն 12 հազար ռուփիք անցեալ ի լռութեան սարուցն, տաց քեզ կիսագին, կամ որքանեաւ ինքնդ հաճեսցիս գուցէ երբէք հոգին՝ Եղիայի հանգիցէ յԵղիսէ, և զոր ինև թերի՝ քև առցէ լրութիւն. եթէ լուիցիս ինձ՝ չկարծեմ ստրջասցիս, այլ եղիցին կամք քո:*

*Յատուկ ևս շնորհակալ լինիմ, եթէ ինձ առաքիցես զեօթն հատ թեթևագին փականք (ղուֆլ):*

*Քոյդ խոնարհ և վշտալից* Մեսրովբ.

*Չիչրա, Մէի 15 1857*

# 32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*Չինրայից—Կալկաթա*

### Սրբակրօն և խաչակիր աւագ քահանայի Տեառն Յովհաննու՝ խնդալ

*Վերադարձայ յանցեալ տարի՝ մտախոհ ի վերայ հայրենասէր յորդորանացդ՝ որ յաղագս ելանելոյս ի Ջուղա՝ և պիտանացու լինելոյ Ազգիս ի հոգևոր և մարմնաւոր բարիս նորա։ Զկնի երկար տարտամանաց, մանաւանդ վասն խակ հասակի որդիացելոյն իմոյ Յակոբայ Անանիայ*[1] *ընտրեցի ի վերջոյ ո՛չ զնա անմխիթար թողուլ աստ և ո՛չ զանձն զրկել և զբազմութիւն աշակերտելոյն ինձ յապագայ բարութեանց անտի՝ զորս յուսալի էր յառաջ տանել միաբանութեամբ։ Ուստի որոշեալ նմա, այսինքն Յակոբայ զոր ինչ և ունէի երկրաւոր բարիս՝ բաց ի գրոց իմոց, համարձակեցի և գրեցի առ ազնիւ պարոն Յարութիւն Աբգարեան*[2] *ի 16 Նովեմբերի անցելոյ՝ ընծայեցուցանելով դպրոցի նորա ի Նոր Ջուղա՝ զգրեանս իմ և զանձն ծերունի։ Շնորհակալութի՜ւն արդարև գթութեան նորա, որ սիրով ընկալաւ զերկոսին ևս՝ այլ վասն պատերազմին Անգղիացւոց ընդ Պարսկաստան՝ յապաղեցաւ կատարումնն՝ մինչև ցայսօր ժամանակի։*

*Յանցեալ Ապրիլի ցուցակ արարեալ ամենայն գոյից՝ ի սկզբան այսր ամսոյ յանձն արարի զայնս Յակոբայ. այլ տակաւին երկբայ էի վասն անձամբ զանձն կառավարելոյն։ Ի 11 նմրն ամսոյ գիր ընկալայ ի Կալկաթայ, եթէ յարգելի կնքահայր նորա պարոն Գրիգոր Ս. Մանուկ եկեալ այդր տամբ հանդերձ՝ և փափագէր տեսանել զՅակոբ։ Զարմանալին այն եղև՝ զի մինչ ընթեռնուի զգիրն ի ձեռին՝ հաս և շոգենաւն յԱշամայ երթալ ի Կալկաթա, զոր անակնունելի յաջողութիւն ի վերուստ համարելով՝ աճապարեցի նովին յղարկել զնա, և հետզհետէ գրել թէ՛ իւրն, և թէ՛ յարգելի կնքահօր նորա, որպէս զի մի՛ անօրինիցէ, և միւսն հնազանդեսցի, կալ մնալ ի ներքոյ պաշտպանութեան նորա ցլրումն հասակին գոնեայ։ Առ որ թէպէտ մինչ օրս չընթերցայ ինչ՝ սակայն յոյս իմ լի է անմահութեամբ՝ որ յերկուստէք ևս ընդունելի լիցի նոցա առաջարկութիւն իմ։*

*Ի 15 ամսոյս հրատարակեցի ի լրագրի տեղւոյս, թէ Մէյի 1. էն ամենայն կանխակցութիւն իմ ընդ Անանիայ և Կօ-ի՝ դադարե-*

ցաւ[3]. և ի նոյն ի վաղուին՝ որ կիրակի ևս էր, եկին երկու Անգղիացի պարոնայք, և հրաւիրեցին զիս երթալ ի Կաշառ (անդ՝ ուր մեր բարեկամ պարոն Սարգիս Տիրխօռն է բժիշկ), և վերակացու լինել երկուց դպրոցաց տեղւոյն, խոստանալով տալ ինձ ամսոյ 120 ռուփիս: Պատասխանեցի. «Այսօր խօմ կիրակի է, յետ մտածելոյս գրով յայտնեցից»: Եւ սկսայ վերածել և վերկանել, բայց ըստ որում տեղն Հայ չկայ, և մեր պարոն Տիրխօռի տեղն կալն անհաստատ է, մանաւանդ զի խորհեցայ թէ արդէն իսկ 55 ամք են յորմէ հետէ կամ, և ո՛չ ումեք ծառայեցի, եթէ ո՛չ Ազգիս, և այսուհետև ո՛ գիտէ, ո՛րքան պիտի ապրիմ. թողուլ զԱզգն, և ծառայել օտարաց՝ կամ կորուսանել զայսքան ամաց աշխատութիւնս վասն պորտոյ միայն, օտարոտի թուեցան ներքին կրից և փափագանացս, վասնորոյ վերջին պատասխանի ետու նոցա, թէ ես արդէն իսկ խօսեցեալ էի առն այլում:

Ո՞վ երբէք սովամահ մեռաւ ի Նոր Ջուղա, զի ես հոգացայց ինչ զկենաց իմոց՝ երբ անդր հասանիցիմ: Աստուած որ կերակրէ զձագս ագռաւուց, կարդացողաց առ ինքն՝ կարէ որպէս կամի ողորմութեամբ իւրով ապահովել և ինձ զապրուստ ինչ ի ծերութեան: Ես եթէ վասն ապրստի իմոյ հոգայի ինչ, զիմս այլոց ո՛չ տայի, և բաւական էր: Եթէ զպարապութիւն և զհանգիստ սիրէի՝ ահաւասիկ զերկուսին ևս ունիմ ի մեղկ և ի թուլամորթ քաղաքի այսմիկ: Բայց չէ՜, կամիմ եթէ կեամ, պիտանի լինել ազգի իմում. և եթէ մեռանիմ, ի մէջ ազգիս մեռանել: Ապա թէ ո՛չ՝ այլ ևս ո՛չ՝ հարստանալոյ ակն ունիմ, և ո՛չ ևս պէտք: Ամենայնի՝ որոց ներկայ կարօտիմս՝ է թէ ո՛րպէս հասից անդր:

Ահա՛ յանցեալ բաժանմանէս յիւրերաց մինչ ցայսօր՝ վճիտ անցս և խորհուրդս իմացար թէ զի՛նչ, այժմ թոյլ տուր հայրաբար և զպատճառն մատուցանել Ձեզ, թէ վասն է՞ր գրեմս աշխատ առնել զՁեզ նովիմբ:

Առաջին պատճառն է, որ աշխատութիւնդ ինձ վերայ շնորհ համարելով՝ մին ցուցակ յօրինես վասն ճանապարհի ծախուց, տեղիցդ մինչ ի Ջուղա, եթէ արդեօք ո՛րքան ծախք երթան վասն իմ, միոյ Հայ ծառայի, և քսան կամ 22 արկեղաց. թէ ի ծովու և թէ ի ցամաքի: Եւ այն ո՛չ շատ շռայլ, և ո՛չ ժլատ:

Երկրորդ որ՝ ստոյգ իմանալով գրես ինձ, թէ արդեօք պատերազմն վերջացեա՞լ իցէ, խաղաղութիւնն տիրեա՞լ, և ճանապարհք բաց և արձա՞կ:

Երրորդ՝ որ գրես թէ երբ՞ իջանես ի Կալկաթա, որ կարողանամ շուտով նաւ կամ շոգենաւ գտանել ելից իմոց, քանզի Կալկաթա

*ես բան չունիմ, և ո՛չ իսկ հաճութիւն որ գամ տեղդ ընդունայն ծախս առնել։*

*Եթէ պարոն Մկրտում Այվազեան տեղդ լինի, խնդրեմ իւրն ասել յինէն գիմաց, որ ուր և ծառայէ ներկայ, թող չտայ, յայլ ուրեք չելանէ քանզի եթէ գամ, Աստուծով պիտի ի միասին ելանեմք։*

*Յաւէլ մնամ հրամանոց որպէս միշտ հաւատարի և*
*խոնարհ ծառայ.*

**Մ. Դ. Թաղիդեանց՝**

*27 Մէյ, 1857*

## 33. ՄԿՐՏԻՉ Խ. ՀՈՎԱԿԻՄԻՆ

*Բոմբեյից—Կալկաթա*

**Իմ սիրելի՛ Մկրտիչ**[1]

*Էր երբեմն, յոր ես որպէս վարժապետ քո յԱմենափրկչեան ճեմարանի Ջուղայ՝ կրթէի զքեզ յուսումն, և դու ի թիւս համբակաց մակաղէիր որպէս գառն. ո՛չ իմ և ո՛չ քո ճակատագիր եսուն մեզ զգալ՝ զոր զգամք այժմ. դու ազնուականի սիրով գերազանց եղեր քան զամենայն աշակերտս. և զոր ինչ ի ժամում փոխադարձ քեզ, չելանէ ի վաստակաբեկ գրչէ իմմէ հուն անցողական և շնորհակալուս. ամենաբաւականն Աստուած՝ կշռեսցէ ըստ արժանւոյդ վճար։*

*Միրզա Մահբուր վաղ քաջ պատրաստեալ ինձ տեղի կենօյ ի Ղօլաբայ, տուն պարտիզաւոր յարդարեալ կարասեօք, իբրև տեղի զբօսանաց մերթ ընդ մերթ գայ իւրով բարեկամօք. սորա ի գալն ի նաւ՝ յետ ծանօթանալոյն ասաց ցիս մակուկաւ իջանել ի ցամաք ելի և ես. հասոյց զիս և կառօք իւրով ի Ղօլաբայ. խոստացաւ ըղ-բեռինս իջուցանել յիւր գործատուն. յիշեաց զի և եթէ ունիցիմ ինչ պիտեան՝ ազդ արարից ինքեան. շնորհակալութիւն տալով յիշեցի միայն զհոգ ելանելոյ իմ աստի*[2]*։*

*Շիտակն ասեմ, ի մէջ 5 աւուրց աստ օդոյս մեծ յանձն իմ տեսանեմ. բայց արմատ անագորոյն թաքի՝ ո՛չ քանցեալ յանձնէս. ի նաւի անդ և ոչ սակաւ ինձ վշտացոյց, և այժմ ծանր քան զամենայն հոգ իմ է, թէ ո՞րով ճանապարհաւ ուղղել զգնացս. ծանր է*

*ինձ և ահագին վարձ բեռանցս. եթէ չէր իմ զգուշալ յառաջնորդէն Ջուղայ, յօժարէի գնալ ի վերայ Պարսկաստանի, թերևս յաջողէր ինձ տալ թեթև գնոյ զմասնեանս անդ, և ազատիլ ի ծանրութեանց աստի. բայց կարծեմ ի վերջէ այս լիցի ինձ։*

*Միրզա Մահբուբ ասաց ինձ այսօր. «Բաղալայ հաճի Ալմասին հանդերձի չունել ի Բուշեր. եղանակն ևս բարեխառն՝ պատեհ ինձ թուի եթէ հաճեսցիս նուվաւ ելանել. ունիմ թեթև վարձով քեզ ճանապարհորդել». խոստացայ զվերջաւորականն ասել ի վաղիւ բայց այսուամենայնիւ չիմանամ զկատարածէ, և թողում յաջողելոյ Տեառն։*

*Ի պարոն Յարութիւն Յորդանանէ և ոչ սակաւ գոհ եմ, վասն ստէպ այցելու ինձ լինելոյն. սա ևս ինձ խորհրդատրէ խաղալ գնալ կողմամբ Պարսից. տեսցուք զո՞ր յաջողեսցէ ինձ Տէր, գրելոց եմ քեզ վերստին ի պատեհի[3]։*

*Ի դիմաց իմոց տո՛ւր համբոյր յարգելի եղբօրդ աջոյն, ներիցէ ինձ սակս ծուլանալոյ իմ յինքն յատուկ գրելոյ։*

*Հաւաստեաւ մնամ քոյդ շնորհապարտ*

Մեսրովպ Դ. Թաղիադեան

*Ի Բոմբայի, 25 Նոյեմ. 1857*

## 34. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

*Բուշերից—Նոր Ջուղա*

Առ ազնիւ պարոն Յարութիւն Աբգարեան, տնօրէնին դպրոցիս ի Նոր Ջուղա

*Սիրելի իմ Յարութիւն*

*Վաղը վեր կելնենք ի Բուշերայ*[1]*։ Եթէ Տէրն ամեն ինչ յաջողեսցէ յուսամ տեսնել յանձդ սիրելոյ համբարձման տօնին։ Սակայն նուազութիւն առողջութեան իմոյ և կասկածանքս ի կատարելոյն մեծ փափագիս, պարտաւոր առնէ զիս խնդրելոյ յանձից պատուական։ Եթէ գայ առ Քեզ թուղթ իմ այս, պաղատիմ ի մէջ ամենայն զբաղմանց ձերոց, շնորհ արասջիք կերպով մի հանդերձ գտանել զայսանղ և ի Բոմբայի մասեանքս բազում որք ժողովեալ իմ զ8 սնդուկեայ, աղխել զայն կղբօք անլուծանելեօք և թողուլ ի պահս Միրզայ Մահբուբին պտուն խր ի Ղօլաբայ։ Ջաչօք արտասուոյ ի Բուշեր թողիմ ես 4 սնդուկ զոր կարեաս գտանել ի գործատուն Նուբար, ծանօթին Բաղալայ Հաջի Սլմասին, որին պարտեպան լինիմ շնորհակալ*[2]*։ Եթէ գիտեսցէիր տարապարտ դժուարութիւնքն իմոց տեղափոխելու զայնք Կալկաթայէն ի Բոմբայ և ի Բուշեր, չէիր բնաւ դատի կամքս թուլութեամբ։ Այլ հնար չկայ և չունիմ այլևս զվարձ աշխատեալ այսր յում ամեն ինձ հետ ճամփայ առնելու։ Աղաչեմ զքեզ ժողովեալ ի Ջուղա գործքս բազում, որ արդ սոսկ յազգիս օգուտ լինիցին և ոչ այլևս տարաբախտ անձիս։*

*Արտասուոյ աչօք քո վշտակից* Մեսրովբ

*Ի Բուշեր, 16 ապրիլ, 1858*

# ՊԱՏԱՌՈՒԿՆԵՐ ՕՐԱԳՐԻՑ

## 1. 1831 ՀՈՒՆԻՍ

*Որ ծնաք ի ծառայել Ազգի մերում, և ի նմին զարգացեալ ի մանկութենէ, թողաք զեպիսկոպոսական ճեմարանն անգղիացւոց ի Կալկաթա, յուսով առաւել ծառայելոյ Հայրենեաց և հասաք ի Նոր Ջուղա[1]. զհետագայ խնդիր հոգևորականաց և աշխարհականաց նորա ոչ արհամարհեցաք. և կարօտ որքան և էաք ծնողաց և ազգականաց մերոց՝ լաւ համարեցաք հոգևոր կարօտութիւն զՆոր Ջուղայ լցուցանել՝ քան զմեր ինքեան. և այն՝ ոչ այնքան վասն վարձու, որում և դրամօք ևս օգնեցաք, քան եթէ վասն սիրոյ և պարտեաց։*

*Տամք աստանօր զօրինակ խնդրագրոյն, և ի հետևեալ* թիւս մեր[2] *կարճ ի կարճոյ զհետագայսն անցանեմք, թերևս շարժել կարասցուք զգթութիւն եկեղեցւոյն Նոր Ջուղայ՝ որ միշտ օտարոտի խեթիւ և խորդութեամբ հայեցաւ ի տկար վաստակս մեր։*

Պատճէն խնդրագրոյն
յարգոյ պարոն Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց

*Եթէ մարդ ծնեալ վասն Հայրենեաց, պարտ է կեալ վասն Հայրենեաց, և ծառայել նմին, որքան առաւել ևս՝ եթէ կեցցէ ոք ծառայել ոչ միայն հայրենի ուսմանց և բարեկարգութեանցն արտաքնոց, այլ և ներքին կրօնից և աստուածպաշտութեան նոցա։ Ապաքէն ի բազմաց հետէ ցանկացեալ և ցարդ անկատար մնացեալ ի մեզ հաստատութիւն ճեմարանին ի Ջուղա, և հետզհետէ յանհրահանգութեանց խոպան անհետացեալ ուսման ի մէջ հասարակութեանս բնակելոյ ի Ջուղա, համարեա թէ գլխովին խոնարհեալ է պատիւ եկեղեցւոյ և յարգ հայրենի աստուածատուր հաւատոյ մերոյ առ անուղղայս ոմանս ի մերայոց, որք սարտուցեալ ի ստենէ մօրն՝ որ ծնաւն զնոսա՝ գնան ի գիրկս հռովմէական գայլոցն, որք ի զգեստ ոչխարաց մտեալ ի հօտն Քրիստոսի, խարդաւանեն զնոսա ի խոհերս մարդապաշտ մոլորութեան և յաւիտենական կորստեան հոգւոյն իւրեանց[3]։*

*Յայս ամենայն հայեցեալ մեր ապաքէն՝ ազգովին խնդիր մատուցանեմք առաջի ազգասիրութեան ձերոյ (զի Թէպէտ դժուարին է վասն բազմամեան օտարութեան ձերոյ ի հայրենեացդ և կարօտութեանըդ, սակայն դեռ ևս որպէս վայելէ ճշմարիտ գիտնոց և ճշմարիտ բարեպաշտից) զօգուտն հասարակաց յաւէտ ընտրելով քան զշահ անձին առանձինն՝ յանձն առջիք դաստիարակել ըզմանկունս մեր զոնեա՛յ տարեկան ժամանակաւ և եթ։ Եւ առ այս որպէս աներկբայ եմք մեք Աստուծոյ ձեզ վարձատրութեան, նոյնպէս և ազգային միաբերան շնորհակալութեանս մերոյ և օրհնութեանց հազարաց ի կեանս և ի զարգացումն կենացդ պատուականացդ։*

*Ողջ լեր բազում ազգասիրութեամբ ի պարծանս մեր։*

*Եղև յԱսպահան ի Նորս Ջուղայ յամի Տեառն 1831, մայիսի 10-ին։*

*Սրբոյ Ամենափրկչի աթոռոյս հոգաբարձու յաջորդ* Յակոբոս վարդապետ
Տէր Մարգար Տէր Կարապետեան
Գալստեան Բարսեղ
Մկրտիչ Ջօրաբեան
Թաթեոս Աբգար
Գէորգ Մանուկ
Տէր Յարութիւն Յակոբեանց
Տէր Ղուկաս Տէր Գէորգեանց
Խ. Տէր Մաթեոս Սարգսեանց
Տէր Դաւիթ Մկրտիչեան

Տէր Աբրահամ Տէր Կարապետեան
Տէր Կարապետ Գրիգորեան
Տէր Գալուստ Յովսեփեան
Յարութիւն Տէր Յովհան
Խաչիկ Մարտիրոս
Բարսեղ Յարութիւնեան
Մարգար Խան Մ. Դաւթեանց
Գրիգոր Պետրոս
Տէր Միքայել Տէր Յովհան
Բեքայիմ Ծատուր
Աստուածատուր Խաչիկեան
Կարապետ Բարսեղեան

## 2. Ջուղայ, 1831 ամի

*Խնդրագիրք հաստատութեան առ ձեռն պատրաստ դրամ ոչ ունէին։ Ամենափրկչի վանքն 75 Թուման փոխ էառ ի մէնջ և ընդ անմիջական վերահասութեամբ մերով ձեռն ի գործ արկ պատրաստել զամենայն զկահ և կարասիս նորա՝ ըստ եւրոպականս նորաձևութեան։ Ընտրացաւ լայնատարած եկեղեցի և գաւիթ սրբոյն Ստեփանոսի և ի սկզբան յուլիսի 1831. Կարապետ արքեպիսկոպոս հայրապետական տարազու*[1]*, և ընդ նմին հոգևորականք և աշխարհականք միահամուռ հաւաքեցան ի դուռն եկեղեցւոյն. իբրև հարաք զշիշ գինւոյ ի դրուագ անդր գոչելով Ամենափրկչեան ճե-*

մայրան, հեղաւ անապակն, բացաւ դուռնն և դրոհ ետ բազմութիւնն ի ներքս՝ երգելով առ Հոգին Սուրբ. «Այսօր երկնայինքն ուրախացան, ընդ երկրաւորաց նորոգումն»[2] և այլն։ Սկիզբն արարաք անուշակ ծառայութեան մերոյ առ ազգն, և ի նմին շարունակեցաք ցամիսն նոյեմբերի այնր ամի[3]։

Զոր ինչ առ ձեռն դրամ էր մեր՝ փոխ տուեալ էաք աթոռոյն, և միայն յամսոջ հինգ թուման վարձս առնուաք ի կերակուր մեզ, և այն ևս՝ քանի նոր էր, ժամանակին ստանայաք, և երբ հնացաւ՝ կռկռալով և կռուով։ Յարեան նաև ոմանք և յարուցին ընդդէմ ո՛չ միայն զլեզու իւրեանց՝ այլ նաև զահիկայս ոմանս ի Լոմբոնցւոց։ Բայց մեք դեռ լաւութեանցն ակնկալեալ՝ մնացաք մինչև անասելի բռնութեամբ հալածեցաւ Տէր Կարապետ արքեպիսկոպոս յաթոռոյ և ի հայրենեաց իւրոց։

Այս յայտնի ապերախտութիւն Ջուղայեցւոց առ ազգակից, առաջնորդ և փրկիչ իւրեանց, որպէս նաև օրըստօրէ կռկռիք ի մասին դուզնաքեայ վարձուցս ի կերակուր միայն, առիթ եղին մեզ՝ զմերն մեզ ստանալ և հետևել առաջնորդին՝ առ որ հասաքն ի Ղում քաղաքի՝ դէպ ի գնալն իւր ի սուրբ Էջմիածին»։

## 3. ԱՆՑՔ

ՀԱՆԴԻՍԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԵԱԼՈՅ Ի ՊԱՏԻՒ ԶՕՐԱՑՆ ԱՆԿԵԼՈՑ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԱԼ ՅՕՐԱԳՐՈՒԹԵՆԷ ՄԵՍՐՈՎԲԱՅ ԴԱՒԻԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ։

<1833, մայիսի 9>

Այն ինչ դայր հասանէր ժամանակ ոսկեղէն առաքինութեան Այրարատեան աշխարհի առնել երախտագիտութեան ընդ վասն հաւատակցութեան նահատակութեան քաջ զօրապետաց և զօրաց նորին կայսերական մեծութեան անկելոցն առնել ի մեծ պատերազմին ընդ Պարսից վասն ազատութեան Սրբոյ Էջմիածնի, և հայրենեաց Հայաստանի։ Այնց որք յամին 1827 յամսեանն օգոստոսի ի 17, այն ինչ դառնէր մեծ բանակ զօրացն Ռուսաց յայնկոյս լերինն Արայի և ի Սաչլու անուանեալ տեղին, զեկուցեալ ժառանգի թագաւորութեանն Պարսից Աբբաս-Միրզայի, թէ չէր յամրոցի անդ Սրբոյ Էջմիածնի աւելի քան զհինգ հարիւր թիւ զօրաց, և ստուգել

զբաղմանց ի նոցանէ տօթահար հիւանդութիւն պահ պատեհ իւր վարկուցեալ զայն իբրև դարանակալ յեղակարծ յարձակէր ի վերայ ութևտասն հազար հետևակօք, և երկոտասան հազար հեծելազօրօք։ Եւ մարտ եղեալ ընդ քաջացն, որ ի ներքս հայեցեալ ի սակաւութիւն զօրացն ամրոցապահացն, և ի վտանգն մօտալուտ որ բերանաբաց ի վերայ գայ կլանել զշինութիւն Հայաստանեայցն Աթոռոյ և երկրի միանգամայն, հրեշտակ զանխուլ առ սպարապետ զօրացն ի Սաշլու փութացուցանեն, ուրանօր Կրասօվսկի Աթանաս Իւանիչ որպէս և զօրք իւր առ հասարակ վառեալք, որպէս երբեմն խաչակիրք ազատութեամբ մերոյն Երուսաղէմի հատուած առնեն ի բանակէն զօր երկու հազար, և ի տօթագին եղանակի ամառան ընդ դժուարանց ուղի լեռնային յառաջ խաղացեալ գան հասանեն ի գլուխ այգեստանեայց Սրբոյ Էջմիածնի ընդ հիւսիս։ Զայն տեսեալ նորին արքայազն բարձրութեան Աբբաս-Միրզայի, յանակնկալ պահու, մինչ նոքա զզէն թողեալ ի զով ջրոյ զիջանէին, անկանի ի վերայ նոցա, և անդէն ոգւոց ծարաւեաց ջրոյ տան զծարաւ անմահութեան։ Սկիզբն լինէր մարտին և ընդհարուստ ժամս սոքա ընդ նոսա պատերազմեալք թէպէտ և անկան թուով 1131, այլ ի Պարսիցն բիւրաւորաց դիաթաւալ յերկիր կործանեցին մինչ հինգ հազար ոգիս և զմնացորդսն ի փախուստ դարձուցեալ՝ գնեցին արեամբ զազատութիւն Էջմիածնի, և ընդ հոգւոցն թռուցելոց յերկինս ամբարձին զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան նորա։ Վասն որոյ և Աթոռ և Ազգ Հայոց՝ ի տրիտուր այսչափ երախտեաց նոցա, յետ ընդունելոյ զբարեշնորհ հաճութիւն նորին կայսերական մեծութեան, յիններորդի ամսեան Մայիսի, յութերորդ ժամուն կազմեցան պատրաստեցան երկոքին մեծ Քահանայապետն մեր, տէր Եփրեմ հրաժարեալ, աստուածացեալն ի մարմնի և Ասպետաց Ասպետ և տէր Յովհաննէս աստուածընտիր կաթուղիկոս և Ասպետ, և ուխտ համօրէն եկեղեցւոյն ընդ նոսա ի ներքս։ Իսկ արտաքոյ աշխարհիկ մարդիկ թուով յիսուն հեծեալք և պատանեակք քառասուն զինուորեալք ըստ ամենայն կազմութեան, հանդերձ շեփորայիւք և տափօք։ Անդ ի հնչել երրորդական զանդակաց, ել ուխտ եկեղեցւոյն արտաքս ուրանօր զծերունին սրբազնութիւն ամբարձեալ յանձնեղունեայ կառս հովանոց ունելով ի վերայ. ձեռնասուն նորին Ասպետ Յովսէփ եպիսկոպոս Կարբեցի կացեալ ընդկախ աստիճան կառացն, և գիրկս արկեալ կազդուրէր զպատկառելին ծերութիւն, իսկ աստուածընտիր քահանայապետն Յովհաննէս հեծեալ ի վերայ ահապարանոց, այլ նազաքայլ նժուգի, ըննեակ եպիսկոպոսօք,

33 վարդապետօք, տասն քահանայիւք, ութն սարկաւագօք և 34 դպրօք, դրօշ խաչանիշ և գաւազանածափ ունելով առաջոյ, և սուրհանդակք երկու, յուղի անկան։ Պատանեակք զինուորեալք տաս աստի և տաս անտի յառաջէին բոլանդակ խմբին, զկնի դրօշակիր վարդապետք հեծեալք, ապա կառք ծերունազարդ հայրապետին և ասպաստանեակք երկու զարդարեալ անկուածակիտ ոսկեհուռն սպասուք, զկնի Հայրապետն Յովհաննէս իւրով խորհրդական եպիսկոպոսօք, և պալատականօք, և հուսկ ուրեմն հեծեալք ի վարդապետաց և յաշխարհականաց խուռն բազմութեամբ։ Այլ աստանօր իրանց ստուգութիւն ստիպէ զիս Նրբանալ ի ցանկալին խոնարհութիւն աստուածընտիր հօտապետիս Յովհաննու, որ ըզհայրապետական զամենայն մեծ վայելչութիւնս, յառաջեալ և հետևեալ կառաց ծերունի Հայրապետին, ինքն իբրև սոսկական եպիսկոպոս՝ հետևէր նմին։ Այսօրինակ շքեղութեամբ քերեալ զվանիւք Սրբոյն Հռփսիմեայ ընդ յարևելս հիւսիսոյ այգեստանեայն հասաք ի տեղի անկելոցն¹, ուրանօր նոյին պայծառափայլութիւն կնեազ Վասիլ Յովսէփեան Բեհբութեանց իշխան կառավարութեան նահանգիս Հայոց, և կնեազ Մովսէս Զաքարեան Երկայնաբազուկ Արղութեանց զօրապետ, որ եկեալն էին ի տեղին յառաջագոյն քսանևհինգ ռուս աստիճանաւորօք, և քառասուն Հայ և Տաճիկ ասպետօք, և բազմութեամբ երևելեաց և աներևելեաց՝ ընդ առաջ ելին Քահանայապետացն մերոց, և օրհնեցան ի նոցանէ։ Գտաւ անդ ի ժամուն և կառավար գաւառին Կարբւոյ 80 հեծելովք, ևս և ի կողմանց կողմանց արք յայտնիք ոչ նուազունք։

Անդ առ եզերբ առուակին, հարեալ էր վրանս երիս գործակալ Աթոռոյն սրբազան Ղուկաս եպիսկոպոս մի վասն երկուց Քահանայապետացն մերոց, մի փոխան եկեղեցական խորանի, և միւս վասն նոցին պայծառափայլութեան։ Արկեալ էին և Աթոռք կրկին սուրբ քահանայապետին անդ առ հիմնափորաւ արձանին, իջեալ ի կառացն ծերունւոյն. և զեմփիորոն միայն զլանջօքն առեալ բազմեցաւ իմին։ Իսկ տէր Յովհաննէս կաթուղիկոս եկեալ ի վրան անգր, զգեցաւ զիւր եպիսկոպոսապետական զգեստ ըստ ամենայն լրութեան, նոյնպէս և ի միւսումն վրանի չորս եպիսկոպոսունք, ութն սարկաւագունք, ևս և տապանակիրք, խաչփառակալք, խաչակալք և մոմակալք ամենաշուք վայելչութեամբ ըստ իւրաքանչիւր պաշտաման։ Ապա և ուխտ համօրէն եկեղեցւոյ ի շուրջառ և ի շապիկս դիպակեայս և անկուածոյս համանգամայն զարդարեցան։ Անդ էր տեսանել եռանդն իմն հայրենասիրութեան ի հոգի բարձր սրբա-

զան Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարացւոյ աւագ լուսարարի սրբոյ աթոռոյն և ասպետի, որ մղեաց զնա զամենայն հնութիւն շքոյ և վայելչութեան պահարանաց Էջմիածնի, ցարդ անծանօթն և իմ միաբանից նորա հանել ի լոյս արևու ի պատիւ կայսերական Նահատակաց։ Ելեալ ապա յիւրաքանչիւր վրանաց անտի հոյլք ուխտին եկեղեցւոյ, բազմեցաւ Քահանայապետն Ս. յԱթոռ իւրում ի ձախմէ ծերունւոյն և իւրաքանչիւր ի չորից զգեստաւորեալ եպիսկոպոսաց կացեալ առ մին մի անկիւն հիմնափորին, և հոգևորականացն պար առեալ կատարէին զհանդէս հիմնարկութեանն։ Ապա առեալ Ասպետ Յովսէփ եպիսկոպոսի Կարբեցւոյ զքարինս անկեան մատոյց մի մի առ Քահանայապետսն մեր և յօրհնելն զնոսա տարաւ ինքնին զետեղեցոյց յանկիւնսն, հուսկ ուրեմն բերաւ արկղն քարեղէն, յորում էր կապարեայ տախտակն հիշատակաց՝ գիր ունելով ի վերայ օրինակ զայս. «Հիմնեցաւ արձանս արդեամբք Սրբոյ Էջմիածնի յամին 1833, Մայիսի 9-ին ի կայսերութեան Ռուսաց առաջին Նիկողայոսի, ի հայրապետութեան Հայոց տեառն Եփրեմայ հրաժարեալ և Յովհաննու Կարբեցւոյ, և յիշխանութեան կառավարութեան նահանգիս Հայոց կնեազ Վասիլի Յ. Բեհբութեանց՝ ի յիշատակ զօրապետաց և զօրացն Ռուսաց, թուով 1131, անկելոց աստ յամին 1827 յօգոստոսի 17 ի պատերազմին ընդ Պարսից վասն պաշտպանութեան Սրբոյ Էջմիածնի»[1]։ Յոր արկեալ նա և դրամս նորահատս ոսկւոյ և արծաթոյ ածխով և կրով շաղախեալ ամրացուցին ի հիմնամիջի անդ, և յաւարտելն, աղաղակեաց բազմականն հետևելով ծերունւոյն՝ «կեցցէ կայսրն». արձակեցան հրացանք, և հնչեաց շեփորային ահեղագոչ։ Յետ որոյ մի ի չորից զգեստաւորեալ եպիսկոպոսաց անտի Ասպետ Միքայէլ Սալլանթեան[2] նորընծայ Եպիսկոպոսն, ասաց դրուատ գեղեցիկ ի վերայ հայրենասիրութեան և հետևեալն նմին երախտագիտութեան։ Հուսկ ուրեմն կատարեցին և զկարգն պաշտաման վասն հոգւոց անկելոց, երդօք և մոմեղինօք, և մեծագոյն ևս հանդիսիւ. դարձ արարեալ ճաշեցին ի հայրապետական պալատն Սրբոյ Էջմիածնի, ոգիք իբրև երեք հարիւր։

Այլ ևս, որ անդստին առաջինութեանց ազգիս սիրեմ լինել ջատագով քան արտաքին վայելչութեանց, ոչ մոռացայց յիշել աստանօր զհայրասիրութիւն իմոյ երկրացւոյ։ Վասն զի այն ինչ ծերունին խոնջեալ ի կառացն դրդուելոյ և զարեգակնային տօթոյ՝ այլ ևս չկարէր բազմիլ ի կառս անդ, լծակս աստի և անտի Աթոռոյն արկեալ և ի նմա իբրև ի պատգարակի զպատկառելին ծերութիւն

հանդարտ հանգուցեալ բարձին ի թևս իւրեանց պատանիք առոյգք, և մեծ ջերմեռանդութեամբ ածին զնա յէջմիածին երիւք մղոնիւք ճանապարհի։ Յօժարէին արդարև որդիք սուրբ. կրել զնա ի վերայ ուսոց, և նշան տալ աշխարհի, թէ որպէս առ հինսն Իսրայէլացւոց քահանայք բարձեալ ղտապանակն Աստուծոյ անցանէին ընդ Յորդանան, նոյնպէս և այժմ ճշմարիտ քահանայապետք զկենդանի տապանակ կրող հին և նոր կտակարանաց և ճշմարիտ մանանային յուս բարձեալ բերին յիւր դերագահ սրբարան։ Զնոյն առնէին արդարև և մեծագոյնք ասպետաց յամենայն ազգաց անդ հաւաքելոց՝ եթէ ներէր նոցա սրբազանն խոնարհութիւն։ Որ զլխովին մեռեալ աշխարհի և կենդանի Աստուծոյն երևէր։

## 4. 1833 ՀՈՒՆԻՍ, ԷՋՄԻԱԾԻՆ

Հասաք ի սուրբ էջմիածին, վկայեցաք օծութեան տեառն Յովհաննու Կարբեցւոյ[1], և յանձն առաք զգործ գլխաւոր վարժապետութեան մայր ուսումնարանի սրբոյ Աթոռոյն և զխորհրդական գրագրութեան երկուց Կաթուղիկոսացն Եփրեմի և Յովհաննու, որպէս և զսրբոյ Սինհոդոսին էջմիածնի, որպէս ահա Դաշնագիրս ցուցանէ.

«Յանուն ահաւորին Աստուծոյ կապակցիմ ընդ սրբազան Սինհոդոսի, կատարել զպաշտօն վարժապետութեան արուեստից ազատականաց, և զպաշտօն խորհրդական գրագրութեան Կաթուղիկոսի ամենայն Հայոց և սրբազան Սինհոդոսի, անարատ խորհրդապահութեամբ, արիութեամբ և անկեղծ հաւատարմութեամբ՝ երեք տարի ժամանակաւ, տարին հարիւր և քսան թուման վարձու։ Եւ այս առանց խմիք տրտնջանաց ցորչափ պաշտօնք իմ յառաջ դնան կանոնաւոր խղճմտանօք և օրինաւոր կարգադրութեամբ։ Արտաքոյ սոցա՝ ոռճկի մասամբ չունիմ ինչ պահանջելիք, ի սրբազան կառավարութենէ Սրբոյ էջմիածնի[2]։

Մ. Դ. Թաղիադեանց

Յամի տեառն 1833, Յունիսի մուտն
ի Սուրբ էջմիածին»:

Վերոյգրեալ կապակցական գիրն Մեսրովպայ վարժապետի Թաղիադեանց ընդունելի եղև սրբազան Սինհոդոսիս, վասնորոյ և ստորագրի.

Աւագ լուսարար Բարսեղ արքեպիսկոպոս
Գրիգոր արքեպիսկոպոս Արթուինցի
Վենապետեան Յովսէփ եպիսկոպոս
Ղուկաս եպիսկոպոս
Ստեփաննոս վարդապետ Արարատեանց
Յովհաննէս վարդապետ Շահխաթունեանց

*Համր 97. Յունիսի 16, 1832*

## 5. <1834, ՆՈՐ ՋՈՒՂԱ>

*«Յետ հասանելոյ մեր անդր[1] և ի կարգի դնելոյ զուսումնարանն, թէպէտև կարողական գրեան ի ձեռին ունէաք բանաբարել ի մեզ զամենայն օտար ուսմունս, այլ բնաւ ո՛չ ի կիր առաք զնոսին։ Շատ եղև մեզ ի շնորհացն աստուծոյ ունել միայն զԱթոռն՝ և առաւել քան զերեսուն ի նախկին աշակերտաց մերոց՝ որք կրթէին ի վանս լատինահայոց՝ ինքնակամ ինքնայօժար դիմեցին առ մեզ։ Եւ գործն յաջողէր Աստուծով ի սաստիկ սովու և սղութեան ժամանակին[2]։ Տարեկան վաթսուն թումանի վարձու, որ հազիւ բաւական ծառայից և ձիոց մերոց՝ յանձն առաք զպաշտօնն մինչ և հասանիցի օգնականութիւն կտակաբաժնին։ Կառավարիչք ամենայն հաւատարմութեամբ և գրեա թէ իւրաքանչիւր անխնայ զկեանս մատուցանելով՝ անցուցին զամն առաջին, և ոչինչ պատասխանի ընկալան ի Մադրասայ[3]։*

*Տէր Յովհաննէս սրբազան առաջնորդ մեր ճգամբ և աշխատութեամբ հոգևոյեաց և զամն երկրորդ. բայց և յայնժամ ոչ ընկալան զմխիթարութիւն ինչ ի Մադրասայ՝ մինչև յերրորդումն առ հասարակ թուլացան ի չքաւորութենէ ժամանակին, և սկսան պարսկօրէն քան ազգօրէն վարիլ ընդ մեզ։ Աւուրն պարէնի ապաստան եղեալ՝ դիմեցաք գրով առ լիակատար դեսպանն Ռուսաց ի Պարս, գտաք զիրաւունս մեր ընդդէմ համախմբեալ չարախօսութեանց ժամանակին՝ և ի բաց գնացաք[4]...»։*

## 6. 1838 <ՄԱՅԻՍ>

*«Երբ հասայ ի Պոլիս՝ ուր օրէն յետ Համբարձման տօն էր[1], և թէպէտ մի կողմից սաստիկ մտածողութեան մէջ էի, որ քիսակս*

դպրոցի տղոց ձեռք հասած ճնճղուոյ բունի պէս դադարկ էր, բայց միւս կողմից քիթս այնքան էր բարձրացել, որ աչքերս համարեա՛ թէ նորանից արտաքոյ ուրիշ առարկայ չէր տեսնում. սակայն դեռ ես գնացի պատրիարքարանն մեր, որ ինձ մին նշանց տամ ս. պատրիարքին[2]։ Բայց վերարի Կիրակի՛ս էլայ, յորժամ լսեցի թէ սրբազանն քաղաքից դուրս մերձ 6 մղոնօք հեռի Փրկիչ ասացեալ Հայոց հիւանդանոցն էր գնացել։ Պիտի ես այսքան ճանապարհն ոտով գնայի՝ որն որ երբէք հաճելի չէր ինձ՝ ուղորդն ասեմ քեզ. անճարն կոտրի բանջարն. քանի գնացի, քիթս սկսաւ ցածանալ՝ դոր մին փչած տիկ ծակես մախաթով՝ որ փուքն դուրս գայ։ Տեղն հասանելէս գրեթէ բոլոր վաստակս մոռացայ, ողորմութեամբն Աստուծոյ այնքան ազգիս բազմութիւն մի տեղ ժողովուած տեսանելով. կամեցայ մին նի գնամ ժամ, բայց բարեբախտ ի՝ որ կողերս չվիրաւորեցան. պատճառ ամբոխն այնքան մեծ էր, ելմուտքն այնքան անդադար, և ես այնպէս մին նորաձև հրէշի՛, Եւրոպացի զգեստով և Պարսիկ գուդակով, որ խելք արարի շուտով յետ կրեղվիլ։ Ժամն աւարտած էր, և այս բազմութիւն միայն հետևակ ուխտաւորք են։

Պատրիարքն՝ մեր երևելի երևելի ամիրաներով և այլ պատուաւոր անձամբք նախաճաշի սեղանումն էր, վերելի, մին օդապարկաձև գուդակով քահանայի հանդիպեցայ, և հարցի.

«Ո՞ւր է սրբազան պատրիարքն»:

«Ի՞նչ կընես,—ասաց նա,—պատրիարքն հոն նստած նախաճաշիկ կընէ կոր»։ Ասացի.

«Բան ունիմ նորա հետ»։

«Հրամեցիր,—ասաց,—հրամանքնիդ ալ նախաճաշ ըրէ»:

«Չէ՛, շնորհակալ եմ,—ասացի,—ես միայն սրբազանի տեսութեան համար եկի տեղս»։ Ասացի իրաւի. բայց շատ փոշիմանեցայ, քանզի այնքան ճանապարհ անօթի գնալով այնքան ի քաղցել, որ աղքնիս ծափին տալման։ Յոյս ունէի մին անգամ ես հրաւիրէր, ուստի և մաքումս դրի, որ սիրով ընդունիմ, բայց սղալեցայ, քանզի մին զարդարած սենեակ ցոյց տալէն յետ՝ աներևութացաւ իմ սրբակրօն հիւրընկալն, և ես մնացի Մեդուսայ պէս սովամահ՝[3] ի մէջ այնքան առատութեան։ Արժէ՞ր ինձ այս դիպուածն, քանզի օտար տեղ նազ ու տուզ անելոյս այս առաջինն չէր։ Ինչ և իցէ, գլուխ ուռած նստայ մին սիրուն կառաւատի (բանքի) վերայ, և եթէ տեղւոյ վայելչութիւնն և հանգիսի նորութիւնն չգրաւէին իմ ուշադրութիւնս՝ քաղցն պիտի աւելի ես նեղէր զիս։

Երբ և եկն շատ խիտ առ խիտ էր, հասարակաց զգեստն՝ միաձև գուղականին՝ կոսրակ, և մաշկինին՝ կարմիր. ա՛յս կերպ առարկայք շատ տեսնվեցան, յորոց մինն, մին պատուական ծերունի, իմ սենեկի դուռն կիսաբաց առնելով դէպ ի ներս ծիկլուկ արար։ «Հրամայի՛ր,—ասացի,—հայր...»։ Եկաւ։ Միայն հասակին պատիւ տալով՝ կիսատ վեր կացայ կանգնեցայ և ձեռօք տեղ նշանակելով՝ հրաւիրեցի որ նստի. որպէս թէ ես էի տան տէր։ Հեզահոգին շընորհակալի պէս նշանց տալով իւրն՝ նստաւ։ Մտքումս ասացի՝ կարելի է որ սա սրբազան պատրիարքի Քասա վարդարամ, քուչա Բէգօզարամներիցն լինի, վասնորոյ փոխանակ տեղիք տալոյ հեզահոգւոյն որ ինքն սկսէր, ես ինքնին յառաջացայ։ Լաւ էր որ նա կուշտ էր, և ես անօթի, ապա թէ ո՛չ՝ չգիտեմ ամպարտաւանութիւնս մինչև երկնից քանի՞ աստիճանն պիտի բարձրանէր։ «Այսօր մեծ տօն այ տեղս մեր Ազգի համար»,—ասացի։ «Հրամեր ես,—ասաց,—Սուրբ Փրկիչ հիւանդանոցին տարեգլուխ նաւակատիքն է»։ «Հրամանքդ էջմիածին տեսե՞լ ես», հարցի։ «Հրամեր ես,—ասաց,—ու հոն կեցեր եմ մին ժամանակ. ի՞նչպես այ ծերունազարդ Եփրեմ հրաժարեալ հայրն»։ «Ողջոյն և օրհնութիւն ունի,—ասացի,—բայց ներկայ շատ այ ընկել»[4]։

Այս ասութեանս ժամանակում այնպիսի մի տխուր երես շինեցի, որպէս մին օրիորդ իւր դեղ ըմպելու ժամանակումն կը շինի, և նա համարեց, որ իրաւի մեծ կապակցութիւն պիտի լինէր սրբազնասուրբ Կաթուղիկոսի և իմ մէջ։ Ծոցիցն հանեց մին ոսկեջրած թութունաման, չգիտեմ մէջն ևս նո՞յն էր, թէ ոչ, և բերաւ ինձ մօտ՝ հրաւիրելով որ մին պտղունց թութուն քաշեմ։

Թէ սոսկ դիպուած կը համարես այս բանս, և թէ յատուկ դիտմամբ արարած, տվածայ կամացդ. բայց արդարն այս է, որ ես երբ որ մատումն եպիսկոպոսական մատանին տեսայ՝ ծոցն տրիժան մտած պարտիզպանի պէս տեղիցս վեր թռայ, կանգնեցի. միտքս սկսում էր մոլորիլ, ընկերական զրուցատրութենից լեզուս կապ կերաւ, քարէ պատկերի պէս մին փոքր անշարժ կացայ, բայց յետոյ ամէն խելք, եթէ որ ինչ և կէր, գլուխս հաւաքեցի, և ասացի. «Տէր պանդուխտ մարդն որ կայ՝ կոյր այ, ես եթէ մինչ ի կէտս հրամանոց չեմ ճանաչել, ներէ՛ր, և արդարն խոստովանիր դու ո՞վ ես»։ Պատասխանեց հեզահոգին, թէ՝ «Հոս մարդուն պակաս ըլլալուն համար՝ զիս պատրիարդ կը կոչեն»։ Պատրիա՛րդ. որ ոք ամպի որոտմունք, թնդանօթաց արձակմունքն ու երկրաշարժական ճայթճայթմունք այսպէս ուժգին չէր թուացել ինձ՝ որպէս պատրիարգ բառս։

Մարդ՝ որից որ ես ակնկալի որ ոք պաշտօնիւ դատարկ քսակս լցնել, այնքան խոնարհ, հեզ, և ճշմարիտ հոգւով աղքատ երևաց, մինչ ես ափսոսացի որ փող չունի հանեմ իւրն տամ։ Այս բանումս թէ նա թէ ես հաւասար էինք. նա անընչասէր և հասարակաց օգնական կալովն՝ կարծեմ մին սև փող չունէր, և ես դատարկ ղլըտելով և ինչ ունի շռայլաբար մսխելով, մին սև փող չունի։ Յոյսն միայն էր մեր ունեցածն, յորմէ միս լերան չափ նա ինձ շնորհեց, և երկուքի չափ՝ ես նորան, մինչև բաժանվեցաք, և մնաց ինձ սեփհական իմ կամակոր անօթութիւնս։

## 7. ՈՒՐՈՒԽԱՑԷՆՔ

*Յուլիսի 9, 1839 կիրակի*

Որ ինչ Քսենոփոն ի բերան դնէ Քսերքսեայ արքայի Պարսից՝ յաղագս զանազանութեան եղանակաց ցրտոյ և ջերման ժառանգութեանց հօր նորա, զնոյն և ես ճշմարտութեամբ ստուգեցի յաղագս ժառանգութեանց նախահարց մերոց. այն ինչ երկուց ամսոց միջոցաւ ի ցրտագին զօտեաց Կարնոյ հասի յարևակէզ զօտիս Նոր Շիրական նահանգի։

Կիրակէ էր, և ես այնինչ նոր թողեալ զՍուրբ Գէորգ, և ըզգերապայծառ Հայ փափական եպիսկոպոս Յովսէփ անուն՝ ի Մէրդին, մտախոհ յօթեան անդր դիմէի գնալ, տագնապաւ ընդ յառաջ եկ ինձ ընկեր իմ, և ասէ. «Փութացի՛ր, փութացի՛ր, Թաթարք եկեալ ի Պօլսոյ անցանեն հրովարտակաւ Աբդօլ Մէջիտայ նորոյ թագաւորի ընդ Մծբին և ընդ Նինուէ ի Բաղդատ, և հազարապետն Ռըսսէլ խորհի գնալ ընդ նոսա, և խնդրէ զընկերակցութիւն քոյ»։ Ի շնորհ ամենակալին գրելով զայս՝ և փութացեալ առ հազարապետն որ ո՛չ Թուրքերէն գիտէր, և ո՛չ Արաբերէն, առանց կորստեան վայրկենի՝ նախ ապահովեցի ինձ զխոստումն նորա ի վճար ծախուց ճանապարհորդութեան իմոյ. և վարձեալ մեզ ձիս հինգ ի սուրհարանէ՝ ճանապարհ արարաք ի խոնարհ ընդ անջրդի անապատն, որ լւին հաւասարութեամբ և ամուլ անպտղութեամբ ձգեալ տարածի մինչև ի Հերին, աւերակ հին և հզօր ամրոցի իմիք կառուցելոյ ընդ մէջ Դարայ՝ զոր Անաստաս Նորոգեաց[2], և Մծբնայ մերոյ[3]։

Բայց զարմանալին յայսմ ճանապարհորդութեան իմոյ էր նոր իմն և անիմանալի մտօք լրջուց երազանի տեսանել։ Իբրև օրն զհասարակաւ անցանէր, օդ և հող ջերմութեամբ արեգականն վառէր, և լեզուք ի բերանս պապանձէին ծարաւով, ահա՛ ընդ մուտս

*արեգականն հայեցեալ և յերևան հանդիսանայր—զի՞նչ—լիճ լայնացեալ, առ որ վեղուին գետորայ ականակիտք բոլոր առընթեր, ի վերայ կառուցեալ տունք ի տանց վերայ նոր և հրաշակերտ յօրինուածովք։ Անտառք արմաւենեաց և այլ և այլ ծառոց աստի և անտի։ Եւ զի՞նչ քան զսոսին փափագելի և ցանկալի սպասքեալ և պապակեալ անցորդին։ Իսկոյն ձայն բարձեալ ասացի՝ բաբէ՜, քաղա՜ք նոր, և ջո՜ւր, ջո՜ւր, և մատամբացի ցուցի մինչ հարիւրաւոր ճանապարհորդակցաց մերոց՝ զտեսիլն հրաշալի։ Քուրդ Յիւսուփ, աղայ տէր Ջհելաղա կոչեցեալ գեղջ, որ ընդ մեզ էր, և ծանօթ վայրացն, ասաց. «Այդ երևոյթ իրական չէ, այլ ցնորական իմն է»։ Կարծելով թէ ես ինքն ցնորեալ իցեմ, հարցի նմա թէ՝ տեսանե՞ս և դու. պատասխանեաց՝ տեսանեմ. նոյնպէս և բազումք ի կարաւանին։ «Ուրեմն զի՞րդ կարևոր իցէ ցնորական գոլ այնորիկ, զոր և ես և դու տեսանեմք»։ Պատասխանեաց՝ միշտ այդպէս պատահի։*

*Լռին անապատ, և միօրինակ ընթացք վաստակաբեկ կարաւանին, պարապ ետուն ինձ մտախոհ լինել ի վերայ երևութիցս այսոցիկ։ Յիշեցի վերստին զվայրագ նկարագրութիւնս գիշերացն Արաբացւոց, և զյանկարծ կառուցանել և զանհետ առնել քաջաց նոցա զտուն, զապարան և զքաղաք մի ողջոյն։ Եւ ասացի ի մտի իմում, թէև ստութիւն այսչափ վայրագ և անընտել՝ թո՛ղ զնախապաշարեալ ամենակարութիւն ոգւոցն, ունել ունէր ի յատակին և զբնական իմն ճշմարտութիւն։ Եւ եթէ գուցէ, այս ինչ միայն համարել պարտ է զոր տեսի և գրեցի։*

*Վասն այսր օդերևութի, զոր համարձակիմ անուանել ուրուաշէնք, ո՛չ ընթերցեալ է իմ ուրեք, և ո՛չ իսկ վարկանիմ թէ գրեցին իսկ այլք. ըստ որում յայսոսիկ կողմանս միշտ զգիշերայն ճանապարհորդեն կարաւանք։ Զհիւսիսային բևեռակողմանց պատմելով աշխարհագրաց՝ ի սակի ողորմութեանց Աստուծոյ դնեն զայսպիսի օդերևոյթս սփոփական այնր կողմանց, և ընդէ՞ր ոչ նաև ուրուաշէնքն նմանապէս համարիցին բնականք, իբրև ողորմութիւն Աստուծոյ հարաւային կողմանց մերոյ աշխարհիս։*

*Նախ քան ի գոյութիւն բանի ածել զանգոյ և զանկերպարան զայս երազ, պատմեցի զիրսն յականջս յարգոյ պարոն Աւետքի Տէր Գասպարեան Բասրեցւոյ, և նա ո՛չ միայն զիսկութիւն պատմութեանն ճշգրտեաց, այլ և յաւել պատմել ինձ, թէ ստէպ տեսեալ իցէ ի շրջակայ ամայիս Բասրայ քաղաքի՝ ուրուաշէն բերդս, աշտարակս, և քաղաքս, որ իրօք ոչ երբէք եղեն։*

*Նոյն ուրուական երևոյթ նկատի և ի տօթագին եղանակս*

Պարսկային ծոցոյ, յորժամ յետ միջօրէական գծի արեգականն՝ յառիցին աչք դէպ ի յապառաժուտ գօտիս Բօրազքու լերանց, որք սկսեալ ի Քօթալի Մալու ասացեալ լեռնէ՝ տարածին ընդ եզերս ծոցոյն ցԿոմբերուն, կամ Բանդար Աբբաս՝ մինչ ի Մաշկաթ և ի Սինդ:

Հարևանցիկ միայն առեգիր արարեալ զոր տեսին՝ յուսամ պաշտօն ինչ հարկանել բնաբանից մերոյ աշխարհի, և փոխանակ ծաղու անհաւանութեանցն, ստուգութեամբ փորձոցն ծաղկեալ տեսանել զզուարճանալի իմն շառաւիղ տեսաբանական գիտութեան:

## 8. <1839>

### Զբնական հանճարոյ երիվարին Աշխոյժ անուն՝ ընթեռնումք յօրագրի միում.

Զգիշերն բոլանդակ զուղի հատեալ ընդ կիրճ և ընդ կապանս Հօզը Սուլթան անապատին, ընդ այգուն հասաք ի դաշտի անջրդի. և կարաւան լուացեալ հողով եկաց յաղօթս առ Աստուած[1]: Ծնրեցի և ես ի գետին, և չև աւարտեալ զտէրունականն իմ խնմեցայ ի քուն: Եւ ոչ ինչ իմացայ, մինչ երբեմն խինջիւն ահեղ, երբեմն թափ սանձուն՝ որ ի կռան իմում, և երբեմն կծկծումն ատամանց երիվարիս՝ յարոյց զիս ի մահօրինակ թմրութենէ անտի իմմէ: Զարթեայ, կարաւանն մեկնեալ էր, ճանապարհք ինձ անծանօթք էին, և ահա է թիկանց հեծեալք երկու՝ սաղաւարտ թաղեալ զգլխովքն, և կարճիկ կայծեալ զանձամբք, սուր յազդերս և նիզակ ճօճ ի ձեռսն, քաջարշաւ ի վերայ յարձակէին: Խաչակնքեցի, ձիս հեծայ մինչ հասանէին էին նոքա, և թողի զԱշխոյժ իմ ի կամս իւր: Ուր օդապարիկ արծուոյ նմանեալ զուգչիր, առ զիս և սրացաւ խուսեալ ի բաց: Մին ի հուզկահարացն ընդ այլ ճանապարհ ի կուսէ բլրակացն, զառաջս կալաւ, երկիցս ի բացուստ աղաղակեցի չմեկանչել յիս՝ յայլ ճանապարհորդ և ի չորրորդին՝ ռումբ հրացանի իմոյ ո՛րոտ եդ յանդիման նորա զձին ի ներքոյ: Զհետ հասանէր ընկերն զայրացեալ՝ մինչ զառաջեաւ բանէր ձորափոր հեղեղատի իւիք, չոր և խոր: Թռանէր յայնժամ ի թմբէ ի թումբ Աշխոյժ իմ հրեղինիկ, և ի թռանելն ուժգին՝ ճկէր ի թաթոյն: Ոստուցեալ ի նստոյ թամբին, հարայ զգլխով նորա, բայց նա այնքան ի վեր պահեաց զգլուխն, մինչ կալայ դարձեալ զնիստ իմ, և ապա յարուցեալ՝

գրէթէ իմացական իմն պարծանօք յետս ընդ ետս հայէր, և տեսեալ զանարին հետամուտ դեռ ի խնդիր անցի իրիք՝ արհամարանս փընչելով ի նա՝ սիգաճեմ ընթանայր զճանապարհն մինչ հասուցանէ կարաւանին յէջ անդր։

## 9. ՄԱՅԻՍԻ 30, 1840

Ջուհարի, այսինքն տեղատուութեան հետ խարիսխ քիշեցինք, և փոռ փոշիման յետ տարանք նաւն ի Կուլի բազար, ուր եկին արհեստաւորք շինել կոտրած հասպայպն։

Այսօր պարոն Բարսեղն գնաց ի Կալկաթա, այլ ես մնացի նաւումն, կիրակին սրբելոյ համար։ Թէ տասն տարի էլ Կուլի բազարում խարիսխ գձած մնայի, կարծումաս ոչում փո՞յթ էր։ Ո՛չ ծնողք ունէի, և ո՛չ սիրելի կին, որ աչքներն ճանապարհիս մնէր. իսկ ժամանակիս բարեկամութիւն էլ Աստուած բարաքաթ տայ, որ միայն երեսահանցայ՛։ Մօլլայ Նասուրադնի կինն մի գիշեր մօտիցն դուս էկաւ արախին կաթն տայ, փոքր յետացաւ. ողորմելի մօլլէն հառաչեց, յոգուց հանեց, և ասեց, որ ղարիպութենում սիրտն տրորվեց, զի կնկանից մին արախայ կաթն տալոյ միջոց բաժան կշտու ընկաւ։ Թո՛ղ ներկայ գայ տառապեալ նաւորդիս մօտն, և հասկանայ թէ օտարութիւնն ինչա՞յ։ Եթէ մարդ փող ունենայ՝ ուր որ գնայ իւր համար ընտանիք պակաս չեն, թո՛ղ զպորտն, աղիքներն էս կերկարացանեն, որ գուցէ՛ իրար հասնի, և սիրելի ընտանի դառնան միմեանց. բայց եթէ փող չունենայ, վա՛յ իւր խեղճ գըլխին, քան զմեր Տէրն խեղճ կմնայ, որոյ բարեկամք և մերձաւորք հեռի եղեն ի նմանէ, օտարացան և եղբարք նորա։ Թո՛ղ անփող մարդն հեզ լինի և խոնարհ. կասեն էն էշն ես ասում, որ բերան խուփ նստածայ մնում մին տեղ՝ առանց խօսելոյ։ Թո՛ղ ճարտար լինի և բանիբուն. կասեն էն գիժն ես ասում, որ քամիայ կուլտալման, և խօսելով մարդայ զզուացանում։ Թո՛ղ իւրն մոռանայ, և միայն հայրենեացն ծառայի. կասեն ի հարկէ էշն որ կայ ստեղծվելայ որ հարսանիքի ջուր կրի, ի՞նչ պարծանք իւրն։ Թո՛ղ այժմ լաւ կիրակի անցկացնող սրբազաններն գան, տեսնենք ո՞ր մտածողութիւնքն են, որ մարդիս աշխարհքիցս հեռացրած Աստուծոյ կմօտացանեն։ Ասեն. երբ մարդն աշխարհ չունենայ, որ իւրն ըզբաղացանի, հարկիւ պիտի մինն գտնի, որ նորանով զմայլի. և ե՛կ տեսնենք ո՛վ այնքան գեղեցիկ, սուրբ, և գթած, քան զԱստուած,

որ խոնարհիցի զպանդուխտս ընդունել, դատաւոր այրեաց լինել, և հայր որբո՛ց։

31. Իջայ իմ լաւ բարեկամ պարոն Յ. Ա.-ի[2] տունն, որ եթէ ինձ պէս բարեկամ երբէք չունենէր, երբէք ևս փոյթն չէր։ Փինադուզ Ահմադի աստղաբաշխութեան բախտի նման, մին բան պատահեց ինձ այսօր։ Լուացած ջակէթ (կապայ) չունենալով, բնաթէ կօտ (չուխայ վերարկու) հագայ, և փոքր մի հասարակիցն խելէլ ճզվեցայ և գնացի։ Դեռ չհասայ ի դուռն, մինչ դռնապանն ասաց. «Հա՛ պարոն, այսօր Թունուոյ տարինայ, և վասն ա՞յնր եկիր»։ Ոչ ինչ փոյթ արարի, բայց մեծ բանի տեղ էկաւ ինձ դարվանի դադարկաբանութիւնն, գնացի վեր՝ յատուկ մին ծանր երեսով, տիկին Ա.-ին տեսայ, ասացի. «Շատ ուրախ տարեկիցներ կատարես, և բարով կարմիրն կապես»։ «Դո՞ր իմացար որ էսօր Թունուոյ տարեգլուխնայ»,—ասաց տիկինն՝ զարմացմամբ։ «Կարծում ա՞ս,—ասացի,—իմ բարեկամութիւնս միայն երեսահանցայ, որ չիմանա՞մ այսպէս մին մեծ և ուրախ օր. չե՞ս տեսման որ յատուկ կօտ հագած և ճզված եմ վեր եկէլ, որ իմ սրտի ուրախութիւնն անվթար յայտնեմ ձեզ»։ «Շնորհակալամ,—ասաց տիկինն,—նախաճաշն պատրաստայ, համեցէ՛ք գնանք»։ Եւ իրաւի ո՛չ ինչ փոշիման չէլայ իմ կապիցս. ամենապարտ սեղանն շոքի փոխարէնն հանեց։ Բայց առաւել ևս երախտիք ցոյց տալոյ համար, ամէն ծապատակի պատառն կուլ տալման, երեսս դարձնումի դէպ առ Թունիկն. խալխը կարծումին թէ շատ սիրելուցս էր, բայց աղորդն էսայ, որ գիքէքս շատ մեծ գոլով, երեսս դարձնումի, որ միւսանին չտեսնեն թէ ամէն կուլ տալման ուժիցն աչքիցս արտասունք է կաթում։

Հարկին մի՛ նայիր,
Միշտ կերպի՛ն կացիր,
Զե՛ս փոշիմանիր։

# ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

## 1. Ս. ՅՈՎՀԱՆԸ Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԻՆ

Պարոն Մեսրովբ Դաւթեան

*Հոկտեմբերի 29-ին գրածդ[1] Մարդասիրական ճեմարանին կառավարիչ պարոնացն ցոյց տուի, առ որ պատասխանեմ Ձեզ. ինչպէս որ ճեմարանումն կաս, նոյնպէս կացիր. եթէ կցանկանաս յատուկ տան բնակուիլն, ուրեմն ամիսն եօթանասուն և հինգ ռուփի վարձ կըտանիս[2]։*

*մնամ հրամանոցդ խ. ծ.*

Ս. Յովհան

*Վարիչ հոգաբարձու Մարդասիրական ճեմարանի*

*Ի Կալկաթայ, ի 27 յաննր, 1826*

## 2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՈՒՑՅԱՆԸ Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԻՆ[1]

Յարգոյ պարոն Մեսրոպ Դաւիթ Թաղիադեանց

*Ստացաք քսան և հինգ օրինակ Դիցաբանութեան քոյ[2], զոր յղեալ էիր ընծայ ճեմարանին մերոյ, և ըստ ցանկութեանդ տացուք զայնս ձրի ուսանող մանկանց մերոց, իբրև մի ի դպրոցական մատենից, որոց վասն ընկալ զշնորհակալութիւն մեր, ցանկալով բարօրութիւնդ՝*

*Մնամ քոյդ խ. ծ.*

Յարութիւն Գալուցեան

*Վարիչ հոգաբարձու Մարդասիրական ճեմարանի*

*Ի Կալկաթայ, ի 10 Դիկեմբր 1830*

## 3. Մ. ՄՍԵՐՅԱՆԸ ՀՈՎՀ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆԻՆ

*Տփխիս, ի 5 Մարտի, 1832 ամի*

*...Լուայ թէ նորոգ Հայրապետդ տարեկան ռոճիկս սահմանեալ իցէ 200 թուման վասն Մեսրովպայ Թաղիադեանց։ Ինձ անհաւատալի և ի հրաշից կարգի իմն թուեցաւ բանդ. բայց լուծաւ յետոյ տարակոյս իմ յորժամ ծանեայ ի գրոյ նորին Մեսրովպայ զստութիւն համբաւոյն[1]։ Հայր Միքայել առաքեաց առ նա ինքն Մեսրովպ. 1. Քերականութիւն, 1. Մուզայք, 1. Պատասխանիք, 1. Կրօնագիտութիւն, խնդրելով ի նմանէ ի ձեռն առաքեալ եղբօր զգիրքն ընդդէմ գլխաւորութեան պապիցն Հռովմայ թարգմանեալ ի նմանէ յԱնգղիական բարբառոյ։ Նա պարգևեացն այնոցիկ փոխարինեաց զմի մի ի տպագրեալ մատենից իւրոց, բայց զխնդրածն զլացաւ։ Յասմանէ երևի, թէ չճանաչէ նա տակաւին զմեզ. բայց չէ մեղադրելի, զի ի բացուստ ոչ բարւոք նշմարեն աչք զառարկայս որչափ և սրատես իցեն։ Գրեցի նմա ես ևս թուղթ սիրոյ ի 23 փետրվարի. տեսցուք զի՞նչ պատասխանեսցէ[2].... Դուք չգիտեմ ընդէ՞ր հարևանցիկ առնէք զպատմութիւն նորա և չտայք լիուլի ծանօթութիւն ինչ[3]։ Ցուցանել մարդոյ զջուր և չարբուցանել, առաւել տաժանելի է ցաւոց ծարաւոյ։ Դուք ցարդ այդպէս արարիք, բայց յայսմ հետէ մի առնէք։ Առաքեալ դպիրն փոքր ի շատէ ծանոյց նմա զխորհուրդն մեր առ ի գիտել զհաճութիւն կամ զձգտումն նորա։ Նա արար պատասխանի, բայց ո՛չ բացորոշ յայտնելով զկամս իւր։ Այլ խնդրէ իմանալ, թէ ո՞յք ոմանք իցեն որոշեալքն այն խորհրդոյ[4]. և ո՞չինչ գիտութիւն ունիցի, և իւրաքանչիւրոց կարողութիւն որչա՞փ իցէ և այլն։ Սակայն այսմ հարցման նորա մեր պատասխանի այս եղև, թէ «ոչ կարեմք քեզ աւելի ինչ յայտնել, մինչև ոչ գիտասցուք լիահաճութիւն քո» և այլն։ Ուրեմն դուք իբրև անգիտակ այսմ մեր խորհրդոց, խօսակից լինելով ընդ նմա փորձեցէք, ծանիք զյատկանիշս բարուց նորա և վարուց, զգիտաւորութիւն մասցն, զձըգտումն, և այլն և փութով ինձ յայտնեսցէք, զի ըստ այնմ յերիւրեսցին և բանք մեր ընդ նմա։*

## 4. ՀՈՎՀ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆԸ ՄՍԵՐ ՄՍԵՐՅԱՆԻՆ

*...Մեսրովբ Թաղիադեանց կարգեալն ուսուցիչ ոմանց կղերց Աթոռոյս և մանկանց սակաւուց գեղջս ըստ ինքնայօժար կամեցո-*

ղութեանն խոստացեալ էր չստանալ յայսմ ամի զվարձս, բայց եթէ զկարևոր ինչ հարկաւորսն անձին իւրոյ ի կերլեաց և յըմպելեաց յԱթոռոյս։ Դաստառ ժառանգաւորք Աթոռոյս սարկաւագ չորք. Գէորգ, Ալէքսան, Մովսէս և Գասպար, և դպիրք ի վարժարանէն վեց. այսոցիկ և ոմանց մանկանց գեղջս եկաց ուսուցիչ ի Քերականութեան, յԱստուածաշնչի և ի Թեսաւրոսն մինչև ցվախճան քառասնաւուրց պահոց, զի հասու լեալ ինքնին՝ եթէ անխոհեմ և անպատշաճ ասացուածք բանից իւրոց յինչ ինչ նիւթս խորհրդոց եկեղեցւոյ, և առ երևելի և հասարակ անձինս ոմանս, լսելի լինին հետզհետէ, ոյր վասն և ի վերջոյ ունի կրել զնախատինս և զանպատուութիւնս, մանաւանդ զի՝ յուսայր եթէ զբերեալն ընդ իւր զգիրս տպագրութեան գործարանի ունին ընկալնուլ Աթոռայինք դրամով կամ այլով շահեցողութեամբ, որ ոչ յաջողեցաւ, զի Աթոռայինն կարի ընտիր գտաւ քան զնորայն, ըստ քաջ վերահասութեան առն Յովակիմայ, եկելոյն այտի այսր յատուկ վասն կարգադրութեան գործարանին, յորում աշխատի այժմ. և իցէ թէ նախ քան զմուտս աշնան տպեսցի փոքրիկ գրքոյկ ինչ, կամ օրացոյցն հանդերձեալ ամի. վասն որոյ նա ինքն Մեսրովբ ի նոյն վախճանի քառասնորդաց պահոցն լռելեայն ի պահու գիշերային ժամերգութեան առաքէ զարկեղս գրենոյն և զայլ ինչս իւր յԵրևան, և ինքն ևս առանց ումեք ի մեծամեծացն կամ ի փոքունց ազդելոյ գնայ անդր յԵրևան անդարձ[1]. և կայ անդէն ցարդ. ոյր վասն և տարաձայնութիւնք ինչ ծագեցան, և թերևս ծագեսցին. այլ միայն զայս ինչ ունիմ յայտնել Ձերում եղբայրութեան, չվստահանալ երբէք առ նա բացայայտ դրութեամբ զխորհրդոյն, զի բայց յանհաստատ լինելոյն ի բանս և ի գործս, թերութիւնք ինչ ևս նշմարին տեսանին ի նմա հակառակ ողջախոհ մտաց, և անհամաձայնութիւն վարուց և բարուց նորին մերումս ընկերակցութեան՝ զորս իբրև խորհուրդ բացածանուցի ձեզ, և հետզհետէ ստուգութիւն այսոցիկ ևս բացափայլեսցին այլովքն հանդերձ, ուստի և հաւանական թուի կասկած ձեր զնմանէ....

*9 Ապրիլի, 1832, Էջմիածին*

## 5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Վ. ԲԵՀԲՈՒԹՅԱՆԻՆ

*Սնեալ և զարգացեալ ընդ հովանեաւ մեծի Աթոռոյս Արարատայ և ունեալ բաւականաչափ զհայրենին շնորհ լեզուագիտութեան,*

և մնացեալ այսօրինակ ց1823 թիւ գտանելով ըստ դիպաց ինչ ի Հաղբատ՝ թէ ո՞րպիսի փախստեամբ՝ ինքնահալած լինի ի կողմանս Հնդկաց և դադարեալ անտէն զամս ինչ, վերադառնայ այսր յԱթոռս սուրբ ուսմամբ շնորհաց այլազգի լեզուաց՝ զոր ընկալեալ մեր հայրագութ խնամօք որպէս յառաջն, նմանապէս և յայնժամ, սիրեցաք իբրև որդի սիրելի, և ցուցեալ մեզ զջերմ սէր և իղձ իւր ի մասին վարժարանաց և տպագրատան գտանիլ անձամբ անձին ի նոսա և լինել հոգածու. ուստի և մեր հետևեալ՝ կարգեցաք զնա ինքն ուսուցիչ արհեստի ոմանց ժառանգաւոր դպրաց և սարկաւագաց Աթոռոյս՝ հաստատելով յատուկ վարժարան և աստէն ի գեղջ՝ յորում ուսուցանէր և զմանկունս ժողովրդեան գեղջն. ըստ յառաջադրութեան նորին ի մասին տպարանի բերել տուաք ի Տփխիսոյ զգրաթափ և զգրաշար Յովակիմն, որ կայ աստ և աշխատի գլխաւորել գործն՝ որոյ վասն արարեալ եմք և առնելոց եմք ըզբազում ծախս. յատկացուցեալ էաք և վասն նորին Մեսրոպայ զբաւական կեցութիւնս. և աշխատէր ի պաշտաման իւրում ցարդ, և յոյս մեր ևս օր քան զօր քաղցրանայր ի մեզ. և էաք ուրախ մեծապէս՝ ըստ որում գործն ունէր յառաջանալ ի պայծառութիւն Աթոռոյ և ազգի։ Այլ սակայն նա ինքն Մեսրովբ ի 1 ամսոյս առանց ուրուք գիտելոյ ո՛չ սինօթականաց և ո՛չ մեր, ինքնահալած եղեալ աստի գայ այդր յԵրևան, և թէ որո՞վ պատճառաւ և ինչ պտնեղութեամբ, անյայտ ամենևին ի մէնջ. եթէ ունէր այդպիսի ինչ միտս կարող էր ազդ առնել մեզ, և եթէ ունէր ինչ հարկաւորութիւն, կարող էր և զայն հասկացուցանել մեզ, առ որ չէր ինչ անհնար մեզ արդիւնացուցանել զբաւականութիւն։ Ապաքէն յայս տմարդի գործ դորին կարի իմն վշտացոյց զսիրտ մեր այսպիսի սրբութեան յաւուրքս, վասնորոյ յատկապէս խնդրեմք ի Պայծառափայլութենէ անգին բարեկամիդ Աթոռոյս և մեր, կոչել զնա առ ձեզ և սիրով յորդորել և հաւանեցուցանել անդրէն գալ այսր որչափ և խոհականութիւն Ձեր զօրէ ի հաճել զնա. ապա թէ ոչ՝ դարձեալ խնդրեմք ակամայ կամօք նորին առաքել այսր առ մեզ. զի բաց յայսոցիկ, ունիմք և զայլ հաշիւ ընդ նա՝. և միանգամայն արգելուլ զմիւէթն դորին ելանելոյ աստ յերկրէս, մինչև ոչ ունիցի ի մէնջ զվկայական։

Առաքեցաք յսպաս Ձերդ Պայծառափայլութեան զհարիւրապետ Ադամն, որ ունի և զայլ բանս ինչ ի մէնջ պատուիրեալս պատմել Ձեզ բերանով։

## 6. ԵՐԵՎԱՆԻ «ԵՐԵՎԵԼԻՆԵՐԸ» ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

Նորին Վեհափառութեան Սրբազնութեան

*ի Հայ երևելեաց քաղաքին Երևանու*

Ամենախոնարհ խնդիր

*Ողորմած Տէր մեր.*

*Մեր նուաստութիւնն լսելով, որ պարոն Մեսրովպ Դաւթեան Թաղիադեանցն սուրբ Աթոռի վարժապետութիւնն թողեալ, երկիցս գրութեամբ խնդրեալ է ի Նորին Պայծառափայլութենէ նահանգական կառավարչին Երևանու գնալ Թաւրիզ։ Այժմ տեսանելով որ չէ հնար, որ նա դառնայ և ծառայի Սուրբ Աթոռոյդ, և տեղս ևս բռնի չէ հնար պահել, վասնորոյ խնդրեմք ամենախոնարհաբար, զի հաճեսցիք արձակ գրով խնդրել ի Նորին Պայծառափայլութենէ, որ կացուցանի զնա վարժապետ թագաւորական շկօլին Երևանու[1]։ Զի որովհետև յամենայն տեղիս մանկունք Հայոց որդիք են Սրբոյ Աթոռոյն, և զարգացեալքն նովաւ աստի ոչ սակաւ պարծանք լինին Սրբոյ Աթոռոյն և Ձեր վեհափառութեան Սրբազնութեան։ Յատկապէս աղաչեմք զանց չառնել, ապա թէ ո՛չ զնա սա, և մանկունք մեր մնան զուրկ յուսմանց մայրենի լեզուիս մերոյ, առանց որոյ անհնար է նոցա յառաջանալ յիմաստս այլ և այլ լեզուաց[2]։*

*Մնամք վեհափառութեան սրբազնութեան ձերոյ*

Սհակ Մելիք Աղամալով
Արսեն Պապաջանով
Բարսեղ Ղօրղանով
Պօղօս Բաբաջանով
Աղաբար Գեղայմիայնով
14 կլազ Աստուածատուր Տէր Հովակիմով
Սիմոն Շայխաքունով
Յակօբ Ավէտով
Պետրոս Մէլիք Բեալ Օհանէսով
Մկրտիչ Խուդայբաշիով
Սողոմոն Յարութինով

*<1832, ապրիլ, Երևան>*

## 7. Վ. Հ. ԲԵՀԲՈՒԹՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

Ձեր Վեհափառութիւն

Ողորմած տէր

*Առաքելով զհետ այսր գրութիւն պարոն կուսակալին Վրացտանու զէնէրալ օտ ինֆանտէրի զէնէրալ ադիւտանտի և կաւալէրի*

*բարօն Ռօզէնի Առաջնոյ, զոր ընկալայ զհետ հրամանագրի առ իս Նորին բարձր գերազանցութեան ի 11 փետրվարի № 802, խոնարհաբար խնդրեմ հրամայել տիրացութիւն Հայոց Մեսրովբայ Թաղիադեանց, որ հարկաւոր է Նորին բարձր գերազանցութեան վասն ինչ ինչ գործոց, որք ո՛չ վերաբերին առ հոգևորական գործս, զի եկեսցէ առ իս յԷրևան, վասն տալոյ նմա զբիլէթ և զծախս ի պէտս ձիանց, հարկաւորս յԷրևանէ մինչև ի Թիֆլիզ, ուր պարտ է նա գնալ և ներկայանալ պարոն կուսակալին Վրացտանու։ Առ այս շնորհս ունիմ հաւատացուցանել զսրբութիւն Ձեր՝ թէ տիրացուս այս հարկաւոր է Նորին բարձր գերազանցութեան վասն այնպիսի գործոյ, որ բնաւին ո՛չ պատկանի ո՛չ Աթոռոյն էջմիածնայ և ո՛չ այլ հոգևորական գործոց, այլ միայն հարկաւոր է վասն թարգմանելոյ յոյժ հարկաւոր թղթոյ ի միոյ լեզուէ, զոր գիտէ Թաղիադեանցն։ Առ այս կցորդիմ, թէ Թաղիադեանց վասն այսր գործոյ ո՛չ մնայ առանց վարձատրութեան։*

*Ծանուցանելով զկամս պարոն կուսակալին Վրացտանու Ձերում Սրբութեան, խոնարհաբար խնդրեմ փութանակի յոյժ առաքել առ իս զյիշեալ տիրացուն Մեսրովբ Թաղիադեանց*[1]*։*

*Իսկական վերապատուութեամբ և կատարեալ անձնընծայութեամբ շնորհս ունիմ մնալ Ձերդ վեհափառութեան*

*ողորմած Տէր*

*ամենախոնարհ ծառայ*

Կնիազ Վասիլի Բէհբութով.

*23 Փետրվարի, 1834 ամի,*
*Երևան*

*Նորին վեհափառութեան Պատրիարգի, ամենայն*
*հայոց և ասպետի* Յովհաննու:

## 8. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻՆ ԲԱՐՈՆ ՌՈԶԵՆԻՆ

Ձերդ բարձր գերազանցութիւն,
Ողորմա՛ծ Տէր,

*Քրիստոսի ծառայ Յովհաննէս Կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ Առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի և Մայր Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ էջմիածնի։*

*Վարժապետ Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, մինն յանուանի բնակչաց Երևանու, երիտասարդական տիօց անտի վարժեալ*

ի մարզս գիտութեանց զանազան արուեստից ի լեզու Հայոց, Անգղիացւոց և Լատինացւոց ի Հնդկաստան անտի ի Կալկաթայ, յեպիսկոպոսական ճեմարանի Անգղիացւոց։ Հուսկ ապա լուեալ զազատութիւն աշխարհին Հայոց, վերադարձաւ այսր ի Հայրենիս իւր ի Հայոց աշխարհ, ի 1831 ամի։ Մեք ևս ի բազմիլն մեր յաթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց, ամենայն աշխատութեամբ և ջերմեռանդութեամբ ջանացեալ մուծանել յազգն և մանաւանդ ի հոգևորականութիւն ցանկութիւն ուսումնասիրութեան, յորմէ զըրկեալ էին նոքա ի պատճառս զանազան նեղսակրութեանց ի ձեռացն Պարսից։

Մեք սկսաք որոնել առ այս վախճան զարժանաւոր գիտնական անձինս, վասն որոյ և հրաւիրեցաք զնա (զԹաղիադեանն) գալ ի Սուրբ Աթոռս, և կարգեցաք զնա վարժապետ արուեստից ի հոգևոր ուսումնարանի մերում ի պարսպի Սուրբ Աթոռոյս[1]։ Ի միջոցի սոյն ժամանակի, սկսեալ ի 1831 ամէն ցայժմ նա պարապելով ի վարժարանի մերում յուսումն համբակաց մերոց, մեծաջան աշխատութեամբ և կատարեալ ջերմեռանդութեամբ իսկապէս կարաց ցուցանել զերևելի զպտուղս իւրոց արդիւնաւորեալ աշխատանաց։

Բայց յասմանէ, յատկապէս պարապի նաև ի գրութիւնս մեր, և զայս պաշտօն իւր, ո՛չ հայեցեալ ընդ լայնածաւալ շրջանակ գրութեանց Մերոց, մեծաւ յառաջադիմութեամբ, որ կապակցեալ է ընդ բազում աշխատանաց [չունելով ինքեան ի շարադրեալ ի գրելն ընդհանրական կոնդակաց զընկեր կամ զօգնականիւք]։ Ըստիպեալ ի կատարեալ ճշմարտութենէ ի մասին այսոցիկ մեծաջան աշխատանաց, Մեսրովբայ Թաղիադեանց, մեք ամենախոնարհաբար խնդրեմք ի բարձր գերազանցութենէ Ձերմէ միջնորդել առ Նորին Կայսերական Մեծութիւն շնորհել նմա մեծութեան զկայսերական ողորմութիւն ինչ և ի խրախոյս նմին առ ապայն փոխարէն այսքան աշխատանաց նորա համեմատ կոչման նորին և պաշտօնից, զոր կատարեաց մինչ ցարդ։

Սոյն այս Մեսրովբ Թաղիադեանց, ժրաջան աշխատութեամբ թարգմանեալ և շարադրեալ զբազում հասարակօգուտ գրեանս, և տպագրեալ զչորեսին ի նոցունց, այժմ ևս պարապի նոյնպէս ի թարգմանութիւնս գրեանց յօգուտ ազգին առհասարակ, և մանաւանդ աշակերտաց մերում ուսումնարանի։

Ի վերջոյ թէ որպիսի՛ ոք իցէ նա, ի հաւատարմութիւն բանից

*մերոց կարէք տեսանել անձամբ զվկայականս նորա, և մնամք միշտ ջերմեռանդութեամբ և անձնանուիրութեամբ,*

*Ողորմա՛ծ տէր,*

*Ձերդ բարձր Գերազանցութեան*
*ամենախոնարհ ծառայ և աղօթարար*
*Կաթուղիկոս ամենայն Հայոց*
Յովհաննէս

*1834, մարտի 13,*
*ի Սուրբ Էջմիածին*

## 9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ[1] ԵՎ ՀԱԿՈԲՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ[2] ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

**«Աստուածընտիր վեհապետ և խորհրդական սուրբ գլուխ Հայկազեան սեռի**
**ամենողորմած տէր մեր բարերար.**

*Ամենախոնարհաբար անկեալ առաջի ահեղահրաշ Աթոռոյ Ձերդ Սրբազնագոյն Մեծի տէրութեան՝ քօղարկեալ դիմօք մատչիմք ի համբոյր սրբասնեալ երկնաչու մաքուր գարշապարացն յատկագոյն Ձերինդ բազմախնամի։*

*Եւ մածմամբ յերկիր՝ յառաջարկեմք զաղաչանաց խնդիրս յաղագս խղճալի մերազանց կողմանցս եղելոց, որք զանազան տարաբախտութեամբ և ազգի ազգի փոխադարձութեամբ անկայուն աշխարհի անյաջող դիպուածոց՝ կացեալ մնացեալ ցարդ ընդ խաւարամած տգիտութեամբ՝ վերերևին անվայելուչ ազգ յաչս համակ տեսողացն։*

*Վասն որոյ՝ ազգասիրութեամբ ձերով գիջեալ ի հայցուածս պաղատանաց յետնեալ ծառայից ծառայի ձերոյ՝ շնորհել զշնորհասուն տիրացու Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց վարժապետն կողմանցս եղելոց մերազանց առ ի հրահանգել, կրթել և ուսուցանել զմանկունսն Հայոց ջերմեռանդագոյն մեծի տէրութեան Ձերոյ լուսաւորչածին ուղղափառ ժողովրդոցն[3]։ Զոր կատարելով ունի վեհափառութիւն ձեր միանգամայն մխիթարել զհամակ ազգս Հայոց բնակելոց ի Պարս և ի Հնդկաստան, որք միանգամ ազգասէր և հայրենասէր կամօք ցանկան և փափագին։*

*Ձերդ բարձրագոյն վեհափառութեանն ծառայից ծառայ*
Յովհաննէս եպիսկոպոս

յետին միաբան սրբոյ կաթուղիկէ
էջմիածնի
յաջորդ Յակոբոս վարդապետ։

*1834 ամի Տեառն, Մարտ ամսոյ 16*
*ի վանս Ամենափրկչի որ ի*
*Նոր Ջուղայ*

## 10. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէս, որոյ և շնորհօք կաթուղիկոս ամենայն Հայոց...

*Ուրոյն ուրոյն գրութիւնք գերապատիւ սրբազան առաջնորդի Ձերում, և Ձեր սիրելութեան, թուեալ ի 16 մարտի անցելոյ, թէ՛ առ մեզ և թէ՛ առ սրբազան Սինհոդոսն սրբոյ Աթոռոյս[1], ամբողջ անարատ հասեալ առ մեզ, ուրախ արարին զմեզ յոյժ յոյժ ի վերայ ազգասիրական փութոյ և եռանդեան Ձերոյ, թէ յաղագս վերահաստատութեան Ամենափրկչեան ճեմարանին ի Ջուղայ, և թէ յաղագս նորահաստատութեան եկեղեցական արկեղայ ի պահպանութիւն անանկաց աղքատ Հայոց եղելոց ի Պարսկաստան։*

*Գործք, արդարև աստուածահաճոյք, ըստ ինքեանց նախանձելիք, և մարդկան ընդունելիք, որ զանօրինիչս միանգամայն և զյարատև կառավարիչս իւրեանց և յետ մահու անմահ առնեն յաւէրժական պարծանօք։ Չի՛ք ինչ գերագոյն ի կազմութեան մարդոյ, զաստուածատիպ նորա զհոգին. չի՛ք ինչ այնքան զարդարիչ հոգւոյ, քան զուսումն գիտութեան. և չի՛ք ինչ այնքան վերագոյն խնամ, քան զայն, որ ի վերայ ուսման տանի և բարեկարգութեան հոգւոյ։*

*Արդ՝ դուք աստուածասէր դասք հոգևորականաց և աշխարհականացդ մերազանց, որովհետև զայսպիսի մեծամեծ առաքինութեանց փոյթ յանձին կալայք, և զայսպիսի ջերմեռանդութիւն օգնելոյ անանկ եղբարց ձերոց, զԱստուած ի վերուստ, և զմեզ աստուստ ուրախ արարիք, և ուրախակիցս ձեզ։ Ապաքէն մեք յառուկ ի սէր լուսաւորչազգեան հօտիդ մերոյ Քրիստոսի փրկելոյ, և ի ցոյց մեծի ուրախութեան սրտի մերոյ, ընդ այդ օրինակ Ձեր ազգասիրական մեծագործութիւն. ահա՛ ըստ խնդրանաց Ձերոց, զայրն պիտանի մեզ ըստ ամենայնի, զպատուելի վարժապետն արուեստից և ըզխորհրդական դրագիր մեր՝ զՄեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, սիրով արձակեալ առաքեցաք այդր, ըստ Աստուածատուր իմաստից և մակացութեանց իւրոց, կրթել և հրահանգել զմանկունս ձեր,*

*յուսմունս պէսպէս գիտութեանց, զոր և յորդոր լինիմք, սիրով ընդունիլ, և ըստ ամենայնի շահեալ և մխիթար պահել՝ վասն Ձերոյ բարութեան։*

*Այլ և քահանայապետական մեծ պարտաւորութեամբ մերով յորդոր լինիմք սիրելութեան Ձերոյ, միշտ առաջի աչաց մտաց ունիլ Ձեր զանշուշտ խրատս Փրկչին աշխարհի, և նմանել միշտ առն իմաստնոյ, որ նախ չափէ, կշռէ, և ապա շինէ զիւր տուն։ Այնպէս հիմնավոր առնել Ձեր այս ազգասիրական գործառնութիւնս, զի մի ի վաղիւ ասիցեն, այրս այս, կամ արքս այսոքիկ սկսան շինել, և ոչ կարացին ի կատար հասուցանել։*

*Քան զոր և մեք աղօթս առնեմք առ Աստուած՝ պսակիչն գործոց բարեաց, յաջողել զգործս ձեռաց և զխորհուրդս մտաց Ձերոց ի բարին, և լնուլ և ևս ազգասէր և աստուածասէր շնորհօք զհոգիս Ձեր ամենեցուն։*

*Ո՛ղջ լերուք, և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ և ընդ հոգւոյդ Ձերում միշտ. ամէն։*

*Կաթուղիկոս ամենայն Հայոց*
Յովհաննէս

*Համար 284*
*ի 8 Յունիս, 1834 ամի,*
*ի Սուրբ Կաթուղիկէ էջմիածին*

## 11. ՆԱՄԱԿ «ԱԶԳԱՍԷՐԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

Յարգոյ պարոն

*Թէպէտ ամէն լրագրաց անունն կոտրայ՝ որ սուտ ու մուտ բաներով լցանում են իրեանց էջերն, սակայն տխուր եմ իբրև Հայ ասել, որ մերազգի լրագրաց միջումն թող զայլ տեղի սուտմուտ՝ իրեանք իսկան աշխարհի առարկայ լինում։*

*Պատճառք գրիս այս է, որ յերէկ մին բարեկամի տան լինելով՝ ուր ձեր ընկերութեան մին երկու և երեքն էլ կային, տեսա մին ծառայ նի պրծաւ բազում դաստա Հայաստան ձեռնումն[1] և մին շրջաբերական մին պարոնից, որ ստանողքն ստորագրին[2]։ Դոր որ կայ բանն անցկացաւ, և ես տեղն զոլով պատուական լրագրի բոլոր պարոնակութիւնք կարդացի և չգիտեմ ի՞նչ պատուականութիւն պիտի ունենայ իրոք լրագիր թէ իւրն թողու և այլոց վերայ խօսի։*

Բայց Ներկայ իմ լաւ վերատեսուչ՝ յուսամ չես ասելեց, որպէս բաժանորդութեան թուղթ մանտալում իմ ճշմարիտ նկատողութեանս ընդդէմ առարկեցիր, թէ ի՞նչ Ղրիմ, ի՞նչ Ստամբօլ, ի՞նչ Քաբօլ. ազգ եմք՝ ու պիտի իրար օգնեմք, և հենց էդ լեզվովդ՝ փոքր օրէն մէջ 16 բաժանորդ գտար։

Չես կարող ասել, որ մինչ օրս գլուխդ ի՞նչ ցաւեր այ էկել այդ Հայաստանի մասին. քանզի ես ևս գիտեմ։ Լսելամ նաև ձեր գերապատիւ ընկերութեան հաւատն առ պարոն Աղաթոնն[13] որ թէ մեր տեղւոյս հասարակութեան համեմատ անձն համարի, կամաչի՝ անունն ևս տալ։

Ներկայ իմացմանայ որ պարոն Հայաստանն ուզեց ձեզ քամի տալ և բախտաւորապէս դուք ևս հաւատացիք. քանզի գիտես ես տեղւոյս փօստում մեծ գործ ունիմ և բոլորն կհասկանամ, ինչ ո՛ր կայ։ Մեզ էսքան հեռի որ կամք, որոք օգնականութիւն խնայելէց չեմք էն մարդին կամ էն լրագրին՝ որ մեր Հայրենեաց լուրն տայ։ Ի՞նչ հիմարութիւն այ այս թողուլ և Վանեցոց և Ղայսարացւոց Պարլամենտ և Ջամբռ քարոզել, որ ինչ լեզուով գրես ունայն է։

Արշալուսէն շնորհակալ եմք, զի միջին ճանապարհ պահէ. և թուի թէ՝ որպէս առաջին նոյն և շարունակ լրագիր մեր լինելոց է այն, միայն թէ զհայրենեաց մանաւանդ խօսիլ շարժեսցի։

Պարոն Վերատեսուչ, գիտելով քո վառոդի բնութիւնդ՝ ոչ կամէի վառել զքեզ ընդդէմ եղբօրդ։ Բայց յիրաւի զոր ինչ ընթերցեալ է Ազգասիրի թերթերումն և զոր տեսի անցեալ օրն՝ քամահելի երևեցաւ ինձ դրժողութիւնն. էլ՝ ասա՛ Ազգասէր էլեր: Բայց աղաչեմ կալ զիս հրաժարեալ թէ ի Ստամբօլէ և թէ Քաբօլէ քոյ. իմ անունս հանիր Հայաստանի ստորագրութենիցն։ Վերջապէս ասեմ ափսոս աշխարհատեսութեանդ։

*Ի Կալկաթայ[17] յունվար 1848*

Քոյդ խ. ծ. նա։

## 12. ԱՌ ՅԱՐԳՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ»

«Յարգոյ պարոն

*Տխրութեամբ ծանուցանեմ, որ Մեսրովբ Դաւիթ Թաղիադեան, վաղածանօթն յարգութեանդ, չքրաւեալ է ի թանգագին կենաց իւրոց ի 10 յունիսի այսր ամի ի Շիրազ քաղաքի. յորոյ վերայ ի ներքոյ գրեալս սակաւատող բանոն խնդրեմ շնորհ արարեալ համենջիք հրատարակել միջոցաւ պատուական օրագրի ձերում, որով և շնորհապարտ կացուցանել։*

Ձձեր խոնարհ ծառայ Թադէոս խ. Աւետումեան։
Կալկաթա, 21օգոստոսի, 1858»։

Չէ մեր նպատակ գրել զվարս Ազգասէր հեղինակիս, մանաւանդ զի չունիմք զբաւական նիւթս առ նոյն ձեռնարկ, այլ սակաւունք միայն յայտնել կամիմք զմասն գործոց նորա, որք եղեն մեզ ծանօթ։

Մեսրովբ Դաւիթ Թաղիադեան ծնեալ էր ի Կարբի, որ և սնեալ ի սուրբ Աթոռն Էջմիածնի, առ ժամանակաւ սրբազնասուրբ կաթողիկոսին Եփրեմայ, ուր և ձեռնադրուեցաւ սարկաւագ։ Իբրև յամի 1823, եկն ի Հնդիկս յերիտասարդութեան հասակի և միջնորդութեամբ տեառն Աբրահամու ծայրագոյն նուիրակին Երուսաղեմի, եմուտ ի Համալսարանն եպիսկոպոսական ուսանել զԱնգղիերէն, ուր թարգմանեաց ի մեր լեզու և ի լոյս ընծայեաց զՀոգօ Գրովտիոսի Ճշմարտութիւն քրիստոնեական հաւատոյ՝ զգործ ընտիր։ Յետ սակաւուց ելեալ անտի եկաց երրորդ վարժապետ ի Մարդասիրական ճեմարանի մերում։

Ապա գնացեալ ի Ջուղայ կարգեցաւ գլխաւոր վարժապետ դպրոցի, որ անդ զամս յոլովս։ Անտի չոգաւ ի կողմունս Տաճկաստանի և կացեալ առ ժամանակ մի ի Կոստանդնուպոլիս՝ շրջի վտարանդի ընդ Հայս և Պարսս և վերադառնայ միւսանգամ ի Հընդիկս[2]։

Յամի 1845, յամսեանն օգոստոսի օժանդակութեամբ Արարատեան ընկերութեան սկսաւ հրատարակել զԱզգասէր լրագիր. սակայն զրաւումն ի կենաց միոյ և ձախորդութիւնք միւսոյ ընկերացն քակտեցին զընկերութիւնն վաղվաղակի։ Բայց եռանդ հանգուցելոյս ոչ շիջաւ. այլ շարունակեաց զտպագրութիւն լրագրին մինչ ցմէջ 1852 ամի։ Թէ որքան վառ էր եռանդ նորա յասպիսի գործ, և որքան ժիր յաշխատութեան, գործք իւր ինքնին յայտնեսցեն քաջ։ Զի ի միջոցի եօթն ամաց սակաւուց բաց ի տպագրութենէ Ազգասէր լրագրին և ի կառավարութենէ առանձին դպրոցի իւրոյ, ի լոյս ընծայեաց և զյետագայ գրեանսն յօրինեալս յիւրմէ. Այբբենարան, Դաստիարակութիւն օրիորդաց Ծառ, Ծանապարհորդութիւն ի Հայս, Պատմութիւն Պարսից, Սօս և Սօնդիպի բանաստեղծութիւն չափեալ, Վարսենիկ ստեղծաբանութիւն արձակ և քերականութիւն համառօտ։ Եւ թարգմանեալս. Առակ Պարսից, Առաջնորդ մանկանց, և Վարդգէս։ Թողեալ զտպագրութիւն այլոց վեշտասան մատենից, որք ընդ վերակացութեամբ իւրով տպագրեցան, ունի և զայլ գործս թարգմանեալս և ի լոյս ընծայեալս աստ նախ զկազմիլ Ընկերութեան

Արարատեան. որք են վերոյիշեալ Գրովախօսն Դիւցաբանութիւն, Պաղեստին Ռ. Հիբերայ, չափեալ և Պատմութիւն հին Հնդկաստանի։ Ունէր և զայլ գործս բանաստեղծականս և զօրագիր մնացեալ ճանապարհորդութեան իւրոյ, զորս ոչ ժամանեալ ի լոյս ընծայել, տարաւ ընդ իւր և որք հասցե՞ն արդեօք ի Ջուղայ ընդ այլոց մատենիցն, թէ ի Շիրազ անդ անհետ եղիցին, չկարեմք ամենևին գուշակել։

Մերձ ի վախճան 1857 ամի, հիւանդագին և տկար ել աստի վերադառնալ ի Ջուղայ և զմնացեալ աւուրս իւր նուիրել դաստիարակութեան մանկանց ազգիս, և հասեալ ի Շիրազ, զրաւի անդ յազգօգուտ կենաց իւրոց ի 10 յունիսի այսր ամի ի հասակի իբրև 56 ամաց. կտակելով զհազարաւոր մատեանս, պատկանեալս թէ՛ ինքեան և թէ՛ Արարատեան Ընկերութեան, սրբազան առաջնորդին Սրբոյ Ամենափրկչի վանաց, որ ի Ջուղայ, ուր և հասեալ իսկ են, և զայլ ստացուածս իւր ընտանեաց իւրոց, որք բնակին յԵրևան քաղաքի։

Եթէ յարգի լինէր գրագիտութիւն և ի միջի մերում հարիւր մասամբ չափ Եւրոպացւոց, աշխատութիւնք սորա յոյժ աւելի լինէին, քան որք եղենն. զի վկայեալ եմք բազմիցս, բնական աշխոյժ եռանդեան նորա, որ նստեալ լնոյր զէջս բազումս խիստ դիւրութեամբ և ընտիր հայկաբանութեամբ ի միջոցի սակաւ ժամուց առանց ջնջելոյ զոգցես և զբառ մի։

Շարժեալ ի տխրութենէ սրտիս, զհետագայ Ողբերգն նուիրեմ վսեմ հոգւոյն այնմիկ, որ յուսամ երկնային պսակին արժանի եղեալ, սակս յարգելոյն զտաղանդն աւանդեալ ինքեան, յօգուտ և ի փառս եղբարց իւրոց։

1. Եւ դու, Մեսրովբ, անգի՛ն Մեսրովբ,
Եւ դու այդպէս վաղ հանգեար.
Ի վշտալից աշխարհէս մեր
Յերանաւէտն ճեպեցար։
2. Վաստակեցաւ, այո՛, մարմինդ,
Այլ ոչ հոգիդ, ես գիտեմ.
Անմահ հոգիդ, միշտ աննկուն,
Միշտ վառվռուն, միշտ վսեմ։
3. «Ափսո՜ս Մեսրովբ.—իմպէս բազումք
Ափսոսացին այսուհետ,
Որոց հոգի ազգիս փառաց
Նախանձաւոր իցէ եթ։

4. «Մեռի՛ր, յետո սիրեմ զքեզ»
Այլք ասասցեն, այլ ոչ ես։
Ես սիրեցի զքեզ կանխաւ,
Ազգասիրաւդ վկայես։
5. Ոչ ափսոսամ վասն քո ինչ,
Զի դու զերծար ի ցաւոց.
Զարդինաշատ աւուրս քո
Ազգին ի սպաս զոհելով։
6. Որքան կացցէ լեզու Հայոց,
Որքան կացցէ և մեր գիր,
Պայծառ անուն իմ Մեսրովբիդ
Անմահասցի անխտիր։
7. Այլ ափսոսամ վասն ազգիս,
Որ քեզ պէս մարդ արդ կորոյս.
Որոյ նման հազուագիւտ է,
Հայիմ յոր կողմ և ի կոյս։
8. Զի բանաստեղծ, ի բնութենէ
Կարէ միայն ծնանել
Տաշեալ կոկեալն արհեստիւ
Ո՜չ կարէ յայն ժամանել։
9. Դու բանաստեղծ և ճարտասան
Միանգամայն յայտնեցար,
Թէև անձուկ էր ասպարէզդ,
Սակայն ոչինչ վերջացար։
10. Աշխարհանազ Սօս Սօնդիպի
Եւ Ազգասէր լրագիր,
Բաւական են ի հաստատել,
Զոր ասացի, լիալիր։
11. Ո՛չ է ինձ հարկ թուել զամեն
Զգործ մատանցդ ճարտար,
Ժամանակաւ, զկնի իմ
Վկայեսցէ և աշխարհ։
12. Բայց ե՛կ, Մեսրովբ, ե՛կ ասա՛ ինձ՝
Հի՞մ առ օտարս ետուր վազ.
Ու՞ր Հայաստան քո հայրենիք
Եւ ու՞ր Պարսիցն Շիրազ՝
13. Յողբալս զքեզ լամ և զիմ ազգ,

Վտարանդի ցան ու ցիր.
Ընդ ամենայն ոլորտս երկրի
Քան զհսրայէլ տարագիր։
14. Իմ ընտանեացս պատմութիւն
Կարծեմ ուղիղ օրինակ
Է իմ ազգիս, որք յայսքան դարս
Չարչարին տար՝ օրինակ[3]
15. Վասն որոյ ոչ մնալով
Չի այսուհետ զիս լացցեն,
Գուսանականն իմ օրհասի
Առեալ ինձէն հարկանեմ։
16. Ճշմարիտ է իմ պատմութիւն՝
Որում լերուք ունկնդիր,
Հապա Մուսա զհեւին թող,
Եւ ի մօտոյ ըսկսիր.

Հայր հօր իմոյ անդ ի Շիրազ թաղեալ կայ.
Եւ մայր հօրս ննջի ի հող Բուշեռայ,
Հայր մօր իմոյ եկեալ հանգեաւ ի Ռանգուն,
Եւ մայր մօրս քեզ յանձնեցի Կալկաթա՛։
Իմ պատուական ծնողք եղբարք և քուրիկ
Ի մեր Բասրա հանգիստ առին խաղաղիկ,
Միւս քոյրս չոքաւ մինչև Հալա,
Խաւարեցաւ անդ իւր արևն քաղցրիկ։
Ի հօրեղբարցս մին գնաց մինչ ի Հէյրաթ,
Զօրմէ ոչինչ ունիմք զլուր մինչև ցարդ.
Զիմ զաւակաց թողի զմին ի Ռանգուն
Զոմանս աստ ի Կալկաթա։ Ախ իմ բաղդ։
Այլ իմ փթած ոսկերոտիք արդեօք ո՞ւր
Հանգիստ առցեն՝ աստ ի Հնդիկս թէ այլուր.
Ի Տաճկաստա՞ն, ի Լե՞հս՝ ի Վի՞րս, ի Մոսկո՞վս
Բայց ոչ յիմ մայր ի Հայաստան.—բաղդ ախուր։

17. Այս է ահա իմ սիրելի
Ազգի վիճակ ախրական,
Այս է ահա դառն վիճակ
Ազգիս վիճակ Անդրանկանն։
18. Մեղաք այո, բայց չարչարանք
Եօթնադարեան մեր վշտի

Թող Հայր գթած, ի թողութիւն
Մեղաց մերոց եղիցի։
19. Եւ արդ՝ Մուսա, հաճեաց ընկալ
Հրաժարական զիմ ողջոյն,
Գնա հանգիր ի դալար սիրտ
Իմ ազգայնոց սիրասուն։
20. Ես ծերացեալ և վաստակեալ՝
Հանգիստ խնդրեմ առօրեայ,
Մինչև կամք Տեառն՝ օրհնեալն միշտ,
Եղիցի և յիմ վերայ։

## 13. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԲՅՈՒՐԱԿՆԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծարգոյ խմբագիր—Տէր

*Ձեր «Բիւրակն» հանդիսի տարւոյս սեպտեմբերի թերթի մէջ՝ հանգուցեալ գիտնական Մեսրովպ Դ. Թաղիադեանցի վերայ մի քանի տեղեկութիւնք գրած էիք*[1]*, քաղելով ի լոյս կամ ի գրուածոց պատ[րէ] Կ. Համլինի, առանց յիշելոյ զիմ աշխատութիւնն* Կենսագրութեան *նոյն դրագլխին, որ տպուած է յամին 1886 ի Տփխիս, յորմէ պիտի կարենայիք օգտուիլ, եթէ կարդացած լինէիք զայն*[2]*։*

*Անտարակոյս լինելով, թէ դուք տեսած չէք զայդ «Կենսագրութիւնն», ահա՛ մի օրինակ կուղարկեմ ձեզ, որպէսզի կատարեալ վերահասու լինիք, թե ի՞նչ կերպով Մ. Թաղիադեանց Պոլիս եկած է, որպիսի զուր հալածանաց ենթարկուելով մեկնած է անտի։ Բայց «Բիւրակնի» ընթերցողներն ևս տեղեակ առնելու համար իրաց պարագայից, հարկ էր համառօտ տեղեկութիւններս ներկայացունել ձեզ ի հրատարակութիւն, եթէ բարեհաճութիւն շնորհէք։ Արդ՝*

*1) Մեսրովբ Թաղիադեանց՝ Երևանեցի է ծննդեամբ՝ 1803 թուին, և իւր հայրն ի վաղուց կորուսած՝ ի մօր խնամօք յանձնուել է Էջմիածնի վանուց ի մանկական հասակի՝ և ոչ 18 ամաց, ինչպես գրուած էր «Բիւրակնի» մէջ, և անդ ուսանելով զՀայերէն, 1821 թուին ձեռնադրուած է սարկաւագ սրբոյ Էջմիածնի։*

*2) Մ. Թաղիադեանց՝ Հայերէն լեզուի սաստիկ սիրահար, թե ըստ հայ-եկեղեցական կանոնաց պարտաւորութեան և թէ Հայերէնն հիմնապէս ուսանելու համար Աստուածաշունչ Ս. Գիրքն յաճախակի կարդացած է պարզև ընդունելով նաև յիւր մօրէն Զոհրա-*

պեան միահատոր Աստուածաշունչն, զի Հայոց եկեղեցւոյ զաւակաց—արանց և կանանց—արգիլեալ չէ կարդալ աստուածային մատեանն:

3. Մ. Թաղիադեանց՝ լսելով եւրոպական լեզուաց և գիտութեանց յառաջադիմութիւնն, փափաք յայտնած է երթալ յԵւրոպա. և 1823 թուին իւր հանդերձը փոխելով ի ձև աշխարհական Վրացւոյ՝ փոխանակ ի Կ. Պոլիս դիմելոյ ուրում կցանկայր, որոշել է երթալ ի Պարսկաստան, և անտի ի Հնդկաստան, քանզի պարսկական պատերազմի պատճառաւ՝ նոյն ատէն կարաւաններն երթևեկն դադրած է եղել ընդ մէջ Կ. Պոլսոյ և Կովկասու: Ուստի սխալ է այն տեղեկութիւն՝ թէ ի Կալկաթա հարուստ ազգական մը ունենալով՝ անդ գնացած է նորա ձեռնտուութեամբ աստուածաբանութեան ուսում առնլոյ համար:

4. Մ. Թաղիադեանց 1823 տարւոյ վերջերն ժամանելով ի Կալկաթա, 1824 թուականի «ամբողջ մի տարին պարապ դէս ու դէն կանցունէ, և երկրորդ տարումն (1825) Կալկաթու Հայոց վարժարանումն (Մարդասիրական ճեմարան) վարպետութիւն կանէ (վարժապետութիւն) հայերէն լեզուի, ինչպէս կգրէ ինքն. և 1826-ին Անգղիացւոց Եպիսկոպոսական ճեմարանին (Bishop college) աշակերտիլ կյաջողի միջնորդութեամբ Երուսաղէմի նուիրակ տ. Աբրահամ ծ. վարդապետի, ուր և կուսանի Լատիներէն, Անգլիերէն և Հելլեն ու Պարսիկ լեզուներն՝ մնալով անդ չորս՝ և ո՛չ վեց տարի:

5. Մ. Թաղիադեանց՝ ցանկանալով երթալ «Յաշխարհ հայրենեաց» և հիմնել անդ զճեմարան յանուն սրբոյն «Մեսրովպայ», 1831 թուականի Օգոստոս ամսոյ մէջ կմեկնի Կալկաթայէն և հասնելով ի Նոր Ջուղա, կհիմնէ Ամենափրկչեան ճեմարանն նոյն անուամբ վանուց մէջ, բայց մի քանի ամսէն թողլով զայն՝ կերթայ յէջմիածին և մնալով անդ մինչ ց1834, վերստին կերթայ ի Նոր Ջուղա, խնդրանօք առաջնորդի տեղւոյն և քահանայից և յերևելեաց՝ ի վարժապետութիւն. և ապա 1836-ին կերթայ ի Դավրէժ:

6. Մ. Թաղիադեանց 1838 Մայիս ամսոյ սկիզբներն Կ. Պոլիս կուգայ, ոչ թէ «լսելով և ուրախանալով, որ ի Թուրքիա իւր ազգակիցներէն ոմանք վասն Աւետարանի և վասն բարեկարգութեան կտառապին և կհալածուին, այն շարժման մէջ ինքն ալ դեր մը կատարելու մտօք», ինչպես գրուած է «Բիւրակնի» մէջ* այլ պար-

---

* Ծանօթ. Խմբագրին. Տր. Համլին կպատմէ, թէ Թաղիադեանց, որ նորա տան մէջ կբնակէր ժամանակ մը և մտերիմ յարաբերութիւն մը հաստատած էր նորա հետ, պատմած է նմա՝ իւր պատմութիւնն և ինք ըսած է, թէ լսելով, որ

զապես Կ. Պոլիս քաղաքը և բազմաթիւ Հայերը տեսնելու, և անտի յԵւրոպա երթալու դիտաւորութեամբ, յաւուրս պատրիարքութեան տ. Ստեփանոս արքեպիսկոպոսին Նիկոմիդիոյ Աղաւնի վերակոչելոյն։ Եւ փութով ծանօթանալով պատրիարք հօր և երևելեաց ազգին, վարժապետ կլինի ճարտարապետ Սէրվէրեան Յովհաննէս ամիրայի զաւակաց՝ ի տան նորին։

7. Մ. Թաղիադեանց վեց կամ եւթն ամիս մնալով ի տան Սէրվէրեանց՝ կպարտաւորի հրաժարիլ, ըստ որում կասկած յարուցել են ոմանք՝ թէ ֆարմասոն է, այսինքն բողոքական, ըստ այնմ ժամանակի ասութեան, որովհետև երբեմն կտեսնուի եղեր Ամերիկացի միսիոնարաց հետ իբր անգղիագէտ, և կամ թէ իր «Աշակերտաց աւետարանական ճշմարտութեանց» վերայ խօսած պահուն՝ հակառակ բացատրութիւններ կաւանդէ եղեր...

Ողորմելի՜ Թաղիադեանց, եթէ այդ բացատրութեանց մէջ՝ այն կետը միայն լինէր, որ հակառակ համարուէր պապական եկեղեցւոյ ինչ ինչ ոչ-հնագոյն վարդապետութեանց, այն միայն բաւական էր զինքը կասկածելի ցոյց տալու և կամ դատապարտելու, քանզի այն ժամանակ մեր մէջ ոմանք տարածել էին սա խոտորնակ սկզբունք՝ թէ «Ով որ հռոմէական եկեղեցւոյ վարդապետութենէ կհեռանայ, բողոքականութեան կմօտենայ»։ Հետեւաբար՝ եթէ ոք հռոմէականութեան դէմ խօսէր, բողոքական կըհամարուէր, թէև միևնոյն ժամանակ հաւատարիմ գտնուէր իր ազգային եկեղեցւոյ հնաւանդ վարդապետութեանց և պաշտպանէր զայնս։

8. Միւս կողմանէ զարմանալի էր և այս՝ որ եթէ ոք Հայոց եկեղեցւոյ որդի՝ Աւետարանի ճշմարտութեանց վերայ խօսէր, կամ կարդար աշխարհաբար Ս. Գիրք, այնպէս կըմբռնուէր բողոքական միսիոնարներէն, թէ նա անտարակոյս իրենց յարեալ ոմն է. սա խոտորնակ սկզբունքով՝ թէ Աւետարանի ճշմարտութեանց վերայ խօսիլ իրենց միայն յատուկ է, և իրենք նոր ի նորոյ պիտի ուսուցանեն զայն Հայ ժողովրդեան, անգէտ մնալով միշտ Հայ եկեղեցւոյ գրութեան՝ որ հիմնեալ է ի վերայ ճշմարտութեան Աւետարանին Քրիստոսի։ Եւ որովհետև աշխարհաբար Ս. Գիրք կարդալն արգի-

---

բարեկարգական յուսալից շարժում մը կայ ի Կ. Պօլիս, եկած է ի Թուրքիա։ Արդէն այն ժամանակներն բողոքականութիւն չկար դեռ, այլ խումբ մը կար փափաքող և աշխատող կրօնական բարեկարգութեան համար։ Ասոնցմէ էին, որ յետոյ բողոքական ըլլալ հարկադրուեցան գլխաւորաբար իրենց դէմ յարուցեալ հալածանաց պատճառաւ։

լուած էր այն ժամանակ, իբրև բողոքականաց գործ (առանց արգիլողաց կողմանէ զայն մատակարարելու ժողովրդեան), ո՛վ որ համարձակէր առնալ և ընթեռնուլ զայն պարզութեամբ, իբրև բողոքականամիտ կհալածուէր, և ահա այն ատեն կհասնէին միսիոնարք և իրենց պաշտպանութեան ներքև կպատսպարէին զայն՝ ուր կշինուէր* արդարև բողոքական։ Այս էր մեծաւ մասամբ նոյն ժամանակի իրաց ընթացքն։

9. Այսպէս՝ Մ. Թաղիադեանց՝ միշտ հաւատարիմ իւր մայրենի եկեղեցւոյն, երբ վարժապետութենէ կհանուի, կմնայ անօգնական ողորմելի վիճակի մէջ. ոչ ոք իւր վերայ կգթայ իւրեան անծանօթ երկրին մէջ, այլ խորշելով և հեռանալով յիւրմէ՝ և ոչ իսկ ոք կըհարցուփորձէ զինքն՝ թէ ի՞նչ դաւանութիւն ունի հակառակ եկեղեցւոյ, ուստի կդիմէ իւր ծանօթ Ամերիկացի միսիոնարաց, և կսկսի Հայերէն լեզուն ուսուցանել նոցա. և երբեմն Ս. Գիրք վաճառելով իւր օրական պարէնն հայթայթել. և այս բաւական էր իր վերայ եղած կասկածն հաւաստել**։

10. 1839 Մարտ 13-ին տ. Յակոբոս պատրիարքն կյաջորդէ տ. Ստեփաննոսի, և հալածանքն կսաստկանայ ի վերայ յայտնի կամ կասկածելի բողոքականաց, և յանիրաւի յաքսոր կդատապարտուին գիտուն և արժանաւոր անձինք՝ տ. Գէորգ քահանայ Արծրունի, Ֆիզիքայ Պօղոս վարժապետ[3] և այլք. ընդ որս անհրաժեշտ էր Մ. Թաղիադեանցն ևս աքսորել. բայց որովհետև սա Ռուսաց հպատակ էր, յետ մի գիշեր բանտարկութեան ի պատրիարքարանի, նոյնիսկ Ռուսաց դեսպանատան առաջին թարգման Պաւէլ Բիզանիի ձեռամբ կյաջողին մայրաքաղաքէն հեռացունել, թերևս մինչև ի Ռուսաստան ղրկելու նպատակաւ, մեծագումար ծախիւք Սէրվէրեանի։ Մ. Թաղիադեանցի Օրագրութեան մէջ*** այդ մասին հետևեալ տեղեկու-

---

Ծանօթ խմբագրին

* Ոչ թէ «շինուեցան», այլ հարկադրուեցան անջատուիլ եկեղեցական իշխանութեանց դառն հալածանաց պատճառաւ։

** Մեր արժանապատիւ բարեկամին այս խօսքերէն ակներև կերևի, թէ սոսկ Հռովմէականութեան դէմ խօսելով չէր, որ իր վրայ կասկած յարոյց։ Ամերիկացի միսիոնարաց հետ սերտ յարաբերութիւն ունէր և Ս. Գիրքը կվաճառէր։ Արդէն մեր ըսածն ալ այս էր գրեթէ, Թաղիադեան Աւետարանական շարժմանց մէջ էր յայնժամ։

*** Յետ տպագրութեան «Կենսագրութեան Թաղիադեանցի» հետզհետէ ստացայ նորագիւտ «Օրագրութիւններն» 1830—1842, շնորհիւ բարեկամաց Կալկաթայու, որք գրեթէ կամբողջացունեն «Կենսագրութեան» թերի մնացած մասերն։ Ուստի սկսած եմ վերստին նոր ի նորոյ գրել, որ պիտի լինի աւելի ընդարձակ և յոյժ հետաքրքրական։

*թիւնք կան. «1839 Մայիս 10, ուրբաթ. Անիրաւ կաշառակերութիւն Պալեայ Բիզանդոյ պարտաւորեաց զիս լքանել այսօր զՄեծն Պոլիս, և զամենայն ակնկալիս նորա, ուստի զհրաժարականն տուեալ եղբարց իմոց ի Քրիստոս, պարտ առի ինձ մերձ հազար ղուրուշ ի Մ.Հ.ի. Քերովբայ Աղէքսանդրեանց Բաղդադցւոյ, և ի նաւ մտեալ իջի ի Տրապիզոն յաւուր երեքշաբաթու»: Կլիշատակէ Տրապիզոնի նոր առաջնորդ Կարապետ վարդապետին շոգենաւի մէջ գտնուիլն, բայց չյիշեր Ամերիկացւոյ մի անդ գտնուիլն և նորա հետ խորհրդակցելով՝ իւր Ռուսական անցագիրն և թղթերի ծրարն ի ծով նետելն, և Անգղիացի ճանապարհորդի կերպարանք փոխուիլն, և նոյն Ամերիկացւոյ անցագրով նաւէն դուրս ինելն և այլն և այլն: Այս պարագաներն բնաւ յիշատակուած չեն*, բայց հետևեալն. «Մայիս 16, երեքշաբթի ի Տրապիզոն, վաղ քաջ ընդ առաւօտն Արիստակէս Եփրեմեան Կ. Պոլսեցի, որ փոփոխութեամբ հանդերձի և անուան իւրոյ ծառայէր Ամերիկացի միսիոնարաց իբրև Հայ դասասաց և թարգման, առաքեալ ի նոցանէ եկն, և հրաւիրեաց զիս ի սենեակ իւր, որ էր ի տան Յակոբայ ուրումն յազգէ մերմէ»: Եւ ապա այդ Յակոբայ տունէն ելնելն կյիշէ, իմանալով, որ նորընտիր առաջնորդ Կարապետ վարդապետն՝ «Յարոյց ի ժողովրդեան զհոգի ատելութեան ընդդէմ Աւետարանին Քրիստոսի, և կասկածեալ եւս, թէ գուցէ որպէս ի Պոլիս, նոյնպէս և աստ, կոյր զկուրայն բերեալ նորա յանիրաւ ի զրպարտողաց, վնաս ինչ հասուցանէր գոնեայ տանուտեառն Յակովբայ, որ մարդասիրաբար և եթ ասպնջական լինէր ինձ, կամեցայ լռելեայն թողուլ զայն տեղի և խոյս տալ յայլուր: ...Մայիս 19, ուրբաթ. տառապեալ ի դժոխային բռնաբարութենէ Ռուսաց, դիմեցի առ գործակալ դեսպանութեան Պարսից և ցուցեալ նմա զներքին գրենի Մելիք Ղասիմ Միրզայ արքայորդւոյ Պարսից՝ երբեմն աշակերտի իմում, խնդրեցի ի նմանէ զՊարսիկ անցագիր ընդ ճանապարհ Կարնոյ ի Պարս. ի մտի եդեալ ոչ ուրեք երբէք մտանել ընդ դառն գերութեամբ Ռուսաց...»:*

*Եւ ապա տեղագրելով կպատմէ իւր ճանապարհորդութիւնն մինչև Կարին և ժամանելն ի 28 Մայիսի, և մերձակայ Լուսաւորչի վանքն, երթալով իւր վաղածանօթ Վաղարշապատցի Յովհաննէս*

---

* Ծան. Խմբ. *Թերևս բանաւոր պատճառներ ունէր չյիշատակելու: Այս պարագաներն պատմուած են ականատես և վստահելի անձանցմէ, և տէր Համլին իր գրքին մէջ պատմած է զայնս իբրև ստոյգ եղելութիւններ:*

վարդապետի հետ տեսնուիլն և կյիշէ. այսպէս յաւելցունելով. «Սմա խոստովանեալ հաղորդեցայ մարմնոյ և արեան Տեառն»։

11. Ուրեմն, Մ. Թաղիադեանց՝ մնալով ի սերտ կապակցութեան ընդ հայրենի եկեղեցւոյ, ի զո՞ւր հալածուել է իբրև բողոքական, ի զո՞ւր կասկածել են իւր վերայ ոմանք յաղգայնոց, և ընդունայն որոշել են միսիոնարք «երբեք չբաժնուիլ իրմէ, և գործակից ընել ինքեանց», քանզի «նորա հոգին վառուած էր միմիայն Հայ պատանեաց դաստիարակութեան բուռն բաղձանօք, և իւր կեանքը կուզէր նուիրել այնմ. այս էր իւր օգտակար և երջանիկ կեանքի գաղափարականն», ինչպես «Բիւրակն» կասէ ստուգապէս։ Այս մասին ինքն Թաղիադեանց այսպէս կգրէ Կալկաթայէն երկու բարեկամաց ի Դաւրէժ 1841 Փետրուար 20-ին. «Եթէ տեղեակ լինէիք տարապարտ հալածանացն իմոց ի Պոլիս—Յովհաննու ճարտարապետի անմահ պժտութեանն, երկուհարիւր քսակաց կաշառոյն, և դաւաճանութեանն, զի լռելեայն կալեալ զիս առաքեսցեն ի Սիբիր, իբրև զմահապարտ։ Ձեկուցումն իմն, զփախուստն ի Կարնոյ դէպ ի Հնդիկս, զկողոպտիլս յԱրղընի, և զդերի վարումն իմ յԱրաբաց յանապատին Արվիլայ և այլն և այլն, ոչ զարմանայիք աստ զձեզ ի նպաստ օգնականութեան կոչելն իմ։ Տակաւին ի մէջ այսքան զրկանաց՝ ես բարւոյ ազգին հետևիմ. տասնեւմ հատոր գրեանք միայն յինէն շարադրեալք պատրաստի կայ վասն տպագրութեան... Բարեկամք մեր ի Պոլիս տակաւին անտեղեակք են կենդանութեան իմոյ, ոմանք համարին ի մահ, և ոմանք ի Սիբերիա վտարեալ զիս» («Կենս. Թաղ.», երես 115)։

12. Զայս ամենայն, Մեծ. Խմբագիր—Տէր, յառաջ բերելով՝ կբաղձամ ստոյգ տեղեկութիւն տալ Մեսրովպ Թաղիադեանց գիտնական վարժապետի կենաց վերայ՝ Ձեր բանասէր ընթերցողաց. քաղելով իւր հրատարակած գրքերէն և ձեռագիր օրագրութիւններէն՝ զորս ամբարեալ ունիմ, և հաւաստի առնել զամենեսին, թէ Մեսրովպ ինչպես Հայ. քրիստոնէական եկեղեցւոյ՝ նոյնպէս և ազգային լուսաւորութեան սիրահար եղած է բովանդակ իւր կեանքի մէջ։ Ուստի մեծագոյն սխալ է «Բիւրակնի» վերջին պարբերութիւն, թէ՝ «Իսկ նա (Թաղիադեան) ժամանակէ մը ետքը իբրև հայ-ամերիկեան թերթի մը խմբագիր ի լուսաւորութիւն իւր սիրեցեալ Ազգին երևան եկաւ Արևելեան Ռուսաստանու մէջ»։ Երբէք Արևելեան կամ Արևմտեան Ռուսաստան չէ գնացած Թաղիադեան, յետ ի Պոլսոյ, ելանելոյն, այլ Կարինէն ի Տիարպէքիր, ի Մուսուլ և ի Բաղդադ գնալով՝ անտի անցած է ի Հնդկաստան, ուր բազում օգտակար

*հեղինակութեամբ փայլեցաւ. և ի Կալկաթա հրատարակեց զայնս, ինչպես և «Ազգասէր» անուն լրագիրը 1845—1852. և ապա երբ կդառնար ի Հնդկաստանէ ի Պարսկաստան, ճանապարհին Շիրազ քաղաքի մէջ վախճանեցաւ 1858 Յունիս 18-ին և թաղեցաւ անդ։*

*Յուսալով Մեծ. Խմբագիր—Տէր, որ մեր այս ճշգրիտ դիտողութիւնքն Ձեր արդարադատութենէն արժանի պիտի համարուին հրատարակել օգտաշատ «Բիւրակնի» միջոցաւ՝*

*Մնամ աղօթարար*

Յովհաննէս քահանայ Մկրեան

*10/22 Սեպտեմբեր, 1892, Բերա*

## 14. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՅԱՆԻՆ

*Բաղավիա, 25 Նոյէմբերի, 1886*

Արբակրօն Խաչակիր Աւագ Քահանայի Տեառն Յովհաննու Կ. Մկրեան Ի Կ. Պօլիս

*Սրբակրօն Տէր*

Յերկար *ամաց հետէ վիճակեալ գոլով իմ բազմազբաղ գործոց տուր և առիկ շահավաճառութեան, գուն ուրեմն լինէր ինձ պատեհ լնուլ զիղձ իմ և զհաճոյս վերծանութեամբ մատենից ի Հայ բարբառ, թէպէտև ի նմին ժամու չէի անտարբեր ազգային իրողութեանց՝ յաջ և յահեակ պատահելոց։*

*Աշակերտեալ գոլով իմ յոտս գիտնական վարժապետին Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց, ի Կալկաթա, երախտագիտական զգացմամբ, զի մեծարոյ էր ինձ յիշատակ նորին, ուստի և իղձ մեծ էր ինձ ի խոյզ և խնդիր լինել ձեռագիր երկոց ինչ նորին. առ ի տալ զայնս տպագրութեան. մինչ խորհուրդս այս գրաւէր զմիտս իմ, ի մօտ աւուրս ընկալայ ի բարեկամէ ումեքէ զգրքոյկ մի յօրջօրջեալ «Կենսագրութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց» հաւաքեալ և խմբագրեալ աշխատասիրութեամբ ձերով։ Ընթերցայ ի նմին ուշի ուշով զանցս բազմադէպ կենցաղոյ նորին, և զնկարագիր գերագոյն տաղանդոյն, վեհանձնութեան, անձնանուէր հայրենասիրութեան, ջերմեռանդն բարեպաշտութեան, զորս ի հանդէս ած ի կենդանութեան յաւերժայիշատակ վարժապետն իմ։ Այլ վիշտ եղև ինձ նկատել ի պատմական մասին մատենիդ զնկարագրութիւնս ինչ անվայելս զբուսոյ բարուց նորին, «Արարեալ յումեմնէ ի Կալ-*

կաթա»[1], որոյ տարազ իմաստից գրութեան ակներև ցուցանէ ըզհեղինակն քաջածանօթ ինձ, եւ բազմաց համազգեաց մերոց ի Հնդիկս։ Ո՛չ կարելով իմ զանց առնել զայսոքիւկ պատիպատ և զրպարտիչ բանիւք հեղինակին, պարտ անձին համարիմ ի պատիւ անմահ յիշատակի իմում վարժապետի, սովաւ ամբառնալ զիմ բողոք առ ձերդ Սրբութիւն, թէպէտև քաջ զգամ և հաւատամ իսկ, զի փառք յիշատակի այսպիսի քաջ հայրենասիրի՝ ոչ երբէք արատեսցի, և եթէ զուգեն նմա թերութիւնք ինչ (զի չիք ի ստեղծուածս վեհից իսկ արանց անյանց ոք), ազգի ազգի բարեմասնութիւնք նորին աներևոյթս առնեն զայնս, և վայրավատին բանք սնապանծ պատմագրի՝ ոչ զօրեսցին ստուերածս ածել բարեմասնութեանց նորին։ Ի նմին ժամու շնորհ մեծ ունիմ զձէնջ՝ որ ջան եղեալ ի խոյզ և ի խնդիր լինիք հետազօտել ածել ի լոյս զերկս և զգրաւոր վաստակս Մեսրովբայ, և շնորհապարտ զիս կացուցանէք այնու իսկ, զի ըստ արժանւոյն գնահատէք զկորովի հանճար վսեմ քերթողին, որով և մասամբ և եթ ամոքէք զանստոյգ նկարագիր հեղինակին կենսագրութեան ի վեր անդր յիշեցելոյ։

Բարեմիտ պատմաբանից հանճարեղաց է անկ՝ հայթայթել զգովելի ձիրս մտաց, և զառաքինի բարս անհատից, զանց արարեալ զթերութեանց ինչ եթէ իցեն, և զբարոյական մասունս նոցին իբր զփունջս ծաղկանց առաքինութեան՝ ախորժընկալ յօրինեալ ածել ի հանդէս, յօրինակ ընթերցողաց։ Իսկ պարսաւադէպ արանց և եթ պահի, մինչ գերան յաչս ինքեան՝ զշուղնաքեայ թերութիւնս ընկերին բազմապատկեալ հռչակել ի լուր աշխարհի։ Վիշտ է ինձ նկատել զի հեղինակ նոյն կենսագրութեան հետևեալ ըստ օրինակի վերջնոյն, ջանայ այնու զբասս անձին ըմբոշխնել՝ քան տալ ըզճըշգրիտ նկարագիր, զի որպէս թուի ըստ բնաւորութեան իւրոյ բուսոցն փառամոլ բարուց՝ չարարուեստ հնարիւք հարց և պատասխանւոյ, ջանայ ստուերածս ածել բարուցն Մեսրովբայ։ Բայց զի մի՛ ի բանասիրաց ազգիս ճշմարտութիւն թուեսցի զոր ինչ հեղինակն ճոռոմաբանէ, ի դէպ վարկանիմ առաջի ածել ձեզ աստանօր՝ որչափ է յիս կար զլուսաբանութիւն դիպաց և եկից արձանագրեալ ի սոյն կենսագրութեան Մեսրովբայ, որում որպէս ի վեր անդր յիշեցի աշակերտեալ և բնակակից լեալ իբր զամս երիս, սկսեալ յօրէ ժամանելոյն իմ ի Կալկաթա յամի 1849, և ականատես լեալ կենցաղոյ նորին, վիշտ է ինձ ասել, զի զլխովին տարբեր է, քան զոր ընթեռնում ի կենսագրին։

Պարսաւագէտ հեղինակ կենսագրութեանն սկսանի զիւր չարախօսութիւն յէջ 11 մատենիդ, ի կարգիլ Մեսրովպայ ի պաշտօն օժանդակ ուսուցչութեան ի Մարդասիրական ճեմարանի ի Կալկաթա, և պաշտօնակից լինելոյ ընդ գիտնական վարժապետին Յովհաննու Աւդալեան առն համեստաբարոյի։ Առ ի դժպհի առնել զերկոսին գիտնական ուսուցիչս յաչս բանասիրաց ազգիս, զառաջնոյն բարս նկարէ իբրև «Զախորդ բնութեամբ կազ և կռիւ յարուցանող, շլաբնոյթ և երկաթագլուխ», իսկ զերկրորդին ցուցանէ զոլ «Նախանձոտ, փառասէր և կամապաշտ». ահա այսպիսի մեծարեալ տիտղոսիւք սկսանի ճոռոմաբան հեղինակն մատենիդ՝ զիւր նկարագիր, զոր և բարեհաճեցաք խմբագրեալ ի լոյս ընծայել ի գիտութիւն բանասիրաց ազգիս. և ոչ այսու շատացեալ յանդգնի մուծանել ի բանս իւր կայնպիսի անվայել տեղեկութիւնս՝ մինչ ձանձրոյթ և տաղտուկ ածել ընթերցողին։

Ո՞չ ապաքէն այսոքիկ երկոքին տաղանդաւոր ուսուցիչքն էին, որք յաճախ մեծարէին ի բազմաց ականաւոր ուսումնականաց Անգղիացւոց, որք պատիւ անձին վարկանէին զէթ ծանօթանալ երկաքանչիւրոց ի նոցանէ։ Ո՞չ ապաքէն սոքա էին որք զամբողջ կեանս իւրեանց նուիրեցին ի դաստիարակութիւն հայ մանկտւոյն, և ի բարգաւաճանս Հայկականս բարբառոյ ի Հնդիկս, և յայն տաժանաւոր այլ ի վսեմ պաշտօնի զանձինս իւրեանց երջանիկս համարեցին սպաս հարկանել գրագիտութեան ազգիս, որոյ պայծառութեան և որ իւրեանց բախտին եղեն ի խնդիր։ Այո՛, ո՛չ ժխտեմ. այլ խոստովանիմ իսկ զի բնաւին բոլորովին չէին զերծք նոքա ի վրիպակաց, զի գոն թերութիւնք որ գրեթէ բոլոր գերադոյն և անուանի հանճարեղաց է ճակատագիր։ Բայց չէ օրէն զբարեմասնութեանց նոցա զանց արարեալ գլխովին, զդուզնաքեայ վրիպակս նոցա նշաւակել, որպէս և առնէ անարատ հեղինակ մատենիդ։

Զաշխատութենէ երանելւոյն Մեսրովպայ յընթացս կրթութեան յԵպիսկոպոսական ճեմարանին Անգղիացւոց ի Կալկաթա գրէ յէջ 12 մատենիդ, զի յաւէտ հետևելով թարգմանութեան ի Հայ բարբառ՝ թերի մնաց Անգղիականին և «չկարողացաւ ի Հայերենէ յԱնգղիական թարգմանել ինչ», որով յայտ լինի զի միտք անանուն հեղինակիդ ո՛չ բնաւ ըմբռնել մարթացաւ զազգաշահ իմաստ և դիտաւորութիւնն քերթողին, որ թէպէտ բաւական կրթեալ և հմուտ անգղիակականին, այլ տենչ և աշխատ նորա բոլորովին հայէր ի պայծառութիւն և բարգաւաճանս Հայ լեզուի, ուստի անխոնջ պարապէր թարգմանել ի Պարսից, ի Լատինացւոց և յԱնգղիականէ ի

Հայ բարբառ, զարժանի մատենանս բանասիրականս և պատմականս ի հնոց և ի նորոց, առ ի տարածել զայնս ի մէջ ազգին, որոց կարօտ էր իսկ ընթերցող մասն ազգիս։ Սքանչանամ ընդ ժպիրհ նշմարանս հեղինակիդ, որ իսպառ անգէտ անգղիականին՝ կշտադատէ զչափ կրթութեան Մեսրովպայ յայդ լեզու, և թերի զնա համարի ի նոյն։

Զընտրութենէ Մեսրովպայ (իբր 1830 ըստ հեղինակիդ)[2] ի պաշտօն ուսուցչութեան աշակերտաց Ամենափրկչեան դպրոցին ի Ջուղա. և զամուսնութենէ նորա անդ ընդ դստեր Պարոն Սեթայ Մկրտչեան, մօրաքեռն իմ իսկ, զոր ինչ լուեալ իմ ի բազմաց արդարախոհ Ջուղայեցւոց ականատեսաց, և ըստ վկայութեան ոմանց աշակերտելոցն ի նոյն դպրոց, որք զարդիս ալեւորեալ կան ի Հնդիկս, ո՛չ բնաւ վաւերացուցանեն զպատմաբանիդ խօսս, այն է զգռոզութենէ, զհպարտութենէ, և զխրոխտանալոյ երանելւոյն. և ո՛չ բնաւ «դպրոցի աշակերտներուն ևս անպակաս ծեծ և փէտ տալով զըզուեցուց բոլոր ժողովուրդն» պարբերութիւնն. այլ գլխովին ընդհակառակն հանրապէս պատմեն զնմանէ, զովեստիւք համեստ վարուցն, քաջասիրտ ազգասիրութեանն, ճշմարտութեանն, և հմուտ ուսուցչութեանն։ Ի հաստատութիւն ճշմարտութեան աստցելոցս, այսու կցորդեմ զդաղափարս թղթակցութեանց իմոց ընդ երկոսին Պատուելի համազգիս աստ, որք ի տիս պատանեկութեան բարեբաստիկ եղեն աշակերտիլ Մեսրովպայ ի նոյն իսկ յԱմենափրկչեան դպրոցի ի Ջուղա[3], որք և զարդիս ալեւորեալ անդամք իսկ են ատենին յանձանձանաց ազգային հաստատութեանց Հայոց ի Ջաւա, զորոց զհաւատարիմ վկայութիւնս՝ հաստատեն և այլք Ջուղայեցիք, և բազումք վկայեն զի ի պատճառս չքաւորութեան ժամանակին, և ի դերև ելանելոյ յուսոյ նորա գտանել զդրամական նպաստս ի Մադրասայ, յօգուտ և ի հաստատութիւն դպրոցին, ի ցաւ սրտի Սրբազան բարեյիշատակ առաջնորդին և ժողովրդականաց Ջուղայու ստիպեցաւ Մեսրովպ թողուլ, լքանել զդպրոցն և զՋուղայ իսկ, և յայլուր հայթայթել զպարէն կենացն, որոց վկայութեան համաձայն գտանեմ զքաղուածս գրուածոցն Մեսրովպայ՝ զանցից ժամանակացն այնմիկ արձանագրեալ յէջ 95 մատենիդ։ Անանուն հեղինակ մատենիդ ըստ առակախօսութեան ինքեան իմաստասիրէ, թէ Սողոմոնի իմաստնոյն խօսից փորձ կատարեցաւ իսկ ի վերայ Մեսրովպայ, մինչ մեծարեցաւ նա յառաջնորդէն՝ ի Նոր Ջուղա, և տուաւ նմա ասպարէզ շահաւորութեան (Արդարև եթէ ոչ կարօտէր նա պարենի կենաց)։ Բա՜բէ խրոխտապանծ յա-

մատուցեան մտաց պատմաբանիդ, որ եթէ գէթ վայրիկ մի խորհիլ խոնարհէր՝ զանցելոյն իւրոյ փառաւոր վիճակէ, զմեծարիլն յառաջնորդաց, և զփարթամանալն ի ճոխ ժողովրդականաց և զասպարէզն պտղաբեր զտուեալն ինքեան, որպէս և զարդի վիճակ իւր զանշուք, թէ ոչ անձուկ, զմտաւ ածէր, մարթ էր նմա յարմարագոյն փորձ խօսից իմաստնոյն Սողովմոնի յանձին իսկ նշմարել, այն է՝ «եթէ փորձել կամիս զմարդ՝ մեծացո, և տուր նմա ասպարէզ շահատակութեան» ևն. ճշգրտեն իսկապէս զդէպս կենցաղոյ հեղինակիդ ի Կալկաթա։

Զտարաժամ մահուանէ Պատուելի Տիկին Թանգումայ Մ. Դ. Թաղիադեանց ի Դավրէժ. լուեալ եմ, զի պատճառեցաւ այն յորդեծնութենէ, և ոչ որպէս զրպարտութեամբ գրի անանուն հեղինակէն։

Յէջ 16 մատենիդ զՊարոն Յովհան Խաչատրէ ի Կալկաթա և զդստերաց նորին, որպէս և դիպուածոյն ի խնջոյս աղա Յովհանջանի, ընդոտի աղճատաբանութիւն, մակաբերել նկրտէ, զի նպատակ երկրորդ ամուսնութեան Մեսրովպայ՝ վասն տիրանալոյ և եթ երկու հազար 4° ռուփոց էր։ Այս գումար չէր բնաւ համարելի ճոխութիւն ինչ ի Հնդիկս, և հազիւ բաւական ի վճարել չորից ամսոց խստիւ չափաւորեալ տնային ծախս Մեսրովպայ ի Կալկաթա։ Անժխտելի վկայութիւնք ծանօթից երանելոյն, որպէս և հանգամանք կենցաղոյն՝ վաւերացուցանեն զանճոխասէր բնաւորութիւն նորա, ուստի և չէր նա ենթակայ հոտոյ «կարկանդակին երծաթեայ», որ ուժգին ազդէ քմաց հեղինակի կենսագրութեանն, ապա թէ ոչ մարթ էր Մեսրովպայ ընդ հարստագոյնին ամուսնութեամբ. և այլ հաւատարիմ պատեհիւք՝ շատ առաւել քան զանարատ հեղինակդ երծաթիւ ճոխանալ՝ բայց անհնարին էր նմա ի ճշմարտութենէ աղքատանալ։

Յէջ 19 մատենիդ պատմի՝ զի ի ժամանել Տէր Յովհաննու Խաչկեան ի Կալկաթա ի 1844 ամի ի 28 Ապրիլ ամսոյ՝ փութանակի այց ելեալ նմա երանելին Մեսրովպ պարապ յուսով հետազօտեալ արժէից մատենիցն յղելոց առ Ջուղա, իսկ ի լսել նորա զանաջող ելս խնդրոյն, անդէն և անդ ահեղ և սաստիկ բարկութեամբ անասելի հայհոյութիւնս և լուտանս թափեաց ի վերայ գլխոյ առաջնորդին, վանականաց և քահանայից Ջուղայու, որով և ապշեցոյց իսկ զտակաւին զանծանօթ նմա զքահանայն Տէր Յովհաննէս Խաչկեան, որ «անվրդով և խաղաղ հոգւով» յանդիմանեաց նմա բանասիրական տարրկութեամբ, և Սողոմոնի իսկ խրատական իմաստութեամբ, մինչ յակճիռս ձգել զընթերցողն ընդ իմաստութիւն և

հանճար քահանային, որ հազիւ զաթութայս և եթ մայրենի լեզուին ուսեալ էր ի մանկութեան ի Ջուղա, և դեռ ոչ գտեալ պատեհ ընկերել ընդ իմաստնոցն առ ի մակերևութիւ կրթել զինքն։ Եւ անվեհեր պատմել շարունակէ, թէ Մեսրովպ դարձեալ ի հետևեալ աւուր այց ելանէ քան զՍողոն իմաստուն քահանային, զզջալ յանսանելի հայհոյանացն, որ յերեկն ահեղ բարկութեամբ թափեաց, և անդանօր վկայ հաւատարիմ հանդիսացաւ գերիվերոյ լինելոյն Տէր Յովհաննու Խաչկեան, քան զայլ ամենայն քահանայս Ջուղայու՝ ասելով. «Կարծէի զքեզ ևս մին այն անպիտան քահանայից Ջուղայոյ լինել և այլն». այս իսկ երևի լինիլ հրապուրիչ դիտաւորութիւն երկարապատում տրամախօսութեանն, գլխովին յօրինեալ և հնարեալ ի ճարտար մտաց հեղինակին իսկ, այն է զգովեստս Տէր Յովհաննու Խաչկեան քարոզել, նոյն և ի վայր արկանել զյարգ հանուր քահանայից Ջուղայու և զայրացող և հայհոյիչ կարգել զՄեսրովպ, որով և անցեալ զանցեալ ընդ չափու հաւանելեաց, անհաւատալի է ինձ, որպէս և բազմաց, որք պատիւ անձին վարկան ընկերակից լինել երանելոյն Մեսրովպայ ընդ երկար, որոյ խստիւ հաւատարմութիւն հայ կրօնի, ջերմեռանդ սէր առ եկեղեցին, և խորին ակնածութիւն առ եկեղեցականս մեր առհասարակ, յայտ իսկ է ամենեցուն։ Նթէ լռեսցեն ականատեսք, վկայեն սմին գրուածք նորին իսկ զբարեմասնութեանցն։ Ձկարեմ ժխտել, զի բարկացող էր նա բնութեամբ, այլ բնաւ երբէք և ոչ անգամ մի լուայ ի բերանոյ նորա բարբառ հայհոյական կամ լուտանս, և ոչ անգամ խօսք անվայելուչ։

Ձկնի որոյ ընթեռնում յէջ 22 մատենից, զդատարկաբան ճառ փոխ տալոյ «անվրդով» քահանային զգումար երեք հարիւր ռուփեաց՝ առ անդրամ քերթողն, որոյ յընկալնուլ դրամոյն յիշեաց իսկ. «Եթէ սորա նորա մօտ պիտի պարծենաս այս գումարն ինձ տալուդ համար, այն ատենը քոյ հոգւոյդ վնասած և իմ անձս տուժած կը լինիս, ուստի լաւ է չտաս», որում ճշմարտասէր քահանայն պատասխանեաց. «Անպարծութիւն օտար է յինէն»։ Ահա ըստ զուշակութեան Մեսրովպայ կատարի, սնապանծ պատմաբանութեամբ հեղինակին զնիւթոյն, որով զիտեմ ոչ վնասի հոգի քահանային, այլ անխիղճ տուժէ զյիշատակ երանելոյն։ Վերջանայ անշուք վիպասանութիւն 300 ռուփեաց վատթարագոյն խորհրդով հեղինակի մատենից, մինչ անհաւատարիմ կարգէ զերանելին. զորմէ գրէ իւրացոյց զմատեանսն տպագրեալ ծախիւք քահանային, զոր զըրպարտութիւն իսկ համարիմ, զի երանելի քերթողն զերծ էր յար-

ծաթսիրութենէ, միանգամայն անտարբեր ճոխութեան, այլ խստիւ ճշմարտասէր, և հաւատարիմ։ Հաւատամ զի ձրիապէս բաշխեաց նա զմատեանսն չքաւոր ընթերցողաց, մինչ անվրդով քահանայն ակնունէր երկպատկել զդրամագլուխն և շահիլ ի ձեռնարկութենէն։

Եւ ոչ աստ զկայ առնու եղեռն կենսագրին, քաջ գիտելով զի եօթնեքին բարեյիշատակ հիմնադիրք և անդամք Արարատեան ընկերութեան հաստատեալն ի Կալկաթա յամի 1845. արդէն իսկ անցին՝ ի կենցաղոյս, և ի ձեռն մահու լռեցան լեզուք նոցա, պատեհ կալնու խոստացուցանել զխորհուրդ հիմնարկութեան զովելի հաստատութեան ազգին, և կապտել կողոպտել զյիշատակ Մեսրովբայ ի փառաց և երախտեացն ճշմարտի նմին պատկանելի, յափշտակել զարդասիս երկարամեայ ջանից նորա, բանիւ և գրութեամբ յորդորանաց Մեսրովբայ առ համազգիս մերձաւորս և հեռաւորս, առ ի կազմել ձեռնտուութեամբ ազգին՝ միջոց յարմարաւոր է լոյս ընծայելոյ զհեղինակութիւնս և զթարգմանութիւնս աշխատասիրեալսն յինքենէ, և պատրանօք տալ նուիրել զաւարն զայն ի փառս և ի պատիւ Տէր Յովհաննու Խաչկեան. յայս նպատակ հնարեալ յօրինէ անանուն հեղինակ զտրամախօսութիւնն արձանագրեալ յէջ 25 մատենիդ, և ճարտար խորամանկութեամբ, յաւէտ անպատկառ քան անվրդով հոչակէ, զի խորհուրդ հիմնարկութեան զովելի ազգային հաստատութեանն՝ յղացաւ ի հրաշալի միտս Տէր Յովհաննու Խաչկեան, արդարև զողորիկ իմն ցաւակցութեամբ «անձուկ և անշուք վիճակի» երանելւոյն Մեսրովբայ. ապա յորդորանօք և խորհրդով քահանային այնմիկ համոզեցան պատուելի համազգիք ի Կալկաթա կազմել զընկերութիւնն ազգաօգուտ։ Եւ այսմ խորհրդոյ բնաւին բոլորովին անգէտ էր քերթողն Մեսրովբ, մինչ ասաց նմա քահանայն իմաստուն. «Գնա՛ դու այժմ, ապա գիտասջիր». և այսու խորհրդաւոր բանիւ առաքեաց զնա առ Պրն. Մանուկ Ջօրայան Ջուղայեցին, իրազեկ լինել ի նմանէ զխորհրդոյ հիմնարկութեան Արարատեան ընկերութեան, ուր և յանակնկալ իսկ ընթերցաւ քերթողն զկանոնս սոյն հաստատութեան՝ կանխիկ պատրաստեալն ըստ խորհրդոյ քահանային, առ ի սաստել «զփոփոխամիտ և զանտանելի բնաւորութիւն» Մեսրովբայ։ Եթէ գոյ նշոյլ իմն ճշմարտութեան ի բանաստեղծութեանս յայսմիկ, սքանչանամ թէ զի՞արդ ոչ ընտրեցաւ իմաստուն քահանայն, յորմէ ծագեցաւ իսկ խորհուրդն ազգաօգուտ, և ո՛չ անգամ յարգելի եղբայր նորա Պրն. Մկրտիչ Խաչիկ Յովակիմեան ի Կալկաթա, լինել անդամ Արարատեան ընկերութեան։ Ունիմ առաջի զաղափար կանոնագրոյ

Արարատեան ընկերութեան հաստատեալն ի Կալկաթա յամի 1845 ընդ 17 Ջուլայի ամսոյ, որ թուի ինձ շարադրեալ լինել յերանելոյն Մեսրովբայ, որոյ երկրորդ կանոն սահմանէ, զի եօթնեքին անդամք ի նմին անուանեալք «գոլով հիմնադիրք և հաստատիչք ընկերութեանս են և կոչեսցին ընկերք կամ անդամք Արարատեան ընկերութեան», յորոց մին է քերթողն Մեսրովբ. իսկ այլ վեցեքին անդամք ընկերութեանն (յորոց երեքին գաղթեալք ի Պարսկաստանայ առ Հնդիկս» չունէին մտերիմ յարակցութիւն ընդ Տէր Յովհաննու Խաչկեան, որ հազիւ ամ մի մինչ մտեալ ի վիճակ անդանօր՝ հաստատեցաւ Արարատեան ընկերութիւն։

Վիճակ երանելւոյն Մեսրովբայ գրի ի հեղինակէ մատենիդ լինել «անձուկ և անշուք», զի պարապէր նա երբեմն ի տուր և առ։ Սակայն և այնպէս աջողեցաւ ոմանց պատուելի համազգաց ի Կալկաթա զոյզն դրամագլխով իսկ շահավաճառութեամբ յերկրամէջս հաւաքել բաւական ճոխութիւն, որք ոչ համարեցան անձուկ և անշուք յաշխատոն այնոսիկ. և զի չէր Մեսրովբ օտար և անծանօթ պատուելի համազգեաց և ոչ անգամ օտարազգեաց ի Կալկաթա, և ոչ բնաւ ապաստան փանաքի օգնականութեան Տէր Յովհաննու Խաչկեան, հաստատեն իսկ ասպնջականութիւն նորա ի տան ասպետի Յարութիւնի Աբգարեան ի դառնալ նորա ի Կալկաթա իբր յաւարտ 1839 ամի, և վերստին ընդունելոյն յեպիսկոպոսական ճեմարանի Անգղիացւոց և բնակակից լինելոյն ընդ վարժապետաց, անդանօր պարապիլ նորա դրագիտութեան ազգին, ուր ի պատիւ և ի պէտս քերթողին պատրաստեցին տիպս հայերէն, որ կայ և մնայ ցարդ ի յիշատակ երանելւոյն։ Եւ անդրէն իսկ անձնանուէր աշխատութեամբ նկրտէր ի խնդիր դրամական նպաստից ի համազգեաց մերձաւորաց և հեռաւորաց, ի կատար հանել զնպատակն ազգաօգուտ. որում կենդանի վկայք են նամակք նորա արձանագրեալք յէջս 113 և 115 մատենիդ, ուղղեալ առ պարոնայս Անդրէաս Ռոպելեանց, և Ստեփաննոս Ներսէսեան ի Դաւրէժ թուագրեալ 30 Դեկտեմբեր 1840. և 20 Փետրվար 1841 յեպիսկոպոսական ճեմարանի ի Կալկաթա, որոց յորդորէ ի նպաստ ձեռնարկին։ Զքաղուածս նոյն նամակաց դնեմ ի ներքոյ. «Գոնեա դարձուցանել զհայեցուածս ձեր յօգուտ ընդհանուր ազգին»—«Ձեռն օգնականութեան նրպաստել ինձ առ գործս բազումս, որ առաջի կայ ինձ սոսկ յազգին օգուտ»—«Նուազութիւն ազգի մերոյ ի Հնդկաստան պարտաւոր առնէ զիս ապաստան անկանել ի շնորհս հեռաւոր բարեկամաց»—«Տասն և ութն հազար գրեանք միայն յինէն շարադրեալք պատ-

րաստի կայ վասն տպագրութեան»—«Եթէ շնորհ արասջիք գոնէ դուզնաքէիւք օգնել ինձ, ուրեմն նուիրեալ զկեանս իմ բովանդակ ազգային օգտի պարապեցայց ի նմին, առանց ակնկալութեան աշխարհիկ շահուց»—«Շնորհ արասջիք նախ զանձինս օրինակ կացուցանել ստորագրութեամբ անուանց ձերոց, և ապա զայլս ի նոյն յորդորելով հաւաքել զգումարն»։ Ո՜չ ապաքէն այսոքիկ յորդորք՝ խորհուրդ իսկ են բուն նպատակի Արարատեան ընկերութեան. և մինչ թախանձանօք յորդորէր զհեռաւոր համազգիս ի նպաստ խորհրդոյն, զլանա՞յր արդեօք բանիւ համոզել զհամազգիս մերձակայս ի Կալկաթա, յորոց մեծահարուստն էր աղա Յովհանջան Էլիազեան. այր կրօնասէր և ունկնդիր խորհրդոց քահանայից, այլ սա ո՛չ համոզեցաւ նպաստել խորհրդոյն Մեսրովբայ. որ և դոյզն նրպաստիւք ոմանց ազգասիրաց տպագրեաց զքանի մի մատեանս, մինչ ըստ խորհրդոյ և յորդորանաց նորին իսկ համոզեցան Պրնյք. Մանուկ Ջօրաբեան Ջուղայեցի և Պրն. Թադէոս Խ. Աւետումեան Բասրացի, երկոքին մտերիմ բարեկամք քերթողին և ուսումնասէր հայկաբանք. համաձայն ընդ չորեքին ականաւոր համազգեաց անդ, կազմեալ հաստատել զԱրարատեան ընկերութիւն, որք և կարգեցան հիմնադիրք և անդամք ազգաշահ ընկերութեան այնմիկ բայց անբաղդ պատահարք կարճեցին զաջող ընթացս նորին, զի տարաժամ փոխեցաւ ի կենաց բարեյիշատակ և ուսումնասէր Պրն. Մանուկ Ջօրաբեան, որում և ո՛չ փոխանորդեաց ոք. և յետ փոքու ամաց գամ քան զգամ դադարեցաւ նպաստ յոմանց անդամոցն, պատճառեալ յանաջող հանգամանաց գործոց նոցին, և ոչ անգամ ի բազմաց ճոխ ազգայնոց ի Հնդիկս ճանաչեցաւ յարգ և նպատակ ազգաշահ ընկերութեանն։ Լրաթուղթն Ազգասէր Արարատեան միշտ անքաջալեր և անարդիւն մնաց ի սակաւութենէ բաժանորդաց ի մէջ սակաւաթիւ Հայոց ի Հնդիկս, որոց և մեծամասնութիւն արդարև կրթեալք յԱնգղիականին, անգէտք են Հայկականին. և ոմանք իսկ զլանային ընթեռնուլ զայն լրագիր, զի չէր այն ըստ քմաց ինքեանց։ Մի և եթ սրտակից բարեկամ Մեսրովբայ ի Կալկաթա եկաց բարեյիշատակ և ազգասէր Պրն. Թադէոս Խ. Աւետումեան, և հաւատարիմ սիրով պաշտպան եկաց նմա ցվախճան կենացն։ Եթէ ծագեցան բարիք ի խորհրդոյ սակաւամեայ աշխատութեան Արարատեան ընկերութեան՝ վկայ են իսկ բազմաթիւ հեղինակութիւնք և թարգմանութիւնք տպագրեալք ի մամլոյն, որոց թիւ մարթ էր բազմապատկել՝ եթէ ըստ արժանւոյն պաշտպանեալ լինէր զրաւոր վաստակ Մեսրովբայ, բայց և այնպէս ար-

գասիք ազգաշահ ընկերութեանն այնմիկ զարդիս ամենայն ուրեք պարծանք Հնդկաբնակ Հայոց համարին։

Ի հիացումն յուզիմ վերծանութեամբ (յէջ 26 մատենիդ) բացատրութիւն երկուց տողից վերջաբանի քերթուածոյն Սօս եւ Սօնդիպի կոչեցելոյ, «Որ զթոնթոր Սրբազան հօր, յիմ վաստակոց բառնամ բոլոր», զոր հեղինակ մատենիդ բացատրէ յարաբերել Տէր Յովհաննու Խաչկեան, և Սրբազան տիտղոսիւ զնա մեծարել բարեհաճի. որ չէր բնաւ դիտաւորութիւն երանելի քերթողին, այլ աշխատութեամբն այնուիկ բառնալ նկատեաց նա՝ զթոնթոր Սրբազան հօր Իսահակ ծայրագոյն վարդապետի Տէր Գրիգորեան, նուիրակի վանացն Երուսաղեմի ի Հնդիկս, յամի 1843, որ ընդ երկար յամելով ի Կալկաթա մեծարանօք պատուեալ ի ժողովրդականաց, մըտերիմ և սիրելի եղև Մեսրովբայ. որում և յորդորեաց հեղինակել զքերթուած իմն ի հնութեանց Հայաստանի. բացատրութիւնն հեղինակի մատենիդ նոր իմն գիւտ երևի լինել. ծագեալ արդեօք ի խորին զաղտնեաց անսնապանծութեան։

ԶՀիմնարկութենէ Ս. Սանդուխտ դպրոցին ի Կալկաթա՝ հաստատեալն յերանելւոյն Մեսրովբայ, գրէ զրպարտիչ պատմաբանն, թէ ի հակառակութենէ Պրն. Յովհաննու Աւդալեան վարժապետի Մարդասիրական ճեմարանի Հայոց հիմնեցաւ այն, և չարամիտ բանսարկութիւն հեղինակիդ՝ անբարոյական անցից տայ պատճառ կարճատև լինելոյ դպրոցին, և ո՛չ նենգաւոր թշնամութեան անձնապաստանի ումեք, որ կեղծ հաւատարմութեամբ պաշտէր յայնժամ զՅովհաննէս Աւդալեան. և շնորհիւ ճոխ ընտանեաց նորա զօգուտ և զփառս անձին հայթայթէր։ Անհնարին էր աղաւաղեալ մտաց հեղինակիդ ըմբռնել զվսեմ խորհուրդ հիմնարկութեան դպրոցին, յոր նկատէր Մեսրովբ կրթել զդալարամիտ օրիորդունս ազգին ի Հայ բարբառ, և նոքօք իսկ տարածել զմայրենի լեզու ի գերդաստանս Հայոց Հնդկաստանի, որոց բազումք ծնեալք ի Կալկաթա անգէտ իսպառ Հայերէնի զԱնգղիականն ի կիր արկանէին։ Անհնարին էր անհարթ մտաց հեղինակիդ հասու լինել, զի ի մօրէ և եթ քաջ ուսանին մանկունք զբարբառ մայրենի, որում անգէտ մընալով բազմաց ի Հայոց ի մանկութենէ՝ խորթացան յազգէ և օտարացան յԵկեղեցւոյ իսկ Հայոց։ Զարդիս ևս վկայեն հանուր համազգիք ի Կալկաթա (որոց և յաճախ այցելեալ եմ), զի անձնուրացն Մեսրովբ՝ Ս. Սանդուխտ դպրոցաւն կենդանացոյց ի նոսա զլեզուն մայրենի, և արծարծեաց զեռանդ ազգութեան ի նոսա. զի աշակերտեալք և եթ ի սոյն դպրոցի, զարդիս մայրք պատուելի

գերդաստանաց Հայոց անդ՝ հանրապէս խօսին և գրեն զՀայերէն։ Աւաղէն անդանօր հանուր համազգիք այժմ իսկ, զի ի չգոյէ ազգային դպրոցի վասն օրիորդաց՝ անգէտ մնացին նոքա մայրենի լեզուի, և գամ քան զգամ պակասին հայախօսք ի մէջ զողտր սեռին անդր, մինչ խպառ մոռանալ նոցա զբարբառ ազգին և զազգութիւն իսկ։ Ո՞չ ապաքէն անկ է անսնապանծ հեղինակի մատենիդ ի Կալկաթա, մինչ շնորհիւ բարեպաշտ ազգայնոց փարթամացեալ ճոխացաւ, զէթ ի փառս անձին՝ թէ ոչ ազգին, խորհեալ հնարել միջոց յարմարաւոր ի լնուլ զկարօտութիւն ազգին, և փոխանակ չար նախանձիւ աշխատ առնլոյ աղարտել զանաղօտ յիշատակ պատուարժան քերթողի ազգիս, գեթ հետևիլ բարեմասն գաղափարին Մեսրովբայ, և նուիրել զաշխատանս իւր յօգուտ սակաւաթիւ ազգայնոցն յանհուն օտարութեան յայսմիկ սփռելոց, հաստատելով անդ դպրոց ազգային վասն օրիորդաց Հայոց. ահա՛ ասպարէզ շահատակութեան՝ թէ կամք նորա հաստատեալ իցեն ի բարիս, և հաճութիւն ի գործել զօգուտ ազգին, ոչ պակասեսցին ամենայն միջոցք։ Ի հաճել զկամս խոհականաց ազգայնոց անդ, հաստատեաց Մեսրովբ անջատ դպրոց վասն տղայոց ազգիս, ընդ անմիջական խնամովք իւրովք և ուսուցչութեամբ. ուրանօր աշակերտէին և մանկունք կառավարչացն Մարդասիրական ճեմարանի, և մինչդեռ այս ազգային հաստատութիւն նպաստեալ արդեամբ իբր երկու հարիւր հազար ռուփոց՝ կտակեալ և նուիրեալ յազգասիրաց՝ յօգուտ նորին, հազիւ կաղ ի կաղ ընթանայր, Ս. Սանդուխտ դպրոց թարց օգնականութեան ազգին վճարէր զամբողջ ծախս դպրոցին, արդեամբ աշակերտելոցն և եթ անդանօր, և մասամբ նպաստէր ծախուց տպարանի Արարատեան ընկերութեան։ Զազգաշահ արգասեաց Ս. Սանդուխտ դպրոցին յաւելորդ համարիմ երկարել աստանօր, յորմէ յարաբերիմ խոհականաց որոնել ի պատուական թերթս Ազգասէր լրաթղթոյ, ուր երբեմն հրատարակէր աշխատասիրեալ թարգմանութիւնք աշակերտաց դպրոցին, յորոց և վկայէ իսկ— «Երեխայրիք Ս. Սանդուխտ դպրոցի» թարգմանեալ և շարադրեալ յաշակերտաց նորին ի պատիւ ազգիս Հայոց, տպագրեալն արդեամբ և ծախիւք յարգելի ծնողաց և պաշտպանացն, յաւարտ 1850 ամի ի Կալկաթա, որոյ ի վերջին թերթի պատիւ անձին վարկայ և ես որպէս երէց աշակերտ դպրոցին ըստ պատուիրանի բազմաշխատ վարժապետիս դնել զցուցակ հնգետասանից պիտանի մատենից՝ ցայն վայր թարգմանեալ ի մատաղատի աշակերտաց Ս. Սանդուխտ դպրոցին, յորոց մասն և եթ ծախիւք ոմանց ազգասի-

բաց ի լոյս ընծայեցան[6]։ Թող զայլս, զորս ի հետևեալ ամի աշխատասիրեցան յաշակերտացն, որոց մին յինէն «Եգիպտական Նշանագրութիւն» յԱնգղիականէն, որք կատարէին միշտ ընդ անմիջական վերատեսչութեամբ և սրբագրութեամբ Մեսրովբայ, որոյ անխոնջ և ծանր վաստակոց ականատես եղէ յընթացս իբր երից ամաց աշակերտութեանս անդ, ուր զօրն ողջոյն պարապէր ուսուցչութեան աշակերտաց, վերատեսչութեան վարժապետաց, տնտեսութեան տպարանին Արարատեան ընկերութեան, և մինչ ցմէջ գիշերոյն նիստ ընդ գրասեղանի՝ լուրջ և զգաստ յարդարէր նիւթս վասն Ազգասէր լրագրին, և շարադրէր հեղինակութիւնս պատուականս։

Թերևս անանուն կենսագիրն կրկնակի մտաբերէ ընթերցողին «զանիծեալ բրանդին» և չարամիտ ամբաստանութեամբ գրէ. «Քանզի Մեսրովբ իւր բնական խենթութենովն զաղտնի արբեցողութիւնն աշկարա հանեց» և այլն. բայց ըստ վկայութեան ողջախոհ ականատեսից զերծ էր Մեսրովբ յայդմ ախտէ. ես ո՛չ բնաւ տեսի զնա արբեցեալ, միայն ըստ պահանջման խոնաւ կլիմային Կալկաթու՝ առնոյր յերեկոյեան ժամու չափաւոր գինի կամ բրանդ (օղի), այլ ոչ բնաւ չափազանցէր ի նոյն։

Մինչդեռ տօթագին և անառողջ ազդեցութիւն մեղկացուցիչ կլիմային Հնդկաստանի՝ խանգարեաց միշտ զեռանդ բազմաթիւ գիտնականաց Անգղիացւոց, և ոչ անգամ ի դարուց հետէ ծագեցաւ յազգին հեղինակ ումն ականաւոր ի Հնդիկս, թերևս անդրամ և անօգնական Մեսրովբ քաջուշիմ իմաստութեամբ, և անձանձիր գործունէութեամբ, հաստատեաց և աջողուածով շարունակեաց ընդ երկար ամս, զդպրոց բարեհամբաւ, օրիորդաց և տղայոց ազգիս ի Կալկաթա, կարևորագոյն իսկ վասն համազգեաց ի տարաշխարհին. ազգաշահ հոգւով խմբագրեաց զհրապարակագիրն Ազգասէր Արարատեան. հեղինակեաց և թարգմանեաց ի Հայ բարբառ զպէսպէս մատեանս պատուականս, և միշտ ի տարակուսի կայր, թէ արդեօք ուստի հայթայթել կարէր զդրամական պէտս նոցին և անձին իսկ տուայտեալ. «մինչ հազիւ ներէին ինձ ժամանակ՝ գեթ միանգամ վերծանել ի վաղուէ, զոր այսօր գրեալն էր», և յամայր ամաց անխոնջ վաստակով և մտատանջ ի հոգ սպառեալ զանձին իւր կար, և վնասեաց իսկ զառողջութիւն անձին «սոսկ յազգին օգուտ»։
—Ո՞չ ապաքէն այսոքիկ են պարծիք մեր իրական առ ազգն և առ մարդիկ. բայց և այնպէս յումպէտս հեղինակ մատենիդ ի Կալկաթա՝ առ ոչինչ համարեալ զայս ամենայն՝ արբեցող և մոլի զնա քարոզէ, և թշնամութեամբ աղարտել նկրտի զյիշատակ անմոռանալին Մեսրովբայ։

*Յէջ 27 մատենիդ ընթեռնում. «Մեսրովբ, որ իւր բարեացապարտ քահանային սիրտը վշտացուցեր էր», որով յակամայս գեթ մասամբ խոստովանի հեղինակ մատենիդ, զի վշտացեալ սրտիւ և թշնամանութեամբ գրեցաւ կենսագրութիւն Մեսրովբայ։ Եւ ի լուսանցին դնէ սին սնոտի և գլխովին հնարեալ վէպ, կեղծ և վարկպարաղի յառաջաբանութեամբն. «Քահանային (Տէր Յովհաննու Խաչկեան) ցաւը ուրիշ բան չէր՝ բայց եթէ հեղինակին (Մեսրովբայ) խարդախութիւնը։ Սա, որ սովորած էր տարեկան երեք չորս անգամ հանգանակութեան թուղթ հանել ժողովրդեան մէջ, այլ և այլ միջոցներով կամ տպարանին օգնելոյ նպատակաւ և այլն», յոր ստորագրեաց Տէր Յովհաննէս Խաչկեան 60 ռուփի կանխիկ, դաշամբ զի միայն սովորական 20 ռուփի հատուցի. այլ ի վրճարման պահանջեաց Մեսրովբ ի նմանէ զամբողջ ստորագրեալ գումար վաթսուն ռուփոց. ուստի և հուշակէ զՄեսրովբ լինել խարդախ և զրէ՝ խաբէութեամբ կորզեաց ի նմանէ զգումար 60 ռուփոց։ Անհաւանելի էր թերևս մտաց քահանային, զի մինչ փառամոլութեամբ ստորագրեաց 60 ռուփիս, պայմանելով զի 20 ռուփի և եթ վճարեսցէ, այնու և իսկ խարդախեալ խաբեաց զհանուր ժողովրդականս Հայոց անդ, և ստութեամբ առատաձեռն հանդիսացաւ յաչս ամենեցուն։ Հաւատամ զի երանելին Մեսրովբ՝ ի պէտս ծախուց տպագրութեան հայ մատենից՝ կարօտէր միշտ յօժարակամ օժանդակութեան համազգեաց ի Կալկաթա. որ սովորաբար ի ձեռն անդամոց Արարատեան ընկերութեան անօրինեալ ընկալնոյր։*

*Եթէ ըստ բանի Կենսագրին Կալկաթայի համոզեցաւ Տէր Յովհաննէս Խաչկեան ստորագրել զփանաքի գումարն՝ յօգուտ բարի նպատակի, և զայն ըստ ժլատ բնաւորութեանն ի ցաւ սրտին վրճարեաց, ուրեմն այս կարեվէր ցաւ ցարդ ո՛չ բուժեցաւ, զի յետ երեսուն ամաց մաղկատէ և զղջայ, զի նուիրեաց զաղքատիկ նրպաստն յօգուտ ազգաշահ նպատակի. ուստի և զսնոտի վէպն հուշակէ՝ առ ի խարդախ կարգել զՄեսրովբ և բարեացապարտ զինքն անուանել։ Անհաւատալի է ի բերանոյ Մեսրովբայ հնարեալ զրոյցքն, որ դնէ ի լուսանցի անդ, և գլխովին հնարեալ ի ճարտար մտաց կենսագրողին։ Խոհականաց անկ է ըստ պտղոյն ճանաչել զծառ, և ըստ բնաւորութեան ուրոյն անհատից ենթադրել զգործ նորա. արդեօք մա՞րթ է խելացի ումեք հաւատալ, զի վեհանձն և անձնուրացն Մեսրովբ՝ խաբէութեամբ կորզեաց ի քահանայէն զդոյզն գումար 60 ռուփոց, գեթ յօգուտ անձին և ոչ ազգին. յորմէ ամենեքին վկայեն իսպառ անտարբեր լինել ճոխութեան, որ*

և մերժեաց անգամ՝ յաշակերտացն հրաւիրեալ նպաստ վասն անձին՝ մինչ հիւանդ էր ի Սինկափուռ, որպէս վկայէ նամակ Պատուելի Պրն. Յովհաննու Յարութիւնեան, որոյ գաղափար կցորդեմ ըստ այսմ։ Բազմաշխատն Մեսրովբ՝ յետ երկար ամաց անխոնջ աշխատութեան ի Կալկաթա, ստիպեցաւ ի ցաւ սրտին ի յիսնամենի ծերութեան, լքեալ և անքաջալեր, վասն խնայութեան ծախուցն՝ փոխադրել զտպարան և զդպրոցն ի Չիչրա, յորմէ ճշմարտիւ գրէ երանելին Մեսրովբ՝ ըստ սրտեռանդ փութոյն վասն Հայ օրիորդաց և մանկտոյն ի Կալկաթա. «Որք զրկեցան ի հայրենի հրահանգաց, այլ յայսմ մասին ճար չկայր». «Մեք ոչ միայն որքան պարտ էր, այլ և որքան ցվերջին ճիգն էր արարաք, բայց չկարողացաք նոքօք զդէմ ունել բուռն յորձանաց ազգային յօժարութեան առ օտարութիւն»։ Յայսմանէ հեղինակ մատենիդ հրճուանօք անգամ յիշէ. «Եւ տեսնելով, որ շատերը բաժանորդութիւննին կթողուն և ծախքն կաւելնայ, կփոխադրէ իւր բնակութիւն և տպարանը ի Չիչրա»։ Աւա՜ղ ազգակործան տգիտութեան կենսագրին, որ եթէ կրէր ի ծոցի սիրտ ազգասէր, անկ էր նմա համակեալ ի սուգ՝ ողբալ զօրն, յորում անձնանուէր մշակն ազգին ուսման՝ հալածեալ ի հանգամանաց՝ ուծանալ ստիպեցաւ ի գրգանաց անտի համազգեաց ի Կալկաթա. արժանի էր նմա զդառնագին արտօսր հեղուլ վասն ժամուն, յորում ստիպեցաւ քերթողն ազգիս, վասն խնայութեան ծախուց տպարանի, առանձնանալ ի լռութիւն անապատին ի Չիչրա, մինչ տոչորէր նա ի սիրտ՝ զի օրիորդունք և մանկունք ազգին զրկեցան ի հայրենի հրահանգաց, և թէպէտ պարտասեալ, այլ ո՛չ վհատեալ՝ ցվերջին ճիգն աշխատէր գեթ սակաւ ծախիւք անդանօր մարթանայր ծառայել ուսման ազգին։ Աղետալի իսկ է, զի մեծահարուստ Հայազունք ի Հնդիկս ո՛չ ճանաչեցին զյարգ բազմերախտ քերթողին, յորոց բազումք անարգիւն համարելով զհրահանգ ի Հայ լեզու, յօտարին յարդիւնաւոր բարբառ ընտրեցին կրթել ըզմանկտիս, և ոմանք որոց անկ էր ի պաշտպանութիւն ազգային լեզուի, և հետևաբար ազգային եկեղեցւոյն իսկ, յորդորանօք ի ժողովուրդսն՝ խրախուսել զազգաշահ նպատակ քերթողին, ընդ հակառակն գործեցին չար նախանձու և փառամոլութեամբ, որպէս տարազ գրութեան հեղինակի մատենիդ ակներև ցուցանէ։

Ո՛չ բաւեալ հեղինակ մատենիդ՝ ըստ քմացն վատահամբաւել զՄեսրովբ ըստ վարուց, բարուց և բնաւորութեան, նկրտի թերևս առ ի կարծել զնա անգութ և անգորով. ուստի հնարէ վէպ երկարա-

պատում արձանագրեալ յէջ 29 և 30 մասեանն այսպէս. «Եւ ահա խղճալի Շուշանն պատգարակի մէջ դրուած եկեղեցւոյ գաւիթն կերևի, թուլցած, նուաղած, ուժէ կտրած, ո՛չ անկողին, ո՛չ բարձ, ո՛չ վերմակ և ո՛չ անգամ հագնելու զգեստ ունենալով և այլն». առ որ Տէր Յովհաննէս խաչկեան ափշեալ զարհուրեալ, կոչէ զեղբայր և զքոյրսն Շուշանայ, որք մերժեն հօգալ զնա. քահանայն ճարահատեալ վարձէ սենեակ մի ի պարապ տան, պատրաստէ կարասիքն և տարեալ անդ զհիւանդն Շուշան, կոչէ բժիշկ, կրկնակի գրութեամբ կոչէ զՄեսրովբ, յորմէ ընկալնու բերանացի պատասխան. «Իմ գլխում խելք չկայ. դու գնա, նայքր կգամ, եթէ կարենամ»: Յայսմանէ հետազօտեալ՝ ընկալայ զհետագայ տեղեկութիւն ի Պրն. Խաչիկ Թադէոս Աւետումէ ի Կալկաթա, որ մտերիմ և քաջածանօթ էր երանելւոյն Մեսրովբայ, և գրէ այսպէս. «Երբ Տիկին Շուշանն սաստիկ հիւանդ էր, իւր ամուսինն փութով գրէ իւր բաջանաղ (օրինօք եղբայր)* Պրն. Ղազար Սիմէօնին, որ գնայ Չինչրա և խեղճ հիւանդին բերի Կալկաթա, Պրն. Ղազար Սիմոնն ես իսկոյն գնա մին փոքրիկ նաւակով (սանէջ երկաթուղի չկէր) և բերէ զտիկին Շուշան մին մեծ Creen boat—ով (նաւակ յարդարեալ վասն նաւորդող տիկնաց կամ գերդաստանաց ընդ պխտայից նոյա, ի վերայ գետոյն), և որովհետև իւրենք մին փոքրիկ տան էին բնակած, և նոքին դրութենում, և տան ես տեղ չլինելով, մին այլ տուն Պրն. Ղազար Սիմէօն վարձէ, այլ խեղճ հիւանդն մին կամ երկու օրումն վաղճանի և թաղման է մեր Ս. Նազարեթայ եկեղեցումն, ծախիւք իւր ամուսնոյ Պրն. Մեսրովբ Դ. Թաղիադեանցի. խեղճ վարժապետն մեր ես ներկայ էր յուղարկաւորութենում. քանզի Պրն. Ղազար Սիմէօն փութով չուր էր առաքել իւրն և ինքն իսկոյն գայ, ես ես ներկայ էի թաղմանն»: Արհամարհ համարիմ նշմարել ինչ զպատմաբանիդ ստուգութենէ, որոյ վէպ գլխովին տարբեր գտանեմ վկայութեան Յարգելի բարեկամիս ի Կալկաթա, որոյ հայր բարեյիշատակ հանգուցեալ Պրն. Թադէոս Խ. Աւետում սրտակից բարեկամ գոլով Մեսրովբայ, քաջածանօթ էր զնիւթոյն. թողում խոհականաց կշռադատել զիմաստ մանրապատում ճոռոմաբանութեան հեղինակի կենսագրութեան:

Հարցանեմ, արդեօ՞ք վայելուչ է ութնամեայ քահանային, տալ ի հրատարակութիւն և հաշակել զառանձին նամակ Մեսրովբայ առ նա, թուագրեալ ի 1855 ամի, որով ըստ անյիշիչար բուսոյ

---

* Քենայր կամ քենակալ

*բնաւորութեան իսկ՝ թախծեալ ի սիրտ՝ դիմէ առ Տէր Յովհաննէս Խաչկեան, յանձն առնելով նմա զհոգևոր պաշտամունս օրհասական Շուշանայ։ Բուն նպատակ սոյն նամակի թուի ինձ գոլ՝ գեթ ամոքել զոխակալութիւն Տէր Յովհաննու Խաչկեան, և համոզել, զի ի դէպս օրհասի Պատուելի Տիկնոջն ի Կալկաթա՝ կատարեսցին անդ ըստ պատշաճին հոգևոր պաշտամունք նորա, և ըստ որում երեք ամաց հետէ բնակէր Մեսրովբ ընդ տիկնոջն ի Չիչրա, կարծէր զուցէ, թէ տէր Յովհաննէս Խաչկեան՝ ի հակառակութիւն Մեսրովբայ, համարելով զՊատուելի Շուշան որպէս ժողովուրդ Չիչրայ վիճակի, մերժէր կատարել զպաշտամունսն ի Կալկաթա, ուստի գրեաց Մեսրովբ զայդ նամակ, որ սկսանի «քահանային ոխակալութեան հոգի չէ տուած». և ապա յազդ առնէ զՇուշանայ՝ «ընկալեալ սորա երէկ զվերջին թուղթ, դա ժողովուրդ քոյ է՝ կարօտ և վերջին աղօթից քոց», որով յայտնապէս առարկէ բառնալ զառիթսն զայնոսիկ՝ որովք մարթէր վիճակաւոր քահանային ի Կալկաթա հրաժարել ի հոգևոր պաշտամանց Շուշանայ մահացեալ անդանօր, զոր գրէ. «Զի պատուական մասն անձին իմոյ, թօշնեալ, նուաղեալ Շուշանի, ասեմ», «առաքեմ առ քեզ ի լրութիւն մնացուածոյն, զոր ես անբաւական ի վճար», յայտնապէս զհոգևոր մատակարարութենէն նշմարէ, և ո՛չ վասն խնամակալութեան և սիրոյիցն։*

*Վերջաբանութիւն սոյն նամակի յայտ առնէ զդառնագին աղէտ տրտմութեան Մեսրովբայ վասն անբուժելի հիւանդութեան Տիկնոջն, սոյն անապատուան կենացն, արժանի իսկ կարեկցութեան և սփոփանաց։ Բայց անողոք հեղինակ կենսագրին ո՛չ անգամ խնայէ թախծեալ և տագնապեալ վիճակին Մեսրովբայ, որ յետ թաղման Պատուելի Տիկնոջն ստիպեցաւ գիշերել առ քահանային ի Կալկաթա, և մինչ ի հեծութեանց ընկճեալ խնդրէ սուղ ինչ բրանդ, և ի տրտմութենէ սրտին ո՛չ ընկալնու կերակուր, պատեհ համարի կենսագիրն չարամիտ խորհրդով իմաստասիրել ի վերայ արբեցութեան ախտի խմորելոյն կատարածի։ Եթէ ըստ մակաբերութեան կենսագրին՝ արբեցութեան ախտի խմորեալ իցէր Մեսրովբ, մարթ էր նմա վաճառել զապարանսն, որոյ արժէք ընդ երկարս ծախել, ըստ անճշմարիտ ստորասութեան կենսագրին «անզուսպ արբեցողութեան տալով ինքզինքը», կալ և մնալ յառանձնութեան անդանօր ի Չիչրա, բայց դէպք վայրին յայտ առնեն զունայնութիւն կշտամբանաց հեղինակի մատենիդ. զի մինչ ի դերև ել քաղցր յոյս Մեսրովբայ ի ծառայել զրագիտութեան ազգին ի Հնդիկս, և էանց ի կենցաղոյս պատուելի Տիկին նորա, աճապարեաց յայլուրեք*

նուիրել զմնացորդ կենացն ի սպաս դաստիարակութեան մանկտւոյ ազգին։

Ուստի որոշեալ նուիրեաց Յակովբայ Անանեայ որդիացելոյն հանգուցեալ տիկնոջն՝ զամենայն ինչս իւր և զկարասիս, և յանձնառնելով զնա ի խնամս կնքահօր նորին, առեալ ընդ իւր զքանի արկղ մատենանս, մինչ հիւանդ և անդրամ, չու առեալ մեկնեցաւ ի Հնդկաց գնալ առ Պարսկաստան. զի կամք նորա անդադրում հաստատեալ էր միշտ ի ծառայել գրագիտութեան ազգին, յորմէ յուսաբանութեամբ գրէ երանելին Մեսրովբ ի նամակին ուղղեալ առ Տէր Յովհաննէս Խաչկեան, թուագրեալ ի Ձիւրա 27 Մէյ 1857, որ տեսանի յէջ 37 մատենիդ այսպէս. «Եթէ վասն ապրուստի իմոյ հոգայի ինչ, զիմս այլոց ոչ տայի և բաւական էր։ Եթէ զպարապութիւն և զհանգիստ սիրէի՝ ահաւասիկ զերկոսին ես ունիմ ի մեղկ և թուլամորթ քաղաքի այսմիկ։ Բայց չէ՝ կամիմ, եթէ կեամ, պիտանի լինել ազգի իմում»։ Սոյն իսկ խորհրդով վառեալ նորա միշտ. զկեանս իւր ողջոյն պատարագեաց զոհ բոլորանուէր պայծառութեան ազգին գրականութեան, որոյ ի տրիտուր երախտեաց հոչակեալ ազդ առնէ անանուն կենսագիրն (յէջ 47 մատենիդ) ի գիտութիւն հետեւորաց անծանօթից, զի քերթողն Մեսրովբ ըստ բնաւորութեան և վարուց «հրէշ մի էր և իբր գրաստ գրաբարձ»։ Ո՜հ, վիշտ անհնարին արդարև բանասիրաց ազգիս, և որոց կրենն ի ծոցի սիրտ ազգասէր, զի քերթողն ազգիս հրէշ և գրաստ անուանագրի ի յումպէտս կենսագրէ։

Յայս վայր անանուն կենսագիր Մեսրովբայ յամենայն դէպս ներկրտեաց աղարտել զյիշատակ երանելոյն, ըստ վարուց և բնաւորութեանց, և տակաւին ոչ տակեցաւ զյագուրդ ըղձիցն գտանել, ուստի յէջ 47 մատենիդ մանրամասն նկարէ զպատկեր անձին նորա որպէս. «Զառադէմ և յոյժ տգեղ»։ Թէպէտ ոչ էր Մեսրովբ բոլորովին չքնաղագեղ անձամբ, քնքուշ գեղադէշ դիմօք, այլ ո՛չ բնաւ ձառադէմ և տգեղ։ Միջահասակ էր նա, դէմքն կանոնաւոր, տեսիլ ականցն ազդու, խորիմաստ, տիպ դիտակին էր վեհանձն, անվեհեր և մտաւորական, վարք նորա քաջ և վստահ, և ընդ ամենայն՝ տեսիլ նորա հաճոյական և պատկառելի։

Գրէ կենսագիրն զՄեսրովբայ «Բնաւորութիւնն անհաստատ և միտքը փոփոխական», որում պատասխանեմ, զի հաստատուն և անդադրում էր միտք երանելոյն ի ծառայել ազգին ուսման, որ և բուն նպատակ կենացն համարէր. այլ ժամանակակիցք ո՛չ ճանաչեցին զյարգ ազգասէր քերթողին։ Դարձեալ գրէ. «Բարեկամութիւն

իբրև առ ոչինչ համարէր», որ չէ արդար։ Հաւատարիմ սիրով ճանաչէր նա զյարգ ճշմարիտ բարեկամութեան, զոր, աւա՛ղ, սակաւուք ումամբք նշմարեաց անդ ի միջի. բայց ըստ բնածին անաչառ բնաւորութեանն անխտիր խորշէր, և հեգնէր զկեղծ բարեկամս։ Յարմարէր նա միշտ զխօսակցութիւն իւր ըստ քմաց լսողին, այլ չէր նա բնաւ «ընդհանրապէս անպարկեշտ և կծողական»։

Յէջ 47 մատենիդ գրէ կենսագիրն զնմանէ. «Եկեղեցականների հետ հաղորդակցիլ չէր սիրեր և այլն»։ Հանգոյն հաւատարիմ սիրոյն առ Հայաստանեայց եկեղեցին, մեծարէր Մեսրովբ և զեկեղեցականս առ հասարակ, որում և յաճախ այց առնուին ականաւոր քահանայք Անգղիացւոց ի Կալկաթա, որոց ոմանք ի տիս պատանեկութեան աշակերտակիցք ընդ նմա եղեալ յՕքսֆորտական ճեմարանին, մեծարանօք յարգէին զնա։ Մտերիմ յարակցութիւն Մեսրովբայ ընդ սրբազան ծայրագոյն Իսահակ վարդապետի մինչ էր նա ի Կալկաթա, և ի գովեստ սոյն սրբազան նուիրակին Երուսաղեմայ խմբագրեալն յԱզգասէր լրագրին, ո՛չ բնաւ վաւերացուցանեն զկենսագրին կշտամբանս։ Եթէ ըստ վկայութեան անանուն կենսագրին պարսաւանօք խօսեցաւ Մեսրովբ ի վերայ ոմանց կրօնաւորաց ազգիս. այն ի վիշտ սրտին և յուղղութիւն մոլար ընթացից նոցա նշմարեաց։

Յէջ 48 մատենիդ արձանագրէ կենսագիրն զհետազօտեալ կարծիս Մեսրովբայ վասն սկզբանց լրագրական խմբագրութեանց, յորմէ և բացատրութիւն Մեսրովբայ չէ զխոտփին տարբեր գործնական իրողութեանց բազմաց հրապարակագրաց, ուստի և յարմարագոյն պատասխանի հետաքրքրանաց նորա։ Սակայն պատուական թերթք Ազգասէր լրագրոյ կենդանի վկայք են ճշմարտասէր սկզբանց խմբագրին, որում դիւրին էր սիրելի բազմաց կարգել զինքն, և բազմապատկել զթիւ բաժանորդաց լրագրոյն ի Կալկաթա. եթէ ոչ շողոքորթ պաշտպանութեամբ անճշմարտին, գեթ անբասիր թողլով զթերութիւնս ոմանց բազմահարուստ ազգայնոց անդ։

Յէջ 48 մատենիդ յերրորդ յօդուածի՝ չարամիտ հնարիւք գրէ կենսագիրն. «Ասացին ոմանք և իրաւամբ, թէ նորա իմաստութեան մտաւոր տաղանդը՝ կնմանէր խողի քիթը ոսկի օղ դրուածին, մանաւանդ երբ կմտանէր Բաքոսի տաճարը և իւր ախորժածի անյագ ծարաւը կզովացնէր»։ Արհամարհ համարիմ նշմարել ինչ զանպատկառ իմաստից բաղդատելոյն զազգասէր քերթողն ազգիս ընդ դրաստուց և խողից, որ ճշդրտեն և եթ զեւս անհարթ մտաց կեն-

սագրին, որ զկնի դիշատնյոյ ըստ քմացն զանցս կենցաղոյն Մեսրովբայ, դարձեալ խիզախի ի վերայ յիշատակի պատուարժան հանգուցեալ Յովհաննու Աւգալեան Ներհուն վարժապետին ի Կալկաթա. որում և յէջ 50 մատենիդ նկարէ «զայրացկոտ դէմքը՝ սարսափ կբերէր աշակերտին». «կուզէր խաւարի մեջ պահել աշակերտները». «կեղծաւոր և շողոքորթ բնաւորութեամբը ամենուն յարգելի էր», որով ճշգրտէ յանձին «ոչ գիտեն զինչ գործեն»: Այսու և ոչ յագուրդ մոլար ըղձիցն գտեալ, յէջ 51 մատենիդ հայհոյանոք գրէ զեկեղեցւոյն Հայոց ի Կալկաթա, այսպէս. «Ինչպէս իրաւամբ ասաց ոմն, Երրայեցւոց Սինագոգի մէջ Աստուած և Մովսէս կան, և մահմետականաց մզկիթի մէջ՝ Աստուած, Մահամադ և Ալի, մեր այս տեղի եկեղեցւոյ մէջ ո՛չ Քրիստոս կայ և ո՛չ առաքեալք»: Անա այսպէս բացասէ անարատ հեղինակ մատենիդ զԱւետարանին Սուրբ բանից խորհուրդ, թէ «Ուր մի կամ երկու ի նոցանէ եղիցին, անդ և ես եմ ի մէջ նոցա», որով թելադրէ մտացս համարիլ զանանուն կենսագիրն՝ Երրայեցի ոք, և կամ հետևորդ մարգարէին տաճկաց: Անա յայս տարազ գրէ հեղինակ մատենիդ զփառաւոր Սուրբ Նազարեթայ եկեղեցւոյն ի Կալկաթա, ուրանօր ի տարաշխարհին յամենայն ի սուրբ աւուրս խուռներամ խմբին հայ ժողովրդականք, ջերմեռանդ հաւատով հաղորդակից լինել փըրկաւէտ խորհրդոյ Սուրբ Պատարագին, ի սեղանի անդր մատուցեալ: Եւ ի՞ւ արդեօք իւիք ճշգրտի, զի ի սոյն «եկեղեցւոյ մէջ ո՛չ Քըրիստոս կայ և ո՛չ առաքեալք». գուցէ առիթ անհաւատութեան ծագեցաւ ի հանդամանաց, զի ըստ որում ոմն վաղեմի պաշտօնեայ, արգիլեալ ի պաշտամանց սոյն եկեղեցւոյն, ո՛չ ևս իշխէ զՄաքեավէլեանն ի կիր արկանելով զիմաստակութիւն՝ երկպառակել յար զանմեղ տարերս բարեմիտ հայ ժողովրդեան ի Կալկաթա, և առնել անդ ըստ հաճոյից, ի փառս և ի փարթամութիւն անձին իսկ, և ի կործանումն ազգութեան. ուստի և ըստ թիւր դատողութեան կենսագրին, զարդիս ո՛չ Քրիստոս կայ յեկեղեցւոջ անդ և ո՛չ առաքեալք:

Անդրէն դառնայ անանուն կենսագիրն թափել զժանդ աղաւաղեալ մտացն ի վերայ սրբազան առաջնորդաց ազգիս (ոչ միոյն և եթ, այլ ամենեցուն) և սրբակրօն քահանայից Ջուղայու առ հասարակ, առանց իւիք բացառութեան, որպէս յէջ 51 մատենիդ ընթեռնում. «Եւ այս ամենայն յառաջ եկած են ի շնորհս պորտաբոյծ և պիտակ առաջնորդաց Ջուղայու, և մարդապաշտ, աներկիւղած և և սուտ քահանայից, որք կառավարեն (իբր թէ զկրօն եւ զեկեղեցի

Հայոց Հնդկաստանի։ Ահա այսու մեծարանօք գրէ կենսագիրն Մեսրովբայ ընդհանուր Եպիսկոպոսաց և քահանայից Հայոց ի Նոր Ջուղա. զորս և այսու ակնածութեամբ նշաւակէ յաչս ընթերցողաց ազգիս, մինչդեռ ոչ անգամ և իմ ի նոցանէ վայելեաց զայն ճահաւոր պատեհ գործելոյ յօգուտ ազգին և եկեղեցւոյն Հայոց Հնդկաստանի, որպէս բստ աջող հանգամանաց՝ վիճակեցաւ երբեմն Տէր Յովհաննու Խաչիկեան ունել ի ձեռին պատշաճաւոր պատեհ և միջոց՝ գործելոյ զբարիս վասն ժողովրդեանն. որ եթէ ճանաչէր զյարգ ազգային հրահանգի և ուսումնականաց ազգին և զէթ խորհրդով քաջալեր լինէր աջակցած հաստատութեանց Հնդկաստանի, կամ զէթ ծանեաւ զինքն և զպարտիս սրբազան պաշտօնին իւր. անկ էր նմա յայլ տարրս նշմարել զազգայնոց անդ և զեկեղեցւոյն)։*

Ոչ ներեն ինձ ժամանակ յաւել երկարել զնիւթոյն. այսքանեօք ղարտիք անձին վարկեալ բստ կարեացս՝ ի պաշտպանութիւն ճըշմարտութեան բացատրելով, ի ցաւ սրտիս սակայն երբեմն պարսաւանօք գրել զանանուն հեղինակէ կենսագրութեան Մեսրովբայ, յաւէտ հետևելով մարգարէին ակն ընդ ական փոխադարձ խրատու, քան երկնաւորին վարդապետի ներողամիտ գաղափարի։ Ապաքէն իմ՝ւ իւիք պաշտպանեսցի ճշմարտութիւն, թէ ոչ յաւաբանութեամբ դիպացն և եղից նոցա. և բստ որում սրբութիւն ձեր բարեհաճեալ (գիտեմ բարի դիտմամբ, և ի սէր անմահ յիշատակի նահատակ քերթողին ազգիս), և աշխատասիրեալ ի լոյս ընծայեցեր զհեղինակութիւն անանուն կենսագրին Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց. չէ ինչ անճահ արդ բստ իմ հաւատոյ, եթէ ժտիցեմ հայցել ի սրբութենէդ, զի բարեհաճեալ անօրինեսջիք տպագրեալ հրատարակել զայս իմ փոքրիկ գրութիւն, որով փարատեսցին միով ընթերցողաց յիշեալ կենսագրութեան Մեսրովբայ ի բամբասանացն անդր արձանագրելոց։ Տենչալի և եթ է՝ զի մի անմեղն

* Բազում և խիստ կծիւ գրէ Պրն. Յ. Ճ. Սարգսեան զալէ Յ. Խաչիկեանէ, և ինչ անարգէ զխոստացեալ բանս կենսագրին, ինքն ի նոյն ընկզմի կիրս զխոժին։ Տէր Յ. Խաչիկեան արարեալ է զայն ամենայն, որ ինչ վայել էր իւրում պաշտօնին, բստ չափու կարողութեանն, բայց թէ ընդէր պարոն Սարգսեան զմեծագոյն պահանջէ ի նմանէ և ոչ յեպիսկոպոսէն, որ աչօք իւրովք եւեւ զանչափ վիճակ աջակցած հաստատութեանց Կալկաթայի և անփոյթ եղև, զարմանալի է արդարև յոյժ։

Յ. Ք. Ա։

*գոհեսցի և անանուն կենսագրին վասն անարդար ի սնար զոհին յաղթական ծածանեսցի ի տարապարտուց։ Ուստի հարկ համարիմ երեք հարիւր օրինակ գրութեանս տպագրեալ, սոյն իսկ տեսակ տպագրով, որպէս վասն կենսագրութեան ի վեր անդր յիշեցելոյ է կիր արկեալ ի ձև փոքրիկ տետրակի[1], առաքեսցի առ իս աստ։ Եթէ սրբութիւն ձեր բարեհաճեսցի կատարել զայս աղերս, շնորհ անձին համարեցից աշխատ ձեր, որոյ և ծախք շնորհակալութեամբ վճարեսցին։ Բայց եթէ անձահ վարկցես յանձն առնել զայս իմ խնդիր, ուրեմն հաճեսցի հնարաւոր փութով յայտնել ինձ զայնմանէ։*

*Խորին ակնածութեամբ բարեհաճ ընդունելութեան աղերսից յուսալով*

*Մնամ, Սրբակրօն Տէր,*

*Քոյդ խոնարհ ծառայ*

**Յովհաննէս Շ. Սարգսեան**

## 15. ՀՈՎՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Յարգոյ Պրն. Հովհաննես Շահնազար Սարգսեան

*Ի Նեւ-Եօրք*

*Իմ թանգ Պարոն*

*Վասն հանգուցեալ Պարոն Մեսրովբ վարժապետի մասին միայն այսքան իմ տեսած կամ գիտացածնայ, ընթացս Պրն. Մեսրովբի վարժապետ լինելն շկօլն ցրնծմանէր, յաւել քան 150 աշակերտք կային, որոց յաւել պակաս 15 անձինք հասակաւոր Պարնայք քերականութիւն ուսանեն. վեց քահանայք երկու վարժապետք եւ վարժապետ Մեսրովբն իւր լաւագոյն ջանքն գործ դնէր վասն աշակերտաց յառաջանալոյ, և յառաջանին, բայց Ջուղայեցիք արժէքն չիմացան, այդ ազազաւ վարժապետի սիրտն սառեց, հրաժարվեց իւր պաշտօնիցն, վերջն Ջուղայեցիք զղջացին այդպիսի վարժապետ կորուսանելն։*

*Վարժապետի մեծ պակասութիւն այդ էր՝ Ինգլիզի պէս թունդ բնութեան տէր անձն էր, անկանոն բան չէր կարող տեսանել, զոր ինչ որ կայր կուզէր արդարացի լինէր։ Որովհետև ինքն ուսեալ անձն էր՝ չէր կարող Ջուղայեցւոց զոռոզ բնութիւն տեսանել, միշտ ցանկայր ունել անձանց հետ ընկերակցութիւն պահել, այդ է որ*

*Զուգայեցիք յատուկ յարգանք ցոյց չտուին վարժապետին. նա ևս հրաժարուեց իր պաշտօնիցն։*

*Այդ անտեղի զրպարտութիւնք որ ասեն միշտ հետևէր իր ըզ-բօսանաց, գինի խմէր, ղուռզանէր, երբէք չէր տեսած կամ լսած։*

*Սուտն իբր աշակերտաց ծեծ կտայր, երբէք ոչ։ Սաստիկ ատեմ ունէր, որ բոլոր աշակերտքն կզգային առանց ծեծ տալոյ։ Պատահէր ով որ անհնազանդ լինէր ծնողաց, կամ սուտ խօսէր, կռչէր, դեկանչին կշտակէր, երկու ոտան տայր. նոքա որ անփոյթ կային ուսանելուց, ծաղրածու մի գլխարկ դնէր նոցա գլխին և ամանչելով միւս անգամ հետևէին ուսմանցն։*

*Ես քեռոյս ներքոյ՝ Ամբարձին կարգայի, երբ գնացի վարժապետի մօտ, տարա. այբ ու բենի դասն գծեց. գրաբարից աշխարհաբար սովորել տուեց. մինչ 2000 բառ սովորելիս ինձ շատ յառաջադէմ գտաւ, այդ աղաղաւ գրքատուն, քաղաք, եւ գրիչք յանձնեց ինձ որ կառավարեմ։*

*Որքան սիրէինք վարժապետին՝ յայտնի էր, Պարոնն եկաւ ի Սինկափոռ և հիւանդ լինելով եօթն անձինք նորա աշակերտակք ի Սինկափոռ էինք, ժողովք կազմելով վերջաւորեցինք իւրաքանչիւրս ամսեն Տասն մառչել տալ, և վարժապետին առաքել առ Պինանգ, որ անդ առողջանայ։ Զինդամեց և ասաց,— Ղուզում, ես իմ ղալակայէ՞ պիտի դրամ առանամ, ո՛չ բնաւ. և չառացաւ, եթէ մեք ծեծ ու փէտ լինինք կերած, այդ առաջադիմութիւնն չէինք անել. այսու պիտի իմանաս որ մենք սիրէինք մեր վարժապետին։ Այսքանս բաւ է, եթէ կամենամ գրել՝ թուղթս շատ կերկարի. ուստի կնքեմ ողջունիւս։*

*Եւ մնամ Թանգ Պարոն*

*Քոյդ հաւատարի*

Յովհան Յարութիւնեան

*Բատաւիա, 19 Օկտօբր, 1886*

## 16. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Յարգոյ Պարոն Յովհաննէս Շ. Սարգսեան

*, Ի Ներկայ*

*Թանգ Պարոն*

*Ամսոյս 2-ին թուով նամակդ ստացեալ եմ ի ժամու, և ըզ-նիւթոցն ի միտ առեալ։ Որ հարցանես ինձ ծանօթութիւն տալ վե-*

բաքերելի յաւերժայիշատակ հանգուցեալ Պ-ին Մեսրովբ Դ. Թա-
ղիադեանց, երբեմն վարժապետ Սամեանց Ամենափրկչեան դպրոցի
հաստատեալ ի 1834 ամի. ոչ 1830 որ գրէ անանուն հեղինակ
տետրակին կենսագրութեան յիշեալ Պրն. Մեսրովբի տպագրեալ ի
Կ. Պոլիս. զի հանգուցեալ Պրն. Գրիգոր Սամեանն՝ հիմնադիր դպրո-
ցին վախճանեալ է ի 1833 ամի ի Մադրաս, և կտակաւ աւանդեալ էր
գումար քան հազար ռուփեաց, որոյ եկամտօքն պարտ էր շա-
րունակել դպրոցն, համեմատ դաշանց և կարգադրութեան զոր ինքն
յիշատակնեալ էր ի կտակի. իրաւի ես աշակերտեցի յիշեալ դըպ-
րատան յայնմ ժամանակի, այլ ի մատաղ հասակի, զի հազիւ
սկզբունք գրավարժութեան ուսանէի, եւ որքան այն ժամանակնայ
հասակ և յիշողութիւն ներէ, եւ որքան ժամանակ Ջուղայ էի եւ
յետոյ այլուր, լուեալ եմ ի բազմաց զի նա էր յարմար պաշտօնեայ
վարժապետութեան, և մի ի գիտնական անձանց ազգիս որ տարա-
բախտաբար փոքրաթիւ են, սորին գիտնականութեան համբաւն
արդէն կայ դրոշմեալ յէջս պատմագրաց մերոց։ Վասն համադամ
սեղանոյ քիշմիշ եւ Նաջաֆի գինոյ եւ ձին պատրաստ լինելոյ ըղ-
ջօսանք գնալոյ և այլն, որ գրէ հեղինակ տետրակի, առ այդ չունիմ
ծանօթութիւն ինչ, զի ոչ ընկերակից, ոչ համադամ կերակրոյ սե-
ղանակից և ո՛չ գինոյ բաժանորդ էի նմա. այլ ինձ թուի անանուն
հեղինակն թէև զօղով ծածկեալ, այլ լեալ է նմա սեղանակից, և
գինոյն բաժանորդ, որոյ անուանքն որոշաբար յիշէ։

Դպրոցի աշակերտաց անպակաս ծեծ ու փէտ տալով զզուե-
ցուց ժողովուրդն, զոր գրէ հեղինակն, սորա մասին այս է իմ
վկայութիւնն, որ թէև ըստ այն ժամանակեայ սովորութեան կայր
դպրոցում գնլարան կամ փալաղան և փայտ և այլ տեսակ պատիժ,
այլ վասն ստահակ և խեւ աշակերտաց, որ երբեմն գործ դնէին,
այլ ոչ մշտապէս և ոչ չափազանց. քանզի եթէ այդպիսի խստու-
թիւն լինէր՝ զի՞րդ կարելի էր վառել զխանդ ուսումնասիրութեան,
որ յայնմ ժամանակի գրաւեալ էր զսիրտ մերազանց Ջուղայու, ուր
ոչ միայն մանկունք, այլ և երիցունք և մինչ անգամ ամուսնացեալ
անձինք գային դպրոց ուսանել գրականութիւն եւ արհեստ քերա-
կանութեան։

Հեղինակ տետրակի, որ գրէ՝ «յիշեալ բարիքն վայելելով զառո-
ղացուցին, հպարտացուցին զինքն մինչև այնքան, որ սկսաւ խրոխ-
տալ թէ եպիսկոպոսին և թէ Ջուղայեցի հասարակութեան վերայ.
և զզուեցան բոլոր ժողովուրդքն և ամենքն երես դարձուցին իրմէ».
սորա մասին ես չկարեմ ճիշդ վկայութիւն տալ ի՞նչ էր շարժառիթ

անհամաձայնութեան նորա և եպիսկոպոսի կամ ժողովրդոց մէջ, որ պարտաւորեցաւ պաշտօնէ թողնել և գնալ. այլ ըստ Ջուղայու պատմութեան հեղինակեալ ի բազմաշխատ Պրն. Յարութիւն Թ. Տէր Յովհանէ, երբեմն առենադպիր Սրբոյ վանացն Ամենափրկչի, տպագրեալ ի Ջուղա ի 1880 ամի հատոր Բ. յէջ 256 գրէ այսպէս. «Յամի 1834 ի 20 Փետրվարի ըստ համարակաց ժողովոյ եղելոյ ի Ջուղայ կացուցան գործակալք և կառավարիչք Սամեան Ամենափրկչեան դպրոցի, Պարոնայք Մնացական Ստեփաննոսեան. Ղեվոնդ Յ. Աւագեան, Նիկիա Յովհաննէսեան և Յովհաննէս Տէր Ղուկասեան, և առաջի վարժապետ այնմ եղև ամիսս ինչ Յակովբոս յաջորդ և ծայրագոյն վարդապետն. իսկ յետ քանի ամսոց գիտնական Պրն. Մեսրովբ Դ. Թաղիադեանց, ըստ հրաւիրմանց սրբազան Յովհաննէս Բ. առաջնորդի, ի Ս. Էջմիածնէ եկն, և եղև վարժապետ այնմիկ դպրոցի, յորում ժամանակի ութսուն աշակերտք հաւաքեցան անդր. զոր դաստիարակելով ըստ բարեկարգութեան, ըղնորահամբաւ յանձն առար դասատուաց, և զշափահասն ինքն ուսուցաւ յաշակերտութիւն։ Երկու ամ միայն եկաց նա վարժապետ այնմիկ դպրոցին, և յընթացս սոյն ժամանակին այնմիկ բազում մանկունք լուսաւորեցան ի գրականութեան ըստ իւրաքանչիւր կարեաց. այլ Պրն. Մեսրովբ վարժապետն (որոյ բնաւորութեանն ընդաբոյս իմն է ո՛չ համբերատար և միաշարիզ մնալ յինչ և իցէ գործողութեան, այլ սիրէ միշտ գնորանոր ախոյս և գփոփոխմունս պարագայից ինքեան յանձն եղեալ գործոյ), ոչ մնաց ի պաշտօնի վարժապետութեան այնորիկ. սակայն դպրոցն, յետ մեկնելոյ նորա, ո՛չ ևս մնաց ի շարունակ հաստատութեան, թէպէտ կառավարեցաւ առժամանակ դասատուութեամբ Գէորգ վարդապետի Տէր Յովհաննէսեան, Գէորգայ Յովսէփեան, Տէր Աւետիս Տէր Ղազարեան, և Տէր Ստեփաննոս Յարութիւնեան, այլ ո՛չ ընդ երկար պահելով զայն շարունակութիւն փակեցաւ այն յամի 1837»։

Սոյն պատմութիւն ինձ ևս հաւանական թուի, զի գոլով նորա առենադպիր վանացն, նախ քան սորա մասին գրելոյ՝ պարտ էր կամ ծանօթութիւն առնել վանաց գրադարանէն, որ ունէր ի ձեռին, և կամ այն ժամանակեայ անձանցէ, որ ծանօթ էին նորա վարուց բարուց և այլ հանգամանացն։ Վերջացնելով զայս բացայայտութիւն, զոր ըստ կարեացս գրեցի, զոր ինչ տեսեալ էի աչօք, զոր լուեալ ականջօք, և զոր գտեալ ըստ կարեաց. եթէ կան ի սմա

*թերութիւն, սխալութիւն և ո՛չ ուղիղ դատողութիւն, նախապէս ներումն խնդրեմ։*

*Մնամ*

*յարգելի Պարոն*

*Քոյդ խոնարհ ծառայ*

Մ. Յ. Պետրոսեան

*Բատաւեա, 5 Նովէմբր. 1886*

## 17. ՄԵՍՐՈՊ ՍԵԹ[1], «ԴՐԻՉ ՈՍԿԵԳՐԻՉ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ ԹԱՂԻԱԴՅԱՆ» ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ՎԵՆԵՏԻԿ, 1926։

(Տպագրվում է կրճատումներով)։

*Որպէս յայտ է բանասիրացն ազգիս, անմահ քերթողն Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց յորժամ նոր ստանձեալն էր ըզպաշտօն ուսուցչապետութեան յԱմենափրկչեան ճեմարանին որ ի Նոր Ջուղա, հաստատեալ ի Սամեան հարազատացն Մադրասայ, նետահար լինի ի կոյր որդւոյ Աստղկան, և կալեալ զձեռանէ չքնաղ օրիորդի միոյ Նորջուղայեցւոյ, գնայ մտանէ ի տաճարն Հիմենայ և ընկալնու ի վերայ արդէն ծանրաբեռնեալ ուսոց իւրոց և քաղցր լուծ ամուսնական երջանիկ կենաց։*

*Օրիորդն այն չքնաղ և համեստափայլ էր չորրորդ դուստր հաւուն իմոյ Սէթայ Մկրտչեան Աղազար Սէթեանց, Թանգ կամ հասարակ յորջորջմամբ Թանկում կամ Թանգխաթուն կոչեցեալ։*

*Զկարճատև սիրահարութենէ և զամուսնութենէ Թաղիադեանի թէպէտև լուալ եմ բազմիցս ի բերանոյ բարեյիշատակ հօր իմոյ Յակովբայ Սէթեանց (1820—1899), զի լեալ էր նա փեսեղբայր ի ժամու հարսանեացն, զոլով կրտսեր եղբայր հարսին, այլ սակայն թող ինքն Թաղիադեանն իւրով հմայիչ և յաւէտ դիւթական գրչաւ երգեսցէ զիւրոյ երանութենէն, որ սակայն բերմամբ կոյր բաղդին յոյժ կարճատև եղև, զի յետ երից ամաց ամուսնական երջանկաւէտ կենաց կորոյս մինչ խոպաո զանգուգական հատոր սրտին, որով և զոգցես թէ այլևս խաւարեցաւ մինչ ցայն վայր պայծառ հորիզոն չարաբաստիկ կենաց, որպէս ի յայտ գայ ի բազմական ողբոցն՝ որք տեսանին յէջս իւրոյ «Եղերերգութիւն յօրհաւ Թանկայ Թաղիադեանց» կոչեցեալ երկասիրութեան, շարադրեալ անմիջապէս յետ մահու չքնաղին ի Դաւրէժ Պարսից յամին 1837։*

Արդ յորժամ նոր խօսեցեալ էր Մեսրովբ ընդ Թանկայ, առաքէ մատանի մի առ սիրուհին չքնաղ ի ձեռն Սիրվարդ անուն տիկնոջ, որ էր ազգականուհի Թանկայ, գրելով նմա և նամակ մի կամ ձօն չափեալ տաղիւք ի լեզու Ջուղայեցւոց, զի տարեալ ընթերցցի ի լուր չքնաղին՝ ի յայտնութիւն և ի նշանակ բուռն սիրոյ իւրոյ. զի քերթողք միայն՝ յորս վառի անշէջ հուրն երկնային՝ կարեն սիրել սերտիւ և անհուն իմն աւիւնով:

Նամակն ողջունաբեր ուղղեալ առ տիկին Սիրվարդ, որոյ դնեմ աստանօր զնմանահանութիւնն իսկական գրչութեամբ Թաղիադեանի, ունի օրինակ զայս:

Սիրելի Սիրվարդ իմ, բարով ողջանաս,
Թանգում օրիորդին դիվանի[ա] գնաս,
Շատ կարօտ բարեւ տաս ու հասկանաս,
Թէ երբ այ իր կամքն, որ իրար տեսնենք:

Ես էս քանի օր այ դոր որ կար՝ տեսայ,
Սիրտըս գնաց հետը, միտքս մոլոր այ.
Թէ Աստուած կսիրես, երբ տեսնես, ասա՛,
Որ եթէ հաճենայ՝ իրար հետ խօսենք:

Թէ որ ինքն թանգ այ, ես էլ չեմ էժան,
Այլոց չհաւատայ—բոլորն էլ գիժ ան.
Ինքն իմն այ, ես՝ իրն մինչև յաւիտեան,
Եթէ որ կամենայ իրար հետ առնենք:

Ասա՛, ափսոս որ կարդալ չես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատրաստ այ ազնիւ գիտութիւն,
Եթէ շո՛ւտ կամենաս իրար զատենք:

Հայիֆ[բ] որ ջահիլ[գ] այ, դեռ հասկանում չի,
Միշտ սիրվել ուզում այ, ինքն սիրում չի.
Բայց լաւ սիրելոյ կերպն կսովրի,
Եթէ որ ցանկայ իրար հետ ըլնենք:

Օրիորդ Թանգում գոլով անգրագէտ, որպէս էին արդէն համայն օրիորդք և տիկնայք Նոր Ջուղայի զայնու ժամանակաւ՝ առ ի

ա) «Դիվանի» է բառ պարսկերէն և նշանակէ այցելութիւն:
բ) «Հայֆ» է բառ Պարսից և նշանակէ ափսոս:
գ) «Ջահել» է նոյնպէս բառ պարսկերէն և նշանակէ անփորձ:

չգոյէ ազգային վարժարանաց վասն կրթութեան դուստրական սեռին, ուստի գրէ զպատասխանի ոտանաւոր գրութեան իւրոյ գիտնական սիրահարին՝ ձեռամբ կրտսեր եղբօր իւրոյ Յակովբայ (Հօր իմոյ), որ էր և յայնժամ մի ի յառաջադէմ աշակերտացն Թաղիադեանի յԱմենափրկչեան Ճեմարանին Սամեանց, որ անդ ի Նոր Ջուղա։

Ահաւասիկ օրինակ անպաճոյճ նամակի Թանգայ առ քերթողն Թաղիադեան ի լեզու Ջուղայեցւոց զայնու ժամանակաւ։

«Էդ սիրուն գրչիդ և ծով գիտութինիդ ելնեմ ղուրբան[ա], իմ սիրելի վարժապետ։ Հոգիս զուարթացաւ և աչքերս լուս եկան՝ երբ որ գրածդ գիրն ստացայ սիրելի մարաքուր Սիրվարդի ձեռնով։ Էլ ինչ ասեմ, հրամանքդ ոտանաւոր աս գրում, մինչդեռ ես քամբախտս[բ] պարզ գրել կարդալ էլ չեմ կարող՝ որպես լավ խբարաս[գ], էլ դո՞ր ամ կարող խջալաթիցդ[դ] դուրս գալ։

Շատ և շատ շնորհակալ ամ, որ ինձ մտածել աս և գիր աս գրել. շէն կենաս, ասլի արևդ և միշտ պայծառ ելնես՝ որ դօշմանի[ե] սրտով չլնի։ Էս քանի շարքն դոր որ կարողացայ գրեցի՝ ձեր հրամանոց աշակերտ և իմ փոքրիկ եղբօր՝ սիրելի Յակօբի ձեռնով, քուրիկ Վարդխաթունիցն գաղտիկ. և էն գրիչն, որով գրեցի էս գիրն, և որ լուսահոգի հայրս բերել էր իւր խէտ Սուրաթուց, էն էլ որպէս մին պստիկ եադգարի[զ] ղարկում ամ գիտնական վարժապետիդ իմ սիրելի մարաքուր Սիրվարդի ձեռնով, որ թէպէտև ղաբլիաթ[է] չունի, ամմա[ը] յոյս ունիմ, որ ամէն անգամ երբ որ գործ կածես էդ գրիչն, կմտաբերես հրամանոց խոնարհ և խղճուկ Թանգխաթունին, որպէս ես միշտ պիտի մտաբերեմ իմ գիտնական վարժապետին՝ ամէն անգամ երբոր տեսնեմ էդ սիրուն մատանին իմ մատում[2]։

Մնամ հրամանոց խոնարհ աղախին և ծառայ՝

Թանգխաթուն Սէքեան[3]

Ի Նոր Ջուղա,
15 Հոկտեմբեր, 1834

---

ա) «Ղուրբան» է բառ Պարսից, նշանակէ՝ զոհ, պատարագ։

բ) «Քամբախտ» նշանակէ ի լեզու Պարսից՝ տարաբախտ։

գ) «Խբարաս» ի բառն Պարսից, որ նշանակէ գիտես, լաւ ունիս։

դ) «Խջալաթից» ի բառն Պարսից, որ նշանակէ ամօթ։

ե) «Դօշման» բառ Պարսից, որ է մերս թշնամի։

զ) «Եադգարի» որ է յուշարար ի լեզու Պարսից։

է) «Ղաբլիաթ» նշանակէ ի լեզու Պարսից՝ արժանիք, յարգ։

ը) «Ամմա» պարսկերէն բառ վասն «բայց» բառին մերոյ։

Անմահ քերթողն Թաղիադեան անփոյթ որքան էրն զամենայն աւուրս վտարանդի կենացն, տակաւին պահէ զայն գրիչ մեծաւ խնամօք և զգուշութեամբ ի թափառանս իւր ի Նոր Ջուղայէ ի Դավրէժ, ուր կորուսանելով զիւր չքնաղ կենակիցն զԹանգ յամին 1837, գնայ անտի ի ծննդավայրն իւր յԵրևան. և գնացեալ ի Սուրբ Էջմիածին, ուր յոսկեղէն դարու կենացն լեալ էր սարկաւագ՝ ակնկալութեամբ ուսուցչական պաշտօնի իրիք ի ճեմարանի Մայր Աթոռոյն։ Այլ տեսեալ զթքամանն թանաքաման ա) դարձեալ՝ թողու զէջմիածին և զամենայն ակնկալիս նորա, և յուղի անկեալ գնայ ի Կոստանդնուպօլիս, ուր ենթարկեալ անտեղի և դառն հալածանաց արքազն Յակոբոս Պատրիարքին, որպէս երբեմն անմահ Սեբաստացին Մխիթար, յազատութիւն անձին խուսել պարտաւորի, և ընդ ճանապարհ Տրապիզոնի, Էրզրումայ և Բաղդադայ գայ վերստին ի Հնդիկս՝ ուր զսնունդն բարին սնեալն էր յերիտասարդական հասակին յԵպիսկոպոսական ճեմարանին բ) Անգլիացւոց (Bishop's College) ի քաղաքին մեծի ի 1826 ամէն յամն 1830։

---

ա) Յիշատակէ Թաղիադեան յիւրում ցարդ անտիպ մնացեալ օրագրութեան՝ թէ յաւուր միում՝ յետ դարձին իւրոյ ի Դավրիժոյ՝ գնայ յԵրևանայ ի սուրբ վանս Էջմիածնի տեսանել զվաղածանօթն իւր զվեհարանս, բայց չգտանէ զնա ի վեհարանին։ Տեսանէ սակայն շրջանկատ և սուր աչօքն ի վերայ գրասեղանի վեհարանին յախճապակեայ թանաքաման մի՝ զոր ի Հնդիկս ի կիր արկանէին որպէս զթքաման։ Զկարացեալ այլ ևս համբերել այսպիսի աղքատութեան ճաշակի, առնու անմիջապէս պատառիկ մի թղթի, և գրեալ ի վերայ այնր զոտանաւոր տողսն, դնէ ի ծակ գրչին և վրդովեալ հոգւով հեռանայ անտի մինչ խոյառ. զի այդ էր վերջին այցելութիւն նորա ի Մայր Աթոռն Հայաստանեայց՝ ուր անցուցեալ էր զոսկեղէն դար կենացն որպէս սարկաւագ և քարտուղար։
Ահաւասիկ կարծիք Թաղիադեանի զվեհարանէն.

«Երբ թքաման՝ թանաքաման
Դարձեալ տեսեր յայս վեհարան,
Զի՞նչ այլ քեզ յոյս յաջողութեան
Կալնուս աստուստ, Մեսրովբ Դաւթեանց»։

բ) Չեն ինձ կամք գրել աստանօր զհետաքրքրական անցս մտանելոյ նորին ի ճեմարանն Անգլիացւոց աստի ի Կալկաթա որպէս ուսանող՝ յորժամ էր ինքն արդէն ուսուցիչ Հայկաբանութեան ի Հայկեան Մարդասիրական ճեմարանին քաղաքիս, այլ սակայն գրասէր Երևանեցին չկարէր գտանել ի ճեմարանին, զոր խնդրէր անձն իւր զի եկեալ էր սարկաւագն Սրբոյ Էջմիածնի ի հովանոյ լերանց Արարատեան ցՀինդ հրայրեաց ի խնդիր լուսոյ և գիտութեանց. և զայդ կարէր գտանել նա միայն ի ճեմարանին Անգլիացւոց, ուր մտեալ յսկզբան 1826 տարւոյն, ուսաւ լաւապէս զլատին, զՅոյն, զՊարսիկ և զԱնգլիացի լեզուսն և արժանացաւ «Վարպետ Արհես-

Տարագիր քերթողն Թաղիադեան թէպէտև կորուսանէ զբազումս յընչից իւրոց յԱրդնի՝ ուր գերի անկանի ի ձեռս վայրագ Արաբաց, այլ սակայն անկորուստ բերէ ընդ իւր զայդ գրիչ դիւթական ի Կալկաթա յամին 1837[1], որպէս միակ և անգին յուշարար չքնաղին իւրոյ Թանգայ, և պահէ զայն առ ինքն որպէս անբաժան ընկեր իւր ցամն 1851։ Յայդմիկ ամի մի ի յառաջադէմ աշակերտացն իւրոց՝ Յովհաննէս Շահնազար Սարգսեանց, որ էր որդի քենւոյն իւրոյ տիկին Վարդխաթունի (կոմէ լինի յիշատակութիւն ի Նամակի Թանգայ, զոր եդաք ի վեր), ուստի և քեռորդի վաղամեռիկն Թանգայ, աւարտեալ զընթացս ուսմանն ի «Սուրբ Սանդուխտ» երկսեռ դպրոցին Թաղիադեանի աստ ի Կալկաթա, ելանէր ի դըպրոցէն գնալ առ մօրեղբայր իւր Յովհաննէս Սէթեան՝ որ էր վաճառական անդ ի Բաթավիա մայրաքաղաքն Ջավա կղզւոյն Նեդըրլանդեան Հնդկաց ընդ իշխանութեամբ Հոլանդացւոց։ Կոչեալ առ ինքն զպատանին Յովհաննէս Սարգսեան, նուիրէ նման Թաղիադեան նախ զտպագրեալ երկս իւր բազմահատորս. և յետոյ առեալ զսիրական գրիչն, որ ի վերայ գրասեղանին, ասէ ցնա.—Սիրելի՛դ իմ Յովհաննէս, ոսկի և արծաթ չունիմ, զի տաց քեզ, այլ սակայն տամ քեզ զիմ գրիչ սիրական՝ որ առաւել արժէ քան զոսկի բազում, զի այդ հնացեալ գրիչ է միակ յիշատակ, զոր ունիմ ցայսօր մնացեալ ինձ ի վաղամեռիկ և յաւէտ ողբացեալ Թանգայ իմոյ սիրանոյ։ Ես չունիմ զաւակ և կամ ժառանգ ոք, որոց կարեմ թողուլ զայդ գրիչ յետ մահու իմոյ. և որովհետև դու քեռորդի ես չքնաղին իմոյ Թանգայ՝ որ ետ ինձ զայդ գրիչ յամին 1834, ուստի քեզ միայնոյ վայել է տէր լինել այնմ, զի մի՛ անկանիցի այդ ի ձեռս անարժանից և անոպայից՝ որք ոչ գիտիցեն զարժէս դորին։ Պահեսջիր զայդ գրիչ առ քեզ զամենայն աւուրս կենացդ որպէս նըշխար սրբոյ, ի քաղցր և յաւերժական յիշատակ վաղամեռիկ մօրաքեռդ և իմ իսկ, բազմերախտ և սիրող վարժապետիդ։ Եւ յորժամ գրիցես նամակ առ պատուելուհի մայր քո, գրեա միշտ դոյն գրչաւ, զի առցէ նա զէթ զհոտ խղճալի քեռն իւրոյ և յաւէտ տարաբաղդ

---

տուցս» փառաւոր տիտղոսին (Վ. Ա.) այն է M. A. (Master of Arts)։ Յաւուրս ուսանողութեանն ի ճեմարանին Անգլիացւոց՝ թարգմանեաց ի Լատինէ ի Հայ կարևոր գործ իմն աստուածաբանական, որ և տպագրեցաւ ի տպարանի և ծախիւք իսկ սոյն եպիսկոպոսական ճեմարանին՝ ուր արդէն պատրաստել տուեալ էր Թաղիադեան հայկական տպագրական տառս, և որովք տպագրեաց յետոյ զ«Պաղեստին», զ«Տրցաբանութիւն», զ«Պատմութիւն Հին Հնդկաստանի» որպէս և զ«Միհրովլեան Ճառագրիչ Հայ և Անգլիացի լեզուաց» այլովքն հանդերձ։

նկարեալ էր զԹաղիադեան, «աբբեդող», «ղայրացկոտ», «շլաբնոյթ», «երկաթագլուխ», «դրսեցի չիլ», «զրաստ զրաբարձ» և այլն կոչելով զնա յետ մահուն՝ ի յագուրդ անյագ և անզուսպ կրից իւրոյ նախանձու և ատելութեան։

Այլ սակայն բարեացապարտ աշակերտն Թաղիադեանի Յովհաննէս Շահնազար Սարգսեան, բանաւոր և հզօր փաստիւք և գրաւոր վկայութեամբք աշակերտաց նորին թէ՛ յ«Ամենափրկչեան ճեմարանին» Նոր-Ջուղայի և թէ՛ ի «Սուրբ Սանդուխտ» Կալկաթայի. ջրեաց միանգամ ընդ միշտ զաղճատանս և զանհիմն զըրպարտութիւնս Խաչկեան քահանայի՝ որ տխրահռչակ էր ի համօրէն Հնդկաստան իւրով չարամտութեամբ և խռովայոյզ և նենգ բնաւորութեամբ. և վասն անսանձ յարձակմանցն ի վերայ հոգևոր իշխանութեան, երկիցս բանադրանաց ենթարկեցաւ, նախ ի Թադէոս եպիսկոպոսէ Բէգնազարեան և յետոյ ի Գրիգորիս եպիսկոպոսէ Յովհաննէսեան, որք նստէին յԱթոռ Ամենափրկչեան Սրբոյ Վանաց Նոր-Ջուղայի, որպէս Առաջնորդք Պարսկաստանի և Հնդկաստանի ընդարձակ և կարևոր թեմին։

Յետ հրատարակութեան «Դիտողագրին», որ տպագրեցաւ ի Կ. Պոլիս յամին 1888 ի Մկրեան քահանայէն, Յովհաննէս Շահնազար Սարգսեան նոր զարթեաւ զօգցես ի քնոյ յետ իբր 40 ամաց՝ առ ի յարգել զյիշատակ իւրոյ բազմերախտ վարժապետին. և բառ յատուկ և թախանձագին խնդրանաց և յորդորանաց իսկ Մկրեան հայկաբան և բանասէր քահանային, սկսաւ անաղան ուրեմն ի խոյզ և ի խնդիր լինել զհետ նշխարաց անտիպ երկոց և գրութեանց քերթողին աստ և անդ։ Յաջողեցաւ նմա գտանել աստ ի Կալկաթա առ ընթեր հինաւուրց բարեկամին իւրոյ և աշակերտակցին իսկ պարոն Խաչկեայ Թադէոս Աւետումեանց* ձեռագիրս

* Պարոն Խաչիկ Թադէոս Աւետումեանց՝ որդի պարոն Թադէոսի Խաչիկ Աւետումեանց, մտերմին Թաղիադեանի, էր մի ի յառաջադէմ աշակերտացն Սուրբ Սանդուխտ դպրոցին Թաղիադեանի։ Թարգմանեալ էր և սա յաւուրս ուսանողութեանն զմատենիկն «Թօմէնսոն համառօտ, յԱնգլիականէն թարգմանեաց ի Հայ պարոնիկ Խաչիկ Թ. Աւետումեանց աշակերտ Ս. Սանդխտոյ յօգուտ Սիրելեաց ընկերութեան», որ և տպագրեցաւ ի տպարանի Ազգասիրի Արարատեան ի Կալկաթա յամին 1850։ «Սիրելեաց ընկերութիւն» յօգուտ որոյ թարգմանեալ էր այն մատենիկ 60 իջեան, վեշտասանամեայ, կազմեալ էր յուսանողացն անտի, որք յառս Թաղիադեանի աշակերտէին ի դպրոցին Սուրբ Սանդխտոյ։

Պատմէր ինձ բարեյիշատակ պ. Խաչիկ Թ. Աւետում 33 ամօք յառաջ, յորժամ նոր ծանօթացեալ էի ընդ նմա, թէ յորժամ հանդիպեալ էր վարժապետ իւր Նա-

*ինչ անտիպ օրագրութեանց և քերթուածոց Թաղիադեանի, զորս անմահ քերթողն ի ժամ ելանելոյն իւրոյ աստի յամին 1857 յանձն արարեալ էր իւրոյ ուսումնասէր և լաւ աշակերտին և հօրամօրն որդւոյ իսկ անձնուէր բարեկամին իւրոյ Թադէոսի Խաչիկ Աւետումեանց, զորմէ յիշեալ եմ արդէն երկարօրէն ի բանասիրականին իմում՝ որ հրատարակեցաւ ի պատուական «Բազմավէպ»-ին վասն 1918 ամին ընդ վերնագրաւ. «Երազ ուխտաւորի ուրուք առ շիրմի Թաղիադեանի[3]»:*

*Յառաջեանն Մարտի նոյն 1890 ամին, յորժամ Նուաստութիւն իմ ուսանող էր ի «Հայկեան Մարդասիրական ճեմարանին» քաղաքիս յուսումն Հայ և Անգղիացի դպրութեանց, գրեալ կոչեաց զիս առ ինքն յաւուր միում հօրաքեռորդին իմ Յովհաննէս Շահնազար Մարգսեան, և եդ առաջի իմ ձեռագիրս ցեցակեր և ցանատեալ զձեռագիրսն, խնդրելով լինել մեծաւ զգուշութեամբ և խղճի մտօք ընդօրինակել զայնս անսխալ՝ վասն տպագրութեան ի փառս հանրաժական յիշատակի իւրոյ բազմերախտ վարժապետին և իմոյ իսկ անուանակցին, տալով ինձ ի նմին ժամու և գրիչ մի հնաճաշակ և մելան, պատուիրելով ինձ յատկապէս նովին գրչաւ իսկ ընդօրինակել զձեռագիրսն Թաղիադեանի և ոչ այլով: Իսկ ես, որ դեռ ցայնվայր չգիտէի զպատմութիւն գրչին, առայի զնա միամտաբար և փոքր ինչ հպարտութեամբ, դու ասա տղայական գոռոզութեամբ, թէ ես արդէն ունէի գրիչս բազումս թեթեւս դիւրաշարժս իսկ. ժպիտ իմն խորհրդաւոր պատեաց զերեսօք պատկառելի ծերունւոյն, և սկսաւ իւրով սովորական լուրջ և ազդու բանիւք խօսիլ այսպէս.*

*«Ես լաւ գիտեմ՝ թէ գրչի պակասութիւն չկայ յայսմիկ ժամանակի. այլ սակայն եթէ դու միայն իմանայիր, թէ որո՛յ գրիչ էր այդ, գիտեմ, թէ չպիտի բնաւ մերժէիր առանալ զայն ի ձեռաց իմոց: Դու որպէս տեսանեմ՝ սիրես և յարգես զյիշատակ Մեսրովբայ, և ես հրճուիմ ի հոգի և ի սիրտ կենդանացեալ տեսանել ի քեզ զվարժապետ իմ բազմավաստակ, և ակն ունիմ՝ թէ որպէս անուամբ, նոյնպէս և գործովն եղիցիս ժառանգորդ. այլ սակայն*

---

*ներ աստի ի վերջ նոյն 1857 ամին և գնալ յաշխարհ հայրենեաց գնաց ինքն առ Թաղիադեան և խնդրեաց ի նմանէ բազում թախանձանօք ընկերել ինքեան ի տուն Լուսանկարչին և առնուլ զլուսանկար իւր ընդ աշակերտին. այլ սակայն Թաղիադեան բացէ ի բաց մերժեաց զհրաւէր նորին բարենպատակ, ցաւօք սրտի առարկելով՝ թէ ինքն գոլով վերջին շառաւիղ Թաղիադեան տոհմին, չկամէր զի պատկեր իւր մնասցէ յաշխարհի, որովհետև դրական վաստակք իւր բաւականք էին արդէն անմահացուցանել զինքն:*

անսա՛ դու բանից իմոց և մի՛ լինիր շուտափոյթ, որպէս էին և անուանակիցդ հոյակապ, այլ ջանա յամենայնի լրջութեամբ խորհիլ, խօսիլ և գործել։ Գիտեմ, թէ տղայական համեստութեամբ մերժեցեր առնուլ յինէն զայդ գրիչ, և ես ուրախանամ նշմարել ի քեզ զայդ յատկութիւն, զոր ժառանգեալ ես ի բարեյիշատակ նախնեաց քոց. զի վեհանձնութիւն և հպարտութիւն լեալ է միշտ յատկանիշ Սէթեան տոհմին, որոյ և ես եմ շառաւիղ։

Գիտես թէ ստացայ ես զայդ գրիչ ի բազմերախտ վարժապետէս ի ժամ ելանելոյն իմոյ աստի յամին 1851 գնալ ի Բաթավիա, և պահեալ եմ զայն անբաժան յինէն յօրէ անտի թէ՛ ի Ջավա, թէ յԱւստրալիա և թէ՛ յԵւրոպա։

Տամ քեզ այժմ զայդ գրիչ հնացեալ, և կամիմ, զի և դու պահեսցես զայդ ի յիշատակ վարժապետիս, որպէս և հօրաքեռդ Թանգոյ և իմ եւս, յիշելով զհմտալից տողսն Մեսրովբայ, որ ասէ՝

«Զի կարծիք մարդկան
Ո՛չ իրին յարգ տան,
Այլ սոսկ միջոցին,
Որով ստանան»։

(«Սօս և Սոնդիպի»)

Զամօթի հարայ ի լուրջ խրատական բանից պատկառելի ազգականի իմոյ, ուստի խոնարհաբար նկրտեմ հայցել վասն անխոհեմ և յաւէտ յանդուգն պատասխանւոյ իմոյ և առեալ զգրիչն՝ համբուրեցի զայն ջերմեռանդութեամբ հոգւոյս, մատուցանելով նմա ի նմին ժամու և զշնորհակալիս իմ անհուն և սրտագին վասն թանկագին նուիրատուութեանն։ Սակայն անմիջապէս ըստ բաղձանաց նորին ընդօրինակել զցեղակեր ձեռագիրսն զայնոսիկ, որք ի նոյն իսկ գրչաւ գրեալ էին ի Թաղիադեանէ յիսուն և առաւել ամօք յառաջ ի Պարսկաստան, ի Հայաստան, ի Տաճկաստան և հուսկ ուրեմն աստ ի Հնդկաստան։

Չմոռանամ յիշել և զայս՝ թէ բերեալ զայն գրիչ ընդ ձեռագրացն ի տուն մեր, ցուցի զայն ծերունազարդ հօր իմում Յակովբայ Սէթեանց՝ որ զայնու ժամանակաւ էր ծերունի եօթանասնամեայ, այլ սակայն թէ՛ տեսութիւն աչացն և թէ՛ տեսութիւն պահեցողական մտացն էին անվթար և կատարեալ ըստ ամենայնի։ Հարցի ցնա, եթէ ճանաչէ՞ս զայն գրիչ. որ յետ զննելոյ զայն սուր աչօքն, ասաց, թէ այդ այն գրիչ էր՝ զոր քոյր իւր Թանգխաթուն նուիրեալն

էր Մեսրովբայ վարժապետին* ձեռամբ Սիրվարդ ազգականուհւոյն իւրեանց, և այնու յակամայս զայրացուցեալ զերէց քոյր իւրեանց՝ զՎարդխաթուն. որովհետև բարեյիշատակ հայր իւրեանց բերեալ էր զայն ընդ իւր ի Սուրաթայ յամին 1799, և Թանգխաթուն չունէր բնաւ իրաւունս նուիրել զայն ումեք թարց իւրոյ գիտութեան և հաւանութեան իսկ։ Յետ տաժանակիր և ոգեսպառ աշխատութեանց յաջողեցաւ ընդօրինակել զամբողջ ձեռագիրսն, որք առաքեցան յետոյ ի Կ. Պօլիս առ աւագ քահանայն Մկրեան. այլ նա «առ ոհին Հրէից» և երկուցեալ ի խիստ և յանողոք գրաքննութենէ Համիդեան բռնակալութեան, եդ կափարիչ ի վերայ այնոցունց, և միայն ի լոյս ընծայեաց ի Տփխիս զ«Եղերերգութիւն յորհաս Թանգայ Թագիադեանց» սքանչելարուեստ քերթուածն յամին 1893, խոստանալով հրատարակել և զմնացեալսն ընդ ընդարձակ և ճոխ կենսագրութեան քերթողին, գրելով յէջ 52 «Եղերերգութեանն» այսպէս.

«Մնայ մեզ այժմ ծանուցանել ընթերցանելեաց, թէ ի հատորիս այսմիկ ամփոփեալ եմք զայլ և այլ ոտանաւոր քերթուածս Թագիադեանի, հաղորդեալք առ մեզ ի պ. պ. Յովհ. Շ. Սարգսեանէ և ի Մեսրովբ Յ. Սէթեանէ, և կամ ժողովեալք ի մէնջ, այլում պատեհի թողեալ որպէս ասացաք՝ առանձին տպագրութեամբ հրատարակել զ«Թանգարան Թագիադեանց»։ Արժանի վերծանութեան է այս գործ սքանչելարուեստ բանաստեղծութեան, զոր և ունիմք տալ ի լոյս՝ եթէ յիցի մեզ յաջողութիւն ի Տեառնէ»։

Այլ սակայն բաղձանք Մկրեանի չիրականացաւ, և ի պատճառս ծերութեանն և Համիդեան բռնակալութեան չկարաց նա նախ քան զմահն՝ որ պատահեցաւ յամին 1909, ի լոյս ընծայել ո՛չ զճոխ կենսագրութիւն Թագիադեանի և ո՛չ ես զմնացեալ զանտիպ երկասիրութիւնսն քերթողին. և ո՞վ գիտէ, թէ ո՛ւր մնացին կամ գնացին ձեռագիրքն յետ մահու նորին, և կամ յո՞ր անկեան փոշւոյ ցեցակեր եղեն, որով վեցամսեայ անդուլ վաստակ իմ և ոգեմաշ աշխատութիւն յընդօրինակութիւն ինքնագիր ձեռագրացն Թագիադեանի յումպէտս մնացին, և ճգունք իմ եղեն արդարև զուր ջանք և անօգուտ վաստակ։ Բարեբաղդաբար տակաւին գտանին աստ առ իս նախագաղափարք ձեռագրացն և նշխարացն գրական անտիպ

---

* Այնքա՞ն խոր էին երախտագիտական ջերմ զգացմունք ի սրտի բարեյիշատակ հօր իմոյ, զի յօրէ անտի աշակերտութեանն յոտս բազմերախտ վարժապետին իւրոյ Թագիադեանի ցմախճան կենացն, միշտ կոչէրն զնա «Մեսրովբ վարժապետ», և ո՛չ այլ իմն անուամբ՝ փեսայ կամ քեռայր։

երկոցն քերթողին, զորս անիմ ընծայել ի լոյս. եթէ կամք իցեն երկնից և ինձ ևս կեանք. զի մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, ասեն գիրք. և նոյն ինքն Թաղիադեան ասէ, թէ՝

«Որպէս շիթ ցօղոյ
Ի վերայ սիզոյ
Յողդողդ ի վտանգ
Է այս կեանք մարդոյ»։

(«Սօս և Սօնդիպի»)

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Նույն ժողովածուում զետեղված տպագիր և անտիպ նյութերի տեքստը կազմելիս նկատվել են տպագրական բացահայտ վրիպումներ, որոնք ուղղված են ըստ նախադասության իմաստների: Այդպիսի օրինակներից են՝ անհարին բառը, որը դարձված է անհնարին, դեղականաց պետք է լինի գեղականաց, համարարած—համատարած, յայժամ—յայնժամ, անկարկիցէ—ակնարկիցէ, բեռեին—բեռնէին և այլն: Անփոփոխ ենք թողել բարբառային այ օժանդակ բայով և համապատասխան վերջավորով կազմված ստորոգյալների կից գրության ձևերը (մինայ=մինն այ և այլն):*

*Թաղիադյանի մոտ կան երկձև գրություններ, ինչպես օրինակ, Ջուղայ և Ջուղա, վտանկ և վտանգ, Աստարբադ և Աստարպատ, Արարատայ և Այրարատայ, բազդ և բախտ, դադարկ և դատարկ, գձել և գծել, որբուկք և որբոկք, ցուրդ և ցուրտ և այլն: Այս և նման այլ բառերի մի մասը համապատասխանեցված է ժամանակակից ուղղագրության պահանջներին, իսկ մի շարք բառեր թողնված են՝ հաշվի առնելով ժողովրդական խոսվածքի և բառաձևերի ակնհայտ ազդեցությունները:*

*Թաղիադյանը ծանոթության նշանները դնում է ծանոթագրվող բառից առաջ: Մենք փոխել ենք այժմ ընդունված ձևով: Նկատի ունենալով, որ Թաղիադյանի առաջին շրջանի գրաբար հոդվածներում երևան են գալիս աշխարհաբար և բարբառային տարրեր, նպատակահարմար համարեցինք ամբողջի համար պահպանել Թաղիադյանին հատուկ գրաբար ուղղագրությունը: Այդ ուղղագրությունն ենք պահպանել նաև այն հոդվածներում, որոնք գրված են աշխարհաբար, բայց տեղ-տեղ գրաբարի օգտագործումով:*

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Վ. Ա. ՍԱՐԿԱՒԱԳԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՀԱՅՍ

Հատոր առաջին

*(էջ 23)*

*1847 թ. «Ազգասէրում» Թաղիադյանը տպագրում է հետևյալ հայտարարությունն իր հրատարակելիք «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքի մասին (№ 78, էջ 40):*

## ԱԶԴ

Քանի ամօք առաջ ազգ արարի սպառունլի Ազգի խմում, յաղագս տպագրութեան ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ իմոյ ի զանազան մասունս աշխարհի, բայց ոչ յաջողեցաւ գործն ինձ յայնժամ. զարդիս թէ վասն հատ ու կտոր յօդուածոց ինչ «Ազգասէրի» մերում և ի «Հայրենասիրին» Զմիւռնիոյ թէ «Պատմութեան Պարսից» և թէ «Սօս և Սօնդիպի» երգոց իմոց՝ շարժեալ բազմաց ի բարեկամաց, թէ աստ եւ յայլուր յորդոր մատուցին ինձ միջոցաւ «Ազգասիրիս» հրատարակել զայն իբրև հին և նոր աշխարհագրական և պատմական անոյ մերոց լուսաւոր իմն մեկնաբան։ Բայց որովհետև տպագրել զայսպիսի ինչ ի հրատարակագրին՝ բանայր ըղձիւթիւն և զամբողջութիւն գործոյն և առանձին տպագրել, ծախուց մեծամեծաց կարօտէր. վասն որոյ առաջարկեցաւ տետրակ առ տետրակ ամսաթուով ի լոյս ընծայել։

Սույն հայտարարությանը հետևում է Դաշինքը, ուր հիշատակված են՝ տետրակների էջերի քանակը, գինը, թղթի տեսակը և այլն։ Գրքում առաջաբանից հետո Թաղիադյանը զետեղում է բաժանորդների հետևյալ ցուցակը։

### ՅԱՆԿ ԲԱՐԵՐԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

### Կալկաթա

Ինձ քան ամենեցուն յայտնի հաճելի և ընդունելի է, ոչ միայն ճանապարհորդութիւն լեզուագէտ առն ճարտարի և ազգասիրի, այլև փափագելի է ինձ բովանդակ իմանալ զհայրենեաց երկրին իմոյ դուստ և ստոյգ տեղեկութիւնս. վասն որոյ ամենայն հաճութեամբ առանեմ զվեցամսական տետրակսն կազմելոյ, որքան և բազմատետրակ հասանիցի գործն. մին օրինակ վասն իմ, մին օրինակ վասն սրբոյ Տան Երուսաղեմի, և մին օրինակ ևս վասն Դպրատանն Սրբոյ Աթոռոյն. որոց յետին պաշտօնեայ*։

| | |
|---|---|
| Տէր Գրիգորեան Իսահակ Ծ. վարդապետ | 3 |
| Նազարեթեայ սոբր Եկեղեցւոյ վիճակ. քահանայք | 1 |
| Պարոնայք Ս. Գալստեան | 1 |
| Թադէոս Խ. Աւետումեան | 1 |
| Պ. Յ. Սարգսեանց | 1 |
| Ա. Պ. Սէթեանց | 1 |
| Ա. Պ. Որդանեան | 1 |
| Պ. Յ. Պալ | 2 |
| Յարութիւն Աբգար վասն Հայրենասիրական ճեմարանին | 2 |
| Աբգար և ընկերք | 3 |
| Զ. Մալխասեան | 2 |
| Մեսրովբ Թադէոսեան | 1 |
| Գ. Եղիազարեան | 1 |
| Ղազար Սիմոնեան | 1 |
| Յովսէփ Աղաբեգեան | 2 |
| Հովհան Աղաբեգեան | 2 |
| Մկրտիչ Աղաբեգեան | 2 |

* Մեջբերումն արված է Երուսաղեմի նվիրակ Իսահակ ծայրագույն վարդապետի նամակից։ Թաղիադյանը 1846—1847 թթ. «Ազգասէրի» էջերում տպագրած է «Տեառն Իսահակայ Ծ. վարդապետի նուիրակի Երուսաղեմայ օրագիրը» վերնագրով հնդկաստանյան ուղեգրությունը։

Ջ. Աղաբէգեան . . . 1
Ա. Աղաբէգ վասն Մ. ճեմարանին . . . 1
Նազապետ Աղաբէգեան . . . 1
Մալխաս և Պօղոս Աղաբէգ . . . 1
Մանուկ Զօրաբեան . . . 1
Ջ. Մ. Մանուկեանց . . . 1
Յ. Գ. Գրիգորեանց . . . 1
Յովհան եղբայրք . . . 2
Յովհաննէս Աւդալեան . . . 1
Փ. Ա. Գէորգ . . . 1
Յարութիւն Հայրապետեան . . . 1
Տ. Մ. Վարդանեան . . . 1
Ս. Մ. Վարդանեան . . . 1
Խաչատուր Յովհաննեան . . . 1
Ռ. Ջ. Ճիբխուեան . . . 1
Յ. Գ. Գրիգորեան . . . 1
Յակոբ Ստեփաննոսեան . . . 1
Գ. Մ. Գասպարեան . . . 1
Ա. Վրդանիսեան . . . 1
Գ. Մ. Գասպարեան . . . 1
Բ. Ա. Տէր Գասպարեան . . . 1

## Բոմբայի

Յարութիւն Յորդանեան . . . 1
Դաւիթ Ղ. Մանասի Յովսէփ . . . 1
Գրիգոր Մ. Մ՞ի Յովսէփ . . . 1

## Մադրաս

Սամուէլ Մարգար . . . 1

## Բթաւիա

Տիկին Մարիամ Յ. Յարութիւն և օրիորդ Թագուհի Մանուկեան . . . 1
Ա. Պ. Աղանուրեան . . . 1
Մկրտիչ Յ. Եղիկեան . . . 1
Յակոբ Ս. Միրաշեան . . . 1
Յովհան Յարութիւնեան . . . 1
Գրիգոր Յովսէփեան . . . 1
Մելքում Ա. Տէր Գասպարեան . . . 1
Գէորգ Աւետ Զաքարեանց . . . 1

1. Ակնարկում է Հովհաննես Կարբեցի կաթողիկոսից կրած հալածանքները Էջմիածնում եղած տարիներին։

2. «Ջամս հինգ անդադար աշխատեցայ», նկատի ունի Հնդկաստանում 1840—1845 թվականներին անցկացրած տարիները։ Մեզ հայտնի է, որ 1840 թ. մարտին Թաղիադյանը եկել է Կալկաթա։ Առաջին ամիսներին մնացել է անգործ. այնուհետև տեղավորվել է Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում իբրև գրաշար, ուր սկսել է իր մի շարք երկերի տպագրության գործը. հաջողել է տպագրել մեզ հայտնի երկու գրքերը՝ «Պատմութիւն Հնդկաստանի» և «Մեսրովբեան այբբենարան»։ 1844 թ. կարճ ժամանակով գնում է Սինգապուր մի հայ վաճառականի մոտ, գրագրի պաշտոնով (ԳԱԹ, Թ. Աղաթյանի հավաքածու, № 10100)։

3. 1845 թ. հուլիսի 17-ին հնդկահայ վաճառական Մանուկ Զորաբյանի նախաձեռնությամբ հիմնվում է Արարատեան ընկերությունը, որի հիմնադիր անդամներն էին Պ. Հ. Սարգսյան, Թ. Խ. Ավետումյան, Ա. Վ. Գալստանյան, Մ. Զորաբյան (1846, «Ազգասէր», № 28, էջ 58—60)։ Գրականության և արվեստի թանգարանում (Թ. Աղաթյանի հավաքածու, № 2807) պահվում է Արարատյան ընկերության 34 կետից բաղկացած Կանոնադրությունը։ Ընկերությունը լուծարքի է ենթարկվում 1848 թ., Մանուկ Զորաբյանի մահվան պատճառով։

4. Մ. Թաղիադյանն իր գրքերի տակ (բացի «Դիցաբանութիւնից») ստորագրել է Թաղիգեանց։ 1845—1849 թթ. «Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան» ամսագրերի տակ դրված է Թաղիադյան ստորագրությունը, իսկ հետո՝ Թաղիդյան։ Բոլոր նամակների և փաստաթղթերի տակ նույնպես ստորագրված է Թաղիադյան։ Գրականության մեջ մտել է վերջին ձևը։ (Այդ մասին տե՛ս Պ. Հակոբյանի կարծիքը՝ «Խաչատուր Աբովյան», 1967, էջ 73-ի ծանոթագրությունը)։

5. Նշված ձեռագիրը Թաղիադյանի օրագիրն է, որի ճշտված վերնագիրն է «Փորձարան Մեսրովբայ կամ գիրք պատահարաց իմոց ի կեանս» (տե՛ս Ներսես Աշտարակեցուն ուղղված 1826 թ. հոկտեմբերի 8-ի նամակը սույն ժողովածուում, էջ 408)։ Թաղիադյանի նշած գործերը համարվում են կորած։

6. Մինաս Բժշկյանը 19-րդ դարի առաջին կեսի հայ նոր պատմագրության ներկայացուցիչներից է։ Թաղիադյանը նկատի ունի նրա «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և այլ կողմանս, բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» գիրքը (Վենետիկ, 1830)։

7. Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» ծանոթագրության սույն հրատարակության 557 էջը։

8. Թաղիադյանը՝ ինչպես երևում է այս վկայությունից, մկրտվել է 1803 թ. հունվարի 6-ին, ուստի նրա ծննդյան օրը ընկնում է հունվարի առաջին կամ երկրորդ օրը։

9. Տե՛ս Աւետարան Յովհաննու, Գ, 3—4։

10. Թաղիադյանն ունեցել է 12 հորեղբայր և երկու հորաքույր, որոնցից մեկն ամուսնացել էր վանքի տակառապետ Հովհաննես Ասկարյանի հետ, մյուսի անունը Մարգարիտ էր և ապրում էր Գանձակում, ուր նրա հետ հանդիպել էր Մեսրոպը (տե՛ս սույն ժողովածուի 30 և 166 էջերը)։

11. Ներսես Աշտարակեցին ծնվել է 1770 թ. Աշտարակ գյուղում։ 1778—1791 թթ. սովորել է Էջմիածնի վանքի ժառանգավորաց դպրոցում, ապա ձեռնադրվել է սարկավագ։ 1794 թ. Դանիել եպիսկոպոսի հետ նա գնում է Զմյուռնիա։ 1799—1801 թթ. տեղի ունեցած հայտնի խռովությունների ժամանակ, Ներ-

սեսը կաթողիկոսացնում է իր հովանավոր Դանիել արքեպիսկոպոսին և այնուհետև Դավիթ-Դանիելյան կռիվների ժամանակ պաշտպանում վերջինիս իրավունքը։ 1809 թվականին Ներսեսի աջակցությամբ կաթողիկոսական թագն է բու-տանում Եփրեմ արքեպիսկոպոս Ձորագեղցին։ 1810 թվականից մինչև 1814-ը Էջմիածնում գտնված ժամանակ նա վերաբացում է ժառանգավորաց դպրոցը։

12. Հովհաննես Բագրևանդացի, *Քուրդ մականունով. այդ տարիներին Էջմիածնում վարում էր վանքի դրագրի պաշտոնը։ Թաղիադյանը նրա մոտն է եղել մինչև 1820 թ.։ Այնուհետև Հովհաննես Բագրևանդացուն նա հանդիպել է 1834—1836 թթ. Նոր Ջուղայում, ուր նա հոգևոր թեմի առաջնորդն էր։*

13. *Թաղիադյանին այբբենարանը սովորեցնող Ավագ Տեր Մաթևոսյանի մասին կենսագրական տվյալներ մեզ հայտնի չեն։*

14. *Ներսեսը Թիֆլիս է մեկնում ոչ թե 1813, այլ 1814 թ. փետրվարի 18-ին։ Պահպանվել է գեներալ Ռտիշչևի 1814 թ. մայիսի 14-ի գրությունը, որով նա պահանջում է Ներսեսից հավատարմության երդում տալ զինվորական նահանգապետին։ Մայիսի 9-ին տեղի է ունենում երդման արարողությունը (տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 53, գ. 198)։*

15. Պողոս Ղարադաղցի *(Ներսիսյան), Մուժամբար գյուղից, սկզբնական կրթությունը ստացել է Հովսեփ Տեր Ավագյան Արցախեցու մոտ։ Թաղիադյանը գրում է, որ մինչև Պողոս Ղարադաղցու մոտ ուսանելը, երկու տարի սովորել է Սաղմոս և Ժամագիրք, երկու տարի անգիր է արել շարականները։ Ուրեմն նա Ղարադաղցուն պետք է աշակերտած լինի 1817 թ. հետո։ Ըստ Պ. Հակոբյանի տվյալների՝ Ղարադաղցին պետք է Էջմիածին եկած լինի 1818 թ. (տե՛ս «Խաչատուր Աբովյան», Երևան, 1967, էջ 170—171)։*

16. *Տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան, Վենետիկ, 1840, էջ 1, 81, 487։*

17. *Ակնարկում է Պողոս Ղարադաղցու Ակոռի ուղևորությունը 1819 թ. մայիսի 27-ին (*Պ. Հակոբյան, *Խ. Աբովյան, էջ 171—172)։*

18. *Ծննդոց, թ. 13—14։*

19. *Համեմատիր* Մովսես Խորենացի, *Բ, լգ։*

20. Մարտին Հենրի *(1781—1812)—անգլիացի քարոզիչ-բողոքական 1800-ական թվ. անգլո-հնդկական ընկերության հրավերով քահանայի պաշտոնով մեկնում է Հնդկաստան։ Այնտեղ նա թարգմանում է Նոր կտակարանը պարսկերեն, այնուհետև գալիս է Շիրազ՝ այնտեղից Սպահանի վրայով՝ Էջմիածին։ Վախճանվում է Պոլսի ճանապարհին։ Հենրի Մարտինի կյանքը և նամակագրությունը հրատարակել է քահանա Սարգիսը (տե՛ս «Էջմիածին», 1948, № 3—4, էջ 58—61)։ Թաղիադյանը մեջ է բերում այդ հրատարակությունից. հայերեն թարգմանությունը չկա)։*

21. *Մովսես Խորենացու մոտ ասված է, որ Արտաշեսը «Եւ գտեալ յԱսիա պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տալ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր» (Բ, ժբ)։ Ուրեմն, Արտեմիսի հունաց կուռքը հայկական Արտեմեդ քաղաքի անվանակոչությունից շատ հետո է մտել Հայաստան։*

22. *Թաղիադյանը գրում է և Շրեզ և Շրեշ, միասնության համար ամեն տեղ դարձնում ենք Շրեշ։*

23. *Տե՛ս* Մովսես Խորենացի, *Բ, կե։*

24. *Աբել Մխիթարյանն իր «Վաղարշապատ քաղաքամայրը Հայաստանի հան-*

գերձ աշխարհագրութեամբ» (Վաղ-պատ, 1874) գրքույկում Թաղիադյանի ենթադրությունը համարում է սխալ։ Նա մատնանշում է բնակիչների ցույց տված տեղը՝ Վաղարշապատից դեպի արևմուտք ընկած Կարմրահող կոչված բլուրները (էջ 24—27)։ Այդ մասին տե՛ս Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 61 և հետ։

25. Ապարանը պատմական Հայաստանի Նիգ գավառն էր, իսկ Աշոցք գավառը ընկած էր այժմյան Ղուկասյանի և Ամասիայի շրջանների տարածքի վրա։

26. Տե՛ս Մովսես Խորենացի, Բ, խբ։

27. «Ագաթանգեղայ պատմութիւն», Թիֆլիս, 1909, էջ 100—101։

28. Մեջբերումն արված է Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականից («Շարական հոգևոր երգոց», Էջմիածին, 1861, էջ 432—439)։ Իրականում այսպես է. «Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք ի մանուկ հուսկն պարտեալ էր»։

29. Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 55։

30. Զվարթնոցի առաջին պեղողներից Խաչիկ վարդապետ Դադյանը բացել է Քասաղ գետից հանված առուն՝ դեպի Զվարթնոցի ավերակները (տե՛ս «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1907, գ. 15, էջ 116)։

31. Հուսեինղուլի խան—Երևանի սարդարը. իշխել է 1807—1827 թթ.։

32. Աբբաս Միրզա (1783—1833)—պարսից թագաժառանգը։

33. Խոսքը վերաբերում է 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքված դաշնագրությունից հետո սկսված խաղաղ տարիներին։

34. Այդպես էին թուրքերը կոչում Էջմիածինը։

35. 1815 թ. բացվեց ուրարտական շրջանի ջրանցքներից մեկի՝ Դալմայի առուն։ (Տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879), Երևան, 1950, էջ 146)։

36. Սիմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներն են 1763—1780 թթ.։

37. Եզրը գահակալել է 630—641 թթ.։

38. Ղազար Ջահկեցին գահակալել է 1737—1751 թթ.։

39. Էջմիածնի վանքի թղթատունը կառուցվել է 1776 թ. 5 տարի առաջ կառուցված տպագրատան կողքին։ Մակար կաթողիկոսի օրով կառուցվեց նորը։

40. Սինոդոս կամ Սինոդ. հիմնվել է 1808 թ. իբրև եկեղեցական գործերի վերահսկող խորհուրդ, որի նախագահը կաթողիկոսն էր։

41. Մարտիրոս արքեպիսկոպոս՝ հետագայում Տաթևի վանքի վանահայրը։

42. Խոսքը Էջմիածնի «Ժառանգավորաց դպրոցի» մասին է, որը հիմնադրվել է 1813 թվականին։

43. Շինարարական այս աշխատանքները կատարվել են Փիլիպպոս Աղբակեցի (1632—1655) և Սիմեոն Երևանցի (1763—1780) կաթողիկոսների օրոք։

44. Վրիպակ է, պետք է լինի՝ 1804։ Գեներալ Ցիցիանովի արշավանքի օրերին պարսիկները մայր տաճարի տանիքը վեր էին ածել պահակակետի։

45. Պիտի լինի՝ Հակոբ Ջուղայեցի (1655—1680), որովհետև նա է հանել Քասախից առու և նորոգել տվել Քանքանը։ (Տե՛ս «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 200)։

46. Երևանի բերդի թնդանոթաձուլական գործարանի մասին հիշատակում են Ջեմս Մորիերն իր «Հաջի բաբայի արկածները» վերնագրով գրքում և Լաչինովն իր հուշագրումների մեջ։

47. Աղամալ իշխան Շոռոթցին վերանորոգել է Շողակաթի եկեղեցին 1694 թ.։

1807-ին զավիթը փլվել է. վերականգնվել է Ներսես Աշտարակեցու կաթողիկոսության օրերին (տե՛ս Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի, հ. 1, Վաղարշապատ, 1842, էջ 281—283)։

48. Հիմնադրվել է 1833 թ. օգոստոսի 17-ին, Թաղիադյանը թողել է այդ արարողության նկարագիրը (տե՛ս նույն ժողով. էջ 433—467)։

49. Տե՛ս Մովսես Խորենացի, Բ, կա։

50. Տե՛ս Մ. Թաղիադյան, Գեղարվեստական երկեր, Երևան, 1965, «Հայկ ի տեսիլ Հայկազնին» բանաստեղծությունը, էջ 108։

51. Մովսես Խորենացի, Ա, ժբ։

52. Նույն տեղում, Գ. խդ։

53. Նույն տեղում, Գ. խե։

54. Նույն տեղում, Գ, խզ։

55. «Ստրաբոն», քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 55։

56. Մովսես Խորենացի, Բ, ժը։

57. Նույն տեղում, Ա, ժբ։

58. «Արաքսի հունն Արարատյան դաշտում» ուսումնասիրության մեջ բազմավաստակ գիտնական Թ. Ավդալբեգյանը քննության առնելով Արաքսի հնագույն հուները, հաստատում է նաև Թաղիադյանի ենթադրությունները (Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, 1969, էջ 80—100)։

59. Նկատի ունի Հովհաննես Պլուզի «Մեկնութիւն քերականութեան» անտիպ ձեռագիրը։

60. Նկատի ունի «Հայկազեան Բառարանի» բացատրությունները, 1836, էջ 489, 607։

61. Բնագրում սխալմամբ գրված է «հարաւոյ», ուղղում ենք։

62. Թաղիադյանը սխալվում է։ Ղ. Ինճիճյանն իր «Հնախօսութիւն Հայաստանեայց» գրքի հ. 1, 195—201 էջերում հատկապես խոսում է Հայաստանի նժույգների մասին, իսկ «իշանց» հատկացնում է 9 տող (201—202 էջերում)։

63. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 22—23։

64. Փամբակի սահմանապահ զորամասի հրամանատար, մայոր Մոնտրեզոր (տե՛ս նրա մասին Խ. Աբովյան, Երկեր, հ. 3, էջ 57)։

65. Խոսքն այժմյան Ալավերդու պղնձահանքի մասին է։

66. Եփրեմ Ձորագեղցու Հնդկաստանում նվիրակ լինելու մասին հիշատակում է Մ. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխատության մեջ (հ. 2, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 3240)։

67. Գրիգոր եպիսկոպոս Ծուկուլ Արդվինեցի, վանքի գանձապետը, հետագայում Երևանի թեմի առաջնորդ։ 1833 թ. մասնակցել է վանքի 8 միաբանների պայքարին ընդդեմ Հովհաննես Կարբեցու։

68. Ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր Գրիգորյան (1780—1856), նկարիչ, քիմիկոս, բժիշկ։ Թաղիադյանը սրա մասին խոսում է նաև էջ 119-ում։ Տե՛ս նաև «Էջմիածին», 1959, № 5, էջ 33—40։

69. Կարապետ եպիսկոպոս—Նոր Ջուղայի հոգևոր թեմի առաջնորդ 1818—1831 թվականներին։ Այնուհետև, մինչև 1842 թ. պաշտոնավարում էր Էջմիածնում, մեռնում է Նոր Ջուղայում 1853 թ. (Տեր Հովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայի, հ. 2, 1881, էջ 75—76)։

70. Հարիմ Բային— Զ դարի սկզբի արաբ հայտնի բանաստեղծ է։ Նրա կամ

նրան վերագրվող «Ճանապարհորդությունը» մեր ձեռքի տակ չկա, ուստի հնարավոր չէ պարզել Թաղիադյանի մեջբերած ավանդության հեղինակի իսկությունը։ Եթե դա պարսից մեծ բանաստեղծ Սաադին է, ապա ինչպե՞ս է ընկել Զ դարի բանաստեղծի ճանապարհորդական նոթերի մեջ։

71. «Հայրենասեր Ջմյուռնիոյ» թերթի լրիվ հավաքածուն մեր ձեռքի տակ չունենալու պատճառով հնարավոր չեղավ ստուգել։

72. Տե՛ս Մովսես Խորենացի, Ա. Ժ., Սեբեոս, գլ. Ա։ Մար-Աբաս Կատինայի գրած պատմությունը մեզ չի հասել։

73. Ֆրանսիացի ճանապարհորդ (1643—1713), երկու անգամ շրջել է Արևելքում։ (Տե՛ս «Путешествие Жана Шардена по Закавказию 1672—1673», 1902, ռուսերեն թարգմանությունը)։

74. Այս ակնարկությունների մասին տե՛ս Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար։ Երևելի Հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 213, 323, 377։

75. Միհրդատ Պոնտացի կամ Եվպատոր—հին աշխարհի զորավարներից (111—63)։

76. Խոսքը վրաց Հերակլ թագավորի կրտսեր որդու մասին է, որը զրկվելով թագավոր եղբորից (Գեորգի XII), Ռուսաստանի թշնամի Թուրքիայի և Պարսկաստանի օգնությամբ հույս ուներ ձեռք բերելու արքայական գահը։ Իր կյանքի վերջին տարիներին ապրում էր Պարսկաստանում, իբրև Սալմաստի հայոց մասի կառավարիչ։ Թաղիադյանը Ալեքսանդրին հիշատակում է նաև 206 էջում։

77. Հերակլ II—Քարթլիի և Կախեթի թագավոր (1720—1798)։

78. Աղամալյան Սահակի Մարիամ անունով դուստրը հարկադրաբար ամուսնացրին Ալեքսանդր Բագրատիոնի հետ։ Երկար տարիներ որդու հետ ապրելով Պետերբուրգում, վախճանվում է 1882 թ. հոկտեմբերի 7-ին։

79. Երևանի հայ մեծահարուստ և անվանի իշխան։ Վախճանվել է 1834 թ.։ 1828-ին Հայկական Մարզի վարչության անդամ։ (Տե՛ս նրա մասին Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 10, էջ 342—343)։

80. Տե՛ս Մովսես Խորենացի, Ա, լա։

81. Սսի կաթողիկոսությունը հիմնվել է 1441 թ. (առաջին կաթողիկոսը եղել է Տ. Գ. Ա. Մուսաբեգյանը)։

82. Աղթամարի կաթողիկոսությունը հիմնվել է 1114 թ. (առաջին կաթողիկոսը եղել է Տ. Դավիթ Թոռնիկյանը)։

83. Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսությունը հիմնվել է Գրիգոր Լուսավորչի օրերին։

84. Էջմիածնի կաթողիկոսությունը հիմնվել է Գրիգոր Լուսավորչի կողմից (հետագայում դարձել Ամենայն Հայոց)։ 899 թ. այն Էջմիածնից փոխադրվում է Դվին, 901-ից հայտնի պատճառներով թափառում Վասպուրականի և Կիլիկիայի տարբեր վայրերում, 1441 թ. նորից հաստատվում է Էջմիածնում։ (Տե՛ս Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 75—78)։

85. Խոսքը 1836 թ. Ռուսաստանի կողմից հաստատված Կանոնադրության մասին է, կրում է «Բարձրագոյն Կարգադրութիւն (պոլոժենիէ) յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան, տպեալ ի ս. Էջմիածնին, յամի Տեառն 1836 յամին» վերնագիրը։

86. «Ժամագիրք», Վաղարշապատ, 1902, էջ 514—515։

87. Էջմիածնի մայր տաճարի Ս. Ստեփանոսի խորանում մինչև այսօր ձեռնադրվում են եպիսկոպոսները։ «Հրաշափառ աստուած» շարականը երգվում է կաթողիկոսական թափորների ժամանակ։

88. Էջմիածնի մայր տաճարում կաթողիկոսի ոտքերի տակ փռված գորգի վրա գործված պատկերը խորհրդանիշ է Հայոց կաթողիկոսների «երկարակեցության, բարձրաթռիչք մտքի և սրատես աչքի»։

89. Խրտվիլակը (կամ խարտվիլակ) աստիճան ստացող հոգևորականի երաշխավորն է, որը ընթերցում է վկայաթուղթը։

90. Քրիստոսի ծննդյան, մատնության, խաչելության, թաղման, պայծառակերպության և հայտնության նվիրված երգ է, որը երգվում է ըստ պատշաճի բոլոր ժամերգությունների ժամանակ։

91. Պողոս Ղարադաղցին Ակոռի գնալու համար Էջմիածնից դուրս է եկել ոչ թե 1816, այլ 1819 թ. մայիսի 27-ին (Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, էջ 171—172)։

92. Առաքել Դավրիժեցու մոտ Ջվարթնոցի մասին հիշատակություն չկա։

93. Պարսից Սեֆևյան հարստությունը հիմնվել է 1502 թ. շահ Իսմայիլի կողմից (Լեո, Հայոց Պատմություն, հ. 3, 1969, էջ 171)։

94. Ջվարթնոցի տաճարի ավարտը ընդունվում է 652, իսկ կործանումը՝ 980-ական թվականները։ Երկրաշարժից կործանվելու մասին հնից ավանդված որևէ հիշատակություն չկա։ Հին մատենագիրներից միայն երեքն են գրել Ջվարթնոցի տաճարի քանդվելու մասին։ Նրանցից՝ Ասողիկը ոչինչ չի ասում քանդվելու պատճառների մասին. Կիրակոս Գանձակեցին գրել է, թե Ջվարթնոցը քանդել են արաբները, Մխիթար Այրիվանեցին նույնպես նշում է, որ քանդել են արաբները։ (Այդ մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 4, Կ. Ղաֆադարյան, Ջվարթնոց, էջ 182—184)։

95. Հովհ. Շահխաթունյան (1799—1849)—էջմիածնի միաբան, պատմաբան-հնագետ։ Կրթությունը ստացել է Պոլսում, 1828 թ. զանազան պաշտոններ է վարել Էջմիածնում։ 1837 թ. կազմել է վանքի գրատան ձեռագրերի ցուցակը։ (Տե՛ս «Մատենագիտություն հայկական Մատենագիտության», Երևան, 1963, էջ 178)։

96. Տե՛ս Չամչյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1784, էջ 71։

97. Կոչվել է Զորագեղի Անապատ, որտեղ գտնվել է առաջնորդարանը։ Այստեղ եղել է հնակառույց ս. Գևորգ անունով կաթողիկոսական եկեղեցին։ Զորագեղի Անապատը ունեցել է երկու եկեղեցի ևս՝ ս. Հակոբ և ս. Սարգիս։ Վերջինս վերանորոգվել է 1835-ին և գոյատևում է առ այսօր։ (Տե՛ս «Լրաբեր», 1969, № 1, էջ 82—83)։

98. Թաղիադյանի կասկածները ճշտվեցին։ Վերջին տասնամյակի նոր պեղումները երևան հանեցին մեր մայրաքաղաքի հիմնադրման ժամանակը և անվան ճիշտ ստուգաբանությունը՝ Էրեբունի-Երևան։

99. Այս եկեղեցու անունը ս. Աստվածածին է, որը հետագայում կոչվել է Ս. Զորավոր, այդտեղ պահվող մի ձեռագիր մատյանի անունից, որ «հրաշագործ» և «զորավոր է» համարվել։ Եկեղեցին կառուցել է Մովսես Տաթևացի վարդապետը (հետագայում՝ կաթողիկոս)։ 17-րդ դարի սկզբին այն դառնում է մենաստան։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ մենաստանը իր ժամանակին մեծ անուն է ունեցել։ (Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Երևանի միջնադարյան հուշարձանները, «Լրաբեր», 1969, № 1, էջ 83—84)։

100. *Խոսքը 11-րդ դարի նշանավոր տոմարագետ և պատմաբան Հովհաննես Կոզեռնի մասին է, որի անունով և կոչվել է Հին Երևանի հյուսիսային կողմում ընկած բլուրը (գերեզմանոցը)։ Այստեղ թաղվել է Կոզեռնը, նրա մոտ՝ Բաղեշի Ամրդոլու վանքի արտաքին գիտությունների դպրոցի նշանավոր դասատու Մելիքսեթ Վժանեցի վարդապետը և Մովսես Սյունեցի կաթողիկոսը։ Նրանց գերեզմանների վրա եղել է մատուռ, որը 1829 թ. վերանորոգվել է և այնուհետև դարձել Մելիք Աղամալյանների ընտանեկան դամբարանը։* (Եր. Շահազիզ, *Հին Երևանը, Երևան, 1931, էջ 187—188)։*

101. *Թաղիադյանի ստուգաբանական բնույթի կռահումներն ունեն պատմական հիմքեր։ Ինչպես հայտնի է, հեթանոսական Հայաստանում եղել են հնդկական համայնքներ, իրենց պաշտամունքով և լեզվով։ Քրիստոնեության հաստատումով վերանում են այդ համայնքները, ժողովուրդը ձուլվում է հայերի հետ։ Հնդկաստանից Հայաստան գաղթած հնդիկների մասին խոսում է իր «Պատմություն Հնդկաստանի» գրքի 202—204 էջերում։ Այդ մասին տեղեկություններ է տալիս նաև Զենոբ Գլակը «Պատմութիւն Տարոնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի», Վենետիկ, 1832։*

102. *Խոսքը 1735 թ. պատերազմի մասին է, որի ժամանակ ավերվում է Կարինը։ Նրա բնակիչների մի մասը, որոնց հետ և Կարբեցի Նիկողայոս Թաղիադյանն իր ընտանիքով գաղթում են Երևան։*

103. *Ճանապարհորդ Շարդենի (1643—1713) հիշած ու նկարագրած այդ հին աշտարակը գտնվել է եպիսկոպոսարանի մոտ և ունեցել է դժվարընթեռնելի արձանագրություն։ Հ. Շահխաթունյանի տվյալներով այդ աշտարակը գտնվել է ոչ Շարդենի նշած տեղում, այլ Հրազդանի մյուս ափին։ (Տե՛ս* Եր. Շահազիզ, *Հին Երևանը, էջ 204)։*

104. *Տե՛ս* Մովսես Խորենացի, *Ա, ժբ։*

105. *Նույն տեղում, Բ, ղ։ Տրդատ Ա-ի կողմից վերաշինված Գառնիի ամրոցի և նրա մեջ հեթանոսական տաճարի վերաշինությունը հեղինակը սխալմամբ վերագրում է Տրդատ Գ-ին։ Մովսես Խորենացու նշած հելլեն գիրը 1945 թ. գտնված հունական արձանագրությունն է, որով ճշտվում է Տրդատ Ա-ի կողմից տաճարի կառուցման թվականը (77 թ.)։ Գառնիի հեթանոսական տաճարը կործանվեց 1679 թ. հունիսի 4-ի մեծ երկրաշարժից։ (Գառնիի մասին տե՛ս «Գառնի, 3, 1949—1956. Պեղումների արդյունքները», Երևան, 1962, էջ 11)։*

106. *Խոսքը Տրդատ Գ-ի մասին է։ Թաղիադյանը կրկնում է Մ. Խորենացու սխալը։*

107. *Ըստ ավանդության, Արա Գեղեցիկի մահից հետո Շամիրամը տիրեց Հայաստանին և Վանա լճի ափին կառուցեց քաղաք իր անունով։ (Տե՛ս* Մովսես Խորենացի, *Ա, ժզ)։*

108. *Այդ դրամները հավանաբար բյուզանդական են եղել։*

109. *Թիֆլիսի հայտնի իշխանական տոհմի ներկայացուցիչներից մեկը (1791—1858), ցարական պետական գործիչ, ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (1828—1829) աչքի է ընկել իր սխրագործություններով։ 1829 թ. մինչև 1838 թ. Հայկական մարզի կառավարիչ։*

110. *Ակնարկում է Ծաղկաձորի Կեչառիսի եկեղեցին, որը կառուցել է տվել Գրիգոր Մագիստրոսը 1003 թ.։*

111. *Մաքենացոց վանքը (Կարմիր վանք) գտնվում է Սևանի շրջանում, կոչվել է նաև Գեղամա ս. Աստվածածին, կառուցել է Գր. Սուփան իշխանը 852 թ.։*

112. Զաքարիա Գուլասպյան-Բեհբության Տփխիսեցի։ Դավիթ-Դանիելյան կռիվների ժամանակ աքսորվում է Պոլիս, 1816 թ. մոտերքին վերադառնում Էջմիածին։ 1816—1821 թթ. դժտվում է Ներսես Աշտարակեցու հետ, մինչև վերջը մնում նրա թշնամին։ Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հիմնավորվում է Սևանի վանքում, ուր և 1835 թ. կնքում է իր մահկանացուն։ Նրա գրչին է պատկանում «Վեպ ծովակին Գեղամայ երջանիկ կղզւոյն Սևանայ և նորա բնակչացն» 1825 թ.։ (Ձեռագիրը պահվում է Մատենադարանում, Կաթ. Դիվան, թ. 44, վ. 355)։ Հովհ. Շահխաթունյանը այդ ձեռագրից մի քանի հատված զետեղել է իր «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի» գրքի 2-րդ հատորում, էջ 207—235, «Ծովակ Գեղարքունեաց» վերնագրով։

113. Պետք է լինի էջ 63—73։

114. Թաղիադյանի ենթադրությունը հավանական է։ Արաբական տիրապետության շրջանում Հայաստան եկան արաբական մի քանի ցեղեր, նրանց թվում և Կայսիկները։ Ուժեղանալով նրանք կազմեցին էմիրություն, որն իր գոյությունը պահպանեց մինչև 964 թ.։ (Տե՛ս Լեո, Հայոց Պատմություն, հ. 2, 1967, էջ 757—758)։

115. Խոսրով Բ. Կոտակը (331—338) Արտաշատ մայրաքաղաքի կլիմայական աննպաստ պայմանների պատճառով արքունական պալատ է կառուցում քաղաքից հյուսիս՝ մի բարձրադիր տեղում, որի շուրջը հետագայում ծավալվում է [illegible] մայրաքաղաքը և Խոսրովի հրամանով «Տաճար Մայրի» և Խոսրովակերտ անտառները։

116. Թաղիադյանից առաջ Տավերնիեն հին Արտաշատի ավերակները վերագրել է Դվինին, Շարդենը տեսել է այն Նախիջևանի կողմերում։ Արտաշատի տեղը շփոթել են Ցրեյգանը, Կոցեբուն և ուրիշները։ (Այդ մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 15)։

117. Աշխարհացույցի հեղինակին շատ լավ ծանոթ է եղել Ազատ գետը (Գառնին և Մեծամորը)։ Նրա (Արաքսը-Ռ. Ն.) արևելյան կողմից՝ Ազատ գետը, որ արդարև ազատ է. սրա ակունքները բխում են Գեղ լեռից—Սախուրակ կոչված տեղից, որն իջնելով Դվինի մոտով ոռոգում է ամբողջ Հայոց Ոստանը և հարավ անցնելով՝ լցվում է Երասխը. սրանց արանքում է շինված Արտաշատ քաղաքը, որտեղ առաջին ժամանակներում Մեծամորի խառնուրդն էր, իսկ հիմա Մեծամորը փոխելով ընթացքը՝ Արևմտյան կողմում է խառնվում (Երասխին)։ (Տե՛ս նաև Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 94-ից)։

118. Տե՛ս «Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», Տփխիս, 1909, էջ 404։

119. Այդ անունով էլ կոչվում էր Անիի մոտ գտնվող Բաշ-Շորագյալ գյուղը, որն Անիից առաջ եղել է Բագրատունիների նստատեղին։

120. Խոսքը Ղ. Ինճիճյանի մասին է։

121. «Պատմութիւն Պարսից» և «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» գրքերում Թաղիադյանն այն կարծիքն է հայտնում, թե հայկական պանթեոնում օտար աստվածների կողքին եղել են և բուն հայկականները՝ իրենց անուններով։ Այժմյան հնագիտական հետախուզումները ճշտում են այդ ենթադրությունը։

122. Արտաշատը կառուցվել է 170—160-ական թթ. Արտաշես Ա-ի օրոք։ Գրավոր վկայությունները, պեղումները և հետախուզումները ապացուցում են, որ Արտաշատը գտնվել է Թաղիադյանի մատնանշած տեղում։

123. Ըստ հայ լուսավորչական եկեղեցու պատմության՝ Թադեոս առաքյալը քրիստոնեության շարժման հիմնադիրն է Հայաստանում։ Գրիգոր Լուսավորիչը պատկանում է հինգերորդ սերնդին։

124. Մովսես Խորենացի, *Բ, կա*։

125. *Նշանավոր եկեղեցական գործիչ, վախճանվել է 337 կամ 338 թթ.։ Ըստ ավանդության Մծբնա Հակոբը փորձել է բարձրանալ Մասիսի գագաթը, ճանապարհին հրեշտակները երևացել են նրան և տվել տապանից մի կտոր* (Փավստոս Բուզանդ, *3-րդ դպրութ., գլ. ժ։ Նրա անունով էլ 11—12 դարերում կառուցվել է վանքը)։*

126. Մովսես Խորենացի *խբ*։

127. *Բայազիդի կառավարիչ 19-րդ դարի սկզբներին։*

128. *Պետք է լինի Դորպատայ։*

129. *1829 թ. սեպտեմբերի 27-ին Դորպատի համալսարանի ռեկտոր պրոֆ. Գ. Պարրոտը և Խաչատուր Աբովյանը բարձրացել են Արարատի գագաթը։ (Տե՛ս* Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյան, Երևան, 1967, էջ 307—327)։ Թաղիադյանը այլափոխում է ճշմարտությունը, հետևում անստիպապաշտ վեզչուկներին և մերժում Արարատ բարձրանալը առհասարակ, առանց նրանց անունը տալու։*

130. *Նկատի ունի 1840 թ. երկրաշարժը, որից կործանվեց Ակոռին։*

131. *Ծննդոց. Թ, 22—23։*

132. *Յովհաննու, Գ, 1—6։*

133. Մովսես Խորենացի, *Բ, կա*։

134. Մարշմեն—*անգլիացի պատմաբան։*

135. *Սույն ժողովածուի 130-էջում Թաղիադյանը գրում է, որ Ակոռի եղած ժամանակ երկու անգամ բարձրացել է փոքր Մասիսի կատարը։ Երկրորդ վերելքը տեղի է ունեցել սեպտեմբերի 20-ից հետո (էջ 138)։ Աբել Մխիթարյանն իր «Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանի» (Վաղարշապատ, 1874) գրքի 17-րդ էջում Փոքր Մասիսի մասին խոսելիս իբրև ականատեսի վկայակոչում է Թաղիադյանին։ 1846 թ. («Ազգասէր» № 33, էջ 104 և № 38, էջ 142) տպագրվում է Թաղիադյանի մի հոդվածը «Կարծիք ինչ Մասիս, յօրագրէ միոջէ» վերնագրով։*

136. *Տե՛ս № 100 ծանոթագրությունը։*

137. Եփրեմ Սերյան, *Համառօտ պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1845։*

138. Ղ. Ինճիճյան, *Հնախօսութիւն Հայաստանեայց, Վենետիկ, 1835, էջ 251—254, 266։*

139. Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 79։*

140. *Պետրոս Աղամալյան-Բերդումյան. 18-րդ դարի երկրորդ կեսի հայ աստվածաբան, փիլիսոփա, բանաստեղծ, էջմիածնի միաբանության անդամ։ (Նրա մասին տե՛ս* Մ. Սմբեան, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 259)։ Մեզ հայտնի է Հաղբատի վանքում Աստուածանմանութեան ձեռագրի Թաղիադյանի կատարած ընդօրինակությունը, որը նա հրատարակեց 1827 թ. Կալկաթայում։*

141. *Թաղիադյանի ճամփորդությունը դեպի Արագածոտն տեղի է ունեցել 1919 թ. հոկտեմբեր ամսին։*

142. *«Արդար Դավթի» մասին տե՛ս* Ս. Սեդրակյան, *Հիշատակարան, մաս 1, 1845—1864, էջ 114—115 (ձեռագիրը գրականության և արվեստի թանգարանում)։*

143. *Թաղիադյանի նկատած բլրաձև ավերակը Քասախ գետի ափին ընկած դոլմենների, կուրգանների և հին շենքերի հետքեր են։*

144. *Եկեղեցին կառուցել է Վահան Ամատունին, վերջին անգամ վերանորոգվել է 1879 թ. Գևորգ Դ. կաթողիկոսի օրոք։*

145. Եկեղեցու մոտ եղել է մի կամարակապ ծածկ, որը ցույց էին տալիս իբրև Վահան Ամատունու գերեզման։

146. Արուճ ավանը եղել է հայ Արշակունիների զորակայաններից մեկը։ Այստեղ է գտնվում նշանավոր Կաթողիկե տաճարը, որը կառուցել է Գրիգոր Մամիկոնյանը 660-ական թվականներին։ Տաճարի մոտ եղել է իշխանական պալատը։ («Լրաբեր», հաս. գիտ., 1971, № 1, էջ 83)։

147. Հ. Շահխաթունյանը Թաղիադյանից առաջ ճիշտ որոշել է Աշտարակի ու Աշնակի տեղերը։ (Տե՛ս «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի» հ. 2, էջ 57)։

148. Մողնի գյուղի մոտ մենաստան՝ ս. Գևորգ անունով ուխտատեղի, 12-րդ դարի կառույց (ճարտարապետը Սահակ Հիզանցի)։ (Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 184)։

149. Տե՛ս Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 255։

150. Աբրահամ Կաթողիկոս Կրետացի (1734—1737)։ Տե՛ս նրա «Պատմագրութիւն անցից իւրոց և Նատր շահին պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 17—19։ Թաղիադյանը նկատի ունի 1735 թ. թուրք-պարսկական ընդհարումների նկարագրությունը Եղվարդի դաշտում։

151. Ըստ ավանդության հիմնվել է 330 թ.։ Այժմյան եկեղեցին 13-րդ դարի կառույց է։

152. Ըստ ավանդության Հովհաննավանքը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարասկզբին։ Ներկա կառույցը 13-րդ դարի գործ է։ Հովհաննավանքն իր վերելքն է ապրել 17-րդ դարում։ 19-րդ դարի սկզբին ամայացել է (Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948)։

153. «Գյուղացին և արջը» հանրահայտ առակի տարբերակներից մեկն է։

154. 1736-ին Նադիրն իրեն հռչակեց շահ և շարժվեց դեպի Հնդկաստան։

155. Տե՛ս «Ազգասէր», 1846, հ. Բ, № 31, էջ 86, Թաղիադյանի հոդվածը։

156. Տեղերի վանքը ինչպես և ս. Աստվածածին եկեղեցին կառուցել է Վաչուտյան Մամախաթուն տիկինը 1232 թ.։

157. Ամբերդի ս. Հովհաննես եկեղեցին կառուցել է Հովհաննես Զ. կաթողիկոսը (10-րդ դար)։ Ամբերդի ամրոցը կառուցել են Պահլավունիները 1026 թ.։

158. Տիրան—Հայոց թագավոր (339—350)։ Փավստոս Բուզանդը նկարագրում է Տիրանի գերի ընկնելը և կուրացումը Շապուհի կողմից։ Տիրան թագավորը մեռնում է 350 թ. Կուաշ ավանում, ուր աքսորված էր։

159. Թաղիադյանի հայրացուն Յաանկանեցումն էր գտնվում հավանաբար աշխատանքի բերումով։ Նրա ընտանիքը՝ Թաղիադյանի մայրը երեխայի հետ ապրում էր Երևանում։ (Տե՛ս նույն ժողով. էջ 127, 185)։

160. Թաղիադյանի այս գրառումները մեզ չեն հասել։

161. 1816 թ. Թիֆլիսում Ներսես Աշտարակեցու բարենորոգումների դեմ ըմբոստացած հայ իշխանական խավը բողոքագիր է ներկայացնում կառավարությանը, որի առթիվ կազմվում է քննական հանձնաժողով։ Այդ ժամանակ է, որ Էջմիածնից Թիֆլիս է ժամանում Զաքարիա Գուլասպյանը, որը Ներսեսի գլխավոր թշնամի՝ Դարչի Բեհբուդյանի քրոջ որդին էր։ Զաքարիային, իբրև այդ խառնակությունների մասնակից, 1817 թ. գեներալ Երմոլովը արտաքսում է Թիֆլիսից։ Երկրորդ անգամ Գուլասպյան վարդապետը Թիֆլիս է գնում իբրև Վրաստանի նվիրակ։ Երմոլովը մի խիստ գրությամբ նորից արտաքսում է նրան Թիֆ-

լինից: Թաղիադյանի ասածը, թե նա «կարիգլուխ ոչ այլ ունէր բան յուլանալ ի խցի հոգեմաշ մտածութեամբս», վերաբերում է երկրորդ վտարմանը (Մատ., Կաթ. Դիվ., թ. 16, վ. 79, իէ, իը, իթ.):

162. Թաղիադյանը Զաքարիա Գուլասպյանին պետք է աշակերտած լինի 1820 թ. սեպտեմբերից մինչև 1821 թ. փետրվար (5 ամիս՝ ինչպես ինքն է նշում):

163. Թաղիադյանը շփոթել է դեպքերը: Զաքարիա Գուլասպյանը իբրև նվիրակ Բայազետ է գնացել 1818 թ. հոկտեմբերի 28-ին, իսկ 1821-ին Եփրեմ կաթողիկոսի հանձնարարականով մեկնել է Թավրիզ թագաժառանգի մոտ, ապա Թեհրան շահին տեսնելու՝ էջմիածնի պարտքի հարցով:

164. Այունիք ուղևորության թվականը (1819) սխալ է նշված: Ինչպես տեսանք Թաղիադյանը նույն թվականին Պողոս Ղարադաղցու հետ գնում է Ակոռի, իսկ հետո՝ Արագածոտն: 1820 թ. նա անց է կացնում էջմիածնում, 1821 թ. հունվարի 1-ին վանքում «դրուատ» ասելու համար պարգևատրվում է դրամով և «ծաղկեալ փեշկիրով» (տե՛ս Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյան, էջ 152): 1821 թ. Եփրեմ կաթողիկոսը նոր նվիրակներ է ուղարկում երկրի տարբեր կողմերը՝ էջմիածնի պարտքերը մարելու նպատակով: Այդ նվիրակներից մեկն էր Այունիք ատարված Դանիել եպիսկոպոսը: Ուրեմն Թաղիադյանի այդ ճամփորդությունը Դանիել եպիսկոպոսի հետ տեղի է ունենում 1821 թ. գարնանը:

165. Ալ. Գրիբոյեդովը, որը նույն ժամանակներում եղել է Երևանում, հիշյալ սարդարի մասին գրում է. «Սարդար Հյուսեին խանը (այժմ թագավորող կաջարների սերնդից) այս երկրում առաջինն է աստծուց հետո, երրորդ մարդը պետության մեջ... վաղուց է, որ այդ պաշտոնումն է. վճարում է ամեն տարի բայրամին ոչ միշտ միակերպ ընծա և ոչ թե պետական եկամուտ մի քանի հազար ռուբլի, որի փոխարեն իրավունք ունի գանձել մեկ երրորդն այն ամենի, ինչ արտադրում է հողը, իսկ եթե բերքն ուզի երեք բաժինն էլ կվերցնի» (Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 21):

166. Այս խանի մասին տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 550:

167. Ավետարան ըստ Մատթեոսի, Ժ, 13—14:

168. Սյունիքը 4-րդ դարից սկսած հիշատակվում է իբրև առանձին ուժեղ նախարարություն: Սյունյաց նախարար տունը վաղ ժամանակներից բաժանված էր 2 ճյուղի: Գահերից ճյուղը իշխում էր Սյունիքի մեծ մասի վրա, իսկ մյուս մասը Գեղամա լճի ավազանում՝ կոչվում էր Հայկազյան ճյուղ: 10-րդ դարում տեղի են ունենում նոր բաժանումներ: Սելջուկյան արշավանքների շրջանում ավերվում է Սյունիքի թագավորությունը (Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 191):

169. Անդովկ Սյունյաց իշխան—4-րդ դարի Սյունյաց նախարարության նշանավոր ներկայացուցիչներից: (Տե՛ս Լեո, Հայոց պատմություն. հ. 2, էջ 54—56):

170. Երկրորդ դարի առաջին կեսի հույն փիլիսոփա-աշխարհագիր: (Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 497):

171. Հովսեպոս Փլավիանոս—նշանավոր հրեա մատենագիր (37—95): Նրա հնախոսություններից օգտվել է Մովսես Խորենացին: Նախիջևան բառը Փլավիանոսը թարգմանել է Արտավանդրիոն (Իջևան) Ղ. Ալիշան, Սիսական, էջ 497):

172. Կաշմ (Կաշմ)—Նախիջևանի արաբ կառավարիչ: Երկիրը ռազմական ուժից զրկելու նպատակով, արաբները 706 թ. խարեությամբ Նախիջևան կանչեցին

800 հայ նախարարների և նրանց Խրամ ավանի եկեղեցում այրեցին: Արաբները այդ դաժան նախճիրի օրը կոչեցին «կրակի օր»: (Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 387—390):

173. Ղազան Ջհանշահ (1295—1304) մոնղոլ զորավար—նրա օրոք մոնղոլները ընդունեցին մահմեդականություն և ուժեղացրին ավերածությունները Հայաստանում: (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1952, էջ 210):

174. Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 473:

175. Սուլթան Մուրադ 4-րդ (1622—1639)—օսմանյան Թուրքիայի ինքնակալներից: 1635 թ. պաշարեց Երևանը, ապա անցավ Նախիջևան, այնտեղից Թավրիզ:

176. Առաջին անգամ Թովմա Արծրունին է նշում, որ Արտաշես 2-րդը արշավել է Նախճավան ավանը, որը էր ոստանը Վասպուրականի (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 497):

177. Այս շարականը վերագրվում է Սահակ Ձորափորեցի կաթողիկոսին, երգվում է իբրև էջմիածնի հիմն:

178. Խոսքն ավանդական Սիմեոն մոլի մասին է, որը եղել է խարեբա, կաշառակեր և կեղծավոր:

179. Աստապատից հարավ-արևելք ընկած վանքը կոչվում է Քարատակի վանք (նաև Կարմիր վանք): Ըստ ավանդության գոյություն ունի 6-րդ դարից: (Հ. Շահխաթունյան, Ստորագրություն..., հ. 2, էջ 297—304):

180. Ջուղան 16—18-րդ դարերում հայտնի դարձավ իբրև վաճառաշահ կենտրոն: Կործանվեց 18-րդ դարում Շահ-Աբասի ձեռքով: Ջուղայի հազարավոր գեղաքանդակ կոթողները հետագայում ուսումնասիրվել են: (Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 170—180, Արամ Վրույր, «Ջուղա, երկու խոսք»)

181. Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, Ե, ժգ, ժդ:

182. Ս. Թովմայի առաքելո կամ Ագուլյաց վանքը ըստ ավանդության հիմնադրել է Ս. Բարդուղիմեոս առաքյալը, գտնվում է վերին Ագուլիսի մոտ: Առանձնապես հռչակ է վայելել 18-րդ դարում:

183. Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, ժ: Խոսքը Բորբորիտների աղանդի մասին է: Տե՛ս 1952 թ. հրատարակ. Ն. Ակինյանի, № 68 ծանոթագրությունը:

184. Հայոց Սմբատ թագավորի իշխանության օրոք (982) Աբլհաճ էմիրը գրավում է Դվինը, հասնում Անիի դռներին: Ավերելով և այրելով Հոռոմոսի վանքը, Հաղթանակով իջեցնել է տալիս խաչը: Պարտության ժամանակ Աբլհաճ էմիրին Դաղթնի էմիր Սպաթուլամի հետ է խլում Դվինը (Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1957, էջ 598):

185. 1821 թ. զատիկը եղել է ապրիլի 10-ին:

186. Ասվում է պատարագիչների կողմից ժամերգությունը սկսվելուց առաջ:

187. Գանձափարախ անունը Ղ. Ինճիճյանի մոտ գրված է սխալ. պետք է լինի Տանձափարախ (Բաղք գավառում, այժմյան Ղափանի շրջան): (Տե՛ս Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. 1, 1903, էջ 464):

188. Տաթևը 9-րդ դարի վերջերից դառնում է Սյունյաց աշխարհի հոգևոր և գիտական նշանավոր կենտրոն: 14-րդ դարում հայտնի են դառնում Հովհան Որոտնեցու, այնուհետև Գրիգոր Տաթևացու բարձրագույն դպրոցները:

189. Եթե նկատի առնենք Թաղիադյանի վկայությունները, ապա մինչև Շուշի հասնելը ստացվում է ոչ թե 20, այլ 10 ամիս՝ 1821 թ. մարտ—1821 թ. դեկտեմբեր։

190. Տե՛ս նույն ժողոված, էջ 128։

191. Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 13։

192. Արաբ ոստիկան Յուսուֆի արշավանքների շրջանում Կապույտ բերդը պաշարվում է և Սմբատ Բագրատունի թագավորը գերի է վերցվում։ Մեկ տարի բանտում մնալուց հետո (914-ին) տանջամահ է արվում, մարմինը բերվում է Դվին և կախվում գլխավոր մուտքերից մեկի դարպասից։ (Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1958, պր. 4, էջ 24)։

193. Թաղիադյանի նշած այս և հաջորդ թվերը սխալ են։ Հ. Շահխաթունյանը, իր «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի» գրքի առաջին հատորում, էջ 235, նշում է, որ Եփրեմ կաթողիկոսը Արցախ գնալու համար էջմիածնից դուրս է եկել 1821 թ. նոյեմբերի սկզբներին։ Պ. Հակոբյանն իր «Խաչատուր Աբովյան» գրքում նշում է օրը՝ նոյեմբերի 2 (էջ 150)։

194. Պահպանվել է Եփրեմ կաթողիկոսի ծախսերի ցուցակը, ըստ որի նա Խորվիրապից դուրս է եկել 1821 թ. նոյեմբերի 6-ին Նախիջևան գնալու համար (Մատ., Կ. Դ., թ. 30, վ. 168, էջ 25)։

195. Անտոն Մուղնեցի եպիսկոպոս (հետո արքեպիսկոպոս)—էջմիածնի միաբան, 1816—1819 թթ. և ապա 1820—1821 թթ. իբրև էջմիածնի նվիրակ շրջում էր Հայաստանում։ Վախճանվել է 1828 թ.։

196. Տե՛ս № 67 ծանոթագրությունը։

197. Հովսեփ վարդապետ (հետագայում արքեպիսկոպոս) Տեր Մարուքյան—Լոռեցին։ Անցյալ դարի 20—30-ական թթ. աչքի ընկնող դեր է գրավել միաբանության մեջ։ Սկզբում եղել է Ներսես Աշտարակեցու եռանդուն պաշտպանը (նրան անվանել են պստլիկ Ներսես), հետո դավաճանել է նրան։ Վախճանվել է 1844 թ.։

198. էջմիածնի միաբաններից, այդ ժամանակ կաթողիկոսի քարտուղարը, գրադարանապետը, Սինոդի անդամ, վարդապետ, հետագայում եպիսկոպոս։ Հովհաննես Ղրիմեցին Աբովյանի բարեկամներից էր և մասնակցել է 1829—1832 թթ. «Ուխտի միաբանության» ծրագրումներին։

199. Պետք է ենթադրել, որ Եփրեմ կաթողիկոսը Նախիջևան է հասել նոյեմբերի 8—9-ին։

200. Եփրեմ կաթողիկոսը Տաթև է հասել 1821 թ. նոյեմբերի 22-ին (Մատ., Կ. Դ., թ. 16, վ. 79 լե, էջ 88)։

201. Կովկասյան զորքերի հրամանատարի տեղակալ Վելյամինովը տեղեկանալով հայոց կաթողիկոսի որոշման՝ ռուսական սահմանն անցնելու մասին, կարգադրում է Ղարաբաղի կառավարիչ Մեհդի ղուլի խանին արգելել նրա մուտքը Շուշի, մինչև Երմոլովից կարգադրություն ստանալը (Ալ. Երիցյան, Ամենայն հայոց..., էջ 191—192)։

202. Եփրեմ կաթողիկոսը Տաթևից դուրս եկած պիտի լինի դեկտեմբերի 10-ից հետո։

203. Մկրտիչ վարդապետ Տեր Գրիգորյան։

204. «Ցանցեալ ամառն» ասելով պետք է հասկանալ նույն տարվա (1821) ամառը, երբ Դանիել եպիսկոպոսի հետ Թաղիադյանը շրջում էր այդ կողմերում։

205. Այունյաց քերթողուհու մասին կենսագրական տեղեկություններ չկան։

206. Եփրեմ կաթողիկոսը 1821 թ. դեկտեմբերի 15-ին հասնում է Շուշի (Տե՛ս Գ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, էջ 150)։

207. Հովսեփ Տեր Ավագյան կամ Հովսեփ վարդապետ Արցախեցի—իր ժամանակին հայտնի մանկավարժ։ Վախճանվել է 1844 կամ 1847 թթ.։ (Տե՛ս Գ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, էջ 170)։

208. 1822 թ. «աւուրք քառասնորդական պահոցը» ընկնում է փետրվար-մարտին։

209. Երևանի սարդար Մահմադ խանը (իշխել է մինչև 1807 թ.)։

210. Վերադառնալով Դաղստանյան պատերազմից Երմոլովը Եփրեմ կաթողիկոսին՝ հունվարի 30-ի նամակով կարգադրում է վերադառնալ Էջմիածին, Ռուսաստանի դաշինքը պարսիկների հետ չխախտելու համար։ Կոմս Կարլ Նեսսելրոդեի նամակից պարզվում է, որ Ալեքսանդր թագավորը համաձայն էր Երմոլովի պահանջին (Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն և Կովկասի հայք, Թիֆլիս, 1894, էջ 199—200)։

211. 1822 թ. փետրվարի 13-ին Եփրեմ կաթողիկոսը տվել է ոչ թե հրաժարական կաթողիկոսական գահից, այլ պատրաստակամություն է հայտնել հանձնելու իր իրավունքները Ներսես արքեպիսկոպոսին, իրեն թողնելով կաթողիկոսական կոչումը և կնիքը։ (Տե՛ս Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն..., էջ 195—196)։

212. Այս Անտոն Մուղնեցի եպիսկոպոսի երկրորդ ուղևորությունն է Թիֆլիս, Ներսես Աշտարակեցու մոտ։ Առաջին ուղևորությամբ նա Ներսեսին է տանում Եփրեմ կաթողիկոսի 1821 թ. դեկտեմբերի 21-ի գրած նամակը։ 1822 թ. հունվարի 21-ին Ներսեսը գրում է Եփրեմին, որ ինքը Անտոն եպիսկոպոսի հետ այցելել է Մադաթով իշխանին և գեներալ Երմոլովին, և որ վերջինս պատրաստվում է նամակ գրել նրան։ Ներսեսը միաժամանակ հայտնում է Եփրեմին, որ Անտոն եպիսկոպոսը Սիմյոն եպիսկոպոսի հետ պատրաստվում է դուրս գալ Թիֆլիսից Շուշի գալու համար (Կ. Դ., թ. 42, վ. 103)։ Երկրորդ ուղևորությունը՝ 1822 թ. ապրիլի սկզբներին Անտոն եպիսկոպոսը կատարում է Հովհաննես վարդապետ Ղրիմեցու հետ։ Նրան ուղեկցում է Թաղիադյանը։

213. Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուսական կորպուսին ցույց տված իրենց ծառայություններով աչքի ընկան Հովհաննես (Վանի) և Հակոբ Աթաբեգյանները։ Նրանց մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս ռուս պատմաբան Վ. Պոտտոն, „Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества", Тифлис, 1902, стр 24.

214. Խոսքը 19-րդ դարի առաջին տասնամյակներին անուն հանած հայ աշուղների մասին է։ Թաղիադյանն անդրադառնում է նրանց նաև «Ազգասէրի» էջերում։ (1840, № 30, էջ 77—78)։

215. Հովսեփ Մելիք Ֆրիդոնյան (Բեկլարյան)—Ռուս-պարսկական առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում աչքի է ընկել քաջությամբ և հայրենասիրությամբ։

216. Շամիր բեգ Մելիք Ֆրիդոնյանն այդ ժամանակ ծառայում էր Կովկաս-

յան գլխավոր հրամանատարության դիվանագիտական գրասենյակում թարգմանի պաշտոնով։ Մասնակցել է 1817 թ. Երմոլովի առաքելությանը Թեհրան, այնուհետև ռուսական դեսպան Մազարովիչի թարգմանն էր Թեհրանում։

217. Մելիք Ֆրիդոնյան Դավիթը 19-րդ դարի սկզբներից ապրում էր Հնդկաստանում, ամուսնացած էր հնդկուհու հետ։ Որդին՝ Հովսեփը անգլերեն հրատարակվող «Արաս» գրական-պատմական-քաղաքական հանդեսի խմբագիրն էր։ (Նրա մասին տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի հավաքածու, № 10137, Մեսրոպ Սեթի նամակը Հ. Մկրյանին)։

218. Վրթանես եպիսկոպոս Աշտարակեցին 1799 թ. Հակոբ վարդապետի (հետո արքեպիսկոպոս) հետ գնում է Հնդկաստան՝ նվիրակության։ Մինչև 1808 թ. նա երկու անգամ գալիս է Թիֆլիս։ Հակոբ արքեպիսկոպոսի մահից հետո Վրթանես վարդապետը Սերովբե Կարնեցու ուղեկցությամբ նվիրակության հավաքած գումարը հասցնում է էջմիածին՝ 1812 թ.։ (Տե՛ս Սերովբե Կառնեցի, Ուղեգրություն Բաղդադից էջմիածին, Երևան, 1968, Առաջաբանը)։

219. Գանձակը ռուսները գրավում են 1804 թ. և վերանվանում Ելիզավետպոլ։

220. Խոսքը խազարների Ջեբու խաքանի որդի Շաթի մասին է, որը 626 թ. ավերեց Թիֆլիսը։

221. Օրբեթը (վրաց. Օրբեթի), ինչպես գրում է Ստեփաննոս Օրբելյանը, շինված է Արմազ լեռան վրա։ Թաղիադյանի նշումը նույն աղբյուրից է։ Ըստ Հովհաննես կաթողիկոսի և Ասողիկի, այն պետք է եղած լինի Գուգարքում, Կուր գետի ոչ թե ձախ, այլ աջ ափին։ Օրբեթը հետո կոչվեց Շամշուտ կամ Շամուլդե։ 1066 թ. վրաց թագավոր Բագրատը խլում է Կյուրիկյաններից։ Այժմ ավերակ է։

222. Այդ ավանդության մասին տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 368։

223. Գրիգոր Մանուչարյան եպիսկոպոս, շամշադինեցի — ռուս-պարսկական պատերազմի հերոսներից։ 1803 թ. 500 հեծյալներից կազմված ջոկատով առաջապահ տեղ է գրավել մարտերում, պաշտպանել հայ-ադրբեջանական գյուղերը պարսից զորքի ներխուժումից։ (Տե՛ս Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, էջ 243—250)։

224. 1800 թ. դեկտեմբերի 28-ին մեռնում է Վրաստանի թագավոր Գիորգի 12-ը։ Ռուսաց կառավարությունը նրա որդի Դավթին նշանակում է Վրաստանի ժամանակավոր կառավարիչ։ 1801 թ. Քարթլին և Կախեթիան հայտարարվում են ռուսական նահանգ։ (Տե՛ս «Վրաստանի Պատմություն», գ. 1, Թիֆլիս, 1958, էջ 384—387)։ Արքայական տան զավակներին ուղարկում են ոչ թե Սիբիր, ինչպես Թաղիադյանն է հայտարարում, այլ Պետերբուրգ։

225. Այս զրույցի մի տարբերակը Լոխմանի մասին տե՛ս Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 7-ում, էջ 440—441, Քեշիշի Օղլու երգերի ծանոթագրությունը։

226. Ներսես Աշտարակեցու չքախմբի անդամներից մեկը՝ Տեր Հարությունն Ալամդարյանն է, որը պաշտոնավարում էր Լազարյան ճեմարանում և Ներսես Աշտարակեցուն Սերովբե Կարրեցու գրած մի նամակից երևում է, որ Ալամդարյանը այդ օրերին ցանկություն է ունեցել Թիֆլիս գալու, եթե առաջինը համաձայներ ընդունել նրան բացվելիք դպրոցում իբրև ուսուցիչ։ Ալամդարյանի Թիֆլիսում լինելու մասին մեր ձեռքի տակ առայժմ այլ տվյալ չկա։ Չքախմբի երկրորդ անդամը Տեր Եսայի Նազարյանն է (Ստեփանոս Նազարյանի հայրը)։ Տեր Եսային իր գրագիտությամբ աչքի էր ընկնում Թիֆլիսի տգետ քահանաների գորշ միջավայրում։ Մեզ հայտնի չեն նրա կապերը Ներսեսի հետ։

227. 1822 թ. մայիսի 25-ին Ներսեսն իր շքախմբի հետ դուրս է գալիս Թիֆլիսից, 29-ին հասնում է Գանձակ, իսկ հունիսի 8-ին՝ Շուշի (Մատ., Ներսես Աշտարակեցու դիվան, թղթ. 165, վավ. 557։ Կաթ. Դիվ., թղթ. 42, վավ. 110)։

228. Ներսեսի և Եփրեմի խորհուրդն ավարտվում է նրանով, որ վերջինս հունիսի 20-ին Երմոլովին ուղղած գրությամբ հրաժարվում է կաթողիկոսությունից (Ալ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը..., էջ 206—208)։

229. Հունիսի 29-ին Ներսես Աշտարակեցին կաթողիկոսությունից հրաժարված Եփրեմի հետ գնում է Գանձասար։ (Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյան, էջ 168)։

230. Սարգիս արքեպիսկոպոսը կաթողիկոս է օծվել 1792 թ.։ 1799—1804 թթ. հայտնի իրադարձությունների շրջանում նա հալածվում է, ապաստարան որոնում Թիֆլիսում և Հաղբատում։ 1804 թ. վերադառնում է Գանձասար։ 1815 թ. վերանում է Աղվանից կաթողիկոսությունը։ Սարգիս կաթողիկոսը դառնում է Մետրոպոլիտ, վախճանվում է 1828 թ.։

231. 1822 թ. հուլիսի 8-ին Ներսեսը Եփրեմի հետ վերադառնում է Շուշի (Մատ. Ն. Ա. թ. 165, վ. 604)։ Հուլիսի 23-ին նրանք արդեն գտնվում էին Գյուլիստանում (Մատ., Կ. Դ., թ. 30, վ. 168)։ Պահպանվել են Ներսեսի նամակների պատճենները՝ Գյուլիստանից գրված, որոնք պատմում են հրաժարված կաթողիկոսի և նրա հովանավորի անհանգստությունները կապված մայր Աթոռի ծանր վիճակի հետ։ Օգոստոսի 18-ին նրանք մտնում են Ելիսավետպոլ (Կ. Դ., 42—132)։

232. Վելյամինովը նամակով առաջարկում է Ներսեսին, Եփրեմին թողնել Ելիսավետպոլում, բայց վերջինս խնդրում է թույլատրել իրեն հիմնավորվելու Հաղբատի վանքում։ Այնտեղից օգոստոսի 5-ին Եփրեմն ուղարկում է իր հրաժարականը ռուսաց թագավորին, Պարսից Թագաժառանգին և իշխան Գոլիցինին (Մատ., Կ. Դ., թ. 42, վ. 125)։ Սեպտեմբերի 17-ին Ներսեսը Եփրեմի հետ իրենց ուղեկիցներով դուրս են գալիս Ելիսավետպոլից, Հաղբատ հասնում սեպտեմբերի 20-ին (Մատ., Կ. Դ., թ., 30, վ. 168)։

233. Աշոտ Ողորմած (952—977)։

234. Ներսեսը Թիֆլիս է վերադարձել հոկտեմբերի 4-ին։ (Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյան, էջ 168)։

235. Նշված թիվը սխալ է։ Թաղիադյանը կարող էր Հաղբատից դուրս եկած լինել հոկտեմբերի մեջ միայն։ Գրքի 350—351 էջերում նշված է, որ Արարատյան դաշտում սկսվել էր այգեկութը։ Թաղիադյանը Էջմիածին է հասնում ճամփորդության 6-րդ օրը (էջ 348)։

236. Հովհան Օձնեցի կաթողիկոս (717—728)—Իմաստասեր անունով, պայքարել է հանուն հայ լուսավորչական եկեղեցու դավանաբանական սկզբունքների։

237. Օձունը ընկնում է ոչ թե Սանահնից հյուսիս, այլ հարավ-արևմուտք։

238. Ալավերդու պղնձահանքերի մասին է խոսքը, որն անցյալում Արղության իշխանների սեփականությունն էր։

239. Ստեփաննոս Կաշկարյան—Էջմիածնի միաբան Ստեփաննոս Արարատյան վարդապետն է, որը 1820-ական թվականների սկզբին կասկածի տակ է առնվում Վրթանես եպիսկոպոսի թողած ունեցվածքից գողություն կատարելու մեջ։ Թաղիադյանն այդ մասին խոսում է 1834 թ. Մկրտիչ Քարտաշյանին ուղղած մի նամակում։ (Տե՛ս նույն ժողոված. էջ 426—427)։

240. Պարզվում է, որ Թաղիադյանի մայրը երկրորդ ամուսնությունից ուներ արդեն 12 տարեկան աղջիկ Աննա անունով և մի մանուկ տղա Հովհաննես անու-

նով։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ մայրը ամուսնացել է Թաղիադյանի մինչև էջմիածին ուղարկվելը։

241. Ջոհրապյանի Աստվածաշունչը տպագրվել է Վենետիկում, 1805 թ.։

242. Սույն երկի էջ 352-ում Թաղիադյանը նշում է, որ Երևանում մնացել է ընդամենը 15 օր. դրան ավելացրած ճանապարհի 6 օրը։ Ըստ այդմ նա Հաղբատ պետք է վերադարձած լինի նոյեմբերի սկզբներին։

243. Ահարոն վարդապետի մասին տե՛ս Ալ. Երիցյան, Նյութեր Ներսեսի կենսագրության համար, Թիֆլիս, 1877, էջ 22։ Ահարոնի տաղերի ցանկը տե՛ս Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Ա. 1959, էջ 518—523։

244. Պողոս եպիսկոպոսի մասին Թաղիադյանը խոսում է Ռ. Հերրի «Պադեստին» պոեմի թարգմանության առթիվ գրած առաջաբանում։

245. Դավիթ խան Մատուրյան Մելիք Շահնազարյանների տոհմից։ «Պատմութիւն Պարսից» գրքում (էջ 223) Թաղիադյանի տված տեղեկությունները ճըշգրիտ չեն։ Դավիթ խանը էջմիածնում եղել է 1815, 1816, 1818 թթ.։ Նրա մասին տե՛ս Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար, Ռոստով, 1890, էջ 118—120։

246. «Պատմութիւն Վարուց Ռօպենսօնին Քրիւզօէ ի խրատ և կրթութիւն մանկանց թարգմանեալ ի Գաղղիական լեզուէ յաշխարհաբարի», Հ. Մինաս վարդապետ Բժշկյան Տրապիզոնցւոյ, Վենետիկ, 1817։

247. Աստվածատրյան Աբրահամ, Համառոտ քերականութիւն ի ռուսաց լեզուէ ի հայ, Մոսկվա. 1827։

248. Թաղիադյանը Հաղբատը թողել է 1823 թ. ապրիլի 1-ին։ «Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, էջ 156)։

249. Թաղիադյանի Հաղբատում ուսուցչություն անելու մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն։

250. Վարդան Բարձրաբերդցի (1238—1271)—նկատի ունի «Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական» գիրքը։

251. Մատթեոս Ուռհայեցին իր պատմության մեջ նկարագրել է 952—1136 թթ. դեպքերը։

252. Ալփասլան առաջինը—Տուղրիլի որդին, ամենաբռնակալ նվաճողներից։ Պարսից գահ բարձրացավ 1062 թ., նվաճեց Անդրկովկասը և Մերձավոր Արևելքը։

253. 1823 թ. մայիսի 9-ին Թաղիադյանն անցնում է Արաքսը, մտնում Պարսկաստան։

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հ. Բ

(էջ 201)

1848 թ. «Ազգասէրում» Թաղիադյանը հրապարակում է հայտարարություն «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» գրքի տպագրության մասին։ Սակայն այդ տպագրությունը ընդհատվում է։ Նույն տարվա № 141-ում (էջ 130) կարդում ենք. «Կիսկատար մնացին Բ հատոր Ճանապարհորդութեան Մ. Դ. Թ., որ հինգերորդ ամսութեան հասեալ խափանի, մինչ այդ արասցի բարեբար աստուած

*յաջողել վերստին տպագրութեան Նորա»։ Կիսկատար գրքի խառը կազմած մամուլների մի մասը հասել են մեզ Մ. Նալբանդյանի միջոցով։ Գրքի առաջին բաց էջի վրա կա հետևյալ ձեռագիր մակագրությունը։*

*«Շատ կերար սեր և մաձուն,*
*Ներկա կեր և տրտմութին*
*Ազգասիրիդ էր կապած*
*Քո այս չնչին Գրութինս»։*

*Վերադասավորելով մամուլները պարզվում է, որ տպագրվել է 15 մամուլ, որոնցից պակասում են 10—12-ը։ Դրանցից երկու հատված տպագրել ենք մեր գրքում (տե՛ս* Ռ. Նանումյան, *Մեսրոպ Թաղիադյան, կյանքը և գործը, Երևան, 1948, էջ 119—129)։ Մնացած մասերն, ըստ էության, առաջին անգամն են լայն հասարակության սեփականությունը դառնում։ Տպագրվում է որոշ կրճատումներով։*

*Սույն աշխատության մասին խոսելիս, ժամանակին նկատել ենք, որ «Պատմութիւն Պարսից» գրքի հրատարակության առաջաբանում նշված երկրորդ հատորի բովանդակությունը համապատասխանում է «Ճանապահորդութիւն ի Պարսկաստան» գրքից մեզ հասած մամուլներում նշված վերնագրերին և ըստ այդմ եզրակացրել, որ այս գիրքը «Պատմութիւն Պարսից» գրքի շարունակությունն է։ Սակայն մեր աչքից վրիպել է 1848 թ. «Ազգասէրում» տպագրված մի հայտարարությունը, ուր ասված է. «Հրատարակեցաւ Ա հատոր Ճանապարհորդութեան Մեսրովբայ Դ. Թաղիադեան ի Հայս, յուսով ընծայաբերեալ առաքելապատիւ Տեառն Ներսեսի Ազգասիրի Սայրագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց։ Որում հետեւի տպագրութեամբ Բ հատորն ի Պարսկաստան և ակն ունի անձնագիր ծառայն Ազգի իւրոյ առնել նա շնորհաց և քաջալերութեան բարերարացն արժան լինել, անթերի վճար պատարագի ակնածութեան ՆՄԱ, որում արձանք յիշատակացն են արժանի ընդ դարս» («Ազգասէր», 1848, № 129, էջ 35)։*

*Ուրեմն այս աշխատությունը Թաղիադյանը պատրաստել է իբրև «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության երկրորդ հատոր։ Իսկ թե ինչու՞ է հեղինակը նախապես իր «Պատմութիւն Պարսից» գրքի առաջաբանում նշել «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» գրքի բովանդակությունը, անհասկանալի է մեզ։*

1. *Հմմտ.* Մեսրոպ Թաղիադյան, *Գեղարվեստական երկեր, էջ 205, ծան. № 4։*

2. Դանվել *(Դ. Ժան Բատիստ, 1697—1782)—ֆրանսիացի աշխարհագետ, 1834 թ. հրատարակել է իր ճամփորդական նոթերի երկհատորյակը։*

3. Եղիշե, *Վարդանաց պատմություն (աշխարհաբար), Երևան, 1858, էջ 28։*

4. *Կյուրոս կրտսերը հայրական գահը եղբորից՝ Արտաքսեսից (Արտաշես) Մնեմոնից խլելու համար օգնության կանչեց հունական 13000-անոց բանակը, որի հետ էր և զորավար Քսենոփոնը։ «Անաբազիս» գրքում Քսենոփոնը նկարագրել է իր հանդիպումները և խոսակցությունները Կյուրոս կրտսերի հետ։*

5. Սեփխան Սատուրյան,*—Պարսից պետական գործիչ, վախճանվել է 1845 թ.։*

6. Ֆաթալի շահ*—իշխել է 1797—1835 թթ.։*

7. Ջոն Մալկոլմ*—անգլիացի դիվանագետ-պատմաբան։ Մինչև 1833 թ. եղել է Հնդկաստանի կառավարիչ։ Ապրել է Պարսկաստանում, ուսումնասիրել Պարսից պատմությունը, հրատարակել է «Պարսից պատմությունը» և ապա «Ճանապարհորդական նոթերը»։*

8. Արտաշես Մնեմոնը (405—359) հաղթեց Կյուրոսին։ Նրա կյանքը նկարագրել է Պլուտարքը։

9. «Այնքան լայն է վարտիքը, որ բացելու կարիք չկա»։

10. Կիրակոս—Կիրակոս Գանձակեցին է։

11. Հովհաննես վարդապետ Ջուղայեցի։

12. Մխիթար աբբա Սեբաստացի (1676—1749) Մխիթարյան միաբանության հիմնադիրը։

13. «Խաչատուր սնավաստակ», զուցե ակնարկում է Խաչատուր Էրզրումցու չափածոն։

14. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 81։

15. Անկետիլ Դյուպերոնը 1754 թ. գտավ Զենդավեստան։

16. Բահրամ Գուր—Պարսից շահ (տե՛ս նրա մասին Մ. Թաղիադյան, Պատմություն Պարսից, էջ 57—58)։

17. Արտաշիր Սասանյան՝ Պապակի որդին, առաջին թագավորը Սասանյան հարստության։

18. Խոսրով առաջին Նուշիրվան (531—579)—հայտնի է իր բարենորոգումներով։ (Մ. Թաղիադյան, Պատմություն Պարսից, էջ 59—61)։

19. Մ. Թաղիադյան, Պատմություն Պարսից, էջ 59—61։

20. Համտ. Մովսես Խորենացի, Ա, գ.։

21. Ջոն Մալկոլմի ուղեգրությունից բերված հատվածը համտ. «Պատմություն Պարսից», էջ 17—18։

22. «Ագաթանգեղեայ պատմութիւն», 1909, էջ 24։

23. Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց, 3, էջ 158։

24. Մ. Թաղիադեան, Դիցաբանութիւն, Կալկաթա, 1830, էջ 8—9։

25. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և Տօմար, Երևան, 1940, էջ 77, 162—163։

26. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 40։

27. Համտ. Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն...., հ. 3, էջ 157։

28. Մխիթար բժիշկ Սեբաստացի—Մխիթար Հերացին է։ Մ. Թաղիադյանը «Ազգասէր», 1847, № 94, էջ 172—173-ում խոսում է Մ. Հերացու «Յաղագս Ջերմանց» գրքի Վենետիկյան հրատարակության մասին (1832)։ Հաջորդ համարներում բերում է մի շարք քաղվածքներ ծաղիկների օգտագործման մասին։

29. Տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Ա, էջ 232։

30. Հավանաբար նկատի ունի Ստրաբոնի ասածը։ Այդ մասին խոսում է Հ. Գելցերը իր «Հետազոտություն հայ դիցաբանության» գրքույկում (տե՛ս հայերեն թարգմանությունը. 1897, էջ 48—49), նաև Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն..., 1835, էջ 178—179։

31. Աստղիկ դիցուհին ընդունված է նաև իբրև ջրի աստվածուհի։ (Տե՛ս Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողները իբրև Աստղիկ Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 76—78)։

32. «Ագաթանգեղեայ պատմութիւն», Թիֆլիս, 1909, էջ 421—422։

33. Համտ. նույն տեղում, էջ 401։

34. Համտ. Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, 1832, էջ 164։

35. Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 15։

36. Քրիստափոր Տիրառիճցի (539—545)։

37. Հայկազյան բառգրքի ցուցումներից դատելով՝ Վարազաթև, Վարձակերպ, վիշապաձկան բառերի հնագույն մեկնաբանությունները Թաղիադյանը պետք է հանդիպած լիներ այլ աղբյուրներում։ («Հայկազեան Բառարան», հ. 2, 1836, էջ 790)։

38. Հմմտ. «Ագաթանգեղեայ պատմութիւն». 1909, էջ 31, տե՛ս նաև Ստրաբոն (քաղեց և թարգմ. Հ. Աճառյան), 1961, էջ 33, 69։

39. Հ. Գելցերն իր «Հետազոտություն հայ դիցաբանության» մեջ հիշատակում է Պլինիուսի (Բն. պատմ. Գ, իզ) նշած երկախոսությունը Օգոստոս կայսեր և հռոմեացի զինվորի միջև։ (Հայերեն թարգմ. 1897, էջ 45—46)։

40. «Ագաթանգեղեայ պատմութիւն», էջ 409։

41. Մամուլն այստեղ ընդհատվում է։

42. Այս գլխով Թաղիադյանը սկսում է իր ուղեգրությունը Պարսկաստանում։

43. Խոսքը վերաբերում է Դավիթ—Դանիելյան կռիվներին (1801—1808)։

44. Հուլավուն 14-րդ դարում հաստատում է իր գահը Թավրիզում։ Ժամանակակից հայերը պահպանել են այդ տեղի հիշողությունը իբրև «Հուլավու թախտ»։

45. Կոմս Երմոլով—Անդրկովկասյան զորքի հրամանատար 1817—1826 թթ.։

46. Ուղեգրության պահպանված մասն այստեղ ընդհատվում է։

## ՃԱՌ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ

(էջ 265)

Նախապես տպագրվել է 1847 թ. «Ազգասէրում», հ. Դ, № 107—124, ապա նույն տարին՝ առանձին գրքույկով, Կալկաթայի Արարատյան ընկերության տպարանում, որտեղից և արտատպվում է։ Գրքույկի հրատարակության առթիվ 1847 թ. «Ազգասէրի» էջերում տպագրվում են գովասանական խոսքեր (№ 116)։ Այդ գրքույկի հետ Թաղիադյանը տպագրում է նաև «Վկայաբանութիւն սրբոյն Սանդխտեայ ի պէտս աշակերտաց», «Ս. Սանդխտեան դպրոց», «Կարգ և կանոն ս. Սանդխտեան դպրոցի» վերնագրերով պրակներ։

1. Կոռնելիան Գրակքոս եղբայրների մայրն է։

2. Աբրահամ նահապետի կինը։

3. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, 1901, Թիֆլիս, 241—242։

4. Նույն տեղում, էջ 242։

5. Հմայակ Մամիկոնյանի որդին, որը 481 թ. միավորեց Հայոց նախարարներին և ապստամբեց պարսիկների դեմ, հետո դարձավ Մարզպան։

6. Սահակադուխտը քույրն էր Ստեփաննոս Սյունեցի եպիսկոպոսի և Վահան Գողթնեցու (8-րդ դար)։ Նա ճգնում էր Գառնիի ձորակի մի այրում, միաժամանակ ուսուցանում մանուկներին երաժշտություն, հորինում մեղեդիներ։

7. Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոս կամ Իմաստասեր—8-րդ դարի առաջին կեսի եկեղեցական նշանավոր գործիչ և մատենագիր։

8. Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 139։

9. Աշոտ Բագրատունի թագավորի աղջիկը, աչքի է ընկել իր շինարարական գործունեությամբ։ (Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185—186)։

10. Գրիգոր Պահլավունի իշխան Ապուղամրենց—Շուշանիկը նրա կինն էր, մայրը Վասակ և Վահրամ իշխանների:

11. Թագավորաց, չորրորդ, Բ, 23—24, միայն թէ ոչ «արջք յանապատէ», այլ արջք յանտառէն:

12. Գևորգ Հյուրմուզյան—(աբբա) Մխիթարյան միաբանության անդամ (1797—1876): Այդ խոսակցությունը տեղի է ունեցել Պոլսում, 1838—1839 թթ.:

13. Յուդիթ, ժբ. 10:

14. Ֆրանկլին Բենյամին (1706—1790)—Ամերիկյան նշանավոր գիտնական:

15. Այդ ժամանակ Կարբիյում նման դպրոց չի եղել:

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### 1. ԱՌ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ

(էջ 295)

Տպագրվել է «Ազգասէր», 1845, Հ. Ա, 16 օգոստոսի, էջ 1—2:

### 2. <ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 297)

Տպագրվել է «Ազգասէր», 1845, Հ. Ա, 18 հոկտեմբերի, № 10, էջ 74:

Այս հատվածը հանված է «Եգիպտոս» վերնագրի տակ տրված հաղորդումներից, էջ 73—74:

### 3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

(էջ 298)

Տպագրվել է «Ազգասէր», 1845, Հ. Ա, 1 նոյեմբերի, № 12, էջ 90:

### 4. ԱՆԳՂԻԱ

(էջ 298)

Տպագրվել է «Ազգասէր», 1845, Հ. Ա, 1 նոյեմբերի, №12, էջ 92:

Հանված է «Ջանազան լրեր» բաժնից:

### 5. ԱՂԱՂԱԿ ՍՐՏԻ

(էջ 299)

Տպագրվել է «Ազգասէր», Հ. Ա. 15 նոյեմբերի, № 14, էջ 105—106:

## 6. ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒ ՋՈՒՂԱ

*(էջ 300)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1845, Հ. Ա, 13 դեկտեմբերի, № 18, էջ 137—140։*

*1. Նկատի ունի Հնդկաստանի Դաքա քաղաքի անգլիական ուսումնարանին «մեծագին ոսկյա պնակ» նվիրաբերած հայ կալվածատեր Հովակիմ Պողոսին, որի անունով կոչում էին անգլոֆիլ հայերին Հնդկաստանում։*

## 7. Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

*(էջ 303)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Բ, 24 հունվարի, № 24, էջ 32։*

## 8. ԱՐԱՐԱՏ

*(էջ 305)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Բ, 31 հունվարի, № 25, էջ 34։*

*1. Երևանի գավառական երկդասյա դպրոցը հիմնադրվեց այն ժամանակ, երբ Թաղիադյանը գտնվում էր Երևանում։ Այն տեղավորված էր քաղաքի բերդի խցերից մեկում։ Մի քանի տարի անց դպրոցը փոխադրվեց նրան հատկացված նոր շենքը։*

## 9. ՈԳԻ ՏՊԱՐԱՆԻ

*(էջ 305)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Բ, 11 ապրիլի, № 35, 36, 38, 39։ Արտատպում ենք կրճատումներով։*

## 10. «ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

*(էջ 309)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Բ, 16 մայիսի, № 40, էջ 153—154։*

## 11. ՄԻԱԲԱՆԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԱՄԵՐԻԿԱՅ

*(էջ 310)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Գ, 19 սեպտեմբերի, № 58, էջ 44։*

## 12. ԱՆԱՀԻՏ

*(էջ 310)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1846, Հ. Գ. № 70, էջ 145։*

*1. «Ազանթագեղեայ պատմութիւն Հայոց», Տփխիս, 1909, էջ 31։*

*2. «Ստրաբոն», քաղեց, թարգմանեց Հ. Աճառյան (Երևան, 1940, էջ 67)։*

*3. «Ազանթագեղեայ պատմութիւն Հայոց», էջ 409։*

4. Մ. Խորենացի, *Պատմություն Հայոց, Երևան, 1968, Բ, կե։*

## 13. <ՀԻՄՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՑ>

*(էջ 313)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 2 հունվարի, № 73, էջ 1—2։*

*1. Այունյաց ընկերության մասին Թաղիադյանը խոսում է «Ազգասէր», 1847, Հ. Դ, № 8, էջ 69—70-ում, մեծ նշանակություն տալով նրա ծավալած կուլտուրական գործունեությանը։*

*2. «Հայաստան» լրագիրը լույս է տեսել Պոլսում, 1846 թ. Հովհաննես Զամուռճյանի խմբագրությամբ։ 1849 թվականից խմբագիր է դառնում Մկրտիչ Աղաթոնը։ Հասկապես ընդգծվում է Թաղիադյանի դրական վերաբերմունքը նոր խմբագրի քաղաքական գծի հանդեպ։*

## 14. ԱՅԼԵՒԱՅԼՔ

*(էջ 316)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 13 փետրվարի, № 79, էջ 54—55։*

## 15. <«ԿՈՎԿԱՍ» ԼՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ>

*(էջ 316)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 24 ապրիլի, № 89, էջ 130—131։*

*1. 1847 թ. «Ազգասէրի» 1847 թ. № 86-ում Թաղիադյանը համառոտ տեղեկություններ է տալիս 1846 թ. հրատարակվող «Կովկասի» մասին։*

*2.* Հակոբ և Դավիթ Արզանյանները *1830—40-ական թթ. Թիֆլիսի հայանի գործիչներից էին։*

## 16. ՀԱՅԱՍՏԱՆ

*(էջ 318)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 24 ապրիլի, № 89, էջ 134—135։*

*1. Մ. Սարաճյանի բառարանը չի հրապարակվել։*

## 17. <ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ>

*(էջ 319)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 15 մայիսի, № 92, էջ 153—154։ Արտատպվում է մի հատվածը «Քաղաքականք (Կայկաթա)» հոդվածից։*

## <ԱՌ Ի ԳԻՏ ՆՈՐՈՑ ԻՆՁ Ի ՀՆՈՒԹԵԱՆՑ>

*(էջ 320)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Դ, 14 օգոստոսի, № 105, էջ 261—262։*

*1. Էնֆիաճյան եղբայրների գրատանը եղած ձեռագրերի ցուցակը Թաղիադյանը տպագրում է «Ազգասէրի» 1847 թ. № 122-ում (396—399)։ Վերոհիշյալ ցուցակի № 37-ի տակ նշված է. «Արհեստ գրչութեան Դէորգայ և Արիստակէսի*

վարդապետաց, յորում պարունակին ա. Նշանագիրք իբրև 300» և այլն։ Այդ ձեռագիրը ներկայումս պահվում է Մատենադարանում (№ 8563), բայց մեզ հետաքրքրող նյութը այդտեղ չկա։

2. Ավելի վաղ («Ազգասէր», № 101, էջ 228—229) Թաղիադյանը տպագրում է Էնֆիաճյան եղբայրների հետևյալ նամակը, գրված 1846 թ. նոյեմբերի 30-ին. «Լուեալ զբարեհամբաւ անուն ձերդ յարգի Ընկերութեան ի վաղուց հետէ փափագ ունէաք ի ծանօթութիւն տալ զմեզ Ազգասիրացդ, այլ այսի՞ խիք յաջողելոց էր մեզ, բայց եթէ ըստ կարի մերում գործակից լինելով յազգօգուտ գործս ձեր։ Այնու զի մեք աստանօր ի բազում հետէ տուեալ զանձինս ի գրավաճառութեան քաջ գիտացուք զյարգ և զհարկաւորութիւն Ձեռագրաց առաւել ի մերումս ժամանակի երբ ամենայն ուրեք ի խնդիր լինին խուզարկու աչօք ուսումնականք ազգիս ի գիւտ նորանոր հնարից ի ծաղկեցուցանել զգրականութիւն Հայկական լեզուի։ Վասնորոյ և մեք զմեծ մասն ժամանակի մերոյ ծախեցաք ի գիւտ այնոցիկ առ ի շահել զօգուտ գրականութեան ազգիս և զբարեկամութիւն մերազնեայ ուսումնականաց որով և ահա ցայս վայր ժողովեցաք զձեռագիրս իբրև հարիւր։ Եւ յօրէ անտի ձեռնարկելոյ մեր յայս գործ՝ սպասէաք անցուցանել զայնս ի ձեռս այսպիսեաց, որք կարասցեն պահել զկատարեալս հեղինակաց այնոցիկ տպագրելով զայնս և կամ յայլ հարկաւոր պէտս ի վար արկանելով։

Եւ յաւուր միոջ քանիցս անգամ ընթերցաք զհառաւածս ինչ ի ձերդ բազմարդիւն Օրագրի սակս ձեռագրաց, յորս իբրև հայելւոյ երևիւր իղձ ձեր ժողովել զայնս առ ի ծաղկեցուցանել զգրականութիւն մերոյ լեզուի յայլը։ Որոյ աղագաւ փութացաք այսու նամակաւ ծանուցանել Ձերդ Յարգութեան զձեռագրաց առ այժմ գտելոց առ մեզ առաքելով առ ձեզ զցուցակ այնոցիկ ընդ որում և յայտնել, զի առաւելագոյն սէր մեր է ձեզ վաճառել զայնս չափաւոր գնով, քան այլոց՝ մեծագնոյ, քաջ գիտելով թէ կէտ և նպատակ վաստակոց և ջանից ձերոց ոչ այլ ինչ է, բայց միայն լուսաւորութիւն ազգային։ Ուրեմն՝ ազգային բարերարք եթէ բարեհաճեսջիք գնել զայսոսիկ արժանացուսջիք զմեզ նամակի ձերում, տեղեկացուցանելով մեզ թե զի՞րդ և որո՞վ ճանապարհաւ կարեմք հասուցանել զայնս առ Ձեր Յարգութեանն։ Էնֆիաճյան եղբայրները ձեռագրերի ցուցակը ուղարկում են նաև «Հայաստան» թերթին, ուր և տպագրվում է 1847 թ. օգոստոսի 7-ի № 7—8-ում։

## 19. ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆ

(էջ 322)

Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Գ, սեպտեմբերի 11. № 109, էջ 291—292։

## 20. <ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 323)

Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, Հ. Գ, 2 հոկտեմբերի, № 112, էջ 316—319։

1. Հոդվածի վերջին մասում Թաղիադյանը պատասխանում է անանուն հոդվածագրին։ (Տե՛ս սույն ժողով., էջ 303, «Ի վերայ բանաստեղծութեան» հոդվածը)։

## 21. ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

(էջ 326)

Տպագրվել է՝ «Ազգասէր», 1848, Հ. Ե, 29 հունվարի, № 129, էջ 40։

1. «Ազգասէրի» նույն թվականի № 133-ում Խաչկյան քահանան հայտնում է

*իր ուրախությունը Թաղիադյանի «Քերականության» գրքույկի տպագրությունը սկսելու առթիվ։ Թաղիադյանի ձեռնարկը, գրում է նա, «միշտ և ամփոփ կանոնք մեծապես կօգնեն հայ մանուկների ուսուցմանը»։ Սակայն նույն տարվա № 141-ում ամսագրի ընդհատվելու առթիվ Թաղիադյանը տալիս է հետևյալ հայտարարությունը. «Բ հատոր ճանապարհորդութեան Մ. Դ. Թ. ցհինգերորդ ամսութեան հասեալ խափանի, մինչև այց արասցէ բարերարն Աստուած յաջողել վերստին ըդտպագրութեան նորա»։ Ավելացնում է նաև, որ կիսատ մնաց «նոյնպէս Համառօտ քերականութիւն Հայկազեան լեզուի» (էջ 130—131)։*

## 22. <ԱՓՍՈՍ ՔՈ ԽԵՂՃ ԱԶԳԱՍԷՐ>

*(էջ 327)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1848 հ. Ե. 28 մայիսի, № 139, էջ 113—115։*

*1. «Ազգասէրը» ընդհատվում է 1848 թ. հունիսի 1-ին (№ 141)։ Ամսագիրը վերսկսվում է 1848 թ. սեպտեմբերի 16-ից «Ազգասէր Արարատեան» անունով։*

*2. Նկատի ունի «Արշալույս Արարատյանի» դրական վերաբերմունքը։*

## 23. ԽԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ

*(էջ 329)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1848, հ. Ա, 25 նոյեմբերի, № 8—9, էջ 57—59 և 65—66։*

## 24. ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՇՈՒՇԵՑԻ

*(էջ 335)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1848, № 17, էջ 134—135։*

1. Տէր Բաղդասար Գասպարյան Շուշեցի—*հայ քահանա, շրջել է Հնդկաստանում և թողել է իր տպավորությունները բանաստեղծությունների փոքրիկ տետրակի ձևով։ Այդ ձեռագրերը ժամանակին անցել են Թաղիադյանի ձեռքը. ում է պատկանելիս եղել՝ հայտնի չէ։ Տեր Բաղդասարի ուղեգրության մեքենագիր վերծանված բնագիրը համառոտ ծանոթագրություններով Մաշտոցյան Մատենադարանին է ուղարկել ամերիկահայ բանասեր Հ. Քյուրտյանը, որը և տպագրվել է պատմական գիտությունների դոկտոր Հ. Փափազյանի առաջաբանով։ (Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 283—345)։*

*2. Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, Թաղիադյանի ձեռքի տակ է եղել սույն ձեռագիրը։ (Համմտ. քաղագրությունները նույն տեղում)։*

*3. Տե՛ս Թաղիադյանի «Պատմութիւն Հնդկաց» գրքի առաջաբանը։*

*4. Սույն տաղը Թաղիադյանը հանել է Տէր Բաղդասար Շուշեցու «Տաղարան» տետրակից, տպագրել իր հոդվածի վերջում (էջ 135)։*

## 25. <ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԻ ՄԱՐԴԿԱՆ...>

*(էջ 336)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1848, հ. Ա, 15 հուլիսի, № 27, էջ 215։*

*1. Ուշագրավ է, որ երկու տասնամյակ անց Մ. Նալբանդյանն իր «Երկրա-*

գործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքույկում նույն արտահայտություններով քննադատում է անգլիական գաղութային քաղաքականությունն Հնդկաստանում։

## 26. <ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՄԱՍԻՆ>

(էջ 336)

Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1849, Հ. Ա, 5 օգոստոսի, № 29, էջ 226։

1. Պետք է ենթադրել, որ «Թղթակից ամեն»-ը ինքը Թաղիադյանն է։ Այդ ձևով նա ցանկացել է արտահայտել իր բացասական կարծիքը Հայոց Հայրապետի մասին, որի հետ նա և մյուս լուսավորիչները մեծ հույսեր էին կապել։

2. Ակնարկում է «Ազգասէր Արարատեանի» նախորդ համարում (էջ 223—224) «Արշալույս Արարատյանից» արտատպված հաղորդումը՝ նվիրված 1848 թ. սեպտեմբերի 2-ին Ներսիսյան դպրոցի վերաբացման հանդեսի նկարագրությանը (թվագրված 1848, նոյեմբերի 16)։ Այս հանդեսում Կարապետ վարդապետ Շահնազարյանը ընթերցել է կաթողիկոսի կոնդակը դպրոցի սաների ուսուցման կանոնների և նրանց թոշակով ապահովելու որոշման մասին։

3. «Ազգասէր Արարատեանի» 1851 թ. հունվարի 30, № 65, էջ 520-ում քննադատելով Ներսեսի դիվանագիտական գործունեությունը, գրում է. «Բացաբարբառ աղաղակեմք թէ, Հայք ի Հնդկաստան անտես եղեն ի շնորհաց Հայրապետին և միշտ նոյն կան և մնան առանց գոնե օրհնութեան կոնդակին ի նմանէ։ Պարտ և արժան էր չթողուլ նորա զհասարակութիւն մեր իբրև զնաւ անղեկ և անկառավար ի ծովս փորձանաց և հերձուածոց ժամանակիս»։

## 27. <ԵՐԲ ԱԿԱՆՋՔ ԼՍԵԼՈՑ ԶԻՑԵՆ, ԹՈՂ ԱՉՔ ԻՑԵՆ ՏԵՍԱՆԵԼՈՑ>

(էջ 339)

Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1849, Հ. Ա, 25 օգոստոսի, № 31, էջ 241—242։

1. Նյութական միջոցների պակասի պատճառով Թաղիադյանը նորից ընդհատում է ամսագրի տպագրությունը։ Ինչպես «Արշալույս Արարատյան» թերթի, այնպես էլ այլ բարեգործների օժանդակությամբ «Ազգասէր Արարատեանը» նույն տարվա սեպտեմբերի 15-ից նորից կյանք է առնում։

## 28. ԱՄ ՏԵԱՌՆ 1850

(էջ 341)

Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1850, Հ. Բ, 15 հունվարի, № 40, էջ 313—315։

1. Նկատի ունի 1848 թ. Եվրոպայում տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժումները։

## 29. ՀԱՅԱՍՏԱՆ, ԿՈՎԿԱՍ ԵՎ ԱՐԱՐԱՏ

(էջ 345)

Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1850, Հ. Գ, 30 նոյեմբերի, № 61, էջ 481—486։

1. «Ճեմարանի» մասնանշված համարը մեր գրադարաններում չի պահպանվել, հետևաբար մանրամասնությունների մեջ չենք մտնում։

2. 1848 թ. գերմանացի գիտնական ճանապարհորդ Մորից Վագները հրատարակում է «Ճանապարհորդություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ» ուղեգրությունը։ Թաղիադյանը իրավացի քննադատում է հեղինակի ծայրահեղ կարծիքները։ (Տե՛ս թարգմանությունը, որոշ կրճատումներով՝ Վիեննա, 1851, թարգմանիչ՝ հայր Փիլիպպոս Ճամճյան)։

## 30. <ՊԱՏԻԺ ՄԻՂԱՑ ՀԱՍԵԱԼ Է>

(էջ 356)

Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1852, Հ. Դ. 31 մարտի, № 80, էջ 638—639։

1. Կոշուտ—հունգարացի հեղափոխական, ազգային-ազատագրական շարժման ղեկավար. 1848 թ. Հունգարական հեղափոխական կառավարության ղեկավարը։

## 31. <ՌԵՋԻՆԱԼԴ ՀԵԲԵՐԻ «ՊԱՂԵՍՏԻՆ» ՊՈԵՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ> ԱՌԱՋԱԲԱՆԻՑ>

(էջ 357)

Տպագրվել է 1830 թ. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական տպարանում.

1. Խոսքը էջմիածնի և Երուսաղեմի նվիրակներ Պողոս եպիսկոպոսի և Աբրահամ վարդապետի մասին է։

2. Ընդհանուր փաստական, որի կտակը նրա մահից հետո ժառանգները [illegible] վերցրին կեցծ և հրաժարվեցին էջմիածնին կտակված գումարը հանձնելուց։

3. 1825 թ. Թաղիադյանը ընդունվում է Կալկաթայի մարդասիրական ճեմարանը՝ կրտսեր ուսուցչի պաշտոնով։

4. Տե՛ս Հովհ. Մկրյան. Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 71—72։

5. 1826 թ. փետրվարի 12-ին Թաղիադյանն ընդունվում է Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանը։ «Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի» (1832, Վենետիկ) գրքույկի հեղինակը (Պողոս Պետրոս Լազարովիչ Կոստանդնուպոլսեցին) գրում է, որ 1829 թ., երբ այցելել է անգլիական եպիսկոպոսական ճեմարանը, այնտեղ հանդիպել է երեք հայ ուսանողների։ Նրանցից երկուսը պոլսեցիներ՝ Բարսղամ և Ստեփաննոս անուններով, երրորդը «վարժապետ Հայկազեան բարբառոյ էր Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց Երևանեայ Կարբի գեղջէ, որ էր փերակացու տպարանին հայոց և ավելի ինչ ինչ, ըստ հանոյից իւրոյ» (էջ 8)։

## 32. ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐ ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ, ՍԱՐԿԱՒԱԳ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

### <Առաջաբան>

(էջ 358)

Տպագրվել է 1830 թ. Կալկաթայի եպիսկոպոսական ճեմարանի տպարանում։

## 33. ՄԽՍՐՈՎԲԵԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԱՌ Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

### <Առաջաբան>

*(էջ 359)*

*Տպագրվել է 1840 թ. Կալկաթայի եպիսկոպոսական ճեմարանի տպարանում։*

## 34. ՄԽՍՐՈՎԲԵԱՆ ՇԱՐԱԴՐԻՉ ՀԱՅ ԵՒ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԱՑ ԱՌ Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

### <Առաջաբան>

*(էջ 360)*

*Տպագրվել է 1840 թ. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում։*

1. Ջոն Լոկ—*(1632—1704) անգլիացի մատերիալիստ փիլիսոփա։*

## 35. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ՅԱՆՅԻՇԱՏԱԿ ԴԱՐՈՒՑ ԱՆՏԻ ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑ ԸՍՏ ԱՒԱՆԴԵԼՈՑ ՄԱՏԵՆԱԳՐԱՑՆ ԵՒ ԱՅԼ ԱԶԳԱՑ

### <Առաջաբան>

*(էջ 362)*

*Տպագրվել է 1841 թ. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում։ Այդ գրքի հանրային գրադարանի օրինակներից մեկի վրա հայտնի արևելագետ Մեսրոպ Սեթը արել է հետևյալ մակագրությունը. «Թաղիադեան կամեցաւ ազգին ծանօթացուցանել զպատմութեանն Հնդկաց, իսկ ես կամեցայ օտարաց ծանօթացուցանել զքաջագործութիւն հոյակապ հնդկահայոց, որոց շնորհիւ և աջակցութեամբ իսկ, Ալբիոնի զօրաց որդիք եկեալ տիրեցին զայս երկիր բազմազանձ և մոռացան զերախտիս հայոց, յորժամ միահեծան տէր եղեն երկրին» (Տե՛ս Հայկ Դավթյան. Հայ գիրքը 1801—1850 թթ., Երևան, 1967, էջ 273)։*

1. *Տե՛ս Մ. Թաղիադեան. Պատմութիւն Պարսից, էջ 33—34։*
2. *Խոսքը «Համառոտ պատմութիւն Հնդկաց» գրքի մասին է։*
3. *Տե՛ս նույն ժողովածուի 548 էջի 134 ծանոթագրությունը։*

## 36. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ, ՅՕՐԱԳՐԷ ՄԽՍՐՈՎԲԱՅ Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆ

### <Ընծայական>

*(էջ 365)*

*Տպագրվել է 1846 թ. Կալկաթայի Արարատյան ընկերության տպարանում։*

## 37. ՄԽՍՐՈՎԲԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ

### <Առաջաբան>

*(էջ 366)*

*Տպագրվել է 1847 թ. Կալկաթայի Արարատյան ընկերության տպարանում։*

1. *Նկատի ունի 1829 թ. Պոլսում հրատարակված Դր. Փեշտմալճյանի «Կրթու-*

*թյուն քաղաքավարութեան» և Մ. Աղաթոնյանի «Քաղաքավարութեան համառոտ», 1846, Վենետիկ, գրքերը:*

2. *Բժշկյան Մինաս. Վարժություն մանկանց, Վենետիկ, 1818:*

3. *Նկատի ունի իր «Հեգարանը»՝ 1841, և «Ճարագրիչը»՝ 1847:*

## 38. «ԹՈՎՄԱՍԱՅ ԽՕՋԱՄԱԼԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՑ, ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ. ՄԱՍՆԱՒՈՐ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՋԱՆԻՒՔ Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԷ Մ. Գ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Վ. Ա: Ի ՏՊԱՐԱՆԻ Ի ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ, Ի ԿԱԼԿԱԹԱ, 1849»

### Առաջաբան տպագրին

*(էջ 367)*

1. *Խոսքը հնդկահայ հայտնի վաճառական և նավապետ Թովմաս Խոջամալյանի մասին է (1720—1770): Նա սկզբնական կրթությունը ստացել է Նոր Ջուղայում, հետո արտասահմանում, տիրապետում էր անգլերենին, պարսկերենին, բենգալերենին: Խոջամալյանը գրել է Հնդկաստանի պատմությունը՝ բաղկացած երկու մասից: Մ. Թաղիադյանը հրատարակել է այդ ձեռագրի երկրորդ մասը:*

2. Աղա Պետրոս Հարությունյան*—հայտնի վաճառական, անգլիացիները հալածել են նրան հնդիկների դատը պաշտպանելու համար:*

3. Գրիգոր Հարությունյան *(Գորգին խան)—Պետրոս Հարությունյանի կրտսեր եղբայրը, սկզբում զբաղվում էր առևտրով, հետո դարձավ զինվորական:*

4. *Մարտիրոս Մկրտչյանը «Ճեմարանի» էջերում հրատարակել է համառոտ տեղեկություններ Խոջամալյանի մասին և մի հատված՝ նրա գրած Ակբար թագավորի որդեգիր Հակոբի (Ջուլ-Կարնայնի) մասին: (Մկրտչյանի մասին տե՛ս* Ա. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 228—255):*

5. *Ըստ պատմաբան Ռ. Աբրահամյանի վկայության, Թ. Խոջամալյանի աշխատության այն օրինակը, որը եղել է Թաղիադյանի ձեռքին (1821 թվագրությամբ) այժմ գտնվում է Հնդկաստանում:*

6. *Բենգալիայի կառավարիչ, որի իշխանության օրով և նրա հրամանով Գորգին խանը 1864—1868 թթ. ազատագրական պատերազմ սկսեց անգլիացիների դեմ:*

## ՆԱՄԱԿՆԵՐ, ՃԱՌԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ

### 1. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*18 հունիս, 1826, Կալկաթա*

*(էջ 377)*

*Բնագիրը պահվում է Մատ., Կաթող. դիվան, թ. 53, վ. 137: Տպագրվել է* Ա. Սեդրակյան. *Հովհաննես Շահխաթունյանցի կենսագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 232—236:*

1. *Համմ. Ավետարան ըստ Յովհաննու, ԺԱ. 43—44:*

2. Ռիջինալդ Հեբր*—Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական թեմի առաջնորդ: Երուսաղեմի նվիրակ Աբրահամ Բյուրականցու միջնորդությամբ Մ. Թաղիադյանը 1826 թ. փետրվարին ընդունվում է Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանը: Ռիջինալդ Հեբրը իր վրա է վերցնում Թաղիադյանի ուսման և ապրուստի ծախսը:*

*3. Նամակի հետ ուղարկած «Մանոթութիւն պիտանի անցից պատմութեան Ռիչինալդ Հեբրի Եպիսկոպոսի անգլիացւոյ» վերնագրով կենսագրական ակնարկը գրված է Թաղիադյանի ձեռքով։ Այդ հատվածը Թաղիադյանը կրճատումներով տպագրել է Ռիչինալդ Հեբրի «Պաղեստին» պոեմի իր թարգմանության առաջաբանում։ Սևագիրը պահվում է Մատենադարանում, Աշ. Հովհաննիսյանի դիվանում։ (Տե՛ս նաև «Գործ», 1917, № 9—10, էջ 97)։*

*4. Ավետարան ըստ Ղուկասու, ժԵ, 24 (այս իմ որդին մեռած էր, և կենդանացավ)։*

*5. «Ճանապարհորդութիւն ի Հայս» էջ 209—210-ում Թաղիադյանը գրի է առել 1822 թ. Թիֆլիսում Անտոն Մուղնեցու հետ Ներսես Աշտարակեցու այդ խոսակցությունը։*

*6. «Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 24, հիշատակում է Շուշում տեղի ունեցած նման մի խոսակցություն։*

*7. Պիտի լինի Ջեյրա (Գուլիստան)։*

*8. Մեզ հայտնի չէ Ներսես Աշտարակեցու այդ օրերի վերաբերմունքը Հովհաննես Բագրևանդացու հանդեպ։*

*9. Պողոս Ղարադաղցին այդ ժամանակ թողել էր Ներսիսյան դպրոցը և գնացել հայրենիք։ Դպրոցը թողնելու պատճառները մեզ հայտնի չեն։*

*10. Զաքարիա Գուլասպյանն այդ ժամանակ գտնվում էր Սևանի մենաստանում։*

*11. Նկատի ունի նամակի հետ ներդրած գրությունը։*

*12. Աբրահամ Բյուրականցու այդ նամակը մեզ չի հասել։*

## 2. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*5 դեկտեմբերի, 1826, Կալկաթա*

*(էջ 380)*

*Ինքնագիրը պահվում է Մատ., Կյուրեղ Սրապյանի դիվան, թ. 81 ա, վ. 15։*

*Տպագրվել է՝* Ա. Սեդրակյան, *Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 236—238։*

1. Հնդկաստանի նվիրակը: *(Տե՛ս նրա մասին «Պաղեստին» պոեմի Մ. Թաղիադյանի թարգմանության առաջաբանը)։*

*2. Հայտնի է, որ 1822 թ. Հայաստանում լուսավորական հաստատություններ հիմնելու նպատակով Թիֆլիս է գալիս անգլիական կառավարության ներկայացուցիչ Վոլֆը, Ներսես Աշտարակեցու հետ բանակցելու համար։ Վերջինս մերժում է նրան, լինելով Ռուսաստանի և Անգլիայի վատ հարաբերություններից։*

## 3. <ՃԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՌԹԻՎ>

*7 փետրվարի, 1828, Կալկաթա*

*(էջ 383)*

*Ինքնագիրը չի պահպանվել։ Տպագրվել է՝ «Ցուցակ վասն յամի Տեառն 1829», Կալկաթա, էջ 76—85։*

*1828 թ. փետրվարի 7-ին Կալկաթայում Պողոս Հորդանյանի տանը տեղի ունեցած հայ հասարակության ժողովում ընթերցվում է Ներսես Աշտարակեցու ողջույնի նամակը Հայաստանի ազատագրության առթիվ։ (Տե՛ս Ցուցակ..., էջ 42—51)։ Ապա Թաղիադյանն արտասանում է այս ճառը, որից հետո Հ. Ավդալյանը ընթերցում է պատասխան նամակը՝ Ներսեսին։*

1. Հմմտ. «Գիրք Դատաւորաց», Բ. 11—18։

2. Նկատի ունի վերջին Արշակունիների շրջանի նախարարներին։

3. «Շարակնոց», Վաղարշապատ, 1888, էջ 433։

4. Հմմտ. «Գիրք Յոբայ», Գ—Զ։

5. Հմմտ. «Մարգարէութիւն Եսայեայ», Զ—Ը։

6. Նկատի ունի Արտաշեսյան, Արշակունյան, Բագրատունիների, Կիլիկյան հարստությունները։

7. «Գիրք Սաղմոսաց Դաւթի», ՃԻԶ, 3։ Ուր այսպես է. «Մեծ արար Տէր առնել ընդ նոսա. Մեծ արար Տէր զյառնել իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալք»։

8. Նկատի ունի Ի. Ֆ. Պասկևիչին, որի գնդերը գրավում են Թավրիզը։

9. Սահակ Պարթևի տեսիլքը. Հմմտ. Սոփերք, Բ, Վենետիկ, 1853, էջ 61։

10. Տե՛ս Երեմիայ, ԾԱ. 50, ուր այսպես է. «Ելէք, ապրեալք յերկրէ, մի կայք. յիշեցէք զՏէր, հեռաւորքդ, և Երուսաղէմ անկցի ի սիրտ մեր»։

## 4. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*8 հոկտեմբերի, 1828, Կալկաթա*

*(էջ 390)*

*Ինքնագիրը պահվում է Մատ., Աշոտ Հովհաննիսյանի դիվան, թ. 243, վ. 5։ Տպագրվում է առաջին անգամ։ Նամակի վրա Թաղիադյանը մակագրել է. «Առաջին դպրոցական գիտելիք»։*

1. Մատենադարանի Աշ. Հովհաննիսյանի դիվանում պահպանվել են Մ. Թաղիադյանի 4 նամակաձև գրությունները, որոնք նվիրված են Հայաստանում ազգային լուսավորական գործունեության կազմակերպման հարցերին։ Հոկտեմբերի 8-ի թվագրությամբ այս և հաջորդ նամակը վերնագրված է «Առաջին դպրոցական գիտելիք»։

2. Նկատի ունի Սահակ Պարթևի տեսիլքը։

3. Հմմտ. Ծննդոց, ԺԱ. 7—9։

4. Հնդկահայ հայրենասիրական շարժման եռանդուն մասնակիցներից։

5. Ներսեսն այդ ժամանակ արդեն հանվել է իր պաշտոնից և ուղարկվել Քիշնև։ Ուստի և Թաղիադյանի ծրագրերը մնում են անիրագործելի։

6. Աւետարան ըստ Ղուկասու, ԺԲ. 34, 35։

7. Մատենադարանում (Կ. Դ., թ. 58, վ. 305) պահվում է Պողոս Հորդանանյանի 1828 թ. նոյեմբերի 30-ի Ներսեսին ուղղված նամակը, որով հայտնում է, որ ցանկանում է որդուն ուղարկել Ներսիսյան դպրոցում ուսանելու։ Հայտնում է նաև, որ հանգուցյալ Մասուր Աղավելյանը Գրիգորիոպոլի և Աղուլի հայերին կտակել է 25000 ռուբլի։

8. Որովհետև այս «գիտելիքն» էլ օրգանապես կապված է նախորդի հետ և գրված է միևնույն օրը, հետևապես միացնում ենք նախորդին։ (Ինքնագիրը պահվում է Մատ., Աշ. Հովհաննիսյանի դիվան, թ. 243, վ. 6, տպագրվում է առաջին անգամ)։

9. Մեսրոպ Դավթի Թաղիադյան։

10. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի վերատեսուչը։

11. Թաղիադյանի նամակի այս հատվածը ևս, «Առաջին դպրոցական գիտելիք» վերնագրով, օրգանապես մասն է կազմում հոկտեմբերի 8-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակի։ Այդ նկատառումով էլ միացնում ենք հոկտեմբերի

Տ-ին գրած նամակին։ Հոդվածը թվագրված չէ, սակայն գրված պիտի լինի նույն ժամանակամիջոցում։ (Ինքնագիրը պահվում է Մատ., Աշ. Հովհաննիսյանի դիվան, թ. 243, վ. 3, տպագրվում է առաջին անգամ)։

12. Հունական առասպելներից։

13. Թաղիադյանի այս հղումը նույնպես հաստատում է, որ այս հատվածը շարունակությունն է նախորդ նամակի։

14. Այս նամակը նույնպես նախորդի շարունակությունն է։

15. Տողերը քաղված են Մովսես Խորենացու նշանավոր ողբից (Գ. կը)։

16. Թաղիադյանը Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանն է ընդունվել 1826 թ. փետրվարի 2-ին։ Եթե ավելացնենք 2 տարի 10 ամիս, ինչպես նշված է Թաղիադյանի այս հատվածում, պետք է գրված լինի 1828 թ. նոյեմբերին։

17. Հուգո Գրոցիուս— 16-րդ դարի հոլանդացի նշանավոր պատմաբան-բանասեր։ Թաղիադյանը լատիներենից թարգմանել և 1829 թ. տպագրել է այդ հեղինակի «Ճշմարտութիւն քրիստոնեական հաւատոյ» գիրքը։

18. Լակտանտիոս Ցեցիլիոս Ֆիրմիանոս—եպիսկոպոս, վախճանվել է 260 թ.։

19. Կոռնելիոս Նեպոսացի (Նեպոս)—լատին գրող, պատմաբան։ Ապրել է I դարում (մ. թ.), Օգոստոս կայսեր ապրած տարիներին։ Գրել է նշանավոր մարդկանց կենսագրություններ, մի մասը կորած է։

20. Ռեջինալդ Հեբերի «Պաղեստին» պոեմը Թաղիադյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Կալկաթայում, 1830 թ.։

21. Թաղիադյանի «Գոլստանի» ձեռագիրը մեզ անհայտ է։

22. Համա. Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի, Երևան, 1957, էջ 72։

23. «Թուղթ սիրո և միաբանության» վերնագիրը կրող այդ դաշինքը իբրև թե կնքվել է Կոստանդիանոս կայսեր, Սեղբեստրոս պապի, Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի միջև՝ 316 թ.։ Այստեղ մենք գործ ունենք մի կեղծիքի հետ, որը Հայաստանում պաշտոնապես տարածվել է 1690 թ. հետո, երբ նորից առաջ է քաշվել հայ և հռոմեական եկեղեցիների միացման հարցը։

24. Եղիշեի «Պատմութիւն սրբոց Վարդանայ» գիրքը Մոսկվայում տպագրվել է Թաղիադյանի մահից հետո՝ 1861 թ.։ Հավանաբար նա նկատի ունի 1787 թ. Պետերբուրգի հրատարակությունը։

25. Խոսքը վերաբերում է Աբրահամ Ա. Ջուղայեցի կաթողիկոսի հրամանով Պոլսում 1709 թ. «Ագաթանգեղեայ պատմութեան» առաջին գրքի տպագրության վերջում տեղադրված Դաշանց թղթին։

26. Թաղիադյանի «Պատմութիւն հին Հնդկաստանի» գրքի առաջին մասը հրատարակվել է Կալկաթայում 1841 թ.։ Մյուս երկու մասի ձեռագրերը հայտնաբերված չեն։

27. Նամակում 2, 3, 4, 5 համարների տակ նշված գործերից և ոչ մեկը չեն տպագրվել։ Նրանց հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

28. 1822 թ. հուլիս-օգոստոսին։

29. Նամակի լուսանցքներում Թաղիադյանը գրի է առել 1825 թ. օրագրից նույն բանաստեղծությունը։ Մեզ հայտնի չէ նամակի մակագրին կցել է՞ այս բանաստեղծությունը թե ոչ։ Բերում ենք բանաստեղծությունն ամբողջությամբ։

## ԱՆՑՔ

### Մեսրովբ

*Մինչ իմ խաղ մանկութիւնն յինէն անց*
*Ընձուղեաց յիս մտաց նախախայծ,*
*Ուր սիրտ իմ զարթուցեալ՝ զմտաւ ած*
*Գտանել իւր անուն բարութեանց։*

*Եւ ի դաշտ առապար՝ խիստ վայրաց*
*Զրաջան՝ հնարել զելս իրաց,*
*Ուր գազանք և վիշապք գիշախանց*
*Ի վերայ դիմէին խուռընթաց։*

*Սակաւ մի մտասոյզ անդ եկաց,*
*Սարսափմամբ արհաւրաց սօսափեաց.*
*Զի գիշերք մթնագին զբազմանց,*
*Պատեցին զնովաւ կանխահաս։*

*Բայց յուսահատ կորստեան,*
*Լինէր իւր չարաբաստ Հնդստան.*
*Եթէ ոչ՝ թաթն անեղ խնկութեան,*
*Տայր նմա զհնարս փրկութեան։*

### Սիրտն

*Ո՞ւր իցեմ, ո՞ւր խնդրեմ, ընդունայն,*
*Զլաւ անուն ի հովտիս արտմութեան։*
*Ուր անփորձ կորութեանս իմ նշան,*
*Փորձ զնէ իմ անփորձ կորստեան։*

*Վա՜հ աւա՜ղ, արդ վարան՝ ընդ վարան,*
*Բազմածուփ ծփանաց յիս հարան.*
*Ի խնդրել զիմ անուն բարութեան,*
*Անանուն՝ կորնչիմս յաւիտեան։*

*Բնութիւն ոչ ետ ինձ ասել շա՜տ,*
*Բայց և բաղտ զլացաւ զիւր նպաստ.*
*Ոյց ընդդէմ և ես սիրտ՝ ծով անհատ,*
*Ո՜չ լցայ ի գետոց՝ յորդառատ։*

*Աւ որ իսկ՝ ի ծնողաց տարանջատ,*
*Վարեցայ յայս օտար մահու բանտ,*
*Ուր հողմունք փորձանացն ալէսաստ*
*Զիմ յարշամ սուզեցին յուսոյն լաստ։*

## Մեսրովբ

Յի՛ս սիրտ իմ, հի՞մ մնացուք տարապարտ,
Մեք մեզէն մեր անձին մահապարտ.
Ազատիլ միթէ՞ չիցէ մարթ,
Է՞ ունայն՝ ընդունայն կորցուք արդ։

## Սիրտ վհատեալ

Դառն է մահ, զի կենաց է մանգաղ,
Դառնագոյն քան զնա՝ կեանք իմ, ա՜խ,
Թախծելոյս՝ սաստ ազով ողեծախ,
Զի՞նչ օգուտ՝ նորանոր ելից խաղ։

Աւասիկ դժոխոց անել աղխ
Ա՛րկ զինև անհնարին մահու վախ,
Ուր տանջանք՝ չարչարանք և ջախջախ,
Անողորմ հաշեցին զիմ կմախ։

## Մեսրովբ

'Ի խեծելոյս հրաւէր բազմուրախ,
Ետ անցորդ՝ Արութին անխարդախ,
«Եկ, ասէ, պատանիդ սրտակախ,
Վեր ձեմեա՛ց յիմ ուղիս անդանդաղ»։

Թև առեալ իմաստի քաջաբար,
Թա՛փ անցի ընդ մահուս՝ ընդ պատուար,
Եւ հասեալ յերկնքին ճանապարհ,
Տեսի անդ նորանոր պատահար։

Երկրորին օրիորդք սիրահար,
Նստէին յերկնքի՝ ուղւոյն ծայր,
Մին զկնի՝ Հեշտութիւն սնափառ,
Ի սօսխս զառ ի վայր՝ յօրանայր։

## Ասէ՛

Այս ուղի հրաշազեղ ծաղկաշար.
Քո ծաղիկ հասակիդ քաջ յարմար.
Այր մուտ է տղայոց խնդարար.
Այլ վախճանն ապաշաւ և աշխար։

Նարդուգոտ և Նինոս՝ Սադմնասար,
Շամիրամ և Ներոն՝ Պողինար.
Աստ Սարէլ, Սադայէլ և աշխարհ,
Խարուսիկ Հեշտութեանս են գերեալ։

Թէ կամիս պատանիդ յըրանալ,
Ի խնջոյս՝ Հնչաուրեանս չարաչար,
Ե՛կ առ իս՝ յայս մեղկին ճանապարհ,
Ա՛ռ հանգիստ իմ տաճար՝ բոցավառ։

## Առաքինութիւն

Այլ միսն՝ օրիորդ բարեսէր,
Ծանրամեստ դշխոյից վեր ի վեր,
Տայր ինձ զիւր անուշակ հրաւէր,
Վեր ճեմել յիւր ուղին՝ զառ ի վեր։

## Ասէ

Վորդ ասեմ, սանցից քեզ ընդէ՞ր,
Այս ուղի է ժայռոտ՝ աննուէր,
Ուր անցորդք չարչարին կարէվէր
Բայց բարեաց ստանան զմբեր։

Իմաստուն պատանիդ խելոք ձեր,
Արութեամբ յայս ուղի ել ի վեր,
Քանզի փառք նա պտուղ և նուէր,
Ի չարիս հոլովին անարգել։

## Մեսրովբ

Ա՜հ վիճակ ընդունայն 'ւ աղցաւոր,
Որ տարար փորձանաց բիւրաւոր,
Տար և զայս ինքընծայ պատեհ նոր
Զի տեսցուք ի վերջոյ՝ զի՞նչ շնորհ։

## Մարմին

Դաւաճան, անձնազրաւ, կամակոր,
Իմ մեղաց և մահուս պարտաւոր,
Թէ մնացուք՝ յայս ուղի զուր ի զուր,
Սրտացաւ գերեհան փրկիչ, ու՞ր։

## Հաւատ

Ե՛ս եղէց քեզ անփորձ՝ երաշխ'ւոր,
Զի չկան ահ ու մահ անդանոր,
Այլ բարիք և պսակ ոսկեհուռ,
Նա անմահ խնդութիւն և կեանք նոր։

Արդ ժամ է յաջողակ վերելից,
Ի ձեռըն ժիրաժիր, քո ջանից,
Չի հասցես արութեամբ այնց ձրից,
Զոր ունի պարգեւել քեզ ուղիս։

## Մեսրովբ՝ զմարմին

Նախընթաց յայս հանդէս ես մահից,
Ունելով զքեզ ինձ ուղեկից,
Չի չարեօք վշտալից վիճակիս,
Յաղթեսցուք ինքնաբեր մեր կրից։

## Վհատութիւն

Ցամաքեալ յընդերկար ընթացից,
Չարատանջ ցնորից չար խղճիս։
Զայն բարձեալ ողբ առի՝ զայրացից,
Այլ ո՛չ ոք գոյ ինձ կարեկից։

## Մեղք

Կարթ մահու յիս ձգեաց սատանայ,
Խոցոտեաց զբնութիւնս անխնայ,
Զայս տեսիլ՝ մահերես և դժնեայ,
Երբ տեսի՝ կարծեցի թէ կորեայ։

Աստանօր ողբ առից յարակայ,
Ի վերայ վիճակիս յոր անկայ,
Քանզի ո՛չ կշռեցի զապագայ,
Վասնորոյ կործանիմս ի ներկայ։

Բնական տեսութեանց հեռացայ,
Ի խոհերս զազրութեանց խառնեցայ,
Ուր պատիժք հրահեղեղն Սոդոմայ
Հեղացին ի տեսանէ յիմ վերայ։

## յԱւետարան

Բա՛ մինչ դեռ ես կայի յայս վարան,
Յեղակարծ իմ մտաց աչք բացան։
Տեսի ես նորահրաշ տեսարան,
Ընդ տարժան ընդ ուղոյս վերջաւան։

Օրհնէր լուսեղէն Ամպարան,
Յոր արկեալ էր Աթոռ տէրունեան,
Ուր բազմէր Հինաւուրցն յաւիտեան,
Ու նոքին՝ որք յայս ճեմ ընթացան։

*Ցրեցի զցնորս վարանման,*
*Եւ գերկիւղ մօտալուտ կորստեան,*
*Քանզի փառքն՝ զոր տեսի հեռաստան,*
*Փարատեաց զմռայլս մթութեան։*

*՚Ի խս ցաւոց՝ որ տանջէր զիմ հոգին,*
*Եղև ինձ հրաշագեղ թագ անգին,*
*Զի անցեալ չարչարանքն անհնարին,*
*Անդրադարձ տան պսակ յաղթողին։*

*Ուրուական* Հեշտութիւնք *երկրային,*
*Ջեն և չեն բնութեանս մեր բաժին,*
*Զի զոր տան՝ է չնչին փանաքին,*
*Այլ տուժեն զայնս ի մէնջ չորեքկին։*

*Յիրաւի չարաչար մոլորին,*
*Որք ի խորս* Հեշտութեանց *ընկղմին,*
*Գործատեացք ի խոհերս գեհենին,*
*Որդընկեր հոգեմեռ տանջեսցին։*

*Ես ի տէր յուսացայց յաւիտեան,*
*Զի տացէ ինձ զձեռն իւրական,*
*Հասանիլ ի վերին վերջաւան,*
*Ուր բարիք անսահման գանձեալ կան։*

*Բենական տեսութեանն գալ արժան,*
*Որ հոգւոյս է վախճան անվախճան,*
*Ընդ ոսկւոց պարզելոց մաքրութեան,*
*Ժանկահար երկաթիս անպիտան։*

*Գերագոյն տաճարի անդ քերուբ։*
*Ընդ սրբոց* Երջանկաց *համախումբ,*
*Անդադար բարբառով սուրբ, սուրբ, սուրբ,*
*Լի հոգւով* Փրկողին *տա՛ց, Մեսրովբ։*

*Ի գիրս պատահարացն իմոց՝ գլուխ 21, պրակ 6, էջ 247 ց249։ Շարադրեալ յանտէրունջ պանդխտութեան իմում, որ յԱրևելեան Հնդկաստան։ Նոյեմբերի 26։ 1825 որոյ գլխատառք յօրինեն «Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Կարբեցւոյ Երգ»։*

## 5. <ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԻՆ>

*1 նոյեմբերի, 1828, Կալկաթա*

*(էջ 410)*

*Բնագիրը (տպագիր օրինակը) Թաղիադյան ստորագրությամբ պահվում է Մատ., Կ. Դ., թղթ. 61, վ. 788։ Տպագրվել է Կալկաթայի անգլիական եպիսկոպո-*

ական ճեմարանի տպարանում, 1828 թ. նոյեմբերի 1-ին, էջմիածին է հասել 1829 թ. փետրվարի 2-ին։ (Տե՛ս Մատենադարանում պահվող օրինակի վրայի մակագրությունը)։

1. Նամակը բաղկացած է երկու թերթից։ Վերահրատարակվել է «Մասեաց աղաւնի», 1863, էջ 172—174, «Մեսրովբ Դավթեան Թաղիադեանց և նորա մեկ առաջարկութիւնը» խորագրով, հետևյալ ծանոթագրությամբ.

«Այս դարուս ճշմարտապես ազգասեր, հեռատես և եռանդուն հայերեն մեկն եղած է հանգուցյալ պ. Մեսրովբ Դավթյան Թաղիադյանց, որոյ գրավոր աշխատությունները որչափ և պակասավոր երևին ըստ ոճույն և ըստ ընտրության նյութոց, պետք է միշտ հարգ ունենան ազգայնոց աչք, իբրև հայրենասեր արդյունավոր անձի գրվածքներ։ Նորա Ճանապարհորդությունը, քանի մը մանր շարադրանքները, և մանավանդ Կալկաթայի մեջ քանի մը տարի հրատարակած Ազգասէր անունով օրագիրը, ըստ բավականին կցուցնեն թե նա բնական հանճարով, տաք սրտով, զվարճախոս լեզվով և որ մեծն էր ազգասիրական հոգվով լի մարդ մը եղած է ուստի և արժան է, նորա հիշատակը անմոռաց մնա ազգին մեջ։

Ըսածներուս իբրև ապացույց և հաստատություն կհրատարակեմ այս տեղ նորա մեկ տպագիր առաջարկությունը զոր ըրած է ի հնուստ, այսինքն Կալկաթայեն, յուր քաղաքակից երևանցվոց. ասկից գրեթե 35 տարի առաջ։ Չեմք գիտեր թե այս եռանդուն նամակը ինչ ազդեցություն ըրեր է այն ժամանակի երևանցի իշխանության և եկեղեցականաց վրա կամ թե ու՞մ կողմանե և ինչ արգելքներ ունեցեր է, որ է գործ դրված այն ժամանակները և ոչ մինչև ցայժմ։ Այս միայն հայտնի է մեզ, որ Թաղիադյանցին քաղաքական վարժատան համար առաջարկած տեղվույն վրա է այժմ նորաշեն առաջնորդարանը. հանդերձ ընդարձակ գավիթով և պայծառ ու գեղեցիկ վարժարանով։ Առաջնորդարանը բարձրագիր լինելով առողջարար օդ ունի և Զանկու կամ Հրազդան գետի վրա կնայի, որոց սաստկաշունչ խոխոջանքը մեծապես զվարճալի կընեն այն տեղվույն բնակությունը։

Մեր այնտեղ պատահած տարին, այսինքն՝ 1859-ին Երևանա հաջորդ Գերապատիվ Ստեփաննոս վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) յոր այն գեղեցկաշեն առաջնորդարանի վարժարանի հիմնադիրը և վերատեսուչն էր. ամենայն ջանք և ակնկալություն ուներ որ հետզհետե ծաղկի և հառաջանա այս վարժարանը։ Այժմ չեմք գիտեր թե որքան հաջողություն գտան այն բարեսեր և ազգասեր պատվական անձին դիտողությունները, բայց և տարակույս չունեմք, որ Երևանա թե եկեղեցական և թե աշխարհական իշխանությունները ամենեին անհոգություն չեն ըներ նորա պետք եղած օգնականությունն և ձեռնատվությունն ընելու, որով և բարեհիշատակ Թաղիադյանցին փափագը ըստ իմիք կատարած կլինեն։ Ահավասիկ նորա նամակը, որո միայն քանի մը տողերը պարզարանելու համար ծանոթություններ կավելցունեմք մեր կողմանե»։

Իբրև անհայտ վավերագիր՝ նամակը նորից լույս է տեսնում 1880 թ. «Փորձ» ամսագրում, № 8—9, էջ 45—49 (Պ. Պռոշյանի «Շահեն» վեպի ծանոթագրություն)։ Այդ առթիվ հեղինակը գրում է. «Տպելով այստեղ հանգուցյալ Թաղիադյանի նամակը, մենք մի մեծ պարտականություն կատարած ենք համարում։ Նամակը տպված էր մի թերթ գրելու թղթի վրա 1828 թվին, ներքևը Թաղիադյանցի ինքնաձեռագիր ստորագրությունը, և այդ նշխարը մենք ավելի թանկ ենք համարում. Թաղիադյանցի նման մի անզույգ և նշանավոր հեղինակի ձեռքը մեր մատենա-

գրության համար ապագայումը մեծ նշանակություն ունի։ Ցանկալի է, որ վիմագրությամբ մշտնջենավորվեր այդ մեծագին ավանդը»։ «...Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը մեր բարեկամ Արգար Գուլամիրյանցին՝ այժմ տեր Մեսրովբ քահանա Ալեքսանդրապոլեցուն. նորան ենք պարտական այս նամակի լույս տեսնելովը։ Արժ. հայրը լսելով մեր ձեռնարկած վիպասանության մասին, ինքն անձամբ բերեց մեզ այս նամակն և խորհուրդ տվեց անմահացնելու (էջ 49)։

1. Ակնարկված նամակը մեզ չի հասել։

2. Պիտի հասկանալ՝ Եփրեմ։

3. Անգլիական հյուպատոսը Պարսկաստանում։ Վախճանվել է 1832 թ., թաղվել է Էջմիածնի մայր տաճարի արևմտյան պատի տակ։

4. Պետրոս Առաջինը։

5. Առ. Արարատյանի՝ 1830 թ. դեկտեմբերի 25-ին Աբովյանին գրած նամակից պարզվում է, որ Եփրեմ կաթողիկոսը օրհնության կոնդակ է ուղարկել Թաղիադյանին և հրավիրել նրան Հայաստան, խոստանալով կատարել նրա խնդիրը՝ Երևանում դպրոց բացելու մասին («Դիվան Խ. Աբովյանի», հ. 2, Երևան, 1948, էջ 87)։

## 6. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

29 դեկտեմբերի, 1831, Երևան

(էջ 414)

Ինքնագիրը պահվում է Մատ., Ալ. Երիցյանի դիվան, թ. 154, վ. 299։ Տպագրվում է առաջին անգամ։

1. Ինչպես նշում է Մ. Սալլանթյանը, Թաղիադյանը հայրենիք էր բերել 6 բեռ գրականություն, տպարան և դրամ՝ Երևանում դպրոց բանալու մտադրությամբ։ (Տե՛ս վավերագրերից 3-րդի 1-ին ծանոթագրությունը)։ 1832 թ. հունվարի 25-ին Մ. Մսերյանը հաղորդում է Աբովյանին. «Մեսրոպ Թաղիադյանը, որի մասին գուցե լսած լինեք, գալով Հնդկաստանից, ջանք է դնում մի դպրոց բանալու Վաղարշապատի ավերակներում՝ հայրենիքի որդիներին լուսավորելու համար։ Հրաշք կլինի, եթե գլուխ գա, ինչպես ինքը հույս ունի» («Դիվան Խաչատուր Աբովյանի», հ. 1, Երևան, 1940, էջ 274)։

## 7. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

12 օգոստոսի, 1832, Վաղարշապատ

(էջ 415)

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 39, վ. 278։ Տպագրվել է՝ Ռ. Նանումյան, Մեսրոպ Թաղիադյան, կյանքը և գործը, էջ 129—131։

1. Խաչատուր Բեկ-Շահնազարյանը Դավիթ խան Մատուրյանի քրոջ որդին էր։ Բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզում, 1832 թ. Թիֆլիսում զբաղված էր մորեղբոր ժառանգության հարցով։ Ցաթալի շահը իր ժամանակին համաձայնել էր Շահնազարյաններին վերադարձնելու հայրենական կալվածքներից Գեղարքունիքը։ Սարդարը ձգձգել էր կալվածագրի վավերացումը, մինչև վրա հասավ պատերազմը։ Ռուսական կառավարության օրոք Դավիթ խանին չհաջողվեց ետ ստանալ

իր կալվածքները։ Նա մեռավ աղքատության մեջ։ (Տե՛ս Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության, էջ 124—129)։

2. Ո՞վ է այդ «ծերացյալ տղան», մեզ անհայտ է։

3. Թուղթը մաշված է և տողի շարունակությունն անվերծանելի։

4. Մեզ հայտնի չէ, թե ինչի մասին է խոսքը։

5. Հալածվելով վանքի միաբաններից, Թաղիադյանը 1832 թ. ապրիլի 1-ին փախչում է Երևան։ Կաթողիկոսը արգելում է նրան անցնել արտասահման։ Մինչև օգոստոսի 12-ը Թաղիադյանի և կաթողիկոսի հարաբերությունները վերականգնվում են։ Մեզ հայտնի չեն իշխան Բեհբությանին և Անդրկովկասի կառավարչապետի պաշտոնակատար գեներալ Պանկրատևին գրած նամակների բովանդակությունը։

6. Տողը մաշված է։

7. Նկատի ունի սեպտեմբեր ամսին նշվող ս. խաչի տոնը։

## 8. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

*3 հոկտեմբերի, 1832, Վաղարշապատ*

*(էջ 417)*

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 39, վ. 279։ Տպագրվել է Ռ. Նանումյան, Մ. Թաղիադյան, կյանքը և գործը, էջ 131—132։

1. Խաչատուր Բեկ-Շահնազարյանի գրած նամակները մեզ հայտնի չեն։

2. Խոսքը վերաբերում է Բեհբությանին և Պանկրատևին ուղղած նամակներին։

3. Հոգևորական մայորը մեզ անհայտ է։

4. Թաղիադյանը Ակոռի պետք է գնացած լիներ օգոստոսի կեսերին։

5. Ս. Մեսրոպի, այն է՝ Թարգմանչաց տոնը ընկնում է հոկտեմբերի կեսերին։

## 9. ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՀՈԴՈՍԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹՈՌՈՅ

*1 դեկտեմբերի, 1832, Վաղարշապատ*

*(էջ 415)*

Ինքնագիրը պահվում է ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 279։ Տպագրվել է Ս. Սեյրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 243—244։

1. Նկատի ունի Հայաստան ներգաղթած պարսկահայերին տրված արտոնությունները տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории Армянского народа», часть II, М., 1838, стр. 152, § 4, стр 157—159.

## 10. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԼԻԲՅԱՆԻՆ

*20 դեկտեմբերի, 1832, Վաղարշապատ*

*(էջ 419)*

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ն. Շահազիզի հավաքածո, № 61։ Տպագրվել է Ռ. Նանումյան, Մ. Թաղիադյան, կյանքը և գործը, 137—138։

1. Հարություն Պողոսի Խալիբյան—Նոր Նախիջևանի մեծահարուստ վաճա-

ռական-կալվածատեր (1790—1871)։ Այդ շրջանում նա Նոր Նախիջևանի քաղաքագլուխն էր։

## 11. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

22 դեկտեմբերի, 1832, Վաղարշապատ

(էջ 419)

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 39. վ. 278ա։ Տպագրվել է՝ Ռ. Նանումյան, Մեսրոպ Թաղիադյան, կյանքը և գործը. էջ 132—136։

1. Թաղիադյանը տառապել է ջերմախտով։

2. Փակագծի միջինը ջնջված է Թաղիադյանի կողմից։

3. Խոսքը Եփրեմ Սեթյանի «Յազատութիւն Հայաստանեայց» բանաստեղծության մասին է, որը հեղինակը նվիրել է Խաչատուր Բեկ-Շահնազարյանին։ Բանաստեղծության ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խ. Աբովյանի ձեռագրերի մեջ։ Այս բանաստեղծությունը մենք սխալմամբ տպագրել ենք 1948 թ. հրատարակած Խ. Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի մեջ իբրև նրա բանաստեղծություն։ (Տե՛ս հ. 1, էջ 52)։

4. Թաղիադյանի մեջբերումը հանված է Եփրեմ Սեթյանի վերոհիշյալ բանաստեղծությունից։

5. Հյումարս (Կյուրոս Մար)—Իրանական Փիշդադյան հարստության հիմնադիրը։

6. Հուսհանգ (Հուշանկ)—Հեյումարսի թոռը։ Նրան է վերագրվում երկրում կատարված մի շարք բարենորոգումները և գրավոր թողած բազմաթիվ խորհուրդները երկրի կառավարման մասին։

7. Զրադուստր (Զրադաշտ)—առասպելական մոգ մարգարե, պարսից նոր կրոնի հիմնադիրը։ (Այդ մասին մանրամասն տե՛ս Երվանդ Տեր Մինասյան, Եղիշե, Վարդանաց պատմություն, 1946 թ. հրատարակության № 42 ծանոթագրությունը)։

8. Բյուրասպ—իրանական առասպելական հերոս Զոհակի մականունն է։ Նրա մասին հիշատակություն կա Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ (տե՛ս Ա հավելված, Պարսից առասպելները)։

9. Մ. Թաղիադյանը 5-րդ կետից առաջ հիշատակել է Ամիանոս Մարկելիանոսի (330—400) 23-րդ գիրքը։ Նրա պատմության 31 գրքերից մեզ է հասել միայն 16-ից 31-ը։ Նույն տեղում Թաղիադյանը խոսում է նաև Քսենոֆոնի մասին (434—359)։

10. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 89։

11. Տե՛ս Մ. Թաղիադյան, Պատմութիւն Պարսից, հ. 1, էջ 5։

12. Մ. Թաղիադյանը քննադատում է «Յազատութիւն Հայաստանեայց» բանաստեղծության թե բովանդակությունը և թե ոճը։ Այս քննադատությունը ուշագրավ է հեղինակի՝ գրաբարալեզու գրականության մեջ տիրող հայրենասիրական մոտիվների կլասիցիստական ոճի նկատմամբ արտահայտած բացասական վերաբերմունքով։

13. Նամակի վերջում Թաղիադյանը Շահնազարյանին մի քանի տող է գրում հայատառ պարսկերենով, որ պահում ենք նույնությամբ։

## 12. ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՀՈԴՈՍԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹՈՌՈՅ

*1 հունիսի, 1833, Էջմիածին*

*(Էջ 425)*

*Ինքնագիրը պահվում է Մատ., Ալ. Երիցյանի դիվան, թ. 154, վ. 299: Հրատարակվում է առաջին անգամ:*

1. *Մ. Թաղիադյանը երկրորդ անգամ պաշտոնի անցնելիս ստանձնում է նաև Մատենադարանի և տպարանի տնօրինությունը: Տե՛ս վերջում Հովհաննես Կարբեցու կոնդակը բարոն Ռոզենին (1834 թվականի մարտ):*

## 13. ՄԿՐՏԻՉ ՔԱՐՏԱՇՅԱՆԻՆ

*(1834)*

*(Էջ 426)*

*Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Կոստանյանի ֆ., № 1757: Տպագրվում է առաջին անգամ:*

1. Մկրտիչ Քարտաշյան—*Մինչև 1843 թ. Էջմիածնի Սինոդի ատենադպիր:*

2. *Շիլլերի «Երաշխիք» հանրահայտ բալլադի հերոսները:*

3. *Նկատի ունի 1833 թ. Էջմիածնի 8 միաբանների բողոքագիրը ընդդեմ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի, որին մասնակցում էր և Ստ. Արարատյանը: (Տե՛ս* Ա. Սեղրակյան, *Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 81—82):*

4. *Փիլիպպոս արքեպիսկոպոսը (Մեծափոր մականունով) վախճանվել է 1822 թ. Էջմիածնում:*

5. *Այդ միջադեպի մասին Թաղիադյանը խոսում է նաև իր «Ճանապարհորդության» Ա հատորի վերջին էջերում:*

## 14. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

*14 սեպտեմբերի, 1834, Սպահան*

*(Էջ 429)*

*Ինքնագիրը պահվում է ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսական Դիվան, 87, գ. 7, էջ 33—34: Տպագրվել է՝* Ռ. Նանումյան. *Մ. Թաղիադյան, կյանքը և գործը, էջ 140—141:*

1. *Կաթողիկոսի այդ կոնդակը մեզ չի հասել:*

2. *Ատրպատականի թեմակալը 1824 թվականից (Մատ., Կ. Դ., թ. 30, վ. 192): Մասնակցել է 1828 թ. պարսկահայերի գաղթի կազմակերպմանը:*

3. Չրպետ *(Ծատուր Չրպետյան Հակոբ 1760—1838)—հայագետ, 1826 թ. Փարիզից հրավիրվել է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցի ուսուցչի պաշտոնով: Ներսես Աշտարակեցու աքսորից հետո մոտ կապերի մեջ էր Կովկասյան ռուս բարձրագիր իշխանավորների հետ:*

4. *Մ. Թաղիադյանը Էջմիածնից դուրս է եկել 1834 թ. հունիսին (տե՛ս* Հ. Միրյան, *Կենսագրություն Մ. Թաղիադյանց, էջ 92—95), Նոր Ջուղա է հասել 1834-ի օգոստոսի 10-ին: 1835 թ. հունվարի 1-ին Հովհաննես արքեպիսկոպոսը գրում է Էջմիածնի Սինոդին. «Եւ յաղագս արձակման մեծարոյ վարժապետին*

արուեստից և առաքմանն արդարև ի պարտաւորութեան կացուցիք զողջոյն Հեռաւորեալ միաբանեալս և զփոքր եղբայրութեան ձեր, առ որ մատուցանեմք զգովին, մեծ շնորհակալութիւնս գոհունակութեան, որն եկն ժամանեաց առ ի տասն երրորդումն օգոստոսի օրհնալից կոնդակաւ սրբազնագոյն օծելոյն. որում և յանձնեցաք զԱմենափրկչեան ճեմարան յիւր և ուսուցանէ զմանկունս Հայոց, սկսեալ է ի յայբուբենութենէ մինչև ցճարտասանութիւն թուով հարիւր և վաթսուն (Մատ., Կ. Դ., թ. 85, վ. 36)։

## 15. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

*5 մայիսի, 1836*

*(էջ 432)*

*Բնագիրը պահվում է ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն հայոց կաթ. Դիվան, ֆ. 87. գ. 7, էջ 35—36։ Տպագրվել է՝* Ռ. Նանումյան, *Մեսրոպ Թաղիադյան, կյանքը և գործը, էջ 142—144։*

1. *Նշված կոնդակը մեզ չի հասել։*

2. *Տե՛ս Ավետարան ըստ Ղուկասու, ԺԹ, 1—7։*

3. *1836 թ. զատիկն ընկել է մարտի 29-ին։*

4. *1836 թ. գարնան սկզբին Թաղիադյանն ազատվում է Նոր Ջուղայի Ամենափրկչյան ուսումնարանի տնօրենի պաշտոնից։ Մի ամսի չափ անգլերեն է պարապում սպահանցի մահմեդականացած մի վրացի զորապետի որդու հետ։ Ջուղայում եղած տարիներին Թաղիադյանն անդրադառնում է «Յեղերերգութիւն յորհաս Թանկայ Թաղիադեան» պոեմում։*

5. *Հովհաննես արքեպիսկոպոս Բագրևանդացուց։*

6. *Ամենափրկչյան ուսումնարանի հոգաբարձուները։ Առաջին տարին Թաղիադյանը ապրում է նրանցից մեկի՝ Ղևոնդ Ավագյանի տանը, ուր և ամուսնանում է Թանկի հետ։ (Ղ. Ավագյանի մասին տե՛ս* Հ. Շահնազարյան-Սարգսյան, *Դիտողագիր, էջ 42)։*

7. Խոսրով խան Ղայրմազյան*—պարսից նշանավոր պետական գործիչ, վախճանվել է 1858 թ.։ (Տե՛ս* Գ. Շերմազանյան, *Նյութեր ազգային պատմության. Ռոստով, 1890, էջ 219—220)։*

## 16. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*23 հունիսի, 1837, Շիշավան*

*(էջ 435)*

*Բնագիրը չի պահպանվել։ Նամակն արտագրված է հայտնի արևելագետ Մեսրոպ Սեթի կողմից։ Պահվում է ԳԱԹ, Բ. Աղասյանի հավաքածու, № 10099. էջ 16—17։*

1. *Հակոբ Սեթյանը Մեսրոպ Սեթի հայրն է, Թանկի եղբայրը, Թաղիադյանի Նոր Ջուղայի աշակերտներից։ Հ. Մկրյանի գրքույկի հրատարակումից հետո ուսանող Մեսրոպ Սեթը (Թանկի եղբորորդին) հետաքրքրվում է Թաղիադյանի թողած ձեռագրերով։ Կալկաթայում նրան հաջողվում է գտնել մի շարք ձեռագրեր և հետևյալ գրառումները։*

*ա) Օրագիր 1830 օգոստոսի 20-ից մինչև 1831 մայիսի 14-ը։*

բ) 1841 մայիսի 14-ից մինչև հոկտեմբերի 30-ը։

գ) 1839 թ. Պոլիս—Բաղդադ ճամփորդական նոթեր։

դ) 1837 Դավրեժ—Շիշավան։

ե) «Ճանապարհորդութիւն ի Հնդիկս»։

զ) Երկու թարգմանություն անգլերենից։

է) Իր ձեռքով կազմած Բառարան։

ը) «Տետրակ ընտիր տաղաչափության»։

թ) «Սոս և Սոնդիպի» պոեմից հատվածներ։ (Տե՛ս ԳԱԹ, Ռ. Ազատյանի հավաքածու, № 10110)։

Մեսրոպ Սեթն այդ ձեռագրերի պատճեններն ուղարկում է Հ. Միրյանին։ Վերջինս այդ նյութերի հիման վրա կազմում է ընդարձակ «կենսագրություն», բայց չի կարողանում հաջողեցնել իր նոր գրքի տպագրությունը։ Նա վախճանվում է 1909 թ., ձեռագիրը թողնելով իր արխիվում։ (Տե՛ս № 10283 նամակը)։

1836 թ. մայիսից մինչև 1837 թ. հունիսը Թաղիադյանի ընտանիքը գտնվում էր Թավրիզում։ Երկրորդ երեխայի ծննդաբերությունից և վերջինիս մահից հետո փոխադրվում են Շիշավան։

2. Մալիք Ղասիմ Միրզա—Ֆաթալի շահի որդին, Շիշավանի տերը։ Ավելի ուշ դարձավ Ատրպատականի նահանգապետը։ Նա աշակերտել է Թաղիադյանին և օգնել Շիշավանի դպրոցի կազմակերպմանը։

3. Մեսրոպ Սեթը գրում է, որ իր հորեղբայր Հովհաննեսը սկզբում ցանկացել է փոքր եղբորը՝ Հակոբին, տանել Բատավիա, հետո փոխել է որոշումը (ԳԱԹ, Ռ. Ազատյանի հավաքածո, № 10099, էջ 17)։

## 17. ԱՆՆԱ, ԱԶԱՏԼՈՒ ԵՎ ՎԱՐԴ ԽԱԹՈՒՆ ՔՈՒՅՐԵՐԻՆ

*1837, Թավրիզ*

*(էջ 435)*

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ռ. Ազատյանի հավաքածո, բաժին 12, № 2802։ Նամակը սևագիր է և անթվակիր։

1. Թաղիադյանի առաջին կնոջ՝ Թանկ խաթունի քույրերը։ Թանկ խաթունը վախճանվել է Թավրիզում 1837 թ. նոյեմբերի 18-ին, երրորդ ծննդաբերության ժամանակ։ Այս թվականը արտագրված է Թանկ խաթունի գերեզմանի վրա Թաղիադյանի դրած տապանաքարից. ծնվել է 1816 թ.։ (Տե՛ս Գ. Շերմազանյանի Սահակ Սաղումյանց արքեպիսկոպոսին նվիրված հոդվածը. «Մասիս», 1875, № 1759)։ Թաղիադյանին նվիրված հատվածը տպագրել է Հ. Միրյանն իր «Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանցի» մեջ, էջ 97—98։

2. Բազմակետերը դրել է Թաղիադյանը։

## 18. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*20 նոյեմբերի, 1838, Թավրիզ*

*(էջ 437)*

Ինքնագիրը չի պահպանվել, քաղված է Մեսրոպ Սեթի նամակից, ուղղված Հ. Միրյանին (պահվում է ԳԱԹ, Ռ. Ազատյանի հավաքածո, № 10099, էջ 18—19)։

1. 1838 թ. նոյեմբերի 15-ին Թաղիադյանը գրում է. «Ես ախտս ուսաց մեծ կլնու մասն եմ»։

2. Թանգի հոր դրացին Նոր Ջուղայում։

## 19. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*11 ապրիլի, 1839, Պոլիս*

*(էջ 438)*

*Ինքնագիրը չի պահպանվել, քաղված է Մեսրոպ Սեթի նամակից։ (Պահվում է ԳԱԹ, Թ. Աղասյանի հավաքածո, № 10099, էջ 19—20)։*

1. Նկատի ունի «Յեղերերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց» պոեմը, որը հրատարակել է Հովհ. Միրզյանը Թաղիադյանի մահից հետո։

2. Պոլսում առաջին ամիսներին Թաղիադյանին հովանավորում էր հայտնի ամիրա Հ. Սերվերյանը։ 1838 թ. աշնանը նա մասնակցում է Յուսկյուտարի ճեմարանի բացմանը և ոտանավոր ձոնում հիմնադիրներին։ 1839 թ. փետրվարին գժտվում է Սերվերյանների և պատրիարքի հետ, որի հետևանքով մնում է առանց աշխատանքի։ Նույն շրջանում նա բարեկամանում է Ամերիկայի միսիոներական շարժման կազմակերպիչներից մեկի՝ Ռ. Համլինի հետ։ Փետրվարից մինչև մայիս Թաղիադյանը ենթարկվում է ծանր հալածանքների՝ բողոքականների հետ կապ ունենալու և նրանց մոտ աշխատանքի անցնելու համար։ Կասկածի տակ է առնվում նաև ռուսական դեսպանության կողմից։

3. Այդ գրքի տպագրությունը մնացել է կիսատ։ Մեզ անհայտ է նրա ճակատագիրը։

## 20. ՌՈԲԵՐՏ ՀԱՄԼԻՆԻՆ

*Մայիսի սկզբներին, 1839, Պոլիս*

*(էջ 439)*

*Ինքնագիրը չի պահպանվել։ Քաղված է Ռ. Համլինի անգլերեն լեզվով Լոնդոնում հրատարակված «Իմ կյանքը և ժամանակները» գրքից, 1893, էջ 187։*

1. Թաղիադյանի ձերբակալության մասին տեղեկություններ կան «Բյուրակն» թերթի 1891 թ. № 265-ում։ Ըստ այդմ՝ Թաղիադյանը 1839 թ. գարնանը կասկածի տակ է առնվել իբրև բողոքական, ամերիկյան միսիոներների հետ կապ ունենալու պատճառով, և ռուսական դեսպանությունը նոր պատրիարքի հետ հետապնդել է նրան ու ձերբակալել ուզել Ռուսաստան փոխադրելու համար։ Այլ տեղեկություններից հայտնի է, որ Թաղիադյանին հաջողվում է ծպտված դուրս գալ Տրապիզոնի նավահանգիստ և ազատվել Սիբիր աքսորվելու վտանգից։

## 21. ԱՆԴՐԵԱՍ ՌՈՒԹԳԵԼՅԱՆԻՆ

*16 մայիսի, 1839, Տրապիզոն*

*(էջ 438)*

*Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, Թ. Աղասյանի հավաքածո, № 2801, բաժին 12։ Տպագրվել է՝ Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Գ. Թաղիադյանց, էջ 107—108։*

1. Անդրեաս Ուռփելյանը նոր ջուղայեցի վաճառական էր։ Հայրենիք վերադառնալու առթիվ Թաղիադյանից ստանում է մի «Ողջերթ» բանաստեղծություն (Տե՛ս Հ. Մկրյան, նույն տեղում, էջ 111—112)։ Ինքնագիրը պահվում է Թորոս Ազատյանի հավաքածոյի մեջ։

2. Հակոբոս պատրիարքը։

3. Խոսքը բողոքական Ռոբերտ Համլինի գրավաճառանոցի մասին է, որ Թաղիադյանը մարտ-ապրիլ ամիսներին պաշտոն էր ստանձնել։

## 22. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*24 հուլիսի, 1839, Բաղդադ*

*(էջ 441)*

Ինքնագիրը չի պահպանվել, հանված է Մեսրոպ Սեթի նամակից (ԳԱԹ, Թ. Ազատյանի հավաք. № 10099, էջ 22—24)։

1. Նույն նամակի էջ 25-ում Թաղիադյանի մի այլ նամակից բերված է երկտող՝ «Ստամբոլուցը վեր կացա չափարով, հուլիսի վերջին հասա ի Բասրա»։

## 23. ՀԱԿՈԲ ՍԵԹՅԱՆԻՆ

*9 հոկտեմբերի, 1839, Բուշեր*

*(էջ 441)*

Ինքնագիրը չի պահպանվել, հանված է Մեսրոպ Սեթի նամակից (ԳԱԹ, Թ. Ազատյանի հավաք. № 10099, 24—25)։

1. Օգոստոսի վերջին Թաղիադյանը շոգենավին վճարում է 5 անգլիական ոսկի և մեկնում Բուշեր։

2. Ըստ այդմ Թաղիադյանը Բուշերից պետք է դուրս եկած լինի հոկտեմբերի 12-ից հետո։ 1839 թ. վերջերին նա հասնում է Հնդկաստան, մի քանի ամիս ապրում է Բոմբեյում, հաջորդ տարվա մարտին գալիս է Կալկաթա, որ մնում է աշխատանքի Անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում իբրև գրաշար։ Այստեղ նա փորձ է անում սկիզբ դնել հրատարակչական գործունեության։

## 24. ԱՆԴՐԵԱՍ ՈՒՌՓԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

*30 դեկտեմբերի, 1840, Կալկաթա*

*(էջ 443)*

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Թ. Ազատյանի հավաք. № 2505։ Տպագրվել է՝ Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 113—114։

1. Պողոս Ղարադաղցու եղբորորդին էր Ստեփանոս Ներսիսյանը, ապրում էր Թավրիզում և պարապում վաճառականությամբ։

## 25. ՍԵԹ ԽԱՆ ՄԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԴՐԵԱՍ ՈՒՌՓԵԼՅԱՆԻՆ

*20 փետրվարի, 1841, Կալկաթա*

*(էջ 445)*

Ինքնագիրը պահվում է Մատ., Ալ. Երիցյանի դիվան, թ. 154, վ. 192։ Տպագրվել է՝ Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 115։

1. Ինչպես այդ, այնպես էլ օրագրերի հրատարակության համար տրված հայտարարությունները չեն պահպանվել։

2. Խոսքը ճարտարապետ Հովհաննես Սերվերյանի մասին է։

3. Մինչև 1841 թ. Թաղիադյանի հեղինակություններից մեզ հայտնի են հետևյալ անտիպ գործերը։

ա. «Պատմութիւն Կալկաթայ»
բ. «Պատմութիւն Փայտակարանայ»
գ. «Հեզիկ Հղակեաց»
դ. «Թանգարան Թաղիադեանց»
ե. «Աստեղաբաշխութիւն»
զ. «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան»
է. «Երևան փրկեալ»
ը. «Հունարէն քերականութիւն»
թ. Սադիի «Գոլեստանի» հայերէն թարգմանությունը
ժ. «Պսակ» ժողովածու
ժա. «Միսարան» ժողովածու
ժբ. «Մաշտոց» ժողովածու
ժգ. «Մարան» ժողովածու
ժդ. «Հանդիսարան փորձանաց» օրագրերը
ժե. «Տօնք ծեսք հնդկաց» ժողովածու
ժզ. «Ազգային ծիսարան»
ժէ. «Սանդխտարան» ժողովածու։

4. 1827—1840 թթ. ընթացքում Թաղիադյանի տպագրած գրքերից հայտնի են. Պ. Բերդումյանի «Աստուածանմանութիւն», «Պաղեստին» պոեմը, «Դիցաբանութիւնը» և «Աստեղաբաշխութիւնը»։

## 26. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*27 մայիսի, 1846 Կալկաթա*

*(էջ 446)*

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 121, վ. 33։

1. Ներսես Աշտարակեցին Թիֆլիս է ժամանել 1845 թ. դեկտեմբերի 27-ին, իսկ Էջմիածին՝ 1846 թ. մայիսին։

## 27. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*25 հոկտեմբերի, 1846, Կալկաթա*

*(էջ 447)*

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 121, վ. 34։ Տպագրվել է՝ Ա. Սեդրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 244—246։

1. Տովբ. ժ, 8։
2. Ոչ թե 1820, այլ 1822։

## 28. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ

*17 փետրվարի, 1847, Կալկաթա*

*(էջ 449)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, հ. Դ, № 81, էջ 70։*

*1. «Առաջնորդ մանկանց» ձեռնարկը հրատարակվել է 1847 թ. Կալկաթայում։*

*2. Նկատի ունի Մարդասիրական ճեմարանի տարեկան հարցաքննությունները (Տե՛ս «Ազգասէր», 1847, № 118, էջ 365—367)։*

*3. Նույն համարում Թաղիադյանը հրատարակում է նաև Հ. Ավդալյանի պատասխանը, բերում ենք նույնությամբ։*

«Յարգոյ Պարոն Մ. Դ. Թաղիադեանց
Վերատեսուչ «Ազգասէր» լրագրոյ

*Ազնիւ Պարոն իմ*

*Ընկալայ զԹուղթ Ձերոյ և զնորատիպ զոմէնի աշխատասիրութիւն Ձեր՝* Առաջնորդ Մանկանց *անուանեալ, գործ պիտանի, միանգամայն հարկաւոր դպրոցաց մերոց։*

*Դպրոցական մատենից կարօտութիւն մեծ գոյ ի միջի մեր ամենայն ուրեք. այլ քաղցր է մեզ տեսանել, զի մեղուաջան զրագէտք մեր արդէն սկսեալ են դարման տանել այսմ իմացական կարօտութեան, պարապելով յայսպիսի երկասիրութիւնս, և ի լոյս ընծայելով զգիրատար գրաւոր գործս այսպիսի ոճ դաստառականս ի տպագրելոց անտի ի Վէնէտիկ, ի Կոստանդնուպոլիս, ի Մոսկով, ի Զմիւռնիա, աստի ի Հնդիկս և յայլ տեղիս, արժանեացն է ուսումնասէր համրակաց մերոց արժանանալ այսուհետև պէսպէս գործոց ուսումնականաց և առաւել ևս պիտանեաց։*

*Ստորագրեալս խնդրեմ յանուն իմ զերիս օրինակս ի Թուղթ ընկերագրութեան Առաջնորդին Մանկանց՝*

*Եւ մնամ ձերում սրտին մերձ՝*

Յովհաննէս Ավդալեանց

*Ի Կալկաթա*

*Ի Հայկեան Մարդասիրական ճեմարան*

*17 փետրվար, 1847»։*

*2. Ավդալյանի նամակից հետո, տողատակին, Թաղիադյանը հետևյալ դիտողությունն է անում. «Արդարև եթէ Գերապատիւ վարժապետն ի սակի ազգասէր քաջալերութեան գրեալ է, և զհրատարակութիւն երկանց աշակերտացն, զորոց տեսանք և վկայեմք, անգամ մխիթարութեան առիթ լինի թէ ազգին և թէ աշակերտաց ճեմարանի նորա։ Թարգմանեալն խնդայ, ծնողն փառաւորին. վարժապետն մեծարի, տպարանն ճեմարանին յառաջ ընթանայ և ազգն ոչ խնայէ զշնորհ իւր և այսու տալով օգտին և պարծին մանկունք։*

## 29. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

*10 մարտի, 1848, Կալկաթա*

*(էջ 450)*

*Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 137, վ. 89։ Հրատարակվում է առաջին անգամ։*

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսեսը Թաղիադյանի բոլոր նամակները թողնում է անպատասխան։

## 30. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*4 մայիսի, 1855, Չիչրա*

*(էջ 451)*

*Ինքնագիրը չի պահպանվել։ Տպագրվել է՝ Հովհ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 28—29, որտեղից և արտատպվում է։*

*1. Հովհաննես Խաչկյան քահանան Թաղիադյանի առաջին կենսագիրն է։ Կալկաթայի հոգևոր հովիվը, բարեկամություն է արել Թաղիադյանի հետ։ Սակայն իր կազմած կենսագրության մեջ նա աշխատել է տաղանդավոր հեղինակի և գործչի անհաջողությունները վերագրել միայն նրա անձնական խառնվածքին։ Քահանայի անհամեստ վարքագիծը իր ժամանակին քննադատել են Թաղիադյանի աշակերտները «Դիտողագիր Հովհաննես Շահնազար Սարգսյանի...» գրքույկում։*

*2. Թաղիադյանի երկրորդ կինը՝ Շուշանը վախճանվում է 1855 թ. մայիսի 7-ին Կալկաթայում։*

## 31. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*15 մայիսի, 1857, Չիչրա*

*(էջ 452)*

*Ինքնագիրը չի պահպանվել. տպագրվել է՝ Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 34—35, որտեղից և արտատպվում է։*

*1. Խաչկյան քահանան իր «Կենսագրութեան» մեջ պատմում է Մեսրոպի կրած ծանր տառապանքները կնոջ մահից հետո։ (Տե՛ս Հ. Մկրյան, «Կենսագրություն...», էջ 29—34)։*

## 32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

*27 մայիսի 1857, Չիչրա*

*(էջ 453)*

*Ինքնագիրը չի պահպանվել։ Տպագրվել է Հովհ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 35—38, որից և արտատպվում է։*

*1. Շուշանի որդեգրած աղջիկը։*

*2. Հնդկահայ վաճառական, որի ծախսով Թաղիադյանը հրատարակել է «Հնդկաստանի պատմություն» գիրքը։*

*3. «Ազգասէր Արարատեան» թերթի ընդհատումից հետո, Թաղիադյանը որոշ ժամանակ աշխատում է անգլիական ընկերություններից մեկում՝ թարգմանչի պաշտոնով։*

*4. Ստորև բերում ենք, Խաչկյան քահանայի պատասխան նամակից այն հատվածը, որ նա պատասխանում է Թաղիադյանի հարցումներին։*

*«Յաղագս ծախուց Ճանապարհորդութեանդ աստի մինչև Ջուղայ այսպէս լինի*

իմանալ. զի եթէ շոգենաւաւ չուիցես աստէն ի Բոմբայի, յայտնի է վարձն նաւուն տպագրեալ կանոնին, զոր կարծեմ ոչ պակաս քան զ300 կոմ. ռուփիք լինին. որպէս իսկ կանոնն տպագրեալ առլաւ առաքեմ ի բաւարարութիւն. այլ Բոմբայի ցԲուշեռ՝ չիք աւեն կարգ ուղևորութեան շոգենաւաց ընդունել զոք ճանապարհորդ, բայց եթէ պատահիցի երբեմն ձրիապէս տանան և սովիմբ յաջողականութեամբ յորժամ և կամիցի ոք՝ կարէ երթալ անձնաւոր, և ոչ ծանրաբարձ կարասեօք, զի յատուկ է և ծանր վարձ բեռանց. իսկ առագաստաւոր նաւաւ չուելն որ յաջողակ լինի ի նոյեմբեր և ի դեկտեմբեր ամիսս, թէ և աստի ուղղակի առ Բուշեռ երթեալ նաւք ի չորից ամաց հետէ և այսր չլինին. սակայն Մասկաթա նաւաւք վճարիս հարկաւորք, որպէս գնացին ասաի հերու ծեր Մկրտիչ Յ. Տէր Ղուկասն, Մարգար Միքայէլն և այլք ոմանք վերջաւորելով աստ անդ նախուղին մինչ ցԲուշեռ զվարձ բեռանց իւրեանց և անձանց իսկ, առ լեզակի արկեղաչափ արկղն ասաի ցԲուշեռ 8. կօ. ռուփիք և առ անձն հարիւր ռուփի պատէջ. ազատ ի պատէջից միոյ ծառայի, որ ընդ տեառն մնայ առանց յատուկ վճարման, որպէս և սոցա ընդ իրաց բարձելոց ի նաւ, նոյն ինքն նախուղայ, իւրով ծախիւք հոգացեալ յատուկ նաւաւ կամ բաղալով հասուցեալ է ի Բուշեռ. Իսկ յաղագս ծախուց ցամաքի ի Բուշեռայ ցՋուղայ յայտնի է. զոր ինչ բարձցես առ 100. վիտրն մինչ ցՇիրազ երբեմն 25 և երբեմն թանկագին 30. գեղոյ ռուփիք. այնպէս իմա և անտի ցՋուղայ, որպէս է հեծելոյն ծախք 10-ից մինչ 15 վարձ ջորւոյ հասուցանի թէ ի Շիրազ և թէ ի Ջուղայ գնալոյ։ Ահա այս է իմոյ գիտացեալն զոր ծանուցի քեզ սիրով։

Ի մասին հանգարտութեանն պատերազմի և բարձման ազմկին Պարսիս, ապրիլ 28-էն գրովն Բուշեռայ երեւի դաշինն ձեռնադրեալ է Շահն և զինադադարումն եղեալ, որպէս և ասեն Եվրոպէացի զօրք արդէն սկսեալ են վերադառնալ ի Բոմբայի այլ սեաւ սէփայիք մնան տեղն, մինչ Հէարթ թողցի ի Պարսից. այսչափս այժմէն յայտնի է, այլ կատարածն յետ այսու լուալ ծանուցից քեզ սիրով։

Մկրտում Այվազն չէ ի ծառայութեան ուրուք, այլ ի կամս իւր սպասէ մինչ գտնի անձրևուն և բացման եղանակին երթէ ի տուն իւր, ուստի և զկամս քոց ոչ հաղորդեմ նմա, զի մի պատճառ իմն լիցի քեզ ընդունայն ծանրութեան, զի յորժամ եկք քո յաջողեսցի Աստուծով, նա պատրաստ և յօժարամիտ լիցի ընդ քեզ երթալ. զի քան զքեզ լաւ տէր և պաշտպան չկարէ գտանել նա, որպէս և քո ծառայ հաւատարիմ քան զնա։

Տաղ և ուղի ցերմագին ասուրս չթողու այլ առաւելուլ ի գրիչ, ուստի վերջաւորելով զբանս, մնամ որպէս միշտ սիրելութեանդ

Բարեմաղթու (ձեռն) Տէր Յովհաննէս Խաչիկեան Խաչակիր Աւագ Երէց
Ի Կալկաթա, 1857, մէի 30

Առ Արժանայարգ Պարոն Մ. Դ. Թաղիադեան ի Դաքա:

Հուլիսի 20-ին Մեսրոպը գալիս է Կալկաթա, անուղղի է դնում իր տան կահկարասին, տպարանը վաճառում է քահանային, պահելով 16 սնդուկ գիրք և ձեռագրեր։ Խաչիկյան քահանայի եղբայր Մկրտիչ Խ. Հովակիմը ուղարկում է նրան Բոմբեյ, որտեղից նա պետք է մեկներ Պարսկաստան։

(Հովհ. Միրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 40—42):

## 33. ՄԿՐՏԻՉ Խ. ՀՈՎԱԿԻՄԻՆ

*25 նոյեմբերի, 1857, Բոմբեյ*

*(էջ 456)*

*Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվել է՝* Հովհ. Մկրյան, *Կենսագրություն Մ. Գ. Թաղիադյանց, էջ 43—45:*

*1. Մ. Թաղիադյանի աշակերտը, խաչկյան քահանայի եղբայրը:*

*2. Նամակը սխալմամբ թվագրված է 1856: Գրականության մեջ ընդունված է եղել այն կարծիքը, թե Թաղիադյանը Կալկաթայից Բոմբեյ է մեկնել 1857 թ. օգոստոսին: «Գարուն» ամսագրի 1971 թ. № 5—6 համարներում հրատարակված «Մ. Թաղիադյանի անհայտ թղթերի հետքերով» (հին ենթադրություններ, նոր փաստեր) հոդվածի հեղինակ Վիսլա Սեդրակյանը մեզ տեղեկացնում է Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու արխիվից հանած մի նամակի մասին, որը գրել է Բոմբեյի հայկական հոգևոր թեմի առաջնորդ Մարտիրոս ավագ քահանա Տեր Հովակիմյանը խաչկյան քահանային (1857 թ. սեպտեմբերի 8-ի թվագրությամբ): Ըստ այդ նամակի Թաղիադյանը Բոմբեյ պետք է մեկնած լինի ոչ թե օգոստոսին, այլ ավելի ուշ: Ծանոթագրվող նամակի բովանդակությունից էլ կարելի է ենթադրել նույնը: Սակայն քանի որ ընկ. Սեդրակյանի հայտնագործած նամակը դեռ հանձնըված չէ Մատենադարանին և հնարավոր չէ ստուգել տարեթիվը և ներկայացված տողերը, ապա այդ հարցի քննությունը պետք է թողնել ապագային:*

*3. «Գարուն» ամսագրում տպագրված վերոհիշյալ հոդվածի հեղինակը մեղադրում է Թաղիադյանի ժառանգությունն ուսումնասիրողներին, թե նոյեմբերի 25-ի նամակը ուշադրությամբ չընթերցվելու հետևանքով Թաղիադյանի 16 սնդուկների հարցը մնացել է չլուծված, և իբրև թե սույն նամակը ցույց է տալիս, որ նրանց մի մասը մնացել է Բոմբեյում: Տեսնենք թե հոդվածագիրը ի՞նչ փաստերի վրա է հենվում: Նախ հիշենք, որ Մեսրոպ Թաղիադյանը 1857 թ. հուլիսի 20-ին գալիս է Կալկաթա, աճուրդի է հանում իր տան կահկարասին, խաչկյան քահանային վաճառում տպարանը, իսկ ձեռագրերը և Արարատյան ընկերության տպագրած գըրքերը, նրանց թվում և իրենը, տեղավորում է 16 սնդուկների մեջ, վերջնական որոշում ընդունելով վերադառնալ հայրենիք:*

*Թաղիադյանի Կալկաթա լինելու միջոցին խաչկյան քահանայի եղբայրը՝ Մկրտիչ Խ. Հովակիմը (Մկրտիչ Հովակիմի խաչկյան) մի նավ է վարձում իր ապրանքները Բոմբեյ փոխադրելու նպատակով: Թաղիադյանն այդ նավով ձրի հասնում է Բոմբեյ: Իր նամակում Թաղիադյանը այդ մասին գրում է. «Միրզա Մահբուբ վաղ քաջ պատրաստեալ ինձ տեղի կելոյ ի Ղօլաբայ, տուն պարտիզաւոր յարդարեալ կարասեօք, իբրև տեղի զբօսանաց մերթ ընդ մերթ գայ իւրով բարեկամօք. սորա ի գալն ի նաւ՝ յետ ծանօթանալոյն ասաց ցիս մակուկաւ իջանել ի ցամաք. ելի և ես. հասոյց զիս կառօք իւրով ի Ղօլաբայ. խոստացաւ բեռինս իջուցանել յիւր գործատուն. յիշեաց զի և եթէ ունիցիմ ինչ պիտեան՝ ազդ արարից ինքեան. շնորհակալութիւն տալով յիշեցի միայն զհոգ ելանելոյ իմ աստի»: Սեդրակյանը այս հատվածը թարգմանել է այսպես «Միրզա Մահբուբ մերթ ընդ մերթ այցելելով ինձ. մի անգամ իր կառքով տարավ Ղօլաբայի իր պարտեզավոր տունը,* **խոստանալով բեռներս իջեցնել իր գործատունը**» *(ընդգծումը Սեդրակյանինն է—* Ռ. Ն.)*: Ինչպես տեսնում ենք, գրում է հոդվածագիրը, «Միրզա Մահբուբը իր այդ առաջարկով ակնարկում է Թաղիադյանի բեռները Բոմբեյում պահելու խոստման մասին»: Ո՞վ է իրավունք տվել հոդվածագրին նախ աղավաղել տեքստը և*

անել միանգամայն սխալ եզրակացություն։ Այստեղ հոդվածագրի հանցանքն ավելի է մեծանում, երբ նա հայտարարում է, թե նույն նամակում կան և այլ վկայություններ, որոնք հավաստում են Թաղիադյանի սնդուկները Բոմբեյում մնալու իր ենթադրությունը։ «Ի պարոն Յարութին Յորդանանէ և ոչ սակաւ գոհ եմ, վասն ստէպ այցելու ինձ լինելոյն սա ևս ինձ խորհրդատրէ խաղալ գնալ կողմամբ Պարսից, տեսցուք զո՞ր յաջողեցէ ինձ Տէրն»։ Սեդրակյանն այս տողերը թարգմանել է այսպես. «Պարոն Հարություն Հորդանյանից ևս ոչ սակավ գոհ եմ. ինձ հաճախակի այցելելիս նա ևս խորհուրդ է տալիս թեթև գնալ Պարսկաստանի կողմերը» (էջ 93)։ Ուրեմն ի՞նչ է ստացվում։ Որպեսզի հաստատվի հոդվածագրի վարկածը, նա վերցրել է և «խաղալ գնալ» գրաբարյան հայտնի դարձվածքը թարգմանել «թեթև գնալ»։ Որ Թաղիադյանը կարող էր սնդուկները կամ նրա մի մասը թողնել Բոմբեյում զարմանալի չէ։ Բայց ինչպես տեսնում ենք Թաղիադյանի գրած նոյեմբերի 25-ի նամակում նման ակնարկ չկա։ Այսպես, նամակի տեքստն աղավաղելով, «Գարունի» թղթակիցը հանդիսավոր կերպով հայտարարում է, թե «մնում է զարմանք ու ափսոսանք հայտնել, թե ինչպես բազմաթիվ ուսումնասիրողներ այս փաստերի վրա պատշաճ ուշադրություն չեն դարձրել» (էջ 93)։ Այս անգամ զարմանալու հերթը մերն է։

## 34. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐՅԱՆԻՆ

*16 ապրիլի, 1858, Բուշեր։*

*(էջ 457)*

Ինքնագիրը չի պահպանվել։ Արտագրված է վերոհիշյալ Վ. Սեդրակյանի կողմից, Կալկաթայի ս. Նազարեթի եկեղեցու արխիվում՝ Մեսրոպ Սեթի թղթերի մեջ պահվող Հովհաննես Շահնազար-Սարգսյանի արտագրած օրինակից (6-րդ դրապահարան, 2-րդ շարք, № 47/7, 12 թղթապանակ)*։ Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագիր, 1971, № 5—6, էջ 93—94։

1. Թաղիադյանի գրած 1857 թ. նոյեմբերի 25-ի նամակից մեզ արդեն հայտնի էր, որ Միրզա Մահրուբը հայտնել էր, որ հաջի Ալմասը մեկնում է Բուշեռ և խոստանում է Թաղիադյանին տանել «թեթև» վարձով։ Ինչպես տեսնում ենք, Թաղիադյանը այս նավով հասել է Բուշեռ։ Բոմբեյից մեկնելու և Բուշեռ հասնելու թվականները հայտնի չեն։ Սույն նամակից պարզվում է, որ ապրիլի 17-ին Թաղիադյանը պետք է դուրս եկած լինի Բուշեռից դեպի Շիրազ։

2. Վ. Սեդրակյանի տպագրած այս նորահայտ նամակը վերջապես ստույգ տեղեկություններ է տալիս Թաղիադյանի 16 սնդուկների ճակատագրի մասին։ Ինչպես պարզվում է նամակը հրատարակողի տված ծանոթագրություններից, այն արտագրվել է հեղինակի աշակերտ Շահնազար-Սարգսյանի կողմից և ուղարկվել Մեսրոպ Սեթին։ Ե՞րբ է նամակը հանձնվել ս. Նազարեթ եկեղեցու արխիվին. արդյոք Շահնազար-Սարգսյանը, Մեսրոպ Սեթը որոնումներ կատարել ե՞ն այդ ուղղությամբ, հայտնի չէ։

Կատարվե՞ց Թաղիադյանի ցանկությունը. Հարություն Արդարյանը ձեռք բերե՞ց Շիրազում մնացած սնդուկները, նույնպես հայտնի չէ։

3. «Գարունում» տպագրած տեքստի տակ սխալմամբ նշված է 1857։

---

* Այս աղբյուրը կասկած է հարուցում։ (Խմբ.)։

## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՕՐԱԳՐԻՑ

### 1. ՀՈՒՆԻՍ, 1831

*(էջ 461)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1849, հ. Բ, № 36, էջ 285—286։ Երկրորդ անգամ՝ Հովհ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, Թիֆլիս, 1886, էջ 87—88։*

*1. Մ. Թաղիադյանը Նոր Ջուղա է հասնում 1831 թ. մայիսի սկզբներին (Հ. Մկրյան, Կենսագրություն..., էջ 96)։*

*2. Խոսքը վերաբերում է «Ազգասէրի» 1849 թ. № 37-ում տպագրած օրագրական հատվածին։*

*3. Խոսքը 1820-ական թվականներին Նոր Ջուղայում հիմնված կաթոլիկ դպրոցների մասին է։*

### 2. ՋՈՒՂԱ, 1831

*(էջ 462)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1849, հ. Բ, № 37, էջ 294։ Երկրորդ անգամ՝ Հ. Մկրյան, Կենսագրություն...., էջ 89—90։*

*1. Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Հայս» (սույն ժողով. № 69 ծանոթագրութ.)։*

*2. Ներսես Շնորհալու հոգեզալստյան շարականը։*

*3. Թաղիադյանը էջմիածին է հասնում 1831 թ. նոյեմբերի 8-ին։*

### 3. ԱՆՑՔ
### 1833, <ՄԱՅԻՍԻ 9>, ԷՋՄԻԱԾԻՆ

*(էջ 463)*

*Ինքնագիրը պահվում է՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 9, էջ 101—103։ Տպագրվում է առաջին անգամ*։*

*1. 1827 թ. օգոստոսի 17-ին Օշականի ճակատամարտում ընկած ռուս զինվորների հիշատակին՝ 1833 թ. մայիսի 9-ին հիմնարկված հուշարձանի բացումը տեղի է ունեցել մի տարի անց՝ օգոստոսի 17-ին։*

2. Միքայել վարդապետ Սալլանթյան *(վախճ. 1851 թ.)—սովորել է Հռոմում, դավանությամբ սկզբում կաթոլիկ, հետո լուսավորչական։ 1815 թ. եկել է Թիֆլիս, հետո գնացել Մոսկվա, երկար տարիներ դասավանդել Լազարյան ճեմարանում։ 1833 թ. ապրիլին Սալլանթյանը էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս։*

### 4. 1833, ՀՈՒՆԻՍ, ԷՋՄԻԱԾԻՆ

*(էջ 467)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1850, հ. Բ, № 42, էջ 336։ Երկրորդ անգամ՝ Հովհ. Մկրյան, Կենսագրություն..., էջ 90—91։*

*1. «Ազգասէր Արարատեան» 1852, էջ 687-ում «Հայաստան» վերնագրով հոդվածի վերջում Թաղիադյանը գրում է. «Անդ մեծի խրախճանին ներկա պա-*

---

** Հայտնի են այս օրագրության ուրիշ արտագրություններ ևս Լենինգրադյան մարզի պետական արխիվում և ԳԱԹ-ում։ (Խմբ.)։*

*տանել և մեզ՝ բազում սախրանօք յառևան կացար և գրեթէ յանակնկալ ամենեցունց՝ ստացայ գտանել իմն բառ պատշաճի ասելոյն: Ամենայն բազմութիւնն ծափահար ցնծութեամբ գովեաց զայն, և իշխանն Բեհբութեանց գահագլուխ ամենեցուն բառ որում մարզպան նահանգին յառն յարեաւ, կալաւ զձեռանէ, տարաւ բազմեցոյց յաջմէ իւրմէ և ծանուցեալ բազմականին հրամայեաց բանալ զշամբէյն գինի և ըմպել ամենեցուն ի կենաց մեր և ի շնորհաւորութիւն դարձի մերոյ ի Հայրենիս»: Մ. Թաղիադյանի ձեռք պահվում է Մատենադարանում՝ Ալ. Երիցյանի հավաքածու, թ. 148, վ. 10:*

*2. 1831 թ. նոյեմբերից մինչև 1832 թ. փետրվար ամիսը էջմիածնում անգործ թափառելուց հետո, վերջապես կաթողիկոսը թույլ է տալիս Թաղիադյանին դպրոց բացել էջմիածնում, սակայն առանց վարձատրության: Հետագայում Թաղիադյանը կասկածի տակ է առնվում իբրև բողոքական մտքի տարածող. նրա դեմ սկսվում է հալածանք, որը և ստիպում է նրան 1832 թ. ապրիլի 1-ի գիշերը գաղտնի հեռանալ էջմիածնից՝ Երևան: Այստեղ նա անց է կացնում տանջալից ամիսներ: Կաթողիկոսը արգելում է թողնել ռուսական սահմանները, երկար բանակցություններից հետո տեղի է ունենում հաշտություն Հ. Կարբեցու և Թաղիադյանի միջև: Նա վերադառնում է էջմիածին: Պայմանագիրը կնքվել է այդ հաշտությունից հետո:*

## 5. «1831. ՆՈՐ ՋՈՒՂԱ»

*(էջ 468)*

*Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1851, էջ 517. այնուհետև՝ Հ. Միրզյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 95—96:*

*1. Խոսքը վերաբերում է երկրորդ անգամ Նոր Ջուղա գնալուն: Այդ առթիվ Թաղիադյանը գրում է. «Յայսու ժամանակաւ նուաստութիւն մեր ի Տփխիս էր հրաւիրանօք բարոն Ռոզենի ընդհանուր կուսակալի յանկոյս Կովկասու եղեալ նահանգացն առ որ գրեցին սրբազան Կաթողիկոսն և սուրբ խորհրդարան աթոռոյն: Մոռացեալ խոկոյն զՏփխիս և զամենայն հեշտալիս նորան վասն հասարակաց օգտի՝ դարձ արարաք ի սուրբ էջմիածին և քահանայապետական կոնդակաւ վերահաստատեցաք ի վարժապետութիւն Նոր Ջուղայ» («Ազգասէր Արարատեան», 1851, Հ. Գ, № 65, էջ 516):*

*2. Թաղիադյանը Նոր Ջուղայի դպրոցի տեսչի պաշտոնը վարում է մոտ երկու տարի: Նախկին աշակերտներից Հովհան Հարությունյանը գրում է. «Ընթացս պարոն Մեսրոպի վարժապետ լինելն բէկօրն ցրնծմանէր յաւէտ քան 150 աշակերտ կային, որոց յաւել պակաս 15 անձիք հատակատր պարնայր քերականութիւն ուսանեն, վեց քահանայք երկու վարժապետ են» (Հովհ. Շահնազար Սարգսյանց. Դիտողագիր, 1888, էջ 38):*

*3. Մադրասաբնակ հայտնի վաճառական Գրիգոր Սամյանը 1832 թ. կտակում է 20000 ռուփի՝ Նոր Ջուղայում իր անունով դպրոց հիմնելու համար: Կտակում ասված է. «Ըստ փափագանաց և ցանկութեան սրտի իմոյ հաստատելոյ դպրատուն մի ի Նորն Ջուղայ վասն ուսուցանելոյ հայ մանկանց զարհեստ քերականական և թուաբանական, թողում և տամ 20 հազար Մադրասի ռուփի, այսպէս՝ զի յետ սոյն դպրատանն հաստատելոյն, սոյն գումարի տարեկան եկամուտն՝ ութն հարիւր Մադրասայ ռուփին կատարարքն իմ զգուշութեամբ յամենայն տարաւէրց հասուցանիցեն ի Ջուղայ բնակեալ վերակացուաց և կառավարչացն դպրատան՝ մին*



38—739

*...ամ և նա 6 ամաց եղէ առացեալ դպրատունն ամենայնիւ բարւոք ընթացիւք և կարգադրութեամբ յառաջացուցի նոցանէ, կարգեալ տեսչակալք և գործակատարքն ասա ստացեն ի կտակակատարացն իմոց վայն գումար քան հազար Մադրասայ ռուփիս» (Հար. Տեր Հովհանյան, Պատմություն Նոր Ջուղայի, հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 255)։*

*4. 1836 թ. մայիսի 5-ին Թաղիադյանը թողնում է Նոր Ջուղան և կնոջ հետ գնում է Թավրիզ։ (Նոր Ջուղայում տեղի ունեցած իրադարձությունների մասին տե՛ս սույն ժողովածուում Թաղիադյանի 1836 թ. մայիսի 5-ի նամակը)։*

## 6. 1838, <ՄԱՅԻՍ>

*(էջ 468)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1845, № 5, էջ 39։ Երկրորդ անգամ՝* Հ. Մկրյան, *Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 100—104։*

1. *«Թուղթ Թաղիադեան» ժողովածուի առաջաբանում Թաղիադյանը գրում է, որ 1838 թ. համբարձման տոնից 8 օր առաջ (այսինքն մայիսի 4-ին) ինքը իջևանել է Պոլսի Սրբոց խան պանդոկում։*

2. Ստեփաննոս Զաքարյան արքեպիսկոպոս Նիկողիմիացի—*Աղավնի մականունով, Հայոց պատրիարք (1831—1839)։*

3. Միդաս—*փռյուգիական առասպելական արքա։ Դիոնիսիոս աստվածը օժտել էր նրան մի հատկությամբ՝ ինչին դիպչի ոսկի դառնա։ Ուստի նա դատապարտված էր սովամահության։*

4. *Եփրեմ կաթողիկոսը վախճանվել է 1835 թ. հուլիսի 16-ին* (Օրմանյան, *Ազգապատում, 3, էջ 5672)։ Տեքստում նկատելի է ինչ-որ թյուրիմացություն։*

## 7. ՈՒՐՈՒԱՇԷՆՔ

*1839, 9 հուլիսի*

*(էջ 471)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1846, հ. Գ, № 53, էջ 6—8։*

1. *1839 թ. մայիսի 14-ին Թուրքիան պատերազմ է հայտարարում Եգիպտոսի իշխան Մեհմեդալի փաշային։ Հունիսի 19-ին Այնթապի ճակատամարտում թուրքերը պարտվեցին։ Հունիսի 29-ին վախճանվեց Թուրքիայի սուլթանը։ Հուլիսի 3-ին գահ բարձրացավ նրա որդին՝ Աբդուլ Մեջիտը։ Թաղիադյանի մատնանշած հրովարտակը վերաբերում էր Աբդուլ Մեջիտի կնքած խաղաղության դաշինքին։*

2. *Անաստաս Ակոռեցի կաթողիկոս (661—627)։*

## 8. <1839>

*(էջ 473)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր Արարատեան», 1849, հ. Ա, № 25, էջ 198։ «Զբնական հանճարոյ երիվարին Աշխույժ անուն՝ յօրագրէ միում» խորագրով։*

1. *Պոլսից Հնդկաստան վերադառնալիս Թաղիադյանը հանդիպում է մեծ պատահարների։ Օրագրական այս վերհուշը նկարագրում է իր հետ պատահած դեպքերից մեկը։*

## 9. ՄԱՅԻՍԻ 30, 1840

*(էջ 474)*

*Տպագրվել է՝ «Ազգասէր», 1847, հ. Դ, № 91, էջ 150—152։*
*Հովհաննես Մկրյանն իր կազմած «Կենսագրության» մեջ նշում է, որ Թաղիադյանը Հնդկաստան է վերադարձել 1839 թ. վերջին։ Ներկա հատվածը ցույց է տալիս, որ նա Կալկաթա է եկել ավելի ուշ և մի քանի ամիս թափառել է անօթևան։*

*2. Հովհաննես Աբգարյան մեծահարուստ վաճառականը այդ շրջանում հովանավորում է նրան։ Նրա միջոցներով Թաղիադյանը հրատարակում է Հնդկաստանի պատմությունը, «Մեսրովբեան Այբբենարանը» և «Մեսրովբեան շարադրիչը»։*

# ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

## 1. Ս. ՑՈՎՀԱՆԸ Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԻՆ

*27 հունվարի, 1826*

*(էջ 479)*

*Այս, ինչպես և հաջորդ վավերագրի ինքնագիրը պահվում է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի հաշվապահական մատյաններից մեկում (էջ 45 և 82)։ Արտագրել և մեզ է տրամադրել Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտ-աշխատող, պատմական գիտությունների դոկտոր Հակոբ Փափազյանը։ Հրատարակում ենք այդ պատճենները։*

1. *Թաղիադյանի այդ խնդրագիրը մեզ անծանոթ է։*

2. *Հայտնի չէ, թե 1825 թ. ո՞ր ամսին է Թաղիադյանը ընդունվել Կալկաթայի Մարդասիրական ճեմարանն իբրև ուսուցիչ։ (Տե՛ս* Հ. Մկրյան, *Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, էջ 71)։*

## 2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՈՒՑՅԱՆԸ Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԻՆ

*10 դեկտեմբերի, 1830*

*(էջ 479)*

*Ինքնագիրը պահվում է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի հաշվապահական մատյանում, էջ 82։*

1. Հարություն Գալուցյան Սվդոկիացի—*Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի երկրորդ հոգաբարձուն, հայոց լեզվի ուսուցիչը։ Մինչ ճեմարան գալը պահել է մասնավոր դպրոց։*

2. *«Դիցաբանութիւնք» լույս է տեսնում 1830 թ. Կալկաթայում։*

## 3. Մ ՄՍԵՐՅԱՆԸ ՀՈՎՀ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆԻՆ

*5 մարտի, 1832, Թիֆլիս*

*(էջ 480)*

*Ինքնագիրը չի պահպանվել, տպագրվել է՝ «Փարոս», 1876, տետրակ Ե, էջ 22—23։ Արտատպում ենք կրճատումներով։*

1. *1832 թ. փետրվարի 8-ին Մ. Սալլանթյանը գրում է Խ. Աբովյանին. «Մես-*

րովք Թաղիադեան եկեալ ի Հնդկաստանէ յօգուտ բերեալ զվեց բևեռնս զրոց տպարան և զդրամս բարերարի ուրուք ի կանգնել զդպրոց Հայոց յԵրևան: Եւ ժամանակ մի կարգեալ է վարժապետ ի գիւղն աթոռոյն 120 թումանով տեղւոյն ի տարեկան թոշակ իւր ի նոր կաթողիկոսէն» («Դիվան Խ. Աբովյանի», Հ. 2, էջ 115): Թաղիադյանը Էջմիածին է հասել ո՛չ թե օգոստոսին, այլ նոյեմբերին և ուսուցչություն է արել առանց որևէ վարձատրության:

2. Մ. Մսերյանի գրած նամակը մեզ չի հասել: Հայտնի է, որ Թաղիադյանի Էջմիածնում եղած առաջին ամիսներին Ա. Արարատյանը և Մ. Մսերյանը ջանացել են նրան ներքաշել «Ուխտի միաբանության» մեջ, այդ մասին հաղորդել են Մ. Սալլանթյանին և Խ. Աբովյանին:

3. Ակնարկում է Շահխաթունյանի 1832 թ. փետրվարի 13-ի նամակի հետևյալ տողերը. «Մեսրովբ Թաղիադեանց յետ մուտ գործելոյ այսր յԵրևան, մնայր անգործ. այլ ի սկիզբն այսր ամի պաշտպանեալ ի նորոյ կաթողիկոսէ և եթ՝ կարգացաւ ուսուցիչ սարկաւագաց և դպրաց սրբոյ Աթոռոյս, որու զիարդ ծանուցից զինի. յայտնի են Ձեզ սէր իմ, զի նորաձևութիւն հանդէրձի և արտաքին շարժմունք չեն ինչ առ իս, և չհայիմ յայնս ի խափան հարկաւորացն ազգի և հայրենեաց և այլն» (Ա. Սեդրակյան. Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, 1898, էջ 33):

4. Նամակից երևում է, որ Թաղիադյանը հետաքրքրվել է «Ուխտի միաբանությամբ», բայց չի հասցրել խորանալ հարցի մեջ:

## 4. ՀՈՎՀ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆԸ ՄՍԵՐ ՄՍԵՐՅԱՆԻՆ

9 ապրիլի, 1832. Էջմիածին

(էջ 480)

Ինքնագիրը չի պահպանվել, տպագրվել է կրճատումներով Ա. Սեդրակյանի «Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրության» մեջ, էջ 33—35:

1. Ակնարկում է 1832 թ. ապրիլի 1-ի փախուստը Երևանից:

## 5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻՆ Վ. ԲԵՀԲՈՒԹՅԱՆԻՆ

<ապրիլ, 1832>

(էջ 481)

Տպագրվել է Ա. Սեդրակյանի «Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը» գրքում, կրճատումներով (էջ 239—241):

1. Կաթողիկոսի կարգադրությամբ Թաղիադյանը զրկվում է արտասահման մեկնելու համար անցագիր ստանալու իրավունքից:

## 6. ԵՐԵՎԱՆԻ «ԵՐԵՎԵԼԻՆԵՐԸ» ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

<ապրիլ, 1832, Երևան>

(էջ 483)

Ինքնագիրը պահվում է Մատ., Կ. Դ., թ. 73 վ. 75:

Տպագրվել է Ա. Սեդրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 241—242, որտեղից և արտատպվում է:

1. Գավառական դպրոցը բացվել էր 1832 թ. հունվարի 14-ին:

2. Այս խնդրագրին Սինոդի անունից տրվում է հետևյալ պատասխանը. «Ըստ գրութեան ձերոյ անխափանելի և առանց ամաց յանուն Տեառն Յովհաննու աստուածաընտիր և կայսերապատիւ կաթողիկոսին ամենայն Հայոց:

Սրբազան Սինոդոսն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի ըստ հրամանի Նորին Վեհափառութեան պատասխանէ Ձեզ. թէ Մեսրովբ Թաղիադեանն ելեալ աստի ըստ անկարգութեան իւրոյ առանց օրհնութեան, է անձնիշխան յամենայն գործողութիւնս իւր, վասն որոյ կամի մնալ յԵրևան և լինել ուսուցիչ ի վարժարանին արքունի, կարէ ինքնին լինել խնդրամատոյց Նորին պայծառութեան ըստ հասարակաց կարգին: Թէպէտ Նորին Վեհափառութիւն ոչ ցանկայր կատարել խնդիր ձեր ըստ մասին Մեսրովբայ Թաղիադեանց, բայց արդ՝ հետև առժամանեալ կան ինչ ինչ արդշակի կանոնք վասն կարգելոյ զվարժապետս յուսումնարան արքունի, վասն որոյ և անպատեհ թուի Սրբազան Ատեանի նորին բացարձակ գրութեամբ խնդրել ի նորին պայծառափայլութենէ, զանշուշտ կարգումն Թաղիադեանի ուսուցիչ արքունի վարժարանին Երևանու» (Տե՛ս Ալ. Երիցյան, Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, էջ 242—243): Ուսուցչի պաշտոն Թաղիադյանին չի տրվում:

## 7. Վ. Հ. ԲԵՀԲՈՒԹՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

23 փետրվարի, 1834, Երևան

(էջ 483)

Ինքնագիրը պահվում է՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 80, էջ 6—7: Տպագրվում է առաջին անգամ:

1. Իշխան Վ. Հ. Բեհբության (1791—1858)—ցարական գեներալ, մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին. 1829—1838 թթ. եղել է Հայկական մարզի կառավարիչը: Հայտնի է եղել իր արտակարգ դաժանությամբ: Բեհբությանը պահանջում էր Թաղիադյանին՝ Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի համար անգլերեն լեզվից պաշտոնական թղթեր թարգմանելու համար:

## 8. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻՆ ԲԱՐՈՆ ՌՈԶԵՆԻՆ

13 մարտի, 1834, Էջմիածին

(էջ 484)

Ինքնագիրը պահվում է ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 80, էջ 5: Տպագրել է Ռ. Նանումյան, Մեսրոպ Թաղիադյան, էջ 138—139:

1. Թաղիադյանն Էջմիածին է եկել ինքնակամ, կաթողիկոսը ցանկացել է բողոքել իր արարքը:

2. Փակագծի միջինը ջնջված է:

## 9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՎ ՀԱԿՈԲՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑՈՒՆ

16 մարտի, 1834, Նոր Ջուղա

(էջ 486)

Տպագրել է՝ «Ազգասէր Արարատեան», 1851, № 65, էջ 516:

1. Նոր Ջուղայի թեմի առաջնորդը:

2. Հակոբոս — գիտնական վարդապետ, մինչև 1824 թ. եղել է Հնդկաստանի նվիրակը: Այնուհետև գալիս է Նոր Ջուղա: Վախճանվել է 1839 թ.:

3. 1834 թ. փետրվարի 21-ին Նոր Ջուղայի հասարակության ժողովը Նորաբաց դպրոցի համար ընտրում է հոգաբարձություն: Որոշում է ընդունվում հրավիրել Մեսրոպ Թաղիադյանին դպրոցի տեսչի պաշտոնով: Պարապմունքները ժամանակավորապես հանձնարարվում է Հակոբոս վարդապետին:

## 10. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԲԵՑԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

*8 հունիսի, 1834, Էջմիածին*

*(էջ 487)*

*Տպագրվել է «Ազգասէր Արարատեան», 1851, N°65, էջ 516—517:*

*1. Տե՛ս նախորդ փաստաթուղթը: Սինոդին ուղղած խնդրագիրը մեր ձեռքի տակ չկա:*

## 11. ՆԱՄԱԿ «ԱԶԳԱՍԷՐԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

*29 հունվարի, 1846, Կալկաթա*

*(էջ 488)*

*Տպագրվել է «Ազգասէր», 1848, հ. Ե, N 129, էջ 37—38:*

*1. «Հայաստան» լրագիրը հրատարակվել է 1846—1852 թթ. Պոլսում, իբրև շաբաթաթերթ: Թերթի խմբագիրը սկզբում Հ. Զամուրճյանն էր, հետո՝ Մկրտիչ Աղաթոնը:*

*2. «Ազգասէրի» 1847 թ. N 22 էջ 75-ի առաջնորդողում Թաղիադյանը գրում է, որ սիրով ձեռնարկել է «Հայաստանի» բաժանորդագրությանը, «եթէ ազգասիրական եռանդ և սէրն հայրենեաց, որ յաւժան ի հեռաստանէ թափ անցանել և միանալ գուն գործել հաղորդակցութեամբ ընդ հեռաւոր հայրենակցաց այսպիսի անակնկալ փոխարինութեան ընկալցի»:*

## 12. ԱՌ ՅԱՐԳՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ»

*(էջ 489)*

*Տպագրվել է «Արշալոյս Արարատյան» 1858, N° 583, հոկտեմբերի 31: Արտատպվել է «Հյուսիսափայլ», 1859, N° 9-ում: (Տե՛ս* Մ. Նալբանդյան. *ԵԼԺ, հ. 1, էջ 267—272):*

1. Թադեոս խան Ավետումյան — *Հնդկահայ վաճառական, գրող, «Ազգասէր» և «Ազգասէր Արարատեանի» աշխատակից, Արարատյան ընկերության հիմնադիր անդամներից, Թաղիադյանի բարեկամն ու մտերիմը:*

*2. Մ. Նալբանդյանը գրում է. «Զարմանալի բան է. այս մարդու (Թաղիադյանցի) և Աբովյանի կյանքը շատ նմանություն ունին միմյանց: Երկուքը ևս դուրս գալով Էջմիածնից գնում են օտար և հեռավոր աշխարհներ և ուսանելով իսկույն վերադառնում են Էջմիածին: Ինչո՞ւ համար. մի դպրոց հիմնարկելու, ստացած լույսը ազգի մեջ տարածելու համար: Աբովյանը կատարեց երկրորդ անգամ փորձը, որի առաջինը կատարել է Թաղիադյանցը: Սա վերադարձավ Էջմիածին Հովհաննես կաթողիկոսի ժամանակ (1835—1840) և աղաչելով պատա-*

տելով, սորան միջնորդ և մյուսին բարեխոս բռնելով կարողացավ որպես գլխավոր ուսուցիչ մտանել էջմիածնի դպրոցը: Բայց ինչ ուսուցչություն. ի՞նչ եղավ այս եռանդոտ ջանքի հետևանքը: Կարճ միջոցում ստացավ նա, ինչպես սովորական է հայերի մեջ, մի ահագին բազմություն թշնամիների, որոնցից գլխավորք էին Սյունհոդոսի պրոկուրոր Ղորղանյանցը* և ատենադպիր Քարտաշյանցը: Ինչ գրպարտություններ, ինչ հալածանք բարձրացավ այնուհետև խեղճ Թաղիադյանցի վերա: Ցուրտ սենեկի մեջ, փայտ չէր ստանում վառելու, ահա մինչև այս վիճակին հասավ նորա թշվառությունը: Ոչ որ տաք սրտով արժան չէր համարում նայել դպրոցի և հետևաբար նորա գլխավոր վարժապետի կամ կառավարչի վերա: Հովհաննես կաթողիկոսի իշխանությունը հասած էր վերջին աստիճանի թուլության: Ութերյանց (այսպես անվանում էին էջմիածնումը այն 8 արեղաներին, որ ապըստամբել էին կաթողիկոսից և բողոք էին գրել դեպի ռուսաց տերությունը): Վճռական գործակատարությունը չվարեցուցել էր Հովհաննես կաթողիկոսը և ամենամերձ եպիսկոպոսք, որք դեռևս բարեբարված էին կաթողիկոսից, հարազատ չէին սորան. Թեպէտ առ երես բարեկամ գործակից Քարտաշյանցը սկսել էր մի երկար ու ձիգ կռիվ Ներսես առաջնորդի հետ, լուսավորչական և գրիգորյան Սյունհոդոս և Սինոդ բառերի մասին: Ներսես արքեպիսկոպոսը գրում էր ի Գրիգորյան Հայոց Սինօդն, Քարտաշյանցը պահանջում էր, որ գրե ի Լուսավորչական Հայոց Սյունհոդոսն: Սոցանից ջոկ ուրիշ այլ բաների մասին, մինչև որ բողոքել դեպի մինիստր Բլուդովը: Ներսես սրբազանի պատասխանը այս բողոքի ընդդեմ հասավ Բլուդովի հաջորդի՝ կոմս Պերովսկու ձեռքը: Շատ չանցավ սորա վերայով, Ներսեսը կաթողիկոսացավ, և Քարտաշյանցը իսկույն դուրս եկավ սյունհոդոսի ծառայությունից: Ինչևիցե: Ահա այսպիսի մի ժամանակում կացավ Թաղիադյանցը էջմիածին: Վերջապես տեսանելով, որ ոչինչ հնար չկար մնալու, ստիպեցավ վերստին դուրս գալ Աթոռից:

Մի փոքրիկ անցք, որ պատահում է սույն այս միջոցում, ավելի ճշգրիտ պատկեր է տալիս Թաղիադյանցի վառ աշխույժի մասին: Վերջին անգամ գնում է Հովհաննես կաթողիկոսի մոտ հրաժարական ողջույն տալու: Վեհարանում գտնվում էն եղած, հին ժամանակներից կաթողիկոսին ընծա ուղարկված ճախարակյա մարմարինյա թրամաններ: Սոցանից մի փոքր և գեղեցիկը կաթողիկոսի սարկավագը շինել է թանաքաման: Թաղիադյանցը, տեսանելով այս փոխարկությունը թրամանի դեպի թանաքաման, անպատրաստից ասում է հետևյալ ոտանավորը.

«Երբ թրաման, թանաքաման
Դարձեալ եկես այս Վեհարան.
Զի՞նչ այլ քեզ յոյս սաալն մնայ,
Մեսրոպ Դաւթեան Թաղիադեան»:

(Տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 267—268):

3. Մ. Նալբանդյանը բաց է թողել Թ. խան Ալիեռոմյանի բանաստեղծության վերջին 40 տողը: «Զարչարին տարօրինակ» տողից հետո գրում է հետևյալը. «Այսվերջին պարբերությունը համարյա թե նույն խոսքերն են, որ Եվժեն Սյու ֆրանսիական հեղինակի «Թափառական հրեայի» մեջ խոսում է ինքը թափառական հրեան: Սորանից հետո չարունակված քանի մի այլ պարբերությունը հարակցությունը չունենալով Թաղիադյանի հետ, հարկավոր չհամարեցի դուրս գրել»:

---

* Թովմա Ղորղանյանը էջմիածնում պաշտոնավարել է Թաղիադյանից հետո (ծան. խմբ.):

Անհասարակ, թող հանի պարոն Ավետումյանը ընդունել իմ առ ի սրտե անկեղծ շնորհակալությունը այս հոդվածի մասին, որով կամեցել է պատվել մեր քանքարավոր հեղինակի հիշատակը: Շնորհակալություն և Արշալույս պատմական օրագրին, որ յուր թերթերի վերա հասուց մեզ գույս թեև ափսոր, բայց սրտերիս խիստ մոտ ծանոթությունը: Աղաչում եմ Արշալույսը, միջնորդ լինել իմ և պարոն Ավետումյանի մեջ, և իմ շնորհակալությունը հայտնել նորան նույնպես Արշալույսի միջնորդությամբ: Խորհուրդս այն է, որ հարգելի պարոնը մխիթարվի, լսելով, որ յուր ողբացած Թաղիադյանցի հիշատակը հարգելի է մեզ բոլորիս և թե նորա գեղեցիկ հոդվածը զուր չէ գրված հայերի համար:

Աղաչում եմ և Զուգայու Սուրբ Ամենափրկիչ անունով վանքի սրբազան առաջնորդը աշխատություն հանձն առնուլ հոգաբարձու լինել, որ Թաղիադյանցի գրչագիր մնացած աշխատությունքը պահպանվին կորստի և ժամանակի երեսից:

Ցավելի բան. հայերի անգրասիրության մեղքից հառաջացած մի դառն հետևանք, որ մեր հեղինակներից (հին և նոր) շատերի աշխատությունք ծնանելով, այլ դեռևս տպագրականի լույս չտեսած դատապարտվում են ցեցի մաշակատապարտվում են, որ վանական խցերի անկյուններում թաղվին փոշիների տակ և որդերի ու ցեցերի ուտելիք:

(Նույն, հ. 1, էջ 271—272):

## 12. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԲՅՈՒՐԱԿՆԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

(էջ 494)

Տպագրվել է «Բյուրակն», 1892, № 202, էջ 301—304, որտեղից և արտատպվում է:

1. Հովհ. Միրյանի նամակը տպված է նույն լրագրի (№ 201) «Մազումն և ընթացքը ավետարանականության ի Հայս» հոդվածում Թաղիադյանի մասին տրված սխալ տեղեկությունների առթիվ:

1. Թաղիադյանի կենսագիր Հովհ. քահանա Միրյանը ծնվել է 1831 թ. Պոլսում, 1866-ին օծվել է քահանա, 7 տարի վարել է Պոլսի պատրիարքության փոխանորդի պաշտոնը: 1878 թ. նա գնում է Լոնդոն, ներկայացնում Հայաստանի վիճակի մասին կազմած Տեղեկագիրը: 1886 թ. տպագրվել է «Կենսագրություն Մ. Դ. Թաղիադեանց վերնագրով ընդարձակ ուսումնասիրությունը: Հետագայում Միրյանը Թավրիզից ստացած նոր նյութերի հիման վրա պատրաստում է Թաղիադյանի ընդարձակ կենսագրությունը, որը մնացել է նրա արխիվում:

2. Ֆիլիպոս Փոզանը իր ժամանակի խոշոր գիտնականներից էր: Նա ևս Թաղիադյանի հետ նույն ժամանակ հեռացվում է քաղաքից, իբրև «բողոքականների տարածող»: Հետագայում Թաղիադյանն անդրադառնալով այդ օրերին հիշում է և Ֆիլիպոս Փոզանին (Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1849, № 33, էջ 261):

## 13. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐՅԱՆԻՆ

25 նոյեմբերի 1886, Բաթավիա

(էջ 500)

Տպագրվել է «Պատմագիր Հովհ. Շահնազար-Սարգսյանց» գրքույկում, էջ 9—37: Հեղինակը Թաղիադյանի սիրելի աշակերտներից է եղել:

1. Նկատի ունի Հովհաննես Խաչկյան քահանային (Տե՛ս Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, Թիֆլիս, 1886, էջ 10—51)։
2. Պետք է լինի՝ 1831։
3. Տե՛ս «Դիտողագիր» Հովհ. Շահնազար-Սարգսյանի, 1888, Պոլիս, էջ 15, 16։
4. Հովհ. Շահնազար-Սարգսյանի ակնարկած տետրակը Հովհ. Մկրյանը տպագրում է Պոլսում, 1886 թ.։

## 15. ՀՈՎՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

*19 հոկտեմբերի, 1886, Բաթավիա*

*(էջ 520)*

*Տպագրվել է իբրև հավելված «Դիտողագիր Հովհաննես Շահնազար-Սարգսյան» գրքույկում, էջ 38—39։*

*1. Հովհաննես Շահնազար-Սարգսյանը 1886 թ. հոկտեմբերի 18-ի նամակով դիմում է իր զարմիկ Հովհան Հարությունյանին՝ Թաղիադյանի մասին հիշողությունները գրելու խնդրանքով։ Նույն նամակը պատասխանն է այդ խնդրանքի։*

## 16. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀՆԱԶԱՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

*5 նոյեմբերի, 1886, Բաթավիա*

*(էջ 521)*

*Տպագրվել է իբրև հավելված «Դիտողագիր...» գրքույկի, էջ 40։*

## 17. ՄԵՍՐՈՊ ՍԵԹ, «ԴՐԻՉ ՈՍԿԵԳՐԻՉ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ ԹԱՂԻԱԴՅԱՆ» ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ՎԵՆԵՏԻԿ, 1926

*(էջ 524)*

*Տպագրում ենք կրճատումներով։*

1. Մեսրոպ Հակոբի Սեթյան—*Թաղիադյանի կնոջ՝ Թանգամի եղբայրորդին, որին է Հնդկահայերի պատմությունը, համարում է իրեն Թաղիադյանի աշակերտ՝ պատմագրության բնագավառում։ Նախորդ ծանոթագրություններից երևում է, որ նա զբաղվել է Թաղիադյանի ձեռագրերի որոնումով և Հովհ. Մկրյանին է ուղարկել մի շարք նամակների և օրագրերի պատճեններ։ Մանրամասնությունները տե՛ս վերևում, Թաղիադյանցի 1837 թ. հունիսի 23-ի նամակին կցած մեր ծանոթությունները, նաև՝ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի հավաքածու, № 10110, 10123, Մ. Սեթյանի նամակները Հովհ. Մկրյանին։ Նույն աղբյուրից պարզվում է, որ Թ. Խ. Ավետումյանի մոտ եղել է նաև անգլերեն-հայերեն մի բառարան և բանաստեղծությունների մի տետրակ, ինչպես և հատվածներ «Սոս և Սոնդիպիից», «Թուղթ Թաղիադյանց» ժողովածուից։ Ուղարկված նյութերը ինչպես և ինքնագրերը առայժմ համարվում են կորած։*

*2. 1892 թ. Մ. Սեթը գրում է քահանային՝ քանի որ Թաղիադյանը չի ունեցել*

իր լուսանկարը. ինքը որոշել է կաղապարի վրա անմահացնել նրա սատրապությունը (տե՛ս «Գրիչ Ոսկեգրիչ Մատենագրին...» գրքույկի առաջին էջը)։

3. Թաղիադյանն ամուսնացել է Թանկի հետ 1834 թվականին։ Վերջինս վախճանվել է 1837-ին։

4. Վրիպակ է։ Թաղիադյանը Կալկաթա է վերադարձել 1840 թ. մարտին։

5. «Բազմավեպ», 1918, էջ 187—194։

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*


*Աբբաս Միրզա 41, 66, 100, 138, 191, 214, 215, 251, 255, 256, 258—261, 263, 353, 355, 356, 386, 463, 464, 542*

*Աբգարյան Հարություն 453, 457, 507, 509, 595*

*Աբդլազիզ (Աբդուլ Ազիզ) սուլթան 95*

*Աբդուլլա աղա 41*

*Աբեղյան Մ. 558*

*Աբլհան էմիր 551*

*Աբովյան Խ. 346, 350, 351, 543, 544, 548, 552, 554, 578, 580, 595, 596, 598*

*Աբդուլ Մեջիդ 594*

*Աբրահամ 333, 334, 349, 559*

*Աբրահամ Գ. Կրետացի կաթողիկոս 122, 549*

*Աբրահամ սարկավագ Աստվածատրյան 188, 556*

*Աբրահամ վարդապետ Բյուրականցի 357, 358, 379, 410, 490, 495, 566, 568, 569*

*Աբրահամյան Ռ. 568*

*Աբութալիբ 216*

*Աբուսլուփ էմիր 551*

*Ագաթանգեղոս 37, 73, 96, 239, 246, 248, 312, 321, 407*

*Ագեսիլայոս 405*

*Ադամ 36, 56, 66, 109, 235, 451*

*Ադամ, Հարյուրապետ 482*

*Ադատյան Բ. 540, 554, 583—585*

*Ադերբադ 234*

*Աթարեգյան Հովհաննես 163, 553*

*Ալամդարյան Հարություն 172, 554*

*Ալավերդի 163, 166*

*Ալդրովանդոս 308*

*Ալեքսան սարկավագ 481*

*Ալեքսանդր 416*

*Ալեքսանդր Ա. Ջուղայեցի կաթողիկոս 407, 571*

*Ալեքսանդր Առաջին 154, 163, 553, 579*

*Ալեքսանդր Բագրատիոն 168, 544*

*Ալեքսանդր Մակեդոնացի 66, 305, 312*

*Ալեքսանդրյանց Քերովբե 498*

*Ալի 216, 217, 518*

*Ալի 213*

*Ալիշան Ղ. 549—551*

*Ալի փաշա 441*

*Ալկիբիադես 405*

*Ալփ-Արսլան 66, 197, 556*

*Ակբար թագավոր 370, 568*

*Ակինյան Ն. 551*

*Ահարոն վարդապետ 186, 556*

*Ահմադ 475*

*Ահմադ խան 148, 157*

*Ահմադ, քուրդ իշխան 128*

*Ահրիման 242*

*Աղաբեգ Ա. 539*

*Աղաբեգ Մ. 539*

*Աղաբեգ Պ. 539*

*Աղաբեգյան Ա. 395*

*Աղաբեգյան Կ. 539*

*Աղաբեգյան Հ. 538*

*Աղաբեգյան Մ. 538*

*Աղաբեգյան Ջ. 539*

*Աղաբեկյան Հ. 447, 538*

*Աղաթոն Մկրտիչ 489, 562, 568, 598*

*Աղալար խան 70*


* *Ցանկը կազմել է Ժ. Մ. Ադոնցը*—խմբ.:

Ադամալ Շոռոթցի 47, 542
Ադամալյան Հովհ. 144
Ադամալյան Մարիամ 71, 544
Ադամալյան Մելիք Սահակ 71, 168, 483, 544, 546
Ադամալյան-Բերդումյան Պ. 548
Ադանուրյան Ա. 539
Ադավելյան Ծ. 570
Աճառյան Հ. 543, 558, 559, 561
Ամատունի Վահան 548, 549
Ամիանոս Մարկելլիանոս 421, 580
Այվազյան Մ. 455
Անախաթուն 252
Անակ 97
Անահիտ 7, 37, 70, 245, 246, 248, 269, 311—313
Անանիա Շիրակացի 241, 244, 558
Անասյան Հ. 556
Անաստաս Ակոռեցի կաթողիկոս 471, 594
Անգովկ, Այանյաց իշխան 134, 550
Անկետիլ Դյուպերոն 231, 558
Աննա 29, 162
Աննա 185, 555
Աննախաթուն Տեր Դավթյան 435, 583
Աննիբալ 405
Անտոն Կեսար 450
Անտոն Մուղնեցի արքեպիսկոպոս 152, 153, 157, 163, 165, 167, 171—173, 178—181, 377, 448, 552, 553, 569
Անտոնինոս 248
Անուշավան 65
Աշոտ Բագրատունի 277, 559
Աշոտ Ողորմած 177, 555
Առաքել Դավրիժեցի 81, 140, 545
Առաքել սարկավագ 152, 163, 178—184
Ասկարյան Հովհ. 30, 540
Ասողիկ, Ստ. Տարոնեցի 545, 554
Ասպետ 172
Աստղիկ 244—246, 269, 553
Աստվածատրյան Գ. 400
Աստվածատուր քահանա 145
Ավագյան Վ. 433, 533, 582
Ավդալբեգյան Թ. 543, 547
Ավդալբեգյան Խ. 10
Ավդալյան Հովհ. 406, 449, 502, 509, 518, 539, 569, 587
Ավետիք 190
Ավետիք 436, 438
Ավետով Հ. 483
Ավետումյան Թադեոս խան 490, 508, 514, 529, 530, 538, 540, 598—601
Ավետումյան Խաչիկ 529
Արա Գեղեցիկ 27, 65, 70, 244, 546
Արամ 242, 283, 313
Արամ Վրույր 551
Արամազդ 97, 240, 242, 248, 312
Արամայիս 52, 104
Արարատյան Աս. 578, 596
Արարատյան Ստ. 581
Արզանյան Գ. 316, 562
Արզանյան Հ. 316, 562
Արթուր Լենզի 251
Արիստակես Լաստիվերտցի 52
Արիստակես վարդապետ 320, 321
Արիստիդ 405
Արիստոտել 101, 245, 399
Արղությանց-Երկայնաբազուկներ 179, 180, 555
Արմենակ 57
Արշակ Երկրորդ 53, 135
Արշակունիներ 91, 244
Արտաշես Առաջին 37, 55, 104, 174, 541, 547
Արտաշես Երկրորդ 551
Արտաշես Մեծմոն 221, 557, 553
Արտաշիր Սասանյան 66, 231, 256, 558
Արտավազդ Երկրորդ 51, 63, 99, 104, 105
Արտավան Արշակունի 256
Արտեմիս 541
Արտիմեդ 7, 37
Արուսյակ 70, 269

Բաբա փաշա 41
Բարաջանով Պ. 483
Բարեղ Կարբեցի 30
Բագրատ, վրաց թագ. 554
Բագրատիոն 416
Բագրատունիներ 332, 387

Բաթուղա 320
Բահրամ Գուր 221, 231, 558
Բայրոն 325, 326
Բարաղամ 566
Բարթուղիմեոս 143
Բարսեղ 88
Բարսեղ 474
Բարսեղ եպիսկոպոս 12, 115, 117, 127, 184, 349, 466, 468
Բարսեղյան Կ. 462
Բաքոս 420, 517
Բեթայիմ Ծատուր 462
Բել 65, 66, 234
Բեկ-Շահնազարյան Խաչատուր 415, 417, 419, 578—580
Բեհրուզյան Գարշի 549
Բեհրուզյանց Վ. 91, 465, 466, 481, 483, 485, 579, 596, 597
Բենտիվոգլիոն կարդինալ 308
Բետիգուա 281
Բերսելիել ճարտարապետ 335
Բլաքվուդ 354
Բիդանի Պավել 497, 498
Բժշկյան Մ. 27, 540, 556, 568
Բյուրասպ 421, 580
Բոդե 433
Բոլսու 368
Բուղա 165

Գաբրիել 88, 93, 172
Գալիանոս 171
Գալստյան Ա. 450, 538, 540
Գալստյան Բ. 462
Գալստյան Ս. 447
Գալուցյան Հ. 479, 595
Գանիկ 89
Գասպար սարկավագ 481
Գարդոն 273
Գեյցեր Հ. 558, 559
Գեղամ 89, 92, 111
Գեղամիայնով Ա. 483
Գևորգ 172
Գևորգ 440
Գևորգ 147
Գևորգ ամիրա 291, 292
Գևորգ պատրիարք 397
Գևորգ սարկավագ 481
Գևորգ սուրհանդակ 167, 172, 178
Գևորգ վարդապետ 320, 321
Գևորգ քահանա 497
Գևորգ Փ. 539
Գևորգյան Մ. 182
Գևորգ Դ. կաթողիկոս 548
Գևորգ Մ. 462
Գևորգ Վրթանես 437, 438
Գիլ Շահ 234
Գիորգի XII (վրաց թագ.) 544, 554
Գյուլիելմոս Հաճ Միլ 398, 404, 406
Գյուլգադյան Կ. 433
Գոլդսմիտ 16
Գոլիցին 555
Գորգին խան 364, 368, 372, 568
Գրակքոս եղբայրներ 559
Գրիբոյեդով Ալ. 550
Գրիգոր Աշտարակցի 152
Գրիգոր արքեպիսկոպոս 48, 129
Գրիգոր արքեպիսկոպոս Արդվինցի 64, 91, 152, 468, 543
Գրիգոր Երևանցի 121, 152, 179, 180, 181, 184
Գրիգոր Լուսավորիչ 73, 82, 90, 96, 97, 122, 236, 349, 350, 544, 547, 549, 571
Գրիգոր Մ. Հովսեփ 539
Գրիգոր Մագիստրոս 37, 304, 546
Գրիգոր Մամիկոնյան 549
Գրիգոր Մանուչարյան եպիսկոպոս 167, 552
Գրիգոր Մելիք 156
Գրիգոր Նարեկացի 541
Գրիգոր Շահուն, տիրացու 179—184
Գրիգոր Պահլավունի 276, 560
Գրիգոր Պետրոս 462
Գրիգոր Ս. Մանուկ 453
Գրիգոր Սուփան 546
Գրիգոր Վանցի 45—46
Գրիգոր վարդապետ 149, 150
Գրիգոր Տաթևացի 551
Գրիգորիս եպիսկոպոս Հովհաննիսյան 529
Գրիգորյան Կարապետ 462
Գրիգորյան Յ. Գ. 539
Գրիգորյան Պողոս 115

Գրովտիոս Գոգո 405, 490, 491
Գուլամիրյան Ա. (Մեսրոպ քահանա Ալեքսանդրապոլսեցի) 578
Գուլասպյան-Բեհրության Զաքարիա 92, 128, 129, 186, 379, 547, 549, 550, 569

Դարադյան Հովհ. 125
Դամոն 426, 429
Դանիել Ա. Սուրմալեցի կաթողիկոս 255, 540, 541
Դանիել Բարում 71
Դանիել եպիսկոպոս 12, 132, 133, 142, 144, 146, 148, 151, 155, 550, 553
Դանիել մարգարե 247
Դանվել (Դ. Ժան Բատիստ) 203, 557
Դավիթ 88
Դավիթ Արդար 115—117
Դավիթ Թոռնիկյան կաթողիկոս 544
Դավիթ կաթողիկոս 255
Դավիթ Ղ. Մահտեսի Հովսեփ 539
Դավիթ մարգարե 304
Դավիթ Շինարար 554
Դավթյան Մարգար խան 462
Դատամես 405
Դարեհ 205
Դեկալիոն 236
Դիոգենես 423
Դիոնեսիոս վարդապետ 184
Դիովն 405
Դրիրան ռաջա 364, 370
Դուրնով 433

Եզնակ Կողբացի, սարկավագ 184, 400
Եզնիկ Կողբացի 111, 221, 231, 233, 242, 244, 407, 548, 558
Եզր Ա. Փառաժնակերտցի կաթողիկոս 43, 542
Ելիզավետ կայսրուհի 165
Եհովա 343
Եղիա 320, 452
Եղիազարյան Գրիգոր 87, 538
Եղիկյան Մկրտիչ 539
Եղիշե 6, 119, 177, 204, 211, 233, 244, 246, 407, 557, 571
Եղիշե Ա Ռշտունի կաթողիկոս 84
Եղիսե 452
Ենոքյան Մելքում 113
Ենոքյան Ստեփանոս եպիսկոպոս 32, 113, 186
Եպամինոնդաս 405
Եսսան (Աձամ) 234
Եվիլ 420
Եվմինիոս 405
Երաստ 52
Երզնկացի 58
Երիցյան Ալ. 552—556, 578, 581, 585, 593
Երմոլով 68, 154, 174, 549, 552, 554, 555, 558, 559
Երնջիկ տիկին 151
Երվանդ Արշակունի 37, 100
Եփեստես (Հեփեստես) 236
Եփրեմ կաթողիկոս 12, 31, 32, 35, 42, 45, 48, 64, 69, 113, 129, 187, 188, 378, 464, 466, 467, 470, 490, 541, 543, 550, 553, 555, 559, 578
Եփրեմյան Արիստակես 498

Զալ խան Սադինյան 70
Զաքարյանց Գ. Ա. 539
Զենոբ Գլակ 546
Զոհակ 143
Զոհրաբ 155, 174
Զոհրաբյան Հովհ. 185
Զոհրաբյան Մանուկ 13, 447, 506, 508, 539, 540
Զոհրաբյան Մկրտիչ 462
Զոյիլոս 347
Զրադաշտ 65, 111, 230, 231, 421, 580
Զրվան 67, 244, 247
Զուլ-Կարնայան Հակոբ 568
Զես 97

Էժեն Սյու 599
Էլիազյան Հովհ. 508
Էնֆիաճյան եղբայրներ 520—522, 562, 563
Էվկլիդես 16
Էփրիկյան 551

Թադեոս Արգար 462
Թադեոս առաքյալ 97, 547

Թադեոս եպիսկ. Բեգնազարյան 529
Թադեոս Երեց 140
Թադեոս Խ. 447
Թադեոս մոնթ 128
Թադեոսյան Մեսրոպ 538
Թահմազղուլի Նադիր Շահ տե՛ս Նադիր Շահ
Թաղիադյան Շուշան 451, 452, 514. 515
Թաղիադյանց Դավիթ 162
Թաղիադյանց Զարդար 30, 185
Թաղիադյանց Նիկողայոս 123, 546
Թամուրլանկ (Լենկ-Թեմուր) 66, 226
Թանգում (Թանգխաթուն) 435—437, 441, 442, 504, 524—528, 531, 532, 582, 583, 601, 602
Թառումյանց Զոհրար 150, 157, 159, 161, 162, 175, 190, 191, 377, 378
Թառումյանց Կարապետ 160
Թառումյանց Մարկոս 150, 157, 159, 173, 175
Թասո 308
Թելլեր 441
Թեոդոս Փոքր 407
Թեմիստոկլես 405
Թիրաս 247
Թովմա Արծրունի 551
Թովմաս Ստանլի 420
Թովմաս Վաղարշակերտցի 46
Թովմաս վարդապետ 186, 192
Թորգոմ 247
Թրասիբուլոս 405
Թունի 99, 100, 475

Իբրահիմ փաշա 41, 102, 106
Ինճիճյան Ղուկաս 52, 241, 543, 547—549, 551, 558, 559
Իսա 192, 193
Իսահակ Բարով 405
Իսմայել բեկ Ջաֆար 440
Իսմայիլ շահ 545
Իսրայել 388, 389
Իփիկրատես 405

Լազարյաններ 141
Լալայան Ե. 542
Լակտանտիս Ցեցիլիոս Փիրմիանոս 404, 571
Լաչինով 542
Լեո 547, 551
Լյուսանդրոս 405

Խալիբյան Հարություն 419, 579
Խաչատուր 113
Խաչատուր եպիսկ. 139
Խաչատուր Էրզրումցի 231, 558
Խաչատուր վարդապետ Քարմն 166, 172, 189, 191
Խաչատուրյան Հովսեփ 127
Խաչիկ Առաքել 141
Խաչիկ Մարտիրոս 462
Խաչիկ վարդապետ Դադյան 542
Խաչիկյան Աս. 462
Խաչկյան Հով. քահանա 451—453, 504—507, 509, 512, 514,—516, 519, 529, 563, 588, 601
Խաչկյան Մկրտիչ 590
Խոջարաշխ 187
Խոջամալյան Թովմաս 364, 369, 370, 568,
Խոռ 244
Խոսրով խան 70, 433, 582
Խոսրով Կոտակ 53, 95, 118, 239, 256, 262, 547
Խոսրով Նուշիրվան 231, 558
Խոսրով Պերոզ 233
Խոսրովիդուխտ 89
Խուդաբանդե շահ 213
Խուդայբաշիով Մկրտիչ 483

Ծատուրյան Դավիթ խան 187, 556, 587

Կադմոս 314
Կայսրիկներ 547
Կարապետ 191
Կարապետ (Շեյթան) 47, 87
Կարապետ Աշտարակեցի 400
Կարապետ եպիսկ. 64, 462, 463, 543
Կարապետ Մելիք Մկրտչյան 183
Կարապետ վարդապետ 498
Կարապետյան Ազատլու 435, 583

Կարապետյան Հովակիմ 172
Կարինյան Ա. 568
Կեսներ 270
Կիրակոս 469
Կիրակոս Գանձակեցի 231, 545, 558
Կիկերոն տե՛ս Ցիցերոն
Կիմոն 405
Կլեոպատրա 272
Կյուրոս Կրտսեր 205, 557, 558
Կյուրոս Մեծ 205
Կոլումբոս 84
Կոմիտաս կաթողիկոս 542
Կոնոն 405
Կոշմ ոստիկան 135, 550
Կոշուտ 356, 566
Կոռնելիա 267, 559
Կոռնելիոս Նիպոսացի 405, 571
Կոստանդիանոս կայսր 404, 405
Կոստանյան 581
Կորյուն 542, 551
Կոցեբու 547
Կրասոս 386
Կրասովսկի Ա. Ի. 464
Կրետիղայոս 33
Կուինտոս Կուրտիոս 308
Կունտ 217

Հաբեթ 247
Հազկերտ II 66, 275
Հաթեմ Թայի 68, 543
Հախումյաններ 158, 159
Հախումյանց Բաբա 159, 160
Հակոբ 498
Հակոբ Անանիա 453, 516
Հակոբ Միլլ 8, 363
Հակոբ Նահապետ 36, 378
Հակոբ Ջահկեցի տե՛ս Հակոբ Ջուղա-
յեցի կաթողիկոս
Հակոբ Ջուղայեցի կաթողիկոս 542
Հակոբ վարդապետ 554
Հակոբյան Թ. 542, 550
Հակոբյան Կ. 357, 358
Հակոբյան Պ. 540, 541, 545, 548, 550,
552, 553, 555, 556
Հակոբյանց Հ. 462, 550
Հակոբոս պատրիարք 497, 257, 585
Հակոբոս վարդապետ 462, 486, 487,
523, 597, 598
Հակոբջան 370
Հակովբ 308
Համազասպ Մամիկոնյան 275
Համիլքար 405
Համլին Ռոբերտ 439, 494, 495, 498, 584
Հայկ 65, 167, 234, 236, 241, 247, 270,
283, 314, 384, 392
Հայրապետյան Հ. 539
Հայրումյաններ 157
Հաջի Ալմաս 457, 591
Հաջի խանում 86
Հաջի Միրզա Աղասի 47
Հասան խան 41, 191
Հարություն Աբգար 538
Հարություն Մարիամ 539
Հարությունյան Բ. 462
Հարությունյան Գր. տե՛ս Գորգին խան
Հարությունյան Ծ. 368
Հարությունյան Հ. 462, 513, 520, 521,
523, 539, 593, 601
Հարությունյան Հ. 187
Հարությունյան Պ. 368, 568
Հարությունով Ս. 483
Հացունի Հ. Վ. 601
Հաֆիզ 223, 231
Հենրի Բիթուն 210
Հերակլ (վրաց. թագ.) 71, 168
Հերակլ (բյուզ. կայսր) 135
Հերկուլես 386
Հերմես 96, 97, 247
Հերոդոտոս 233, 237
Հմայակ Մամիկոնյան 225, 559
Հյուղնե վարդապետ 230
Հյուրմուզյան Գ. 280, 560
Հոբ 384
Հոգոն Գրովտիոս 571
Հողոփեռնես 281
Հոմա 221
Հոմերոս 304
Հոսեյն աղա 41
Հովակիմ (դրաշար) 481
Հովակիմ Պողոս 303, 561
Հովիկ 97, 192
Հովհան 257

Հովհան Ավետարանիչ 407, 408
Հովհան եղբայրներ 539
Հովհան եպիսկոպոս 175
Հովհան ճարտարապետ 444, 499
Հովհան Որոտնեցի 551
Հովհան Ս. 479
Հովհան վարդապետ Մեղրեցի 146
Հովհան Օձնեցի 179, 555
Հովհանյան Խ. 504, 539
Հովհաննես 61
Հովհաննես 191
Հովհաննես 185, 416, 430, 555
Հովհաննես 416
Հովհաննես արքեպիսկ. 431, 486, 487, 581, 597, 598
Հովհաննես Երիցացի 308
Հովհաննես եպիսկոպոս տե՛ս Ճանխաթունյան Հովհ. եպիսկոպոս
Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս 554
Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոս 549
Հովհաննես Կարբեցի 18, 31, 32, 44, 90, 337, 414, 429, 432, 464, 467, 468, 481, 483, 485—488, 523, 513, 578, 581, 582, 596—599
Հովհաննես Կողեռն 546
Հովհաննես Պլուզ 543
Հովհաննես վարդապետ 184
Հովհաննես վարդապետ Բագրևանդացի 12, 31—33, 46, 115, 129, 130, 136, 379, 541, 569, 582
Հովհաննես վարդապետ Ղրիմեցի 152, 163, 409, 552, 553
Հովհաննես վարդապետ Ջուղայեցի 231, 308, 558
Հովհաննես վարդապետ Վաղարշապատցի 498—499
Հովհաննիկ 189
Հովհաննիսյան Ա. 569—571
Հովհաննիսյան Ե. 433, 523
Հովհաննիսյան Սարաձյանց Մ. 318
Հովհանջան 141
Հովհանջան 504
Հովսեպոս Փլավիոս 134, 550
Հովսեփ 154, 156
Հովսեփ Գեղեցիկ 65, 70
Հովսեփ եպիսկոպոս 471
Հովսեփ Եվդոկացի սարկավագ 128, 152
Հովսեփ վարդապետ Արցախեցի 160, 541, 553
Հովսեփ վարդապետ Վեհապետյան (Մա-րուզի) 12, 152, 175, 178, 431, 468
Հովսեփյան Գրիգոր 365, 539
Հովսեփյան Գևորգ 523
Հորդանանյան Հ. 456, 539, 591
Հորդանանյան Պ. 360, 370, 390, 395, 569
Հրուղեն 421
Հուրս 321
Հուլաքու խան 252, 256, 559
Հուշանկ 236, 421, 580
Հուսեյն խան 10, 41, 49, 86, 131, 542

Ղազան խան 135
Ղազար Ջահկեցի 45, 542
Ղազար Ջհանշահ 551
Ղազար Սիմեոն 514
Ղազար Փարպեցի 63, 115, 276, 377, 407, 543
Ղազարոս 333
Ղաֆադարյան Կ. 545, 549
Ղոնչանդյուլյանց Պ. 30, 127
Ղորղանյան Բ. 483
Ղորղանյան Թ. 599
Ղուկաս եպիսկոպոս 465, 468
Ղուկուզես 66
Ղևոնդ քահանա 246

Ճամճյան Փ. 566
Ճանիկյան Ա. 273

Մաղաթով 174
Մաղարովիչ 554
Մաժան 242
Մալխասյան Ք. 538
Մակար կաթողիկոս 542
Մակդոնալդ 411
Մահարաջ 420
Մահարուլ տե՛ս Բեյ
Մահամադ-Հուսեյն խան. սարդար 162, 215, 553
Մահմադ-Բաղր Թաշար 217, 431

Մահմադ խան Ղաջար 256
Մահմադ Միրզա 210, 431
Մահմեդ 65, 113, 192, 193, 216—218, 230, 422, 518
Մահմուդ Ղիզնացի 362
Մաղսուդ խան 192, 257, 258
Մամախաթուն 549
Մանանդյան Հ. 551
Մանասե 281
Մանուկյան Գր. 433
Մանուկյան Թ. 539
Մանուկյանց Ջ. Մ. 539
Մանուկյան Հովհան 90
Մանուչար խան 70
Մատթեոս Ուռհայեցի 197, 556
Մար-Աբաս-Կատինա 69, 321, 368
Մարգար 439
Մարգար Երևանցի 400
Մարգար սարկավագ 184
Մարգարիտ 166, 189, 191, 540
Մարիամ 166
Մարիամ 276
Մարկոս 173
Մարշմեն 8, 105, 363, 372, 548
Մարտին Հենրի 36, 541
Մարտիրոս արքեպիսկոպոս 44, 121, 150—153, 187
Մարտիրոս արքեպիսկոպոս Սյունեցի 128, 149, 154, 175, 191, 542
Մարտիրոս եպիսկ. Տաթևացի տե՛ս Մարտիրոս արքեպիսկ. Սյունեցի
Մարտիրոս սարկավագ Աշտարակցի 150
Մաքսավելյան 518
Մելիք Աբրահամ 88, 121, 298
Մելիք Գյուլամպար 145
Մելիք Հովհաննես 148
Մելիք Հովսեփ 177
Մելիք Ղասիմ Միրզա 435, 498, 583
Մելիք Մկրտիչ 141
Մելիք Պողոս 154
Մելիք Ստեփաննոս 113, 114
Մելիք Վանի 163, 177, 553
Մելիք Ֆրիդոնյան Դավիթ 164, 165, 554
Մելիք Ֆրիդոնյան Հովսեփ 164, 165, 553
Մելիք Ֆրիդոնյան Շամիր բեգ 164, 553
Մելիքսեթ Վժանեցի վարդապետ 546
Մեկենաս իշխան 333
Մեհդի խան 154, 156, 157, 174, 552
Մեհմեդալի փաշա 594
Մեղտիադես 405
Մենիշկարյանց տիկին 349
Մեսոստրես 66
Մեսրոպ Մաշտոց 40, 117, 143, 326, 333, 334, 400, 418
Մեսրոպ Սեթ 554, 567, 579, 583, 584, 591, 600—602
Մեսրովբ 29
Մերարե 281
Միդաս 594
Միլտոն 16, 304
Միհր Ներսեհ 204
Միհրդատ Պոնտացի 70, 544
Մինաս վարդապետ 69
Մինաս վարդապետ, բժիշկ 152
Մինաս վարդապետ, Կարճիկ 178
Միներվա 420
Մինիշկարյանց 168
Միրզա Ալի բեգ 257
Միրզա Մահրուր 455—457, 590, 591
Միքայել 480
Միքայելյան Հ. 357
Մծբնա Հակոբ 100, 102, 106, 346, 355, 548
Մկրյան Հովհ. 494, 500, 529, 532, 554, 566, 581—585, 589, 592—595, 600, 601
Մկրտիչ 189
Մկրտիչ 440
Մկրտիչ խալիֆ Հովակիմյան 506
Մկրտիչ Կյուրեղյան 182
Մկրտիչ վարդապետ Տեր-Գրիգորյան (Խլեղն) 154, 552
Մկրտչյան Դավիթ 462
Մկրտչյան Հակոբ 539
Մկրտչյան Մարտիրոս 369, 568
Մկրտչյան Սեթ 503, 524
Մխիթար Աբբա Սեբաստացի 231, 308, 527, 558
Մխիթար Այրիվանեցի 545
Մխիթար վանահայր 92, 93
Մխիթարյան Աբել 541, 548
Մխիթարյաններ 280, 315

Մնացական 190
Մնու. 236
Մոլլա Նասրադին 474
Մոհամ Յաննաց 420
Մողու Բրանդ 441
Մովսես 518
Մովսես Զաքարյան Երկայնարազուկ 465
Մովսես Խորենացի 16, 37, 39, 51—53, 55, 73, 84, 89, 99, 104, 133, 135, 143, 204, 233, 234, 244, 247, 250, 251, 308, 368, 407, 541—544, 546, 548, 550, 558, 561, 571, 580
Մովսես սարկավագ 481
Մովսես Տաթևացի (Սյունեցի) կաթողիկոս 545, 546
Մորիկ (բյուզանդական կայսր) 445
Մսերյան Մսեր 480, 548, 578, 595, 596
Մուհամմադ Մուհսի Ֆանի 233, 234, 236, 237
Մուսաբեգյան Գրիգոր կաթողիկոս 544
Մուսի 154, 156
Մուրադ սուլթան 135

Յ. Ա. 476
Յուսուֆ 472, 552

Նադիր Շահ 66, 122, 212, 256, 292
Նազարյան Եսայի (քահանա) 172, 554
Նազարյան Ստ. 554
Նալբանդյան Մ. 5, 12, 557, 564, 598, 599
Նանումյան Ռ. 557, 578—582, 597
Նապոլեոն Լուիս 356
Նեբրովթ 68
Նեյզարթա 349
Նեսելրոդ 553
Ներսես Աշտարակեցի 5, 12, 18, 19, 25, 30, 32, 44, 64, 68, 73, 124, 128, 129, 154, 163, 168, 171—179, 191, 317, 336—339, 353, 354, 377, 380, 388, 390, 411, 427, 446, 447, 450, 540, 541, 543, 547, 549, 552—555, 557, 565, 568—570, 581, 586—588
Ներսես Լամբրոնացի 304, 407
Ներսես Շինող 40, 81
Ներսես Շնորհալի 16, 304, 529
Ներսես (վանահայր Խորվիրապի) 98
Ներսես վարդապետ 97
Ներսիսյան Ա. 443
Ներսիսյան Գ. 179
Ներսիսյան Գ. 179
Ներսիսյան Հ. 179
Ներսիսյան Մ. 443, 507, 585
Նիկոդիմոս 104
Նիկոլայ կայսր 64, 98, 348, 354, 356, 385, 389, 410, 466
Նիկողայոս արքեպիսկոպոս 430
Նոյ 36, 65, 66, 68, 71, 77, 84, 96, 105, 109—111, 134, 197, 203, 236, 240, 241, 244, 346
Նոյեմզար 111, 197
Նուարդ (Նվարդ) 70
Նուբար 457

Շարիթա 143, 167
Շաթ 554
Շալխաթունով Ա. 483
Շահ-Ալեմ Ալիգոհար 364, 368, 370
Շահ Կուլի 234
Շահաբաս 192, 217, 256, 551
Շահազիզ Ե. 546, 579
Շահանդուխտ 70
Շահիջան 118
Շահխաթունյան Հովհ. եպիսկոպոս 82, 150, 152, 178, 468, 480, 543, 545—547, 549, 551, 552, 595, 596
Շահնազարյան Կարապետ վարդապ. 565
Շամիր Սուլթանյան 72, 141
Շամիրամ 65, 66, 70, 546
Շաշունց Գողի 170, 348
Շապուհ Բ. 134, 135, 239, 246, 549
Շարդըն 70, 230, 355, 546
Շերմազանյան Գ. 544, 556, 579, 583
Շեքսպիր 304
Շիլլեր 581
Շիրխոոյան Ռ. Ջ. 539
Շուշան 70
Շուշան Մամիկոնյան 167
Շուշան Պահլավունի 276, 277, 560

Որդանյան Ռ. Պ. 538
Որմիզդ 98

Որփեոս 304

Չամչյան 84, 545
Չամուրճյան Հով. 562, 598
Չինգիզ խան տե՛ս Չենկիզ խան

Պալ Պ. Յ. 530
Պահլավ 203
Պահլավունիներ 549
Պանկրատև 422, 579
Պապակ Սասանյան 558
Պապաջանով Ա. 483
Պասկևիչ Ի. Ֆ. 353, 355, 422, 570
Պավսանիոս 405
Պարս 203
Պարսամյան 550
Պարրոտ Փ. 548
Պելոպիդ 405
Պենտաստոս 405
Պետրոս 373
Պետրոս Աղամալյան եպիսկ. 115, 144, 308, 408, 548
Պետրոս Առաջին 412, 578
Պետրոս Առաքյալ 405
Պետրոս վարդապետ 100
Պետրոս վարդապետ Շուշտակն 47
Պետրոս քահանա 92
Պետրոսյան Մ. 521, 524, 601
Պլատոն 399
Պլատոս 343
Պլինիոս 248, 559
Պյութագորոս 16
Պյութիաս 426, 429
Պյութեաս 386
Պողոս եպիսկ. Նախիջևանցի 186, 187, 357, 368—390, 406, 556, 566
Պողոս երեց 147
Պողոս Կեսարացի 184
Պողոս Պետրոս Լազարովիչ Կոստանդնուպոլսեցի 566
Պողոս վարդապետ 91
Պողոս վարդապետ Ղարադաղցի 12, 32, 33, 81, 95, 101, 111, 113, 160, 313, 541, 545, 550, 569, 585
Պողոսյան Հարություն տե՛ս Խալիբյան Հարություն
Պոպ 361
Պոտտո Վ. 553
Պոռչյան Պ. 577
Պտղոմեոս 134
Պրոմեթևս 236, 346
Պուղա տե՛ս Բուղա
Պուրքաս 308

Ջալալյանց Մնացական 160
Ջան (Ջոն) Մալքոմ 220, 237, 557, 558
Ջաֆար խան 184, 428, 429
Ջերու (Ջարու) խան 167, 554
Ջեմս Մորիեր 542
Ջենկիզ խան 66
Ջիափրամ 234
Ջոն Լոկ 567
Ջրպետ (Շահան Ջրպետյան Հակոբ) 430, 581

Ռայիֆ փաշա 356
Ռասին 304
Ռափայել 348
Ռեշիդ փաշա 356
Ռիջինալդ Հերր 357, 377, 378, 383, 406, 410, 491, 556, 568, 569, 571
Ռոբինզոն Կրուզո 187
Ռոզեն 484, 531
Ռոստամ 386
Ռտիշչև 541
Ռուբինյաններ 387

Սաադի 6, 223, 231, 406
Սաբիլ 234
Սալիմ փաշա 422
Սալյանթյան Միքայել 417, 466, 578, 592, 595, 596
Սակինյան Դավիթ խան 70
Սահակ 88
Սահակ արքեպիսկ. Սադունյանց 583
Սահակ Բագրատունի 53
Սահակ եպիսկ. Տեր-Գրիգորյան 64, 98, 543
Սահակ Կոնդեցի եպիսկ. տե՛ս Սահակ եպիսկ. Տեր Գրիգորյան
Սահակ Հիզանցի 549

Սահակ Ձորափորցի կաթողիկոս 551
Սահակ Պարթև 275, 326, 333, 334, 384, 387, 400, 570
Սահակ վարդապետ 29
Սահակ վարդապետ Սանահնի 64
Սահակադուխտ 276, 277, 559
Սահրաղ 372
Սամել Մամիկոնյան 53
Սամյան Գր. 522
Սամուել Մարգար 539
Սանա 267
Սասան 233
Սարաճյան Մ. 562
Սարգենս, բանաստ. 541
Սարգիս 191
Սարգիս կաթողիկոս 176, 555
Սարգիս Շիրխան 454
Սարգիս վարդապետ 139, 140, 142
Սարգսյան Հովհ. Շահնազարի 265, 500, 528—530, 591, 593, 600, 601
Սարգսյան Ն. Տ. 447
Սարգսյան Փ. 528, 540
Սարգսյանց Եղիսաբեթ 267
Սաֆարալի 261, 262
Սեդրակյան Ա. 548, 568, 569, 579, 581, 586, 595—597
Սեդրակյան Վ. 591
Սեթ խան Ծատուրյան 210, 251, 254, 257, 444, 557, 585
Սեթյան Աղասար 524
Սեթյան Եփրեմ 110, 420, 548, 580
Սեթյան Հակոբ 435, 437, 438, 441, 524, 526, 531, 583—585
Սեթյան Հովհաննես 435, 438, 528, 583
Սեթյան Մեսրոպ 524, 532, 601
Սեթյան տուն 531
Սեթյանց Ր. Փ. 528
Սերդար աղա 364, 370
Սեպեսրոս գյուղ 571
Սեմ 36, 293, 247
Սերվանտես 308
Սերմերյան Հովհ. 496, 497, 584, 586
Սերովբե Նարնեցի 554
Սիմեոն արքեպիսկ. Երևանի 144, 553
Սիմեոն եպիսկոպոս 142
Սիմեոն եպիսկոպոս 149
Սիմեոն կաթողիկոս Երևանցի 43, 542
Սիմեոն վարդապետ 98
Սիմոն սարկավագ 184
Սիմոնյան Պ. 538
Սիրվարդ 525, 526, 532
Սմբատ Բագրատունի 94, 151, 254, 551, 552
Սողոմոն Իմաստուն 275, 503—505
Ստեփաննոս 566
Ստեփաննոս երեց 178
Ստեփաննոս Արղության 184, 426, 428, 431, 468, 555, 577
Ստեփաննոս Ջաքարյան արքեպ. Նիկոմիդիացի 496, 497, 594
Ստեփաննոս Սյունյաց եպիսկ. Իմաստասեր 276, 559
Ստեփաննոս Վրձն 171
Ստեփաննոս Օրբելյան 246, 276, 551, 552, 558, 559
Ստեփանոսյան Հ. 539
Սպարան 53, 205, 233, 248, 312, 559
Սրապյան Կ. 569
Սուլեյման կամ Սողոմոն խան 70
Սուլթան Մուրադ 4-րդ 135, 551
Սարի 189, 190

Վագեզրա 308
Վագներ Ռ. 345, 347—354, 566
Վալտեր Սկոտ 325, 326
Վահագն 37, 70, 71, 246, 313
Վահան Ամատունի 118
Վահան Գողթնեցի 559
Վահան Մամիկոնյան 276, 277
Վահրամ 560
Վաղարշ Արշակունի 37, 66, 244
Վայք 316
Վասման 121
Վասակ 560
Վասակ Սյունի 119, 314
Վարդան Բարձրաբերդցի 197, 556
Վարդան Մամիկոնյան 167, 275, 277, 314, 407
Վարդանյան Մնացական 371
Վարդանյան Յ. Մ. 539
Վարդանյան Ս. Մ. 539
Վարդանուշ տե՛ս Շուշան

Վարդգես Մանուկ 37, 115, 312
Վարդիկ 118, 119
Վարդխաթուն Ճանազարյան 435, 526, 583
Վելինկտոն 283
Վելյամինով 552, 555
Վենսատաղ 368
Վերգիլիոս 304
Վոլտեր 304
Վոնդել 308
Վռամշապուհ Արշակունի 333
Վրդանիսյան Ա. 539
Վրթանես եպիսկ. Աշտարակեցի 164, 187, 554, 555
Վրույր 308
Վուլֆ 569

Տավերնիե 355, 547
Տամնգենո 408
Տեյոր 311
Տեր Անդրեասյան Գ. 369
Տեր Բաղդասար Գասպարյան 335, 539, 564
Տեր Գալուստ Հովսեփյան 462
Տեր Գասպարյան Ա. 472
Տեր Գասպարյան Մ. 539
Տեր Գրիգորյան Ի. 509, 538
Տեր Գևորգյանց Պ. 462
Տեր Կարապետյան Ա. 462
Տեր Սարասեսոյան Մ. 462
Տեր Հովակիմով Ա. 185
Տեր Հովհաննես 189
Տեր Հովհաննես 258, 259
Տեր Հովհանյան Միրզայել 462
Տեր Հովհաննիսյան Գևորգ վարդ. 523
Տեր Հովնանյան Հ. 543, 594
Տեր Հովսեփ 144
Տեր Ղազարյան Ա. 523
Տեր Ղուկասյան Հ. 523
Տեր Մատթեոս Սարգսյան 462
Տեր Մաթևոսյան Ա. 31, 541
Տեր Մարուքյան Մ. 175
Տեր Մինասյան Ե. 580
Տեր Սիմոն 181
Տեր Ստեփաննոս Հարությունյան 523
Տեր Ստեփաննոս քահանա 69
Տեր Ստեփանոսյան Մ. 187
Տիգրան II 37, 143
Տիգրանուհի 109
Տիկին Ալեքսանդրի տե՛ս Ազամալյան Մարիամ
Տիմոթեոս 405
Տիմոլեոն 405
Տիրան 127, 244, 246, 247, 549
Տովբեթ 451
Տրդատ Ա 89, 90, 248, 256, 262, 312, 546
Տրդատ Գ 39, 44, 48, 407, 546, 571
Տուրքիկ 66, 556

Ցիցիանով 542
Ցիցերոն 405

Ուսպեյան Ա. 439, 444, 445, 507, 584, 585

Փաշա խան 439
Փավստոս Բուզանդ 246, 548, 549, 558
Փափազյան Հ. 564, 595
Փեշտըմալճյան Գր. 567
Փիլիպպե 221
Փիլիպպոս Ագռակեցի կաթողիկոս 45, 542
Փիլիպպոս արքեպիսկոպոս 187, 428
Փիլիպպոս արքեպ. Մոկնեցի (Մեծափոր) 184, 581
Փիլիպպոս տիրացու 142, 144
Փիշպաղյաններ 234, 235
Փիրուզա 368, 370
Փիրուզա մայր 233
Փոկիոն 405

Քարրի 405
Քոլբալի խան (Ղամբարի խան) 132, 136, 137, 550
Քամ 108, 247
Քարթլոս 167
Քարտաշյան Մ. 127, 426, 430, 581, 599
Քեյքաուս 313
Քեշիշ օղլի 163, 554
Քերիմ խան 170
Քերոփ 440

Քյալ Օհաննես Պետրոս Մելիք 483
Քյորօղլի 62
Քյուրտյան Հ. 564
Քսենոփոն 203, 205, 471, 557, 580
Քսերքսես 471
Քսիլանդր 308
Քսիսութրոս տե՛ս Նոյ
Քրիստափոր կաթողիկոս Տիրառիճեցի 558
Քրիստոս 36, 107, 153, 192, 194, 217, 273, 275, 384, 388, 427, 461, 518, 545
Քուշ 108

Օգոստոս կայսր 248, 333, 405, 559
Օրմանյան Մ. 543, 544, 594

Ֆարերս 316
Ֆաթալի շահ 41, 210, 212, 255—257, 278, 583
Ֆաթմա 216
Ֆիզիկա Պողոս 497, 600
Ֆիրդուսի 223, 236
Ֆրանկլին 289, 560
Ֆրեյզան 547

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Առաջաբան* . . . . . 5
Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի *ի Հայս* . . . . . . . . 23
Ճանապարհորդութիւն Մ. Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան . . . 201
Ճառ դաստիարակութեան օրիորդաց . . . . . . . 265

Հոդվածներ

1. *Առ պատուելի [illegible] ազգիս* . . . . 295
2. *«Անտիպական [illegible] մասին»* . . . . 297
3. *Առաջարկութիւն* . . . . . . 298
4. *Անգղիա* . . . . . . . 295
5. *Ազգային սէր* . . . . . . . . 299
6. *Հնդկաստան և Չինա* . . . . . 300
7. *Ի վերայ [illegible]* . . . . . . 304
8. *Արարատ* . . . . . . . . . 305
9. *Այլ առարկայք* . . . . . . . 305
10. *«Այբբենարան [illegible] մասին»* . . . 309
11. *[illegible] Ամերիկայ* . . . . 310
12. *[illegible]* . . . . . . . 311
13. *«[illegible]»* . . . . . . 312
14. *«[illegible]»* . . . . . . . 316
15. *«[illegible] մասին»* . . . . . . 316
16. *Հայաստան* . . . . . . . . 318
17. *«Ազատութիւն»* . . . . . . . 319
18. *«Առ ի [illegible] ի [illegible]»* . . . 320
19. *Հայ [illegible]* . . . . . . . 322
20. *«Թարգմանութեան մասին»* . . . . . 323
21. *[illegible]* . . . . . . . 326
22. *«[illegible]»* . . . 327
23. *«[illegible] մասին»* . . . . 329
24. *Տէր [illegible]* . . . . 335
25. *«[illegible] մարդկան...»* . . . . . . 336
26. *«[illegible] մասին»* . . . . 336
27. *«Եթէ [illegible] իցեն, թող [illegible] իցեն [illegible]»* . . . 339
28. *[illegible] 1856* . . . . . . . 341
29. *Հայաստան, Կովկաս և Արարատ* . . . . 345
30. *«[illegible]»* . . . . . 356

31. <Ռեջինալդ Հեբերի «Պաղեստին» ոտանավորի թարգմանության առաջաբանից> . . . . . . 357
32. Գիտարանութիւն արար Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց սարկաւագ սրբոյ էջմիածնի . . . . . . 358
33. Մեսրովբեան այբբենարան, առ ի պէտս դպրոցաց . . . . 359
34. Մեսրովբեան շարադրիչի հայ և անգղիական լեզուաց առ ի պէտս դպրոցաց . . . . . 360
35. Պատմութիւն հին Հնդկաստանի յանյիշատակ դարուց անտի ցյարձակումն մահմետականաց ըստ աւանդելոց մատենագրաց այլ և այլ ազգաց . . . . . . 362
36. Պատմութիւն Պարսից, յօրադրէ Մեսրոբայ Դ. Թաղիդեան . . 365
37. Մեսրովբեան առաջնորդ մանկանց . . . 366
38. Թովմասայ Խօջամալեան Նոր ջուղայեցոյ Պատմութիւն Հնդկաց, մասն երկրորդ, մանաւոր սրբագրութեամբ և ջանիւք ի լոյս ընծայեալ Մ. Դ. Թաղիդեանց Վ. Ա. . . . . . . . 367

Նամակներ, ճառեր, դիմումներ

1826

1. Ներսես Աշտարակեցուն, հունիսի 18 . . . . 377
2. Ներսես Աշտարակեցուն, դեկտեմբերի 5 . . . . . 380

1828

3. <Ճառ Հայաստանի ազատագրման առթիվ> . . . . 385
4. Ներսես Աշտարակեցուն, հոկտեմբերի 8 . . . . 390
5. <Նամակ Երևանցիներին>, նոյեմբերի 1 . . . . 410

1831

6. Հովհաննես Կարբեցուն, դեկտեմբերի 29 . . . . . . 414

1832

7. Խաչատուր բեկ-Շահնազարյանին, օգոստոսի 12 . . . . 415
8. Խաչատուր բեկ-Շահնազարյանին, նոյեմբերի 5 . . . 417
9. Սրբազան սինոդոսի Արարատեան աթոռոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի, դեկտեմբերի 1 . . . . . . . 418
10. Հարություն Խալիբյանին, դեկտեմբերի 20 . . . . 419
11. Խաչատուր բեկ-Շահնազարյանին, դեկտեմբերի 2 . . . . 419

1833

12. Սրբազան սինոդոսի Արարատեան աթոռոյ սրբոյ էջմիածնի, հունիսի 11 . . . . . . . . . . 425

1834

13. Մկրտիչ Քարտաշյանին . . . . . . . . 426
14. Հովհաննես Կարբեցուն, սեպտեմբերի 1 . . . . 429

1836

15. Հովհաննես Կարբեցուն, մայիսի 5 . . . . 432

1837

16. Հակոբ Սեթյանին, հունիսի 23 . . . . . . 435
17. Աննա Ազատյու և Վարդխաթուն քույրերին . . . . . 435

1838

18. Հակոբ Սեթյանին, նոյեմբերի 20 . . . . . . 437

1839

19. Հակոբ Սեթյանին, ապրիլի 11 . . . . . . 438
20. Ռոբերտ Համլինին, մայիս . . . . . 439
21. Անդրեաս Ռուսպելյանին, մայիսի 16 . . . . . 439
22. Հակոբ Սեթյանին, հուլիսի 24 . . . . 441
23. Հակոբ Սեթյանին, հոկտեմբերի 9 . . . . . . 441

1840

24. Անդրեաս և Ստեփանոս Ներսիսյաններին . . . . 443

1841

25. Սեթ խան Շատուրյանին և Անդրեաս Ռուսպելյանին փետրվարի 20 445

1846

26. Ներսես Աշտարակեցուն, մայիսի 27 . . . . . 446
27. Ներսես Աշտարակեցուն, հոկտեմբերի 25 . . . . 447

1847

28. Հովհաննես Ավգալյանին, փետրվարի 17 . . . . . 449

1848

29. Ներսես Աշտարակեցուն, մարտի 10 . . . . . 450

1855

30. Հովհաննես Խաչկյան քահանային, մայիսի 4 . . . . . 451

1857

31. Հովհաննես Խաչկյան քահանային, մայիսի 15 . . . . 452
32. Հովհաննես Խաչկյան քահանային, մայիսի 27 . . . . 453
33. Մկրտիչ Հովակիմին, նոյեմբերի 25 . . . . . 455
34. Հարություն Աբգարյանին, ապրիլի 16 . . . . . 457

Պատառիկներ օրագրից

1. Հունիս, 1831 . . . . . . . . . 461
2. Ջուղա, 1831 . . . . . . . . . 462
3. Անցք . . . . . . . . . 463
4. 1833, հունիս, էջմիածին . . . . . . . . 467
5. <1834, Նոր Ջուղա> . . . . . . . . 468
6. 1838, <մայիս> . . . . . . . . . 468

ՄԵՍՐՈՊ ԴԱՎԹԻ ԹԱՂԻԱԴՅԱՆ

МЕСРОП ДАВИДОВИЧ ТАГИАДЯН

# ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդների որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարիչ ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 04147 Հրատ. 4035 Պատվեր 739 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 30/XIII 1974 թ., ստորագրված է տպագրության 17/IX 1975 թ., տպագրական 38.75 մամուլ, հրատ. 32.2 մամուլ, պայման. 32.2 մամուլ, թուղթ № 1, $60 \times 90^{1}/_{16}$, գինը 3 ռ. 20 կ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24 գ.

Издательство АН Армянской ССР, Ереван 19 Барекамутян 24

A II / 56061

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220056061